2 *տօնախմբութիւն ընեն ։ Եւ փարաւոն ըսաւ . Բ Եհովան ո՞վ է , որ անոր խօսքը մտիկ ընելով՝ Իսրայէլը Թող տամ . Եհովան չեմ ճանչնար , և Բ Իսրայէլն ալ չեմ

Բ Դ Թագ· ԺԹ· 35 ։ ՅՈՒ·Խ· 15։

Բ ԳԼ·Գ·19։

Բ ԳԼ·Գ·18։

3 Թողուր ։ Եւ անոնք ըսին . Բ Եբրայեցւոց Աստուածը մեզի հանդիպեցաւ . Հրաման տուր որ երեք օրուան ճամբայ անապատը երթանք , ու մեր Եհովայ Աստուածին զոհ մատուցանենք , որ չրլլայ Թէ ժանտախտով կամ սրով մեզի դէմ

4 Ելլէ ։ Եւ Եգիպտոսի Թագաւորը ըսաւ անոնց . Ո՛վ Մովսէս ու Ահարոն՝ ինչո՞ւ ժողովուրդը իրենց գործքերէն ետ կը Թողուք . Երթայք աշխատեցէք ։ Եւ փարաւոն ըսաւ . Ահա հիմա երկրին ժողովուրդը շատ է , ու դուք կը հանգըստացընէք զանոնք իրենց գործքերէն ։

Ե Ե ԳԼ·Ա·11·

6 Եւ փարաւոն ան օրը ժողովուրդին Բ գործավարներուն ու անոնց վերակացուներուն հրամայեց՝ ըսե-

7 լով . Երկուան ու մկալ օրուան պէս՝ ալ մէյմըն ալ ժողովուրդին յարդ մի՛ տաք աղիւս շինելու համար . Թող իրենք երթան ու իրենց

8 յարդ ժողվեն ։ Եւ աղիւսներուն Թիւը՝ ինչպէս որ առաջ կը շինէին , անոնց վրայ դրէք , անկէ մի՛ պակսեցընէք . ինչու որ ծոյլ են , *անոր համար կը պոռան՝ ըսելով . Երթանք՝ մեր Աստուծոյն զոհ մա-

9 տուցանենք ։ Թող գործը աս մարդոցը վրայ ծանրանայ , որ անով աշխատին , ու փուճ խօսքերու մը-

10 տիկ չընեն ։ Եւ ժողովուրդին գործավարները ու վերակացուները ելան , և ժողովուրդին խօսեցան՝ ըսելով . Փարաւոնը ասանկ կ'ըսէ .

11 Ես ձեզի յարդ չեմ տար . Դուք գացէք՝ ձեզի յարդ առէք՝ ուր տեղ որ կրնաք գտնել . բայց ձեր գործէն բան մը պիտի չպակսի ։

12 Ա,յսպէս ժողովուրդը Եգիպտոսի բոլոր երկրին մէջ ցրուեցան՝ յարդի տեղ խոզան ժողվելու համար ։

13 Եւ գործավարները կը ստիպէին *անոնց՝ ըսելով . Ձեր ամէն օրուան գործը լմընցուցէք , ինչպէս երբ որ

14 յարդ ունէիք ։ Եւ փարաւոնին գործավարները Իսրայէլի որդւոցը վրայ իրենց դրած վերակացուները ծեծեցին , ու ըսին . Ձեր վրայ դրուած աղիւսներուն սակը երէկ ու այսօր ինչու չլմընցուցիք առջինին պէս ։

15 Եւ Իսրայէլի որդւոցը վերակացուները եկան՝ ու փարաւոնին բողոքեցին՝ ըսելով . Ինչու քու ծա-

16 ռաներուդ ասանկ կ'ընես ։ Քու ծառաներուդ յարդ չեն տար , ու մեզի կ'ըսեն Թէ՝ Աղիւսներ շինեցէք . և ահա քու ծառաներդ ծեծ կերան , ու յանցանքը քու ժողո-

17 վուրդինդ է ։ Եւ անիկայ ըսաւ . Ծոյլ էք դուք՝ ծոյլ . անոր համար կ'ըսէք Թէ՝ Երթանք՝ Տէրոջը

18 զոհ մատուցանենք ։ Ուստի գացէք հիմա բանեցէք , ու ձեզի յարդ պիտի չտրուի , բայց աղիւս-

19 ներուն սակը պիտի տաք ։ Եւ Իսրայէլի որդւոցը վերակացուները ինքզինքնին փորձանքի մէջ տեսան , երբոր ըսուեցաւ Թէ՝ Ամէն

օրուան ձեր վրայ դրուած աղէտը։
20 Ներուն, Թիւէն չպակսեցընէք ։ Եւ Փարաւոնէն դուրս ելած առնուներին՝ Հանդիպեցան Մովսէսին ու Ահարոնին , որ կեցեր էին դիմաւորելու կը
21 ըսլսէին . Ընձ ըսին անոնց . Տերը ձեզի նայի ու դատէ . ինչու որ Խդարշելի ըրիք մեր հոտը Փարաւոնին առջևը , ու անոր ծառաներուն առջևը , մեզ սպանելու համար անոնց ձեռքը սուր տալով ։
22 Եւ Մովսէս Տիրոջը դարձաւ՝ ու ըսաւ . Ո՛վ Տէր , ինչո՞ւ աս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեցիր ,
23 և իս ինչո՞ւ խրկեցիր . Վասն զի քանի որ քու անունովդ Փարաւոնին զրուցելու եկեր եմ , անկէ աս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեց . ու դուն բնաւ չփրկեցիր քու ժողովուրդդ ։

ԳԼ · Զ

1 Ետտուած իր խոստմունքը կը նորոգէ՝ իր Ե-հովայ անունը յայտնելով ։ 14 Ազգաբանու-Թիւն Ռուբենին , 15 Շմաւոնին , 16 Ղևիին՝ ուսկից որ Մովսէսը ու Ահարոնը եղան ։

1 Նէ Տէրը ըսաւ Մովսէսին . Փա-րաւոնին ինչ ընելիքս հիմա պիտի տեսնես . որ ՝Հզօր ձեռքով պիտի Թողու զանոնք , ու Հզօր ձեռքով Խպիտի վռընտե զանոնք
2 իր երկրէն ։ Եւ Աստուած խօսեց՝ ըսաւ՝ Մովսէսին՝ ու ըսաւ անոր .
3 Ես եմ ԵՀովան . Եւ Աբրահամին՝ Իսահակին ու Յակոբին՝ Էլ Ամենա-կարող Աստուծոյ անունով երևե-ցայ . բայց իմ Ե՚Հովայ անունովս
4 անոնց չյայտնուեցայ ։ Եղաւ ա-նոնց հետ իմ ուխտս հաստատելի , Ղոր անոնց տամ քանանու երկի-րը , անոնց օտարութեան երկիրը՝
5 ուր որ պանդխտացան ։ Եւ Է լը-սեցի ալ Իսրայէլի որդւոցը հառա-չանքը , որ Եգիպտացիները ծառա-յեցուցին . ու իմ ուխտս յիշեցի ։
6 Անոր համար Իսրայէլի որդւոցը ը-սէ . Ընես եմ ԵՀովան , և Ընես ձեզ Եգիպտացւոց ծանր գործքերուն տակէն պիտի հանեմ , ու ձեզ անոնց ծառայութենէն պիտի ա-զատեմ , և Խձեզ երկընցած բա-զուկով ու մեծ դատաստաններով
7 պիտի փրկեմ , Եւ Էձեզ ինձի ժողովուրդ պիտի առնեմ , ու Էձեզի Աստուած պիտի ըլլամ և պիտի գիտնաք որ ձեզ Է Եգիպտա-ցւոց ծանր գործքերուն տակէն հա-նող Տէրը՝ ձեր Աստուածը ես եմ ։
8 Եւ ձեզ ան երկիրը պիտի տանիմ , որն որ Աբրահամին՝ Իսահակին ու Յակոբին տալու Խերդումըրի՚՚ , ու ան ձեզի ժառանգութիւն ըլլալու-
9 պիտի տամ . ես եմ Տէրը ։ Եւ Մովսէս Իսրայէլի որդւոցը ասանկ զրուցեց . Ետայց անոնք Հոդիի նե-ղութենէն ու գործին ծանրութե-նէն մտիկ չըրին Մովսէսին ։
10 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
11 սելով . Մտիր՝ խօսէ Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին՝ որ Իսրա-յէլի որդիքը իր երկրէն արձակէ ։
12 Եւ Մովսէս խօսեցաւ Տէրոջը առջևը՝ ըսելով . Ահա Իսրայէլի որդիքը Հինձի մտիկ չըրին , Հապա Փարաւոնը ինձի ի՞նչպէս մտիկ պիտի ընէ . որ Ես է ծանրաբերուռ եմ ։
13 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ա-հարոնին , ու Հրաման ըրաւ անոնց՝ որ Իսրայէլի որդւոցը ու Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին Էրնաե , Իս-րայէլի որդիքը Եգիպտոսի երկրէն Հանելու համար ։
14 Անոնց Հայրերուն տուներուն գլուխներըասոնք են . Ղիսրայէլին անդրանկանը Ռուբենին որդիքը՝ Ենովք , Փաղոս , Եսրոն և Քար-մի . ասոնք են Ռուբենին տոհմերը ։
15 Եւ ՚Շմաւոնին որդիքը՝ Յամուէլ , Յամին , Ոհադ , Յաչին , Սահառ , և քանանացի կնկանը որդին Սա-ուղ . ասոնք են Շմաւոնին տոհ-
16 մերը ։ Եւ Ղևիին որդւոցը՝ ա-նունները իրենց ծնունդներուն հա-մեմատ ասոնք են . Գերսոն , Կա-հաթ և Մերարի ։ Եւ Ղևիին կենացը տարիները հարիւր երեսուն-
17 ուեօթը տարի եղան ։ Գերսոնին որդիքը իրենց տոհմերուն համե-
18 մատ՝ Ղոբնի ու Սեմէի էին ։ Եւ Կահաթին որդիքը՝ Ամրամ , Իսա-հառ , Քերոն ու Ոզիել ։ Եւ Կա-հաթին կենացը տարիները հարիւր
19 երսունուիրեք տարի եղան ։ Եւ Մերարիին որդիքը՝ Մոողի ու Մուսի . Ղևիին տոհմերը իրենց ծնունդներուն համեմատ ասոնք են ։
20 Եւ Ամրամ իր հօրաքոյրը Յոքա-բեդը իրեն կնիկ առաւ , որ ծնաւ իրեն Ահարոնը ու Մովսէսը ։ Եւ Ամրամին կենացը տարիները հարիւր
21 երսունուեօթը տարի եղան ։ Եւ Իսահառին որդիքը՝ Կորխ , Նա-
22 փեգ և Զեբդի ։ Եւ Ոզիելին որ-դիքը՝ Միսայէլ , Եղիսափան և
23 Սեթրի ։ Եւ Ահարոն իրեն կնիկ ա-ռաւ Էլիսաբեթը , Ամինադաբին աղջիկը՝ Նաա-սոնին քոյրը Եղիսաբեթը , և ծնաւ իրեն Նադաբը ու Աբիհուդը , Եղի-
24 ազարը ու Իթամարը ։ Եւ Կորխին որդիքը՝ Ասիր , Եղկանա և Աբիա-
25 սաֆ . ասոնք են Կորխեցւոց տոհ-մերը ։ Եւ Ահարոնին որդին Եղիա-զարը Փուտիելին աղջիկներէն իրեն կնիկ առաւ . և Էծնաւ իրեն Փենէ-հէսը . ասոնք են Ղևտացւոց հայ-րերուն գլուխները իրենց տոհմե-րուն համեմատ ։

ՆՈ · Ք · ՂԲ · 1491

ԸԳԼ · Զ · Ջ ։

Ի ԾՆ · ԼԴ · 30 ։ ԱԹՈՒԹ · Ժ Գ · 4 ։ ԻՀ · 12 ։ ԲԹՈՒԹ · Ժ · 6 ։ ՄԱԿ · ՀԹ · 6 ։

ՈՒ ԳԼ · Գ · 19 ։
Ի ԳԼ · ԺԱ · 1 ։ Ժ · 31 ։ 33 ։ 39 ։
Ջ ԾՆ · ԺԷ · 1 ։ ԼԸ · 11 ։ ԽՐ · 3 ։
Ը ԳԼ · Զ · 14 ։ ՍԱՂ · ԿՐ · 4 ։ ՃԳ · 18 ։ ԳՕՀ · Ը · 58 ։ ՑԱՅՏ · Ա · 4 ։
Ի ԾՆ · Ժ Ե · 18 ։ Ժ Է · 4 ։ 7 ։
Ա ԾՆ · Ժ Է · 8 ։ ԽՐ · 4 ։
Ի ԳԼ · Բ · 24 ։
Ը ՀՊՐ 2 ։ 8 ։ 29 ։
Ի ԳԼ · Է · 1Ը ։ Է · 4 ։ Բ ՕՐ · ԻԶ · 8 ։ ՍԱՂ · ՃԱ · 6 ։ ՃՂ · 11 ։ 12 ։
Ք ԳԼ · Ժ Ե · 13 ։ Բ ՕՐ · Է · 8 ։ ՄԱԿ · Ժ Է · 21 ։ ՆԵԵՄ · Ա · 10 ։
Ի Բ ՕՐ · Դ · 20 ։ Է · 6 ։ Ժ Դ · 2 ։ ԻՂ · 18 ։ ԲԹՈՒԹ · Է · 24 ։
Լ ԾՆ · Ժ Է · 7 ։ Ը ։ ԳԼ · ԻԲ · 45 ։ 46 ։ Բ ՕՐ · ԻԲ · 13 ։ ՑԱՅՏ · ԻԱ · 7 ։
Ի ԳԼ · Է · 4 ։ 5 ։ ՍԱՂ · ՃԱ · 6
Ծ ԾՆ · Ժ Է · 18 ։ ԻՂ · 8 ։ ԻԲ · 13 ։ ԼԵ · 12 ։
* ՔԷՐ. ՁԵՌՔԸ ՎԲՐ ՎԵՐԳՐԱ-ՅԻ · ՈՏՔ ԾՆ · Ժ Է · 22 ։ Բ ՕՐ · ԼԲ · 40 ։

ՆՈ · Ք · ՂԲ · 1491

ՅԳԼ · Ե · 21 ։

ՀՀՊՐ 9 ։

ՅՀՊՐ 80 ։ ԳԼ · Դ · 10 ։ ԵՐԻՄ · Ա · 6 ։

† ԵՔԷՐ · ԱՆԹԼՓՈՒԱ պակասքնեբով

ՂԾՆ · ԽՂ · 9 ։ Ա ՄՆ · Ե · 8 ։

ՃԱ ՄՆ · Դ · 24 ։ ԾՆ · ԽՂ · 10 ։

ՃԾՆ · ԽՂ · 11 ։ ԹՈՒ · Ը · 17 ։ Ա ՄՆ · Գ · 1 ։ 16 ։

1619

ՃԱ ՄՆ · Զ · 17 ։ ԻԷ

ՆԹՈՒ · ԻԶ · 57 ։ Ա ՄՆ · Զ · 2 ։ 18 ։

ԼԱ ՄՆ · Զ · 19 ։ ԻԷ · 21 ։

*ԳԼ · Բ · 1 ։ 2 ։ ԹՈՒ · ԻԶ · 59 ։

ԼԹՈՒ · ԺԶ · 1 ։ Ա ՄՆ · Ը · 87 ։ 88 ։ ՂՂԼ · ԺՃ · 4 ։ ԹՈՒ · Ի · 80 ։

ԻԲԲ 1530

ԼՀՈՒԲ · Դ · 19 ։ 20 ։ Ա ՄՆ · Բ · 10 ։ ՄԱՐ · Ա · 4 ։

ՃՂԼ · ԺՃ · 1 ։ ԹՈՒ · Դ · 2 ։ ԻԶ · 60 ։ Ա ՄՆ · Զ · 8 ։ ԻԴ · 1 ։

*ԹՈՒ · ԻԶ · 11 ։ ·
ԼԹՈՒ · ԻԵ · 7 ։ 11 ։ ՑԵՍ · ԻԷ · 33 ։

Ն · ք · ՉՁ · 1491

ա Հմր 13 ։
բ ԳԼ · է · 4 ։ Ժբ · 17 ։ 51 ։ Թոս · ԼԳ · 1 ։
ց Հմր 13 ։ ԳԼ · Լբ · 7 ։ ԼԳ · 1 ։ Սաղ · Կէ · 20 ։
ա ԳԼ · է · 1 ։ 3 ։ է · 10 ։
է Հմր 2 ։
ը Հմր 11 ։ ԳԼ · է · 2 ։
թ Հմր 12 ։ ԳԼ · դ · 10 ։
* ԵՔբ · ան Թլփատ պո կունքնեով

26 Ասոնք են ան Ահարոնը ու Մովսէսը՝ ա որոնց ըսաւ Տէրը . Իսրայէլի որդիքը իրենց բ զօրքերովը Եգիպտոսէ երկրէն հանեցէք ։ 27 տոսի երկրէն հանեցէք ։ Իսրայէլի որդիքը գ Եգիպտոսէն հանելու համար՝ ա Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսողները ասոնք են . ասոնք Մովսէսը ու Ահարոնը ։

28 Քե ան օրը որ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ Եգիպտոսի երկրին մէջ , 29 Ան ատենը Տէրը Մովսէսին զրուցեց ըսելով . ա Ես եմ Եհովան . ա ամէն ինչ որ քեզի կ'ըսեմ , Եգիպտոսի 30 Փարաւոն թագաւորին խօսէ ։ Եւ Մովսէս Տէրոջը առջևը ըսաւ . Ահա ա Ես * ծանրալեզու եմ , ու Փարաւոն ի՞նչպէս մտիկ պիտի ընէ ինծի ։

ԳԼ · Է

4 Աստուած կը քաջալերէ Մովսէսը որ համարձակ Փարաւոնին առջևը ելլէ ։ 7 Մովսէսին տարիքը ։ 8 Ընոր դաւազանը օձ կ'ըլլայ ։ 11 Մոգերն ալ նոյն բանը կ'ընեն ։ 13 Փարաւոնին սիրտը կը կարծրանայ ։ 19 Գետին ջուրը արիւն կը դառնայ ։

1 Ետեր Տէրը ըսաւ Մովսէսին . Նայէ , քեզ ա Փարաւոնին աստուած ըրի , ու քոյրդ եղբայրդ Ահարոնը բ քու մարգարէդ ըլլայ ։ 2 Դուն ես խօսիս ան ամէնը՝ որ քեզի կը հրամայեմ , և քու եղբայրդ Ահարոնը Թող խօսի Փարաւոնին՝ որ Իսրայէլի որդիքը իր երկրէն 3 արձակէ ։ Եւ ես ա Փարաւոնին սիրտը պիտի պինդցընեմ , ու իմ Ժնշաններս և հրաշքներս Եգիպտոսի երկրին մէջ ՀպիտիՀ շատցընեմ ։ 4 Եւ Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ . ու ես իմ ձեռքս Եգիպտոսի վրայ պիտի ձգեմ , և իմ զօրքերս՝ իմ ժողովուրդս Իսրայէլի որդիքը Եմեծ դատաստաններով պիտի հան 5 նեմ Եգիպտոսի երկրէն ։ Եւ Երբոր իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկնցընեմ՝ ու Իսրայէլի որդիքը ասոնց մէջէն հանեմ , բ պիտի գիտնան Եգիպտացիք՝ Թէ ես եմ Տէրը ։ 6 Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը Իրենց պատուիրածին պէս ըրին . ա 7 Նանկ ըրին ։ Եւ Մովսէս Եւթսուն տարեկան էր , ու Ահարոն ուԹսունուիրիք տարեկան էր , երբոր Փարաւոնին հետ խօսեցան ։

8 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու 9 Ահարոնին՝ ըսելով . Երբոր Փարաւոն ձեզի խօսի՝ ու ըսէ . Ը Ձեզի համար հրաշք ցուցուցէք . ան ատենը Ահարոնին ըսես Թէ՝ բ Գաւազանդ առ , ու Փարաւոնին առջևը՝ Նէ՛ը նետէ . Ե անիկայ վիշապ պիտի 10 ըլլայ ։ Եւ Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնին՝ ու Տէրոջը պատուիրածին պէս ըրին . և Ահարոն իր գաւազանը նետեց Փարաւոնին և անոր ծառաներուն 11 առջևը , և վիշապ եղաւ ։ Եւ Փարաւոն ալ իմաստուններն ու Նկախարդները կչկանչեց . և Եգիպտոսի մոգերը՝ անոնք ալ բ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին . 12 դուԹիւններովը անանկ ըրին . Եւ ամէն մէկը իր գաւազանը նետեց , ու անոնք վիշապներ եղան . բայց Ահարոնին գաւազանը անոնց գաւազաններն կլլեց ։ 13 Եւ Փարաւոնին սիրտը կարծրացաւ , ու անոնց մըտիկ չըրաւ , բ ինչպէս որ Տէրը ըսեր էր ։

14 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւոնին սիրտը խստացաւ . Ժողովրդը 15 վռրդը արձակել չուզեր ։ Առտուանց Փարաւոնին գնա . ահա անիկայ դէպ ի ջուրը կ'ելլէ . ու դուն դետին եզերքը անոր դիմացը կայնէ , և ան Նօձ դարձած գաւազանը 16 ղանը ձեռքդ առ , ու ըսէ անոր . Եբրայեցւոց Եհովայ Աստուածը իս քեզի խրկեց՝ ըսելով . Արձակէ իմ ժողովուրդս՝ ա որ զիս պաշտեն անապատին մէջ . և ահա մինչև հիմ 17 մա մտիկ չըրիր ։ Այսպէս կ'ըսէ Տէրը . Ն Աստ դիտնաս Թէ ես եմ Տէրը . ահա ես իմ ձեռքս եղած գաւազանով գետին մէջի ջուրերուն պիտի զարնեմ , ու Ղարիւն Ղպիտի 18 դառնան . Եւ գետին մէջ եղած ձուկերը պիտի մեռնին , ու գետը պիտի հոտի . և Եգիպտացիք ա պիտի զզուին գետէն ջուր խմելու ։

19 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ըսէ Ահարոնին . Գաւազանդ առ , ու ա ձեռքդ երկընցուր Եգիպտացւոց ջուրերուն վրայ , անոնց առուներուն վրայ , անոնց գետերուն վրայ , ու անոնց լիճերուն վրայ , և անոնց բոլոր ջրակուտակներուն վրայ՝ որ արիւն ըլլան . ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ փայտէ ու քարէ ամաններուն մէջն ալ Ը՝րիւբ արիւն ըլ 20 լան ։ Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը պատուիրածին պէս ըրին . և Ղգաւազանը վերցուց , ու Փարաւոնին առջևը և անոր ծառաներուն առջևը գետին մէջի ջուրերուն զարկաւ , և գետին մէջի բոլոր ա ջուրե 21 րը արիւն դարձան ։ Եւ գետին մէջ եղած ձուկերը մեռան , ու գետը հոտեցաւ , և Եգիպտացիք բ չկրնար գետէն ջուր խմել . ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ արիւն կար ։ 22 բ Եւ Եգիպտոսի մոգերն ալ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին . և Փարաւոնին սիրտը կարծրացաւ , ու ՝ Տէրոջը ըսածին պէս՝ 23 անոնց մտիկ չըրաւ ։ Եւ Փարաւոն դարձաւ՝ ու իր տունը եկաւ , ու 24 † աս ալ անոր սրտին չդպաւ ՚՚ ։ Եւ բոլոր Եգիպտացիք գետին բոլորն իրենց ջուր խմելու համար փորեցին , որովհետև անոնք չէին կրնար գետէն ջուր խմել ։ 25 Եւ եօթն օր լրացաւ , երբ Տէրը զարկած էր գետը ։

Ն · ք · ՉՁ · 1491

գ ԳԼ · դ · 3 ։
յ բ Տէմ · դ · 8 ։
ղ Ծն · խա · 8 ։
ե Հմր 22 ։ ԳԼ · ը · 7 ։ 18 ։
ժ ԳԼ · դ · 21 ։ Հմր 4 ։
ի ԳԼ · ը · 15 ։ ժ · 1 ։ 20 ։ 27 ։

ն ԳԼ · դ · 2 ։ 3 ։ Հմր 10 ։
ղ ԳԼ · դ · 18 ։
ո ԳԼ · դ · 12 ։ 18 ։ ե · 1 ։ 3 ։
ղ ԳԼ · ե · 2 ։ Հմր 5 ։
ոգ Ցայտ · ժգ · 4 · 6 ։
ը ԳԼ · դ · 9 ։
ա Հմր 24 ։
ո ԳԼ · ը · 5 ։ 6 ։ 16 ։ Թ · 22 ։ ժ · 12 ։ 21 ։ ժգ · 21 ։ 26 ։
է ԳԼ · ժէ · 5 ։
ա Սաղ · Հը · 44 ։ ձն · 29 ։
բ Հմր 18 ։
ց Հմր 11 ։
ա Հմր 3 ։
† ԵՔբ · իր սիրտը աս բանիս վրայ չդրաւ ։

Ն · Ք · ՂՖ · 1491

տիքը փորելին խմելու ջուրի համար . ինչու որ պետին ջուրէն չէին
25 կրնար խմել՝ եւ Տէրը եւթը օր լրցնցաւ ։

ԳԼ · Ը

1 Եգիպտոսին վրայ դորտեր կը խրկուին ։ 8 Փարաւոն կ'աղաչէ Մովսէսին ։ 12 Մովսէսն ալ աղօթքով զանոնք կը վերցնէ ։ 16 Եպբը փոչին դէպ՝ի երկինքը կը ցնորէ . ու մուն կ'ըլլայ . իսկ մդեղը չեն կրնար նոյնը ընել ։ 20 Շանաճանճին հարուածը ։ 25 Փարաւոն քիչ մը կը համձզուի ։ 32 սակայն նորէն կը խստանայ ։

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւոնին մուր , ու ըսէ անոր . Տէրը այսպէս կ'ըսէ . Արձակէ իմ ժո-
– ԳԼ · ԺԹ · 12 , 18 ։ 2 ղովուրդս՝ որ պաշտեն զիս ։ Եւ թէ որ ՚ի՛նչ՝ արձակել չուզես , ահա ես քու բոլոր սահմաններդ դորտե-
Բ ԳԼ · Է · 14 , Թ · 2 ։ 3 րով պիտի զարնեմ ։ Եւ գետը շատ գորտեր պիտի հանէ , ու անոնք պիտի ելլեն , ու քու տանդ՝ և ննջեղենի սենեակիդ՝ ու անկողնիդ՝ և քու ծառաներուդ տուներուն՝ և քու ժողովուրդիդ՝ ու քու թո-
Դ ՍԱՂ · ՀԸ · 30 ։ 4 նիկներուդ՝ և խմորի տաշտերուդ մէջ պիտի մտնեն ։ Եւ գորտերը քու վրադ՝ և ժողովուրդիդ վրայ՝ ու բոլոր ծառաներուդ վրայ պիտի ելլեն ։
5 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ահարոնին ըսէ՝ Ձգուէ ձեռքդ գետիրուն վրայ՝ գետիրուն վրայ՝ ու լիճերուն
Է ԳԼ · Է · 19 ։ վրայ Է ձեռքդ երկրնցուր քու գաւազանովդ , ու Եգիպտոսի երկրին
6 վրայ գորտեր հանէ ։ Եւ Ահարոն երկրնցուց իր ձեռքը Եգիպտոսի
ՂՍաղ · Հր · 45 ։ ՃԹ · 30 ։ ջուրերուն վրայ ։ Եւ գորտերը ելան՝ ու Եգիպտոսի երկիրը ծածկե-
Է ԳԼ · Է · 11 ։ 7 ցին ։ Է Եւ մոգերն ալ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին , ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանեցին ։
8 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ . ԷԱղաչեցէք Տէրոջը՝ որ ինծմէ ու իմ ժո-
Ը ԳԼ · Թ · 28 , Ժ · 17 , Թուա · իա · 7 , գ Թագ · Ժգ · 6 ։ Գոր · Ը · 24 ։ ղովուրդէս վերցնէ գորտերը , ու ժողովուրդը պիտի արձակեմ որ
9 Տէրոջը զոհ մնատուցանեն ։ Եւ Մովսէս ըսաւ Փարաւոնին . Հրամայէ ինծի , թէ ե՛րբ քեզի համար՝ ու ծառաներուդ համար և ժողովուրդիդ համար աղաչեմ , որ քեզմէ ու քու տուներէդ գորտերը կորսուին , ու միայն գետին մէջը մնան ։
10 Եւ անիկայ ըսաւ . Վաղը ։ Եւ ինքը ըսաւ . Քու խօսքիդ պէս ըլ-
Ի ԳԼ · ԺԹ · 14 , Ր Օր · ԼԲ · 26 ։ ԲԹագ · Է · 22 ։ ա ԹԱ · ԺԷ · 20 ։ Սաղ · ՃՀ · Տ ։ Ես · Խղ · 9 ։ Ե-ր ԵՄ · Ժ · 6 , 7 ։ լայ , որ գիտնաս թէ՝ մեր Ի՛նչովկայ
11 Աստուածդին պէս չկայ · Եւ քեզմէ՝ ու քու տուներէդ՝ և քու ծառաներէդ՝ ու քու ժողովուրդէդ գորտերը պիտի վերնան . մի-
12 այն գետին մէջը պիտի մնան ։ Եւ Մովսէս ու Ահարոն՝ Փարաւոնին քովէն ելան . ու Մովսէս Տէրոջը աղաղակեց ան գորտերուն համար՝ որ Փարաւոնին վրայ բերեր էր ։
13 Եւ Տէրը Մովսէսին ըսածին պէս ըրաւ . ու տուներէն՝ դիւղերէն և
14 արտերէն գորտերը մեռան ։ Եւ դէզ դէզ ժողվեցին զանոնք , ու
15 երկիրը հոտեցաւ ։ Բայց երբոր Փարաւոն Է հանդստութիւն ըլլալը տեսաւ , Է իր սիրտը խստացուց , ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը ըսածին պէս ։
16 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ըսէ Ահարոնին . Քու գաւազանդ երկընցուր , ու երկրի հողին զարկ , որ Եգիպտոսի բոլոր երկրին վրայ
17 * մուն ըլլայ ։ Եւ անանկ ըրին . քանզի Ահարոն իր գաւազանովը իր ձեռքը երկընցուց , ու երկրի հողին զարկաւ , և Է մարդոց վրայ ու անասուններուն վրայ մուն եղաւ . Եգիպտոսի բոլոր երկրին վրայ երկ-
18 րին բոլոր հողը մուն եղաւ ։ Եւ Է մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին՝ որ մուներ հանեն , բայց Է չկրցան . այսպէս մարդոց ու անասուններուն վրայ
19 մուն եղաւ ։ Եւ մոգերը ըսին Փարաւոնին . Ա՛ս Հ Աստուծոյ մատն է . և Փարաւոնին Է սիրտը կարծրացաւ , ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը ըսածին պէս ։
20 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ե՛ւ առտուան կանուխ ելի՛ր , ու Փարաւոնին առջևը կայնէ . (ահա անիկայ դէպ՝ի ջուրը կ'ելլէ ։) և ըսէ անոր . Տէրը այսպէս կ'ըսէ . Ձ՛որ-
ՃՀՄր 1 ։ ձակէ իմ ժողովուրդս որ զիս պաշ-
21 տէ ։ Հապա թէ որ իմ ժողովուրդս չարձակես , ահա ես քու վրադ՝ ու քու ծառաներուդ վրայ՝ և քու ժողովուրդիդ վրայ՝ ու քու տուներուդ վրայ չանճանճ պիտի խրկեմ , և Եգիպտացւոց տուները չանճանճով պիտի լեցուին , նաև ան գետինը՝ որուն վրայ անոնք կը
22 գտնուին ։ Եւ ան օրը իմ ժողովուրդս բնակած Ր գեսեմի երկիրը պիտի որոշեմ , ու հոն չանճանճ պիտի չըլլայ . որ գիտնաս թէ երկրին
Ր ԳԼ · Թ · 4 , Ը , 26 ։ Ժ · 23 , Ժա · 6 , Ծ ։ Ժբ · 13 ։ 23 մէջտեղը ես եմ Տէրը ։ Եւ իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ մէջ խտրոց մը պիտի դնեմ . վաղը
24 սա նշանը պիտի ըլլայ ։ Եւ Տէրը այնպէս ըրաւ . ու Փարաւոնին տանը՝ և անոր ծառաներուն տուներուն՝ ու Եգիպտոսի բոլոր երկրին վրայ Ր չատ չանճանճ եկաւ . – չանճանճին պատճառովը երկիրը աւերուեցաւ ։
Ր Սաղ · Ծ · 45 , ՃՆ · 31 ։ 25 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ . Գացէք ձեր Աստուծոյն զոհ մատուցէք

Ն · ք · ՁԲ · 1491

Ն ԾՆ ԽԳ 32 ։ ԽԶ · 34 ։ ք Օր · է 25 · 26 ։ ժբ · 31 ։

26 — երկրին մէջ ։ Եւ Մովսէս ըսաւ . Արժան չէ ասանկ ընել . ինչու որ Եգիպտացւոց գարշելի բաները՝ Տէրոջը մեր Աստուծոյն զոհ պիտի մատուցանենք . թէ որ Եգիպտացւոց գարշելի բաները իրենց աչքին առջեւը զոհ մատուցանելու ըլլանք ,

ՂԳԼ · Գ · 18 ։

27 պիտի չթարկոծի՞ն մեզ ։ Մենք ճիշդ օրուան ճամբայ պիտի երթանք անապատին մէջ , ու զոհ պիտի մատուցանենք մեր Տէր Աստուծոյն , ինչպէս որ ինքը մեզի պատուիրէ ։

ԹԳԼ · Գ · 12 ։

28 Եւ Փարաւոն ըսաւ . Ես ձեզ թող կու տամ որ երթաք անապատին մէջ ձեր Եհովայ Աստուծոյն զոհ մատուցանէք միայն թէ չատ հեռու չերթաք . Ինծի համար աղաչեցէք ։

ՂՀՄՌ 5 · ԳԼ · Թ · 28 ։ Գ Թագ · Ժ · 6 ։

29 Եւ Մովսէս ըսաւ . Ահա ես քու քովէդ կ՚ելլեմ ու Տէրոջը կ՚աղաչեմ որ վաղը Փարաւոնէն՝ անոր ծառաներէն՝ ու անոր ժողովուրդէն չանճաճներ երթայ . բայց Փարաւոն դարձեալ չխաբէ՝ ժողովուրդը թող չտալով Տէրոջը զոհ

ՂՀՄՐ 15 ։

30 մատուցանելու ։ Եւ Մովսէս Փարաւոնին քովէն ելաւ , ու Տէրոջը

ՂՀՄՐ 12 ։

31 աղաչեց ։ Եւ Տէրը Մովսէսին խօսքին պէս ըրաւ , ու Փարաւոնէն՝ անոր ծառաներէն և անոր ժողովուրդէն չանճաճները վերցուց . մէկ

32 հատ մըն ալ չմնաց ։ Եւ Փարաւոն անգամին ալ՝ իր սիրտը խստացուց ու ժողովուրդը չարձակեց ։

— ՀՄՐ 15 · ԳԼ · Գ · 21 ։

Գ Լ · Ը

1 Ընանդոց մահը ։ 8 Ուխտքներու ու խոստումներու հարուածքը ։ 22 Կարկուտ ։ 27 Փարաւոն կարկուտին համար կ՚աղաչէ Մովսէսին ։ 35 Սակայն դարձեալ անոր սիրտը կը կարծրանայ ։

— Գ Լ · Ը · 1 ։

1 Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւոնին մէջը , ու խօսէ անոր . Եբրայեցւոց Տէր Աստուածը այսպէս՝ կ՚ըսէ . Արձակէ իմ ժողովուրդս որ ինծի պաշտեն ։

Բ Գ Լ · Ը · 2 ։

2 վըւրդ՝ որ իս պաշտեն ։ Քանզի թէ որ Ը ՀՆԵՆԼ արձակել չուզես , ու տակաւին պինդ բռնես զանոնք ,

Է Գ Լ · Է · 4 ։

3 Ահա Տէրոջը ձեռքը դաշտին մէջ եղած քու հօտերուդ վրայ ըլլալով , ձիերուն՝ էշերուն՝ ուղտերուն՝ արջառներուն ու ոչխարներուն վրայ սաստիկ կոտորած մը պիտի ըլլայ ։

Ը Գ Լ · Ը · 22 ։

4 Եւ Տէրը Իսրայէլի հօտերուն՝ ու Եգիպտոսի հօտերուն միջտղը պիտի զատէ . և Իսրայէլի որդւոցը մէկ

5 ԱՆՈՒՆԸ պիտի չմնայի ։ Եւ Տէրը ժամնակ որոշեց՝ ըսելով . Վաղը Տէրը ասբանը պիտի ընէ երկրին

6 վրայ ։ Եւ հետեւեալ օրը Տէրը ասբանը ըրաւ , ու Եգիպտացւոց երոլորը հօտերը մեռան . բայց Իսրայէլի որդւոցը հօտերէն մէկը չմեռաւ ։

ՓՆՍԱՂ · ՀԸ · 50 ։

7 Ռաւ ։ Եւ Փարաւոն մարդ խրկեց , ու ահա Իսրայէլի հօտերէն մէկն ալ մեռած չէր . և Ը Փարաւոնին սիրտը խստացաւ , ու ժողովուրդը չարձակեց ։

Ն · ք · ՁԲ · 1491

Ը ԳԼ · է · 14 ։ Ը · 32 ։

8 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ու Ահարոնին . Առէք ձեզի ձեռքերնիդ լեցուն Ճոցի մխիր , և Մովսէս դէպ՝ ի երկինքը ցանէ ան Փարաւոնին

9 առջեւը ։ Ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ փոշի պիտի ըլլայ , ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ Ե խաղաւարտներ հանող ուռեցքներ պիտի

Ե ՓԱՍ · ԺԱ · 2 ։

10 ըլլայ ։ Եւ Ճոցի մխիրը առին , ու Փարաւոնին առջեւը կայնեցան . և Մովսէս դէպ՝ ի երկինքը ցանեց ան , ու մարդոց և անասուններուն վրայ Ը խաղաւարտներ հանող ուռեցքներ

Ը Օր · Իբ · 27 ։ Ա ԳԼ · Ը · 18 , 19 ։ Բ ՏԻՄ · Գ · 9 ։

11 եղաւ ։ Եւ Ի մոգերը ուռեցքներուն պատճառովը չկրցան կայնիլ Մովսէսին առջեւը . ինչու որ ուռեցքները մոգերուն վրայ ալ՝ ու բոլոր

12 Եգիպտացւոց վրայ ալ եղաւ ։ Եւ Տէրը կարծրացուց Փարաւոնին սիրտը . ու անոնց մտիկ չըրաւ , Ի ինչպէս որ Տէրը Մովսէսին ըսեր էր ։

Ի ԳԼ · Դ · 21 ։

13 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ։ Ընտուանց կանուխ ելիր , ու Փարաւոնին առջեւը կայնէ , ու անոր ըսէ . Եբրայեցւոց Տէր Աստուածը ասանկ կ՚ըսէ . Արձակէ իմ ժողովուրդս՝ որ

Ի ԳԼ · Ը · 20 ։

14 իս պաշտեն . Քանզի ասանգամ իմ բոլոր հարուածներս պիտի խրկեմ քու վրադ՝ և քու ծառաներուդ՝ ու քու ժողովուրդիդ վրայ . Նոր գիտնաս թէ բոլոր երկրի մէջ

*ԵԹՐ · ՍԲՐ · ՄԻՏ ՎԲՅ՝

15 ինծի պէս ՀՂԼ չկայ ։ Քանզի հիմա Է իմ ձեռքս պիտի երկրընդնեմ՝ որ քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ , ու երկրէն պիտի

ԼԳԼ · Ը · 10 ։

Է ԳԼ · Գ · 20 ։

16 կորսուիս ։ Եւ Ե ասոր համար քեզ վերցուցի՝ որ իմ զօրութիւնս քեզ-մով ցուցընեմ , ու բոլոր երկրի մէջ

Ե ՀՈՎ · Թ · 17 ։ ՏԻՄ ԳԼ · ԺԳ · 17 ։ ԱՌԱԿ · ԺԳ · 4 ։ ա ՊԵՏ · Բ · 9 ։

17 իմ անունս պատմուի ։ Դուն տակաւին իմ ժողովուրդիս դէմ կենալով՝ պիտի չարձակե՞ս զանոնք ։

18 Ահա ես վաղը աստեն խիստ սաստիկ կարկուտ պիտի տեղամ , որ անոր պէս Եգիպտոսի մէջ եղած չէ՝ անոր հաստատուած օրէն մինչև

19 հիմա ։ Եւ հիմա Ճ՚ղրթ խրկէ , ԱՆ ժողովէ քու հօտերդ՝ ու ինչ որ ունիս դաշտին մէջ . Ամէն մարդ ու անասուն որ դաշտին մէջ գըտնուի՝ ու տուները ժողվուած չըլլայ , անոնց վրայ կարկուտ պիտի

20 իջնէ , ու պիտի մեռնին ։ Փարաւոնին ծառաներէն ով որ Տէրոջը խօսքէն կը վախնար՝ իր ծառաները ու հօտերը տուներու մէջ ժողվեց .

21 Եւ ով որ Տէրոջը խօսքին ուշադրութիւն չըրաւ , իր ծառաները ու

Ն·Ք·ԶՔ· 1491

իր հօտերը դաշտին մէջ թողուց ։
22 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ։ Քու ձեռքդ դէպ՚ի երկինքը երկընցուր, ու եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ՝ և եգիպտոսի երկրին մէջ եղած արտերուն բոլոր խոտին վրայ կարկուտ պիտի գայ ։ Եւ Մովսէս իր
23 գաւազանը դէպ՚ի երկինքը երկընցուց ։ ու Տէրը որոտումի և կարկուտ խրկեց, ու երկրին վրայ կրակ կը վազէր ։ ու Տէրը եգիպտոսի
24 երկրին վրայ կարկուտ տեղաց ։ Եւ կարկուտ՝ և կարկուտին մէջտեղը խառնուած կրակ եկաւ ։ անանկ սաստիկ էր որ եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ ազգ ըլլալէն հետէ ա-
25 նոր պէս եղած չէր ։ Եւ կարկուտը եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ դաշտը եղածին ամէնը՝ մարդէն մինչև անասուն զարկաւ ։ և կարկուտը դաշտին բոլոր խոտը զարկաւ, ու դաշտին բոլոր ծառերը
26 կոտրեց ։ Միայն Գեսեմի երկրին մէջ՝ ուր որ Իսրայէլի որդիքը էին՝ անկէ չեղաւ ։
27 Եւ Փարաւոն խրկեց, ու կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ անոնց ։ Ես անգամ մեղանչեցի ։ Եհովան արդար է, և ես ու իմ ժողովուրդս չանցաւոր ենք ։
28 Աղաչեցէ՛ք Տէրոջը՝ որ Աստուծոյ որոտումները ու կարկուտը դադարին ։ ու ձեզ պիտի արձակեմ, և
29 ալ պիտի չկենաք ։ Եւ Մովսէս ըսաւ անոր ։ Քաղաքէն դուրս ելլալիս պէս՝ իմ ձեռքերս Տէրոջը պիտի երկընցընեմ, ու որոտումները պիտի դադարին, և ալ կարկուտ պիտի չըլլայ ։ որ դիտնաս թէ Երկիրը
30 Տէրոջն է ։ Բայց ես գիտեմ որ դուն ու քու ծառաներդ տակաւին Տէր Աստուծմէն չէք վախնար ։
31 Եւ քթանը ու գարին զարնուեցան ։ Ինչու որ գարին հասած էր,
32 ու քթանը սերմի գացած ։ Բայց ցորենը ու հաճարը չզարնուեցան ։ ինչու որ ուշ կը բուսնին ։
33 Եւ Մովսէս փարաւոնին քովէն քաղաքէն դուրս ելաւ, ու ՚իր ձեռքերը Տէրոջը երկընցուց ։ և որոտումները ու կարկուտը դադարեցաւ, ու երկրին վրայ անձրև
34 չկաթեցաւ ։ Եւ փարաւոն երբոր անձրևին ու կարկուտին և որոտումին դադարիլը տեսաւ, նորէն մեղանչեց, ու սիրտը խստացուց՝
35 ինքը ու իր ծառաները ։ Այսպէս Եփարաւոնին սիրտը կարծրացաւ, ու Իսրայէլի որդիքը չարձակեց, ինչպէս որ Տէրը Մովսէսին ձեռքովը ըսեր էր ։

ԳԼ·Ժ

1 Աստուած կը սպառնայ մարախներ խրկել ։ 7 Փարաւոն իր ծառաներուն աղաչանքէն քիչ մը կը համոզուի Իսրայէլացիները արձակելու ։ 12 Մարախները կու գան, 16 որոնց համար փարաւոն կ՚աղաչէ Մովսէսին ։ 21 Խաւարին հարուածը ։ 24 փարաւոն նորէն կ՚աղաչէ Մովսէսին, 27 բայց տակաւին անոր սիրտը կը կարծրանայ ։

Ն·Ք·ԶՔ· 1491

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին, Մտիր Փարաւոնին ։ Ինչու որ ես ա-
նոր սիրտը՝ ու անոր ծառաներուն սիրտը խստացուցի, Որ աս իմ նշաններս ցուցընեմ անոնց մէջը ։
2 Եւ որ դ պատմես քու որդիիդ՝ ու քու որդւոյդ որդիին ականջներուն՝ ինչ որ ըրի Եգիպտացւոց մէջ, և իմ նշաններս որ անոնց մէջ ցուցուցի, որ գիտնաք թէ ես եմ Տէրը ։
3 Եւ Մովսէս ու Ահարոն մտան փարաւոնին, ու ըսին անոր ։ Եբրայեցւոց Եհովայ Աստուածը այսպէս կ՚ըսէ ։ Մինչև ե՞ր պիտի չընկամիս խոնարհիլ իմ առջեւս ։ արձակէ իմ ժողովուրդս որ ին պաշտեն ։
4 Վասն զի թէ որ իմ ժողովուրդս արձակել չուզես, ահա վաղը քու նահանգներուդ վրայ Եմա-
5 րախներ պիտի խրկեմ ։ Ու երկրին երեսը պիտի ծածկեն, և հէք պիտի չկրնայ տեսնել երկիրը ։ ու կարկուտէն ազատուած ձեզի մնացածը՝ պիտի ուտեն, և արտին մէջ բուսած ձեր բոլոր ծառերը պիտի
6 ուտեն ։ Եւ էքու տուներդ՝ ու քու բոլոր ծառաներուդ տուները՝ և ամէն եգիպտացւոց տուները պիտի լեցուին ։ որ ո՛չ քու հայրերդ՝ ո՛չ ալ քու հայրերուդ հայրերը տեսած են՝ իրենց երկրի վրայ եղած օրէն մինչև այսօր ։ Եւ դարձաւ ես փարաւոնին քովէն դուրս ելաւ ։
7 Եւ փարաւոնին ծառաները ըսին անոր ։ Մինչև ե՞ր աս մարդը ըմեզի որոգայթ պիտի ըլլայ ։ արձակէ մարդիկը որ իրենց Եհովայ Աստուածը պաշտեն ։ տակաւին չե՞ս գիտեր որ Եգիպտոսը աւերուեցաւ ։
8 Եւ Մովսէսը ու Ահարոնը փարաւոնին դարձուցին ։ և անիկայ ըսաւ անոնց ։ գացէ՛ք պաշտեցէ՛ք ձեր Եհովայ Աստուածը ։ Բայց որո՞նք
9 են գացողները ։ Եւ Մովսէս ըսաւ ։ Մեր մանկունքներովը ու մեր ծերերովը պիտի երթանք, մեր տըղաքներովը ու մեր աղջիկներովը, մեր հօտերովը ու մեր արջառներովը պիտի երթանք ։ քանզի Տէրոջ պի-
10 տի պահենք Տէրոջը ։ Եւ ըսաւ անոնց ։ Տէրը անանկ ձեր հետը ըլլայ, ինչպէս որ ես ձեզ ու ձեր տղաքները կ՚արձակեմ ։ զգուշացէ՛ք,

ա ԳԼ·դ·21 ։ է·14 ։
բ ԳԼ·է·4 ։
գ բ Օր·դ·9 ։ Սաղ·խգ·1 ։ Հա·18 ։ Հը·5, ՃԼ ։ Յովէլ·ա·3 ։
դ գ Թագ·ի·29 ։ բ Մն·է·14 ։ ղ·27 ։ Յոբ·խր·6 ։ Երեմ·ժգ·18 ։ Յակ·դ·10 ։ ա Պէտ·է·6 ։
ե Ա՛ռակ·է·27 ։ Յայտ·ի·3 ։
զ ԳԼ·ի·32 ։ Յոէլ·ա·4 ։ բ·25 ։
է ԳԼ·ը·3 ։ 21 ։
ը ԳԼ·իդ·33 ։ Յես·իգ·18 ։ աթագ·ժը·21 ։ Յով·է·26 ։ ա Կոր·է·35 ։
թ ԵՔԲ·ովվ և ովվ
ի ԳԼ·է·1 ։

քանզի չարիք կան ձեր առջևը ։
11 Ո՛չ այդպես . հիմա դուք երիկ մարդիկներդ գացէք՝ ու Տէրը պաշտեցէք . ինչու որ դուք ատիկայ կ՚ուզէիք ։ Եւ Փարաւոնին առջևէն վեր ընտուեցան ։
12 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ծերը կընցուր քու ձեռքդ Եգիպտոսի երկրին վրայ մարախներուն համար , որ Եգիպտոսի երկրին վրայ ելլեն , և Երկրին բոլոր խոտը՝ կարկուտէն
13 բոլոր մնացածը ուտեն ։ Եւ Մովսէս երկընցուց իր գաւազանը Եգիպտոսի երկրին վրայ . ու Տէրը բոլոր այն օրը ու բոլոր գիշերը երկրին վրայ արևելեան հով փչել տուաւ . և երբ առտու եղաւ՝ արևելեան
14 հովը մարախները բերաւ ։ Եւ մարախները Եգիպտոսի բոլոր երկրին վրայ ելան , ու Եգիպտոսի բոլոր սահմաններուն վրայ իջան . խիստ սաստիկ էին . Ասոնցմէ առաջ ասանկ մարախ չեղաւ , անոնցմէ ետքն
15 ալ անանկ պիտի չըլլայ ։ Եւ Ծրոլոր երկրին երեսը ծածկեցին , ու երկիրը մթընցաւ , ու Երկրին բոլոր խոտը՝ և կարկուտէն մնացած ծառերուն ամէն պտուղները կերան . ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ եղած ծառերուն վրայ և արտին խոտերուն վրայ բնաւ կանանչեղէն չմնաց ։
16 Ուստի Փարաւոն շուտով կանչեց Մովսէսը ու Ահարոնը , և ըսաւ . Հաշ Տէր Աստուծոյն՝ ու ձեզի
17 դէմ մեղանչեցի . Եւ հիմա ներողութիւն ընդունեցէք իմ յանցանքս , ու Ձեր Տէր Աստուծոյն աղաչեցէք՝ որ իմ վրայէս միայն աս մահը վերցընէ ։ Եւ անիկայ Փարաւոնին քովէն դուրս
19 ելաւ , ու Տէրոջը աղաչեց ։ Եւ Տէրը խիստ սաստիկ արևմտեան հով մը խրկեց , որ մարախները վերցուց , ու Ծկարմիր ծովը ձրեց զանոնք . Եգիպտոսի բոլոր սահմաններուն մէջ մէկ մարախ մը չմնաց ։
20 Բայց Տէրը Ս կարծրացուց Փարաւոնին սիրտը , ու անիկայ Իսրայէլի որդիքը չարձակեց ։
21 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ա Ձեռքդ դէպ՚ի երկինքը երկընցուր , որ Եգիպտոսի երկրին վրայ խաւար ըլլայ , շօշափելի խաւար մը
22 ըլլայ ։ Եւ Մովսէս իր ձեռքը դէպ՚ի երկինքը երկընցուց , ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ Ն թանձր
23 խաւար եղաւ իրեք օր . Մէկզմէկ չէին տեսներ , և իրեք օր մէկը իր տեղէն չկրցաւ . Բայց Իսրայէլի բոլոր որդիքը իրենց բնակութեանցը մէջ լոյս ունէին ։
24 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու

ըսաւ . Գացէք՝ պաշտեցէք Եհովան . միայն ձեր հօտերը ու ձեր արջառները մնան . Ձեր ընտանիքներն
25 ալ ձեզի հետ թող երթան ։ Եւ Մովսէս ըսաւ . Պէտք է որ դուն մեր ձեռքը զոհեր ու ողջակէզներ ալ տաս , որ մեր Տէր Աստուծոյն մատուցանենք ։ Եւ մեր հօտերն ալ
26 մեր հետը պիտի երթան՝ անոնցմէ մէկ կճղակ մը չմնալով . ինչու որ մեր Տէր Աստուածը պաշտելու համար անոնցմէ պարտինք առնել . ու մենք մինչև որ հոն հերթանք , չենք գիտեր թէ ինչով պիտի պաշտենք
27 Տէրը ։ Եւ Տէրը Ղ կարծրացուց Փարաւոնին սիրտը , որ չուզեց արձակել զանոնք ։ Եւ Փարաւոն ըսաւ անոր . Քովէս գնա . զգուշացի՛ր քեզ ըրէ՛ քու անձիդ , մէյմըն ալ իմ երեսս չտեսնես . քանի՛ն օրը որ իմ երեսս տեսնես , պիտի մեռ .
29 Նիս ։ Եւ Մովսէս ըսաւ . Ադէկ ըսիր . Ես մէյմըն ալ քու երեսդ պիտի չտեսնեմ ։

ԳԼ . ԺԱ

1 Աստուած կը պատուիրէ Իսրայէլացւոց՝ որ իրենց դրացիներէն ծանրագին բաներ ուզեն ։ 4 Մովսէս կը սպառնայ Փարաւոնին՝ անդրանկաց մահը ։

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւոնին վրայ՝ ու Եգիպտոսի վրայ հարուած մըն ալ պիտի բերեմ ; անկէ ետև ձեզ ասկէ պիտի արձակէ . և երբոր Չեղ արձակէ , ձեզ ասկէ բոլորովին դուրս պիտի քշէ ։
2 Հիմա խօսէ ժողովուրդին ականջներուն , ու ամէն մարդ իր դրացիէն՝ և ամէն կնիկ իր դրացիկէն Բարձաթեղէն զարդեր ու ոսկեղէն զարդեր
3 տայ անոնց ։ Եւ Տէրը շնորհք տուաւ ժողովուրդին Եգիպտացւոց առջևը . Մովսէս ալ Եգիպտոսի երկրին մէջ Փարաւոնին ծառաներուն առջևը՝ ու ժողովուրդին առջևը խիստ մեծ մարդ մըն էր ։
4 Եւ Մովսէս ըսաւ . Տէրը այսպէս կ՚ըսէ . Ես կէս գիշերին Եգիպտոսի
5 մէջտեղը պիտի ելլեմ . Ու Եգիպտոսի երկրին մէջ Ամէն առջնեկը պիտի մեռնի , իր աթոռին վրայ նստող Փարաւոնին առջնեկէն մինչև աղացքին ետևը եղող աղախնին առջնեկը՝ և բոլոր անասուններուն առջինեկը ։
6 Ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ Ե մեծ աղաղակ պիտի ըլլայ , անանկ որ անոր պէս ոչ եղած է , ոչ ալ նորէն պիտի
7 ըլլայ ։ Ըեւ Իսրայէլի որդւոցը դէմ Ի մարդէն մինչև անասունն ալ մէկ պիտի չկարժէ իր լեզուն . որ գիտնաք թէ Տէրը Եգիպտացւոց ու Իսրայէլի մէջտեղը տարբերութիւն կ՚ընէ ։
8 Բերուքիւն կ՚ընէ ։ Եւ Ծ աս բոլոր

Ն . ք . Ջ . 1491
ՆՀմր . 8 ։
ՆՀմր 10 ։
Ծ Գլ . 6 . 19 ։
Ի Հմր 4 , 5 ։
13 ։
Ղ Հմր 20 ։ Գլ . 7 . 21 ։ Ժգ . 4 , 8 ։
Ա Ոաղ . Հը . 46 , 36 . 34 ։
Ի Ցովել . բ . 2 ։
Ծ Հմր 5 ։
Ա Սաղ . 36 . 35 ։
Ա Գլ . Թ . 27 ։
Ա Գլ . Թ . 28 ։ գ Թագ . Ժգ . 6 ։
Ղ Գլ . ը . 30 ։
Ցովել . բ . 20 ։
Ա Գլ . դ . 21 ։ Ժա . 10 ։
Ա Գլ . Թ . 22 ։
Ա Սաղ . 36 . 28 ։
Ն Գլ . ժբ . 12 , 29 ։ Ամս . ե . 17 ։
Ղ Գլ . ժբ . 12 , 29 ։ Ամս . ե . 10 ։
Ե Գլ . ժբ . 30 ։ Ամս . ե . 17 ։
Ը Գլ . ը . 22 ։
Ի Ցնն . ժ . 21 ։
Ծ Գլ . ժբ . 33 ։

ն · ք · զբ · 1491

ի Դատ · դ · 10 ։ բ · 5 ։ գ Թագ · ի · 10 ։ գ Թագ · գ · 9 ։

Լ ԳԼ · գ · 19 ։ է · 4 ։ ժ · 1 ։

Ի ԳԼ · է · 3 ։

Ծ ԳԼ · ժ · 20 ։ 27 ։ Հռով · բ · 5 ։ Թ · 22 ։

ա ԳԼ · ժգ · 4 ։ բ Օր · ժգ · 1 ։

Բ Ղէ · իբ · 19 ։ 20 ։ 21 ։ Մաղ · ա · Տ · 14 ։ Երր · Թ · 14 ։ ա Պետ · ա · 19 ։

Է Ղէ · իգ · 12 ։

Ը Ղէ · իգ · 5 ։ Թու · Թ · 3 ։ իբ · 16 ։ բ Օր · ժգ · 1 ։ 6 ։

* Ե՛ր · երկու իրիկուննեւրուն մէջ · տե՛ղ ։ ԳԼ · ժգ · 12 ։

Ի ԳԼ · ւԸ · 25 ։ բ Օր · ժգ · 3 ։ Թու · Թ · 11 ։ ա Կոր · ե · 8 ։

Ղբ Օր · ժգ · 7 ։

Ի ԳԼ · իգ · 18 ։ ԼՌ · 25 ։

քու ծառաներդ ինծի պիտի իջնեն , ու ինծի խոնարհութիւն ընեն՝ ըսելով · Դուն՝ ու բոլոր էքեզի հետեւող ժողովուրդը երէք · ու անկէ ետքը պիտի ելլեմ ։ Եւ Մովսէս սաստիկ բարկութեամբ Փարաւոնին քովէն դուրս ելաւ ։

9 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին · Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ , որ իմ հրաշքներս շատցընեմ Եգիպտոսի երկրին մէջ ։

10 Եւ Մովսէս ու Ահարոն ասոնք ամէն հրաշքները փարաւոնին առջեւը ըրին · Եւ Տէրը կարծրացուց Փարաւոնին սիրտը , ու իսրայէլի որդիները իր երկրէն չարձակեց ։

ԳԼ · ԺԲ

1 Տէրն սկիզբը կը փոխուի ։ 3 Զատկին սահմանութիւնը ։ 11 ու անոր կանոնները ։ 15 Անխմոր հաց ուտելու հրամանը ։ 29 Անդրանկայ մահը ։ 31 Եգիպտացիք արտորօք երկրէն դուրս կը հանեն Իսրայէլացիները ։ 37 որոնք Սոկթովթ կը հասնին ։ 43 Զատկին վրայով պատուէրները ։

1 Ետը Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ահարոնին Եգիպտոսի երկրին

2 մէջ՝ ըսելով · Ասիկա ամիսը ձեզի ամիսներուն սկիզբը ըլլայ · ձեզի տարւոյն ամիսներուն առաջինը ըլ-

3 ըլայ ։ Իսրայէլի բոլոր ժողովքին զրուցեցէք՝ ըսելով · Ա՛ս ամսուն տասնին ամէն մէկը իրեն գառնուկ մը առնէ՝ էրնից հայրերուն տանը համեմատ , այրենի՝ տան գլուխ

4 մէկմէկ գառնուկ ։ Եւ թէ որ մէկ տունը մէկ գառնուկին քիչ կուգայ , ան մարդը իր տանը քովը եւ ազգ դրացիին հետ՝ հոգիներուն համրանքին համեմատ առնէ · գառնուկին վրայով՝ ամէն մէկուն իր

5 կերածին չափ հաշիւ ընէք ։ Ձեր գառնուկը ԹանարատՈ արու՝ է մէկ տարեկան ըլլայ · ոչխարներէն կամ

6 այծերէն առնէք ա՛ն ։ Եւ մինչեւ աս ամսուն Ժ չորեքտասաներորդ օրը պահէք ան · ու Իսրայէլի ժողովքին բոլոր բազմութիւնը մորթեն անի-

7 կայ՝ * իրիկուան դէմ ։ Եւ արիւնէն առնեն՝ ու տուներուն երկու կողմի դրանդեացը ու վերի սեմին վրայ քսեն , ուր որ զանիկայ պիտի

8 ուտեն ։ Եւ միսը ան դիշերը ուտեն · զանիկայ կրակի վրայ խորոված՝ Ի բաղարջով ու լեղի խոտերով

9 պիտի ուտեն ։ Անկէ՝ հում կամ ջուրի մէջ եփած չուտէք , բայց ակրակի վրայ խորոված՝ անոր գլուխը ոտքերովը ու փորոտիքովը մէկ-

10 տեղ ։ Եւ անկէ բան մը չթողուք մինչեւ առտու · ու անկէ ինչ որ առտուան կը մնայ , կրա-

11 կով այրէք ։ Եւ այսպէս պիտի ուտեք ան · ձեր գօտիները մէջքերնիդ՝ ու ձեր կօշիկները ոտքերնիդ՝ և ձեր գաւազանները ձեռքերնիդ ըլլալով · զանիկայ արտորօք ուտէք ։

12 Տէրոջը զատիկն է ան ։ Եւ Ես անիկայ եգիպտոսի երկրէն պիտի անցնիմ , ու Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինէկը՝ մարդէն մինչեւ անասուն պիտի զարնեմ · և Ես Եգիպտոսի բոլոր Աստուածներուն վրայ դատաստան պիտի կա-

13 տարեմ · Ես եմ Տէրը ։ Եւ արիւնը ձեր եղած տուներուն վրայ նշանի համար ըլլայ , ու երբոր արիւնը տեսնեմ՝ ձեր վրայէն պիտի անցնիմ · և հարուածը ձեր վրայ պիտի չգայ Ձեզ կորսնցընելու , երբ որ Եգիպտոսի երկիրը զարնեմ ։

14 Եւ ան օրը ձեզի Յիշատակի համար ըլլայ , և զանիկայ Տէրոջը տօն պահէք · ձեր Սերունդին մէջ Յաւիտենական կանոնով մը տօն

15 պահէք ան ։ Եօթը օր բաղարջ ուտէք · նոյն իսկ առաջին օրը ձեր տուներէն դուրս ձգէք խմորը · ինչու որ առջի օրէն մինչեւ եօթներորդ օրը ով որ խմորեալ հաց ուտէ , հան անձը Իսրայէլէն պիտի

16 կորսուի ։ Եւ առաջին օրը Ժողով մը ըլլայ , եօթներորդ օրն ալ ձեզի սուրբ Ժողով մը ըլլայ · ան օրերը բնաւ գործ մը չգործուի , բայց ամէն մէկուն ուտելիքը , ան

17 միայն պատրաստէք ։ Եւ բաղարջներուն տօնը պահէք · քանզի Ես անոյն օրուանը մէջ ձեր զօրքերը Եգիպտոսի երկրէն հանեցի · ուստի ձեր սերունդին մէջ յաւիտենական

18 կանոնով մը ան օրը պահէք ։ Ա՛ռաջին ամսուն չորեքտասաներորդ օրուան իրիկունէն՝ մինչեւ ամսուն քսանուվմ կերորդ օրուան իրիկունը՝

19 բաղարջ պիտի ուտէք ։ Եօթը օր տուներնիդ խմոր չգտնուի · քանզի ով որ խմորեալ հաց ուտէ , յան անձը Իսրայէլի ժողովքէն պիտի կորսուի , թէ օտարական ըլլայ և

20 թէ երկրին բնակը ։ Խմորեալ բան մը պիտի չուտէք · ձեր բոլոր բնակութեանցը մէջ բաղարջ ուտէք ։

21 Եւ Մովսէս կանչեց Իսրայէլի բոլոր ծերերը , ու ըսաւ անոնց · Ելէք ընտանեացը համեմատ ընտրեցէք , ու առէք ձեզի Ջոխի գառն , ու

22 զատկին համար մորթեցէք ։ Եւ զոպային փունջ մը առէք , ու կոնքին մէջ եղած արիւնին թաթխեցէք , և դրանը վրայի սեմին՝ ու երկու բովի դրանդեացը վրայ՝ կոնքին մէջ եղած արիւնէն քսեցէք , և մինչեւ առտու ձեզմէ մէկը իր տանը

23 դռնէն դուրս չելլէ · Քանզի Տէրը եգիպտացիները զարնելու պիտի անցնի , և երբ դրանը վրայի սեմին՝ ու երկու կողմի դրանդեացը վրայ

ն · ք · զբ · 1491

Ըբ Օր · ժգ · 5 ։

Ի ԳԼ · ժա · 4 ։ 5 ։ Լմով · ե · 17 ։

Ժ Թու · ԼԳ · 4 ։

† Կամ՝ Իբ խաւնեբրուն ։ ԳԼ · իա · 6 ։ Իբ · 28 ։ Սաղ · ձբ · 1 ։ 6 ։ Ցօհ · ժ · 34 ։ 35 ։

Է ԳԼ · ը · 2 ։

Լ ԳԼ · ժգ · 9 ։

Է Ղէ · իգ · 4 ։ 5 ։ դ Թագ · իգ · 21 ։

‡ Եբր · ազգերուն

Ծ Հէր 24 ։ 43 ։ ԳԼ · ժգ · 10 ։

Ձ ԳԼ · ժգ · 6 ։ 7 ։ իգ · 15 ։ ԼԳ · 15 ։ 25 ։ Ղէ · իգ · 5 ։ 6 ։ Թու · իբ · 17 ։ բ Օր · ժգ · 3 ։ 8 ։ ա Կոր · ե · 7 ։

Հ Ցօհ · ժ · 14 ։ Թու · Թ · 13 ։

Յ Ղէ · իգ · 7 ։ 8 ։ Թու · իբ · 18 ։ 25 ։

Ղ ԳԼ · ժգ · 3 ։

Ճ Ղէ · իգ · 5 ։ Թու · իբ · 16 ։

Մ Ել · իգ · 13 ։ ԼԳ · 15 ։ բ Օր · ժգ · 3 ։ ա Կոր , ե · 7 , 8 ։

Յ Թու · Թ · 13 ։

Ն Հէր 3 ։ Թու · Թ · 4 ։ Ցես · ե · 10 ։ գ Թագ · իգ · 21 ։ Երր · գ · 20 ։ Մատ · իշ · 18 ։ 19 ։ Մար · ժգ · 12 ։ 16 ։ Ղուկ · իր · 7 ։ Եբ ։

Շ Երր · ժա · 28 ։

Ո Հէր 7 ։

Չ Հէր 12 ։ 18 ։

ն · ք · զՖ · 1491

արիւնը տեսնէ , Տէրը ան դրանը վրայէն պիտի անցնի , և պիտի չթողու Կաատակիչը՝ որ ձեր տուներուն մտնէ յՀէզ զարնելու համար ։

24 Եւ ասոր բանը քեզի ու քու որդւոցդ կանոն ըլլալու համար պահէք յաւիտեան ։

25 Երբ որ դուք երթաք այն երկիրը , զոր Տէրը ձեզի պիտի տայ ըստ իր խոստման , ասոր պաշտօնը պահէք ։

26 Եւ երբ որ ձեր որդիքը ձեզի ըսեն թէ՝ Ասոր պաշտօնով ի՞նչ կ՚ուզէք ։

27 Ըսէք որ , Անասիկայ Տէրոջը զատկին զոհ է , որ անիկայ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդւոցը տուներուն վրայէն անցաւ՝ երբոր Եգիպտացիները զարկաւ , ու մեր տուները ազատեց ։ Եւ ժողովուրդը խոնարհեցաւ ու երկրպագութիւն ըրաւ ։

28 Եւ Իսրայէլի որդիքը գացին , ու Տէրոջը՝ Մովսէսին ու Ահարոնին պատուիրածին պէս ըրին ։ անանկ ըրին ։

29 Եւ եղաւ որ կէս գիշերին՝ Տէրը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը զարկաւ , իր աթոռը նստող փարաւոնին առջինեկէն մինչև բանտի մէջ եղած գերիին առջինեկը՝ և ամէն անասունին առջինեկը ։

30 Եւ փարաւոն՝ ու անոր բոլոր ծառաները՝ և բոլոր Եգիպտացիք , ու Եգիպտոսի մէջ մեծ աղաղակ մը եղաւ . քանզի տուն մը չկար՝ որ անոր մէջ մեռեալ չըլլար ։

31 Եւ գիշերով կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ . Ելէք , ու ելէք իմ ժողովուրդիս մէջէն՝ դուք ալ և Իսրայէլի որդիքն ալ , ու գացէք պաշտեցէք Եհովան՝ ինչպէս որ ըսիք , ու գացէք . և ինծ ալ օրհնեցէք ։

32 Նաև ձեր հօտերը ու ձեր արջառները առէք՝ ինչպէս որ ըսիք , ու գացէք . և ինծ ալ օրհնեցէք ։

33 Եգիպտացիք բռնադատեցին ժողովուրդը՝ որ շուտով ան երկրէն դուրս խրկեն զանոնք . քանզի ըսին . Ամէնքս ալ կը մեռնինք ։

34 Եւ ժողովուրդը իրենց զանգուածը դեռ չխմորած՝ իրենց խմորի տաշտերը իրենց լաթերովը փաթթած ուսերնուն վրայ վերցուցին ։

35 Եւ Իսրայէլի որդիքը Մովսէսին խօսքին պէս ըրին . ու Եգիպտացիներէն ոսկեղէն զարդեր և ոսկեղէն զարդեր ու հանդերձներ խնդրեցին ։

36 Եհովա ալ ժողովուրդին շնորհք տուաւ Եգիպտացւոց առջևը , անանկ որ Եգիպտացիք անոնց խնդրածը տուին . ու Հանոնք կողոպտեցին Եգիպտացիները ։

37 Եւ Իսրայէլի որդիքը Ռամեսէն դէպ՝ի Սոկքովթ չուեցին . ընտանիքներէն զատ՝ վեց հարիւր հազարի չափ հետևակ երիվար մարդիկ

38 էին ։ Եւ Հանոնց հետ խառնիճաղանճ բազմութիւն ալ ելաւ . և ոչխարները ու արջառները խիստ

39 մեծ հօտ մըն էին ։ Եւ Եգիպտոսէն իրենց հանած զանգուածէն անխմոր շօթեր եփեցին , ինչու որ խմորեալ չէր , քանզի Եգիպտոսէն վռնտուեցան , ու չկրցին կրնար ուշանալ . ու իրենց պաշար ալ չէին պատրաստեր ։

40 Եւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդւոցը բնակած ժամանակը չորս

41 հարիւր երսուն տարի էր ։ Եւ եղաւ որ չորս հարիւր երսուն տարիներուն վերջը՝ ան նոյն օրը Տէրոջը բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրէն

42 ելան ։ Անիկայ Տէրոջը համար պահելու գիշեր մըն է . ինչու որ զանոնք Եգիպտոսի երկրէն հանեց . ասոնք գիշերն է Տէրոջը համար Իսրայէլի բոլոր որդիներէն իրենց ազգերուն մէջ պահելու ։

43 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ու Ահարոնին . Ասիկա օտարական մը անկէ պիտի չուտէ .

44 Բայց ամէն մարդուն ստակով ծախու առած ծառան՝ երբոր անկայ թլփատես , ան կրնայ անկէ ուտել .

45 Հատնը թողու անկէ , Օտարական ու վարձկան ծառան անկէ

46 պիտի չուտէ ։ Մէկ տան մէջ պիտի ուտուի ան . տունէն դուրս չհանես ան միսէն . Ոսկր անոր մէկ

47 ոսկորը պիտի չկոտրէք ։ Իսրայէլ

48 լի բոլոր ժողովը ընծ ան ։ Եւ երբ օտարական մը քու մօտդ պանդխտանալու ըլլայ , ու Տէրոջը զատիկ ընելու ըլլայ , անոր ամէն արուն թողու թլփատուի , և ան այնուհետև մօտենայ , ու ինքը երկրին բնակին պէս ըլլայ . քանզի անթլփատ մէկը բնաւ անկէ պիտի

49 չուտէ ։ Երկրացիին ու ձեր մէջը բնակող օտարականին Մէկ օրէնք

50 ըլլայ ։ Եւ Իսրայէլի բոլոր որդիքը՝ Տէրոջը Մովսէսին ու Ահարոնին պատուիրածին պէս ըրին . ա-

51 Նանկ ըրին ։ Եւ եղաւ որ՝ ան նոյն օրը Տէրը Եգիպտոսի երկրէն հանեց Իսրայէլի որդիքը Հրեից զօրքերուն համեմատ ։

ԳԼ · ՃՓ

1 Անդրանիկները Աատուծոյ նուիրելու , 3 և զատկի յիշատակութիւնը պահելու , 11 և անասնոց անդրանիկներն ալ Աատուծոյ նուիրելու վրայով պատուէրները ։ 17 Իսրայէլացիք Եգիպտոսէն դուրս կ՚ելլեն , և Յովսէփին ոսկորները հետերնին կ՚առնեն , 20 ու Ամիմ կու գան ։ 21 Աատուած Իսրայէլացւոց կ՚առաջնորդէ ամպի ու կրակի սիւնով ։

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . Սրբէ ինծի ամէն անդ-

ն · ք · զՖ · 1491

Եղիպ · թ · 6 ։ Յայտ · է · 3 ։ թ · 4 ։ Ըրծագ · իդ · 16 ։ ա Կոր · ժ · 10 ։ Երե · ժա · 28 ։

Գ · գ · 8 , 17 ։ Գլ · ժգ · 8 , 14 ։ բ Օր · լբ · 7 ։ Յես · գ · 6 ։ Սաղ · Ղբ · 6 ։

Ել Հմր 11 ։

Գլ · գ · 31 ։

Երբ · ժա · 28 ։

Գլ · ժա · 4 ։ Թաւ · բ · 17 ։ լԳ · 4 ։ Սաղ · Ղբ · 51 ։ ճն · 36 ։ ճլե · 8 ։ ճլզ · 10 ։

Գլ · գ · 23 ։ ժա · 5 ։

Գլ · ժա · 6 ։ Առակ · իա · 13 ։ Ամվ · ե · 17 ։ Ցակ · բ · 13 ։

Գլ · ժա · 1 ։ Սաղ · ճե · 38 ։

Գլ · ժ · 9 ։

Գլ · ժ · 26 ։

Ընծ · իե · 34 ։

Գլ · ժա · 8 ։ Սաղ · ճե · 38 ։

Ընծ · ի · 3 ։

Գլ · ը · 3 ։

Գլ · գ · 22 ։ ժա · 2 ։

Գլ · գ · 21 ։ ժա · 3 ։

Ընծ · ժե · 14 ։ Գլ · գ · 22 ։ Սաղ · ճե · 37 ։

Թաւ · լԳ · 8 · 5 ։

ժ Ընծ · խե · 11 ։

Ել · ը · 1 ։ ժա · 1 ։ Հմր 33 ։

Ընծ · ժե · 13 ։ Գոր · է · 6 ։ Գաղ · գ · 17 ։

Գլ · է · 4 ։ Հմր 51 ։

Ը Ր Օր · ժգ · 6 ։

Ի Թաւ · Թ · 14 ։

Ղծն · ժե · 12 · 13 ։

Ճ Ղե · իբ · 10 ։

Թաւ · Ը · 12 ։ Յօ՛ · ժԹ · 33 , 36 ։

Յ Հմր 6 ։ Թաւ · Թ · 13 ։

Ն Թաւ · Թ · 14 ։

Ղ Թաւ · Թ · 14 ։ ժե · 15 , 16 ։ Գաղ · գ · 28 ։

Հմր 41 ։

Ղ Գլ · գ · 26 ։

Ն·Ք·ԳՔ· 1491

Բ ԳԼ· ԺԸ· 42 ։ Բ Օր· Ժգ· 3 ։

Դ ԳԼ· Զ· 1 ։ Ը ԳԼ· ԺԸ· 8 ։

Ի ԳԼ· ԻԳ· 15 ։ ԼԳ· 18 ։ Բ Օր· Ժգ· 1 ։

Ղ ԳԼ· Գ· 8 ։

Ի ԳԼ· Զ· 8 ։

Է ԳԼ· ԺԸ· 25· 26 ։

Ր ԳԼ· ԺԸ· 15· 16 ։

Ծ ԳԼ· ԺԸ· 19 ։

Ի ՀՄՐ 14 ։ ԳԼ· ԺԸ· 26 ։

Լ Տճս ՀՄՐ 16 ։ Գև ԺԸ· 14 ։ Թոս· ԺԸ· 39 ։ Բ Օր· Զ· 8 ։ ԺՍ· 18 ։ ԵՒսակ· Ա· 9 ։ Ես· ԽԹ· 16 ։ Երեմ· ԻԸ· 24 ։ Մաս· ԻԳ· 5 ։

Ի ԳԼ· ԺԸ· 14 ։ 24 ։

Ծ ՀՄՐ 2 ։ ԳԼ· ԻԸ· 29 ։ ԼԳ· 19 ։ ՂԼ· 26 ։ ԻԷ· 26 ։ Թոս· Դ· 17 ։ ԺԸ· 15 ։ Բ Օր· ԺԸ· 19 ։ Եզեկ ։ ԽԳ· 30 ։

Ի ԳԼ· ԼՃ· 20 ։ Թոս· ԺԸ· 15 16 ։

Հ Թոս· Գ· 46· 47 ։ ԺԸ· 15 ։ 16 ։

Ն ԳԼ· ԺԸ· 26 ։ Բ Օր· Զ· 20 ։ Ցճս· Գ· 6 21 ։

*Ն՚Ղ· վաղ

Ղ ՀՄՐ 3 ։

Ֆ ԳԼ· ԺԸ· 29 ։

բանիկը՝ որ արգանդ կը բանայ իսրայէլէ որդւոցը մէջ , մարդէն ալ՝ 3 անասունէն ալ · ան իմն է ։ Եւ Մովսէս ըսաւ ժողովուրդին · Բ Ցիշեցէ՛ք աս օրը որ եգիպտոսէն՝ ծառայութեան տունէն ելաք · ինչու որ Տէրը ձեզ ասկից ՚ի զօրաւոր ձեռքով հանեց · Ւ ևս խմորեալ հաց 4 պիտի չուտուի ։ Ի դուք այսօր ե5 լաք , Ապիպ ամսուն մէջ ։ Եւ ըլլայ որ երբ Տէրը Ղանանացւոյ քեզ քանանացւոց ու հետացւոց և Ամորհացւոց ու Խևացւոց և Ցեբուսացւոց երկիրը՝ որն որ քեզի տալու համար է՛ր հայրերուդ երդում ըրաւ , ՚ն երկիրը որ կաթ ու մեղր կը բղխէ , էաս Խամնուն մէջ պիտի կատարես աս պաշտօ6 նը ։ Եօթը օր բաղարջ պիտի ուտես , և եօթներորդ օրը տօն ըլլայ 7 Տէրոջը ։ Ան եօթը օրերուն մէջ բաղարջ պիտի ուտուի · ու քովդ խմորեալ հաց պիտի չտեսնուի · ոչ ալ քու քովդ խմոր պիտի տեսնուի քու բոլոր սահմաններուդ 8 մէջ ։ Եւ էան օրը քու որդւոյդ պիտի պատմես՝ ըսելով · ԵՒս անոր համար է՝ ՚ր Տէրը ըրաւ ինծի , երբ9 որ ես Եգիպտոսէն ելայ ։ Եւ ասիկայ քեզի Ղնշանի համար պիտի ըլլայ ձեռքիդ վրայ , ու քու աչքերուդ մէջտեղը յիշատակի համար , որ Տէրոջը օրէնքը քու բերնիդ մէջ ըլլայ · ինչու որ Տէրը քեզ զօրաւոր ձեռքով հանեց Եգիպտոսէն ։ 10 Ի ՚ուստի դուն աս կանոնը տարիէ տարի իր ատենին պիտի պահես ։ 11 Եւ ըլլայ որ՝ երբ Տէրը քեզ քանանացւոց երկիրը տանի՝ ինչպէս որ քեզի ու քու հայրերուդ երդում 12 ըրաւ , ու զանիկայ քեզի տայ , ծ Ան ամէնը՝ որ արգանդ կը բանայ , Տէրոջը համար պիտի զատես · և քու ունեցած անասունիդ ամէն առջինեկ արուները Տէրոջը պիտի ըլլայ ։ 13 Եւ Ի իշուն ամէն առջինեկը ոչխարով մը փրկես · և թէ որ չփրկես՝ անոր վիզը պիտի կտրես · ու քու որդւոդդ մէջ մարդոց ամէն անդրա14 նիկը Հպիտի փրկես ։ Ն Եւ ըլլայ որ երբ քու որդիդ *օր մը՚՚ քեզի հարցնէ՝ ըսելով · Ի՞նչ է աս · անոր պիտի ըսես թէ՝ Ղ Տէրը մեզ Եգիպտոսէն՝ ծառայութեան տունէն զո15 րաւոր ձեռքով հանեց · Եւ եղաւ որ երբ փարաւոն խստացաւ՝ ՚՚ մեզ արձակել չ՚ուզէր , ՚ Տէրը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը՝ մարդու առջինեկէն մինչև անասունի առջինեկը մեռցուց · անոր համար ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջը զոհ կ՚ընեմ , ու իմ որդւոցս ամէն առջինեկը կը 16 փրկեմ ։ Եւ ասիկայ քու ձեռքիդ վրայ Ի նշանի համար՝ ու աչքերուդ մէջտեղը ճակատնոցի համար ըլլայ · ինչու որ Տէրը մեզ Եգիպտոսէն զօրաւոր ձեռքով հանեց ։

17 Եւ եղաւ որ երբ փարաւոն ժողովուրդը արձակեց , Աստուած զանոնք Փղշտացւոց երկրին ճամբայէն չտարաւ , թէև ան ճամբան մօտ էր · քանզի Աստուած ըսաւ · Զըլլայ որ ժողովուրդը չ՚զղջայ՝ երբոր պատերազմը տեսնէ , ու Ե Եգիպտոս 18 դառնայ · Հապա Աստուած Ը ժողովուրդը կարմիր ծովուն անապատին ճամբայէն պտրտցուց · ու Իսրայէլ որդիքը դունդ դունդ Եգիպ19 տոսի երկրէն ելան ։ Եւ Մովսէս՝ Ցովսեփին ոսկորները իր հետը առաւ · ինչու որ անիկայ Իսրայէլի որդւոցը հաստատ ՚երդում ընել տուաւ՝ ըսելով · ՚՚Անշուշտ Աստուած ձեզի այցելութիւն պիտի ընէ , ու իմ ոսկորներս ասկէ հետերնիդ հանեցէք ։

20 Եւ Ն Սոկթովթէն չուեցին , ու Ոթոմին մէջ անապատին ծայրը 21 իջևան ըրին ։ Եւ Ղ Տէրը անոնց առջևէն կ՚երթար ցորեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցընելու համար , ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս տալու համար , որ ցորեկ 22 ու գիշեր երթան ։ Ցորեկը ամպի սիւնը՝ ու գիշերը կրակի սիւնը՝ ժողովուրդին առջևէն չպակսեցուց ։

Գ Լ · Ա Դ

1 Աստուած Իսրայէլացւոց կ՚իմացընէ իրենց երթալու ճամբան ։ 5 Փարաւոն անոնց ետևէն կ՚էյնայ ։ 10 Իսրայէլացիք արտուն կ՚ընդունեն ։ 13 Մովսէս կը մխիթարէ զանոնք , 15 ու Աստուծմէ Տրաման կ՚ընդունի իր ընելիքին համար ։ 19 Ամպը բանակին ետևն կը դառնայ ։ 21 Իսրայէլացիք կարմիր ծովուն կ՚անցնեն ։ 23 իսկ Եգիպտացիք կը խեղդուին ։

1 Ն՚ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե2 լով · Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ ՚՚որ դառնան ու Բ Փիհաիրօթին առջևը՝ Ի Մագդոլին ու ծովին մէջտեղը բանակ դնեն · Բ Եզեղսեփոնին առջևն՝ անոր դիմացը ծովին քովը 3 բանակ դրէք ։ Եւ Փարաւոն Իսրայէլի որդւոցը համար պիտի ըսէ թէ՝ Ի Երկրին մէջ Ի մոլորած են , անապատը անոնց բոլորտիքը պա4 տեց ։ Եւ Ի Փարաւոնին սիրտը պիտի կարծրացընեմ , ու անոնց ետևէն պիտի իյնայ · ու ևս Փարաւոնին վրայ և անոր բոլոր զօրքերուն վրայ Ղպիտի փառաւորուիմ , ու Եգիպտացիք պիտի դիտնան թէ ես եմ Տէրը ։ Եւ անոնք այնպէս ըրին ։

5 Եւ պատմուեցաւ Եգիպտոսի թագաւորին թէ ժողովուրդը փա-

Ն·Ք·ԳՔ· 1491

Ր ՀՄՐ 9 ։

Ր ԳԼ· ԺԳ· 11 ։ 12 ։ Թոս· ԺԳ· 1—4 ։ Ն Բ Օր· ԺԷ· 16 ։

ԼԳԼ· ԺԳ· 2 ։ Թոս· ԼԳ· 6 ։ Ճ ։

Ա Ծն· Ծ· 25 ։ Ցճս· Իգ· 32 ։ Գոր· Է· 16 ։ Ն Թոս· ԼԳ· 6 ։

Պ ԳԼ· ԺԳ· 19· 24 ։ Ի 38 ։ Թոս· Թ· 15 ։ Ժ· 34 ։ ԺԳ· 14 ։ Բ Օր· ա· 33 ։ Նէեմ· Թ· 12· 19 ։ Մաղ· Հը· 14 ։ ղԹ· Ղ ։ ՃՃ· 39 ։ Ես· Գ· 6 ։ ա Կոր· Ժ· 1 ։

Ա ԳԼ· ԺԳ· 18 ։

Բ Թոս· ԼԳ· Ղ ։

Գ Երեմ· Խգ· 1 ։

Դ Մաղ· Հա· 11 ։

Ե Կ՚ երթամ Թուած

Ի ԳԼ· Գ· 21 ։ Է· 3 ։

ՂԳԼ· Թ· 16 ։ ՀՄՐ 17 ։ 18 ։ Հով· Ի· 17 22 ։ 23 ։

Ի ԳԼ· Է· 5 ։

Ն·Ք·Ղ·Ի· 1491
Ը Սաղ· ճե· 25։

խաւ , եւ Փարաւոնին ու անոր ծա-
ռաներուն սիրտը ժողովուրդին
դէմ դարձաւ՝ ու ըսին · Մենք ինչո՞ւ
ըրինք աս բանը , որ Իսրայէլը մե-
ղի ծառայութիւն ընելէն թող
6 տուինք ։ Եւ իր կառքը պատ-
րաստեց , ու իր ժողովուրդը իր
ԲԳԼ·ԺԵ·4։ 7 հետ առաւ ։ Եւ վեց հարիւր
ընտիր կառքեր՝ ու Եգիպտոսի
բոլոր կառքերը՝ և անոնց ամէն
մէկուն վրայ ոստիկաններ առաւ ։
ԺՀՇ 4։ 8 Եւ Տէրը Եգիպտոսի Փարաւոն
թագաւորին սիրտը կարծրացուց ,
ու անիկայ Իսրայէլի որդւոցը
ետևէն ինկաւ · և Իսրայէլի որ-
ԲԳԼ·ԺԴ·1։ ԺԹ·9։ Թուա·
ԼԳ·8։ 9 դիրը բարձր ձեռքով ելան ։ Բայց
Եգիպտացիք անոնց ետևէն ին-
կան · Փարաւոնին ամէն ձիերը
ու կառքերը՝ և անոր ձիաւորները
ու զօրքերը , և հասան անոնց՝ որ
բանակած էին ծովին մօտ Փիահրո-
թին քովը՝ Բէեղզեփոնին առ-
ջեւն ։
10 Եւ երբ Փարաւոն մօտեցաւ ,
Իսրայէլի որդիքը իրենց աչքերը
վերցուցին , և ահա Եգիպտացիք
իրենց ետևէն կու գային , ու խիստ
վախցան · և Իսրայէլի որդիքը Եա-
Ի Ցես· իդ· 7։ Նէեմ· Թ·9։ Սաղ· ԼԳ·17։ ՃԿ· 6։ 11 ղաղակեցին Տէրոջը ։ Եւ ըսին
Մովսէսին · Եգիպտոսի մէջ գերեզ-
մաններ չըլլալո՞ւն համար մեզ ա-
նապատին մէջ մեռնելու բերիր
Ժ Սաղ· ՃԶ· 7։ Տ։ ինչ է ասիկա որ մեզի ըրածդ որ մեզ
Ի ԲԳԼ· Ե·21։ ՈՉ·9։ 12 Եգիպտոսին հանեցիր ։ Ահա չէ՞ն
խօսքը՝ որ քեզի զրուցեցինք Եգիպ-
տոսին մէջ՝ ըսելով · Թո՛ղ տուր
մեզ՝ որ Եգիպտացւոց ծառայու-
թիւն ընենք · քանզի աւելի արժէկ է
մեզի Եգիպտացւոց ծառայութիւն
ընել , քան թէ անապատին մէջ
13 մեռնիլ ։ Եւ Մովսէս ըսաւ ժողո-
վուրդին · Մի՛ վախնաք , կայնեցէ՛ք ,
Հբ Մն· ի· 15։ 17։ Ես· Ես· 10· 13։ 14։ տեսէ՛ք Տէրոջը փրկութիւնը՝ որ
այսօր պիտի ընէ ձեզի ; ինչու՞ որ
ասօրուան ձեր տեսած Եգիպտա-
ցիները՝ մէյմըն ալ պիտի չտեսնէք
ՆՀՇ 25։ Բ Օր·ա·30։ գ·22։ ի·4։ Ցես·ժ·14։ 42։ իդ·3։ Բ Մն· ի· 29։ Նէեմ· գ·20։ Ես·լա·4։ 14 յաւիտեան ։ Տէրը ձեզի համար
պիտի պատերազմի ; ու դուք լռեցէք
ՆԵս·Լ·15։ ՃՀՇ 21։ 26։ ԳԼ·Ե·19։ ՃՀՇ 8։ ԲԼ·Ե·3։ ԺՀՇ 4։ 15 եւ Տէրը ըսաւ Մովսէսին · Ին-
չո՞ւ ինծի կ՚աղաղակես · ըսէ Իսրա-
16 յէլի որդւոյը՝ որ չուեն ։ Եւ դուն
գաւազանդ վերցուր , ու ձեռքդ
ծովուն վրայ երկնցուր , ու ճեղքէ
ան · և Իսրայէլի որդիքը ծովուն
17 մէջէն ցամաքով երթան ։ Եւ ես
ահա՛ Եգիպտացւոց սիրտը պիտի
կարծրացնեմ՝ , ու անոնց ետևէն
պիտի երթան · և ես փառաւորին
ու անոր բոլոր զօրքերուն վրայ՝ ա-
նոր կառքերուն ու անոր ձիաւորնե-
րուն վրայ պիտի փառաւորուիմ՝ ։
18 Եւ երբոր ես փառաւորին ու անոր
կառքերուն և անոր ձիաւորներուն
վրայ փառաւորուիմ՝ , Եգիպտացիք
պիտի դիտեան թէ ես եմ Տէրը ։
Ն·Ք·Ղ·Ի· 1491
ՆՀՇ 4։ 19 Եւ Աստուածոյ հրեշտակը՝ ՚որ
Իսրայէլի բանակին առջեւէն կ՚եր-
թար , ելաւ , ու անոնց ետևը գնաց ·
և ամպի սիւնը ելաւ անոնց առջեւէն՝
ԼԳԼ· ԺԴ· 21։ իդ· 20։ ԼՐ·34։ Թուա·Ի·16։ Ես· կդ·9։ 20 ու անոնց ետին կայնեցաւ · Եւ
Եգիպտացւոց բանակին ու Իսրայէլի
բանակին միջտեղը եկաւ՝ ու Եզիպ-
տացւոց ամպ ու խաւար եղաւ ,
բայց Իսրայէլացւոց գիշերը լոյս կու
տար · և բոլոր գիշերը իրարու
չմօտեցան ։
Ցես Ես· Բ·14։ Բկր· գ· 3։ 21 Եւ Մովսէս իր ձեռքը ծովուն
վրայ երկնցուց , ու Տէրը սաստիկ
արևելեան հովով ետ դարձուց ծովը
բոլոր գիշերը , և ծովը ցամաք ը-
ՆՀՇ 16։ րաւ , ու ջուրերը ձեղքուեցան ։
22 Եւ Իսրայէլի որդիքը ծովուն մէ-
ջէն ցամաքով քալեցին · ու ջուրերը
անոնց աջ կողմէն ու ձախ կողմէն
պարիսպ եղան ։
23 Եւ Եգիպտացիք անոնց ետևէն
ինկան , ու Փարաւոնին բոլոր ձիե-
րը՝ կառքերը ու ձիաւորները անոնց
ետևէն ծովուն մէջտեղը դացին ։
24 Եւ եղաւ որ առաւօտեան պահուն
Տէրը Եգիպտացւոց բանակին
նայեցաւ կրակի ու ամպի սիւնէն ,
ու Եգիպտացւոց բանակը խռովուց
25 Թեան մէջ ձգեց · Եւ անոնց կառ-
քերուն անիւները հանեց , ու դը-
ժուարութեամբ վարել տուաւ · ա-
նանկ որ Եգիպտացիք ըսին · Փախ-
չինք Իսրայէլին երեսէն · ինչու որ
ահա Եհովան անոնց համար Ե-
գիպտացւոց հետ կը պատերազմի ։
26 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ·
Ձեռքդ ծովուն վրայ երկնցուր ,
որ ջուրերը Եգիպտացւոց վրայ՝ ա-
նոնց կառքերուն ու անոնց ձիաւոր-
ԲՀՇ 16։ 27 ներուն վրայ դառնայ ։ Եւ
Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ
երկնցուց , և առաւուան դէմ
ծովը իր տեղը դարձաւ , ու Ե-
գիպտացիք անոր դիմացէն փա-
խան · և Տէրը թօթափեց Եգիպ-
ՅՑես· գ· 18։ Ե·ԳԼ· ժե· 1։ 7։ ԲՕր· ժա· 4։ Սաղ· Կը· 53։ Նէեմ· Թ· 11։ Երր· ժա· 29։ տացիները ծովուն մէջ։ Եւ ջուրե-
րը դարձան՝ ու ծածկեցին փարա-
ւոնին կառքերը ու ձիաւորները և
բոլոր զօրքերը՝ որոնք անոնց ետևէն
ծովուն մէջ մտան · ու անոնցմէ
ԱՄՈ· գ· 8։ 13։ 29 մէկն ալ չմնաց ։ Բայց Իսրայէլի
որդիքը ծովուն մէջէն ցամաքով
քալեցին , և ջուրերը անոնց աջ
կողմէն ու ձախ կողմէն անոնց պա-
ՍԱղ· ՃԶ· 8։ 10։ 30 րիսպ էին ։ Եւ Տէրը այն օրը Ե-
գիպտացւոց ձեռքէն ազատեց Իս-
րայէլը · ու Իսրայէլ մեռած տե-
ՍԱղ· ՅԸ· 10։ ՅԹ· 10։ սաւ Եգիպտացիները ծովուն եզերքը
31 քը ։ Եւ Իսրայէլ տեսաւ այն մեծ
*ԲԸՔ· ՃԵՒ· քը։ գործը՝ որն որ Տէրը ըրաւ Եգիպ-

Ն·ՔՐԵ·
1491

Բ ԳԼ·Դ·31։
ԺԹ·9։ Նաղ·
ՃՂ · 12 ։
ԳՕՆ·Բ·11։
Ժա · 45 ։

տացւոց վրայ · ու Ժողովուրդը վախցաւ Տէրոջմէն , ու Բ հաւատաց Տէրոջ՝ և անոր ծառային Մովսէսին ։

ԳԼ · ԺԲ

1 Մովսէսին երգը ։ 22 Ժողովուրդը խմելու ջուր չգտներ ։ 23 Մեռայի լեղի ջուրերը՝ 25 փայտով մը կը քաղցրանան ։ 27 Եղիմի տասներկու ջուրի աղբիւրները և եօթանասուն արմաւենիները ։

1 Այն ատենը Մովսէս ու Իսրայէլի որդիքը ասա երգը երգեցին Տէրոջը , և իսօսեցան ըսելով ·
Պիտի Բ երգեմ Տէրոջը , ինչու որ փառաւով փառաւորեալ է · ձին ու անոր հեծեալը ծովը նետեց ։
2 Տէրն է իմ զօրութիւնս ու իմ Բ զովութիւնս , և իմ փրկութիւնս եղաւ · Անիկայ է իմ Աստուածս , ու պիտի փառաւորեմ զանիկայ · իմ Հօրս Աստուածն է , ու Բպիտի բարձրացընեմ զանիկայ ։
3 Տէրը Հզօր պատերազմող է · անոր Բանունը ԵՀՈՎԱԾ է ։
4 Փարաւոնին կառքերը ու անոր զօրքերը ծովը նետեց · և Բանոր ընտիր ոստիկանները կարմիր ծովուն մէջ ընկղմեցան ։
5 Անդունդները ծածկեցին զանոնք · Բքարի պէս խորունկը ի ջան ։
6 Ի՛նչ աջ ձեռքդ՝ ով Տէր , փառաւորեալ է զօրութեամբ · քու աջ ձեռքդ՝ ով Տէր , խորտակեց թշնամին ։
7 Եւ քու Բփառագդ մեծութեամբ քը քեզի դէմ կեցողները կործանեցիր · քու բարկութիւնդ խրկեցիր , որ զանոնք Բյարդի պէս կ'եբաս ։
8 Եւ քու շունչդ փչելովը ջուրերը ժողվուեցան · Ինկղեղները դէզի պէս կայնեցան · ծովուն մէջտեղը անդունդները պաղեցան ։
9 Թշնամին ըսաւ · Պիտի հալածեմ , պիտի հասնիմ , ճասարը պիտի բաժնեմ · իմ անձս անոնցմէ պիտի կշտանայ · իմ սուրս պիտի Քարէմ , իմ ձեռքս անոնց պիտի տիրէ ։
10 Քու հովդ փչեցիր , Ծովը զանոնք ծածկեց · զօրաւոր ջուրերուն մէջ կապարի պէս ընկղմեցան ։
11 Ո՛վ Տէր՝ Նաստուածներուն մէջ քեզի պէս ո՛վ կայ · Նսրբութեան մէջ փառաւորեալ , օրհնութեան մէջ սքանչելի , Հրաշքներ ընող ո՛վ կայ քեզի նման ։
12 Նքու աջ ձեռքդ երկրընգուցիր , երկիրը զանոնք կլլեց ։
13 Քու ողորմութեամբդ Ղառաջնորդեցիր ասա Ժողովուրդին՝ որ դուն փրկեցիր · քու զօրութեամբդ տարիր զանոնք Ըքու սուրբ բնակութիւնդ ։
14 Ժողովուրդները պիտի լսեն , ահ սարսափին · Փղշտացւոց երկրին բնակիչներուն Ցայտ բռնեց ։
15 Ան ատենը Ներդովմի իշխանները պիտի տագնապին · Մովաբին զօրաւորները պիտի դողան · Քանանու բոլոր բնակիչները պիտի հալին ։
16 Ձանոնց վրայ վախ ու դող պիտի իյնայ · քու բազուկիդ մեծութենէն Քար պիտի կտրին , մինչև որ անցնի քու Ժողովուրդդ՝ ով Տէր , մինչև որ անցնի ասա Ժողովուրդը՝ Ձոր դուն ստացար ։
6 և Սատիմի փայտեր , Լոյսի համար
եղ՝ օծման եղի համար ու Տանու-
շահոտ խունկի համար Համեմներ ,
7 Եղնգնաքարեր՝ ու Եփուտին ու
Լանջապանակին վրայ գամուելու
քարեր ։
8 Եւ ինծի Սրբարան մը շինեն՝ որ
9 Ի րենց մէջը բնակիմ ։ Խորանին օ-
րինակը և անոր բոլոր կարասիքին
օրինակը՝ Ցբոլոր քեզի ցուցուցա-
ծիս պէս՝ ձիշդ անանկ պիտի շինէք ։
10 Եւ Սատիմի փայտէ տապանակ
մը շինեն . անոր երկայնութիւնը
երկու կանգուն ու կէս՝ և անոր
լայնութիւնը մէկ կանգուն ու կէս՝
և անոր բարձրութիւնը մէկ կան-
11 գուն ու կէս ըլլայ ։ Եւ անիկայ
զուտ ոսկիով պիտի պատես , ներ-
սէն ու դուրսէն պիտի պատես ան .
և անոր վրան բոլորտիքը՝ ոսկի
12 շրջանակ մը պիտի շինես ։ Եւ անոր
համար չորս ոսկի օղակ պիտի ձու-
լես , ու անոր չորս անկիւնները դնես
ջնջոյ , որ անոր մէկ կողմը երկու
օղակ՝ ու մէկալ կողմը երկու օղակ
13 ըլլայ ։ Եւ Սատիմի փայտէ ձողեր
պիտի շինես , ու զանոնք ոսկիով
14 պիտի պատես ։ Եւ ձողերը տապա-
նակին քովերը եղած օղակներուն
պիտի անցընես , որ տապանակը ա-
15 նոնցմով վերցուի ։ Ձողերը տա-
պանակին օղակներուն մէջը պիտի
16 մնան . անկէ պիտի չհանուին ։ Եւ
տապանակին մէջ դնես Վկայու-
թիւնը՝ որն որ քեզի պիտի տամ ։
17 Եւ Ծ զուտ ոսկիէ *քաւութիւն
մը պիտի շինես , անոր երկայնու-
թիւնը երկու կանգուն ու կէս՝ և
անոր լայնութիւնը մէկ կանգուն ու.
18 կէս ըլլայ ։ Եւ ոսկիէ երկու քե-

ր · ք · զճ · 1491

* Գլ · գ · 2 ։ Ժթ · 18 ։ բ Օր · դ · 36 ։ Երր · Ժբ · 15 ։ 29 ։ Ղ Գլ · լդ · 23 ։ բՕր · ի · 9 ։

— Գլ · լե · 5 ։ 21 ։ ա Մն · իթ · 3 ։ 5 ։ 9 ։ 14 ։ Եզր · բ · 68 ։ գ · 5 ։ է · 16 ։ Նէեմ. Ժա. 2 ։ բԿոր · ը · 12 ։ ի · 7 ։

Բ Ծն · խա · 42 ։

է Գլ · իէ · 20 ։

ը Գլ · լ · 34 ։

ի Գլ · լ · 23 ։

լ Գլ · իը · 4 ։ 6 ։

խ Գլ · իը · 15 ։

ծ Գլ · լզ · 1 ։ 3 ։ 4 ։ Ղէ · գ · 6 ։ Ժ · 4 ։ իա · 12 ։ Երր · ի · 1 ։ 2 ։

Ձ Գլ · իի · 45 ։ գ Թագ · ը · 18 ։ բ Կոր · ը · 16 ։ Երր · գ · 6 ։ Ցայս · իա · 3 ։

յ Հմր 40 ։

ի Գլ · լէ · 1 ։ բՕր · Ժ · 3 ։ Երր · ի · 4 ։

Լ Դ Թագ · ը · 8 ։

Ի Գլ · Ժդ · 34 ։ լա · 18 ։ բ Օր · Ժ · 2, 5 ։ լա · 26 ։ գ Թագ · ը · 9 ։ դ Թագ · Ժա · 12 ։ Երր · ի · 4 ։

Ծ Գլ · լէ · 6 ։ Հռով · գ · 25 ։ Երր · ի · 5 ։

* Կ՚ · ձա · փարիզ

ն · ք · զճ · 1491

† Կ՚ · ճա · խարակեայ

Ե Գ Թագ · ը · 7 ։ Մն · իը · 18 ։ Երր · ի · 5 ։

Հ Գլ · իշ · 34 ։

Ֆ Հմր 16 ։

Ղ Գլ · իթ · 42 ։ 43 ։ Լ · 6 · 36 ։ Ղէ · Ժղ · 2 ։ Թու · Ժէ · 4 ։

Ճ Թու · է · 89 ։ աԹագ · գ · 4 ։ բԹագ · ղ · 2 ։ դ Թագ · Ժթ · 15 ։ Սաղ · 4 · 1 · ղ · 1 ։ Ես · լէ · 16 ։

Մ Գլ · լէ · 10 ։ գԹագ · է · 48 ։ բՄն · դ · 8 ։ Երր · ի · 2 ։

Ց Գլ · լէ · 16 ։ Թու · դ · 7 ։

Ն Ղէ · իդ · 5 · 6 ։

Շ Գլ · լէ · 17 ։ դԹագ · է · 49 ։ Զաք · դ · 2 ։ Երր · ի · 2 ։ Ըստ · ա · 12 ։ դ · 5 ։

բովքէները պիտի շինես քաւութիւնին երկու ծայրին վրայ .
19 Ծոյ պիտի շինես զանոնք . Եւ մէկ քերովբէն մէկ ծայրին՝ ու մէկալ քերովբէն մէկալ ծայրին պիտի շինես . քերովբէները քաւութիւնէն՝ անոր երկու ծայրերուն վրայ
20 պիտի շինես ։ Եւ Թերովբէները թևերնին վերէն տարածելով՝ ի-րենց թևերովը քաւութիւնը պիտի ծածկեն . և անոնց երեսները իրարու պէտ Նայեն . քերովբէներուն երեսները դէպ՝ ի քաւութիւնը պիտի ըլլայ ։ Եւ քաւութիւնին վրայ պիտի դնես .
21 և Ջքեզի տալու վկայութիւնս՝ տա-
22 պանակին մէջ պիտի դնես ։ Եւ Հոն ես քեզի պիտի հանդիպիմ . ու քաւութեանը վրայէն՝ վկայութեան տապանակին վրան եղած ցերու քերովբէներուն մէջէն՝ Իսրայէլի որդւոցը համար բոլոր քեզի պատուիրելու բաներուս վրայով պիտի խօսիմ քեզի հետ ։
23 Եւ Սատիմի փայտէ սեղան մը պիտի շինես . անոր Երկայնութիւնը երկու կանգուն՝ և անոր լայնութիւնը մէկ կանգուն՝ ու անոր բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս ։
24 Եւ անիկայ զուտ ոսկիով պիտի պատես . ու անոր բոլորտիքը ոսկի շրջանակ մը պիտի
25 շինես ։ Եւ անոր չորս մատնաչափ սպառուած մը պիտի շինես . ու սպառուածին բոլորտիքը ոսկի շրջ-
26 Ջանակ մը պիտի շինես ։ Եւ անոր չորս ոսկի օղակ պիտի շինես . ու անոր չորս անկիւնը՝ չորս ոտքին
27 քովը պիտի դնես օղակները ։ Օղակները սպառուածին քովը պիտի ըլլան , որ սեղանը վերցնելու հա-
28 մար՝ ձողերուն տեղը ըլլան ։ Եւ ձողերը Սատիմի փայտէ պիտի շինես , ու զանոնք ոսկիով պիտի պատես . և սեղանը անոնցմով պի-
29 տի վերցուի ։ Եւ Ջանոր պիտի շինես դաները՝ ու անոր խնկամանները՝ և բաժակները ու գաւաթները պիտի շինես , որ անոնցմով Թափելու նուէր պիտի մատուցուի . զանոնք
30 զուտ ոսկիէ պիտի շինես ։ Եւ սեղանին վրան Ջառաջաւորութեան հացը պիտի դնես միշտ իմ առջեւս ։
31 Ջ Եւ զուտ ոսկիէ աշտանակ մը պիտի շինես . կռածոյ պիտի շինուի աշտանակը , — անոր բունը՝ ճիւղերը՝ սկահակները՝ գնդակները ու
32 ծաղիկները իրմէն պիտի ըլլան ։ Եւ անոր կողերէն վեց ճիւղեր պիտի ելլեն . աշտանակին մէկ կողէն իրեք ճիւղ՝ և աշտանակին մէկալ կողէն
33 իրեք ճիւղ պէտ Եւ մէկ ճիւղին վրայ նշանաձև իրեք սկահակ պի-

Ն·Ք·ԶԲ· 1491

տի ըլլայ՝ գնդակով ու ծաղիկով, և մէկալ ճիւղին վրայ նշաձև իրեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով. աշտանակէն ելած վեց ճիւղերը ա-
34 սանկ պիտի ըլլան։ Եւ աշտանա-կին վրայ չորս նշաձև սկահակ պիտի ըլլայ իրենց գնդակներովը ու ծա-
35 ղիկներովը։ Եւ աշտանակէն ելած վեց ճիւղերուն՝ երկու ճիւղին տակը իրմէն մէկ գնդակ՝ ու երկու ճիւղին տակը իրմէն մէկ գնդակ՝ և երկու ճիւղին տակը իրմէն մէկ գնդակ պի-
36 տի ըլլայ։ Անոնց գնդակները ու ճիւղերը իրմէն պիտի ըլլան. ամէնը մէկ ւոսրէ՝ զուտ ոսկիէ կռածոյ պի-
- ԳԼ·ԼԷ·21· Լ·8· ՂՀ· Իդ·3,4· ր Մն·ժգ· 11։
37 տի ըլլայ։ Եւ անոր եօթը ճրագ-ները պիտի շինես. ու անոր ճրագ-ները վառուած աեսնը Լոյսը առ-
38 ջևէն տան։ Եւ անոր ուներիները ու անոր բաղմակալները զուտ ոսկիէ
39 պիտի ըլլան։ Անիկայ՝ բոլոր աս գործիքներով տաղանդ մը զուտ ոս-
40 կիէ պիտի շինուի։ Եւ տնայէ որ, լեռը քեզի ցուցուած օրինակին պէս շինես ղանդ։

ԳԼ· ԻԶ

1 Խորանին տասը վարագուրները։ 7 Այծի մազէ շինուած տասնումէկ վարագուրները։ 14 Խոյի մորթերով ծածկոցը։ 15 Խորանին տախտակները՝ իրենց խարխխներովը ու նե-ղերովը։ 31 Տապանակին առջևի վարագու-րը։ 36 Դրան վարագուրը։

- ԳԼ·ԼԶ·8· 1 Եւ պիտի շինես խորանը տասը վարագուրներով՝ մանուած բա-րակ քթանէ ու կապուտակէ և ծի-րանի գոյնէ ու կրկնակի կարմիրէ. վարպետի գործ շինես զանոնք քե-
2 րովբէներով։ Մէկ վարագուրին երկայնութիւնը քսանուութը կան-գուն՝ և մէկ վարագուրին լայնու-թիւնը չորս կանգուն պիտի ըլլայ. բոլոր վարագուրներուն չափը մէկ
3 պիտի ըլլայ։ Հինգ վարագուրնե-րը իրարու պիտի կցուին, և միւս հինգ վարագուրները իրարու պիտի
4 կցուին։ Եւ կցուածքին ծայրի մէկ վարագուրին եզերքին վրայ կապուտակեայ օղակներ պիտի շի-նես. մէկալ կցուածքին ծայրի վա-րագուրին եզերքն ալ՝ անանկ պիտի
5 ընես։ Մէկ վարագուրին վրան հիսուն օղակ պիտի շինես, և մէ-կալ կցուածքին վրան եղած վարա-գուրին ծայրն ալ հիսուն օղակ պի-տի շինես. օղակները դիմացէ դի-
6 մաց պիտի ըլլան։ Եւ հիսուն կար-թաձև ոսկի ճարմանդներ պիտի շինես. ու վարագուրները ճար-մանդներով պիտի կռճկես, և մէկ խորան պիտի ըլլայ։
7 Եւ խորանին վրան ծածկոց ըլլա-լու համար Եայծի մազէ վարագուր-ներ պիտի շինես. տասնումէկ վա-
Բ ԳԼ·ԼԶ·14·

Ն·Ք·ԶԲ· 1491

8 րագուր պիտի ընես անոնք։ Մէկ վարագուրին երկայնութիւնը եր-սուն կանգուն՝ և մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն պիտի ըլլայ. տասնումէկ վարագուրնե-
9 րուն չափը մէկ պիտի ըլլայ։ Եւ հինգ վարագուրները զատ՝ ու վեց վարագուրները զատ պիտի կցես. և վեցերորդ վարագուրը խորանին առջևի կողմին երկպատիկ պիտի
10 ընես։ Եւ կցուածքին ծայրը եղած մէկ վարագուրին եզերքին վրայ հիսուն օղակ՝ ու մէկալ կցուած-քին ծայրը եղած վարագուրին եզերքին վրայ հիսուն օղակ պիտի
11 շինես։ Եւ պղնձէ հիսուն կար-թաձև ճարմանդներ պիտի շինես, ու ճարմանդները օղակներուն պի-տի անցընես, և վրանը պիտի կոճ-
12 կես, ու մէկ պիտի ըլլայ։ Եւ վրանին վարագուրներէն աւելորդ մնացածը՝ կէսը վարագուրին աւելցած կէսը՝ խորանին ետևէն
13 կախուած պիտի մնայ։ Եւ վրա-նին վարագուրներուն երկայնու-թենէն մէկ կանգուն մէկ կողմէն՝ ու մէկ կանգուն մէկալ կողմէն աւելցածը՝ խորանին քովերը կա-խուած պիտի մնայ զանիկայ մէկ կողմէն ու մէկալ կողմէն ծածկելու-
14 համար։ Եւ էվրանին համար կար-միր ներկուած խոյի մորթերէն ծածկոց մը, ու անոր վրայէն թէ-հաշի մորթերէն ծածկոց մը պիտի շինես։ ԳԼ·ԼԶ·19·
15 Եւ խորանին տախտակները սա-տիմի փայտե պիտի շինես որ
16 կանգնած մնան։ Մէկ տախտակին երկայնութիւնը տասը կանգուն՝ և մէկ տախտակին լայնութիւնը մէկ
17 ու կէս կանգուն պիտի ըլլայ։ Ամէն մէկ տախտակը երկերկու ագուցիկ ծայրեր պիտի ունենայ մէկզմէկու քով. խորանին բոլոր տախտակնե-
18 րուն ասանկ պիտի ընես։ Եւ խո-րանին տախտակները պիտի շինես. դէպ ի հարաւ՝ հարաւային կողմը
19 քսան տախտակ պիտի ըլլան։ Եւ քսան տախտակներուն տակը քառ-սուն արծաթի խարիսխ պիտի շինես. մէկ տախտակին տակը իր երկու ա-գուցիկ ծայրը անցընելու համար եր-կու խարիսխ՝ և մէկալ տախտակին տակը իր երկու ծայրը անցընելու համար երկու խարիսխ պիտի ըլլայ։
20 Եւ խորանին մէկալ կողմին համար հիւսիսային կողմը՝ քսան տախ-
21 տակ, եւ անոնց քառասուն արծաթի խարիսխները, մէկ տախտակին տա-կը երկու խարիսխ՝ ու մէկալ տախ-տակին տակը երկու խարիսխ պիտի
22 ըլլան։ Եւ խորանին ետևի կողմին համար արևմտեան կողմը վեց տախ-

Ն·Ք·ԶՔ· 1491

23 տակ պիտի շինես ։ Եւ խորանին անկիւններուն համար՝ եւսի կողմը
24 երկու տախտակ պիտի շինես ։ Եւ վարէն պիտի կցուին , ու վերէն մէկ օղակով կցուած մէկ պիտի ըլլան . երկուքն ալ սոսկ պիտի ըլլայ , անոնք երկու անկիւններուն համար
25 պիտի ըլլան . Եւ ա֊յօդ՝ սոսկը ութը տախտակ պիտի ըլլան . ու անոնց արծաթէ խարիսխները տասնուվեց խարիսխ պիտի ըլլայ . մէկ տախտակին տակը երկու խարիսխ՝ ու մէկալ տախտակին տակը երկու
26 խարիսխ պիտի ըլլայ ։ Եւ Սատիմի փայտէ նիգեր պիտի շինես . խորաններ մէկ կողմի տախտակներուն համար
27 մանր հինգ նէգ՝ եւ խորանին մէկալ կողմի տախտակներուն համար հինգ նիգ՝ ու դէպ ի արեւմուտք խորանին ետեւի կողմի տախտակներուն
28 համար հինգ նիգ պիտի ըլլայ ։ Եւ մէջ տեղի նիգը , ա֊յդ֊ի՝ տախտակներուն մէջտեղը եղածը՝ մէկ ծայրէն մէկալ ծայրը պիտի անցնի ։
29 Եւ տախտակները ոսկիով պիտի պատես , ու անոնց օղակները՝ ա֊յդ֊ի նիգերուն տեղերը ոսկիէ պիտի շինես . և նիգերը ոսկիով պիտի պատես ։
Բ ԳԼ· ԻԵ· 9 ։ 40 ։ ԻԷ· 8 ։ Գոր·Է· 44 ։ Եբր·Ը· 5 ։
30 Եւ պիտի կանգնես խորանը Ը իր ձեւին համեմատ , ինչպէս որ լեռանը վրայ քեզի ցուցուեցաւ ։
Է ԳԼ· ԼԶ· 35 ։ ՂԼ· Ժզ· 2 ։ Բ· Մն·Գ·14 ։ Մատ·ԻԷ· 51 ։ Եբր· Թ·3 ։
31 Եւ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ ու մանուածք բարակ քթանէ վարագոյր մը պիտի շինես . անիկայ վարպետի գործ քերովբէներով պիտի շինուի ։
* կամ՝ խոյակները
32 Եւ անիկայ Սատիմի ֆայտէ չորս ոսկիապատ սիւներու վրայ պիտի դնես . անոնց *ճանկերը ոսկի պիտի ըլլան . ա֊ չորս արծաթէ խարիսխներու վրայ պիտի
Ղ ԳԼ· ԻԵ· 16 ։ Խ·21 ։
33 ըլլան ։ Եւ վարագուրը ճարմանդներէն վար պիտի կախես , ու հոն վարագուրին ներսի կողմը Ղեվիտացւոց տապանակը պիտի բերես . և վարագուրը ձեզի պիտի բաժնէ Ը սրբութիւնին՝ ու սրբութեանց սրբութիւնին միջեւը ։
Ե ՂԼ· Ժզ· 2 ։ Եբր·Թ· 2 ։ 3 ։
34 Եւ Ը քաւութիւնը վկայութեան տապանակին վրայ՝ սրբութեանց
Ը ԳԼ· ԻԵ· 21 ։ Խ·20 ։ Եբր· Թ· 5 ։
35 սրբութիւնին միջ պիտի դնես ։ Եւ Ը վարագուրին դուրսի կողմը , ու Ժ սեղանին դիմացը խորանին հարաւային կողմի՝ աշտանակը պիտի դնես . ու սեղանը հիւսիսային կողմը պիտի դնես ։
Ժ ԳԼ·Խ·22 ։ Եբր·Թ·2 ։ Ժ ԳԼ·Խ·24 ։
36 Եւ վրանին դրանը համար կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ ու մանուածք բարակ քթանէ՝ նկարագործ Ի գրան
Ի ԳԼ·ԼԶ·37 ։
37 վարագուր մը պիտի շինես ։ Եւ գրան վարագուրի համար Սատիմի

Ն·Ք·ԶՔ· 1491

ֆայտէ Լ հինգ սիւն պիտի շինես , ու զանոնք ոսկիով պիտի պատես . և անոնց ճանկերը ոսկիէ պիտի ըլլան . ու անոնց համար պղնձէ հինգ խարիսխ պիտի ձուլես ։

ԼԳԼ· ԼԶ·38 ։

ԳԼ· ԻԷ

1 Ողջակէզին սեղանը իր գործիքներովը ։ 9 Խորանին սրահը՝ վարագուրներով ու սիւներով ։ 18 անոր երկայնութիւնը և լայնութիւնը ։ 20 Լոյսի համար եղ ։

1 Եւ ա֊ղոհի սեղանը Սատիմի փայտէ պիտի շինես , երկայնութիւնը հինգ կանգուն՝ ու լայնութիւնը հինգ կանգուն . սեղանը քառակուսի պիտի ըլլայ , և անոր բարձրութիւնը իրեք կանգուն պէտ ըլ֊
2 լայ ։ Եւ անոր եղջիւրները անոր չորս անկիւններուն վրայ պիտի շինես . անոր եղջիւրները իրմէն պիտի
Բ Տես Թուա· Ժզ· 38 ։
ըլլան . ու Ը պանիկայ պղնձով պիտի
3 պատես ։ Եւ անոր մխիթը Ժողովրդուս համար անօր թիակները՝ ու անոր թիակները և անոր կոնքերը՝ ու անոր մսահանները՝ ու անոր կրակի ամանները պիտի շինես . անոր բոլոր գործիքները պղնձէ պիտի շինես ։
4 Եւ անոր ցանցակերպ կասկարայ մը պիտի շինես պղնձէ . ու ցանցին վրայ չորս պղնձէ օղակ պիտի շինես՝
5 անոր չորս անկիւններուն վրայ ։ Եւ պիտի դնես անիկայ սեղանին շրջանակին տակը ներքեւէն , որ ցանցը դրեթէ սեղանին մէջտեղը ըլլայ ։
6 Եւ սեղանին համար ձողեր պիտի շինես . ձողերը Սատիմի փայտէ պիտի ըլլան . ու զանոնք պղնձով պի֊
7 տի պատես ։ Եւ անոր ձողերը օղակներուն պիտի անցուին . ու ձողերը սեղանին երկու քովերը պիտի ըլլան՝ անիկայ վերցնելու հա֊
8 մար ։ Ընկիկայ տախտակներէ՝ մէջը դատարկ պիտի շինես . ինչպէս քեզի ցուցուածին պէս՝ անանկ պիտի շինեն ան֊կայ ։
Է ԳԼ· ԻԵ· 40 ։ ԻԷ·30 ։
9 Եւ Բ խորանին սրահը պիտի շինես . հարաւային կողմին համար՝ սրահին վարագուրները մանուածք բարակ քթանէ ըլլալով՝ մէկ քովի
Բ ԳԼ·ԼԲ·9 ։
10 պիտի ըլլայ ։ Եւ անոր քսան սիւները ու անոնց քսան խարիսխները պղնձէ , և սիւներուն ճանկերը և անոնց կապերը արծաթէ պիտի ըլ֊
11 լան ։ Եւ նոյնպէս հիւսիսային կողմին համար սրահին երկայնութեանը նայելով՝ վարագուրները հարիւր կանգուն երկայն պիտի ըլ֊լան . ու անոր քսան սիւները և անոնց քսան խարիսխները պղնձէ , սիւներուն ճանկերը ու անոնց կա֊
12 պերը արծաթէ պիտի ըլլան ։ Եւ արեւմտեան կողմին համար սրահին

Ն·Ք·ԶՔ· 1491

լայնութեանը նայելով՝ վարագուր-
ները յիսուն կանգուն պիտի ըլ-
լան . անոնց սիւները տասը՝ ու ա-
նոնց խարիսխները տասը պիտի ըլ-
13 լան ։ Եւ սրահին արեւելեան կողմին
համար՝ անոր լայնութիւնը արև-
ելեան կողմէն յիսուն կանգուն պի-
14 տի ըլլայ ։ Եւ դրանը մէկ թևին
վարագուրները տասնուհինգ կան-
գուն պիտի ըլլան ։ անոնց սիւները
իրեք՝ ու անոնց խարիսխները իրեք ։
15 Եւ մկայ թևին վարագուրները
տասնուհինգ կանգուն պիտի ըլլան ։
անոնց սիւները իրեք՝ ու անոնց խա-
16 րիսխները իրեք ։ Եւ սրահին դրա-
նը համար՝ կապուտակէ՝ ու ծիրանե-
գոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ ու մա-
նուած բարակ քթանէ՝ քսան կան-
գունի նկարագործ վարագուր մը
պիտի ընէս . անոնց սիւները չորս՝ ու
անոնց խարիսխները չորս պիտի ըլ-
17 լան ։ Սրահին բոլորտիքը եղած
բոլոր սիւները արծաթի կապերով՝
ու անոնց ճանկերը արծաթէ՝ և ա-
նոնց խարիսխները պղնձէ պիտի ըլ-
18 լան ։ Սրահին երկայնութիւնը հա-
րիւր կանգուն՝ ու լայնութիւնը ա-
մէն տեղ յիսուն՝ և բարձրութիւնը
հինգ կանգուն . վրաքաշրէնը մա-
նուած բարակ քթանէ պիտի ըլլան ,
ու անոնց խարիսխները պղնձէ պի-
19 տի ըլլան ։ Խորանին բոլոր գործիք-
ները իր ամէն պաշտօնին համար՝ և
անոր բոլոր ցիցերը՝ ու սրահին բո-
լոր ցիցերը պղնձէ պիտի ըլլան ։ .
Ի·ՂԱ·ԻԴ·2· ՂԿԱ·Լ·8· աթաղ·գ· 8 ։ բ ՍԱ· ԺԳ·11·
20 Եւ դուն պիտի պատուիրես Իս-
րայէլի որդւոցը՝ որ քեզի ձէթ մաքուր ձէթի բերեն լոյսի համար ,
Ե·ԿԱ·Ի·31, 33·
21 որ կանթեղները միշտ վառին ։ Ահ-
արոնը ու անոր որդիները ժողովքի
խորանին մէջ՝ Վկայութեանը առ-
ջեւի վարագուրին դուրսի դին՝ իրի-
կուընէ մինչև առաւօտ Տէրոջը առ-
ջեւը այն վառելիք կարգադրեն . ա-
յսիկայ անոնց յաւիտենական կանոն
ըլլայ իրենց ազգերուն մէջ Իսրայէ-
լի որդւոցը կողմանէ ։

ԳԼ · ԻԸ

1 Ահարոնը ու անոր որդիքը քահանայութեան համար կ՚ընծայուին ։ 2 Սուրբ զգեստներ շինելու հրամանը ։ 6 Եփուդը ։ 15 Տասներկու պատուական քարերով զարդարուած լանջապանակը ։ 30 Ուրիմը ու Թումիմը ։ 31 Եփուդին պատմուճանը նուռերով և զանգակներով ։ 36 Խոյրին առջեւի կողմի թիթեղը ։ 39 Նկարագործ շապիկը ։ 40 Ահարոնին որդւոցը զգեստները ։

ՈՐԱ·ԺԸ· 7 ։ ԵԲՐ·Ե· 1, 4 ։

1 Դու դուն քեզի մօտեցուր Ահարոնը՝ ու անոր որդիները իր հետը՝ Իսրայէլի որդւոցը մէջէն , որ ինծի քահանայութիւն ընեն . Ահարոնը՝ և Ահարոնին որդիները Նադաբը ու Աբիհուդը՝ Եղիազարը ու Իթամարը ։ 2 Եւ էքու եղբօրդ Ահարոնին սուրբ զգեստներ պիտի շինես պատուոյ ու փառաց 3 համար ։ Եւ դուն ըսէ բոլոր իմաստուն միտք ունեցողներուն՝ որոնք որ ես խմաստութեան հոգիով լեցուցի , որ Ահարոնին զգեստները շինեն՝ անիկայ օրինելու համար՝ որ 4 ինծի քահանայութիւն ընէ ։ Եւ անոնց շինելու զգեստները սոյնք են . Լանջապանակ՝ ու Ելեփուտ՝ և Պատմուճան՝ ու Ընկարագործ շապիկ՝ խոյր՝ և գօտի . և սուրբ ըղգեստներ շինեն քու եղբօրդ Ահարոնին՝ ու անոր որդիներուն , որ ինծի քահանայութիւն ընեն ։ 5 Եւ անոնք պիտի առնեն ոսկին՝ ու կապուտակը՝ և ծիրանեգոյնը՝ ու կրկնակի կարմիրը՝ և բարակ քթա-
ԲԳԼ·ԼԹ·2· 6 նը . Եւ ոսկի Բիւր՝ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ կրկնակի կարմիրէ՝ և մանուած բարակ քթանէ՝ վարպետի գործ պիտի շինեն եփուդ ։ 7 Անոր երկու ուսերը երկու կցուած ծայրերը պիտի ունենան , որ իւրաքանչիւր 8 միացած ըլլայ ։ Եւ եփուդին վրայ եղած ժապաւէնը՝ անոր շինուածքին պէս նոյն բանէն պիտի ըլլայ . ոսկիէ՝ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ ու մանուած բարակ քթանէ պիտի ըլլայ ։ 9 Եւ երկու եղնգնաքարեր պիտի առնես , ու անոնց վրան Իսրայէլի որդւոցը անունները պիտի փորագրես ։ 10 Անոնց անուններուն վեցը մէկ քարին վրայ՝ և մնացած վեց անունները մէկալ քարին վրայ՝ անոնց ծնունդներուն համեմատ պիտի փո-
11 րագրես ։ Քանդակագործի արուեստով՝ կնիք փորագրածնուն պէս պիտի փորագրես . ոսկի խոզերու մէջ պիտի
12 դամես անոնք ։ Եւ երկու քարերը եփուդին ուսերուն վրայ պիտի դնես , որ Իսրայէլի որդւոցը յիշատակի քարեր ըլլան . ու Ահարոնը անոնց անունները Իր յիշատակի համար իր երկու ուսերուն վրայ պի-
13 տի կրէ Տէրոջը առջեւը ։ Եւ ոսկիէ
14 ճարմանդներ պիտի շինես . Եւ զուտ ոսկիէ հիւսուած եզերքի երկու շղթաներ պիտի շինես , ու հիւսուած շղթաները ճարմանդներուն պիտի անցընես ։
ԼԳԼ·ԼԹ·8· 15 Եւ Դատաստանին լոսնջապանակ պիտի շինես վարպետի գործ . անիկայ եփուդին շինուածքին պէս պիտի շինես . ոսկիէ՝ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ ու մանուած բարակ քթանէ պիտի
16 շինես ։ Քառանկիւն երկուքի ծալուած պիտի ըլլայ . անոր երկայնու-

Ն·Ք·ՂԲ· 1491

Բ ԳԼ·ԻԹ· 5, 29 ։ Լ· 10 ։ ԼԹ·1, 2 ։ Ղև·Ը· 7, 30 ։ Թուա· Ի·26, 28 ։
Ե ԳԼ·Լ·6 ։ ԼՂ·1 ։
Դ ԳԼ·Լ·3 ։ ԼԹ·30, 31 ։
Ե ՀՄՐ 15 ։
Ղ ՀՄՐ 6 ։
Ե ՀՄՐ 31 ։
Ը ՀՄՐ 39 ։

Բ ԳԼ·ԼԹ·2 ։

Ժ ՀՄՐ 29 ։ ԳԼ·ԼԹ·7 ։
Ի Տ՚ես ՁԵՒ· Գ·7 ։ Ջաք· Զ·14 ։

ԼԳԼ·ԼԹ·8 ։

Թ. Գ. Ա. 1491 Ի. ԼԲ. 10. ՃԱ.

Թիւնը մէկ Թիզ՝ ու անոր լայնու-
17 Թիւնը մէկ Թիզ *ելեւէջ ըլլայ : Ե՛ւ
անոր մէջ ակուընքներու գամուած-
քին համեմատ՝ չորս կարգ քարեր
պիտի գամես . ⁂ կարգը՝ սարդիս-
ոն , տպազիոն ու զմրուխտ առաջին
18 կարգը պիտի ըլլայ : Եւ երկրորդ
կարգը պիտի ըլլայ կարկեհան , շա-
19 փիւղայ ու անդամանդ . Եւ երրորդ
կարգը պիտի ըլլայ գոմազմ , ակատ
20 ու մեղեսիկ . Եւ չորրորդ կարգը
պիտի ըլլայ ոսկեքար՝ եղնգնաքար ու
յասպիս . առնք ոսկի խորչերու մէջ
21 գամուած պիտի ըլլան : Եւ քա-
րերը Իսրայէլի որդւոցը անուննե-
րուն պէս տասներկու պիտի ըլլան ,
անոնց անուններուն համեմատ՝ ա-
մէն մէկը իր անունովը տասներկու
ցեղին համեմատ՝ կնիք փորագրողի
գործով *երեսփեսուած պիտի ըլլան :
22 Եւ լանջապանակին վրան զուտ ոս-
կեայ հիւսուած եղերքի շղթաներ
23 պիտի չինես : Եւ լանջապանակին
վրան երկու ոսկի օղակներ պիտի
չինես , ու ան երկու օղակները լան-
ջապանակին երկու ծայրերուն վրայ
24 պիտի դնես : Եւ ան երկու հիւսուած
ոսկի շղթաները՝ լանջապանակին
ծայրը եղած երկու օղակներուն
25 պիտի անցընես : Եւ երկու հիւ-
սուած շղթաներուն ՀԻՆ երկու
ծայրերը՝ ան երկու ճարմանդնե-
րուն պիտի անցընես . ու զանոնք
եփուտին առջևի կողմէն ուսերուն
26 վրայ պիտի դնես : Եւ երկու ոսկի
օղակներ ալ պիտի չինես . ու զա-
նոնք լանջապանակին ներսի կողմէն՝
եփուտին կցուած եղերքին երկու
27 ծայրերը պիտի դնես : Եւ *երկու
երկու ոսկի օղակներ պիտի չինես ,
ու զանոնք եփուտին երկու ուսե-
րուն վարէն՝ անոր առջևի կողմի
կցուածքին մօտ՝ եփուտին ժապա-
28 վէնին վրայէն պիտի անցընես : Եւ
լանջապանակը իր օղակներէն՝
կապուտակ *ժիլով եփու-
տին օղակներուն կապէն , որ ե-
փուտին ժապաւէնին վրայ ըլլայ ,
ու լանջապանակը եփուտին վրայէն
29 չգատուի : Եւ Ահարոն երբոր
սրբարանը մտնէ , Իսրայէլի որ-
դւոցը անունները Տէրոջը առջևը
ծ*յիշատակի համար՝ միշտ իր սրտին
վրայ եղած դատաստանի լանջա-
30 պանակին վրայ պիտի կրէ : Եւ
*դատաստանի լանջապանակին վը-
րայ *Ուրիմը ու Թումիմը" պիտի
դնես . և Ահարոնին սրտին վրայ
պիտի ըլլան , երբոր անկից Տէրոջը
առջևը երթայ . ու Ահարոն Տէրոջը
առջևը միշտ իր սրտին վրայ պիտի
կրէ Իսրայէլի որդւոցը դատաստա-
նը :

ծ Հմր 12 :

ե Ղև . ը . 8 ; Թու . իե . 21 ; ր Օր . ւԹ . 8 ; ա Թագ . իը . 6 ; Եզր . բ . 63 ; Նե-
եմ . է . 65 ;
* Ա՛ն՝ լոյսը և ճշմարտու-
թիւնը :

31 Եւ *եփուտին պատմուճանը բո-
լորովին կապուտակէ պիտի չինես :
32 Եւ անոր մէջտեղը գլուխ *անցնելը-
ձեղքուածք մը պիտի ըլլայ . ձեղ-
քուածքին բոլորտիքը զրահի ձեղ-
քուածքին պէս հիւսուած եզերք
33 ունենայ՝ որ չպատռի : Եւ անոր
քղանցքներուն վրայ կապուտակէ՝
ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի կար-
միրէ նուռեր պիտի չինես քղանցք-
ներուն բոլորտիքը , ու անոնց մէջ-
տեղը շուրջանակի ոսկի զանգակ-
34 ներ : Պատմուճանին քղանցքին
վրայ շուրջանակի ոսկի զանգակ մը
ու նուռ մը՝ ոսկի զանգակ մը ու
35 նուռ մը պիտի ըլլայ : Եւ պաշ-
տօնի համար՝ անկից Ահարոնին
վրան պիտի ըլլայ . ու Տէրոջը առ-
ջև սրբարանը մտած ու ելած ա-
տենը՝ անոր ձայնը պիտի լսուի որ
չմեռնի :
36 Եւ *զուտ ոսկիէ թիթեղ մը
պիտի չինես , ու անոր վրան կնիք
փորագրածնուն պէս ՍՐԲՈՒԹԻՒՆ
37 ՏԵՒՈՒՆ փորագրես : Եւ կապու-
տակ ժապաւէն մը անցընես ա-
նոր՝ որ խոյրին վրայ դրուի . և
խոյրին վրան՝ անոր առջևի կողմը
38 ըլլայ : Եւ անիկայ՝ Ահարոնին ճա-
կատին վրայ պիտի ըլլայ , որ Իս-
րայէլի որդւոցը նուիրած ընծանե-
րուն սուրբ ընծաներուն անօրհնութիւնը
Ահարոնը կրէ . ու միշտ իր ճակա-
տին վրայ պիտի ըլլայ , որ անոնք
Տէրոջը ընդունելի ըլլան :
39 Եւ շապիկը բարակ քթանէ նկա-
րէն հիւսես , ու խոյրը բարակ քը-
թանէ պիտի չինես , և գօտին նկա-
րագործ պիտի չինես :
40 *Եւ Ահարոնին որդւոցը շապիկ-
ներ պիտի չինես , ու անոնց գօտի-
ներ պիտի չինես . և պատուոյ ու
փառաց համար անոնց ապարօշներ
41 պիտի չինես : Եւ զանոնք քու եղ-
բօրդ Ահարոնին՝ ու իր հետը իր
որդւոցը պիտի հագցընես . ու
*անոնք պիտի օծես , և *ի պիտի
օրհնես" , ու սրբես անոնք՝ որ ինծի
42 քահանայութիւն ընեն : Եւ ա-
նոնց *կատաւ անդրավարտիքներ
պիտի չինես էրկնէ մարմինին մեր-
կութիւնը ծածկելու համար . ⁂
նոնց մէջքերէն մինչև ծունկեր-
43 նին պիտի հասնին : Եւ անոնք
Ահարոնին ու անոր որդւոցը վը-
րայ պիտի ըլլան՝ երբոր ժողովքի
խորանը մտնեն , կամ երբոր *սե-
զանին մօտենան սրբարանին մէջ
պաշտելու համար , որ չբերայ թէ
*անօրհնութիւն կրեն ու մեռնին .
*այս հատնենական կանոն մը
ըլլայ իրեն՝ ու իրմէ ետքը իր սե-
րունդին :

Ն. Ք. Ա. 1491 Հ Գլ. ԼԲ. 22 :

ե Գլ . ԼԲ . 30 ; Ջաք . ժդ . 20 ;

ղ Հմր 43 ; Ղև . ժ . 17 ; իր . 9 ; Թու . ժը . 1 ; Ես . ծդ . 11 ; Եզեկ . դ . ֆ ; 5 , 6 ; Ցօհ . ա . 29 ; Երր . թ . 28 ; ա Պետ . բ . 24 ;
ճ Ղև . ա . 4 ; իր . 27 ; իգ . 11 ; Ես . ծգ . 7 ;
* Հմր 4 ; Գը ԼԲ . 27 , 28 , 29 , 41 ; Եզեկ . խդ . 17 , 18 ;
ա Գլ . ԻԲ . 7 ; Լ . 30 ; ի . 15 ; Ղև . ժ . 7 ;
ե Գլ . ԻԲ . 9 , ՃԱ ; Ղև . ը ; Երր . ե . 28 ;
† Եբր . անոնց ձեռքը պիտի լեցընես ,
է Գլ . ԼԲ . 28 ; Ղև . գ . 10 ; ժ . 4 ; Եզեկ . խդ . 18 ;
* Գլ . ի . 26 ;
է Ղև . ե . 1 , 17 ; ի . 19 , 20 ; իր . 9 ; Թու . Բ . 13 ; ժր . 22 ;
ՀԳլ . իե . 21 ; Ղև . ժէ . 7 ;

Ն·Ք·ԶԲ· 1491

ԴԼ· ԻԹ

1 Քահանայի օրհնութեան զոհերը ու արարողութիւնները։ 38 Մչտնջենաւոր ողջակէզ։ 45 Աստուած կը խոստանայ բնակիլ Իսրայէլացւոց մէջ։

1 Ու եա՛ս է որ անոնց պիտի ընես՝ զանոնք սրբելու համար, որ ինծի քահանայ ըլլան. արջառներէն մէկ ու երկու անարատ

ա ՂԼ·Ը·2։

բ ՂԼ·Բ·4։ 2 խոյ պիտի առնես, եւ բանխմոր հաց՝ ու եղով շաղուած անխմոր շօթեր՝ եւ եղով օծուած անխմոր լաւաշներ առնէս. ասոնք ցորենի

գ ՂԼ·Ը·20, 21, 22։ 3 բարակ ալիւրէն պիտի շինես. եւ սալաւի մը մէջ պիտի դնես. ու անոնք սալաւին մէջ, և զուարակը ու երկու խոյերը պիտի մօտես

4 ցրնես։ եւ Ահարոնը ու անոր որդիները ժողովքի խորանին դրանը պիտի մօտեցընես, հու անոնք

դ ԳԼ·Խ·12։ ՂԼ·Ը·6։ ԵՐԲ·Ժ·22։ ԳԼ·ԻԲ·2։ Ա·Ը·7։ 5 ջրով պիտի լուան։ Եւ զգեստները պիտի առնես, ու շապիկը՝ և ներքնի պատմուճանը՝ ու եփուդը և լանջապանակը Ահարոնին պիտի հագցընես. ու ԷՀուդին ժապաւէնովը պիտի զօտևորես զանի-

ե ԳԼ·ԻԲ·8։ ՂԼ·Ը·9։ 6 կայ։ Նաեւ խոյերը անոր գլուխը պիտի դնես, ու խոյերն վրայ սուրբ

զ ԳԼ·ԻԲ·41։ Ը·25։ ՂԼ·Ը·12։ Ժ·7։ ԻԱ·10։ ԹՒ·ԼԲ·25։ 7 պսակը պիտի դնես։ Եւ Իօծմանեղը պիտի առնես, ու անոր գլուխն վրայ թափելով՝ պիտի օծես զանի-

է ՂԼ·Ը·13։ 8 կայ։ Եւ Ըանոր որդիները պիտի մօտեցընես, ու անոնց շապիկներ

9 պիտի հագցընես. եւ գօտիներով պիտի գօտևորես զանոնք՝ (այսինքն Ահարոնը ու անոր որդիները,) ու անոնց ԹԸ-ԻԸ ապարօշները պիտի փաթթես. ու Քահանայութիւնը անոնցը ըլլայ յաւիտենական կանոնով։ Այսպէս Ժպիտի օրհնես Ահարոնը ու անոր որդիները։

ը ԹՒ·Ը·7։ ԺԳԼ·ԻԸ·41։ ՂԼ·Ը·22։ ԵՐԲ·Ե·28։ թ ՂԼ·Ա·4։ Ը·14։ 10 Եւ զուարակը ժողովքի խորանին առջեւը պիտի մօտեցընես. ու ԷԱհարոն և անոր որդիները իրենց ձեռքը զուարակին գլուխն վրայ

ժ ՂԼ·Ը·15։ 11 պիտի դնեն։ Եւ ժողովքի խորանին դրանը Էտ՝ Տէրոջը առջեւը պի-

12 տի մորթես զուարակը։ Եւ Ըզուարակին արիւնէն պիտի առնես, ու մատովդ սեղանին Է եղջիւրներուն վրան պիտի դնես. և ՏՈՒՆ բոլոր արիւնը սեղանին տակովը պիտի

ի ՂԼ·Գ·8։ * կ՚ել՝ լխրգաբոյծը՝ 13 թափես։ Եւ Ժփորոտիքը ծածկողամին ճարպը՝ ու *լնարդին վրան եղած թաղանթը՚՚ և երկու երիկամունքը՝ ու անոնց վրան եղած ճարպը պիտի առնես, և սեղանին

ի ՂԼ·Գ·11։ 12·21։ ԵՐԲ·Ժ·11։ 14 վրայ պիտի այրես։ Բայց Ըզուարակին միսը՝ ու անոր մորթը՝ և անոր աղբը՝ բանակին դուրսի կրակով պիտի այրես. աս մեղքի պատարագ է։

ձ ՂԼ·Ը·18։ 15 Եւ հխոյերուն մէկը պիտի առ-

Ն·Ք·ԶԲ· 1491

նես, և Ահարոնը ու անոր որդիքը Ժիրենց ձեռքերը խոյին գլխուն

ՅՂԼ·Ա·4—9։ 16 վրայ պիտի դնեն։ Եւ ան խոյը պիտի մորթես, ու անոր արիւնը պիտի առնես, և սեղանին վրայ

17 շուրջանակի պիտի սրսկես։ Եւ խոյը կտոր կտոր պիտի ընես, ու անոր փորոտիքը և անոր ոտքերը պիտի լուաս, ու զանոնք անոր կտորներուն և գլխուն վրայ պիտի

18 դնես։ Եւ բոլոր խոյը պիտի այրես սեղանին վրայ. աս ողջակէզ է Տէրոջը. Ղանուշահոտ պատարագ մըն է Տէրոջը։

ղ ՆԾ՚Ե·Ը·21։ 19 Եւ մկալ խոյը պիտի առնես. ու Ահարոն և անոր որդիքը իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ պիտի

ճ ՀՇՐ·3։ ՂԼ·Ը·22։ 20 դնեն։ Եւ խոյը պիտի մորթես, ու անոր արիւնէն պիտի առնես, և Ահարոնին ԱՀ ականջին ըլթակին վրայ՝ ու անոր որդւոցը ԱՀ ականջներուն ըլթակին վրայ՝ և անոնց ԱՀ ձեռքին մէծ մատին վրայ՝ ու անոնց ԱՀ ոտքին մէծ մատին վրայ պիտի դնես. և ՏՈՒՆ արիւնը սեղանին վրայ շուրջանակի պի-

21 տի սրսկես։ Եւ սեղանին վրայ եղած արիւնէն՝ ու Ժօծման եղէն պիտի առնես, և Ահարոնին վրայ ու անոր զգեստներուն վրայ՝ և անոր հետ իր որդւոցը վրայ՝ ու իր որդւոցը զգեստներուն վրայ սրսկես. և Ժանիկա՝ ու անոր զգեստները՝ և անոր հետ իր որդիները՝ ու իր որդւոցը զգեստները սուրբ պիտի

ՅՀՇՐ·1։ ԵՐԲ·Թ·22։ 22 ըլլան։ Եւ խոյէն պիտի առնես ճարպը՝ ու գլմակը՝ և փորոտիքը ծածկող ճարպը՝ և լնարդին վրայ թաղանթը՝ ու երկու երիկամունքը՝ և անոնց վրայ եղած ճարպը ու ԱՋ ազիստը. ինչու որ աս Ժահանայի օրհ-

ՂԼ·Ը·26։ 23 նուէթեան խոյն է։ Նեւ Տէրոջը առջեւը եղած անխմոր հացի ոսկաձուէն մէկ պան հայից՝ ու ՄԿ եղով հացի շօթ՝ և ՄԿ լաւաշ պիտ ասա-

24 Նէա. Եւ ամէնը Ահարոնին ձեռքը՝ ու անոր որդւոցը ձեռքը պիտի պրծնես, և Ըզանոնք Տէրոջը առջեւը երերցընելու ընծայ մատուցանես։

ՂԼ·Ե·30։ ՂԼ·Ը·28։ 25 Եւ անոնց ձեռքէն առնես զանոնք, ու սեղանին վրայի ողջակէզին վրայ այրես Տէրոջը առջեւը անուշ հոտի համար. ասիկայ պա-

26 տարագ մըն է Տէրոջը։ Եւ Ահարոնին Ժահանայի օրհնութեան համար պատրաստուած խոյէն՝ Ներբուծը պիտի առնես, ու զանիկայ Տէրոջը առջեւը երերցընելու ընծայ մատուցանես. և ան դրու բաժինդ ըլլայ։

ՂԼ·Ը·29։ ՊՏՆ Սաղ·ՁԹ·6։ ՂԼ·Է·31, 34։ ԹՒ·Ժ·11, 18։ ԲՕր·Ժ·3։ 27 Եւ Ահարոնին համար ու անոր որդւոցը համար եղած Ժահանայի օրհնութեան խոյէն Ներբուծը երերցընելու երբուծը ու բարձրացընելու զիստը,

Ն. ք. ՀՀ. 1491

(որ կ՚երերցուի ու կը բարձրացուի.)

28 պիտի սրբես ։ Եւ ասկից ՚յաւիտենական կանոնով Ահարոնին ու անոր որդւոցը պիտի ըլլայ՝ Իսրայէլէն որդւոցը կողմանէ. ինչու որ աս բարձրացընելը ընծայ է. և աս պիտի ըլլայ բարձրացընելու ընծայ՝ Իսրայէլի որդւոցմէն իրենց հաղաղութեան զոհերէն Եհո֊վայի բարձրացընելու ընծան դէպ՚ի Տէրոջը ։

29 Եւ Ահարոնին սուրբ զգեստները իրմէն ետքը՝ իր որդւոցը պիտի ըլլան, որ անոնցմով օծուին. ու ա֊

30 նոնցմով օրհնուին ։ Եւ Հանիկայ որ իր որդւոցմէ իր տեղը քահանայ ըլլալով՝ պաշտօն կատարելու համար ժողովքի խորանը՝ սրբարանը պիտի մտնէ, զանոնք յեօթը օր պիտի

31 հագնի ։ Եւ Հանիկայ օրհնութեան խոյը պիտի առնես՝ ու անոր միսը

32 սուրբ տեղ մը եփես. Եւ Ահարոն ու անոր որդիքը ժողովքի խորանին դրանը քով պիտի ուտեն խոյին

33 միսը՝ ու հակառին մէջի հացը։ Եւ հանոնք պիտի ուտեն այն բաները՝ որ իրենց օրհնութիւնն սրբութիւնն համար անոնցմով քաւութիւն եղաւ, և օտարական մը անոնց պիտի չուտէ. ինչու որ անոնք սուրբ

34 են ։ Եւ թէ որ օրհնութեան միսէն ու հացէն մինչև առտու մնայ, ապա աւելցածը կրակով պիտի այրես. անիկայ պիտի չուտուի, ինչու որ սուրբ է ։

35 Եւ Ահարոնին ու անոր որդւոցը ասանկ պիտի ընես, բոլոր քեզի ապսպրածիս պէս. եօթը օրուան մէջ պիտի կատարես անոնց օրհնու֊

36 թիւնը ։ Եւ ցորը մէկ զուարակ մեղքի պատարագ ընես քաւութեան համար. ու սեղանին համար քաւութիւն ընելու ատեն պիտի մաքրես զանիկայ, և սուրբ ընելու

37 համար հպիտի օծես զանիկայ ։ Սեղանին համար եօթը օր քաւութիւն պիտի ընես, ու սուրբ ընես ան. Եւ սեղանը ամենասուրբ պիտի ըլլայ. Ինչ որ սեղանին դպչի սուրբ պիտի ըլլայ ։

38 Եւ սեղանին վրայ ընելու պատ֊րաստ ասիկա է. Միշտ ամէն օր Եմէկ տարեկան

39 երկու գառնիք. Մէկ գառը ետու֊տուանց պիտի մատուցանես, ու մէկալ գառը իրիկուան դէմ մա֊

40 տուցանես ։ Եւ մէկ գառին հետ մէկ հիմնի քառորդ ծեծուած ձէթով շաղուած մէկ տասանորդ բարակ ալիւր. և թափելու նուէրին համար մէկ հիմնի քառորդ մը գինի մա֊

41 տուցանես ։ Եւ մէկալ գառը իրիկուան դէմ պիտի զոհես. ու առտուան հացի ընծային պէս և անոր թափելու նուէրին պէս պիտի ընես անոր. ասիկա անուշահոտ պատարագ

42 մըն է Տէրոջը ։ Ա֊յսից ձեր ազգերուն մէջ Եմշտնջենաւոր ողջակէզ պիտի ըլլայ Տէրոջը առջևը ժողովքի խորանին դրանը Եւ, Եուր որ ձեզի պիտի հանդիպիմ՝ քեզի հետ

43 խօսելու ։ Եւ հոն Իսրայէլի որդւոցը պիտի հանդիպիմ, ու Եսբոնը Եիմ

44 փառքովս սուրբ պիտի ըլլայ ։ Եւ ժողովքի խորանը ու սեղանը պիտի սրբեմ. Ահարոնը ու անոր որդիներն ալ Եպիտի սրբեմ, որ ինծի

45 քահանայութիւն ընեն ։ Եւ Իսրայէլի որդւոցը մէջ պիտի բնակիմ, ու անոնց Աստուած պիտի ըլլամ.

46 Եւ պիտի գիտնան Թէ Եանոնց Տէր Աստուածը ես եմ, որ անոնց մէջը բնակելու համար՝ Եգիպտոսի երկրէն հանեցի զանոնք. ես եմ անոնց Տէր Աստուածը ։

ԳԼ. Ի.

1 Խունկի սեղանը ։ 11 Հոգիներուն փրկանքը ։ 17 Պղնձէ աւազանը ։ 22 Օծման սուրբ եղը ։ 34 Անուշահոտ խունկին բաղադրութիւնը ։

1 Եւ Եխունկ ծխելու Եսեղան մը պիտի շինես. Սատիմի փայտէ

2 պիտի շինես անիկայ. Անոր երկայնութիւնը կանգուն մը՝ ու անոր լայնութիւնը կանգուն մը՝ քառակուսի պիտի ըլլայ, և անոր բարձրութիւնը երկու կանգուն. անոր

3 եղջիւրները իրմէն պիտի ըլլան ։ Եւ անոր վրան՝ ու անոր քովերը շուրջանակի՝ և անոր եղջիւրները ղուտոսիով պիտի պատես. ու շուրջանակի ոսկի պսակ մը պիտի շինես ա֊

4 նոր ։ Եւ երկու ոսկի օղակներ պիտի շինես անոր. պսակին տակէն՝ անոր երկու քովերը երկու կողմերէն պիտի շինես. որ ան՝ անոնցմով վերցուելու համար ձողերուն Ենե֊

5 րէ տեղերը ըլլան ։ Եւ ձողերը Սատիմի փայտէ պիտի շինես, ու

6 անոնք ոսկիով պատես. Եւ անիկայ պիտի դնես վկայութեանը վրայի հքաւութիւնին առջևը՝ վկայութեան տապանակին քովը եղած վարագուրին առջևը, ուր որ ես

7 քեզի պիտի հանդիպիմ։ Եւ Ահարոն անոր վրայ Եանուշահոտ խունկ պիտի ծխէ. ամէն առտու Եճրագները շտկած ատենը խունկ պիտի

8 ծխէ ։ Եւ Ահարոն Երիրիկուան դէմ ճրագները վառած ատենը խունկ պիտի ծխէ, որ Տէրոջը առջևը մշտնջենաւոր խունկ ըլլայ ձեր ազ֊

9 գերուն մէջ. Անոր վրան Եօտար խունկ, կամ ողջակէզ, կամ հացի ընծայ պիտի չմատուցանէք. ոչ ալ անոր վրան նուէր պիտի թա֊

Ն. ք. ՀՀ. 1491

ք ՀՓ 38 ։
Գլ. է 8 ։
Թուա. իբ. 6 ։ Դան. ը. 11, 12, 13 ։
Ել. իե 22 ։
է 6, 36 ։
Թուա. ժե. 4 ։
Լեվ. խ. 34 ։
գ Թագ ը. 11 ։ բ Մն. 6. 14. է. 1, 2. 3 ։ Եզեկ. խգ. 5 ։ Ազգ. բ. 7. 9 ։ Մաղ. գ. 1 ։
Ել. ֆա. 15 ։ իբ. 9, 16 ։
ք Գլ. իե 8 ։
Ղև. իգ. 12 ։ Ջաք. ը. 10 ։ Յօհ. ժգ. 17. 23 ։ բ Կոր. գ. 16 ։ Ցայս. ֆա. 3 ։
Ել. ի. 2 ։
— ՏՅս ՀՓ 7. 8. 10 ։
Ղև. գ. 7, 18 ։ Ցայս. ը. 3 ։
Բ Գլ. լե. 25 ։ խ. 5 ։

ֆ Գլ. իե. 21, 22 ։

ծ Մաթ. ժբ. 4 ։
Ղև. ժ. 14, 15, 17 ։
Ղև. իբ. 10 ։
Ղև. ը. 32 ։
— Գլ. խ. 12 ։ Ղև. ը. 33, 34, 35 ։
Բ Եբր. ժ. 11 ։
ֆ Գլ. ւ. 26, 28, 29 ։ խ. 10 ։
ծ Գլ. խ. 10 ։
Ե Գլ. Ը. 29 ։ Մաթ. իգ. 19 ։
Ղ Դան. թ. 27 ։ ժբ. 11 ։
Ե Թուա. իբ. 3 ։ ա Մն. ժգ. 40 ։ բ Մն. բ. 4 ։ ժբ. 11 ։ Լաւ. 3 ։ Եզր. գ. 3 ։
Ը ծ Թագ. ժգ. 15 ։ Եզեկ. խգ. 13, 14, 15 ։
Ի ծ Թագ. ժբ. 20, 36 ։
ծ Թագ. ժգ. 15 ։ Եզր. թ. 4, 5 ։ Սաղ. ճխա. 2 ։ Դան. թ. 21 ։

ծ Գլ. իե. 1 ։

Ն · ք · ՁԲ · 1491 ԸՂՔ · ժգ · 18 · իգ · 27 ·

10 փէք · եւ ԸԱհարոն տարին անգամ մը անոր եղջիւրներուն վրայ քաւութիւն պիտի ընէ · անիկայ քաւութիւն պիտի ընէ անոր վրայ քաւութիւն պիտի ընէ տարին անգամ մը ձեր ազգերուն մէջ · սրբութիւն է Տէրոջը ։

11 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝

Ր Գլ · լը · 25 · Թուոց · ա · 2 · 5 · իգ · 2 · բ Թագ · իգ · 2 ·

12 ըսելով · Ր Երբոր Իսրայէլի որդւոցը գումարը առնելու ըլլաս՝ իրենց թուոյն նայելով, ան ատեն անոնց ամէն մէկը ժ իր հոգւոյն փրկանքը պիտի տայ Տէրոջը՝ զանոնք համրած ատենդ, որ անոնց մէջը եղաւ րուած չըլլայ՝ երբոր զանոնք համրես ։

Ժ Ցոր · լգ · 24 · լշ · 18 · Սաղ · խթ · 7 · Մատ · ի · 28 · Մարկ · ժ · 45 · ա Տիմ · բ · 6 · ա Պետ · ա · 18 · 19 ·

13 րեա ։ Ա Անոնք ասպիտի տան · ասմէն մէկը՝ որ կ՚անցնի կը համրուի , սրբարանին սիկղին համեմատ՝ կէս սիկղ արծաթ պէտք պտ · Ի մէկ սիկղը քսան կերատ է · Տէրոջը ընծան

Ի Թագ · իգ · 15 ·

14 ժ կէս սիկղ պիտի ըլլայ ։ Ամէն քսան տարեկանէն վեր եղողը՝ որ կ՚անցնի կը համրուի , ՚՚ ընծան Տէրոջը

Ի Գլ · իէ · 25 · Թուոց · գ · 47 · Եզեկ · խե · 12 ·

15 պիտի տայ ։ Երբոր Ձեր հոգիներուն քաւութիւն ընելու համար Տէրոջը ընծայ տան , կէս սիկղէն հաչ հրուստը աւելի՛ ու ոչ աղքատը պա-

Ժ Գլ · լը · 26 ·

16 կաս պիտի տայ ։ Եւ Իսրայէլի որդւոցմէ քաւութեան արծաթը պիտի առնես , ու ժ Ժողովքի խորհրդին պաշտօնին պիտի տաս , որ Տէրոջը առջեր ։ Հիշատակ ըլլայ Իսրայէլի որդւոցը՝ Ձեր հոգիներուն քաւութիւն ընելու համար ։

Ն Գլ · լը · 25 ·

17 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝

Ը Թուոց · ժգ · 40 ·

18 ըսելով · Ը Նաև պղնձէ աւազան մը պիտի չինես լուացման համար , ու անոր խարիսխն ալ պղնձէ ըլլայ · և ժ Ժողովքի խորանին ու սեղանին միջտեղը պիտի դնես ան , ու անոր

Ժ Գլ · խ · 7 · 30 ·

19 մէջը ջուր պիտի լեցընես ։ Եւ Ա-հարոն ու անոր որդիքը ժ իրենց ձեռքերը ու ոտքերը պիտի լուան

Ժ Գլ · խ · 31 · 32 · Սաղ · իշ · 6 · Եսա · ծբ · 11 · Ցոհ · ժգ · 10 · Երե · ժ · 22 ·

20 անկից ։ Երբոր անոնք ժողովքի խորանը մտնելու ըլլան , կամ երբոր սեղանին մօտենալու ըլլան՝ պաշտօն կատարելու ՚՚ կրակով Տէրոջը զոհ մատուցանելու համար , ջրով պի-

21 տի լուացուին՝ որ չմեռնին · Այսպէս իրենց ձեռքերը ու ոտքերը պիտի լուան՝ որ չմեռնին · և Ն՚՚ էյ իրենց յաւիտենական կանոն պիտի ըլլայ , թէ իրեն և թէ իր սերունդին իրենց ազգերուն մէջ ։

Ն Գլ · իբ · 43 ·

22՝ Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-

Ե Գլ · ի · 14 · Եզեկ · իէ · 22 ·

23 սելով · Ա՛ռ քեզի Ձպատուական հա-մեմներ , Ձզուտ զմուռս հինգ հարիւր ռէլ , և անոր կէսին չափ՝ Ձ-ոյնին երկու հարիւր յիսուն ռէլ անու-շահոտ կինամոն , ու երկու հարիւր յիսուն ռէլ Ձանուշահոտ խունկե-

Ռ Սաղ · խե · 8 · Առակ · է · 17 ·

24 ղէդրն , եւ Ձհինգ հարիւր ռէլ կա-

Ե Գլ · իգ · 14 · Երեմ · գ · 20 ·

պիայ՝ սրբարանին սիկղին համեմատ, ձիթոյ մէկ հինէն ձէթ · Եւ սուրբ օծման եղ պիտի չինես ան՝ իւղագործի արհեստով բաղադրուած · անիկայ ՚՚ սուրբ օծման եղ պիտի ըլլայ ։

Ե Գլ · իգ · 29 · Թուոց · լե · 25 · Սաղ · իթ · 20 · ճղ · 2 ·

26 ՚Եւ անով պիտի օծես ժողովքի խորանը , ու վկայութեան տապա-

Ե Գլ · խ · 9 · Ղե · ը · 10 · Թուոց · է · 1 ·

27 նակը , Եւ սեղանը ու անոր ամէն անօթները , և աշտանակը ու անոր գործիքները , և խունկին սեղանը ,

Ե Գլ · իթ · 37 ·

28 Եւ ողջակէզին սեղանը իր ամէն գործիքներուն հետ մկուղ , և ա-

Ե Գլ · խթ · 7 , ՠ , Ղե · ը · 12 , 30 ·

29 սանը ու անոր տակը պիտի օծես , ու սուրբ պիտի բնես անոնք , որ ինծի

Ե Ղե · խ · 7 · Ա Կոր · ժա · 27 ·

31 քահանայութիւն ընեն ։ Եւ Իսրայէլի որդւոցը պիտի ըսես՝ ըսելով · Ա՛սիկայ ինծի սուրբ օծման եղ պիտի ըլլայ ձեր ազգերուն մէջ ։

Ե Ելք · իգ · 32 Մարդու մարմինի վրայ պիտի չթափուի ան , և անոր բաղադրութեան պես անոր նմանը պիտի չընէք · Ր սա սուրբ է , ՚՚ ձեզի սուրբ պիտի

Ր Ելք 25 , 37 ·

33 ըլլայ ։ Ո՛վ որ անոր նմանը չինէ , կամ ով որ անկէ օտարականի վրայ դնէ , ՚իր ժողովուրդէն պիտի կորսուի ։

Ց Ելք 38 ·

34 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին · Ձ՚Առ քեզի անուշահոտ համեմներ , ցո-խոտ ստակոն ու եղունգն և քաղբան , ՚՚ անուշահոտ համեմները մաքուր կնդրուկով · ամէնը հա-

Ե Գլ · իե · 6 · Լե · 29 ·

35 սասար կշռով պիտի ըլլան · Եւ անոնք ժ իւղագործի արհեստով ժ իրար խառնուած՝՚՚ անուշահոտ բաղադրութիւն մը պիտի չինես մա-

Ե Ելք 25 ·

* Կամ՝ աղուած · տես Ղե · ը · 13 ·

36 քուր ՚՚ սուրբ ։ Եւ անկէ Ձիէ մը պիտի ծեծես շատ բարակ , ու ժողովքի խորանին մէջ վկայութեանը առջևը դնես , ՝ուր որ ես քեզի պիտի հանդիպիմ · Ֆ՚՚անիյ ձեզի

Օ Գլ · խթ · 42 · Ղե · ժշ · 2 ·

37 ամենասուրբ պիտի ըլլայ ։ Եւ ան քու չինելու անուշահոտ բաղադրութեանդ արհեստովը՝ ՚՚ դուք ձեզի համար պիտի չչինէք · ան ձեզի սուրբ պիտի ըլլայ Տէրոջը համար ։

Ֆ Ելք 32 ·

Բ Ելք 38 ·

38 Ո՛վ որ հոտոտելու համար անոր նմանը չինելու ըլլայ , իր ժողովուրդէն պիտի կորսուի ։

ԳԼ · ԼԱ

1 Տէրը կ՚ընտրէ Բեսելէլը ու Ոողիաբը՝ խորհրդի գործերը ընելու · 12 և շարաթը պահելու պատուէրը կը նորոգէ · 18 Մովսէս երկու տախտակները կ՚ընդունի ։

1 Տէրը խօսեցաւ Մովսէսին՝

2 ըսելով · ՚՚ Ահա Ցուդայի ցեղէն Ովրի որդւոյն Բ Ուրիին որդին Բե-

3 սելէլը անուշովի կանչեցի · Եւ Ձաստուծոյ Հոգիովը՝ իմաստու-

Ն · ք · ՁԲ · 1491 Ղ Գլ · խթ · 40 ·

՚՚ Գլ · լե · 29 · Թուոց · լե · 25 · Սաղ · ճթ · 20 · ճղ · 2 ·

՚՚ Գլ · խ · 9 · Ղե · ը · 10 · Թուոց · է · 1 ·

Լ Գլ · խթ · 37 ·

՚՚ Գլ · խթ · 7 , ՠ , Ղե · ը · 12 , 30 ·

Ը Ելք 25 , 37 ·

Ց Ելք 38 ·

՚՚ Ցո՛ւ · ժե · 14 · Գե · ժբ · 15 · Ղե · է · 20 , 21 ·

Ձ Գլ · իե · 6 · Լե · 29 ·

Ձ Ելք 25 ·

* Կամ՝ աղուած · տես Ղե · ը · 13 ·

Օ Գլ · խթ · 42 · Ղե · ժշ · 2 ·

Ֆ Ելք 32 · Գլ · խթ · 37 · Ղե · ը · 3 ·

՚՚ Ելք 32 ·

Բ Ելք 38 ·

Ն · ք · ՉՁ · 1491

Թ իւնով ու Հանճարով և գիտու-
Թ իւնով ու ամէն կերպ ձարտարու-
4 Թ իւնով լեցուցի անիկայ , Որ վար-
պետի գործեր ՚ներելով՝ ոսկիով ու
5 արծաթով և պղնձով գործէ . Եւ
գամելու համար քարեր բանելով՝
ու փայտեր քանդակելով՝ ամէն
6 կերպ արհեստը բանի : Եւ ահա
Դանի ցեղէն Ահիսամային որդին
Ո ՚ղիաբը տուի անոր հետ . ու
ամէն Իմաստունին սրտին մէջ
իմաստութիւնը դրի , որ բոլոր
7 քեզի պատուիրածս ընեն . Ժող-
ովրդի խորանը՝ և Վկայութեան
տապանակը ու անոր վրայ եղած
Ետաւութիւնը՝ և խորանին բոլոր
8 կարասիները , Եւ Սեղանը ու անոր
անօթները՝ և Մաքուր աշտանակը
իր բոլոր գործիքներովը՝ և խունկին
9 սեղանը , Եւ Ողջակէզին սեղանը իր
բոլոր գործիքներովը՝ և Լուացարանը
10 ու անոր խարիսխը , Եւ Պաշտօնին
լաթերը՝ ու Ահարոն քահանային
սուրբ զգեստները՝ և անոր որդւոցը
զգեստները՝ քահանայութիւն ընե-
11 լու համար , Եւ օծման եղը՝ ու
սրբարանին համար Անուշահոտ
խունկը՝ քուրը քեզի պատուիրածիս
պէս պիտի ընեն :
12 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ու
13 ըսաւ . Դուն ալ Իսրայէլի
որդւոցը՝ ըսելով . Ընշուշտ իմ
շաբաթներս պիտի պահէք . Ինչու
որ աս նշան մըն է իմ ու ձեր մէջ-
տեղը ձեր ազգերուն մէջ , որ
գիտնաք Թէ ձեզ սուրբ ընող Տե-
14 րը ես եմ : Ընաւտի շաբաթը
պիտի պահէք . Ինչու որ ան
ձեզի սուրբ է . Ամէն ով որ զանի-
կայ պղծէ՝ անշուշտ պիտի մեռնի .
քանզի Ո ՚վ որ ան օրը գործ մը
գործէ , ան անձը իր ժողովուրդին
15 մէջէն պիտի կորսուի : Վեց օր
գործ պիտի գործուի , բայց Եօթ-
ներորդ օրը հանգստութեան շաբա-
թը սուրբ պիտի ըլլայ Տէրոջը .
Ով որ շաբաթ օրը գործ մը գործէ ,
16 անշուշտ պիտի մեռցուի : Անոր
համար Իսրայէլի որդիքը պիտի
պահեն շաբաթը , որ շաբաթը ի-
րենց ազգերուն մէջ յաւիտենական
17 ուխտ մը ընեն : Անիկայ յաւիւ-
տենական նշան մըն է իմ ու Իսրա-
յէլի որդւոցը մէջտեղը . քանզի
Տէրը Վեց օրուան մէջ ստեղծեց
երկինքը ու երկիրը , և Եօթներորդ
օրը դադարեցաւ ու հանգստացաւ :
18 Եւ երբոր Սինայ լեռանը վրայ
Մովսէսին հետ խօսիլը լմընցուց ,
Ե վկայութեան երկու տախտակնե-
րը տուաւ անոր , Աստուծոյ մա-
տովը գրուած՝ քարէ տախտակ-
ներ :

ԳԼ · ԼԲ

1 Ժողովուրդը՝ Մովսէսին հեռաւորութեան
ժամանակը Ահարոնին որթ մը չհնել կու տայ ;
7 Աստուած կը բարկանայ աս բանիս վրայ ,
11 բայց Մովսէսին աղաչանքովը բարկութիւ-
նը կը դադրի : 15 Մովսէս լեռնէն կ՚իջնէ
իր ձեռքը ունենալով երկու տախտակները ,
19 որոնք կը կոտրէ : 20 Որթը փոշի կ՚ընէ :
22 Ահարոն զիջերը կ՚արդարացրնէ : 25 Մով-
սէս կը պատուիրէ կռապաշտները մեռցընել ,
31 Ժողովուրդին համար կ՚աղօթէ :

1 Եւ ժողովուրդը տեսնելով որ
Մովսէսը Ուշացաւ լեռնէն իջ-
նելու , ժողովուրդը Ահարոնին քովը
ժողովեցան՝ ու ըսին անոր . Ե-
լիր , մեզի աստուածներ շինէ որ
մեր առջևէն երթան . քանզի ան
Մովսէսը՝ մեզ Եգիպտոսի երկրէն
հանող մարդը , չենք գիտեր Թէ
2 ինչ եղաւ անոր : Եւ Ահարոն
ըսաւ անոնց . Ձեր կիներուն ,
ձեր տղաքներուն և ձեր աղիկնե-
րուն ականջները եղած ոսկի օղե-
3 րը հանեցէք , ու ինծի բերէք : Եւ
բոլոր ժողովուրդը իրենց ականջնե-
րը եղած ոսկի օղերը հանեցին՝ ու
4 Ահարոնին բերին : Եւ անիկայ
առաւ անոնց ձեռքէն , ու *տի-
պով մը չհնեց , և ձուլածոյ որթ
մը շրաւ : Եւ ըսին . Ո՛վ Իսրայէլ ,
աստնք են քու աստուածներդ՝ որ
քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին :
5 Եւ երբ Ահարոն տեսաւ ասիկայ ,
անոր առջևը սեղան մը շինեց . և
Ահարոն Հրատարակել տուաւ՝ ը-
6 սելով . Վաղը տօն է Տէրոջը : Եւ
հետևեալ առաւօտուն կանուխ ե-
լան , ու ողջակէզներ մատուցին , և
խաղաղութեան զոհեր բերին . և
Ժողովուրդը ուտելու ու խմելու
նստան , ու խաղալու ելան :
7 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Գնա
իջիր . ինչու որ Ընաւրինեցաւ քու
ժողովուրդդ՝ որ Եգիպտոսի երկրէն
8 հանեցիր . Անոնք շուտով խոտորե-
ցան ան ճամբայէն՝ որն որ Ժ իրենց
պատուիրեցի . իրենց ձուլածոյ
որթ շինեցին , և անոր երկրպա-
գութիւն ըրին , ու անոր զոհեր
մատուցին , ու ըսին . Ո՛վ Իսրա-
յէլ , Եասոնք են քու աստուած-
ներդ՝ որ քեզ Եգիպտոսի երկրէն
9 հանեցին : Եւ Տէրը ըսաւ Մովսէ-
սին . Ես տեսայ աս ժողովուրդը ,
և ահա աս խստապարանոց ժող-
10 ովուրդ մըն է : Ուստի հիմա Թող
տուր Իս՝ որ Ժիմ բարկութիւնս
անոնց վրայ բորբոքի , ու ՓՃացը-
նեմ զանոնք . և Կրնդ մեծ ազգ մը
11 ընեմ : Եւ Մովսէս իր Տէր Ա-
ստուծոյն աւջևը աղաչեց , ու ը-
սաւ . Ո՛վ Տէր , ինչո՞ւ քու բար-
կութիւնդ բորբոքի քու ժողո-
վուրդիդ վրայ , որ Եգիպտոսի

Ն · ք · ՉՁ · 1491

Ա Գլ · իդ · 18 ; բ Օր · Թ · 9 ·
Բ Գործ · է · 40 ·
Ե Գլ · ժգ · 21 ·
Զ Դատ · ը · 24 , 25 , 26 , 27 ·
Է Գլ · ի · 23 ; բ Օր · Թ · 16 ; Դատ · ժէ · 3 , 4 ; գ Թագ · ժբ · 28 ; Նէեմ · Թ · 18 ; Սաղ · ճզ · 19 ; Ես · խգ · 6 ; Գործ · է · 41 ; Հռով · ա · 23 ·
* Կամ՝ քանդակագործի գրչով
Ը Ղեւ · իգ · 2 , 4 , 21 , 37 ; գ Թագ · ժ 20 ; բ Մն · Լ · 5 ·
Թ ա Կոր · ժ · 7 ·
Ժ բ Օր · Թ · 12 ; Ճմր 1 ; Գ · Լէ · 1 ; Դան · Թ · 24 ·
Ժա Ծն · գ · 11 , 12 ; բ Օր · գ · 16 ; լբ · 5 ; Դատ · բ · 19 ; Ովս · Թ · 9 ·
Ժբ Գ · ի · 3 , 4 , 23 ; բ Օր · Թ · 16 ·
Ժգ Գ · Լէ · 3 , 5 ; Լէ · 9 ; բ Օր · Թ · 6 , 13 ; լ · 27 ; բ Մն · Լ · 8 ; Ես · խբ · 4 ; Գործ · է · 51 ·
Ժէ բ Օր · Թ · 14 , 19 ·
Ժը Գէ · իբ · 24 ·
Ի Թես · ժբ · 12 ·
Իա Օր · Թ · 18 , 26 , 27 , 28 , 29 ; Սաղ · Կդ · 1 , 2 ; ճզ · 23 ·

Ե · ք · ՉՁ · 1491

Բ Գլ · Լ · 34 ·
Գ Գլ · Լ · 1 ·
Դ Գլ · Լ · 6 ·
Ե Գլ · Լ · 10 ·
Զ Գլ · Լ · 17 ·
Է Գլ · Լը · 1 ·
Ը Գլ · Լը · 3 ; Լ · 10 , 35 ; Լզ · 1 ·
Թ Գլ · Լզ · 8 ;
Ժ Գլ · Լ · 1 ·
Ժա Գլ · Լ · 6 ·
Ժբ Գլ · Լ · 10 ·
Ժգ Գլ · Լ · 17 ·
Ժդ Գլ · Լ · 34 ·
Ժե Գլ · Լը · 1 ·
Ժզ Գլ · Լը · 3 ;
Ժէ Գլ · Լ · 41 ; Թուս · գ · 5 , 6 ;
Ժը Գլ · Լ · 25 , 31 ; Լ · 29 ;
Ժթ Գլ · Լ · 34 ; Լ · 29 ;
Ի Ղեւ · ժբ · 3 , 30 ; Ես · 2 ; Եզեկ · ի · 12 , 20 ; Խգ · 24 ·
Իա Գլ · ի · 8 ; բ Օր · Ե · 12 ; Եզեկ · ի · 12 ·
Իբ Գլ · Լ · 2 ; Թուս · ժ · 35 ·
Իգ Գլ · ի · 9 ; Յշ · բ · 2 ; Գլ · ժգ · 23 ; ի · 10 ·
Իդ Ա Ճմր 13 ; Եզեկ · ի · 12 , 20 ;
Իե Ծն · ա · 31 ; բ · 2 ;
Իզ Գլ · իդ · 12 ; Լ · 15 , 16 ; Լդ · 28 , 29 ; բ Օր · դ · 13 ; Ե · 22 ; Թ · 10 , 11 ; բ Կոր · գ · 3 ;

Ն · Ք · ԶԲ · 1491

յ Թագ · ժգ · 13 ։ բ Օր · Թ · 28 ։ լբ · 27 ։

* ԵԲր · զղջա · ղ Հմր 14 ։

ճ Ծն · իր · 16 ։ Երբ · գ · 13 ։ ՛ Ծն · ժբ · 7 ։ ժգ · 15 ։ ժե · 7 ։ 18 ։ իգ · 4 ։ իբ · 13 ։ լե · 11 · 12 ։

յբ Օր · լբ · 26 ։ բԹագ · իդ · 16 · ա Ա՛Ն · իա · 15 ։ Սաղ · ճղ · 45 ։ Երեմ · ժբ · 8 ։ իգ · 13 ։ 19 ։ Զո · վել · բ · 13 ։ Ճոխ · գ · 10 ։ գ · 2 ։

ե բ Օր · Թ · 15 ։

ը ԳԼ · լ · 18 ։

ա բ Օր · Թ · 16 ։ 17 ։

ւբ Օր · Թ · 21 ։

պ Ծն · ի · 9 ։ իգ · 10 ։

ԼԳԼ · ժդ · 11 ։ ժե · 24 ։ ժգ · 2 ։ 20 ։ 28 ։ ժէ · 2 · 4 ։

ա Հմր 1 ։

0

ա Հմր 4 ։

երկրէն հանելիր մեծ զօրութիւ_
12 նով ու զօրաւոր ձեռքով · Այնու_
համար Եգիպտացիք խօսին ու ը_
սեն թէ՝ Չարութեան համար հա_
նեց զանոնք՝ որ լեռներուն մէջը
մեռցընէ , ու զանոնք երկրի երեսէն
փճացընէ . դարձիր քու սաստիկ
բարկութենէդ , ու ՛ղդադարէ աս
չարիքը քու ժողովուրդիդ վրայ
13 Իբրեզ՝ ։ Ցիչէ՛ քու ծառաներդ
Աբրահամը՝ Իսահակը ու Իսրայէ_
լը , որոնց դուն ՛քու անձովդ եր_
դում ըրիր ու ըսիր անոնց ՛Ձեր
սերունդը երկինքին աստղերուն
պէս պիտի շատցընեմ , և բոլոր աս
երկիրը՝ որուն վրայով խօսեցայ .
ձեր սերունդին պիտի տամ , ու ան
14 պիտի ժառանգեն յաւիտեան · Եւ
Տէրը ՛զղջաց ան չարիքին համար՝
որ ըսեր էր թէ իր ժողովուրդին
պիտի ընէ ։
15 Եւ ՝Մովսէս դարձաւ ու լեռնէն
իջաւ , ու վկայութեան երկու տախ_
տակները իր ձեռքն էին . տախտակ_
ները իրենց երկու քովերէն գրուած
էին . անոնք մէկ կողմէն ու մէկալ
16 կողմէն գրուած էին ։ Եւ Ղտախ_
տակները Աստուծոյ գործքն էին . ու
տախտակներուն վրայ փորագրուած
17 գիրը Աստուծոյ գրածն էր ։ Ու
երբոր Ցեսու պոռացող ժողովուր_
դին ձայնը լսեց , ըսաւ Մովսէսին .
Բանակին մէջ պատերազմի ձայն
18 կայ ։ Եւ անիկայ ըսաւ . Ա՛ս յաղ_
թողներու աղաղակի ձայն չէ , ո՛չ
ալ յաղթուածներու աղաղակի
ձայն է . հապա խաղի ձայն կը լը_
19 սեմ ես ։ Եւ եղաւ որ բանակին
մօտենալով՝ ՚որթը ու պարը բռնող_
ները տեսածին պէս , Մովսէսին
բարկութիւնը բորբոքեցաւ . ու
տախտակները իր ձեռքէն նետեց ,
ու լեռանը վարի դին կոտրտեց զա_
20 նոնք ։ Նաև անոնց չինած որթը
առաւ , ու կրակով այրեց , ու մանր
եց փոշի ըրաւ , և ջուրին վրայ
ցանեց , ու Իսրայէլի որդւոցը խըմ_
ցուց ։
21 Եւ Մովսէս ըսաւ Ահարոնին .
՚Ա՛ս ժողովուրդը ի՞նչ ըրաւ քեզի ,
որ անոնց վրայ ՚յ՚ւլէ՛ մեծ մեղք մը
22 բերիր ։ Եւ Ահարոն ըսաւ . Թող
իմ տիրոջս բարկութիւնը չբորբո_
քի . Դուն գիտես աս ժողովուր_
23 դը՝ որ չարին հակամիտեալ են . Եւ
ինծի ըսին թէ՝ ՚Մեզի աստուած_
ներ շինէ որ մեր առջևէն երթան .
ինչու որ ան Մովսէսը՝ մեզ եգիպ_
տոսի երկրէն հանող մարդը՝ չենք
24 գիտեր թէ անոր ինչ եղաւ ։ Եւ
ես ըսի անոնց . Ո՛վ որ ոսկի ունի ,
թող հանէ . ու բերին ինծի . և կը_
րակը ձգեցի ան , ու՚ա՛ս որթը ելաւ ։
25 Եւ երբոր Մովսէս ժողովուրդին
†անառակութիւնը տեսաւ , (քանի_
զի Ահարոն Հ†թող տուեր էր զա_
նոնք անառակութիւն ընելու՝՝ ի_
րենց թշնամիներուն մէջը խայտա_
26 ռակ ըլլալու չափ ։) Ան ատենը
Մովսէս բանակին դուռը կայնե_
ցաւ , ու ըսաւ . Ո՛վ որ Տէրոջը
կողմն է , թող ինծի ՛յ ։ և Ղլե_
ւիին բոլոր որդիքը անոր քովը
27 ժողվուեցան ։ Եւ ըսաւ անոնց .
Իսրայէլին Տէր Աստուածը ասանկ
կ՛ըսէ . Ամէն մարդ իր սուրը թող
իր մէջքը դնէ ու բանակին մէջ
դունէ դուռ անցնին դառնան , և
՝՝ամէն մարդ իր եղբայրը՝ ու ամէն
մարդ իր ընկերը՝ և ամէն մարդ իր
28 դրացին մեռցընէ · Եւ Ղլևիին որ_
դիքը Մովսէսին խօսքին պէս ըրին .
ու ան օրը ժողովուրդէն իրեք հա_
29 զար մարդու չափ ինկան ։ ՚Քանզի
Մովսէս ըսեր էր թէ՝ Ա յսօր ձեզմէ
ամէն մէկը իր որդւոյն վրայ ու
իր եղբօրը վրայ ինքզինքը Տէրոջը
նուիրէ , որ ձեր վրայ օրհնութիւն
տայ այսօր ։
30 Եւ եղաւ որ հետևեալ օրը Մով_
սէս ըսաւ ժողովուրդին . ՚Դուք
մեծ մեղք գործեցիք . ու հիմա
Տէրոջը պիտի ելլեմ , ՝գուցէ ՛քա_
ւութիւն ընեմ՝ ձեր մեղքին հա_
31 մար ։ Եւ Մովսէս ՛դարձաւ Տէ_
րոջը՝ ու ըսաւ . Ո՛հ , աս ժողովուր_
դը մեծ մեղք գործեց , ՛իրեն ոսկիէ
32 աստուածները շինելով ։ Բայց հի_
մա թէ որ անոնց մեղքերը կը նե_
րես՝ Ն՚երէ՛ , եթէ ոչ՝ կ՛աղաչեմ
33 ՚ձեռ իս ՝քու գրած գիրքէդ ։ Եւ
Տէրը ըսաւ Մովսէսին . Ո՞վ որ
ինծի մեղանչեց , անիկայ իմ գիր_
34 քէս պիտի ջնջեմ ։ Ուստի հիմա
գնա , ժողովուրդը ան տեղը տար ,
որն որ քեզի ըսի . ՚Հա՛ս իմ հրեշ_
տակս քու առջևէդ պիտի երթայ .
բայց ՝՚այցելութիւն ընելու օրս՝
անոնց մեղքը իրենց վրայ պիտի
35 բերեմ ։ Եւ Տէրը զարկաւ ժողո_
վուրդը , Ի՚Ահարոնին շինած որթը
շինելնուն համար ։

ԳԼ · ԼԳ

1 Տէրը չ՚յօժարիր ժողովուրդին հետ երթալու՝ իր ուղի խոստմանը պէս ։ 4 ժողովուրդը աս բանիս վրայ կը տրտմի ։ 7 Խորանը բանակէն դուրս կը հանուի ։ 9 Տէրը դէմ առ դէմ կը խօսի Մովսէսին հետ ։ 12 Մովսէս կը ցան_կայ Աստուծոյ փառքը տեսնելու ։

1 ¦Ու Տէրը ըսաւ Մովսէսին . Ելի՛ր
ասկէ դուն՝ ու ՝՝ժողովուրդն
ալ՝ որ եգիպտոսի երկրէն հանե_
ցիր , ՝՝՝ գնա ան երկիրը՝ որուն
համար երդում ըրի Աբրահամին՝
Իսահակին ու Յակոբին՝ ըսելով .
2 Քու սերունդիդ պիտի տամ ։

Ն · Ք · ԶԲ · 1491

+ կ՚՚մրկ ըսալը Ել Մ · իբ · 19 ։

‡ կ՚՚մր · կացուց զանոնք ։

ա Թագ · իե · 5 ։ բ Օր · լգ · 9 ։

բ Թագ · իե · 11 · 12 · 13 ։ բ Օր · ժգ · 6—11 ։ լգ · 9 · 10 ։ ա Թագ · ժե · 18 · 22 ։ Ա_մոս · իա · 3 · Ջաբ · ժգ · 3 ։ Մատ · ժ · 37 ։

յ ա Թագ · ժբ · 20 · 23 ։ Ղբ · ժե · 18 ։

ե բ Թագ · ժգ · 12 ։ Ա_մոս · ե · 15 ։

է Թագ · իե · 13 ։

ը բ Օր · Թ · 18 ։

ի ԳԼ · ի · 23 ։

ձ Սաղ · կճ · 23 ։ Հռով · Թ · 3 ։

ա Սաղ · ծղ · 5 ։ ՃՂԹ · 16 ։ Դան · ժբ · 1 ։ Փիլ · գ · 3 ։ Ցայտ · գ · 5 ։ ժգ · 8 ։ ժե · 8 ։ ի · 12 ։ 15 ։ իա · 27 ։ իբ · 19 ։ Բ Ղե · իգ · 30 ։ Եզեկ · ժբ · 4 ։

ի ԳԼ · լգ · 2 · 14 ։ ՚՚ ։ Թագ · ի · 16 ։

ր բ Օր · լբ · 35 ։ Ամով · գ · 14 ։ Հբ_ռով · բ · 5 · 6 ։

ի բ Թագ · ժբ · 9 · Գոր · է · 41 ։

ա ԳԼ · լբ · 7 ։

բ Ծն · ժբ · 7 ։ ԳԼ · լբ · 13 ։

Ն · ք · ՂՓ · 1491

2 ‡ Եւ քու առջևդ հրեշտակ մը պիտի խրկեմ , ¶ ու քանանացին՝ Ամորհացին՝ փետացին՝ փերեզացին՝ Խևացին ու Ցեբուսացին 3 պիտի վռընտեմ ; † կաթ ու մեղր բղխող երկիրը պիտի երթա . Վհնչու որ ես ձեր *Հետը պիտի չելլեմ . քանզի դուն խստապարանոց ժողովուրդ մըն ես . չըլլայ որ Էքեզ ճամբուն մէջ բնաջինջ ընեմ ։

4 Ու երբոր ժողովուրդը աս չար խօսքը լսեց , խսուդ ըրաւ . ծև մկը 5 իր զարդը իր վրան չդրաւ . Ինչու որ Տէրը ըսած էր Մովսէսին . Ըսէ Իսրայէլի որդւոցը . Դուք խստապարանոց ժողովուրդ մըն էք . մէկ րոպէ մը ես ձեր մէջը ելլելու ըլլամ , ձեզ բնաջինջ պիտի ընեմ . ուստի հիմա ձեր վրայէն զարդերնիդ վերցուցէք , որ Եձեզի ընելիքս գիտ- 6 նամ ։ Եւ Իսրայէլի որդիքը իրենց զարդերը հանեցին Քորեբ լեռանը քովը ։

7 Եւ Մովսէս առաւ խորանը , ու բանակին դուրսի դին՝ բանակէն հեռու կանգնեց ան , և ծանոր ա- նունը՝ ժողովքի խորան դրաւ . և ամէն որ †Տէրը կը խնդրէր , բանակին դուրսի դին եղած ժողովքի խորա- 8 նը կ՚ելլէր ։ Ու երբոր Մովսէս խո- րանը կ՚երթար , բոլոր ժողովուրդը կ՚ելլէր , ու ամէն մէկը Հր վրանին դուռը կը կայներ , ու Մովսէսին ետևէն կը նայեր , մինչև որ անիկայ 9 խորանը մտներ ։ Եւ Մովսէս խո- րանը մտածին պես՝ ամպի սիւնը կ՚իջնէր , ու խորանին դուռը կը կայներ , և Տէրը †Մովսէսին հետ 10 կը խօսէր ։ Եւ բոլոր ժողովուրդը կը տեսնէր որ ամպի սիւնը խորանին դուռը կը կայնի . ու բոլոր ժողո- վուրդը կ՚ելլէր՝ և ամէն մէկը իր վրանին դուռը ներկրպագութիւն 11 կ՚ընէր ։ Եւ †Տէրը կը խօսէր Մով- սէսին հետ դէմ առ դէմ , ինչպէս որ մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի . ու Մովսէս նորէն բանակը կը դառնար . բայց †անոր ծառան Նաւէի որդին Ցեսու պատանին՝ խորանէն չէր հեռանար ։

12 Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը . Նայէ †դուն կ՚ըսես ինծի . Հանէ աս ժո- ղովուրդը . ու դուն ինծի չգիտցու- ցիր թէ ով ինծի հետ պիտի խրր- կես . ու ըսիր . Ձեզ անունովդ կը ճանչնամ , ու նաև իմ առջևս 13 շնորհք գտար ։ Ուստի հիմա կ՚ա- ղաչեմ , Եթէ որ քու առջևդ շը- նորհք գտայ , *ինծի ցուցուր ուրեմն քու ճամբադ որ ճանչնամ քեզ , անանկ որ քու առջևդ շնորհք գըտ- նեմ ՝ ու †մի՛տքդ բեր՝ որ աս ազ- 14 գը Ձքու ժողովուրդդ է ։ Եւ անի- կայ ըսաւ . †Իմ ներկայութիւնս †— հետդ պիտի երթայ , ու քեզ 15 Ձպիտի հանգստացընեմ ։ Եւ Մով- սէս ըսաւ անոր . —Թէ որ քու ներկայութիւնդ հետ հետը չերթայ , 16 մեզ աս տեղէն մի՛ հաներ ։ Քանզի ինչով պիտի գիտցուի թէ ես ու քու ժողովուրդդ քու առջևդ շը- նորհք գտանք . *Չէ՞ որ քու մէջ հետ երթալովդ . այսպէս Ձես ու քու ժողովուրդդ երկրի երեսին վը- րայ եղած բոլոր ժողովուրդներէն պիտի զատուինք ։

17 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . —Աս բանն ալ պիտի ընեմ՝ որ դուն ը- սիր , ինչու որ †իմ առջևս շնորհք գտար , ու ես քեզ անունովդ կը 18 ճանչնամ ։ Եւ անիկայ ըսաւ . Կ՚աղաչեմ՝ †քու փառքդ ցուցուր 19 ինծի ։ Եւ Տէրը ըսաւ . —Իմ բո- լոր բարութիւնս քու առջևդ պի- տի անցընեմ , ու Տէրոջը անունը քու առջևդ պիտի կանչեմ , և որոն որ պիտի ողորմիմ՝ †կ՚ողորմիմ՝ ու որուն վրայ որ պիտի գթամ՝ կը 20 գթամ ։ Ու ըսաւ . Դուն իմ երեսս չես կրնար տեսնել , ինչու որ *մարդ 21 չկրնար իս տեսնել՝ ու ապրիլ ։ Եւ Տէրը ըսաւ . Ահա քովս տեղ մը 22 կայ , ու ժայռին վրայ կայնէ . Եւ ըլլայ որ երբ իմ փառքս անցնելու ըլլայ , քեզ °ժայռին խոռոչին մէջը դնեմ , ու ձեռքս իմ ձեռքովս ծած- 23 կեմ , մինչև որ ես անցնիմ . Ետքը իմ ձեռքս պիտի վերցընեմ , ու իմ ետիս պիտի տեսնես , բայց իմ ե- րեսս —պիտի չտեսնուի ։

ԳԼՈՒԽ Լ՚Ի

1 Մովսէս երկու ՝քար տախտակներ կը կոփէ ։ Տէրը իր անունը կը հրատարակէ ։ 8 Մովսէս կ՚աղաչէ որ Աստուած իրենց հետը երթայ ։ 10 Աստուած աս ուղայները կ՚ընդունի , և ուխտ կ՚ընէ անոնց հետ՝ քանի մը պատուի- րանքները նորէն յիշելով ։ 28 Մովսէս քառա- սուն օր լեռը մնալէն ետև՝ տնկից կ՚իջնէ նոր տախտակները իր հետը բերելով ։ 29 և իր ե- րեսը լուսափայլ ըլլալուն համար՝ քողով մը կը ծածկէ ։

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Քեզի —երկու քարէ տախտակներ կո- փէ առջիններուն պէս . Ես ան տախտակներուն վրայ պիտի գրեմ առջի տախտակներուն վրայի խօս- քերը՝ որ անոնք դուն կոտրտեցիր ։ 2 Եւ առտուան համար պատրաստ եղիր , ու առտուանդ Սինայ լեռը ելլիր , և հոն †լեռանը գլուխը առ- 3 ջևս կայնէ ։ Ու մկը †պիտի չելլէ քեզի հետ , և մկը պիտի չտես- նուի բոլոր լեռանը վրայ , ոչ ալ ատ լեռանը ատրոտը ոչխար կամ արջառ պիտի արածուի ։

4 Եւ առջիններուն պէս երկու քա- րէ տախտակներ կոփեց . ու Մովսէս

Ն · ք · ՂՓ · 1491

¶ Գլ · ժգ · 21 ։ խ · 34— 38 ։ Ես · կդ · 9 ։
Ը ԲՕր · գ · 20 ։ Ցես · իա · 44 ։ իբ · 4 ։ իգ · 1 ։ Սաղ · ղե · 11 ։
—Հմր 3 ։ Գլ · լգ · 9 ։
*Թուա · ժգ · 14 ։
Վ Գլ · լգ · 10 ։ Բ Թագ · է · 23 ։ գ Թագ · բ · 53 ։ Սաղ · ճխէ · 20 ։
ՈՆ · ժթ · 21 ։ Ցակ · ե · 16 ։
Բ Հմր 12 ։
ց Հմր 20 ։ ա Տիմ · զ · 16 ։
—Գլ · լգ · 5, 6 ։ Երեմ · լա · 14 ։
‡ Հռով · թ · 15, 16, 18 ։
* Տես ՈՆ · լբ · 30 ։ Բ Օր · ե · 24 ։ Դատ · ղ · 22 ։ ժգ · 22 ։ Ես · ղ · 5 ։ Ցայտ · ա · 16, 17 ։ Գլ · իգ · 10 ։
°Ես · բ · 21 ։
§ Սաղ · ղա · 1, 4 ։
—Հմր 20 ։ Ցօհ · ա · 18 ։

¶ Գլ · ժգ · 21 ։ խ · 34— 38 ։ Ես · կդ · 9 ։
Ը բ Օր · գ · 20 ։ Ցես · իա · 44 ։ իբ · 4 ։ իգ · 1 ։ Սաղ · ղե · 11 ։
—Հմր 3 ։ Գլ · լգ · 9 ։
*Թուա · ժգ · 14 ։
Վ Գլ · լգ · 10 ։ Բ Օր · գ · 7 ։ 34 ։ Բ Թագ · է · 23 ։ գ Թագ · բ · 53 ։ Սաղ · ճխէ · 20 ։
ՈՆ · ժթ · 21 ։ Ցակ · ե · 16 ։
Բ Հմր 12 ։
ց Հմր 20 ։ ա Տիմ · զ · 16 ։
—Գլ · լգ · 5, 6 ։ Երեմ · լա · 14 ։
‡ Հռով · թ · 15, 16, 18 ։
* Տես ՈՆ · լբ · 30 ։ Բ Օր · ե · 24 ։ Դատ · ղ · 22 ։ ժգ · 22 ։ Ես · ղ · 5 ։ Ցայտ · ա · 16, 17 ։ Գլ · իգ · 10 ։
°Ես · բ · 21 ։
§ Սաղ · ղա · 1, 4 ։
—Հմր 20 ։ Ցօհ · ա · 18 ։

—Գլ · լբ · 16, 19 ։ Բ Օր · ժ · 1 ։
Բ Հմր 28 ։ Բ Օր · ժ · 2, 4 ։
‡ Գլ · ժթ · 20 ։ իդ · 12 ։
16 Եւ թէ որ ։մարդու մը զուգաւորութեան սերմը իրմէն ելլելու ըլլայ , իր բոլոր մարմինը ջրով պիտի լուայ , ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ ։ Եւ երբոր մարդ մը կնկան հետ զուգաւորելու համար պառկի , անոնք ։ջրով պիտի լուացուին , ու ։մինչև իրիկուն անմաքուր ըլլան ։
19 Եւ ։թէ որ կնիկ մը ծորում ունենայ՝ ու անոր մարմնոյն ծորումը արիւն է , եօթը օր զատուած պիտի կենայ . և ամէն անոր դպչողը մինչև իրիկուն անմաքուր ըլլայ ։
20 Եւ անոր զատուած ատենը ինչ բանի վրայ որ պառկի , ան բանը անմաքուր պիտի ըլլայ , և ինչ բանի վրայ որ նստի , ան բանը անմաքուր
21 ըլայ ։ Եւ ամէն ան։նոր անկողինին դպչողը՝ իր հանդերձները պիտի լուայ , ու ինքը ջրով լուացուի , և մինչև իրիկուն
22 անմաքուր ըլլայ ։ Եւ ով որ դպչի բանի մը՝ որուն վրայ անիկայ նստաւ , իր հանդերձները պիտի լուայ , ու ինքը ջրով լուացուի , և
23 մինչև իրիկուն ամաքուր ըլլայ ։ Եւ ան։նոր անկողինին դպչողը՝ կամ մէկ բանի մը՝ որուն վրայ անիկայ կը նստի , մինչև իրիկուն անմաքուր
24 պիտի ըլլայ ։ Եւ ։թէ որ մարդ մը անոր հետ պառկի , անկնկ որ անոր պղծութիւնը իրեն դպչի , ան ։եօթը օր անմաքուր պիտի ըլլայ , և ամէն անկողին որուն վրայ անիկայ պառկի՝ անմաքուր ըլլայ ։
25 Եւ ։կնիկ մը՝ ։թէ որ դաշտանին ատենը չեկած , իր արիւնին ծորու։

մը շատ օրեր վազէ կամ իր դաշտանէն աւելի վազելու ըլլայ , իր անմաքրութեանը ծորումին բոլոր օրերը՝ իր դաշտանին օրերուն պէս պիտի ըլլայ . անիկայ անմաքուր է ։
26 Անոր ծորումին բոլոր օրերը՝ ամէն անկողին որուն վրայ անիկայ կը պառկի , իր դաշտանին անկողինին պէս պիտի ըլլայ իրեն . և ինչ բանի վրայ որ կը նստի , իր դաշտանին անմաքրութեանը պէս անմաքուր
27 պիտի ըլլայ ։ Եւ ամէն անոնց դպչողը անմաքուր պիտի ըլլայ , ու իր հանդերձները պիտի լուայ , և ինքը ջրով լուացուի , ու մինչև
28 իրիկուն անմաքուր ըլլայ ։ Եւ ։թէ որ իր ծորումէն մաքրուի , ան ատենը եօթը օր պիտի համրէ իրեն ,
29 ու անկէ ետև մաքուր ըլլայ ։ Եւ ու։թերորդ օրը՝ երկու տատրակ կամ աղաւնիի երկու ձագ պիտի առնէ իրեն , ու ժողովքի խորանին դուռը քահանային պիտի բերէ անոնք ։
30 Եւ քահանան՝ մէկը մեղքի պատարագ՝ ու մէկալը ողջակէզ պիտի ընէ . և քահանան Տէրոջը առջևը քաւութիւն պիտի ընէ անոր՝ իր անմաքրութեանը ծորումին համար ։
31 Այսպէս ։Իսրայէլի որդիքը իրենց անմաքրութենէն պիտի *զգուշացընէք , որ իրենց մէջը եղած իմ խորանս պղծելով՝ իրենց անմաքրութեանը պատճառով չը։
32 մեռնին ։ Ծորում ունեցողին՝ և իրմէ զուգաւորութեան սերմը
33 ելլելով անմաքուր եղողին , ։ Ու։ Ինչպէս անմաքուր եղողին , ։ Ու։ իր դաշտանովը հիւանդ եղող կնկանը՝ և ծորում ունեցող մարդուն ։կամ՝ կնկանը՝ ։ ու անմաքուր կնկան հետ պառկողը՝ մարդուն օրէնքը աս է ։

ԳԼ· ԺԶ

1 ՔՀանայապետաց ի՛նչպէս պիտի մտնեն սրբութեան մէջ ։ 11 Իրեն համար մատուցանելու մեղքի պատարագը ։ 15 Ժողովուրդին համար մատուցանելու մեղքի պատարագը ։ 20 Ազատ արձակուելու նոխազը ։ 29 Տարեկան քաւութեան օրը ։

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին , ։Ահարոնին երկու որդւոցը մեռնելէն ետքը , որոնք Տէրոջը առջևը օրաւ իրա մատուցին ու մեռան ,
2 ։ան Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . խօսէ ։քու եղբօրդ Ահարոնին որ ։ամէն ատեն սուրբը տեղը՝ վարագուրին ներսի կողմը՝ տապանակին վրայ եղած քաւութիւնին առջևը չմտնէ , որ չմեռնի . ։ինչու որ ։ամպի մէջ պիտի երևնամ ։քաւութիւնը
3 նէն վրայ ։ Ահարոնը աս ։առէ՝ ։պիտի մտնէ սրբարանը . ։մեղքի պատարագի համար զուարակով

ՂԵՂ · ԺԶ · 1 · ՂԵՒ · ԺԶ · 1 · ՂԵՒ · ԺԶ · 1 · ՂԵՒ

Ն·Ք·ԶՒ· 1490

մը , և ողջակէզի համար խոյով մը ։
4 Ղևտաւ սուրբ շապիկ պիտի հագնի , և իր մարմնոյն վրայէն կտաւէ վարտիք ունենայ , ու իր մէջքը կտաւէ գօտի կապէ , և իր գլուխը կտաւէ խոյր դնէ ·ասոնք սուրբ զգեստներն են · ուստի է իր մարմինը ջրով պիտի լուայ , ու զանոնք
5 հագնի ։ Եւ Իսրայէլի որդւոցը ժողովքէն մեղքի պատարագի համար այծերէն եղիսաւ՝ ու ողջակէզի համար՝ մէկ խոյ մը պիտի
6 առնէ ։ Եւ Ահարոն իր մեղքի պատարագին զուարակը պիտի մատուցանէ , և իրեն համար ու իր տանը համար քաւութիւն պիտի
7 ընէ ։ Եւ երկու նոխազը պիտի առնէ , ու Տէրոջը առջևը ժողովքի
8 խորանին դուռը կեցընէ ։ Եւ Ահարոն ան երկու նոխազներուն վրայ վիճակներ պիտի ձգէ · մէկ վիճակը Տէրոջը համար՝ ու մէկալ վիճակը ազատ արձակուելու նոխազին հա-
9 մար ։ Եւ Ահարոն պիտի մօտեցընէ ան նոխազը՝ որուն վրայ Տէրոջը վիճակը ելլաւ , ու մեղքի պա-
10 տարագ ընէ զանիկայ ։ Եւ ան նոխազը՝ որուն վրայ ազատ արձակուելու վիճակը ելաւ , Տէրոջը առջևը ողջ պիտի կայնեցընէ՝ ձոր ա-նով քաւութիւն ընէ , ու ազատ արձակելու համար դեպ ի անապատը խրկէ ։
11 Եւ Ահարոն իր մեղքի պատարագին զուարակը պիտի մատուցանէ , և իրեն համար ու իր տանը համար քաւութիւն պիտի ընէ , և իր մեղքի պատարագին զուարակը մոր-
12 թէ ։ Եւ Տէրոջը առջևը եղած սեղանին վրայէն էբուրվառը լեցուն կրակի կայծեր պիտի առնէ , ու նրբարակ ծեծուած անուշահոտ խունկէն իր ձեռքերը լեցընէ , ու
13 վարագուրին ներսի դին բերէ ։ Եւ խունկը կրակին վրայ պիտի դնէ Տէրոջը առջևը , ու խունկին *մուխը վկայութիւնին վրայի ձքաւութիւնը պիտի ծածկէ , որ չմեռնի ։
14 Եւ նուարակին արիւնէն պիտի առնէ ու ՙ իր մատովը քաւութիւնին վրայ արևելեան կողմը սրսկէ , և իր մատովը արիւնէն քաւութիւնին առջևը եօթը անգամ սրսկէ ։
15 Եւ ժողովուրդին համար մեղքի պատարագ ըլլալու նոխազը պիտի մորթէ , ու անոր արիւնը վարագուրին ներսի դին պիտի բերէ · և զուարակին արիւնովը ըրածին պէս ընէ անոր արիւնովը , այսինքն՝ քաւութիւնին վրայ ու քաւութիւնին
16 առջևը սրսկէ ան ։ Եւ ՙ սրբարանին համար քաւութիւն պիտի ընէ՝ Իսրայէլի որդւոցը անմաքրութիւննե-

րէն ու անոնց բոլոր մեղքերուն համար . և խորհրդանոցին համար նոյնպէս ըրէ ան՝ որ անոնց հետ ՚՚ անոնց անմաքրութիւններուն մէջ
17 կը կենայ ։ Եւ սրբարանը քաւութիւն ընելու մտած ատենը՝ մինչև որ իրեն համար ու իր տանը համար և Իսրայէլի բոլոր ժողովքին համար քաւութիւն ընէ ու դուրս ելլէ , ՙ ժողովքի խորանին մէջ մարդ
18 մը պիտի չըլլայ ։ Եւ որ Տէրոջը առջևը եղած սեղանը պիտի երթայ , ու ՙ անոր համար քաւութիւն ընէ · և զուարակին արիւնէն ու նոխազին արիւնէն առնէ , և սեղանին եղջիւրներուն վրայ շուրջանակի
19 դնէ ։ Եւ արիւնէն իր մատովը եօթը անգամ անոր վրայ պիտի սրսկէ . ու Իսրայէլի որդւոցը անմաքրութիւններէն մաքրէ , ու նուրբ ընէ ան ։
20 Եւ սրբարանին՝ ու ժողովքի խորանին՝ և սեղանին համար քաւութիւն ընելը լմընցընելէն ետքը ,
21 ողջ նոխազը պիտի մօտեցընէ · Եւ Ահարոն իր երկու ձեռքերը ողջ նոխազին գլխուն վրայ պիտի դնէ , ու Իսրայէլի որդւոցը բոլոր անօրէնութիւնները և անոնց բոլոր յանցանքները և բոլոր մեղքերը պիտի խոստովանի անոր վրայ . և ՚զանոնք նոխազին գլխուն վրայ դնելով՝ յարմար մարդու մը ձեռքով
22 անապատը խրկէ ։ Եւ նոխազը նանոնց բոլոր անօրէնութիւնները իր վրան ՚՚՚՝ անբնակ երկիր մը պիտի տանի . և ՚՚՚ անապատին մէջ թող տայ նոխազը ։
23 Եւ Ահարոն ժողովքի խորանը պիտի մտնէ , ու ՚ ու սրբարանը մտնելու ժամանակին հագած կտաւէ հանդերձները հանէ , և զանոնք հոն
24 կը դնէ ։ Եւ սուրբ տեղը իր մարմինը ջրով պիտի լուայ , ու իր հանդերձները հագնի . և և ելլէ իր ողջակէզը ու ժողովուրդին ողջակէզը մատուցանէ , ու իրեն համար և ժողովուրդին համար քաւութիւն ընէ ։
25 Եւ ՚՚ մեղքի պատարագին ճարպը սեղանին վրայ պիտի այրէ ։
26 Եւ նոխազը ազատ արձակելու տանողը՝ իր հանդերձները պիտի լուայ . ՚ ու իր մարմինը ջրով լուայ , և ետքը բանակը մտնէ ։
27 Եւ ան մեղքի պատարագին զուարակը ու մեղքի պատարագին նոխազը՝ որոնց արիւնը քաւութիւն ընելու համար սուրբ տեղը բերուեցաւ , բանակէն դուրս պիտի հանեն , և անոնց մորթերը ու անոնց միսերը և անոնց աղբը կրա-
28 կով այրեն ։ Եւ զանոնք այրողը

Ն·Ք·ԶՒ· 1490

Ղեւ· իբ· 39, 42, 43։ ԳԼ·Չ· 10։ Եզեկ·խդ· 17, 18։
Ե Ղեւ·Լ·20։ ԳԼ·Ը· 7։
Ը Տես գԼ·դ· 14։ Թուս· իթ·11։ ԲՄն·իթ· 21։ Եզր· չ·17։ Եզեկ·խն· 22, 23։
Ի ԳԼ·թ·7։ Երբ·ե·2։ է·27, 28։ թ·7։
Ժ ա Ցօղ·բ· 2։
Ի ԳԼ·ժ·1։ Թուս·ժչ· 18, 46։ Ցայտ·ը· 5։
ԼԵԼ·Լ·34։
Ի Ղեւ·Լ·1, 7։ Տ։ Թուս· ժչ·7, 18։ 46։ Ցայտ· ը·3, 4։
*ՂԲբ· ամպը
Ե Ղեւ·իե·21։
Ի ԳԼ·դ·5։ Երբ·թ· 13, 25։ ժ·4՝
Զ ԳԼ·դ·6։
Է Երբ·բ·17։ ե·2։ թ· 7, 28։
Ը Հմր 2։ Երբ· չ·19։ թ· 3, 7, 12։
Թ Տես Ղեւ· իթ·36։ Եզեկ·խե· 18։ Երբ· թ·22·23։

Ն · Ք · Գ · Ե · 1490

իր հանդերձները պիտի լուայ , ու մարմինը ջրով լուայ , ու եղբը բանակը մնէ ։

29 Եւ ասա ձեզի յաւիտենական կանոն ըլլայ , որ ի հօթներորդ ամսուն մէջ՝ ամսուն տասներորդ օրը ձեր անձերը պիտի խոնարհեցընէք , ու բնաւ գործ մը չգործէք , թէ երկրացին՝ և թէ ձեր մէջը դտնուղ

30 օտարականը ։ Քանզի ան օրը ի՚ձեզ հանդի՚ձ ձեզի քաւութիւն պիտի ընէ ձեզ մաքրելու համար , որ ձեր բոլոր մեղքերէն մաքրուիք Տէրոջը

31 առջևը ։ Շաբաթ հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ , և յաւիտենական կանոնով մը պիտի

32 խոնարհեցընէք ձեր անձերը ։ Եւ իր հօրը տեղը քահանայութիւն ընդունելու համար ի՚օծուած ու ի՚օրհնուած քահանան քաւութիւնը պիտի ընէ , և ի՚հադնի կտաւէ հանդերձները՝ սուրբ հանդերձները ։

33 Եւ ամենասուրբ տեղին համար քաւութիւն պիտի ընէ , և ժողովքի խորանին համար ու սեղանին համար քաւութիւն ընէ , և քահանաներուն ու ժողովքին բոլոր ժողովուրդին համար քաւութիւն

34 ընէ ։ Եւ ասիկայ ձեզի յաւիտենական կանոն ըլլայ՝ Իսրայէլի որդւոցը համար իրենց բոլոր մեղքերուն քաւութիւն ընելու ի՚տարին անգամ մը ։ Եւ անիկայ՝ Տէրոջը Մովսէսին պատուիրածին պէս ըրաւ

Գ Լ · Ժ Է

1 Ամէն մարթեւած անասուններուն արիւնը Տէրոջը պիտի մատուցուէր խորանին դրանը քով ։ 7 Դեւերուն զոհ ընելը կ՚արգիլուի ։ 10 Ամէն արիւնոտ բանը , 15 ու մեռածը և գազանէ փառատուածը ուտելը կ՚արգիլուի ։

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . Խօսէ Ահարոնին ու անոր որդւոցը՝ և Իսրայէլի բոլոր որդւոցը , ու ըսէ անոնց . Ա՚ս է որ
3 Տէրը պատուիրեց՝ ըսելով . Իսրայէլի տունէն ով որ ի՚արջառ մը կամ ոչխար մը և կամ այծ մը բանակին մէջ մորթէ , կամ բանակին
4 դուրս մորթէ , ի՚ Եւ Տէրոջը խորանին առջևը Տէրոջը զոհ մատուցանելու համար՝ ժողովքի խորանին դուռը չբերէ , արիւնոտ պիտի սեպուի այն մարդը . անիկայ արիւն թափած է . ու այն մարդը ի՚ր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի ։
5 Որպէս զի Իսրայէլի որդիքը ան զոհերը ի՚որ հիմա դաշտի մէջ կը մորթեն , Տէրոջը բերեն , այսինքն՝ ժողովքի խորանին դուռը քահանային բերեն , և խաղաղաթեան զոհերու համար զանոնք
6 Տէրոջը մատուցանեն ։ Եւ քահանան իսպիտի սրսկէ արիւնը ժողովքի խորանին դուռը՝ Տէրոջը սեղանին վրայ , ու ճարպը անուշ հոտի
7 համար այրէ Տէրոջը առջևը ։ Եւ իրենց զոհերը այ պիտի չմորթեն ի՚դեւերուն՝ որոնց ետևէն էրթ՚ալով պոռնկութիւն ըրին ։ Ասիկայ անոնց յաւիտենական կանոն պիտի
8 ըլլայ իրենց ազգերուն մէջ ։ Եւ պիտի ըսես անոնց . Իսրայէլի տունէն կամ ձեր մէջը պանդխտացած օտարականներէն մէկ մարդ մը ողջակէզ կամ զոհ մատուցանելու
9 ըլլայ , եւ զանիկայ ի՚Տէրոջը մատուցանելու համար ժողովքի խորանին դուռը չբերէ , ան մարդը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի ։
10 Եւ Իսրայէլի տունէն կամ ձեր մէջը պանդխտացած օտարականներէն մէկ մարդ մը ինչ և իցէ արիւն ուտելու ըլլայ , Իմ երեսս ան արիւն ուտող անձին վրայ պիտի տնկեմ , ու զանիկայ իր ժողովուրդէն
11 դին մէջէն կորսընցընեմ . Ի՚նչու որ մարմինին կենդանութիւնը արիւնին մէջն է . և ես ձեզի տուի ան , որ սեղանին վրայ ի՚ձեր հոգիներուն համար քաւութիւն ընէք . քանզի հոգիին համար քաւութիւն
12 ընողը արիւնն է ։ Անոր համար Իսրայէլի որդւոցը ըսի . Ձեզմէ մէկը արիւն պիտի չուտէ . ձեր մէջը պանդխտացած օտարականն ալ ա-
13 րիւն չուտէ ։ Եւ Իսրայէլի որդւոցմէ՝ կամ ձեր մէջը պանդխտացած օտարականէն մէկը՝ հուտուելու վայրենի անասունի կամ թռչունի որս որսալու ըլլայ , ի՚անոր արիւնը պիտի թափէ , ու ի՚հողով ծածկէ
14 ան ։ Ի՚նչու որ ամէն մարմինին կենդանութիւնը՝ իր արիւնն է . անիկայ է բուն կենդանութիւնը . ուստի Իսրայէլի որդւոցը ըսի . Բնաւ մարմինի մը արիւնը պիտի չուտէք . քանզի ամէն մարմինին կենդանութիւնը՝ իր արիւնն է . ով որ ուտէ ան՝ պիտի կորսուի ։
15 Եւ երկրացիներէն կամ օտարականներէն՝ ով կամ փառատուած ուտող ամէն մարդ՝ ի՚իր լթերը պիտի լուայ , ու ինքը ջրով լուացուի , և մինչև իրիկուն անմաքուր
16 ըլլայ , ու ի՚թէ՚ մաքուր ըլլայ . Բայց թէ որ չլուայ և ան՚ձնէ՚ , և իր մարմինը չլուայ , ան ատենը ի՚իր անօրէնութիւնը պիտի կրէ ։

Գ Լ · Ժ Ը

1 Ապօրինաւոր ամուսնութիւններուն համար ։ 19 Ապօրինաւոր ցանկութիւններուն համար ։

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . Խօսէ Իսրայէլի

Ն · Ք · Գ · Ը · 1490

Է Գէ · դ · 2 ։
Ղեւ · իթ · 18 ։ Գէ · գ · 5 ։ 11 ։ 16 ։ դ · 31 ։ Թուա · ժք · 17 ։
Բ Օր · լբ · 17 ։ բՍՆ · ժա · 15 ։ Սաղ · ճզ · 37 ։ ա Կոր · ժ · 20 ։ Յայտ · ի Թ · 20 ։
Ը Ել · լդ · 15 ։ Գէ · ի · 5 ։ բ Օր · լա · 16 ։ Եզեկ · իգ · տ ։
Ի Գէ · ա · 2 , 3 ։
Ա Հմր 4 ։
Ի Ծն · Թ · 4 ։ Գէ · գ · 17 ։ կ · 26 , 27 ։ ժթ · 26 ։ բ Օր · ժբ · 16 , 23 ։ ժե , 23 ։ ա Թագ · ժգ · 33 ։ Եզեկ · իգ · 7 ։
Լ Գէ · ի · 3 , 5 , 6 ։ իզ · 17 ։ Երեմ · իդ · 11 ։ Եզեկ · ժգ · 8 ։ ժե · 7 ։
Ի Հմր 14 ։
Ի Մատ · իդ · 28 ։ Մարբ · ժգ · 24 ։ Հառագ · գ · 25 ։ ե · 9 ։ Եփես · ա · 7 ։ Կող · ա · 14 , 20 ։ Երբ · ժգ · 12 ։ ա Պետ · ա · 2 ։ ա Յով · ա · 7 ։ Յայտ · ա · 5 ։
Կ Երբ · Թ · 22 ։
Հ Գէ · է · 26 ։ Ի Բ Օր · ժբ · 16 , 24 ։ ժե · 23 ։
Ղեղկ · իգ · 7 ։
Հմր 11 , 12 ։ Ծն · Թ · 4 ։ Բ Օր · ժբ · 23 ։
Մ Եզ · իբ · 31 ։ Գէ · իբ · տ ։ Բ Օր · ժգ · 21 ։ Եզեկ · գ · 14 ։ խգ · 31 ։
Ա Գէ · ժա · 25 ։
Ն Գէ · ժե · 5 ։
Ղ Գէ · ե · 1 ։ է · 18 ։ ժթ · տ ։ Թուա · ժթ · 20 ։

Ն. ք. ԶՁ. 1490

ՅԳԼ. ի. 10։ ԵԼ. ի. 14։ ք Օր. ե. 18։ իբ. 22։ Ա-ռակ. զ. 29, 32։ Մաղ. գ. 5։ Մաս. ե. 27։ Հբ-ռով. բ. 22։ ա Կոր. գ. 9։ Եբր. ժգ. 4։

Ղ Թագ. ժա. 7, 33։ Գոր. է. 43։

ՅԳԼ. ի. 2։ Դ Թագ. ժգ. 3։ իա. 6։ իբ. 10։ Եբեմ. ժԸ. 5։ Եզեկ. ի. 31։ իգ. 37, 39։

ՆԳԼ. ԺԹ. 12։ ի. 3։ իա. 6։ իբ. 2, 32։ Եզեկ. լԶ. 20, ԼԵ։ Մաղ. ա. 12։

ՅԳԼ. ի. 13։ Հռով. ա. 27։ ա Կոր. զ. 9, 10։ ա Տիմ. ա. 10։

ՆԳԼ. ի. 15։ 16։ ԵԼ. իբ. 19։

ՂԳԼ. ի. 12։ Ա ՀՄր 30։ Մաա. ԺԵ. 18, 19, 20։ Մարբ. է. 21, 22, 28։ ա Կոր. գ. 17։

ՂԳԼ. ի. 23։ ք Օր. ԺԸ. 12։

Ղ Թես. լԵ. 34։ Երեմ. ք. 7։ ԺԶ. 18։ Եզեկ. լԶ. 17։

ՂՍաղ. ձԲ. 82։ Եա. իգ. 21։ Երեմ. թ. 9, 29։ Թ. 9։ ԺԶ. 10։ իգ. 2։ Ովս. ր. 13։ ը. 13։ Թ. 9։ Ա ՀՄր 28։

Ա ՀՄր 5, 30։ Գլ. ի. 22, 23։

ՂԳԼ. ի. 22։ Երեմ. Թ. 19։ Եզեկ. լԶ. 13, 17։

Ա ՀՄր 3, 26։ Գլ. ի. 23։ ք Օր. ԺԸ. 9։

Ր ՀՄր 24։

Ց ՀՄր 2, 4։

Ֆ ԵԼ. ի. 12։

Ն. ք. ՁՓ. 1490

Ա ՀՄր 4։ ԵԼ. զ. 7։ ԳԼ. ԺԱ. 44։ ԺԹ. 4։ 10, 34։ ի. 7։ Եզեկ. ի. 5, 7, 19, 20։

Բ Եզեկ. ի. 7, Տ։ իգ. Տ։

Դ ԵԼ. իգ. 24։ ԳԼ. ի. 23։ ք Օր. ԺԸ. 4, 30, 31։

Զ ք Օր. գ. 1, 2։ զ. 1։ Եզեկ. ի. 19։

Է Եզեկ. ի. 11, 13, 21։ Ղռ. ԺԸ. 23։ Հռով. ԺԸ. 5։ Գաղ. գ. 12։

ՂԵԼ. զ. 2, 6, 29։ Մաղ. զ. 6։

Ը ԳԼ. ի. 11։

Ը Ծն. խԹ. 4։ ԳԼ. ի. 11։ ք Օր. իբ. 30։ իե. 20։ Եզեկ. իբ. 10։ Ամո. ք. 7։ Հգ. ե. 1։

Ի ԳԼ. ի. 17։ ք Թագ. ԺԳ. 12։ Եզեկ. իբ. 11։

ԺԳԼ. ի. 19։

Լ ԳԼ. ի. 20։

Խ Ծն. լե. 18, 26։ ԳԼ. ի. 12։ Եզեկ. իբ. 11։

Ծ ԳԼ. ի. 21։ Մաա. ԺԶ. 4։ Ցճս ք Օր. իե. 5։ Մաս. իբ. 24։ Մարբ. ԺԶ. 19։

Կ ԳԼ. ի. 14։

Հ ՀԳԼ. ի. 18։ Եզեկ. ԺԶ. 6։ իբ. 10։

Ձ Թես. ա. 6, Տ։

Ղ ԳԼ. ի. 18։ Եզեկ. ԺԶ. 6։ իբ. 10։

ջը՝ ու ըսէ անոնց . «Ես եմ Եհո-
3 վայ ձեր Աստուածը ։ Բայն ձեր բնակած Եգիպտոսի երկրին ըրածին պէս՝ պիտի չընէք . և Քանանու երկրին ըրածին պէս՝ ուր որ ձեզ պիտի տանիմ, պիտի չընէք , ու անոնց կանոններուն համեմատ
4 պիտի չքալէք ։ Իմ դատաստաններու պիտի ընէք , և իմ կանոններս պահէք , որ անոնցմով քալէք . ես
5 եմ Տէրը ձեր Աստուածը ։ Ուստի իմ կանոններս ու իմ դատաստաններս պիտի պահէք , Ո՛ր զանոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի . Ես եմ Տէրը ։

6 ՈՉ մօտ ազգականին պիտի չմօտենայ՝ անոր մերկութիւնը բանալու համար . ես եմ Տէրը ։
7 Քոյրդ մերկութիւնը կամ քու մօրդ մերկութիւնը պիտի չբանաս . անիկայ քու մայրդ է . անոր մեր-
8 կութիւնը պիտի չբանաս ։ Քոյրդ հօրդ կնկանը մերկութիւնը պիտի չբանաս . ան քու հօրդ մերկու-
9 թիւնն է ։ Քոյրդ աղջկանը կամ քու մօրդ աղջկանը քու բերրնդ մերկութիւնը՝ թէ տանը մէջ ծնած ըլլայ՝ թէ դուրսը ծնած անոնց մերկութիւնը պիտի չբա-
10 նաս ։ Քու որդւոյդ աղջկանը կամ քու աղջիկդ աղջկանը մերկութիւնը՝ անոնց մերկութիւնը պիտի չբանաս . ինչու որ անոնց մերկու-
11 թիւնը քուկդ է ։ Քու հօրդ կընկանը աղջիկին մերկութիւնը՝ քու հօրմէդ ծնած քու քոյրդ ըլլալովը՝ անոր մերկութիւնը պիտի չբանաս ։
12 Քու հօրդ քրոջը մերկութիւնը պիտի չբանաս . անիկայ քու հօրդ
13 ազգականն է ։ Քու մօրդ քրոջը մերկութիւնը պիտի չբանաս . ինչու որ անիկայ քու մօրդ ազգականն
14 է ։ Քու հօրդ եղբօրը մերկութիւնը պիտի չբանաս անոր կընկանը չմօտենաս . անիկայ քու հօ-
15 րաքոյրդ կը համարուի ։ Քու հարսդ մերկութիւնը պիտի չբանաս . անիկայ քու որդւոյդ կնկինն է . անոր
16 մերկութիւնը չբանաս ։ Քու եղբօրդ կնկանը մերկութիւնը պիտի չբանաս . ան քու եղբօրդ մերկու-
17 թիւնն է ։ Կնկան մը ու անոր աղջկանը մերկութիւնը պիտի չբանաս . և անոր որդւոյն աղջիկը կամ անոր աղջկանը աղջիկը պիտի չառնես՝ անոնց մերկութիւնը բանալու համար . անոնք անոր ազգականներն են . անօրէնութիւն է ան ։
18 Եւ կնիկ մը իր քրոջը հետ պիտի չառնես նայելու իր կենդանութեան ատեն վշտացնելու համար՝ մերկայն մերկութիւնը բանալով ։
19 Ոեւ իր անմաքրութեանը ատենը

զատուած կնկան մը պիտի չմօտենաս՝ անոր մերկութիւնը բանալու ։
20 Եւ դրացիդ կնկանը հետ պիտի չպառկիս , անոր հետ պղծուելով ։
21 Քու սերունդէդ ոՉ մղոքին համար ճլքելի անցընելու պիտի չթողուս , և չդիւ Աստուծոյդ անունը չպղծես . ես եմ Տէրը ։
22 Ոեւ արուի հետ՝ կնկան հետ պառկելու պէս պիտի չպառկիս . պղծութիւն է ան ։
23 Ոեւ բնաւ անասունի մը հետ պիտի չքուգաւորիս , անոր հետ պղծուելով . ու բնաւ կնիկ մը անասունի մը առջեւ պիտի չկայնի՝ անոր հետ զուգաւորելու . Խառնակութիւն է ան ։
24 «Անոնց մէկովն ալ բնաւ չպղծուիք . Ինչու որ բոլոր ասոնցմով պղծուեցան ան ազգերը՝ որ
25 ձեր առջեւէն պիտի վռնտեմ ։ Եւ դան երկիրը պղծուելովը՝ Անոր անօրէնութիւնը անոր վրայ պիտի հատուցանեմ , ու ան երկիրը իր
26 բնակիչները «պիտի փսխէ ։ «Ոեւ դուք իմ կանոններս ու դատաստաններս պիտի պահէք , ու ասոնցմէ ոՉ մէկն ալ պիտի չընէք , ոՉ երկրացին , ոՉ ալ ձեր մէջը պանդխտացող օտարա-
27 կանը . Քանզի ձեզմէ առաջ ան երկրին մարդիկը ասոնք բոլոր պղծութիւնները ըրին , ու ան երկիրը
28 պղծուեցաւ ։ Որ՝ երբ չըլլայ թէ ձեզ ալ դուրս փսխէ՝ ան պղծած ատենդ , ինչպէս որ ձեզմէ առաջ եղած
29 ազգերը փսխեց ։ Քանզի ով որ ասոնցմէ պղծութիւններէն մէկը ընելու ըլլայ , ան ընող անձինքը իրենց ժողովուրդին մէջէն պիտի
30 կորսուին ։ Ուստի իմ հրամաններս պիտի պահէք , «որ ձեզմէ առաջ գործուած պիղծ սովորութիւններէն ձեզ չպղծուիք . ես եմ Տէրը ձեր Աստուածը ։

ԳԼ. ԾԹ

1—37 Զանազան օրէնքներու կրկնութիւն ։

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . Խօսէ Իսրայէլի որդւոյը բոլոր ժողովքին՝ ու ըսէ անոնց . «Դուք սուրբ եղիք . ինչու որ ես ձեր Եհովայ Աստուածը սուրբ եմ ։
3 Ձեր ամէն մէկը իր մօրմէն ու իր հօրմէն պիտի վախնայ . և իմ շաբաթներս պիտի պահէք . ես եմ Տէրը ձեր Աստուածը ։
4 «Կուռքերուն եւևէն մի՛ խոտո-

ա ԳԼ. ժա. 44 ։ ի. Ը. 26 ։ ա Պետ. ա. 16 ։ ք ԵԼ. ի. Տ ։ լա. 13 ։ Գ ԵԼ. ի. 4 ։ ԳԼ. իէ. 1 ։ ա Կոր. ժ. 14 ։ ա Յովհ. ե. 21 ։

Ն · ք · ՁՖ · 1490

րիք , և ձեզի ձուլածոյ աստուածներ մի՛ չինէք . ես եմ Տէրը ձեր Աստուածը ։

5 Եւ ՚ղթէ որ խաղաղութեան զոհ մատուցանէք Տէրոջը , անոնց մատուցանէք զայն որ ընդունելի ըլլայ ։ Զոհը մատուցած օրնիդ՝ և հետեւեալ օրն ալ պիտի ուտուի . ու երրորդ օրուան մնացածը կրակով

7 պիտի այրուի ։ Եւ թէ որ անկէ երրորդ օրը ուտուելու ըլլայ , ան

8 պիղծ է , պիտի չընդունուի ։ Եւ զանիկայ ուտողը իր անօրէնութիւնը պիտի կրէ , ինչու որ Տէրոջը սուրբ բանը պղծեց , ու ան անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի ։

9 Եւ ե՛ւ ձեր երկրին հունձքը ՚ի՛ձելու ատեննիդ՝ քու արտիդ եզերքը լման պիտի չ՚ի՛ձես , ու քու հունձքիդ ինկած հասկերը պիտի չ՚ժողվես ։

10 Եւ քու այգիդ ճռաքաղ պիտի չընես , այսինքն այգիդիդ մէջ մնացած ողկոյզները պիտի չքաղես . զանոնք աղքատին ու օտարականին համար պիտի թողուս . ես եմ Տէրը ձեր Աստուածը ։

11 Ը՚գողութիւն մի՛ ընէք . սուտ մի՛ զրուցէք , ի՛ւ մէկզմէկ մի՛ խաբէք .

12 Եւ ՚ի՛մ անունովս սուտ տեղը երդում մի՛ ընէք . ու ձեր Աստուծոյն անունը մի՛ պղծէք . ես եմ Տէրը ։

13 Ն՚քու դրացիիդ զրկանք մի՛ ըներ , և յափշտակութիւն մի՛ ըներ . Է՚քեզի վարձքով բանողին օրվան վարձքը մէկ գիշեր մինչև առտու քու քովդ չմնայ ։

14 Խուլին մի՛ հայհոյեր , ՚ի՛ու կոյրին առջևը գայթակղութիւն մի՛ դներ , հապա Ն՚քու Աստուածդմէդ վախցիր . ես եմ Տէրը ։

15 Հ՚դատաստանի մէջ անիրաւութիւն մի՛ ընէք . աղքատին աչառութիւն մի՛ ըներ , և մեծը մի՛ շողոքորթեր . քու դրացիդ արդարութիւնով դատէ ։

16 Ն՚քու ժողովուրդիդ մէջը չպարսիսուիս . քու ընկերիդ արիւնը մնունելու պատճառ

17 չըլլա՛ս . ես եմ Տէրը ։ Ո՚եղբայրդ քու սրտիդ մէջը պիտի չատես . Ո՚րու դրացիդ անպատճառ պիտի յանդիմանես , ո՛չ ան ոոր համար

18 մեղք չկրես ։ Ո՚վրէժ պիտի չառնուս , և քու ժողովուրդիդ որդւոցը ոխ պիտի չպահես , Ո՚սպա քու ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես . ես եմ Տէրը ։

19 ՚Իմ կանոններս պիտի պահէք . քու անասունիդ մէկ տեսակը ուրիշ տեսակին հետ զուգաւորել պիտի չտաս . ՚քու արտիդ մէջ զանազան սերմ պիտի չցանես . և երկու նիւթէ դործուած այլայլախառն հանդերձ պիտի չհագնիս ։

20 Եւ թէ որ մէկը կնան մը հետ պառկելով՝ զուգաւորութիւն ընէ , ու անիկայ մկրտուած մը ծախու առած աղախինն է՝ ու փրկուած չէ , ո՛չ ալ անոր ազատութիւն տրուած , անոնք պիտի պատժուին . անոնք պիտի չմեռնին , ինչու որ ան ՚ի՛ւր

21 ազատ չէր ։ Եւ Ղ՚ՀՐԵ իր յանցանքին պատարագը Տէրոջը պիտի բերէ ժողովքի խորանին դուռը , խոյ մը յանցանքի պատարագի հա-

22 մար ։ Եւ քահանան յանցանքի պատարագին խոյովը Տէրոջը առջևը քաւութիւն պիտի ընէ անոր՝ իր ըրած մեղքին համար . և անոր ըրած մեղքը պիտի ներուի իրեն ։

23 Ու երբոր ան երկիրը մտնէք , ու ամէն տեսակ ծառեր տնկէք՝ պտուղ ուտելու համար , ան ատենը անոր պտուղը չ՚ըլլա՛տուածքի պէս անմաքուր պիտի սեպէք . ան ձեզի քրեք տարի չ՚ըլլա՛տուածքի պէս սե-

24 պուելով՝ պիտի չուտուի ։ Եւ՚ երրորդ տարին՝ անոր բոլոր պտուղը Է՚տերը փառաւորելու համար՝ սուրբ

25 պիտի ըլլայ ։ Եւ հինգերորդ տարին՝ անոր պտուղը պիտի ուտէք , որ իր արդիւնքը ձեզի համար աւելցընէ . ես եմ Տէրը ձեր Աստուա-

26 ծը ։ Մ՚Ի՛ՉԸ ՚արիւնովը պիտի չուտէք . ՚պիտի չ՚մայիք , և գուշա-

27 կութիւն պիտի չընէք ։ Է՚ձեր գըլխերուն եզերքի մազերը պիտի չկտրէք , ու քու մօրուքիդ եզերքը

28 պիտի չաւրես ։ Եւ մկրտ մը ՚ՈՒՆ համար ՚ձեր մարմինին վրայ կտրածներ պիտի չընէք , ու ձեր վրան դրոշի նշան չընէք . ես եմ Տէրը ։

29 Ը՚նդկդկդ պոռնիկ ընելով՝ մի՛ պղծեր , որ երկիրը պոռնկութեան մէջ չ՚ինյայ , ու երկիրը չարութիւնով չլեցուի ։

30 ՚Իմ շաբաթներս պիտի պահէք , ու ՚իմ սրբարանէս վախնաք . ես

31 եմ Տէրը ։ Ի՚վ հուներուն մի՛՚ հետեւիք , և հմայողներուն քով մի՛ հարցընէք , որ անոնցմով չպղծուիք . ես եմ Տէրը ձեր Աստուածը ։

32 ՚Մազը ճերմակածին առջևը ոտք ելլիր , և ծերը պատուէ , ու ՚քու Աստուածդմէդ վախցիր . ես եմ Տէրը ։

33 Եւ ե՛թէ որ օտարական մը ձեր երկրին մէջ ձեր քովը պանդխտանալու ըլլայ , չնեղէք զանիկայ ։

Ն · ք · ՁՖ · 1490

ՈՐ Օր · ԻԲ · 9 , 10 ։

Ը Բ Օր · ԻԲ · 11 ։

Ղ Գլ. Ե · 15 ։ Ջ · 6 ։

Ը Բ Օր · ժԲ · 17 , 18 ։ Ա-ռակ · գ · 9 ։

Ա Գլ. ժԵ · 10 , ԼԱ ։ Բ Օր · ժԲ · 23 ։

ՈՐ Օր · ժԲ · 10 , 11 , 14 ։ ա Թագ . ժԵ · 23 ։ գ Թագ . ժԵ · 17 ։ իա · 6 ։ Բ Մն · ԼԲ · 6 ։ Մաղ · գ · 5 ։

Է Գլ. իա · 5 ։ Երեմ . ՃԲ · 26 ։ Խը · 37 ։ Ես . ժԵ . 2 ։

Ա Գլ. իա · 5 ։ Բ Օր · ժԲ · 1 ։ Երեմ . ժԷ · 6 ։ Խը · 37 ։

Ը Բ Օր · իԲ · 17 ։

Յ ՀՈՒՐ 3 ։ Գլ. իԷ . 2 ։ ա Ձաղ . ե · 1 ։

Ֆ Եզ . ԻԲ · 18 ։ Գլ. ի · 6 ։ 27 ։ Բ Օր · ժԲ · 10 ։ աԹագ . իԲ · 7 ։ ա Մն . ժ · 13 ։ Ես . Ը · 19 ։ Գոր . ժԷ . 16 ։

Ա Ռակ . ի · 29 ։ աՅհ . ե · 1 ։

Ը ՀՈՒՐ 14 ։

Ֆ Եզ . ԻԲ · 21 ։ իդ · 9 ։

Ն·ք·գՖ· 1490

34 — Ձեր քովը պանդխտացող օտարականը՝ ձեր երկրին բնակին պես ըլլայ ձեզի, և Ք քու անձիդ պես պիտի սիրես անիկայ. ինչու որ դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ օտարական էիք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

35 Դատաստանի մէջ անիրաւութիւն պիտի չընէք. կանոնի մէջ կշռքի մէջ ու չափի մէջ ալ։

36 Ձեր կշռքները լման՝ ձեր կշռոյթ քարերը լման՝ ձեր արդուն լման ունենալու համար։ Ես եմ Տէրը ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի։

37 Ուստի պահեցէք իմ բոլոր կանոններս ու իմ բոլոր դատաստաններս ու պիտի կատարէք զանոնք. ես եմ Տէրը։

ԳԼ·Ի

1 Մովսէսին զրուցք նուիրելը կարգելուն։ 4 Ինչ որ զրուցուելը տեսնելով զանց ընողներուն պատիժը։ 6 Վկայներու հաւատացնելուն համար։ 7 Սուրբ ըլլալու պատուէրը։ 9 Իր ծնողքը հայհոյողին։ 10 Լուծումին ընողներուն։ 11, 14, 17, 19 ազգապղծին, 13 արուագործին, 15 և անասունի հետ պղծումին ընողին պատիժը։ 22 Պատուիրանները հաւասարապէս պահելու վրայով։ 27 Վհուկները չապրեցնելու պատուէրը։

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով. Պահ — Իսրայէլի որդւոց պիտի ըսես. Իսրայէլի որդւոցմէն և Իսրայէլի մէջ պանդխտացող օտարականներէն ով որ իր սերունդէն Մողոքին տայ, անշուշտ պիտի մեռցուի. ան երկրին ժողովուրդը քարերով պիտի քարկոծեն անի-
3 կայ։ Ես դէմ իմ երեսս ան մարդուն վրայ պիտի տնկեմ, ու զանիկայ իր ժողովուրդին մէջէն կորսընցնեմ. ինչու որ անիկայ իր սերունդէն Մողոքին տուած է՝ իմ սրբարանս պղծելու ու իմ սուրբ անունս անարգելու համար։
4 Եթէ որ ան մարդը իր սերունդէն Մողոքին տուած աչքը՝ ան երկրին ժողովուրդը չտեսնելու դալով՝
5 չանիկայ չմեռցնեն, Ես աչքը Ես իմ երեսս պիտի տնկեմ ան մարդուն վրայ՝ ու զանոր ընտանիքին վրայ, և անիկայ և Մողոքին հետ պոռնկութիւն ընելու համար ան մարդուն ետևէն բոլոր գացողները՝ իրենց ժողովուրդին մէջէն
6 պիտի կորսընցնեմ։ Եւ վհուկներուն ու հմայողներուն ետևէն *երթալու դարձող մարդուն վրայ ալ երեսս պիտի տնկեմ, ու անիկայ իր ժողովուրդին մէջէն կորսընց-
7 ցնեմ։ Սրբեցէք ձեր անձերը, ու սուրբ եղէք. ինչու որ
8 ես եմ Տէրը ձեր Աստուածը։ Ու իմ կանոններս պահեցէք, ու ըրէք
զանոնք. Ես եմ Տէրը որ ձեզ կը սրբեմ։
9 Ով որ իր հայրը կամ իր մայրը անիծէ, անշուշտ պիտի մեռցուի. անիկայ իր հայրը կամ իր մայրը անիծեց, անոր արիւնը իր վրայ
10 ըլլայ։ Եւ հով որ ուրիշ մարդու մը կնկանը հետ շնութիւն ընէ, իր դրացիին կնկանը հետ շնութիւն ընողը անշուշտ պիտի մեռցուի. շնացողն ալ շնացեալն ալ պիտի
11 մեռցուին։ Ով որ իր հօրը կնկանը հետ պառկի, իր հօրը մերկութիւնը բացած է. անշուշտ երկուքն ալ պիտի մեռցուին. անոնց
12 արիւնը իրենց վրայ ըլլայ։ Եթէ որ մարդ մը իր հարսին հետ պառկի, անշուշտ երկուքն ալ պիտի մեռցուին. ճխառնակութիւն ըրին. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։
13 Եւ եթէ որ մարդ մը՝ կնկան հետ պառկելու պէս արուի հետ պառկի, երկուքնին ալ պղծութիւն ըրին. անշուշտ պիտի մեռցուին. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։
14 Եթէ որ մարդ մը՝ կնիկ մը ու անոր մայրը առնէ, անօրէնութիւն է. ան ալ՝ անոնք ալ կրակով պիտի այրուին, որ ձեր մէջը անօրէնութիւն չըլլայ։
15 Եթէ որ մարդ մը անասունի հետ պառկի, անշուշտ պիտի մեռցուի, ու անասունը պիտի սպաննէք։
16 Եւ եթէ որ կնիկ մը որ և իցէ անասունի հետ զուգաւորելու համար անոր մօտենայ, կնիկն ալ անասունն ալ պիտի սպաննես. անոնք անշուշտ պիտի մեռցուին. անոնց արիւնը իրենց
17 վրայ ըլլայ։ Եթէ որ մարդ մը իր քոյրը առնէ՝ իր հօրը աղջիկը կամ իր մօրը աղջիկը, ու անոր մերկութիւնը տեսնէ, ու աղջիկն ալ անոր մերկութիւնը տեսնէ, չարութիւն է. անոնք իրենց ժողովուրդին աչքին առջեւ պիտի կորսուին. անիկայ իր քրոջը մերկութիւնը բացաւ. իր անօրէնու-
18 թիւնը պիտի կրէ։ Եթէ որ մարդ մը իր դաշտանին մէջ եղող կնկան մը հետ պառկի՝ ու անոր մերկութիւնը բանայ, (ինքը անոր աղբիւրը բացաւ, ան ալ իր արեանը աղբիւրը բացաւ. երկուքնին ալ իրենց ժողովուրդին մէ-
19 ջէն պիտի կորսուին։ Եւ քու մօրդ քրոջը կամ քու հօրդ քրոջը մերկութիւնը պիտի չբանաս. զինչու որ եթէ մէկը իր ազգականին մերկութիւնը բանայու ըլլայ, երկուքնին ալ իրենց անօրէնութիւնը
20 պիտի կրեն։ Եւ եթէ որ մարդ մը իր հօրեղբօրը կնկանը հետ պառկի, իր հօրեղբօրը մերկու-

Ն·ք·գՖ· 1490

— Եւ· ժբ· 48, 49։
Բ բ Օր· ժ· 19։
ե ՀՊ 15։
Ր բ Օր· իե· 13, 15։ Առակ· ժա· 1։ ժգ· 11։ ի· 10։
Ի Գլ· ժբ· 4· 5։ Բ Օր· դ· 5, 6։ ե· 1։ է· 25։
— Գլ· ժբ· 21։
Բ Գլ· ժբ· 21։
Բ Օր· ժբ· 31։ ժբ· 10։ գԹագ· ժե· 17։ իգ· 10։ Բ Մն· լդ· 6։ Երեմ· ե· 31։ լբ· 35։ Եզեկ· ի· 26, 31։
ե Գլ· ժե· 10։
Ր Եզեկ· ե· 11։ իէ· 38։ 39։
Ի Գլ· ժբ· 21։
Ղ Օր· ժե· 2, 3, 5։
Ի Գլ· ժե· 10։
Ը Եզ· ի· 5։
Ր Գլ· ժե· 7։
ժ Գլ· ժԹ· 31։
* Եբր· պոռնկելու
Ի Գլ· ժա· 44։ ժԹ· 2։ ա Գիս· ա· 16։
Լ Գլ· ժԹ· 87։

Ն · Ք · Ը · 1490

թիւնը բացաւ . անոնք իրենց մեղքը պիտի կրեն . անզաւակ պիտի
21 մեռնին : ՚Եւ թէ որ մարդ մը իր եղբօրը կնիկը առնէ , պղծութիւն է ան . անհնկայ իր եղբօրը մերկութիւնը կը բանայ . անզաւակ պիտի
22 ըլլան : Ուստի ՚իմ բոլոր կանոններս և իմ բոլոր դատաստաններս պիտի պահէք , ու ընէք անոնք , որ ան երկիրը՝ ուր որ ձեզ պիտի տանիմ հոն բնակելու՝ Ձեզ չխսխէ ձեզ :
23 ՚Եւ պիտի չգալէք ան ազգերուն սովորութիւններովը՝ որոնք ձեր առջևէն պիտի վռնտեմ . քանզի ասոնք ամէն բաները ըրին անոնք , ու
24 ես զզուեցայ անոնցմէ . Եւ ՚ձեր ձեզի . Անոնց երկիրը դուք պիտի ժառանգէք , ու ես անհնկայ ձեզի պիտի տամ ստացուածք ըլլալու , երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը
25 ըղխէ . ես եմ Տէրը ձեր Աստուածը՝ ՚որ ամէն ազգերէն զատեցի ձեզ , ՚Ուստի մաքուր ու անմաքուր անասուններուն մէջտեղը՝ և անմաքուր ու մաքուր թռչուններուն մէջտեղը տարբերութիւն պիտի ընէք . ՚և ձեր անձերը չպղծէք անասուններով կամ թռչուններով կամ գետնի վրայի բոլոր սողուններով՝ որոնք ես արգիլեցի ձեզի
26 իբրև անմաքուր : Եւ դուք սուրբ պիտի ըլլաք ինծի . ՚ինչու որ ես Տէրս սուրբ եմ , ու ՚ձեզ ՚՚բէնազգերէն զատեցի՝ որ իմն ըլլաք :
27 ՚՚Կին կամ հմայող եղողը՝ թէ երիկ մարդ ըլլայ և թէ կնիկ՝ անշուշտ պիտի մեռցուի . քարերով քարկոծեն զանոնք . ՚անոնց արիւնը իրենց վրայ ըլայ :

Ն · Ք · Ը · 1490

նին փետելով՝ կնտակ պիտի չընեն , և իրենց մօրուքին եզերքը պիտի չածիլեն , ու իրենց մարմինին վրայ
6 կտրածներ պիտի չընեն . Սուրբ պիտի ըլլան իրենց Աստուծոյն . և ՚իրենց Աստուծոյն անունը չպղծեն . ինչու որ Տէրոջը պատարագները ՚՚ իրենց Աստուծոյն հացը անոնք կը մատուցանեն . ուստի
7 սուրբ պիտի ըլլան : ՚Պոռնիկ կամ պղծուած կնիկ պիտի չառնեն , և Ձիր երիկէն արձակուած կնիկ մը չառնեն . ինչու որ ՚հոգեաւոր սուրբ
8 է իր Աստուծոյն : Ուստի պիտի սրբես անիկայ . ինչու որ քու Աստուծոդ հացը անիկայ կը մատուցանէ . անիկայ սուրբ պիտի ըլլայ քեզի . ՚Քանզի ես Տէրս՝ որ ձեզ
9 կը սրբեմ , սուրբ եմ : ԸԵւ թէ որ քահանայի մը աղջիկը պոռնկութիւն ընելով պղծուելու ըլլայ , իր հայրը կը պղծէ . անհնկայ կրակով պիտի այրուի :
10 ԲԵւ իր եղբայրներէն մեծ եղող քահանան՝ որուն գլխուն վրայ օծման եղը թափուած է , ու ՚զգեստները հագնելու օրշնուած , էր գլուխը պիտի չբանայ , և իր լա-
11 թերը պիտի չպատռէ , Եւ մեռած մարդու մը քով պիտի չերթայ . ոչ ալ իր հօրը կամ իր մօրը համար
12 անմաքուր պիտի ըլլայ . ԲԵւ սրբարանէն դուրս պիտի չելլէ , ու իր Աստուծոյն սրբարանը չպղծէ . ինչու որ ՚իր Աստուծոյն օծման եղին պսակը իր վրան է . ես եմ
13 Տէրը : Եւ անհնկայ կոյս մը իրեն
14 կնիկ պիտի առնէ . Որբևարի՝ կամ արձակուած՝ կամ պղծուած՝ կամ բոզ պիտի չառնէ . հապա կնիկ ԸԸլլե՝ համար իր ժողովուրդէն կոյս
15 մը առնէ . Որ իր սերմը չպղծէ իր ժողովուրդին մէջը . ինչու որ ՚ես եմ Տէրը՝ ՚՚ որ կը սրբեմ զանիկայ ,
16 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝
17 ըսելով . Խօսէ Ահարոնին ու ըսէ . Քու սերունդիդ իրենց ազգերուն մէջ ով որ իր վրան արատ մը ունի , ՚հոգ չմօտենայ իր Աստուծոյն հաց
18 ըր մատուցանելու . ինչու որ ընաւ արատ ունեցող մարդ մը պիտի չմօտենայ . կոյր մարդը՝ կաղը՝ կամ կարճունչը՝ կամ * իր ՚՚դէմքէն ՚՚ վրէ ղաւելորդ բան մը ունեցողը՚՚ ,
19 կամ ոտքը կոտրած՝ կամ ձեռքը
20 կոտրած մարդը , կամ սակատողը՝ կամ թզուկը՝ կամ իր աչքին մէջ բիծ ունեցողը՝ կամ քոսոտը՝ կամ որբևնոտը՝ կամ ՚՚փոշտանկը .
21 Ահարոն քահանային սերունդէն արատ մը ունեցող մարդը՝ ՚ Տէրոջը պատարագները մատուցանելու պիտի չմօտենայ , ՚՚ արա-

ԳԼ · ԻԱ

1 Քահանաները իրենց որ ազգականին համար կրնային սուգ բռնել : 6 Անոնք սուրբ պիտի ըլլային : 8 ոՀսուրբ պիտի սեպուէին : 7 Հասարակ քահանաներուն : 13 ու քահանայապետին ամուսնանալուն վրայով : 17 Արատ ունեցող քահանային արգիլուած էր ըՀմատուցանելը :

1 Ձէ Տէրը ըսաւ Մովսէսին . Խօսէ Ահարոնին որդւոցը քահանաներուն , ու ըսէ անոնց . ՚՚Քահանայ մը՝ մեկուն ՚՚հոգւոյնը համար անմաքուր պիտի չըլլայ իր ժողովուրդին
2 մէջը . Բայց միայն իր մօտ ազգականին համար , ՚՚յոնէնէ՚ իր մօրը ու իր հօրը և իր որդւոյն ու իր աղջկան համար , ՚՚յոնէնէ՚ իր մօրը ու
3 նը և իր եղբօրը համար . Եւ իր կոյս քրոջը համար որ մօտ է իրեն՝ ու երկան տրուած չէ , կրնայ անմա-
4 քուր ըլլալ , ՚Անհկայ իր ժողովուրդին մէջը գլխաւոր մարդ ըլլալով՝ անմաքուր պիտի չըլլայ՝ ինքզինքը պղծելով :
5 Անոնք պղծելով , ՚Անոնք գլուխնին

Ն · Ք · Ը · 1490

Ը Գլ · ԺԸ · 16 ։

Ը Գլ · ԺԸ · 21·ԺԲ · 12 ։

Ը Եզեկ խդ · 22 ։

Ղ Տես բ Օր · իդ · 1 · 2 ։

Ե Գլ · ի · 7 · 8 ։

Ը ՆԹ · լԲ · 24 ։

Ի Ել · ի · 29 · 30 · Գլ · ը · 12 · ԺՂ · 32 · Թուս · լե · 25 ։

Ժ Ել · իը · 2 · Գլ · ԺՂ · 32 ։

Ի Գլ · Ժ · 6 ։

Լ Թուս · ԺԲ · 14 · Տես Հգ 1 2 ։

Ի Գլ · Ժ · 7 ։

Ժ Ել · իթ · 36 · Գլ · ը · 9 · 12 · 30 ։

Լ Հգ 7 · Ե · Եզեկ խդ · 22 ։

Ե Հգ 8 ։

Ե Գլ · ի · 8 · Թուս · Ժգ · 5 · Սաղ կե · 4

Ո Ա՛ ական · Լատ

Ղ Գլ · իբ · 23 ։

Ճ Ը Օր · ի·գ · 1 ։

Ի Ա՛ մրօ · ձին

Ի Հգ 6 ։

Ե Գլ · ԺԸ · 16 ։

Ը Եզեկ · խդ · 25 ։

Ի Տես Եզեկ · իդ · 16 · 17 ։

Ի Գլ · ԺԲ · 27 · 28 ։ Բ Օր · Ժդ · 1 · Եզեկ · խդ · 20 ։

Ն · ք · ՂՔ · 1490

տաւոր ըլլալով իր Աստուծոյն հաց ը մատուցանելու պիտի չմօտե.
22 նայ ։ Անիկայ իր Աստուծոյն հացը պիտի ուտէ , թէ սամենասուրբ բաներէն և թէ սուրբ բաներէն .
23 միայն վարագուրին մէջը պիտի չմտնէ , և սեղանին չմօտենայ , ինչու որ արատ ունի , ու իմ սուրբ բաներս չպղծէ . քանզի ես Տէրը կը սրբեմ զանոնք ։
24 Եւ Մովսէս խօսեցաւ Ահարոնին և անոր որդոցը և բոլոր Իսրայէլի որդոցը ։

ԳԼ · ԻԲ

1 Քահանայք իրենց անմաքրութեան ժամանակը՝ սուրբ բաներու մօտենալու չէին ։ 6 Իրենց մաքրուելուն վրայով ։ 10 Քահանային ընտանիքէն ով իրաւունք ունէր սուրբ բաներէն ուտելու ։ 17 Զոհ մատուցելու անասունը անարատ ըլլալու էր ։ 26 Ութօրուան չեղած անասուն մը Տէրոջը պիտի չմատուցուէր ։ 29 Շնորհակալութեան զոհը ուտելուն պատուէրները ։

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով . 2 խօսէ Ահարոնին ու անոր որդոցը՝ որ Իսրայէլի որդոցը մաքսուցած սուրբ բաներէն ղեղուկ կենան , և իմ սուրբ անունս չպղծեն անոնք բաները՝ որ ինծի կը սրբեն .
3 ես իմ Տէրը ։ Ըսէ անոնց . Ձեր բոլոր սերունդներուն մէջ՝ ով որ ձեր անմաքրութիւնը իր վրան ունենալով մօտենայ ան սուրբ բաներուն՝ որ Իսրայէլի որդիները կը սրբեն Տէրոջը . ան անձը իմ առջևէս պիտի կորսուի . ես
4 իմ Տէրը ։ Ով որ Ահարոնին ցեղէն բորոտ ըլլայ , կամ հոսորում ունենայ սուրբ բաներէն պիտի չուտէ՝ մինչև իր մաքրուիլը . և ով որ մեռելէ պղծուած բանի մը դպչի , կամ մարդ մը՝ որուն զուգաւորութեան սերմը իրմէն ելած է ,
5 կամ ով որ դպչի որ և իցէ սողունի մը՝ որով կրնայ անմաքուր ըլլալ , կամ մարդու մը՝ որմէն կրնայ անմաքուր ըլլալ , որ և իցէ անմաքրութիւն որ անիկայ ունենայ ,
6 նայ . Առանց դպչող մարդը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ , և սուրբ բաներէն պիտի չուտէ , հապա իր մարմինը ջրով պիտի լուայ .
7 Եւ երբ արեգակը մարը մտնէ , մաքուր պիտի ըլլայ , ու ետքը սուրբ բաներէն ուտէ . ինչու որ հան իր
8 հացն է ։ Ինքիկայ մեռած կամ գազանաբեկ պիտի չուտէ , որ ան
9 նով չպղծուի . ես եմ Տէրը ։ Եւ իմ կարգադրութիւնս պիտի պահեն , ձորանոր համար մեղք չկրեն . ու ան պղծելնուն համար չմեռնին . ես եմ Տէրը՝ որ զանոնք կը սրբեմ ։
10 Ոչ մէկ օտարական մը սուրբ բանէ պիտի չուտէ . քահանային հիւրը կամ վարձկանը սուրբ բանէ պիտի
11 չուտէ ։ Բայց քահանային իր ըստակովը ծախուած առած անձը՝ ու իր տունը ծնածը՝ անկէ պիտի ուտէ . հանոնք անոր կերակուրէն պիտի
12 ուտեն ։ Թէ որ քահանային աղջիկը օտարականի մը հետ ամուսնանայ , անիկայ նուիրուած սուրբ
13 բաներէն պիտի չուտէ ։ Բայց թէ որ քահանային աղջիկը որբևարի կամ արձակուած ըլլայ՝ ու զաւակ չունենայ , և իր հօրը տունը դառնայ , ան ապրիլը ։ իր աղջկութեանը ժամանակին պէս՝ իր հօրը հացէն պիտի ուտէ . սակայն քնաւ օտարական մը ասնկէ պիտի չուտէ ։
14 Եւ թէ որ մարդ մը անգիտութեամբ սուրբ բանէ մը ուտէ , անոր վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ , ու սուրբ բանովը մէկ-
15 տեղ քահանային պիտի տայ ։ Եւ Իսրայէլը որդոցը Տէրոջը մատուցած սուրբ բաները պիտի չպղծեն
16 ձեն ։ Ու իրենց սուրբ բաները ուտելով՝ յանցանաց անօրէնութիւնը իրենց վրայ չբերեն " . ինչու որ ես եմ Տէրը՝ որ զանոնք կը սրբեմ ։
17 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով .
18 խօսէ Ահարոնին՝ ու անոր որդոցը՝ և Իսրայէլի բոլոր որդոցը , ու ըսէ անոնց . Իսրայէլի տունէն՝ կամ Իսրայէլի մէջ բնակող օտարականներէն՝ ողջակէզ կամ Տէրոջը անոնց մատուցածը՝ իրենց բոլոր ուխտերուն և բոլոր կամաւոր ընծաներուն համար , իր զոհը մատուցանող ամէն մարդը , ։ Արջառներէն՝ ոչխարներէն՝ կամ այծերէն՝ անարատ արու պիտի մատուցանէ , որ ձեզի համար ընդունելի ըլլայ ։
20 Ինչ արատ մը ունեցողը պիտի չմատուցանէք . ինչու որ ձեզի հա-
21 մար ընդունելի չըլլար ։ Եւ ուխտ կատարելու համար՝ կամ կամաւոր ընծայի համար՝ ուխտ որ արջառներէն կամ ոչխարներէն Տէրոջը խաղաղութեան զոհ մատուցանելու ըլլայ , անարատ պիտի ըլլայ ան , որ ընդունուի . քնաւ արատ պիտի
22 չըլլայ անոր վրայ ։ Կոյր՝ կամ ոտ ջուէ կտրած՝ կամ կտրուած՝ կամ խաղաւարտ ունեցող՝ կամ քոսոտ՝ կամ որբևնոտ եղածներէն Տէրոջը պիտի չմատուցանէք , ոչ ալ սուոնոյմէ Տէրոջը պատարագի համար սեղանին վրայ պիտի
23 դնէք ։ Բայց անթոռնեւոն ձեղ աւելորդութիւն կամ պակասութիւն ունեցող զուարակը՝ կամ ոչխարը՝ կամաւոր ընծայի համար

Ն · ք · ՂՔ · 1490

Ել · ա · Թագ · իա · 6 ։
Թու · ժը · 11 , 13 ։
Ծն · լը · 11 ։
Գլ · ժ · 14 ։ Թու · ժը · 11 , 19 ։
Գլ · ե · 15 , 16 ։
Թու · ժը · 32 ։
* Կ՚ուզուի անոնց վրայ յանցանաց անօրէնութիւնը բերել ։
Ես · ա · 3 ։
Բ Գլ · ժը · 21 ։
Ել · իբ · 38 ։ Թու · ժը · 32 ։ Բ Օր · ժե · 19 ։
Գ Գլ · ե · 20 ։
Գլ · ժե · 2 ։
Գլ · ժդ · 2 ։ ժե · 13 ։ Թու · ժԹ · 11 , 22 ։
Գլ · ժե · 16 ։
Գ Գլ · ժա · 24 · 43 , 44 ։
Գլ · ժե · 7 , 19 ։
Գլ · ժե · 5 ։ Երե · ժ · 22 ։
Գլ · իա · 22 ։ Թու · ժ · 11 · 13 ։
Ել · իբ · 31 ։ Գլ · ժե 15 · Ելկ · խդ · 31 ։
Ել · իբ · 43 ։ Թու · ժը · 22 , 32 ։
Ել · իբ · 38 ։
Գլ · ժ · 3 , 10 ։ գ · 27 , 29 ։ է · 1 ։ իդ · 9 ։ Թու · ժը · 9 ։
Գլ · իբ · 10 , 11 , 12 ։ Թու · ժը · 19 ։
Ղ Ա Ր 12 ։

Ն·Ք·ՉՓ·
1490

մատուցանէս . սակայն ուխտի հա-
24 մար պիտի չընդունուի ան ։ Իր
ոմբ՝էիէը ձմղուածը՝ կամ ճզմուա-
ծը՝ կամ փրցուածը՝ կամ կտրուա-
ծը՝ պիտի չմատուցանէք Տէրոջը ,
և ձեր երկրին մէջ պիտի չընէք ։։
25 Քահէրը ։ Եթէ օտարականի մը ձեռ-
քէն ալ՝ ամէն ասոնցմէ ։ ձեր Ա-
տուածոյն պատարագ պիտի չմատու-
ցանէք . ինչու որ ։անոնց մէջ
խեղաթիւրն ու արատ կայ . ա-
նոնք ձեզի համար ընդունելի պիտի
չըլլան ։
26 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝
27 ըսելով . ։Երբոր զուարակ կամ
ոչխար կամ այծ ծնանի , եօթը օր
իր մօրը քովէ պիտի մնայ . և ութե-
րորդ օրը՝ ու անկէ ետքը Տէրոջը
ընդունելի պիտի ըլլայ պատարագի
28 ընծայի համար ։ Եւ կովը կամ
ոչխարը ։իր ձագովը մէկտեղ մէկ
օրուան մէջ պիտի չմորթէք ։
29 Եւ երբոր ։գոհութեան զոհ մա-
տուցանէք Տէրոջը , ընդո պիտի
մատուցանէք , որ ձեզի համար ըն-
30 դունելի ըլլայ ։ Նոյն օրը պիտի ու-
տուի անիկայ ։անկէ մինչև առ-
տու պիտի չթողուք ։ Ես եմ Տէրը ։
31 ։Ուստի իմ պատուիրանքներս
պիտի պահէք , և պիտի ընէք ա-
32 նոնք ։ Ես եմ Տէրը ։ ։Եւ իմ սուրբ
անունս պիտի չպղծէք ; որ ։ես
սրբուիմ Իսրայէլի որդւոց մէջը .
Ես եմ Տէրը որ ։ձեզ կը սրբեմ .
33 ։Որ ձեզի Աստուած ըլլալու համար՝
ձեզ եգիպտոսի երկրէն հանեցի .
Ես եմ Տէրը ։

ԳԼ· ԻԳ

1 Տէրոջը ոտները · 3 շաբաթը , 4 և ·գառիկո , 9
երախայրիներուն , 15 ու պէտուէկոստէին ոտնը
պահելու վրայով , 22 հունձքին մնացած հաս-
կերը ու այդիէն ճհէերը չժողվելու պատուէրը ,
23 Փող հնչեցնելու ոտնը , 26 ։քաւութեան
օրը · 33 Տաղաւարահաց ոտնը ։

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե-
2 լով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝
ու ըսէ՝ անոնց . ։Տէրոջը ոտները՝
որ դուք ։ սուրբ ժողով պիտի
կոչէք , իմ ոտներս ասոնք են .
3 ։վեց օր գործ գործուի , բայց
եօթներորդ օրը հանգստութեան
շաբաթը ըլլալով՝ սուրբ ժողով է .
բնաւ գործ պիտի չգործէք . Տէ-
րոջը շաբաթը ։ինչ ըլլայ ձեր բոլոր
բնակութեանցը մէջ ։
4 ։Տէրոջը ոտները՝ որ իրենց ատե-
նին համեմատ սուրբ ժողովներ պի-
5 տի քարոզէք , ասոնք են ։ Առա-
ջին ամսուն չորեքտասաներորդ օրը
իրիկուան դէմ՝ Տէրոջը զատիկն է .
6 Եւ նոյն ամսուն տասնհինգերորդ
օրը բաղարջակերաց ոտն է Տէրոջը .
եօթը օր բաղարջ պիտի ուտէք ։
7 Առաջին օրը սուրբ ժողով պիտի
ունենաք . բնաւ ծառայութեան
8 գործ պիտի չգործէք ։ Եւ եօթը օր
պատարագ պիտի մատուցանէք
Տէրոջը . եօթներորդ օրը սուրբ
ժողով պիտի ըլլայ . բնաւ ծառա-
յութեան գործ պիտի չգործէք ։
9 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
10 սելով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ ու
ըսէ՝ անոնց . ։Երբոր մտնէք ան ե-
կեղեցը որ ձեզի կու տամ , ու անոր
հունձքը ջնէք , ։ձեր հունձքին ե-
րախայրի որան քահանային պիտի
11 բերէք . Ան ալ ։Տէրոջը առջևը ե-
րերցընելով՝ պիտի մատուցանէ ո-
րան , որ ձեզի համար ընդունելի ըլ-
լայ . քահանան շաբաթին հետևեալ
12 օրը պիտի մատուցանէ ան ։ Եւ ո-
րան մատուցած օրերնիդ՝ ողջակէզի
համար մէկ տարեկան անարատ գառ-
ը պիտի մատուցանէք Տէրոջը .
13 ։Եւ անոր հացի ընծան եղով շա-
ղուած երկու տասնորդ բարակ
ալիւր պիտի ըլլայ ։ Հուր անուշ-
շահոտ պատարագի համար է Տէ-
րոջը . և անոր թափելու նուէրը
հիմնին չորրորդ մասը գինի պիտի
14 ըլլայ ։ Եւ մինչև ան օրը՝ որ ձեր
Աստուծոյն ընծան կը մատուցա-
նէք , հաց՝ կամ բոհրած ցորեն՝
կամ թարմ հասկեր պիտի չուտէք .
ձեր աղգերուն մէջ ձեր բոլոր բնա-
կարաններուն մէջ ։։ Յաւէ յաւի-
տենական կանոն պիտի ըլլայ ։
15 Եւ ։շաբաթին հետևեալ օրէն՝ որ
դուք նուիրման որան բերիք , լման
եօթը շաբաթ պիտի համրէք ձե-
16 զի . Մինչև եօթներորդ շաբաթին
հետևեալ օրը Ւյիսուսն օր պիտի
համրէք , և ինոր հացի ընծայ մա-
17 տուցանէք Տէրոջը ։ Ձեր բնակա-
րաններէն երկրընկելու ընծայի հա-
մար՝ երկու հաց պիտի բերէք , որ
անոնք երկու տասնորդ բարակ ա-
լիւրէ ըլլալով՝ խմրեալ եփած պի-
տի ըլլան . առ ։երախայրի է Տէրո-
18 ջը ։ Եւ հացերուն հետ՝ մէկ տա-
րեկան եօթը հատ անարատ գա-
ռիկ՝ և արջառներէն մէկ զուարակ
մը՝ ու երկու խոյ պիտի մատուցա-
նէք Տէրոջը . ասոնք հացի ընծա-
ներուն ու թափելու նուէրներուն
հետ ողջակէզ ։։ անուշահոտ պա-
19 տարագ պիտի ըլլան Տէրոջը ։ Եւ
։մեղքի պատարագի համար այծե-
րէն մէկ նոխազ՝ և ։խաղաղութեան
զոհի համար մէկ տարեկան երկու
20 գառնիք պիտի մատուցանէք ։ Եւ
քահանան երախայրի հացին հետ
երերցընելու ընծայի համար՝ երկու
գառները պիտի մատուցանէ Տէ-
րոջը առջևը . ։անոնք սուրբ պիտի
ըլլան Տէրոջը , և քահանային ըլ-

Ն·Ք·ՉՓ·
1490

ՂԵՒ · ԺԶ · 16 ։ ԹՈՒ · ԻԸ · 18 ։ 25 ։

Ե ԵՒ · ԻԳ · 16 ։ 19 ։ ԼԳ · 22 ։ 26 ։ ԹՈՒ · ԺԸ · 2 ։ 18 ։ ԻԸ · 26 ։ Բ ՕՐ · ԺԶ · 9 ։ ՅԵՒ · Գ · 15 ։
Ը ՀՈՎ · ԺԱ · 16 ։ Ա ԿՈՐ · ԺԸ · 20 ։ ՅԱԿ · Ա · 18 ։ Ց�այտ · ԺԳ · 4 ։
Ի ԵՒ · ԻԹ · 24 ։
Ի ԳՂ · Բ · 14 ։ 15 ։ 16 ։

Ի ԳՂ· ԻԸ · 8 ։ ԵՒ · ԼԳ · 22 ։ Բ ՕՐ · ԺԶ · 9 ։
ԼԳՈՐ · Բ · 1 ։
Կ ԹՈՒ · ԻԸ · 26 ։

ԺԵՒ · ԻԳ · 16 ։ 19 ։ ԼՐ · 29 ։ ԼԳ · 22 ։ 26 ։ ԹՈՒ · ԺԸ · 17 ։ ՒԸ ։ 26 ։ Բ ՕՐ · ԻԶ · 1 ։ ՒԸ ։
Ժ ԵՒ · ԻԳ · 16 ։ 19 ։ ԼՐ · 29 ։ ԼԳ · 22 ։ 26 ։ ԹՈՒ · ԺԸ · 17 ։ ՒԸ ։ 26 ։ Բ ՕՐ · ԻԶ · 1 ։ ՒԸ ։
Ի ԳՂ · Գ · 23 ։ 28 ։ ԹՈՒ · ԻՐ · 30 ։
Հ ԳՂ · Գ · 1 ։
Ն ԹՈՒ · ԺԸ · 12 ։ Բ ՕՐ · ԺԸ · 4 ։

Ն · Ք · ՉԿ · 1490

21 լՙե ։ Եւ ան նոյն օրը պիտի քա-
րոզէք որ ձեզի սուրբ ժողով ըլլայ ։
բնաւ ծառայութեան գործ պիտի
չգործէք . ասՙ ձեզի յաւիտենական
կանոն ըլլայ ձեր բոլոր բնակարան-
ներուն մէջը ձեր ազգերուն մէջ ։

ՂԳԼ · ԺԹ · 9 ·

22 Եւՙ ՂԷրբոր ձեր երկրին հունձքը
ՂՁէք , ՂՁած ատենդ արտին եզեր-
քը լման պիտի չՂՁես , ՃՈ հունձ-
քիդ մնացած հասկերը չժողվես .
զանոնք աղքատին ու օտարականին
պիտի թողուս ։ ես եմ Տէրը ձեր
Աստուածը ։

ՃԲ Օր · իդ · 19 ։

23 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
24 սելով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝
ու ըսՙ . յ Եօթներորդ ամսուն մէջՙ
ամսուն առաջին օրը ձեզի հանգըս-
տութեան օրՙ յփող Շչէցընելուն
յիշատակը՝ սուրբ ժողով պիտի ըլ-
25 լայ ։ բնաւ ծառայութեան գործ
պիտի չգործէք , հապա պատարագ
մատուցանէք Տէրոջը ։

յ Թուհ · իԹ · 1 ։

յ ԳԼ · իե · 9 ։

26 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
27 սելով . Նհաւ աս եօթներորդ ամ-
սուն տասներորդ օրը քաւութեան
օրը ըլլալովՙ սուրբ ժողով ըլլայ
ձեզի . և պիտի խոնարհեցընէք ձեր
հոգիները , ու պատարագ մատու-
28 ցանէք Տէրոջը ։ Եւ ան օրը բնաւ
գործ պիտի չգործէք . ինչու որ Տէ-
րոջը ձեր Աստուծոյն առջևը ձեզի
համար քաւութիւն ընելուՙ օր քա-
29 ւութեան է ։ Քանզի ով որ նոյն
օրը չխոնարհի՝ Ւրիր ժողովուրդին
30 մէջէն պիտի կորսուի . Եւ ով որ
նոյն օրը գործ մը գործէ , ան անձը
ՠիր ժողովուրդին մէջէն պիտի կոր-
31 սընդնէՙ ։ Բնաւ գործ մը պիտի
չգործէք . ՠհԼՙյ ձեր ազգերուն
մէջ ձեր բոլոր բնակարաններուն
մէջ յաւիտենական կանոն ըլլայ ։
32 Աս ձեզի հանգստութեան շաբաթ
պիտի ըլլայ , և ձեր հոգիները պի-
տի խոնարհեցընէք , ամսուն իննե-
րորդ օրՠՠՠ իրիկունը ձեր շաբաթը
պիտի պահէքՙ ՊՀ իրիկունէն մինչև
ՊՀԼ իրիկունը ։

ՂԵԼ · իգ · 16 ։ Թուհ · իԹ · 12 ։ ը Օր · ԺԳ · 13 ։ Եզր · գ · 4 ։ Նէեմ · ը 14 ։ Ջաք · ժդ · 16 ։ Յօհ · է · 2 ։ Ղ Թուհ · իԹ · 35 ։ Նէեմ · ը · 18 ։ Յօհ է · 37 ։

33 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
34 սելով . Խօսՙ Իսրայէլի որդւոցըՙ
ու ըսՙ . ՂԱս եօթներորդ ամսուն
ՉՂետասաներորդ օրըՙ եօթը օր տա-
35 զաւարահարաց տօն է Տէրոջը ։ Ա-
ռաջին օրը սուրբ ժողով պիտի ըլլայ .
բնաւ ծառայութեան գործ պիտի
36 չգործէք . եօթը օր պատարագ պի-
տի մատուցանէք Տէրոջը ։ Ա ու-
թերորդ օրը սուրբ ժողով պիտի
ըլլայ ձեզի , և պատարագ մատու-
ցանէք Տէրոջը ։ Ւժողնախմբութեան
օր է ան բնաւ ծառայութեան
37 գործ պիտի չգործէք ։ ՠՏէրոջը
պատարագ ողջակէզՙ ու հացի ըն-
ծայՙ զոհՙ և թափելու նուէրներ՝
ամէն օրուան պէտք եղածը մատու-
ցանելու համար ձեր սուրբ ժողով
կոչելու Տէրոջը տօները ասոնք են ,
38 ՠՏէրոջը շաբաթներէն զատՙ և ձեր
ընծաներէն զատՙ ու ձեր բոլոր
ուխտերէն զատՙ և ձեր բոլոր Տէ-
րոջը տալու կամաւոր ընծաներէն
39 զատ ։ Նաև եօթներորդ ամսուն
ՉՂետասաներորդ օրըՙ Վերկրի ար-
դիւնքը ժողված առենիդ եօթը օր
տօն պիտի պահէք Տէրոջը . ա-
ռաջին օրը շաբաթ և ուրիշ օրը
40 օրը շաբաթ պէտէ պէտէ ։ Եւ ՠա-
ռաջին օրը ձեզի գեղեցիկ ծառերու
պտուղ , արմաւենիի ոստեր՝ ու
տերևախիտ ծառերու ոստեր՝ և
ձորին ուռիներու ՠՠՠ պիտի առ-
նէք , ու Տէրոջը ձեր Աստուծոյն
առջևը եօթը օր ՠուրախանաք ։
41 ՠՙ Եւ աս տօնը տարին եօթը օր պի-
տի պահէք Տէրոջը . ձեր ազգերուն
մէջ յաւիտենական կանոն ըլլայ
ան . եօթներորդ ամսուն մէջ պի-
42 տի ընէք ան ։ ՠեօթը օր տաղա-
ւարներու մէջ պիտի բնակիք .
Իսրայէլի բոլոր բնակները տաղա-
43 ւարներու մէջ բնակին . ՠՈրպէս
զի ձեր սերունդները գիտենանՙ թէ
Իսրայէլի որդիքը եգիպտոսէ երկ-
րէն հանած ատենսՙ տաղաւարնե-
րու մէջ բնակեցուցի զանոնք . ես
44 եմ Տէրը ձեր Աստուածը ։ Եւ
Մովսէս ՠԻսրայէլի որդւոցը պատ-
մեց Տէրոջը տօները ։

Ն · Ք · ՉԿ · 1490

ՠ Թուհ · իԹ · 39 ։

Վեղ · իդ · 16 ։ ը Օր · ԺԳ · 13 ։

ՠՠ Նէեմ · ը · 15 ։

ՃՃ Օր · ԺԳ · 14 ։ 15 ։ յ Թուհ · իԹ · 12 ։ Նէեմ · ը · 18 ։

ՠ Նէեմ · ը 14 ։ 15 ։ 16 ։

ՃՃ Օր · լ · 13 ։ Սաղ · Ղը · 5 ։ 6 ։

ՃՃՃ Ժող 2 ։

ԳԼ · ԻԴ

1 Ճրագներուն համար եղը ։ 5 Աւանդաւորութեան հացը ։ 10 Իսրայէլացի կնկանը տղան՝ որ Տէրոջը անունը հայհոյեց ։ 13 Հայհոյութեան , 17 ու մարդասպանութեան պատիժը ։ 18 Վնասներու վճարով ։ 23 Ան հայհոյիչին քարկոծուիլը ։

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . ՠՊատուիրէ Իսրայէլի
որդւոցըՙ որ ծեծուած մաքուր ձէթ
բերեն բերձի լոյսի համար , որ միշտ
3 ճրագ վառի ։ Ժողովքի խորանին
մէջՙ վկայութեանը վարագուրին
դուրսի դին Ահարոն միշտ պիտի
պատրաստէ ան՝ իրիկունըն մինչև
առաւօտ Տէրոջը առջևը վառելը-
համբ . ասիկայ ձեր ազգերուն մէջ
4 յաւիտենական կանոն ըլլայ ։ ՃԸ-
րագները ՃՃ մաքուր աշտանակին վը-
րայ Տէրոջը առջևը միշտ պիտի
պատրաստէ ։
5 Եւ բարակ ալիւր պիտի առնես ,
ու անով տասներկու ՃՃՃ ՃՃՃ եփես .
ամէն մէկ չօրթը երկու տասնորդէն
6 պիտի ըլլայ ։ Եւ զանոնք Տէրոջը
առջևը ՠՠ մաքուր սեղանին վրայՙ
երկու կարգով պիտի դնես . ամէն
7 մէկ կարգը վեց վեց հատ ըլլայ ։ Եւ

ՠ Եւ · իե · 20 ։ 21 ։

ՃՃ Եւ · իե · 20 ։ 21 ։

Ճ Եւ · իե · 24 ։ Թուհ · գ · 10 ։

ՃՃՃ Եւ · իե · 30 ։

ՠՠՠ ԴԹագ · է · 48 ։ ԲՄն · գ · 19 ։ ԺԳ · 11 ։ Եբր · Թ · 2 ։

Ն · ք · ԶՖ · 1490

Ի Թու · դ · 7 · ա Մն · թ · 32 · բ Մն · բ · 4 ։

Ղ ա Թագ · իա · 6 · Մատ · ժբ · 4 · Մար · բ · 26 · Ղե · · 4 ։

Ե ԵԼ · ԻԹ · 33 · ԳԼ · ը · 3 · իա · 22 ։

Ը Հմր 16 ։

Ի Յոր · ա · 5 · 11 · 22 · բ · 5 · 9 · 10 ։ Ես · ը · 21 · Ժ ԵԼ · ժը · 22 · 26 ։

Ի Թու · ժե · 34 ։

Լ ԵԼ · ժը · 15 · 16 · Թու · իե · 5 · Լշ · 5 · 6 ։

Ի բ Օր · ժգ · 9 · ժե · 7 ։

Ձ ԳԼ · ե · 1 · ի · 17 · Թու · Թ · 13 ։

Լ գ Թագ · իա · 10 · 13 · Ազ · Հգ · 10 · 18 · Մատ · ժբ · 31 · Մար · գ · 28 · Ցակ · բ · 7 ։

Հ ԵԼ · իա · 12 · Թու · լե · 31 · բ Օր · ժԹ · 11 · 12 ։

Յ Հմր 21 ։

Ղ ԵԼ · իա · 24 · բ Օր · ժԹ · 21 · Մատ · ե · 38 · է · 2 ։

Ծ ԵԼ · իա · 33 · Հմր 18 ։

Ժ Հմր 17 ։

Ց ԵԼ · ժբ · 49 · ԳԼ · ժԹ · 34 · Թու · ժհ · 16 ։

Ն Հմր 14 ։

ուղն կարգին վրայ զուտ կնդրուկ պիտի դնես , որ հացին վրայ պատարագի յիշատակ ըլլայ Տէրոջը ։

8 Իսրայէլի որդւոցը կողմանէ յաւիտենական կանոնով Համկ շաբաթ օր միշտ Տէրոջը առջեւը զանիկայ

9 պիտի կարգադրէ ։ Եւ Ահարոնին ու անոր որդւոցը պիտի ըլլայ , Եւ սուրբ տեղը ուտեն զանիկայ . ինչու որ ան՝ Տէրոջը պատարագներէն յաւիտենական կանոնով ամենասուրբ է անոր ։

10 Եւ Իսրայէլի որդւոցը մէջ Իսրայէլացի կնկան մը որդին ելաւ , որուն հայրը Եգիպտացի էր . ու ան Իսրայէլացի կնկանը որդին՝ Իսրայէլացի մարդու մը հետ բանակին

11 մէջ կռուեցաւ . Եւ ան Իսրայէլացի կնկանը որդին Հայհոյեց Տէրոջ անունը՝ ու Ի նախեց . և Ի Մովսէսին բերին անիկայ . ու անոր մօր անունը Սաղոմիթ էր , Դանի ցեղէն՝ Դաբրիին աղջիկը ։

12 Զէն՝ Դաբրիին աղջիկը ։ Եւ Իսրայէլացին զանիկայ , Մինչև որ Տէրոջը հրամանը յայտնուի իրենց ։

13 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե ,

14 լով . Ան հայհոյող մարդը բանակէն դուրս հանէ , և բոլոր լսողները Ի ձեռքերնին անոր գլխուն վրայ դնեն , ու բոլոր ժողովը քարկո-

15 ծեն զանիկայ ։ Եւ պիտի խօսիս Իսրայէլի որդւոցը՝ ըսելով . Ո վ որ իր Աստուածը կ՚անիծէ , Ի իր

16 մեղքը պիտի կրէ ։ Եւ Տէրոջը անունը Հայհոյողը անշուշտ պիտի մեռցուի . բոլոր ժողովքը անշուշտ պիտի քարկոծեն զանիկայ , թէ օտարական ըլլայ և թէ երկրացի . Տէրոջ անունը հայհոյողը պիտի մեռցուի ։

17 Հե ան որ մարդ մը կը սպաննէ , 18 անշուշտ պիտի մեռցուի ։ Նե ան որ անասուն մը կը մեռցնէ , անասունի տեղ անասուն պիտի հատուցանէ .

19 ցանէ . Եւ թէ որ մարդ մը իր դրացիին խեղճութիւն պատճառ ըլլայ , Ի իր ըրածին պէս պիտի ընեն

20 իրեն . Ի ոկման տեղ՝ ոկում , աչքի տեղ՝ աչք , ակռայի տեղ՝ ակռայ , ինչպէս որ անիկայ մարդու մը խեղճութիւն պատճառեր է , ա-

21 նանկ ալ պիտի ըլլայ իրեն ։ Եւ անասուն մեռցնողը՝ պիտի հատուցանէ ան . Ի բայց մարդ մեռ-

22 ցնողը՝ պիտի մեռցուի ։ Ի թէ օտարականին համար՝ և թէ երկրացին համար՝ ձեր օրէնքը մէկ պիտի ըլլայ . ինչու որ ես եմ Տէրը ձեր Աստուածը ։

23 Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդւոցը՝ Որ ան անիծող մարդը բանակէն դուրս հանեն , և քարերով քարկոծեն զանիկայ . ու Իսրայէլի որդիքը Տէրոջը Մովսէսին պատուիրածին պէս ըրին ։

Ն · ք · ԶՖ · 1490

ԳԼ · ԻԵ

1 Եօթներորդ տարւոյն շաբաթը ։ 8 Ցիոանեբորդ տարին Յոբելեան պիտի կոչուէր ։ 14 Ձրկածրի վրայով ։ 18 Հնազանդութեան օրհնութիւնը ։ 23 Երկրին ։ 29 և տուներուն փրկանքը ։ 35 Տնանկներուն վրայ գութ ունենալու պատուէրը ։ 39 Ծառաներու համար կանոններ ։ 47 Ծառաներուն փրկուելուն վրայով ։

1 Տէրը Մովսէսին Սի- 1491
2 նայ լեռը՝ ըսելով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ անոնց . Երբոր ան երկիրը մտնէք՝ որն որ ես ձեզ պիտի տամ , ան երկիրը թող
ու Հանդստութեան շաբաթ մը պա-
3 հէ Տէրոջը ։ Վեց տարի քու արտդ պիտի ցանես , և քու այդիդ վեց տարի յօտես , ու անոր արդիւնքը
4 ժողվես . Բայց եօթներորդ տարին երկրին համար Հանդստութեան շաբաթ , այսինքն՝ Տէրոջը համար շաբաթ ըլլայ . քու արտդ պիտի չցանես , և քու այդիդ չյօտես .
5 Ի քու ինքնիրմէ բուսածը պիտի չհնձես և քու չյօտած այգիիդ խաղողները չժողվես . Հանդստութեան տարի ըլլայ ան երկ-
6 րին ։ Եւ երկրին շաբաթը ձեզի կերակուր պիտի ըլլայ , քեզի և քու ծառայիդ և քու աղախինիդ ու քու վարձկանիդ՝ և քու բովդ
7 պանդխտացած օտարականիդ . Եւ քու անասուններուդ ու քու երկրիդ մէջ եղած կենդանիներուն կերակուր ըլլայ անոր բոլոր արդիւնքը ։
8 Եւ դուն քեզի տարիներու եօթը շաբաթ պիտի համրես , այսինքն եօթը անգամ եօթը տարի . ու տարիներուն եօթը շաբաթներուն ժամանակը քառասունհինգ տարի պի-
9 տի ըլլան քեզի ։ Եւ եօթներորդ ամսուն տասներորդ օրը աղդարարութեան փողը պիտի հնչեցնես , Ի քաւութեան օրը ձեր բոլոր երկրին
10 մէջ պիտի հնչեցնէք փողը ։ Եւ յիսուներորդ տարին պիտի սրբէք , ու երկրի վրայ անոր բոլոր բնակիչներուն համար Ի աղատութիւն քարոզ կարդալ տաք . ասիկայ ձեզի Յոբելեան պիտի ըլլայ . Եւ ձեզի ամէն մէկը իր ստացուածքին պիտի դառնայ , ու ձեզմէ ամէն մէկը իր
11 ազգատոհմին դառնայ ։ Ան յիսուներորդ տարին Յոբելեան տարի ըլլայ ձեզի . Ոչ պիտի ցանէք , ոչ ալ ինքնիրմէ բուսածը պիտի հնձէք , և ձեր չյօտած այգիէն պիտի
12 չժողվէք . Ինչու որ Յոբելեան Ի է , ան ձեզի սուրբ պիտի ըլլայ . Ի արտէն անոր արդիւնքը պիտի ու-
13 տէք ։ Ե Յոբելեան տարին՝ ձեզ-

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին Սինայի լեռը՝ ըսելով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ անոնց . Երբոր ան երկիրը մտնէք՝ որն որ ես ձեզի պիտի տամ , ան երկիրը թող
ու Հանդստութեան շաբաթ մը պա-
2 հէ Տէրոջը ։ Վեց տարի քու արտդ պիտի ցանես , և քու այդիդ վեց տարի յօտես , ու անոր արդիւնքը
3 ժողվես . Բայց եօթներորդ տարին երկրին համար Հանդստութեան շաբաթ , այսինքն՝ Տէրոջը համար շաբաթ ըլլայ . քու արտդ պիտի չցանես , և քու այդիդ չյօտես .
4 Ի քու արտիդ ինքնիրմէ բուսածը պիտի չհնձես և քու չյօտած այգիիդ խաղողները չժողվես . Հանդստութեան տարի ըլլայ ան երկ-
5 րին ։ Եւ երկրին շաբաթը ձեզի կերակուր պիտի ըլլայ , քեզի և քու ծառայիդ և քու աղախինիդ ու քու վարձկանիդ՝ և քու բովդ
6 պանդխտացած օտարականիդ . Եւ քու անասուններուդ ու քու երկրիդ մէջ եղած կենդանիներուն կերակուր ըլլայ անոր բոլոր արդիւնքը ։
7 Եւ դուն քեզի տարիներու եօթը շաբաթ պիտի համրես , այսինքն եօթը անգամ եօթը տարի . ու տարիներուն եօթը շաբաթներուն ժամանակը քառասունհինգ տարի պի-
8 տի ըլլան քեզի ։ Եւ եօթներորդ ամսուն տասներորդ օրը աղդարարութեան փողը պիտի հնչեցնես , Ի քաւութեան օրը ձեր բոլոր երկրին
9 մէջ պիտի հնչեցնէք փողը ։ Եւ յիսուներորդ տարին պիտի սրբէք , ու երկրի վրայ անոր բոլոր բնակիչներուն համար Ի աղատութիւն քարոզ կարդալ տաք . ասիկայ ձեզի Յոբելեան պիտի ըլլայ . Եւ ձեզի ամէն մէկը իր ստացուածքին պիտի դառնայ , ու ձեզմէ ամէն մէկը իր
10 ազգատոհմին դառնայ ։ Ան յիսուներորդ տարին Յոբելեան տարի ըլլայ ձեզի . Ոչ պիտի ցանէք , ոչ ալ ինքնիրմէ բուսածը պիտի հնձէք , և ձեր չյօտած այգիէն պիտի
11 չժողվէք . Ինչու որ Յոբելեան Ի է , ան ձեզի սուրբ պիտի ըլլայ . Ի արտէն անոր արդիւնքը պիտի ու-
12 տէք ։ Ե Յոբելեան տարին՝ ձեզ-

Ե Ելք · ժե · 3 · Ղե · ժե · 1 · Թու · ժ · 10 · Ա Մն · ժ · 4 · Ա Պտ · ե · 10 ։

Ի Ելք · իգ · 10 · Ես · ժԼ · Ժէ · 34 · 35 · Բ Մն · ԼՂ · 21 ։

Բ Գթագ · ժԹ · 29 · * Եբր · հունձքիդ

Ե Ելք · իգ · 24 · 27 ։

Դ Ես · կ · 2 · կգ · 4 · Երեմ · լդ · 8 · 15 · 17 · Ղե · դ · 19 · Ի Հմր 13 · Թու · ԼՂ · 4 ։

Ղ Հմր 5 ։

Ի Հմր 6 · 7 · Ը Հմր 10 · ԳԼ · իե · 24 · Թու · ԼՂ · 4 ։

Ն · ք · ՂՓ · 1491

մէ ամէն մկը իր ստացուածքին պիտի դառնայ ։

14 Եւ թէ որ քու դրացիդ բան մը ծախելու ըլլաս , կամ քու դրացիդէ ձեռքէն ծախու առնելու ըլլաս , [a] մէ՛ղմ մկը իր ընկերին անիրաւու-

15 թիւն պիտի չընէ ։ [b] Ցօրելեան տա-րիէն ետքը եղած տարիներուն հա-շիւովը ծախու պիտի առնես քու դրացիդդ , անիկայ ալ արդիւնքին տարիներուն հաշիւովը պիտի ծախէ

16 քեզի ։ Տարիներուն չատութեանը նայելով՝ պիտի աւելցընես անոր գի-նը , և տարիներուն քիչութեանը նայելով՝ պիտի պակսեցընես անոր գինը . ինչու որ անիկայ արդիւնք

17 քին հաշիւովը կը ծախէ քեզի ։ Եւ [c] մէ՛ղմ մկը իր ընկերին անիրաւու-թիւն պիտի չընէ , Նու քու Աս-տուծմդ պիտի վախնաս . ինչու որ ես եմ Տէրը ձեր Աստուածը ։

18 Ե՛ւ իմ կանոններս պիտի ընէք , ու իմ դատաստաններս պահէք՝ և ընէք անոնք . [d] ու ան երկրին մէջ ապահովութեամբ պիտի բնակիք ։

23 Ամէն՝ ամէն : Եւ քահանան աս
անէծքները գիրքի մը մէջ պիտի
գրէ , ու ան լեղի ջրովը պիտի
24 աւրէ : Եւ անէծքին լեղի ջուրը
ան կնկանը պիտի խմցընէ . ու
անէծքին լեղի ջուրը անոր ներսի
դին պիտի երթայ՝ լեղի ըլլը-
25 համար : Եւ քահանան կնկանը
ձեռքէն նախանձաւորութեան ըն-
ծան պիտի առնէ , ու Տէրոջը առ-
ջևը Ի երեցընէ ընծան , և սեղանին
26 մօտեցընէ ան : Ղեւ քահանան ըն-
ծայէն՝ իր ձեռքը լեցուն պիտի առ-
նէ յիշատակի համար , ու սեղա-
նին վրայ պիտի այրէ ան . ու ետ-
քը ան ջուրը կնկանը պիտի խմցը-
27 նէ : Եւ ջուրը անոր խմցընելէն
ետև՝ թէ որ անիկայ պղծուած է ,
ու իր էրկանը անհաւատարմու-
թիւն ըրած է , անէծքին ջուրը
լեղի ըլլալով՝ երբոր մտնէ անոր
ներսի դին , անոր փորը պիտի ու-
ռենայ , ու անոր զիստը * փտի , և
կնիկը ֆ իր ժողովուրդին մէջը անի-
28 ծաւ պիտի ըլլայ : Իսկ թէ որ կնի-
կը պղծուած չըլլալով՝ մաքուր է ,
ինաս պիտի չկրէ , ու զաւակ պիտի
29 ծնանի : Նախանձաւորութեան
օրէնքը աս է , երբոր կնիկ մը Ի իր
էրկանը անհաւատարմութիւն ընէ-
30 լով՝ պղծուի , կամ երբոր մարդու
մը վրայ նախանձաւորութեան ոգի
գայ՝ ու իր կնկանը վրայ նախանձի ,
Տէրոջը առջևը պիտի կայնեցընէ
կնիկը , և քահանան կատարէ աս
31 բոլոր օրէնքը անոր վրայ . Եւ ան
մարդը ազատ պիտի ըլլայ յանցան-
քէն , և կնիկը Ի իր յանցանքին
պատիժը պիտի կրէ :

Գ Լ · Զ

1 Ուխտաւորներուն կանոնը : 22 Ժողովուրդը օրհնելու կերպը :

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե-
2 լով . Խօսէ Խորայէլի որդւոցը՝

* ԵԲէր · Խյ-նայ ,
ֆ ր Օր · իը · 37 : Սպ · ձդ · 9 , 11 : Երեմ · իդ · 9 : իԹ · 18 , 22 : խր · 18 : Զաք · ը · 13 :
ՀՀԺր 19 :

Ե գ Թագ · ժէ · 18 : Ե գէկ · իԹ · 16 :

Ն · Ք · ԳՔ · 1490

ու ըսէ անոնց . Թէ որ մարդ մը կամ կնիկ մը ՝ ինչքինքը Տէրոջը նուիրելու համար ուխտաւորի մեծ
3 ուխտ ընելու ըլլայ . Բ գինիէն և օղիէն պիտի զգուշանայ . գինիի քացախ կամ օղիի քացախ պիտի չխմէ , և խաղողի օշարակ չխմէ , ու խաղող կամ չամիչ պիտի չուտէ .
4 տէ ։ Ինքզինքը նուիրելուն բոլոր օրերը՝ որթէն եղած բան մը պիտի չուտէ , կուտերէն մինչև
5 կեղեւը ։ Ինքզինքը նուիրելու ուխտին բոլոր օրերը՝ իր գլխուն ածելի չպըղնէ . մինչև ինքզինքը Տէրոջը նուիրած օրերուն լըլլննալը՝ ինքը սուրբ պիտի ըլլայ . Ե իր գլխուն մազերուն վարսրը թող տայ
6 որ աճի ։ Ինքզինքը Տէրոջը նուիրած բոլոր օրերը՝ Բ մեռած մարմնի
7 մը պիտի չմօտենայ . Է իր հօրը համար կամ մօրը համար՝ իր եղբօրը կամ իր քրոջը համար՝ ինքզինքը պիտի չպղծէ . Երբոր անոնք մեռնին . ինչու որ իր Աստուծոյն
8 * ուխտը իր գլխուն վրան է . ինքզինքը նուիրելուն բոլոր օրերը ինքը
9 սուրբ է Տէրոջը ։ Եւ թէ որ իր քովը յանկարծ մարդ մը մեռնի , ու իր նուիրած գլուխը պղծուի , իր մաքրուելու օրը պիտի գլուխը պիտի ածիլէ . Է օրինէրորդ օրը ածիլէ ան .
10 Եւ Է ութերորդ օրը ծուղակի իր երկու տատրակ կամ աղաւնիի երկու ձագ պիտի բերէ
11 քահանային ։ Եւ քահանան մէկը մեղքի պատարագ՝ ու մէկալը ողջակէզ պիտի մատուցանէ , և մեռելին պատճառովը Լզած մեղքին համար քաւութիւն պիտի ընէ անոր . ու նոյն օրը պիտի սրբէ անոր գլուխը ։
12 Եւ իր ուխտին օրերը Տէրոջը պիտի նուիրէ , ու Է յանցանքի պատարագի համար մէկ տարեկան դառնուկ մը պիտի բերէ . և առջի օրերը պիտի չհամրուին , ինչու որ իր ուխտը պղծուեցաւ ։
13 Եւ ուխտաւորին օրէնքը ասէ . Երբոր ինքզինքը նուիրելուն օրերը լրննայ , անիկայ ժողովքի խորա-
14 նին դուռը պիտի բերուի . Եւ իր ղոհը Տէրոջը պիտի մատուցանէ , մէկ տարեկան անարատ արու գառնուկ մը ողջակէզի համար , ու մէկ տարեկան անարատ էգ գառնուկ մը Բ մեղքի պատարագի համար , և մէկ անարատ խոյ մը Է խաղաղութեան
15 զոհի համար . Եւ սակառ մը Լբարկ ալեւրէ եղով շաղուած անխմոր չօթեր , ու Է եղով օծուած անխմոր լաւաչներ , և անոնց հացի ընծան ու Բ թափելու նուէրը պէտ
16 * հատուցանէ ։ Եւ քահանան անոր մեղքի պատարագը ու անոր ողջակէզը Տէրոջը առջեւը մատուցընելով՝
17 պիտի մատուցանէ ։ Եւ խոյը՝ խաղաղութեան զոհ պիտի մատուցանէ Տէրոջը՝ անխմոր հացին սակառովը . ու քահանան անոր հացի ընծան ու թափելու նուէրը պիտի մատուցա-
18 նէ ։ Եւ ուխտաւորը իր նուիրած գլուխը պիտի ածիլէ ժողովքի խորանին դուռը . ու իր նուիրած գլուխն ալ մաղը պիտի առնէ՝ և խաղաղութեան զոհին տակը եղած կրա-
19 կին մէջը դնէ ։ Եւ քահանան խոյէն՝ Հեփած թեւը , և սակառէն՝ մէկ անխմոր չօթ ու մէկ անխմոր լաւաչ պիտի առնէ , և Յուխտաւորին ձեռքերուն վրայ դնէ՝ մազերը ա-
20 ծիլուելէն ետքը . Եւ քահանան ետրերդընելու ընծայ պիտի մատուցանէ զանոնք Տէրոջը առջեւը . Հասոնք երերցընելու երբուծով՝ ու բարձրացընելու պիտովՙ քահանային համար սուրբ են . և անկէ ետև ուխտաւորը գինի խմէ ։
21 Ուխտաւորի մը ** անոր նուիրուելուն համար Տէրոջը խոստացած իր ընծային օրէնքը ասէ , իր ձեռքը հասածէն ի զատ . անիկայ իր ըրած խոստմունքը իր նուիրուելուն օրէնքովը պիտի կատարէ ։
22 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
23 սելով . Խօսէ Ահարոնին ու անոր որդւոցը՝ և ըսէ . Ը յպսակս Իպիտի օրհնէք Իսրայէլի որդիքը՝ ըսելով
24 անոնց . Տէրը օրհնէ քեզ , և Յ պահէ
25 քեզ . Տէրը Յ պայծառացընէ իր երեսը քու վրադ , ու Ն ողորմի քեզի .
26 ւ Տէրը իր երեսը քու վրադ վերցընէ , և
27 * և խաղաղութիւն տայ քեզի ։ Եւ իմ անունս Իսրայէլի որդւոցը վրայ պիտի դնեն , ու Ես պիտի օրհնեմ զանոնք ։

ԳԼ · Է

1 Ի խանձարուրն ընծաները խորանին նուիրման Հանդէսին համար ։ 10 Սեղանին նուիրման Հանդէսին համար մատուցուած ընծաները ։ 89 Աստուած քաւութիւնին վրայէն Մովսէսին հետ կը խօսի ։

1 Ա յս եղաւ որ՝ ան օրը որ Մովսէս
— լմընցուց խորանը կանգնելը , և զանիկայ ու անոր բոլոր անօթները օծեց ու սրբեց , և սեղանը ու անոր
բոլոր գործիքները օծեց . ու զանոնք
2 սրբեց , Ըն առին Բ Իսրայէլի իշխանները՝ իրենց հայրերուն տանը գլուխները՝ Թուաբերին համրուելուն վրայ վերակացու եղող ցեղերուն իշխանները ընծաներ տուին ։
3 Եւ բերին իրենց ընծաները Տէրոջը առջեւը . վեց ծածկուած սայլեր՝ և տասուերկու եզներ . ամէն երկու իշխանները մէկ սայլ և ամէն մէկը մէկ մէկ եզ և մօտեցուցին զանոնք
4 խորանին առջեւը ։ Եւ Տէրը խօ-

Ն · Ք · ԳՔ · 1490

ա Գոր · իա · 24 ։

— Եւ · Ս · 16 ։ Ղա · Բ · 10 · 11 ։

Բ Գլ · ա · 4 · Ճ ։

— Ղա · իէ · 2 ։ Գաս · ժգ · 5 ։ Գոր · իա · 23 ։ Հռով · ա · 1 ։
Բ Ա՛մվ · Բ · 12 ։ Ղա · ա · 15 ։
ե Գաս · ժգ · 5 ։ ժգ · 17 ։ աթագ · ա · 11 ։
Բ Ղա · իա · 11 ։ Գլ · ՃԹ · 11 · 16 ։
Է Ղա · իա · 1 · 2 · 11 ։ Գլ · Թ · 6 ։
*Եբր · Նուիրուելը
Ղ Գոր · ԺԸ · 18 ։ իա · 24 ։
Է Ղա · ե · 7 · ժգ · 22 ։ ժե · 14 · 29 ։
Ը Ղա · ե · 6 ։
Ը Գոր · իա · 26 ։
ժ Ղա · գ · 2 · 27 · 32 ։
Է Ղա · գ · 6 ։ Ղ Ղա · Բ · 4 ։
Է Եզ · ԼԹ · 2 ։
ժ Գլ · ժե · 5 · 7 · 10 ։

Ն·ք·ՂՖ· 1490

5 սեղաւս մովսէսին՝ ըսելով. Անոնցմէ առ՝ ու Ղևտացւոց տուր ատոնք՝ ամէն մէկուն իր պաշտօնին նայելով, որ ժողովքի խորանին պաշտօնին
6 մէջ գործածուին։ Եւ Մովսէս առաւ սպյները ու ևզները, ու զանոնք
7 Ղևտացւոց տուաւ։ Երկու սպյը ու չորս եզը Գերսոնի որդւոցը տուաւ՝ անոնց պաշտօնին նայելով.
8 Եւ չորս սպյը ու ութը եզը Մերարիի որդւոցը տուաւ, Ահարոն քահանային որդւոյն Իթամարին վերակացութեամբը եղած անոնց
9 պաշտօնին նայելով։ Բայց Կահաթի որդւոցը չտուաւ. ինչու որ Սրբարանին պաշտօնը անոնց վրայ ըլլալով, իրենց ուսերովը պիտի վերցընէին։
10 Եւ սեղանին օծուած օրը՝ ետնոր նուիրման հանդիսին համար իշխանները ընծաներ տուին. և իշխանները իրենց ընծաները սեղանին
11 առջևը մատուցին։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսին. Սեղանին նուիրման հանդիսին համար՝ ամէն մէկ իշխան մէկ մէկ օր իրենց ընծաները մատուցանեն։
12 Եւ առաջին օրը իր ընծան մատուցանողը՝ Յուդայի ցեղին Էհոնը Ամինադաբին որդին Նաասոնն էր։
13 Եւ ան որ ընծան. ժ սրբարանին սիկղին համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շաղուած
14 բարակ ալիւրով, Տասը ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն,
15 Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ ան մէկ տարեկան մէկ գառն ողջակէզին համար,
16 մը, Այծերէն մէկ նոխազ՝ մեղքին
17 քի պատարագի համար, Եւ հաղորդութեան զոհի համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ տարեկան գառնիք. Ամինադաբին որդւոյն Նաասոնին ընծան աս էր։
18 Երկրորդ օրը մատուցանողը՝ Իսաքարի իշխանը Սողզարին որդին
19 Նաթանայէլն էր։ Անոր մատուցած ընծան ան էր. սրբարանին սիկղին համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շաղուած
20 բարակ ալիւրով, Տասը ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն,
21 Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի համար,
22 Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, Եւ հաղորդութեան զոհի համար երկու արջառ՝

Ն·ք·ՂՖ· 1490

հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ տարեկան գառնիք. Սողզարին որդւոյն Նաթանայէլին ընծան աս էր։
24 Երրորդ օրը մատուցանողը՝ Զաբուղոնի որդւոց իշխանը Քելոնին
25 որդին Եղիաբն էր։ Անոր ընծան ան էր. սրբարանին սիկղին համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շաղուած բարակ ալիւրով,
26 Տասը ոսկիէ մէկ խնկաման
27 խունկով լեցուն, Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն
28 ողջակէզի համար, Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար,
29 Եւ հաղորդութեան զոհի համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ տարեկան գառնիք. Քելոնին որդւոյն Եղիաբին ընծան աս էր։
30 Չորրորդ օրը մատուցանողը՝ Ռուբենի որդւոց իշխանը Սեդիւրին
31 որդին Եղիսուր էր։ Անոր ընծան ան էր. սրբարանին սիկղին համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շաղուած բարակ ալիւրով,
32 Տասը ոսկիէ մէկ խնկաման
33 խունկով լեցուն, Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն
34 ողջակէզի համար, Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար,
35 Եւ հաղորդութեան զոհի համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ տարեկան գառնիք. Սեդիւրին որդւոյն Եղիսուրին ընծան աս էր։
36 Հինգերորդ օրը մատուցանողը՝ Շիմէոնի որդւոց իշխանը Սուրիսադային որդին Սաղամիէլն էր։
37 Անոր ընծան ան էր. սրբարանին սիկղին համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շաղուած
38 բարակ ալիւրով, Տասը ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն,
39 Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի համար
40 մը, Այծերէն մէկ նոխազ մեղքի
41 քի պատարագի համար, Եւ հաղորդութեան զոհի համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ տարեկան գառնիք. Սուրիսադային որդւոյն Սաղամիէլին ընծան աս էր։
42 Վեցերորդ օրը մատուցանողը՝ Գա-

Ն.Ք.ՉԲ. 1490

դի որդւոց իշխանը Դագուէլին որ-
43 դին Եղեասափն էր : Անոր ընծան
՚՚ էր . սրբարանին սիկղին համե-
մատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ
արծաթ սկուտեղ , եօթանասուն
սիկղէ մէկ արծաթ կոնք , երկուքն
ալ լեցուն էին հացի ընծայի համար
եղով շաղուած բարակ ալիւրով ,
44 Ցասը ՚իկ ոսկիէ մէկ խնկաման ,
45 խունկով լեցուն , Մէկ զուարակ՝
մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն
46 ողջակէզի համար , Ա.յծերէն մէկ
նոխազ մեղքի պատարագի համար ,
47 Եւ խաղաղութեան զոհի համար
երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նո-
խազ՝ և հինգ հատ մէկ տարեկան
գառինք . Դագուէլին որդւոյն Ե-
ղիասափին ընծան աս էր :
48 Եօթներորդ օրը ֊ոթ֊ոյանոէ՝
Եփրեմի որդւոց իշխանը Ամիուդին
49 որդին Եղիսաման էր : Անոր ըն-
ծան ՚՚ էր . սրբարանին սիկղին
համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ
մէկ արծաթ սկուտեղ , եօթանա-
սուն սիկղէ մէկ արծաթ կոնք , եր-
կուքն ալ լեցուն էին հացի ընծայի
համար եղով շաղուած բարակ ա-
50 լիւրով , Ցասը ՚իկ ոսկիէ մէկ
51 խնկաման խունկով լեցուն , Մէկ
զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարե-
կան մէկ գառն ողջակէզի համար ,
52 Ա.յծերէն մէկ նոխազ մեղքի պա-
53 տարագի համար , Եւ խաղաղու-
թեան զոհի համար երկու արջառ՝
հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ
հատ մէկ տարեկան գառինք . Ա-
միուդին որդւոյն Եղիսամային ըն-
ծան աս էր :
54 Ութներորդ օրը ֊ոթ֊ոյանոէ՝
Մանասէի որդւոց իշխանը Փադա-
սուրին որդին Գամաղիէլն էր :
55 Անոր ընծան ՚՚ էր . սրբարանին
սիկղին համեմատ՝ հարիւր երսուն
սիկղէ մէկ արծաթ սկուտեղ , եօ-
թանասուն սիկղէ մէկ արծաթ
կոնք , երկուքն ալ լեցուն էին հա-
ցի ընծայի համար եղով շաղուած
56 բարակ ալիւրով , Ցասը ՚իկ ոսկիէ
մէկ խնկաման խունկով լեցուն ,
57 Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ
տարեկան մէկ գառն ողջակէզի հա-
58 մար , Ա.յծերէն մէկ նոխազ մեղքի
59 պատարագի համար , Եւ խաղա-
ղութեան զոհի համար երկու ար-
ջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և
հինգ հատ մէկ տարեկան գառինք .
Փադասուրին որդւոյն Գամաղիէլին
ընծան աս էր :
60 Իններորդ օրը ֊ոթ֊ոյանոէ՝ Բե-
նիամինի որդւոց իշխանը Գեդէօ-
61 նիին որդին Աբիդանն էր : Անոր
ընծան ՚՚ էր . սրբարանին սիկղին
համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ

Ն.Ք.ՉԲ. 1490

մէկ արծաթ սկուտեղ , եօթանա-
սուն սիկղէ մէկ արծաթ կոնք , եր-
կուքն ալ լեցուն էին հացի ընծայի
համար եղով շաղուած բարակ ա-
62 լիւրով , Ցասը ՚իկ ոսկիէ մէկ
63 խնկաման խունկով լեցուն , Մէկ
զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան
64 մէկ գառն ողջակէզի համար , Ա.յ-
ծերէն մէկ նոխազ մեղքի պատա-
65 րագի համար , Եւ խաղաղութեան
զոհի համար երկու արջառ՝ հինգ
խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ
տարեկան գառինք . Գեդէօնիին
որդւոյն Աբիդանին ընծան աս էր :
66 Ցաներորդ օրը ֊ոթ֊ոյանոէ՝
Դանի որդւոց իշխանը Ամիսադային
67 որդին Աքիեզերն էր : Անոր ըն-
ծան ՚՚ էր . սրբարանին սիկղին
համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ
մէկ արծաթ սկուտեղ , եօթանա-
սուն սիկղէ մէկ արծաթ կոնք , եր-
կուքն ալ լեցուն էին հացի ընծայի
համար եղով շաղուած բարակ ա-
68 լիւրով , Ցասը ՚իկ ոսկիէ մէկ
69 խնկաման խունկով լեցուն , Մէկ
զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան
70 մէկ գառն ողջակէզի համար, Ա.յծե-
րէն մէկ նոխազ մեղքի պատարա-
71 գի համար , Եւ խաղաղութեան
զոհի համար երկու արջառ՝ հինգ
խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ
տարեկան գառինք . Ամիսադային
որդւոյն Աքիեզերին ընծան աս էր :
72 Մետասաներորդ օրը ֊ոթ֊ոյանո-
էն՝ Աասրի որդւոց իշխանը Եքրանին
73 որդին Փագիէլն էր : Անոր ընծան
՚՚ էր . սրբարանին սիկղին համե-
մատ՝ հարիւր երսուն սիկղէ մէկ
արծաթ սկուտեղ , եօթանասուն
սիկղէ մէկ արծաթ կոնք , երկուքն
ալ լեցուն էին հացի ընծայի համար
եղով շաղուած բարակ ալիւրով ,
74 Ցասը ՚իկ ոսկիէ մէկ խնկաման
75 խունկով լեցուն , Մէկ զուարակ՝
մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն
76 ողջակէզի համար , Ա.յծերէն մէկ
նոխազ մեղքի պատարագի համար ,
77 Եւ խաղաղութեան զոհի համար
երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ
նոխազ՝ և հինգ հատ մէկ տարեկան
գառինք . Եքրանին որդւոյն Փա-
գիէլին ընծան աս էր :
78 Երկոտասաներորդ օրը ֊ոթ֊ոյա-
նոէ՝ Նեփթաղիմի որդւոց իշխանը
79 Ենանին որդին Աքիրէն էր : Անոր
ընծան ՚՚ էր . սրբարանին սիկղին
համեմատ՝ հարիւր երսուն սիկղէ
մէկ արծաթ սկուտեղ , եօթանա-
սուն սիկղէ մէկ արծաթ կոնք ,
երկուքն ալ լեցուն էին հացի
ընծայի համար եղով շաղուած բա-
80 րակ ալիւրով , Ցասը ՚իկ ոսկիէ մէկ
81 խնկաման խունկով լեցուն , Մէկ

Ն·Ք·ԶԲ· 1490

զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան
82 մէկ զաւն ողջակէզի համար , Ա-
ծերէն մէկ նոխազ մեղքի պատա-
83 րաժի համար , Եւ խաղաղութեան
զոհի համար երկու արջառ՝ հինգ
խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ տարի մէկ
տարեկան գառնիք . Ենանին որ-
դւոյն Ափրիէին ընծան աս էր ։
84 Սէգանին օծուած օրը՝ անոր
նուիրման հանդէսին համար Իս-
րայէլի իշխաններէն ԽՒԲ-ԷՐԵՑ
ընդ-ԽԵՐԵՑ ասոնք էին . տասուերկու
արծաթի սկուտեղ՝ տասուերկու
արծաթի կոնք , ու տասուերկու
85 ոսկի խնկաման , Ամէն մէկ արծաթի
սկուտեղը հարիւր երսուն ԽԻԼԻՔ՝ և
ամէն մէկ կոնքը եօթանասուն ԽԻԼԻ
էր . ԽԻ ամաններուն բոլոր արծաթը
երկու հազար չորս հարիւր ԽԻԼԻ էր ,
86 սրբարանին սիկղին համեմատ . Ոս-
կեղէնէ տասուերկու ոսկի խնկաման
լեցուն , ամէն մէկ խնկամանը
սրբարանին սիկղին համեմատ՝
տասնական ԽԻԼ ԸՆԾԻՎ , խնկա-
մաններուն բոլոր ոսկին հարիւր
87 քսան ԽԻԼ էր ։ Ողջակէզի համար
բոլոր արջառները տասուերկու
զուարակ , խոյերը տասուերկու ,
մէկ տարեկան գառնիքը տասուեր-
կու էին , իրենց հացի ընծայովը .
և մեղքի պատարագի համար այծե-
88 րէն նոխազները տասուերկու . Եւ
խաղաղութեան զոհի համար բոլոր
արջառները քսանուչորս զուարակ
էին , խոյերը վաթսուն , նոխազները
վաթսուն , և մէկ տարեկան գա-
ռնիքը վաթսուն էին ։ Ա՛ս էր սե-
ղանին նուիրման հանդէսը՝ անոր
հօծուելէն ետքը ։
89 Եւ երբոր Մովսէս ժողովքի խո-
րանը կը մտնէր Ինոր հետ խօսե-
լու , ան ատենը ղրկին խօսողին
ձայնը՝ վկայութեան տապանակին
վրայ եղած քաւութիւնին վրայէն՝
երկու քերովբէներուն մէջտեղէն
կը լսէր , ու ինքը Անոր հետ կը
խօսէր ։

ԳԼ· Ը

1 ձրագները վառելուն կերպը ։ 5 Ղեւտացւոց նուիրուիլը ։ 23 Անոնց պաշտօն կատարելու համար որոշուած հասակը ։

1 Յե Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըս-
2 լով . Խօսէ Ահարոնին՝ ու ըսէ
անոր . Երբոր ձրագները վառես ,
եօթը ճրագները աջտանակին առ-
3 ջեւի կողմին լոյս պիտի տան ։ Եւ
Ահարոն անանկ ըրաւ . անոր ճրագ-
ները աջտանակին առջեւի կողմին վա-
ռեց , ինչպէս որ Տէրը Մովսէսին
4 պատուիրեց ։ Բ Եւ աջտանակին
շինվքը սա՛նկ էր , *կռածոյ ոսկիէ
էր . անոր բունէն մինչև անոր ծա-
ղիկները †կռածոյ էր . ՚Տէրոջը
Մովսէսին ցուցուցած դաղափարին
պէս՝ անանկ շինեց աջտանակը ։
5 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
6 սելով . Իսրայէլի որդւոցը մէջէն
Ղեւտացիները առ , ու մաքրէ ա-
7 նոնք ։ Եւ անոնք մաքրելու համար
սա՛նկ պիտի ընես անոնց . Բ Մաք-
րութեան ջուր սրսկես անոնց վրայ ,
ու Ա-ՌԱՔ իրենց բոլոր մարմիննե-
րը թող ածիլեն , և իրենց հան-
դերձները լուան՝ ու մաքրուին ։
8 Ետքը զուարակ մը թող առնեն ու
Բ անոր հացի ընծային համար եղով
շաղուած բարակ ալիւր . դուն ալ
ուրիշ զուարակ մը պիտի առնես
9 մեղքի պատարագի համար ։ ԷՈւ
Ղեւտացիները ժողովքի խորանին
առջեւը պիտի մօտեցընես . Ւ և Իս-
րայէլի որդւոցը բոլոր ժողովքը
10 ժողվես ։ Ու Ղեւտացիները Տէրո-
ջը առջեւը պիտի մօտեցընես , ու
Իսրայէլի որդիքը Ժ իրենց ձեռքերը
11 Ղեւտացւոց վրայ դնեն ։ Եւ Ահա-
րոն Իսրայէլի որդւոցը կողմէն՝ Ղե-
ւտացիները Տէրոջը առջեւը †ընծայ
պիտի մատուցանէ՝ . և անոնք Տէ-
րոջը պաշտօնը կատարելու համար
12 ըլլան ։ Բ Ու Ղեւտացիք իրենց ձեռ-
քերը զուարակներուն գլխուն վրայ
պիտի դնեն . ու Ղեւտացւոց քա-
ւութիւն ընելու համար՝ մէկ զո-
ղ մեղքի պատարագ՝ ու մէկալը
ողջակէզ պիտի մատուցանես Տէ-
13 րոջը ։ Եւ Ղեւտացիները Ահարոնին
ու անոր որդւոցը առջեւը պիտի
կայնեցընես , ու զանոնք ընծայ մա-
14 տուցանես Տէրոջը ։ Այսպէս պի-
տի զատես Ղեւտացիները Իսրայէլի
որդւոցը մէջէն , ու Ղեւտացիները
15 Ինձի պիտի ըլլան ։ Եւ անկէ ետև
Ղեւտացիները ժողովքի խորանին
գործը ընելու պիտի մտնեն ։ Այս-
պէս պիտի մաքրես անոնք , և Բնա-
16 ծայ մատուցանես անոնք . Քան-
զի անոնք բոլորովին ինծի տրուած
են Իսրայէլի որդւոցը մէջէն ։ Ես
Իսրայէլի որդւոցը մէջ Ժ մօրը արգան-
դը բացող բոլոր առջինեկներուն
17 տեղը ինծի առի անոնք ։ Ինչու-
որ Իսրայէլի որդւոցը բոլոր առջի-
նեկները , թէ մարդու և թէ անա-
սունի , իմն են . Եգիպտոսի երկ-
րին մէջ բոլոր առջինեկները զար-
կած օրէս՝ զանոնք սրբեցի ինծի
18 համար ։ Եւ Իսրայէլի որդւոցը բո-
լոր առջինեկներուն տեղը Ղեւտա-
19 յիները առի ։ Եւ Իսրայէլի որ-
դւոցը մէջէն Ղեւտացիները բոլորո-
վին Ահարոնին ու անոր որդւոցը
տուի , որ ժողովքի խորանին մէջը
Իսրայէլի որդւոցը պաշտօնը ընեն ,
և Իսրայէլի որդւոց համար քաւու-
թիւն ընեն , Որ Իսրայէլի որդւոց-

Ն·Ք·ԶԲ· 1490

Ե Գլ· ԺԲ· 9, 17, 18 ։
† ԵՔԲ· մեզ-
դաց , կամ մեղքի պա-
տարագի ։
Ղ Ղե· Ժդ· 8, 9 ։
Բ Ղե· բ· 1 ։
Ը Տե՛ս Եզ-
ԽԹ· 4, Ես-
12 ։
Բ Ղե· ը· 3ա
ԺՂե· ա· 4 ։
‡ ԵՔԲ· երեք-
ցրնելու բա-
ծայ պիտի
կերերցնէ ։
Ի Եզ· ԽԹ· 10 ։
Ե Գլ· գ· 45ա
Ժդ· 9 ։
Ի Հմ· 11, 13ա
Ժ Գլ· գ· 12, 45 ։
Ի Եզ· Ժդ· 2, 12, 13, 15 ։
Գլ· գ· 13 ։
Ղա· բ· 23 ։
Հ Գլ· գ· 9ա
Յ Գլ· ա· 53 ։
Ժդ· 46, Ժբ· 5, Ա Մն· իդ· 16 ։

Ե Եզ· ԽԹ· 31 ։
* Պ՚՝ ճա-
խարակեայ
† Եզ· ԽԹ· 18 ։
՚ Եզ· ԽԹ· 40 ։

ՆՈՄ. ԳՖ. 1490

ՐԵՐ. Ա. 53։

ՂԵՒ. ԺԸ. 1, ԸԸ։ ԴԱ. Ի Գ. 5։ ԳԱ. ԻՐ. 16։ Ր Օր. Ժ Ա. 1, 2։

ԲԵԼ. ԺԸ. 6։

ՖՁՁ. 10։

ՆՈՄ. ԳՖ. 1490

ՖՀՄՐ 7։

ՖՀՄՐ 11, 12։

ՖՀՄՐ 15։

ՖՀՄՐ 5, ԸԸ։

ՆՏՆ. ԳԼ. Դ. 3։ ա ՄՆ. Իգ. 3, 24, 27։

ՂԵՒ. Ա. 53։

ԳԼ. Թ

1 Երկրորդ տարին Նորէն զատիկը ընել կը պատուիրուի։ 6 Ընմարուր եղդները ու գուրս տեղ դանուղները երկրորդ ամսուն մէջ պիտի ընեին զատիկը։ 15 Իսրայէլացիք ամպին առջեւն չդոլեմբերը կը լուէին՝ ու իջեան կ'ընէին։

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին Սինայի անապատին մէջ՝ անոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարին առջի ամսուն մէջ՝

2 ըսելով . Իսրայէլի որդիքը թո՛ղ իր որոշուած ժամանակին Զատիկ ընեն

3 զատիկը ։ Ա՛ս ամսուն չորեքտասաներորդ օրը Բ իրիկուան դէմ պիտի ընէ՛ք զան՝ իր որոշուած ժամանակին . անոր բոլոր կանոններուն ու անոր բոլոր սովորութիւններուն համեմատ պիտի ընէ՛ք զանիկա ։

4 Ներ ան ։ Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդւոցը՝ որ զատիկը ընեն ։

5 Նոյն ։ Ու անոնք հառաջին ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ զատիկը ընին Սինայի անապատին մէջ . Տէրոջը Մովսէսին բոլոր պատուիրածին պէս՝ Իսրայէլի որդիքը անանկ ընին ։

6 Եւ կային ոմանք՝ որ Ը մարդու մեռելէ պղծուած ըլլալով , ան օրը չկրցան զատիկը ընել . եւ ան օրը Մովսէսին ու Ահարոնին առջեւը եկան ։ 7 Եւ ան մարդիկը ըսին անոր . Մենք մարդու մեռած մարմինէ պղծուած ենք . ինչու համար իսրայէլի որդւոցը մէջ Տէրոջը պատարագը իր որոշուած ժամանակին մատուցանելէն արգիլուի՞նք ։ Եւ Մովսէս ըսաւ անոնց . կեցէ՛ք՝ ու՞նայիմ Տէրը ինչ կը պատուիրէ ձեր վրայով ։

9 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
10 սելով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ . Թէ որ ձեզմէ կամ ձեր սերունդէն մէկը մեռած մարմինէ մը պղծուի , կամ հեռաւոր ճամբորդութեան մէջ ըլլայ , անիկայ ալ
11 զատիկը պիտի ընէ Տէրոջը . Երկրորդ ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ պիտի ընեն ան . Բաղարջով ու լեղի խոտերով պի-
12 տի ուտեն ան . Ի՛նկէ մինչեւ առտու բան մը պիտի չթողուն , ա՛ւ անկէ ոսկոր մը չկոտրեն . Հզատկին բոլոր կանոններուն համեմատ պի-
13 տի ընեն ան ։ Բայց թէ որ մարդու եղող՝ ու ճամբորդութեան մէջ չեղող մարդը զատիկը ընելը զանց ընէ , ան անձը Ւիր ժողովուրդին միջէն պիտի կորսուի . ինչու որ Տէրոջը պատարագը իր որոշուած ժամանակին չմատուց . ան մարդը Ծիր մեղքը պիտի կրէ ։
14 Եւ թէ որ օտարական մը ձեր մէջը պանդխտանայ , ու զատիկը ընելու ըլլայ Տէրոջը , զատիկն կանոնին և անոր սովորութեանը համեմատ պիտի ընէ ան . Թէ օտարականին՝ և թէ երկրին բնակին համար Ւմէկ կանոն պիտի ունենաք ։

15 Եւ հան օրը՝ որ խորանը կանգնուեցաւ , վկայութեան վրանին վրայովը ամպը պատեց խորանը . ու Ի իրիկունը մինչեւ առտուս խորանին վրայ կրակի երեւոյթով կը
16 կենար ։ Միշտ ասանկ էր . ցերեկը ամպը կը ծածկէր ան , և գիշերը
17 կրակին երեւոյթը ։ Ու երբոր ամպը Ւխորանէն կը վերնար , անկ ետեւ Իսրայէլի որդիքը կը չուէին . և ուր որ ամպը կը կենար , հոն Իս-
18 րայէլի որդիքը իջեան կ'ընէին ։ Տէրոջը հրամանովը Իսրայէլի որդիքը կը չուէին , և Տէրոջը հրամանովը իջեան կ'ընէին . Ժամը խորանին վրայ սրտի ատեն որ կը կենար , անոնք իրենց վրաններուն մէջ
19 կը մնային ։ Եւ երբոր ամպը շատ օրեր խորանին վրայ մնար , Իսրայէլի որդիքը ՃՏէրոջը պահպանութիւնը կը պահէին , ու չէին չուեր ։

ՆՈՄ. ԳՖ. 1490

ԲԳԼ. Ե. 2։ ԺԹ. 11-16։ ՏԵՎ ՃՕՏ. ԺԸ. 28։

Ե ԵՒ. ԺԸ. 15, 19, 26։ ԳԼ. ԻԿ. 2։

ՂԳԼ. ԻԿ. 5։ * ԵՀԲ. Մարիկ ընեմ

ՆՈՄ. Ա. 2, 15։

ԸԵԼ. ԺԲ. 8։

ՐԵԼ. ԺԲ. 10։

ԺԵԼ. ԺԲ. 46։ ՃՕՏ. ԺԹ. 36։

ԻԵԶ. ԺԲ. 43, ԸԸ։

ԼՆՕ. ԺԵ. 14։ ԵԼ. ԺԲ. 15։

Ե ՀՄՐ 7։

ԺԳԼ. Ե. 31։

ՀԵԼ. Խ. 34։ ՆԷՄ. Թ. 12, 19։ ՍԱՂ. ՀԸ. 1։

ՅԵԼ. ԺՃ. 21։ Խ. 38։

ՂԵԼ. Խ. 36։ ԳԼ. Ժ. 11, 33, 34։ ՍԱՂ. Ժ. 1։

ՀԱԿՐ. Ժ. 1։

ՃԳԼ. Ա. 53։ Ե. 8։

Ն · ՔՓ · ՂՓ · 1490

20 Նոյպէս ալ երրոր ամպը խորանին վրայ քիչ օր կենար . Տէրոջը հրամանին համեմատ իջևան կ'ընէին , ու Տէրոջը հրամանին համեմատ կը
21 չուէին : Նոյնպէս ալ երրոր ամպը իրիկունէ մինչև առտու մնար , առտուանդ ամպին վեր ելած ատեները կը չուէին . թէ ցորեկ ըլլար և թէ գիշեր՝ ամպին ելած ատենը կը
22 չուէին : Կամ երկու օր՝ կամ մէկ ամիս՝ և կամ մէկ տարի՝ որ ամպը խորանին վրայ կենալով մնար , իսրայէլի որդիքը իջևան կ'ընէին , ու չէին չուեր . բայց երրոր վերնար ,
23 կը չուէին : Տէրոջը հրամանին համեմատ իջևան կ'ընէին , և Տէրոջը հրամանին համեմատ կը չուէին . Մովսէսին ձեռքովը պատուիրած Տէրոջը հրամանին համեմատ՝ Տէրոջը պահպանութիւնը կը պահէին :

ԳԼ · Ժ

1 Ընծաթէ փողերուն դործածութիւնը : 11 Իսրայէլացիները Սինային դէպ'ի փառան կը չուեն : 14 Ընծոց չուելուն կարգը : 29 Մովսէս իր Ցեթրոյ անունը կը յորդորէ որ իրենց հետ երթայ : 33 Տապանակին չուելու ու կենալու ատենը՝ Մովսէսին տուած օրհնութիւնը :

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . Փեղի երկու հատ արծաթէ փող շինէ . կառնոյ պիտի շինես անոնք , որ ժողովրդը կանչելու համար՝ ու բանակներուն չուե-
3 լուն համար դործածես : Եւ երրոր զանոնք ջնջեցնեն , բոլոր ժողովրդը քովդ պիտի ժողվուին ժողովրդի խո-
4 րանին դուռը : Եւ թէ որ փողէն մէկը ջնջեցնեն , իշխանները՝ հազարապետները քովդ
5 պիտի ժողվուին : Եւ երրոր ազդարարութեան համար ջնջեցնէք , արևելքը իջևան ընող բանակները
6 պիտի չուեն : Ու երրոր երկրորդ անդամ ազդարարութեան փողը ջնջեցնէք , հարաւային կողմը իջևան ընող բանակները պիտի չուեն . անոնց չուելուն համար ազդարարութեան փողը պիտի ջնջեցնեն :
7 Եւ երբ ժողովուրդը ժողվելու ըլլաք՝ փող պիտի ջնջեցնէք , բայց ձագդարարութիւն պիտի չընէք :
8 Եւ Ահրոնին որդիքը՝ քահանաները պիտի բլլան . և *ասիկայ ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ
9 ձեզի : Եւ երբ որ պատերազմելու երթաք՝ ձեր երկրին մէջ ձեզի նեղութիւն տուող թշնամիին դէմ, փողերով ազդարարութիւն պիտի ընէք . ու Տէրոջ յիշուելիք Տէրոջը ձեր Աստուծոյն առջևը , և ձեր
10 թշնամիներէն ազատուելիք : Եւ ձեր ուրախութեան օրերուն՝ ու ձեր տօներուն՝ և ձեր ամսագլուխներուն մէջ՝ փողերը պիտի ջնջեցնէք ձեր ողջակէզներուն վրայ , ու ձեր խաղաղութեան զոհերուն վրայ , որ ձեզի Էլիւատակի համար բլլան ձեր Աստուծոյն առջևը . Ես եմ Տէրը ձեր Աստուածը :
11 Եւ եղաւ որ երկրորդ տարին երկրորդ ամսուն քսաներորդ օրը՝ վկայութեան խորանին վրայէն
12 ամպը վեր ելաւ : Եւ Իսրայէլի որդիքը իրենց դնացքին համեմատ չուեցին Սինայի անապատէն . ու ամպը Փառանի անապատին մէջ
13 կեցաւ : Եւ առաջ՝ Մովսէսին ձեռքովը պատուիրած Տէրոջը հրա-
14 մանին պէս չուեցին : Եւ առաջ՝ Յուդայի որդւոցը բանակին դրօշակը չուեց՝ իրենց դունդերուն կարդովը . ու անոր դունդին վրայ Ամինադարին որդին Նաասոնն
15 էր : Եւ Իսաքարի որդւոցը ցեղին դունդին վրայ Սովզարին որդին
16 Նաթանայէլն էր : Եւ Զաբուլոնի որդւոցը ցեղին դունդին վրայ
17 Փեղոնին որդին Եղիաբն էր : Եւ խորանը վար իջեցուցին . ու Խորանը վերցընող Գերսոնի որդիքը
18 և Մերարիի որդիքը չուեցին : Եւ Ռուբենի բանակին դրօշակը չուեց իրենց դունդերուն կարդովը . ու անոր դունդին վրայ Սեղիւրին որ-
19 դին Եղիասուր էր : Եւ Շմաւոնի որդւոցը ցեղին դունդին վրայ Սուրիսադային որդին Սաղամիէլն էր :
20 Եւ Գադի որդւոցը ցեղին դունդին վրայ Դադուելին որդին Եղիասափն
21 էր : Եւ սրբարանը վերցընող կահաթացիները չուեցին . ու խորանը կը կանդնուէր մինչև անոնց
22 դալը : Եւ Եփրեմի որդւոցը բանակին դրօշակը չուեց իրենց դունդերուն կարդովը . ու անոր դունդին վրայ Ամիուդին որդին Եղի-
23 սաման էր : Եւ Մանասէի որդւոցը ցեղին դունդին վրայ Փադասուրին որդին Գամաղիէլն էր :
24 Եւ Բենիամինի որդւոցը ցեղին դունդին վրայ Գեդէոնիին որդին Աբի-
25 դանն էր : Եւ Դանի որդւոցը բանակին դրօշակը՝ իրենց դունդերուն կարդովը բոլոր բանակներուն ետևէն չուեց . ու անոր դունդին վրայ Ամիսադային որդին Աքիե-
26 զերն էր : Եւ Ասերի որդւոցը ցեղին դունդին վրայ Եքրանին որդին
27 Փագիէլն էր : Եւ Նեփթաղիմի որդւոցը ցեղին դունդին վրայ Ե-
28 նանին որդին Աքիրէն էր : Այս էր Իսրայէլի որդւոցը չուելուն կարդը իրենց դունդերուն համեմատ՝ երրոր կը չուէին :
29 Եւ Մովսէս իր աներջը՝ *ՅՈՒՆԱ-

Ն · Ր · ՂԲ · 1490

Ե ՀՈՐ 9 ։

Ե ՀՈՐ 17։

Ե ԹԼ · Թ 17։

Ե Ել · Խ · 36 ։ ԳԼ · Բ · 9 , 16 , 24 , 31 ։ Հ Ել · ԺԹ 1 ։ ԳԼ · ա · 1 ։ Թ · 5 ։

Յ ՅՈՒ · Խ · 21 ։ ԳԼ · ԺԳ · 1 , 4 , 27 ։ Բ ՕՐ · ա · 1 ։

Ը ՀՈՐ 5 , 6 ։ ԳԼ · Բ · 34 ։

Ե ԳԼ · Բ · 3 , 9 ։

Ր ԳԼ · ա · 7 ։

Յ ԳԼ · ա · 51 ։

Ն ԳԼ · Դ · 24 , 31 , Է · 6 , 7 · 8 ։

Ը ԳԼ · Բ · 10 , 16 ։

Ա ԳԼ · Բ · 18 ։

Ե ԳԼ · Բ · 18 , 24 ։

Ա ԳԼ · Դ · 4 , 15 , Է · 9 ։

Ը ԳԼ · Բ · 25 , 31 ։ ԳՅՈ · Զ · 9 ։

Ա ԳԼ · Բ · 34 ։

Ա ԵՍ · ա · 13 ։

Բ ԵՐԵՄ · Զ · 5 ։ ՅՈՒԼ · Բ · 15 ։

Ֆ ԵԶ · ԺԸ · 21 ։ ԳԼ · ա · 16 ։ Է · 2 ։

Ա ԳԼ · Բ · 3 ։

Ե ԳԼ · Բ · 10 ։

Ը ՀՈՐ 3 ։

Ե ՅՈՒԼ · Բ · 1 ։

Ը ԳԼ · Լ · 6 ։ ՅՈՒ · Զ · 4 ։ ԱՄՈ · Ժ · 24 ։ Բ ՄՆ · ԺԳ · 12 ։

* ԵՔԲ · ա · ՄՈՒՔ

Ր ԳԼ · Լ · 6 ։ ՅՈՒ · Զ · 5 ։ Բ ՄՆ · ԺԳ · 14 ։

Ֆ ԴԱՍ · Բ · 18 ։ Դ · 3 ։ Զ · 9 ։ Ժ · 8 , 12 ։ ա ԹԱԳ · Ժ · 18 ։ ՍԱՂ · ՃԶ · 42 ։

Է ՅՈ · Ը · 1 ։ ՍԱՂ · ՃԶ · 4 ։

Ւ ԳԼ · ԻԹ · 1 ։ ԴՂ · ԻԴ · 24 ։ ա ՄՆ · Ժ ԺԸ · 24 ։ Բ ՄՆ · Ե · 12 ։ Է · 6 ։ ԻԹ · 26 ։ ԵԶՐ · Գ · 10 ։ ՆԵՀ · ԺԲ · 35 ։ ՍԱՂ · ՃԱ · 3 ։

Ն·Ք·ԳԲ· 1490

Մադիանացի՝ Ռագուէլին որդւոյն Ցոթորաբին ըսաւ . Մենք կը չուենք ան տեղը՝ որուն համար Տէրը ըսաւ որ , Զնշդի պիտի տամ . մեզի հետ եկուր , ու Էքարիք պիտի ընենք քեզի . ինչու որ Տէրը խոստացաւ ։ 30 բրիք խոստացաւ ։ Եւ անիկայ ըսաւ անոր . Ըեմ երթար , այլ իմ երկիրս ու իմ աղգականներուս պիտի երթամ ։ 31 Եւ ինքը ըսաւ . Ընորհք ըրէ՝ մեզ մի՛ թողուր . քանզի անապատին մէջ մեր իջևան ընելու տեղերը գիտես , ու մեզի համար աչաջնորդ կ՚ըլլաս ։ 32 աչաջնորդ կ՚ըլլաս ։ Եւ թէ որ մեզի հետ երթալու ըլլաս , ։ ինչ բարութիւն որ Տէրը մեզի ընէ , մենք ալ քեզի նոյն բարութիւնը կ՚ընենք ։

33 Եւ անոնք Տէրոջը լեռնէն իրենք օրուան ճամբայ չուեցին . ու Տէրոջը ուխտին տապանակը՝ իրենք օրուան ճամբայով անոնց առջևէն կ՚երթար՝ անոնց հանգստանալու 34 տեղ գտնելու համար ։ Եւ երբ բանակէն կը չուէին , Տէրոջը ամպը ցորեկը անոնց վրան էր ։

35 Եւ տապանակին չուելու ատենը՝ Մովսէս կ՚ըսէր . Ելի՛ր՝ ով Տէր , ու քու թշնամիներդ թող ցրուին , ու քեզ ատողները առջևէդ փախչին ։ 36 Եւ անոր կենալու ատենը՝ ինքը կ՚ըսէր . Ո՛վ Տէր՝ Իսրայէլին հազարաւորներուն՝ բիւրաւորներուն դարձիր ։

ԳԼ· ԺԱ

1 Մովսէսին աղաչանքովը Տաբերայի հրկիզութիւնը կը դադարի ։ 4 Ժողովուրդը միս ուտելու կը ցանկայ , ու մանաւանդ կը գոչի ։ 10 Մովսէս իր վրան եղած բեռէն կը գանգատի ։ 16 Աստուած անոր ծանրութիւնը եօթանասուն ծերերու կը բաժնէ ։ 31 Տէրը անոնց ցանկութեանը վրայ բարկանալով՝ կիբրօթ Հաթթաւայի մէջ լորամարգիներ կու տայ անոնց ։

1 Ան ժողովուրդը չարաչար տրտունջ կ՚ընէր Տէրոջը առջևը . ու Տէրը լսեց , ։ և իր բարկութիւնը բորբոքեցաւ , ու անոնց մէջ Տէրոջը կրակը վառեցաւ , և բանակին ծայրերը էշէնէը կորսընցուց ։ 2 Եւ ժողովուրդը աղաղակեց Մովսէսին ։ ու Մովսէս աղօթեց Տէրոջը , և կրակը դադարեցաւ ։ 3 Եւ ան տեղին անունը Տաբերա դրաւ , Տէրոջը կրակը անոնց մէջ այրելուն համար ։ 4 Եւ անոնց մէջի խառնիճաղանճ բազմութիւնը շատ ցանկացան . ու Իսրայէլի որդիքն ալ լարձան լացին , և ըսին . Ո՞վ

5 մեզի ուտելու միս պիտի տայ ։ Եգիպտոսի մէջ մեր ձրի կերած ձուկերը՝ վարունգները ու սեխերը և պրասները ու սոխերը և խստորները 6 միտքերնիս կու գան . Եւ հիմա

ըմեր անձը չորցաւ . մանանայէն զատ ուրիշ բան մը չկայ աչքերնուս 7 առջևը ։ Եւ Մանանան դինձի սերմի պէս՝ ու անոր գոյնը բդեղլիումի 8 տակի գոյնի պէս էր ։ ժողովուրդը կը պտրտէր ու կը ժողվէր զայն , և աղացքի մէջ կ՚աղային , կամ անկանի մէջ կը ձեձէին . և պտուկներու մէջ կ՚եփէին , ու անկէ շօթեր կը շինէին . և համը եղած 9 գաթաներու համին պէս էր ։ Եւ գիշերը ներոր բանակին վրայ ցօղ կ՚իջնէր , մանանան ալ անոր վրայ կ՚իջնէր ։

10 Ան ատենը Մովսէս լսեց որ ժողովուրդը իրենց տոհմերովը ամէն մէկը իր վրանին դուռը կու լան . և Տէրոջը բարկութիւնը խիստ բորբոքեցաւ , ու Մովսէսին ալ դէշ 11 երևցաւ ։ Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը . Ինչո՞ւ քու ծառադ չարչարեցիր , ու ինչո՞ւ քու առջևդ չնորհք չգտայ , որ աս բոլոր ժողովուրդին բեռը իմ վրաս կը դնես ։ 12 Միթէ ես եմ յղացեր աս բոլոր ժողովուրդը , կամ ես եմ ծներ զանոնք , որ ինծի կ՚ըսես . Գայեակի մը կալնակը տղան գրկէ առնելուն պէս հանոնք գիրկդ առ , մինչև այն երկիրը՝ որն որ անոնց հայրերուն երդում ըրիր ։ 13 Ուսկից միս պիտի ունենամ , որ աս բոլոր ժողովուրդին տամ . քանզի իմ բոլորտիքս կու լան ու կ՚ըսեն . Միս տուր մեզի որ ուտենք ։ 14 Ես մինակ չեմ կրնար կրել աս բոլոր ժողովուրդը . ինչու որ աս ինծի 15 շատ ծանր է ։ Եւ թէ որ ինծի այսպէս պիտի ընես , կ՚աղաչեմ՝ սպանե՛ զիս , թէ որ չնորհք գտայ քու առջևդ , որ չիմ չարիքս չտեսնեմ ։

16 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ինծի Իսրայէլին ծերերէն եօթանասուն հոգի ժողվէ , որոնք որ գուն գիտես թէ ժողովուրդին ծերերը ու ղեկավարներն են . և զանոնք ժողվելի խորանը բերը , ու հոն քեզի 17 հետ կայնին ։ Եւ ես հոն պիտի իջնեմ՝ ու խօսիմ քեզի հետ . և Հոգիէն որ քու վրադ եղած է , անկէ պիտի առնեմ , ու անոնց վրայ պիտի դնեմ , որ ժողովուրդին բեռը վերցընեն քեզի հետ , ու դուն մինակ 18 չվերցնես ։ Եւ ըսէ ժողովուրդին . Վաղուան համար սրբուեցէք , ու միս պիտի ուտէք . ինչու որ ականջներուն լացիք՝ ըսելով . Ո՞վ մեզի միս պիտի կերցընէ , քանզի Եգիպտոսի մէջ աղեկ կ՚ապրէինք . ուստի Տէրը ձեզի միս պիտի տայ , ու դուք պիտի ուտէք 19 տէր ։ Դուք չէ՛ թէ մինակ մէկ օր պիտի ուտէք , և ոչ երկու օր՝ ոչ

Ն·Ք·ԶԲ· 1490

ը Գէ· իա· 5 ։
Ի Եզ· ժզ· 14· 31 ։
ժ Ծն·բ·12։
§ Կ՚մարգարիտ
ի Եզ· ժզ· 31 ։
լ Եզ· ժզ· 13· 14 ։
ի Սադ·հը· 21 ։
ձ Ը Օր· ա· 12 ։
ի Իս· խթ· 23· ա Թես· ը· 7 ։
հ Ես·խ·11։
ն Ծն· իղ· 3 ։ ծ· 24 ։ Եզ·ժգ·5 ։ ՂՄատ.ժե· 33 ։ Մար· ը· 4 ։
ճ Եզ· ժը· 18 ։
ո Տե՛ս գ Թագ·ժթ· 4 ։ Յովն· գ· 3 ։
յ Սփ·գ·15։
ն Տե՛ս Եզ· իդ 1· 9 ։
նը Օր·ժգ· 18 ։
ա Հմր 25 ։ Ծն·ժա 5 ։ ժը·21 ։ Եզ· ժթ· 20 ։
ն ա Թագ· ժ· 6 ։ գ Թագ·բ· 15 ։ Նէեմ· թ·20 ։ Ես· խգ·3 ։ Յա՛ վէլ·բ·28 ։ գԵզ· ժթ· 10 ։
ջ Եզ·ժգ·7 ։
ա Հմր 5 ։ Գոր·է·39։

ն · ք · ՉՓ · 1490

Ս Սաղ · ՟ը · 29 · ՃՂ · 15 ·

Ղ Գլ · իա · 5 ·

Ե Ես. ժր · 2 · Եր · ԺԲ · 37 · Լ · 26 · Գե · ա · 43 ·

Բ Տես Գ Թագ · է · 2 · Մաս · ԺԸ · 33 · Մար · Ը · 4 · ՁՏ · Ղ · 7 · 9 ·

Յ Ես · ծ · 2 · ԽԹ · 1 ·

Ե Գէ · իզ · 19 · Եզկ · ԺԸ · 25 · իդ · 14 ·

Է Հմ · 16 ·

Ժ ՀՄ · 17 · Գէ · ԺՐ · 5 ·

Ո Տես Գ Թագ · Բ · 15 ·

Տ Տես ա Թագ · Ժ · 5 · 6 · 10 · ԺԹ · 20 · 21 · 23 · Ցակ · Բ · 29 · Գար · Ր · 17 · 18 · ա Կար · Ժգ · 1 · ՃՃ ·

* Կամ՝ և չըդաւրևցան ·

Ե Տես ա Թագ · Ի · 23 · Երեմ · ԼԲ · 5 ·

Բ Տես Մար · Թ · 38 · Ղռ · Թ · 49 · ՁՈՏ · Գ · 26 ·

Է Կար · Ժգ · 5 ·

Ր Եւ · Ժզ · 13 · Սաղ · ՟ը · 26 · 27 · 28 · ՃՆ · 40 ·

հինդ օր՝ ուչ տասը օր՝ ուչ ալ քը-
20 սան օր · Ելման մէկ ամիս մինչև քեթերնէդ դուրս գալը դէպի ասպէս, անանկ որ ղազուխը որովհետև ձեր մէջտեղը եղող Տէրը արհամարհեցիք, և անոր առջևը լացիք ըսելով · Ինչո՞ւ մենք եգիպտոսէն ելանք ·
21 Եւ Մովսէս ըսաւ · Այս ժողովուրդը՝ որոնց մէջ կը գտնուիմ, վեց հարիւր հազար հետևակ հոդի են, ու դուն ըսիր · Ես անոնց միս պիտի տամ՝ որ լման մէկ ամիս ուշ-
22 տեն · Անոնց բաւական ըլլալու համար՝ միթէ ծովը ոչխարները ու արջառները մորթուին · կամ ա-նոնց բաւական ըլլալու համար՝ ծովուն բոլոր ձուկերը մէկտեղ հա-
23 ւաքուին՝ Եւ Տէրը ըսաւ Մովսէսին · Միթէ տկար է Տէրոջը ձեռքը · Հիմա կը տեսնես թէ Բերեզ ըսածիս պէս պիտի ըլլայ՝ թէ չէ ·
24 Եւ Մովսէս ելաւ ու Տէրոջը խօսքերը ժողովուրդին զրուցեց · և ժողովուրդին ծերերէն եօթանասուն հոգի ժողվեց, ու զանոնք խորանին բոլորտիքը կանգնեցուց ·
25 Եւ Տէրը ամպի մը մէջ իջաւ, ու անոր հետ խօսեցաւ, և անոր վրայ եղած Հոգիէն առաւ, ու ան եօթանասուն ծերերուն վրայ դրաւ · և եղաւ որ Հոգին անոնց վրայ հանգչելուն՝ մարգարէութիւն ը-
րին, բայց անկէ ետև չըրին ·
26 Եւ երկու հոգի բանակին մէջ մնացին, մէկուն անունը Եղդադ էր ու մէկալին անունը Մովդադ · և Հոգին հանգչեցաւ անոնց վրայ · ու անոնք ան դրուղներէն էին, բայց խորանը ելած չէին · և բանակին մէջ մարգարէութիւն կ'ընէին ·
27 Եւ պատանի մը վազեց ու պատմեց Մովսէսին՝ և ըսաւ · Եղդադ ու Մովդադը մարգարէութիւն կ'ընեն
28 բանակին մէջ · Եւ Նաւէին որդին Յեսուն՝ Մովսէսին ընտրեալ ծառան պատասխան տուաւ՝ ու ը-
սաւ · Տէր իմ Մովսէս՝ բարդիլ-
29 զանոնք · Եւ Մովսէս ըսաւ անոր · Ինծի՞ համար կը նախանձիս · Եւ-րանի թէ Տէրոջը բոլոր ժողովուրդը մարգարէներ ըլլային, և Տէրը իր Հոգին անոնց վրայ դնէր ·
30 Եւ Մովսէս բանակը քաշուեցաւ, ինքը ու Իսրայէլի ծերերը ·
31 Եւ Տէրոջմէն հով մը ելաւ, ու ծովուն կողմէն լորամարգիներ բե-րաւ, ու բանակին վրայ մէկ օրուան ճամբայ մէկ կողմէն՝ և մէկ օրուան ճամբայ մէկալ կողմէն՝ բանակին բոլորտիքը տարածեց, երկրի երե-սին վրայէն երկու կանգունի չափ
32 բարձր · Եւ ժողովուրդը ան բոլոր օրը՝ ու բոլոր գիշերը՝ և հետևեալ բոլոր օրը ելլելով՝ լորամարգիները ժողվեցին · քիչ ժողվողը տասը քառ ժողվեց · և իրենց համար բանակին բոլորտիքը չորս-չորս փռեցին չը-
33 նշխ · Եւ երբոր դեռ Իսիսը իրենց ակռաներուն վրան էր, տակաւին չծամուած՝ Տէրոջը բարկութիւնը ժողովուրդին վրայ բորբոքեցաւ · ու Տէրը խիստ մեծ հարուածով
34 զարկաւ ժողովուրդը · Եւ ան տե-ղին անունը †Կիբրոթ Հաթթաւա" դրաւ · ինչու որ հոն թաղե-
35 ցին կամացող ժողովուրդը · Եւ Կիբրոթ Հաթթավայէն Ասերովթ չուեց ժողովուրդը, ու Ասերովթի մէջ ‡մնացին ·

ԳԼ ԺԲ

1 Մասուած կը յանդիմանէ Մարիամին ու Ահարոնին յանդուգնութիւնը 10 Մովսէսին աղաչանքովը Մարիամին բորոտութիւնը կը բժշկուի · 14 Մասուած կը հրամայէ որ Մարիամը բանակին դուրս դոց պահուի ·
1 Ա-ռ Մարիամ ու Ահարոն՝ Մովսէսին դէմ խօսեցան՝ անոր առած Եթովպացի կնոջը համար, քանզի Եթովպացի կնիկ ա-
2 ռեր էր, Ու ըսին · Միթէ Տէրը միայն Մովսէսին ձեռքովը խօսեցաւ · Ի՞նչ որ մեր ձեռքովն ալ խօսեցաւ · Եւ Տէրը լսեց · Եւ Մովսէս շատ հեզ մարդ մին էր՝ երկրի վրայ ե-
4 ղած բոլոր մարդոցմէ աւելի · Եւ յանկոյն Տէրը ըսաւ Մովսէսին և Ահարոնին ու Մարիամին · Դուք երեքդ ալ ժողովքի խորանը ելէք · Եւ երեքնին ալ ելան · Եւ Տէրը ամպին սիւնովը իջաւ, ու խորանին դուռը կայնեցաւ · և Ահարոնը ու Մարիամը կանչեց, ու անոնք երկուքնին ալ ելան ·
6 Եւ ըսաւ անոնց · Հիմա իմ խօսքս մտիկ ըրէք թէ որ ձեզմէ մէկը մարգարէ ըլլայ, ես Տէրս ինքզինքս ւտեսիլքի մէջ կը ճանչցընեմ անոր ; Իմ Եբեզէլ մէկը
7 խօսիմ անոր հետ ; Իմ ծառաս Մովսէսը անանկ չէ, որ իմ Բոլոր
8 տանս մէջ ծհաւատարիմ է Անոր հետ Երեսն առ երեսն Հայտնապէս կը խօսիմ, և ոչ թէ առակով · ու Եհովայի Տէրոջը կերպարանքը կը տեսնէ · ուստի ծիմ ծառայիս Մովսէսին դէմ խօսելու
9 ինչո՞ւ չվախցաք · Եւ Տէրոջը բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ
10 յաւ · ու Ինքը գնաց · Եւ ամպը վերացաւ խորանէն, ու Ահա Մարիամ ձիւնի պէս բորոտ եղաւ · և Ահարոն Մարիամին նայեցաւ, և ահա անիկայ բորոտ էր ·
11 Եւ Ահարոն ըսաւ Մովսէսին · Ո՜հ, տէր իմ, կ'աղաչեմ, չվրանիս մեղք

ն · ք · ՉՓ · 1490

Ե Սաղ · ՟ը · 30 · 31 ·

† ՟ի՟ ցանկութեան գերեզմանները ·

Ը Օր · Թ · 22 ·

Ե Գէ · իզ · 17 · ‡ ԵՔր · ԿՒն ·

Ե · Եւ՝ Ր · 21 · Բ Եւ · ժե · 20 · Մէք · Ղ · 4 · Ե Ծն ԻՓ · 33 · Գէ · ժա · 1 · Գ Թագ · ԺԹ · 4 · Ես · ԼԷ · 4 · Ե-զեկ · Լէ · 12 · 13 ·

Ր Սաղ · Ղդ · 9 ·

Ե Գէ · ժա · 25 · ԺՂ · 19 ·

Ն Ծն · ԺԵ · 1 · խղ · 2 · Ցոր · ԼԳ · 15 · Եզեկ · ա · 1 · Դան · Ը · 2 · Ժ Տ · 16 · 17 · Ղռ · ա · 11 · 22 · Գոր · Ժ · 11 · 17 · Իր · 17 · 18 ·

Ե Ծն · Լ · 10 · 11 · Գ Թագ · Ե · 5 · Մաս · ա · 20 ·

Ը Սաղ · ՃՆ · 26 ·

Ր ա Տիմ · Գ · 15 ·

Ժ ԵՔր · Գ · 2 · 5 ·

Ե Եւ · ԼԳ · 11 · Ր Օր · ԼՂ · 10 ·

Լա Կոր · Ժգ · 12 ·

Ե Եվ · ԼՃ · 19 ·

Ծր Պետ · Ր · 10 · Ցուց · 8 ·

Ե Բ Օր · Խ · 9 · Հդ Թագ · Ե · 27 · Ժ · 5 · Բ Մն · Իզ · 19 · 20 ·

Ն Ր Թագ · ԺԹ · 19 · Իզ · 10 · Առակ · Լ · 32 ·

Ն · ք · ՂԲ · 1490

Ղ Սաղ · ՃԸ · 4 ։

Ֆ Ցես Եբր · ԺԲ · 9 ։

Ր Ղև · Ժգ · ՁԶ · Գև · ե · 2 , 3 ։

Յ Բ Օր · իդ · 9 ։ Բ Մն · իշ · 20 , 21 ։

Մի՛ դներ · քանզի յիմարութիւն 12 ըրինք , ու մեզ գործեցինք · Թող չնմանի Ղան մեռած դղեան՝ որ իր մօրը արգանդէն ելած ատենը անոր մարմնոյն կէսը սպառուած է ։ 13 Եւ Մովսէս աղաղակեց Տէրոջը՝ ըսելով · Կը խնդրեմ քեզմէ , ով 14 Աստուած , բժշկէ՛ անիկայ ։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսին · Ֆթէ որ անոր հայրը միայն անոր երեսը թքնելու ըլլար , եօթը օր պիտի չամչնար · Թող անիկայ Ր եօթը օր բանակէն դուրս դոցուած պահուի , 15 ու անկէ ետև ընդունուի ։ Ց Եւ Մարիամ բանակէն դուրս եօթը օր դոցուած մնաց · ու ժողովուրդը չյառաջեց մինչև Մարիամին ընդունուիլը ։

ԳԼ · ԺԳ

5 Երկիրը լրտեսելու խրկուած մարդոց անունները ։ 18 Ընոնց տրուած պատուէրները ։ 22 անոնց գործքերը ։ 27 ու անոնց բերած լուրը ։

1 Ու եղբը ժողովուրդը Աստուծմէ չյուսցին , ու փառանի ա- 2 նապատը իրենց ըրին ։ Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով · 3 Ք Մարդիկ խրկէ որ լրտեսեն քա- նանու երկիրը , որն որ Իսրայէլի որդուոցը պիտի տամ · անոնց իշ- խան եղողներէն՝ մէյմէկ մարդ իր հայրերուն ցեղին կողմէն պիտի 4 խրկէք ։ Եւ Մովսէս Տէրոջը հրամանին համեմատ խրկեց զա- նոնք Ֆ փառանի անապատէն · բո- լոր ան մարդիկը Իսրայէլի որդուոց 5 ղլխաւորներն էին , Որոնց անուն- ները ասոնք են · Ռուբենի ցեղէն՝ 6 Զաքուրին որդին Սամուան , Ը Ը- մաւոնի ցեղէն՝ Քուռիին որդին Սա- 7 փատ , Ծ Ցուդայի ցեղէն՝ Ցեփո- 8 նէին որդին Ի Քաղէբը , Իսաքարի ցեղէն՝ Ցովսեփին որդին Իգաղը , 9 Եփրեմի ցեղէն՝ Նաւէին որդին 10 Ղ Օսէսը , Բենիամինի ցեղէն՝ Ռա- 11 փուին որդին Փաղտին , Զաբու- ղոնի ցեղէն՝ Սուդիին որդին Գեդ- 12 դիէլը , Ցովսեփի ցեղէն՝ այսինքն Մանասէի ցեղէն՝ Սուսիին որդին 13 Գադդին , Դանի ցեղէն՝ Գամաղիին 14 որդին Ամիէլը , Ասերի ցեղէն՝ Մի- 15 քայէլին որդին Սաթուրը , Նեփ- թաղիմի ցեղէն՝ Վափսիին որդին 16 Նաբին , Գադի ցեղէն՝ Մաքքիին որդին Գուէլը ։

17 Ասոնք են ան մարդոցը անուննե- րը՝ որ Մովսէս խրկեց երկիրը լրտե- սելու · և Մովսէս Նաւէին որդուոյն * Օսեսին անունը † Յեսու դրաւ ։ 18 Եւ Մովսէս խրկեց զանոնք քանա- նու երկիրը լրտեսելու , ու ըսաւ ա- նոնց · Ան Ի հարաւային կողմէն դէպ ՚ի վեր երթալով՝ ը լեռը և- 19 լէք · Եւ ան երկրին ինչպէս ըլլալը՝ ու հոն բնակող ժողովուրդին զօ- րաւոր կամ տկար , քիչըոր կամ 20 շատուոր ըլլալը տեսէք · Եւ ան երկիրը՝ ուր որ անոնք կը բնակին՝ ինչպէս է , աղէ՞կ է՝ թէ գէշ · և ինչպէս են ան քաղաքները՝ ուր որ անոնք կը բնակին · վրան- ներէ՞ բաղկացած են՝ թէ պարսա- 21 պատ են · Եւ երկիրը ինչպէս է , Ե պարարտ է թէ անբեր · մէջը ծա- ռեր կան՝ թէ չէ ։ Եւ ձիրը եղէք , ու ան երկրին պտուղէն առէք · Եւ ան օրերը խաղողին նոր ելած 22 օրերն էր ։ Եւ ելան՝ ու ան եր- կիրը լրտեսեցին Է Սինի անապատէն մինչև դէպ ՚ի Եմաթ երթալու- 23 Ռոոբը ։ Եւ հարաւային կողմէն ելան , ու դէպ ՚ի Քեբրոն եկան · ու հոն էը բնակիչներ Է ենակին որդի- քը Ծ Աքիմանը՝ Սէսին և Թոլմին · ու Ի Քեբրոն Եգիպտոսի Ճ Ցոյա- նիս քաղաքէն եօթը տարի առաջ 24 շինուած էր ։ Ն Եւ մինչև Ես- քողի ձորը եկան , ու անկէ խաղողի ողկոյզ մը կտրեցին ուռովը մէկ- տեղ , և երկու հոգի լծակով վեր- ցուցին անիկայ · և նուռերէն ու 25 թուզերէն ալ բերին · Իսրայէլի որդուոցը անկէ կտրած ողկուզին հա- մար՝ ան տեղին անունը ‡ Եսքողի 26 ձոր դրուեցաւ ։ Եւ քառասուն օրէն եկան ան երկիրը լրտեսելէն դար- 27 ձան · Եւ գալով Հասան Մովսէսին ու Ահարոնին և Իսրայէլի որդուոցը բոլոր ժողովքին՝ Ը փառանի անա- պատը Ճ կադէսը · և անոնց ու բո- լոր ժողովքին լուր բերին · և երկրին 28 պտուղը ցուցուցին անոնց ։ Եւ պատմեցին անոր՝ ու ըսին · Մեզ խրկած երկիրդ գացինք · իրաւցընէ Ր կաթ ու մեղր կը բղխէ ան , այ 29 անոր պտուղը ասե է ։ Բայց Ն ան երկրին մէջ բնակող ժողովուրդը զօրաւոր է , և քաղաքները պա- րսպապատ ա՜ խիստ մեծ են · և հոն 30 Ն ենակին որդիքը տեսանք ։ Ա- մաղեկացիք ան երկրին հարաւային կողմը կը բնակին · ու քետացիք և Ցերուսացիք ու Ամորհացիք լեռ- ները կը բնակին , և քանանացիք ծովուն քովը ու Ցորդանանու 31 եզերքը կը բնակին ։ Եւ Ղ քաղէբ՝ ժողովուրդը Մովսէսին Ա Լռե- ցուց , ու ըսաւ · Ադ՛ երթանք , ու ժառանգենք ան · քանզի մենք ան- շուշտ կարող ենք անոր տիրելու ։ 32 Բայց անոր հետ ելլող մարդիկը ըսին · Մենք ան ժողովուրդին վրայ ելլելու կարող չենք · ինչու որ ա- 33 նոնք մեզմէ զօրաւոր են ։ Եւ Լ իրենց լրտեսած երկրին համար գէշ լուր բերին Իսրայէլի որդուոցը՝ ըսելով ·

Ն · ք · ՂԲ · 1490

Բ Ղևեմ · Թ · 25 , 35 ։ Ե- զեկ · ԼԴ · 14 ։

Ժ Բ Օր · լ · 6 , 7 , 23 ։

Է ԳԼ · ԼԴ · 3 ։ Ցես · Ժե · 1 ։

Լ Ցես · Ժթ · 2Տ ։

Է Հմր 34 ։

Ժ Ցես · Ժա · 21 , 22 ։ Ժե · 18 , 14 ։ Դատ · ա · 10 ։

Լ Ցես · իա · 11 ։

Հ Սաղ · Հը · 12 ։ Ես · Ժթ · 11 ։ Լ · 4 ։

Ն Բ Օր · ա · 24 , 25 ։ Գև · Լբ · 9 ։

‡ Ն՛ողկուզի ։

Ղ Հմր 4 ։

Ճ Գև · ի · 1 , 16 ։ Լբ · 8 ։ ԼԴ · 36 ։ Բ Օր · ա · 19 ։ Ցես · Ժգ · 6 ։

Ր Ել · գ · 8 ։ ԼԴ 3 ։

Յ Բ Օր · ա · 25 ։

Ն Բ Օր · ա · 2Տ ։ Թ · 1 , 2 ։

Ղ Հմր 34 ։

Ա Նէ · Ժէ · 8 ։ Գև · Ժգ · 43 ։ Դատ · Ղի · 3 ։ ա Թագ · Ժգ · 48 ։ Ժե · 3 , Ճ ։

Ղ Տ՛ես գՀ · Ժգ · 6 , 24 ։ Ցես · Ժգ · 7 ։

Ա Գև · Ժ · 9 ։ Բ Օր · ա · 2Տ ։ Ցես · Ժգ · 8 ։

Լ Գև · Ժգ · 36 , 37 ։

* Ն՛ ՝ փրկիչ
† Ն՛ Տէր փբր- կիչ
‡ Ն՛ Ծ · Ժգ · 10 ։ Դատ · ա · 9 , 19 ։

Ն · Ք · ՂԲ · 1490

Ան երկիրը՝ որուն մէջտեղէն անցանք՝ զանիկայ լրտեսելու համար, իր բնակիչները ուտող երկիր մըն է. և ՚անոր մէջի բոլոր ժողովուրդը՝ որ մենք տեսանք, չաղ-
34 թահասակ մարդիկ են։ Եւ հոն տեսանք հսկաները, ՚Ենակին որդիքը՝ որ հսկաներէն էին. անանկ որ մենք մեր աչքին՝ մարախի պես երևցանք, և անանկ ալ ՚անոնց աչքին երևցանք։

ԳԼ · ԺԴ

1 Ժողովուրդը աս լուրին վրայ տրտունջ կ՚ընէ։
6 Յեսուն ու քաղէբ զանոնք լուծդելու կը ջանան։ 11 Աստուած անոնց սպառնալիք կ՚ընէ։ 13 բայց Մովսէսին աղաչանքը ընդունելով՝ կը ներէ։ 26 Տրտունջ ընող ժողովուրդը խոստացուած երկիրը մտնելէն կը զրկուին։ 36 Գէշ լուր բերող լրտեսները հարուածով կը մեռնին։ 40 Աստուծոյ հրամանէն դուրս՝ երկրին վրայ յարձակող ժողովուրդը կը յաղթուի։

1 Նէ բոլոր ժողովրդը ձայնը վերցընելով աղաղակեց. և ՚ժողովուր-
2 դը լացաւ ան գիշերը։ Եւ իսրայէլի բոլոր որդիքը տրտնջեցին Մովսէսին ու Ահարոնին դէմ. ու բոլոր ժողովրդը ըսաւ անոնց. Երանի թէ՝ եգիպտոսի երկրին մէջ մեռած ըլլայինք. Երանի թէ՝ աս անապա-
3 տիս մէջ մեռած ըլլայինք։ Եւ ինչո՞ւ համար Տէրը մեզ աս երկիրը բերաւ, որ սրով իյնանք, և մեր կիները ու մեր որդիքը յափշտակուին. աղէկ չըլլար մեզի որ եգիպտոս
4 դառնանք։ Եւ իրարու ըսին. ՚Մէյէն մէկ զօրագլուխ մը ընտրենք,
5 ու Եգիպտոս դառնանք։ Եւ ՚Մովսէս ու Ահարոն իրենց երեսին վրայ ինկան Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովուած ժողովրդին առջեւ։
6 Եւ երկիրը լրտեսողներէն՝ Նաւէ ին որդին Յեսուն՝ ու Յեփոնէին որդին Քաղէբը իրենց հանդերձները պատ-
7 ռեցին. Եւ Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովրդին խօսեցան՝ ըսելով. ԸԱն երկիրը՝ որուն մէջտեղէն անցանք՝ զանիկայ լրտեսելու համար,
8 խիստ բարի երկիր մըն է։ Թէ որ Տէրը Եմեզի հաճի, մեզ ան երկիրը պիտի տայ, և ան մեզի պիտի տայ, որ կաթ ու մեղր բղխող
9 երկիր մըն է։ Միայն թէ Տէրոջը դէմ ապստամբ մի՛ ըլլաք. և ան երկրին ժողովուրդէն մի՛ վախնաք. քանզի Եանոնք մեր կերակուրն են. անոնց ՚պաշտպանութիւնը գացած է իրենց վրայէն, Եու Տէրը մեզի
10 հետ է. անոնցմէ մի՛ վախնաք։ Եւ բոլոր ժողովրդը ըսին թէ՝ քարկոծենք ասոնք. բայց ՚Տէրոջը փառքը ժողովրդի խորանին մէջ բո-
11 լոր իսրայէլի որդւոցը երևցաւ։ Եւ

Տէրը ըսաւ Մովսէսին. Ա՛ս ժողովուրդը մինչև ե՛րբ Նգիս պիտի ՚սրբհամարէ, և իրենց մէջը բրած բոլոր հրաշքներովս ալ մինչև ե՛րբ
12 պիտի Ընհաւատան ինծի։ Ես ասոնք ժանտախտով պիտի զարնեմ, ու կորսընդունիմ անոնք. և ձեզ անոնցմէ մեծ ու զօրաւոր ազգ մը
13 պիտի ընեմ։ Եւ ՚Մովսէս ըսաւ Տէրոջը. Ան ատենը Եգիպտացիք պիտի լսեն. քանզի դուն բու կարողութեամբդ աս ժողովուրդը անոնց
14 մէջէն հանեցիր. Եւ անոնք պիտի պատմեն աս երկրին բնակիչներուն. Ընձէ անոնք լսած են որ դուն՝ ով Տէր, աս ժողովուրդին մէջտեղն ես, որ դուն՝ ով Տէր, դէմ առ դէմ կը տեսնուիս, և որ ՚ձրու ամպդ անոնց վրայ կը կայնի, և որ ցորկը ամպի սիւնով՝ ու գիշերը կրակի սիւնով
15 կը քալես անոնց առջևէն։ Հիմա թէ որ աս ժողովուրդը մէկ մարդու մը պէս մեռցնելու ըլլաս, ձու համբաւդ լսող ազգերը պիտի խո-
16 սին՝ ըսելով. Տէրը աս ժողովուրդը՝ Ընրնց երդումով խոստացած երկիրը տանելու կարող չըլլալուն համար, անապատին մէջ մեռցուց
17 զանոնք։ Եւ հիմա թող իմ Տէրոջս կարողութիւնը մե՛ծ ըլլայ,
18 ինչպէս որ խօսեցար՝ ըսելով. Տէրը ՚երկայնամիտ է, և առատ ողորմութիւնով, անօրէնութիւնը ու յանցանքը ներող. բայց յ՚անպատը ամենևին անպատիժ չթողուր, Ն հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ՝ մինչև երրորդ ու չորրորդ
19 ազգը հատուցանելով. Ո՛ղորմէ՛ Ընմ՝ Ընձու մեծ ողորմութեանդ համեմատ ներէ՛ աս ժողովուրդին անօրէնութիւնը, ՚ինչպէս որ նե-
20 րեցիր աս ժողովուրդին Եգիպտոս-
սէն մինչև հոս։ Եւ Տէրը ըսաւ.
21 ՚Քու խօսքիդ պէս ներեցի. Բայց կենդանի եմ ես, որ Ընբոլոր երկիրը Տէրոջը փառքովը պիտի լեցուի,
22 ՚որ բոլոր այն մարդիկը որ Եգիպտոսին մէջ ու անապատին մէջ իմ փառքս ու իմ բրած հրաշքներս տեսան, և մինչև հիմա իս տասը անգամ փորձեցին, ու իմ խօսքս
23 մտիկ չըրին, Ոպիտի չտեսնեն ան երկիրը՝ որն որ իրենց հայրերուն ՚ուխտ երդում ըրի. իս արհամարհողներուն մէկն ալ պիտի չտեսնէ
24 ան. Բայց որովհետև իմ ծառաս ՚քաղէբը ուրիշ միտք ունեցաւ, ու Ընհնի բոլոր սրտով Նետևեցաւ, Ես ալ անիկայ իր գացած երկիրը պիտի տանիմ. և անոր սերունդը
25 պիտի ժառանգէ ան։ Եւ Ամաղիկացիք ու Քանանացիք ձորերու մէջ կը նստին. վաղը դարձէք, ՚և

Ն · Ք · ՂԲ · 1490

յՀՀ 23 · բ Օր · Թ · 7, 8 · 22 · Սաղ · ղ · 8 · Երե · գ · 8, 16 · Ղբ Օր · ա · 32 · Թ · 23 · Սաղ · Ղբ · 22, 32 · 42 · Ձղ · 24 · Ցօհ · ժբ · 37 · Եբր · գ · 18 · Ցեղ · լբ · 10 · Մեղ · լբ · 12 · Սաղ · Ձղ · 23 · բ Օր · Թ · 26, 27, 28 · լբ · 27 · Նեղեմ · ի · 9, 14 · յԵղ · ժե · 14 · Ցես · բ · 9, 10 · ե · 1 · Նեղ · ժգ · 21 · Ի · 38 · Գլ · ժ · 34 · Նեեմ · Թ · 12 · Սաղ · Ղբ · 14 · Ճե · 39 · Ղբ Օր · Թ · 28 · Ցես · է · 9 ·

Եղ · լդ · 6 · 7 · Սաղ · ՃԳ · 8 · ՃԻե · Տ · Ցոե · գ · 2 · Ղեղ · ի · 5 · լդ · 7 ·

Նեղ · լդ · 9 · Ղ Սաղ · Ձղ · 45 ·

Սաղ · Ղբ · 38 ·

Սաղ · Ձղ · 23 · Ցակ · ե · 16 · ա Ցօհ · ե · 14, 15, 16 · Ղ Սաղ · Ղբ · 19 ·

Ղ Օր · ա · 33 · Սաղ · ղե · 11 · Ձղ · 26 · Երբ · գ · 17, 18 · Ըծե · լե · 7 · Գլ · լբ · 11 · Եզկ · ի · 15 ·

Ր Օր · ա · 36 · Ցես · ժգ · 6 · Տ · 9, 14 ·

Գլ · լբ · 12 ·

Ր Օր · ա · 40 ·

Ն·Ք·ԶԲ· 1490

դէպ՝ ի անապատ կարմիր ծովուն ճամբան չուեցէք։
26 . Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու
27 Ահարոնին՝ ըսելով . °Մինչև ե՞րբ
աս չար ժողովքին ինծի դէմ տրը-
տընջելուն համբերեմ . ֆես լսեցի խ-
րայէլի որդւոցը տրտունջը՝ որ ինծի
28 դէմ կը տրտնջեն . Ըսէ անոնց .
°Ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէրը , որ
ի՛նչպէս դուք իմ ականջներուս
խօսեցաք , անանկ ալ պիտի ընեմ
29 ձեզի . Ձեր դիւրը աս անապատին
մէջ պիտի լ՛ինան . և ձեր բոլոր
հաշիւին համեմատ՝ ֆ ձեզմէ ամէն
համրուածներդ քսան տարեկանէն
վեր եղողներդ՝ դուք ո՞չ՚ որ ին-
30 ծի դէմ տրտնջեցիք . Անշուշտ պի-
տի չմտնէք ան երկիրը որուն մէջ
ձեղ բնակեցնելու °երդում ըրի՚,
էրայ՝ ի Յեփոնէին որդին Քաղե-
բէն՝ ու Նաւէին որդին Յեսուէն ,
31 Ձ՚ըայց ձեր որդիքը՝ որոնց համար
որ դուք ըսիք Թէ պիտի յափչտա-
կուին , անոնք պիտի տանիմ , և
ի՛ձեր չհաւնած երկիրը անոնք պի-
32 տի ի՚տեսնեն ։ Բայց ի՛ձեր դիւրը
աս անապատին մէջ պիտի լ՛ինան ։
33 Եւ ձեր որդիքը անապատին մէջ
Ի՚արաւսուն տարի ծ պիտի ի՚մոլորին ,
ու ձեր էպոռնկութիւնները կրնն ,
մինչև որ ձեր դիւրը անապատին
34 մէջ սպառին ։ Ինչպէս որ երկի-
րը Ի՚արաւսուն օրուան մէջ լրտեսե-
ցիք , անանկ ալ ան օրերուն Թուին
համեմատ՝ ամէն մէկ օրուան տեղը
մէկմէկ տարի «եղիլվ՝ քառասուն
տարի պիտի կրէք ձեր անօրէնու-
թիւնները , ու իմ յ՚եղբ հեռանալս
35 ճանչնաք ։ °Ես Տէրս ըսի ։ Ինծի
դէմ ժողվուած բոլոր ևատ չար ժո-
ղովքին անչուշտ պիտի ընեմ աս
բանը . անոնք աս անապատին մէջ
պիտի սպառին , ու հոն մեռնին ։
36 Հ՚Եւ ան մարդիկը՝ որ Մովսէս խըր-
կեց ան երկիրը լրտեսելու . որոնք
դարձան ու երկրին վրայով գէշ
լուր հանելով՝ բոլոր ժողովքը ա-
նոր դէմ տրտնջելու դրդռեցին ,
37 Ան մարդիկը որ ան երկրին վրայով
գէշ լուր հանեցին՝ ֆ հարուածով
38 մեռան Տէրոջը առջևը ։ Ձ՚բայց
Նաւէին որդին Ցեսուն՝ և Ցեփո-
նէին որդին Քաղէբը՝ որ երկիրը
լրտեսելու գացող մարդիկներէն
39 էին , ողջ մնացին ։ Եւ Մովսէս
աս խօսքերը Իսրայէլի բոլոր որ-
դւոցը զգուցեց , ևու ժողովուրդ-
40 դը մեծ սուգ ըրաւ ։ Եւ առ-
տուանց կանուխ լեռանը գլուխը ե-
լան՝ ըսելով . Ահա մենք պատրաստ
ենք , և Տէրոջը բսած տեղը պիտի
ելլենք . ինչու որ մեղք գործեցինք ։
41 Եւ Մովսէս բսաւ . Ինչու՞ հիմա

ս Տէրոջը հրամանէն դուրս կ'ելլէք .
42 աս բանը պիտի չյաջողի ։ °Մի՛
ելլէք , (քանզի Տէրը ձեր մէջը չէ .)
չըլլայ որ ձեր թշնամիներուն առջևը
43 Ջարդուիք . Ինչու որ Ամաղեկացիք
ու քանանացիք հոն առջևնիդ են .
և սրով պիտի իյնաք . Դուք Տէ-
րոջմէն ետ դառնալնուդ համար՝
44 Տէրը ձեզի հետ պիտի չըլլայ ։ °Բայց
անոնք յամառութիւն ընելով՝ լե-
ռանը գլուխը ելան . սակայն Տէ-
րոջը ուխտին տապանակը ու Մով-
սէսը բանակին մէջէն չգատուեցան ։
45 Ն՚ Ան ատենը ան լեռանը վրայ բնա-
կող Ամաղեկացիք ու քանանացիք
իջան , և զարկին անոնք , ու հալա-
ծեցին մինչև ՚Հօրմա ։

ԳԼ · ԺԵ

1 Հացի ընծային ու Թափելու նուէրին կանոնը ։ 13 · 29 Օտարականն ալ նոյն կանոնով պիտի ընծայէր · 17 Առջի խորհրդ բաբթացրնելու ընծայ մատուցանելուն կանոնը · 22 Անգիտու-թեամբ գործուած մեղքին պատարագը · 30 Հպարտութեան պատիժը · 32 Շաբաթը պղծող մարդու մը քարկոծուիլը · 37 Ծոպե-րուն օրէնքը ։

1 Ն՚ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . °Խօսէ Իսրայէլի որ-
դւոցը , ու բսէ անոնց . Երբոր մըտ-
նէք ձեր բնակութեան երկիրը՝ որ
3 որ ձեզի պիտի տամ , Եւ Տէրոջը
ի՛անուշ հոտ նուիրելու համար՝
ի՛արջառներէն կամ հօտերէն պա-
տարագ պիտի մատուցանէք Տէ-
րոջը , ողջակէզ՝ կամ °ուխտ կա-
տարելու զոհ Թէ կամաւոր ընծա-
յի համար , և Թէ ի՛ձեր հանդիսա-
4 ւոր տօներուն մէջ . Ան ատենը
Ձիր զոհը Տէրոջը մատուցանողը՝
ի՛հացի ընծայի համար ի՛հինի մը
չորրորդ մասը եղով շաղուած մէկ
տասանորդ բարակ ալիւր պիտի
5 մատուցանէ : Եւ ողջակէզին կամ
զոհին հետ՝ մէկ գառի համար ի՛հ-
մինի մը չորրորդ մասը գինի Թա-
6 փելու նուէր պիտի ընես . °Կամ
խոյի մը համար՝ հինինի մը երրորդ
մասը եղով շաղուած երկու տա-
սանորդ բարակ ալիւր հացի ընծայ
7 պիտի ընես . Եւ Թափելու նուէրի
համար հինինի մը երրորդ մասը
գինի՝ անուշ հոտի համար Տէրոջը
8 պիտի մատուցանես ։ Եւ երբոր
ողջակէզի համար՝ կամ ուխտ կա-
տարելու զոհի համար՝ կամ էխա-
դաղութեան զոհի համար զուարակ
9 մը մատուցանես Տէրոջը , Ան ա-
տենը Ձ՚ուարակին հետ կէս հինին
եղով շաղուած իրեք տասանորդ
բարակ ալիւր պիտի մատուցանես .
10 Եւ Թափելու նուէրի համար կէս
հինին գինի պիտի մատուցանես .
«Այսպէս Տէրոջը անուշահոտ պատա-

Ն·Ք·ԶԲ· 1490

ՈՀՐ 11 · ԵԼ · ԺԶ · 28 ։ ՄԱՍ · ԺԵ · 16 ։
ֆ ԵԼ · ՀՉ · 12 ։
— ՀՐ 23 ։ ԳԼ·ԻԲ·65 ։ ԼՐ · 11 ։ Բ ՕՐ · Ա · 35 ։ ԵՐՐ · Դ · 17 ։
Բ ՏԵՍ ՀՐ 2 ։
ֆ ԳԼ · Ա · 45 ։ ԻԶ · 61 ։

Ր ՅՈՆ · ԺԳ · 22 ։
*ԵՉՐ · ՁԵՌՔՍ ՎԵՐ-ԳՈՒԹ ։
Ի ՀՐ 33 ։ ԳԼ · ԻԶ · 65 ։ ԼՐ · 12 ։ Բ ՕՐ · Ա · 36 , 38 ։
Ղ Ր ՕՐ · Ա · 39 ։
Ի ՍԱՂ · ՃՂ · 24 ։
+ԵՉՐ · ԳԻՏ-ՆԱՆ ։
Ը ԱԿՐ · Ժ · 5 · ԵՐՐ · Կ · 17 ։
Ի ՏԵՍ Բ ՕՐ · Բ · 14 ։
Ժ ԳԼ · ԼԲ · 13 ։ ՍԱՂ · ՃՂ · 40 ։
‡ԵՉՐ · ԱՐԱՔԱՆ ։
Է ԵՂԿ · ԻԶ · 35 ։
Լ ԳԼ · ԺԶ · 26 ։
Է ՍԱՂ · ՂԸ · 10 ։ ԵՂԿ · Դ · 6 ։
Ժ ԳԼ · ԻԳ · 19 ։
ՀՐ 27 , 29 ։ ԳԼ·ԻԿ·65 ։ Ա ԱԿՐ · Ժ 5 ։
Հ ԳԼ · ԺԶ · 32 , 33 ։
Յ Ա ԱԿՐ · Ժ · 10 ։ ԵՐՐ · Գ · 17 ։ ՅՈՒԴ · 5 ։
Ղ ԳԼ · ԻՀ · 65 ։ ՑԵՍ · ԺԶ · 6 · 10 ։
ֆ ԵԼ·ԼԳ·4 ։

Ր Բ ՕՐ · Ա · 41 ։

Ն·Ք·ԶԲ· 1490

Ո ՀՐ 25 · Բ ՄՆ·ԻԳ · 20 ։
Ե Բ ՕՐ · Ա · 42 ։
ԼԲ ՄՆ · ԺԵ · 2 ։
Ա Բ ՕՐ · Ա · 43 ։

Ն ՀՐ 43 ։ Բ ՕՐ · Ա · 44 ։ ԳԼ·ԻԱ·3 ։ ԴԱՏ · Ա · 17 ։

— ՀՐ 18 ։ ՂԼ · ԻԳ · 10 ։ Բ ՕՐ · Է · 1 ·
Բ ՅՈՆ Բ · 21 ։ ԵԼ·ԻԲ·18 ։
ֆ ՂԼ · Ա · 2 , 3 ։
Գ ՂԼ Է·16 ։ ԻԲ · 18 , 21 ։
Է ՂԼ·ԻԳ 8 · 12 , 36 ։ ԳԼ · ԻԲ 19 · 27 ։ ԻԲ 2 8 , 13 ։ Բ ՕՐ · ԺԶ 10 ։
ՂՂԼ Բ 1 ։ Ղ · 14 ։
Ե ԵԼ ԻԲ 40 · ՂԼ · ԻԳ 13 ։
Ը ՂԼ ԺԳ 10 ։ ԳԼ·ԻԸ · 5 ։
Բ ԳԼ·ԻԸ·7 · 14 ։
ԺԳԼ·ԻԸ·12 · 14 ։

Է ՂԼ·Է·11 ·

ԼԳԼ·ԻԸ·12 · 14 ։

Ն·ՔՋ· 1490

11 բադ մրն է։ Ամեն մկ զուարակի կամ խոյի համար՝ կամ ոչխարի կամ այծի համար ասանկ պիտի
12 ըլլայ։ Ձեր պատրաստելու թուդյն նայելով՝ անոնց թուդյն համեմատ՝ ամէն մկուն անանկ պիտի ընէք։
13 Երկրին ամէն բնակը աս բաները անանկ պիտի ընէ, Տէրոջը անուշահոտ պատարագ մատուցանելու։
14 Համար։ Եւ թէ որ ձեր քովը պանդխտացած օտարականը՝ կամ ձեր ցեղերուն մէջ ձեր մէջը բնակ եղող՝ Տէրոջը անուշահոտ պատարագ ընելու ըլլայ, ձեր ըրածին պէս
15 անոնկայ ալ անանկ պիտի ընէ։ Ո՛վ ժողովք՝ Ե ձեզի համար և յԵ ժամէ պանդխտացած օտարականին համար մէկ կանոն պիտի ըլլայ. ձեր ցեղերուն մէջ յաւիտենական կանոնով՝ Տէրոջը առջևը ինչպես էք դուք, անանկ պիտի ըլլայ օտա-
16 րականն ալ։ Ձեզի համար և ձեր քովը պանդխտացած օտարականին համար՝ մէկ օրէնք ու մէկ սովորութիւն պիտի ըլլայ։
17 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
18 սելով. Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ անոնց. Երբոր ան երկիրը մտնէք՝ ուր որ ձեզ պիտի տանիմ,
19 Եւ ըլլայ որ երբ ման երկրին հացէն ուտէք, բարձրացընելու ընծայ պի-
20 տի մատուցանէք Տէրոջը։ Ձեր առջի խմորէն չօթի մը բարձրացընելու ընծայ պիտի մատուցանէք. Ձկալի բարձրացընելու ընծան ինչպես որ կ'ընէք, աս ալ անանկ
21 պիտի բարձրացընէք։ Ձեր առջի խմորին բարձրացընելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը՝ ձեր ազգերուն մէջ։
22 Իսկ ևթէ որ սխալիք ու չընէք աս բոլոր պատուիրանքները՝ որ Տէրը
23 ըսաւ Մովսէսին, Նոյնն ան ամէնը՝ որ Տէրը ձեզի պատուիրեց Մովսէսին ձեռքովը ան օրէն՝ ի վեր՝ որ Տէրը պատուիրեց ձեր ազգերուն
24 մէջ յաջեխոս. Եւ ըլլայ որ՝ ևթէ ժողովքը սխալմամբ չանցնիք մը ընէ, ան ատենը բոլոր ժողովքը՝ Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար՝ մէկ զուարակ մը պիտի մատուցանէ՝ ըստ օրինի հացի ընծայով ու թափելու նուէրով, և մեղքի պատարագի համար այծերէն մէկ
25 նոխազ։ Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքին համար, ու թողութիւն պիտի ըլլայ անոնց, ինչու որ սխալմունք էր, և անոնք իրենց սխալելուն համար իրենց ընծան Տէրոջը պատարագ բերին, ու նաև իրենց մեղքի պատարագը Տէ-
26 րոջը առջևը. Ուստի Իսրայէլի որ-

Ն·ՔՋ· 1490

դւոցը բոլոր ժողովքին ու անոնց մէջը պանդխտացած օտարականներուն թողութիւն պիտի ըլլայ. քանզի բոլոր ժողովուրդը սխալման մէջ էր։
27 Եւ ևթէ որ անձ մը սխալմամբ մեղք գործէ, անատենը մեղքի պատարագի համար մէկ տարեկան
28 էգ այծ մը պիտի բերէ. Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ սխալմամբ մեղք գործող անձին համար. երբոր Տէրոջը առջևը մեղք գործէ, անոր համար քաւութիւն պիտի ընէ, ու անոր թողութիւն ըլլայ։
29 Սխալմամբ մեղք գործողին համար՝ թէ Իսրայէլի որդւոց մէջի բնակին համար՝ և թէ անոնց մէջը պանդխտացած օտարականին համար, մէկ օրէնք պիտի ունենաք։
30 Բայց ան անձը որ *յանդգնութեամբ բան մը կ'ընէ, թէ երկրին բնակը ըլլայ՝ և թէ օտարական, անիկայ Տէրը կը նախատէ. ան անձը իր ժողովուրդին միջէն պիտի
31 կորսուի. ՔՏէրոջը խօսքը արհամարհելուն ու անոր պատուիրանքը զանց ընելուն համար՝ ան անձը անշուշտ պիտի կորսուի. Անոր անօրէնութիւնը իր վրան պիտի ըլլայ։
32 Եւ երբ Իսրայէլի որդիքը անապատն էին, Մարդ մը գտան՝ որ
33 շաբաթ օրը փայտ կը ժողվէր։ Եւ անոնք որ փայտ ժողվելու վրայ գտան զանիկայ, Մովսէսին ու Ահարոնին և բոլոր ժողովքին առ-
34 ջև բերին։ Եւ վերանտարկելին զանիկայ. ինչու որ անոր ինչ ընե-
35 լէրնին որոշուած չէր։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսին. Ան մարդը անպատճառ պիտի մեռցուի. բոլոր ժողովքը բանակէն դուրս հարթրով պիտի քարկոծեն զանիկայ։
36 Եւ բոլոր ժողովքը Տէրոջը Մովսէսին պատուիրածին պէս՝ բանակէն դուրս հանեցին զանիկայ, և քարթրով քարկոծեցին, ու մեռաւ։
37 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝
38 ըսելով. Խօսէ Իսրայէլի որդւոցը ու ըսէ ցանոնց. որ իրենց ծոպէր շինեն իրենց հանդերձներուն քրքանցներուն վրայ՝ իրենց ազգերուն մէջ. ու քրանցքի ծոպերուն վրայ կապոյտ ժապաւէն մը դնեն.
39 Եւ ան ձեզի ծոպ պիտի ըլլայ, որ դուք տեսնէք ան՝ ու Տէրոջը բոլոր պատուիրանքները միտքերնիդ բերէք, և ընէք անոնք. ու ձեր սրտերուն և ձեր աչքերուն ցանկութեան չհետեւիք՝ որոնց ետևէն
40 դուք ††կը մոլորիք. Անանկ որ միտքերնիդ բերէք՝ ու ընէք իմ բոլոր պատուիրանքներս, ու †սուրբ

ՂԱ·Գ·2։

ՃՂԱ·Գ·13։

ՄՀՇՐ 8, 9, 10։

Յ Տես ՂԱ· Գ·23։ ՓԱ· ԻԲ· 15, ԵԶՐ·Գ·17· Ը·35։

ՆՂՏ·Գ·20։

ՀՇՐ 29։ ԵՂ·ԺՐ·49։ ՓԱ·ԹՐ·14։

Ի ՀՇՐ 2։ Ր Օր·ԻՂ·1։

ՅՁԵ·Ե·11, 12։

ՀՐ Օր·ԻՂ· 2, 10։ Ա-ռակ·Գ·9, 10։

ՅՂԱ·Ր·14։ ԻԳ·10, 16։

ՃՂԱ·Գ·13։

Ի ՀՇՐ 2։ Ր Օր·ԻՂ·1։

ՅՁԵ·Ե·11, 12։

ՀՐ Օր·ԻՂ· 2, 10։ Ա-ռակ·Գ·9, 10։

ՅՂԱ·Ր·14։ ԻԳ·10, 16։

ՂՂԱ·Գ·2։

ՃՂԱ·Գ·13։

ՄՀՇՐ 8, 9, 10։

Յ Տես ՂԱ· Գ·23։ ՓԱ· ԻԲ· 15, ԵԶՐ·Գ·17· Ը·35։

ՆՂՏ·Գ·20։

ՂՂԱ·Գ·2։

ՃՂԱ·Գ·13։

ՄՀՇՐ 8, 9, 10։

Յ Տես ՂԱ· Գ·23։ ՓԱ· ԻԲ· 15, ԵԶՐ·Գ·17· Ը·35։

ՆՂՏ·Գ·20։

ՂՂԱ·Գ·2։

ՃՂԱ·Գ·13։

ՄՀՇՐ 8, 9, 10։

Յ Տես ՂԱ· Գ·23։ ՓԱ· ԻԲ· 15, ԵԶՐ·Գ·17· Ը·35։

ՆՂՏ·Գ·20։

ՂՂԱ·Գ·2։

ՃՂԱ·Գ·13։

ՄՀՇՐ 8, 9, 10։

Յ Տես ՂԱ· Գ·23։ ՓԱ· ԻԲ· 15, ԵԶՐ·Գ·17· Ը·35։

ՆՂՏ·Գ·20։

ընտ. գիմ. 1490

բլլաք ձեր Աստուծոյն առջևը ։
41 Կա եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի. ես եմ Եհովայ՝ ձեր Աստուածը ։

ԳԼ. ԺԱ

1 Կորխին, Դաթանին և Աբիրոնին ապստամբութիւնը ։ 23 Մովսէս կը դատէ ժողովուրդը ։ 27 ապստամբներուն վրայ ։ 31 Երկիրը կը կլլէ Կորխը՝ որուն ընկերները կրակով կը սպառին ։ 36 Բուրվառները սուրբ բանի դործածուելու համար կը պահուին ։ 41 Տասնըմէկ հազար եօթը հարիւր հոգի՝ Մովսէսին ու Ահարոնին դէմ տրտունջ ընելուն համար, ժանտախտով կը մեռնին ։ 46 Ահարոն խունկ ծխելով՝ ժանտախտը կը դադրեցնէ ։

Իբր 1471

1 Նէ Ղևիի որդւոյն կահաթի որդւոյն Իսհառհարին որդին՝ Կորխը՝ և Ռուբենի որդւոցմէ Եղիաբին որդիքը Դաթանը ու Աբիրոնը՝ և Փաղղէթին որդին Ովը՝ և
2 լան, Եւ Իսրայէլէ որդւոցմէ երկու հարիւր յիսուն հոգի՝ ժողովքի խորհրդական դլխաւորներ՝ ան նուանի մարդիկներ հէրհրէն ։
3 Նէլա՝ Մովսէսին առջևը եկան, Եւ Մովսէսին ու Ահարոնին վրայ ժողվուեցան, ու ըսին անոնց. Ալ հերիք է ըրածնիդ. ինչու որ բոլոր ժողվրդը ամէնքն ալ սուրբ են, և Տէրը անոնց մէջն է. և ինչու՞ Տէրոջը ժողովուրդին վրայ դուք
4 ձեզ կը բարձրացընէք ։ Եւ երբ Մովսէս լսեց, ինքզինքին վրայ
5 ինկաւ. Ու խօսեցաւ Կորխին և անոր բոլոր ժողվքին՝ ըսելով. Վաղը Տէրը պիտի յայտնէ թէ ումն է իրը, և ումն է խստրբը, ու ընծայիրն պիտի մօտեցընէ. և որն որ ինքը ընտրած է, իրեն պիտի
6 մօտեցընէ ։ Ա՛ս ըրէք. առէք ձեզի բուրվառներ, դուն ով Կորխ՝
7 և քու բոլոր ժողովքդ. Եւ վաղը անոնց մէջը կրակ դրէք, ու Տէրոջը առջևը անոնց վրայ խունկ դրէք. և սուրբը անիկայ ըլլայ, որն որ Տէրը կ'ընտրէ. ալ հերիք է ըրածնիդ՝ ով Ղևիի որդիքը ։
8 Եւ Մովսէս բսաւ Կորխին. Լսեցէ՛ք
9 ով Ղևիի որդիքը. Պզտիկ բան կ'ներևնայ ձեզի՞ որ Իսրայէլին Աստուածը ձեզ իրեն մօտեցընելու համար՝ Իսրայէլի ժողովքէն զատեց ձեզ, որ Տէրոջը խորանին պաշտօնը ընէք, և ժողովքին առջևը կայնիք՝ անոնց սպասաւորուե-
10 Թիւնը ընելու. Եւ քեզ ու քեզի հետ քու բոլոր եղբայրներդ Ղևիի որդիքը էրէն մօտեցուց, ու դուք քահանայութիւնն ալ կը փընտ-
11 ռէք ։ Ուրեմն դուն՝ ու քու բոլոր ժողովքդ Տէրոջը դէմ ժողվուեցաք. Եւ Ահարոնը ով է՝ որ անոր դէմ դուք տրտունջ կ'ընէք։
12 Եւ Մովսէս՝ Եղիաբին որդիքը Դաթանը ու Աբիրոնը կանչելու համար մարդ իրկեց. և անոնք ըսին.
13 Չնոր Լլեր. Մեզ անապատին մէջ մեռցընելու համար՝ կաթ ու մեղր բղխող երկրէ մը մեզ հանելը էրչի բան է, որ նաև ծիր վրայ
14 իշխան ըլլալ կ'ուզես ։ Եւ մեզ կաթ ու մեղր բղխող երկիր մը չբերիր, ոչ ալ մեզի արտի ու այդիի ժառանգութիւն տուիր. միթէ աս մարդոցը աչքերը պիտի
15 հանես. Մենք չենք կլլեր ։ Եւ Մովսէս խիստ բարկացաւ, ու բսաւ Տէրոջը. Հրի նայիր անոնց ընծաներուն. Ես անոնցմէ էշ մըն ալ չառի, և անոնց մէկուն անիրաւու-
16 թիւն չըրի ։ Եւ Մովսէս բսաւ Կորխին. Ղվաղը դուն ու քու բոլոր ժողովքդ Տէրոջը առջևը ներկայանաք, դուն՝ և անոնք՝ ու Ա-
17 հարոնը. Եւ առէք ամէն մէկերնիդ ձեր բուրվառները, ու անոնց մէջը խունկ դրէք, և ամէն մէկը իր բուրվառը Տէրոջը առ-
18 ջևը մօտեցուցէք ։ Եւ ամէն մէկը իր բուրվառը առնելով՝ անոնց մէջը կրակ դրին, ու անոնց վրայ խունկ դրին, և ժողովքի խորանին դուռը կայնեցան Մովսէսին ու
19 Ահարոնին հետ ։ Եւ Կորխը անոնց դէմ ժողովքի խորանին դուռը ժողվեց բոլոր ժողովքը. ու Տէրոջը փառքը բոլոր ժողովքին երեցաւ ։
20 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու
21 Ահարոնին՝ ըսելով. Յանէ ժողովքին մէջէն զատուեցէք, որ ես չյոտտով
22 կորսընցընեմ ատոնք ։ Բայց անոնք ներևնալուն վրայ ինկան՝ ու ըսին. Ո՛վ Աստուած՝ բոլոր մարդոց հոգիներուն Աստուածը, մէկ մարդուն մեղանչելովը՝ բոլոր ժողովքին վրայ պիտի դայ քու բարկութիւնդ ։
23 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
24 սելով. Խօսէ ժողովքին՝ ու ըսէ. Կորխին՝ Դաթանին ու Աբիրոնին բնակութեանը բոլորտիքէն հեռա-
25 ցէք ։ Եւ Մովսէս ելաւ, ու Դաթանին և Աբիրոնին գնաց, և Իսրայէլի ծերերը անոր ետևէն գացին.
26 Եւ խօսեցաւ ժողովքին՝ ըսելով. Ձեր մարդոցը վրանները քովէն մի՛ քաշուեցէք, ու անոնց մէկ բանին մի՛ դպչիք, որ անոնց
27 բոլոր մեղքերովը չկորսուիք ։ Ան-պես անոնք Կորխին՝ Դաթանին ու Աբիրոնին բնակութեանը բոլորտիքէն հեռացան. և Դաթանը ու

ընտ. գիմ. Իբր 1471

Ե Հմր 9 ։
Թ Եւ. բ. 14 ։ Գոր. է. 27, 35 ։
Ի Եւ. գ. 8 ։ Ղև. ի. 24 ։

Հնս. գ. 4, 5 ։
Յ ա թագ. ժբ. 3 ։ Գոր. ի. 33 ։ ր Կոր. ւ. 2 ։
Ղ Հմր 6, 7 ։
Ճ ա թագ. ժբ. 3, 7 ։

Ժ Հմր 42 ։ Եւ ժդ. 7, 10 ։ Ղև. ի. 6, 23 ։ Գև. ժդ. 10 ։
Ի Հմր 45 ։ Ցն. ժի. 17, 22 ։ Եբրա. ծա. 6 ։ Գոր. բ. 40 ։ Ցայս. ժբ. 4 ։
Ն Հմր 45 ։ Եւ. ւբ. 10 ։ ւԿ. 3 ։
Ղ Հմր 45 ։ Գև. ժգ. 5 ։
Գև. իէ. 16 ։ Ցօբ. ժբ. 10 ։ Ժ. ղ. ժբ. 7 ։ Նա. ժէ. 16 ։ Ջաբ. ժբ. 1 ։ Երե. ժբ. 9 ։
† Եբ. մարմին
Ղ Ցն. ժի. 12, 14 ։ Նա. ծբ. 11 ։ ր Կոր. ը. 17 ։ Ցայս. ժբ. 4 ։

Ն · ք · ՂՃ · Իբր 1471

Աբիրոնը և անոնց կնիկները՝ ու անոնց որդիքը և ընտանիքը՝ իրենց վրանները դուրը ելան կայնե-
28 ցան : Եւ Մովսէս ըսաւ . Դ Ասով պիտի դիտնաք թէ Տէրն է իս խրկողը բոլոր աս գործերը ընե-
լու , և չէ թէ ես ինծմէ բան-
29 Ը ըրէ · Այսինքն՝ թէ որ ասոնք ամէն մարդու մեռնելուն պէս մեռնին , և թէ որ ամէն մարդու պատահածը ասոնց ալ պատահի ,
30 Տէրը իս խրկած չէ : Բայց թէ որ Տէրը — * հրաշք մը ընէ , և երկիրը իր բերանը բանայ , ու զանոնք և անոնց բոլոր ունեցածը կլլէ , ու ա-
նոնք * ողջ ողջ գժոխքը իջնեն , ան ատենը պիտի գիտնաք որ աս մար-
31 դիկը Տէրը անարգեցին : Ես եղաւ որ աս բոլոր խօսքերը խօսիլը լմնը-
ցուցածին պէս , անոնց տակի գե-
32 տինը պատռեցաւ . Եւ երկիրը իր բերանը բացաւ , ու զանոնք և ա-
նոնց տուներր ու Կորխին ունեցած բոլոր մարդիկը և բոլոր անոնց ինչ-
33 քը կլլեց : Եւ անոնք ու բոլոր ա-
նոնց ունեցածը ողջ ողջ գժոխքը իջան . և երկիրը ծածկեց զանոնք , ու ժողովին մէջէն կորսուեցան :
34 Եւ անոնց բոլորտիքը եղած բոլոր Իսրայէլը անոնց ձայնէն փախան . քանզի ըսին . Ընդլայ որ երկիրը
35 մեզ — ել կլլէ : Եւ Տէրոջմէն կրակ ելաւ , ու Խունկ մատուցանող եր-
կու հարիւր լիսուն հոգին սպա-
ռեց :
36 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
37 սելով . Խօսէ Ահարոն քահանային որդւոյն Եղիազարին՝ որ բուրվառ-
ները ան այրուածին մէջէն վերցրնէ . և դուն անոնց ինչ եղած կրակը ան-
դին ցրուէ . քանզի — անոնք սուրբ
38 եղան : Ատ Իրենց հոգիներուն դէմ մեղք գործողներուն բուրվառներն Թիթեղներ շինեն՝ սեղանը պատե-
լու համար . ինչու որ անոնք Տէ-
րոջը առջևը մատուցելով՝ սուրբ եղած են . Եւ Իսրայէլի որդւոյը
39 նշան պիտի ըլլան : Ու Եղիազար քահանան ան այրուած մարդոցը մատուցած պղնձէ բուրվառները առաւ . և զանոնք սեղանը պատե-
լու համար Թիթեղներ շինեցին .
40 (Իսրայէլի որդւոյը յիշատակ ըլ-
լալ — հարար , որ Ահարոնի սերունդէն չեղող օտար մէկը՝ Տէրոջը առջևը խունկ մատուցանելու չմո-
տենայ , և Կորխին պէս ու անոր ժողովրին պէս չըլլայ .) ինչպէս որ Տէրը բսաւ անոր՝ Մովսէսին ձեռ-
քովը :
41 Եւ հետևեալ օրը Իսրայէլի որ-
դւոյը բոլոր ժողովրդ Մովսէսին դէմ ու Ահարոնին դէմ տրտունջ

Ն · ք · ՂՃ · Իբր 1471

ըրին՝ ըսելով . Դուք Տէրոջը ժողո-
42 վուրդը մեռցուցիք : Եւ եղաւ որ երբ ժողովրդը Մովսէսին ու Ահարո-
նին դէմ ժողովուած էին , դէպ՝ի ժողովքի խորանը նայեցան , և ահա ամպը ծածկեց ան , ու Տէրոջը
43 փառքը երևցաւ : Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքի խորանին առջևը
44 եկան : Եւ Տէրը խօսեցաւ Մովսէ-
45 սին՝ ըսելով . Ե Ատ ժողովքին մէջէն ելէք , որ շուտով սպառեմ զա-
նոնք . և Ասոնք երեսնուն վրայ ինկան :
46 Եւ Մովսէս ըսաւ Ահարոնին . Բուրվառ մը առ , ու Իջը սեղա-
նին վրայէն կրակ դիր , և վրան խունկ դիր , ու շուտով ժողովրդը գնա , ու անոնց համար քաւու-
թիւն րրէ , Ինչու որ Տէրոջմէն բարկութիւն ելաւ . ժանտախտը
47 սկսաւ : Եւ Ահարոն Մովսէսին ը-
սածին պէս՝ բուրվառ Իջը առաւ , ու ժողովրդին Իջը վազեց , և ահա ժանտախտը սկսած էր ժողովուր-
դին մէջը , և վրան խունկ դրաւ , ու ժողովուրդին համար քաւութիւն
48 ըրաւ . Եւ մեռելներուն ու ողջե-
րուն մէջտեղը կայնեցաւ , ու ժանտ-
49 ախտը դադրեցաւ : Եւ ժանտ-
ախտէն մեռածները տասնուչորս հազար եօթը հարիւր հոգի էին , Կորխի բանին համար մեռածներէն
50 զատ : Եւ Ահարոն դարձաւ Մով-
սէսին՝ ժողովքի խորանին դուռը , ու ժանտախտը դադրեցաւ :

ԳԼ · ԺԷ

1 Տասուերկու ցեղերուն գլուխներուն Իջը՝ Ահարոնին գլուխը կը ծածկի , 10 ու ժո-
ղովուրդին ապստամբներուն դէմ վկայութիւն ընելու համար կը պահուի :

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե-
2 լով . Խօսէ Իսրայէլի որդւոյը , ու անոնցմէ Իրենց հարցը տուներուն համեմատ Իջմէկ գլուխ՝ այսինքն իրենց հարցը տուներուն բոլոր իշ-
խաններէն տասուերկու գլուխ առ . ամէն մարդուն անունը իր
3 գլուխին վրայ գրէ : Եւ Ահա-
րոնին անունը Ղևիին գլուխին վրայ պիտի գրես . ինչու որ անոնց հայրերուն տանը իշխանին համար
4 Իջ գլուխ պիտի ըլլայ . Եւ զանոնք ժողովքի խորանը՝ վկայու-
թիւնին առջևը դնես , — ուր որ Ձե-
5 զի պիտի հանդիպիմ : Եւ պիտի ըլ-
լայ որ՝ Իմ ընտրած մարդուս գլ-
ուխը պիտի ծաղկի . ու պիտի դադրեցընեմ ինծմէ Իսրայէլի որ-
դւոյը տրտունջը՝ որոնք կը տրտնջ-
6 ըլն ձեր վրայով : Եւ Մովսէս խօ-
սեցաւ Իսրայէլի որդւոյը . ու ա-
նոնց բոլոր իշխանները իրենց հարցը տուներուն համեմատ՝ տասուերկու

— Եւ · Խ · 34 ·
Բ Հմր 19 ·
Գլ · Ր · 6 ·

Հմր 21 , 24 ·

Ր Հմր 22 ·
Գլ · Ր · 6 ·

Ի ՂՀ · Ժ · 6 ·
Գլ · Ա · 53 ·
Ը · 19 · Ժա · 33 · Ժը · 5 ·
Ա ՄՆ · Ի · 24 · Սաղ · ՃՀ · 29 ·

գաւազան տուին անոր , ամէն մէկ իւխանին համար մէ՛մէկ գաւազան . և Ահարոնին գաւազանը անոնց գա-
7 ւազաններուն մէջն էր : Եւ Մովսէս գաւազանները Տէրոջը առջևը դրաւ՝ Վկայութեան խորանին մէջ :
8 Եւ եղաւ որ հետևեալ օրը Մովսէս վկայութեան խորանը մտաւ . և ահա Ղևիի տանը կողմէն բո՜ւ-
ծած Ահարոնին գաւազանը ծաղկեցաւ , ու ծլեցաւ , և ծաղիկ բացաւ , ու
9 նուշեր հասցուց : Եւ Մովսէս բո-
լոր գաւազանները Տէրոջը առջևէն դուրս հանեց Իսրայէլի բոլոր որ-
դոցոր առջևը . ու անոնք տեսան , և ամէն մէկը իր գաւազանը առաւ :
10 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ահարոնին գաւազանը վկայութիւնին առջևը ետ դարձուր , նոր ապըս-
տամբներուն նշան ըլլալու համար պահուի . ետ անոնց տրտունջը ինծ-
11 մէ վերցընես , որ չմեռնին : Եւ Մովսէս Տէրոջը իրևն պատուիրածին
12 պէս ըրաւ , անանկ ըրաւ : Եւ Իսրա-
յէլի որդիքը խօսեցան Մովսէսին՝ ըսելով . Ա՛հա կը մեռնինք , կը կորսուինք . մենք ամէնքս կը կոր-
13 սուինք . ամէն ով որ Տէրոջը խո-
րանին մօտենայ՝ կը մեռնի . ամէնքս ալ պիտի մեռնի՞նք :

ԳԼ . ԺԸ

1 Քահանայից ու Ղևտացւոց յանձնուած պահպանութիւնը : 9 Քահանայից բաժինը , 21 Ղևտացւոց բաժինը : 25 Ղևտացւոց բաժինէն բարձրացընելու ընծան քահանայից իրա-
ւունքը կ՚ըլլար :

1 Յե՛ Տէրը ըսաւ Ահարոնին . Դուն՝
ու քեզի հետ քու որդիքդ՝ և քու հօրդ տունը՝ Բսրբարանին ա-
նօրէնութիւնը պիտի կրէք . և դուն ու քեզի հետ քու որդիքդ ձեր քահանայութեանը անօրինու-
2 թիւնը պիտի կրէք : Եւ քու հօրդ ցեղէն՝ Լևիին ցեղէն եղող քու եղբայրներդ մօտեցընես , որ քեզի հետ միանան , ու քեզի սպասաւորութիւն ընեն . և դուն ու քեզի հետ քու որդիքդ վկայու-
թեան խորանին առջևը պիտի ըլլա-
3 ք : Եւ քու պահպանութիւնդ ու բոլոր Խորանին պահպանութիւնը պիտի պահեն . Բ՛միայն թէ սրբարանին անօթներուն ու սեղանին չմօտե-
նան , որ ոչ անոնք մեռնին՝ ոչ ալ
4 դուք : Եւ անոնք ձեզի հետ պիտի միանան , ու ժողովքի խորանին պահպանութիւնը պիտի պահեն՝ խորանին ամէն պաշտօնին նայելով . Բև օտար մէկը պիտի չմօտենայ ձե-
5 զի : Եւ Բսրբարանին պահպանու-
թիւնը ու սեղանին պահպանու-
թիւնը պիտի պահէք , նոր ալ Իսրա-
յէլի որդոցը վրայ բարկութիւն
6 չըլլայ : Եւ ահա ես Իսրայէլի որ-
դոցոր մէջէն Լևիները եղբայրները ղևտացիները առի . Բանոնք ձեզի Տէրոջը համար պարգև տրուած են , որ ժողովքի խորանին պաշտօնը
7 ընեն : Եւ Բդուն ու քեզի հետ քու որդիքդ սեղանին բոլոր բանե-
րուն համար և Վարագուրին. մէջը եղած բաներուն համար ձեր քա-
հանայութիւնը պիտի պահէք , ու պաշտօնը կատարէք . ձեր քահա-
նայութիւնը Յեզի պարգևի պաշտօն տուի , և մօտեցող օտարականը պիտի մեռնի :
8 Եւ Տէրը խօսեցաւ Ահարոնին . Եւ ես ահա Իսրայէլի որդոցոր բո-
լոր սուրբ բաներէն իմ ընծաներուս պահպանութիւնը քեզի տուի . և անոնք Յօծման իրաւունքի համար քեզի և քու որդոցդ տուի յաւի-
9 տենական կանոնով : Սոնք քուկդ պիտի ըլլան ամենասուրբ բաներէն՝ *որ չեն պայուիր՝ . Ղանոնց ամէն հացի ընծաներուն՝ Ղանոնց ամէն մեղքի պատարագներուն՝ և Ղանոնց ամէն յանցանքի պատարագներուն բոլոր ընծաները՝ որ ինծի պիտի հա-
տուցանեն , ամենասուրբ են քեզի
10 ու քու որդոցդ համար : Ամենա-
սուրբ տեղին մէջ պիտի ուտես ան . ամէն արու պիտի ուտէ ան . անի-
11 կայ սուրբ պիտի ըլլայ քեզի : Նա ալ քուկդ պիտի ըլլայ . Բանոնց պարգևներուն բարձրացընելու ըն-
ծան , և Իսրայէլի որդոցը բոլոր երերցընելու ընծաները . Բքեզի՝ և քեզի հետ քու որդոցդ՝ ու քու աղջիկներուդ տուի անոնք յաւի-
տենական կանոնով . Բքու տանդ մէջ ամէն մաքուր եղողը անկէ պի-
12 տի ուտէ : Ամենէն աղէկ ձիւին՝ և ամենէն աղէկ գինիին ու ցորէնին բոլոր Բերախայրիները՝ որ Տէրոջը պիտի մատուցանեն , քեզի տուի :
13 Անոնց երկրին մէջ եղած ամէն բե՜ր-
բերը՝ երախայրիները՝ նոր Տէրոջը պիտի ըլլան , քուկդ պիտի ըլլան . Բքու տանդ մէջ ամէն մաքուր եղո-
14 ղը անկէ պիտի ուտէ : Բիսրայէլի մէջ ամէն նուիրուած բանը քուկդ
15 պիտի ըլլայ : Ամէն մարմինի ամէն Բարդանդ բացողը որ Տէրոջը կ՚ըն-
ծայեն , թէ՛ մարդ ըլլայ և թէ՛ ա-
նասուն՝ քուկդ պիտի ըլլայ . միայն թէ՝ մարդուն առջինները անշուշտ պիտի փրկես . և անմաքուր անա-
սունին առջինները ալ պիտի փրկես :
16 Ու երբոր փրկուելու տա՜րեկ-մկ ամ-
սուան ընե՜ն , սրբարանին սիկղին համեմատ՝ Բհինգ սիկղ արծաթի գնով պիտի փրկես . Բայիղ բսան
17 կերատ է : Բայց կովին առջինը-
կը՝ և ոչխարին առջինկը կամ այ-

ՆՔ · ԳՔ · ԽԸՐ 1471

ԼԳԼ · Գ · 12, 45 ; Ի Գ Լ · Գ · 9 ; Ը · 19 ; Բ ՀՇՐ 5 ; ԳԼ · Գ · 10 ; ԿԵՐԸ · Թ · 3, 6 ;

Ղ Գ Լ · Ը · 16, 18, 28 ; Ե · 6 · 32 ; ԳԼ · Ե · 9 ; ՅԵԼ · ԻԹ · 29 ; Խ · 13, 15 ; * ԵՐԸ · կրա-
կէն ·

Ղ Գ Լ · Բ · 2, 3 ; Բ · 12 · 13 ;

Ճ Գ Լ · Գ · 22, 27 ; Ը · 25, 26 ;

Ր Գ Լ · Ե · 1 · Ե · 7 ; Բ · 12 ; Գ · 13 ·

Ղ Գ Լ · Ը · 16 · 18, 26, 29 · Ե · 6 ·

ՆԵԼ · ԻԹ · 27, 28 ; Ղ Լ · Ե · 30, 34 ·

Ղ Գ Լ · Բ · 14 · Բ Օր · Բ · 3 ·

Գ Լ · ԻԲ · 2, 3, 11, 12, 13 ·

Ն ՀՇՐ 29 · ՆԵ ԻԳ · 19 · Բ Օր · Բ · 4 · Նէեմ · Բ · 35 · 36 ·

Գ ՆԵ · ԻԲ · 29 ·

Ը ՆԵ · ԻԲ · 29 · ԻԳ · 19 · ԼՀ · 26 · Ղ Լ · Բ · 14 · Գ Լ · Բ · 19 · Բ Օր · ԻԳ · 2 ·

Բ ՀՇՐ 11 ·

Գ Ղ Լ · ԽԵ · 25 ·

Ե ՆԵ · Բ · Գ · 25 · Բ Գ Լ · Գ · 47 ·

Ը ՆԵ · Ա · 18 · Ղ Լ · ԽԵ · 25 · Գ Լ · Գ · 47 · ԵԶԿ · ԽԵ · 12 ·

Գ Օր · Բ · 10 ·

ծին առջևնիկը պիտի չփրկեա , ա-
նոնք սուրբ են . Հանոնց արիւնը
սեղանին վրայ պիտի սրսկես , ու
անոնց ճարպը պիտի այրես անու-
շահոտ պատարագ ընծա- Տէրոջը .
18 Եւ անոնց միսը քու կողդ պիտի ըլլայ ,
Հերկրցընելու երբուձը ու աջ զիս-
19 տը քու կողդ ըլլալուն պէս : Սուրբ
բաներէն ամէն բարձրացընելու ըն-
ծաները՝ որ Իսրայէլի որդիքը Տէ-
րոջը կը մատուցանեն , քեզի և քե-
զի հետ քու որդիներուդ ու աղջիկ-
ներուդ տուի՝ յաւիտենական կա-
նոնով . Հանիկայ՝ Տէրոջը առջևը
քեզի՝ և քեզի հետ քու սերունդիդ՝
20 աղի ուխտ մըն է յաւիտեան : Եւ
Տէրը ըսաւ Ահարոնին . Անոնց
երկրին մէջ դուն ժառանգութիւն
պիտի չունենաս , ու անոնց մէջտե-
ղը բաժին չունենաս . Հսրայէլի
որդւոցը մէջ քու բաժինդ ու ժա-
ռանգութիւնդ ես եմ :
21 Եւ ահա Իսրայէլի բոլոր տասա-
նորդը Բղևիի որդւոցը տուի ժա-
ռանգութեան համար՝ իրենց պաշ-
տօնին փոխարէն , Հժողովքի խոս-
րանին պաշտօնը ընելնուն համար ;
22 Ռ Եւ Իսրայէլի որդիքը՝ ալ ժողովքի
խորանին պիտի չմօտենան , Հար
23 մեղք չերևն ու չմեռնին : Եւ ժո-
ղովքի խորանին պաշտօնը Ղևտա-
ցիք պիտի ընեն , ու իրենց անօրէ-
նութիւնը իրենք պիտի կրեն . Ո-
րովհետև ձեր ազգերուն մէջ յաւիտե-
նական կանոն պիտի ըլլայ , որ անոնք
Իսրայէլի որդւոցը մէջ ժառանգու-
24 թիւն չունենան , Հ քանզի Իսրա-
յէլի որդւոցը տասանորդը՝ որոնք
Տէրոջը կ՚ընծայեն , Ղևտացւոց
ժառանգութիւն տուի . ասոր պատ-
ճառով անոնց համար ըսի որ՝ Իս-
րայէլի որդւոցը մէջ ժառանգու-
թիւն չունենան :
25 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
26 սելով . Ա՛յսպէս խօսէ Ղևտացւոց՝
ու ըսէ անոնց . Երբոր Իսրայէլի
որդւոցմէն տասանորդը առնէք՝ որն
որ անոնց կողմանէ ձեզի ժառան-
գութեան համար տուի , ան ատե-
նը անկէ՝ Ի տասանորդին տասնե-
րորդ մասը բարձրացընելու ընծայ
27 պիտի մատուցանէք Տէրոջը : Ժ Ե-
աս ձեր բարձրացընելու ընծան՝
կալի ցորենի պէս և հնձանի բերքի
28 պէս պիտի սեպուի ձեզի : Ա՛յս-
պէս՝ Իսրայէլի որդւոցմէ ձեր առած
բոլոր տասանորդներէն դուք ալ
բարձրացընելու ընծայ պիտի մա-
տուցանէք Տէրոջը . և անոնցմէ՝
Տէրոջը բարձրացընելու ընծան Ա-
հարոն քահանային պիտի տաք :
29 Բոլոր ձեզի եղած ընծաներէն՝ Տէ-
րոջը ամէն բարձրացընելու ընծան՝
բոլորովին Հանոր ամենալաւն՝ ա-
նոր սուրբ մասն պիտի մատու-
30 ցանէք : Ուստի պիտի ըսես անոնց .
Երբոր անոր ամենալաւն մատու-
ցանէք , Հան ատենը Հ-ց-Հէ կալի
արդիւնքի պէս՝ ու Հնձանի արդիւնե-
քի պէս սեպուի Ղևտացիներուն :
31 Եւ ամէն տեղ պիտի ուտէք ան ,
դուք ու ձեր ընտանիքներդ . վասն
զի ժողովքի խորանին մէջ Հձեր
ընէը- պաշտօնին խոհարէն՝ ձեր
32 վարձքն է ան : Եւ անկէ ամենա-
լաւը մատուցանելէն ետքը՝ Հանոր
համար մեղք պիտի չկրէք , ու
Իսրայէլի որդւոցը սուրբ բաները
չպղծէք , որ չմեռնիք :

ԳԼ . ԺԹ

1 Կարմիր երինջի մոխիրով չինուած մաքրու-
թեան ջուրը : 11 Անմաքուր մարդուն մաք-
րուելուն համար՝ ան ջուրին գործածու-
թիւնը :

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու
2 Ահարոնին՝ ըսելով . Ա՛ս է օրէնք-
քին կանոնը՝ որ Տէրը պատուիրեց՝
ըսելով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝
որ քեզի կարմիր երինջ մը բերեն
անարատ ու անբիծ՝ որուն վրայ
3 լուծ դրուած չըլլայ : Եւ եղիազար
քահանային պիտի տաք անիկայ ,
որ Բրանակէն դուրս հանէ , ու իր
4 առջևը մորթեն անիկայ : Եւ Ե-
ղիազար քահանան իր մատովը ա-
նոր արիւնէն պիտի առնէ , ու դէպ
՚ի ժողովքի խորանին առջևի կողմը
Հ ևօթը անգամ պիտի սրսկէ անոր
5 արիւնէն : Ետքը իր աչքին առջևը
պիտի այրեն երինջը . Ժ անոր մոր-
թը ու միսը և անոր արիւնը աղբովը
6 միասին պիտի այրեն : Եւ քա-
հանան պիտի առնէ Հևդնին փայտ՝
զուպայ ու կրկնակի կարմիր , և ե-
րինջին այրուած կրակին մէջը պե-
7 տի նետէ : Ետ քահանան իր
հանդերձները ու իր մարմինը ջրով
պիտի լուայ , ու ետքը բանակը
մտնէ . և քահանան մինչև իրիկուն
8 անմաքուր պիտի ըլլայ : Եւ ա-
նիկայ այրողը իր հանդերձները ու
իր մարմինը ջրով պիտի լուայ , և
մինչև իրիկուն անմաքուր ըլլայ ;
9 Եւ մաքուր մարդ մը Հ երինջին մո-
խիրը պիտի ժողվէ , ու բանակին
դուրսի պէս մաքուր տեղ մը դնէ .
և Իսրայէլի որդւոցը ժողովքին հա-
մար պիտի պահուի , մեղայ համար
10 Հ մաքրութեան ջուր ըլլալու : Եւ
երինջին մոխիրը ժողվողը իր հան-
դերձները պիտի լուայ , ու մինչև
իրիկուն անմաքուր ըլլայ . և ասիկ
կայ Իսրայէլի որդւոցը ու անոնց
մէջ պանդխտացող օտարականին

Ն . ք . դ . Իրր 1471

Ղև . գ . 2 , 5 ։

Ել . իթ . 26 , 28 ։ Ղև . է . 31 , 32 , 34 ։

Հմր 11 ։

Ղև . բ . 13 ։ Բ Մն . ժգ . 5 ։

Բ Օր . ժ . 9 ։ Ժր . 12 ։ ժդ . 27 , 29 ։ Ժբ . 1 , 2 ։ Յես . ժգ . 14 , 33 ։ ժդ . 3 ։ Ժր . 7 ։ Սաղ . ժգ . 5 ։ Եզեկ . կգ . 28 ։

Բ Հմր 24 , 26 ։ Ղև . իէ . 30 , 32 ։ Նէեմ . ժ . 37 ։ Ժր . 44 ։ Երր . է . 5 , Տ . 9 ։

Ծ Գլ . գ . 7 , Տ ։

Ա Գլ . ա . 51 ։

Բ Ղև . իր . 9 ։

Ղ Գլ . գ . 7 ։ Բ Հմր 21 ։

Ը Հմր 20 ։ Բ Օր . ժ . 9 ։ ժգ . 27 , 29 ։ ժբ . 1 ։

Ր Նէեմ . ժ . 38 ։

ժ Հմր 30 ։

Ն . ք . դ . Իրր 1471

Բ Հմր 12 ։

Է Հմր 27 ։

Ի Մատ . ժ . 10 ։ Ղև . ժ . 7 ։ ա Կոր . թ . 13 ։ Ա Տիմ . ե . 18 ։ Ձ Ղև . իթ . 8 ։ Իբ . 16 ։ Ղ Ղև . իբ . 2 , 15 ։

Ն · ք · գՖ · ԽԲԲ 1471

համար՝ յաւիտենական կանոն պիտի ըլլայ ։

11 Ը Ո վ որ մեռած մարդու մը մարմինին դպչի , եօթը օր անմաքուր

12 պիտի ըլլայ ։ Ժ Անիկայ *անով զինքը մաքրվել պիտի տայ երրորդ օրը՝ և եօթներորդ օրը , և այսպէս մաքուր ըլլայ · բայց թէ որ չմաքրուի երրորդ օրը ու եօթներորդ օրը՝

13 մաքուր պիտի չըլլայ ։ Ո՛վ որ մեռած մարդու մը մարմինին դպչի՝ ու ինքզինքը չմաքրե , Է Տէրոջը խոռանը կը պղծէ . և ան անձը Իսրայէլէն պիտի կորսուի . անոր վրայ Եմաքրութեան ջուրը չսրսկուելուն համար՝ անիկայ անմաքուր է . է իր անմաքրութիւնը տակաւին իր վե-

14 րան է ։ Վրանի մէջ մեռնող մարդուն համար օրէնքը աս է . ան վրանին մէջ ամէն մտնողը՝ և ան վրանին մէջ ամէն եղողը եօթը

15 օր անմաքուր պիտի ըլլայ ։ Եւ ամէն ծրաց ամանը որ իր վրան կապուած խուփ չունի , անմաքուր

16 պիտի ըլլայ ։ Եւ ո՛վ որ դպչի դաշտի վրայ սրով սպաննուածի մը՝ կամ իր մեռածի մը՝ կամ մարդու ոսկորի մը՝ և կամ գերեզմանի մը , եօթը օր անմաքուր

17 պիտի ըլլայ ։ Եւ անմաքուր եղողին համար՝ ան մեղաց մաքրութեան համար հայրսան էբէնէզէր մխիրէն առնելով՝ ամանի մը մէջ

18 վրան Ն կենդանի ջուր դնեն . Եւ մաքուր մարդ մը Ղոսպայ պիտի առնէ , ու ան ջուրը խոթէ , և վրանին վրայ՝ ու բոլոր ամաններուն վրայ՝ և հոն եղած մարդոց վրայ՝ ու ոսկորի մը կամ սպաննուածի մը կամ մեռածի մը և կամ գերեզմանի մը դպչողին վրայ պիտի սրսկ-

19 կէ ։ Եւ մաքուր Ֆ ԹԷ պիտի սրսկէ անմաքուրին վրայ երրորդ օրը՝ ու եօթներորդ օրը . և եօթներորդ օրը զանիկայ պիտի մաքրէ , ան ալ իր հանդերձները պիտի լուայ , ու ջրով լուացուի , և իրիկունը մա-

20 քուր ըլլայ ։ Բայց ան մարդը՝ որ անմաքուր ըլլալով չմաքրուիր , ան անձը ժողովին մէջէն պիտի կորսուի . ինչու որ Տէրոջը սրբարանը պղծեց . անոր վրայ՝ մաքրութեան ջուրը չսրսկուեցաւ , անիկայ ան-

21 մաքուր է ։ Եւ յաւիտենական կանոն մը ըլլայ անոնց , որ մաքրութեան ջուրը սրսկողը իր լաթերը պիտի լուայ . ու մաքրութեան ջուրին դպչողը մինչև իրիկուն անմա-

22 քուր պիտի ըլլայ ։ Եւ ինչ բան որ դպչի , ան ալ անմաքուր պիտի ըլլայ . ու անոր դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ ։

ԳԼ · Ի

1 Իսրայէլի որդիքը Սին կոչ դան , ու հոն Մարիամ կը մեռնի ։ 2 Ջուրի համար տրտունջ կ'ընեն ։ 7 Մովսէս ժայռին գարնելով Մերիպայի մէջ ջուր կը բղխեցնէ ։ 14 Մովսէս Կադեսէն դեսպաններ կը խրկէ Եդովմի թագաւորին՝ խնդրելով անկէ որ իր սահմանէն անցնելու հրաման տայ Իսրայէլին · բայց ան խնդիրքը չընդունուիր ։ 23 Ահարոն Հովր լեռանը վրայ քահանայութիւնը իր որդւոյն Եղեազարին կը յանձնէ , ու ինքը հոն կը մեռնի ։

Ն · ք · գՖ · ԽԲԲ 1453

1 Ա՜ Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքը Սինն անապատը էկան առջի ամսուն , ու ժողովուրդը կաղեսի մէջ իջևան ըրաւ . և Մարիամ հոն վախճանեցաւ , ու հոն թաղուեցաւ ։

— ԳԼ · ԼԶ ։ 36 ։

ԲԵԼ · ԺԵ · 20 ։ Գ Ե · Իզ · 59 ։

2 Եւ ժողովքին համար ջուր չկար · ու Մովսէսի և Ահարոնին վրայ

Ֆ ԵԼ · ԺԵ · 1 ։ Ժ ԳԼ · Ժզ · 19 , 42 ։

3 հաւաքուեցան ։ Եւ ժողովուրդը Մովսէսին հետ վիճելով՝ խօսեցան ու ըսին . Երանի թէ մենք ալ մեռնէինք՝ Էրբոր մեր եղբայրները

Ի ԼԵ · ԺԵ · 2 · ԳԼ · Ժ · 2 · Ղ Գ Ի · Ժ ա · 1 , 33 ։ Ժ գ · 37 , Ժզ · 32 , 35 , 49 ։

4 մեռան Տէրոջը առջեւը . Եւ ինչո՞ Տէրոջը ժողովուրդը աս անապատը բերիք , որ մենք ու մեր անասուն-

Ի ԵԼ · ԺԵ · 3 ։

5 ները հոս մեռնինք ։ Եւ ինչո՞ մեզ Եղիպտոսէն հանեցիք՝ մեզ աս գէշ տեղը բերելու համար . հոս ոչ սերմ կայ և թուզ և նռնենի և խաղող . խմելու ջուր անգամ չկայ ։

6 Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքին առջեւէն էլան՝ ժողովքի խորանին դուռը գացին , ու երեսնին վրայ իյնան . և Տէրոջը փառքը անոնց երեւցաւ ։

Ը ԳԼ · Ժդ · 5 ։ Ժզ · 4 , 22 , 45 ։

7 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին

Ր ԳԼ · Ժ գ · 10 ։

8 ըսելով . Ժ գաւազանը առ , ու ժողովքը ժողվէ , դուն ու քոյր եղբայրդ Ահարոնը , և անոնց աչքերուն առջեւը խօսեցէք ապառաժին , ու իր ջուրը պիտի տայ . և դուն ապառաժէն ջուր պիտի հանես անոնց , ու ժողովքին և անոնց անասուններուն խմցնես ։

Ժ ԵԼ · ԺԵ · 5 ։

Ֆ Նէեմ · Թ · 15 ։ Սաղ · Ղր · 15 , 16 ։ Ես · 41 , Ժ գ · 8 ։ Ես · Խգ · 20 , Խը · 21 ։

9 Եւ Մովսէս առաւ գաւազանը Տէրոջը առջեւէն , ինչպէս որ իրեն

10 պատուիրեց ։ Եւ Մովսէս ու Ահարոն՝ ժողովքը ապառաժին առջեւը ժողվեցին . և ըսաւ անոնց . Լսեցէք հիմա՝ ով ապստամբներ , ձեզի աս ապառաժէն ջուր հա-

11 նենք ։ Եւ Մովսէս իր ձեռքը վերցուց , ու գաւազանը երկու անգամ ապառաժին զարկաւ . և ծառատօրէն ջուր ելաւ . և ժողովքը ու անոնց անասունները խմեցին ։

Ի Սաղ · Ճզ · 33 ։ Ժ ԵԼ · ԺԵ · 6 ։ Բ Օր · Ը · 15 ։ ա Կոր · Ժ · 4 ։

12 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ահարոնին . Որովհետև չհաւատացիք Իսրայէլի որդւոցը աչքերուն առջեւը իս †փառաւորելու , անոր համար աս ժողովուրդը դուք պիտի չտանիք ան երկիրը՝ որն որ

Ի ԳԼ · Ժ · 14 ։ Բ Օր · ա · 37 · գ · 26 ։ Ը · 51 · Հ Ղա · Ժ · 3 ։ Եզկ · ի · 41 ։ Ղ · 23 · Ը · 16 · ա Պե · գ · 15 ։

† Եբր · սրբեցու ։

Ն · ք · դԿ · Ի֊ր 1453

ՅԵԼ · ԺԷ · 7 · ր Օր · ԼԲ · 8։ Սաղ · գն · 8 · ՃՂ · 32 · ՃՃ ։

* ՅՅ՝ Վիճաբանութեան Դատաւոր. 16 · 17 ։

ՃՐ Օր · ր · 4 · ՃՃ · իԳ · 7 · ԱԲԳ · 10 · 12 ։

ՅԵԼ · ԺԸ · 8 ։

ՅՅՆ · իԿ · 6 ։ Գոր · Է · 15 ։

ՆԵԼ Ժր · 40 ։

ԼԵԼ · ա · 11 · ՃՃ ։ ր Օր · իԿ · 6։ Գոր · Է · 19 ։

ՊԵԼ · ր · 23 ։ գ · 7 ։

ԼԵԼ · գ · 2 · Ժգ · 19։ իգ · 20 · ԼԲ · 2 ։

Տ Տ՚ն · գԼ · իա · 22 ։ ր Օր · ր · 27 ։

† ԵՀՐ · ԻՆԺ · ՄՔ

ԼՐ Օր · ր · 6 · 28 ։

ՊԴաւո. Ժա. 17 ։

ՊՏ՚ն ր Օր · ր · 27 , 29 ։

ԼՐ Օր · ր · 4 · 5 · 8։ Դաւո. Ժա · 18 ։

ՊԳԼ · ԼԲ · 37 ։

ր ԳԼ · իա · 4 ։

ՅՅՆ · իԷ · 8 ։ Գ · Իէ · 13 ։ Լա · 2 ։ ր Օր · ԼԲ · 50 ։

ՊՀՐ 12 ։

† ԳԼ · ԼՁ · 38 ։ ր Օր · ԼԲ · 50 ։

† ԵԼ · ԽԹ · 29 , 30 ։

13 անոնց տուի ։ Ն * Մերիպայի Ջուրը առ Է . վասն զի Իսրայէլի որդիքը Տէրոջը դէմ վիճեցան և ինքը փառաւորուեցաւ անոնց մէջ ։

14 Եւ Մովսէս կառնէին դեսպաններ խրկեց Եդոմի թագաւորին ՊԸՂԲՈՒ · Ո Ձ յայսմ կ՚ըսէ քու եղբայրդ Իսրայէլ · Ո Մէղի պատահած բոլոր նեղութիւնը դիտես

15 Ո ինչպէս մեր հայրերը եգիպտոս իջան , Ն և բնակեցանք եգիպտոսի մէջ շատ տարի · և Եգիպտացիք չարչարեցին մեզ ու մեր հայրերը ։

16 Եւ ՊԸրբ մենք Տէրոջը աղաղակեցինք , լսեց մեր ձայնը . և Ո՚ղ հրեշտակ մը խրկեց , ու մեզ եգիպտոսէն հանեց . և ահա մենք քու սահմանիդ ծայրի կադէս քաղաքին

17 մէջն ենք · Ընդհրկ ըսե՚ Ո անցնինք քու երկրէդ · արտերէն ու այգիներէն պիտի չանցնինք , և ԻՊՀորերուդ Ջուրը պիտի չխմենք · արքունական ճամբային պիտի երթանք , աջ կամ ձախ կողմը պիտի չխոտորինք՝ մինչև որ քու սահմանդ

18 Ն եդ անցնինք ։ Եւ Եդոմ ըսաւ անոր · Ի Իմ երկրէս՝ պիտի չանցնես , հապա թէ չէ՝ սրով քու դէմդ

19 կ՚ելլենք ։ Եւ Իսրայէլի որդիքը ըսին անոր · Մենք մեծ ճամբայէն կ՚անցնինք , և թէ որ ես ու իմ անասուններս քու Ջուրդ խմենք . Ն անոր դինը կը հատուցանենք · ասանկ ուրիշ բան մը ընէլ՝ իմ ոտ

20 քերովս կ՚անցնիմ ։ Եւ անիկայ ըսաւ · Պիտի չանցնիս · և Եդոմ մեծ բազմութիւնով ու հզօր ձեռ

21 րով անոնց դէմ ելաւ ։ Ա յսպէս Եդոմ ՝իր սահմանէն Իսրայէլին ճամբայ տալ չուզեց · ուստի Իսրայէլը Վարձաւ անկէ ։

22 Եւ Ո կաղեսէն չուեցին , ր ու Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքը

23 Հոր լեռը եկան ։ Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ահարոնին Հոր լեռը՝ Եդոմի երկրին սահ֊

24 մանին քովը՝ ըսելով · Ահարոնը ՃԻր ժողովուրդին պիտի խառնուի · քանդի Մերիպայի Ջուրին քովը՝ Ո իմ հրամանիս դէմ ապստամբութիւն ընընծայեցիք՝ համար՝ պիտի չմտնէ ան երկիրը՝ որն որ Իսրայէլի

25 որդւոցը տուի ։ † Ահարոնը ու անոր որդին եղիազարը առ , ու Հոր

26 լեռը հանէ դանոնք · Եւ Ահարոնը իր զգեստներէն մերկացուր , ու անոր որդւոյն Եղիազարին հագցուր զանոնք · ինչու որ Ահարոն իր ՃՂՔՐԲՐԴԻՆ պիտի խառնուի , ու հոն

27 մեռնի · Եւ Մովսէս Տէրոջը պատուիրածին պէս ըրաւ · ու բոլոր ժողովքին աչքին առջեւը Հոր լեռը

28 ելան ։ † Եւ Մովսէս մերկացուց Ահարոնը իր զգեստներէն , ու անոր որդւոյն Եղիազարին հագցուց զանոնք · և † Ահարոն հոն լեռանը գլուխը մեռաւ · ու Մովսէս և Եղիազար լեռնէն իջան ։

29 Ա երբ բոլոր ժողովքը տեսան որ Ահարոնը մեռաւ · Իսրայէլի բոլոր տունը Ահարոնին համար Ֆ երսունը օր լացին ։

ԳԼ · ԻԱ

1 Իսրայէլը իմ մը վիճա բաւելով՝ քանանացիները կը կարդ Հորմայի մէջ · 4 ժողովուրդը տրտունջ ընելուն համար՝ կիզող օձերով կը վիրաւորուի · 7 ու երբ ղղելով՝ պղնձէ օձին միջոցով կ՚առնուած Հարուածէն · 10 Իսրայէլացւոց այլ և այլ ճամբորդութիւնները ։ 21 Ս եհոն թագաւորը պատերազմով ասոնց վրայ կու գայ · ու կը յաղթուի · 33 Նոյնպէս ալ Ովգ թագաւորը ։

1 Ն ահարաւային կողմը բնակող Ո Արադի † քանանացի թագաւորը լսելով որ Իսրայէլը Ա թարիմի ճամբային կու գայ , Իսրայէլին հետ պատերազմեցաւ , և անոնցմէ գերի֊

2 Ներ առաւ ։ Ի Եւ Իսրայէլ ուխտ ըրաւ Տէրոջը՝ ու ըսաւ · Թէ որ աս ժողովուրդը իմ ձեռքս մատնես , անոնց քաղաքները ‖ բոլորովին պի֊

3 տի կորսընցնեմ՚՝ ։ Եւ Տէրը Իսրայէլին ձայնը լսեց , ու քանանացիները Ո նոր չՏ֊ը մատնեց · և Իսրայէլ բոլորովին կորսընցուց զանոնք՝ ու անոնց քաղաքները , և ան տեղին անունը § Հորմա դրաւ ։

4 Ու † Եդոմի երկրին բոլորտիքէն անցնելով՝ Տ Հոր լեռնէն կարմիր ծովուն ճամբան չուեցին · ու ճամբ րուն Մէջ ժողովուրդին Ի սիրտը նե֊

5 ղացաւ ։ Եւ ժողովուրդը Ո Աստուծոյ դէմ ու Մովսէսին դէմ խօսեցան՝ ըՒԵՂ · Ի ՆՉՒ՚ Մեզ Եդիպտոսէն հանեցիք՝ որ անապատին Մէջ մեռնինք · քանդի հաց չկայ , Ջուր չկայ · և Ձաս չնչին հացին մեր

6 սիրտը զզուեր է , Եւ Ի Տէրը ժողովուրդին վրայ † կիզող օձեր խրկեց , ու իսածին ժողովուրդը · անանկ որ՝ Իսրայէլէն շատ ժող֊

7 վուրդ մեռաւ · Ի Եւ ժողովուրդը Մովսէսին եկան , ու ըսին · Ս Տէրոջը դէմ ու քեզի դէմ խօսելովնիս մեղանչեցինք · Ի աղօթք ըրէ Տէրոջը՝ որ մեր վրայէն օձերը վերցրնէ · և Մովսէս ժողովուրդին հա֊

8 մար աղաչեց · Եւ Տէրը ըսաւ Մովսէսին · Քեզի կիզող օձ մը չնիէ , ու զանիկայ ձողի մը վրայ դիր · և ըլլայ Թէ ով որ իսածնուի , անոր նայի՝ ու

9 ապրի · Եւ † Մովսէս պղնձէ օձ մը շինեց , ու զանիկայ ձողի մը վրայ դրաւ · և եղաւ որ՝ օձ մը երբոր մարդ մը իսածնէր , անիկայ պղնձէ օձին նայածին պէս՝ կ՚առողջանար ։

10 Եւ Իսրայէլի որդիքը չուեցին՝ ու

11 Ո Որոթի մէջ իջևան բրին ։ Եւ

Ն · ք · դԿ · 1453

ՈԳԼ · ԼԴ 38 ։ ր Օր Ժ · 6 · ԼԲ 50 ։

1452

ՓՔ Օր · ԼԴ · Տ ։

1452

ՊԳԼ · ԼԴ · 40 · Տ՚ն Դաւո. Ա. 16 ։

‡ Կ՚ՈՒ՝ Քանանէս

Բ Ծն · իԸ · 20 ։ Դաւո · Ժա · 30 ։

‖ Կ՚ՈՒ պիտի նզովեմ ։

§ Յ՚նզովք ։ † Դաւո · Ժա · 18 ։

ՏԳԼ · ր · 22 ։ ԼԴ · 41 ։

Ի ԵԼ · գ · 9 ։

Ղ Սաղ · Ըբ · 19 ։

Ի ԵԼ · Ժգ · 3 ։ Ժէ · 3 ·

ԷԳԼ · Ժա · 6 ։ Ի՝ա Կոր · Ժ · 9 ։

ՃՐ Օր · ր · 15 ։

Ի Սաղ · Ըբ · 34 ։

Լ Հմր 5 ։

Ի ԵԼ · ր · 8 ։ 28՝ա Թագ · Ժր · 19 ։ Գ Թագ · Ժգ · 6 ։ Գոր · ր · 24 ։

Ձ Դ Թագ · Ժը · 4 ։ ՁՀ · գ · 14 , 15 ։

ԼԳԼ · ԼԴ · 43 ։

Ն · Ք · ԶԲ · 1452

Ղ Գլ · ԼԴ 44 ։
Յր Օր · Բ · 13 ։

Ղ Գլ · ԽՐ · 36 ։ Դատ · ժա · 18 ։

Ծ Բ Օր · Ր · 18 · 29 ։

Յ Դատ · Թ · 21 ։

Ա Եզ · ժե · 1 · Սաղ · ճե · 2 · ՃԳ · 12 ·

Ն Եմ · ԼԳ · 22 ։

Ղ Գլ · ԻԳ · 28 ։ * Կ՚ասի՝ անապատը

ՠ Բ Օր · Բ · 26 · 27 ։ Դատ · ժա · 19 ։

Ղ Գլ · Ի · 17 ։

Ձ Բ Օր · ԻԹ · 7 ։

Ջ Բ Օր · Բ · 32 ։ Դատ · ժա · 20 ։

ՠ Բ Օր · Ր · 33 ։ ԻԹ · 7 ։ Ցես · ժբ · 1 · 2 ։ Իդ · Տ ։ Նէեմ · Թ · 22 ։ Սաղ · ՃԼԵ · 10 · 11 · ՃԼԹ · 19 ։ Ամռ · Բ · 9 ։

Որովհետև չուեցին՝ ու հպչեաբարիմ մէջ դէպ ի արեւելեան կողմը՝ Մովաբին դիմացի անապատին մէջ
12 իջևան ըրին ։ Անկէ ալ չուեցին՝ և Զարեդ ձորին մէջ իջևան ըրին ։
13 Անկէ չուեցին՝ ու իջևան ըրին Առնոնին մէկալ կողմը ան անապատին մէջ՝ որ Ամորհացւոց սահմանէն կ՚ելլէ . ինչու որ Առնոն՝ Մովաբացւոց ու Ամորհացւոց մէջտեղը ։
14 Անոր համար Տէրոջը պատերազմներուն գրքին մէջ կ՚ըսուի .
Սուփային մէջ Վահեբ՝ ու Առնոնին գետերը ,
15 եւ Արին կեցած տեղը վազող՝ ու Մովաբին սահմանը կայացող գետերուն յորձանքը ։
16 Եւ անկէ՛ Ջրհորը էն՝ . ասանկ Ջրհորն է՝ որուն համար Տէրը ըսեր էր Մովսէսին . ժողովուրդը ժողվէ՝ ու ես անոնց ջուր պիտի տամ ։
17 Այն ատենը Իսրայէլը աս երգը երգեց .
Ո՛վ հոր՝ բղխէ . երգեցէ՛ք անոր .
18 Հորը՝ իշխանները փորեցին , ժողովուրդին ազնուականները Ն Օ րէնդրին հրամանովը , իրենց գաւազաններովը փորեցին ան ։
Եւ անապատէն դէպ ի Մաթթանա,
19 ու Մաթթանայէն դէպ ի Նաալիէլ ,
20 ու Նաալիէլէն դէպ ի Բամոթ , ևբ Բամոթէն Մովաբի դաշտին մէջ ւդէպ ի * Եսիմոնը նայող Փասգային գագաթը եղած հովիտը ըլ–ն ։
21 Եւ Իսրայէլ դեսպաններ խրկեց Ամորհացւոց Սեհոն թագաւորին՝ ը–
22 սելով . ւ Քու երկրէդ անցնինք . արտի կամ այդիի մէջ չենք մտներ , հորի ջուրէ չենք խմեր . մինչև քու սահմանէդ անցնելնիս՝ արքունական
23 ճամբայէն կ՚երթանք ։ Եւ Սեհոն իր սահմանէն ճամբայ չտուաւ Իսրայէլին . հապա Սեհոն իր բոլոր ժողովուրդը ժողվեց , և դէպ ի ա–Նապատ Իսրայէլին դէմը ելաւ , Եւ Ցասա եկաւ , և Իսրայէլին հետ
24 պատերազմեցաւ ։ Եւ Իսրայէլ սուրի բերնէ անցուց զանիկայ , ու տիրեց անոր երկրին , Առնոնէն մինչև Ցաբոկը՝ մինչև Ամմոնի որդւոցը հասը . ինչու որ Ամմոնի որդւոցը սահմանը ժիժաարին էր ։
25 Եւ Իսրայէլ աս բոլոր քաղաքները առաւ . ու Իսրայէլ Ամորհացւոց բոլոր քաղաքներուն մէջ բնակեցաւ , Եսբոնին մէջ ու անոր բոլոր
26 գեղերուն մէջ . քանզի Եսբոնը Ամորհացւոց Սեհոն թագաւորին քաղաքն էր . ինչու որ անիկայ Մովաբին առջի թագաւորին հետ պատերազմելով , անոր ձեռքէն ա–
նոր բոլոր երկիրը մինչև Առնոն
27 առած էր ։ Անոր համար առակ խօսողները կ՚ըսեն .
Եսբոն եկէք . թող Սեհոնին քաղաքը շինուի ու պատրաստուի .
28 Վասն զի * Եսբոնէն կրակ ելաւ , ** Սեհոնին քաղաքէն բոց . Ա՛Մովաբին Արը այրեց , ** Առնոնին բարձր տեղերուն տէրերը ։
29 Վայ քեզ՝ Մովաբ , * ով քա–մովսի ժողովուրդ՝ կորսուեցար . իր ազատուած որդիքը ու աղջիկները Ամորհացւոց Սեհոն թագաւորին գերութեան տուաւ .
30 Զանոնք նետերով զարկինք . Եսբոնը կորսուեցաւ * մինչև Դեբոնը . և կորընծուցինք զանոնք մինչև * Մեդաբային քովը եղած Նոփան ։
31 Այսպէս Իսրայէլ Ամորհացւոց
32 երկիրը բնակեցաւ ։ Եւ Մովսէս * – ղրկեց * Յազէրը լրտեսելու , ու անոր դիղերը առին , և հոն եղած Ամորհացիները վռընտեցին ։
33 * Եւ դարձան ու բասանի ճամբան ելան . և Բասանի Ովգ թագաւորը՝ ինքը ու իր բոլոր ժողովուրդը անոնց դէմ * Եդրայիին մէջ պա–
34 տերազմի ելան ։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . * Անկէ մի՛ վախնար . քանզի քու ձեռքդ մատնեցի զանիկայ , ու անոր բոլոր ժողովուրդը , և անոր երկիրը . և * դուն Եսբոնին մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորին ըրածիդ պէս պիտի ը–
35 նես անոր ։ * Այսպէս զարկին անիկայ , և անոր որդիքը , ու անոր բոլոր ժողովուրդը . անանկ որ՝ մէկն ալ չմնաց . և անոր երկրին տիրեցին ։

Ն · Ք · ԶԲ · 1452

* Ելեմ. Խը · 45 , 46 ։
Ելբ Օր · Բ · 9 , 18 ։ Ես · ժե · 1 ։
** Դատ. ժա. 24 ։ դԹագ · ժա · 7 , 33 ։ դԹագ. Իգ · 13 ։ Ելեմ. Խը · 7 , 13 ։

Բ Ելեմ. Խը · 18 , 22 ։

Յ Ես · ժե. 2 ։

– Գլ · ը · 1 ։ Ելեմ. Խը · 32 ։

Բ Օր · գ · 1 ։ ԻԹ · 7 ։

* Ցես · ժգ · 12 ։

Օ Բ Օր · գ · 2 ։

Ֆ Հմր 24 ։ Սաղ · ճլե · 10 , 11 ։ ճլզ · 20 ։

– Բ Օր · գ · 3 , 4 , ԸՀ ։

ԳԼ · ԻԲ

1 Բաղաամ՝ Բաղակին առջի անգամի հրաւէրքը կը մերժէ , 15 ու երկրորդանգամին կ՚ընդունի ։ 22 Հրեշտակ մը զանիկայ սպանելու կ՚ելլայ , բայց իշուն ետ քաշուելովը անիկայ կ՚ազատի ։ 36 Բաղակ կ՚ընդունի Բաղաամը ։

1 Ապա * Իսրայէլի որդիքը չուեցին , ու Մովաբի դաշտերուն մէջ Յորդանանեան մէկալ կողմը Երիքովի դէմ–ը իջևան ըրին ։
2 Եւ Բ Սեպհորին որդին Բաղակը տեսաւ ան ամէնը՝ որ Իսրայէլ ըրաւ
3 Ամորհացւոց ։ Եւ Մովաբ խիստ վախցաւ ժողովուրդէն , ինչու որ շատուր էին . ու Մովաբ Իսրայէլի որդւոցը երեսէն տագնապի
4 մէջ էր ։ Եւ Մովաբ Մադիամու ծերերուն ըսաւ . Հիմա աս ժողովուրդը պիտի լզեն մեր բոլորտիքը եղած ամէնը , ինչպէս որ արջառը դաշտին խոտը կը լզէ ։ Եւ Սեպհորին որդին Բաղակ՝ Մովաբին

– Գլ · լգ · 48 ։

Բ Դատ. ժա. 25 ։

Ե Ել · ժե · 15 ։

Զ Գլ · լա · Տ ։ Ցես · ժգ · 21 ։

Ն·ք·ղբ· 1452

5 Թագաւորն էր ան ատենը ։ *Եւ
էհմովրի որդւոյն Բաղաամին դես-
պաններ խրկեց Ղփաթուր գետը
(որ անոր ժողովուրդին որդոյզը
երկրին Գետին եզերքն էր",) զա-
նիկայ կանչելու ու ըսելու . Ահա
Եգիպտոսէն ժողովուրդ մը ելաւ .
ահա երկրի երեսը ծածկեց . և իմ
6 դիմացս կը նստի . Ուստի հիմա
կ'աղաչեմ՝ եկուր , ինծի համար
անիծէ աս ժողովուրդը . քանզի
անիկայ ինծմէ զօրաւոր է . գուցէ
կարող ըլլամ անիկայ զարնելու ,
ու երկրէս վռնտեմ զանիկայ .
վասն զի գիտեմ որ քու օրհնածդ
օրհնեալ է , և քու անիծածդ ա-
նիծեալ ։
7 Եւ Մովաբին ծերերը ու Մադի-
ամին ծերերը իրենց ձեռքերուն մէջ
էհմայութեան վարձքերով գացին .
և Բաղաամին եկան , ու Բաղակին
8 խօսքերը ըսին անոր ։ Եւ անիկայ
ըսաւ անոնց . Ինծի գիշեր հոս մնա-
ցէք . և Տէրը ինչ որ ինծի խօսե-
լու ըլլայ , անոր համեմատ պատաս-
խան պիտի տամ ձեզի . ու Մովա-
բին իշխանները Բաղաամին քովը
9 մնացին ։ Եւ Աստուած Բաղաա-
մին եկաւ , ու ըսաւ . Ո՞վ են ատ-
10 քու քովդ եղած մարդիկը ։ Եւ
Բաղաամ ըսաւ Աստուծոյ . Մովա-
բին Թագաւորը Սեպփօրեան Բա-
ղակը ասոնք ինծի խրկեց՝ ըսելով .
11 Ահա եգիպտոսէն ելլող ժողովուր-
դը երկրին երեսը ծածկեց . հիմա
եկուր՝ անիծէ զանիկայ ինծի հա-
մար , որ գուցէ կարող ըլլամ անոր
յաղթելու ու զանիկայ վռնտելու ։
12 Եւ Աստուած ըսաւ Բաղաամին .
Անոնց հետ չերթաս . ժողովուրդը
չանիծես . վասն զի է անիկայ օրհ-
13 նեալ է ։ Եւ Բաղաամ առաւօտուն
ելաւ , ու ըսաւ Բաղակին իշխան-
ներուն . Դուք ձեր երկիրը գացէք .
ինչու որ Տէրը իս չթողուր ձեզի
14 հետ երթալու ։ Եւ Մովաբին իշ-
խանները ելան , ու Բաղակին եկան
և ըսին . Բաղաամը մեզի հետ գալ
չուզեց ։
15 Եւ Բաղակ դարձեալ ան ատ-
ենները աւելի շատ և աւելի պատուա-
16 ւոր իշխաններ խրկեց ։ Եւ անոնք
Բաղաամին եկան՝ ու ըսին անոր .
Սեպփօրին որդին Բաղակը ասանկ
կ'ըսէ . Կ'աղաչեմ՝ ինծի գալէն մի՛
17 հրաժարիր . Քանզի քեզի շատ պա-
տիւ պիտի ընեմ , և ինծի ինչ որ
ըսես՝ պիտի ընեմ . Ուստի կ'ա-
ղաչեմ եկուր՝ անիծէ ասս ժողո-
18 վուրդը ինծի համար ։ Եւ Բա-
ղաամ պատասխան տուաւ՝ ու ը-
սաւ Բաղակին ծառաներուն . Թէկ
որ Բաղակ իր տունովը լեցուն ար-

ծաթ ու ոսկի տայ ինծի , ինծմէ
Տէր Աստուծոյս խօսքէն չեմ կրնար
անցնիլ , պզտիկ կամ մեծ բան մը
19 ընելու ։ Եւ հիմա կ'աղաչեմ՝ ասս
գիշեր դուք ալ հոս կեցէք , որ
գիտնամ թէ Տէրը ուրիշ ինչ պի-
20 տի ըսէ ինծի ։ Եւ Աստուած գի-
շերը Բաղաամին եկաւ՝ ու ըսաւ
անոր . Թէ որ մարդիկը քեզ կան-
չելու գան , ելի՛ր անոնց հետ գնա .
Բայց ինչ որ քեզի խօսիմ , միայն
ան ընես ։
21 Եւ Բաղաամ առաւօտուն ելաւ ,
ու իր իշուն համեցը դրաւ , և Մո-
վաբի իշխաններուն հետ գնաց ։
22 Ու երբոր կ'երթար , Աստուծոյ
բարկութիւնը բորբոքեցաւ , Նու
Տէրոջը հրեշտակը ճամբուն վրայ
կայնեցաւ իրրև անոր թշնամի մը .
և անիկայ իր իշուն վրայ հեծած
էր , ու անոր երկու ծառաները իր
23 հետն էին ։ Եւ իշուն տեսաւ Տէ-
րոջը հրեշտակը , որ ճամբուն վրայ
կայնած էր , ու իր ձեռքը մերկ
սուր մը ունէր , ու իշը ճամբայէն
դարձաւ և արտը մտաւ . ու Բա-
ղաամ իշը ծեծեց՝ որ իր ճամբան
24 դարձնէ զանիկայ ։ Եւ Տէրոջը
հրեշտակը այդինէրուն նեղ ճամ-
բուն մէջ կայնեցաւ , որ ո՛ր մէկ
կողմէն պատ՝ ու մէկալ կողմէն
25 պատ կար ։ Եւ երբոր իշը Տէրոջը
հրեշտակը տեսաւ , պատին բովը
խոթուեցաւ , և Բաղաամին ոտքը
պատին բովը ճնշեց . ան ալ նորէն
26 ծեծեց զանիկայ ։ Եւ Տէրոջը հը-
րեշտակը յառաջ գնաց , ու նեղ
տեղ մը կայնեցաւ , ուր աջ կամ
ձախ կողմը խոտորելու ճամբայ
27 չկար ։ Եւ երբոր իշը Տէրոջը
հրեշտակը տեսաւ , Բաղաամին տա-
կը նստաւ . ու Բաղաամին բար-
կութիւնը բորբոքեցաւ , և գաւա-
28 զանով ծեծեց իշը ։ Եւ Տէրը իշ-
ուն բերանը բացաւ , ու անիկայ
Բաղաամին ըսաւ . Ինչ րրի քեզի՝
որ այսպէս իրեք անգամ իս ծե-
29 ծեցիր ։ Եւ Բաղաամ ըսաւ իշ-
ուն . Իս ծաղր ընելուդ համար .
երանի թէ ձեռքս սուր մը ըլլար ,
30 որ հիմա քեզ մեռցնէի ։ Եւ
իշը ըսաւ Բաղաամին . Ես ան
քու էշդ չե՞մ , որուն վրայ կը
հեծնէիր էքու մանկութենէդ" մին-
չև այսօր . քեզի ասանկ ընել իմ
սովորութիւնս էր . ու անիկայ
31 ըսաւ . Չէ ։ Յն ատենը Տէրը
աչքերը բացաւ Բաղաամին , ու
երը տեսաւ որ Տէրոջը հրեշտակը
ճամբուն վրայ կայնած էր , և իր
ձեռքը մերկ սուր մը ունէր , "իր
երեսին վրայ խոնարհ ու երկրպա-
32 գութիւն ըրաւ ։ Եւ Տէրոջը հրեշ-

Ն·ք·ղբ· 1452

* Կամ՝ Եւ Փաթուր էրեսպաններ խրկեց Բէովրի որդւոյն Բաղաամին՝ որուն հայրենիքը Գետին եզերքն էր ։

Ել Որ·իգ· 4 ։ Ցես . ժգ·22։ իդ· 9 ։ Նէեմ . ժգ · 1 · 2 ։ Միք · գ · 5 ։ բ Պետ . բ·15։ Յուդ· 11 ։ Յայտ· բ · 14 ։

Ը Տես գէ · իգ · 7 ։ բ Որ·իգ·4։

Ե Գլ·իգ·7 ։ ըաթ·ղ·թ. 7 ։ Տ ։

Ի Հմր 19 ։

ժ Ծն·ի·3 ։ Հմր 20 ։

Ի Գլ·իդ·20։ Տես Հռով· ժա · 29 ։

Ա Հմր 6 ։

Ի Գլ·իդ·13։

Ն·ք·ղբ· 1452

ժգ Թագ·իր· 14 ։ բ Մն · ժը · 13 ։ Ե Հմր Տ ։

Հ Հմր 9 ։

Ե Հմր 35։ Գլ· իդ · 12 ։ 26։ իդ · 13 ։

ՂԵԼ·դ·24։

Ժ Տես գ Թագ · ը · 17 ։ Դան . ժ·7 ։ Գոր· իր · 9 ։ բ Պետ·բ·16։ Յուդ · 11 ։

Ի Տես Ծն · իա · 19 ։ դ Թագ · ը · 17 ։ Ղոր . իդ · 16։31 ։ Եզ·լդ·8 ։

Ն ք · ՉՁ · 1452

տակը ըսաւ անոր . Ինչու՞ ասանկ իրեք անգամ քու էշդ ծեծեցիր . ահա ես քեզի թշնամութիւն ընելու ելայ . վասն զի ÷ ճամբադ
33 Ն ու դիմ չէ իմ առջեւս . եւ էշը իս տեսաւ , ու աս իրեք անգամ է որ իմ առջեւէս մկկդի քաշուեցաւ . թէ որ անիկայ իմ առջեւէս մկկդի չքաշուէր , հիմա ես քեզ անշուշտ մեռցուցեր էի , ու զանիկայ ողջ
34 թողուցեր էի : Եւ Բաղաամ ըսաւ Տէրոջը հրեշտակին . ՈՒմկղք գործեցի՝ չգիտնալով որ ճամբուն վրայ ինծի դէմ կայներ էիր . ուսկից թէ որ քեզի անհաճոյ կ՚երեւնայ
35 իմ երթալը , ետ դառնամ : Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ Բաղաամին . Գնա առ մարդոցը հետ , Նբայց ան խօսքը որ քեզի պիտի զրուցեմ , ան միայն խօսիս . և Բաղաամ գնաց Բաղակին իշխաններուն հետ :
36 Եւ Բաղակ երբոր լսեց որ Բաղաամը կու գայ , ՚ընդհակառակ դիմաւորելու ելաւ ՚էր սահմանը եղած Առնոն գետին քովի Մովաբացւոց մկ քաղաքը՝ որ սահմանին ծայրն
37 է : Եւ Բաղակ ըսաւ Բաղաամին . Քեզ կանչելու համար չխրկեցի՞ . ինչու՞ չեկար ինծի . արդեօք Նքեզի պատիւ ընելու կարողութիւն չունի՞
38 նիմ՞ : Եւ Բաղաամ ըսաւ Բաղակին . Ահա ես քեզի եկայ . բայց ես բնաւ ՚զօրութիւն ունի՞մ բան մը ըսելու . ՚Աստուած իմ բերանս ինչ խօսք որ դնէ , ան պիտի խօսիմ
39 սիմ : Եւ Բաղաամ՝ Բաղակին հետ գնաց . ու կարիաթ հուսովթը
40 կան : Եւ Բաղակ՝ արջառներ ու ոչխարներ մորթեց , ու Բաղաամին և անոր հետ եղող իշխաններուն խրկեց :
41 Ու երբոր առտու եղաւ , Բաղակ առաւ Բաղաամը , Եւ Բահաղին բարձր տեղուանքը հանեց զանիկայ . ու անկէ ժողովուրդին ծայրը տեսաւ :

ԳԼ · ԻԹ

1 , 13 , 28 Բաղակին ըսած : 7 , 18 Բաղաամին խօսքերը :

1 Նե Բաղաամ ըսաւ Բաղակին . ՚Հոս ինծի եօթը սեղան շինէ , ու հոս ինծի եօթը զուարակ և եօ-
2 թը խոյ պատրաստէ : Եւ Բաղակ՝ Բաղաամին ըսածին պէս ըրաւ . և Բաղակ ու Բաղաամ Ո՚ն մկ սեղանին վրայ մկ մկ զուարակ ու
3 մկ մկ խոյ մատուցին : Եւ Բաղաամ ըսաւ Բաղակին . Ո՚դուն քու ողջակէզիդ քովը կայնէ , ու ես երթամ՝ գուցէ Տէրը ՚իմ դիմացս ելլէ . և ին՚չ որ ինծի ցուցընէ ,
քեզի պիտի ըսեմ . ու *բարձր տեղ
4 մը ելաւ : Եւ Աստուած Բաղաամին հանդիպեցաւ . ու Բաղաամ ըսաւ անոր . Եօթը սեղան պատրաստեցի , ու Ո՚ն մկ սեղանին վրայ մկ մկ զուարակ ու մկ մկ
5 խոյ մատուցի : Եւ Տէրը Նբաղաամին բերանը խօսք դրաւ , ու ըսաւ . Դարձիր Բաղակին , և ասանկ խօ-
6 սէ : Եւ գարձաւ անոր . և ահա անիկայ իր ողջակէզին քովը կայներ էր , ինքը ու Մովաբին բոլոր իշ-
7 խանները : Եւ Ե իր առակը սկսեց՝ ու ըսաւ .

Մովաբին Թագաւորը Բաղակ զիս Արամէն՝ արեւելեան լեռներէն բերաւ , ըՒսրայէլ . Ընկուր՝ Յակոբը անիծէ ինծի , ու ընկուր՝ Իսրայէլը նզովէ :
8 Աստուծոյ չանիծածը Ր՚ինչպէս անիծեմ , կամ Տէրոջը չնզովածը ի՚նչպէս նզովեմ .
9 Վասն զի ապառաժներուն գլխէն կը տեսնեմ անիկայ , և բլուրներէն կը նայիմ անոր . ահա ժաս ժողովուրդը զատ պիտի բնակի , ու էազգերուն հետ պիտի չսեպուի :
10 Նյակոբին փոշին ով կրնայ համրել , և Իսրայէլին քառորդը ով կրնայ հաշուել . Թող իմ անձս Ե արդարներուն մահովը մեռնի , ու իմ վախճանս անոնց Վ՚ճ՚ն պէս ըլլայ :
11 Եւ Բաղակ ըսաւ Բաղաամին . Ա՚ ի՚նչ ըրիր ինծի . ժես քեզ բերի իմ Թշնամիներս անիծելու , և ահա
12 դուն բոլորովին օրհնեցիր : Եւ ա նիկայ պատասխան տուաւ ու ըսաւ . Ի՚նչ որ Տէրը իմ բերանս դնէ , ան խօսելու հոգ տանելու չէ՞մ :
13 Եւ Բաղակ Նոէն ըսաւ անոր . Կ՚աղաչեմ՝ ինծի հետ ուրիշ տեղ մը ելիր , որ անոնք տեսնես անկէ . անոնց միայն մկ ծայրը տեսնես , և անոնց ամէնը պիտի չտեսնես . ու անկէ անիծէ անոնք ինծի համար :
14 Եւ տարաւ զանիկայ Սոփիմին արտը՝ †Փասգային գլուխը , Հու եօթը սեղան շինեց , և Ո՚ն մկ սեզանին վրայ մկ մկ զուարակ ու
15 մկ մկ խոյ մատուց : Եւ ըսաւ Բաղակին . Դուն հոս քու ողջակէզիդ քովը կայնէ՝ ու ես հոն
16 Տէրը դիմաւորեմ՝ Եւ Տէրը Բաղաամին դիմացը ելաւ . և Նանոր բերանը խօսք դրաւ՝ ու ըսաւ . Բաղակին դարձիր՝ ու ասանկ ըսէ :
17 Եւ երբոր եկաւ անոր . ահա ա նիկայ իր ողջակէզին քովը կայներ էր . Մովաբին իշխաններն ալ անոր հետն էին . և Բաղակ ըսաւ անոր .
18 Տէրը ի՚նչ խօսեցաւ : Եւ անիկայ իր առակը սկսեց՝ ու ըսաւ .

Ն · ք · ՉՁ · 1452

՚ կամ՝ աանձին , ի՚մ բաց Ե Հմր 16 ։

Ղ Հմր 16 ։ ԳԼ · իբ · 35 ։ բ Օր · ժբ · 18 ։ Երեմ . ա · 9 ։

Ե Հմր 18 ։ ԳԼ · իդ · 3 , 15 , 23 ։ Ցոբ . իէ . 1 ։ իթ . 1 ։ Սաղ . հը . 2 ։ Եզեկ . ժե . 2 ։ Մ՚կբ . բ 4 ։ Ամբ . բ · 6 ։

Ը ԳԼ · իբ · 6 , 11 17 ։

Ր Ես · խէ · 12 , 13 ։

ժ բ Օր · Լէ 28 ։

Ի Ել · Լէ · 16 ։ Եզր · Թ · 2 ։ Եփես . բ . 14 ։ Լ Ե՚ն . ժէ · 16 ։ իբ 17 ։

Ի Սաղ . ճժգ . 15 ։

ժ ԳԼ · իբ · 11 , 17 ։ իդ · 10 ։

Լ ԳԼ · իբ · 38 ։

† կամ՝ Բլուրին Հմր 1 , 2 ։

Ն ք · ՉՁ · 1452

Ե Ես · ԽԵ · 23 ։ Ցոբ . իէ . 1 ։ իթ . 1 ։ Սաղ . հը . 2 ։ Եզեկ . ժե . 2 ։ Մ՚կբ . բ 4 ։ Ամբ . բ · 6 ։

Ը ԳԼ · իբ · 6 , 11 17 ։

Ր Ես · խէ · 12 , 13 ։

ժ բ Օր · Լէ 28 ։

Ի Ել · Լէ · 16 ։ Եզր · Թ · 2 ։ Եփես . բ . 14 ։ Լ Ե՚ն . ժէ · 16 ։ իբ 17 ։

Ի Սաղ . ճժգ . 15 ։

ժ ԳԼ · իբ · 11 , 17 ։ իդ · 10 ։

Լ ԳԼ · իբ · 38 ։

† կամ՝ Բլուրին Հմր 1 , 2 ։

Ե Հմր 29 ։

Բ Հմր 14 , 30 ։

Ե Հմր 15 ։

Ե ԳԼ · իդ · 1 ։

Ղ Հմր 5 ։ ԳԼ · իբ · 35 ։

Ն · ք · ղՖ · 1452

ՂԴատ · գ · 20 ։
ճ ա թագ · ժե · 29 ։
Մաղ · գ · 6 ։ Հռով · ժա · 29 ։
Ցակ · ա · 17 ։ Տիտ · ա · 2 ։
Մ Ծն · ժր · 2 ։ իր · 17 ։
Թռա · իբ · 12 ։
յ Հռով · գ · 7 ։ 8 ։
Նեւ · ժգ · 21 ։ իմ · 45 ։ 46 ։ Ղգ · 14 ։
Ղ Գլ · իդ · 8 ։
Որ Օր · ւդ · 17 ։ Ցոր · լմ · 10 ։ 11 ։
*կ՚ փառք

Ղ Սաղ · լա · 19 ։ խդ · 1 ։
Պ Ծն · խմ · 9 ։

Ը Ծն · խմ · 27 ։

— Հմր 12 ։
Գլ · իբ · 38 ։
գ Թագ · իբ · 14 ։
ո Հմր 13 ։

Է Գլ · իա · 29 ։
ֆ Հմր 1 ։

—

Ֆ Գլ · իգ · 3 · 15 ։

Ղնէ՛ր ով Բաղակ , ու լսէ · ով Սեպհորին որդւոյն՝ ինծի մտիկ ըրէ ։
19 Ե Աստուած մարդ չէ որ սուտ խօսի , ոչ ալ մարդու որդի՝ որ զղջայ · ինքը ըսաւ , ու պիտի չընէ՞ , կամ ինքը խօսեցաւ , ու տեղը պիտի չբերէ՞ ։
20 Ահա հրաման առի օրհնելու · և օրհնեց , ու ես չեմ կրնար դարձընել ։
21 յ Յակորին վրայ անօրէնութիւն մը չընծեց , ոչ ալ Իսրայէլին վրայ անզգամութիւն տեսաւ · Նորա Տէր Աստուածը իր հետն է · և անոր մէջը թագաւորի ցնծութեան ձայն կայ ։
22 Զ Աստուածը եգիպտոսէն հանողը՝ Աստուած է · Ո անիկայ միեղջերուի պէս * ուժ ունի ։
23 Քանի Յակորին դէմ կախարդութիւն չըլլար · ու Իսրայէլին դէմ դիւթութիւն չբանիր · Յակորին ու Իսրայէլին վրայով աս ատենիս Հ՝ամեմատ պիտի ըսուի Թէ , Ա Աստուած ինչ ըրաւ ։
24 Ահա ՈՒ ժողովուրդը Ո մատակ առիւծի պէս պիտի ելլէ , ու առիւծի պէս պիտի բարձրանայ · Ըո՞ պիտի չպառկի՝ մինչև որ որսը չուտէ , ու մեռածներուն արիւնը չխմէ ։
25 Եւ Բաղակ ըսաւ Բաղաամին · Ո՛չ անէծք տուր անոնց՝ ոչ ալ օրհնութիւն ։ Ու Բաղաամ պատասխան տալով՝ Բաղակին ըսաւ · Միթէ ես քեզի չխօսեցայ՝ ըսելով · Ինչ որ Տէրը խօսի՝ ան պիտի ընեմ ։
27 Եւ Բաղակ ըսաւ Բաղաամին · Եկուր՝ մկ ուրիշ տեղ մը տանիմ քեզ · գուցե Աստուած հաճի , որ անկէ անիծես զանոնք ինծի համար ։
28 Մար ։ Ուստի Բաղակ տարաւ Բաղաամը փոզովրին գագաթը , որ
29 նկեպ՝ի Եսիմոն կը նայի ։ Ու Բաղաամ ըսաւ Բաղակին · Հոս ինծի եօթը սեղան շինէ , ու հոս ինծի եօթը զուարակ ու եօթը խոյ
30 պատրաստէ ։ Եւ Բաղակ՝ Բաղաամին ըսածին պէս ըրաւ · ու ամէն մէկ սեղանին վրայ մէկմէկ զուարակ ու մէկմէկ խոյ մատուց ։

ԳԼ · ԻԴ

1 Բաղաամ առանց հմայքներ փնտռելու , Իսրայէլին երկանութեանը վրայ կը մարգարէանայ ։ 10 Բաղակ սրդռելով՝ կը խրկէ զանիկա որ երթայ ։ 45 Բաղաամ մարգարէութիւն կ՚ընէ Յակորին Աստղին վրայ , ու քանի մը ազգերու կործանմանը վրայ ։

1 Երբոր Բաղաամ տեսաւ որ Տէրը կը հաճի Իսրայէլը օրհնել , — մեկալ անգամներուն պէս հմայքներ փնտռելու չգնաց · այլ իր երեսը
2 դէպ՝ի անապատը դարձուց ։ Ու Բաղաամ իր աչքերը վերցնելով՝ տեսաւ որ Իսրայէլը իր ցեղերուն կարգովը Բ Ո ր ա ղ ե ն դէպ բանակած է · ու Աստուծոյ Հոգին անոր
3 վրայ եկաւ · Ո ու իր առակը սկսելով՝ ըսաւ ·
Բէովորին որդւոյն Բաղաամին խօսքը՝ ու աչքը Բացց մարդուն խօսքը ,
4 Աստուծոյ խօսքերը լսող , ու Ամենակարողին տեսիլքը տեսնող , Բ ն ն ա ղ ա ծ պէս գետինը ինկող՝ ու աչքերը բաց եղողին խօսքը ասէ ։
5 Ո վ Յակոբ՝ քու վրաններդ , ու ո՛վ Իսրայէլ՝ քու խորաններդ ի՜նչ գեղեցիկ են ·
6 Ձորերու պէս տարածուեցան · գետերու քով եղող պարտէզներու պէս , Տէրոջը տնկած Հալուէի ծառերուն՝ ու ջուրին եզերքը եղող եղևիններուն պէս են ։
7 Անոր դոյլերէն ջուր պիտի վազէ · ու անոր սերմը շատ ջուրերու մէջ պիտի ըլայ · անոր Թագաւորը Ե Ագագէն աւելի պիտի բարձրանայ , ու Թագաւորութիւնը ածի ։
8 Զ Անիկայ Եգիպտոսէն հանողը՝ Աստուած է · միեղջերուի պէս ուժ ունի · Ւրէն Թշնամի եղող ազգերը պիտի ուտէ · Ո անոնց ոսկորները պիտի կոտրտէ , ու Ը ղ ե ն ո վ իր նետերովը պիտի զարնէ ·
9 Ո Առիւծի պէս նստաւ պառկեցաւ , ու մատակ առիւծի պէս · զանիկայ ո՞վ պիտի արթընցնէ ։ Հ Քեզ օրհնողները՝ օրհնեալ ըլլան , ու քեզ անիծողները՝ անիծեալ ։
10 Ան ատենը Բաղակ շատ սրդռեցաւ Բաղաամին , ու Ձ ե ռ քերը իրարու զարկաւ · և Բաղակ ըսաւ Բաղաամին · Ղես քեզ կանչեցի որ իմ Թշնամիներուս անէծք տաս , և ահա աս իրեք անգամ է որ ա
11 Նոյ օրհնութիւն տուիր ։ Ուստի դուն հիմա քու տեղդ փախիր · Ը ք ե զի շատ պատիւ ընեմ՝ ըսի , բայց ահա Տէրը քեզ պատիւէ զրկեց ։
12 Եւ Բաղաամ ըսաւ Բաղակին · Ես քու խրկած դեսպաններուդ ալ
13 չխօսեցայ ըսելով · յ Բաղակը Թէ որ ինծի իր տունովը լեցուն արծաթ ու ոսկի տայ , ես Տէրոյը խօսքէն չեմ կրնար անցնիլ , որ ինքիրմէս աղէկ կամ զէշ՝ բան մը ընեմ · Տէրը ինչ որ ըսէ , ան պիտի
14 տի խօսիմ ։ Ու ահա ես հիմա իմ հայրենիքս կ՚երթամ · եկուր , յ քեզի հասկըցընեմ Թէ ես ժողովուրդը Ն ետի օրերը ինչ պիտի ընէ
15 քու ժողովուրդիդ ։ Ո ան ատենը իր ադակը սկսելով՝ ըսաւ ·

Ն · ք · ղՖ · 1452

Բ Գլ · բ · 2 · ԼԸ ։
ֆ Գլ · ժա · 25 ։ ա թագ · ժ · 10 ։ ժԹ · 20 ։ 23 ։ բ Պն · ժե · 1 ։
Ր Գլ · իդ · 7 ։ 18 ։
† կ՚ գոց

Է Տես ա Թագ · ժԹ · 24 ։ Եզկ · ա · 28 ։ Դան · բ · 18 ։ ժ · 15 ։ 16 ։ բ Կոր · ժբ · 2 ։ 3 ։ 4 ։ Յայտ · ա · 10 ։ 17 ։
Ղ Սաղ · ճՀ · 16 ։
Է Սաղ · ա · 3 ։ Երեմ · ժե · 8 ։
Ը Երեմ · ծա · 13 ։ Յայտ · ժե · 1 ։ 15 ։
Ի ա Թագ · ժե · 9 ։
ժ բ Թագ · ե · 12 ։ ա Պն · ժ · 2 ։
Ի Գլ · իգ · 22 ։
Լ Գլ · ժչ · 9 ։ իգ · 24 ։
Խ Սաղ · բ · 9 ։ Ես · ԼԸ · 13 ։ Երեմ · ծ · 17 ։
Ծ Սաղ · խե · 5 ։ Երեմ · ծ · 9 ։
Կ Ծն · խթ · 9 ։
Հ Ծն · ժչ · 3 ։ իե · 29 ։
Ն Եզկ · իա · 14 ։ 17 ։ իբ · 13 ։
Ղ Գլ · իգ · 11 ։ բ Օր · իգ · 4 ։ 5 ։ Յես · իգ · 9 ։ 10 ։ Նէեմ · ժգ · 2 ։
ճ Գլ · իբ · 17 ։ 37 ։
յ Գլ · իբ · 18 ։

յ Միք · զ · 5 ։ Յայտ · բ · 14 ։
Ն Ծն · խթ · 1 ։ Դան · բ · 28 ։ ժ · 14 ։
Ն Հմր 3 · 4 ։

Ն·ք·ԶՓ·
1452

բէթովրի որդւոյն Բաղաամին խօսքը՝ ու աչքը բաց մնարդուն խօսքը ,
16 Աստուծոյ խօսքերը լսող՝ և Բարձրեղոյն գիտութիւնը գիտցող , ու Ամենակարողին տեսիլքը տեսնող , և ֆառնալո՛ղ գլուխը ինկող՝ ու աչքը բաց եղողին խօսքը ըսէ ։

- Ցայտ·ա·7։

17 "Ջանիկայ պիտի տեսնեմ , բայց հիմա չէ . զանիկայ պիտի զննեմ , բայց մօտերս չէ . Ցակոբէն մկ աստղ մը պիտի ծագի , ու Իսրայէլէն դէլեգո՛ղ մը պիտի ելլէ , և Մովաբի *իշխանները պիտի զարնէ , ու Սեթին բոլոր որդիները բնաջինջ պիտի ընէ ։

Ն·Թ·Ա·Ի·
1452

Ե·Թ·Ա·Ի·
1452

Ա Մոս·բ·2։ Ցայտ·իբ·16։
Ղ Ծն·խթ·10։ Սաղ·ճժ·2։
Ը Թագ·բ·2։ Երեմ·խբ·45։
* Կամ՝ Ծայրերը

18 Նաև "Եդոմը պիտի նուաճի . Սէիրն ալ իր թշնամիներէն պիտի նուաճի . բայց Իսրայէլը քաջութիւն պիտի ընէ ։

Ա Թագ·բ·14։ Սաղ·կՏ·9, 12։
" Ծն·խթ·10։

19 "Եւ Ցակոբէն էլլուզ պիտի իշխէ , ու քաղաքին մէջ մնացողը պիտի կորսընցընէ ։

Ե Ծն·ժե·8։
" Եզ·ժէ-14։ աթագ·ժե·3, 8։

20 Ետքը Ամաղեկին նայեցաւ , ու իր առակը սկսելով՝ ըսաւ .
Ամաղեկը Հազգերուն գլուխն է . բայց վերջը "բոլորովին պիտի կորսուի ։

Է Ելս·ժէ·8։
" Եզ·ժէ-14։ աթագ·ժե·3, 8։

21 Ու կէնեցիին նայեցաւ , և իր առակը սկսելով՝ ըսաւ .
Ցէրա՛ն քու նստած տեղդ անառիկ է , ու քու բոյնդ ապառաժի վրայ դրեր ես .

Բ Ծն·ժե·19։

22 Բայց էկէնեցին պիտի աւերուի , մինչև որ Ասուրը քեզ գերի տանի ։

23 Ետքը իր առակը սկսելով՝ ըսաւ .
Ափսոս , երբոր Աստուած աս բաները ընէ , ո՛վ ողջ պիտի մնայ ։

Ց Ծն·ժ·4։ Դան·ժա 30։
- Ծն·ժ·21, 25։

24 Ու նաև ց կիտացւոց ձեռքերէն նաւեր պիտի գան , և Ասուրը պիտի չարչարէն , ու "Եբերը չարչարէն . բայց անոնք ալ բոլորովին պիտի կորսուին ։

Ե Ես·կԼ·Ա·8։

25 Ետքը Բաղաամ ելաւ գնաց , ու էր տեղը դարձաւ . և Բաղակն ալ իր ճամբան գնաց ։

ԳԼ·ԻԵ

1 Իսրայէլը Սատիմի մէջ պոռնկութիւն ու կռապաշտութիւն կ'ընէ ։ 6 Փենէհէս կը մեռցնէ Զամբրին ու Քազբին ։ 10 Նմա բանիս համար Աստուած յաւիտենական քահանայութիւնը անոր կու տայ ։ 16 Մադիանացիք Թշնամի համարուելու կ'են ։

Ա Ես·իբ·17։ Սաղ·նՀ·28։ Ովս·Թ·10։

1 Իսրայէլը "Սատիմի մէջ բնակեցաւ , ու բ ժողովուրդը Մովաբին աղջիկներուն հետ սկսաւ պոռնկիլ ։
7 բենան Բաանին վէմը կ՚ելլէ. ետ-
քը — սահմանը՝ Աքովրի ձորէն
Դաբիրը կ՚ելլէ, ու հիւսիսային կող-
մէն Գաղգաղա կը դառնայ, որ ան
ձորին հարաւակողմը եղող Եդովմի-
նի զառ՝ի վերին դիմացն է. և —
սահմանը Ենոամիւսի ջուրէն կ՚անց-
նի, ու Ռովգելի աղբիւրը կը վեր-
8 ջանայ. Եւ — սահմանը Բենոովմի
որդւոյն ձորը՝ հարաւային կողմէն
Յեբուսին այսինքն Երուսաղէմին
քովը կ՚ելլէ. ետքը — սահմանը
մինչև ան լեռանը գլուխը կ՚ելլէ,
որ արեւմտեան կողմէն Ենովմի ձո-
րին դիմացն է, ու հիւսիսային կող-
մէն՝ Ռափայնոց ձորին ծայրն է.
9 Եւ — սահմանը լեռանը գլուխէն՝
մինչև Նեփթովախի ջուրին աղ-
բիւրը կը հասնի, ու Եփրոն լեռանը
քաղաքները կ՚ելլէ. ետքը — սահ-
մանը Բաալա այսինքն
10 Կարիաթարիմը կը հասնի. Եւ —
սահմանը՝ Բաալայէն դէպ՝ի արե-
մուտք Սէիր լեռը կը պտըտի,
ու հիւսիսային կողմէն Յարիմ լե-
ռանը քովէն կ՚անցնի, որ անիկայ
քեսալոն է. անկէ Բեթսամիս
11 կ՚իջնէ, ու Թամնա կ՚անցնի. Եւ
— սահմանը՝ Ակկարոնի քովը
կ՚ելլէ դէպ՝ի հիւսիս, ու — սահ-
մանը Սաբարոնը հասնելով՝ Բաա-
լա լեռանն կ՚անցնի, ու Յաբնէլը
կ՚ելլէ. և — սահմանը ծովուն մէջ
կը վերջանայ։
12 Եւ արեւմտեան սահմանը՝ Մեծ
ծովուն եզերքն է. Յուդայի որ-
դւոցը սահմանը չորս կողմանի իրենց
տոհմերուն համեմատ ասիկայ է։
13 Հետ Յեբրոնեան փառերին Յու-
դայի որդւոյը մէջ՝ Ենակի հօրը
Արբային քաղաքը՝ այսինքն Քերբռ-
նը բաժին տուաւ, ինչպէս որ Տէրը

Ն. ք. գաբ. 1444

Դատ. ա. 10, 20։
Թես. ժգ. 23։
Գլ. ժ. 35։ Դատ. ա. 11։
Դատ. ա. 12։
Թես. լբ. 12։ Գլ. ժգ. 6։
Դատ. ա. 13. գ. 9։
Դատ. ա. 14։
Ես ՅՆ. իդ. 64։ Թագ. իե. 23։
ՅՆ. լգ. 11։
* կամ՝ Ջրակայանները

† կամ՝ Կարիաթ Բռն՝

Ա Թագ. իգ. 6։

Հես. ժգ. 24։

14 Յեսուին հրամայեր էր, Եւ քա-
ղէր անկէ՝ Ենակին իրէք որդինե-
րը՝ Սէսին ու Աքիմանը և Թոլմին
15 Ենակին որդիքը վռընտեց. Եւ
անկէ Դաբիրի բնակչացը վրայ
գնաց. (ու Դաբիրին անունը ա-
16 ռաջուց կարիաթ սեփեր էր.) Եւ
քաղէբ ըսաւ. Ով որ կարիաթ
սեփերը զարնէ ու առնէ, իմ Աքսա
աղջիկս անոր կնութեան պիտի
17 տամ։ Եւ քաղէբին եղբօրը Կե-
նեզին որդին Յոթոնիէլը առաւ
զանիկայ. ու քաղէբ իր Աքսա
աղջիկը անոր կնութեան տուաւ։
18 Ու երբոր անոր կ՚երթար, զանի-
կայ յորդորեց որ իր հօրմէն մկ ա-
գարակ մը ուզէ. և Էիւղուն վրա-
յէն վար իջաւ. ու քաղէբ անոր
19 ըսաւ. Ինչ՞ եղաւ քեզի. Եւ աղ-
ջիկը ըսաւ. Ինծի օրհնութիւն
տուր. որովհետև ինծի հարաւային
երկիր մը տուիր, ինծի * ջուրի
աղբիւրներ՝ ալ տուր. ուստի ա-
նոր՝ վերի աղբիւրները ու վարի
աղբիւրները տուաւ։
20 Յուդայի որդւոցը ցեղին ժա-
ռանգութիւնը՝ իրենց տոհմերուն
համեմատ ասիկայ է.
21 Ու եդովմի սահմանին քովը՝ հա-
րաւային կողմը՝ Յուդայի որդւոցը
ցեղին վերջին քաղաքները — —
են. կաբսէէլ, Եդեր, Յագուր,
22 Կինա, Դիմոնա, Ադադա,
23 Կադէս, Հասոր, Յեթնան,
24 Զիփ, Տելեմ, Բեաղոթ,
25 Հասոր Հադաթա, † Կարիօթ, Ես-
26 րոն՝ որ է Հասոր. Ամամ, Սեմա,
27 Մոլադա, Ասեր գադդա, Եսմոն,
28 Բեղփաղէդ, Ասեր սուալ, Բեր-
29 սաբէէ, Բաղհօթիա, Բաուզա,
30 Իթիմ, Ասէմ, Եղիոնէզդ, Քե-
31 սիլ, Հօրմա, Սիկելակ, Մադ-
32 մաննա, Սանսաննա, Լաբաովթ,
Սելհիմ, Ային, ու Ռեմոն. ամէնը
քսանուերկու քաղաք է, ու անոնց
գեղերը։
33 Դաշտավայրի մէջ՝ Եսթաւուղ,
34 Ոարաա, Ասնա, Զանով, Են-
գանիմ, Թափուա, Ենայիմ,
35 Յերիմուդ, Ոգոդոմ, Սոքով, Ա-
36 զեկա, Սաղարիմ, Ադիթեայիմ,
և Գադերա, (ու Գադերոթա-
յիմ.) տասնուերկու քաղաք ու ա-
37 նոնց գեղերը։ Սէննան, Հադաս-
38 Մադգադգադ, Դաղաան, Մաս-
39 փա, Յոկթէէլ, Լաքիս, Բաղ-
40 կաթ, Էգղոն, Քաբբոն, Լահմաս,
41 Քիթլիս Գադերոթ, Բեթդագոն,
Նաամա, ու Մակկիդա. տասն-
ուվեց քաղաք և անոնց գեղերը։
42 Լիբնա Եթեր, Ասան, Ենսիր,
43 Եփթա Ասնա, Նեսիր, Կեբ-
ղա, Ասքեղեր, և Մարեսա. ինը

Ն·ք·ՂՀ· 1444

45 քաղաք ու անոնց գեղերը ։ Ակ-
կարոն՝ իր գիւղաքաղաքներովը ու
46 գեղերովը · Ակկարոնէն մինչև ծովը,
Ասեդովթին քովի բոլոր ⁺ֈ֊ֈ֊
47 Ն֊էրը՝ իրենց գեղերովը · Ասեդովթի՝
իր գիւղաքաղաքներովը ու գեղերո-
վը · Գազա՝ իր գիւղաքաղաքներո-
վը ու գեղերովը, մինչև Եգիպտոսի
հեղեղատը ու մինչև մեծ ծովը՝ իր
սահմաններովը ։
48 Եւ լեռնավայրի վրայ՝ Սամիր ,
49 Ցաթիր , Սոքով , Դաննա , Կարի-
50 աթ սաննա՝ այսինքն Դաւիր , Ա-
51 Նաբ , Եսթեմով , Անիմ , Գո-
շոմ , Քօղօն , ու Գեղոն · տասն-
ուվեց քաղաք ու անոնց գեղերը ։
52 Երբէ , Դումա , Եսան , (53) Ցա-
նում , Բեթթափուա , Ափեկա ,
54 Քամմատա , Կարիաթ արբա՝ այս-
ինքն Քեբրոն , ու Սիովը · ինը
55 քաղաք և անոնց գեղերը ։ Մաոն ,
56 Կարմելոս , Զիփ , Ցետտա , Ցեզ-
57 րայէլ , Ցեկդաամ , Զանով , Կա-
յին , Գաբաա , ու Թամնա · տասը
58 քաղաք ու անոնց գեղերը ։ Աղուղ ,
59 Բեթսուր , Գեդովը , Մաարաթ ,
Բեթանովթ , ու Ելթեկոն · վեց
60 քաղաք՝ ու անոնց գեղերը ։ Կա-
րիաթ բաաղ՝ այսինքն Կարիաթա-
րիմ ու Րաբբա · երկու քաղաք ու
անոնց գեղերը ։
61 Անապատին մէջ՝ Բեթարաբա ,
62 Մադդին , Սեքաքա , Նբշան , Աղի
քաղաքը , ու Ենգադդի · վեց քա-
ղաք ու անոնց գեղերը ։
63 Բայց Յուդային որդիքը կարող
չեղան Երուսաղէմի մէջ բնակող
Եբրուսացիները վռնտելու · ։ ուս-
տի Եբրուսացիները Յուդային որ-
դւոյոց հետ Երուսաղէմի մէջ կը
բնակին մինչև այսօր ։

ՊԱԼՈՒԽ ԺԲ

1 Ընդհանրապես Յովսեփի որդւոյոց ահմանն-
րը ։ 5 Եփրեմին ժառանգութեանը սահմանը ։
10 Չվռնտուած քանանացիները ։

1 Ա֊ Յովսեփի որդւոյոց վիճակը
ահմանէ սկսաւ · անոնց ահմանը՝
Երիքովին Ցորդանանէն՝ Երիքովի ջուրին արևելեան կողմէն
ան անապատը կ'երթայ , որ Երի-
քովէն լեռնակողմը՝ Բեթէլը կ'ել-
2 լէ , Ու Բեթէլէն Լուզը կ'ելլէ , և
Արքի ատարօթի սահմանէն կ'անց-
3 նի , Ու արևմտեան կողմէն՝ Եփալ-
թիի սահմանը կ'իջնէ , Մինչև վա-
րի Բեթորոնին սահմանը՝ ու մինչև
Գազերը , և ծովուն մէջ կը վեր-
4 Ջնայ ։ Եւ Յովսեփին որդիքը՝
Մանասէն ու Եփրեմը՝ ժառանգու-
թիւն առին ։
5 Ու Եփրեմի որդւոյոց սահմանը՝
իրենց տոհմերուն համեմատ ահ ե-

ղաւ · այսինքն՝ անոնց ժառանգու-
թեան սահմանը՝ արևելեան կողմէն
Ատարօթ ադարը եղաւ , Մինչև
6 վերի Բեթորոնը · Եւ ահ սահմանը
հիւսիսային կողմէն դէպ ի Մաք-
մեթաթը ծովը կ'ելլէ , ու ահ սահ-
մանը արևելեան կողմէն մինչև Թէ-
նաթսելովը կը պտտի , ու ետ-
քը արևելեան կողմէն Ցանովկէն կը
7 մտնէ , Եւ Ցանովկէն Ատարովթը
ու Նաարան կ'իջնէ , ու Երիքովին
քովէն անցնելով՝ Յորդանանը կ'ել-
8 լէ · Եւ ահ սահմանը Թափուայէն
Կանա հեղեղատը կ'երթայ արև-
մտեան կողմէն , ու ծովուն մէջ կը
վերջնայ ։ Եփրեմի որդւոյոցը ցե-
ղին ժառանգութիւնը՝ իրենց տոհ-
9 մերուն համեմատ ասիկայ է ։ Նաև
Եփրեմի որդւոյոցը համար զատուած
քաղաքները՝ Մանասէի որդւոյոցը
ժառանգութեանը մէջ է , բոլոր
քաղաքները իրենց գեղերովը ։
10 Եւ անոնք՝ Գազերի մէջ բնակող
Քանանացիները չվռնտեցին · ու
Քանանացիները մինչև այսօր Եփ-
րեմի մէջ բնակելով՝ հարկատու
ծառաներ եղան ։

ՊԱԼՈՒԽ ԺԳ

1 Մանասէին վիճակը ։ 8 Ընոր սահմանը ։ 12
Չվռնտուած քանանացիները ։ 14 Յովսեփի
որդիքը ուրիշ վիճակ մըն ալ ձեռք կը բերեն ։

1 Այս Ա֊էյ եղաւ Մանասէի ցեղին
վիճակը · քանզի անիկայ Յով-
սեփին անդրանիկն էր · Մանասէին
անդրանիկը Մաքիր՝ Գաղաադին
հայրը՝ պատերազմող մարդ մը ըլ-
լալուն համար , Գաղաադը ու Բա-
2 սանը անոր եղաւ · Եւ Մանա-
սէին միւս որդիքն ալ՝ Աբիեզերին
որդիքը , Քեղէքին որդիքը , Ասբ-
րիելին որդիքը , Սիւքեմին որդի-
քը , Ոփերին որդիքը , ու Սեմի-
դային որդիքը՝ իրենց տոհմերուն
համեմատ ։ Ասոնք էին Եւ Մանասէի որ-
3 մատ՝ ասոնք էին ։ Եւ Մանասէի որ-
դւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադի
որդւոյն Ոփերին որդին Սալպաադը
տղաքներ չունէր , բայց միայն աղ-
ջիկներ , ու անոր աղջիկներուն ա-
նունները ասոնք են · Մաալա ,
Նոա , Եգղա , Մելքա ու Թերսա ։
4 Ասոնք՝ Եղիազար քահանային
առջևը , Նաւեան Եհոսուին առ-
ջևը , ու իշխաններուն առջևը ներ-
կայանալով՝ ըսին · Տէրը Մովսէ-
սին հրամայեց որ մեր եղբարցը մէջ
մեզի ժառանգութիւն տրուի ։ Եւ
Եհոս Տէրոջը հրամանաւը՝ անոնց
հօրը եղբարցը մէջ՝ անոնց ժառան-
5 գութիւն տուաւ ։ Եւ Մանասէին՝

Ն·ք·ՂՀ· 1444

Ե Գլ· ժը· 13 ։

Ղ Բ Մն· ը· 5 ։
Ե Գլ·ԺԷ·7 ։

Ը ա Մն· է· 28 ։

Ի Գլ·ԺԷ·9 ։

Ժ Գլ·ԺԷ·9 ։

Ի Դատ· ա· 29 · Տե՛ս գ Թագ· թ· 16 ։

— Ծն· խա· 51 ։ խզ· 20 · Խը· 18 ։
Ք Ծն·ծ·28 · Թուա· իզ· 29 ։ լբ·39 ։ 40 ։ ա Մն· է· 14 ։
Է Բ Օր· գ· 15 ։
Ը Թուա· իզ· 29—32 ։
Ի Թուա· իզ· 30 ։ ա Մն· է· 18 ։
Ղ Թուա· իզ· 31 ։
Ե Թուա· իզ· 32 ։
Ը Թուա· իզ· 33 · լէ·1 ։ ԼԶ·2 ։

Ի Գլ·ԺԷ·1 ։

Ժ Թուա· իէ· 6 ։ 7 ։

— Գլ· ժը· 13 ։ Դատ· ա· 26 ։
Ք Գլ· ժը· 13 ։ Բ Մն· ը· 5 ։
Է ա Մն· է· 23 ։ գ Թագ· թ· 15 ։
Ը Գլ· ժէ· 14 ։

Ն· ք · ՉԿ · 1444

Ցորդանանու անդիի կողմը եղող գաղաադի ու Բասանի երկրէն 'ի
6 զատ՝ տասը բաժին ինկաւ · քանզի Մանասէին աղջկունքերը անոր տղոցը մէջ ժառանգութիւն առին · ու գաղաադու երկիրը՝ Մանասէին միւս որդւոցը եղաւ ։
7 Եւ Մանասէին սահմանը ---էյ եղաւ · *Աներէն՝ մինչև Էմաքմեթաթէն՝ որ Սիւքեմի դիմացն է , ու -- սահմանը աջ կողմը դառնալով՝ մինչև Թափուայի աղբիւրին ։
8 Թափուայի երկիրը Մանասէին եղաւ · ու Մանասէի սահմանին մէջը Եղբ Թափուա ։ ՝ Եփրեմ
9 մին որդւոցը եղաւ ։ Եւ -- սահմանը՝ Կանայ հեղեղատը կ'իջնէ , հեղեղատին հարաւային կողմն ։ Մանասէի քաղաքներուն մէջը ասոնք Եփրեմին քաղաքներն են · և Մանասէին սահմանը՝ հեղեղատին հիւսիսային կողմն է , ու ծովուն
10 մէջ կը վերջանայ · Հարաւային կողմը՝ Եփրեմին , ու հիւսիսային կողմը՝ Մանասէին ըլլալով , անոնց սահմանը ծովը եղաւ · և հիւսիսային կողմն՝ Ասերին , ու արևելեան կողմն՝ Իսաքարին հետ կը
11 միանան ։ Եւ Իսաքարին ու Ասերին սահմանները մէջը Բեթսանը ու անոր գիւղաքաղաքները , և Եբղաամը ու անոր գիւղաքաղաքները · և Դովրին բնակիչները , ու անոր գիւղաքաղաքները , ու Ենդովրին բնակիչները , ու անոր գիւղաքաղաքները , և Թանաքին բնակիչները , ու անոր գիւղաքաղաքները · Մակեդդովի բնակիչները , ու անոր գիւղաքաղաքները , աս իրեք
12 գաւառը Մանասէին եղաւ ։ Եւ Մանասէին որդիքը չկրցան աս քաղաքներուն բնակիչները դուրս վռնտել · ու Քանանացիները կամակորութեամբ ան երկրին մէջ
13 բնակեցան ։ Ու Իսրայէլի որդիքը երբոր ուժովցան , Հարկատու ըրին Քանանացիները · բայց զանոնք չվռնտեցին ։
14 Եւ Յովսեփի որդիքը Յեսուին հետ խօսեցան , ու ըսին · Ինչո՞ւ համար ինծի մէկ վիճակ մը ու մէկ բաժին մը ժառանգութիւն տուիր , ու ես բազմաթիւ ժողովուրդ մըն եմ · քանզի Աստուած
15 մինչև հիմա զիս օրհնեց ։ Եւ Յեսու անոնց ըսաւ · Թէ որ դուն բազմաթիւ ժողովուրդ ես , անտառը ելլէր , ու զանիկայ կարէ , Փերեզացւոց ու Ռափայնոց երկրին մէջը քեզի բէ՛ղ ըլէ , որովհետև Եփրեմի լեռը քեզի նեղ կու գայ ։
16 Եւ Յովսեփի որդիքը ըսին · Լեռը մեզի բաւական չէ · ու Հովկիտի երկրին մէջը՝ Բեթսանի մէջ , ու անոր գիւղաքաղաքներուն մէջ , և Յեզրեաելի հովիտին մէջ բնակող բոլոր Քանանացիները երկաթէ
17 կառքեր ունին ։ Ու Յեսու Յովսեփին տանը՝ Եփրեմին ու Մանասէին հետ խօսելով , ըսաւ · Դուն բազմաթիւ ժողովուրդ ես , ու շատ ուժ ունիս · քեզի միայն
18 մէկ վիճակ մը չբլլայ , Լեռը քուկդ ըլլայ · և որովհետև անիկայ անտառ է , զանիկայ կարէ , ու մինչև ծայրը քուկդ ըլլայ · քանզի դուն Քանանացիները անկէ պիտի վռնտես , Լեռ անոնք երկաթէ կառքեր ունենան ու զօրաւոր ըլլան ։

Ն · Ք · ՉԿ · 1444

Ղ Ս · ԺԹ · 18 ։ Գ Թագ · Գ · 12 ։ Գ Պատ · Ա · 19 · Գ · 3 ։

Ղ Օր · Ի · 1 ։

ԳԼ · ԾՐ

1 Խորանը Սելովի մէջ կը կանգնեն · 2 Երկրին մնացածը գծագրելով՝ եօթը բաժին կ'ընեն ։ 10 Յեսու վիճակով կը բաժնէ զանիկայ · 11 Բենիամինին վիճակը ու սահմանը , 21 և քաղաքները ։

1 Եւ Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքը Սելովի մէջ ժողվուեցան և Երհոն ժողովքի խորանը կանգնեցին , ու երկիրը անոնց առջևը նուաճեցաւ ։
2 Եւ Իսրայէլի որդւոցը մէջ՝ եօթը ցեղ մնացեր էր , որոնք իրենց
3 ժառանգութիւնը առած չէին ։ Եւ Յեսու Իսրայէլի որդւոցը ըսաւ · Մինչև երբ անհոգութիւն պիտի ընէք , ու պիտի չերթաք ժառանգելու ան երկիրը , որն որ Տէր Աստուածը ձեզի տուաւ
4 ձեր հայրերուն ։ Ահա ձեզի ցեղին իրեք մարդ ընտրեցէք , ու զանոնք խրկեմ , որ երթան ան երկրին մէջը պտրտին , ու զանիկայ իրենց ժառանգութեանը համեմատ գրեն , ու Երուսաղէմ ինծի
5 դառնան ։ Եւ զանիկայ եօթը մասերու պիտի բաժնեն · Յուդան իր սահմանին մէջը՝ հարաւային կողմը կենայ , ու Յովսեփին տունը իրենց սահմաններուն մէջը՝ հիւսիսային
6 կողմը պիտի կենան ։ Եւ դուք երկիրը եօթը բաժին գրեցէք , ու հոս ինծի բերէք , ես ձեր Տէր Աստուծոյն առջևը հոս ձեզի համար վիճակ
7 ձակ ձգեմ · Երդևեցիները ձեր մէջը բաժին չունին , որովհետև անոնց ժառանգութիւնը Տէրոջը քահանայութիւնն է · Եւ Գադը՝ ու Ռուբէնը՝ և Մանասէին կէս ցեղը Ցորդանանու անդիի կողմը դէպ 'ի արևելք իրենց ժառանգութիւնները առին , որոնք Տէրոջը ծառան Մովսէս անոնց տուաւ ։
8 Եւ ան մարդիկները ելան գացին · ու Յեսու ան երկիրը գրելու գացողներուն պատուիրեց՝ ըսելով ·

Գ Պատ · Ժ · 51 · Ի · 2 · Իր · 9 · Ե · Բեմ · Է · 12 ։
Բ Պատ · Ժ · 31 · Թագ · Ա · 3 , 24 · Գ · 3 , 4 ։
Է Պատ · Ժ · 9 ։
Է ԵԲ · տուէք ։
Ե Գլ · Ժ · 1 ։
Է Գլ · Ժ · 1 , 4 ։
Ղ Գլ · Ժգ · 2 · Հմ 10 ։
Է Գլ · Ժգ · 33 ։
Ը Գլ · Ժգ · 8 ։

Ն·ՔՐ·ՁԲ· 1444

Գացէք , և ան երկրին մէջը պտըտելով՝ զանիկայ գրեցէք . ետքը ինծի դարձէք , որ հոս Սելովի մէջ Տէրոջը առջևը ձեզի համար վիճակ
9 ձգեմ : Եւ ան մարդիկները գացին , ու ան երկրին մէջը պտրտեցան , և զանիկայ էր քաղաքներովը եօթը բաժին ընելով՝ գիրքի մը վրայ գրեցին , ու Սելովի բանակը
10 եկան Յեսուին ։ Եւ Յեսու Սելովի մէջ Տէրոջը առջևը՝ անոնց համար վիճակ ձգեց . ու Յեսու հոն երկիրը բաժնեց Իսրայէլի որդւոցը՝ իրենց բաժիններուն համեմատ ։
11 Եւ Նախ Բենիամինի որդւոցը ցեղին վիճակը ելաւ իրենց տոհմերուն համեմատ . ու իրենց վիճակին սահմանը՝ Յուդայի որդւոցը ու Յովսէփի որդւոցը
Ր Տե՛ս գԼ· ԺԶ· 1 ։ 12 սեփ որդւոցը մէջտեղը ելաւ ։ Եւ անոնց հիւսիսային կողմի սահմանը՝ Յորդանանէն եղաւ . ու ՚ի սահմանը հիւսիսային կողմին՝ Երիքովին քովը կ՚ելլէ , և դէպ՚ի արեւմուտք՝ լեռը վեր կ՚ելլէ , ու Բեթաւանի անապատին մէջ կը վերջանայ .
Ժ ՅԱ· ԻԸ· 19 ։ Դատ· ա· 23 ։ 13 նայ . Եւ սահմանը՝ անկէ Լուզին կ՚անցնի , Լուզին՝ Ժայռինքն Բեթելին հարաւային կողմէն . ետքը ՚ի սահմանը՝ Ատարոթ ադարը կ՚իջնէ , որ Ի վարի Բեթորոնին հարաւային կողմը եղող լեռանը քովը
Ի ԳԼ· ԺԶ· 8 ։ 14 է . Եւ ՚ի սահմանը արեւմտեան ծայրը հասնելով՝ դէպ՚ի հարաւ կը դառնայ՝ հարաւային կողմէն՝ Բեթորոնին դիմացի լեռնէն , ու կը վերջանայ Կարիաթբաալի մէջ՝ որ է Կարիաթարիմ , Յուդայի որդւոց քաղաքը ։ Արեւմտեան ծայրը ասիկայ է ։
Լ Տե՛ս գԼ· ԺԵ· 9 ։ 15 կայ է ։ Եւ հարաւային կողմը՝ Կարիաթարիմի ծայրէն ելլելով , սահմանը դէպ՚ի արեւմուտք կ՚երթայ , ու Նեփթոյայի ջուրին աղբիւրը
Ի ԳԼ· ԺԵ· 9 ։ 16 կ՚ելլէ ։ Եւ ՚ի սահմանը՝ Ռափայնոց հովիտին մէջը՝ հիւսիսային
Ժ ԳԼ· ԺԵ· 8 ։ կողմը եղող Ենովմի որդւոյն ձորին դիմացի լեռանը եզերքը կ՚իջնէ , ու Յեբուսին քովէն դէպ՚ի հարաւ Ենովմի ձորէն իջնելով՝
Լ ԳԼ· ԺԵ· 7 ։ 17 Ռովգելի աղբիւրը կ՚իջնէ . Եւ հիւսիսային կողմէն նշան կտրելով՝ Ենսամիսը կ՚ելլէ , ու անկէ Ադումմինի զառի՚ի վերին դիմացը եղող
ՀԳԼ· ԺԵ· 6 ։ Գաղիլովթը կ՚ելլէ , և Հրուբէնեան
Յ ԳԼ· ԺԵ· 6 ։ 18 բանին վէմը կ՚իջնէ . Ետքը Յարաբային դիմացի կողմէն դէպ՚ի հիւսիս անցնելով՝ Արաբա կ՚իջնէ .
19 Ետքը ՚ի սահմանը դէպ՚ի հիւսիս՝ Բեթագղային քովէն կ՚անցնի , ու ՚ի սահմանը՝ Աղի Ծովուն հիւսիսային ծոցը՝ ՚ի Յորդանանու հարաւային ծայրը կը վերջանայ ։ Հարաւային սահմանը ասիկայ է ։
20 Եւ արեւելեան կողմի սահմանը Յորդանանն է ։ Բենիամինի որդւոցը ժառանգութիւնը շուրջանակի իր սահմաններովը անոնց տոհմերուն համեմատ ասիկայ է ։
Ն·ՔՐ·ՁԲ· 1444 21 Եւ ՚ի քաղաքները՝ իրենց տոհմերուն համեմատ . Երիքով՝ Բեթհագղա՝ Եմեկկասիս՝ Բեթարաբա՝
23 բա՝ Սեմարիմ՝ Բեթէլ՝ Աւիմ՝
24 Փարա՝ Եփրա՝ Քեփարամմոնա՝ Հոփնի ու Գաբա . տասներկու
25 քաղաք և անոնց գեղերը ։ Գաբաոն՝ Ռամա՝ Բերովթ՝ Մա-
26 բաւոն՝ Ռամա՝ Բերովթ՝ Մասպա՝ Քեփիրա՝ Մոսա՝ Ռեկեմ՝
28 Յերփսէլ՝ Թարաղա՝ Սելա՝ Էլէփ՝ Եբուսացի՝ այսինքն Երուսաղէմ՝ Գաբաաթ — Կարիաթ . տասնուերկու քաղաք և անոնց գեղերը ։ Բենիամինին որդւոցը ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ՝ ասիկայ է ։
ՂԳԼ· ԺԵ· 8 ։

ԳԼ · ԺԹ

1 Շմաւոնին , 10 Զաբուղոնին , 17 Իսաքարին ։ 24 Ասերին , 32 Նեփթաղիմին , 40 և Դանին վիճակները ։ 46 Իսրայէլի որդիքը Յեսուին ժառանգութիւն կու տան ։

1 Եւ երկրորդ վիճակը Շմաւոնին ելաւ , Շմաւոնի որդւոցը ցեղին՝ իրենց տոհմերուն համեմատ . ու անոնց ժառանգութիւնը Յուդայի որդւոցը ժառանգութեան — ՀՄՐ 9 ։
2 մէջը եղաւ ։ Եւ Իրենց ժառանգութեանը մէջ — տղաքները ու Բ ԱՄՆ · Գ · 28 ։
3 նեցան . Բերսաբէէ , Սաբէէ , Մո-
4 լադա , Ասըր սուաղ , Բաղա , Ա-
5 սեմ , Էլթուղադ , Բաթուլ , Հօր-
6 մա , Սիկելակ , Բեթմարքաբովթ , Ասըր սուսա , Բեթլաբաովթ , և
7 Սարուհէն . տասուերկը քաղաք ու անոնց գեղերը ։ Ային , Ռեմմոն , Եթեր , և Ասան . չորս քաղաք ու
8 անոնց գեղերը ։ Եւ այս քաղաքներուն բոլորտիքը եղած բոլոր գեղերը՝ մինչև *Բահաղեթ բէերը , — Հարաւային Ռաման՝ , Շմաւոնի որդւոցը ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ՝ ասիկայ է ։
* Կ՚ըսէ՝ Բահաղեթ բէեր ուսման հարաւային կողմէն ։
9 կայ է ։ Շմաւոնի որդւոցը ժառանգութիւնը՝ Յուդայի որդւոցը բաժինէն եղաւ . քանզի Յուդայի որդւոցը բաժինը շատ էր իրենց . ետևոր համար Շմաւոնի որդիքը անոնց ժառանգութեանը մէջ ժառանգութիւն առին ։ ՟ ՀՄՐ 1 ։ ՟
10 Ու երրորդ վիճակը՝ Զաբուղոնի որդւոցը ելաւ՝ իրենց տոհմերուն համեմատ . և անոնց ժառանգութեանը սահմանը մինչև Սարիդը է ։
11 ղաւ . Ետ անոնց սահմանը՝ դէպ՚ի Ծովը ու Մարալան կ՚ելլէ , և Դաբասեթը կը հասնի , ու Ի Ցեկնամի դիմացը եղող ձորը կը հասնի ,
12 Եւ Սարիդէն՝ դէպ՚ի արևելեան Ը ՅԱ· ԽԹ· 13 ։ Ի ԳԼ · ԺԸ· 22 ։

Ն·Ք·ՂԲ· 1444

կողմը՝ քաղաղվթ թաբօրին սահմանը կը դառնայ, ու Թաբաբաթէն ելլելով՝ ցափիէն վեր կ'ելլէ,
13 Եւ անկէ դէպ 'ի արեւելք անցնելով՝ արեւելեան կողմէն Գեթքոփերը. Ի-թհաասիրը կ'անցնի, ու Ռեմմոն
14 մեթօարը Ե Նուան կ'ելլէ. Եւ Քը ՚ սահմանը՝ հիւսիսային կողմէն Ենաթօնը կը պտրտի, ու Ցեփթա-
15 յելի ձորին մէջ կը վերջանայ. Եւ կատտաթ, ու Նաաղօլ, և Սամբրօն, ու Ցադելա, և Բեթլէհեմ. տասուերկու քաղաք ու անոնց գե-
16 ղերը։ Զաբուղոնի որդւոցը ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկայ է, ա քաղաքները ու անոնց գեղերը։
17 Զորրորդ վիճակը Իսաքարին ելաւ, Իսաքարի որդւոցը իրենց
18 տոհմերուն համեմատ. Ու անոնց սահմանը ՚ի Եզրայէլ,
19 ու Քասելովթ, և Սունամ, Ու Ափերէմ, և Սիան, ու Անարէթ,
20 Եւ Ռաբբիթ, ու Կեսիօն, ու Աբէս, Եւ Ռամաթ ու Ենգաննիմ,
21 22 և Ենքադդա, ու Բեթփասես. Եւ ա սահմանը՝ Թաբօրը, Սահիման ու Բեթսամիւսը կը հասնի, ու անոնց սահմանը Ցորդանանու մէջ կը վերջանայ. տասնուվեց քաղաք
23 ու անոնց գեղերը։ Իսաքարի որդւոցը ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ՝ ասիկայ է, ա քաղաքները ու անոնց գեղերը։
24 Եւ հինգերորդ վիճակը Ասերի որդւոցը ցեղին ելաւ՝ իրենց տոհմ-
25 րուն համեմատ։ Ու անոնց սահմանը ՚ի Հելկաթ, ու
26 Ալի, և Բետէն, ու Աքսափ, Եւ Ալամելէք. ու Ամադ, և Մասաղ. ու արեւմտեան կողմէն մինչև Կարմէղոսը և Սիհոր լիբնաթը կը հասնի,
27 Նի, Ու արեւելեան կողմէն՝ դէպ 'ի Բեթդագոն կը դառնայ, ու հիւսիսային կողմէն Զաբուղոնը, Ցեփթայելի ձորը, Բեթամկը ու Նեհիէլը կը հասնի, և ձախ կողմէն՝ քա-
28 բօնը կ'ելլէ, Ու Եբրոնը, և Րոորը, ու Համմոնը, և Կանան, Ղինչև
29 մեծ Սիդոնը. Եւ ա սահմանը Ռամա կը դառնայ, մինչև Ի Ցիւրոս՝ ամուր քաղաքը, և ա սահմանը Ուսան դառնալով՝ Ծովուն մէջ՝ Աքեզիբին վիճակին մէջը կը
30 վերջանայ. Ու Ամմա, և Ափէկ, ու Ռոոբ. քսանուերկու քաղաքներ
31 ու անոնց գեղերը։ Ասերի որդւոցը ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ՝ ասիկայ է, ա քաղաքները ու անոնց գեղերը։
32 Վեցերորդ վիճակը՝ Նեփթալիմի որդւոցը ելաւ, այսինքն Նեփթա-

ղիմի որդւոցը՝ իրենց տոհմերուն
33 համեմատ։ Ու անոնց սահմանը ՚ի Հելեփէն ա Ալոնէն մինչև Սանանիմը, ու Ադամի Նագեբը, և Ցաբնէելը ու մինչև Լակումը, ու ելքերը Ցորդանանու-
34 մէջ կը վերջանայ։ Եւ Քը ա սահմանը՝ արեւմտեան կողմէն Ազանոթ Թաբօրը կը դառնայ, ու անկէ Հուկոկը կ'ելլէ. և հարաւային կողմէն մինչև Զաբուղոնը կը հասնի, ու արեւմտեան կողմէն՝ մինչև Ասերը, և արեւելեան կողմէն՝ մինչև Ցուդան ու Ցորդանանը կը հասնի.
35 Եւ պարսպաւոր քաղաքները՝ Ասդիմ, Սէր, Ամմաթ, Րեկկաթ,
36 Քենեռեթ, Ադամա, Ռամա,
37 Հասոր, Կադէս, Եդրայի, Ենհասոր,
38 Ցարօն, Մակդաղէլ, Հարեմ, Բեթանաթ ու Բեթսամիս. տասնուվեց քաղաք և անոնց
39 գեղերն են։ Նեփթալիմի որդւոցը ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկայ է, ա քաղաքները ու անոնց գեղերը։
40 Եօթներորդ վիճակը Դանի որդւոցը ցեղին ելաւ՝ իրենց տոհմ-
41 րուն համեմատ։ Եւ անոնց ժառանգութեան սահմանը ՚ի Եղաւ. Սարաա, ու Եթհաւուղ, և
42 Իրսամէս, Ու Շաղաբին, և Այժ-
43 ղոն, ու Եթհլա, Եւ Ելոն, ու
44 Թամնաթա, և Ակկարոն, Ու Եղթեկէ, և Գաբաթոն, ու Բաալոթ,
45 Ու Եհուդ, և Բանէ բարակ, ու
46 Գեթրէմոն, Եւ Մէարկոն ու Ռակկոն, Ցոպպէին դիմացը եղած սահ-
47 մանովը մէկտեղ։ Եւ Դանի որդւոցը սահմանը՝ իրենց պղտիկ ելաւ. ուստի Դանի որդիքը ոտք ելան, ու Լէսեմի հետ պատերազմեցան, և զանիկայ առնելէն ետքը՝ սուրի բերնէ անցուցին, ու անիկայ ժառանգելով՝ անոր մէջը բնակեցան, և Լէսեմը՝ իրենց հօր Դանին անունը-
48 վը՝ Դան կոչեցին։ Դանի որդւոցը ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկայ է, ա քաղաքները ու անոնց գեղերը։
49 Ու երկիրը իր սահմաններովը բաժնելէն լմընցնելէն ետքը, Իսրայէլի որդիքը՝ Նաւեան Եսուսին՝ իրենց մէջը ժառանգութիւն
50 տուին. Ցերոնը հրամանաւը՝ անոր ուզած քաղաքը՝ Թամնաթ սարան իրեն տուին՝ Եփրեմի լեռանը վրայ, ու անիկայ քաղաքը շինեց, և անոր մէջ բնակեցաւ։
51 Ասոնք են ան ժառանգութիւնները՝ որ եղիազար քահանան, և Նաւեան Եսուսն, ու Իսրայէլի որդւոցը ցեղերուն նահապետները՝ հսելովի մէջ Ցերոնը առջևը՝ ժո-

Ն·Ք·ՂԲ· 1444

ՔԲՕր·ԼԴ· 23։

ՀԴաս·ա· 35։

ՀԳոր·Թ· 36։
և Տե՛ս Դաս·ԺԸ։

ՀԴաս·ԺԸ· 29։

ՀԹիւ·ԼԴ· 17։ Գլ·Ժդ· 1։

ՀԳլ·ԺԸ·1· 10։

Ղ Գլ·Ժա· 5։ Դաս·ա· 31։ ԵբԹագ·ե· 11։

ԸՅն·լը·5։ Դաս·ա· 31։ ՄԻբ· ա·14։

ՀԹ Գլ·Իդ· 30։

1444

Ն. ք. ընդ. 1444

զովքի խորանին դրանը քովը վճակով ազատեցին, ու երկիրը բաժանելը լմընցուցին։

ԳԼ. Ի

1 Աստուած հրամայեց կ'ըսէ, 7 ու Իսրայէլի որդիքը ապաստանի վեց քաղաքները կ'որոշեն։

1 Ու Տէրը խօսեցաւ Յեսուին՝ ըսե-
2 լով. Խօսէ Իսրայէլի որդւոցը, ու ըսէ. Մովսէսին ձեռքովը՝ ան իմ ձէզի ըսած ապաստանի քա-
ԵԼ. իա. 13։ Թուա. լե. 6, 11, 14։ ԲՕր. ժԹ. 2, 9։ ղաքներս ձէզի համար որոշեցէք.
3 Որպէս զի սխալմամբ անգիտութեամբ մարդ զարնող սպանողը հոն փախչի. ու անոնք ձէզի ապաստանարան ըլլան՝ արեան վրէժ-
4 խնդիր եղողէն. Եւ անիկա պանողը ան քաղաքներուն մէկուն մէջը թող փախչի, ու բաղաքին դուռը կայնի, և ան քաղաքին ծերերուն իր իրաւունքը խօսի, որ լսեն. ու անոնք զանիկայ քաղաքին մէջը իրենց քովը առնելով՝ անոր մէկ տեղ մը տան, որ իրենց
ԲՀռութ. դ. 1, 2։ ՓԹուա. լե. 12։ 5 հետ բնակի։ Ու երբոր արեան վրէժխնդիրը անոր ետևէն իյնայ, սպանողը անոր ձեռքը չտան. քանզի անիկայ իր դրացին անգիտութեամբ մեռցուցեր է, և առաջուց անոր դէմ թշնամութիւն
ԴԹուա. լե. 12, 25։ 6 մը չունէր։ Եւ անիկայ ան քաղաքին մէջը պիտի բնակի, մինչև որ դատաստանի համար ժողովքին առջևը կայնի, մինչև որ ան օրերը եղող քահանայապետը մեռնի. ետքը սպանողը թող դառնայ, իր քաղաքը ու իր տունը երթայ, այսինքն ան քաղաքը՝ ուսկից որ փախեր էր։
ԻԳԼ. իա. 32։ ա ՄՆ. գ. 76։ 7 Ուստի Գալիլեայի մէջ Կադէսը Նեփթաղիմի լեռնակողմը, Սիւքեմը՝ Եփրեմի լեռնակողմը, և Կարիաթ արբան՝ այսինքն Քեբրոնը՝ Յուդայի լեռնակողմը։
ՀԳԼ. իա. 21։ ԲՄՆ. ժ. 1։ ԻԳԼ. ժգ. 15։ իա. 11, 13։ 8 Ու Երիքովի դիմաց Յորդանանու անդիի կողմը դէպ ի արևելք՝ Ռուբենի ցեղէն՝ անապատին դաշտին մէջ՝ Բոսորը, և Գադի ցեղէն՝ Գաղաադու մէջ՝ Յրամովթը, ու Մանասէի ցեղէն՝ Բասանի մէջ՝
ՃԵՂ. ա. 39։ ԲԲՕր. դ. 43։ ԳԼ. իա. 36։ ա ՄՆ. գ. 7Տ։ ժԳԼ. իա. 38։ գՓաագ. իբ. 3։ 9 Իսկ զանոնք էր, Երիքովը Իսրայէլի որդւոցը համար՝ ու անոնց մէջը բնակող օտարականին համար որոշուած քաղաքները ասոնք են. որպէս զի ամէն ով որ սխալմամբ մարդ մեռցընէ, հոն փախչի, ու արեան վրէժխնդրին ձեռքովը չմեռնի, մինչև որ դատաստանի համար ժողովքին առջևը չկայնի։

ԳԼ. ԻԱ

1 Ղեւտացւոց վիճակով քառասնեւութը քաղաք կր տրուի միւս ցեղերուն ժառանգութիւնեբրէն։ 43 Աստուած իր խոստմանը պէս՝ եր-

կիրը անոնց կուտայ, ու կը հանգըստացընէ զանոնք։

1 Ու Ղեւտացւոց նահապետները՝ Եղիազար քահանային, Նաւեան Յեսուին և Իսրայէլի որդւոցը ցեղերուն նահապետներուն մօտ-
2 ցան, Ու Քանանու երկիրը Շիլովի մէջ խօսեցան անոնց՝ ըսելով. Տէրը Մովսէսին ձեռքովը հրամայեց՝ որ մեզի բնակելու համար քաղաքներ, ու մեր անասուններուն համար՝ անոնց արուարձան-
ԲԳԼ. ժը. 1։ ՓԹուա. լե. 2։ 3 ները տրուին։ Ու Իսրայէլի որդիքը Տէրոջը հրամանաւը՝ իրենց ժառանգութիւններէն՝ ասոնք քաղաքները ու անոնց արուարձանները Ղեւտացւոց տուին։
4 Եւ վիճակը կահաթեանց ազգատոհմներուն ելաւ. ու Ղեւտացիներուն Յ Ահարոն քահանային ՏՀԺր 8, 19։ Ի Տճ. գԼ. իդ. 33։ որդւոցը՝ Էվճակով տասուիրեք քաղաք ելաւ, Յուդայի ցեղէն, Շմաւոնի ցեղէն ու Բենիամինի
5 ցեղէն։ Եւ Կահաթին միւս որդւոցը՝ Եփրեմի ցեղին ազգատոհմներէն, ու Դանի ցեղէն, և Մանասէի կէս ցեղէն՝ վիճակով տասը
ՂՀԺր 20, ՃԼ։ 6 քաղաք Էր։ Ու Գերսոնի որդւոցը՝ Իսաքարի ցեղէն ազգատոհմներէն, և Ասերի ցեղէն, ու Նեփթաղիմի ցեղէն, և Բասանի մէջ եղող Մանասէի կէս ցեղէն՝ վիճակով տասուիրեք քաղաք Ի
Ի ՀԺր 27, ՃԼ։ 7 Էր։ Մերարիի որդւոցը՝ իրենց տոհմերուն համեմատ՝ Ռուբենի ցեղէն, Գադի ցեղէն, ու Զաբուղոնի ցեղէն՝ տասուերկու
ԸՀԺր 34, ՃԼ։ 8 քաղաք Էր։ Ու Իսրայէլի որդիքը՝ ասոնք քաղաքները ու անոնց արուարձանները վիճակով Ղեւտացւոց տուին, ինչպէս որ Տէրը պատուիրեր էր Մովսէսին ձեռքովը։
ԲԻՀԺր 3։ ԺԹուա. լե. 2։ 9 Եւ Յուդայի որդւոցը ցեղէն, ու Շմաւոնի որդւոցը ցեղէն՝ ասոնք իրենց անունովը յիշուած քաղաք-
10 ները տուին. Ու Ահարոնի որդւոցը եղան, որոնք Ղեւիի որդւոցմէ եղող կահաթեանց ազգատոհմներէն էին. քանզի առաջին վիճակը
ԻՀԺր 4։ ԼՃՄՆ. գ. 55։ Ի ԳԼ. ի. 7։ ՂԵՐ. ա. 39։ 11 անոնցն էր։ Ու Ենաք անոնց՝ Հեբրոն Յուդայի լեռանը վրայ՝ Հենակի հօրը Արբային քաղաքը՝ այսինքն Քեբրոնը տուին. անոր շրջակայ ա-
ԺԳԼ. ժե. 13. 14։ ՃՅՈՇ. իգ. 2։ 12 րուարձաններովը. Եւ հեղաքին ագարակները ու գեղերը՝ Քեփոնեան քաղերին կալուածք տուին։
ՀԳԼ. ժդ. 14։ ա ՄՆ. գ. 56։ ՅՃ ՄՆ. գ. 57, ՃԼ։ 13 Ուստի Ահարոն քահանայի որդւոցը՝ սպանողի համար ապաստանի քաղաք ԸԼՀԺր որդւոցն Հեբրոն՝ Հեբրոնը տուին իր արուարձաններովը. Լիբնան՝ իր արուարձաններովը,
ՂԳԼ. ժե. 54։ Ի. 7։ ՓԳԼ. ժե. 42։ ՖԳԼ. ժե. 48։ 14 Յաթիրը՝ իր արուար-

Ն · Ք · ՉՁ · 1444

ձաններովը , ¦ ու Եսթեմովը՝ իր
15 արուարձաններովը , Եւ Հոզոնը՝
իր արուարձաններովը , ¦ ու Դաբիր
16 ը՝ իր արուարձաններովը , Եւ
Աչինը՝ իր արուարձաններովը ,
¦ ու Ցետտան՝ իր արուարձաններո-
վը , Եւ Բեթսամիսը՝ իր արուար-
ձաններովը . աս երկու ցեղէն ինը
17 քաղաք տ֊ն ։ Ու Բենիամինի
ցեղէն՝ Գաբաւոնը՝ իր արուար-
18 ձաններովը , Գաբան՝ իր արուար-
ձաններովը , Անաթովթը՝ իր ա-
րուարձաններովը , եւ Գաղմոնը՝
իր արուարձաններովը . չորս քա-
19 ղաք տ֊ն ։ Ահարոնի որդւոցը
քահանաներուն բոլոր քաղաքները
տասուերիք քաղաք էին՝ ու անոնց
արուարձանները ։
20 Եւ կահաթի որդւոցմէ մնացած
Ղեւտայի կահաթեանց ազգատոհմ-
ներն ալ՝ Եփրեմի ցեղէն վիճակով
21 քաղաքներ առին ։ Ու անոնց՝ Եփ-
րեմի լեռնակողմը՝ սպաննողի հա-
մար ապաստանի քաղաք ԸՂԵՂ-
ՐԱՅՐ Սիւքեմը տուին իր
22 արուարձաններովը . Նաև Գա-
զերը՝ իր արուարձաններովը , և
Կաբսեմը՝ իր արուարձաններովը ,
ու Բեթորոնը՝ իր արուարձաննե-
23 րովը . չորս քաղաք տ֊ն ։ Եւ
Դանի ցեղէն՝ Ելթեկէն՝ իր ա-
24 րուարձաններովը , Գաբաթօնը՝ իր
արուարձաններովը , Այեղոնը՝ իր
արուարձաններովը , ու Գեթրեմ-
մոնը՝ իր արուարձաններովը . չորս
25 քաղաք տ֊ն ։ Եւ Մանասէի կէս
ցեղէն՝ Թանաքը՝ իր արուարձան-
ներովը , ու Գեթրեմմոնը՝ իր ա-
րուարձաններովը . երկու քաղաք
26 տ֊ն ։ կահաթի որդւոցը մնաց-
ած ազգատոհմներուն բոլոր քա-
ղաքները տասն էին , և անոնց ա-
րուարձանները ։
27 Ու Ղեւտացւոց ազգատոհմերէն
եղող Գերսոնի որդւոցը՝ Մանա-
սէի կէս ցեղէն պսպննողի համար
ապաստանի քաղաք ԸՂԵՂ-
ՐԱՅՐ Բասանի մէջ Գովղանը՝ իր
արուարձաններովը . նաև Բեեստա-
րան՝ իր արուարձաններովը . երկու
28 քաղաք տ֊ն ։ Եւ Իսաքարի ցե-
ղէն՝ Կեսիոնը՝ իր արուարձաններո-
վը , Դաբարաթը՝ իր արուարձան-
29 ներովը , Յերիմութը՝ իր արուար-
ձաններովը , Ենգանիմը՝ իր ա-
րուարձաններովը . չորս քաղաք
30 տ֊ն ։ Եւ Ասերի ցեղէն՝ Մա-
սաղը՝ իր արուարձաններովը , Աբ-
31 դօնը՝ իր արուարձաններովը , Քէղ-
կաթը՝ իր արուարձաններովը , և
Բոորը՝ իր արուարձաններովը . չորս
32 քաղաք տ֊ն ։ Ու Նեփթաղիմի
ցեղէն՝ սպաննողի համար ապաս-

Ն · Ք · ՉՁ · 1444

տանի քաղաք ԸՂԵՂ-ՐԱՅՐ Գալիլեայի մէջ Կադէսը՝ իր ա-
րուարձաններովը . նաև Եմմաթ-
դովրը՝ իր արուարձաններովը , ու
Կարթանը՝ իր արուարձաններովը .
33 իրեք քաղաք տ֊ն ։ Գերսո-
նեանց բոլոր քաղաքները՝ անոնց
ազգատոհմերուն համեմատ տա-
սուիրեք քաղաք էին՝ ու անոնց ա-
րուարձանները ։
34 Եւ մնացած Ղեւտացիներուն՝
Մերարիի որդւոցը ազգա-
տոհմներուն՝ Զաբուղոնի ցեղէն՝
Ցեկնամը՝ իր արուարձաններովը ,
Կարթան՝ իր արուարձաններովը ,
35 Դիմնան՝ իր արուարձաններովը ,
Նաաղօլը՝ իր արուարձաններովը .
36 չորս քաղաք տ֊ն ։ Եւ Ռուբէնի
ցեղէն՝ Բոսորը՝ իր արուարձանն-
երովը , ու Ցասսան՝ իր արուարձան-
37 ներովը , Կադեմոթը՝ իր արուար-
ձաններովը , ու Մեփաաթը՝ իր
արուարձաններովը . չորս քաղաք
38 տ֊ն ։ Եւ Գադի ցեղէն՝ սպան-
նողի համար ապաստանի քաղաք
ԸՂԵՂ-ՐԱՅՐ Գաղաադի մէջ
Ռամոթը՝ իր արուարձաններովը .
Նաև Մանայիմը՝ իր արուարձաննե-
39 րովը , Եսեբոնը՝ իր արուարձաննե-
րովը , Յազերը՝ իր արուարձան-
ներովը . ամէնը չորս քաղաք տ֊ն ։
40 Ղեւտացւոց ազգատոհմերէն
մնացած Մերարիի որդւոցը բոլոր
քաղաքները՝ իրենց տոհմերուն հա-
մեմատ իրենց վիճակովը՝ տասուեր-
41 կու քաղաք եղաւ ։ Իսրայէլի որ-
դւոցը կալուածքներուն մէջ Ղե-
տացւոց բոլոր քաղաքները՝ քառ-
սունուերիք քաղաք էին՝ ու անոնց
42 արուարձանները ։ Ան քաղաքնե-
րուն ամէն մէկը՝ իր բոլորտիքը
արուարձաններ ունէր . աս քա-
ղաքներուն ամէնն ալ այնպէս էր ։
43 Եւ Տէրը Իսրայէլին տուաւ ան
բոլոր երկիրը , որն որ անոնց հայ-
րերուն տալու երդում ըրեր էր . և
զանիկայ ժառանգեցին , ու անոր
44 մէջ բնակեցան ։ Եւ Տէրը զանոնք
ամէն կողմէն հանգստացուց , ինչ-
պէս որ անոնց հայրերուն երդում
ըրեր էր . ու թանոնց բոլոր թշնա-
միներէն բնաւ մէկը չկրցաւ անոնց
դէմ դնել . Տէրը անոնց ա-
մէն թշնամիները անոնց ձեռքը
45 տուաւ ։ Եւ Տէրը Իսրայէլի տանը
համար ուրչափ բարի խօսքեր որ
ըրուցեր էր , անոնցմէ բան մը
չպակսեցաւ . ամէնն ալ կատա-
րուեցաւ ։

ԳԼ · Ի Ը

1 Երկուք ու կէս ցեղերը արհնութիւնով տուն
ներին կը խրկուին , 9 որոնք իրենց ճամբոր-
դութեանը մէջ վիշտութեան պատճառ մը կը շի-

Ժ Գլ · ԺԵ · 50 ։
Ն ա Մն · Ղ · 58 ։ Գլ · ԺԸ · 51 ։
Ղ Գլ · ԺԵ · 49 ։
ա Մն · Ղ · 59 ։ Գլ · ԺԸ · 42 ։
Ղ Գլ · ԺԵ · 55 ։
Դ Գլ · ԺԵ · 10 ։
Ք Գլ · ԺԸ · 25 ։
Գ · Գլ · ԺԸ · 24 ։
ա Մն · Ղ · 60 ։
Ա ՀԺՐ 5 · ա Մն · Ղ · 66 ։
ա Գլ · Ի · 7 ։
Բ ՀԺՐ 6 · ա Մն · Ղ · 71 ։
Ջ Գլ · Ի · 8 ։
Ե Գլ · Ի · 7 ։
Ա Գլ · Ի · 8 ։
Ի Գլ · Ի · 8 ։
Ե Գլ · ԺԸ · 23 ։ Իր · 4 ։
Զ Օր · Է · 24 ։
Է Գլ · Իգ · 14 ։

Ն · ք · ՉԾ · 1444

Նեն ։ 11 Իսրայէլացիք կը գայթակղին ասոր բանին վրայ ։ 21 Իսկ անոնք իրենց դիտաւորութիւնը կը բացատրեն ։

1 Ապ ատենը Ցեսու էրիհո կանչեց Ռուբենեանները , Գադեանները 2 ու Մանասէին կէս ցեղը , եւ անոնց ըսաւ . «Տէրոջը ծառան Մովսէս ինչ որ ձեզի հրամայեր էր , դուք անոնց ամէնն ալ պահեցիք . ես իմ խօսքս մտիկ ըրիք ամէն բանի մէջ որ ձեզի պատուիրե- 3 ցի ։ Այսչափ շատ օրեր՝ մինչեւ ասօր ձեր եղբայրները չըթողուցիք , և ձեր Տէր Աստուծոյն *պատուիրանքները ամբողջ" 4 պահեցիք ։ Ու հիմա ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրները հանդըստացուց , ինչպէս որ անոնց ըսաւ . ուստի հիմա դարձէ՛ք , ձեր վրանները «« ձեր կալուածոց երկիրը գացէ՛ք , ես որն որ Տէրոջը ծառան Մովսէս Յորդանանու անդին կողմը 5 ձեզի տուաւ ։ Միայն թէ ազէկ զգուշանաք ընէք ի գործ դնելու ան պատուիրանքը ու օրէնքը , որն որ Տէրոջը ծառան Մովսէս ձեզի պատուիրեց , ու որ ձեր Տէր Աստուածը սիրէք , և անոր ամէն ճամբաներուն մէջը քալէք , ու անոր պատուիրանքները պահէք , և անոր յարիք , ու ձեր բոլոր սրտովը և բոլոր հոգիովը զանիկայ պաշտէք ։ 6 Ու Ցեսու Նաւէնէ զանոնք , և արձակեց . ու անոնք իրենց վրանները 7 գացին ։ (Եւ Մանասէի կէս ցեղին՝ Մովսէս [illegible] տուեր էր Բասանի մէջ , ու [illegible] կէսին՝ Ցեսու անոնց եղբայրներուն հետ՝ Յորդանանու ասդիի կողմը տուաւ դէպ ի արեւմուտք ։) Ու երբոր Ցեսու զանոնք իրենց վրանները 8 խրկեց , զանոնք օրհնեց . եւ անոնց խօսեցաւ՝ ըսելով . Շատ հարստութիւնով ու խիստ շատ անասուններով , արծաթով , ոսկիով , պղնձով , երկաթով ու խիստ շատ հանդերձներով ձեր վրանները դարձէ՛ք , «« ձեր թշնամեաց աւարը ձեր եղբայրներուն հետ բաժնեցէ՛ք ։ 9 Ուստի Ռուբենի որդիքը՝ Գադի որդիքը ու Մանասէին կէս ցեղը՝ Քանանու երկիրը Սիլովի մէջ Իսրայէլի որդւոցմէ զատուեցան գացին , որ իրենց ժառանգութեան երկիրը՝ այսինքն Գաղաադու երկիրը երթան , որն որ Մովսէսին ձեռքովը Տէրոջը հրամանաւը առեր էին ։

10 Ու երբոր Յորդանանու մօտ տեղուանքը եկան , ան կողմը՝ որ Քանանու երկրին մէջն է , Ռուբենի որդիքը՝ Գադի որդիքը ու Մանասէին կէս ցեղը՝ հոն Յորդանանու քովը մէկ սեղան մը չինեցին , երե- Ն · ք · ՉԾ · 1444

11 ւդլթով մեծ սեղան մը ։ Ու Իսրայէլի որդիքը լսեցին որ՝ ահա Ռուբենի որդիքը՝ Գադի որդիքը և Մանասէին կէս ցեղը՝ քանանու երկրին կողմը Յորդանանու մօտ՝ ուր որ Իսրայէլի որդիքը անցեր էին , 12 սեղան մը չիներ են . Ու երբոր Իսրայէլի որդիքը լսեցին , Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքը Սիլովի մէջ ժողովուեցան , որ անոնց վրայ եր- 13 թան պատերազմելու համար ։ Եւ Իսրայէլի որդիքը՝ Ռուբենեանց՝ Գադեանց ու Մանասէի կէս ցեղին՝ Գաղաադու երկիրը խրկեցին Եղիազարին որդին Փենէհէս քահա- 14 նան . Եւ անոր հետ տասը իշխան , այսինքն Իսրայէլի ամէն ցեղերուն նահապետութիւններէն մէկմէկ իշխան , ու որոնց ամէն մէկը Իսրայէլին հազարաւորներուն նահապետ- 15 տուներուն իշխաններն էին . Եւ անոնք Գաղաադու երկիրը գացին Ռուբենի որդւոցը՝ Գադի որդւոցը ու Մանասէի կէս ցեղին , և անոնց 16 հետ խօսեցան՝ ըսելով . Տէրոջը բոլոր ժողովքը այսպէս կ՚ըսէ . Ատ ինչ մեղք է , որ դուք Իսրայէլի Աստուծոյն դէմ գործեցիք՝ այսօր Տէրոջմէ խոտորելով , և այսօր Տէրոջը դէմ ապստամբութիւն ընելու համար՝ ձեզի սեղան չինեցիք ։ 17 Միթէ Փոգովրի անօրէնութիւնը պզտիկ բան մըն է մեզի , որ անկէ՝ մինչեւ այս օրս չմաքրուեցանք , ու Տէրոջը ժողովքին վրայ ան հա- 18 րուածը եկաւ . Եւ դուք այսօր Տէրոջմէ խոտորեցաք . ուստի թէ որ դուք այսօր Տէրոջմէ ապստամբիք , ան ալ վաղը Իսրայէլի բոլոր ժողովքին վրայ պիտի բարկանայ ։ 19 Սակայն թէ որ ձեր կալուածոց երկիրը անմաքուր է , Տէրոջը կալուածոց երկիրը անցէք , ուր որ Տէրոջը խորանը կանգնած է , ու մեր մէջը ժառանգութիւն առէք . և մեր Տէր Աստուծոյն սեղանէն ի զատ ձեզի սեղան չինեցէք՝ Տէրոջը ապստամբ մի՛ ըլլաք , ու մեզմէ ալ մի՛ ապստամբիք ։ 20 Երբոր Զարայեան Աքարը նզովածէն [illegible] մեղք գործեց , միթէ Տէրը բարկութիւնը Իսրայէլի բոլոր ժողովքին վրայ չեկաւ . ու ան մարդը իր անօրէնութեանը մէջ մինակ չմեռաւ ։ 21 Եւ Ռուբենի որդիքը՝ Գադի որդիքը ու Մանասէի կէս ցեղը պատասխան տուին , ու Իսրայէլի հազարապետներուն ըսին . «Աստուածներուն Եհովայ Աստուածը , աստուածներուն Եհովայ Աստուածը" ինքը գիտէ . ու Իսրայէլն ալ

Ն · ք · ՉԾ · 1444

Ե Օր · ԺԳ · 12 · ԺԱ , Դատ . ի · 12 ։

Է Դատ . ի · 1 ։

Ա Օր · ԺԳ · 14 · Դատ . ի · 12 ։

Ի Ել · Գ · 25 ։ Թուա . իե · 7 ։

Ե Թուա . ա · 4 ։

Ա Տես Ղա . ԺԷ . Տ · 9 · բ Օր ԺԲ 13 . 14 ։

Հ Թուա . իե · 3 . 4 · բ Օր · Դ 8 ։

Յ Թուա . ԺԶ · 22 ։

Ղ Գլ . ԺԸ · 1 ։

Ճ Գլ · է · 1 · 5 ։

Ո Կ՚ասի՛ Աստուածն երուն Աստուածը է հովսն է , աստուածներուն Աստուածը է հովսն է · բ Օր · Ժ · 17 ։

Ձ Դ Թագ · բ · 39 · Յոբ · Ժ · 7 ։ իդ · 10 · Սաղ · խգ · 21 ։ Ճղ . 1 · 2 · Երեմ · ԺԲ · 3 · բ Կոր . Ժա . 11 · 31 ։

Ն · ք · ՉԾ · 1444

թող գիտնայ . Թէ որ ես բառը ապստամբութեան համար՝ կամ Տէրոջը դէմ յանցանք գործելու համար ըլլի՛ , մեզ այսօր *չապրեցընէ .

23 Որ մեզի սեղան շինելնիս Տէրոջմէ ետ դառնալու համար , կամ անոր վրայ ողջակէզ ու հացի ընծայ մատուցանելու համար , և կամ անոր վրայ խաղաղութեան զոհեր ընելու համար , Տէրը ինքը

ՅԲ Օր · ԺԸ · 19։ աթագ. ԺԸ · 16 ։

24 չքննութիւն ընէ ։ Այլ մենք ասիկայ մեր վախուն չհնեցինք . մտածելով որ գուցէ վաղը ձեր որդիքը մեր որդուոցը խօսին՝ ու ըսեն Թէ՝ Դուք Իսրայէլի Տէր Աստուծոյն

25 հետ ի՞նչ ունիք . Ո՛վ Ռուբենեանք ու Գադեանք , Տէրը՝ մեր ու ձեր միջը Յորդանանը սահման դրաւ . դուք Տէրոջմէ բնաւ բաժին չունիք . և ես ձեր որդիքը մեր որդուոցը կրնան Թէ՝ Դուք Տէրոջմէ բաժին չունիք .

26 Նէն . Ան պատճառաւ ըսինք . Հիմա մեզի մէկ սեղան մը շհնենք , ըսյց չէ Թէ ողջակէզի համար , ոչ

Ե Ծն · լա · 48։ ԳԼ · իդ · 27 ։ Հմր 34։ Ա Բ Օր · ԺԲ · 5 ։ 6 ։ 11 ։ 12 17 ։ 18 ։ 26 , 27 ։

27 ալ զոհի համար , Այլ՝ որպէս զի անիկայ ՚մեր ու ձեր միջը՛ և մեզմէ ետքը մեր սերունդներուն միջը վկայութիւն ըլլայ , որ ՚մեր ողջակէզներովը , մեր պատարագներովը ու մեր խաղաղութեան զոհերովը՝ Տէրոջը ծառայութիւնը Անոր առջևը ընենք , ու վաղը ձեր որդիքը մեր որդուոցը չըսեն Թէ՝ Դուք Տէ-

28 րոջմէ բաժին չունիք ։ Ու ըսինք , Թէ որ մեզի կամ մեր սերունդին վաղը ՚ես բառը ըսելու ըլլան , պիտի ըսենք Թէ՝ Տեսէք Տէրոջը սեղանին օրինակը՝ որն որ մեր հայրերը շհնեցին , չէ Թէ ողջակէզի համար կամ զոհի համար , հապա մեր ու ձեր միջը վկայութիւն մը ըլլալու հա-

29 մար ։ Քաւ լ՚ըլի՛ որ մենք Տէրոջմէ ապստամբինք , ու այսօր Տէրոջմէ ետ դառնալով , խորանին առջևը եղող մեր Տէր Աստուծոյն սեղանէն ՚ի զատ՝ ՚ողջակէզի համար , հացի ընծայի համար և զոհի համար սեղան շհնենք ։

Բ Օր · ԺԲ · 13 ։ 14 ։

30 Ու երբոր Փենէհէս քահանան և անոր հետ եղող ժողովրդին իշխանները , ու Իսրայէլին հազարապետները՝ Ռուբենի որդուոցը , Գադի որդուոցը ու Մանասէի որդուոցը լսած խօսքերը լսեցին , իրենց հաճոյ

31 երևցաւ . Ո՛ Եղիազարին որդին Փենէհէս քահանան՝ Ռուբենի որդուոցը , Գադի որդուոցը ու Մանասէի որդուոցը ըսած խօսքերը ըսաւ . Այսօր գիտցանք որ Տէրը ՚մեր միջն է . որովհետև դուք Տէրոջը դէմ աս յանցանքը չգործեցիք , և Իսրայէլի որդիքը Տէրոջը ձեռքէն ազատեցիք ։

Ե ԳԼ · ԺԱ · 11 ։ 12 ։ Բ Մն · Ժե · 2։

32 Այսպէս Եղիազարին որդին Փենէհէս քահանան և իշխանները՝ Ռուբենի որդուոցը ու Գադի որդուոցը քովէն՝ Գաղաադայ երկրէն՝ Քանանու երկիրը Իսրայէլի որդուոցը դարձան , և անոնց լուր բերին ։

33 Ու աս խօսքը՝ Իսրայէլի որդուոցը հաճոյ երևցաւ , և Իսրայէլի որդիքը ՚ղԱստուած օրհնեցին , ու Ռուբենի որդուոցը և Գադի որդուոցը ընակած երկիրը կործանելու համար՝ անոնց վրայ երթալու պատե-

34 րազմինք՝ չըսին ։ Եւ Ռուբենի որդիքը ու Գադի որդիքը՝ ան սեղանին անունը ԵՒայ՚ոյ-Բէ՚ն դրին . որովհետև ըսին . Անիկայ մեր միջը վկայ է , որ Ֆէ՛ Աստուածը Եհովան է ։

ԳԼ · ԻԳ՝

1 Ցետու իր մեռնելէն առաջ՝ կը յորդորէ Իսրայէլացիները . 3 յիշելով Աստուծոյ բոլոր բարերարութիւնները ։ 5 և խոստումնքները ։ 11 ու սպառնալիքները ։

Ի Բեր 1427

1 Ու շատ օրերէն ետքը՝ որ Տէրը ՚Հանգստացուցեր էր Իսրայէլը անոր բոլորտիքը եղած ամէն թշնամիներէն , Ցեսու Բ ծերացած ու

2 տարիքը առած էր ։ Եւ Ցեսու Է կանչեց բոլոր Իսրայէլը , անոր ծերերը՝ իշխանները՝ դատաւորները՝ ու ոստիկանները , և անոնց ըսաւ . Ես

3 ծերացայ ու տարիքս առի ։ Եւ դուք տեսաք ան ամէնը , որ ձեր Տէր Աստուածը ձեր առջևը ըրաւ աս բոլոր ազգերուն համար՝ քանզի ձեր Տէր Աստուածը ինքը ձեզի համար

4 պատերազմ ըրաւ ։ Նայեցէ՛ք , ես ձեզի՝ աս մնացած ազգերը վիճակով ժառանգութիւն բաժնեցի ձեր ցեղերուն համեմատ , Յորդանանէն՝ իմ կոտրած բոլոր ազգերովս մինչև մեծ ծովը դէպ ՚ի արև-

5 մուտք ։ Եւ ձեր Տէր Աստուածը Ղինքը ձեր առջևէն պիտի հալածէ զանոնք , ու պիտի վռնտէ , և ասոնց երկիրը դուք պիտի ժառանգեք , ինչպէս որ ձեր Տէր Ա-

6 տուածը ձեզի ըսաւ ։ Ըլլաստի խիստ ժիր եղէք , որ Մովսէսին օրինաց գրքին մէջը գրուած բոլոր բաները զգուշութեամբ ՚ի գործ դնէք , Ռուանկէ աջ կողմը կամ ձախ կողմը

7 չխոտորիք . Որպէս զի ձեր քովը մնացած ժաս ազգերուն †հետ չըխառնուիք՚ , ու էանոնց աստուածներուն անունները չյիշէք , և ասոնցմով երդում չընէք , ու անոնց

8 երկրպագութիւն չընէք . Հապա Ձեր Տէր Աստուածոյն յարիք , ինչ-

9 պէս որ մինչև աս օրս ըրիք ։ Ե՛ Տէրը ձեր առջևէն մեծ ու զօրաւոր ազգեր վռնտեց , ու մինչև աս օրս ՚ձրնաւ մէկը չկրցաւ ձեզի դէմ դնել ,

10 ¦Ձեզմէ մէկը՝ ՚անոնց հազարը պիտի

Ն · ք · ՉԾ · 1444

Ա Ծն · ԻԲ · 20 ։ Նէեմ. Ը · 6 ։ Դան. Բ · 19 ։ Ղռւ. Բ · 28 ։

Ե ԳԼ · իգ · 27։

Հ ԵԼ · Ժդ · 14 · Իե · 27 · Բ Օր · Գ · 22 ։
Ն Գլ · Իբ · 5 ։
Ղ Եսր · Ժ · 8Տ · 39 · Բ Պետ · Բ · 20 · 21 ։
Ֆբ Օր · է · 8։

հալածէ · քանզի ձեր Տէր Աստուածը ինքը ձեզի համար կը պատերազմի , ինչպէս որ ձեզի ըսաւ ։

11 Յ Ուստի ձեր անձերուն աղէկ զգուշութիւն ընէք , որ ձեր Տէր
12 Աստուածը սիրէք · Բայց թէ որ անկէ դառնալու ըլլաք , ու ձեր քովը մնացած ասոնց ազգերուն մնացորդին յարիք , և ասոնց հետ խնամութիւն ընէք , ու դուք ասոնց հետ խառնուիք , և անոնք ալ
13 ձեզի հետ , Ստոյգ գիտցէք որ՝ Յ ձեր Տէր Աստուածը ալ ասանկ ազգերը ձեր առջևէն պիտի չվռնտէ · Այսպէս անոնք ձեզի որբութիւն պիտի ըլլան , և ձեր կողերուն խթաններ , ու ձեր աչքերուն փուշեր , մինչև որ բնաջինջ ըլլաք ասանկ բարի երկրին վրայէն , որն որ ձեր Տէր
14 Աստուածը ձեզի տուաւ ։ Եւ ահա ես այսօր Յ ամէն երկրին ճամբան կ'երթամ , ու դուք ձեր բոլոր սրտովը ու բոլոր հոգիովը գիտնաք որ ձեր Տէր Աստուածը ձեզի համար որևէ բարի խօսքեր որ ըսաւ , ասոնցմէ բան մը չպակսեցաւ · Ամէն ամէնն ալ ձեր վրայ կատարուեցաւ · անոնցմէ բնաւ մէկ խօսք մը գետի-
15 Ներ , Նոյնպէս ալ Տէրը Յ ամէն չար խօսքերը ձեր վրայ պիտի բերէ , մինչև որ բնաջինջ ընէ ձեզ ասանկ բարի երկրին վրայէն , որն որ ձեր Տէր Աստուածը ձեզի
16 տուաւ ։ Թէ որ ձեր Տէր Աստուածոյն ձեզի պատուիրած ուխտը զանց ընէք , ու երթաք օտար աստուածներուն պաշտէք , և անոնց երկրպագութիւն ընէք , Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ պիտի բորբոքի , ու ան ձեզի տուած բարի երկրին վրայէն շուտով պիտի կորսուիք ։

ԳԼ · ԻԴ

1 Ցեսու՝ Իսրայէլի բոլոր ցեղերը Սիւքեմի մէջ կը ժողվէ · 2 Թարայէն սկսելով՝ համառօտապէս կը պատմէ Աստուծոյ բարերարութիւնները , 14 և անոնց՝ ու Աստուծոյ ձեռնտու ուխտը կը նորոգէ ։ 26 Ան ուխտին վկայութիւն ըլլալու համար , 29 Ցեսուին տարիքը , մահը և թաղումը ։ 32 Յովսեփին ոսկորներուն թաղումը ։ 33 Եղիազար քահանային մահը ։

1 Յ Ցեսու Իսրայէլին ամէն ցեղերը Սիւքեմի մէջ ժողվեց , ու Բ Իսրայէլի ծերերը , իշխանները , պատուաւորները և ոստիկանները կանչեց . ու անոնք Ֆ Աստուծոյ առջևը
2 կայնեցան ։ Եւ Ցեսու բոլոր ժողովուրդին ըսաւ · Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ · Առաջ

ձեր հայրերը՝ Ընրահամին հայրը ու Նաբովրին հայրը Թարան՝ Գետին անդիի կողմը բնակեցան , և Բ օտար
3 աստուածներ պաշտեցին ։ Ու ես ձեր հայրը Ընրահամը՝ Գետին անդիի կողմէն առի , ու զանիկայ քանանու բոլոր երկրին մէջը պտըտցուցի , և անոր սերունդը չատցուցի ,
4 ու Բ Իսահակը անոր տուի · Եւ Իսահակին՝ Էսաւն ու Եսաւը տուի , ու Բ Եսաւին Սէիր լեռը ժառանգութիւն տուի · Բ և Յակոբը ու անոր
5 որդիքը եգիպտոս իջան ։ Եւ Մովսէսը ու Ահարոնը խրկելով՝ Եգիպտոսը զարկի , (ինչպես որ անոր մէջը ըրի ,) ետքը ձեզ հանեցի ։
6 Ուստի ես Բ ձեր հայրերը Եգիպտոսէն հանեցի , և Բ դուք ծովը եկաք · Ու Եգիպտացիները կառքերով ու ձիաւորներով մինչև Կարմիր ծովը ձեր հայրերուն ետևէն ին-
7 կան ։ Ան ատենը անոնք Տէրոջը աղաղակեցին , Յն անիկայ ձեր ու Եգիպտացւոց մէջտեղը խաւար ձգեց , Ղու ծովը անոնց վրայ բերելով զանոնք ծածկեց , և Ֆ ձեր աչքերը՝ Եգիպտոսի մէջ ըրած բաներս տեսան · ու Ժ շատ ժամանակ
8 անապատին մէջը բնակեցաք ։ Ետքը ձեզ բերի Յորդանանու անդիի կողմը բնակող Ամորհացւոց երկիրը · Ղու ձեզի հետ պատերազմ ըրին , և զանոնք ձեր ձեռքը տուի , ու անոնց երկիրը ժառանգեցիք · և զանոնք ձեր առջևէն բնաջինջ ըրի ։
9 Ետքը Ն Մովաբի Թագաւորը՝ Սեպփորեան Բաղակը եկաւ , ու Իսրայէլին դէմ պատերազմ ըրաւ , և Ո՞րդ խրկեց Բէովրեան Բաղաամը
10 կանչելու , որ ձեզ նզովէ · Բայց չուզեցի Բաղաամին մտիկ ընել · Ղու անիկայ ձեզ բոլորովին օրհնեց , և անոր ձեռքէն ձեզ ազատեցի ։
11 Ետքը Յ Յորդանանէն անցնելով երիքովը եկաք , ու Երիքովի բնակիչները՝ Ամորհացիները՝ Փերեզացիները՝ Քանանացիները՝ Հետացիները՝ Գերգեսացիները՝ Խևացիները ու Եբրուսացիները ձեզի դէմ պատերազմ ըրին , ու զանոնք ձեր
12 ձեռքը տուի · Եւ Ձ ձեր առջևէն իշամղուները խրկեցի , որ զանոնք Ձ Երկու Ամորհացւոց երկու թագաւորները ձեր առջևէն վռնտեցին · Ոչ քու սրովդ և ոչ քու
13 աղեղովդ վ Ընծ Ուեցաւ · Ու ձեզի մկ երկիր մը տուի , որ դուք անոր մէջը չախատեցաք , և Ֆ քաղաքներ՝ որ դուք չշինեցիք , ու անոնց մէջը կը բնակիք · Ե կ'ուտէք ան այգիներէն ու ձիթենիներէն , որ դուք չնկեցիք ։
14 Ո Ուստի հիմա դուք Տէրոջմէն

Ն · Բ · ԶԲ · Իսր 1427
* Ֆ՝ Եփրատ
Ե Ծն · Լ · 53 ։
Ղ Ծն · Ժբ · 1 · Գոր · է · 2 · 3 ։
Ե Ծն · Իա · 2 · 3 · Սաղ · ճկե · 8
Ը Ծն · Իե · 24 · 25 · 26 ։
Բ Ծն · Լզ · 5 ։ Բ Օր · Բ · 5 ։
Ժ Ծն · Խզ · 1 · 6 · Գոր · է · 15 ։
Ի Ել · Դ · 10 ։
Լ Ել · է · Ը · Թ · Ժ · Ժբ ։
Խ Ել · Ժբ · 37 · 51 ։
Ծ Ել · Ժդ · 2 ։
Կ Ել · Ժդ · 9 ։
Հ Ել · Ժդ · 10 ։
Յ Ել · Ժդ · 20 ։
Ղ Ել · Ժդ · 27 · 28 ։
Ֆ Բ Օր · Դ · 34 · Իե · 2 ։ Ժ Գլ · ե · 6 ։
Յ Թուա · Իա · 21 · 33 · Բ Օր · Բ · 32 ։ Դ · 1 ։
Ն Տես Դատ · Ժա · 25 ։
Ղ Թուա · Իբ · 5 · Բ Օր · Իդ · 4 ։
Ոբ Օր · Իդ · 5 ։
Ղ Թուա · Իդ · 11 · 20 · Իդ 10 ։
Ո Գլ · Դ · 14 · 17 · Դ · 10 · 11 · 12 ։
Լ Գլ · Զ · 1 · Ժ · 1 · Ժա · 1 ։
Ո Ել · Իդ · 28 ։ Բ Օր · է · 20 ։
Ո Սաղ · Խդ · 8 · 6 ։
Է Բ Օր · Զ · 10 · 11 · Գլ · Ժա · 13 ։
Ո Բ Օր · Ժ · 12 · Մաթ · Ժբ · 24 ։

վախցէք , և անոր ե հնազատարմանքեամբ ու ճշմարտութեամբ ծառայութիւն ըրէք , և զան աստուածները՝ որոնց ձեր հայրերը գետին անդիի կողմը ու Եգիպտոսի մէջ ծառայութիւն ըրին , մի՛ղի ձգեցէք , և Տէրը պաշտեցէք ։ 15 Եթէ ։ Բայց թէ որ Տէրոջը ծառայութիւն ընելը՝ ձեզի համայ չերևնար , ընտրեցէք այսօր թէ ով պիտի պաշտէք , Գետին անդիի կողմը ձեր հայրերուն պաշտած աստուածները , թէ Ամորհացւոց աստուածները որ դուք ձեր երկրին մէջը կը բնակիք . Բայց ես ու իմ տունս Եհովան պիտի պաշտենք ։

16 Եւ ժողովուրդը պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Քաւ լիցի , որ մենք Եհովան թողունք և ուրիշ 17 աստուածներ պաշտենք . Քանզի Եհովան ինքն է մեր Աստուածը՝ , որ մեզ ու մեր հայրերը եդիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեց , և ինքը մեր աչքերուն առջեւը այս մեծ նշանները ըրաւ , ու մեզ պահեց մեր ամէն գացած ճամբուն մէջը՝ և ամէն ազգերուն մէջը , 18 որոնց մէջէն որ անցանք ։ Ու Եհովան բոլոր ազգերը՝ ու երկրիս մէջ բնակող Ամորհացիները մեր առջեւէն վռնտեց . մենք ալ Եհովան պիտի պաշտենք , որովհետև մեր Աստուածը ինքն է ։

19 Եւ Յեսու ժողովուրդին ըսաւ . Դուք չէք կրնար Եհովան պաշտել . քանզի անիկայ Էսուրբ Աստուած է . ու անիկայ Նախանձոտ Աստուած ըլլալով՝ ձեր յանցանքները ու մեղքերը չներեր ։ 20 Քանզի երբոր Եհովան թողուք՝ ու օտար աստուածները պաշտէք , դառնայ , ու ձեզ բարիք ընելուն տեղը՝ ձեզ չարչարելով բնաջինջ պիտի ընէ ։ 21 Եւ ժողովուրդը Յեսուին ըսաւ . Չէ . հապա մենք Եհովան պիտի պաշտենք ։

22 Ու Յեսու ժողովուրդին ըսաւ . Դուք ձեր անձանց վկայ էք , որ Դուք ձեզի Եհովան ընտրեցիք՝ զանիկայ պաշտելու համար . (ու

23 անոնք ըսին . Վկայ ենք .) Ուրեմն հիմա հանեցէք ձեր մէջը եղած օտար աստուածները՝ վերցուցէք , և ձեր սիրտը Իսրայէլի Տէր Աստուծոյն 24 դարձուցէք ։ Ու ժողովուրդը Յեսուին ըսաւ . Մենք մեր Տէր Աստուածը պիտի պաշտենք , ու անոր խօսքը մտիկ ընենք ։

25 Եւ նոյն օրը Յեսու Ժողովուրդին հետ ուխտ ըրաւ , ու Սիւքեմի մէջ անոր կանոն ու դատաստան 26 դրաւ ։ Եւ Յեսու Էաս խօսքերը՝ Աստուծոյ օրինաց գրքին մէջը գրեց , ու Լմէկ մեծ քար մը առաւ , և զանիկայ Տէրոջը սրբարանին մէջը եղած Էբևենկինին տակը թ կանգնեց 27 նէց ։ Ու Յեսու բոլոր ժողովուրդին ըսաւ . Ահա աս քարը Մեզի վկայ ըլլայ . քանզի Հասիկայ Տէրոջը մեզի հետ խօսած բոլոր խօսքերը լսեց . ուստի ասիկայ ձեզի վկայ ըլլայ , որ չըլլայ թէ ձեր Աստուած 28 ծը ուրանաք ։ Ետքը Յեսու ժողովուրդը արձակեց . — ամէն մարդ իր ժառանգութեանը ։—

29 Ետև աս բաներէն ետքը՝ Տէրոջը ծառան Նաւեան Յեսուն մեռաւ , հարիւր տասը տարեկան ըլլալով ։ 30 Ու զանիկայ՝ իր ժառանգութեանը սահմանին մէջը՝ Գասա լեռանը հիւսիսային կողմը՝ Եփրեմի լեռը՝ Թամնաթ սարային մէջը թաղեցին ։

31 Եւ Յեսուին բոլոր օրերուն մէջը , ու Յեսուէն ետքը ողջ մնացող՝ և Իսրայէլի համար Տէրոջը ըրած ամէն գործերը գիտցող ծերերուն բոլոր օրերուն մէջը՝ Իսրայէլը Տէրոջը ծառայութիւն ըրաւ ։

32 Եւ Յովսեփին ոսկորները՝ որ Իսրայէլի որդիքը եգիպտոսէն հաներ էին , Սիւքեմի մէջ թաղեցին՝ ագարակին ան մասին մէջ , ւորն որ Յակոբ՝ Սիւքեմի հօրը Եմմորին որդիներէն հարիւր Կտոր արծաթի՝ ծախու առեր էր . ու անիկայ՝ Յովսեփի որդւոցը ժառանգութիւնը եղաւ ։

33 Ահարոնի որդին Եղիազարն ալ մեռաւ , ու զանիկայ՝ Եփրեմի լեռը՝ անոր որդւոյն Փենհեսին տրուած բլուրին վրայ թաղեցին ։

Ն · ք · գ · ։ Իրէ 1427

Բ Ծն · ժէ · 1 ։ Ի · 5 · բ Օր · ժը · 13 ։ Սաղ · ճժթ · 1 · բ Կոր · ա · 12 ։ Եփե · գ · 24 ։ Յ Հմր 2 · 23 ։ Ղե · ժէ · 7 ։ Եզկ · Ի · 18 ։

— Եզկ · Ի · 7 , 8 ։ Իգ · 3 ։

Կ Տես Հերոթ · ա · 15 ։ գթագ · ժը · 21 ։ Եզկ · Ի · 39 ։ Ճն · գ · 6՝ ։

Հմր 14 ։

Ել · Իգ · 24 , 32 · 33 ։ ԼՒ · 15 ։ բ Օր · ժգ · 7 ։ Իթ · 18 ։ Դատ · գ · 10 ։

Ծն · ժը · 19 ։

Կ — Մեր Եհովայ Աստուածը ինքն է ։

— Մատ · գ · 24 ։

Ք Ղե · ժթ · 2 ։ աթագ · գ · 20 ։ Սաղ · ղթ · 5 , 9 ։ Ես · ե · 16 ։

Ել · Ի · 5 ։

Ել · Իգ · 21 ։

Ես Մն · Իր · 9 ։ բ Մն · ժե · 2 ։ Եզր · ը · 22 ։ Ես · ա · 28 ։ կե · 11 , 12 ։ Երեմ · ժէ · 13 ։

ՂԳ · Իգ · 15 ։ Ես · կգ · 10 ։ Գոր · Ե · 42 ։

Թէր · ընծէն Եհովա՝ ։ Սաղ · ճժթ · 173 ։

Ն · Հ · Ի · ։ Իրէ 1427

Ը Հմր 14 ։ Ծե · լե · 2 ։ Դատ · ժ · 16 ։ աթագ · Ե · 3 ։

Ր Տես Ել · ժե · 25 ։ գթագ · ժա · 17 ։

Ժ Հմր 26 ։

Ի ը Օր · Լ · 24 ։

Լ Տես Դատ · Թ · 6 ։

Ի Ծն · լե · 4 ։

Ժ Տես Ծն · Իը · 18 ։ Ել · գ · 3 ։

Կ Տես Ծն · Լա · 48 , 52 ։ բ Օր · լ · 19 , 21 , 26 ։ Գե · Իր · 27 , 28 , 34 ։

Հ բ Օր · · լը · 1 ։

Իրէ 1426

Ն Դատ · բ · 6 ։

Ղ Դատ · բ · 8 ։

Ճ Գե · ժթ · 50 ։ Դատ · բ · 9 ։

Ժ Տես բ Օր · ժա · 2 ։ Լա · 13 ։

Ն Դատ · բ · 7 ։

Ե Ծն · ե · 25 ։ Նե Ժ · 19 ։

Ղ Ծն · Լէ · 19 ։

Ը կ — Գառնուկի

Իրէ 1420

· Ել · գ · 25 ։ Դատ · Ի · 25 ։

ԳԻՐՔ ԴԱՏԱՒՈՐԱՑ

Ն. ք. ԳՓ. Իբր 1425

ԳԼՈՒԽ Ա

1 Ցուդայի ու Շմաւոնի ցեղերուն գործքերը։ 4 Ադոնիբեզեկ իրաւունքով կը պատժուի։ 8 Երուսաղէմը կ'առնուի։ 10 Քեբրոնը կ'առնուի։ 11 Գոթոնիէլ՝ Դաբիրը առնելուն համար, Աքսան իրեն կնութեան կը տրուի։ 16 Կենեցիները Ցուդայի հետ կը բնակին։ 17 Հօրման, Գազան, Ասկաղոնը ու Ակկարոնը կ'առնուին։ 21 Բենիամինեանց գործքերը։ 22 Յովսեփի որդիքը Բեթէլը կ'առնեն։ 30 Զաբուղոնի, 31 Ասերի, 33 Նեփթալիմի, 34 ու Դանի ցեղերուն գործքերը։

1 Յետ Յեսուին մեռնելէն ետքը՝ Իսրայէլի որդիքը Տէրոջը հարցուցին, ու ըսին. Մեզի համար՝ քանանացւոց վրայ առաջ ո՛վ ելլէ՝
2 անոնց հետ պատերազմելու։ Եւ Տէրը ըսաւ. Ցուդան թող ելլէ։ Ահա երկիրը անոր ձեռքը տուի։
3 Եւ Ցուդա՝ իր եղբօրը Շմաւոնին ըսաւ. Ինծի հետ իմ վիճակս ելլէր, ու քանանացւոց հետ պատերազմինք, և ես ալ քեզի հետ քու վիճակդ երթամ. ու Շմաւոն անոր
4 հետը գնաց։ Եւ Ցուդա ելաւ, ու Տէրը՝ քանանացիները ու փերեզացիները անոնց ձեռքը տուաւ. ու անոնցմէ Բեզեկի մէջ տասը հազար մարդ կոտրեցին։
5 Զաբ մարդ կոտրեցին։ Եւ Բեզեկի մէջ Ադոնիբեզեկը գտնելով՝ անոր հետ պատերազմեցան, ու քանանացիները և փերեզացիները զարկին։
6 Բայց Ադոնիբեզեկ փախաւ. զանիկայ բռնեցին, ու անոր ձեռքերուն ու ոտքերուն մեծ մատերը
7 կտրեցին։ Եւ Ադոնիբեզեկ ըսաւ. Եօթանասուն թագաւորներ՝ իմ սեղանիս տակը հինգ ետոնոտիերը կը ժողվէին. ես ինչպէս որ ըրի, Աստուած ալ ինծի այնպէս հատուցում ըրաւ։ Եւ զանիկայ Երուսաղէմ տարին, ու հոն մեռաւ։
8 Եւ Ցուդայի որդիքը Երուսաղէմի հետ պատերազմ ընելով՝ զանիկայ առին, ու սուրի բերնէ անցընելով՝ քաղաքը կրակով այրեցին։
9 Ետքը Ցուդայի որդիքը վար իջան, որ լեռնականը՝ ու հարաւային կողմը՝ ու դաշտի մէջ բնակող քանանացւոց դէմ պատերազմին։
10 Ցուդա՝ Քեբրոնի մէջ բնակող քանանացիներուն վրայ գնաց. (ու Քեբրոնին անունը առաջուց Կարիաթարբա էր.) և անոնք Սեսայն, Աքիմանը ու Թոլմին զարկին։
11 Ան կէս՝ Եւ անկէ Դաբիրի բնակիչները վրայ գնաց. (ու Դաբիրին անունը առաջուց Կարիաթսեփեր
12 էր.) Եւ Քաղէբ ըսաւ. Ով որ Կարիաթսեփերը զարնէ ու առնէ, իմ աղջիկս Աքսան անոր կնութեան
13 Թեան պիտի տամ։ Ուստի Քաղէբի կրտսեր եղբօրը Կենեզին որդին Գոթոնիէլը զարնելով առաւ զանիկայ. և Քաղէբ իր աղջիկը Աքսան անոր կնութեան տուաւ։
14 Եղբոր աղջիկը անոր կ'երթար, զանիկայ յորդորեց որ իր հօրմէն ագարակ մը ուզէ. և էշէն վար իջաւ. ու Քաղէբ ըսաւ անոր.
15 Քեզի ի՛նչ եղաւ։ Եւ աղջիկը անոր ըսաւ. Ինծի օրհնութիւն տուր. որովհետև ինծի հարաւային երկիր մը տուիր, ինծի ջուրի աղբիւրներ ալ տուր։ Ուստի Քաղէբ վերի աղբիւրները ու վարի աղբիւրները տուաւ անոր։
16 Եւ Մովսէսին աներոջը Կենեցիին որդիքը՝ Ցուդայի որդւոցը հետ Արմաւենեաց քաղաքէն՝ Արադի հարաւային կողմը եղող Ցուդայի անապատը ելան, ու գացին ժողովուրդին հետ բնակեցան։
17 Ետքը Ցուդա իր եղբօրը Շմաւոնին հետ գնաց. ու Սեփաթի մէջ բնակող քանանացիները զարկին, և զանիկայ նզովելէն, ու ան քաղաքին անունը Հորմա կոչեցին։
18 Ետքը Ցուդայեանք՝ Գազան ու անոր սահմանը, և Ասկաղոնը ու անոր սահմանը, և Ակկարոնը ու անոր սահմանը առին։ Եւ Տէրը Ցուդային հետն էր, ու անիկայ լեռնականը տիրեց. բայց հովիտներուն բնակիչները չկրցաւ վռնտել, քանզի անոնք երկաթեայ կառքեր
20 ունէին։ Ու Քեբրոնը քաղէբին տուին, ինչպէս որ Մովսէս ըսեր էր. ու անկէ Ենակին իրեք որդիները վռնտեց։
21 Եւ Բենիամինի որդիքը՝ Երու-

Ն. ք. ԳՓ. Իբր 1425

Ե Ցես. ժդ. 15։ ԺԹ. 13, 14։

Ր Ցես. ԺԹ. 15։

1444

Ք Ցես. ԺԹ. 16։ 17։

Է Գլ. գ. 9։

Լ Ցես. ԺԹ. 18, 19։

Ի Ծն. լէ. 11։

Ծ Գլ. գ. 11։ 17։ Թագ. ԺԹ. 6։ ա Մն. բ. 55։ Երեմ. լե. 2։

Իբր 1425

Ա Օր. լդ. 3։

Հ Թուա. իա. 1։

Յ Թուա. ժ. 32։

Ղ Հմր 3։

Ճ Թուա. իա. 3։ Ցես. ԺԹ. 4։

Մ Յ՝ նզովք։ Ց Ցես. ԺԹ. 22։

Ա Հմր 2։ Դ Թագ. ԺԸ. 7։

Ն Ցես. ԺԷ. 16, 18։

Շ Թուա. ժդ. 24։ Բ Օր. ա. 36։ Ցես. ԺԴ. 9, 13։ ԺԵ. 13, 14։

Ո Տես Ցես. ԺԵ. 63։ ԺԸ. 28։

սաղէմի մէջ բնակող Եբրուսացիները չվռնտեցին. ու Եբրուսացիք Բենիամինի որդւոցը հետ Երուսաղէմի մէջ բնակեցան մինչև աս օրս։
22 Եւ Յովսեփին տունն ալ Բեթէլի վրայ ելան. և ՈՒ Տէրը անոնց
23 հետն էր։ Եւ Յովսեփին տունը՝ Բեթէլը լրտեսեցին. (ու ան քաղաքին անունը առաջուց Լուզ
24 էր.) Եւ պահապանները մարդ մը տեսան որ ան քաղաքէն կ'ելլէր, ու անոր ըսին. Շնորհք ըրէ, քաղաքը մտնելու կողմը մեզի ցուցուր, ու Քեզի ողորմութիւն կը-
25 նենք։ Եւ անիկայ՝ քաղաքը մտնելու կողմը ցուցուց անոնց. ու քաղաքը սուրի բերնէ անցուցին, բայց ան մարդը և անոր բոլոր ազգատոհմը
26 մը թողլ տուին. Ու ան մարդը գետացւոց երկիրը գնաց, և հոն մէկ քաղաք մը շինեց, ու անոր անունը Լուզ կոչեց. ԵՒ մինչև աս օրս անոր անունը աս է։
27 Ու Մանասէն՝ Բեթսանը և անոր գիւղաքաղաքները, Թանաքը ու անոր գիւղաքաղաքները, Դովրի բնակիչները և անոր գիւղաքաղաքները, Եբղաամի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, Մակեդովի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները չվարկաւ. և Քանանացիք կամակորութեամբ աս
28 երկրին մէջ բնակեցան։ Ու երբոր Իսրայէլը ուժովցաւ, Քանանացիները հարկատու ըրաւ, բայց զանոնք բոլորովին չվռնտեց։
29 Եփրեմն ալ՝ Գազերի մէջ բնակող Քանանացիները չվռնտեց. ու Քանանացիք անոնց հետ Գազերի մէջ բնակեցան։
30 Զաբուղոնը՝ Կեթրոնի բնակիչները և Նաահոլի բնակիչները չվռնտեց. ու Քանանացիք անոնց մէջը բնակելով, հարկատու եղան։
31 Ասերը՝ Ակքովի բնակիչները, ու Սիդոնի, Ախղաբի, Ախզիբի, Ելբայի, Ափեկի ու Րոոբի բնա-
32 կիչները չվռնտեց. Հապա Ասերանք՝ ան երկիրը բնակող Քանանացւոց մէջը բնակեցան, որովհետև զանոնք չվռնտեցին։
33 Նեփթաղիմը՝ Բեթսամիսի բնակիչները չվռնտեց. Հապա ան երկիրը բնակող Քանանացւոց մէջը բնակեցաւ. և Բեթսամիսին ու Բեթանաթին բնակիչները Անոր հարկատու եղան։
34 Եւ Ամորհացիք՝ Դանի որդիները լեռան վրայ նեղը ձգեցին. քանզի անոնց թողլ չտուին որ հովիտները
35 իջնեն։ Ու Ամորհացիք կամակորութեամբ Հարէս լեռը, Այէղոնի ու Սաղաբինի մէջ բնակեցան. բայց երբոր Յովսեփին տանը ձեռքը ուժովցաւ, անոնք հարկատու ե-
36 ղան։ Եւ Ամորհացւոց սահմանը՝ Ակրաբիմի զառ'ի վերէն՝ Վէմէն 'ի վեր էր։

ԳԼ. Բ

1 Հրեշտակ մը Բոքիմի մէջ Յովսուդրը կը յանդիմանէ. 6 Յեսուէն եռքը եկող նոր ազգին ըրած չարութիւնը. 14 Աստուծոյ անոնց վրայ բարկանալը ու դթալը. 20 Աստուած Քանանացիներուն մնացողը Իսրայէլը կը փորձէ։

1 Յու Տէրոջը հրեշտակը Գաղգաղայէն Բոքիմը ելաւ, ու ըսաւ. Զեզ Եգիպտոսէն հանեցի, և ձեզ ան երկիրը բերի, որուն համար ձեր հայրերուն երդում ըրեր էի. ու Բսի որ՝ Զեզի հետ ըրած ուխտս
25 խան , ու զարհուրեցան : Եւ Իս-
րայէլի մարդիկները ըսին . Աս
ելլող մարդը տեսաք , որ Իսրայէլը
նախատելու կ'ելլէ . ով որ զանի-
կայ մեռցընէ , թագաւորը մեծ
հարստութիւնով պիտի հարստա-
ցընէ զանիկայ , ու Ինր աղջիկը
անոր պիտի տայ , և անոր Հօրը
տունը Իսրայէլի մէջ ազատ պիտի
26 ընէ : Ու Դաւիթ իր քովը եղող
մարդիկներուն հետ խօսեցաւ՝ ու
ըսաւ . Ան Փղշտացին մեռցընող և
Իսրայէլէն նախատինքը վերցընող
մարդուն ի՞նչ պիտի ըլլայ . քանզի
այս անթլփատ Փղշտացին ո՞վ է՝
որ Կենդանի Աստուծոյն զօրքե-
27 րը նախատէ : Ու ժողովուրդը նոյն
խօսքերը զրուցեց անոր՝ ու ըսաւ .
Ջանիկայ մեռցընող մարդուն այս-
28 պէս պիտի ըլլայ : Եւ անոր մեծ
եղբայրը Եղիաբ՝ երբոր լսեց անոր
խօսիլը ան մարդիկներուն հետ ,
նսաստիկ բարկութեամբ Դաւի-
թին սրտղեցաւ Եղիաբ , ու ը-
սաւ . Դուն ինչո՞ հոս իջար , և ան
քիչ ոչխարները անապատին մէջը
որո՞ն ձգեցիր . Ես քու հպարտու-
թիւնդ ու սրտիդ չարութիւնը գի-
տեմ . անտարակոյս դուն պատե-
29 րազմ տեսնելու իջեր ես : Եւ
Դաւիթ ըսաւ . Հիմա ի՞նչ ըրի .
30 աս խօսք չէ՞ : Ու անոր քովէն
մէկ ուրիշ մարդու մը դարձաւ , և
նոյն խօսքերը զրուցեց , ու ժողո-
վուրդն ալ առջի խօսքերուն պէս
պատասխան տուին անոր :
31 Եւ Դաւիթին ըսած խօսքերը լը-
սեցան . ու երբոր Սաւուղին առ-
ջևը պատմեցին , Սաուղ էր ետվ
32 բերել տուաւ զանիկայ : Եւ Դա-
ւիթ Սաւուղին ըսաւ . Ձկսոր պատ-
ճառաւը բնաւ մէկ մարդու մը սիր-
տը չկոտրի . Քու ծառադ պիտի եր-
թայ , ու ան Փղշտացիին հետ ձեծ-
33 կուի : Եւ Սաւուղ Դաւիթին ը-
սաւ . Դուն չես կրնար ան Փղշտա-
ցիին վրայ երթալ , ու անոր հետ
ձեծկուիլ , քանզի դուն մանուկ ես ,
ու անիկայ իր մանկութենէն ի վեր
34 պատերազմող մարդ մըն է : Եւ
Դաւիթ ըսաւ Սաւուղին . Քու
ծառադ երբոր իր հօրը ոչխարները
կ'արածէր , ու առիւծ կամ արջ
կու գար , և հօտիրէն ոչխար կը
35 տաներ , Ես անոր եւեւէն երթալով՝
զանիկայ կը զարնէի , ու անոր բեր-
նէն կ'ազատէի . ու երբոր անիկայ
իմ վրաս յարձակէր , զանիկայ մօ-
րուքէն կը բռնէի , կը զարնէի ու
36 կը մեռցընէի : Քու ծառադ ա-
ռիւծ ալ մեռցուցած է՝ արջ ալ .
ու աս անթլփատ Փղշտացին ալ
անոնց մէկուն պէս պիտի ըլլայ .
քանզի կենդանի Աստուծոյն զօր-
37 քերը նախատեց : Եւ Դաւիթ ը-
սաւ . Ելնռիւծին ու արջին ձեռքէն
զիս ազատող Տէրը՝ աս Փղշտացիին
ձեռքէն ալ պիտի ազատէ : Եւ
Սաւուղ Դաւիթին ըսաւ . Գնա ,
38 ու Տէրը քու հետդ ըլլայ : Եւ
Սաւուղ իր զէնքերը Դաւիթին
հագցուց , ու անոր գլուխը մկ
պղնձէ սաղաւարտ մը դրաւ , ու ա-
39 նոր զրահ ալ հագցուց : Եւ Դա-
ւիթ զէնքերուն վրայէն Սաուղէն
սուրը մէջը կապեց , ու սկսաւ քա-

Ն · ք · գէ · Իոբ 1063
Ի ԳԼ · ժգ · 6 , Տ · 9 ։ ա Մն · բ · 13 ։
Ի ԳԼ · ժշ · 19 ։
Ի Ծն · լէ · 14 ։
Ղ ԳԼ · իշ · 5 ։
Յ Ցես · Դաւ · ժը · 15 ։
Ղ Հմր Տ ։
Ֆ Ցես · ժե · 16 ։
Ֆ ԳԼ · ժա · 2 ։

Ն · ք · գէ · Իոբ 1063
յ ԳԼ · ժգ · 6 ։
Նբ Օր · և · 26 ։
Ե Հմր 10 ։ ա Հմր 25 ։
Ե Ծն · լէ · 4 , Տ , 11 ։ Մաա · ժ · 36 ։
* կ՚ըսէ իբրաւունքով
Գ Հմր 26 , 27 ։
Ղ Բ Օր · ի · 1 , 3 ։ ա ԳԼ · ժշ · 18 ։
ա Ցես Թաւ · ժգ · 32 ։ բ Օր · թ · 2 ։
Ձ Սաղ · ժը · 16 , 17 , կգ · 7 , Տէ · 11 ։ բ կոր · ա · 10 ։ բ Տիմ · գ · 17 , 18 ։ ա ԳԼ · ի · 13 ։ ա Մն · իբ · 11 , 16 ։

լել քանզի սորված չէր ու Դաւիթի Սաւուղին ըսաւ Ասոնցմով չեմ կրնար քալել քանզի սորված չեմ ուստի Դաւիթ զանոնք իր վրայէն հանեց ։

40 Եւ իր ցուպը ձեռքը առաւ ու հնդեղատէն իրեն համար հինգ հատ գայլախաղ քար ընտրեց ու զանոնք իր հովուական ամանին այսինքն մախաղին մէջը դրաւ ու պարսը ձեռքը բռնելով Փղշտացիին

41 մօտեցաւ ։ Եւ Փղշտացին ալ եկաւ ու Դաւիթին մօտեցաւ ։ և անոր վահանը վերցնող մարդը ա-

42 նոր առջևն էր ։ Ու երբոր Փղշտացին նայեցաւ ու Դաւիթը տեսաւ , զանիկայ արհամարհեց ։ քանզի անիկայ տկարմիր գունով ու գեղեցիկ դէմքով պատանի մըն էր ։

43 Եւ Փղշտացին ըսաւ Դաւիթին ։ Միթէ ես շունե եմ որ իմ վրաս ցուպով կու գաս ։ ու Փղշտացին իր աստուածներովը Դաւիթը նզո-

44 վեց ։ Եւ Փղշտացին Դաւիթին ըսաւ Դաւիթին ։ Ինծի եկուր , ու քու մարմինդ երկինքի թռչուններուն ու

45 դաշտի գազաններուն տամ ։ Եւ Դաւիթ ըսաւ Փղշտացիին ։ Դուն ինծի սրով , նիզակով ու դեղարդով կու գաս ։ բայց ես զօրութեանդ Տէրոջը՝ քու նախատած Իսրայէլի զօրքերուն Աստուծոյն

46 անունովը քեզի կու գամ ։ Այսօր Տէրը քեզ իմ ձեռքս պիտի մատնէ ։ ու ես քեզ պիտի մեռցնեմ , ու վրայէդ գլուխդ պիտի առնեմ ։ և ի Փղշտացւոց բանակին դիակունքը այսօր երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն պիտի տամ ։ որպէս զի բոլոր երկիրը գիտնայ

47 որ Իսրայէլի Աստուած կայ ։ Եւ աս բոլոր ժողովքը գիտնան որ Տէրը Իսրով ու նիզակով չազատեր ։ քանզի Տիրապետրազմը Տէրոջն է , ու անիկայ ձեռքերնիս պի-

48 տի մատնէ ։ Ու երբոր Փղշտացին եղաւ , ու եկաւ Դաւիթին մօտեցաւ , Դաւիթն ալ շուտով պատերազմի ասպարէզը վազեց Փղշտա-

49 ցին դիմաւորելու ։ Եւ Դաւիթ իր ձեռքը իր մախաղին մէջը խոթեց , ու անկէ քար մը առաւ , և ղնիվ պարսով նետեց , ու Փղշտացիին ճակատը զարկաւ ։ և քարը անոր ճակատին մէջը մտաւ ։ ու անիկայ

50 երեսի վրայ գետինը ինկաւ ։ Այսպէս Դաւիթ պարսով ու քարով Փղշտացիին յաղթեց ։ և զարկաւ Փղշտացին , ու մեռցուց զանիկայ ։ բայց Դաւիթին ձեռքը սուր չկար ։

51 Եւ Դաւիթ վազելով Փղշտացիին վրան կայնեցաւ ։ ու անոր սուրը առաւ , պատեանէն հանեց , ու

զանիկայ մեռցնելէն ետքը , գլուխը անով կարեց ։ Եւ Փղշտացիք իրենց զօրաւոր մարդուն մեռնիլը

52 ը տեսնելով փախան ։ Ան ատենը Իսրայէլի ու Յուդայի մարդիկները ելան և աղաղակներով մինչև Գովիտը՝ ու մինչև Ակկարոնի դռները՝ Փղշտացիները հալածելին և Փղշտացւոց մեռցուածները Շաագարիմի ճամբուն վրայ , ու մինչև Գէթը ու

53 Ակկարոնը ինկան ։ Եւ Իսրայէլի որդիքը Փղշտացիները հալածելէն ետ դարձան , ու անոնց բանակը

54 կողոպտեցին ։ Եւ Դաւիթ Փղշտացիին գլուխը առաւ , ու զանիկայ Երուսաղէմ տարաւ ։ բայց անոր զէնքերը իր վրանին մէջ դրաւ ։

55 Ու երբոր Սաւուղ Դաւիթը տեսաւ , որ Փղշտացիին դէմ ելեր է , էր զօրավարին Աբեններին ըսաւ , Ո վ Աբեններ , Իսկ պատանին որն է տղան է ։ Ու Աբեններ ըսաւ ։ Կենդանի է քու անձդ , ով

56 թագաւորը որ չեմ գիտեր ։ Եւ թագաւորը ըսաւ ։ Հարցուր թէ՝

57 ասպատանին որն է տղան է ։ Ու երբոր Դաւիթ Փղշտացին մեռցնելէն ետ դարձաւ , Աբեններն առաւ զանիկայ , ու Սաւուղին առջևը տարաւ ։ Եւ Փղշտացիին գլուխ

58 իր անոր ձեռքն էր ։ Եւ Սաւուղ ըսաւ անոր ։ Որն է տղան ես դուն պատանի ։ Ու Դաւիթ ըսաւ ։ Բեթղեհեմացի Յեսսէի տղան եմ ։

ԳԼ · Ա Ր

1 Յոզաբադ՝ Դաւիթը կը սիրէ ։ 5 Սաւուղ՝ Դաւիթին եղած դուխրանութեանը համար կը նախանձի , 19 ու իր բարկութեան առնելը կ՚ուզէ զանիկայ մեռցնել։ 12 Սաւուղ կը վախնայ անոր բարի յաջողութեանը համար ։ 17 ու անոր իր աղջիկը տալ կ՚ուզէ որ անոր թշնամի մը ըլլայ ։ 22 Դաւիթ համոզուելով թագաւորին փեսայ ըլլալու , կ՚երթայ Փղշտացւոցմէ երկու հարիւր անթլփատութիւն կր բերէ՝ Մեղքդին օժիտ ըլլալու համար ։ 28 Սաւուղին ատելութիւնը , ու Դաւիթին փառքը կ՚աւելնայ ։

1 Ու երբոր Սաւուղին հետ խօսիլը լմընցուց , Յոնաթանին սիրտը Դաւիթին սրտին հետ կապուեցաւ ։ Ու Յոնաթան իր անձին

2 պէս սիրեց զանիկայ ։ Եւ նոյն օրը Սաւուղ զանիկայ առաւ , ու թող չտուաւ որ իր հօրը տունը դառ-

3 նայ ։ Եւ Յոնաթան Դաւիթին հետ ուխտ ըրաւ , քանզի իր անձին

4 պէս կը սիրէր զանիկայ ։ Ու Յոնաթան իր վրայի վերարկուն հանեց , և զանիկայ ու իր զէնքերը , մինչև իր սուրը , իր աղեղը ու իր

5 գօտին՝ Դաւիթին տուաւ ։ Եւ Դաւիթ ամէն տեղ կ՚երթար ։ ուր

որ Սաուղ զանիկայ կը խրկէր . ու
Դ իմաստութեամբ կը վարուէր . և
Սաուղ զանիկայ պատերազմական
մարդիկներուն վրայ կեցուց , ու
բոլոր ժողովուրդին ու Սաուղին
ծառաներուն աչքի ինկաւ եղաւ ։
6 Ու երբոր Դաւիթ՝ փղշտացին
սպանելէն կը դառնար , ու կ՚եր-
էր կու գային , իսրայէլի բոլոր քա-
ղաքներէն Տ կինիկները երգելով՝ ու
պար բռնելով , թմբուկներով ,
ուրախութեամբ ու ծնծղաներով՝
Սաուղ թագաւորը դիմաւորելու
7 ելան ։ Եւ Ղպար բռնող կինիկները
պատասխան տալով կ՚երգէին ու
կ՚ըսէին . Տ Սաուղ իր հազարա-
ւորները զարկաւ , ու Դաւիթ իր
8 բիւրաւորները ։ Եւ Սաուղ խիստ
բարկացաւ , ու ան խօսքին համար
Ը դժուարացաւ , ու ըսաւ . Բիւրա-
ւորները Դաւիթին տուին , ու հա-
զարաւորները ինծի տուին . ու հի-
մա Թագաւորութենէ ուրիշ Ի՞նչ
9 պակաս անոր ։ Եւ ան օրէն
՚ի վեր՝ Սաուղ ծուռ աչքով կը
նայէր Դաւիթին ։
10 Ու հետեւեալ օրը Տ Սաուղին վը-
րայ Աստուծմէ չար ոգի եկաւ , Ը ու
տանը մէջ մարգարէութիւն ըրաւ .
և Դաւիթ ուրիշ անգամներու պէս
իր ձեռքովը Ղ նուագ կը զարնէր . Նաւ
11 Սաուղին ձեռքը նիզակ կար ։ Եւ
Սաուղ Ի նիզակը նետեց՝ ըսելով .
Դաւիթը պատին վրայ պիտի գա-
մեմ . բայց Դաւիթ անոր երեսէն
երկու անգամ մկկի քաշուեցաւ ։
12 Ուստի Սաուղ Տ Դաւիթին երեսէն
կը վախնար . քանզի Տ Տէրը անոր
հետն էր . բայց Տ Սաուղէն հեռա-
13 ցեր էր ։ Եւ Սաուղ զանիկայ իր
քովէն հեռացուց , ու զանիկայ
հազարապետ ըրաւ . ու Ն անիկայ
ժողովուրդին առջևը կ՚ելլէր կը
14 մտնէր ։ Եւ Դաւիթ իր ամէն ձամ
բաներուն մէջը Ի միաստութեամբ
կը վարուէր . ու Տ Տէրը անոր հետն
15 էր ։ Եւ Սաուղ անոր այնքան Ի-
մաստութեամբ վարուիլը տեսնե-
16 լով , անոր երեսէն կը վախնար ։ Ու
Ք բոլոր Իսրայէլը և Ցուդան՝ Դա-
ւիթը կը սիրէին . քանզի անոնց
առջևը անիկայ կ՚ելլէր կը մտնէր ։
17 Եւ Սաուղ Դաւիթին ըսաւ . Ա-
հա իմ մեծ աղջիկս Մերովը Ա-թե-
զի կինիկ պիտի տամ . միայն Թէ
դուն ինծի զօրաւոր մ՚կ մը եղիր ,
ու Տ Տէրոջը պատերազմները պատե-
րազմէ . քանզի Սաուղ ըսաւ .
Ձանոր վրայ իմ ձեռքս չբլլայ , այլ
փղշտացւոց ձեռքը անոր վրայ բլ-
18 լայ ։ Եւ Դաւիթ Սաուղին ըսաւ .
Ես ով եմ , ու իմ կեանքս Ա՞ր
իմ հօրս ազգատոհմը Իսրայէլի մէջ
ի՞նչ է՝ որ Թագաւորին փեսայ բլ-
19 լամ ։ Եւ Սաուղին աղջիկը Մե-
րովը՝ Դաւիթին տրուելու ատենը՝
Ն Մաուղացի Ղեդրիելին տրուե-
ցաւ ։
20 Ն ու Սաուղին Մեղբող աղջիկը
կը սիրէր Դաւիթը . ու երբոր Սա-
ուղին իմացուցին , ան բանը ա-
21 նոր աչքերուն հաճոյ երևցաւ ։ Եւ
Սաուղ ըսաւ . Ես զանիկայ անոր
տամ՝ որ Ո անոր որոգայթ բլլայ ,
ու Փղշտացւոց ձեռքը անոր վրայ
բլլայ ։ Ուստի Սաուղ Դաւիթին
ըսաւ . Ինծի Ձայսօր Ք երկրորդ փե-
22 սայ եղիր ։ Եւ Սաուղ իր ծա-
ռաներուն հրամայեց , որ Դաւի-
թին հետ ծածկաբար խօսին , ու
ըսեն . Ահա Թագաւորը քեզի հաւա-
ներ է , ու անոր բոլոր ծառաները
քեզ կը սիրեն . ուստի հիմա թա-
23 գաւորին փեսայ եղիր ։ Եւ Սաուլ-
ղին ծառաները ան խօսքերը Դա-
ւիթին ականջներուն զրուցեցին .
ու Դաւիթ ըսաւ . Թագաւորի
փեսայ բլլալը ձեր աչքին պզտիկ
բան կ՚երևնայ . քանզի ես աղքատ
24 ու աննշան մարդ մըն եմ ։ Եւ
Սաուղին ծառաները անոր իմա-
ցուցին՝ ու ըսին . Դաւիթ այսպէս
25 խօսեցաւ ։ Եւ Սաուղ ըսաւ .
Դաւիթին այսպէս ըսէք . Թագա-
ւորը Ո ուրիշ օժիտ չուզեր , բայց
միայն Փղշտացւոց Հարիւր ան-
թլփատութիւնը , որպէս զի Թա-
գաւորին Թշնամիներէն վրէժ առ-
նուի . (ու Սաուղ կը խորհէր
Դաւիթը Փղշտացւոց Ն ձեռքը
26 մատնել ։) Ու երբոր անոր ծա-
ռաները ան խօսքերը Դաւիթին ի-
մացուցին , ան բանը Դաւիթին
աչքերուն աղէկ երևցաւ որ Թա-
գաւորին փեսայ բլլայ ։ Ուստի
27 Ո օրերը լմննալէն առաջ՝ Դաւիթ
ելաւ , ու Ի իր մարդիկներովը գը-
նաց , և Փղշտացիներէն երկու հա-
րիւր մարդ մեռցուց . ու Դաւիթ
անոնց անթլփատութիւնները բե-
րաւ , ու զանոնք լման Թագաւո-
րին տուին , որ Թագաւորին փեսայ
բլլայ ։ Ու Սաուղ իր Մեղբող
28 աղջիկը կնիկ տուաւ անոր ։ Եւ
Սաուղ երբոր տեսաւ ու հասկը-
ցաւ որ Տէրը Դաւիթին հետն է ,
ու Սաուղին Մեղբող աղջիկը զա-
29 նիկայ կը սիրէ , Սաուղ՝ ալ աւե-
լի վախցաւ Դաւիթէն . և Սաուղ
շարունակ Դաւիթին Թշնամու-
30 թիւն կ՚ընէր ։ Ու Փղշտացւոց իշ-
խանները Ելան , և անոնց ելլելէն
ետքը՝ Դաւիթ՝ Սաուղին ամէն
ծառաներէն աւելի Ի միաստու-
թեամբ կը վարուէր . ու անոր ա-
նունը շատ Հռչակաւոր եղաւ ։

Ն . ք . ղճ . Իսր 1063

Ը Ջմր 14 , 15 , 30 ։

Ի Եզ . ժե . 29 ։ Դատ . ժա . 34 ։

Ղեզ . ժե . 21 ։

Ի Գէ . . իա . 11 ։ Ի Թ . 5 ։

Ը ածղ . դ . 4 ։

Բ Գէ . ժե . 28 ։

Ժ Գէ . ժշ . 14 ։

Ի Գէ . ժԹ . 24 ։ գ Թագ . ժը . 29 ։ Գոր . ժշ . 16 ։

Լ Գէ . ժԹ . 9 ։

Ի Գէ . ժԹ . 10 ։ ի . 33 ։ Ածկ . իե . 4 ։

Ժ Ջմր 15 , 29 ։

Ի Գէ . ժշ . 13 , 18 ։

Հ Գէ . ժշ . 14 ։ իը . 15 ։

Ն Ջմր 16 ։ Թոս . իե . 17 ։ բ Թագ . ե . 2 ։

Ղ Ջմր 5 ։

Ճ Ծն . լԹ . 2 , 3 , 23 ։ Ցես . զ . 27 ։

Ժ Ջմր 5 ։

Ի Գէ . ժե . 25 ։

Ն Թոս . լը . 20 , 27 , 29 ։ Գէ . իե . 28 ։

Ղ Ջմր 21 , 25 ։ բ Թագ . ժը . 9 ։

Տ Տ ես Ջմր 23 ։ Գէ . Թ . 21 ։ բ Թագ . ե . 18 ։

Ն . ք . ղճ . Իսր 1063

Լ Դատ . է . 22 ։

Պ բ Թագ . իա . 8 ։

Ղ Ջմր 28 ։

Ա Եզ . ժ . 7 ։

Ա Ջմր 17 ։

Ղ Տ ես Ջմր 26 ։

* Կ՚երևայ՝ երկու ազգիկնե-րուս մէկովը

Ա Ծն . զԹ . 12 ։ Եզ . իր . 17 ։

Բ Գէ . ժ . 24 ։

Բ Ջմր 17 ։

Ն Կ՚երևայ՝ ձեռքովը կորսընցնել ։

Տ ես Ջմր 21 ։

Ն Ջմր 13 ։

Ո բ Թագ . ժ . 14 ։

Տ Ես Ջմր 21 ։

Ի Գէ . իզ . 21 ։ գ Թագ . ա . 13 ։ Սաղ . ճժ . 15 ։

ԳԼ · ԺԹ

1 Ջովնաթան Դաւիթին կը պատմէ իր հօրը դիտաւորութիւնը՝ զանիկայ մեռցընելու վրայով · 4 Իր հայրը Նաշտուածեան կը համառէ : 8 Նոր պատերազմի մը ժէ Դաւիթ յաջողութիւն գտնելով՝ Սաւուղին անիրաւ բարկութիւնը անոր դէմ կը բորբոքի : 12 Մեղքոյ՝ Դաւիթին անկողնին մէջ արձան մը դնելով՝ իր հայրը կը խաբէ : 18 Դաւիթ՝ Նաւաթ կու գայ Սամուէլին : 20 Դաւիթը բռնելու համար՝ Սաւուղին խրկած մարդիկը, 22 ու Սաւուղ ինքն ալ՝ կը մարգարէանան :

1 Ետ Սաւուղ իր որդւոյն Ջովնաթանին ու իր ամէն ծառաներուն ըսաւ որ Դաւիթը մեռցընեն :

2 Բայց Սաւուղին որդին Ջովնաթանը՝ — Դաւիթը շատ կը սիրէր · ու Ջովնաթան Դաւիթին իմացուց ու ըսաւ · Իմ հայրս Սաւուղ քեզ մեռցընել կ'ուզէ · ուրեմն հիմա մինչև առտուս զգոյշ կենաս , ու մէկ ծածուկ տեղ մը նստէ ու պահուէ ·

3 Ու ես ելլեմ , և քու նստած արտիդ մէջը հօրս քովը կայնիմ , ու քեզի համար իմ հօրս հետ խօսիմ , և ինչ որ իմանամ , քեզի պատմեմ :

4 Ու Ջովնաթան Դաւիթին վրայով աղէկ խօսեցաւ իր հօրը Սաւուղին , և անոր ըսաւ · Ո՛վ թագաւոր՝ էքու ծառայիդ Դաւիթին դէմ մեղք մի՛ գործեր · քանզի անիկայ քեզի դէմ մեղք մը չըրաւ , ու անոր գործերը քեզի շատ

5 աղէկ են : Ինչու որ Էր հոգին ձեռքին մէջը դրաւ , ու Փղշտացին զարկաւ · և Տէրը բոլոր Իսրայէլին մէկ մեծ փրկութիւն մը չնորհեց · դուն տեսար ու ուրախացար · Եւ ինչո՞ւ համար Դաւիթը առանց պատճառի մեռցընես՝ Ետնամեղ արիւնի մեղք պիտի

6 մտնես : Եւ Սաւուղ Ջովնաթանին խօսքը մտիկ ըրաւ · ու Սաւուղ երդում ըրաւ՝ Եհովէ · Տէրը կենդանի է որ անիկայ պիտի

7 չմեռցուի : Եւ Ջովնաթան Դաւիթը կանչեց · ու Ջովնաթան ասոնց բոլորը խօսքերը անոր պատմեց · և Ջովնաթան Դաւիթը Սաւուղին տարաւ , ու անիկայ Ներկայինին պէս անոր առջևը կը կայներ :

8 Եւ նորէն պատերազմ եղաւ · ու Դաւիթ ելաւ Փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ · ու անոնց մէջը մէկ մեծ կոտորած մը ըրաւ · և

9 անոնք անոր առջևէն փախան : Ու Սաւուղին վրայ Տէրոջմէ չար ոգի եկաւ · և անիկայ իր տունը կը նստէր , ու նիզակը իր ձեռքն էր · Դաւիթն ալ իր ձեռքովը նուագա-

10 րանը կը զարնէր : Եւ Սաւուղ ուզեց որ Դաւիթը նիզակով զարնէ , ու պատին վրայ ֆոփ · բայց անիկայ Սաւուղին երեսէն մէկդի քաշուեցաւ , և Սաւուղ նիզակը պատին զարկաւ · ու Դաւիթ փախաւ , և ան գիշերը ազատեցաւ :

11 Բայց Սաւուղ Դաւիթին տունը մարդիկներ խրկեց , որ զանիկայ պաշարեն , ու առաւօտուն մեռցընեն : Սակայն Դաւիթին կնիկը Մեղքող անոր իմացուց՝ ու ըսաւ · Թէ որ ասօր գիշեր քու անձդ չապրեցընես , վաղը քեզ պիտի մեռ-

12 ցընեն : Ուստի Մեղքող Դաւիթը պատուհանէն վար իջեցուց · և անիկայ գնաց՝ փախաւ ու ազա-

13 տեցաւ : Ու Մեղքող մէկ *արձան մը առաւ , և զանիկայ անկողնին մէջը դրաւ , ու անոր գլխուն տակը այծի մազէ բարձ մը դրաւ , և զա-

14 նիկայ ծածկոցով մը ծածկեց : Ու երբոր Սաւուղ մարդիկներ խրկեց Դաւիթը բռնելու համար , անիկայ

15 ըսաւ · Հիւանդ է : Եւ Սաւուղ նորէն մարդիկները խրկեց Դաւիթը տեսնելու համար , ու ըսաւ · Զանիկայ անկողնովը ինծի՛ բերէք , որ

16 մեռցընեմ : Ուստի ան մարդիկները եկան · և ահա անկողնին մէջը մէկ արձան մը կար , ու գլուխն տակը այծի մազէ բարձ մը :

17 Եւ Սաւուղ Մեղքողին ըսաւ · Ձիս ինչո՞ւ համար այսպէս խաբեցիր , ու իմ թշնամիս թող տուիր , ու ազատեցաւ : Ու Մեղքող Սաւուղին ըսաւ · Անիկայ ինծի ըսաւ · Թո՛ղ տուր զիս որ երթամ · Ինչո՞ւ մեռցընեմ քեզ :

18 Ուրեմն փախաւ Դաւիթ ու ազատեցաւ , և Ռամա գնաց Սամուէլին քովը , ու անոր պատմեց ան ամէնը որ Սաւուղ ըրեր էր իրեն : Ետքը անիկայ Սամուէլին հետ գնաց , ու Նաւաթի մէջ բը-

19 նակեցան : Եւ Սաւուղին իմացուցին ու ըսին · Ահա Դաւիթը Ռա-

20 մայի Նաւաթին մէջն է : Ան ատենը Սաւուղ մարդիկներ խրկեց որ Դաւիթը բռնեն , Ու անոնք մարգարէութիւն ընող մարգարէներուն ժողովը՝ և անոնց վրայ կեցող Սամուէլը երբոր տեսան , Աստուծոյ Հոգին Սաւուղին խրկած մարդիկներուն վրայ եկաւ , ու ա-

21 նոնք ալ մարգարէացան : Ու երբոր Սաւուղին իմացուցին , ուրիշ մարդիկներ խրկեց , և անոնք ալ մարգարէացան : Ու Սաւուղ նորէն երրորդ անգամ մարդիկներ խրկեց , և անոնք ալ մար-

22 գարէացան : Ան ատենը ինքն ալ Ռամա գնաց , ու մինչև Սոկքովի մեծ ջրհորը գալով , հարցուց ու ըսաւ · Սամուէլը ու Դաւիթը ո՞ր են : Եւ մարդոմն ըսաւ · Ահա Նայուէթ Ռամայի Նա-

23 ւաթն են : Ուստի Ռամայի Նաւա-

Ն · ք · ՂԲ · Իբր 1063

— ԳԼ · ԺԸ · 1 :

Բ Առակ · լա · 8 , 9 :

գ Ծն · խր · 22 : Սաղ · լէ · 12 , ՃԹ · 5 : Առակ · ԺԷ · 13 : Երեմ · ԺԸ · 20 :

դ Դատ · Թ · 17 : ԺՈ · 3 : Գէ · իբ · 21 : Սաղ · ՃԺԹ · 109 :

ե ԳԼ · ԺԷ · 49 , 50 :

զ ա Թագ · ԺԱ · 13 : ա Մն · ԺԱ · 14 :

է ԳԼ · Ի · 32 : ը Մատ · իէ · 4 :

Ի ԳԼ · ԺԶ · 21 : ԺԸ · 2 , 13 :

Իբր 1062

ի ԳԼ · ԺԶ · 14 : ԺԸ · 10 , 11 :

Ն · ք · ՂԲ · Իբր 1062

ի Սաղ · ԽԹ · ին վերնագիրը :

լ Ցես · ը · 15 : Գոր · Թ · 24 , 25 :

* Եբր · Թեռափիմ · Ցն · լ · 19 : Դատ · ԺԷ · 5 :

խ Բրթագ · բ · 22 :

ծ Տես Ցն · է · 32 , 45 , ըէ :

կ Ակար · ԺԳ · 3 , 24 , 25 : ԳԼ · Ժ · 5 , 6 :

հ Թես · Ժա · 25 : Ցովէլ · բ · 28 :

Ն·ՔՐ·ՀԲ· ԽՐ 1062

թը գնաց . և անոր վրայ ալ Յ Ան-
տուծոյ Հոգին եկաւ , ու մինչև
Ռամայի Նաւաթը հասնիլը՝ ճամ-
բան երթալով մարգարէութիւն
24 կ՚ընէր : Նէ անիկայ ալ իր լա-
թերը հանեց , ու Սամուէլին առ-
ջևը անիկայ ալ մարգարէութիւն
կ՚ընէր . և ան բոլոր օրը ու բոլոր
գիշերը մերկ Յ ինկաւ ։ Ասոր
համար կ՚ըսեն թէ՝ Յ Սաուղն
ալ մարգարէներուն մէջն է ։

ԳԼ· Ի

1 Դաւիթ իր ապահովութեանը համար Ցոնա-
թանին հետ խորհուրդ կ՚ընէ ։ 11 Ցոնաթան
ու Դաւիթ երդումով կը նորոգեն իրենց ուխ-
տը ։ 18 Ցոնաթանին՝ Դաւիթին տուած
նշանը ։ 34 Սաուղ Դաւիթին երթալը խմա-
նալով՝ Ցոնաթանը մեղադրել կ՚ուզէ ։ 35
Ցոնաթան սիրով կը զատուի Դաւիթէն ։

1 Ու Դաւիթ Ռամայի Նաւաթէն
փախաւ , ու գնաց Ցոնաթա-
նին առջևը ըսաւ . Ես ի՞նչ ըրեր
եմ , յանցանքս ի՞նչ է , ու ի՞նչ
մեղք գործեր եմ քու հօրդ առջևը ,
որ անիկայ կ՚ես մեղադրել կ՚ուզէ ։
2 Եւ Ցոնաթան ըսաւ անոր . Քա՛ւ
լիցի , դուն պիտի չմեռնիս . ահա՛
իմ հայրս մեծ կամ պզտիկ բան մը
չըներ՝ առանց * ինծի յայտնելու .
ու իմ հայրս ինչո՞ւ համար ատ բա-
նը ինծմէ պիտի պահէ . ատանկ
3 բան չկայ ։ Եւ Դաւիթ երդումով
ալ ըրաւ , ու ըսաւ . Քու հայրդ
աղէկ գիտէ որ ես քու առջևդ շը-
նորհք գտեր եմ . անոր համար կ՚ը-
սէ թէ՝ Ցոնաթան ասոր բանը չգիտ-
նայ , չըլլայ որ վշտանայ . բայց
կենդանի է Տէր , ու կենդանի է
քու անձդ , որ իմ ու մահուան
մէջտեղը միայն մէկ քայլ մը մնացեր
4 է ։ Եւ Ցոնաթան ըսաւ Դաւիթ-
ին . † Սրտիդ ուզած բանը ինծի
5 ըսէ , ու՞ ես քեզի ինեմ ։ Եւ Դա-
ւիթ ըսաւ Ցոնաթանին . Ահա՛
վաղը = ամսագլուխն է , ու պէտք է
որ ես թագաւորին հետ կերակուր
ուտելու համար թէ՛նէնը նստիմ .
սակայն զիս թո՛ղ տուր , որ մինչև
երրորդ օրուան իրիկունը է դաշտին
6 մէջը պահուիմ . Թէ որ քու հայրդ
զիս փնտռելու ըլլայ , ըսես որ ,
Դաւիթ ինծի շատ աղաչեց որ ար-
տորնօք † իր քաղաքը Բեթլեհէմ
երթայ . քանզի հոն է բոլոր ազ-
գատոհմին տարեկան † զոհը կ՚ըլլայ ։
7 Թէ որ այսպէս ըսէ՝ Աղէկ , քու
ծառայիդ խաղաղութիւն է . բայց
թէ որ խիստ բարկանայ , գիտցիր
որ չանիկայ որոշեր է չարու-
8 թիւն ընելու ։ Եւ ծառայիդ ե՛ս
ղորմութիւն ըրէ . քանզի Ը դուն
քու ծառայիդ հետ Տէրոջը ա՛նա-
նվէ ուխտ ըրիր . ու Ք թէ որ իմ
վրաս մէկ յանցանք մը կայ , դուն
մեռցուր զիս . ինչո՞ւ համար զիս
9 քու հօրդ տանիս ։ Եւ Ցոնաթան
ըսաւ . Քա՛ւ չլեցի , որ ես ստոյգ
գիտնալով թէ իմ հօրս կողմանէ
քեզի համար չարիք որոշուած է ,
10 քեզի չմատնցնեմ ։ Ու Դաւիթ ը-
սաւ Ցոնաթանին . Հապա թէ որ
քու հայրդ քեզի խստութեամբ
պատասխան տայ , ինծի ո՞վ պիտի
11 իմացընէ ։ Եւ Ցոնաթան ըսաւ
Դաւիթին . Եկո՛ր՝ դաշտը ելլենք .
ու երկուքնին դաշտը ելան ։
12 Եւ Ցոնաթան ըսաւ Դաւիթին .
Կ՚ենթադրէ է Իսրայէլին Տէր Աստուա-
ծը . Թէ որ վաղը ասս ատենս կամ
մէկալ օր իմ հայրս քննելով տես-
նեմ թէ՝ Դաւիթին համար աղէ-
կութիւն մը կայ , և նոյն ատենը
մարդ չխրկեմ ու ժ քեզի չյայտնեմ ,
13 ի Տէրը Ցոնաթանին այսպէս՝ ու
ասկէ աւելի ընէ . բայց թէ որ իմ
հայրս քեզի չարութիւն մը ընել
ուզէ , ընդհա՛ր քեզի պիտի յայտ-
նեմ , ու քեզ պիտի արձակեմ , որ
խաղաղութեամբ երթաս , ու Լ Տէ-
րը քու հետդ ըլլայ , ինչպէս որ իմ
14 հօրս հետն էր ։ Եւ ո՛չ միայն իմ
կենդանութեանս ատենը դուն ին-
ծի Տէրոջը ողորմութիւնը ընես՝ որ
15 ես չմեռնիմ , Մանաւանդ Է քու ո-
ղորմութիւնդ իմ տունէս յաւի-
տեան չկտրես , ո՛չ ալ ան ատենը՝
երբոր Տէրը Դաւիթին բոլոր թշըւ-
նամիները երկրիս վրայէն վերցընէ ։
16 Եւ Ցոնաթան Դաւիթին տանը
հետ դաշնակցութիւն ըրաւ , ու
ը ըսաւ . ժ Տէրը Դաւիթին թշնամի-
17 ներէն վրէժ առնէ ։ Ու Ցոնաթան
Դաւիթին նորէն երդումով ընել
տուաւ՝ զանիկայ սիրելուն համար .
Լ քանզի զանիկայ իր անձին պէս կը
18 սիրէր ։ Եւ Ցոնաթան անոր ը-
սաւ . Վաղը ամսագլուխն է , ու
դուն պիտի փնտռուիս . քանզի քու
19 տեղդ պարապ պիտի մնայ ։ Ու եր-
րորդ օրը շուտով իջնես , և գաս
ԺԱՆ տեղը՝ ուր որ գործին օրը պա-
հուեցար , ու Եզելէլ քարին քովը
20 նստիս ։ Ու ես ԺՈՐ քովը՝ նշանի
մը նետելու պէս՝ իրեք նետ պիտի
21 նետեմ ։ Եւ ահա՛ մանչը պիտի
խրկեմ՝ ըսելով . Գնա՛ նետերը գը-
տիր . ու թէ որ մանչուն ըսեմ .
Ահա՛ նետերը քեզմէ այդին են , զա-
նո՛նք առ . ան ատենը գաս . քանզի
քեզի խաղաղութիւն է , և Ը Տէրը
22 կենդանի է որ բան մը չկայ . Բայց
թէ որ մանչուն այսպէս ըսեմ . Ա-
հա՛ նետերը քեզմէ անդին է . ԺՈ-
ԹՆԸ երթաս . քանզի Տէրը քեզ կը
23 խրկէ ։ Ու Ժ ասս խօսքիս համար՝ որ
ես ու դուն խօսեցանք՝ ահա՛ Տէրը

Ն·ՔՐ·ՀԲ· ԽՐ 1062

* ԵԲԲ . իմ ականջիս . ՀՄ 12։ ԳԼ· Թ· 15։

† ԵԲԲ . Ի՞նչ որ քու սնձրդ ինծի ը-սէ ,

= Թագ· Ա· 10։ ԻԸ· 11։

Բ ԳԼ· ԺԹ· 2։

† ԳԼ·Ժգ·4։ ՟ ԳԼ·Թ·12։

Ի Տե՛ս Բ Օր· ա· 23։ Բ Թագ·Ժե· 4։

Ղ Գլ·ԻԵ·17։ ՀՄԲ·է·7։

Ե Ցես·բ·14։

Ը ՀՄԲ 16 ։ ԳԼ·Ժը·3։ ԻԳ· 18 ։

Ք Բ Թագ · Ժդ · 32 ։

Ժ ՀՄԲ 2 ։

Ի ՀառԹ·ա· 17 ։

Լ Ցես ։ ա · 5 ։ ԳԼ·Ժե· 37 ։ ա ՄՆ · ԻԲ · 11 ։ 16 ։

Խ ԲԹագ·Բ· 1 ։ 3 ։ 7 ։ Ի· 7 ։

Ծ ԳԼ·ԻԵ·22։ Տե՛ս ԳԼ · Լա · 2 ։ Բ Թագ · Գ · 7 ։ ԻՈ · 8 ։

Կ ԳԼ·Ժը·1։

Հ ՀՄԲ 5 ։

Ձ ԳԼ·ԺՔ·9։

Ղ ԵՐԵՄ·Գ· 2 ։

Ն. Ք. ԳՓ. Ի ԲԵՐ 1062

իմ ու քոյ մէջը յաւիտեան վկայ ըլլայ։

24 Ուստի Դաւիթ դաշտին մէջը պահուըեցաւ. և ամաւգլուխը հասնելով թագաւորը կերակուր ուտե-

25 լու համար սեղան նստաւ. Եւ թագաւորը իր ծովորութեանը պէս իր աթոռը պատին կոխնակ աթոռը նստաւ, ու Ցովնաթան ոտք ելաւ, և Սաւուղին քովը Աբեններ նըստաւ, ու Դաւիթին տեղը պարապ

26 մնաց։ Եւ Սաւուղ ան օրը բան մը չխօսեցաւ. քանդի ըսաւ. անոր բան մը պատահեր է. անկիայ չ մաքուր չէ. անտարակոյս մաքուր

27 պիտի չըլլայ։ Ու հետևեալ օրը՝ ամսուն երկրորդ օրն ալ Դաւիթին տեղը պարապ էր. ուստի Սաւուղ իր որդւոյն Ցովնաթանին ըսաւ. Եսսէին որդին ինչու համար երէկ

28 ու այսօր սեղանը չկաւ։ Եւ Ցովնաթան Սաւուղին պատասխան տուաւ. Դաւիթ ինծի շատ աղա-

29 չեց որ Բեթղէհէմ երթայ, Ու ըսաւ. Շնորհք ըրէ, դիս խրկէ. քանզի ան քաղաքին մէջը մեր ազգատոհմը զոհ կ'ընէ. ու իմ եղբայրս ինծի պատուիրած է. և հի՛մ որ քու աչքերուդ առջևը շնորհք գտեր եմ, կ'աղաչեմ՝ դիս թող տուր որ երթամ, ու եղբայրներս տեսնեմ. ասոր պատճառաւ թագա-

30 ւորին սեղանը չկաւ։ Եւ Սաւուղին բարկութիւնը բորբոքեցաւ Ցովնաթանին դէմ, ու անոր ըսաւ. Ո՛վ ապստամբ ու չար ղաւակ. ես չեմ գիտեր որ դուն Եսսէին որդին ընտրեցիր քեզ ու մայրդ խայտառակելու համար.

31 Քանզի քանի որ Եսսէին որդին երկրիս վրայ ողջ է, դուն պիտի չհաստատուիս. ոչ ալ քու թագաւորութիւնդ. ուստի հիմա մարդ խրկէ, ու զանիկայ ինծի բեր, քանզի անիկայ մահու արժանի է։

32 Եւ Ցովնաթան իր հօրը Սաւուղին պատասխան տուաւ ու ըսաւ. Ինչու համար պիտի մեռցուի. ա-

33 նիկայ ի՞նչ ըրաւ։ Եւ Սաւուղ ընդդէմ նետեց անոր, որ զանիկայ սպանէ. Ասանկ գիտցաւ Ցովնաթան իմացաւ որ իր հայրը որոշեր է զա-

34 եիթը մեռցընել։ Ու Ցովնաթան սաստիկ բարկութեամբ սեղանէն ելաւ, ու ամսուն երկրորդ օրը կըրկուր չկերաւ. քանզի Դաւիթին համար սիրտը կոտրեցաւ, որովհետև իր հայրը զանիկայ անարգեց։

35 Եւ Ցովնաթան առաւօտուն պարտեր ելաւ, ինչպէս որ Դաւիթին հետ ժամանակ որոշեր էր, ու իր

36 հետը պզտիկ մանչ մը կար։ Եւ իր մանչուն ըսաւ. Վազէ, ու ան

իմ նետերս գտիր. ու մանչուն վազած ատենը՝ անիկայ

37 նետը անկէ անդին նետեց. Ու երբոր մանչը Ցովնաթանին նետած նետին տեղը գնաց, Ցովնաթան մանչուն ետևէն կանչելով ըսաւ.

38 Ա՛նա նետը քեզմէ անդին է։ Եւ Ցովնաթան մանչուն ետևէն կանչեց. Շուտ ըրէ, արտորդիր մի կենար։ Ու Ցովնաթանին մանչը նետերը ժողվեց, իր տիրոջը եկաւ։

39 Բայց մանչը բան մը չէր գիտեր. ան բանը միայն Ցովնաթանը ու Դաւիթ

40 թը գիտէին։ Եւ Ցովնաթան իր զրահիքները իր մանչուն տուաւ, ու անոր ըսաւ. Գնա՝ քաղաքը

41 տար։ Եւ մանչը գացածին պէս՝ Դաւիթ հարաւային կողմէն ելաւ, ու երեսի վրայ գետինը խնկաւ, ու երեք անգամ երկրպագութիւն ըրաւ. և մկլմկլ համբուրեցին, ու իրարու վրայ լային. մինչև որ Դա-

42 ւիթը չափէ դուրս լացաւ։ Եւ Ցովնաթան Դաւիթին ըսաւ. Գնա խաղաղութեամբ, որ ինչպէս երկուքնիս ալ Տէրոջը անունովը երդում ըրինք ու ըսինք. Տէրը իմ ու քու մէջդ ն իմ սերունդիս ու քու սերունդիս մէջը վկայ ըլ-

43 լայ մինչև յաւիտեան։ Եւ Դաւիթ ելաւ գնաց. Ցովնաթանն ալ քաղաքը մտաւ։

ԳԼ. ԻՆ

1 Դաւիթ Նոբ գալով Ախիմելէքէն ուռաջաւորութեան դայր կ'առնէ. 7 Դովկ հոն ներկայ կը գտնուի. 8 Դաւիթ Գադիթին սուրը կ'առնէ. 10 Գէթի մէջ գինքը խնդադար կը ձևացընէ։

1 Ու Դաւիթ Նոբ գնաց Ախիմելէք քահանային. և Ախիմելէք ի զարհուրելով Դաւիթը դիմաւորեց, ու անոր ըսաւ. Ինչու՛ համար մինակ

2 ես, ու հետդ մարդ չկայ։ Եւ Դաւիթ Ախիմելէք քահանային ըսաւ. Թագաւորը ինծի բան մը հրամայեց, ու ինծի ըսաւ. Մարդ մը չգիտնայ ան բանը՝ որուն համար որ քեզ կը խրկեմ, ու ինչ որ քեզի հրամայեցի. ու ես մանչերուն

3 մէյմկի տեղ որոշեր եմ։ Հիմա ինչ կայ ձեռքիդ տակը՝ ինծի հինգ հաց տուր, կամ ինչ որ կը

4 գտնուի։ Եւ քահանան Դաւիթին պատասխան տուաւ ու ըսաւ. Ձեռքիս տակը հասարակ հաց չըկայ. միայն սուրբ հաց կայ. երթ որ մանչերը գոնէ կիներէն զգուշ-

5 ացած են։ Եւ Դաւիթ քահանային պատասխան տուաւ՝ ու անոր ըսաւ. Իրաւ կիներէն մեզմէ հեռու են իմ ձամբայ ելած օրէս, այսինչ երկուրնէ ու մկալ օրուընէ. և մանչերուն

Ն. Ք. ԳՓ. Ի ԲԵՐ 1062

ՂԵՒ. է. 21. ԺԸ. 3. Ե.

ՃՀԹ 6։

ՂԳԼ. Ա. 17։ Դ ՀՊՐ 23։

ՍԵՓ. ՈՐԴԻ

Ն ԳԼ. ԺԲ. 3։ ՏԵՍ ՄԱՏ. ԺԱ. 23։ ՂՈՒ. ԻԳ 22։

Ւ ԳԼ. ԺԸ. 11։

ՀՊՐ 7։

ԳԼ. ԺԳ. 3. ՄԱՐ Բ. 26։

Բ ԳԼ. ԺԶ. 4։

Ֆ ԵԼ ԱՒ. 30. ՂԵ ԻԴ 5. ՄԱՏ ԺԲ. 4։

Ֆ ԵԼ ԺԲ 13. ՋԱՔ Է. 3։

Ւ ՍԱՂՄ. Գ. 4։

ամանները մաքուր են . և աս ալ *հաճարակ հաց կրնայ սեպուիլ՝ մանաւանդ որ այսօր Շաբաթներուն մէջը սովէլ հաց կը սրբագործուի ։
6 Ուստի քահանան Իսուրը հաշը տուաւ անոր . քանզի հոն ուրիշ հաց չկար , բայց միայն առաջաւորութեան հացը , զոր Ցէրոջը առջևէն կը վերցուէր , ու վերցուած
7 օրը տաք հաց կը դրուէր ։ Եւ ան օրը Սաւուղին ծառաներէն մէկը՝ հոն Ցէրոջը առջևը արգիլուած էր , ու անոր անունը Եդովմայեցի Դովէկ էր . անիկայ Սաւուղին հովիւներուն գլուխն էր ։ Եւ Դաւիթ
8 Ախիմելէքին ըսաւ . Աս տեղս քու ձեռքիդ տակը նիզակ մը կամ սուր մը չկայ . քանզի թագաւորին գործը ստիպողական ըլլալուն համար՝ իմ սուրս ու զէնքերս հետս չառի ։
9 Եւ քահանան ըսաւ . Ահա Փղշտացի Գողիաթին սուրը՝ որ զանիկայ †Եղբայի հովիտին մէջը մեռցուցիր , էանիկայ եփուտին ետևը լաթի մը մէջ փաթթուած կը կենայ . թէ որ կ'ուզես զանիկայ առնել , ա՛ռ . քանզի հոս անկէ ուրիշ չկայ . ու Դաւիթ ըսաւ . Անոր նմանը չկայ . զանիկայ ինծի տուր ։
10 Եւ ան օրը Դաւիթ ելաւ , ու Սաւուղին երեսէն փախաւ , և ‡Գէթի Ակրուս թագաւորին գնաց ։
11 Ու Ախ Ակրուսին ծառաները անոր ըսին . Երկրին թագաւորը՝ Դաւիթը ասիկայ չէ՞ . ասոր համար չէ՞ր որ պար բռնողները պատասխան տալով կ'երգէին ու կ'ըսէին .
Սաւուղ իր հազարաւորները զարկաւ , ու Դաւիթ իր բիւրաւորները ։
12 Եւ Դաւիթ ևաս խօսքերը իր սրտին մէջը դրաւ , ու Գէթի թագաւորին Ակրուսին երեսէն շատ վախցաւ ։
13 Եւ հանոնց առջևը իր դէմքը փոխելով՝ անոնց ձեռքին տակը զինքը խենդ ձևացուց . դռներու փեղկերուն վրայ նշաններ կը գծէր , ու լորձունքները մօրուքին վրայ կը
14 վազցնէր ։ Եւ Ակրուս իր ծառաներուն ըսաւ . Ահա աս մարդուն խենդ ըլլալը տեսաք . զանիկայ
15 ինչո՞ւ համար ինծի բերիք ։ Միթէ ես խենդերու կարօտ եմ , որ ատիկայ իմ առջևս բերիք խենդուելու համար . ատիկայ իմ տունս մտնէ ։

ԳԼ . ԻԲ

1 Դաւիթին քովը մարդիկներ կը ժողվուին Ադողոմի մէջ ։ 3 Դաւիթ Մասփայի մէջ իր ծնողքը Մովաբի թագաւորին կը յանձնէ ։ 5 Գադ մարգարէին խրատովը Հարէթ կու գայ ։ 6 Սաւուղ Դաւիթին եռևէն իյնալով՝ իր ծառաներուն անհաւատարմութեանը համար կը գանգատի ։ 9 Դովէկ ամբաստանութիւն կ'բնէ Ախիմելէքին վրայով ։ 11 Սաւուղ կը հրամայէ որ քահանաները սպաննեն ։ 17 Թիկնապահ զորքը ասոնց հրամանը կատարել չուզելով , Դովէկ ի գործ կը դնէ զանիկայ ։ 20 Աբիաթար փախչելով՝ Դաւիթին կը բերէ ան գէշ լուրը ։

1 Դաւիթ անկէ գնաց , ու ողջ առողջ Ադողոմի քարայրը Հասաւ . ու իր եղբայրները և իր հօրը բոլոր տունը լսեցին , ու հոն
2 անոր իջան ։ Եւ բոլոր նեղութեան մէջ եղող՝ պարտք ունեցող ու †սիրտը վիրաւորուած մարդիկները անոր քովը ժողվուեցան . և անիկայ անոնց վրայ զօրագլուխ եղաւ . ու անոր քովը չորս հարիւրի չափ մարդ եղան ։
3 Եւ Դաւիթ անկէ Մովաբի Մասփան գնաց , ու Մովաբի թագաւորին ըսաւ . Կ'աղաչեմ , իմ հայրս ու մայրս ձեր քովը ‡կենան , մինչև որ գիտնամ՝ թէ Աստուած ինծի
4 ինչ պիտի ընէ ։ Ու զանոնք Մովաբի թագաւորին առջևը բերել տուաւ . և անոնք անոր քովը բնակեցան , որչափ ժամանակ որ Դաւիթ բերդին մէջը կեցաւ ։
5 Եւ †Գադ մարգարէն Դաւիթին ըսաւ . Բերդին մէջը մի՛ նստիր . ելիր Ցուդայի երկիրը գնա ։ Ու Դաւիթ գնաց Հարէթի անտառը մտաւ ։
6 Եւ Սաւուղ լսեց որ Դաւիթ ու անոր հետ եղող մարդիկները գտնուեր են . ու Սաւուղ Գաբաայի մէջ Ռամայի ‖ծառին տակը նստեր էր , ու նիզակը իր ձեռքն էր , և իր ամէն ծառաներն ալ իր բովտիքը
7 կայներ էին ։ Ու Սաւուղ իր քովը կայնող ծառաներուն ըսաւ . Ով որդիք Բենիամինի՝ մնիկ ըրէք . Միթէ Ցեսսէի որդին համնքնուս ալ արտեր ու այգիներ պիտի տայ ամէնքնիդ ալ հազարապետներ ու
8 հարիւրապետներ՞ պիտի ընէ , Որ ամէնդ ինծի դէմ միաբաներ էք ու ոչ Ցեսսէի որդուն իմ որդուս հետ ըրած դաշնակցութիւնը է իմ ականջիս բսող մը չկայ . և ձեր մէջը մարդ մը չկայ՝ որ ինծի համար ցաւ է , ու ինծի յայտնէ . քանզի իմ որդիս՝ իմ ծառաս ինծի դէմ ոտք հանեց , որ դարանամուտ ըլլայ , ինչպէս որ այսօր կ'տեսնէք ։
9 Եւ Սաւուղին ծառաներուն վրա կացաւ Եդովմայեցի Դովէկը պատասխան տուաւ , ու բսաւ . Ցեսսէի որդին տեսայ , որ Նոբ եկաւ Ախիտովբի որդւոյն Ախիմելէքին
10 մօտ . Ու անիկայ՝ անոր համար Ցէրոջը հարցուց , ու և անոր պաշար տուաւ , և անոր Փղշտացի Գողիաթին սուրը տուաւ ։

* ԵՓՐ . կերպով մը հաճարակ է ։
ՂԼՀ . Ը . 26 ։ Ի ՄԱՈ . ԺԸ . 3 ։ 4 ։ ՄԱՐ . Բ . 25 ։ 26 ։ ՂՈՒ . Ջ . 3 ։ 4 ։
Ը ՂԼՀ . ԻԳ . 8 ։ 9 ։
Ի ԳԼ . ԻԲ . 9 ։ ՍԱՂ . ԾԲ . ԻՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ ։
Ժ ԳԼ . ԺԷ . 2 ։ 50
Ի ՏԵՍ ԳԼ . Լ . 10 ։
Լ ՍԱՂ . ԼԴ . ԻՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ ։
Ի ՍԱՂ . ԾՂ . ԻՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ ։
Ի ԳԼ . ԺԸ . 7 ։ ԻԹ . 5 ։
Ն ՂՈՒ . Բ . 19 ։
Հ ՍԱՂ . ԼԴ . ԻՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ ։

— Բ ԹԱԳ . ԻԳ . 13 ։
Ե ՍԱՂ . ԾԷ . ԻՆ և ՃԻՐ . ԻՆ ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐԸ ։
Զ ԴԱՒ . ԺԸ . 3 ։
† ԵՓՐ . ԳԱԴ - ՆԱՀՈԳԻ
‡ ԵՓՐ . ՆԵՂԷՍ ։
Ր Բ ԹԱԳ . ԻԳ . 11 ։ ԱՄՈՍ . ԻՈՒ . 9 ։ Բ ՄՆ . ԻԹ 25 ։
‖ Կ — Ի՛ ՄԵՋՍԻՆ
Ի ԳԼ . Բ . 14 ։
ՂԳԼ . ԺՐ . 3 ։ Ի . 30 ։
Ի ԳԼ . Ի 2 ։
Ը ԳԼ ԻԱ 7 ։ ՍԱՂ . ԾՐ . ԻՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ և 1 ։ 2 ։ 3 ՀԱՄԱՐՆԵՐԸ ։
Ի ԳԼ . ԺԳ . 3 ։
Ժ ԳԼ ԻԱ . 1 ։
Ի ԹԱՒ ԻՀ . 21 ։
Լ ԳԼ . ԻԱ . 6 ։ 9 ։

Ն · Ք · ԶԲ · ԽԲԲ 1062

11 Ան ատենը թագաւորը մարդ խրկեց , ու Աբիտովբի որդին Աբիմելէք քահանան , ու անոր հօրը բոլոր տունը՝ Նոբի մէջ եղող քահանաները կանչեց . ու ամէնքն ալ
12 թագաւորին եկան : Եւ Սաւուղ ըսաւ . Ո՛վ որդի Աբիտովբայ՝ մտիկ ընէ . ու անիկայ ըսաւ .
13 Ահա հոս եմ՝ տէր իմ : Եւ Սաւուղ անոր ըսաւ , ինչո՞ւ համար դուն ու Յեսսէի որդին ինծի դէմ միաբանեցաք , ու դուն անոր հաց ու սուր տուիր , և անոր համար Աստուծոյ հարցուցիր , որ անիկայ ելլէ ինծի դարանամուտ ըլլայ , ինչպէս որ
14 այսօր կ՚երեւայ : Եւ Աբիմելէք պատասխան տուաւ թագաւորին՝ ու ըսաւ . Քու բոլոր ծառաներուդ մէջը ո՞վ հաւատարիմ է Դաւիթին պէս , որ թագաւորի փեսայ , քու *ատեանիդ վերակացուն՝ , ու քու
15 տանդ մէջ պատուաւոր է : Միթէ այսօր սկսայ անոր համար Աստուծոյ հարցընելու . քա՛ լըշի . թագաւորը իր ծառային վրայ , — իմ հօրս բոլոր տանը վրայ — ոչ՝ բան մը չգնէ . քանզի քու ծառադ աս բոլոր բաներէն՝ պզտիկ կամ մեծ
16 բան մը չէր դիտեր : Եւ թագաւորը ըսաւ . Ո՛վ Աբիմելէք՝ անպատճառ պիտի մեռնիս , թէ դուն և թէ քու հօրդ բոլոր տունը :
17 Ու թագաւորը իր գովը կայնող սուրհանդակներուն ըսաւ . Դարձէ՛ք՝ Տէրոջը քահանաները մեռցուցէ՛ք . քանզի անոնց ձեռքն ալ Դաւիթին հետն է . որովհետև անոր փախչիլը պիտնալով՝ ինծի չյայտնեցին . բայց թագաւորին ծառաները Է չուզեցին իրենց ձեռքը երկընդրնել՝ Տէրոջը քահանաները :
18 Ներ զարնելու : Եւ թագաւորը Դովեկին ըսաւ . Դուն դարձիր , ու քահանաները զարկ : Ու Եդովմայեցի Դովեկը դարձաւ , և քահանաները զարկաւ , ու Ե՛ն օրը անիկայ ութսունհինգ մարդ մեռցուց , որ քթանէ եփուտ կը հագ-
19 Նէին : Նաեւ քահանաներուն Նոբ քաղաքը սուրի բերնէ անցուց . երիկ մարդէն մինչև կնիկ մարդը , տղայէն մինչև կաթնակեր մանուկը , ու մինչև արջառը , էշը ու ոչխարը սուրի բերնէ անցուց :
20 Եւ Աբիտովբեան Աբիմելէքին մէկ որդին՝ որուն անունը Աբիաթար էր , ազատեցաւ , ու Ի փախաւ
21 Դաւիթին ետևէն փախաւ : Եւ Աբիաթար Դաւիթին պատմեց՝ թէ Սաւուղ Տէրոջը քահանաները մեռ-
22 ցուց : Եւ Դաւիթ Աբիաթարին ըսաւ . Ես ան օրը գիտէի որ Եդովմայեցի Դովեկը հոն դտնուելով՝ անշուշտ Սաւուղին պիտի պատմէ . քու հօրդ տանը բոլոր մարդիկներուն մահուանը ես պատ-
23 ճառ եղայ : Իմ քովս նստէ , մի՛ վախնար . Ձ՚անգի իմ հոգիս փընտռողը՝ քու հոգիդ ալ կը փնտռէ . քայց դուն իմ քովս ապահով ես :

Գ Լ · Ի Գ

1 Դաւիթ Աբիաթարէն միջոցով Տէրոջը հարցընելէն ետև՝ Կէիլան կ՚ազատէ : 7 Աստուած Դաւիթին կը յայտնէ Սաւուղին գալը , ու Կէիլացւոց անշնաւորմութիւնը . ան ալ Կէիլայէն կը փախչի : 14 Զիփի մէջ Յոնաթան կու գայ՝ ու Դաւիթը կը միխթարէ : 19 Զիփացիք Սաւուղին կը յայտնեն Դաւիթին ո՛ւր ըլլալը . 25 ու անիկայ Մաոնի մէջ Սաւուղէն կ՚ազատի՝ Փղշտացւոց յարձակմանը պատճառաւ :

1 Ետև Դաւիթին իմացուցին , ըսելով . Ահա Փղշտացիք Կէիլայի հետ պատերազմ կ՚ընեն , ու կա-
2 լերը կը կողոպտեն : Եւ Դաւիթ Տէրոջը հարցուց՝ ու ըսաւ . Երթամ ասոնց փղշտացիները զարնե՞մ : Եւ Տէրը Դաւիթին ըսաւ . Գնա՛ փղշտացիները զարկ , ու Կէիլան
3 ազատէ : Եւ Դաւիթին մարդիկները անոր ըսին . Ահա մենք հոս Ցուդայի մէջ կը վախնանք . ալ որչափ աւելի՛ թէ որ Կէիլա երթանք Փղշտացւոց գունդերուն
4 դէմ : Ու Դաւիթ նորէն մէկ մըն ալ Տէրոջը հարցուց . և Տէրը անոր պատասխան տուաւ ու ըսաւ . Ելի՛ր՝ Կէիլա իջիր . քանզի ես Փղշտացիները քու ձեռքդ կու տամ :
5 Եւ Դաւիթ իր մարդիկներովը Կէիլա գնաց , ու Փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ . ու անոնց անասուններըը առաւ , և զանոնք մեծ հարուածով մը զարկաւ . ու Դաւիթ Կէիլային բնակիչները ազա-
6 տեց : Եւ Աբիմելէքին որդին Աբիաթարը Դաւիթին քովը Կէիլա Էփահած ատենը՝ եփուտը ձեռքը Բ՚եջաւ իջաւ :
7 Ու երբոր Սաւուղին իմացուցին , թէ Դաւիթ Կէիլա մտեր է , Սաւուղ ըսաւ . Աստուած իմ ձեռքս մատներ է զանիկայ . քանզի դռներ ու նիզներ ունեցող քաղաքի մը մէջ
8 մտեր դոցուեր է : Եւ Սաւուղ բոլոր ժողովուրդը պատերազմի կանչեց , որ Կէիլա իջնէ , ու Դաւիթը
9 և անոր մարդիկները պաշարէ : Իսկ Դաւիթ իմացաւ որ Սաւուղ իրեն համար դաղտուկ չարութիւն մը կը ձարէ , ու Աբիաթար քահանային ըսաւ . Եփուտը մօտեցուր :
10 Եւ Դաւիթ ըսաւ . Ո՛վ Տէր Աստուած Իսրայէլի՛ քու ծառադ ըստոյգ լսեց որ Սաւուղ Կէիլայի վրայ գալ կ՚ուզէ , Ը որ քաղաքը իմ պատ-
11 ճառովս աւրէ . Արդեօք Կէիլայի

Ն · Ք · ԶԲ · ԽԲԲ 1062

ՂԳ Թագ · բ · 26 :

* Կ՚երեւայ ատեանդ մտնող , Ը իմ՝ Հրամանները ղրկող գացող :

Ը Տճ Եզ · ա · 17 :

Ժ Տճ Գէ · բ · 31 :

Ի Ձմ 9 , 11 :

Ձ Գէ · իգ · 6 :

Ղ Գէ · բ · 33 :

ՃԳ — Ցճս · ԺԱ · 44 :

Ե Ձմ 4 , 6 , 9 : Գէ · է · 8 : բ Թագ · ե · 19 , 23 :

Ծ Գէ · իբ · 20 :

ԽԲԲ 1061

Ճ Թես · իե · 21 : Գէ · է · ՃՃ :

Ը Գէ · իբ · 19 :

Ն·Ք·ԳՔ· Իրր 1061

բնակիչները զիս անոր ձեռքը պիտի մատնե՞ն , — ծառայիդ լսածին պէս՝ Սաւուղը հա՛ պիտի իջնէ՞ . ով Տէր Աստուած Իսրայէլի , կ՚աղաչեմ՝ ծառայիդ յայտնէ ։ Եւ

12 Տէրը ըսաւ . Պիտի իջնէ ։ Ու Դաւիթ ըսաւ . Կէիլայի բնակիչները՝ զիս ու իմ մարդիկներս Սաւուղին ձեռքը պիտի մատնե՞ն ։ Եւ

13 Տէրը ըսաւ . Պիտի մատնեն ։ Ուստի Դաւիթ ու անոր մարդիկները՝ որ վեց հարիւր մարդու չափ էին՝ կէիլայէն ոգացին , և ուր որ կրնային երթալ՝ կ՚երթային . ու երբոր Դաւիթին կէիլայէն ելլելը Սաւուղին իմացուցին , հա՛ երթալէն ետ կեցաւ ։

14 Եւ Դաւիթ անապատին մէջ ամուր տեղեանք կը նստէր . ու Զիփի անապատին մէջ՝ լերեան մը վրայ նստաւ ։ Եւ Սաւուղ զայն օր զանիկայ կը փնտռէր . բայց Աստուած անոր ձեռքը չմատնեց

15 զանիկայ ։ Ու Դաւիթ տեսաւ որ Սաւուղ իր անձը փնտռելու ելեր է . և Դաւիթ Զիփի անապատը՝ անտառի մը մէջ էր ։

16 Ու Սաւուղին որդին Յովնաթան՝ նեղաւ՝ անտառը դնաց Դաւիթին , ու անոր ձեռքը Աստուծով

17 զօրացուց . Եւ անոր ըսաւ . Մի վախնար . քանզի իմ հօրս Սաւուղին ձեռքը քեզ պիտի չգտնէ , ու դուն Իսրայէլի վրայ թագաւոր պիտի ըլլաս , ու ես քու երկրորդդ պիտի ըլլամ . և ա՛յս բանը իմ

18 հայրս Սաւուղն ալ գիտէ ։ Ու երկուքնին Տէրոջը առջևը ուխտ ըրին . և Դաւիթ անտառին մէջը ննաց , բայց Յովնաթան իր տունը դարձաւ ։

19 Ու Զիփացիք՝ Գաբաա ելան Սաւուղին , ու ըսին . Ահա՛ Դաւիթ մեր քովը՝ ամուր տեղեանքը անտառին մէջ՝ Եքեղա բլուրին վրայ՝ Եսիմոնի հարաւային կողմը պա-

20 հուած է ։ Հիմա ով թագաւոր , ինչպէս որ քու անձդ իջնելու կը փափաքի , իջի՛ր , ու դանիկայ թագաւորին ձեռքը մատնելը մեզի

21 մնայ ։ Ու Սաւուղ ըսաւ . Դուք Տէրոջմէն օրհնեալ ըլլար , որ ինծի

22 ցաւակից եղար ։ Ուրեմն դացէ՛ք , ա՛ւելի ազէկ դիտեցէ՛ք , և անոր ոտքին կոխած տեղը դիտցէ՛ք ու տեսէ՛ք , Ե՞ր ով զանիկայ հոն տեսեր է . քանզի ինծի ըսած են թէ՝ անի-

23 կայ չատ խորամանկ է ։ Ուստի նայեցէ՛ք , ու անոր բոլոր պահուելու տեղեանքը իմացէ՛ք և ա՛յդ-ստուգելով ինծի դարձէ՛ք , և ձեզի հետ երթամ . ու թէ որ անիկայ ան երկրին մէջն է զանիկայ Յուդայի

Ն·Ք·ԳՔ· Իրր 1061

բոլոր հազարաւորներուն մէջը պիտի փնտռեմ ։

24 Մը պիտի փնտռեմ ։ Ու անոնք ելան , և Սաւուղին առջևէն Զիփ դացին . ու Դաւիթ իր մարդիկներովը Մաոնի անապատը գտնուին Արաբայի հարաւային կողմը Եսիմոնի հարաւային կողմը

25 Նո՛ւէր էր ։ Եւ Սաւուղ իր մարդիկներովը զննելու փնտռելու գընաց . ու երբոր Դաւիթին իմացուցին , վա՛մ իջաւ , և Մաոնի անապատին մէջ նստաւ . ու Սաւուղ լսեց , ու Դաւիթին հետևէն Մաոնի

26 անապատը վազեց ։ Եւ Սաւուղ լեռանը այս կողմէն կ՚երթար , Դաւիթն ալ իր մարդիկներովը լեռանը մէկալ կողմէն կ՚երթա՛ր . Ու Դաւիթ կը փութար որ Սաւուղէն հեռանայ . բայց Սաւուղ ու իր մարդիկները՝ Դաւիթին ու անոր մարդիկներուն չորս կողմը պատեցին , որ զանոնք բռնեն ։

27 Եւ լուրեր մը եկաւ Սաւուղին , ու ըսաւ . Շուտով եկուր . քանզի

28 Փղշտացիք երկիրը կոխեցին ։ Ուստի Սաւուղ Դաւիթը հալածելէն դարձաւ դնաց , որ Փղշտացւոց դէմ դնէ . անոր համար ան տեղին անունը *Սէլա Մահլէգօթ ըսուեցաւ ։

ԳԼ · ԻԴ

1 Դաւիթ Ենգադդիի այրի մը մէջ՝ Սաւուղին քաղցրը կտրելով , անոր կենացը կը խնայէ . 9 և այսպէս իր անմեղութիւնը կը ցուցնէ ։ 17 Սաւուղ իր յանցանքը խոստովանելով Դաւիթին երդում ընել կու տայ , ու կը մեկնի ։

1 Եւ Դաւիթ անկէ ելաւ , ու Ենգադդիի ամուր տեղեանքը նըս-

2 տաւ ։ Ու Երբոր Սաւուղ Փղշտացիներէն ետ դարձաւ , անոր իմացուցին ու ըսին Ահա՛ Դաւիթ Ենգադդիի անապատին մէջն է ։

3 Եւ Սաւուղ բոլոր Իսրայէլէն իրեք հազար ընտրուած մարդիկներ առաւ , ու գնաց որ Դաւիթը ու անոր մարդիկները փնտռէ այծե-

4 մանց ժայռերուն վրայ ։ Եւ ճամբուն վրայ եղող ոչխարներուն փարախները եկաւ , ու հոն մէկ քարայր մը կար . ու Սաւուղ հարկաւորութեան համար ներս մտաւ . և Դաւիթ իր մարդիկներովը քար-

5 այրին ներսի դին նստեր էր ։ Ու Դաւիթին մարդիկները անոր ըսին . Ահա՛ Տէրոջը քեզի ըսած օրը ասիկայ է՝ թէ՝ Քու թշնամիդ քու ձեռքդ պիտի մատնեմ , և քու աչքերուդ հաճոյ երևցածը ըրէ անոր ։ Ու Դաւիթ ելաւ , և Սաւուղին վերարկուին ծայրը գաղտուկ

6 կտրեց ։ Բայց անկէ ետքը Դաւիթին սիրտը խղճաց , Սաւուղին վերարկուին ծայրը կտրելուն վրայ ։

7 Ու իր մարդիկներուն ըսաւ . Հա-

Ն·Ք·ԳՔ· Իրր 1061

Ծ Ցես ժե· 55 ։ Գլ·իե· 2 ։

Ղ Գլ·իր· 2 ։ իե·13 ։

Ի Սաղ ը· 22 ։

Հ Սաղ·ժէ· 9 ։

Յ Տես Գ Թագ·ժթ· 9 ։

*Ի՛ վէմ բաժանում ։

Ժ Գլ·իդ· 20 ։

Ի Գլ·ժը·3 ։ ի·16 ։ 42 ։ բԹագ·իա· 7 ։

Լ Տես գԼ· իդ·1 ։ Սաղ· ծգ·ին վերնագիրը ։

Ի Սաղ·ծգ· 3 ։

Ծ Գլ·իդ· 3 ։

Ք Ես·գ·3 ։ Ղեր·իզ·8 ։

Ե Սաղ·ծգ· 3 ։

Ե Սաղ·ճԽա· 6 ։

Ե ԵԲբ·ոա· քերը ծածկելու·Դատ· գ·24 ։

Ի Սաղ·ծէ· ին և ճԽր ին վերնագիրները ։

Ղ Ել·իզ·8 ։

Ի Բ Թագ· իդ·10 ։

Ը Գլ·իէ· 11 ։

տուած չընէ որ Տէրոջը օծեալին՝ իմ տիրոջս առ բանը ընեմ , ձեռքս անոր վրայ երկընցընելով . քանզի
8 անիկայ Տէրոջը օծեալն է : Եւ Դաւիթ Խոսքերով իր մարդիկները զսպեց , ու զանոնք չթողուց , որ Սաւուղին վրայ յարձակին : Եւ Սաւուղ քարայրէն դուրս ելաւ , ու իր ճամբան գնաց :
9 Անկէ ետև Դաւիթն ալ քարայրէն դուրս ելաւ , ու Սաւուղին ետևէն կանչելով ըսաւ . Ով տէր իմ թագաւոր : Ու երբոր Սաւուղ ետին նայեցաւ , Դաւիթ երեսը գետինը ծռելով՝ երկրպագուս
10 Թիւն ըրաւ : Եւ Դաւիթ ըսաւ Սաւուղին . Ի՞նչու համար մարդոց խօսքը մտիկ կ'ընես , որ ըսէ կ'ըսեն թէ՝ Ահա Դաւիթ քեզի չարուս
11 Թիւն ընել կը ջանայ : Ահա այսօր քու աչքերդ կը տեսնեն , որ Տէրը այսօր քարայրին մէջը քեզ իմ ձեռքս մատնեց . ու ըսին որ քեզ մեռցընեմ . բայց ես քեզի ինայեցի , ու ըսի . Ես իմ ձեռքս իմ տիրոջս չեմ երկընցրներ . քանզի
12 անիկայ Տէրոջը օծեալն է : Ու տես հայր իմ՝ տես , քու վերարկուիդ ծայրը իմ ձեռքիս մէջն է . ու ես քու վերարկուիդ ծայրը կտրելով՝ քեզ չսպանեցի , ու գիտցիր ու տես , որ չիմ մէջս չարութիւն ու անօրէնութիւն չկայ , ու քեզի յանցանք մը չեմ ըրած . բայց դուն *զիս մեռցընելու կ'աշխատիս :
13 Խաւրիս՝ Տէրը դատաւոր ընէ իմ ու քու մէջդ , ու Տէրը իմ վրէժս քեզմէ առնէ . բայց իմ ձեռքս քու
14 վրադ չըլայ : Ինչպէս որ հին առակը կ'ըսէ . Անօրէններէն անօրէնութիւն կ'ելլէ . բայց իմ ձեռքս
15 քու վրադ չըլայ : Իսրայէլի թագաւորը որո՞ն ետևէն ելեր է , և դուն որո՞ն ետևէն կ'իյնաս . Ի մեռած շան մը ետևէ , ի մի
16 լուի մը ետևէ եղեր : Ուստի Տէրը դատաւոր ըլլայ , և իմ ու քու մէջդ դատաստան ընէ . և տեսնէ ու պաշտպանէ զիս , և քու ձեռքէդ ազատէ :
17 Ու երբոր Դաւիթ այս խօսքերը Սաւուղին խօսիլը լմընցուց , Սաւուղ ըսաւ . Ո՞րդեակ իմ Դաւիթ , ատիկայ քու ձայնդ է . և Սաւուղ
18 իր ձայնը վերցուց , ու լացաւ . Ու Դաւիթին ըսաւ . Դուն ինծմէ արդար ես . քանզի դուն ինծի բարիք հատուցիր , բայց ես քեզի չարիք հատուցիր ,
19 ու դուն այսօր քու ինծի ըրած աղկութիւնդ յայտնեցիր . որովհետև Տէրը զիս քու ձեռքդ ետ մատնեց , ու դուն զիս չսպա-
20 նեցիր : Վասն զի մէկ մարդ մը իր թշնամին գտնելու ըլլայ , զանիկայ թող կու տայ որ խաղաղութեամբ երթայ . ուստի այսօր քու ինծի ըրածիդ փոխարէն՝ Տէրը քեզի բա-
21 րիք հատուցանէ : Եւ հիմա *գիտեմ որ դուն անշուշտ թագաւոր պիտի ըլլաս . ու Իսրայէլին թագաւորութիւնը քու ձեռքիդ մէջը
22 պիտի հաստատուի : Ուրեմն հիմա Տէրոջմով ինծի երդում ըրէ՝ թէ ինծմէ ետքը իմ սերունդս պիտի չմոռցընես , ու իմ հօրս տունէն իմ անունս բնաջինջ պիտի չընես :
23 Եւ Դաւիթ Սաւուղին երդում ըրաւ : Ետքը Սաւուղ իր տունը գնաց . ու Դաւիթ իր մարդիկնե-
ր՝ ամուր տեղը ելաւ :

ԳԼ· ԻԵ

1 Սմուէլ կը մեռնի : 2 Դաւիթ Նաբալին մարդ կը խրկէ . 10 և Նաբալին ժանտութեանը համար սրդոլելով՝ միտք կ'ընէ որ զանիկայ րնաջինջ ընէ : 14 Աբիգեա ասս բանը իմանալով՝ 18 ընծայ մը կը պատրաստէ . 23 և իր խնամութեանմբը՝ 32 Դաւիթին սիրտը կը հանդարտեցընէ : 36 Նաբալն ալ ասս բաները լսելով կը սարսափի , ու ետքը կը մեռնի : 39 Դաւիթ իրեն կին կ'առնէ Աբիգեան ու Աքինոամը : 44 Մեղքոտ Փաղտիէլին կը տրուի :

1 Յե Սմուէլ մեռաւ . ու բոլոր Իսրայէլը ժողովուեցան , ու Հառնոր համար սուգ ըրին . ու զանիկայ Ռամայի մէջ իր տունը թաղեցին : Եւ Դաւիթ ելաւ Փառանի անապատը իջաւ :
2 Եւ Մաոնի մէջ մարդ մը կար , ու անոր գործը Կարմէղոսի մէջ էր . և անիկայ խիստ մեծ մարդ էր , ու երկը հազար ոչխար՝ և հազար այծ ունէր . ու իր ոչխարները ասրակուր ընելու համար Կարմէ-
3 ղոսի մէջ կը գտնուէր : Եւ ան մարդուն անունը Նաբալ էր , ու անոր կնկանը անունը Աբիգեա . և կնիկը խոհեմամիտ ու գեղեցկագեմ էր . բայց երիկը խստաբարոյ ու չարագործ էր . ու անիկայ Քաղէբեան էր :
4 Եւ Դաւիթ անապատին մէջ լսեց որ Նաբալ իր ոչխարները ձասրակուր կ'ընէ :
5 Ու Դաւիթ տասը մանչ իրկեց , և Դաւիթ մանչերուն ըսաւ . Կարմիղոս երթ , ու Նաբալն գացէք , և իմ անունովս ողջոյն հարցուցէք .
6 Ու այսպէս ըսէք . Ողջ կեցիր . բարի գիր և քու տանդ ու քու բոլոր ստացուածքիդ խաղաղութիւն
7 ըլլայ : Եւ հիմա լսեցի որ ոչխարներդ ատրակուր կ'ընես . քու հովիւներդ մեր հետն էին . անոնց վնաս մը չտուինք . ու անոնք Կարմիղոսի մէջ որչափ ատեն որ կեցան , Բանոնց մէկ բան չկորսուեցաւ :

Իրբ 1060 — Գլ · իբ · 3 ։ Բ Թես · ի · 20 ։ բ Օր · ւդ · 8 ։ գ Ծն · իա · 21 ։ Սաղ · ծի · 5 ։ դ Գլ · իգ · 24 ։ † Կ՚ստացուածքը Ի Ցես · ժե · 55 ։

‡ Կ՚ընաբարյ

Ե Ծն · լը · 13 ։ բ Թագ · ժգ · 23 ։

Ի Գլ · իգ · 22 ։

Ը Ծն · իա · 23 ։ Ղ բ Թագ · ի · 6 , 8 ։

Ա Գլ · իե · 1 ։

Ա Սաղ · ճխա · 6 ։ Առակ · ժշ · 28 ։ ժէ · 9 ։

Ժ Սաղ · ճխա · 6 ։ Առակ · ժշ · 28 ։ ժէ · 9 ։

Ի Սաղ · է · 3 ։ լե · 7 ։

* Եբր · իմ անձս կ'որսաս զանիկայ առնելու ։ Գլ · իշ · 20 ։

Լ Ծն • ժշ · 5 ։ Դատ · ժա · 27 ։ Գլ · իգ · 10 ։ Յոբ · ե · 8 ։

Ի Գլ · ժէ · 43 ։ բ Թագ · ի · 8 ։

Ժ Գլ · իշ · 20 ։

Ի Հմր 13 ։

Հբ Մն · իդ · 22 ։

Ն Սաղ · լե · 1 ։ խդ · 1 ։ ճժի · 154 ։ Միք · է · 9 ։

Ղ Գլ · իշ · 17 ։

Ճ Գլ · իշ · 21 ։

Ո Ծն · լը · 26 ։

Յ Մատ · ե · 44 ։

Ն Գլ · իշ · 23 ։

Շ Գլ · իդ · 12 ։ իշ · 8 ։

Գլ · իգ · 17 ։

Ծ Ծն · իա · 23 ։

Ղ բ Թագ · ի · 6 , 8 ։

Ղ Գլ · իդ · 1 ։

Ա Գլ · իե · 1 ։

Ա Ծն · իա · 21 ։ Սաղ · ծի · 5 ։

Ե Մն · ժբ · 18 ։ Սաղ · ճիբ · 7 ։ Ղուկ · ժ · 5 ։

Բ Հմր 15 , 21 ։

Ն · ք · ՂՓ · ԻԲԲ 1060

8 Քու մանչերուդ հարցուր , ու քեզի
թող ըսեն . ուստի ես մանչերը
քու աչքերուդ առջեւը չնորհք թող
գտնեն , քանզի ծ բարի օր եկանք .
չնորհք ըրէ , քու ծառաներուդ՝ ու
քու որդւոյդ Դաւիթին ձեռքէդ ե-
9 կածը տուր : Եւ Դաւիթին մանչերը գացին , ու ասս բոլոր խօսքե-
րուն համեմատ Դաւիթին անունովը
Նաբաղէն ըսուցեցին , ու կայնեցան :
10 Եւ Նաբաղ Դաւիթին ծառանե-
րուն պատասխան տուաւ , ու ըսաւ .
Դաւիթը ո՞վ է , ու Յեսսէի որդին
ո՞վ է . ասս օրերս իրենց տէրերուն
երեսէն փախչող ծառաները շատ-
11 ցեր են : Ես իմ հացս , ջուրս ու
ասրակաուբ ընդողներուս համար մոր-
թած անասուններս առնեմ՝ ու ա-
ն-՞ն մարդիկներուն տամ , որոնց
12 ուսկից ըլլալը չեմ գիտեր : Եւ
Դաւիթին մանչերը իրենց ճամբան
դարձան , ու գացին ասս բոլոր խօս-
13 քերը անոր պատմեցին : Եւ Դա-
ւիթ իր մարդիկներուն ըսաւ . Ամէն
մարդ իր սուրը մէջը կապէ . ու
ամէն մարդ իր սուրը մէջը կապեց .
և Դաւիթն ալ իր սուրը մէջը
կապեց . ու Դաւիթին ետեւէն չորս
հարիւրի չափ մարդ ելաւ , ու երկու
Ի Գէ · Լ · 24 · հարիւր մարդ հոն է կարասիներուն
քովը մնացին :
14 Եւ ծառաներուն մէկը Նաբաղին
կնկանը Աբիգեային իմացուց՝ ու
ըսաւ . Ահա Դաւիթ անապատէն
մարդիկներ խրկեց մեր տէրը օրհնե-
լու համար . իսկ անիկայ * խստաւ
* ԵԲԲ · ա-
նոնց վրայ
յարձակե-
ցաւ ։ ։
Բ Հմր 7 ։
15 խօսեցաւ անոնց հետ՝ : Բայց ան
մարդիկները մեզի հետ շատ աղէկ
էին , ու Բ մեզի վնաս մը չտուին . և
դաշտի մէջ որչափ ատեն որ անոնց
հետ պտրտեցանք , մեզմէ բան մը
Ի Եւ · Ժդ · 22 · 8ոբ · ա · 10 · 16 չկորսուեցաւ : Անոնք մեզի պա-
րիսպ էին ; Թէ գիշերը և Թէ ցորէ-
կը , որչափ ատեն որ անոնց քովը
17 ոչխարները կ'արածէինք : Ու հի-
մա գիտցիր ու տես՝ Թէ ինչ պիտի
ընես . քանզի մեր տիրոջը վրայ և
անոր բոլոր տանը վրայ չարիքը
Հգլ · ի · 7 · հասած է . որովհետև անիկայ այն-
պէս չար մարդ մըն է , որ անոր
Ն Բ Օր · Ժգ · 13 · Դատ · ԺԹ · 22 · Ղ Ծն · լՏ · 13 · Առակ · ԺԸ · 16 · իա · 14 · † ԵԲԲ · ե-
զած
հետ մարդ չկրնար խօսիլ :
18 Եւ Աբիգեա շուտով ՚ղերկու հա-
րիւր հաց , ու երկու տիկ գինի , և
հինգ †եփած ոչխար , ու հինգ գրիւ
բոհրած ցորէն , հարիւր ողկոյզ չա-
միչ , ու երկու հարիւր շարաց Թուզ
առաւ , ու զանոնք էշերու վրայ
19 դրաւ : Եւ իր ծառաներուն ը-
սաւ . Ձեզմէ առաջ անցէք . ահա ես
ձեր ետեւէն կու գամ . բայց իր եր-
20 կանը Նաբաղէն չիմացուց , Ու
երբոր կնիկը իշուն վրայ հնձած՝
լեռանը գոց տեղէն կ'իջնէր , ահա
Դաւիթ ու անոր մարդիկները անոր
առջեւը կ'իջնէին . ու անիկայ անոնց
21 հանդիպեցաւ : Եւ Դաւիթ ըսեր
էր . Ուրեմն անապատին մէջ ասս
մարդուն բոլոր ունեցած բաները
պարապ տեղը պահեր եմ . ու անոր
բոլոր ունեցածէն րան մը չկորսուե-
ցաւ . և անիկայ ինծի չարիք հա-
Թեան փոխարէն գէշութիւն ըրաւ :
22 Աստուած Դաւիթին Թշնամինե-
րուն այսպէս՝ ու ասկէ աւելի ընէ ,
Թէ որ Մինչև վաղը պտտու անոր
մարդիկներէն ‡մկ երիկ մարդ՝ մը
ողջ Թողում :
Ղ Սպդ · ՃԹ · 5 · Առակ · ԺԷ · 13 ·
ՃՀոռ · Թ · 17 · Գէ · ք · 17 · ի · 13 · 16 ·
Ն Շմր 34 ·
‡ ԵԲԲ · պա-
տի վասյ
մզող · գ
Թագ · ԺԴ ·
10 · իա · 21 ·
դԹագ · Թ ·
8 ·
23 Ու Աբիգեա տեսածին
պէս՝ շուտով էշուն վրայէն իջաւ ,
և Դաւիթին առջեւը երեսի վրայ
իյնալով , մինչև գետինը երկրը-
24 պագութիւն ըրաւ : Ու անոր ոտ-
քը ինկաւ ու ըսաւ . Ո՛վ տէր իմ ,
յանցանքը իմ վրաս ըլլայ · բայց
հրաման տուր՝ որ քու աղախինդ
քու առջեւդ խօսի , և քու աղախ-
25 նդդ խօսքերը մտիկ ըրէ : Կ'աղա-
չեմ՝ որ իմ տէրս ասս չար մար-
դուն՝ Նաբաղին համար իր սրտին
մէջ Բ-ն Ճ չդնէ . քանզի իր ա-
նուանը պէս՝ ինքն ալ անանկ է .
անոր անունը ‖ Նաբաղ է , ու անդղ-
գամութիւնը իր հետն է . բայց ես
քու աղախինդ իմ տիրոջս իրկած
‖ Յ՝ անզգ-
գամ ։
26 մանչերը չտեսայ : Եւ հիմա , ով
տէր իմ , ՚Տէրը կենդանի է , ու
քու հոգիդ ալ կենդանի է , որ Տէ-
րը Նրեզ չԹողուց որ արիւն մտնես ,
ու Ձքու վրեժդ քու ձեռքովդ առ-
նես . և հիմա Նքու Թշնամիներդ
ու իմ տիրոջս գէշութիւն ուզողդ-
27 ները՝ Նաբաղին պէս ըլլան : Ու
հիմա ՚ասս ընծան որ քու աղա-
խինդ իմ տիրոջս բերաւ , Թող իմ
տիրոջս ՚ետեւէն երդդ մանչերուն
28 տրուի , կ'աղաչեմ , քու աղա-
խինդ յանցանքը Նորէ . քանզի
Տէրը իմ տիրոջս անպատճառ
հաստատ տուն պիտի չընէ . որով-
հետև իմ տէրս ՚Տէրոջը պատե-
րազմները պատրաստէ , ու քու
օրերուդ մէջը Ձքու վրադ չարուս-
29 թիւն մը չգտնուեցաւ , Բայց Թէ-
և քեզ հալածելու ՚ու քու հոգիդ
փնտռելու համար մկ մարդ մը
ոտք ելած է , իմ տիրոջս հոգին՝
քու Տէր Աստուածդյդ առջեւը՝ կե-
նաց Ծրարին մէջը Ծրարած պիտի
րլլայ . բայց անիկայ քու Թշնամի-
ներուդ հոգիները՝ պարսատիկի մէ-
ջէ Նէ-ն ժ-րէ դէ- ՚պիտի նետէ ,
30 Ու երբոր Տէրը բոլոր բեզի համար
ըսած աղէկութիւնները իմ տիրոջս
ընէ , ու քեզ Իսրայէլի վրայ Թա-
31 գաւոր դնէ , Ասիկայ քեզի գայ-
Թակղութիւն մը ու իմ տիրոջս
Ն · ք · ՂՓ
ԻԲԲ 1060
ՃՍդ · ՃԹ · 5 · Առակ · ԺԷ · 13 ·
ՃՀոռ · Թ · 17 · Գէ · ք · 17 · ի · 13 · 16 ·
Ն Շմր 34 ·
‡ ԵԲԲ · պա-
տի վասյ
մզող · գ
Թագ · ԺԴ ·
10 · իա · 21 ·
դԹագ · Թ ·
8 ·
Ի Գէ · Լ · 24 ·
* ԵԲԲ · ա-
նոնց վրայ
յարձակե-
ցաւ ։ ։
Բ Հմր 7 ·
Ի Եւ · Ժդ · 22 · 8ոբ · ա · 10 · 16
Հգլ · ի · 7 ·
Ն Բ Օր · Ժգ · 13 · Դատ · ԺԹ · 22 ·
Ղ Ծն · լՏ · 13 · Առակ · ԺԷ · 16 · իա · 14 ·
† ԵԲԲ · ե-
զած
Ճ Ծն · լԹ · 13 · 20 ·
‖ Յ՝ անզգ-
գամ ։
ՠ Գթագ · Բ · 2 ·
Ն Ծն · ի · 6 · Շմր 33 ·
Ղ Հռվ · ԺԲ · 19 ·
Ն Բ Թագ · ԺԲ · 32 ·
Ճ Ծն · լԳ · 11 · Գէ · լ · 26 · դԹագ · Ե · 15 ·
Շմր 42 ·
Դատ · Գ · 10 ·
Վ Բ Թագ · Ե · 11 , 27 · դԹագ · Թ · 5 · ՠ Մն · ԺԷ · 10 , 23 ·
Ռ Գէ · ԺԲ · 17 ·
Բ Գէ · իԲ · 12 ·
Յ Երեմ · Ժ · 18 ·

Ն · ք · ՁՁ · Խր 1060

սրտին խիղճ մը չըլլայ , թէ առանց պատճառի արիւն թափեցիր , կամ թէ իմ տէրս իր վրէժը ինքը առաւ . ու երբոր Տէրը իմ տիրոջս բարութիւն ընէ , քու աղախինդ միտդ ըներս ։

38 Եւ Դաւիթ ըսաւ Աբիդեային . — Օրշնեալ ըլլայ Իսրայէլին Տէր Աստուածը , որ այսօր քեզ իրկեց զիս դիմաւորելու . ու քու խոհեմութիւնդ օրշնեալ ըլլայ , և դուն ալ օրշնեալ ըլլաս , որ ես այսօր զիս արգիլեցիր սր արիւն չմտնեմ , ու իմ

34 վրէժս ձեռքովս չառնեմ ։ Բայց Իսրայէլին Տէր Աստուածը՝ որ զիս արգիլեց քեզի չարութիւն ընելէն , կենդանի է , թէ որ դուն չուտով չգայիր՝ ու առջեւս չելլէիր , մինչև վաղը առտու Նաբաղին մկ էրկ

35 մարդը չէր մնար ։ Եւ Դաւիթ առնոր բերած ընծաները ձեռքէն առաւ , ու անոր ըսաւ . Խաղաղութեամբ տունդ գնա . ահա խօսքդ մտիկ րրի , ու քու — Խնդիրքդ ընդունելի ։

36 Եւ Աբիգեա Նաբաղին գնաց ու ահա անիկայ իր տանը մէջ թագաւորական կուսունքի պէս կուսունք կ՚ընէր . և Նաբաղին սիրտը ղուարթացեր էր , ու անիկայ շատ գինովցեր էր . ուստի կնիկր մինչև առաւօտեան լոյսը՝ պզտիկ կամ մեծ

37 բան մը չպատմեց անոր ։ Եւ առաւօտուն երբոր Նաբաղ գինիէն զգաստացաւ , ան ատենը անոր կնիկը ասր բաները անոր պատմեց ու անոր սիրտը իր ներսի դին մնաւ ,

38 ու քարի պէս եղաւ ։ Եւ տասը օրի չափ անցնելէն ետև , Տէրը զարկաւ Նաբաղը , որ մեռաւ ։

39 Ու Դաւիթ Նաբաղին մեռնիլը լսելով՝ ըսաւ Օրշնեալ է Տէրը , որ Նաբաղին ձեռքին խօշտանգիս դատեց , ու իր ծառան չարութենէ ետ պահեց · և Տէրը Նաբաղին չարութիւնը անոր գլուխը դարձուց ։ Ու Դաւիթ մարդ իրկեց և Աբիգեային խօսացաւ , որ զանիկայ

40 իրեն կնիկ առնէ ։ Ու Դաւիթին ծառաները Կարմղոս գացին Աբիգեային , ու անոր հետ խօսացան ու ըսին . Դաւիթ մեզ քեզի իրկեց , զի

41 որ քեզ իրեն կնիկ առնէ ։ Եւ ան նիկայ ելաւ , ու երեսր վրայ մինչև գետինը երկրպագութիւն րրաւ ու ըսաւ Ահա էրու աղախինդ իմ տիրոջս ծառաներուն ոտքերը լուալու համար ստրկութիւն թող ընէ ։

42 Եւ Աբիգեա չուտով ոտր ելաւ ու իրեն ապասաւորութիւն րնող հինգ աղջիկներու հետ էշը հեծաւ , ու Դաւիթին պատգամաւորներուն հետևէն գնաց , և անոր կնիկը եղաւ ։

43 Ո— Դաւիթ Յզեդրայէլէն ալ Աքինոամը առաւ . և ու ասոնց երկուքն ալ անոր կնիկները եղան ։

44 Բայց Սաւուղ իր Մեղբող աղջիկը՝ որ Դաւիթին կնիկն էր՝ Կղղուղիմացի Լայիսի որդւոյն Փալտիէլին տուաւ ։

ԳԼ · Ի Զ

1 Սաւուղ Զիփացիներէն լուր առնելով՝ Եբեղա կու գայ Դաւիթին դէմ ։ 4 Դաւիթ կառքերուն տեղը երթալով՝ կարգիլէ Աբեսան որ Սաւուղը լմնցրնէ , բայց Սաւուղին նիզակը ու կուժը կ՚առնէ ։ 13 Դաւիթ Աբեն. Նեը կը յանդիմանէ , 18 ու Սաւուղը կը յորդորէ ։ 21 Սաւուղ իր յանցանքը կը խոստովանի ։

1 Եւ Զիփացիք Գաբաա գացին Սաւուղին , ու ըսին . — Ահա Դաւիթ Եսիմոնի դիմացը Եքեղայի բլուրին վրայ պահուեր է ։ Ու Սաւուղ ելաւ Զիփի անապատը իջաւ Իսրայէլին իրեք հազար ընտրուած մարդիկներովը . որ Զիփի անապատին մէջ Դաւիթը փնտռէ ։

3 Եւ Սաւուղ Եսիմոնի դիմացը Եքեղայի բլուրը՝ ճամրուն վրայ բանակեցաւ ։ Դաւիթն ալ անապատին մէջը նստեր էր . ու երբոր տեսաւ որ Սաւուղ իր ետևէն անա-

4 պատը կու գայ Դաւիթ լրտեսներ իրկեց , ու Սաւուղին ստոյգ գալը իմացաւ ։

5 Ու Դաւիթ ոտքի ելաւ և Սաւուղին բանակ դրած տեղը եկաւ . ու Դաւիթ՝ Սաւուղին ու անոր զօրավարին Ներեան Աբեննէրին պառկած տեղը տեսաւ . բայց Սաւուղ կառքերուն մէջտեղը պառկեր էր , ու ժողովուրդը անոր

6 բոլորտիքը բանակր էին ։ Եւ Դաւիթ պատասխան տուաւ ու Ֆետաի Ախիմելեքին ու Յովարին եղբօրը Ցարու հետ Բրեսային ըսաւ . Ո՞վ է ինձի հետ Սաւուղին քովը բանակը կ՚իջնէ ։ Ու Աբեսա րսաւ Ես քեզի հետ կ՚իջնեմ ։

7 Եւ Դաւիթ Աբեսային հետ գիշեր . քով ժողովուրդին մէջը մտաւ . և ահա Սաւուղ կառքերուն մէջտեղը պառկեր կը րնանար անոր նիզակը կը գլխուն քովը գետինը ցցուած էր , և Աբեննէրը ու ժողովուրդը անոր բոլորտիքը պառկեր էին ։

8 Եւ Աբեսա Դաւիթին րսաւ Աստուած այսօր քու թշնամիդ Էրուձեռքդ մատնեց ու հիմա թող տուր որ նիզակով մկ անդամին գետինը ցցեմ զանիկայ , ու չկրկնէ ։

9 Նեմ հարուածէ ։ Բայց Դաւիթ Աբեսային րսաւ . Ջանիկայ մի մեռցներ . Էրանդի Տէրոջ օծեալին ով կրնայ ձեռք երկնցրնել ու անմեղ ըլլայ ։ Եւ Դաւիթ րսաւ

Ն · ք · ՁՁ · Խր 1060

Ր Ցես . ԺԸ . 56 ։

Ժ Գլ · ԻԵ · 3 ։ Ա · 5 ։

Ե բրեայ . Գ . 14 ։

Ա Ես . Ժ . 80 ։ Ե բրեայ . Գ . 15 ։

— Գլ · Իգ 19 ։ Սաղ ՃԳ . ին վերնագիրը ։

Բ Գլ · ԺԹ 50 · ԺԵ 55 ։

Գ Գլ · ԺԵ · 20 ։

Դ Սմ Ր . 16 ։

Ե Դատ . Ե . 10 , 11 ։

Զ Գլ · ԻԴ 19 ։

Է Եբէ · զարնեմ

Ը Գլ · Իդ · 7 ։ Ե բրեայ · Գ · ա · 16 ։

Ն · ք · զՓ · Իբր 1060

ղաքը դառնաս , ու Աբիսողոմին ըսես որ , Ո վ Թագաւոր՝ ¶ես քու ծառադ պիտի ըլլամ . առաջուց

ն · ք · ղճ · 1023

ըստ Թագ . Թ . 13 ։ Ժղ . 3 ։ 5 ։
Ը Ծն . ի . 5 ։
ծ Սաղ . խա . 9 ։ ծե . 12 ։ 13 ։ 14 ։
ի Ցես . ժե . 51 ։
Լ Սաղ . պ . 1 ։
ի Հմ 6 ։ Դատ . Թ . 3 ։
*Եբր . հաճեւն
ծ Գլ . ժԹ . 9 ։ Սաղ . պ . ին վերնագիրը ։
§ Սաղ . գ . ին վերնագիրը ։
†Եբր . ոտքը
Հ Գլ . ժ . 21 ։ 22 ։
‡Եբր . տուն
ՅԳլ . Ը . 18 ։
ՂԳլ . ժը . 2 ։
ճ ա Թագ . իգ . 13 ։
ի Հռութ . ա . 16 ։ 17 ։ Ռուտ . ժե . 17 ։ ժը . 24 ։

Ն·Ք·ՂՓ· 1023

քոզ հօրդ ծառան էի , ու հիմա քոզ ծառադ եմ . ան ատենը Աբիաթոփէլին խորհուրդը ինձի համար

35 կրնաս ցրուել ։ Եւ ահա Սադովկ ու Աբիաթար քահանաները հոն քեզի հետ են . ու թագաւորին տունէն ինչ որ լսես , Սադովկ ու Աբիաթար քահանաներուն պատմես ։

36 Ահա հոն Ք անոնց երկու որդիները՝ Սադովկին Աքիմաասը ու Աբիաթարին Յովնաթանը՝ իրենց հետն են . ու ամէն լսած խօսքերնիդ անոնց ձեռքովը ինձի իմացընէք ։

37 Եւ Դաւիթին բարեկամը Քուսի՝ քաղաքը մտաւ . ու Աբիսողոմն եւ Երուսաղէմ մտաւ ։

ԳԼ · ԺԱ

1 Սիբա ընծաներով ու խորամանկութիւն բանեցընելով՝ իր տիրոջը ստացուածքին տէր կ'ելլայ ։ 5 Սեմէի՝ Բաւուրիմի քովը Դաւիթը կ'անիծէ ։ 9 Դաւիթ համբերութիւնով վրէժխնդիր չըլլար , ու ուրիշներն ալ վրէժխնդրութենէ կ'արգիլէ ։ 15 Քուսի՝ Աբիսողոմին խորհրդակից կ'ելլայ ։ 20 Աքիտոփէլին խորհուրդը ։

1 Եւ երբոր Դաւիթ լեռանը գլուխէն քիչ մը անցեր էր , ահա Մեմփիբոսթեէին ծառան Սիբա զանիկայ դիմաւորեց , հեծած երկու էշ եւ երկու հարիւր հաց , հարիւր ողկոյզ չամիչ , ու հարիւր տամանային պտուղ , ու տիկ մը գինի բեռ-

2 նաւորեր էր ։ Եւ թագաւորը Սիբային ըսաւ . Ասոնք ինչ պիտի ընես ։ Ու Սիբան ըսաւ . Էշերը թագաւորին տանը համար է , որ հեծնի վրայ հեծնին . և հացը ու ամառնային պտուղները մանկտիրուն համար է , որ ուտեն . ու գինին՝ ինչ անապատին մէջը նուաղածներուն

3 համար է , որ խմեն ։ Եւ թագաւորը ըսաւ . Հապա քու տիրոջդ որդին ո՞ւր է ։ Ու Սիբա՝ թագաւորին ըսաւ . Ահա անկայ Երուսաղէմ կը նստի . քանզի ըսաւ թէ՝ Ա՛յսօր Իսրայէլի տունը իմ հօրս թագաւորութիւնը ինծի պի-

4 տի դարձընէ ։ Ետքն ատենը թագաւորը Սիբային ըսաւ . Ահա Մեմփիբոսթեէին ամէն ունեցածը քեզի ըլլայ ։ Ու Սիբա ըսաւ . Ո՛վ տէր իմ թագաւոր՝ խոնարհակալ եմ՝ . թող քու առջեւդ շնորհք գտնեմ ։

5 Եւ Դաւիթ թագաւորը մինչեւ Բաւուրիմը եկաւ . և ահա անկէ՝ Սաւուղին տանը ազգատոհմին Գերայի որդին Սեմէի անունով մարդ մը ելաւ , ու ելլելով կ'անիծ-

6 ձեր . Եւ Դաւիթին՝ ու Դաւիթի թագաւորին բոլոր ծառաներուն քար կը նետեր . ու բոլոր ժողովուրդը , ու բոլոր զօրաւոր մարդիկները ի՛ւրենց աջ ու ձախ

7 կողմերը քարկոծութեան ենթարկեցին ։ Եւ Սեմէի անոր անէծք տուած ատենը՝ այսպէս կ'ըսէր . Ելի՛ր , ելի՛ր ով արիւնահեղ մարդ , ով անօրէն

8 մարդ . Տէրը ԷՍաուղին տանը բոլոր արիւնը ի՛րոյ վրադ դարձուց , որ անոր տեղը թագաւոր եղար . ու Տէրը թագաւորութիւնը քու որդւոյդ Աբիսողոմին ձեռքը տուաւ . և ահա քու չարիքդ քեզի հասաւ . քանզի դուն արիւնահեղ

9 մարդ մըն ես ։ Եւ Ջարուհեայի որդին Աբեսսան՝ թագաւորին ըսաւ . Ա՛ս մեռած շունը ինչո՞ւ համար իմ տիրոջս թագաւորին անէծք տայ . թող տուր անցնիմ , ու

10 անոր գլուխը առնեմ ։ Բայց թագաւորը ըսաւ . Ո՛վ Ջարուհեայի որդիք , Նդուք ինծի հետ ի՞նչ բան ունիք . թող տուէք որ այսպէս անէծք տայ . քանզի Տէրը ըսաւ անոր . Դաւիթը անիծէ . ու ո՞վ կրնայ ըսել թէ , Ինչո՞ւ համար

11 այդպէս ըրիր ։ Եւ Դաւիթ՝ Աբեսսային ու իր բոլոր ծառաներուն ըսաւ . Ահա իմ երանգէս ելլող հորդիս իմ հոգիս կը փրնտռէ , ուրեմն այս Բենիամինեանը . թող տուէք զանիկայ , որ անիծէ .

12 քանզի Տէրը ըսաւ անոր ։ Գուցէ Տէրը իմ նեղութեանս նայի . ու ասօրուան անոր տուած անէծքին տեղը՝ Տէրը ինծի բարիք հատուց-

13 ցանէ ։ Եւ Դաւիթ իր մարդիկներուն հետ ճամբան կ'երթար , ու Սեմէի դիմացէն լեռանը քովէն կ'երթար , և անէծք տալով՝ քարեր նետելով՝ ու հող ցանելով կ'եր-

14 թար ։ Եւ թագաւորը ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը յոգնած եկան , ու հոն հանգչեցան ։

15 Եւ Աբիսողոմ ու բոլոր ժողովուրդը՝ Իսրայէլի մարդիկը՝ Երուսաղէմ մտան . ու Աքիտոփէլ ա-

16 նոր հետն էր ։ Ու երբոր Դաւիթին բարեկամը Արաբացի Քուսին Աբիսողոմին քովը գնաց , Քուսի ըսաւ Աբիսողոմին . Կեցցէ արքայ , կեցցէ արքայ ։ Եւ Աբիսողոմ՝ Քուսիին ըսաւ . Բարեկամիդ վրայ ունեցած սէրդ ատիկա՞յ է . ինչո՞ւ

18 բարեկամիդ հետ չգացիր ։ Եւ Քուսի ըսաւ Աբիսողոմին . Չէ . Հապա Տէրոջը ու աս ժողովուրդին և Իսրայէլի բոլոր մարդիկներուն ընտրածը ո՛վ որ ըլլայ , ես անոր պիտի ըլլամ , ու անոր հետ պիտի նըս-

19 տիմ ։ Մէյմըն ալ՝ ես որուն ծառայութիւնն պիտի ընեմ . անոր որդւոյն չէ՞ . ինչպէս որ քու հօրդ առջեւը ծառայեցի , անանկ ալ քու առջեւդ պիտի ըլլամ ։

Ն·Ք·ՂՓ· 1023

ԼԲ Օր·ԺԳ· 13 ։

Ը Տ՛ն գլ· ա· 16 ։ գ· 28 ։ 29 ։ դ· 11 ։ 12 ։

Ի Դատ· թ· 24 · 56 · 67 ։ գ Թագ· բ· 32 ։ 33 ։

ք ա Թագ· իգ · 15 ։ Գլ· Թ · 8 ։

ի Նե · իբ · 28 ։

Լ Գլ· ԺԹ· 22 ։ ապ Յօ· բ · 23 ։

ի Տ՛ն գ Թագ · ԺԸ· 25 ։ Ոդե · գ · 33 ։

ի Հով · Թ · 20 ։

ի Ծն · ԺԸ · 4 ։

Հ Գլ· Ժբ· 11 ։

ի Ծն · իԹ · 32 ։ աԹագ· ա· 11 ։ Սաղ· իե · 18 ։

Ղ Հով · բ · 28 ։

ճ Գլ · ԺԵ · 37 ։

ի Գլ · ԺԵ · 37 ։

յ Գլ · ԺԹ ։ 25 ։ Առակ· ԺԵ · 17 ։

Ն Գլ · ԺԵ · 34 ։

Ն·Ք·ՂՓ· 1023

– Գլ · ԺԵ · 15 ։ 16 ։

Բ Հմր 27 ։

ի Գլ · Ժգ · 16 ։ ա Սմ · իե · 33 ։

Ր Գլ · Ժգ · 15 ։

* կ՛ի՛ կը մնաներ ։

– Գլ · ԺԵ · 30 · 32 ։

Բ Գլ·Թ ։ 2 ։

† կ՛ուշադրեց ըսր Թագ ։

‡ ՆԲր · ի՞նչ են քեզի ։

ֆ Գլ · ԺԵ · 23 ։ ԺԵ · 29 ։

Ր Գլ · ԺԹ 27 ։

Ի Առակ · ԺԸ · 13 ։

ՆԲր · երկրպագութիւն կ'ընէմ .

Ղ Գլ · ԺԹ · 16 · գ Թագ · Ր · Տ ։ 44 ։

Ն·ք·ԶԴ· 1023

20 Եւ Աբիսողոմ ըսաւ Աքիտոփելին. Խորհուրդ ըրէք՝ թէ ինչ ը-
21 նելու ենք։ Ու Աքիտոփել ըսաւ Աբիսողոմին. Քու հօրդ հարճե-
րուն մէջէն, որոնք անիկայ տանը պահպանութիւնը ընելու համար թողուց. ու երբոր բոլոր Իսրայէլը լսէ որ դուն քու հօրդ ատելի ե-
ղար, անատենը բոլոր քեզի հետ եղողներուն ձեռքերը պիտի ու-
22 ժովնայ։ Ուստի տանիքին վրայ Աբիսողոմին համար վրան կանգնե-
ցին. և Աբիսողոմ բոլոր Իսրա-
յէլին աչքերուն առջեւը իր հօրը
23 հարճերուն մտաւ։ Ու ան օրերը Աքիտոփելին տուած խորհուրդը այնպէս էր, ինչպէս որ մէկը Աստուծոյ խօսքը հարցնէր. Աքի-
տոփելին ամէն խորհուրդը՝ թէ՛ Դաւիթին թող և թէ Աբիսողո-
մին քովը այնպէս էր։

Ն·ք·ԶԴ· 1023

ԳԼ·ԾԲ

1 Քուրին յաջողակութեամբը Աքիտոփելին խորհուրդը կը մերժուի՝ Աստուծոյ նախա-
ասմանութեանը համեմատ։ 15 Դաւիթին գաղտուկ կերպով լուր կը խրկուի։ 23 Աքի-
տոփել ինքզինքը կը կախէ։ 25 Ամասայի զօ-
րագլուխ կ'ըլլայ։ 27 Մանայիմի մէջ Դաւի-
թին պաշար կը բերեն։

1 Ետ Աքիտոփել ըսաւ Աբիսողոմին. Հիմա տասներկու հազար մարդ ընտրեմ ու ելլեմ, և աս գիշեր
2 Դաւիթին հետեւէն իյնամ։ Ու ա-
նիկայ քանի. որ յոգնած ու ձեռ-
քերը թուլցած է, անոր վրայ հաս-
նիմ, ու վախցընեմ զանիկայ, որ անոր հետ եղող ժողովուրդը փախ-
չի. ու ես մինակ թագաւորը զար-
3 նեմ։ Ամբողջ բոլոր ժողովուր-
դը քեզի պիտի դարձընեմ. քան-
զի քու փնտռած մարդդ ՅԱՒԷ-
ՆԵԼՈՎ՝ ամէնը ձեռքդ անցած կը
4 ըլլայ. ու բոլոր ժողովուրդը խաղաղութեան մէջ կ'ըլլայ։ Եւ աս խօսքը Աբիսողոմին աչքին, ու Իսրայէլի բոլոր ծերերուն աչքին
5 * հաճոյ երեցաւ։ Եւ Աբիսողոմ ըսաւ. Հիմա Աքաաացի Քուսին ալ կանչեցէք, †որ անոր խորհուրդին ալ լսենք։
6 Ու երբոր Քուսի Աբիսողոմին քովը եկաւ, Աբիսողոմ անոր հետ խօսեցաւ ու ըսաւ. Աքիտոփելը ասանկ բան մը ըսաւ. արդեօք անոր խօս-
քը †ընե՞նք՝ թէ չէ, դուն խօսէ՛։
7 Եւ Քուսի՝ Աբիսողոմին ըսաւ. Աքիտոփելին տուած խորհուրդը աս
8 անգամ աղեկ չէ։ Եւ Քուսի ըսաւ. Դուն գիտես որ քու հայրդ ու անոր մարդիկները զօրաւոր են. ու ե՛սբրտերնին այրած է, գաղտի մէջ †ձա-
գերը կորսնցուցած արջուս պէս. և քու հայրդ պատերազմող մարդ

մըն է, ու գիշերը ժողովուրդին հետ
9 չ'ննար։ Եւ հիմա անիկայ կամ փոսի մը մէջ՝ կամ ուրիշ տեղ մը պահուռած է. ու թէ որ առջի անգամ սասնցմէ իյնալու ըլլան, ամէն լսողը պիտի ըսէ թէ՝ Աբիսողոմին ետեւէն գացող ժողովուրդը կոտ-
10 րուեր է. Ան ատենը առիւծի պէս սիրտ ունեցող զօրաւոր մարդը ան-
գամ բոլորովին †պիտի թուլնայ. քանզի բոլոր Իսրայէլը դիտէ որ քու հայրդ զօրաւոր է, ու անոր հետ եղողները ուժի տէր մարդիկներ են։
11 Ան պատճառաւ ես քեզի խորհուրդ կու տամ՝ որ բոլոր Իսրայէլը Դա-
նէն մինչեւ Բերսաբէէ՝ †ծովի ջերմերը եղող աւազին պէս բազմութեամբ քու գլուխ ժողովուին, դուն ալ ան-
ձամբ անոնց մէջը գոռբերուղի եր-
12 թաս։ Եւ այսպէս անոր վրայ երթանք՝ անիկայ ուր տեղ որ գըտնուի, ու անոր վրայ հասնինք՝ ինչպէս որ ցօղը գետին վրայ կ'իջնէ. և անկէ ու անոր հետ եղող բոլոր
13 մարդիկներէն մէկը ողջ չմնայ։ Եւ թէ որ քաղաքի մը մէջ դոցուի, ան քաղաքը՝ բոլոր Իսրայէլը չուաններ տանի. ու զանիկայ մինչեւ հեղեղա-
տը քաշենք. այնպես որ՝ հոն մէկ
14 պղտիկ քար մը անգամ չմնայ։ Եւ Աբիսողոմ ու բոլոր Իսրայէլի մարդիկները ըսին Արաքացի Քուսիին խորհուրդը Աքիտոփելին խորհուր-
դէն աղեկ է։ Քանզի †Տէրը Աքի-
տոփելին աղէկ խորհուրդը չրուե-
լու հրաման տուեր էր որ Տէրը Աբիսողոմին վրայ չարիք հասցընէ։
15 Եւ Քուսի՝ Սադովկ ու Աբիա-
թար քահանաներուն ըսաւ. Աքի-
տոփելը Աբիսողոմին ու Իսրայէ-
լի ծերերուն այս ինչ խորհուրդը տուաւ. ես ալ այս ինչ խորհուր-
16 դը տուի. Հիմա չուտով †ղրկեցէք, ու Դաւիթին իմացուցէք՝ ու ըսէք Փիլերը †անապատին դաշտերուն մէջ մի կենար հապա չուտով անցիր. չըլլայ որ թագաւորը ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը ‖յանկարծ զար-
17 նուին։ Եւ Յովնաթան ու Ախիմաաս †Ռոգելի աղբիւրին քովը կայներ էին. քանզի չէին կրնար քաղաքը մտնել ու երեւնալ և ա-
ղախինը գնաց ու անոնց պատմեց և անոնք դարին ու Դաւիթի թա-
18 զաւորին իմացուցին։ Եւ մանչ մը տեսաւ զանոնք, ու Աբիսողոմին պատմեց. բայց անոնք երկուքը ալ կուտով չուտով գացին, ու †Բահուրիմը մէկ մարդու մը տունը մտան. և անիկայ իր գոմրթին մէջ իջան ջրհոր մը ունէր, ու անոնք հոն
19 իջան։ Եւ †կնիկը մէկ ծածկոց մը

Ն·ք·ԶԴ· 1023

ԼԳ·ԻԵ· ԺԹ· 16։ Ի·3։

ՍԾՆ·ԼԴ· 30։ ՍԹ·ԱՊ· ԺԳ·4։

ԼԳԼ·Բ·7։ ՋԱՔ·Ը· 13։

ՊԳԼ·ԺԲ· 11։ 12։

Լ ԳԼ·ԺԵ· 12։

ԼԳ·ԺԵ

ԼԳ·ԺԵ· 31·34։

ԲԳԼ·ԺԵ· 35։

ՍԳԼ·ԺԵ· 28։

ՈԵՓԲ·ԿԸ· ՝ՈՒՆ։

ՏԳԼ·ԺԵ· 27·36։ ՀՅՕՆ·ԺԵ· 7·ԺԸ·16։

ԲԳԼ·5։

ՅՏՅՕ ՅՕՆ· Բ·6։

Ն · ք · գ · 1023

առաւ , ըրհորին բերնին վրայ փուեց . ու անոր վրայ ծաւար տարածեց ,

20 ու բանը չհասկըցուեցաւ . Եւ Ա-
բիսողոմին ծառաները ան կնկանը
տունը մտան , ու ըսին . Ա.քիմաա-
սը ու Ցոնաթանը ո՞ր են : Եւ
ի նիկը անոնց ըսաւ . Ջուրին
անդին կողմը անցան : Ու անոնք
փնտռեցին ու չգտան , ու Երուսա-
21 ղէմ գարձան : Եւ անոնց երթա-
լէն ետքը՝ ըրհորէն ելան , ու գացին
Դաւիթ Թագաւորին իմացուցին .
և Դաւիթին ըսին . Ելէք , ու
շուտով ջուրէն անցէք . քանզի
Աքիտոփէլ ձեզի համար ասանկ
22 խորհուրդ մը ըրաւ : Եւ Դաւիթ
ու անոր հետ եղող բոլոր ժողո-
վուրդը ելան՝ ու Յորդանանէն ան-
ցան . ու մինչև առաւօտեան լոյսը
Յորդանանէն չանցած մարդ մը չը-
մնաց :

23 Եւ Աքիտոփէլ երբոր տեսաւ որ
իր խորհուրդը չկատարուեցաւ , իր
էշուն համետը դրաւ , ու ելաւ՝ իր
քաղաքը ու իր տունը գնաց . և
ընդ տանը համար պատուէր տուաւ,
ու ինքզինքը խեղդեց ու մեռաւ , և
իր հօրը գերեզմանը թաղուեցաւ :

24 Եւ Դաւիթ Մանայիմը հասաւ :
Աբիսողոմ ալ բոլոր Իսրայէլի մար-
դիկներուն հետ Յորդանանէն ան-
25 ցաւ : Եւ Աբիսողոմ՝ Ցովաբին
տեղը՝ Ամեսային դրաւ զօրքին վը-
րայ . ու Ամեսային՝ Ցեթեր անու-
նով Իսրայէլացիի մը որդի էր , որ
անիկայ Ցովաբին մօրը Շարուհեա-
յին քոյրը՝ Նաասին աղջիկը Աբի-
26 գեան առեր էր : Եւ Իսրայէլը Ա-
բիսողոմին հետ՝ Գաղաադու երկրին
մէջ բանակեցաւ :

27 Ու երբոր Դաւիթ Մանայիմը
եկաւ . Ամմոնի որդւոցը Ռաբբայէն
Նաասի որդին Սոբին , ու Լաւա-
բարէն Ամիելի որդին Մաքիրը , և
Ռոգելիմէն Գաղաադացի Բէրզե-
28 լին՝ Անկողիններ , կոնքեր , հողէ
ամաններ , ցորեն , գարի , ալիւր ,
ու բոհրած ցորեն , ու բակլայ , և
29 ոսպ , ու բոհրած մեղր , Ու մեղր ,
և կոգի , ու ոչխարներ , և կովու
պանիր , Դաւիթին ու անոր հետ
եղող ժողովուրդին բերին որ ու-
տեն . քանզի բսին . Ժողովուրդը
անապատին մէջ անօթի՝ յոդնած
ու ծարաւած է :

Գ Լ · Ժ Ը

1 Դաւիթ՝ պատերազմի գացող զօրքերը այ-
ցելելով՝ անոնց պատուէր կու տայ իր որ
դւոյն Աբիսողոմին համար : 6 Իսրայէլացիք
Եփրեմի անտառին մէջ յաղթուին կը զարնուին :
9 Աբիսողոմ բևեկնիէ մը կախուելով Ցովա-
բէն կը մեռցուի . ու փոսի մը մէջ կո ձգուի :
18 Աբիսողոմին արձանը : 19 Աբիմաաս և

Ն · ք · գ · 1023

Քուսի՝ Դաւիթին լուր կը բերէն : 33 Դաւիթ
Աբիսողոմին համար սուգ կ'ընէ :

1 Ու Դաւիթ իր հետը եղող զօրքը
համրեց , ու անոնց վրայ հա-
զարապետներ ու հարիւրապետներ
2 դրաւ : Եւ Դաւիթ զօրքին եր-
րորդ մասը՝ Ցովաբին ձեռքը , ու
երրորդ մասը՝ Ցովաբին եղբօրը
Շարուհեան Աբեսսային ձեռքը ,
ու երրորդ մասը՝ Գեթացի Եթ-
թիին ձեռքը . յանձնեց . և Թագա-
ւորը ժողովուրդին ըսաւ . Անպատ-
ճառ ես ալ ձեզի հետ պիտի ելլեմ :
3 Բայց ժողովուրդը ըսաւ . Մի ել-
լեր . քանզի թէ որ մենք փախչելու
ըլլանք , անոնք մեզի համար հոգ չեն
ըներ . ու թէև կէսերնիս մեռնի ,
անոնք զանիկայ բանի մը տեղ չեն
դներ . բայց դուն մեր տասը հա-
զարին չափ ես . ու հիմա աղէկը
ան է որ , դուն մեզի քաղաքէն օգ-
4 նութիւն ընես : Եւ Թագաւորը
անոնց ըսաւ . Ձեր աչքերուն համայ
երևցածը պիտի ընեմ : ու Թագա-
ւորը դրանը քով կայնեցաւ , և բո-
լոր զօրքը հարիւրներով ու հազար-
5 ներով կ'ելլէին : Ու Թագաւորը
Ցովաբին և Աբեսսային ու Եթթի-
ին պատուիրելով ըսաւ . Ինծի հա-
մար Աբիսողոմ պատանիին ինայե-
ցէք : Ու երբոր Թագաւորը Ա-
6 բիսողոմին համար բոլոր զօրավար-
ներուն պատուիրից , բոլոր զօրքե-
րը լսեցին :

6 Եւ զօրքը դաշտը ելաւ Իսրայէ-
լին դէմ դնելու համար . ու պա-
տերազմը Եփրեմի անտառին մէջ
7 եղաւ : Եւ հոն Իսրայէլին զօրքերը՝
Դաւիթին ծառաներուն առջեր
յաղթուեցան . ու հոն ան օրը մեծ
կոտորած եղաւ , քսան հազար
8 մարդ էին : Եւ հոն պատերազմը
բոլոր երկրին վրայ տարածուեցաւ ,
ու ան օրը անտառը սուրին ջար-
դածէն աւելի ժողովուրդ ջարդեց :
9 Եւ Աբիսողոմ՝ Դաւիթին ծառա-
ներուն հանդիպեցաւ . ու Աբիսո-
ղոմ ջորիի վրայ հեծեր էր . և ջորին
մկ մեծ բևեկնիի մը թաւ ոստերուն
տակը մտաւ . ու անոր գլուխը
բևեկնիէն բռնուեցաւ , ու երկինքի
ու երկրի մէջ կախուած մնաց . և
10 ջորին տակէն անցաւ գնաց : Ու
մկ մարդ մը տեսնելով՝ Ցո-
վաբին պատմեց , ու ըսաւ . Ահա
Աբիսողոմը բևեկնիի մը կախուած
11 տեսայ : Եւ Ցովաբ իրեն լուր բե-
րող մարդուն ըսաւ . Որովհետև
տեսար , ինչու համար վա-
նիկայ հոն դետինը չզարկիր . ան ա-
տենը քեզի տասը մկ արծաթ ու
12 գօտի մը կու տայի : Եւ ան
մարդը Ցովաբին ըսաւ . Թէ որ իմ

ա֜փս հազար ֆիղէ կշռե֜քով ալ֜ա֜ծաթ դրուէր , թագաւորին ար֜գելոյն ձեռ֜քս չէի երկընցներ . է֜քանզի մենք լսեցինք , երբոր Թա֜գաւորը քեզի ու Աբեսա֜յին ու Եթթիին պատուիրեց՝ ըսելով , *Ամէն մէկերնիդ" Աբիսողո֜մ պա֜

13 տանիին հոգ տարէք . Եթէ ոչ՝ †պարապ տեղը իմ կեանքս վտանգի մէջ պիտի դնէի" . քանզի բնաւ բան մը Թագաւորէն դաղտուկ չմնար . ո֜ւ դուն ալ ինձ դէմ պիտի կենա֜

14 յիր : Եւ Յովաբ ըսաւ . Ես քու առջեդ այսպէս ժամանակ չեմ անցրներ . ու իր ձեռ֜քը իրեք նետ առաւ , ու անոնցմով Աբիսողոմին սիրտը խոցեց , որ անիկայ տակա֜

15 ւին բևեկնիին վրայ ողջ էր : Եւ Յովաբին զինակիրները տասը մանչ չորս կողմը պաշարելով՝ Աբիսո֜ղոմը զարկին , ու զանիկայ մեռ֜

16 յուցին : Եւ Յովաբ փող ֆչե֜ցուց , ու զօրքը՝ Իսրայէլը հալա֜ծելէն ետ դարձաւ . քանզի Յովաբ

17 զօրքը զսպեց : Ու Աբիսողոմը ա֜ռին , և զանիկայ անտառին մէջը մէկ մեծ փոսի մը մէջ նետեցին , ու ղ անոր վրան խիստ մեծ քարակոյտ մը դիզեցին . և բոլոր Իսրայէլը փախաւ՝ ամէն մէկը իր վրանը :

18 Եւ Աբիսողոմ իր կենդանու֜թեան առնը մէկ արձան մը առեր էր , ու զանիկայ իրեն համար է թագաւորի հովիտին մէջը կանգ֜ներ էր , ըսելով թէ՝ Որդի չու֜նիմ որ իմ անուանս յիշատակը պահէ . ու ան արձանը իր անու֜նովը կոչեր էր , որ անիկայ մինչև աս օրս՝ Աբիսողոմին ‡արձանը կ'ը֜սուի :

19 Եւ Սադովկի որդին Աքիմաասը ըսաւ . Ֆիմա վազեմ , ու թագա֜ւորին աւետիս տանիմ , որ Տէրը անոր իրաւունք ըրաւ , ու ձեռ֜քէն ազատեց իր թշնամիներուն ձեռ֜քէն :

20 Ու Յովաբ անոր ըսաւ . Դուն այսօր աւետիս պիտի֜ու մարդ չես . դուն մէկ ուրիշ օր մը աւետիս տար , բայց այսօր աւետիս մի՛ տաներ . քանզի թագաւորին որդին մեռաւ :

21 Եւ Յովաբ՝ Քուսիին ըսաւ . Գնա տեսածդ թագաւորին պատմէ՛ . ու Քուսի՝ Յովաբին երկրպագութիւն

22 ըրաւ , և վազելով գնաց : Ու Սադովկին որդին Աքիմաասը նորէն Յովաբին ըսաւ . Ինչ և իցէ հրա֜ման տուր՝ որ ես ալ Քուսիին ե֜տևէն վազեմ : Ու Յովաբ ըսաւ . Ինչո՞ւ վազես՝ որդիս , որովհետև

23 աւետիս մը չունիս տանելու : Ե֜ւ անիկայ ըսա֜ւ . Ինչ և իցէ վազեմ . ու անոր ըսաւ . Վա՛յէ : Եւ Աքիմաաս դաշտին ճամբովը վազեց ,

24 ու Քուսիէն անցաւ : Եւ Դաւիթ երկու դռներուն մէջը կը նստեր . ու Ք դէտը դրանը տանիքին վրայ դէպ 'ի պարիսպը գնաց , և աչքերը վերցընելով տեսաւ որ՝ ահա մէկ

25 մարդ մը մինակ կը վազէր : Ան ա֜տենը դէտը բարձր ձայնով Թագա֜ւորին իմացուց . ու Թագաւորը ը֜սաւ . Թէ որ մինակ է , անոր բե֜րանը աւետիս կայ : Ու անիկայ

26 կու գար ու կը մօտենար : Եւ դէ֜տը մէկ ուրիշ վազող մարդ մը տե֜սաւ . ու դէտը դռնապանին բարձր ձայնով ըսաւ . Ահա մէկ ուրիշ մարդ մըն ալ մինակ կը վազէ : Եւ Թագաւորը ըսաւ . Ան ալ աւե֜

27 տաւոր է : Ու դէտը ըսաւ . Առ֜ջինին ընթացքը Սադովկի որդւոյն Աքիմաասին ընթացքին պէս կ'երևնայ ինծի : Եւ Թագաւորը ըսաւ . Անիկայ բարի մարդ է , ու բարի ա֜

28 ւետիսով կու գայ : Եւ Աքիմաաս պոռալով՝ ըսաւ Թագաւորին . Ողջոյն . ու երեսի վրայ դետինը խո֜նարհ՝ երկրպագութիւն ըրաւ Թագաւորին , ու ըսաւ . Օրհնեալ ըլլայ քու Տէր Աստուածդ , որ իմ տի֜րոջս Թագաւորին դէմ ձեռք վեր֜ցնողները ‹‹‹ չհատցուց մատնեց :

29 Եւ Թագաւորը ըսաւ . Աբիսողոմ պատանին ողջ է : Ու Աքիմաաս ըսաւ . Երբոր Յովաբ՝ Թագաւորին ծառան ու ‹‹‹ քու ծառադ խրկեց , մէկ մեծ խուճ մը տեսայ , բայց

30 ինչ ըլլալը չիմացայ : Եւ Թագա֜ւորը ըսաւ . Դարձիր ու հոս կայ֜

31 նէ : Ու անիկայ դարձաւ ու կայ֜նեցաւ : Եւ ահա Քուսին եկաւ . ու Քուսի ըսաւ . Իմ տիրոջս Թա֜գաւորին աւետիս ‹‹‹ պահ , որ բո֜լոր քու վրադ ելլողներուն ձեռքէն Տէրը այսօր ւէկ ազատեց , ‹‹‹ քեզի

32 իրաւունք ըրաւ : Եւ Թագաւորը Քուսիին ըսաւ . Աբիսողոմ պա֜տանին ողջ է : Ան ատենը Քու֜սին ըսաւ . Իմ տիրոջս Թագաւո֜րին Թշնամիները՝ ու չարութիւն ընէլու համար քու վրադ ելլողները՝

33 ան պատանիին պէս ըլլան : Եւ Թագաւորը խռովեցաւ . ու դրան վերնատունը ելաւ , ու լացաւ . և քալելով՝ այսպէս կ'ըսէր . Ո Որդեակ իմ Աբիսողո՛մ , որդեակ իմ Աբիսողո՛մ , որդեակ իմ Աբիսողոմ , երանի թէ քու տեղդ ես մեռնէի . Աբիսողո՛մ որդեակ իմ , որդեակ իմ :

Գ Լ . Ժ Թ

1 Յովաբ կ'արդիլէ Թագաւորը սուգ բնելէն : 9 Իսրայէլացիք կ'արտորան Թագաւորը ետ բե֜րելու : 11 Դաւիթ՝ քահանաներուն լուր կը խրկէ որ Յուդայի մարդիկը յորդորեն : 18 Սեմիին յանցանքը կը ներուի : 32 Բերզելիի իր տունը կը դառնայ , ու անոր որդին Քամա֜

Ն . Ք . ՂԴ . 1023
Ե Հմր 5 :
* կամ՝ Ինծի համար
† Եբր . իմ կեանքիս դէմ ուռայնութիւն ը֜րած պիտի ըլլայի .
Ղ Ցես . Է . 26 :
Ե Ծն . ԺԶ . 17 :
Ը Ցես Գլ . ԺԶ . 27 :
‡ Եբր . ձեռ֜ք
Ն . Ք . ՂԶ . 1023
Ի Գ Թագ Ը . Թ . 17 :
Ժ Գլ . ՄՀ . 4 :

Ն·Ք·ԶԲ· 1023

ամը Թագաւորին պալատին մէջ կ'ըսդոնուի ։ 41 Իսրայէլացիք կը վիճին Յուդայեանց հետ , որ առանց իրենց ներկայ գտնուելուն՝ Թագաւորը տուն բերիր են ։

1 Ու Ցովաբին պատմուեցաւ թէ՝ Ահա Թագաւորը Աբիսողոմին համար կու լայ ու սուգ կ'ընէ ։
2 Եւ ան օրը յաղթութիւնը սուգի դարձաւ բոլոր զօրքին առջեւը . քանզի զօրքը լսեց որ Թագաւորը
3 իր որդւոյն համար կը ցաւի ։ Ու ան օրը զօրքը գողի պէս = քաղաքը կը մտնէր , պատերազմէն փախած ու
4 ամչցած զօրքի պէս ։ Եւ Թագաւորը ի իր երեսը ծածկեց . ու Թագաւորը մեծ ձայնով մը կը կանչէր . Որդեակ իմ Աբիսողոմ , Աբիսողոմ որդեակ իմ , որդեակ իմ ։
5 Եւ Ցովաբ ներս մտաւ Թագաւորին քովը , ու ըսաւ . Այսօր քու կեանքդ , ու քու տղաքներուդ ու աղջիկներուդ կեանքը , և քու կնիկներուդ ու հարճերուդ կեանքը ազատող ամէն ծառաներուդ երեսը՝ այսօր ամօթով ըրիր . քանզի քեզ ատողները կը սիրես , ու քեզ սիրողները կ'ատես . վասն զի այսօր յայտնեցիր որ ոչ իշխաններդ ու ծառաներդ բանի մը տեղ չես դներ . և այսօր աղէկ հասկըցայ որ , թէ որ այսօր Աբիսողոմը ողջ մնար , ու մենք ամէնքս մեռնէինք , ան ատենը քու աչքերուդ հաճոյ պիտի
7 երեւնար ։ Եւ հիմա ոտք ելիր , ու դուրս եկուր , ու քու ծառաներուդ *հետ քաղցրութեամբ" խօսէ . քանզի Տէրոջմով երդուայ կ'ընեմ որ՝ թէ որ դուն դուրս չելլես , առ գիշեր քովդ մարդ մը պիտի չմնայ . ու ասիկայ քեզի՝ քու տղայութենէդ մինչև հիմա գլուխդ եկած ամէն ձախորդութիւններէն աւելի գէշ
8 կ'ըլլայ ։ Եւ Թագաւորը ելաւ , ու դուռը նստաւ . ան ատենը բոլոր զօրքին պատմեցին ու ըսին . Ահա Թագաւորը դուռը նստեր է . ու բոլոր զօրքը Թագաւորին առջեւը եկան . բայց Իսրայէլի մարդիկը իրենց վրանները փախեր էին ։
9 Եւ Իսրայէլին ամէն ցեղերուն մէջ բոլոր ժողովուրդը կը վիճէին ու կ'ըսէին . Մեր թշնամիներուն ձեռքէն մեզ փրկողը Թագաւորն է , ու Փղշտացւոց ձեռքէն մեզ ազատողը անիկայ է . և հիմա Աբիսողոմին պատճառովը դաս երկրէս
10 փախաւ . Ու Աբիսողոմը՝ որն որ մեր վրայ իւղաւորեցինք , պատերազմի մէջ մեռաւ . և հիմա դուք Թագաւորը ետ դարձընելու վրայով ինչո՞ւ բան մը չէք խօսիր ։
11 Ու Դաւիթ Թագաւորը՝ Սադովկ ու Աբիաթար քահանաներուն հրէշտ

Ն·Ք·ԶԲ· 1023

խրկեց՝ ըսելով . Ցուդայի ծերերուն հետ խօսեցէք ու ըսէք . Թագաւորը իր տունը դարձընելու ինչո՞ւ ետ կը մնաք" . քանզի բոլոր Իսրայէլին խօսքը Թագաւորին հա-
12 սաւ՝ մինչև անոր տունը . Դուք իմ եղբայրներս , իմ ոսկորս ու մարմինս եք . ուրեմն ինչո՞ւ համար դարձընելու ետ կը մնաք ։
13 Ձեւ Ամասայիին ըսէք . Դուն իմ ոսկորս ու մարմինս չե՞ս . Ես տուած ինծի այսպէս՝ ու ասկէ աւելի ընէ , թէ որ Ցովաբին տեղը միշտ իմ առջեւս զօրագլուխ չըլլաս ։
14 Եւ Ցուդայի բոլոր մարդոցը սիրտը՝ ամէկ մարդու սրտի պէս էրաւ դարձուց . ու Թագաւորին դրկեցին՝ ըսելով . Դարձիր , Թէ դուն և Թէ քու ա-
15 մէն ծառաներդ ։ Ան ատենը Թագաւորը դարձաւ , ու մինչև Յորդանան եկաւ . Ցուդան ալ մինչև Գաղգաղա եկաւ , որ Թագաւորը դիմաւորէ , ու Թագաւորը Յորդանանէն անցընէ ։
16 Ու Գերայի որդին Բաւուրիմացի Բենիամինեան Սեմէին արտորալով՝ Ցուդայի մարդիկներուն հետ Դաւիթ Թագաւորը դիմաւորելու
17 իջաւ . Եւ անոր հետ Բենիամինէն հազար մարդ կար . ու Սաուղին տանը ծառան Սիբա՝ իր տասնուհինգ որդիներովը և քսան ծառաներովը էր . ու Թագաւորին առ-
18 ջեւը՝ Յորդանանը հասան" ։ Եւ Թագաւորին տունը անցընելու համար , ու անոր աչքերուն հաճոյ երեւցածը ընելու համար՝ մէկ նաւակ մը անցաւ . ու երբոր Թագաւորը Յորդանանէն անցաւ , Գերայի որդին Սեմէին՝ Թագաւորին
19 առջեւը ինկաւ , Եւ Թագաւորին ըսաւ . Իմ տէրս ինծի յանցանք չսեպէ , ու իմ Թագաւոր տիրոջս Երուսաղէմէն ելած օրը՝ Ծառայիդ ըրած անօրէնութիւնը չյիշէ , ու Թագաւորը ի զանիկայ իր սրտին
20 մէջը չդնէ . Քանզի քու ծպտած գիտցայ որ մեղք գործեցի . և ահա այսօր Ցովսեփին բոլոր տունէն առաջ ես եկայ , որ իմ Թագաւոր տէրս դիմաւորելու իջ-
21 նեմ ։ Ու Շարուհեայի որդին Աբեսսա պատասխան տուաւ ու ըսաւ . Մի՞թէ Սեմէի սուրբ համար պիտի չմեռնի՞ , որ Տէրոջը օծեա-
22 լը անիծեց ։ Բայց Դաւիթ ըսաւ . Ձեզ ինծի հետ ի՞նչ բան ունիք՝ ով Շարուհեայի որդիք , որ այսօր ինծի թշնամութիւն կ'ընէք . Միթէ այսօր Իսրայէլին մարդ մը պիտի մեռնի՞ . որովհետև գիտեմ որ ես այսօր Իսրայէլի վրայ Թագա-

ա Թագ· ժ· 5 ։
2 Թագ· ը· 1 ։
= Հմր 32 ։
ե Գլ· ժե ։ 25 ։
է Հռութ· ա· 17 ։
ը Գլ· ժե ։ 30 ։
թ Գլ· ժը· 33 ։
ը Դատ· ի· 1 ։
ժ Գլ· ժ· 5 ։ 2 Թագ· բ· 8 ։
ի Գլ· ժ· 10 ։ 2 Թագ· ի· 2 ։
ժ Գլ· ժ· 14 ։
ժա Գլ· ժե ։ 14 ։
ժբ Գլ· ժե ։ 25 ։
ժգ Գլ· ժ· 5 ։
ժդ Գլ· ժ· 10 ։
ժե Գլ· ժ· 5 ։
ժզ Գլ· ժ· 5 ։
ժէ Գլ· ժ· 33 ։
ժը Տես գլ· ժ· 5 ։
ժթ Գլ· ժ· 5 ։ 6 ։ ։ ։
ի Գլ· ժ· 5 ։ 6 ։ ։ ։
իա Գլ· ժ· 5 ։
իբ Գլ· ժ· 10 ։
իգ Գլ· ժ· 5 ։
իդ Գլ· ժ· 33 ։
իե Տես գլ· ժ· 5 ։
իզ Թագ· իբ· 15 ։
իէ Գլ· ժ· 5 ։ 6 ։ ։ ։
իը Գլ· ժ· 33 ։
իթ Ելք· իբ· 28 ։
լ Գլ· ժ· 10 ։
լա Թագ· ժ· 13 ։

Ն·Ք·ԶԲ· 1023
ՖԳԹԱԳ·Ը·Տ·9·37·46·
ՀԳԼ·Բ·6·

23 ետր եմ։ Եւ Ֆթագաւորը նէմէին ըսաւ. Պիտի չմեռնիս. ու թագաւորը անոր երդում ըրաւ։
24 Եւ Հնաւուղին որդին Մեմֆիբոսթէն՝ թագաւորը դիմաւորելու ելաւ. ու անիկայ՝ թագաւորին գացած օրէն մինչև անոր խաղաղութեամբ եկած օրը, ոտքերը չէր դարմաներ, ու մօրուքը չէր կտրած,
25 կեր, և լաթերը չէր լուացեր։ Ու երբոր թագաւորը դիմաւորելու համար երուսաղէմ եկաւ, թագաւորը անոր ըսաւ. Ո՛վ Մեմֆիբոսթէ, ինչո՞ւ ինծի հետ չգացիր։
ՀԳԼ·ԺԶ·17։
26 Եւ անիկայ ըսաւ. Ո՛վ տէր իմ թագաւոր. իմ ծառաս զիս խաբեց. քանզի քու ծառադ ըսաւ. Էշը պատրաստեմ, որ վրան հնձենեմ, ու թագաւորին հետը երթամ. վասն զի ծառադ կաղ է։
ՆԳԼ·ԺԶ·3։
27 Եւ Նանիկայ՝ քու ծառադ՝ իմ թագաւոր տիրոջս առջևը բամբասեց. Բայց իմ թագաւոր տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս է. ուստի քու աչքերուդ հաճոյ երևօսի։
ՀԳԼ·ԺԶ·17·20։
28 Ցածը ըրէ. քանզի թէպետև իմ հօրս բոլոր տունը իմ թագաւոր տիրոջս առջևը միայն մեռնելու մարդիկներ էին, Բայց դուն՝ քու ծառադ՝ քու սեղանդ կերակուր ուտողներուն կարգը դրիր. ուստի ալ ասկէ ետև ինչ իրաւունք ունիմ որ թագաւորին դոզրելու։
ՀԱ ԹԱԳ·Իզ·16։
ՀԳԼ·Թ·7·10·13։
29 Նէմ թագաւորին ըսաւ. Եւ թագաւորը անոր ըսաւ. Ալ ինչո՞ւ քու բաներուդ վրայ կը խօսիս. ես ըսի որ՝ դուն ու Սիբան արտերը կրնաք լսել. ու քու ծառադ իմ թագաւոր տիրոջս համար
30 Մեմֆիբոսթէ ըսաւ թագաւորին. Թող անիկայ ամէն ալ առնէ. որովհետև իմ թագաւոր տէրս խաղաղութեամբ իր տունը եկաւ։
ՀԳԹԱԳ·Ր·7։
31 Եւ Գաղաատացի Բերզէլին Ռոգէլիմէն իջաւ, ու թագաւորին հետ Յորդանանէն անցաւ, որ զայ
32 Նիկայ Յորդանանէն յոյզարկէ։ Ու Բերզէլի խիստ ծեր էր, ութսուն տարեկան մարդ ըլլալ. և որչափ ժամանակ որ թագաւորը Մանայիմի մէջ կեցաւ, Նզանիկայ իրեն կերակրեց. քանզի խիստ մեծ մարդ
ՀԳԼ·ԺԶ·27։
33 մըն էր։ Ու թագաւորը Բերզէլին ըսաւ. Ինծի հետ անցիր, և քեզ իմ քովս Երուսաղէմի մէջ կերակրեմ։
34 Բէմ։ Ու Բերզէլի՝ թագաւորին ըսաւ. Իմ կենացս տարիներուն օրերը որչափ պիտի ըլլան՝ որ թագաւորին հետ Երուսաղէմ ելլեմ.
ՍԱՂ·Ղ·10։
35 Ես այսօր ութսուն տարեկան եմ. միթէ ազէկը ու դէշը կրնամ որոշել. միթէ ծառադ իր կերածին ու խմածին համը կրնայ առնել. և ասկէ ետքը խաղ կանչող մարդիկներուն կամ կնիկներուն ձայնը

Ն·Ր·ԳԲ· 1023

կրնամ լսել. ու քու ծառադ իմ թագաւոր տիրոջս ինչո՞ւ համար
36 բեռ ըլլայ։ Քու ծառադ՝ թագաւորին հետ քիչ մը Յորդանանէն պիտի անցնի. ու թագաւորը ինչո՞ւ ինծի այսպէս փոխարէն մը հատուցանէ։
37 Թող ծառադ դառնամ, ու իմ քաղաքիս մէջ իմ հօրս ու մօրս գերեզմանին քովը մեռնիմ. Ահա քու ծառադ Քամաամը իմ տիրոջս թագաւորին հետ անցնի. ու քու աչքերուդ հաճոյ
ՀԳԹԱԳ·Բ·7։ ԵՐԻՄ·ԽԱ·17։
38 երևցածը ըրէ անոր։ Եւ թագաւորը ըսաւ. Թող Քամաամը ինծի հետ անցնի, ու ես քու աչքերուդ հաճոյ երևցածը պիտի ընեմ անոր. և ինծմէ ինչ որ խնդրես, քեզի
39 պիտի ընեմ։ Ու բոլոր ժողովուրդը Յորդանանէն անցաւ. թագաւորն ալ անցաւ։ Եւ թագաւորը Բերզէլին Նհամբուրեց, ու զանիկայ օրհնեց. ան ալ իր տեղը դարձաւ։
ՎՕՆ·Լ·55։
40 Յետ։ Եւ թագաւորը Գաղգաղա անցաւ. ու Քամաամը անոր հետ անցաւ. այսպէս Յուդային բոլոր ժողովուրդը ու Իսրայէլին ալ կէս ժողովուրդը թագաւորը անցուցին։
41 Եւ ահա բոլոր Իսրայէլի մարդիկները թագաւորին եկան, ու թագաւորին ըսին. Ինչո՞ւ համար մեր եղբայրները՝ Յուդայի մարդիկը քեզ գողցան, ու թագաւորը՝ և անոր տունը՝ ու անոր հետ Դաւիթին բոլոր մարդիկները Յորդանանէն
ՀՇՄ 15։
42 անցուցին։ Եւ Յուդայի բոլոր մարդիկը՝ Իսրայէլի մարդոցը պատասխան տուին. Քանզի թագաւորը Մեզի մօտ ազգական է. ու ասոր բանին համար ինչո՞ւ այսպէս կը նեղանաք. միթէ թագաւորէն բան մը կերած ենք, կամ թէ անիկայ
Ը ՀՇՄ 12։
43 մեզի պարգև մը տուաւ։ Եւ Իսրայէլի մարդիկը Յուդայի մարդոցը պատասխան տուին ու ըսին. Մենք թագաւորին քովը տասը բաժին ունինք, ու նաև Դաւիթին վրայ մենք ձեզմէ աւելի իրաւունք ունինք. և ինչո՞ւ համար մեզ անարգեցիք, ու միթէ թագաւորը ետ դարձնելու համար՝ առաջ * մեզմէ խորհուրդ չհարցուցիք". Բայց Յուդայի մարդիկներուն խօսքը Իսրայէլի մարդիկներուն խօսքէն աւելի խիստ էր։
* ՆԵԲ. մեր խօսքը չեն ղան.
Տես Դատ. Ր·1·ԺՐ·1։

ԳԼ·Ի

1 Իսրայէլի ու Յուդայի մէջ եղած վէճին պատճառովը՝ Սարէէ երկպառակութիւն մը կը հանէ Իսրայէլի մէջ։ 3 Դաւիթ իր տասը հարճերը մինչև իրենց մահուան օրը՝ զատ տան մը մէջ պահել կու տայ։ 4 Ամասայի Յուդային վրայ զօրապետ կ'ընէ։ իսկ Յովաբ զանիկայ կը մեռցնէ։ 14 Յովաբ՝ Սարէէին եռեւէն կ'երթայ մինչև Աբէլ։ 16 Իմաստուն

Ն · Ք · Ջ · Իսր 1022

կնիկ մը Սաբէէին գլխովը քաղաքը կ'ազատէ ։ 23 Դաւիթին պաշտօնատարները ։

1 Եւ հոն Բենիամինի ցեղէն Բոքորեան Սաբէէ անունով անօրէն մարդ մը գտնուեցաւ . և անիկայ փող ի՛նէցուց՝ ու ըսաւ . «Մենք Դաւիթին բովը բաժին՝ ու Յեսսէի որդւոյն բովը ժառանգութիւն չունինք . ով Իսրայէլ՝ բոլոր մարդ 2 իր վրանը դառնայ ։ Ուստի Իսրայէլի բոլոր մարդիկները Դաւիթէն զատուեցան , ու Բոքորեան Սաբէէին ետևէն գացին . բայց Յուդայի մարդիկները՝ Յորդանանէն մինչև Երուսաղէմ՝ իրենց թագաւորին յարեցան ։

3 Եւ Դաւիթ Երուսաղէմ իր տունը եկաւ . ու թագաւորը իր տանը պահպանութեանը համար թողուցած տասը հարճերը առաւ , ու զանոնք մկ տան մը մէջ պահել տուաւ , և զանոնք կը կերակրէր . բայց անոնց չմտաւ . և անոնք մինչև իրենց մեռնելու օրը՝ պահուած մնացին , ու որբևարիի պէս ապրեցան ։

4 Եւ թագաւորը Ամեսայիին ըսաւ . «Մինչև երեք օր Յուդայի մարդիկները ինծի կանչէ , ու դուն ալ հոս 5 ներկայ եղիր ։ Ուստի Ամեսայի՝ Յուդան կանչելու գնաց . ու դարձիւն ժամանակէն աւելի ուշացաւ 6 ցաւ ։ Ան ատենը Դաւիթ Աբիսայիին ըսաւ . «Հիմա Բոքորեան Սաբէէին՝ Աբիսողոմէն աւելի չարութիւն պիտի ընէ մեզի . «Քու տէրունդ ծառաները առ՝ ու հետդ հետապնդէ , ու անոր ետևէն ինկիր . չըլլայ որ իրեն պարսպաւոր քաղաքներ գտնէ , ու մեր աչքէն անյայտ ըլլայ ։

7 Անոր վրայ Յովաբին մարդիկները ու Քերեթիները ու Փելեթիները և բոլոր զօրաւորները անոր ետևէն ելան , ու Բոքորեան Սաբէէն հալածելու համար Երուսաղէմէն ելան ։

8 Երբոր անոնք Գաբաւոնի մէջ եղող մեծ քարին քովը էին , Ամեսայի անոնց դիմացը ելաւ . և Յովաբ իր հագած հանդերձքը գօտևորած էր , ու անոր վրայէն «սրին գօտիով՝ մէջքը սուր մը կապած էր պատեանովը մկկտեղ . ու երբոր անիկայ կ'երթար , «սրը պոկուեցաւ 9 իննկաւ ։ Եւ Յովաբ՝ Ամեսայիին ըսաւ . «Ե՛ղբայրս՝ ողջ առողջ ես . ե ու Յովաբ Ամեսային համբուրելու համար՝ աջ ձեռքովը անոր մօրուքէն բռնեց ։ Եւ Ամեսայի՝ Յովաբին ձեռքը եղած սուրէն չզգուշացաւ . ևու անով Յովաբ Ամեսային որովայնը զարկաւ զանիկայ , և անոր աղիքները գետինը թափեց . ու անոր երկրորդ անգամ չզարկաւ . ու անիկայ մեռաւ ։ Եւ Յովաբ ու անոր եղբայրը Աբեսսա՝ Բոքորեան Սաբէէին ետևէն ինկան ։ 11 Ան ատենը Յովաբին մանչերուն մէկը անոր քովը կայնեցաւ՝ ու ըսաւ . «Ով որ Յովաբը կը սիրէ՝ ու ով որ Դաւիթին կողմն է , Յովաբին ետևէն 12 երթայ ։ Եւ Ամեսայի ճամբուն վրայէ արեանը մէջ կը թաւալէր ։ Ուան մարդը երբոր տեսաւ որ բոլոր զօրքը կայնեցաւ մնաց , Ամեսային ճամբու վրայէ վերցուց , «սրտի մը մէջ չձգեց , և անոր վրայ լաթ մը ծածկեց , քանզի տեսաւ որ ամէն անոր քովը կեցողը կանկ կ'առնէ ։ 13 Ու զանիկայ ճամբուն վրայէն վերցուցածին պէս՝ ամէն մարդ Յովաբին ետևէն գնաց՝ Բոքորեան Սաբէէին հալածելու համար ։ 14 Եւ անիկայ Իսրայէլի բոլոր ցեղերէն մինչև Աբէլը ու Բեթմաաքան անցեր էր բոլոր Բերացիներուն հետ , որոնք անոր քովը ժողվուելով՝ անոր 15 ետևէն գացեր էին ։) Եւ անոնք եկան , ու Բեթմաաքային Աբէլը՝ զանիկայ պաշարեցին . ու քաղաքին առջևը Հողարկղ մը չկենցին , որ պարսպին մօտ կանգնուեցաւ . և Յովաբին հետը եղող բոլոր ղօրքը պարիսպը փլցնելու կ'աշխատէին ։

16 Ու մէկ իմաստուն կնիկ մը քաղաքէն կանչեց . «Լսեցէ՛ք , լսեցէ՛ք . չնորհ ըրէք , Յովաբին ըսէք . «Հոս մօտեցիր որ քեզի հետ խօսիմ ։ 17 Եւ Յովաբ անոր մօտեցաւ . ու կնիկը ըսաւ . «Յովաբը դո՞ւն ես ։ Եւ անիկայ ըսաւ . «Ես եմ ։ Ու ի՛նիշ անոր ըսաւ . «Քու աղախինիդ խօսքերը մտիկ ըրէ . ու անիկայ ըսաւ . 18 «Հմտիկ կ'ընեմ ։ Եւ ի՛նիշ խօսեցաւ ու ըսաւ . «Հին ատենը սովորաբար կ'ըսէին , Թող Աբէլին երթան խորհուրդ հարցընեն՝ ու անանկ լմընցընեն ։ 19 Ես Իսրայէլի մէջ խաղաղարար ու հաւատարիմ «ալէ մըն եմ . ու դուն կը ջանաս աւերել «ամուն քաղաք մը՝ որ Իսրայէլի մէջ մայրաքաղաք մըն է՞ . և Տէրոջը ժառանգութիւնը ինչո՞ւ 20 բնաջինջ կ'ընես ։ Եւ Յովաբ պատասխան տուաւ . ու ըսաւ . «Քաւ լիցի , քա՛ւ լիցի . որ ես բնաջինջ 21 ընեմ կամ աւերեմ . Բանը այդպէս չէ . Հապա Եփրեմի լեռնէն Բոքորեան Սաբէէ անունով մարդ մը իր ձեռքը Դաւիթ թագաւորին դէմ վերցուց . մինակ անիկայ տուէ՛ք , ու «թագաւորէս երթամ՝ ։ Եւ կնիկը Յովաբին ըսաւ . «Ահա անոր գլուխը պարսպին վրայէն քեզի պի22 տի նետուի ։ Ու կնիկը բոլոր ժողովուրդին գնաց է իր իմաստութեամբը ։ Եւ Բոքորեան

Ն · Ք · Ջ · Իսր 1022

— Գլ · ժԹ · 43 ։
Բ գ Թագ · ժբ · 16 · ր Մն · ժ · 16 ։
է Գլ · ժե · 16 ։ ժզ · 21 , 22 ։
ե Գլ · ժԹ · 13 ։
Ե Մա · իգ · 49 ։ Ղ · ե · իր · 47 ։
ը գ Թագ · ր · 5 ։
Բ Գլ · բ · 23 ։
Ե Գլ · ժ · 11 · գ Թագ · ա · 33 ։
Ղ Գլ · ը · 18 ։ գ Թագ · ա · 38 ։
Ե Մա · իգ · 49 ։ Ղ · ե · իր · 47 ։
Ե գ Թագ · ժե · 29 · բ Մն · ժզ · 4 ։
է գ Թագ · ժԹ · 32 ։

* Եբր · կ'ասէ ։

† Եբր · հարցընելով Տարցընեն ,

‡ Եբր բառդակ և մայր Իսրայէլի մէջ

Ա Թագ · իգ · 19 · Գլ · իա · 3 ։
Ե Ծագ · Թ · 14 · 15 ։

Սաքէէին գլուխը կտրեցին, ու Ցուվաբին նետեցին։ Ան տունը աՆիկայ փողՆ Ջէնցուց. ու ամէն մարդ ան քաղաքէն իր վրանը քաշուեցաւ. Ցովաբն ալ Երուսաղէմ՝ թագաւորին դարձաւ։

ա Գլ. ը. 16, 18.
23 Եւ ա Ցովաբ Իսրայէլի բոլոր զօրքերուն վրայ էր. ու Ցովհադայի որդին Բանեան փերեթիներուն ու
24 փելեթիներուն վրայ էր. Եւ Ադորամ՝ հարկերուն վրայ. ու ե Ափիղուրի որդին Ցովսափատը յիշատակագիր էր.
25 Սուսա դպիր էր. Եւ Սադովկ ու Աբիաթար քահանաներ էին։
26 Բիրացի Իրան ալ Դաւիթին ճնախարարն էր։

Գլ. ԻԱ

1 Գաբաւոնացւոց պատճառով եղած իրեք տարուան սովը Սաուղին եօթը որդիներուն կախուելովը կը գտնուի։ 10 Ռեսփային դէրը որ մեղցուածներուն ցուցուց։ 12 Դաւիթ՝ Սաուղին ու Յովնաթանին ոսկորները կիսին դերեզմանին մէջ թաղել կու տայ։ 15 Փղշտացւոց դէմ եղած չորս պատերազմներուն մէջ՝ Դաւիթին չորս մարդիկը չորս հսկաներ կը մեռցնեն։

Իբր 1021
1 Եւ Դաւիթին օրերը՝ իրարու եւ տևէ իրեք տարի սով եղաւ. ու Դաւիթ Տէրոջը ա հարցուց։ Եւ Տէրը ըսաւ. Ա՛ն է՛յ Սաուղին ու անոր արիւնահեղ տանը համար է, քանզի անիկայ Գաբաւոնացիները
2 մեռցուց։ Ու թագաւորը Գաբաւոնացիները կանչեց, ու անոնց խօսեցաւ. (և Գաբաւոնացիք Իսրայէլէն որդւոցմէ չէին, այլ ե Ամորհացւոց մնացորդէն էին. ու Իսրայէլի որդիքը անոնց երդում ըրեր էին. բայց Սաուղ՝ Իսրայէլի ու Յուդայի որդւոցը համար նախանձաւորութիւն ընելով՝ զանոնք
3 զարնել ուզեր էր։) Եւ Դաւիթ Գաբաւոնացիներուն ըսաւ. Ձեզի ինչ ընեմ, ու ինչո՞վ քաւութիւն ընեմ, որ բ Տէրոջը ժառանգութիւնը օրհնէք։
4 Գիւնը օրհնէք։ Եւ Գաբաւոնացիք անոր ըսին. Սաուղին ու անոր տունին արծաթ կամ ոսկի չենք ուզեր, ոչ Իսրայէլէն մարդ մը մեռցընել չենք ուզեր։ Եւ անիկայ ըսաւ. Դուք ինչ որ ըսէք, ձեզի
5 պիտի ընեմ։ Ու անոնք թագաւորին ըսին. Ան մարդը որ մեզ չարքաշեց, ու մեզ անկէ կորսնցընել ուզեց, որ ամենևին Իսրայէլի սահմաններուն մէջը չդտնուինք, Անոր
6 որդիներէն մեզի եօթը մարդ տուր, ու զանոնք գ Տէրոջը ընտրեալ Սաուղին Գաբաւայի մէջ Տէրոջը համար կախենք։ Եւ թագաւորը՝ կոչ տամ ըսաւ։
7 Բայց թագաւորը՝ Սաուղեան Յովնաթանին որդւոյն Մեմփիբոսթէին խնայեց, Սաուղին որդւոյն Յովնաթանին ու Դաւիթին մէջտեղը եղած ե Տէրոջը երդումին համար։
8 Բայց թագաւորը՝ Ռեսփային որդիները, որոնք Սաուղին ծներ էր, Արմոնին ու Մեմփիբոսթէն, և Սաուղին աղջկանը Միղդրոնին հինդ որդիները՝ որոնք Մաուղայի Բերզելիին որդւոյն Եզրիելին ծներ էր, առաւ. Ու զանոնք Գաբաւոնացւոց ձեռքը տուաւ. ու զանոնք Տէրոջը առջևը լեռան վրայ կախեցին, ու եօթն ալ միասին մեռան. և անոնք Ջոջոց առջի օրերը՝ գարնի Ջոջոց սկիզբը մեռցուեցան։
9
10 Ու Այիայի աղջիկը Ռեսփա մկ քուրձ մը առաւ, ու զանիկայ իրեն համար ապառաժի մը վրայ փռեց, Ջոջոց սկիզբէն՝ մինչև ասնոնց վրայ երկինքէն անձրև դալը. ու ցորկը երկինքին թռչունները՝ ու դիւերը անասուտին դաշտինները
11 չէր թողուր որ անոնց դպչին։ Եւ Սաուղին հարճին՝ Այիային աղջկանը Ռեսփային ըրածը Դաւիթին պատմուեցին։
12 Ու Դաւիթ գրնաց, և Սաուղին ու անոր որդւոյն Յովնաթանին ոսկորները առաւ Գաղաադացիներուն Յաբիսի բնակիչներէն, որոնք Բեթսանի հրապարակէն զանոնք գողցեր էին. Փղշտացիք զանոնք Գոն կախեր էին այն օրը՝ որ Փղշտացիք Գեղբուէի վրայ Սաուղը մեռցուցեր
13 էին. Եւ Սաուղին ոսկորները ու անոր որդւոյն Յովնաթանին ոսկորները անկէ վերցուց. ու կախուածներուն ոսկորներն ալ Ժողովեցին։
14 Եւ Սաուղին ու անոր որդւոյն Յովնաթանին ոսկորները Բենիամինի երկիրը՝ Սելայի մէջ անոր Հօրը կիսին դերեզմանը թաղեցին. ու թագաւորին բոլոր պատուիրածը բրին. ու անկէ ետքը ե Աստուած երկրին համար էնդ աղօթքը ընդունեց։
15 Եւ Փղշտացիք նորէն Իսրայէլի հետ պատերազմ բրին. և Դաւիթ ու իր ծառաները իր հետը իջան, ու Փղշտացւոց հետ պատերազմ բրին. ու Դաւիթ ուժէ կտրեցաւ։
16 Եւ Ցսբիբենորը՝ որ Ռեփայի որդիներէն էր, ու իրեք հարիւր սիկղ ծանրութեամբ պղնձէ նիզակ մը ունէր, ու մէջը նոր բան մը կապեր էր, ուզեց որ Դաւիթը զարնէ։
17 Նէ՛ Բայց Շարուհեայի որդին Աբեսան անոր օգնութեան հասաւ, ու Փղշտացին զարկաւ, ու կանիկայ մեռցուց։ Ան ատենը Դաւիթ

Ն. ք. ՂԲ. Իբր 1022
ա Գլ. ը. 16, 18.
ե Գթ. գ. 6.
զ Գլ. ը. 16, գթ. գ. 3.
է Գլ. ը. 17, գթ. գ. 4.
ը Գլ. իգ. 38.
թ Գլ. ը. 18.
Ն. ք. ՂԲ. Իբր 1021
ա Թագ. ժը. 8. 15. 42, իդ 15.
ը Գլ. գ. 7.
ե Կամ Մեմփիբոսթէս Յովնաթանեան Թագ. ժը. 19.
ե Թագ. ժը. 19.
1019
ը Գլ. ը. 17.
Ը Ամր Տ. Գլ. գ. 7.
թ Ես. ը Օր. իա. 23.
ի Թագ. ա. 11 12 13.
լ Թագ. Ա. 10.
ի Ես. թ. 5. 15. 16, 17.
բ Գլ. ի. 19.
գ Ես. ժը. 28.
դ Ես. է. 26, Գլ. իդ. 25.
Իբր 1018
ե Թագ. ժը. 8. 15. 42, իդ 15.
զ Գլ. գ. 7.
է Կամ Մեմփիբոսթէս Յովնաթանեան Թագ. ժը. 19.
ը Թագ. ժը. 19.
1019
թ Գլ. ը. 17.

Ն · Բ · ԳՁ · Լիբր 1018

Ի Գէ · ժբ · 3 ։ հ գ Թագ · ժա · 36 · ժե. 4 · Սաղ. ճբ · 17 · ՝ յ ա Մն · ի · 4 ։ ղ ամն. ժա. 29 ·

ֆ Տճ ա Մն · ի · 5 ։

յ ամն. ի · 6 ։

յ ա Թագ · ժէ · 10 · 25 ։ 26 ։ ն ա Թագ · ժզ · 9 · ղ ամն. ի · 8 ։

— Սաղ. ժբ. ին վերնա- գրերը Սաղ. լդ · 19 ·

1018

Բ Եւ. ժե. 1 ։ Գատ. ե. 1 ։ ֆ բ Օր · լբ · 4 ։ Սաղ. ժբ. 2, ԽԱ ։ լա. 3 ։ հա. 3 ։ ղա. 2 ։ ՀԹգ. 2 ։ * ԵԲԲ. ժա- ոբս ։ ի · ՝ Բեր · բ · 13 ։ ֆ (· Ի Ծն. ժե. 1 ։ ղ Ղա. ա · 69 ։ Է ԵՒակ. ժբ. 10 ։ ը Սաղ. թ · 9 ։ ժզ · 6 ։ ծԹ · 16 ։ հա. 7 ։ Եր եմ. ժզ. 19 ։ Ի Սաղ. ճժզ. 3 ։ ֆ Սաղ. ճժզ. 4 ։ ՀԹ · 1 ։ Յով. բ · 2 ։ Է Եւ · գ · 7 ։ Սաղ · լդ · 6 ։ 15 · 17 ։ Ե Գատ. ե. 4 ։ Սաղ. Հե. 18 · ղ · 4 ։

*Թին մարդիկները անոր երդում ըրին ու ըսին . Ասկէ ետքը դուն մեղի հետ պատերազմի չելլես , որ Իսրայէլին ճրագը չմարես ։

18 Ետ ասկէ ետքը նորէն Փղշտացոց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ . ան ատենը Ղովսացի Սովբաքը Ռափայի որդւոցմէ եղող Սիփհան մեռցուց ։

19 Եւ նորէն Փղշտացոց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ ու Բեթլէհեմացի Երիովղիմին որդին Եղհանանը՝ Գեթացի Գողիաթին եղբայրը զարկաւ , որ անոր նիզակին բունը ոստայնանկաց ղլանին պէս էր ։

20 Եւ նորէն Գեթի մէջ պատերազմ եղաւ . ու մէկ երկայնահասակ մարդ մը կար , որ անոր ձեռքերուն մատերը ու ոտքերուն մատերը վեց վեց հատ ըլլալով՝ քսանուչորս հատ ուներ . անիկայ ալ

21 Ռափայի որդւոցմէ էր ։ Եւ անիկայ Իսրայէլը նախատեց . բայց Դաւիթին եղբօրը Եսմահային որդին Յովնաթանը զանիկայ զարկաւ ։

22 Ասոնք չորսը Գեթի մէջ Ռափայէն ծներ էին . և Դաւիթին ձեռքովը ու անոր ծառաներուն ձեռքովը ինկան ։

ԳԼ · ԻԲ

1—51 Աստուծոյ մեծ փրկութեանը և պեսպես բարութիւններուն համար՝ ընդհակառակ թեան երգ մը ։

1 Ետ Դաւիթ՝ ան օրը որ Տէրը զանիկայ իր բոլոր թշնամիներուն ձեռքէն ու Սաւուղին ձեռքէն ազատեց , ասոր երգին խօսքերը Տէր

2 րոջը խօսեցաւ , Ու ըսաւ .

Տէրը իմ վէմս , ամրութիւնս , ու փրկիչս է ։

3 Իմ Աստուածս իմ *պարիսպս է . Դէս անոր կը յուսամ . անիկայ իմ վահանս , ու իմ փրկութեանս եղջիւրը , իմ բարձրակէտս , իմ ապաւէնս , ու ազատիչս է ։ Զիս անիրաւութենէ դուն կ'ազատես ։

4 Օրհնեալ Տէրը կը կանչեմ , ու իմ թշնամիներէս կ'ազատիմ ։

5 Քանզի մահուան ալիքները իմ բոլորտիքս առին . — անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին ։

6 Գերեզմանին լարերը իս պաշարեցին , — մահուան որոգայթները իմ առջեւս առին ։

7 Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի , ու իմ Աստուծոյս աղաղակեցի . որ իր տաճարէն Իմ ձայնս լսեց , ու իմ աղաղակս անոր ականջներուն հասաւ ։

8 Երկինքը սասանեցաւ ու դողաց . Երկինքին հիմերը շարժեցան ու սասանեցան . քանզի Ընիկայ բարկացաւ ։

9 Անոր քիթէն ծուխ ելաւ . ու բերնէն մաշող Ճկայծակներ բռնկեցան ։

10 Եւ Անիկայ երկինքը խոնարհեցուց , ու իջաւ . և անոր ոտքերուն տակը Մառախուղ կար ։

11 Ու քերովբէի մը վրայ ելաւ . ու թռաւ . և Հովին թեւերուն վրայ երեւցաւ ։

12 Ու Խաւարը . ու թանձր ջուրերը . — երկինքին ամպերը՝ իր բոլորտիքը վարագոյր քաշեց ։

13 Անոր առջեւը եղող Ճառագայթէն Կրակի կայծակներ բռնկեցան ։

14 Տէրը Երկինքէն որոտաց , ու Բարձրեալը իր ձայնը Լսել տուաւ ։

15 Եւ Նետեր խրկեց , ու զանոնք ցրուեց . կայծակներ Էոլեց , ու զանոնք խռովեցուց ։

16 Եւ Տէրոջը յանդիմանութենէն Նովը — անոր Բարկութեան Հովին փչելովը , ծովին յատակները երեւցան , — աշխարհիս հիմերը յայտնուեցան ։

17 Բարձրէն խրկեց , — զիս բռնեց , Ե շատ ջուրերէն զիս հանեց ։

18 Իմ զօրեղ թշնամիս — զիս ատողներէն Ազատեց զիս . վասն զի ինծմէ զօրաւոր էին ։

19 Իմ նեղութեանս օրը իմ առջեւս առին . բայց Տէրը ինծի հոգեպարէն դաւազան եղաւ .

20 Եւ Դուս լայնարձակ տեղ մը հանեց , ու զիս ազատեց . ինչու որ Ինծի հաւնեցաւ ։

21 Տէրը իմ արդարութեանս պես ինծի փոխարէն կու տայ . Իմ ձեռացս մաքրութեանը համեմատ՝ հատուցում կ'ընէ ինծի .

22 Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի , ու իմ Աստուծոյս դէմ ամբարշտութիւն չըրի ։

23 Քանզի անոր ամէն դատաստանները իմ առջեւս էին . ու անոր օրէնքներէն չհեռացայ ։

24 Եւ անոր առջեւը կատարեալ եղայ . ու իմ անօրէնութենէս զգուշացայ ։

25 Ու Տէրը ինծի հատուցում բրաւ , իմ արդարութեանս համեմատ , իմ Յեսուս մաքրութեանը համեմատ , որ անոր աչքերուն առջեւն է ։

26 Ողորմածին հետ ողորմած կ'ըլլաս , կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս ։

27 Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս , ու ծուռին հետ կը ծռիս ։

28 Եւ վշտացած ժողովուրդը դուն կ'ազատես . ու քու աչքերդ Համբ

Ն · Բ · ԳՁ · 1018

Ի Ցոբ · ի · 11 ։ ֆ Սաղ. ղե · 3 · Ամբ. ե · 5 · Երե · ժբ. 29 · (Սաղ. ճկդ · 5 · Ես · կդ · 1 · հե. ի · 21 ։ դ Թագ. բ · 12 ։ Սաղ. ղե · 2 · ՝ Սաղ. ճդ · 3 · ղ Հմր 10 ։ Սաղ. դ. 2 · ֆ Հմր 9 ։ յ Գատ. ե · 20 ։ ա Թագ. բ · 10 ։ է · 10 ։ Սաղ · ի՛թ · 3 ։ Ես. լ · 30 · յ բ Օր · լբ · 23 ։ Սաղ. է · 13 ։ Հե · 17 ։ Հմր · 6 ։ Եմր · ժ · 11 · Ն Եւ. ժե. 8 ։ Սաղ · ճգ. 9 · Նաա. ա · 4 ։ Մատ · բ · 26 · ՝ Սաղ · Նդ · 1 · — Սաղ. ճկդ · 7 · ղ Հմր. 1 · դ Սաղ. լա · Տ · ճժբ. 5 · Ը Գէ · ժե · 26 ։ Սաղ · ի՛բ · 8 · — Հմր 25 ։ ա Թագ · իդ · 23 · դ Թագ · բ · 32 ։ Սաղ · է · Տ · — Սաղ · իդ · 4 · Ի Ծն. ժբ · 19 · Սաղ · ճ՛ժ · 3 · Հմր · 1 · Աստղ. բ · 32 · — ր Օր. է · 12 · Սաղ. ճ՛ժ. 80 · 102 · Բ Ծն · գ · 9 · ժ է. 1 · Յոր · ա · 1 · ֆ Հմր 21 · — Մատ · ե · 7 · ֆ Ղե · իդ · 23 · 24 · 27 · 28 ։ ֆ Սաղ · ժբ · 26 · ֆ Եւ · գ · 7 · Տ · Սաղ · Հր · 12 · 13 · Ֆ Յոբ · ի · 11 · 12 · Ես. ր · 11 · 12 · 17 · է · 15 · Դատ · գ · 27 ։

Ն· ՀՈՎ· ՔՔ·
1018

բարեաւանիներուն վրայ է , որ ըն-
նդ՝ ցածցընես ։
29 Քանզի իմ ՚ծրագրս դուն ես , ո՛վ Տէր ու իմ խաւարս Տէրը կը լուսաւորէ ։
30 Վասն զի քեզմով գունդի մը վրայ կը վազեմ , ու՚ իմ Աստուծովս պարիսպէ կ՚անցնիմ ։
31 Բ Աստուծոյ ճամբան կատարեալ է ։ Տէրոջը խօսքերը փորձուած են . անիկայ ամէն իրեն յուսացողներուն ասպար է ։
32 Քանզի Տ Տէրոջմէն զատ՝ ո՛վ է Աստուած . կամ մեր Աստուածմէն զատ՝ ո՛վ է վէմ ։
33 Իմ Է զօրաւոր ըերդս՝ Աստուած է . ու Ը իմ ճամբաս կատարեալ կ՚ընէ ։
34 Իմ ոտքերս եղջերուի ոտքերուն պէս կ՚ընէ , ու Ը իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցընէ ։
35 Բ Ձեռքերս պատերազմի կը վարժէ , ու իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը լարեն՚ ։
36 Ինծի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր . ու քու քաղցրութիւնդ զիս մեծցուց ։
37 Իմ ծքալելու ճամբաս ներքեւս լայնցուցիր , ու իմ ոտքիս չյօսեցաւ ։
38 Իմ թշնամիներս հալածեցի , ու զանոնք չջարդեցի . ու ետ չդարձայ՝ մինչև որ զանոնք հատցուցի ։
39 Եւ զանոնք հատցուցի , զետինը զարկի , որ չյանդնին . անոնք Իմ ոտքերուս տակը ինկան ։
40 Ու պատերազմի համար՝ ինծի զօրութիւն հաղցուցիր . և Ի իմ վրաս ելլողները տակս ձգեցիր ։
41 Ու իմ թշնամիներուս †կռնակը ինծի տ՚ըջեցիր տուիր՚ , որ զիս ատողները չարչեմ ։
42 ‡Աղաղակեցին , բայց ազատող չկար . ՚Տէրոջը ՚աղ՚աւ՚իցին , բայց անոնց պատասխան չտուաւ ։
43 Ան ատոնը զանոնք Իերկրի փոշիին պէս մանրեցի զանոնք Ճփողոցներուն ցեխին պէս կոխեցի ՚՚ճմլեցի ։
44 Ինէ իմ ժողովուրդիս կռիւներէն զիս ազատեցիր . ՚՚ զիս պահեցիր , Ը որ աղգերու ղլուխ ըլլամ . ՚՚ Ճիմ չգիտցած ժողովուրդս ինծի ծառայեց ։
45 Օտարները ինծի ՛ ‖խոնարհութիւն ըրին՚՚ իրենց ականջներովը լսածնուն պէս ինծի հնազանդեցան ։
46 Օտարները տկարացան , ու ՛իրենց պահուըտած տեղերէն դողդոջին ։
17 Տէրը կենդանի է , ու իմ Վէմս օրնեալ ըլլայ . և Ն՚իմ փրկութեանս վէմը Աստուած բարձր ըլլայ ։
48 Աստուած է որ Ը իմ վրէժս կը ինդրէ , ու ՚ժողովուրդները ինծի կը ՚ենազանդեցընէ ։
49 Իմ թշնամիներէս զիս հանելով՝ զիս իմ վրաս ելլողներէն աւելի բարձրացուցիր , ՚՚ Ը բռնաւոր մարդէն ազատեցիր ։
50 Ասոր համար ով Տէր՝ դ՚աղաեցուն մէջը զքեզ պիտի գովեմ , ու քու անուանդ սաղմոս պիտի երգեմ ։
51 Ի՚իր թագաւորին փրկութիւնները մեծցընողը՝ ու իր ՚՚ օծեալին՝ Դաւիթին ու ՚՚անոր սերունդին յաւիտեան ողորմութիւն ընողը Ան է ։

Գ Լ · Ի Գ

1 Դաւիթ իր վերջին խօսքերուն մէջ կը խոստովանի Աստուծոյ խոստմանցը վրայ իր ունեցած հաւատքը ։ 6 Չարերուն վճռական ստորադրութիւնը ։ 8 Դաւիթին զօրաւոր մարդոցը համրանքը ։

1 Ն՚ե Դաւիթին վերջին խօսքերը ասոնք են ։
Բեսսէի որդին Դաւիթ կ՚ըսէ . ՚՚Ան մարդը որ բարձրացաւ , Բ ցաւորայ Աստուծոյն օծեալը , ու Իսրայէլի վայելուչ երգերը շարադրողը , կ՚ըսէ .
2 †Տէրոջը Հոգին ինծմով խօսեցաւ . ու անոր խօսքը իմ լեզուիս վրայ էր ։
3 Իսրայէլին Աստուածը բուաւ . ՚՚ Իսրայէլին Տ վէմը ինծի խօսեցաւ , ը՚ԻԼ . Ի՚մարդոց վրայ իշխողը արդար ըլլ՚ , ու Ն՚Աստուծոյ վախովը իշխէ ։
4 Ան ատոնը Է՚ԱՒՒ՚ առաւօտեան ըլլսին կը նմանի , որ արեւուն ծագած առտնը Ի՚ԷՒՒ՚ . անանկ առաւօտի մը՝ որ առանց ամպի է , ու ՚՚ ճառագայթին , որ անձրևէն ետքը գետնէն կանանչ խոտը կը Բ՚՚՚ ։
5 Թէև իմ տունս Աստուծոյ քովը այսպէս չէ , Հաւկային ինծի հետ յաւիտենական ուխտ մը ըրաւ , որ ամէն բանի մէջ պատրաստ ու հաստատ է . քանզի իմ բոլոր փրկութիւնս ու իմ բոլոր բաղձանքս ՚՚ է , § ու պիտի չծաղկեցընէ՞՚՚ ։
6 Բայց բոլոր անօրէնները՝ դուրս նետուած փուշերու պէս պիտի ըլլան քանզի անոնք ձեռքով չեն բռնուիր ։
7 Եւ անոնց դպչելու մարդը՝ երկաթը ու նիզակին բունը ։ իրեն զէնք պիտի ընէ՚՚ ու իրենց եղած տեղը բոլորովին կրակի մէջ պիտի այրին ։
8 Դաւիթին զօրաւոր մարդոցը ա-

Ն· ՀՈՎ· ՔՔ·
1018

Ն՚ԱՒՂ· ՃԻԲ· 26 ։
Ն՚ԱՒՂ· ՃԻԲ· 2 ։
Ն՚ԱՒՂ· ՃՆՈ· 1 ։
Ղ՚ՀՈՎ՚· ԺԸ· 9 ։
Ղ՚ԱՒՂ՚· ՃԻԲ· 10 ։
- ՍԱՂ՚· ՃԻԲ· 20 ։
- ԳԼ· Է· 12· 13 · ՍԱՂ՚· ՃԻԲ 29 ։

- ԳԼ· Է 8· 9 · ԱՒՂ ՀԸ· 70 71 · ՃԻԲ· 27 ։
Բ ա ԹԱԳ · ԺԳ 12 · 13 · ՍԱՂ · ՃԻԲ · 20 ։
Գ Բ ՊԵՏ · ա 21 ։
Ե Բ ՕՐ · ԼԲ · 4 31 · ԹԻ ԻԲ 2 · 32 ։
Է ՍԱՂ ՃԾ · 2 ։
Ը ԵՒ ԺԲ · 21 · Բ ՄՆ · ԺԹ 7 · 9 ։
Թ ԴԱՏ · Ե 31 · ՍԱՂ ՃԻԲ 36 · Ա· ՈԱԿ Գ 15· ՈՎ· Գ Ե Ցճ· ՍԱՂ ՃԺ 3 ։
Ժ ԳԼ Է 15 16 · ԱՒՂ ՃԻԲ 29· ԵՒ· ԺԵ 3 ։

§ Կ՚ԱՒ ԻՒ· ՀԾԱՂԿԵՑՆԵ·

: ԵՒՐ ՀԱ· ՁՈՒԻ ։

Ն · ք · Ը · 1018

նուէները աստուած էն . * Ցօսէբ բա-
սէբեթ՝ թահքեմոնացին , որ զօրա-
վարներուն գլխաւորն էր . անիկայ
† է Ասօնացի Ադինօն , Ռոր անգամ
մը ուրեք հարիւր մարդը մէկէն մեռ-
ցուց՝ ։
9 Եւ անկէ ետքը ‡ Աքրուբացի
Դովդային որդին Եղիազարը՝ որ
Դաւիթին հետ եղող լրիւք զօրա-
ւորներուն մէկն էր , երբոր անոնք
պատերազմելու համար հոն ժողո-
վուած Փղշտացիները նախատեցին ,
10 ու Իսրայէլի մարդիկը փախան , Ա-
սիկայ ելաւ , ու Փղշտացիները
զարկաւ , մինչև որ ձեռքը յոգնե-
ցաւ , ու ձեռքը էր սուրին վրայ
փակաւ , և Տէրը ան օրը մեծ փրը-
կութիւն ըրաւ . ու ժողովուրդը
անոր ետևէն դարձաւ , միայն կո-
ղոպտուը առնելու համար ։
11 Եւ անկէ ետքը § Հարարացի Ա-
գէին որդին Սամման էր . Լու
Փղշտացիք ‖ գունդ մը կազմեցին՝ ,
ու հոն ոսպով լեցուն ադարակ մը
կար . և ժողովուրդը Փղշտացւոց
12 առջևէն փախաւ . Բայց անիկայ
ագարակին մէջտեղը կայնեցաւ ,
զանիկայ պաշտպանեց , ու Փղշտա-
ցիները զարկաւ . և Տէրը մեծ
փրկութիւն ըրաւ ։
13 Ու ¶ երսուն ‖ զօրավարներուն իրե-
քը իջան , և հունձքի ատեն ¶ Ոդողո-
մի քարայրը՝ Դաւիթին եկան . ու
Փղշտացւոց մէկ գունդը ‖ Ռափայիոց
14 հովիտին մէջը բանակեր էր ։ Եւ
ան ատենը Դաւիթ ‖ բերդին մէջն
էր . ու ան ատենը Փղշտացիք
Բեթլէհեմի մէջ բերդապահ զօրք
15 ունէին ։ Եւ Դաւիթ փափաքելով
բսաւ . Բեթլէհեմին դուռը եղող
ջրհորէն ո՛վ ինձի ջուր կը խմցընէ ։
16 Ան ատենը աս իրեք զօրաւորները՝
Փղշտացւոց բանակը ճեղքեցին ան-
ցան , ու Բեթլէհեմին դուռը եղող
ջրհորէն ջուր քաշեցին , ու առին
Դաւիթին տարին . բայց անիկայ
չուզեց անկէ խմել , հապա զանի-
կայ թափելով՝ Տէրոջը Նուիրեց .
17 Ու բսաւ . Ո՛վ Տէր , քաւ լիցի
որ ես աս բանը ընեմ . իրենց
կեանքը վտանգի մէջ դնելով գա-
ցող մարդիկներուն ՆարիՆը խմի .
ու անկէ խմել չուզեց ։ Ասոնք են
ան իրեք զօրաւոր մարդիկներուն
ըրածները ։
18 Եւ Շարուհեան Ցովաբին եղ-
բայրը Նաբեսսա ան իրեք մարդոց
գլխաւորն էր . ու անիկայ իր նի-
զակը իրեք հարիւր մարդոց վրայ
վերցընելով՝ սպաննեց զանոնք . ու
անիկայ իրեքին մէջը անուանի էր ։
19 Եւ անիկայ իրեքէն աւելի համա-
բուի ունենալուն համար , անոնց
գլուխ եղաւ . բայց ‖ Ա՛ իրեքին
պատիՆէն չհասաւ ։
20 Ու մեծ գործքեր գործող * Կաբե-
սեէլացի զօրաւոր մարդու մը որ-
դւոյն Ցովհադային որդին Բանեան՝
† Մովաբին երկու զօրաւոր մար-
դիկները մեռցուց . Նաև ձիւնի
ժամանակ իջաւ՝ ու դուրսին մէջը
21 առիւծը մեռցուց ։ Ասիկայ չե-
բրեէլի Եղիպտացի մարդ մըն ալ
մեռցուց . ու Եգիպտացիին ձեռքը
մէկ նիզակ մը կար . բայց Բանէա
ցուպով մը անոր վրայ իջաւ ,
ու Եգիպտացիին ձեռքէն նիզակը
յափշտակեց , և զանիկայ իր նի-
22 զակովը մեռցուց ։ Ցովհադային
որդին Բանեան աս բաներն ըրաւ ,
ու իրեք զօրաւորներուն մէջը ա-
23 նուանի եղաւ . Երսուներէն աւելի
պատիւ ուներ . բայց ‖ Ա՛ իրեքին
պատիՆէն չհասաւ . ու Դաւիթ
զանիկայ իր * ատեանին վերակացու
24 դրաւ ։ Ցովաբին եղբայրը Ասայէլ եր-
սուներէն էր . Նաև Բեթլէհեմացի
25 Դովդային որդին Եղխանան , ¶ Հա-
րօդացի Սամմա , Ցարօդացի Եղի-
26 կա , § Փելլատացի Հելղէս , Թե-
27 կուացի Եկդեսի որդին Իրաս , Ա-
նաթովթացի Աբիեզեր , Ովսացի
28 Մեբունայ , Աքուքացի Սալմոն ,
29 Նետոփաթացի Մահարայ , Նետո-
փաթացի Բանային որդին Ալար ,
Բենիամինի որդւոցը Գաբաայէն՝
30 Ռիփայի որդին Եթթի , Փարա-
թոնացի Բանեա , Գաասի Հո-
31 բերէլեն , Արբաթացի Ա-
բիէլբոն , Բարումացի Ազմաթ ,
32 Սաղարիացի Եղիաբա , Հասենի
33 որդիներէն՝ Ցովնաթան , Արարացի
Սամմա , Արարացի Սարարի որդին
34 Ահիամ , Մաքաթիի որդւոյն Ա-
հասբայիի որդին Եղիփաղետ , Գե-
զոնացի Ահիտոփելի որդին Եղիամ ,
35 Կարմելացի Հասրէ , Արբացի Փաա-
36 րայ , Սուբացի Նաթանի որդին
37 Իգաղ , Գադացի Բանի , Ամմոնա-
ցի Սելեկ , Շարուհեան Ցովաբին
կապարձակիրը Բերովթացի Նահա-
38 րա , Գեթերացի Իրաս , Գեթերա-
39 ցի Գարեբ , ¶ քսանհինգ Ուրիա . ա-
մէնը երսունուերկուքն էին ։

Ն · ք · Ը · 1018

* Ցօս . ժե . 21 ։

† Ել . ժե . 15 ։ ա Մն . ժա . 22 ։

† ա Մն . ժա . 23 ։

ա Թագ . իբ . 14 ։ Գե . բ . 18 ։ ի . 23 ։

‡ Գե . բ . 18 ։

§ Ցես ա Մն . ժա . 27 ։

§ Կ—Ր՝ Փելոնացի . ես ա Մն . ժա . 27 ։

Ե ա Մն . ժա . 27 ։

Լ Ցես ա Մն ժա . 13 . 14 ։

‡ Կ—Ր՝ քա յոյի մէջ ժողովածեցան .

Ե ա Մն . ժա . 15 ։

‖ Կ—Ր՝ գրէ խաւորնե-րուն

Ժ ա Թագ . իբ . 1 ։

‖ Գե . ե . 18 ։ ե ա Թագ . իբ . 4 . 5 ։

Ն Ղե . ժե . 10 ։

Ղ ա Մն . ժա . 20 ։

Ն · ք · Ը · 1018

* Ցես . ժե . 21 ։

† Ել . ժե . 15 ։ ա Մն . ժա . 22 ։

† ա Մն . ժա . 23 ։

Ն ա Թագ . իբ . 14 ։ Գե . բ . 18 ։ ի . 23 ։

Լ Գե . բ . 18 ։

ա Ցես ա Մն . ժա . 27 ։

§ Կ—Ր՝ Փելոնացի . ես ա Մն . ժա . 27 ։

Ղ Դատ . բ . 9 ։

Ղ բ Օբ . ա . 24 ։

ԳԼ · ԻԴ

1 Դաւիթ՝ Սաւուլէն փախչելով , կը տիպէ Ցովաբը որ երթայ ժողովուրդը Նամրէ ։ 5 Զօրապետները իր առաջ ու քսան օրուան մէջ մէկ միլիոն իրեք Նարիւր Նազար պատերազմական մարդոց Նաչիւը կը բերեն ։ 10 Գադին միլոցովը՝ իրեք Նարուած կ'առաջարկուի Դաւիթին , որ կը գրէսյ , ու իրեք օրուան ժանտախտը կ'ընտրէ ։ 15 Եօթանասուն Նազար մարդոց մեռնելէն ետքը՝ Դաւիթ ապաշխարելով՝ Երուսաղեմի կործանմանը առջևը կ'առնէ ։ 18 Դաւիթ՝ Գադին ծանուցանելը-

Ն · ք · գՖ · 1017

Ա ԳԼ իա · 1 · Բ Տճս ամՆ · իա · 1 · Ցակ · ա · 13 · 14 · ֆ ամՆ · իէ · 23 · 24 ·

Ր Դատ · ի · 1 ·

Ի Երեմ · ԺԷ · 5 ·

ՂԲ Օր · բ · 36 · Ցես · ԺՖ 9 · 16 ·

Ի Թես · ա · 1 · 3 ·

* Կ՚ · Դան · Նի անտա · որ · տես Ցես · ԺԹ · 47 · Դատ · Ժբ · 29 ·

Ը Ցես · ԺԹ · 28 · Դատ · Ժբ · 28 ·

Ի Տճս ամՆ · իա · 5 ·

Ժ ա Թագ · իդ · 5 ·

Ի Գլ · Ժր · 13 ·

Լ ա Թագ · ԺԳ · 13 ·

Ի ա , ապ · Թ 9 · ա ՄՆ · ԽԹ · 29 ·

Ժ ա Թագ · իբ · 5 ·

Ի Տես ա ՄՆ · իա · 12 ·

վը Ռահային կալը Դախու կ՚առնէ · ուր տեղ, զոր մատուցանելով Ժանտախտը կը դադրի ·

1 Եւ * Տէրոջը բարկութիւնը նորէն Իսրայէլի վրայ բորբոքեցաւ · ու Բ Դաւիթը անոնց դէմ գրգռեց, ըսելով · Գնա Իսրայէլը ու Ցու-
2 դան համրէ · Եւ Թագաւորը իր քովը եղող Ցովաբ զօրապետին ըսաւ · Իսրայէլի բոլոր ցեղերուն մէջը՝ Դանէն մինչև Բէրսաբէէ պտըտէ · ու ժողովուրդը համրեցէք , որ Ի ժողովուրդին թիւը
3 գիտնամ · Եւ Ցովաբ ըսաւ Թագաւորին · Քու Տէր Աստուածդ՝ ժողովուրդը որչափ որ է , հարիւրապատիկ աւելցընէ , ու իմ Թագաւոր տէրոս աչքերը տեսնեն · բայց իմ Թագաւոր տէրս ինչո-
4 համար ասիկա կը ցանկայ · Ու երբոր Թագաւորին խօսքը Ցովաբին ու զօրավարներուն վրայ աստկացաւ , Ցովաբը զօրավարներուն հետ Թագաւորին առջևէն ելաւ , որ Իսրայէլի ժողովուրդը
5 համրէ · Եւ Ցորդանանէն անցան · ու Գադի ձորին մէջը եղող քաղաքին աջ կողմը՝ Ներսէրը բանակե-
6 ցան · Ետքը Ցազերը , Եւ Գաղաադը ու Թաքթիմհատսի երկիրը եկան · անկէ * Դանեհասանը , ու ԸՍի-
7 դոնի չրջակաները եկան · Եւ եկան Տիւրոսի ամրոցը՝ ու Խևացւոց ու Քանանացւոց ամէն քաղաքները գացին · և Ցուդայի Հարաւային
8 կողմը՝ Բէրսաբէէն ելան · Ու բոլոր երկիրը պտըտեցան · և ինը ամիսէն ու քսան օրէն ետքը՝ Երու-
9 սաղէմ դարձան · Եւ Ցովաբ ժողովուրդին համրանքին ցուցակը Թագաւորին տուաւ · Ի Իսրայէլի մէջ ուրթը հարիւր հազար սուր քաշող պատերազմական մարդ կար · և Ցուդայեանք հինգ հարիւր հազար մարդ էին ·
10 Եւ Դաւիթ ժողովուրդը համրելէն ետքը՝ իր խղճմտանքը զինքը դրդեց · ու Դաւիթ Տէրոջը ըսաւ · Ա՛ ընելով Մեծ մեղք գործեցի · ով Տէր՝ հիմա քու ծառայիդ ա՛ մեղքը ներէ · քանզի Ամէն յիմա-
11 րութիւն ըրի · Ու երբոր Դաւիթ առաւօտուն ելաւ , Տէրոջը խօսքը Դաւիթին Ի տեսանողին՝ Գադ
12 մարգարէին եղաւ , ըսելով · Գնա ու Դաւիթին ըսէ · Տէրը այսպէս կ՚ըսէ · Ես քեզի իրեր բան կ՚առաջարկեմ · անոնցմէ մէկը ընտրէ որ
13 քեզի ընեմ · Եւ Գադ Դաւիթին գալով՝ անոր պատմեց , ու անոր ըսաւ · Եօթը տարի քու երկրիդ վրայ սով րլլայ , կամ իրեք ամիս քու թշնամիներուդ երեսէ՞ն փախչիս , ու անոնք քեզ հալածեն , կամ

Ն · ք · գՖ · 1017

թէ՝ իրեք օր քու երկրիդ վրայ ժանտախտ րլլայ · հիմա մտածէ ու տես՝ թէ ինչ պատասխան տանիմ
14 զիս խրկողին · Եւ Դաւիթ՝ Գաղին ըսաւ · Խիստ մեծ նեղութեան մէջ եմ · հիմա Տէրոջը ձեռքը իյնանք , Հբանզի անոր գթութիւնը չատ է · ու Մարդու ձեռք չիյնամ՝
15 Եւ Տէրը ան առաւօտեն մինչև որոշուած ժամանակը՝ Իսրայէլին վրայ ժանտախտ խրկեց · ու Դանէն մինչև Բէրսաբէէ՝ ժողովուրդէն եօթանասուն հազար մարդ մեռաւ ·
16 Եւ Ա՛ հրեշտակը ձեռքը Երուսաղէմին վրայ երկընցուց , որ զանիկայ ջնջէ · ու ասոր չարիքին վրայ՝ Տէրոջը սիրտը իջաւ · ու ժողովուրդը ջնջող հրեշտակին ըսաւ · Հերիք է · ալ ձեռքդ քաշէ · ու Տէրոջը հրեշտակը Ցեբուսացի
17 Ռահային կալին քովը էր · Եւ Դաւիթ՝ ժողովուրդը զարնող հրեշտակը տեսնելով , Տէրոջը ըսաւ · Ահա Ես մեղանչեցի , ու Ես անօրինութիւն ըրի · բայց ասոնք ոչխարները ի՞նչ ըրին · կ՚աղաչեմ՝ քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ ·
18 Եւ Նոյն օրը Գադ՝ Դաւիթին եկաւ , ու անոր ըսաւ · Ելի՛ Ցեբուսացի Ռահային կալին մէջ Տէրո-
19 ջը սեղան մը կանգնէ · Եւ Դաւիթ՝ Գադին ըսածին համեմատ վեր ելաւ , ինչպէս որ Տէրը պատուիրեր
20 էր · Ու Ռահա նայեցաւ · ու երբոր տեսաւ որ Թագաւորը և անոր ծառաները դէպ ի իրեն կու գան , Ռահա ելաւ · ու երեսը մինչև գետինը երկրպագութիւն ըրաւ Թա-
21 գաւորին · Եւ Ռահա ըսաւ · Ընդեզ ի՞նչ պատճառով իմ Թագաւոր տէրս իր ծառային եկաւ · Ու Դաւիթ ըսաւ · Ա՛ կալը քեզմէ ծախու առնելու , ու Տէրոջը սեղան մը չինելու համար , որ ժողովուրդին
27 Բայց Ե միթէ Աստուած իրաւ ը-
նէ Ե երկրիս վրայ պիտի բնակի՞.
ահա երկինքը ու Ե երկինց երկին-
քը քեզ չեն կրնար պարունակել.
ո՛ր կը մնայ աս իմ շինած տունս։
28 Սակայն ով Տէր Աստուած իմ, քու
ծառայիդ աղօթքին ու խնդրուած-
քին նայէ, որ քու ծառայիդ այսօր
քու առջևդ ըրած պաղատանքը ու
29 աղօթքը լսես. Որպէս զի աս տանը
վրայ գիշեր ցորեկ քու աչքերդ բաց
ըլլան, ան տեղւոյն վրայ՝ որուն

Ն·Ք·ՂՖ· 1004

՚՚ բ Թագ· է·2։ ա Պն· ժե·1։
՚՚ բ Պն·ը· 8, 9։
Վ բ Թագ· է·5·12, 13։ Գ Ր·ե·3, 5։
՚՚ ա Պն·իբ· 5։6։
բ Հմր 9։ բ Օր·Լ՚·26»։
ց Ել·ԺԵ· 12, ՃՃ։
՚՚ Ել·Թ·33։ Եզր·Թ· 5։ Ես·ա· 15։
ֆ Ել·ԺԵ· 11։ բ Թագ· է·22։
ֆ Ղ՚·ԺԵ· 1։ Գ Ր·գ· 6։ գ Թագ· ի·3։
՚՚ բ Օր·է·9։ Նէեմ՚·ա· 5։ Դան· Թ·4։
Ֆ Գ Ր·բ·4։ բ Թագ·է· 12, 16։
՚՚ բ Թագ·՚՚ է·25։
Ի բ Պն·բ· 6։ Ես·կգ· 1։ Երեմ՚· իգ·24։ Գոր·է· 49։ ԺԵ· 24։ ՚՚
ֆ բ Կր·ԺԲ· 2։

Համար ըսիր Թէ՝ Տէմ անունս հոն պիտի ըլլայ . այնպէս `որ՝ աս տեղը քու ծառայիդ ըրած աղօթ-
30 քը լսես : ԻՒրեմն քու ծառայիդ՝ և քու ժողովուրդիդ Իսրայէլին աս տեղը ըրած աղօթքները լսես . այո՛ քու բնակութեանդ տեղէն երկինքէն լսես , ու լսած ատենդ նե-
րես :
31 Թէ որ մէկը իր ընկերին դէմ մեղանչէ , ու ան ալ երդումի ընել տալու համար՝ Ւանոր երդումի ա-
ռաջարկէ , ու երդումը աս տունը
32 քու սեղանիդ առջևը գայ , Ան ատենը դուն երկինքէն լսես ու կա-
տարես , ու քու ծառաներդ դա-
տես , Ե՛ւ չանցաւորը դատապար-
տես , ու անոր *ըրածը անոր գլու-
խը բերես . և արդարը արդարացը-
նես , ու անոր արդարութեանը չափովը անոր հատուցում ընես :
33 ԵՒ Թէ որ քու ժողովուրդդ Իսրայէլը՝ քեզի դէմ մեղանչելնուն համար՝ իրենց թշնամիներուն առ-
ջևը յաղթուին , ու Ի՛քեզի դառնան և քու անունդ փառք տան , ու
աս տանս մէջ քեզի աղօթք՝ ու ա-
34 ղաչանք ընեն , Ան ատենը դուն եր-
կինքէն լսես , և քու ժողովուրդիդ Իսրայէլին մեղքը ներես , ու անոնց հայրերուն տուած երկիրդ՝ զանոնք դարձընես :
35 Թէ որ անոնց քեզի դէմ մեղք գործելուն համար Ժերկինքը գո-
ցուի , ու անձրեւ չգայ . ու անոնք աս տեղս քեզի աղօթք ընեն , և քու անունդ փառք տան , ու զանոնք նեղելուդ համար՝ իրենց մեղքերէն
36 դառնան , Ան ատենը դուն երկինք-
քէն լսես , և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ Իսրայէլին մեղ-
քը ներես , որ Ւանոնց սորվեցընես Ւան ազիզ ճամբան , որուն մէջը պիտի քալեն . ու քու ժողովուր-
դիդ ժառանգութիւն տուած երկ-
րիդ վրայ անձրեւ տաս :
37 Ե՛թէ որ երկրի վրայ սով , կամ ժանտախտ , կամ խորշակահարու-
թիւն , Ւմ ա՛րմտենց գալուկ , Ւմ մարախ , Ւմ թրթուր ըլլայ , կամ անոնց թշնամիները զանոնք իրենց †բնակած երկրին մէջը նեղեն , Ւմ
ո՛ր և իցէ հարուած կամ հիւան-
38 դութիւն ըլլայ , քու բոլոր ժողո-
վուրդդ Իսրայէլէն ո՛ր և իցէ մարդ՝ աղօթք մը ու խնդրուածք մը ըն-
լու ըլլայ , ու իւրաքանչիւր մարդ իր սրտին ախտը ճանչնալով՝ ձեռ-
քերը դէպ՛ի աս տունը երկնցընէ ,
39 Ան ատենը դուն երկինքէն՝ քու բնակութեանդ տեղէն լսես , ու ներես , ու ընես . և ամէն մարդու՝ իր բոլոր ճամբաներուն համեմատ
հատուցում ընես , անոր սիրտը գիտնալուդ համար . վասն զի Ձ քու-
լոր մարդոց որդիներուն սիրտը մի-
40 նակ դուն գիտես . Ւնպէս զի քեզմէ վախնան իրենց բոլոր օր-
երուն մէջը՝ որչափ ժամանակ որ մեր հայրերուն տուած երկրիդ վրայ պիտի ապրին :
41 Ու քու ժողովուրդդիդ Իսրայէլէն չեղող՝ և հեռաւոր երկրէ մը քու անունդդ համար եկող օտարականն
42 ալ՝ (վասն զի քու մեծ անունդ ու հզօրաւոր ձեռքդ ու երկընցած բազուկդ պիտի լսեն ,) Թէ որ գայ ու աս տանս մէջ աղօթք ընէ ,
43 Դուն երկինքէն քու բնակութեանդ տեղէն լսես , և օտարականին քեզ ըրած ամէն խնդրուածքը կատա-
րես , Ւոր երկրիս ամէն ժողովուրդ-
ները քու անունդ ճանչնան , ու քու ժողովուրդիդ Իսրայէլին պէս Ձքեզմէ վախնան , և գիտնան Թէ աս իմ շինած տանս վրայ քու անունդդ կոչուած է :
44 Երբոր քու ժողովուրդդ իր Թըշ-
նամիին դէմ պատերազմի երթայ ան ճամբով՝ որ դուն պիտի խրկես զանոնք , Թէ որ անոնք աս քու ընտրած քաղաքիդ , ու քո՛ա-
նունդդ համար աս իմ շինած տանս կողմը Ւէրուսաղէմ՝ Տէրոջը աղօթք ը-
45 նեն , Երկինքէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , և անոնց ի-
րաւունք ընես :
46 Երբոր քեզի դէմ մեղք գործեն , (Ձքանզի մեղք չգործող մարդ չը-
կայ ,) ու անոնց բարկանալով՝ զա-
նոնք թշնամիին ձեռքը մատնես , ու անոնց գերեվարները Ւերկնամիին հեռու կամ մօտ երկիրը գերի տա-
47 նին զանոնք , Ւթէ որ ան իրենց գե-
րութեան երկրին մէջը ղեղջի գան ու դառնան , և իրենց գերեվարներուն երկրին մէջը քեզի աղաչեն ու Ւը-
սեն . Մեղք գործեցինք , անօրէ-
նութիւն ու անիրաւութիւն ը-
48 րինք . Եւ Թէ որ զանոնք գերի տա-
նող թշնամիներուն երկրին մէջը՝ Ւրենց բոլոր սրտովը ու իրենց բո-
լոր հոգիովը քեզի դառնան , ու ի-
րենց երկրին՝ որ իրենց հայրերուն տուիր , և քու ընտրած քաղաքիդ , ու քու անունդդ համար իմ շինած տանս կողմը Ւէրուսաղէմ՝ քեզի աղօթք
49 ընեն . Դուն երկինքէն քու բնա-
կութեանդ տեղէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , ու անոնց
50 իրաւունք ընես , Եւ քու ժողո-
վուրդդիդ քեզի դէմ ըրած մեղքը ու բոլոր յանցանքը ներես . ու Ւսպէս պէս ընես՝ որ անոնց գերեվարները անոնց վրայ գթան , և անոնց ողոր-
51 մութիւն ընեն . Քանզի Ւանոնք

Ե Բ Օր · ԺԸ · 11 ։
Ի Բ ՄՆ · Ի · 9 ։ Նէեմ. ա · 6 ։
Ղ Եզ · Իբ · 11 ։ Ղէ · ե · 1 ։
Ի Բ Օր · Իե · 1 ։
* Եբր · Ճամբան
Ը Ղէ · Իզ · 17 ։ Բ Օր · Իը · 25 ։
Ի Ղէ · Իշ · 39 , 40 ։ Նէեմ. ա · 9 ։
Ի Ղէ · Իշ · 19 ։ Բ Օր · Իը · 23 ։
Ի Սաղ · Իե · 4 ։ Իե · 11 ։ ղԹ · 12 ։ ՃԽԹ · Տ ։
Լ ա Թագ · ԺԸ · 23 ։
Ի Ղէ · Իզ · 16 , 25 , 26 ։ Բ Օր · Իը · 21 , 22 , 27 , 38 , 42 , 52 ։ Բ ՄՆ · Ի · 9 ։
† Եբր · ԴԸՈ-ՆԵՐՈՒՆ

Ժ ա Թագ · ԺԶ · 7 ։ ա ՄՆ · Իը · 9 ։ Սաղ · ԺԱ · 4 ։ Երեմ. Իե · 10 ։ Գոր · ա · 24 ։
Ի Սաղ · ՃԼ · 4 ։
Հ Բ Օր · գ · 24 ։
Ն ա Թագ · ԺԸ · 46 ։ գ Թագ. ԺԹ. 19 ։ Սաղ · կՀ · 2 ։
Ղ Սաղ · ՃՐ · 15 ։
Ճ Բ ՄՆ ։ Զ · 36 ։ Ընակ · ի · 9 ։ Ձոգ · է · 20 ։ Յակ · գ · 2 ։ ա Ցօ՛ · ա · Տ ։ 10 ։
Ի Ղէ · Իշ · 34 , 44 ։ Բ Օր · Իը · 36 , 64 ։
Յ Ղէ · Իշ · 40 ։
Ն Նէեմ. ա · 6 ։ Սաղ · ՃԳ · 6 ։ Դան. Թ · 5 ։
Ղ Երեմ. Իթ · 12 , 13 , 14 ։
ա Դան. Զ · 10 ։
Ղ Եզր · է · 6 ։ Սաղ · ՃԶ · 46 ։
Ղ Բ Օր · Ք · 29 ։ Նէեմ. ա · 10 ։

Ն. ք. ՀԿՔ. 1004

քու ժողովուրդդ ու քու ժառանգութիւնդ են, որ զանոնք Եգիպտոսէն՝ Երկաթի հնոցին միջէն հանե-
52 ցիր։ Եւ քու ծառայիդ խընդրուածքին ու քու ժողովուրդիդ Իսրայէլին խնդրուածքին՝ քու
աչքդ ամէն ատեն բաց ըլլայ, որ ա-
նոնց քեզի կրած ամէն աղաղակը
53 լսես։ Քանզի երկրին ամէն ժողովուրդներէն դուն զատեցիր անոնք,
որ քու ժառանգութիւնդ ըլլան.
ինչպես որ քու ծառային Մովսէսին ձեռքովը խօսեցար, երբոր մեր
հայրերը Եգիպտոսէն հանեցիր, ով
Տէր Եհովայ։
54 Երբոր Սողոմոն աս բոլոր աղօթքը ու խնդրուածքը Տէրոջը ըրաւ
լմընցուց, Տէրոջը սեղանին առջևէն
ելաւ, ուր որ ձեռքը դէպ՚ի երկինքը երկնցուցած ծունկ չոքեր
55 էր, Ու ոտքի վրայ կայնելով, Իսրայէլին բոլոր ժողովքը բարձր ձայ-
56 նով օրհնեց, ու ըսաւ. Օրհնեալ ըլլայ Տէրը, որ իր բոլոր ըսածին
համեմատ՝ իր Իսրայէլ ժողովուրդին հանգստութիւն տուաւ, Ու
իր ծառային Մովսէսին ձեռքովը
խօսած ամէն բարի խօսքերէն բնաւ
57 մէկ խօսք մը դետինը չինկաւ։ Մեր Տէր Աստուածը մեզի հետ ըլլայ,
ինչպես որ մեր հայրերուն հետն էր.
Ու մեզ չթողու, ու մեզ երեսէ
58 չդարձնէ, Եւ մեր սիրտը իրեն դարձնէ, որ իր բոլոր ճամբաներուն մէջը
քալենք, ու պահենք իր պատուիրանքները, կանոնները ու իրաւունքները, որոնք մեր հայրերուն
59 պատուիրեց։ Եւ Տէրոջը առջևը մատուցած աս պաղատանքի խօսքերս՝ գորեկու գիշեր մեր Տէր Աստուածին մօտենան, որ օրէ օր պահանգած գործքերուն մէջը՝ իր ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին
60 իրաւունք ընէ. Որ երկրիս ամէն ժողովուրդները գիտնան, Թէ Եհովան ինքն է Աստուածը, և ուրիշ
61 մը չկայ։ Ու ձեր սիրտը մեր Տէր Աստուածին առջևը ուղիղ ըլլայ, որ աս օրուան պէս՝ անոր կանոններուն մէջ քալէք, ու անոր պատուիրանքները պահէք։
62 Եւ թագաւորը ու բոլոր Իսրայէլը անոր հետ՝ Տէրոջը առջևը
63 զոհեր մատուցին։ Եւ Սողոմոն Տէրոջը մատուցած խաղաղութեան զոհին համար՝ քսանուերկու հազար արջառ, ու հարիւր քսան հազար ոչխար զոհ ըրաւ. և թագաւորը ու
բոլոր Իսրայէլին որդիքը Տէրոջը
64 տանը նաւակատիքը ըրին։ Ան օրը թագաւորը Տէրոջը տանը առջևը եղող բակերուն մէջտեղը սըրբեց. քանզի իր ողջակէզները,

հացի ընծաները, ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց. վասն զի Տէրոջը առջևի պղնձէ սեղանը պզտիկ կու գար աս ողջակէզները, հացի ընծաները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը ընդունելու։
65 Եւ ան ատենը Սողոմոն ու անոր հետ բոլոր Իսրայէլը՝ մէկ մեծ ժողով մը՝ Եմաթի մուտքէն մինչև Եգիպտոսի հեղեղատը՝ մեր Տէր Աստուածդին առջևը եօթը օր՝ ու եօթը օր ևս՝ տասնըչորս օր
66 տօն ըրին։ Ութերորդ օրը ժողովուրդը արձակեց, ու որոնք թագաւորը օրհնեցին, ու իրենց վրանները գացին, զուարթ սրտով մը ու բախանալով ան բոլոր բարիքներուն համար, որ Տէրը իր Դաւիթ ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին ըրաւ։

ՆՀ. ՔՀ. 1004

Ֆբ ՄԷ. դ. 1։

— Թուա. լդ. 8։ Ցես. ժգ. 5։ Դատ. գ. 3։ դ Թագ. ժգ. 25։

Բ Ծն. ժե. 18։ Թուա. լդ. 5։

Ֆբ Մն. է. 8։ դ Հմր 2։ Ղև. իգ. 34։

Ե բ Մն. է. 9, 10։

ԳԼ. Թ

1 Աստուած Սողոմոնին հետ ուխտ կ՚ընէ տեսիլքի մէջ։ 10 Սողոմոնին ու Քիրամին իրարու խրկած ընծաները։ 15 Սողոմոնին գործքերուն մէջ՝ օտարազգիները անոր ստորին ծառաներն էին։ և Իսրայէլացիք պատուաւոր ծառաները։ 24 Փարաւոնին աղջիկը իր տունը կը փոխադրուի։ 25 Սողոմոնին տարեկան հանդիսաւոր զոհերը։ 26 Սողոմոնին նաւերը Ոփիրէն ոսկի կը բերեն։

1 — Երբոր Սողոմոն՝ Տէրոջը տունը,
Ե ու թագաւորական տունը,
և էր սրտին բոլոր ուզած բաները
2 շինեց լմընցուց, Տէրը Սողոմոնին
նորէն երևցաւ, Ե ինչպէս որ Գաբաւոնի մէջ երևցեր էր։ Եւ Տէրը
3 անոր ըսաւ. Ես իմ առջևս ըրած աղօթքդ ու պաղատանքդ լսեցի. և
աս չքնաղ տունդ սրբեցի, Ղոր իմ
անունս յաւիտեան հոն դնեմ. Ես ու
իմ աչքերս ու սիրտս միշտ հոն պիտի
4 ըլլան։ Եւ Թէ որ դուն իմ առջևս՝ Ես Հօրդ Դաւիթին քալածին պէս, Ի կատարեալ սրտով
և ուղղութեամբ քալես, ու բոլոր
քեզի պատուիրածներուս ընես, ու
իմ կանոններս ու դատաստաններս
5 պահես, Ան ատենը քու թագաւորութեանդ աթոռը Իսրայէլի վրայ
յաւիտեան պիտի հաստատեմ,
ինչպես որ քու Հօրդ Դաւիթին
խօսեցայ՝ ըսելով. Իսրայէլի աթոռին վրայ քեզմէ մարդ պակաս պի-
6 տի չըլլայ։ Թէ որ դուք կամ ձեր որդիները ինծմէ խոտորիք, ու ձեր առջևը դրած պատուիրանքներս ու կանոններս չպահէք, ու երթաք ուրիշ աստուածներու ծառայութիւն ընէք, և անոնց երկրպագութիւն ընէք, Լ Ես ատենը Իսրայէլը պիտի ջնջեմ ան երկրին վրայէն, որն որ իրենց տուի. ու

իբր 992

— Բ Մն. է. 11, ՃԼ։

Բ Գլ. է. 1։ Ֆբ Մն. ը. 6։ Բ Գլ. գ. 5։

Է դ Թագ. ի. 5։ Սաղ. ժ. 17։

Ղ Գլ. ը. 29։ Ե բ Օր. ժա. 12։

Ը Գլ. ժա. 4, 6, 38։ ժգ. 8։ ժե. 5։

Ի Ծն. ժէ. 1։

Ֆբ Թագ. է. 12, 16։ Գլ. ը. 4։ ղ. 12։ ա Մն. իբ. 10։ Սաղ. ՃԼբ. 12։

Է բ Թագ. է. 14։ բ Մն. է. 19, 20։ Սպ. ՄԲ. 30, ՃԼ։

Լ բ Օր. դ. 26։ դ Թագ. ժէ. 23։ իե. 21։

Ն · Բ · ԳԲ · Իբր 992

Էիմ անուանս համար աս սրբած տունս երեսս պիտի ձգեմ . և Իսրայէլը բոլոր ազգաց մէջ առակ
8 ու կատակ պիտի ըլլայ : Եւ այս բարձր տանը համար՝ ամէն քովէն անցնողը պիտի զարմանայ , ու սուլելով պիտի ըսէ . Ինչո՞ւ համար աս երկրիս ու աս տանս այս-
9 պէս ըրաւ : Եւ պիտի ըսեն . Վասն զի անոնք իրենց Տէր Աստուածը թողուցին , որ անոնց հայրերը Եգիպտոսի երկրէն հաներ էր , ու ուրիշ աստուածներու յարեցան , և անոնց երկրպագութիւն ու ծառայութիւն ըրին . ասոր համա՛ր աս պատճառաւ Տէրը անոնց վրայ աս բոլոր չարիքները բերաւ :

Ա Գլ. ԹԼ. 37, 38 ։ Ե. 1 ։ Բ Մն. Բ. 1 ։

10 Եւ Սողոմոն երկու տունը՝ Տէրոջը տունը ու թագաւորական տունը քսան տարուան մէջ շինեցաւ ,
11 Եւրը , Տիւրոսի թագաւորը Քիրամ՝ եղևնափայտերով , մայր փայտերով , ու ոսկիով , անոր ամէն ուզածին համեմատ Սողոմոնին ծառայութիւն ընելուն համար , Սողոմոն թագաւորն ալ ան տասը քաղաքը քսան քաղաք տուաւ Գալիլեայի
12 երկրին մէջ : Ու Քիրամ Տիւրոսէն ելաւ , որ Սողոմոնին իրեն տուած քաղաքները տեսնէ . և իր
13 աչքերուն հաճոյ չերեւցան . Ուր ըսաւ . Ե՞ղբայր , աս ի՞նչ քաղաքներ են՝ որ ինծի տուիր . ու անոնց անունը Քաբսէլ երկիր կոչեց մինչև
14 աս օրս : Եւ Քիրամ՝ թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի խրկեց ։
15 Ու Սողոմոն թագաւորին դրած հարկին պատճառը աս էր՝ որ Տէրոջը տունը , իր տունը , ու Մելլոնը , ու Երուսաղէմի պարիսպը , Հասորը , Մակեդդոնը ու Գազեր
16 զերը շինէ : (Քանզի Եգիպտոսի Փարաւոն թագաւորը ելլելով՝ Գազերը առեր , ու զանիկայ կրակով այրեր էր , և ան Քանանացին որ անոր քովը քանակող քանանացիները մեռցուցեր էր , զանիկայ իր աղջկանը Սողոմոնին կնկանը օժիտ տուեր էր ։)
17 Ու Սողոմոն՝ Գազերը ու Վերին
18 Բեթորոնը շինեց , Նաև Բահաղաթը ու թագմորը երկրին անապա-
19 տին մէջ , Եւ Սողոմոնին բոլոր ըշտեմարանի քաղաքները , ու կառքերուն քաղաքները , ու ձիաւորներուն քաղաքները , և ան բոլոր շինութիւնները , որ Սողոմոն ուզեց շինել Երուսաղէմի մէջ , Լիբանանի մէջ , ու իր տէրութեանը բոլոր երկրին մէջ ։
20 Ամն բոլոր ժողովուրդները՝ որ Ամորհայիներէն , Քետացիներէն , Փերեզացիներէն , Խևացիներէն ու

Ն · Բ · ԳԲ · Իբր 992

Ցերուսացիներէն մնացեր էին , և
21 Իսրայէլի որդւոցմէ չէին , Այսինքն անոնց զաւակները , որ անոնցմէ երկրին մէջ մնացեր էին , զորս Իսրայէլի որդիքը չէին կրցեր զանոնք բնաջինջ ընել , Սողոմոն զանոնք ծառայ հարկատու ըրաւ մինչև ցայսօր :
22 Բայց Իսրայէլի որդիներէն Սողոմոն իրեն ծառայ չըրաւ . հապա անոնք էր պատերազմական մարդիկները իր պալատականները , իշխանները , զօրավարները , ու իր կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներն
23 էին : Սողոմոնին գործքին վրայ հինգ հարիւր յիսուն գլխաւոր իշխաններ կային , որոնք բանւոր ժողովուրդին վրայ կ՚իշխէին ։
24 Իսկ փարաւոնին աղջիկը Դաւիթին քաղաքէն ելաւ , ան ինծի համար շիներ էր . ան առեներ Մելլոնը շինեց :
25 Եւ Սողոմոն տարին երեք անգամ Տէրոջը համար շինած սեղանին վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր կը մատուցանէր , և Տէրոջը առջևի սեղանին վրայ խունկ կը ծխէր :
26 Ու Եզեր տունը լմընցուց , Սողոմոն թագաւորը Եզովմի երկրին մէջ՝ կարմիր ծովուն եզերքը՝ Ելաթին քովը եղող Եզեսիոնգաբերի
27 մէջ Տնաւեր շինեց : Եւ Քիրամ՝ Սողոմոնին ծառաներուն հետ , ծովու ճարտարներ նաւուտ եղող իր նաւավար ծառաները ան նաւե-
28 րով խրկեց : Ու անոնք Ոփիր գացին , և անկէ չորս հարիւր քսան տաղանդ ոսկի առին , ու Սողոմոն թագաւորին բերին ։

Գ Գլ. Ժ

1 Սաբայի թագուհին Սողոմոնին իմաստութեանը վրայ կը զարմանայ ։ 14 Սողոմոնին ոսկին ։ 16 անոր վահանները ։ 18 անոր փղոսկրեայ աթոռը ։ 21 անոր ամաններն ։ 24 անոր բերուած ընծաները ։ 26 անոր կառքերը ու ձիերը ։

1 Ու Սաբայի թագուհին Սողոմոնին համբաւը լսեց , ու Տէրոջը անունը լսեց , ու Տէրոջը անունը
2 Սողոմոնին հարցնելու եկաւ , որ խրթին խրթին հարցմունքներով զանիկայ փորձէ , Եւ Երուսաղէմ եկաւ խիստ շատ զօրքով , Ամենակը՝ ուղտերով՝ որ բոյսեր կը կրէին , շատ ոսկի՝ ու պատուական քարեր բերած ուղտերով . և Սողոմոնին քովը գնաց , ու բոլոր իր սրտին
3 մէջը եղածը անոր ըսաւ ։ Եւ Սողոմոն անոր բոլոր հարցմունքները բացատրեց , ու բնաւ անանկ մէկ խօսք մը չկար , որ թագաւորը չբացատրէ անոր ։
4 Երբ Սաբայի թագուհին՝ Սողոմոնին բոլոր իմաստութիւնը , ու անոր

Ա Մն · Թ · 1, Ե ։ Մաթ. Ժ. 42 ։ Ղուկ. Ժ. 31 ։
Բ Ես Դատ. Ժ. 12 ։ Ռաթ. Ա. 6 ։

Ն · ք · ՂԲ · Խբր 992

5 շինած տունը , եւ անոր սեղանին կերակուրները , ու անոր ծառանե-
րուն *բնակարանները , և սպասա-
ւորներուն կայնուածքը , ու ա-
նոնց հագուստները , և անոր մատ-
ռուակները , ու †Տէրոջը տունը
երթալու սանդուխը՝ տեսնելով ,
6 խելքը գլխէն գնաց . եւ Թագաւո-
րին ըսաւ . Քու վիճակիդ ու իմաս-
տութեանդ վրայով իմ երկրիս
մէջ լսած խօսքերս ճշմարիտ են ե-
7 ղեր . Բայց ես ան խօսքերուն չհա-
ւատացի , մինչև որ անոնք եկայ
ու իմ աչքերովս տեսայ . և ահա
ինծի՝ ասոր կէսը չպատմեցին . քու
իմաստութիւնդ ու երջանկու-
թիւնդ իմ լսած համբաւէս աւելի
8 է : Երանի քու մարդիկներուդ՝
երանի աս քու ծառաներուդ՝ ո-
րոնք միշտ քու առջևդ կայնելով
քու իմաստութիւնդ կը լսեն :
9 Քու Եհովայ Աստուածդ օրհնեալ
ըլլայ , որ քեզի հաւնեցաւ , ու քեզ
Իսրայէլի աթոռին վրայ դրաւ . Ե-
հովան Իսրայէլը յաւիտեան սիրե-
լուն համար , քեզ Թագաւոր ը-
րաւ , Ղոր իրաւունք ու արդարու-
10 թիւն ընես : Եւ Թագաւորին՝
հարիւր քսան տաղանդ ոսկի , ու
խիստ շատ խունկեր , ու պատուա-
կան քարեր տուաւ : Ալ անկէ
ետև այնչափ շատ խունկ չեկաւ ,
որչափ որ Սաբայի Թագուհին Սո-
ղոմոն Թագաւորին տուաւ :
11 Ընե Քիրամին նաւերը՝ որ Ոփի-
րէն ոսկի կը բերէին , Ոփիրէն խիստ
շատ Ալմուկ փայտեր ու պա-
12 տուական քարեր ալ բերին : Ե Եւ
Թագաւորը ալմուկ փայտէն չկնա-
րաններ շինեց՝ Տէրոջը տանը ու
Թագաւորական տանը համար , և
քնարներ ու տաւիղներ՝ երգեցող-
ներուն համար . ասանկ եալմուկ
փայտ բնաւ չեկաւ , ու չերևցաւ
մինչև ցայսօր :
13 Ու Սողոմոն Թագաւորը Սաբայի
Թագուհիին բոլոր ուզած ու իրմէ-
րած բաները տուաւ , Սողոմոն
Թագաւորը իր ‡ առատաձեռնու-
թեամբը անոր տուածէն ՚ի զատ :
Եւ անիկայ իր ծառաներուն հետ
դարձաւ իր երկիրը գնաց :
14 Ու մէկ տարուան մէջ Սողոմոնին
եկած ոսկիին կշիռը՝ վեց հարիւր
վաթսունմէկ տաղանդ ոսկի էր .
15 Ասոնցմէ ընդունելներն , ու վաճա-
ռականներէն , և ‖Արաբացւոց
բոլոր Թագաւորներէն , ու երկրին
նախարարներէն առնելէն ՚ի զատ :
16 Եւ Սողոմոն Թագաւորը կռած
ոսկիէ երկու հարիւր վահան շինեց .
մէկ վահանին համար վեց
17 հարիւր դրամ ոսկի գնաց : Ե կռա-

Ն · ք · ՂԲ · Խբր 992

ծոյ ոսկիէ իրէք հարիւր ասպար ալ
շինեց . մէկ ասպարին իրէք
մնաս ոսկի գնաց . ու Թագաւորը
Լիբանանի անտառին տունը դրաւ
զանոնք :
18 Եւ Թագաւորը փղոսկրէ մեծ
աթոռ մը շինեց , ու զուտ ոսկիով
19 պատեց զանիկայ . Աս աթոռը վեց
աստիճան ունէր . ու աթոռին վե-
րի ծայրը եւևէն բոլորչի էր , և նըս-
տելու տեղը մէկ կողմէն ու մէկալ
կողմէն յենարաններ ունէր , ու
յենարաններուն քովը երկու ա-
20 ռիւծներ կը կայնէին : Ե Հոն վեց
աստիճաններուն վրայ՝ մէկ կողմէն
ոչ մէկալ կողմէն տասներկու ա-
ռիւծներ կը կայնէին . բոլոր Թա-
գաւորութիւններու մէջ ասանկ
բան մը չշինուած էր :
21 Հու Սողոմոն Թագաւորին բոլոր
խմիչքի ամանները ոսկի էին . և
Լիբանանի անտառին տունը բոլոր
ամանները զուտ ոսկի էին . արծա-
թէ չկար . ինչու որ անիկա Սողոմո-
նին օրերը՝ բանի մը տեղ չէր սե-
22 պուեր : Վասն զի Թագաւորը ծո-
վու վրայ՝ Քիրամին նաւերուն հետ
Թարսեսացի նաւեր ունէր . Թար-
սեսացի նաւերը իրէք տարին անգամ
մը՝ ոսկիով , արծաթով , փղոս-
կրով , և կապիկներով , ու սիրա-
մարգներով բեռնաւորուած կու-
գային :
23 Եւ Սողոմոն Թագաւորը հա-
րստութեան ու իմաստութեան
կողմանէ՝ երկրիս բոլոր Թագաւոր-
24 ներէն մեծ եղաւ : Ու բոլոր երկիրը
կը փափաքէր Սողոմոնին երեսը
տեսնելու , որն որ Աստուած անոր սրտին
25 մէջը դրեր էր : Ու անոնց ամէնը
տարուէ տարի իրենց ընծաները կը
բերէին , այսինքն՝ արծաթէ աման-
ներ , ոսկիէ ամաններ , հանդերձ-
ներ , զէնքեր , խունկեր , ձիեր ու
ջորիներ :
26 Եւ Սողոմոն ՚ի կառքեր ու ձիա-
ւորներ ժողվեց , ու անիկայ հազար
չորս հարիւր կառք , ու տասներ-
կու հազար ձիաւոր ունեցաւ . ու
զանոնք կառքերու քաղաքներուն
մէջը , ու Երուսաղէմի մէջ՝ Թա-
27 գաւորին քովը տեղաւորեց : ՚Ե Եւ
Թագաւորը Երուսաղէմի մէջ՝ ար-
ծաթը քարերու պէս հասցուց՝ Եւ
մէջ երթալ , ու եղևնափայտը շատու-
թենէն՝ դաշտի մէջ եղող մոլա-
28 թզենիներուն պէս բերաւ : Եւ
Սողոմոնին ձիերը Եգիպտոսէն կու-
գային . ու Թագաւորին վաճա-
ռականներուն կարաւանը մէկ որո-
շուած գնով մը՝ Յէրհամներ
29 Ծախու կ՚առնէին : Ու Եգիպտոսէն

Ն · ք · ՂԲ · Խբր 992

Ծ Գլ · է · 2 ;

Ե Բ Մն · Թ · 17 , ԼԱ ;

Ղ Բ Մն · Ի · 20 , ԼԱ ;

Ղ Գլ · է · 4 · Բ Մն · Ի · 36 ;

Ղ Գլ · Գ · 12 · 13 · · 36 ;

Ճ Գլ · Գ · 26 ; Բ Մն · · · 14 ; Թ · 25 ; Ի Բ Օր · Ժէ · 16 ;

Ի Բ Մն · · · 15—17 ;

Ն Բ Օր · Ժէ · 16 ; Բ Մն · · · 16 ; Թ · 28 ;

* Ս—Ի՝ Ժողովէ ,

† Ա Մն · Իգ · 16 ;

† Ա—Ի՝ Տէրոջը տանը մէջ ըրած ողջակէզնե-
րը

‡ Եբր · ձեռքին համեմատ

Ե Բ Մն · Թ · 24 ; Սաղ · Ղբ · 10 ;

‖ Ա—Ի՝ Խառնախմբութիւնի ժողովուրդներուն

Է Գլ · Ժգ · 26 ;

մէկ կառք մը դուրս ելլելուն՝ վեց հարիւր արձաթով վեր կու գար, ու մէկ ձին հարիւր յիսուն արձաթով. նաև քեսակացոց բոլոր թագաւորներուն համար, և Ասորոց թագաւորներուն համար ալ՝ անոնց ձեռքովը այնպէս կը հանէին։

ԳԼ. ԺԱ

1 Սողոմոնին կիները ու հարճերը 4 անոր ծերութեան ատեն՝ զանիկայ կուապաշտութեան կը դարձընեն։ 9 Աստուած սպառնալիքներ կ'ընէ անոր։ 14 Սողոմոնին հակառակորդները. Ադադ՝ որ Եդիպտոսի մէջ իրեն հիւր ընդունուած էր. 23 ու Ռազոնը՝ որ Դամասկոսի մէջ կը թագաւորէր, 26 և Ցերոբովամը՝ որուն համար Աբիան մարգարեացաւ։ 41 Սողոմոնին գործերը, իր թագաւորութեան օրերը, ու մահը։ Իրոբովամ անոր տեղը կը յաջորդէ։

1 Ու Սողոմոն թագաւորը՝ փարաւոնին աղջիկէն՝ ի զատ Բաշտ օտարազգի կիներ, այսինքն՝ Մովաբացի, Ամմոնացի, Եդովմացի, Սիդոնացի, Քետացի կը-
2 նիկներ սիրեց. Ան ազգերէն՝ որոնց համար Տէրը Իսրայէլի որդւոցը ըսեր էր. Անոնց քովը մի մտնէք, ու անոնք ալ ձեր քովը չմտնեն, որ ձեր սիրտերը իրենց աստուածներուն չդարձընեն, Սողոմոն սի-
3 րով անոնց յարեցաւ։ Եւ անիկայ եօթը հարիւր իշխանազուն կնիկ, ու իրեք հարիւր հարճ ունէր. ու անոր կիները անոր սիր-
4 տը խոտորցուցին։ Եւ Սողոմոնին ծերութեան ժամանակը թանոր կիները անոր սիրտը՝ օտար աստուածներու դարձուցին, ու Եհնոր սիրտը իր Տէր Աստուծոյն հետ՝ ինչ հօր Դաւիթին սրտին պէս
5 կատարեալ չէր։ Եւ Սողոմոն՝ Սիդոնացւոց աստուծոյն Աստարովթին եւ Ամմոնացւոց գար-
6 շելի Մերզոմին եւս՝ գնաց։ Եւ Սողոմոն՝ Տէրոջը առջեւը չարութիւն ըրաւ, ու Տէրոջը եւս՝ իր հօր Դաւիթին պէս կատարեալ
7 չհետեւցաւ։ Այն ատենը Սողոմոն՝ Երուսաղէմին դիմացը եղող լեռանը վրայ Մովաբացւոց գարշելի Քամոսին համար Նբարձր տեղ մը շինեց, ու Ամմոնացւոց գարշելի
8 Մողեքին համար ալ։ Եւ իր բոլոր օտարազգի կիներուն համար ալ այնպէս ըրաւ, որոնք իրենց աստուածներուն խունկ կը ծխէին ու զոհ կը մատուցանէին։
9 Եւ Տէրը Սողոմոնին բարկացաւ, վասն զի անիկայ Ի իր սիրտը խոտորցուց Իսրայէլի Տէր Աստուծմէն, Ոն որ երկու անգամ իրեն երևաց։
10 ցաւ, Ու Նաս բանիս համար պատուիրեց որ ուրիշ աստուածներու ետևէ չերթայ. բայց անիկայ Տէ-
11 րոջը պատուէրը չպահեց։ Եւ Տէրը Սողոմոնին ըսաւ. Որովհետև դուն ասանկ ըրիր՝ և իմ ուխտս ու քովի պատուիրած կանոնները չպահեցիր, հարկաւ թագաւորութիւնը անշուշտ քեզմէ պիտի պատռեմ՝ ու զանիկայ քու ծառայիդ պիտի տամ։
12 Միայն թէ աս բանը քու օրերուդ մէջը չեմ ըներ՝ քու հօրդ Դաւիթին համար. Բայց զանիկայ քու որդւոյդ ձեռքէն պիտի պատռեմ.
13 Սակայն բոլոր թագաւորութիւնը պիտի չպատռեմ. Հապա իմ ծառայիս Դաւիթին համար, ու Ցիմ ընտրած Երուսաղէմիս համար՝ քու որդւոյդ մէկ ցեղ մը պիտի տամ։
14 Եւ Տէրը Սողոմոնին դէմ մէկ թշնամի մը հանեց, այսինքն Եդովմի թագաւորին սերունդէն Եդով-
15 մայեցի Ադադը. Վասն զի Դաւիթ Եդովմի մէջ եղած ատենը, երբոր Ցովաբ զօրագլուխը մեռցուածները թաղելու համար ելաւ, Նու Եդովմի մէջ բոլոր արուները մեռցուց.
16 (Որովհետև Ցովաբ բոլոր Իսրայէլին հետ՝ հոն վեց ամիս նստաւ, մինչև որ Եդովմայեցւոց բոլոր ա-
17 րուները մեռցուց.) Ան ատենը Ադադ իր հօրը քանի մը Եդովմայեցի ծառաներուն հետ փախաւ որ Եգիպտոս երթայ. ու Ադադ տէ-
18 պզտիկ տղայ էր։ Եւ անոնք Մադիամէն ելան՝ ու Փառան եկան, և Փառանէն իրենց հետ մարդիկներ առին, ու Եգիպտոս եկան Եգիպտոսի փարաւոն թագաւորին, որ անոր տուն տուաւ, ու անոր ռոճիկ կապեց, ու անոր երկիր տուաւ։
19 Եւ Ադադ փարաւոնին առջևը շատ շնորհք գտաւ. ու փարաւոն իր կնկանը քոյրը՝ թահփենէս թագուհիին քոյրը՝ անոր կնիկ տուաւ։
20 Եւ թահփենէսին քոյրը Ատոբէն որդի մը ծնաւ, որ Գանեբաթ Նէհէսեցի. ու թահփենէս զանիկայ փարաւոնին տանը մէջ մեծցուց. ու Գանեբաթ՝ փարաւոնին տունը՝ փարաւոնին որդւոցը մէջն էր։
21 Ու երբոր Ադադ Եգիպտոսի մէջ լսեց թէ, Դաւիթ իր հայրերուն հետ քնացեր է, ու Ցովաբ զօրապետը մեռեր է, Ադադ՝ փարաւոնին ըսաւ. Արձակէ զիս, որ իմ երկիրս
22 երթամ։ Եւ փարաւոն անոր ըսաւ. Իմ քովս քու ինչդ պակաս է, որ քու երկիրդ երթալ կ'ուզես։ Ու անիկայ ըսաւ. Ոչ, բայց անպատճառ արձակէ զիս։
23 Եւ Աստուած անոր դէմ մէկ ուրիշ թշնամի մը հանեց, այսինքն Եղիադային որդին Ռազոնը, որ իր տիրոջը՝ Սուբայի Ադրազար թա-

Ն·ք·գԼ· իբր 992

ը Ցես·ա· 4։դ Թագ· է·6։

Ն·ք·գԼ· իբր 984

ե ԵԷբ·ասիկայ քու քովդ եղաւ։
զ Հմր 31։Գ՚ ժբ·15, 16։

ը Թագ·է· 15։ Սաղ· ՃԺ·33։
ղ Օր·ժբ· 11։
ե Գ՚ ժբ· 20։
ճ ա Մն·ե· 26։
ի բ Թագ·ը· 14։ ա Մն· ժը·12, 13։
ն Թագ·իդ· 19։ բ Օր· ի·13։

իբր 984

Բբ Օր·ժե· 17։ Ներմ· ժգ·26։
ի Գ՚ը·61։
ձ Գ՚ւ·թ·4։
ե Հմր 33։ Դատ·բ· 13։ դ Թագ· իգ·13։
ը Հմր 7 ի՚ը-ից-ի Մովաբ։
ի Ցես Թագ· ժգ·24։
ձ դ Թագ· իգ·13։
ի Թագ·իա· 29։ Դատ· ժ·24։
լ Թագ·լԲ· 52։

ի Ցես Հմր 2·3։
ի Գ՚ւ·գ·5։ թ·2։
ի Գ՚ւ·ը·12։ թ·6։

24 գաւորին թովէն փախեր էր ։ Ու անիկայ իր թովը մարդիկներ ժողվից , և դնդապետ եղաւ . ։ ու երբոր Դաւիթ զանոնք կոտրեց , Դամասկոս գացին ու հոն բնակեցան . ու Դամասկոսի մէջ թագաւորու-
25 Թիւն ըրին ։ Ուստի Ռ-ըն՝ Սողոմոնին բոլոր օրերուն մէջ՝ Իսրայէլին Թշնամի եղաւ , Ադադին ըն-ՙ չարութենէն՝ի զատ . ու Իսրայէլին նեղութիւն կու տար , և Ասորւոց վրայ կը թագաւորէր ։
26 Եւ Սողոմոնին ծառան՝ Սարեդայէն Եփրաթացի Ղնարատի որդին Ցերոբովամն ալ , որուն մայրը որբևարի կնիկ մըն էր Սարուա անունով , Թագաւորին դէմ ձեռք
27 վերցուց ։ Ու թագաւորին դէմ ձեռք վերցնելուն պատճառը ասէր . ՙԵրբոր Սողոմոն Մելօնը չինեց , և իր հօրը Դաւիթին քաղաքին
28 բերդ փլած տեղը գոցեց , Ցերոբովամ խիստ ուժով մարդ մըն էր , ու Սողոմոն տեսնելով որ անիկայ գործունեայ կարող մըն է , զանիկայ Յովսեփի տանը բոլոր
29 բեռներուն վրայ դրաւ ։ Եւ եղաւ որ ան ժամանակը Ցերոբովամ Երուսաղէմէն դուրս ելաւ . ու Ահիա մարգարէն անոր հանդիպեցաւ . և անիկայ նոր վերարկու մը հագեր էր . ու դաշտին մէջ երկուքնին մինակ
30 էին ։ Եւ Ահիա անոր վրայի նոր վերարկուն բռնեց , ու զանիկայ տասներկու կտոր պատռեց ։
31 Եւ Ցերոբովամին ըսաւ . Տասը կտորը քեզի՝ ու . քանզի ՙ Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . Ահա Սողոմոնին ձեռքէն թագաւորութիւնը պիտի պատռեմ , ու տասը ցեղը քեզի պիտի տամ ։
32 Եւ իմ ծառայիս Դաւիթին համար՝ ու Իսրայէլին բոլոր ցեղերէն ընտրած Երուսաղէմ քաղաքիս համար՝ մէկ ցեղ մը անոր ըլլայ .
33 ՐՈրովհետև զիս թողուցին , ու Սիդոնացւոց աստուածոյն Աստարովթին , և Մովաբացւոց աստուածոյն Քամոսին , ու Ամմոնի որդւոցը աստուածոյն Մելքոմին երկրպագութիւն ըրին , և իմ ճամբաներուս մէջը չգալեցին , որ իր հօրը Դաւիթին պէս՝ իմ աչքիս ուղիղ եղածը , ու իմ կանոններս ու պատաւհաններս՝ի դործ դնեն ։
34 Սակայն անոր ձեռքէն բոլոր թագաւորութիւնը պիտի չառնեմ , ու զանիկայ իր կեանքը բոլոր օրերուն մէջ իշխան պիտի թողում , իմ պատուիրանքներս ու կանոններս պահող իմ րնտրած ծառայիս Դա-
35 ւիթին համար ։ Բայց անոր որդւոյն ձեռքէն թագաւորութիւնը պիտի առնեմ , ու տասը ցեղը քեզի
36 պիտի տամ ։ Եւ անոր որդւոյն մէկ ցեղ մը պիտի տամ , որ ՙիմ ծառաս Դաւիթը իմ առջեւս միշտ մէկ ճրագ մը ունենայ Երուսաղէմ քաղաքին մէջ՝ որն որ ընտրեցի իմ ա-
37 նունս հոն դնելու համար ։ Ու քեզ պիտի առնեմ՝ և սրտիդ բոլոր ուզածին պէս թագաւորութիւն պիտի ընես . ու Իսրայէլը վրայ
38 թագաւոր պիտի ըլլաս ։ Եւ թէ որ իմ բոլոր բերզի պատուիրածներուս ՝նազանդութիւն ընես , ու իմ ճամբաներուս մէջը քալես , և իմ ծառայիս Դաւիթին ըրածին պէս՝ իմ կանոններս ու պատուիրանքներս պահելով՝ իմ առջեւս ուղիղ եղածը ընես , ան ատենը ես քեզի հետ պիտի ըլլամ , ու քեզի մնայուն տուն պիտի շինեմ , ինչպէս որ Դաւիթին շինեցի , ու Իսրայէլը
39 բեզի պիտի տամ ։ Եւ ասոր համար Դաւիթին սերունդը պիտի
40 չարչարեմ , բայց չ'թէ միշտ ։ Ու Սողոմոն՝ Ցերոբովամը մեռցընել ուզեց , բայց Ցերոբովամ ելաւ Եդիպտոս փախաւ , ՙ Եդիպտոսի Սիսակ թագաւորին քովը ՚ն-ՙ , ու մինչև Սողոմոնին մեռնիլը Եդիպտոս մնաց ։
41 Եւ ՙՍողոմոնին մնացորդ պատմութիւնը , ու անոր բոլոր ըրածները , ու անոր իմաստութիւնը , ահա Սողոմոնին պատմութեանը
42 գրքին մէջ գրուած են ։ ՚Եւ Սողոմոնին Երուսաղէմի մէջ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւնը ըրած օրերը՝ քառասուն տարի է-
43 դաւ ։ ՙՈւ Սողոմոն իր հայրերուն հետ քնացաւ , և իր հօրը Դաւիթին քաղաքին մէջը թաղուեցաւ . ու անոր որդին Ռոբովամ՝ անոր տեղը թագաւոր եղաւ ։

ԳԼ . ԺԲ

1 Իսրայէլացիք Ռոբովամը թագաւոր ընելու համար Սիւքեմի մէջ ժողովելով՝ Ցերոբովամին մինչդուռվ անկէ կը խնդրեն որ իրենց վրայ դրուած լուծը թեթևցընէ ։ 6 Ռոբովամ՝ երիտասարդներուն խորհրդովը ծերերուն խրատը մերժելով՝ խստութեամբ կը պատասխանէ անոնց ։ 16 Տասը ցեղերը կ'ապստամբին , ու Ադորամը կը մեռցընեն . ասոր վրայ Ռոբովամ կը փախչի ։ 21 Ռոբովամ բանակ կը կազմէ , բայց Սեմայիայէն կ'արգիլուի ։ 25 Ցերոբովամ իր թագաւորութիւնը զօրացընելու համար քազաքներ կը չինէ ։ 26 ու երկու որթերուն կռապաշտութիւնը կը հաստատէ ։

1 ՚Եւ ՙՌոբովամ Սիւքեմ գնաց . վասն զի բոլոր Իսրայէլը զանիկայ թագաւոր ընելու համար
2 Սիւքեմ գացեր էր ։ Ու ՚Նաբատեան Ցերոբովամ՝ որ Սողոմոն թագաւորին երեսէն փախած՝ Եդիպտոս կը բնակէր , դեռ ՚Ե-

Ն . ՟ . ԳՖ . ՟ԻԲ 984
ԼԲ Թագ . Բ . 3 , ՟ . Տ . 18 ։
ՂԳԼ . ՟Բ . 2 , Բ ՄՆ . ՟Գ . 6 ։
ԼԲ Թագ . Ի . 21 ։
— ԳԼ . Թ . 24 ։
ՒԲ 980
— ԳԼ . ԺԳ . 2 ։
Վ Տէս ա Թագ . ԺԱ . 27 , ԻԳ . 5 ։
— ՀՇՐ . 11 , 13 ։
Բ ՀՇՐ 5 , 6 , 7 ։
՟ ԳԼ . ՟Բ . 16 , 17 ։
Ն . ՟ . ԳՖ . ՟ԻԲ 980
— Գ Թագ . ՟Ա . 4 , Գ Թագ . Ը . 19 , Սաղ . ՟Ճ . 17 ։
Ֆ Ցես . ա . 5 ։
+ ԲԹագ . Է . 11 , 27 ։
՟ Բ ՄՆ . Թ . 29 ։
Ֆ Բ ՄՆ . Թ . 30 ։
— Բ ՄՆ . Թ . 31 ։
ՒԲ 975
Բ Մատ . ա . 7 ։
՟ Գ Ի . ՟Ա . 40 ։
— Բ ՄՆ . Ճ . 1 . ԸՀ ։
Բ ԳԼ . ՟Ա . 26 ։

դիպատոսի մէջ էր երբոր ասոր
3 Բ֊ամը լսեց ՝ եւ Ֆբդ խըրկելով զանիկայ կանչեցին . ու Ցերոբովամը և իսրայէլի բոլոր ժողովուրդը եկան , ու Ռոբովամին հետ խօսեցան ու ըսին .
4 Ձեր հայրդ մեր վրայ ծանր լուծ մը դրաւ . դուն հիմա քիչ մը հօրդ խիստ ծառայութիւնը , ու մեր վրայ դրած ծանր լուծը թեթեւցուր , ու քեզի ծառայութիւն ընենք :
5 Ան ալ ըսաւ անոնց . գացէ՛ք՝ ու իրիկուն ետքը ինծի դարձէ՛ք . ու ժողովուրդը գնաց :
6 Եւ Ռոբովամ թագաւորը խորհուրդ հարցուց ան ծերերուն՝ որ իր հօրը Սողոմոնին առջեւը կը կայնէին երբոր անիկա ողջ էր , ու ըսաւ . Դուք ինծի ի՞նչ խորհուրդ կու տաք , որ աս ժողովուրդին պատասխան տամ :
7 Եւ անոր խօսեցան ու ըսին . Եթէ որ դուն այսօր աս ժողովուրդին ծառայ ըլլաս , ու անոնց ծառայութիւն ընես , և անոնց բարի խօսքեր ըսելով պատասխան տաս , անատենը անոնք քեզի միշտ
8 ծառայ կ՚ըլլան : Բայց Ան՚ի֊ոյ ձերբերուն իրեն տուած խորհուրդը մերժեց , ու իր առջեւը կայնող ա֊ իր հետը մեծցած երիտասարդներուն
9 խորհուրդ հարցուց . Եւ անոնց ըսաւ . Դուք ի՞նչ խորհուրդ կու տաք , որ աս ժողովուրդին պատասխան տամ . քանզի անոնք ինծի խօսեցան , ու ըսին . Քու հօրդ մեր
10 վրայ դրած լուծը թեթեւցուր : Ու անոր հետ մեծցած երիտասարդները անոր խօսեցան ու ըսին . Քու հայրդ մեր լուծը ծանրացուց , ու դուն մեր վրայէն թեթեւցուր՝ ըսող ժողովուրդին այսպէս խօսիս , , ու անոնց այսպէս ըսես . Իմ պզտիկ մատս՝ իմ հօրս մէջքէն հաստ է .
11 Իմ հայրս ձեր վրայ ծանր լուծ դրեր է , բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացընեմ . իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է , բայց ես ձեզ կարիճներով պիտի խրատեմ :
12 Եւ Ցերոբովամ ու բոլոր ժողովուրդը երրորդ օրը Ռոբովամին եկան , ինչպէս որ թագաւորը բսեր էր թէ՝ Երրորդ օրը ինծի եկէք :
13 Ու թագաւորը ժողովուրդին խըստութեամբ պատասխան տուաւ , և ծերերուն իրեն տուած խրատը
14 մերժելով , Երիտասարդներուն խորհուրդին պէս անոնց հետ խօսեցաւ , ու ըսաւ . Իմ հայրս ձեր լուծը ծանրացուցեր է , բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացընեմ . իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է , բայց ես ձեզ կարիճներով
15 պիտի խրատեմ : Եւ թագաւորը

ժողովուրդին խօսէը մտիկ չըրաւ . վասն զի Աս ըան Տէրոջմէն եղաւ , որ Տէրը Սիլօնացի Ահիային ձեռքովը Նաբատեան Ցերոբովամին
16 ըսած խօսքը հաստատէ : Ու երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ որ թագաւորը իրենց մտիկ չըրաւ , ժողովուրդն ալ թագաւորին պատասխան տուին ու ըսին . Մենք Դաւիթին քովը ի՞նչ բաժին ունինք , ու Յեսսէի որդւոյն քովը ժառանգութիւն չունինք . ով Իսրայէլ՝ ձեր վրաններդ դ֊րէ֊ : ով Դաւիթ՝ հիմա դուն քու տունդ հոգա . ու Իսրայէլը իրենց վրաններդ գ֊
17 ցին : Բայց Յ֊ուդայի քաղաքները մէջ բնակող Իսրայէլի որդւոյը վրայ՝ Ռոբովամը թագաւոր է֊
18 ըաւ : Եւ Ռոբովամ թագաւորը Երբոր հարկերուն վրայ եղող Ադորամը խրկեց , բոլոր Իսրայէլը զանիկայ քարեբով քարկոծեցին , ու մեռաւ : Եւ Ռոբովամ թագաւորը արտորալով կառքը հնծաւ ,
19 որ Երուսաղէմ փախչի : Այսպէս Իսրայէլը Դաւիթի տունէն ապըստամբեցաւ մինչև աս օրս :
20 Եւ բոլոր Իսրայէլը Ցերոբովամին դառնալը լսելով՝ Ֆբդ խրկեցին , ու զանիկայ ժողովքին մէջը կանչեցին , և զանիկայ բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր դրին , ու Ցուդայի ցեղէն՝ի զատ Դաւիթին տա֊
21 ՝ը ուրիշ հետեւող մը չկար : Եւ Ռոբովամ Երուսաղէմ մտաւ , ու բոլոր Յուդայի տունէն ու Բենիամինի ցեղէն հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմողներ ժողվեց , որ Իսրայէլի տանը հետ պատերազմին , ու թագաւորութիւնը Սողոմոնի որդւոյն Ռոբովամին դարձընեն :
22 Եւ Աստուծոյ մարդուն Սեմայիային՝ Աստուծոյ խօսքը եղաւ՝
23 ըսելով . Սողոմոնի որդւոյն Յուդայի Ռոբովամ թագաւորին , ու բոլոր Յուդայի տանը , ու Բենիամինին , և մնացորդ ժողովուրդին խօ֊
24 սիս , ու ըսես . Տէրը այսպէս կ՚ըսէ . Մի ելլէք , ու Իսրայէլի որդւոցը՝ ձեր եղբայրներուն հետ մի պատերազմիք . ամէն մարդ թող իր տունը դառնայ . Վասն դի աս բանը ինծմէ եղաւ : Եւ Տէրոջը խօսքը մտիկ ըրին , ու Տէրոջը ըսածին պէս՝ *ետ դարձան :
25 Ու Ցերոբովամ Եփրեմի լեռանը վրայ Սիւքեմը շինեց , ու հոն բնակեցաւ . և անկէ ելաւ , Փա֊
26 նուէլը շինեց : Ու Ցերոբովամ իր սրտին մէջը ըսաւ . Հիմա թագաւորութիւնը Դաւիթին տանը պի֊
27 տի դառնայ : Թէ որ աս ժողո֊

ՂՀԲ. 24 : Դատ. ԺԴ. 4 : ԲՄՆ. Ժ. 15 : ԻՌ. 7 : ՒՆ. 20 :
Է ԳԼ. ԺԱ. 11 : 31 :
ԸՐԹԱԳ. Ի. 1 :
Ը ԳԼ. ԺԱ. 13 : 36 :
Ժ ԳԼ. Ժ. 6 : Ե. 14 :
ԺԴ ԹԱԳ. ԺԵ. 21 :
Ւ ԳԼ. ԺԱ. 13 : 32 :
ԻԲՄՆ. ԺԱ. 1 :
ԺԲ ՄՆ. ԺԱ. 2 :
Լ ՀԲ 15 :
* Կ՚ՈՒ՝ ԵՐԹԱԼԸՆ
Հ ՏԵՍ ԴԱՍ. Ի. 45 :
Ն ԴԱՍ. Ը. 17 :

Ն · ք · ՂՓ · 975

Ղ Բ Օր · ժբ · 5 · 6 ·

զ Դ Թագ · ժ · 29 · ժէ · 16 ·

* Կ՛ Ել հերիք է ձեր Երուսաղէմ եկեալը ·

՛ Ել · լբ · 4 , 8 ·

յ Ծն · իբ · 19 · Ովս · դ · 15 ·

ն Դատ · ժբ · 29 ·

ղ Գէ · ժգ · 34 · դ Թագ · ժէ · 21 ·

ֆ Գէ · ժգ · 32 ·

ղ Թագ · դ · 10 · Գէ · ժգ · 33 · դ Թագ · ժէ · 32 · բ Մն · ժա · 14 , 15 · Եզեկ · ի֊գ · 7 · 8 ·

պ Ղէ · իգ · 33 , 34 · Թագ · լէ · 12 · Գէ · ը · 2 · 5 ·

† Կ՛ ե֊լաբ ·

ղ Ամ֊ւ · է · 13 ·

֊ Թագ · ժե · 39 ·

‡ Կ՛ Խունկ ծը֊խելու եկաւ ·

֊ Գէ · ժգ · 1 ·

֊ Գէ · ժբ · 32 · 33 ·

Բ դ Թագ · իգ · 17 ·

փ դ Թագ · իգ · 15 , 16 ·

վուրդը Երուսաղէմ ղՏերոնը տուն Ը նր ելնէ զոհ ընելու համար , ան ատենը աս ժողովուրդին սիրտը իրենց տիրոջը Յուդայի Ռոբովամ Թագաւորին պիտի դառնայ , և զիս պիտի մեռցընեն , ու Յուդայի Ռոբովամ Թագաւորին պիտի դառ֊
28 նան ։ Եւ Թագաւորը խորհուրդ ըրաւ , ու ճերկու հատ ոսկիէ որթ չինեց · ու անոնց ըսաւ · * Անկէ եւեւ ձեզի Երուսաղէմ երթալ պէտք չէ՛ · ով Իսրայէլ , հապա քու աստուածներդ՝ որ քեզ Եգիպտոսի
29 երկրէն հանեցին ։ Ու մէկը ՛ Բէթէլի մէջ դրաւ , ու մէկալն ալ ՚ Դանի
30 մէջ դրաւ ։ Եւ աս բանը ՚ մեղքի պատճառ եղաւ · վասն զի ժողովուրդը մինչև Դան կ՛երթար աս որ ՚ ներսն մէկուն առջեւը ՚ երկրպագութ֊
31 իւն ընելու համար ։ Ու ՚ բարձր տեղերու վրայ կռատուններ չինեց · և ՚ ժողովուրդին ցած մարդիկներէն քուրմեր ըրաւ , որոնք Ղևիի որդւոցմէ չէին ։
32 Ու Ցերոբովամ ութերորդ ամսուն մէջ՝ ամսուն տասնուհինգերորդ օրը , ՚ Յուդայի մէջ պահպած տօնին պէս տօն սահմանեց , ու սեղանին վրայ † զոհեր մատուց՝ · Բեթելի մէջ այսպէս ըրաւ , ու իր չինած որթերուն զոհեր մատուց · և բարձր տեղերուն համար ըրած ՚ քուրմերը Բեթելի մէջ դրաւ ։
33 Ու ՙ իր մտքէն ՚ յարած ամսուն մէջ՝ ութերորդ ամսուն տասնուհինգերորդ օրը՝ Բեթելի մէջ իր չինած սեղանին վրայ զոհեր մատուց , ու Իսրայէլի որդւոցը տօն սահմանեց , ու սեղանին վրայ ‡ զոհեր մատուցանելով ՙ խունկ ծխեց ՚ ։

Գ Լ · Ա Գ

1 Ցերոբովամին ձեռքը կը չորնայ , Բեթելի մէջ իր չինած սեղանին վրայով մարգարէութիւն ընդդէմ դէմ չարութիւն մտածելուն համար , 6 և մարգարէին աղօթքովը կը բժշկուի ։ 7 Ան մարգարէն Թագաւորին ընծաներ մերժելով՝ Բեթէլէն կ՛երթայ ։ 11 Մէկ ծեր մարգարէ մը խաբելով՝ ետ կը դարձնէ զանիկայ , 26 որ Աստուծմէ կը յանդիմանուի , 23 ու առիւծէ մը կը մեռցուի · 26 ու ծեր մարգարէն գանիկայ կը թաղէ , 31 և անոր մարգարէութիւնը կը հաստատէ ։ 33 Ցերոբովամին կամակորութիւնը ։

1 Եւ ՙ երբոր Ցերոբովամ՝ խունկ ծխելու համար սեղանին քովը կը կայներ , ահա Բ Աստուծոյ մարդ մը Տէրոջը խօսքովը Յուդային Բեթէլ
2 եկաւ ։ Եւ Տէրոջը խօսքովը սեղանին կանչեց ու ըսաւ · Ո՛վ սեղան , ո՛վ սեղան , Տէրը այսպէս կ՛ըսէ · Ահա Դաւիթին տանը որդի մը պիտի ծնանի է Յովսիա անունով , և քու վրադ խունկ ծխող բարձր տեղերուն քուրմերը՝ քու վրադ պիտի զոհէ , ու քու վրադ մարդոց
3 ոսկորներ պիտի այրեն ։ Եւ նոյն օրը Տ նշան մը տալով՝ ըսաւ · Տէրոջը խօսելուն նշանը աս է · ահա սեղանը պիտի պատռի ու վրայի մխիրը պիտի թափի ·
4 Ու երբոր Թագաւորը Աստուծոյ մարդուն Բեթէլի մէջ սեղանին համար կանչած խօսքը լսեց , Ցերոբովամ սեղանին վրայէն ձեռքը երկընցուց , ու ըսաւ · Աս բռնեցէք · և անոր վրայ երկընցուցած ձեռքը չորցաւ , ու զանիկայ իրեն դարձընելու կարող չեղաւ ։
5 Եւ Աստուծոյ մարդուն Տէրոջը խօսքովը տուած նշանին պէս՝ սեղանը պատռեցաւ , ու մխիրը սեղ֊
6 ղանէն թափեցաւ ։ Եւ Թագաւորը Աստուծոյ մարդուն պատասխան տուաւ ու ըսաւ · Ե֊ղիր Տէր Աստուծոյդ առջեւը աղաչէ , ու ինձի համար աղօթք ըրէ , որ ձեռքս ինծի դառնայ ։ Ան ատենը Աստուծոյ մարդը Տէրոջը առջեւը աղաչեց · և Թագաւորին ձեռքը իրեն դարձաւ , ու առջինին պէս եղաւ ։
7 Եւ Թագաւորը Աստուծոյ մարդուն ըսաւ · Ինծի հետ տուն եկուր , և ‖ բիչ մը կերակուր կեր՛ , ու ղքեզ
8 զի պարգև տամ ։ Եւ Աստուծոյ մարդը Թագաւորին ըսաւ · Ե֊թէ որ ինծի քու տանդ կէսն ալ տաս , քեզի հետ պիտի չերթամ՝ , ու աս տեղս հաց պիտի չուտեմ՝ , ոչ ալ
9 ջուր խմեմ · Վասն զի Տէրը իր խօսքովը ինծի այսպէս պատուիրեց ու ըսաւ · Հաց չուտես , ու ջուր չխմես , ու գացած ճամբայէդ
10 չդառնաս ։ Ուստի անիկայ ուրիշ ճամբով գնաց , ու Բեթէլ գացած ճամբովը չդարձաւ ։
11 Եւ Բեթելի մէջ ծեր մարգարէ մը կը բնակէր · ու անոր որդիքը եկան , ու Աստուծոյ մարդուն նոյն օրը Բեթելի մէջ բոլոր ըրած գործքերը անոր պատմեցին , և անիկայ Թագաւորին ինչ խօսքեր որ ըրաւ էր , զանոնք ալ իրենց հօրը
12 պատմեցին ։ Ու անոնց հայրը ա֊նոնց ըսաւ · Ո՞ր ճամբայէն գնաց ։ Եւ անոր որդիքը Յուդային եկող Աստուծոյ մարդուն գացած ճամ֊
13 բան § ցուցուցին ։ Ու իր որդւոցը ըսաւ · Էշը պատրաստեցէք ինծի · և անոնք անոր համար էշը պատրաստեցին , ու անիկայ վրան հեծաւ ·
14 Եւ Աստուծոյ մարդուն եւեւն գըՆայ , ու զանիկայ բեւեկնի մը տակ նստած գտաւ , ու անոր ըսաւ · Յուդայէն եկող Աստուծոյ մարդը դո՞ն ես · և անիկայ ըսաւ · Ես
15 եմ ։ Ու անոր ըսաւ · Ինծի հետ
16 տուն եկուր , ու հաց կեր ։ Եւ ա֊

Ն · ք · ՂՓ · 975

է Ես · է · 14 , Ց օ · բ · 18 · ա Կոր · ա · 22 ·

‖ Եբր · իբ · զօրացուր ·

Ղ ա Թագ · Թ · 7 · դ Թագ · ե · 15 ·

Բ Թես · իբ · 18 · իդ · 13 ·

ը ա Կոր · ե · 11 ·

§ Կ՛ տես սակ էին ։

Ն · ք · ՀՓ · 975

Ք ՀՇՐ Տ , 9 ։

ԺԳԼ · Ի · 35 ։ ա ԹՒՆ · Դ · 15 ։

Ն · ք · ՀՓ · 975

Ի ԵՐԵՄ · ԻԲ · 18 ։

Ֆ Դ ԹԱԳ · Իգ · 17 · 18 ։

Ի ՏՒՆ ԳԼ · Ժ Հ · 24 ։

Հ ՀՇՐ 2 ։ Դ ԹԱԳ · Իգ · 16 · 19 ։

Յ ԳԼ · Ժ Բ · 31 · 32 ։ Բ ՄՆ · Ժ ա · 15 ։ Ժ Կ · 9 ։ ԻԲՐ 974

ՂԴԱՏ · Ժ Ե · 12 ։

Ճ ԳԼ · Ժ Բ · 30 ։

Ք ԳԼ · Ժ Դ · 10 ։

ՆԻԿայ ըսաւ . Ի՞ՔԷԶ հետ չեմ կըր-նար դառնալ ու քու գաւդիդ մըտ-նել . ոչ ալ աս տեղս քեզի հետ հաց պիտի ուտեմ , ու ոչ ըուր
17 խմեմ. Վասն զի Ֆ Յերոբոը խօսքովը ինծի ըսուեցաւ . Հոն հաց չուտես , ըուր ալ չխմես , ու գացած ճամ-
18 բայդ չդառնաս ։ Բայց անիկայ ըսաւ անոր . Ես ալ քեզի պէս մարգարէ եմ , ու մէկ հրեշտակ մը ինծի հետ Տէրոջը խօսքովը խօսե-ցաւ ու ըսաւ . Զանիկայ քեզի հետ քու տունդ դարձուր՝ որ հաց ուտէ , ու ըուր խմէ ։ Սո՛խոյն սուտ ըզուցեց անոր ։
19 Ան ատենը անոր հետը դարձաւ , և անոր տունը հաց կերաւ , ու ըուր
20 խմեց ։ Ու երբոր անոնք սեղանը նստեր էին , Տէրոջը խօսքը զանի-կայ դարձընող մարգարէին եղաւ .
21 Ու անիկայ Ցուդայէն եկող Աս-տուծոյ մարդուն կանչելով՝ ըսաւ . Տէրը այսպէս կ'ըսէ . Որովհետև դուն Տէրոջը խօսքին անշաղան-դութիւն ըրիր , ու քու Տէր Աս-տուծոյդ քեզի պատուիրած պա-
22 տուէրը չպահեցիր , Եւ դարձար , ու հաց կերար ու ըուր խմեցիր էան տեղը՝ որուն համար քեզի ըսած էր որ հաց չուտես ու ըուր չխմե՛ս , քու մեռելդ քու հայրերուդ գերեզ-մանը պիտի չմտնէ ։
23 Եւ հաց ուտէլէն ու ըուր խմելէն ետքը՝ անիկայ իր ետ դարձուցած
24 մարգարէին էշը պատրաստեց . Ան ալ գնաց . ու ճամբուն մէջ Լմէկ առիւծ մը գտաւ զանիկայ ու մեռ-ցուց . և անոր մեռելը ճամբուն վրայ փռուած մնաց . ու էշը անոր քովը կայներ էր , առիւծն ալ մե-
25 ռելին քովը կայներ էր ։ Եւ ահա անկէ քանի մը մարդիկ անցնելով՝ ճամբուն վրայ փռուած մեռելը ու մեռելին քովը կայնող առիւծը տե-սան . ու գացին ան ծեր մարգա-րէին բնակած քաղաքին մէջը
26 պատմեցին ։ Եւ զանիկայ ճամբա-յէն դարձընող մարգարէն երբոր լսեց , ըսաւ . Անիկայ Տէրոջը խօս-քին անշաղանդութիւն ընդ՝ Աս-տուծոյ մարդն է . ու Տէրը զանի-կայ պատառելով մեռցուցեր է , Տէրոջը անոր ըսած խօսքին հա-
27 մեմատ ։ Եւ իր որդւոցը խօսե-ցաւ ու ըսաւ . Ինծի համար էշը պատրաստեցէք . ու անոնք պատ-
28 րաստեցին ։ Եւ գնաց անոր մե-ռելը գտաւ , որ ճամբուն վրայ փռուած էր . ու էշը ու ա-ռիւծը մեռելին քովը կայներ է-ին . առիւծը մեռելը կերած չէր ,
29 ոչ ալ էշը պատառեր էր ։ Եւ

ան մարգարէն Առաւոծոյ մար-դուն մեռելը վերցուց , ու զանի-կայ իշուն վրայ դրաւ , ու զանի-կայ դարձուց . և ծեր մարգա-րէն քաղաքը մտաւ , որ լալով զա-
30 նիկայ թաղէ . Եւ անոր մեռելը իր դերեզմանին մէջը դրաւ . ու Ե՜վայ եղբայր ըսե՛լ , անոր վրայ լացին ։
31 Ու զանիկայ թաղելէն ետքը՝ իր որ-դւոցը խօսեցաւ ու ըսաւ . Երբոր ես մեռնիմ , զիս Աստուծոյ մար-դուն թաղուած դերեզմանին մէջը թաղէ՛ք . Ծ՛իմ ոսկորներս անոր ոս-
32 կորներուն քովը դնէք . Վասն զի Բեթէլի մէջ եղող սեղանին համար, ու Սամարիայի քաղաքներուն մէջ եղող ամէն բարձր տեղերու կռա-տուններուն համար՝ Հանոր Տէրոջը խօսքովը կանչած խօսքը անպատ-ճառ պիտի կատարուի ։
33 Այս բանէն ետքը Յերոբովամ իր չար ճամբայէն չդարձաւ . մանաւ-անդ նորէն ժողովուրդին ցած մար-դիկներէն բարձր տեղերուն Ա՛ռու-մեր կ'ընէր . ամէն ուզողը կ'օրհնէր . ու անիկայ բարձր տեղերուն քուրմ
34 կ'ըլլար ։ Եւ ասիկա բանը Յերոբո-վամին տանը մեղքի պատճառ եղաւ , նաև ջնջուբ երկրիս երեսէն կորսուե-լուն ու բնաջինջ ըլլալուն ։

ԳԼ · ԺԴ

1 Յերոբովամ իր որդւոյն Աբիային հիւանդանա-լուն համար՝ իր կնկանը հագուստ փոխել կու տայ , ու զանիկայ ընծաներով Սելով կը խրկէ Աբիա մարգարէին ։ 5 Աբիա Աստու-ծոյ յայտնութեամբ Աստուծոյ դաւաստանը կը ցուցընէ անոր ։ 17 Աբիա կը մեռնի ու կը թաղուի ։ 19 Նադաբ՝ Յերոբովամին յաջոր-դը կ'ըլլայ ։ 21 Ռոբովամին չար վարմունքը ։ 25 Սիսակ Երուսաղէմ կր կողոպտէ ։ 29 Ա-բիա՝ Ռոբովամին յաջորդը կ'ըլլայ ։

1 Ա՛ն ատենը Յերոբովամին՝ որդին 956
2 Աբիան հիւանդացաւ ։ Ու Յե-րոբովամ իր կնկանը ըսաւ , Ելէր , կերպարանքդ փոխէ , այնպէս որ Յերոբովամին կնիկը ըլլալդ չգիտ-ցուի , ու Սելէվ դնա . ահա Աբիա մարգարէն հոն է . անիկայ Ես՝ որ ինծի համար ըսաւ Թէ ՚ա՜ս ժողո-՚ա ԳԼ · ԺԱ · 31 ։
3 վուրդին վրայ Թագաւոր պիտի ըլ-լայ ։ Իսկ ձեռքդ տասը հաց , և բլիթներ , ու մէկ սափոր մեղր առ , ու անոր դնա . անիկայ քեզի պիտի պատմէ ինչ որ տղուն պիտի պա-
4 տահի ։ Եւ Յերոբովամին կնիկը այնպէս ըրաւ . ու ելաւ Սելէվ գըլ-նաց , և Աբիային տունը մտաւ . բայց Աբիային աչքերը Յերուէլէն տկարացեր էին , ու չէր կրնար տեսնել ։
5 Եւ Տէրը Աբիային ըսաւ . Ահա Յերոբովամին կնիկը՝ իր տղուն հա-մար քեզի բան հարցընելու կու գայ ,

վասն զի անիկայ հիւանդ է . անոր այսպէս ու այսպէս խօսիս . ու ա-
նիկայ գալու ատենը անծանօթ
6 կերպարանքով պիտի ֆայ , ու երբոր անիկայ դուռնէն ներս կը մտնէր , Ա-
քիա անոր ոտքերուն ձայնը լսածին պէս , ըսաւ . Ո՛վ Ցերոբովամին կնիկը՝ եկուր , դուն ինչո՞ւ ատանկ անծանօթ կերպարանք մտեր ես . բայց ես քեզի խիստ լուր պիտի տամ .
7 Երկուքնայ ֆ գնա , Ցերոբովամին ըսէ . Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ . Քանզի քեզ ժողովուրդին մէջէն բարձրացուցի , ու քեզ իմ ժողովուրդիս Իսրայէլին
8 վրայ իշխան ըրի , ու Դաւթի տունէն պատռեցի , ու քանիկայ քեզի տուի . ու դուն՝ Ո՛վ պատուիրանքներս պահող , ու իմ առջեւս ուղղութիւն ընելու համար իր բո-
լոր սրտովը Ընծի՝ ինձի եղող՝ իմ Դաւիթի ծառային պէս չեղար .
9 Մանաւանդ բոլոր քեզմէ առաջ եղողներէն աւելի չարութիւն ըրիր , ու գնա բարկացընելու համար՝ գա-
ղիր քեզի ուրիշ աստուածներ ու ձուլածոյ կուռքեր շինեցիր , ու
10 զիս ետիդ նետեցիր . Ասոր համար ահա Ի Ցերոբովամին տանը վրայ չարիք պիտի բերեմ , ու Ցերոբո-
վամին ամէն էրկնմարդիկները Ե-
նէ Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը պիտի կոտորեմ , և Ցե-
րոբովամին տունը պիտի աւլեմ , ինչպէս որ աղբը կ՚աւլեն , մինչև որ
11 հատի . Ցերոբովամին քաղաքի մէջ մեռնողը՝ շուները պիտի ու-
տեն , ու դաշտի մէջ մեռնողը՝ եր-
կնքի թռչունները պիտի ուտեն .
12 քանզի Տէրը խօսեցաւ : Եւ դուն ելիր , դու տունդ գնա . ու էքսի-
ոտքերդ քաղաքին մէջը մտած ա-
13 տենը տղան պիտի մեռնի . Ու բոլոր Իսրայէլը լալով զանիկայ պիտի թաղեն . վասն զի Ցերոբովամին՝ միայն անիկայ գերեզմանն պիտի մտնէ . որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուծոյն առջեւը Ցերոբովամին տանը մէջ՝ Ի բարի բան մը գտաւ .
14 Նոր վրայ դտնուեցաւ . Եւ Տէրը ի-
րեն համար Իսրայէլի վրայ մէկ թա-
գաւոր մը պիտի հանէ , որ անի-
կայ Նոյն օրը Ցերոբովամին տու-
նը պիտի կոտորէ . ու ալ ինչ
մաց . գրեթէ հիմա պիտի կոպտա-
15 ա բնէը : Եւ Տէրը Իսրայէլը ջուրերու մէջ եղող շարժուն եղէգի պէս՝ Իսրա-
յէլը պիտի զարնէ , ու Իսրայէլը պիտի խլէ աս Ի բարի երկրիս երե-
սէն , որն որ անոնց հայրերուն տուեր էր , ու զանոնք Ղ-Եւտրին անդիի կողմը պիտի ցրուէ , Ասորի-
հետեւ Տէրը բարկացընելով իրենց Իսրայէլի կուռքեր» չընէին .
16 Եւ Իսրայէլը երեսէ պիտի ձգէ , Ցերոբովամին Ի ըրած մեղքերուն համար , ու Իսրայէլին ալ մեղան-
չել տալուն համար :
17 Անն առենը Ցերոբովամին կնիկը ելաւ դնաց , ու Թերսա մտաւ . ու
Անիկայ տանը դուռնէն ներս մտա-
18 ծին պէս , տղան մեռաւ : Եւ զա-
նիկայ Թաղեցին . ու բոլոր Իսրա-
յէլը անոր վրայ լացին , Ցերոբոզը խօսքին համեմատ՝ որ իր ծառային Աքիա մարգարէին ձեռքովը խօսեր էր :
19 Ու Ցերոբովամին մնացորդ պատ-
մութիւնը՝ Թէ ինչպէս պատե-
բազմ ըրաւ , և Թէ ինչպէս Թագա-
ւորներուն Յիշատակաց գրքին մէջը
20 գրուած է : Եւ Ցերոբովամին Թագաւորութիւն ըրած օրերը քսանուեւկու տարի եղաւ , ու իր հայրերուն հետ քնացաւ . ու անոր տեղը՝ անոր որդին Նադաբը Թա-
գաւոր եղաւ :
21 Եւ Սողոմոնին որդին Ռոբովամը Ցուդայի մէջ Թագաւորեց . Ռո-
բովամ քառասունուվեց տարեկան էր երբոր Թագաւոր եղաւ . և տասն-
ուեօթը տարի Թագաւորութիւն ըրաւ Երուսաղէմի մէջ , այսինքն ան
քաղաքին մէջ՝ որն որ Տէրը Իս-
րայէլին ամէն ցեղերէն ընտրեց՝ իր անունը հոն դնելու համար . Ռու անոր մայրը Ամմոնացի էր Նաամա
22 անունով : Եւ Ցուդայեանք ալ Տէրոջը առջեւը չարութիւն ըրին . ու իրենց ըրած մեղքերովը՝ իրենց հայրերուն բոլոր ըրածէն աւելի
23 զանիկայ բարկացուցին : Եւ ա-
նոնք ալ ամէն բարձր բլուրներուն վրայ , ու Համն կանանչ ծառե-
րուն տակը բարձր տեղեր , ու ար-
ձաններ , և Աստարովթի կուռքեր
24 շինեցին : Ու երկրին մէջ Սոդո-
մական մեղք ալ գործողներ կային , ու Տէրոջը Իսրայէլը որդեւոցը առ-
ջեւէն վռնտած ազգերուն բոլոր դարշելի բաներուն նման կ՚ընէին :
25 Եւ Ռոբովամ Թագաւորին հինգերորդ տարին՝ Եգիպտոսի Սի-
սակ Թագաւորը Երուսաղէմի վրայ
26 ելաւ . Ու Տէրոջը տանը գանձերը ու թագաւորին տանը գանձերը ա-
ռաւ . ամէնն ալ առաւ . Սողո-
մոնին շինած բոլոր ոսկիէ վահան-
27 ներն ալ առաւ : Եւ Ռոբովամ Թագաւորը անոնց տեղը պղնձէ վահաններ շինեց , ու զանոնք Թագաւորական տանը դուռը պահպանութիւն բնող սուրհան-
դակաց ուսերնին ձեռքը

Ե Ցես · բ Թագ · ժբ · 7 · 8 ; Գվ · ժգ · 2 ;
Է Գվ · ժա · 31 ;
Ը Գվ · ժա · 33 , 38 ; ժե · 5 ;
Թ Եբ · խմ · ետ . 4 · Ա · կող
Ժ Գվ · ժբ · 28 ; բ Մն · ժա · 15 ;
ԺԱ Ղեւմ · Թ · 26 ; Սաղ · ծ · 17 ; Ե-
զեկ · իգ · 35 ·

ԺԲ Գվ · ժե · 29 ·
ԺԳ · Գվ · իա · 21 ; Դ Թագ · Թ · 8 ;
ԺԴ Օր · լբ · 36 ; Դ Թագ · ժգ · 26 ·
ԺԵ Գվ · ժգ · 4 ; իա · 24 ;
ԺԶ Ել 17 ;
ԺԷ Մն · ժբ · 12 ; ժԹ · 3 ·
ԺԸ Գվ · ժե · 27 , 28 , 29 ·
ԺԹ Պ՚՚ այս-
օր
Ի Դ Թագ · ժե · 6 ; Սաղ · ծբ · 5 ;
Ի Ցես · իգ · 15 , 16 ;
ԻԱ Թագ · ժե · 29 ·
ԻԲ Ել · լԴ · 13 ; բ Օր · ժբ · 3 , 4 ;

Ի Պ՚՚ ա-
ռաջներ
Ի Գվ · ժբ · 30 ; Դ Թ · 30 , 34 ; ժե · 30 , 34 ; ժգ · 2 ;
Յ Գվ · ժգ · 6 , 8 ; 15 , 23 ; Երգ · գ · 4 ·
ԼՀՇ 12 ·
ԼՀՇ 13 ·
ԼՐ Մն · ժգ · 2 , ՃԼ ·
ԼԲ Մն · ժբ · 1 ·
ԼԳ Օր · լբ · 21 ; Սաղ · ՃԲ · 58 ; ա Կոր · ժ · 22 ·
ԼԴ Ես · ծե · 5 ·
ԼԵ Բ Օր · ժբ · 2 ; Եզեկ · ժգ · 24 , 25 ·
ԼԶ Թագ · ժե · 9 , 10 ·
ԼԷ Մն · ժբ · 17 ; Գվ · ժե · 12 ; իբ · 46 ; Դ Թագ · իգ · 7 ·
ԼԸ Գվ · ժա · 40 ; բ Մն · ժբ · 2 ·
ԼԹ Մն · ժբ · 9 , 10 , 11 ·
ՄՐ Գվ · ժ · 17 ·

28 յանձնեց ։ Ու երբոր Թագաւորը Տէրոջը տունը կ'երթար . սուրհանդակները զանոնք կը կրէին , ու էտէլ զանոնք սուրհանդակներուն խուցը կը դարձընէին ։

29 Եհու Ռոբովամին մնացորդ պատմութիւնը , ու անոր ամէն ըրածը՝ ահա Ցուդայի Թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը գրուած է ։ 30 Ու Ռոբովամին և Երոբովամին միջտեղը միշտ պատերազմ կար ։ 31 Եհու Ռոբովամ իր հայրերուն հետ քնացաւ . ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջը թաղուեցաւ . և անոր մայրը Ամմանացի էր Նաամա անունով . ու անոր տեղը՝ անոր որդին Աբիան Թագաւոր եղաւ ։

ԳԼ. ԺԵ

1 Երիսային գէշ վարմունքը ։ 7 Ասա անոր տեղը կը յայտնուի ։ 9 Ասային բարի վարմունքը ։ 16 Բաասային ու իրեն միջտեղը եղած պատերազմը պատճառ կ'ըլլայ որ ինքը հեռանդին հետ դաչնակցութիւն կընէ ։ 23 Ցովափատ Ասային տեղը կը յայտնուի ։ 25 Նադաբի գէշ վարմունքը ։ 27 Բաասա անոր դէմ ապստամբելով Աբիային մարդաբերութիւնը ի գործ կը դնէ ։ 31 Նադաբին մահը ։ 33 Բաասային գէշ վարմունքը ։

1 Ու Նաբատեան Երոբովամին Թագաւորութեանը տասնուերեքերորդ տարին՝ Աբիա Ցուդայի վրայ Թագաւորեց ։ 2 Երեսուն եւ երեք տարի Թագաւորեց ։ Անոր մօրը անունը Մաաքա էր , որ Աբիսողոմին աղջիկն էր ։ 3 Եւ անիկայ իրմէ առաջ իր հօրը ըրած բոլոր մեղքերուն հետեւեցաւ . ու անոր սիրտը իր Տէր Աստուծոյն հետ կատարեալ չէր , իր հօրը Դաւիթին սիրտին պէս ։ 4 Բայց Դաւիթին սիրտին համար՝ անոր Տէր Աստուածը Երուսաղէմի մէջ անոր մէկ ճրագ մը տուաւ , անկէ եղբը անոր որդին նստեցընելով , ու Երուսաղէմը հաստատելով . 5 որովհետեւ Դաւիթ Տէրոջը առջեւը ուղղութիւն ըրաւ , ու իր կենացը բոլոր օրերուն մէջ բնաւ անոր պատուիրանքներէն չխոտորեցաւ , Եփեստաքացի Ուրիէլին աղջիկը ։ 6 Ու Երիսային բանէն ի զատ ։ Եհու Ռոբովամին ու Երոբովամին միջտեղը պատերազմ կար՝ անոր կենացը բոլոր օրերուն մէջ ։ 7 Ու Աբիային մնացորդ պատմութիւնը , և անոր բոլոր ըրածը՝ ահա Ցուդայի Թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը գրուած է . ու Աբիային ու Երոբովամին միջտեղ պատերազմ կար ։ 8 Աբիա իր հայրերուն հետ քնացաւ . ու գանիկայ Դաւիթի քաղաքին մէջը թաղեցին . և անոր տեղը՝ անոր որդին Ասան Թագաւոր եղաւ ։ 9 Իսրայէլի Երոբովամ Թագաւորին քսաներորդ տարին՝ Ասա Ցուդայի վրայ Թագաւոր եղաւ ։ 10 Ու Երուսաղէմի մէջ քառասունմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Մաաքա էր , որ Աբիսողոմին աղջիկն էր ։ 11 Եւ Ասա իր հօրը Դաւիթին պէս՝ Տէրոջը առջեւը ուղղութիւն ըրաւ ։ 12 Ու Սոդոմական մեղք գործողները երկրէն վերցուց , և իր հայրերուն շինած բոլոր կուռքերը բնաջինջ ըրաւ ։ 13 Ու անիկայ իր մայրը Մաաքան տիկնութենէն հանեց . քանզի անիկայ Աստարովթի կուռք մը շիներ էր . և Ասա անոր կուռքը կոտրեց , ու Կեդրոն հեղեղատին մէջը այրեց ։ 14 Բայց հայց բարձր տեղուանքը չվերցան . սակայն Ասային Եսիրտը իր Եհոյէ բոլոր օրերուն մէջ՝ Տէրոջը հետ կատարեալ էր ։ 15 Ու իր հօրը նուիրած բաները ու իր նուիրած բաները՝ արծաթը ու ոսկին ու անօթները՝ Տէրոջը տունը տարաւ ։

16 Եւ Ասային ու Իսրայէլի Բաասա Թագաւորին միջեւը՝ անոնց բոլոր օրերուն մէջ պատերազմ կար ։ 17 Ու Իսրայէլի Թագաւորը Բաասա Ցուդայի դէմ ելաւ . և Ռաման շինեց , որ Ցուդայի Ասա Թագաւորին էլ-մը Ցեսս գլ. ժբ. 25։ չթողու , Ասային տէրոջը տանը գանձերուն մէջը՝ ու Թագաւորական տանը գանձերուն մէջը մնացած բոլոր արծաթը ու ոսկին առաւ , և իր ծառաներուն ձեռքը տուաւ , ու Ասա Թագաւոր՝ Դամասկոս բնակող Ասորւոց Թագաւորին՝ Ենհոնի որդւոյն Ցարբեմոնի որդւոյն Բենհադադին խրկեց գնոնք , ու ըսաւ ։ 19 Իմ ու քու միջեւ , Եւ իմ հօրս ու քու հօրդ միջեր դաշնակցութիւն կայ . ահա քեզի արծաթի ու ոսկի ընծայ խրկեցի . արի իսրայէլի Բասա Թագաւորին հետ ունեցած դաշնակցութիւնդ աբէ , որ անիկայ ինձմէ հեռանայ ։ 20 Ասա Բենհադադ Ասա Թագաւորին խօսքը մտիկ ըրաւ . և իր զօրքերուն իշխանները իսրայէլի քաղաքներուն վրայ խրկեց . ու Իյօնը , Դանը , Աբէլբեթմաաքան , ու բոլոր Քենէրեթին , ու բոլոր Նեփթաղիմի երկիրը զարկաւ ։ 21 Եւ Բասա ա՛ռ բանը լսելով , Ռաման շինելէն ետ կեցաւ , ու Թիրսայի մէջ նստաւ ։ 22 Ասա ատենը Ասա Թագաւորը բոլոր Ցուդայի Տգիտներէն կանչեց առանց մէկը ձգելու , որոնք Բասայի շինած Ռամայի քարերը ու փայտերը վերցուցին . և Ասա Թա-

Ն · ք · ՁԲ · 971
ԻՐ ՄՆ · ԺԸ · 15 ։
ՖԳԼ · ԺԸ · 24 ։ ԺԹ · 6 ։ ԲՄՆ · ԺԸ · 15 ։
958
ԻՐ ՄՆ · ԺԸ · 16 ։
ԲՀՇՐ 21 ։
ՖԲՄՆ · ԺԸ · 16 · Մատ · ա · 7 ։
Եբր · Ա-բիամ
958
ԻՐ ՄՆ · ԺԹ · 1 ։
ԲՐ ՄՆ · ԺԱ · 20 · 21 · 22 ։
ՖԲՄՆ · ԺԹ · 2 Ի-ե-ռո-ւ Մրիքա · Գաբաացի Ուրիէլին աղջիկը ։
ԴԳԼ · ԺԱ · 4 ։ Սաղ · ՃԺԹ · 80 ։
ԲԳԼ · ԺԱ · 32 · 36 ։ Բ Մն · ԻԱ · 7 ։
ՂԳԼ · ԺԱ · 36 ։
ԲԳԼ · ԺԳ · 8 ։
ԸՐ Թագ · ԺԱ · 4 · 15 · ԺԲ · 9 ։
ՔԳԼ · ԺԳ · 30 ։
ԺԲՄՆ · ԺԳ · 2 · 3 · 22 ։
955
ԻՐ ՄՆ · ԺԳ · 1 ։

Ն · ք · ՁԲ · 955
Ի՞ՐՄՆ · ԺԸ · ՄԱՀ ՄՈՒՐԸ · ՄԵՌ ՆԱՐ 2 ։
ԼՐՄՆ · ԺԳ · 2 ։
ԻՐՐ 951
Ի ԳԼ · ԺԳ · 24 ։ ԻԲ · 47 ։
ԺԲՄՆ · ԺԵ · 16 ։
ՅԵԼ · ԼԲ · 20 ։
Հ ԳԼ · ԻԲ · 44 ։ Բ Մն · ԺԵ · 17 · 18 ։
Յ ՏԵՍ ՆԱՐ 8 ։
ՂԲՄՆ · ԺՂ · 1 · ՃԱ ։
ՃՁԵՍ · ԺԲ · 25 ։
Ի ՏԵՍ ԳԼ · ԺԲ · 27 ։
Յ ԳԼ · ԺՍ · 23 · 24 ։
ՆԲՄՆ · ԺՂ · 2 ։
ՂԳԹագ · ԺԵ · 29 ։
Ո Դատ · ԺԲ · 29 ։
ԼՐԹագ · Ի · 14 ։
ՊԲՄՆ · ԺՂ · 6 ։

գաւորը անոնցմով Ի Բենիամինի Գաբան ու Մասփան չինեց ։

23 Եւ Ասային բոլոր մնացորդ պատմութիւնը , ու անոր բոլոր զօրութիւնը , ու բոլոր ըրածը , և անոր շինած քաղաքները՝ ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը գրուած են . բայց ՝անկայ իր ծերութեանատենը ոտքերնին ։

24 Բու ցաւ ուներ ։ Ու Ասա իր հայրերուն հետ քնացաւ , և իր հայրերուն հետ իր Հօրը Դաւիթին քաղաքին մէջը թաղուեցաւ . Յոս անոր տեղը՝ անոր որդին Յովսափատ թագաւորեց ։

25 Եւ Յուդայի Ասա թագաւորին երկրորդ տարին՝ Ցերոբովամի որդին Նադաբը Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ . ու անիկայ Իսրայէլի վրայ երկու տարի թագաւորուեց ։

26 Թիւն ըրաւ , Եւ Տէրոջը առջեւը չարութիւն ըրաւ ։ ու իր Հօրը ճամբուն մէջ քալեց , ու Տանոր ըրած մեղքին մէջ՝ որով Իսրայէլին

27 մեղանչել տուաւ ։ Եւ Իսաքարի տունէն՝ Ախիայի որդին Բաասան անոր դէմ դաւ դնելէ վերջը . ու Բաասա զանիկայ Փղշտացւոց Գաբաթոնին քովը զարկաւ , երբոր Նադաբ բոլոր Իսրայէլ հետ Գաբաթոնը պաշարեր էր ։ Եւ Յուդայի Ասա թագաւորին երրորդ տարին՝ Բաասա մեռնելուց զանիկայ , ու անոր տեղը թագաւոր եղաւ ։

29 Ու երբոր թագաւոր եղաւ՝ Ցերոբովամին բոլոր տունը զարկաւ . ՝ Տէրոջը խօսքին համեմատ՝ որ իր ծառային Սիլոնացի Ախիա մարգարէին ձեռքովը խօսեր էր , Ցերոբովամն ընաւ մէկ հոգի ալ ողջ չթողուց , ու զանիկայ

30 բնաջինջ ըրաւ՝ Ցերոբովամին մեղքերուն համար՝ որոնցմով մեղանչեր էր , ու Իսրայէլին մեղանչել տուեր էր , Իսրայէլին Տէր Աստուածը բարկացընելով ։

31 Եւ Նադաբին մնացորդ պատմութիւնը , ու անոր բոլոր ըրածը՝ ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը գրուած է ։

32 Եւ Ասային ու Իսրայէլի Բաասա թագաւորին մէջտեղը՝ անդադ բոլոր օրերուն մէջը պատերազմ կար ։

33 Յուդայի Ասա թագաւորին երրորդ տարին՝ Ախիայի որդին Բաասան՝ Թերսայի մէջ բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ , ու քսան ուչորս տարի Իսրայէլին Տէր Աստուածը բարկացընելով ։

34 ըրաւ ։ Եւ անիկայ Տէրոջը առջեւը չարութիւն ըրաւ , ու Ցերոբովամին ճամբուն մէջ քալեց , և անոր մեղքին մէջ՝ որով անիկայ Իսրայէլին մեղանչել տուեր էր ։

ԳԼ . ԺԶ

1 Ցեհուին մարգարէութիւնը Բաասային դէմ ։ 6 Եղա իր Տոքը տեղը կը յաջորդէ ։ 8 Զամբրի՝ Եղային դէմ դաւաճանութիւն ընելով՝ անոր տեղը կ՚անցնի ։ 11 Ցեհուին մարգարէութիւնը Զամբրիին ձեռքովը կը կատարուի ։ 15 Զամբրի յուսահատելով՝ Իրղնկրը կ՚այրէ ։ 21 Ժողովուրդին մէջ երկպառակութիւն սկսած ըլլալով՝ Ամրի՝ Թիբնիին դէմ յաղթող կը դառնայ ։ 23 Ամրի՝ Սամարիան կը շինէ ։ 25 Անոր գէշ վարմունքը ։ 27 Աբաաբ անոր տեղը կը յաջորդէ ։ 29 Աբաաբին խիստ գէշ վարմունքը ։ 34 Ցեհուին անէծքը՝ Երիքովը նորոգող Ցիելին վրայ կը կատարուի ։

1 Ու Բաասային համար՝ Ցերոջը խօսքը Անանիի որդւոյն Ցեհուին

1 Յետ անկէ եւս Ամմոնի որդւոց թագաւորը Նաասս մեռաւ , ու անոր տեղը՝ անոր որդին թագաւոր 2 եղաւ : Եւ Դաւիթ ըսաւ . Նաասի որդւոյն Անոնին մարդասիրութիւն ընեմ . քանզի անոր հայրը ինծի մարդասիրութիւն ըրաւ . ու Դաւիթ դեսպանները խրկեց , որ զանիկայ իր հօրը վրայով մխիթարեն . ու Դաւիթին ծառաները Ամմոնի որդւոց երկիրը Անոնին գացին՝ զա-
3 նիկայ մխիթարելու համար : Եւ Ամմոնի որդւոց իշխանները Անոնին ըսին . Մի՞թէ Դաւիթ քու հայրդ քու առջեդ պատուելու համար քեզի մխիթարիչներ խրկեց . մի՞թէ անոր ծառաները աս երկիրը քննելու , տակնուվրայ ընելու , ու լրտեսելու համար չեկան քեզի : 4 Եւ Անոն՝ Դաւիթին ծառաները բըռնեց , ու զանոնք ածիլեց , և անոնց հանդերձներուն ա. կէսը՝ մինչև նստոյ տեղը կտրել տուաւ , և զանոնք
5 խրկեց զանոնք : Ու գացին՝ ան մարդիկներուն ընդառիմ Դաւիթին պատմեցին . ան ալ զանոնք դիմաւորելու մարդ խրկեց . քանզի ան մարդիկները շատ անարգուեր էին . ու թագաւորը ըսաւ . Երիքովի մէջ նստէք՝ մինչև որ մօրուքնիդ աճի , ու եռէք դարձէք :

6 Եւ Ամմոնի որդիքը տեսնելով որ Դաւիթին հետ աւրուեցան , Անոնը ու Ամմոնի որդիքը հազար տաղանդ արծաթ խրկեցին , որ Միջագետաց Ասորիներէն , ու Մաաքայի Ասորիներէն , ու †Սուբայէն՝ վարձքով
7 կառքեր ու ձիաւորներ բռնեն : Եւ անոնք իրենց վարձքով բռնեցին երեսունուերկու հազար կառք , ու Մաաքայի թագաւորը . և անոր զօրքը , որոնք գացին Մեդաբայի առջեւը բանակեցան . Ամմոնի որդիքն ալ իրենց քաղաքներէն ժողվուեցան , ու պատերազմելու գացին :

8 Ու երբոր Դաւիթ ասոր լսեց , Յովաբը ու բոլոր զօրաւոր զօրքերը
9 խրկեց : Եւ Ամմոնի որդիքը եկան , ու քաղաքին դրանը առջեւը կարգաւ պատերազմի շարուեցան , ու օգնական եկող թագաւորները

Ն . ք . ՂԲ . իրը 1040

՚ Տես բ Թագ . ը . 4 :

† կամ՝ կառքերը քարկեց , ու առնոնցմէ միայն հարիւր կառք պահեց :

ը Թագ . Ե . 15 , 23 : բ Մն . գ . 12 , 15 , 16 :

Ե բ Թագ . ը . 9 :

Ը բ Թագ . ը . 10 Յէսոէ Յովրամ :

† կամ՝ ընորհաւորութիւն ընէ անոր :

Ե բ Թագ . ը . 13 :

Ը բ Թագ . ը . 14 , ՃԲ :

Ի բ Թագ . ը . 17 Յէսոէ Աբիմելեքի :

Ժ բ Թագ . ը . 17 Յէսոէ Սարայիա : Իսկ Թագ . գ . 3 Սիսա :

Ի բ Թագ . ը . 18 :

իրը 1037 ա բ Թագ . ժ . 1 ՃԼ :

Բ Գլ . ժ . 5 , 9 :

10 դաշտի մէջ զատ կայներ էին ։ Եւ Ցովաբ երբոր տեսաւ որ պատերազմը առջևէն ու ետևէն իր վրայ կը Հասնի , Իսրայէլի բոլոր ընտրուած մարդիկներէն ընտրեց , ու Ասորոց
11 դէմ պատերազմի շարեց . Եւ մնացած զօրքը իր եղբօրը Աբեսսային յանձնեց . ու անոնք Ամմինի որ-
12 դւոցը դիմացը շարուեցան . Եւ ըսաւ . Թէ որ Ասորիները զիս յաղթելու ըլլան , ինծի օգնութեան Հասնիս . ու թէ որ Ամմինի որդիքը քեզ յաղթելու ըլլան , ես քեզի
13 օգնութեան պիտի Հասնիմ . քաջասիրտ եղիր , ու մեր ժողովուրդին Համար և մեր Աստուծոյն քաղաքներուն Համար ուժով պատերազմինք . և Տէրը իր աչքին Հաճոյ երևայ
14 ցածը թող ընէ ։ Ու Ցովաբ իր հետը եղող զօրքով Ասորիներուն մօտեցաւ , որ անոնց դէմ պատերազմ բնէ . ու անոնք անոր առջևէն
15 փախան ։ Եւ Ամմինի որդիքը Ասորոց փախչիը տեսնելով , իրենք ալ անոր եղբօրը Աբեսսային առջևէն փախան , ու քաղաքը մտան ։ Եւ Ցովաբ Երուսաղէմ եկաւ ։
16 Երբոր Ասորիները տեսան որ իրենը Իսրայէլին առջևը կոտրուեցան , դեսպաններ խրկեցին , ու գետին անդիի կողմը եղող Ասորիները ոտք Հանեցին . և անոնց առջևէն Ադրազարին զօրագլուխը Սովաք բակը Լ'Էբէաբ ։ Ու երբոր Դաւիթին պատմեցին , անիկայ բոլոր Իսրայէլը ժողվելով , Յորդանանէն անցաւ , ու անոնց վրայ գնաց , և անոնց դէմ գունդեր շարեց . ու երբոր Դաւիթ Ասորիները պատերազմով դիմաւորելու Համար գունդեր շարեց , անոնք անոր Հետ պա-
18 տերազմ ըրին ։ Եւ Ասորիները Իսրայէլին առջևէն փախան . ու Դաւիթ Ասորիներէն եօթը Հազար կառքի ջրփ , ու քառասուն Հազար Հետևակ զօրք կոտրեց , ու Սովրակ
19 զօրագլուխն ալ մեռցուց ։ Եւ Ադրազարին ծառաները երբոր տեսան որ Իսրայէլին առջևը յաղթուեցան , Դաւիթին Հետ Հաշտութիւն ըրին , ու անոր ծառայ եղան . և Ասորիները անկէ ետքը Ամմինի որդւոցը օգնել չուզեցին ։

ԳԼ . Ի

1 Ցովաբ " Ռաբբան կը պաշարէ . Դաւիթ ա-
ւարը կ'առնէ , ու ան տեղի ժողովուրդը կը
տանջէ ։ 4 Փղշտացւոց իրեք անգամ յաղ-
թուած ատենը իրեք Հսկաներ կը սպաննուին ։

1 Ու * Հետևեալ տարին՝ թագաւոր-
ներուն պատերազմի ելլելու ատե-
նը , Ցովաբ՝ զօրքերուն բնոյր
* գունդերը Հանեց , և Ամմինի որ-
դւոցը երկիրը աւերեց , ու գնաց
Ռաբբան պաշարեց . բայց Դաւիթ
Երուսաղէմ կը նստէր ։ ու * Ցովաբ
Ռաբբան զարկաւ , ու զանիկայ
2 կործանեց ։ Եւ Դաւիթ Թանոնց
թագաւորին թագը անոր գլխուն
վրայէն առաւ , ու զանիկայ գտաւ
" ոսկի տաղանդ մը ոսկիի ծանրութիւն
" ունէր , և անոր վրայ պատուական
քարեր կար . ու Դաւիթին գլուխը
դրուեցաւ . և Դ"Էն՝ քաղաքէն
3 խիստ շատ աւար առաւ ։ Ու անոր մէջը եղած ժողովուրդը Հանեց , ու " ընդ սղոցներով՝ երկաթէ կամնաւ-
սայլներով ու տապարներով կտրեց . և Դաւիթ Ամմինի որդւոցը բոլոր քաղաքներուն այսպէս ըրաւ . ու Դաւիթ բոլոր ժողովուրդով Երու-
սաղէմ դարձաւ ։
4 Ետ ասկէ ետքը՝ Գազերի մէջ Փղշտացւոց Հետ պատերազմ եղաւ . ան ատենը Ե Ովսացի Սովքաքը՝ Ռափայի որդւոցմէ եղող Սեփեան մեծ-
ցուց , ու անոնք նուաճեցան ։
5 Եւ նորէն Փղշտացւոց Հետ պատերազմ եղաւ . ու Ե Յայիրի որդին Ելհանանը՝ Գեթացի Գողիաթին եղբայրը Ղէմմին զարկաւ , որուն նիզակին բունը ոստայնանկաց գլա-
նին պէս էր ։
6 Եւ նորէն Է Գեթի մէջ պատերազմ եղաւ . ու մէկ երկայնահասակ մարդ մը կար , որուն մատերը վեց վեց ԷԼԼԻՎ՝ քսանուչորս Հա-
ունէր . անիկայ ալ Ռափայի որ-
7 դւոցմէ էր ։ Եւ անիկայ Իսրայէլը նախատեց . բայց Դաւիթին եղբօրը Սամայային որդին Ցովնա-
8 թանը զանիկայ զարկաւ ։ Ասոնք Գեթի մէջ Ռափայէն ծներ էին . և Դաւիթին ձեռքովը ու անոր ծառաներուն ձեռքովը ինկան ։

ԳԼ . ԻԱ

1 Դաւիթ Սատանային փորձուելով՝ կը տրիպէ Ցովաբը որ ժողովուրդը Համրէ ։ 5 Երբոր ժողովուրդին թիւը կը բերեն՝ Դաւիթ իր բռածին Համար կը զղջայ ։ 9 Գադ Մարգարէին ձեռքովը առաջարկուած իրեք հարուածներէն՝ Դաւիթ ժամտսխտը կ'ընտրէ ։ 14 Եօթանասուն Հազար Հոգի մեռնելէն ետքը . Դաւիթ ապաչխարելով՝ Երուսաղէմին կործանմանը առջևը կ'առնէ ։ 18 Դաւիթ՝ Գադին ծանուցանելովը Ռոնային կալը ծախու կ'առնէ . ու Հոն սեղան մը կը շինէ . ասոր վրայ Աստուած իր Հաշտութեանը նշան մը կու տայ կրակով , ու ժանտախտը կը դադրեցնէ ։ 28 Դաւիթ Հոն ողջակէզ կը մատուցանէ . քանզի Տիրոջակէն վանդարան Համար՝ լէր կրնար մինչև Գաբաաւն երթալ ։

1 Ու Սատանան Իսրայէլին դէմ ե-
լաւ , ու Դաւիթը դրդեց որ
2 Իսրայէլը Համրէ ։ Եւ Դաւիթ՝ Ցովաբին ու ժողովուրդին իշխաններուն ըսաւ . Գացէք Իսրայէլը Համրեցէք Բերսաբէէն մինչև Դան , ու Հաշիւը ինծի բերէք , որ դի-

ն . ք . ՂՓ . Իբր 1037

Ն . ք . ՂՓ . Իբր 1035

Բ Թագ . ԺԴ . 26 ։ Իբր 1033

Ճ Բ Թագ . ԺԴ . 30 , 31 ։

Իբր 1018

Ա Բ Թագ . Իա . 18 ։ Ա Գլ . Ժա . 29 ։

Ղ Բ Թագ . Իա . 19 Լ'ԸՆԿ ԱՐՒԱԼԴԻՄ ։

Իբր 1036

Ե Բ Թագ . Իա . 20 ։

Իբր 1035

Ա Բ Թագ . Ժա . 1 ։

* ԵՇ . զօրութիւնը

1017

Ա Բ Թագ . Իդ . 1 , Ճ ։

Բ Գլ . Իե . 23 ։

Ն · ք · ՉԾ · 1017

3 նամ՝ եւ Ցովաբ ըսաւ . Տէրը՝ իր ժողովուրդը որչափ որ է , հա-
բիւրապատիկ աւելցընէ . ով տէր իմ Թագաւոր՝ միթէ անոնց ամէնը
իմ տիրոջս ծառաները չե՞ն . իմ տէրս ինչո՞ւ աս բանը կը փնտռէ :
ինչո՞ւ համար պիտի ըլլայ Իսրայէլին
4 յանցանքի պատճառ : Բայց
երբոր Թագաւորին խօսքը Ցովա-
բին վրայ սաստկացաւ , Ցովաբ ե-
լաւ , ու բոլոր Իսրայէլի մէջ պտը-
տեցաւ , ու Երուսաղէմ եկաւ :
5 Եւ Ցովաբ ժողովուրդին համրան-
քին ցուցակը Դաւիթին տուաւ .
ու Իսրայէլին ամէնը՝ հազար ան-
գամ հազար ու հարիւր հազար
սուր քաշող մարդ էր . և Ցուդան
չորս հարիւր եօթանասուն հազար
է Գլ. իէ. 24։ 6 սուր քաշող մարդ էր : Եւ Սակայն
Ղեւտացիները ու Բենիամինեանները
անոնց մէջ չհամրեց . քանզի թա-
գաւորին պատճառը Ցովաբին
զզուելի էր :
7 Եւ աս բանը Աստուծոյ առջեւը
դէշ երեւնալուն համար՝ Իսրայէլը
8 զարկաւ : Ու Դաւիթ Աստուծոյ
ըսաւ . Ես բանը ընելովս Մեծ
Բ Թագ · իդ · 10 ։ մեղք գործեցի . Հիմա կ'աղա-
Ե Թագ · ժբ · 13 ։ չեմ՝ քու ծառայիդ մեղքը ներէ ,
քանզի մեծ յիմարութիւն ըրի :
Ջ Ցէս ա Թագ · թ · 9 ։ 9 Եւ Տէրը Դաւիթին Գատեսանո-
ղին՝ Գադին խօսեցաւ ու ըսաւ .
10 Գնա ու Դաւիթին խօսէ՝ ըսելով .
Տէրը այսպէս կ'ըսէ . Ես քեզի իրեք
բան կ'առաջարկեմ . անոնցմէ մէկը
11 ընտրէ որ քեզի ընեմ : Եւ Գադ՝
Դաւիթին եկաւ ու անոր ըսաւ .
Տէրը այսպէս կ'ըսէ . Ընտրէ՛ քեզի՝
Ե Թագ իդ · 13 ։ 12 Կամ իրեք տարուան սով , կամ
իրեք ամիս քու թշնամիներուդ ե-
րեսէն փախչիս , ու քու թշնա-
միներուդ սուրը հետ հասնի , և
կամ իրեք օր Տէրոջը սուրը՝ այս-
ինքն ժանտախտ ըլլայ երկրիս մէ-
ջը , ու Տէրոջը հրեշտակը Իսրայէ-
լին բոլոր սահմաններուն մէջը կո-
տորած ընէ . և հիմա տես , զես
իրկողին ի՞նչ պատասխան տանիմ :
13 Ու Դաւիթ ըսաւ Գադին . Խիստ
մեծ նեղութեան մէջ եմ . հիմա
Տէրոջը ձեռքը իյնամ , քանզի ա-
նոր գթութիւնը խիստ շատ է : ու
14 մարդու ձեռքը չիյնամ : Եւ Տէրը
Իսրայէլին վրայ ժանտախտ խրկեց ,
ու Իսրայէլէն եօթանասուն հազար
15 մարդ իյնաւ : Եւ Աստուած հր-
եշտակ մը խրկեց Երուսաղէմ ,
Բ Թագ իդ · 16 ։ որ զանիկայ կորսընցընէ . ու երբ-
որ կը կորսընցընէր , Տէրը նա-
յեցաւ , ու աս չարիքին վրայ
Ի Ցէս Ծէն · ժ · 6 ։ սիրտը իջաւ , և կոտորած ընող
հրեշտակին ըսաւ . Հերիք է , ալ
ձեռքդ քաշէ . ու Տէրոջը հրեշտա-
կը Եբուսացի Ոռնային կալին քո-
16 վը կայներ էր : Եւ Դաւիթ իր
աչքերը վերցուց , ու Տէրոջը հրեշ-
տակը տեսաւ , որ երկրին ու եր-
կինքին միջտեղը կայներ էր , ու
ձեռքը մերկ սուր մը կար , որ
Երուսաղէմի վրայ երկընցուցեր էր .
ան ատենը Դաւիթ ու Ծերերը
քուրձեր հագած՝ երեսնուն վրայ
17 ինկան : Եւ Դաւիթ Աստուծոյ
ըսաւ . Ահա ես պատուիրեցի որ
ժողովուրդը համրեն , ու ես եմ որ
մեղանչեցի , ու մեծ չարութիւն ըր-
ի . բայց աս ոչխարները ի՞նչ ը-
րին . ով Տէր Աստուած իմ՝ քու
ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը
վրայ ըլլայ . բայց քու ժողովուր-
դիդ վրայ չըլլայ *զանիկայ բնա-
ջինջ ընելու համար" :
18 Եւ Տէրոջը հրեշտակը Գադին
ըսաւ . Դաւիթին ըսես որ ելլէ ,
ու Եբուսացի Ոռնային կալին
մէջ Տէրոջը սեղան մը կանգնէ :
19 Եւ Դաւիթ վեր ելաւ՝ Գադին Տէ-
րոջը անունովը ըսած խօսքին հա-
20 մեմատ : Ու Ոռնա դարձաւ , ու
հրեշտակը տեսաւ , և իր չորս որ-
դիքը իր հետը պահուեցան . (քան-
21 զի Ոռնա ցորեն կը ծեծէր :) Ու
Դաւիթ Ոռնային եկաւ . և Ոռնա
նայեցաւ , ու Դաւիթը տեսնելով՝
կալէն ելաւ , ու երեսը մինչև գե-
տինը Դաւիթին երկրպագութիւն
22 ըրաւ : Ան ատենը Դաւիթ Ոռ-
նային ըսաւ . Ա՛ս կալին տեղը ինծի
տուր , որ հոն Տէրոջը սեղան մը
շինեմ , (զանիկայ լեցուն դնով
տուր ինծի ,) ու ժողովուրդին
23 վրայէն հարուածը վերնայ : Եւ
Ոռնա՝ Դաւիթին ըսաւ . Զանի-
կայ քեզի առ . ու իմ տէրս թա-
գաւորը իր աչքին աղէկ երեւցածը
թող ընէ . ահա եզները ողջակէզի
համար , ու կամնասայլները փայտի
համար , ու ցորենը հացի ընծայի
համար կու տամ , ամէնն ալ կու
24 տամ : Եւ Դաւիթ Թագաւորը
Ոռնային ըսաւ . Ըէ , հապա չանա-
Ե Թագ · իդ · 24 ։ նշուշտ լեցուն գնով ծախու պի-
տի առնեմ . քանզի քուկդ եղածը
Տէրոջը համար պիտի չառնեմ , ոչ
ալ ձրի ողջակէզ մատուց-
25 ցանեմ : Ու Դաւիթ ան տեղուոյն
համար՝ կշռոքով վեց հարիւր սիկղ
26 ոսկի տուաւ Ոռնային : Եւ Դա-
ւիթ հոն Տէրոջը սեղան շինեց , ու
անոր վրայ ողջակէզներ ու խաղա-
ղութեան զոհեր մատուց , և Տէր-
ջը աղաղակեց . ու Ե երկինքէն կրա-
Ի ՂԼ · Թ · 24 · Բ Մն · գ · 1 · է · 1 · 'կով՝ ողջակէզի սեղանին վրայ ա-
27 նոր պատասխան տուաւ : Եւ Տէ-
րը հրեշտակին խօսեցաւ , ու անի-
կայ սուրը իր պատեանը դարձուց :

Ն · ք · ՉԾ · 1017

Բ Մն · գ · 1 ։

* Եբ · հա-
րուածէ հա-
մար ։

Ե Մն · գ · 1 ։

28 Ան ատենը Դաւիթ տեսնելով որ Տէրը Ցերուսաղէմ Ոռնային կալին մէջ իրեն պատասխան տուաւ, ան
29 տեղը զոհեր մատուց։ Իսկ Մովսէսին՝ անապատին մէջ շինած Տէրոջը խորանը ու ողջակէզի սեղանը՝ ան ատենը Գաբաւոնի բարձր տեղն
30 էր. Բայց Դաւիթ Աստուծոյ հարցընելուս համար՝ չկրցաւ անոր առջեւը երթալ, քանզի Տէրոջը հրեշտակին սուրին երեսէն վախցաւ։

ԳԼ. ԻԹ

1 Դաւիթ՝ տաճարին համար որոշուած տեղը գիտնալով՝ անոր շինութեանը հարկաւոր եղած բաները առատօրէն կը պատրաստէ. 6 ու Սողոմոնին կ'իմացընէ Աստուծոյ խոստումները, ու նաև անոր պարտաւորութիւնը տաճարը շինելու վրայով. 17 իշխաններուն կը պատուիրէ, որ իր որդւոյն ձեռնտու ըլլան։

1 Նաև Դաւիթ ըսաւ. Միայն Աստուծոյն տունը, ու ա-
սիկայ է Իսրայէլի ողջակէզին սե-
2 ղանը։ Եւ Դաւիթ հրամայեց որ Իսրայէլի երկրին մէջ գտնուող Հօ-
տարազգիները ժողվին. ու Աստու-
ծոյ տունը շինելու համար՝ քարա-
հատները դրաւ, որ տաշուած քարեր
3 պատրաստեն։ Եւ Դաւիթ դրան փեղկերուն բևեռներուն համար ու շրջանակներուն համար՝ խիստ շատ երկաթ պատրաստեց, և այնչափ շատ պղինձ՝ որ կշիռքի չէր գար.
4 Ու պարբասպաց եղեւնափայտին համբարները չկար. քանզի Սիդոնացիք և Տիւրացիք Դաւիթին շատ եղեւնափայտեր կը բերէին։
5 Եւ Դաւիթ ըսաւ. Իմ որդիս Սողոմոնը փափուկ տղայ մըն է, ու Տէրոջը շինուելու տունը մեծ՝ բարձր՝ ու ամէն երկիրներու մէջ անունի ու փառաւոր պիտի ըլլայ. Հիմա անոր համար պատրաստութիւն տեսնեմ. և Դաւիթ իր մեռնելէն առաջ՝ խիստ շատ պատրաս-
6 տութիւն տեսաւ։ Եւ կոչեց իր որդին Սողոմոնը և անոր պատուիրեց որ Իսրայէլի Տէր Աստուծոյն տուն շինէ։
7 Ու Դաւիթ Սողոմոնին ըսաւ. Որդեակ իմ՝ Աստուածս անունիս
8 համար շինելիք տունը մեծ պիտի ըլլայ. Բայց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով. Դուն շատ արիւն թափեցիր, ու մեծ պատերազմներ ըրիր. դուն իմ անունիս տուն պիտի չշինես. քանզի դուն իմ առջեւս դետնի վրայ շատ արիւն
9 թափեցիր. Ահա քեզի որդի մը պիտի ծնանի. անիկայ հանգստասէր մարդ պիտի ըլլայ. և զանիկայ ի բոլոր շրջակայ թշնամիներէն պիտի հանդարտեցնեմ. քանզի անոր անունը Սողոմոն պիտի ըլ-
լայ. ու անոր օրերուն մէջ Իսրայէլին խաղաղութիւն ու հանդարտու-
10 թիւն պիտի տամ։ Անիկայ իմ անունիս տուն պիտի շինէ. ու Անիկայ ինծի որդի պիտի ըլլայ, ու ես անոր հայր պիտի ըլլամ. և ա-
նոր թագաւորութեան աթոռը Իսրայէլի մէջ յաւիտեան պիտի հաս-
11 տատեմ։ Ուրեմն որդեակ իմ, Տէրը քու հետդ ըլլայ, ու յաջողութիւն գտնես, և քու Տէր Աստուածդ տուն շինես, ինչպէս որ
12 քեզի համար խօսեցաւ։ Միայն թէ Տէրը քեզի իմաստութիւն ու հանճար տայ, և քեզ Իսրայէլի վրայ հաստատէ, որ քու Տէր Աս-
13 տուածդ օրէնքը պահես։ Ան ատենը յաջողութիւն կը գտնես, երբոր զգուշութեամբ՝ի գործ դնես այն կանոնները ու դատաստանները, որոնք որ Տէրը Մովսէսին պատուիրեց Իսրայէլի համար. Հզօրացիր ու քաջասիրտ եղիր, մի՛ վախնար ու
14 մի՛ զարհուրիր։ Եւ ահա ես իմ † նեղութիւններուս մէջ՝ Տէրոջը տանը համար՝ հարիւր հազար տա-
ղանդ ոսկի, ու հազար անգամ հա-
զար տաղանդ արծաթ պատրաս-
տեցի. իսկ պղինձը ու երկաթը շա-
տութեանը համար չկշռուքի չգար. փայտեր ու քարեր ալ պատրաստե-
ցի, ու անոնց վրայ դուն ալ աւելը-
15 ցընես։ Եւ դուն քու քովդ խիստ շատ արուեստաւորներ, քարահատներ, որմնադիրներ, հիւսեր, ու
16 ամէն գործքի համար ամէն տեսակ վարպետ մարդիկները ունիս։ Ոսկիին, արծաթին, պղինձին ու երկաթին համրանքը չկայ. ելլէ՛ր, ու ‡ սկսէ գործին ձեռք զարկ՝՝, ու Տէրը քու հետդ ըլլայ։
17 Եւ Դաւիթ Իսրայէլի բոլոր իշխաններուն պատուիրեց, որ իր որդւոյն Սողոմոնին ձեռնտու ըլլան.
18 Ո՞ չէ՞ Աստուած ձեր Տէրը ձեզ հանգստացուց. որովհետև ան երկրին բնակիչները իմ ձեռքս տուաւ. ու երկիրը Տէրոջը առջեւը ու անոր ժողովուրդին առ-
19 ջեւը նուաճեցաւ։ Եւ հիմա դ ձեր սիրտը ու ձեր հոգին՝ ձեր Տէր Աստուածը խնդրելու տուէք, ու ելէք Տէր Աստուծոյն սրբարանը շինեցէք, որ ¤ Տէրոջը ուխտին տապանակը ու Աստուծոյ սուրբ անօթները՝՝ Տէրոջը անունուան համար շինուած տունը տանիք։

ԳԼ. Ի

1 Դաւիթ ծերացած ըլլալով՝ Սողոմոնը թագաւոր կ'ընէ։ 2 Ղեւացւոց թիւը ու գործակարգութիւնը։ 7 Գերսոնեանց տոհմերը։

Ա Թագ. է. 13։ Գ Թագ. ե. 5։ Գ Ա. ԺԷ. 12, 13։ Ես. 6։ Ա Ներ. ա. 5։

Ե Ելմ. 16։

Գ Թագ. գ. 9, 12։ Սաղ. Ժբ. 1։

Ել Ցես. ա. 7, 8։ Գ Ա. Ես. 7։

Հբ Օր. լա. 7, 8։ Ցես. ա. 6, 7, 9։ Գ Ա. Ես. 20։ † Կ՚ար՝ ազքատու-թեամբ

Յ Ելմ. 3։

‡ Նէե. ա. 6՝, Ա Ելմ. 11։

Զ Օր. Ժբ. 10։ Ցես. Ես. 4։ Բ Թագ. է. 1։ Գ Ա. ԻԳ. 25։

Ժբ Մն. Ի. 8։

Ա Գ Թագ. ը. 6, 21։ Բ Մն. է. 7։ Գ. 11։ ¤ Ելմ. 7։ Գ Թագ. է. 8։

Ծ Գ Ա. Ժգ. 39։

Ել Գ Թագ. դ. 4։ Գ Ա. Ժգ. 39։ Բ Մն. ա. 3։

Ա Օր. Ժբ. 5։ Բ Թագ. ԻԴ. 18։ Գ Ա. Ի. 18, 19, 26, 28։ Բ Մն. գ. 1։ Է գ Թագ. Թ. 21։

Ի Ելմ. 14։ Գ Թագ. է. 47։ Ա գ Թագ. Ե. 6։

Է գ Ա. Ի. 1։

Ա Գ Ա. Ի. 1։

Ա Ել. Ի. 5։

Ժ գ Թագ. գ. 25։ է. 4։ * Յ՚՝ խաղաղարար։

Ն · Ք · ՁԲ · 1015

ա գ Թագ · ա · 33-39 · ԳԼ · Իշ · 5 ։

Իբր 1045

բ Թագ · գ · 3, 47 ։

է բ Օր · Ժշ · 18։ ԳԼ · Իշ · 29 ։ բ Մն · Ժթ · 8 ։

Ը Տե՛ս բ Մն · Իթ · 25, 26։ Ամվ · Ը · 5 ։

Թ Եզ · Ը · 16 ։ Թագ · Իզ · 57 ։ ԳԼ · Ը · 1, ՃԼ ։ բ Մն · ը · 14 ։ Իթ · 25 ։

Ժ ԳԼ · Իզ · 21 ։

ԺԱ Եզ · Ը · 18 ։

ԺԲ Եզ · Ը · 20 ։ ԺԳ Եզ · Ը · 1 ։ Իբր · ը · 4 ։

ԺԴ Եզ · Ը · Ծ ։ Թագ · Ժշ · 40։ աՓագ · բ · 28 ։

ԺԵ Օր · իա · 5 ։

ԺԶ Թագ · Գ · 23 ։

ԺԷ Տե՛ս ԳԼ · Իշ · 23, 24, 25 ։

ԺԸ Եբր · կս · չուեցան ։

ԺԹ Եզ · բ · 22 ։ Ժը · 3, 4 ։

Ի ԳԼ · Իզ · 20։ Իշ · 24 ։

ԻԱ ԳԼ · Իզ · 25։

ԻԲ ԳԼ · Իզ · 22։

ԻԳ ԳԼ · Իզ · 23։

12 Կահաթի որդիքը ։ 21 Մերարիի որդիքը ։ 24 Լևտացւոց պաշտօնը ։

1 Յու Դաւիթ ծերացած ու օրերը լեցուած ըլլալով , ՚իր որդին Սողոմոնը Իսրայէլի վրայ թագաւոր
2 դրաւ ։ Եւ Իսրայէլի բոլոր իշխանները , նաև քահանաները , ու Ղեւիներուն
3 տացիները ժողվեց ։ Ու Ղեւտացիները՝ սկսեալ երեսուն տարեկաններէն վեր եղող էրկի մարդիկները մէկիկ մէկիկ համրուելով , անոնց թիւը
4 երեսունուութը հազար էր ։ Ե՛ Դաւիթ ըսաւ . Անոնցմէ քառասուն հազարը՝ Տէրոջը տանը գործքին վրայ , ու վեց հազարը՝ դպիրներ ու դատաւորներ ըլ-
5 լան , Ու չորս հազարը՝ դռնապաններ , ու չորս հազարը՝ օրհնելու համար Ը շինած նուագարաններովս՝
6 Տէրոջը օրհներգները ըլլան ։ Եւ Դաւիթ զանոնք բաժնեց , Ղեւիի որդւոցը՝ Գերսոնին , Կահաթին ու Մերարիին դասակարգութիւնները ցուցնելով ։
7 Ղերսոնեաններէն՝ Ղադան ու
8 Սեմէի էին . Ղադանին որդիքը՝ առջինը Եէքիէլ , երրը Զեթամ ,
9 ու Ցովէլ՝ իրեք էին ։ Սեմէիին որդիքը՝ Սաղոմոթ , Ազիէլ ու Արան՝ իրեք էին . ասոնք Ղադանին տոհ-
10 մերուն իշխաններն էին ։ Եւ Սեմէիին որդիքը՝ Ցեթ , Զիզա , Ցեուս ու Բարիա էին . ասոնք Սեմէիի-
11 ին որդիքը՝ չորս հոգի էին ։ Եւ առջինը՝ Ցեթ , ու երկրորդը՝ Զիզա էր . բայց Ցեուս ու Բարիա շատ որդիներ չունենալնուն համար , մէկ ազգատոհմ համրուեցան ։
12 Ե կահաթի որդիքը՝ Ամրամ , Իսահառ , Քեբրոն ու Ոզիէլ՝ չորս
13 հոգի ։ Ամրամին որդիքը՝ Ահարոն ու Մովսէս էին ։ ԵՒ Ահարոն ինքը՝ ու իր որդիքը յաւիտեան որոշուեցան՝ ամենասուրբ բաներուս մէջ իրենց սուրբ պաշտօնը կատարելու , ժ Տէրոջը առջևը խունկ ծխելու , Ը անոր ծառայութիւն ընելու , ու Ը անոր անունովը յաւիտեան օրհնե-
14 լու համար ։ Եւ Աստուծոյ մարդուն՝ Մովսէսին Ե որդիքը՝ Ղեւիի
15 ցեղին հետ Ժ համրուեցան ։ ժ Մովսէսին որդիքը՝ Գերսամ ու Եղիա-
16 զար էին ։ Գերսամին որդիքը՝ առ-
17 ջինը Շուբայէլ էր ։ Ու Եղիազարին որդիքը՝ առջինը Հռեաբիա էր ։ ու Եղիազար ուրիշ որդիներ չունէր ։ բայց Հռեաբիային որդիքը
18 խիստ շատցան ։ Իսհառիին որդի-
19 քը՝ առջինը Սաղոմոթ էր ։ Եբեբրոնին որդիքը՝ առջինը Ցերիա , երկրորդը՝ Ամարիա , երրորդը՝ Ցազիէլ , չորրորդը՝ Ցեկամամ էր ։

20 Ոզիէլին որդիքը՝ առջինը Միքա , երկրորդը՝ Ցեսիա էր ։
21 Մերարիի որդիքը՝ Մողոլ ու Մուսի էին ։ Մողոլին որդիքը՝ Ե-
22 ղիազար ու Կիսի էին ։ Ու Եղիազար մեռաւ ։ Անիկայ որդիներ չունէր , հապա միայն աղջիկներ ունէր ։ ու Ը զանոնք իրենց եղբայրնե-
23 րը Կիսին որդիքը առին ։ Ամուսիին որդիքը՝ Մողոլ , Եդեր ու Ցերիմովթ՝ իրեք էին ։
24 Ասոնք Ղեւիի որդիքն էին իրենց աղգատոհմութիւններուն համեմատ , ու անունով մէկիկ մէկիկ համրուած Ը քսան տարեկանէն վեր՝ Տէրոջը տանը սպասաւորութիւնը կատարողներուն տոհմապետներն էին ։
25 Քանզի Դաւիթ ըսեր էր . Իսրայէլի Տէր Աստուածը Ղիր ժողովուրդը հանգստացուց , ու յաւիտեան Երուսաղէմի մէջ պիտի բը-
26 նակի ։ Ու Ղեւտացիք ալ՝ Ե իսորան ու անոր պաշտօնին համար անոթները՝ ալ
27 հեղ պիտի չկըրնան բերել ։ Քանզի Դաւիթին վերջին խօսքերովը՝ Ղեւիի որդւոցմէ քսան տարեկանէն վեր եղողնե-
28 րը համրուեցան ։ Որովհետև անոնց պաշտօնը՝ Տէրոջը տանը ծառայութեանը մէջ Ահարոնի որդւոցը օգնութիւն ընել , գաւիթներուն ու սենեակներուն վերակացու ըլլալ , բոլոր սուրբ բաները մաքրել , ու Աստուծոյ տանը ծառայութիւնը
29 կատարել էր . Նաև Ը առաջաւորութեան հացին , ու հացի ընծայի Ը նաշիհին , և Ը անխմոր լաւաշներուն , ու Ը տապակի մէջ եփած և տապկուած բաներուն , ու Ը բոլոր չափերուն վերակացութիւնը ընել ,
30 և ամէն առտու ու իրիկուն՝ Տերը օրհնելու ու գովելու համար ոտքի
31 վրայ կայնիլ , Ու Ը շաբաթ օրերը , և ամսագլուխները , ու Ը մեծ տօներու մէջ Տէրոջը բոլոր ողջակէզները իրենց թուովը ու իրենց օրէնքովը՝ միշտ Տէրոջը առջևը մատու-
32 ցանել , Ու Տէրոջը տանը ծառայութեանը համար Ժ ժողովքի խորանին պահպանութիւնը , և սրբարանին պահպանութիւնը , ու Ժ իրենց եղբայրներուն՝ Ահարոնի որդւոցը պահպանութիւնը ընել էր ։

ԳԼ · ԻԴ

1 Ահարոնի որդւոցը վիճակով քահանայրթ դասակարգութիւններու բաժնուիլը ։ 20 Կահաթեանք 27 ու Մերարեանք վիճակով կը բաժնուին ։

1 Յու Ահարոնի որդւոցը դասակարգութիւնները ԱՆՍԿ էն ։ Ահարոնի որդիքը՝ Նադաբ , Աբիուդ ,
2 Եղիազար ու Իթամար էին ։ Եւ

Ն · Ք · ՁԲ · 1045

ա ԳԼ · Իդ · 26 ։

բ ԳԼ · Իդ · 29 ։

գ ԳԼ · Իդ · 28 ։

դ Տե՛ս Թագ · ա · 3 ։ գ · 3 ։ ը · 24 ։ Եզր · գ · 8 ։

ե ԳԼ · Իբ · 18 ։

զ Թագ · ժ · 17 ։ 21 ։

է Ես · Ծ · 17 ։ Տե՛ս Թագ · ա · 3 ։ գ · 3 ։ ը · 24 ։ Եզր · գ · 8 ։

Ը ԳԼ · Իբ · 30 ։

Թ Թագ · ա · 5, ՃԼ ։

Ժ Եզ · Իե · 30 ։

ԺԱ Ղե · գ · 20 ։ ԳԼ · Թ · 29 ։ ՃԼ ։

ԺԲ Ղե · բ · 4 ։

ԺԳ Ղե · բ · 5 ։ 7 ։

ԺԴ Ղե · Ժթ · 35 ։

ԺԵ Թագ · Ժ · 10 ։ Սաղ · ՃԼ · 3 ։

ԺԶ Ղե · Իգ · 4 ։

ԺԷ Թագ · ա · 53 ։

ԺԸ Թագ · գ · 6—9 ։

ԺԹ Ղե · Ժ · 1, 6 ։ Թագ · Իշ · 60 ։

Իբր 1015

Ն·Ք·ԶԲ· 1015

Բ Ընտաքար ու Աբիուդ իրենց հօրը առջևը մեռան , ու անոնք որդիներ չունեին . ու Եղիազար ու Իթամար
3 քահանայ եղան ։ Եւ Դաւիթ , ու Եղիազարի որդիներէն Սադովկ , ու Իթամարի որդիներէն Աբիմելէք՝ զանոնք բաժնեցին իրենց հերթերուն համեմատ ։
4 Քովը իրենց պաշտօնին համար ։ Ու Եղիազարի որդւոցը մէջ գտնուած իշխանները՝ Իթամարի որդւոցը մէջ գտնուածներէն չատ էին . ու զանոնք այսպէս բաժնեցին . Եղիազարի որդւոցը համար տասնուվեց իշխան՝ իրենց աղգատոհմներուն համեմատ , ու Իթամարի որդւոցը համար ութը իշխան՝ իրենց աղգատոհմներուն համեմատ ։
5 Եւ զանոնք վիճակով բաժնուեցան . քանզի սրբարանին իշխանները ու Աստուծոյ պետը իշխանները՝ Եղիազարի որդիներէն ու Իթամարի որդիներէն էին ։
6 Դիներէն էին ։ Ու Ղևտացիներէն՝ Նաթանայէլի որդին Սեմայիա դպիրը՝ թագաւորին ու իշխաններուն , և Սադովկ քահանային , ու Աբիաթարի որդւոյն Աբիմելէքին , և քահանայից ու Ղևտացւոց նահապետներուն առջևը՝ մէկ ազգատոհմ մը Եղիազարէն առնելով , ու մէկ ազգատոհմ մը Իթամարէն առնելով՝ զանոնք գրեց ։
7 Եւ առաջին վիճակը՝ Յովարիբին
8 եղաւ , երկրորդը՝ Ցեդայիային , երրորդը՝ Հարիմին , չորրորդը՝ Սէորիմին ,
9 հինգերորդը՝ Մելքիա-
10 յին , վեցերորդը՝ Միամինին , եօթներորդը՝ Ակկոսին ,
11 ութերորդը՝ Աբիային ,
12 իններորդը՝ Յեսուին , տասներորդը՝ Սէքենիային ,
13 տասնմէկերորդը՝ Եղիասիբին , տասներկուերորդը՝ Ցակիմին ,
14 տասներեքերորդը՝ Ոիփային , տասնչորսերորդը՝ Յեսբեաբին ,
15 տասնհինգերորդը՝ Բեղգային , տասնվեցերորդը՝ Իմմերին ,
16 տասնեօթներորդը՝ Եզրիին , տասնութերորդը՝ Փեթայիային ,
17 տասնիններորդը՝ Եզեկիէլին , քսաներորդը՝ Յաքինին ,
18 քսանմէկերորդը՝ Գամուլին , քսաներկուերորդը՝ Դաղայիային ,
19 քսաներեքերորդը՝ Մաազեային ։ Ասոնք էին անոնց կարգադրութիւնը իրենց պաշտամանը համար , ըստ որ իրենց Տէր Աստուածը անոր պատուիրեր էր ։
20 Ու Ղևիի որդւոցը մնացորդները սոսկ էին . Ամրամի որդիներէն՝ Սուբայէլ . Սուբայէլին որդիներէն՝
21 Յադեայիա . Ռեհաբիայէն՝ այսինքն Հռաբիային որդիներէն առջինը՝
22 Յեսիա . Խասհաւի որդիներէն՝ Շաղոմոթ . Սալոմոթին որդին-
23 րէն՝ Յեթ . Ու Ջերիթի որդիներէն —ջինը՝ Յերիա , երկրորդը՝ Ամարիա , երրորդը՝ Յազիէլ , չորրորդը՝
24 Յեկամամ . Ողիելի որդիներէն՝ Միքա . Միքային որդիներէն՝ Սամիր .
25 Միքային եղբայրը՝ Յեսիա . Յեսիային որդիներէն՝ Զաքարիա ։
26 Բ Մերարիի որդիքը Մոողի ու Մուսի էին . Յազիայի որդին Բենո .
27 Մերարիի որդիքը Յազիայէն՝ Բենո , Սոհամ , Զաքուր ու Եբրի
28 էին ։ Մոողիէն՝ Եղիազարը ձոն . ձու անիկայ որդիներ չունէր ։
29 Կիսէն՝ այսինքն Կիսին որդիներէն՝
30 Յերահմէլ էր ։ Եւ Մուսիին որդիքը՝ Մոողի , Եդեր ու Յերիմոթ էին ։ Ղևտացւոց որդիները իրենց տոհմերուն համեմատ՝ ասոնք էին ։
31 Եւ ասոնց համար ալ իրենց եղբարցը Ահարոնի որդւոցը պէս՝ Դաւիթ թագաւորին , ու Սադովկին , ու Աբիմելէքին , և քահանայից ու Ղևտացւոց տոհմապետներուն առջևը վիճակ ձգեցին , թէ տոհմապետներուն և թէ ասոնց պզտիկ եղբայրներուն համար ։

ԳԼ· ԻԵ

1 Երգեցողներուն թիւը ու պաշտօնը ։ Ց անոնց՝ վիճակով քանուըրս դասակարգութիւնները բաժնուիլը ։

1 Եւ Դաւիթ ու զօրքին իշխանները՝ ասոնք էին , Եմանին ու Իդիթունին որդիներէն՝ քնարներով , տաւիղներով ու ծնծղաներով մարգարէութիւն ընողները որոշեցին — պաշտօնին համար . ու իրենց պաշտօնին համեմատ՝ ասոնք էին ։
2 Ասափի որդիներէն՝ թագաւորին քովը մարգարէութիւն ընող Ասափին ձեռքին տակը՝ Ասափին որդիքը՝ Զաքուր , Յովսէփ , Նաթանիա ,
3 Նիա և Բ Ասարէլա էին ։ Իդիթունէն՝ Իդիթունի որդիքը՝ Գոդոլիա , Եզրի , Եսայի , Հասեբէ , Մաթիա ու Մատաթիա՝ վեց էին . ու —ին իրենց հօրը Իդիթունին ձեռքին տակն էին , որ քնարով Տէրոջը գոհութիւն ու օրհնութիւն երգելով՝ մարգարէութիւն կ'ընէր ։
4 Եմանէն՝ Եմանին որդիքը՝ Բոկքիա , Մաթանիա , *Ողիէլ , Սուբայէլ , Յերիմոթ , Անանիա , Անանի , Եղիաթա , Գեդողաթի , Ռոմամթիեզեր , Յեսբեկասա , Մեղեթի , Ցօթիր — Մահազիոթ
5 էին ։ Ասոնց ամէնը Եմանին որ-

Ն·Ք·ԶԲ 1015

Ղ Գլ·իգ·17։ Է Գլ·իգ·18։ Ը Գլ·իգ·19։ իչ·31 ։

Բ Եզ·գ·19։ Գլ·իգ·21։

Ժ Գլ·իգ· 22 ։

Ի Գլ · իգ · 23 ։

—

իբր 1015 — Գլ·գ·33, 39, 44 ։

Բ Ձր 14 ի՛ը —ի Ցեսբրէա ։ Դ Տ՚ս Ձր 17 ։

* կ՚ս՝ Ազարիէլ · տ՚ս Ձր 13 ։

Ն·Ք·ՁԲ· ԽԲԲ 1015

դիքն էին , որ թագաւորին տեսա-
նողն էր՝ Աստուծոյ խօսքերուն
մէջ եղջիւրը վերցնելու . ու Աս-
տուած՝ Եմանին տասնուչորս տղայ
6 ու իրեք աղջիկ տուեր էր : Ասոնք
ամէնը Աստուծոյ տանը պաշտօնին
համար՝ ծնծղաներով , տաբիղնե-
րով ու քնարներով՝ իրենց հօրը
ձեռքին տակը՝ Տէրոջը տանը եր-
գերը կ'երգէին . էն Ասափ , Իդի-
թունն ու Եման՝ թագաւորին ձեռ-
7 քին տակն էին : Եւ անոնց թիւը՝
Տէրոջը երգերը սորված իրենց եղ-
բայրներուն հետ , ամէնը բոլոր
հանճարեղներուն մէջ՝ երկու հա-
րիւր ութսունուութն էր :
8 Եւ իրենց յաջորդական պաշտօ-
նին համար՝ պզտիկը ու մեծը ,
Դ վարպետը ու աշակերտը՝ միասին
9 վիճակ ձգեցին : Եւ առաջին վի-
ճակը Ասափի որդւոյն Յովսեփին
եկաւ . երկրորդը՝ Գոդոդիային , որ
ինքը ու իր եղբայրները ու որդի-
10 քը՝ տասնեւերկու հոգի էին . եր-
րորդը՝ Զաքուրին , որ իր որդինե-
րովը ու եղբայրներովը՝ տասնեւեր-
11 կու հոգի էր . Չորրորդը՝ Եզրիին ,
որ իր որդիներովը ու եղբայրներովը
12 տասնեւերկու հոգի էր . Հինգերոր-
դը՝ Նաթանիային , որ իր որդինե-
րովը ու եղբայրներովը տասնեւերկու
13 հոգի էր . Վեցերորդը՝ Բոկքիային ,
որ իր որդիներովը ու եղբայրներո-
14 վը՝ տասնեւերկու հոգի էր . Եօթ-
ներորդը՝ Ցեսարէլային , որ իր որ-
դիներովը ու եղբայրներովը՝ տաս-
15 նեւերկու հոգի էր . Ութներորդը՝
Եսայիին , որ իր որդիներովը ու
եղբայրներովը՝ տասնեւերկու հոգի
16 էր . Իններորդը՝ Մաթթանիային ,
որ իր որդիներովը ու եղբայրներո-
17 վը՝ տասնեւերկու հոգի էր . Տասնե-
րորդը՝ Սեմէիին , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասնեւերկու
18 հոգի էր . Մետասաներորդը՝ Ազա-
րիէլին , որ իր որդիներովը ու եղ-
բայրներովը՝ տասնեւերկու հոգի էր .
19 Երկոտասաներորդը՝ Ասաբիային ,
որ իր որդիներովը ու եղբայրներովը
20 տասնեւերկու հոգի էր . Երեքտա-
սաներորդը՝ Սուբայէլին , որ իր որ-
դիներովը ու եղբայրներովը՝ տա-
21 սնեւերկու հոգի էր . Չորեքտասա-
ներորդը՝ Մատթաիային , որ իր
որդիներովը ու եղբայրներովը՝ տա-
22 սնեւերկու հոգի էր . Հնգետասա-
ներորդը Ցերիմովթին , որ իր որդի-
ներովը ու եղբայրներովը՝ տասնե-
23 րկու հոգի էր . Վեշտասաներոր-
դը՝ Անանիային , որ իր որդիներո-
վը ու եղբայրներովը՝ տասնեւերկու
24 հոգի էր . Եօթնուտասներորդը՝
Ցեսբակասային , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասնեւերկու
25 հոգի էր . Ութուտասներորդը՝
Անանիին , որ իր որդիներովը ու
եղբայրներովը՝ տասնեւերկու հոգի
26 էր . Իննուտասներորդը՝ Մեղեթի-
ին , որ իր որդիներովը ու եղբայր-
ներովը՝ տասնեւերկու հոգի էր .
27 Քսաներորդը՝ Եղեմթային , որ իր
որդիներովը ու եղբայրներովը՝ տա-
28 սնեւերկու հոգի էր . Քսանումէկե-
րորդը՝ Ցօթիրին , որ իր որդիներո-
վը ու եղբայրներովը՝ տասնեւերկու
29 հոգի էր . Քսանուերկուերորդը՝
Գեդողաթիին , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասնեւերկու
30 հոգի էր . Քսանուերեքերորդը՝
Մազիովթիին , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասնեւերկու
31 հոգի էր . Քսանուչորսերորդը՝
Ռոմամթիեզերին , որ իր որդինե-
րովը ու եղբայրներովը՝ տասներե-
կու հոգի էր :

ԳԼ·ԻԶ

1 Դռնապաններուն դասակարգութիւնները : 13 Դռներուն պահպանութիւնը վիճակով ա-
նոնց կը յանձնուի : 20 Տէրոջը գանձերուն
վերակացու ընտրուած Ղևոտցիները : 29
Ոստիկաններ ու դատաւորներ :

1 Դռնապանաց դասակարգութիւն-
ները . Կորեականներէն՝ Ասափի
որդիներէն՝ Կովրէին որդին Մա-
2 սեղամիան էր : Ու Մասեղամիայի
որդիքը՝ անդրանիկը Զաքարիա ,
երկրորդը՝ Ցեդիէլ , երրորդը՝ Զա-
բադիա , չորրորդը՝ Ցաթնիէլ ,
3 Հինգերորդը՝ Եղամ , վեցերորդը՝
Ցօհանան , եօթներորդը՝ Եղհովե-
4 նայի էին : Եւ Աբդեդոմի որդի-
քը՝ անդրանիկը Սեմայիա , երկ-
րորդը՝ Ցովզաբադ , երրորդը՝ Ցո-
վահ , չորրորդը՝ Սաքար , հինգե-
5 րորդը՝ Նաթանայէլ , վեցերորդը՝
Ամիէլ , եօթներորդը՝ Իսաքար ,
ութերորդը՝ Փեղաթի . քանզի
Աստուած *զանիկայ օրհներ էր :
6 Ու անոր որդւոյն Սեմայիային որ-
դիներ ծնան , որոնք իրենց հօրը
տանը իշխաններ եղան . քանզի ա-
7 նոնք զօրաւոր կտրիճներ էին : Սե-
մայիային որդիքը՝ Ռոթնի , Ռափա-
յէլ , Ովբէդ , Եղզաբադ , †Ա֊քի-
ով , Բ֊նեյահու՝ , Եղլուզա ու Սամա-
8 քիա էին : Ասոնք ամէնը՝ Աբդե-
դոմի որդիներէն էին , — իրենք ու
իրենց որդիքը և իրենց եղբայրները՝
ծառայութեան համար զօրաւոր
ու կտրիճ մարդիկներ՝ Աբդեդոմին
9 վաթսունուերկու էին : Եւ Մա-
սեղամիան՝ տասնուուրթը զօրաւոր
10 որդիներ ու եղբայրներ ունէր : Ու
Մերարիի որդւոցմէ Բ֊ուսան որդի-
ներ ունէր . գլխաւորը Սամարի էր .

Ն·Ք·ՁԲ· ԽԲԲ 1015

— ՀՄՐ 14 Ի֊ՇՈՒԹ Սեղեմիա ,

* Յ՝ Աբդեդոմը . տես ԳԼ·ԺԳ·14 ,

† Կ՝ անոր եղբայրները զօրաւոր մարդիկ ,

Բ ԳԼ·ԺԷ· 38 ,

քանզի Թէպհեան անիկայ անդրա-
նիկ չէր , բայց անոր հայրը զանի-
11 կայ գլուխ ըրաւ · Երկրորդը՝ Քեղ-
կիա , երրորդը՝ Տարաղիա . չոր-
րորդը՝ Զաքարիա էր . Ութա-
յին բոլոր որդիները ու եղբայր-
12 ները՝ տասուիրեք էին : Դռնա-
պաններուն գասակարգութիւնե-
րը ասոնց պատճառ էբլա գլխաւոր
մարդիկներու , որ իրենց եղբայրնե-
րուն հետ պահպանութիւն ընելով՝
13 Տէրոջը տանը մէջ ծառայեն : Եւ
պզտիկը ու մեծը հաւասարապէս
վիճակ ձգեցին իրենց ազգատոհմ-
ներուն համեմատ՝ ամէն մէկ դրան
14 համար : Եւ արեւելեան կողմին վի-
ճակը՝ Սեղեմիային ելաւ . եւ ետքը
անոր որդւոյն՝ խելացի ու խորհր-
դական Զաքարիային համար վիճակ
ձգեցին , ու անոր վիճակը հիւսի-
15 սային կողմը ելաւ : Աբդեդոմին՝
հարաւային կողմը , ու անոր որ-
16 դոցը՝ Բեթասուփիմը : Սուփի-
մին և Ուսային՝ արեւմտեան կողմը
ելաւ՝ Սալեքեթին դրանը քովը՝
բարձր ելլող ճամբուն վրայ . ու մէկ
պահպանութիւնը մէկալ պահպա-
17 նութեանը դիմացն էր : Արեւելեան
կողմը՝ վեց Ղեւտացի , հիւսիսային
կողմը՝ օրը չորս , հարաւային կող-
մը՝ օրը չորս , ու Ասուփիմի կողմը՝
18 երկերկուք էին : Փարպարին կող-
մը դէպ ի արեւմուտք սանդուխին
ճամբան՝ չորս , — Փարպարը՝ եր-
19 կու դռնապան կար : Կորխեանց որ-
դիներէն ու Մերարիի որդիներէն
եղող դռնապաններուն դասակար-
գութիւնները ասոնք էին :
20 Ու Ղեւտացիներէն՝ Աստուծոյ
տանը գանձերուն ու նուիրական
21 գանձերուն վրայ՝ Ախիան էր : Գեր-
սոնացի Ղադանին ազգատոհմնե-
րուն իշխաններէն՝ Գերսոնացի
Ղադանին որդիներէն՝ Եզեքիէլն
22 էր : Եզեքիէլին որդիքը՝ Զեթամ ,
ու անոր եղբայրը Յովէլ՝ Տէրոջը
23 տանը գանձերուն վրայ էին : Ո-
Ամրամեաններէն , Իսահառեաննե-
րէն , Քեբրոնեաններէն — Ոզիէ-
24 լեաններէն ասոնք էին . Մովսէսի որ-
դւոյն Գերսոմին որդին Շուբայէ-
լը՝ գանձերուն վերակացուն էր :
25 Եւ անոր եղբայրները Եղիազարին
որդիէը . անոր որդին Հռաբիա ,
անոր որդին Եսայի , անոր որդին
Յովրամ , անոր որդին Զեքրի , ու
26 անոր որդին Շաղոմոթ էր : Ան
Շաղոմոթը ու անոր եղբայրները՝
Դաւիթ թագաւորին , ու տոհմից
իշխաններուն . ու հազարապետնե-
րուն , և հարիւրապետներուն , ու
զօրաց իշխաններուն նուիրած ա-
մէն սուրբ գանձերուն վրայ էին .
27 Որոնք պատերազմներէն ու աւարէն՝
Տէրոջը *տանը շինութեանը" հա-
28 մար նուիրեր էին . Նաև Սամուէլ
ծերասանցին , ու Կիսեան Սաուղ-
ղին , ու Ներեան Աբեններին , և
Յոաբ Զարուհեան Յովաբին նուիրած բո-
լոր նուէրները՝ Շաղոմոթին ու ա-
նոր եղբայրներուն ձեռքին տակն
էին :
29 Իսահառեաններէն՝ Քոնոնիա ու
անոր որդիքը՝ արտաքին գործքե-
րուն համար՝ Իսրայէլի վրայ Եոստի-
կաններ ու դատաւորներ էին :
30 Քեբրոնեաններէն՝ Ասաբիա ու ա-
նոր եղբայրները՝ հազար եօթը
հարիւր զօրաւոր մարդիկներ՝ Յոր-
դանանու ասդիի կողմը դէպ ի
արեւմուտք՝ Տէրոջը ամէն գործքին
համար ու թագաւորին ծառայու-
թեանը համար՝ Իսրայէլի վրայ ոս-
31 տիկաններ էին : Քեբրոնեաններէն՝
Քեբրոնեաններուն ազգատոհմին իշ-
խանը Եցերիա էր . Դաւիթին
թագաւորութեանը քառասներորդ
տարին՝ անոնք համրուեցան , ու
գտաւ ատու Իացէրի մէջ՝ անոնց-
մէ զօրաւոր կտրիճներ գտնուեցան :
32 Եւ անոր եղբայրները՝ երկու հա-
զար եօթը հարիւր զօրաւոր մար-
դիկներ — տոհմերու իշխաններ
էին . և Դաւիթ թագաւորը զա-
նոնք՝ Ռուբենեանց , Գադեանց , ու
Մանասեանց կէս ցեղին վրայ դրաւ ,
Աստուծոյ և թագաւորին ամէն
գործքին համար :

ԳԼ · ԻԷ

1 Տասուերկու գործակալները տասուերկու ա-
միսներուն համար : 16 Տասուերկու ցեղերուն
տասուերկու իշխանները : 23 Ժողովուրդը
համրելը կը խափանուի : 25 Դաւիթին մաս-
նաւոր գործակալները :

1 Իսրայէլի որդւոցմէ իրենց համ-
րանքովը՝ ազգատոհմի նահա-
պետներն , ու հազարապետներն ,
և հարիւրապետներն , ու անոնց
ոստիկաններն՝ դասակարգու-
թեանց ամէն գործքին մէջը՝ թա-
գաւորին ծառայութիւն ընդնե-
րուն , և տարւոյն ամէն ամիսներուն
մէջը՝ ամէ ամիս մտնողներուն ու
ելլողներուն՝ մէկ մէկ դասը՝ քսան-
2 ուչորս հազար հոգի էր : Առա-
ջին ամսուն համար առաջին դասին
վրայ Զաբդիէլի որդին — Յեսբեամն
էր . ու անոր դասը քսանուչորս
3 հազար հոգի էր : Առաջին ամսուն
ամէն զօրավարներուն իշխանը՝ Փա-
4 րեսին որդիներէն էր : Ու երկրորդ
ամսուն դասին վրայ՝ Ախոքացի
Դովդան էր . ու Մակելոթ անոր
դասին իշխանն էր . ասոր դասն ալ
5 քսանուչորս հազար հոգի էր : Եր-
րորդ ամսուն համար երրորդ զօրա-

ն · ջ · գէ · ԽԲ 1015

* ԵԷջ · տու-
նը հաստա-
տելու

ժ ա թագ · Թ · 9 ։

է ՓԼ · իգ · 4 ։

Լ Գլ · իգ · 19 ։

Ը Տես Յես · իա · 39 ։

Թ ր Մն · ժԹ · 11 ։

ն · ջ · գէ · ԽԲ 1015

— Տես բ Թագ · իգ · 8 ։ Գլ · ժա · 11 ։

Բ բ Թագ · իգ · 9 ։

պետը՝ Ցովհադայի որդին Բանեան մեծ *քահանան էր . ու անոր դասը
6 քսանուչորս հազար Տրդ էր : Ասբանեան՝ երասուներորդ զօրաւոր էր . ու երասունին վրայ էր . և անոր որդին Ամիզաբադը անոր դասին մէջն
7 էր : Չորրորդ ամսուն համար չորրորդ զբաղեալը՝ Ցովարին եղբայրը Ասայէլը , ու անկէ ետքը անոր որդին Զաբադիան էր . և անոր դասը քսանուչորս հազար Տրդ էր :
8 Հինգերորդ ամսուն համար հինգերորդ զօրապետը՝ Ցեզրացի Սամմովթին էր . ու անոր դասը քսանու-
9 չորս հազար Տրդ էր : Վեցերորդ ամսուն համար վեցերորդ զբաղեալը՝ Թեկուացի Եկդեսին որդին Իրան էր . ու անոր դասը քսան-
10 ուչորս հազար Տրդ էր : Եօթներորդ ամսուն համար եօթներորդ զբաղեալը՝ Եփրեմի որդւոցմէ Փելոնացի Ղելղէսն էր . ու անոր
11 դասը քսանուչորս հազար Տրդ էր : Ութերորդ ամսուն համար՝ ութերորդ զբաղեալը՝ Զարայեանց Հովսացի Սողքաբն էր . ու անոր դասը
12 քսանուչորս հազար Տրդ էր : Իններորդ ամսուն համար իններորդ զբաղեալը՝ Բենիամինեաններէն Անաթովթացի Աբիեզերն էր . և անոր դասը քսանուչորս հազար Տրդ
13 էր : Տասներորդ ամսուն համար տասներորդ զբաղեալը՝ Զարայեանց Ընետոփաթացի Մահարան էր . ու անոր դասը քսանուչորս հազար
14 Տրդ էր : Մետասաներորդ ամսուն համար մետասաներորդ զբաղեալը՝ Եփրեմի որդւոցմէ Փիրաթոնացի Բանեան էր . և անոր դասը
15 քսանուչորս հազար Տրդ էր : Երկոտասաներորդ ամսուն համար երկոտասաներորդ զբաղեալը՝ Գոթոնիելի Հերոնդեան՝ Ընետոփաթացի Աղաղն էր . ու անոր դասը քսանուչորս հազար Տրդ էր :
16 Եւ Իսրայէլի ցեղերուն վրայ . . . էին . Ռուբենի ցեղին իշխան՝ Զէրրիի որդին Եղիազար , Շմաւոնի ցեղին՝ Մահազիայի որդին Սա-
17 փատիա , Ղևիի ցեղին՝ Կամուելի որդին Հասաբիա , Ահարոնի ցե-
18 դուքը՝ Սադովկ , Ցուդայի ցեղին՝ Դաւիթին եղբայրներէն՝ Եղիհու , Իսաքարի ցեղին՝ Միքայելի որդին
19 Ամրի , Զաբուղոնի ցեղին՝ Աբդիասի որդին Իսմայիա , Նեփթաղիմի ցեղին՝ Եզրիելի որդին Երիմովթ ,
20 Եփրեմի որդւոցը՝ Ազազիայի որդին Ովսէէ , Մանասէի կէս ցեղին՝ Փա-
21 դայիայի որդին Ցովէլ , Գաղաադ եղող Մանասէի կէս ցեղին՝ Զաքարիայի որդին Ցեդդով , Բենիամինի ցեղին՝ Աբէններու որդին Ցեասիէլ ,
22 Դանի ցեղին՝ Երոհամի որդին Ազարիէլ : Իսրայէլի ցեղերուն իշխաններըասոնք էին :
23 Եւ Դաւիթ քսան տարեկանէն վար եղողները չհամրեց . վասն զի Տէրը ըսեր էր որ Իսրայէլը երկինքին աստղերուն չափ պիտի շատցը-
24 նէ : Շարուհեայի որդին Ցովաբը սկսաւ համրել , բայց չվերնցուց . ու անոր համար բ Իսրայէլի վրայ բարկութիւն եկաւ . և ան համրանքը Դաւիթ Թագաւորին յիշատակաց դրքին մէջ չմտաւ :
25 Ու Թագաւորին գանձերուն վրայ՝ Ազիէլի որդին Ազմաթն էր . և դաշտը — քաղաքները և գեղերը ու աշտարակները եղող շտեմարաններուն վրայ՝ Ոզիայի որդին
26 Ցոնաթանն էր . Եւ արտը բանող երկրագործներուն վրայ՝ Քեղուբի
27 որդին Եզրին էր . Ու այդիներուն վրայ՝ Արիմաթացի Սեմէին էր . ու այդիներուն խ բերքերուն , — գինիի շտեմարաններուն վրայ՝ Սեփամացի
28 Զաբդին էր . Եւ դաշտը եղող ձիթենիներուն ու մոլաթզենիներուն վրայ՝ Գադերացի Բաաղանան էր . ու եղի շտեմարաններուն
29 վրայ՝ Ցովաան էր . Ու Սարոնի մէջ եղող արօտական արջառներուն վրայ՝ Սարոնացի Սետրան էր . ու հովիտներու մէջ եղող արջառներուն վրայ՝ Ադղիի որդին Սափատն
30 էր . Եւ ուղտերուն վրայ՝ Իսմայէլացի Ովբիլն էր . ու էշերուն վրայ՝
31 Մերոնոթացի Ցադիայեան էր . Եւ հօտերուն վրայ՝ Հագարացի Ցազիզն էր : Ասոնք ամէնը՝ Դաւիթ Թագաւորին ստացուածոցը վերակացուներն էին :
32 Ու Դաւիթին հօրեղբայրը Ցովնաթան խորհրդական էր . անիկայ խելացի ու գիտուն մարդ մըն էր . և Հաքեմոնիի որդին Եէքիէլը՝ Թա-
33 գաւորին որդւոցը հետ էր . Ու Աքիտոփէլ՝ Թագաւորին խորհրդականը , և Արաբացի Հուսէն՝ Թա-
34 գաւորին բարեկամն էր . Ու Աբիտոփէլէն ետքը՝ Բանեայի որդին Ցովհադան , ու Աբիաթարն էին . ու Թագաւորին զօրագլուխը՝ Ցովաբն էր :

ԳԼ . ԻԸ

1 Դաւիթ հանդիսաւոր ժողովքի մը մէջ ծանուցանելով իր վրայով Աստուծոյ ունեցած հաճութիւնը , ու իր որդւոյն Սողոմոնին համար բրած խոստմունքը , զանոնք կը յորդորէ որ Աստուծմէ վախնան . 9 , 20 կը յորդորէ նաև իր որդին Սողոմոնը՝ որ տաճարը չնէ . 11 ու անոր ի նչ ձևով ըլալուն օրինակը կու տայ :

1 Եւ Դաւիթ՝ Իսրայէլին բոլոր իշխանները , ցեղերուն իշխանները , ու Թագաւորին ծառայութիւն

Ն . ք . ցճ . Իրր 1015

* Կամ՝ նախապար . գ Թագ . գ . 5 :

ե բ Թագ . իգ . 20 . 22 , 23 : Գլ . ժա . 22 , ըե :

դ բ Թագ . իգ . 24 : Գլ . ժա . 26 :

է Գլ . ժա . 28 :

ը Գլ . ժա . 27 :

թ բ Թագ . իա . 18 : Գլ . ժա . 29 :

ժ Գլ . ժա . 28 :

ի բ Թագ . իգ . 28 : Գլ . ժա . 30 :

ժ Գլ . ժա . 31 :

ի Գլ . ժա . 30 :

լ Գլ . իզ . 30 :

† Կամ՝ Եղբաբ . ա Թագ . ժգ . 6 :

Ն . ք . ցճ . Իրր 1015

Ե գն . ժե . 5 :

Իրր 1017

բ բ Թագ . իդ 15 : Գլ . խ . 7 :

Իրր 1015

ե Եբբ . մէջի բաներուն :

ա Գլ . իե . 16 :

ե բ Թագ . ժե . 12 :

զ բ Թագ . ժե . 37 : ժգ . 16 :

է գ Թագ . ա . 7 : Ը Գլ . ժա . 6 :

ՆՀԳ 1015

ընդդէմ Եբուսացւոյն իշխանները, և հազարապետները, ու հարիւրապետները, և թագաւորին ու անոր որդւոցը բոլոր ատացուածոց ու ընչից վերակացուները, ներքինիները, ‡ զօրաւորները, ու զօրքին բոլոր կարիներնը՝ Երուսաղէմի մէջ
2 ժողվեց։ Եւ Դաւիթ թագաւորը ոտքի վրայ կայնեցաւ, ու ըսաւ. Ով իմ եղբայրներս ու իմ ժողովուրդս՝ ինծի մտիկ ըրէք. Էի իմ սրտիս մէջը ունէցայ՝ որ Տէրոջը ուխտի տապանակին, ու մեր Աստուծոյն ոտքը Նպաստաւանդանի համար՝ մկկ հանգստեան տուն մը շինեմ, ու շինելու պատրաստութիւն
3 տեսայ. Բայց Աստուած ինծի ըսաւ. Դուն իմ անունս տուն պիտի չշինես. քանզի դուն պատերազմի մարդ ես, ու *շատ արիւն"
4 թափեցիր։ Եւ Իսրայէլին Տէր Աստուածը իմ հօրս բոլոր տունէն ընտրեց, որ յաւիտեան Իսրայէլին վրայ թագաւոր ըլլամ. քանզի առաջնորդը՝ Յուդային, ու Յուդայի տունէն՝ Էիմ հօրս տունը ընտրեց. ու Էիմ հօրս որդւոցը մէջէն ինծի հաւնեցաւ, որ Նը բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր
5 ընէ։ Եւ իմ բոլոր որդիներէս՝ (որովհետև Տէրը ինծի շատ որդիներ տուաւ,) Էիմ որդիս Սողոմոնը ընտրեց, որ Իսրայէլի վրայ՝ Տէրոջը թագաւորութեան աթոռը նստի.
6 Ու ինծի ըսաւ. Քո՛ւս որդիդ Սողոմոն՝ ինքը պիտի շինէ իմ տունս ու իմ սրահներս. քանզի զանիկայ ինծի որդի ընտրեցի, ու ես անոր
7 հայր պիտի ըլլամ. Եւ անոր թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ, ‖ թէ որ ան օրուան պէս՝ իմ հրամաններս ու դատաստաններս Էի դործ դնելու մէջ յա-
8 րատեւէ։ Ու հիմա բոլոր Իսրայէլին՝ Տէրոջը ժողովրդին առջեւը՝ ու մեր Աստուծոյն լսելովը Նեւ Էնե՛ւմ. Ձեր Տէր Աստուծոյն բոլոր պատուիրանքները պահեցէ՛ք ու զգուշութեամբ սորվեցէ՛ք, որ ⁂ բարի երկիրը ժառանգէ՛ք, ու ձեզմէ ետքը ձեր որդւոցը ժառանգութիւն թողուլ յաւիտեան։
9 Եւ դուն՝ որդեակ իմ Սողոմոն, հբու Հօրդ Աստուածը ճանչցիր, ու անոր Նկատաբեալ սրտով ու յօժար կամքո ծառայութիւն ըրէ. քանզի Տէրը ամէն սիրտերը կը քննէ, ու ամէն մտաց խորհուրդները կը ճանչնայ. Էթէ որ զանիկայ փնտռես, †պիտի գտնես", և թէ որ զանիկայ թողուս, անալ քեզ յա-
10 վիտեան պիտի մերժէ, Էհիմա նայէ որ Տէրը քեզ ընտրեց՝ Էր սրբա-

ՆՀԳ 1015

րանին համար տուն մը շինելու. զօրացիր, ու ⁂ գործը կատարէ։
11 Եւ Դաւիթ իր որդւոյն Սողոմոնին՝ յսրահին, ու անոր սենեակներուն, և անոր գանձարաններուն, ու անոր վերնատուններուն, և անոր ներքին շտեմարաններուն, ու քաւութիւնին տանը գաղափարը
12 տուաւ. Եւ ‡Հոգիին ազդեցութեամբը իրեն յայտնած՝ բոլոր բաներուն՝ Տէրոջը տանը գաւիթներուն, ու բոլորտիքը եղող ամէն սենեակներուն, և Նպատուծոյ տանը շտեմարաններուն, ու նուիրուած բաներուն գանձարաններուն
13 գաղափարը ⁂. Նաև քահանայից ու Ղևտացւոց գասակարգութիւններուն համար, ու Տէրոջը տանը պաշտօնին ամէն գործքին համար, և Տէրոջը տանը ծառայութեանը ամէն անօթներուն հա-
14 մար պատրաստ ⁂. Ո՛ ամէն պաշտօններուն ամէն ոսկի անօթներուն կշիռը, ⁂ ամէն արծաթէ անօթներուն, ⁂ ամէն պաշ-
15 տօնի անօթներուն ալ կշիռը, Եւ ամէն ոսկիէ աշտանակներուն, ու անոնց ամէն ոսկիէ ճրադներուն կշիռը, և ամէն արծաթէ աշտանակին, ու անոր ճրադներուն, ամէն մէկ աշտանակին գործածութեանը համեմատ՝ կշիռը ⁂.
16 Եւ առաջաւորութեան սեղաններուն ամէն մէկ սեղանին համար՝ ոսկիին կշիռը, ու արծաթէ սեղաններուն համար՝ արծաթին Նը-
17 ւոէը, Եւ մաքուր ոսկիէ մահաններուն, և կոնքերուն, և բաժակներուն, ու ոսկիէ տաշտերուն համար՝ ամէն մէկ տաշտին կշիռը, և արծաթէ տաշտերուն համար՝ ամէն
18 մէկ տաշտին կշիռը ⁂ըսէ. Ու խունկի սեղանին համար կշիռքով մաքուր ոսկի, և էրէնց ՆԷսը տարածող՝ ու Տէրոջը ուխտին տապանակը ծածկող Նբերովբէից կառքին գաղափարին համար՝ ոսկի
19 ⁂ըսէ։ Ա՛ս բոլորը բաները՝ ասգաղափարին բոլոր գործքերը՝ "Տէրը իր ձեռքին գրովը ինծի յայտնեց՝ ըսաւ։
20 Եւ Դաւիթ իր որդւոյն Սողոմոնին ըսաւ. Նզօրացիր, ու քաջսիրտ եղիր, ու ⁂ գործը կատարէ. մի՛ վախնար, ու մի՛ զարհուրիր. քանզի Տէր Աստուածը՝ իմ Աստուածս քեզի հետ է. Նանկիայ քեզ պիտի չթողու, ու քեզ երես պիտի չդարձ, մինչև որ Տէրոջը տանը ծառայութեանը բոլոր դործ-
21 քերը լմնցընես։ Եւ ահա Նքահանայից ու Ղևտացւոց դասերը՝ Աստուծոյ տանը բոլորը ծառայու-

‡ ԿՀ՛ իր մատքին մէջը գնեցած

‖ ԳԼ. ԻԶ. 20։

* ԵԲՐ. ԱՐիւններ

ա ԹԱԳ. Ժ. 7—13։ ԲՅՆ. ԽԹ. 8։ Գ Ի. 6. 2։ ՍԱՂ. Կ. 7։ ՆԸ. 6Տ։

բ ԹԱԳ. Ժ. 1։

գ ԹԱԳ. Ժ. 12. 13։ ԼԳԼ. Գ. 1։ ՃԱ. Իգ. 1։ Ե Գ Լ. ԻԸ. 9։

դ ԹԱԳ. Ը. 13. 14։ Գ Ը Իը. 9. 10։ Բ ՄՆ. Ա. 9։

ե Գ Լ. Իբ. 13։

զ ԵՐԵՄ. Թ. 24։ Ովս. Դ. 1։ ՅՕՆ. Ժ. 3։

է Դ ԹԱԳ. Ի. 3։ ՍԱՂ. ՃԱ. 2։

ը ԱԹ ԹԱԳ. Ժ. 7։ Գ ԹԱԳ. Ը. 39։ Գ Լ. ԻԹ. 17։ ՍԱՂ. 9։ ՃՂԹ. 2։ ԱՌԱԿ. Ժ. 3։ ԵՐԵՄ. Ժ. 20։ Ժ. 10։ Ի. 12։ ՑՕՄ. Բ. 23։ ‖

թ Բ ՄՆ. ՃԾ. 2։

ժ ԵԲՐ. ՊԻՏԻ գտնուի քեզի։

ժ ՀՇՐ 6։

ՆՀԳ 1015

ԻՇ. Ա. 18—22։ ՄԹԱԳ. Գ. 4։ Դ ԹԱԳ. Ը. 23. ՃԱ։

ՑՕՄ ԵԼ. ԻԵ. 40։ ՀՇՐ 11. 12։

ԼԲ ՕՐ. Լ. 7, 8։ ՑՕՄ. 6, 7, 9։ ԳԼ. Իբ. 13։

ՑՑՕՄ. 5։

Ը ԳԼ. Իդ։ Իե։ Իէ։

Թևանը համար են . ու ամէն ծառայութեան համար՝ ամէն գործքի մէջ՝ ՚ամէն յօժարակամ իմաստունները քեզի հետ են . և իշխանները ու բոլոր ժողովուրդը քու ամէն հրամանիդ կը նայէին :

ԳԼ . ԻԹ

1 Դաւիթ՝ իր օրհնակովը ու յորդորանքովը 6 պատճառ կ՚ընէ որ իշխանները ու ժողովուրդը համաձայն ընծաներ կը մատուցանեն : 10 Դաւիթին շնորհակալութիւնը ու աղօթքը : 20 ժողովուրդը զԱստուած օրհնելով ու զոհ մատուցանելով , Սողոմոնը թագաւոր կը նստուցանեն : 26 Դաւիթին թագաւորութեանը օրերը ու մահը :

1015

1 Նաև Դաւիթ թագաւորը բոլոր ժողովրին ըսաւ . Իմ որդիս Սողոմոնը՝ որ Աստուած միայն անիկայ ընտրեց , ՚փափուկ տղայ մըն է , ու գործքը մեծ է . քանզի ՚՚ պալատը մարդու համար չէ , հապա
2 Տէր Աստուծոյ համար է : Ուստի ես իմ բոլոր կարողութեամբս՝ իմ Աստուծոյս տանը համար՝ ոսկիէ ԸԼԼՂԼ՚՚ բաներուն համար՝ ոսկի , ու արծաթեղէններուն համար՝ արծաթ , և պղնձեղէններուն համար՝ պղինձ , ՚՚ երկաթեղէններուն համար՝ երկաթ , և փայտեղէններուն համար՝ փայտ , ՚՚ Է եղնդնաքարեր , և դամելու ֆոբէր , ու զարդի համար՝ դոյնզդոյն քարեր , և ամէն տեսակ պատուական քարեր , ու մարմարիոն քարեր առատօրէն
3 պատրաստելի : Ու նաև իմ Աստուծոյս տանը վրայ մեծ սէր ունենալուս համար , սրբարանի տանը համար ամէն պատրաստած բանէրէս ՚ի զատ , իմ յատուկ գանձիս մէջը եղած ոսկին ու արծաթին ալ իմ Աստուծոյս տանը համար տուի ,
4 ֆ Ոփիրի ոսկիէն՝ իրիք հազար տաղանդ ոսկի , ու եօթը հազար տաղանդ մաքուր արծաթ՝ որ անոնցմով տուներուն որմունքը պատեն .
5 Ոսկիէ ԸԼԼՂԼ՚՚ բաներուն համար ոսկի , ու արծաթեղէններուն համար արծաթ , ու արուեստաւորներուն ձեռքովը ԸԼԼՂԼ՚՚ ամէն տեսակ գործքին համար հաւնոր եղածը գոե՛ւ . և այսօր ՅեՀՃէ իր կամքովը Տէրոջը * ընծայ տուող՚՚ ովՀ կայ :
6 Անատենը Ք տոհմիկ իշխանները , ու Իսրայէլի ցեղերուն իշխանները , և հազարապետները , ու հարիւրապետները , և Է թագաւորին գործքին վերակացուները՝ յօժար կամ
7 մօք ընծայ բերին , Ու Աստուծոյ տանը գործքին համար՝ հինգ հազար տաղանդ և տասը հազար դրամ ոսկի , ու տասը հազար տաղանդ արծաթ , և տասնուութը հազար տաղանդ պղինձ , ու հարիւր
8 հազար տաղանդ երկաթ տուին : Եւ որուն քովը որ քարեր գտնուեցաւ , Գերսոնացի Ղեքդիելին ձեռքովը Տէրոջը տանը գանձին ընծա-
9 յեցին : Ու ժողովուրդը՝ անոնց կամաւոր ընծաներ մատուցանելուն համար ուրախացան . քանզի Է կամաւոր ընծան բոլոր սրտով մատուցին Տէրոջը . ու Դաւիթ թագաւորն ալ խիստ շատ ուրախացաւ :
10 Եւ Դաւիթ բոլոր ժողովրին աչքին առջեւը Տէրը օրհնեց . ու Դաւիթ ըսաւ . Ո՛վ Տէր՝ մեր Հօրը Իսրայէլին Աստուածը . յաւիտենից մինչև յաւիտեան օրհնեալ ես .
11 Ո՛վ Տէր՝ էմեծութիւնը , զօրութիւնը , փառքը , յաւիտենականութիւնը ու վայելչութիւնը քուկդ է . քանզի բոլոր երկինքի ու երկրի վրայ եղածը ֈ՚՚ է . ով Տէր՝ թագաւորութիւնը քուկդ է , ու դուն իբրև գլուխ ամէնէն
12 բարձրացած ես : Է Եւ հարստութիւնը ու փառքը քեզմէ է , ու ամէնուն իշխանը դուն ես . և զօրութիւնը ու կարողութիւնը քու ձեռքիդ մէջն է . և ամէնը մեծցնելը ու ուժովցնելը՝ քու ձեռքդ
13 է : Եւ հիմա ով մեր Աստուածը՝ քեզի դոհութիւն կու տանք , ու քու փառաւորեալ անունդ կ՚օրհ-
14 նենք : Բայց ես ո՞վ եմ , ու իմ ժողովուրդս ո՞վ է , որ այսպէս կամաւոր ընծայ տալու կարող ըլլանք . քանզի ամէն բան քեզմէ է , ու
15 †քու կիրնիներիդ քեզի տուինք : Վասն զի ժմնք քու առջեւդ՝ մեր բոլոր հայրերուն պէս՝ օտարականներ ու պանդուխտներ ենք . երկրի վրայ եմեր օրերը շուքի պէս է , ու ‡ մնա-
16 յուն բան՚՚ մը չկայ : Ո՛վ Տէր Աստուած մեր , քեզի՝ քու սուրբ անունդ շինելու տանը համար ամէն պատրաստած բաներուն բոլոր առատութիւնը քու ձեռքիդ է , ու ամէնն ալ քուկդ է . Եւ գիտեմ՝
17 ով Աստուած իմ , որ դուն Լսիրտերը կը փորձես , և Է ուղղութիւնը կը սիրես . ասոնց ամէնը ես ուղիղ սրտով ու յօժար կամքը ընծայ ըրի . ու հիմա հոս գտնուած ժողովուրդդ ուրախութեամբ տեսայ , որ քեզի կամաւոր ընծայ կը մա-
18 տուցանեն : Ո՛վ մեր Հայրերուն՝ Արրահամին , Իսահակին ու Իսրայէլին Տէր Աստուածը , ասիկայ յաւիտեան քու ժողովուրդիդ սրտին խորհուրդներուն մէջը պահէ , ու ֊ անոնց սիրտը քեզի՚ ‖ ուղղէ :
19 Եւ †իմ որդւոյս Սողոմոնին կատարեալ սիրտ տուր , որ քու պատուիրաններդ , վկայութիւններդ ու

ՆՀ . ՔԲ . ՂՖ . 1015

ՂԳՀ . ԻՀ . 21 ՐԲ

ԼԲ ԿՈՐ . Թ . 7 :

ԸՄՏՍ . Գ . 13 ՀՍՏՄ . Ա . 17 : ՑՕՅՍ . Ե . 13 :

Բ ՀԱՌՎ . ԺԱ . 36 :

† ԵԲԲ . ՔՈՒ ՁԵՌՔԻԴ ‡ ՅԱՂ . ԼԹ . 12 : ԵԲԲ . ԺԱ . 13 : Ա ՊԵՏ . Բ . 11 :

Ե ՅՈՐ . ԺԳ . 2 : ՅԱՂ . Ղ . 9 : ԵՐ . 11 : ՃԱԳ . 4 :

‡ ԵԲԲ . ԱՊԱՐՆԱՑ ԹԻՒՆ

Լ Ա ԹԱԳ . ԺԳ . 7 : ԳԼ . ԻԲ . 9 :

Է ՌԱԿ . ԺԱ . 20 :

Ը ՅԱՂ . Ժ . 17 ‖ ԿԱ . ՀԱՍՏԱՏԵ՚ : Ա ՅԱՂ . ԻԲ . 1 :

ՆՀ . ՔԲ . ՂՖ . 1015

ՂԳՀ . ԻՀ . 21 ՐԲ

ԼԲ ԿՈՐ . Թ . 7 :

ՈՒ ԳԱԳ . Գ . 7 : ԳԼ . ԻԲ . 5 : ՌԱԿ . Գ . 3 :

Բ ՏԵ՚Ս ԵՍ . ԺԳ . 11 . 12 : ՑՕՅՍ . ԻՍ . 18 , ՃՃ :

Ֆ ԳԹԱԳ . ԹԲ . 28 :

* ԵԲԲ . ԻՐ ՁԵՌՔԸ ԼԵ-ՑՐՆՈՂ

Բ ԳԼ . ԻԵ . 1 :

Է ԳԼ . ԻԵ . 25 , ՃՃ :

Ն · ք · ՁՓ · 1015

Հ ՀՄՐ 2 ։ ԳԼ · ԻԲ · 14 ։

կանոններդ պահէ, և ամէնը՝ի գործ դնէ, ու չենէ ան պալատը՝ որուն համար հպատրաստութիւն տեսեր եմ՝ ։

20 Եւ Դաւիթ բոլոր ժողովքին ը-սաւ. Հիմա ձեր Տէր Աստուածը օրհնեցէք. ու բոլոր ժողովքը իրենց հայրերուն Տէր Աստուածը օրհնեցին, և ծռելով՝ Տէրոջը ու թագա-
21 ւորին երկրպագութիւն ըրին ։ Ու հետևեալ օրը զոհեր ու ողջակէզներ մատուցին Տէրոջը. հազար զուա-րակ, հազար խոյ, հազար գառն, անոնց թափելու նուէրներովը. ու բոլոր Իսրայէլին համար շատ
22 զոհեր մատուցին ։ Եւ ան օրը Տէ-րոջը առջևը մեծ ուրախութիւնով կերան խմեցին. ու Դաւիթին որ-դին Սողոմոնը նորէն թագաւոր ը-րին. և օծեցին Տէրոջը համար թա-գաւոր, ու Սադովկը քահանայ օ-
23 ծեցին ։ Եւ Սողոմոն իր հօրը Դա-ւիթին տեղը՝ Տէրոջը աթոռին վը-րայ թագաւոր նստաւ, ու յաջո-ղութիւն գտաւ. և բոլոր Իսրայէլը
24 անոր ծառայեցաւ ։ Ու ամէն իշ-խանները ու զօրաւորները, և Դա-ւիթ թագաւորին բոլոր որդիները ալ՝ Սողոմոն թագաւորին ետնէն
25 զանգեցան ։ Ու Տէրը՝ բոլոր Իս-րայէլին առջևը՝ Սողոմոնը խիստ մեծցուց, և անոր այնպէս թա-գաւորութեան փառք տուաւ, որ անկէ առաջ Իսրայէլի վրայ թա-գաւոր եղողի մը ամենևին եղած չէր ։
26 Այսպէս Յեսսէի որդին Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորու-
27 թիւն ըրաւ. ։ Եւ անոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի եղաւ. ։ Քեբրոնի մէջ՝ եօթը տարի թագաւորութիւն ըրաւ, ու Երուսաղէմի մէջ՝ երեսուն-ուերք տարի թագաւորութիւն
28 ըրաւ ։ Եւ երբարի ծերութեամբ մեռաւ, լեցեալ՝ մեծութենէն ու փառքէն իր բաղձանքը առած. և անոր տեղը՝ անոր որդին Սողոմո-
29 նը թագաւոր եղաւ ։ Ու Դաւիթ թագաւորին առաջին ու վերջին գործքերը՝ ահա Սամուէլ տեսանո-ղին գրքին մէջը, ու Նաթան մար-գարէին գրքին մէջը, և Գադ տե-սանողին գրքին մէջը գրուած են,
30 Նաև անոր բոլոր թագաւորութիւ-նը, ու քաջութիւնը, ու թէ ա-նոր, թէ Իսրայէլին, և թէ երկրի երկիրներուն ամէն թագաւորու-թեանցը պատահած դիպուածնե-րը ։

Ն · ք · ՁՓ · 1015

Ա ԳԹԱԳ · Գ · 13 ։ Բ ՄՆ · ա · 12 ։ ՃՈՂ · Բ · 9 ։

Բ ԳԹԱԳ · Ե · 4 ։ Գ ԹԱԳ · Բ · 11 ։

Յ ԳԹԱԳ · Ե · 5 ։

Ե ԾՆ · ԻԵ · Տ ։ Ե ԴԼ · Իգ · 1 ։

Ի ԴԱՆ · Բ · 21 ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Գաբաւոնի մէջ Սողոմոնին մատուցած հանգիս-աւոր զոհը ։ 7 Սողոմոն՝ իմաստութիւնը ընտրելուն համար՝ Աստուծմէ կ՚օրհնուի ։ 13 Սողոմոնին ուժը ու հարստութիւնը ։

Ն · ք · ՁՓ · 1015

Ը ԵԼ · լա · 2 ։ Ը ԵԼ · ԻԷ · 1, 2 ։ ԼԳ ։ 1, 2 ։

Ժ ԿՏ՚ վրայ մատուց ։

Ի Գ ԹԱԳ · Գ · 4 ։

Լ Գ ԹԱԳ · Գ · 5, 6 ։

Խ ա ՄՆ · ԻԲ · 5 ։

ԼՂ ԹԱԳ · Դ · 7, Տ ։

Խ Գ ԹԱԳ · Գ · 9 ։

Ծ ԹԱԱ · ԻԷ · 17 ։ Բ Օր · լա · 2 ։

1 Եւ Դաւիթի որդին Սողոմոն իր թագաւորութեանը մէջ զօրաց-ցաւ. ու Իանոր Տէր Աստուածը անոր հետ էր, ու Ի զանիկայ խիստ
2 մեծցուց ։ Եւ Սողոմոն բոլոր Իս-րայէլին՝ այն Ի հազարապետնե-րուն, հարիւրապետներուն, դա-տաւորներուն, ու բոլոր Իսրայէլին ամէն տոհմապետներուն խօսեցաւ ։
3 Եւ Սողոմոն ու բոլոր ժողովքը ա-նոր հետ՝ Ի գաբաւոնի բարձր տեղը գացին. քանզի Տէրոջը ծառային Մովսէսին՝ անապատին մէջ շինած՝ Աստուածոյ ժողովքի խորանը հոն
4 էր. ։ Մինայն թէ Դաւիթ՝ Աստու-ծոյ տապանակը կարիաթարիմէն իր պատրաստած տեղը հաներ էր. քանզի Երուսաղէմի մէջ անոր վը-
5 րան մը կանգներ էր. Սակայն Ուր-բեան Ուրիին որդւոյն Բեսեղէլեղին շինած ըպղնձէ սեղանը՝ հոն Տէրոջը խորանին առջևն էր. և Սողոմոն ու
6 ժողովքը զանիկայ փնտռեցին ։ Եւ Սողոմոն՝ հոն Տէրոջը առջևը ժո-ղովքի խորանին պղնձէ սեղանին Իքովը ելաւ՝, ու անոր վրայ Ի հա-զար ողջակէզ մատուց ։
7 Ի Ա՚ն գիշերը Աստուած Սողոմոնին երևցաւ, ու անոր ըսաւ. Խնդրէ՛,
8 քեզի ի՞նչ տամ՝։ Եւ Սողոմոն Աս-տուծոյ ըսաւ. Դուն իմ հօրս Դա-ւիթին մեծ ողորմութիւն ըրիր, ու զիս Ի անոր տեղը թագաւոր ըրիր ·
9 Հիմա ով Տէր Աստուած՝ իմ հօրս Դաւիթին ըրած խոստմունքդ հաս-տատ ըլլայ. Ւքանզի դուն զիս՝ երկ-րիս հողին չափ շատ ժողովուրդի
10 վրայ թագաւոր ըրիր ։ Ի հիմա ին-ծի իմաստութիւն ու գիտութիւն տուր, որ աս ժողովուրդիս առջևը Ի ելլեմ ու մտնեմ. վասն զի աս քու

մեծ ժողովուրդդ ով կրնայ դա-
11 տել , [Եւ Աստուած Սողոմոնին
ըսաւ . Որովհետև քու սրտիդ մէջը
ասիկայ եղաւ , ու հարստութիւն ,
ստացուածք , փառք , և քու
թշնամիներուդ հոգին չխնդրեցիր ,
ու երկար կեանք ալ չխնդրեցիր ,
հապա քեզի իմաստութիւն ու դի-
տութիւն խնդրեցիր , որ դատես
իմ ժողովուրդս՝ որուն վրայ քեզ
12 թագաւոր րրի , Ո՛ւրեմն իմաստու-
թիւն ու գիտութիւն տրուի քեզի ,
և հարստութիւն , ստացուածք ու.
փառք ալ պիտի տամ քեզի . ա-
նանկ որ՝ քեզմէ առաջ եղող թա-
գաւորներուն այնպես եղած չէ , ու
քեզմէ ետքը ի՛ւ-ընէ՛ալ այնպես
13 պիտի չըլլայ : Եւ Սողոմոն Գաբա-
ւոնի բարձր տեղէն՝ ժողոլքի խո-
րանին առջևէն՝ Երուսաղէմ դար-
ձաւ , ու Իսրայէլի վրայ թագաւո-
րութիւն ըրաւ :
14 [Եւ Սողոմոն կառքեր ու ձիաւոր-
ներ ժողվեց . ու անիկայ հազար
չորս հարիւր կառք՝ ու տասուե-
կու հազար ձիաւոր ունեցաւ . և
զանոնք կառքի քաղաքներուն մէ-
ջը , ու թագաւորին քովը Երուսա-
15 ղէմի մէջ տեղաւորեց : Նեւ թա-
գաւորը Երուսաղէմի մէջ արծաթը
ու ոսկին քարերու պէս ըրաւ , ու
եղևնափայտը շատութենէն՝ դաշտի
մէջ եղող մոլաթզենիներուն պէս
16 ըրաւ : Նեւ [Սողոմոնին ձիերը Ե-
գիպտոսէն կու գային . ու թա-
գաւորին վաճառականներուն կա-
րաւանը՝ մէկ որոշուած գնով մը
չէ՛ը-ա երամակներ ծախու կ՚առ-
17 նէին . Ու Եգիպտոսէն մէկ կառք
մը գուրս ելլելուն՝ վեց հարիւր
արծաթով վեր կը հանէին , ու մէկ
ձին՝ հարիւր յիսուն ա՛ծ-ո՛վ . ու
Քետացւոց բոլոր թագաւորներուն
համար , և Ասորւոց բոլոր թագա-
ւորներուն համար ալ՝ անոնց ձեռ-
քովը այնպես կը հանէին :

ԳԼ . Բ

1 Ու Սողոմոն * միտքը դրաւ՝ որ Տէ-
րոջը անունը տուն՝ ու իր թա-
2 գաւորութեանը տուն չինէ : Ու
[Սողոմոն եօթանասուն հազար
բեռնակիր՝ ու լեռը հ՚ոյ կտրող
ութսուն հազար մարդ †ընտրեց , և
անոնց վրայ իրեք հազար վեց հա-
րիւր վերակացու դրա՛ :
3 Ու Սողոմոն [Տիւրոսի թագաւո-
րին Քիրամին մա՛ղ խրկեց՝ , ու ը-
սաւ . Ե՛ինչպես որ իմ Հօրս Դաւի-

թին ըրիր , ու անոր եղևնափայտեր
խրկեցիր՝ որ իրեն բնակելու համար
4 տուն չինէ , Ահա՛ Ես իմ Տէր Ա-
ստուծոյս անունը տուն կը չինեմ ,
որ անոր նուիրուի , Հանոր առջևը
անուշահոտ խունկ ծխուի , ու Ի՛միշտ
առաջաւորութեան հացը դրո՛ւի , և
ԷառտուՀ ու իրիկուն , շաբաթները ,
և ամնագլուխները ու մեր Տէր Ա-
ստուծոյն տօներուն օրերը՝ ողջակեց-
ներ ո՛ա-ո-ցո՛ւի . ասիկայ Իսրայէ-
լին յաւիտենական պարտաւորու-
5 թիւն է : Եւ ան տունը որ ես կը
չինեմ , մեծ ըլլո՛ւ է . քանզի
Մեր Աստուածը՝ ամէն աստուած-
6 ներէն մեծ է . ի՛ու անոր տուն շի-
նելու ով կարող է . քանզի եր-
կինքը , ու երկինց երկինքը չէն
կրնար պարունակել զանիկայ , ու-
րեմն ես ո՛վ եմ , որ անոր տուն
չինեմ . միայն Թէ անոր առջևը
խունկ ծխելու համար փո՛ղ պիտի
7 ա՛ա-ր-ա՛ւի : Եւ հիմա ինձի մէկ ի-
մաստուն մարդ մը խրկէ , որ ոսկին ,
արծաթը , պղինձը , երկաթը , ծի-
րանեգոյնը , կարմիրը և կապուտակը
բանիլ գիտնայ , ու քանդակագոր-
ծութիւն ալ գիտնայ , որ իմ քովս
Ցուդայի ու Երուսաղէմի մէջ ե-
ղող՝ իմ Հօրս Դաւիթին պատ-
րաստած իմաստուններուն հետ
8 ըլլայ : Նեւ ինձի Լիբանանէն ե-
ղևնափայտեր , մայր փայտեր ու
Եալմուկ փայտե՛ր խրկէ . քանզի
ես գիտեմ որ քու ծառաներդ
Լիբանանէն փայտ կտրելը գիտեն .
և ահա իմ ծառաներս քու ծառա-
9 ներուդ հետ ըլլո՛ւն , Ու ինձի խիստ
շատ փայտեր պատրաստեն . քանզի
իմ չինելու տունս մեծ ու փառաւոր
10 ըլլալու է : ի՛Եւ ահա ես քու ծա-
ռաներուդ՝ փայտ կտրող բանուոր-
ներուն՝ քսան հազար քոր ծե-
ծուած ցորեն , ու քսան հազար
քոր գարի , ու քսան հազար մար
գինի , ու քսան հազար մար եղ կու
տամ :
11 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը
Սողոմոնին նամակ խրկեց՝ ու ըսաւ .
[Տէրը իր ժողովուրդը սիրելուն
համա՛ր՝ քեզ անոնց վրայ թագաւոր
12 դրաւ : Եւ Քիրամ ըսաւ . Հ՚եր-
կինքը ու երկիրը ստեղծող Իսրա-
յէլին Տէր Աստուածը Ե՛օրհնեա՛լ ըլ-
լայ , որ Դաւիթ թագաւորին՝ իմ-
հեմուԹիւն ու գիտութիւն ունե-
ցող իմաստուն որդի մը տուաւ , որ
անիկայ Տէրոջը տուն , ու իր թա-
գաւորութեանը տուն պիտի չինէ :
13 Եւ հիմա իմ [վարպետ Քիրամը
կը խրկեմ , որ հանճարեղ ու իմաս-
14 տուն մարդ մըն է . Ո՛Անիկայ Դանի
աղջիկներէն եղող կնկան մը որդի

---

1 , 17 Սողոմոնին գործաւորները՝ տաճարը չինե-
լու համար , 3 Սողոմոն՝ Քիրամին վարպետները
ու չինուԹեան համար նիւթ կ՚ուզէ : 11 Քի-
րամին ալ բարեկամօրէն պատասխան կը խրկէ :

* դ Թագ. ե. 5 :
† ԵԶԲ . ըսաւ
[գ Թագ. ե. 15 , Հմր 18 :
† ԵԶԲ . Համ բեց ,
[գ Թագ. ե. 1 :
ա Մն. ժգ. 1 :

Ն . ք . ՉՔ . 1015
[գ Թագ. գ. 11 , 12 , 13 ,
Հա Մն. ի՛Թ. 25 , Գլ. Թ. 22 , ժող . բ . 9 ,
[գ Թագ. գ. 26 , ժ . 23 , ա՛ . Գլ. Թ. 23 ,
[գ Թագ. ժ. 27 , Գլ . Թ . 27 , Ցօր . իբ . 24 ,
[գ Թագ. ժ. 28 , 29 , Գլ. Թ . 28 ,

Ն . ք . ՉՔ . 1015
[գ Հմր 1 ,
Ղեւ . լ . 7 ,
Ի Եւ . ի՛ե . 30 , Ղ՚ա . իգ . 8 ,
ք Թա . ի՛ե . 3 , 8 , 11 ,
[Սալ . ճլե . 5 ,
[գ Թագ. ը. 27 , Գլ. Չ. 18 , Ե՛ա . կզ. 1 ,
[Մն. իբ . 15 ,
[գ Թագ. ժ. 11 ,
[գ Թագ. ե. 6 ,
[գ Թագ. ժ. 11 ,
[գ Թագ. ե. 11 ,
[գ Թագ. ժ. 9 , Գլ. Թ . 8 ,
Հ Ծն . ա . 2 , Սալ . լգ . 6 , ՃՐ . 25 , ՃԻգ . Տ , ՃԼԶ . 5 , 6 , Գօր . գ . 24 , ժգ . 14 , Ցայս . ժ . 6 ,
[գ Թագ. ե. 7 ,
‡ ԵԶԲ . Հայրս
Չգ Թագ. ե. 13 , 14 ,

է , ու անոր հայրը Տիւրացի է . ա-
նիկայ՝ ոսկի , արծաթի , պղինձ , եր-
կաթ , քարեր ու փայտեր , նաև
ծիրանեգոյնի , կապուտակի , բեհե-
զի և կարմիրի վրայ բանելու կող-
մանէ , ու ամէն տեսակ քանդակը
քանդակելու կողմանէ յաջողակ է .
և քու իմաստուններուդ հետ , ու
քու հօրդ Դաւիթին՝ իմ տիրոջս
իմաստուններուն հետ՝ իրէն ամէն
առաջարկուած բանին հնարքը կը
15 գտնէ : Եւ հիմա տիրս իր ը-
սած ցորենը ու գարին , եղը ու
դինին իր ծառաներուն թող իրկէ .
16 Ու մենք Լիբանանէն՝ քեզի հար-
կաւոր եղածին չափ փայտեր կը
կտրենք , և զանոնք ծովէն լաստեր
կ՚ընենք՝ Յոպպէ՝ կը բերենք քեզի ,
ու դուն զանոնք Երուսաղէմ հա-
նէ :
17 Ու Սողոմոն Իսրայէլի երկրին մէ-
ջը եղող բոլոր օտարազգի մարդիկ-
ները՝ իր հօրը Դաւիթին համրե-
լէն ետքը համրեց . և անոնք հարիւր
հիսնհնուհիրեք հազար վեց հարիւր
18 հոգի գտնուեցան . Ու անոնցմէ եօ-
թանասուն հազար բեռնակիր , ու
լեռը էշ կտրող ութսուն հա-
զար , ու զանոնք բանեցընելու հա-
մար՝ իրեք հազար վեց հարիւր վե-
րակացու ըրաւ :

ԳԼ . Գ

1 Տաճարին տեղը ու շինութեան սկզբնաւորու-
թիւնը ; 3 Նոր չափերը ու զարդերը ; 11 Քե-
րովբէները ; 14 Վարագոյրը ու սիւները :

1012
1 Եւ Սողոմոն սկսաւ Տէրոջը տունը
շինել Երուսաղէմի մէջ՝ Մօրիա
լեռանը վրայ՝ ուր որ Տէրը անոր
հօրը Դաւիթին երեցեր էր , ան
տեղը՝ որն որ Դաւիթ Տէրուսացի
Ունայնի կալին մէջը պատրաստեր
2 էր : Եւ իր թագաւորութեանը
չորրորդ տարին՝ երկրորդ ամսուն
երկրորդ օրը սկսաւ շինել :
3 Ու Աստուծոյ տունը շինելու հա-
մար՝ Սողոմոնին դրած հիմը սահկայ
էր . առջի չափով՝ վաթսուն կան-
գուն երկայն , ու քսան կանգուն
4 լայն էր : Եւ դիմացը եղող սրա-
հին երկայնութիւնը՝ տանը լայ-
նութեամբը քսան կանգուն , ու
բարձրութիւնը հարիւր քսան կո-
ճուն էր . ու զանիկայ ներսէն մա-
5 քուր ոսկիով պատեց : Եւ մեծ
տունը մայր փայտով ծածկեց , ու
զանիկայ մաքուր ոսկիով պատեց ,
ու անոր վրայ արմաւենիներ ու
6 շղթաներ փորագրեց : Եւ շքե-
ղութեան համար՝ տունը պա-
տուական քարերով զարդարեց .
7 ու ոսկին՝ Փարուիմի ոսկի էր : Եւ
տանը գերանները , սեմերը , պա-

տերը ու դռները ոսկիով պատեց .
ու պատերուն վրայ քերովբէները
քանդակեց :
8 Եւ սրբութեանց սրբութիւնին
տունը շինեց . անոր երկայնութիւ-
նը տանը լայնութեանը պէս՝ քսան
կանգուն , ու լայնութիւնը քսան
կանգուն էր . և զանիկայ վեց հա-
րիւր տաղանդի չափ մաքուր ոսկի-
9 ով պատեց : Ու բևեռներուն կը-
շիռը յիսունական սիկղ ոսկի էր .
ու վերնատունները ոսկիով պա-
10 տեց : Եւ սրբութեանց սրբու-
թիւնին տանը մէջ երկու քանդա-
կագործ քերովբէներ շինեց , ու զա-
11 նոնք ոսկիով պատեց . Եւ քերով-
բէներուն թևերը քսան կանգուն
երկայնութիւն ունէին . մէկ թևը
հինգ կանգուն էր , ու տանը պա-
տին կը դպչէր , և միւս թևը հինգ
կանգուն էր , ու մէկալ քերովբէին
12 թևին կը դպչէր . Մէկալ քերովբէին
ալ մէկ թևը հինգ կանգուն էր , ու
տանը պատին կը դպչէր , ու միւս
թևը հինգ կանգուն էր , ու մէկալ
13 քերովբէին թևին կցուած էր : Այս
քերովբէներուն տարածուած թևե-
րուն երկայնութիւնը՝ քսան կանգուն
էր . ու անոնք իրենց ոտքերուն
վրայ կայնած էին , ու անոնց երեսը
դէպ ի տունը կը նայէր :
14 Եւ եվարագոյրը՝ կապուտակէ ,
ծիրանիէ , կարմիրէ ու բեհեզէ շի-
նեց , ու անոր վրայ քերովբէները
գործեց :
15 Եւ տանը առջևը՝ երեսուն հինգ կանգուն երկայնութեամբ եր-
կու սիւն շինեց , ու ամէն մէկուն
վրայի խոյակը հինգ կանգուն էր ,
16 Եւ գաւիթին մէջը շղթաներ պէս՝
շղթաներ շինեց , ու սիւներուն
գլխուն դրաւ . և նռներ շինեց
անոնց ,
17 Եւ սիւները տաճարին առջևը
կանգնեց , մէկը աջ կողմին՝ ու մէ-
կալը ձախ կողմին . և աջ կողմը
եղողին անունը Յաբին , ու ձախ
կողմը եղողին անունը Բոոզ կոչեց :

ԳԼ . Դ

1 Պղնձէ սեղանը ; 2 Ձուլածոյ ծովը տասներ-
կու եղներու վրայ ; 6 Տասը աւազանները ,
աւազանակները ու սեղանները ; 9 Գաւիթնե-
րը , ու պղնձէ գործիքները ; 19 Ոսկեղէն
անօթները :

1 Ու պղնձէ սեղան մը շինեց , եր-
կայնութիւնը քսան կանգուն ,
և լայնութիւնը քսան կանգուն , ու
բարձրութիւնը տասը կանգուն :
2 Եւ ձուլածոյ ծովը շինեց . ան-
ծի եղերքէն մինչև ծիկալ շրջա-
թունը տասը կանգուն էր , ու
բոլորաձև էր , և անոր բարձրու-

Ն . Ք . ԶԴ .
1015
Ե Հմր 10 : 14
Ա Թագ . Ե .
8 , 9 :
Յ Ցես . ԺԹ .
46 ; Դտր .
Թ . 36 :
Ն Հմր 2 ; Գ
Թագ . Ե .
13 , 15 , 16 ;
Թ . 20 , 21 ;
ԳԼ . Ը . 7 , 8 ;
Ա Մն . Իբ .
2 :
Հմր 2 :

1012
Գ Թագ . Ը
1 , ԱԱ :
Բ Ցն . Իբ .
2 , 14 :
Ա Մն . Իա .
18 , Իբ . 1 :
Գ Թագ .
Ը . 2 :
Գ Թագ .
Ը . 3 :
Գ Թագ .
Ը . 17 :
Ելք . Հա-
նեց :

Ն . Ք . ԶԴ .
1012
Ե Թագ .
Ը . 23 , ԱԱ :
Ա Թագ . Ե .
8 , 9 :
Ա Մն . Իբ .
2 :
Ա Մն . Իա .
18 , Իբ . 1 :
Ա Թագ . Զ .
23 , ԱԱ :
Ա Թագ . Է .
7 , 8 :
Ա Մն . Իբ .
2 :
Ա Մն . Իա .
18 , Իբ . 1 :
Ա Թագ . Է .
23 :
Ա Թագ . Է .
21 :
Ա Թագ . Է .
20 :
Ա Թագ . Է .
21 :
Ա Թագ . Է .
23 :
Ա Մն . Իբ .
2 :
Ա Թագ . Ը .
13 , 15 , 16 ;
Թ . 20 , 21 ;
ԳԼ . Ը . 7 , 8 :
Ա Թագ . Ը .
15—21 ; Ե-
րեմ . Ծբ .
21 :
Ա Թագ . Է .
20 :
Ա Թագ . Է .
23 :
Ա Մն . Իբ .
2 , 14 :
Ա Մն . Իա .
18 , Իբ . 1 :
Ա Թագ . Է .
23 :
Ա Մն . Իբ .
1 , 2 ; Ա Թագ .
Ժ . 14 ; Ե-
զեկ . Խգ .
13 , 16 :
Ա Թագ . Է .
23 :
Ա Մն . Իբ .
2 :
Ա Թագ . Է .
23

Ն·Ք·ՂԲ· 1012

Թ գ Թագ·է· 24, 25, 26։

Թիւնը հինգ կանգուն էր, ու անոր շրջապատը երսուն կանգուն էր.
3 Եւ անոր տակը շուրջանակի ամէն կողմէն եզներու նմանութիւններ կային. ծովուն բոլորտիքը մէկ կանգունի մէջ տասնական էզէր իր. ու եզները երկու կարգ էին, որոնք ձոյլ ձուլած աւելնին ձուլ-
4 լեր էին։ Անիկա տասներկու եզներու վրայ կը կենար, որոնց իրէքը դէպ 'ի հիւսիս՝, իրէքը դէպ 'ի արեւմուտք, իրէքը դէպ 'ի հարաւ, ու իրէքը դէպ 'ի արեւելք կը նայէին, ու ծովը անոնց վրայ էր, և
5 ամենուն ետեւի կողմը դէպ 'ի ներս
Գ Տար գ Թագ·է· 26։ Ի գ Թագ·է· 38։ էր։ Ու անոր թանձրութիւնը չորս մատնաչափ էր, և շրթունքը գաւաթի շրթունքի պէս էր, ու վրան շուշանի ծաղիկներ յօրինուած էր, ու երեք հազար մար կ'առնէր։
6 Եւ տասը աւազան շինեց. ու հինգը աջ կողմը ու հինգն ալ ձախ կողմը դրաւ՝ լուացման համար. * ողջակէզները անոց մէջը կը լուային. բայց ծովը քահանայից համար էր, որ հոն լուացուին։
* Եբր. ողջակէզի գործը
Ղ գ Թագ·է· 49։ Ի Ել·ԺԱ·31, 40։ ԱՄՈՍ· Ը· 12, 19։
7 Ձեւ տասը ոսկեղէն աշտանակները շինեց ի իրենց օրինակին համեմատ, ու զանոնք տաճարին մէջը դրաւ. հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը։
Ը գ Թագ·է· 48։
8 Ընե տասը սեղան շինեց, ու զանոնք տաճարին մէջը դրաւ. հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը. ու հարիւր ոսկեղէն կոնքեր շինեց։
Ի գ Թագ·Ձ· 36։
9 Եւ Ի քահանայից գաւիթը, ու մեծ գաւիթը, և գաւիթին դռները շինեց, ու անոնց փեղկերը պղնձ-
Ժ գ Թագ·է· 30։ ով պատեց։ Եւ ԺԾովը աջ կողմը՝ հարաւոյ դէմ դէպ 'ի արեւելք դրաւ։
Ի Տես գ Թագ·է· 49։
11 Ու Ի ֆիրամ՝ կաթսաները, թիակները ու կոնքերը շինեց. և ֆիրամ կատարեց ան բոլոր գործքերը՝ որ Աստուծոյ տանը համար Սողոմոն
Լ գ Թագ·է· 41։
12 թագաւորին կը շինէր. Այսինքն երկու սիւները, ու Լդունտերը, ու երկու սիւներուն գլուխը եղող խոյակները, և սիւներուն գլուխը ե-
13 ղող խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար երկու ցանցակերպ
Ի Տես գ Թագ·է· 20։
ղարդեր, Ու երկու ցանցակերպ ղարդերուն Ի չորս հարիւր նուռերը, այսինքն՝ սիւներուն վրայի խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար՝ ամէն մէկ ցանցակերպ ղարդին վրայ երկու կարգ նուռեր.
Ժ գ Թագ·է· 27, 43։
14 Եւ Ժ տակդիսովթներ շինեց, ու մեքենովթներուն վրայի աւազաննե-
15 րը շինեց. Մէկ ծովը ու անոր տա-
16 կի տասներկու եզները. Եւ կաթսաները, ու թիակները, ու մսա-
Հանները, և անոնց բոլոր գործիքները՝ Տէրոջը տանը համար Սողոմոն թագաւորին՝ փայլուն պղնձէ շինեց
17 Անոր վարպետը ֆիրամ՝ հրաշագործը զանոնք Յորդանանու դաշտին մէջ թանձր հողի մը վրայ ձուլել տուաւ Սոկքովթի ու Սարե-
18 դայի մէջտեղը։ Եւ Սողոմոն ասոնք բոլոր կարասիները խիստ շատ շինեց. քանզի պղինձը կշիռքի չէր
19 գար։ Ու Սողոմոն՝ Աստուծոյ տանը բոլոր կարասիները շինեց. նաև ոսկի սեղանը, ու անոնց վրայ հառաջա-
20 նորութեան հացը եղ դրուեր. Եւ մաքուր ոսկիէ աշտանակները, ու անոնց ճրագները՝ դաբիրին առջեւը վառելու համար ըստ սովորու-
21 թեան։ Եւ ծաղիկները, և ճրագները, և ունե-
22 լիները, Ու մաքուր ոսկիէ բազմակալները, տաշտերը, խնկամաններ, ու բուրվառները. և տանը դռները՝ ամէնէն սրբութեանց սրբութեանին ներսի դռները փեղկերը, և տանը՝ այսինքն տաճարին դռները փեղկերը ոսկիէ չինէց։

Ն·Ք·ՂԲ· 1012

Ի գ Թագ·է· 14, 45։
Հ գ Թագ·է· 46։
Ի Նա՛ Սար-թաքի · գ Թագ · է· 46։
Ն գ Թագ·է· 47։
Ղ գ Թագ·է· 48, 49, 50։
Ճ Ել·ԽԵ·30։
Ծ Ել·ԽԵ·20, 21։
Ծ Ել·ԽԵ·31, ՃՀ։

ԳԼ· Ե

1 Նուիրուած գանձերը։ 2 Տապանակին հանդիսաւոր կերպով դաբիրի մէջ դրուիլը։ 11 Երբոր զԱստուած կ'օրհնեն, անիկայ տեսանելի կերպով իր հաճութեանը նշան մը կու տայ։

1 Ապա Սողոմոնին Տէրոջը տանը համար շինած բոլոր գործը լմնցաւ. ու Սողոմոն իր հօրը Դաւիթին նուիրած բաները, և արծաթը, ու ոսկին, ու բոլոր անօթները տարաւ, և Աստուծոյ տանը գանձին մէջ դրաւ։
1005 ա գ Թագ·է· 51։
2 Յետոյ Սողոմոն՝ Իսրայէլի ծերերը, ու ցեղերուն բոլոր իշխանները, Իսրայէլի որդւոց նահապետները՝ Երուսաղէմի մէջ ժողվեց, որ Տէրոջը ուխտին տապանակը Դաւիթին քաղաքէն՝ այսինքն
1004 Բ գ Թագ·ը· 1, ՃԱ։
3 Սիօնէն հանեն։ Ու Իսրայէլի բոլոր մարդիկները Ի ևօթներորդ ամսուն տօնին առջեւը՝ թագաւորին
Ի Տես գ Թագ·է· 12։ Ա գ Թագ·ը· 2։ Ի Տես գԼ·Ճ· Տ, 9, 10։
4 քովը ժողվուեցան։ Ու Իսրայէլի բոլոր ծերերը եկան. ու Ղեւտացի-
5 ները տապանակը վերցուցին։ Եւ տապանակը, ու ժողովքի խորանը, և խորանին մէջը եղած բոլոր սուրբ անօթները հանեցին. զանոնք քահանաները ու Ղեւտացիները հանե-
6 ցին։ Եւ Սողոմոն թագաւորը ու անոր քովը ժողուած Իսրայէլին բոլոր ժողովքը՝ տապանակին առջեւը ըլլալով, ոչխարներ ու արջառներ կը զոհէին, այնչափ շատ՝ որ, անթիւ ու անհամար էին։

Ն·ք·ԶՔ· 1004

7 Եւ քահանաները Տէրոջը ուխտին տապանակը ներս տարին իր տեղը՝ տանը դարիրը՝ սրբուհիին սրբուհեանցը , ու՛ քերովբէներուն թեւերուն տակը ։

8 Էն ։ Ու քերովբէները տապանակին տեղւոյն վրայ՝ էրէց թեւերը կը տարածէին . և քերովբէները տապանակը ու անոր ձողերը վերէն կը

9 ծածկէին ։ Եւ ձողերը երկընցուցին . և ձողերուն ծայրերը տապանակէն՝ դարիրին առջեւը կ՚երեւնային , բայց դուրսէն չէին երեւնար . Ը գ թագ· ը· 8 ։

10 ու Հոն անոնք են ։ Տապանակին մէջը ուրիշ բան չկար , բայց միայն երկու տախտակները , որ Մովսէս Ե Քորէբի մէջ հոն դրաւ . որոնցմով Տէրը Իսրայէլի որդւոցը հետ ուխտ ըրաւ , անոնց Եգիպտոսէն ելած ատենը ։ Ե բ Օր · ժ · 2 · 5 ։ Գւ· գ · 11 ։

11 Ու երբոր քահանաները սուրբ տեղէն ելան , (վասն զի բոլոր հոն գտնուող քահանաները սրբուեր էին , չէ թէ իրենց յաջորդական

12 կարգը պահելով · ևՈւ երգեցող Ղեւտացիներուն բոլորը՝ Ասաֆին , Եմանին ՝՝ Իդիթունին , և անոնց որդիներուն ու եղբայրներուն հետ՝ բէզեզներ հագած , ծնծղաներով՝ տաւիղներով ու քնարներով սեղանին արեւելեան կողմը կայնեցան . Ի և անոնց հետ հարիւր քսան քահանայ փող կը ՚ի՚ւեցընէին .)

13 Ու երբոր փող ՚ի՚ւեցընողները ու երգեցողները մէաբերան մէկ ձայնով Տէրը կ՚օրհնէին ու կը գովէին , և փողերով , ծնծղաներով , ու երգոց նուագարաններով ձայներնին վերցընելով՝ Տէրը կ՚օրհնէին , ը·Է·Լ· ԺԳոհացէ՛ք Տէրոջմէն , ինչու որ բարի է , ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

Ա՚ն ատենը Տէրոջը տունը ամ

14 պով լեցուեցաւ ։ Եւ ամպին պատճառուր քահանաները չէին կրնար հոն կենալ , որ էրէց պաշտօնը կատարեն . Է քանզի Տէրոջը փառքը Աստուծոյ տունը լեցուցեր էր ։

ՀԵ· խ · 35 ։ Գւ· է · 2 ։

Գ Լ · Զ

1 Սողոմն՝ ժողովուրդը օրհնելէն ետեւ չԱստուած կ՚օրհնէ ։ 12 Տաճարին նաւակատիսայ օրը՝ պղնձէ կայարանին վրայ Սողոմնէն մեստւած աղօթքը ։

1 Ա՚յն ատենը ՝՝ Սողոմն ըսաւ . Տէրը ըսաւ որ ինքը Բ մառախուղի մէջ

ՈԳ թագ· ը· 12 · ԼԸ ։ Բ Ղէ · ժ · 2 ։

2 կը բնակի ։ Բայց ես քեզի բնակութեան համար տուն՝ ու յաւիտեան քու նստելուդ համար տեղ

3 չինեցի ։ Եւ թագաւորը իր երեսը դարձուց , ու Իսրայէլի բոլոր ժողովը օրհնեց · ու Իսրայէլի բոլոր ժողովը ոտի վրայ կայներ էին ։

4 Եւ անիկայ ըսաւ . Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Ցէր Աստուածը , որ իր բերնովը իմ հօրս Դաւիթին խօսք տուաւ , ու իր ձեռքովը կատարեց .

5 քանզի ըսաւ . Իմ ժողովուրդս Եգիպտոսի երկրէն հանած օրէս ՚ի վեր՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն բնաւ մէկ քաղաք մը չընտրեցի տուն շինելու համար , որ իմ անունս հոն ըլլայ , ու մարդ մը չընտրեցի , որ իմ ժողովուրդիս Իսրայէլին վրայ

6 իշխան ըլլայ · Է Հապա Երուսաղէմը ընտրեցի , որ իմ անունս հոն ըլլայ · ու Դաւիթը ընտրեցի , որ իմ ժողովուրդիս Իսրայէլին վրայ Բ֊

7 ՝՝ ը ըլլայ ։ Եւ Է իմ հայրս Դաւիթ միտք ունէր որ Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը տուն մը շինէ .

8 Բայց Տէրը իմ հօրս Դաւիթին ըսաւ . Որովհետեւ դուն միտքդ դրիր որ իմ անունս տուն շինես , աղէկ ըրիր որ ասիկա միտքդ դրիր .

9 Սակայն տունը դուն պիտի չշինես . հապա քու որդիդ՝ որ քու երանքէդ պիտի ելլէ , անիկայ իմ անունս

10 տուն պիտի շինէ ։ Եւ հիմա Տէրը իր ըսած խօսքը կատարեց , ու ես իմ հօրս Դաւիթին տեղը յաջորդեցի , ու Տէրոջը ըսածին պէս՝ Իսրայէլի աթոռը նստայ , ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը՝՝

11 տունը շինեցի ։ Եւ հոն դրի տապանակը՝ Տէրուն մէջն է Տէրոջը ուխտը , որն որ Իսրայէլի որդւոցը հետ ըրաւ ։

12 Է Ու Տէրոջը սեղանին առջեւը՝ Իսրայէլի բոլոր ժողովրդին դիմացը կայնելով , ձեռքերը տարածեց .

13 (Քանզի Սողոմն պղնձէ խարիսխ մը շինելով՝ զանիկայ դաւիթին մէջտեղը դրեր էր · անոր երկայնութիւնը հինգ կանգուն , ու լայնութիւնը հինգ կանգուն , ու բարձրութիւնը իրեք կանգուն էր . և ինքը անոր վրայ կայնեցաւ , ու Իսրայէլի բոլոր ժողովրդին առջեւը ծունկ չոքեց , ու ձեռքերը դէպ ՚ի երկինքը տարածեց ·)

14 Եւ ըսաւ . Ո վ Տէր Աստուած Իսրայէլի , էերկինքի մէջ՝ ու երկրի վրայ քեզի պէս Աստուած չկայ , որ քու առջեւդ իրենց բոլոր սրտովը քալող ծառաներուդ հետ ուխտ ու

15 ողորմութիւն կը պահես . Ի դուն քու ծառայիդ՝ իմ հօրս Դաւիթին ըրած խոստմունդը պահեցիր , ու բերնովդ ըսածդ ձեռքովդ կատարեցիր . ինչպես որ այսօր Կ՚էՀ֊

16 նայ ։ Եւ հիմա ով Տէր Աստուած Իսրայէլի , պահէ ան խոստմունդդ . որն որ քու ծառայիդ՝ իմ հօրս Դաւիթին ըրիր , ու ըսիր · Ձ իմ առջեւս Իսրայէլի աթոռին վրայ

Ն·ք·ԶՔ· 1004

Ը Գւ· ժբ· 18 ։

Բ ա ՄՆ · իբ · 4 ։

Ե բ Թագ · է · 2 · ա ՄՆ · ժէ · 1 · իբ · 2 ։

Ղ գ Թագ · ը · 8 ։

Ե բ Օր · ժ · 2 · 5 · Գւ· գ · 11 ։

Ը ա ՄՆ · իե · 1 ։

Բ ա ՄՆ · ժե · 24 ։

Ա Սաղ · ճղգ · Տ֊ա ՄՆ · ժգ · 34 · 41 ։

ՂԳւ · ե · 10 ։

Ե գ թագ · ը · 22 ։

Ը Ել · ժե · 11 · ր Օր · դ · 39 · է · 9 ։

Բ ա ՄՆ · իբ · 9 ։

Ժ բ Թագ · է · 12 · 16 · գ Թագ · ր · 4 · ո 12 · Գւ է 18 ։

Ն·Ք·ՂԲ· 1004

Ի ՍԱՂ·ՃԼ· 12։

նստող մարդ քեզմէ պակաս պիտի չըլլայ . Եւ միայն թէ քու որդիդ ի-րենց ճամբաներուն զգուշութիւն ընէն , ու իմ օրէնքիս մէջը քալեն , ինչպէս որ դուն իմ առջեւս քալե-

17 ցիր ։ Եւ հիմա ով Տէր Աստուած Իսրայէլէ , թող քու ծառայիդ՝ Դաւիթին ըսած խօսքդ հաստա-տուի ։

18 Բայց միթէ Աստուած իրաւցընէ երկրիս վրայ մարդոց հետ պիտի բնակի՞ . Եահա երկինքը ու երկնից երկինքը քեզ չեն կրնար պարունա-կել . ո՛ւր կը մնայ ատ իմ շինած

ՂԳԼ·Ր·6։ ԵՍ·ԿՂ·1։ ԳԵՐ·Է· 49։

19 տունս ։ Սակայն ով Տէր Ա-տուած իմ , քու ծառայիդ աղօթ-քին ու խնդրուածքին նայէ , որ քու ծառայիդ այսօր քու առջեւդ ըրած պաղատանքը ու աղօթքը

20 լսես . Որպէս զի աս տանը վրայ ցորեկ ու գիշեր քու աչքերդ բաց ըլլան , ան տեղւոյն վրայ՝ որուն համար ըսիր թէ՝ քու անունդ հոն պիտի դնես . այնպէս որ՝ աս տե-ղը քու ծառայիդ ըրած աղօթքը

21 լսես ։ Ուրեմն քու ծառայիդ՝ և քու ժողովուրդիդ Իսրայէլին աս տեղը ըրած աղօթքները լսես . այո քու բնակութեանդ տեղէն՝ եր-կինքէն լսես , ու լսածատենդ նե-րես ։

22 Թէ որ մէկը իր ընկերին դէմ մեղանչէ , ու ան ալ երդում ընել տալու համար՝ անոր երդում ա-ռաջարկէ , ու երդումը աս տունը՝

23 քու սեղանիդ առջեւը գայ , Ան ա-տենը դուն երկինքէն լսես ու կա-տարես . ու քու ծառաներդ դա-տես . և չանցաւորը դատապար-տես , ու անոր ըրածը անոր գլուխը բերես . և արդարը արդարացընես , ու անոր արդարութեանը չափովը անոր հատուցում ընես ։

24 Եւ թէ որ քու ժողովուրդդ Իս-րայէլը՝ քեզի դէմ մեղանչելուն համար՝ իրենց թշնամիներուն առ-ջեւը յաղթուին , ու դէպ դառնան և քու անունդ փառք տան , ու աս տանս մէջ քու առջեւդ աղօթք

25 ու աղաչանք ընեն , Ան ատենը դուն երկինքէն լսես , և քու ժողո-վուրդիդ Իսրայէլին մեղքը ներես . ու անոնց՝ և անոնց հայրերուն տուած երկիրդ դարձընես զանոնք ։

Է Գ Թագ· ԺԵ·1։

26 Թէ որ անոնց քեզի դէմ մեղք գործելուն համար երկինքը գո-ցուի , ու անձրև չգայ . ու անոնք աս տեղս քեզի աղօթք ընեն , և քու անունդ փառք տան , ու զանոնք նեղելուդ համար՝ իրենց մեղքերէն

27 դառնան , Ան ատենը դուն երկին-քէն լսես , և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ Իսրայէլին մեղ-քը ներես , որ անոնց սորվեցընես ան աղեկ ճամբան՝ որուն մէջը պի-տի քալեն . ու քու ժողովուրդիդ ժառանգութիւն տուած երկրիդ վրայ անձրև տաս ։

Ն·Ք·ՂԲ· 1004

28 Թէ որ Երկրի վրայ սով , կամ ժանտախտ , կամ խորշակահարու-թիւն , կամ ապտակ դալուկ , կամ մարախ , կամ թրթռուր ըլլայ , կամ անոնց թշնամիները զանոնք իրենց *բնական երկրին մէջը նե-ղեն , կամ որ և իցէ հարուած կամ

* ԵՐԲ·ԴԸՈ-ՆԵՐուն

29 հիւանդութիւն ըլլայ , քու բոլոր ժողովուրդդ Իսրայէլէն որ և իցէ մարդ՝ աղօթք մը ու խնդրուածք մը ընելու ըլլայ , ու իւրաքանչիւր մարդ իր ախտը ու ցաւը ճանչնա-լով՝ ձեռքերը դէպ՝ի աս տունը

30 երկինքէն՝ քու բնակութեանդ տե-ղէն լսես , ու ներես . և ամէն մար-դու՝ իր բոլոր ճամբաներուն հա-մեմատ հատուցում ընես , անոր սիրտը դիտնալուդ համար . վասն զի Նմարդոց որդիներուն սիրտը

Ի ԱՄՈՆ·ԻԸ· 9։

31 միայնակ դուն գիտես . Որպէս զի քեզմէ վախնան ու քու ճամբանե-րուդ մէջը քալեն բոլոր էրէՆ օրե-րուն մէջը , որչափ ժամանակ որ մեր հայրերուն տուած երկրիդ վրայ պիտի ապրին ։

32 Ու հրաւ ժողովուրդդ Իսրայէլէն չեղող՝ և հեռաւոր երկրէ մը քու մեծ անուանդ համար՝ և զօրաւոր ձեռքիդ համար՝ ու բարձր բազուկ-կիդ համար եկող օտարականն ալ՝ թէ որ գայ ու աս տանս մէջ աղ-

Հ ՇՕՀ·ԺԸ· 20 , ՓՈՐ· Ը·27։

33 օթք ընէ , Դուն երկինքէն քու բնակութեանդ տեղէն լսես , և օ-տարականին քեզի ըրած ամէն խնդրուածքը կատարես , որ երկրիս ամէն ժողովուրդները քու անունդ ճանչնան , ու քու ժողովուրդիդ Իսրայէլին պէս քեզմէ վախնան , և գիտնան թէ աս իմ շինած տանս վրայ քու անունդ կոչուած է ։

34 Երբոր քու ժողովուրդդ իր թշնամիին դէմ պատերազմի եր-թայ ան ճամբով՝ որ դուն պիտի իրկես զանոնք , թէ որ անոնք աս քու ընտրած քաղաքիդ , ու քու անուանդ համար աս իմ շինած տանս կողմը նայելով՝ քեզի աղօթք

35 ընեն , Երկինքէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , և անոնց իրաւունքը ընես ։

36 Երբոր քեզի դէմ մեղք գործեն , (քանզի Նմեղք չգործող մարդ չը-կայ ,) ու անոնց բարկանալով՝ զա-նոնք թշնամիին ձեռքը մնտնես , ու անոնց գերեվարները հեռու կամ մօտ երկիր մը գերի տանին զանոնք ,

Ն ԱՌԱԿ· Ի· 9։ ՓՈՂ·Ն· 20 ։ ՅԱԿ· Գ·2։ ԱՇՕՆ· Ա· 8 ։

37 Թէ որ ան իրենց գերութեան երկ-

Ն.ք.ՉԾ. 1004

րին մէջը զեղչի գան ու դառնան, և իրենց գերութեան երկրին մէջը քեզի աղաչեն ու ըսեն. Մեղք գործեցինք, անօրէնութիւն ու անիրաւութիւն ըրինք. Եւ ի՞ր որ անոնք իրենց գերութեան երկրին մէջը՝ ուր որ գերի տարուած են, իրենց բոլոր սրտովը ու իրենց բոլոր հոգիովը քեզի դառնան, ու իրենց երկրին՝ որ իրենց հայրերուն տուիր, և քու ընտրած քաղաքիդ, ու քու անուանդ համար իմ չինած տանս

39 կողմն նայելով՝ աղօթք ընեն, դուն երկինքէն քու բնակութեանդ տեղէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես, ու անոնց իրաւունք ընես, և քու ժողովուրդիդ քեզի

40 դէմ ըրած մեղքը ներես։ Հիմա՛ով Աստուած իմ, աս տեղը հաստատուած աղօթքին թող քու աչքերդ բաց ըլլան, ու քու ականջ

41 ներդ մտիկ ընեն։ Եւ հիմա՛ով Տէր Աստուած, ելլու հանգստութեանդ տեղը ելիր, դուն՝ ու քու զօրութեանդ տապանակը. ՝ով Տէր Աստուած՝ քու քահանայիդ փրկութիւն հագնին, և քու սուրբերդ բարութիւնով ուրախանան։

42 Ո՛վ Տէր Աստուած՝ քու օծեալիդ երեսը մի՛ անարգեր. հաստա՛ քու ծառայիդ Դաւիթին ըրած ողորմութիւններդ յիշէ։

Ն.ք.ՉԾ. 1004

Գ Լ. Է

1 Աստուած երկինքէն կրակ խրկելով՝ Սողոմոնին աղօթքին ընդունելի ըլլալը կը յայտնէ, ու տաճարը փառքով կը լեցնէ. ժողովուրդն ալ Տէրոջը երկրպագութիւն կ'ընէ։ 4 Սողոմոնին Նահատակաւոր զոհը։ 8 Սողոմոն՝ տաղաւարահարաց տօնը ու սեղանին նաւակառոց տօնը կատարելէն ետքը, ժողովուրդը կ'արձակէ։ 12 Աստուած Սողոմոնին կ'ըսէ, ու պայմանով անոր խոստումներ կ'ընէ։

ԸՄՏ. ԺԹ. 16։

1 Ա՛ւ երբոր Սողոմոն իր աղօթքը լըմնցուց, Երկինքէն կրակ իջաւ, ու ողջակէզները և զոհերը սպառեց. ու Տէրոջը փառքը

2 տունը լեցուց։ Եւ քահանաները չկրցին Տէրոջը տունը մտնել. քանզի Տէրոջը փառքը Տէրոջը

3 տունը լեցուցեր էր։ Ու բոլոր Իսրայէլի որդիքը կրակին իջնելը՝ և տանը վրայ Տէրոջը փառքին հնձանը կը տեսնէին. ու երեսի վրայ գետինը իյնալով՝ քարայատակին վրայ երկրպագութիւն ըրին, ու Տէրը օրհնեցին, Ո՞ր բարի է, Ո՞ր անոր ողորմութիւնը յաւիտեան է։

4 Եւ թագաւորը ու բոլոր ժողովուրդը Տէրոջը առջևը զոհեր կը

5 մատուցանէին։ Եւ Սողոմոն թագաւորը քսանուերկու հազար արջառ, ու հարիւր քսան հազար ոչխար զոհ ըրաւ. այսպէս թագաւորը ու բոլոր ժողովուրդը Աստուծոյ տանը նաւակատիքը ըրին։

ԸՄՏ. ԺԹ. 16։

6 Եւ քահանաները իրենց պահպանութեանը համեմատ կը կայնէին, ու Ղեւտացիները՝ Տէրոջը երգոց նուագարաններովը՝ որոնք Դաւիթ Թագաւորը շիներ էր Տէրը գովելու համար, որ անոր ողորմութիւնը յաւիտեան է, *երբոր Դաւիթ անոնց ձեռքովը Տէրը օրհնեց"։ ու Քրահանաները անոնց դիմացը փողերը կը շչեցընէին. ու բոլոր Իսրայէլը ոտքի վրայ կայներ էր։

* Կամ՝ Դաւիթին օրհնութիւնը իրենց ձեռքը ուենէնուվ։ Ր Գ Ը. 6. 12։

7 Եւ Սողոմոն Տէրոջը տանը առջևը եղող գաւիթին մէջտեղը սրբեց. քանզի ողջակէզները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց. որովհետև Սողոմոնին չինած պղնձէ սեղանը՝ ողջակէզները, ու հացի ընծաները ու ճարպերը չէր կրնար պարունակել։

ԲԹ ԹԱԳ. Ը. 64։

8 Եւ անատենը Սողոմոն ու անոր հետ բոլոր Իսրայէլը՝ խիստ մեծ ժողով մը՝ Եմաթի մուտքէն մինչև Եգիպտոսի հեղեղատը՝ եօթը օր

Ա ՅԵՍ. Ժ. 8։

9 տօն ըրին։ Եւ ութերորդ օրը մեծ ժողով ըրին. քանզի եօթը օր սեղանին նաւակատիքը՝ ու եօթը օր

10 տօնը կատարեցին։ Ու Եօթնեորդ ամսուն քսանուհիսգերորդ օրը՝ ժողովուրդը արձակեց, որոնք իրենց վրանները ֆոյին, զուարթ սրտով մը ուրախանալով ան բարիքներուն համար՝ որ Տէրը Դաւիթին, Սողոմոնին, ու իր Իսրայէլ ժողովուրդին ըրեր էր։

ԲԹ ԹԱԳ. Ը. 66։

11 Եւ Սողոմոն Տէրոջը տունը՝ ու թագաւորական տունը լըմնցուց. ու Տէրոջը տանը մէջ, և իր տանը մէջ՝ Սողոմոնին սիրտը ինչ որ չէնել ուզեց, ամէնն ալ յաջողեցաւ։

ԲԹ ԹԱԳ. Ա. 1, ՃԱ։

12 Ու Տէրը գիշերով Սողոմոնին երեւցաւ, և անոր ըսաւ. Քու աղօթքդ լսեցի, ու աս տեղս ընտրեցի, որ ինծի զոհի տուն ըլլայ։

Ա Օր. Ժբ. 5։

13 Թէ որ երկինքը գոցեմ՝ որ անձրեւ չըլլայ, և թէ որ մարախին պատուիրեմ՝ որ երկիրը ուտէ, կամ թէ որ իմ ժողովուրդիս մէջը

ՀԳՐ. Ը. 26. 28։

14 ժանտախտ խրկեմ. Ու իմ անունովս կոչուած ժողովուրդս՝ Նթէ որ խոնարհին, ու աղօթք ընեն, ու իմ երեսս խնդրեն, և իրենց չար ճամբաներէն դառնան, Ես ալ երկինքէն պիտի լսեմ, ու անոնց մեղքը ներեմ, ու անոնց երկիրը

ՅՃԱԿ. Գ. 10։

ՂԳՐ. Ը. 27, 30։

15 պիտի բժշկեմ։ Հիմա՛ ես տեղս հաստատելը աղօթքին իմ աչքերս բաց՝ ու ականջներս մտիկ

ԺԳՐ. Ը. 40։

16 ընող պիտի ըլլան։ Եւ հիմա՛ աս տունը ընտրեցի ու սրբեցի, որ իմ անունս յաւիտեան հոն ըլլայ. ու իմ

ՀԳ ԹԱԳ. Բ. 3։ ԳՐԳ. Ը. 6։

աչքերս ու սիրտս ամէն ատեն հոն
17 պիտի ըլլայ : ¶ Եւ թէ որ դուն իմ առջեւս՝ քու հօրդ Դաւիթին քա-
լածին պէս քալես , ու բոլոր քեզի պատուիրածներս ընես , և իմ կա-
նոններս ու դատաստաններս պա-
18 հես , Ան ատենը քու թագաւորու-
թեանդ աթոռը պիտի հաստա-
տեմ , ինչպէս որ քու հօրդ Դաւիթին հետ ուխտ ըրի՝ ըսելով . ¶ քեզմէ իսրայէլի վրայ իշխող
19 մարդ պակաս պիտի չըլլայ : ¶ Բայց թէ որ դառնաք , ու ձեր առջևը դրած կանոններս ու պատուիրանք-
ներս թողուք , ու երթաք ուրիշ աստուածներու ծառայութիւն ընէք , և անոնց երկրպագութիւն
20 ընէք , Ան ատենը *ձեզ արմատէի պիտի խլեմ ան երկրին վրայէն՝ որն որ †ձեզի տուի . և աս տունը՝ որ իմ անունս համար սրբեցի , ե-
րեսէս պիտի ձգեմ , ու զանիկայ բոլոր ազգաց մէջ առակ ու կատակ
21 պիտի ընեմ : Եւ աս բարձր տա-
նը համար՝ ամէն քովէն անցնողը պիտի զարմանայ , ու պիտի ըսէ .
*Ցերը ինչու համար աս երկրիս ու
22 աս տանս այսպէս ըրաւ : Եւ պիտի ըսեն . Վասն զի իրենց Հայրերուն Տէր Աստուածը թողուցին , որ զանոնք Եգիպտոսի երկրէն հաներ էր , ու ուրիշ աստուածներու յա-
րեցան , և անոնց երկրպագութիւն ու ծառայութիւն ըրին . աս պատ-
ճառով անոնց վրայ աս բոլոր չա-
րիքները բերաւ :

ԳԼ . Ը

1 Սողոմոնին շինութիւնները : 7 Իսրայէլացոց մէջ ողջ թողուած հեթանոսները՝ Սո-
ղոմոն հարկատու ծառաներ կ'ընէ , բայց Իս-
րայէլացիները իշխաններ կ'ընէ : 11 Փարաւո-
նին աղջիկը իր տունը կը փոխադրուի : 12 Սողոմոնին տարեկան հանդիսաւոր զոհերը : 14 Սողոմոն՝ քահանաները ու Ղեւտացիները իրենց պաշտօններուն վրայ կը կեցնէ : 17 Նաւերը Ոփիրէն ոսկի կը բերեն :

992
1 Եւ Սողոմոն Տէրոջը տունը ու իր տունը քսան տարուան մէջ շի-
2 նելէն ետքը , Սողոմոն ան քաղաք-
ները ալ շինեց , որոնք Քիրամ Սողոմոնին տուեր էր , ու հոն ի-
3 սրայէլի որդիները բնակեցուց : Եւ Սողոմոն Սուբայի Եմաթը գնաց ,
4 ու անոր տիրեց : Ու անապատին մէջ Թադմորը շինեց , ու ան բոլոր
5 շտեմարանի քաղաքները՝ որոնք Ե-
մաթի Երէրէն մէջ շինեց . Ու վերի Բեթորոնը և վարի Բեթորոնը՝ պարիսպներով , դռներով ու նի-
գերով ամրացած քաղաքներ շինեց .
6 Նաև Բաալեթը , ու Սողոմոնին բոլոր շտեմարանի քաղաքները , ու
ձիաւորներուն քաղաքները , և ան բոլոր ընտիր շէնքերը՝ որ Սողոմոն ուզեց շինել Երուսաղէմի մէջ , Լիբանանի մէջ , ու իր տէրութեանը բոլոր երկրին մէջ :
7 Ան բոլոր ժողովուրդները որ Քետացիներէն , Ամորհացիներէն , Փերեզացիներէն , Խևացիներէն ու Յերուսացիներէն մնացեր էին , և
8 Իսրայէլի որդիները զանոնք բոլո-
րովին կորսնցուցած չէին , Սողոմոն զանոնք հարկատու ըրաւ մինչև
9 յայսօր : Եւ Սողոմոն իր գործին համար՝ Իսրայէլի որդիներէն ծա-
ռաներ չըրաւ . հապա անոնք պա-
տերազմական մարդիկներ , ու իր զօրավարներուն իշխանները , և իր կառքերուն ու ձիաւորներուն վե-
10 րակացուներն էին : Եւ Սողոմոն թագաւորին գլխաւոր իշխանները երկու հարիւր յիսուն հոգի էին , որոնք ժողովուրդին վրայ կ'իշխէին :
11 Ու Սողոմոն՝ Փարաւոնին աղջի-
կը Դաւիթի քաղաքէն՝ անոր հա-
մար շինած տունը հանեց . վասն զի ըսաւ . Իմ կնիկս Իսրայէլի թագա-
ւորին՝ Դաւիթին տունը չնստի . ինչու որ Տէրոջը տապանակին մը-
տած տեղերնքը սուրբ են :
12 Ան ատենը Սողոմոն սրահին առ-
ջևը շինած Տէրոջը սեղանին վրայ՝
13 ողջակէզներ մատուց Տէրոջը : Եւ Մովսէսին պատուիրածին համե-
մատ ամէն օրուան որոշուածը՝ շաբաթներու , ամսագլուխներու , ու հանդիսաւոր տօներուն մէջ՝ Տարին իրեք անգամ՝ խմորով քա-
ղարջակերաց տօնին , շաբաթներու տօնին , ու տաղաւարահարց տօ-
14 նին , ու մատուցանէր : Եւ իր հօրը Դաւիթին կանոնովը՝ բահանա-
ներուն դասերը իրենց պաշտամանց վրայ , ու Ղեւտացիները իրենց պահպանութեանը վրայ՝ ամէն օ-
րուան որոշուածին պէս՝ քահանա-
ներուն առջևը օրհնելու ու սպա-
սաւորութիւն ընելու համար , և դռնապաններն ալ իրենց դաս-
րուն կարգովը՝ ամէն մէկ դուռը դրաւ . քանզի այսպէս էր Աստու-
ծոյ մարդուն Դաւիթին հրամանը :
15 Ու քահանաներուն , ու Ղեւտացինե-
րուն համար , և գանձարաններուն համար՝ ամէն բանի մէջ թագաւո-
16 րին հրամանէն դուրս չելան : Ու Սողոմոնին ամէն գործը՝ Տէրոջը տանը հիմը դրուած օրէն՝ մինչև անոր լրիւննալը՝ ‡պատրաստուած էր : Այսպէս կատարուեցաւ Տէ-
րոջը տունը :

992

ԵՐԿՐՈՐԴ ԹԻՒՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ՆՇԱՆԱԳԻՐՆԵՐ

ն · ք · գՀ · 1004 — յգ Թագ.Թ. 4, ՃԼ ։

ն ԳԼ · ղ · 16 ։ ւՂՀ · Իղ · 14 · 33 ։ բ Օր · իբ · 15, 36 ; 37 ։

*ԵՀբ · ղա-
նոնք

†ԵՀբ · ա-
նոնց

ն · ք · գՀ · 992

ե Թագ.Թ. 20, ՃԼ ։

ե Թագ.Թ. 23 ։ ւԹագ.գ. 1 · ե.Տ.Թ. 24 ։

ր Տես գ Թագ.Թ. 23 ։

ն Եւ, իԹ. 38 ։ Թու. իբ · 3 · 9, 11, 26 ։ իԹ. 1, ՃԼ ։

ն Եւ, իգ · 14 ։ բ Օր · ժգ · 16 ։

ՃՄՊ · իդ · 1 ։

ՃՄՊ · իե · 1 ։

ՃՄՊ · Թ. 17 ։ իՂ · 1 ։

‡ Կամ՝ կար-
գաւորուած

Ն • ք • ղԲ • 992
Է դ Թագ • 26 ։
Լբ Օր • բ • Տ։ դ Թագ • ժդ • 22 ։
Է դ Թագ • 27 ։ Գ Ր • Թ • 10 ։ 13 ։

17 Ան ատենը Սողոմոն եդովմի երկրին մէջ՝ ծովեզերքը եղող էգաս սիոնգաբերը ու Ելաթը գնաց ։
18 Եւ Է քիրամ՝ իր ծառաներուն ձեռքովը նաւեր՝ ու ծովու ճմբեռպոռնիւն հմուտ եղող ծառաներ խրկեց անոր . ու Սողոմոնին ծառաներուն հետ Ոփիր գացին , և անկէ չորս հարիւր յիսուն տաղանդ ոսկի առին , ու Սողոմոն Թագաւորին բերին ։

Ն • ք • ղԲ • Իբր 992

ԳԼ • Թ

1 Սաբայի Թագուհին՝ Սողոմոնին իմաստութեանը վասն կը զմայլի ։ 13 Սողոմոնին ոսկին ։ 15 անոր վահանները 17 անոր փղոսկրեայ աթոռը ։ 20 անոր ամանները ։ 23 անոր բերուած ընծաները ։ 25 անոր կառքերը ու ձիերը ։ 29 անոր Թագաւորութեանը օրերը ու մահը ։

Իբր 992
— գ Թագ • ժ • 1 ։ ԷԱ ։ Մատ • ժբ • 42 ։ Ղուկ • ժա • 31 ։

1 Եւ Սաբայի Թագուհին Սողոմոնին համբաւը լսեց , ու Սողոմոնը խրթին հարցմունքներով փորձելու համար երուսաղէմ եկաւ խիստ շատ զօրքով , և խունկեր , ու շատ ոսկի , և պատուական քարեր բեռցած ուղտերով . և Սողոմոնին քովը գնաց , ու բոլոր իր սրտին մէջը եղածին վրայով անոր հետ խօսեց ։
2 ցաւ ։ Եւ Սողոմոն անոր բոլոր հարցմունքները բացատրեց . ու բնաւ անանկ մէկ խօսք մը չկար , որ Սողոմոն չհասկընայ ու չբացատրէ անոր ։ 3 Եւ Սաբայի Թագուհին՝ Սողոմոնին իմաստութիւնը , ու անոր չինած տունը , Եւ անոր սեղանին կերակուրները , ու անոր ծառաներուն * բնակարանները , և սպասաւորներուն կայնուածքը , ու անոց հագուստները , և անոր մատուռանները , ու անոնց հագուստները , ու Տէրոջը տունը ելլելու սանդուխը տեսնելով , խելքը գլխէն գնաց . Եւ Թագաւորին ըսաւ . Քու վիճակիդ ու իմաստութեանդ վրայով իմ երկրիս մէջ լսած խօսքերս ճշմարիտ են եղեր . Բայց ես ան խօսքերուն չհաւատացի , մինչև որ անոնք եկայ , ու իմ աչքերովս տեսայ . և ահա քու իմաստութեանդ չափը կէսը ինծի չպատմուեցաւ . դուն գերազանց ես յաւ համբաւէդ՝ 7 որ ես լսեցի ։ Երանի՛ քու մարդիկներուդ՝ ու երանի՛ ասոնք քու ծառաներուդ՝ որոնք միշտ քու առջեւդ կայնելով քու իմաստութիւնդ կը 8 լսեն ։ Քու Եհովայ Աստուածդ օրհնեալ ըլլայ , որ քեզի հաւնեցաւ , ու քեզ իր աթոռին վրայ դրաւ , որ քու Տէր Աստուածդ համար Թագաւոր ըլլաս . քու Աստուածդ՝ Իսրայէլը սիրելուն համար՝ ու զանոնկայ յաւիտեան հաստատելու համար , քեզ անոնց վրայ Թագաւոր դրաւ , որ իրաւունք ու արդարութիւն 9 Թիւն ընես ։ Եւ Թագաւորին՝ հարիւր քսան տաղանդ ոսկի , ու խիստ շատ խունկեր , և պատուական քարեր տուաւ . ու Սաբայի Թագուհիին՝ Սողոմոն Թագաւորին տուած խունկերուն պէս չկար ։

Ա Կամ՝ ժառ. ղվը ։

Ա Գր • ը • 18 ։ է դ Թագ • ժ • 11 ։

10 Եւ Քիրամին ծառաները ու Սողոմոնին ծառաները՝ Ոփիրէն ոսկի կը բերէին , է ալմուկ փայտեր ու պատուական քարեր ալ 11 բերին ։ Եւ Թագաւորը ալմուկ փայտէն՝ Տէրոջը տանը ու Թագաւորական տանը աստիճաններ , ու երգեցողներուն համար՝ քնարներ ու տաւիղներ չինեց . և անոնց պէս՝ անկէ առաջ Ցուդայի երկրին մէջը չէր երեւցած ։
12 Ու Սողոմոն Թագաւորը Սաբայի Թագուհիին բոլոր ուզած ու խրնդրած բաները տուաւ , ան բաներէն՝ ի զատ՝ որ անիկայ Թագաւորին բերաւ . և անիկայ իր ծառաներուն հետ դարձաւ իր երկիրը գնաց ։
13 Ու մէկ տարուան մէջ Սողոմոնին եկած ոսկիին կշիռքը՝ վեց հարիւր վաթսունուվեց տաղանդ ոսկի էր , 14 Առուտուր ընողներուն , ու վաճառականներուն , և Արաբացւոց բոլոր Թագաւորներուն , ու երկրին նախարարներուն՝ Սողոմոնին բերած ոսկիէն ու արծաթէն՝ ի զատ ։
15 Եւ Սողոմոն Թագաւորը կռածոյ ոսկիէ երկու հարիւր վահան չինեց . ան մէկ վահանին համար վեց հարիւր սիկղ կռածոյ ոսկի գնաց ։
16 Կռածոյ ոսկիէ իրեք հարիւր ասպար ալ չինեց . ան մէկ ասպարին իրեք հարիւր սիկղ ոսկի գնաց . ու Թագաւորը Լիբանանի անտառին տունը դրաւ զանոնք ։
17 Եւ Թագաւորը փղոսկրէ մեծ աթոռ մը չինեց , ու զանիկայ մաքուր ոսկիով պատեց ։ 18 Աթոռը վեց աստիճան , ու ոսկիէ պատուանդան մը ունէր , որոնք աթոռին կից էին . և նստելու տեղը մէկ կողմէն ու մէկալ կողմէն յենարաններ ունէր , ու յենարաններուն քովը երկու առիւծներ կը կայնէին ։
19 Եւ հոն վեց աստիճաններուն վրայ՝ մէկ կողմէն ու մէկալ կողմէն տասներկու առիւծներ կը կայնէին . բնաւ մէկ Թագաւորութեան մէջ ասանկ բան մը չէ շինուած չէր ։
20 Ու Սողոմոն Թագաւորին բոլոր խմելիքի ամանները ոսկի էին . և Լիբանանի անտառին տունը բոլոր ամանները զուտ ոսկի էին . արծաթէ չկար . ինչ՝ որ անիկայ Սողոմոնին օրերը բանի մը տեղ չէր սեպուեր ։ 21 Քանզի Թագաւորին նաւ

ւերը փիրամին ծառաներուն հետ թարսիս կ'երթային . թարսիսի նաւերը իրեք տարին անգամ մը ոսկիով , արծաթով , փղոսկրով , կապիկներով ու սիրամարդներով բեռնաւորուած կու գային :

22 Եւ Սողոմոն թագաւորը հարբուտութեան ու իմաստութեան կողմանէ՝ երկրիս բոլոր թագաւորնե-

23 րէն մեծ եղաւ : Ու երկրի բոլոր թագաւորները կը փափաքէին Սողոմոնին երեսը դէմ ելլել , և անոր իմաստութիւնը լսելու , որն որ Աստուած անոր սրտին մէջը դրեր էր :

24 Ու անոնց ամէնը տարուէ տարի իրենց ընծաները կը բերէին , այսինքն՝ արծաթէ ամաններ , ոսկիէ ամաններ , հանդերձներ , զէնքեր , խունկեր , ձիեր ու ջորիներ :

25 Եւ Սողոմոն դ ձիերու ու կառքերու համար չորս հազար ախոռ ունէր , ու տասներկու հազար ձիաւոր , ու զանոնք կառքերու քաղաքներուն մէջը ու Երուսաղէմի մէջ՝ թագաւորին քովը տեղաւորեց :

26 Ու ինք գետէն մինչև Փղշտացւոց երկիրը՝ ու մինչև Եգիպտոսի սահմանը՝ Ղրոլոր թագաւորներուն վրայ

27 կ'իշխէր : Ու թագաւորը Երուսաղէմի մէջ՝ արծաթը քարերու պէս հասարակ ըրաւ , ու եղևնափայտ՝ շատութենէն՝ դաշտի մէջ եղող մոլթզենիներուն պէս

28 ըրաւ : Եւ Սողոմոնին համար՝ Եգիպտոսէն ու ամէն երկիրներէն ձիեր կը հանէին :

29 Եւ Սողոմոնին առաջին ու վերջին պատմութեանը մնացորդը՝ Նաթան մարգարէին գրքին մէջը , ու Աքիայ Սիլովնացի մարգարէութեանը մէջ , և Ադդով տեսանողին՝ Նաբատեան Երոբովամին վրայով երազ տեսիլքներուն մէջը

30 գրուած են : Ու Սողոմոն բոլոր Իսրայէլին վրայ՝ Երուսաղէմի մէջ քառասուն տարի թագաւորութիւն

31 ըրաւ : Եւ Սողոմոն իր հայրերուն հետ քնացաւ , ու զանիկայ իր հօրը Դաւիթին քաղաքին մէջը թաղեցին . և անոր տեղը՝ անոր որդին Ռոբովամ թագաւոր եղաւ :

ԳԼ . Ա

1 Իսրայէլացիք Ռոբովամ թագաւոր ընելու համար Սիւքեմի մէջ գոգովելով՝ Երոբովամին միջոցով անկէ կը խնդրեն որ իրենց վրայ գրուած լուծը թեթևցնէ : 6 Ռոբովամ երեքուն խրատը մերժելով՝ իր աննգամից պատանիներուն տուած խորհուրդին համեմատ՝ խստութեամբ կը պատասխանէ անոնց : 16 Տասը ցեղերը կ'ապստամբին ու Ադորամ կը մեռցնեն . ասոր վրայ Ռոբովամ կը փախչի :

1 Ու Ռոբովամ Սիւքեմ գնաց . վասն զի բոլոր Իսրայէլը զանիկայ թագաւոր ընելու համար Սիւքեմ էր եկած :

2 Եւ երբ Ներոբովամ՝ որ Սողոմոնի դէմ դարձեր էր՝ Եգիպտոս կը բնակէր , ասիկա լսելով

3 Եգիպտոսէն դարձաւ : Եւ մարդ խրկելով՝ զանիկայ կանչեցին . ու Ներոբովամ և բոլոր Իսրայէլը եկան , ու Ռոբովամին հետ խօսեցան

4 ու ըսին . Քու հայրդ մեր վրայ ծանր լուծ մը դրաւ . ու հիմա քու հօրդ խիստ ծառայութիւնը , ու մեր վրայ դրած ծանր լուծը թեթևցուր , ու քեզի ծառայութիւն

5 ընենք : Եւ անիկայ ըսաւ անոնց . Երեք օրէն նորը գնացէք . ու ժողովուրդը գնաց :

6 Եւ Ռոբովամ թագաւորը խորհուրդ հարցուց ան ծերերուն՝ որ իր հօրը Սողոմոնին առջևը կը կայնէին երբոր անիկայ ողջ էր , ու ըսաւ . Դուք ինծի՝ ինչ խորհուրդ կու տաք , որ աս ժողովուրդին պա-

7 տասխան տամ : Եւ անոր խօսեցան ու ըսին . Թէ որ աս ժողովուրդին հետ քաղցրութեամբ վարուիս , ու անոնց հաճելի ըլլաս , ու անոնց բարի խօսքեր զրուցես , ան ատենը անոնք միշտ քեզի ծառայ կ'ըլլան :

8 Բայց անիկա ծերերուն իրեն տուած խորհուրդը մերժեց , ու իր առջևը կայնող՝ իր հետը մեծցած երիտասարդներուն խորհուրդ հար-

9 ցուց . Եւ անոնց ըսաւ . Դուք ինչ խորհուրդ կու տաք , որ աս ժողովուրդին պատասխան տամ . քանզի անոնք ինծի խօսեցան , ու ըսին . Քու հօրդ մեր վրայ դրած լուծը

10 թեթևցուր : Ու անոր հետ մեծցած երիտասարդները անոր խօսեցան ու ըսին . Քու հայրդ մեր լուծը ծանրացուց , ու դուն մեր վրայէն թեթևցուր՝ ըսող ժողովուրդին այսպէս խօսիս , ու անոնց այսպէս ըսես . Իմ պզտիկ մատս՝

11 իմ հօրս մէջքէն հաստ է . Եւ հիմա իմ հայրս ձեր վրայ ծանր լուծ դրեր է , բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացնեմ . իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է , բայց ես չէչ կարիճներով պիտի խրատեմ :

12 Եւ Ներոբովամ ու բոլոր ժողովուրդը երրորդ օրը Ռոբովամին եկան , ինչպես որ թագաւորը ըսեր էր թէ՝ երրորդ օրը ինծի դարձէք :

13 Ու թագաւորը անոնց խստութեամբ պատասխան տուաւ . և Ռոբովամ թագաւորը ծերերուն

14 խորհուրդը մերժելով , երիտասարդներուն խորհուրդին պէս անոնց հետ խօսեցաւ , ու ըսաւ . Իմ հայրս ձեր լուծը ծանրացուցեր է , բայց ես զանիկայ աւելի պիտի

Ն·ք·դ· ԻՐԴ 992

Ե գ թագ· ժ· 26 ; Գ Լ· ա· 14 ;

Ե Ծն· ԺԵ· 18 ; Սաղ· ՀԲ· 8 ;

Ը գ թագ· դ· 21 ;

Ե գ թագ· ժ· 27 ; Գ Լ· ա· 15 ;

Ը գ թագ· ժ· 28 ; Գ Լ· ա· 16 ;

Ի գ թագ· ժա· 41 ;

Ի գ թագ· ժա· 29 ;

Ի Գ Լ· ԺԲ· 15 ; ԺԳ· 22 ;

Լ գ թագ· ժա· 42, 43 ;

975

Ա գ թագ· ԺԲ· 1, ՃԱ ;

Ն·ք·ԶԲ ԻՀԴ 975

Բ գ թագ· ժա· 40 ;

Ն · ք · ԶԲ · Էր 975

ծանրացընեմ . իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է , բայց ես յիշ կարիճներով պիտ Էրս ։

15 Թէ՛ ։ Եւ Թագաւորը ժողովուրդին Խօսէը մեկ չըրաւ . Եվան զի աս բանը Աստուծմէ եղաւ , որ Տէրը Սիլօնացի Աքիային ձեռքովը՝ Նաբատեան Ցերոբովամին ըսած խօսքը հաստատէ ։

16 Ու երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ , որ Թագաւորը իրենց մեկ չըրաւ , ժողովուրդն ալ Թագաւորին պատասխան տուին ու ըսին . Մենք Դաւիթին քովը ի՞նչ բաժին ունինք . ու Յեսսէի որդւոյն քովը ժառանգութիւն չունինք . ով Իսրայէլ՝ Թող ամէն մարդ իր վրանը գառնայ . ով Դաւիթ՝ հիմա դուն քու տունդ հոգա . ու բոլոր Իսրայէլը իրենց վրանները գացին ։

17 Բայց Ցուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի որդւոցը վրայ՝

18 Ռոբովամ Թագաւոր եղաւ ։ Եւ Ռոբովամ Թագաւորը երբոր հարկերուն վրայ եղող Ադորամը խրկեց , Իսրայէլի որդիքը զանիկայ քարերով քարկոծեցին , ու մեռաւ ։ Եւ Ռոբովամ Թագաւորը արտորալով կառքը հեծաւ , որ

Է գ Թագ · ժբ · 19 ։

19 Երուսաղէմ փախչի ։ Ե՚Այսպէս Իսրայէլը Դաւիթի տունէն ապըստամբեցաւ մինչև աս օրս ։

ԳԼ · ԺԱ

1 Ռոբովամ զօրք կը ժողվէ Իսրայէլը հնազանդեցընելու համար , բայց Սեմայիայէն կ՚արգիլուի ։ 5 Իր Թագաւորութիւնը կը զօրացընէ պարիսպներ չինելով ու պաշարներ ժողվելով ։ 13 Քահանաները ու Ղեւտացիները , և անոնք որ Աստուծմէ կը վախնային՝ Ցերոբովամին մեծ ուժ կ՚երթան Ցուդայի Թագաւորութիւնը կը զօրացընեն ։ 18 Ռոբովամին կնիկները ու որդիները ։

Ա գ Թագ · ժբ · 21 , ա ։

1 Ու Ռոբովամ Երուսաղէմ եկաւ , ու Ցուդայի ու Բենիամինի տունէն հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմիներ ժողվեց , որ Իսրայէլի հետ պատերազմ ընեն , ու Թագաւորութիւնը Ռոբովամին դարձընեն ։

Բ Գլ · ժբ · 15 ։

2 Բայց Եհովա Աստուծոյ մարդուն Սեմայիային՝ Տէ-

3 րոջը խօսքը եղաւ՝ ըսելով . Սողոմոնի որդւոյն Ցուդայի Ռոբովամ Թագաւորին , ու Ցուդայի ու Բենիամինի մէջ եղող բոլոր Իսրայէ-

4 լացիներուն խօսիս , ու ըսես . Տէրը այսպէս կ՚ըսէ . Մի ելլէք , ու ձեր եղբայրներուն հետ մի՛ պատերազմիք . ամէն մարդ Թող իր տունը դառնայ . վասն զի աս բանը ինծմէ եղաւ ։ Եւ Տէրոջը խօսքը մեկ ըրին , ու Ցերոբովամին վրայ երթալէն ետ կեցան ։

5 Եւ Ռոբովամ Երուսաղէմ բնակեցաւ . ու Ցուդայի մէջ պարըս-

6 պաւոր քաղաքներ չինեց ։ Բեթ-

7 լէհէմը , Ետամը , Թեկուէն , Բեթ-

8 սուրը , Սոքովը , Ադուղոմը , Գէթը ,

9 Մարեսան , Զիփը , Ադորայիմը ,

10 Լաքիսը , Ազեկան , Սարաան , Այե-

ղոնը ու Քերրոնը չինեց , որոնք Ցուդայի ու Բենիամինի մէջ պարըս-

11 պաւոր քաղաքներ էին ։ Եւ պարիսպները ամրացուց , ու անոնց մէջ զօրապետներ , և կերակուրի , ու եղի , ու դինիի շտեմարաններ ,

12 Ու ամէն մէկ քաղաքին մէջ վահաններ ու նիզակներ դրաւ . և զանոնք խիստ շատ ամրացուց . ու Ցուդան ու Բենիամինը անոր հպատակ էին ։

974

13 Եւ բոլոր Իսրայէլի մէջ եղող քահանաները ու Ղեւտացիները՝ իրենց բոլոր սահմաններէն անոր քո-

14 վը ժողվուեցան . (Քանզի Ղեւտացիք էիրենց արուարձանները ու կալուածքները Թողուցին , և Ցուդայի ու Երուսաղէմ գացին . վասն զի Ցերոբովամ ու անոր որդիքը՝ զանոնք Ցերոբովամ քահանայութենէն մերժեցին . Եւ անիկայ բարձր տեղերուն համար , ու դիւացոց համար , ու իր չինած Ղորթերուն համար էիրեն քուրմեր

16 գրաւ ։) Ե՚Եւ անոնց ետևէն՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն՝ Իսրայէլի Տէր Աստուածը *սրտանց փնտռողները" իրենց հայրերուն Տէր Աստուծոյն զոհ ընելու համար Երու-

17 սաղէմ կ՚երթային ։ Ու Ցուդայի Թագաւորութիւնը զօրացուցին , և Սողոմոնին որդին Ռոբովամը իրեք տարուան մէջ ուժ ժողվուցին . քանզի իրեք տարի Դաւիթին ու Սողոմոնին ճամբովը քալեցին ։

18 Եւ Ռոբովամ՝ Դաւիթի որդւոյն Ցերիմոթին աղջիկը Մայէլէթը իրեն կնիկ առաւ . նաև Ցեսսեի որդւոյն եղբարին աղջիկը Աբիքէլը .

19 Ու անիկայ որդիներ ծնաւ անոր . Ցեուսը , Սամարիան ու Զաամը ։

20 Եւ անկէ ետքը Աբիսողոմին աղջիկը Մաաքան առաւ , որ անոր ծնաւ Աբիան , Եթթին , Զիզան ու Սաա-

21 զոմիթը ։ Եւ Ռոբովամ՝ Աբիսողոմին աղջիկը Մաաքան իր բոլոր կնիկներէն ու հարճերէն աւելի կը սիրէր . (վասն զի անիկայ տասնուութ կնիկ՝ ու վաթսուն հարճ առեր էր . և քսանուութը տղայ ու

22 վաթսուն աղջիկ ծնաւ .) Եւ Ռոբովամ՝ Մաաքայի որդին Աբիան գլուխ դրաւ , ա՛յնպէս՝ իր եղբայրներուն վրայ իշխան . քանզի զանիկայ

23 Թագաւոր ընելու վրայ էր ։ Ու խելացութիւն ընելով՝ իր բոլոր տղաքները՝ բոլոր Ցուդայի ու Բենիամինի գաւառներուն մէջ՝ բոլոր

Ն · ք · ԶԲ · Էր 975

Բ Տէս Օր · իա · 15 , 16 , 17 ։

պարսպաւոր քաղաքներուն մէջ *տեղաւորեց, և անոնց առատապրուստ կու տար. ու շատ կնիկներ փնտռեց։

ԳԼ. ԺԲ

1 Ռոբովամ՝ Ցերը Թող տալուն համար՝ Սիսաւկին մէջտղովը կը պատժուի։ 5 Ռոբովամ ու իշխանները՝ Սեմայիային քարոզութեամբը դարձի գալով, կործանումէ ազատ կը մնան, բայց կը կողոպտուին։ 13 Ռոբովամին թագաւորութեանը օրերը ու մարը։

1 Ռ Երբոր Ռոբովամին թագաւորութիւնը հաստատուեցաւ, ու ինքը զօրացաւ, Ի Ցերոջը օրէնքը Թողուց. ու անոր հետ բոլոր Իսրայէլը ալ։

2 Եւ Ռոբովամ թագաւորին հինգերորդ տարին՝ Եգիպտոսի Սիսակ թագաւորը Երուսաղեմի վրայ ելաւ. (քանզի Ցերոջը դէմ ապրեցան։) 3 տասներկու հարիւր կառքով, ու վաթսուն հազար ձիաւորով եկաւ. ու անոր հետ Եգիպտոսէն եկած ժողովուրդը անթիւ էր, այսինքն Լիբիացիք, Սովկիացիք, ու Ե- 4 թովպացիք. Եւ Ցուդային պարսպաւոր քաղաքները առաւ, ու 5 մինչև Երուսաղէմ եկաւ։ Եւ Սեմայիա մարգարէն եկաւ Ռոբովամին ու Ցուդայի իշխաններուն՝ որոնք Սիսակին երեսէն Երուսաղէմ ժողվուեր էին, ու անոնց ըսաւ. Ցերը այսպէս կ'ըսէ. Դուք ինծ թողուցիք, ու ես ալ ձեզ Սիսակին ձեռքը 6 կը թողում։ Եւ Իսրայէլի իշխանները ու թագաւորը ինքնարհեցան՝ ու ըսին. Ցերը արդար է։ 7 Ու երբոր Ցերը անոնց խոնարհիլը տեսաւ, Ի Ցերոջը խօսքը Սեմայիային եղաւ՝ ըսելով. Անոնք խոնարհեցան, պիտի չկորսընցնեմ զանոնք. հապա անոնց քիչ մը ազատութիւն պիտի տամ. ու իմ բարկութիւնս Սիսակին ձեռքովը Երուսաղեմի վրայ պիտի չթափի. 8 Սակայն ծանր ծառաներ պիտի ըլլան, որ Իմ ծառայութեանս՝ ու երկրի թագաւորներուն ծառայութեանը գ-ըբ-ր-ն-ե գիտնան։ 9 Նաև Ելու Եգիպտոսի Սիսակ թագաւորը Երուսաղեմի վրայ ելաւ, և Ցերոջը տանը գանձերը՝ ու թագաւորին տանը գանձերը առաւ. ամէնն ալ առաւ. Սողոմոնին Շինած 10 ոսկիէ ասպարներն ալ առաւ։ Եւ Ռոբովամ թագաւորը անոնց տեղը պղնձէ ասպարներ շինեց, ու զանոնք՝ թագաւորական տանը դուռը պահպանութիւն ընող Ծ սուրհանդակաց ոստիկաններուն ձեռքը 11 յանձնեց։ Ու երբոր թագաւորը Ցերոջը տունը կ'երթար, սուրհանդակները կու գային զանոնք կու կրէին, ու Ե-ե զանոնք սուրհանդակներուն խուցը կը դարձընէին։ 12 Ուստի անոր խոնարհելուն համար Ցերոջը բարկութիւնը անկէ դարձաւ, ու ը-Ն-ի-ա բոլորովին չկորսընցուց. Նաև Ցուդայի մէջ աղէկ բաներ կային։

13 Եւ Ռոբովամ թագաւորը Երուսաղեմի մէջ զօրացաւ, ու թագաւորութիւն ըրաւ. ու հերթով Ռոբովամ թագաւորեց, քառասունմէկ տարեկան էր, ու տասնեւեօթը տարի թագաւորութիւն ըրաւ Երուսաղեմի մէջ, այսինքն այն քաղաքին մէջ՝ որն որ Ցերը Իսրայէլի ամէն ցեղերէն ընտրեց՝ իր անունը հոն դնելու համար։ ու անոր մայրը Ամմոնացի էր Նաամա անունով։ 14 Եւ անիկայ չարութիւն ըրաւ. քանզի իր սիրտը չուղղեց որ Ցերը 15 փնտռէ։ Ու Ռոբովամին առաջինն ու վերջին գործերը՝ ահա Սեմայիա մարգարէին գրքին մէջ՝ Ադոզովի տեսանողին ազգաբանութեանը մէջ գրուած են։ Եւ Ռոբովամին ու Ցերոբովամին մէջտեղը 16 միշտ պատերազմ կար։ Ու Ռոբովամ իր հայրերուն հետ քնացաւ, և Դաւիթի քաղաքին մէջը թաղուեցաւ. ու անոր տեղը՝ անոր որդին Աբիան թագաւոր եղաւ։

ԳԼ. ԺԳ

1 Աբիա՝ Ռոբովամին տեղը անցնելով, Ցերոբովամին դէմ պատերազմ կ'ընէ. 4 իր փաստին իրաւացի ըլլալը կը յայտնէ. 13 ու Ասատեայ ապահովելով՝ Ցերոբովամը կը յաղթէ. 21 Աբիային կիներն ու որդիները։

1 Ցերոբովամին թագաւորին տասնուերեքերորդ տարին՝ Ցուդայի 2 վրայ Աբիան թագաւորեց։ Անիկայ Երուսաղեմի մէջ երեք տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ի Միքայիա էր, ա- Գաբաացի Ուրիելին աղջիկն էր. և Աբիային ու Ցերոբովամին մէջ 3 տեղը պատերազմ կար։ Եւ Աբիա զօրաւոր ու պատերազմող զօրքերով՝ չորս հարիւր հազար ընտիր մարդիկներով պատերազմելու պատրաստուեցաւ. Ցերոբովամն ալ անոր դիմացը ելաւ՝ ութը հարիւր հազար ընտիր՝ զօրաւոր ու պատերազմող մարդիկներով։

4 Եւ Աբիա՝ Եփրեմի լեռնակողմը Սեմարիմ լեռանը վրայ կայնեցաւ՝ ու ըսաւ. Ով Ցերոբովամ ու բոլոր Իսրայէլ, ինծի մտիկ ըրէք. 5 Դուք գիտնալու չէք որ Իսրայէլը Տէր Աստուածը Ի Իսրայէլի վրայ թագաւորելը՝ յաւիտեան Դաւիթին ու անոր որդւոցը տուած է

ՆԴԳ 974
* ԵԲՐ ՅԸՐՈՒԵՑ,
972
ՐԳԼ ԺԱ 17։
Բ Գ ԹԱԳ ԺԴ 22, 23, 24։
Է Գ ԹԱԳ ԺԴ 24, 25։
971
ՔԳԼ ԺԱ 3։
Ի ՍՈՎԿԻԱՑԻՔ, Ի ՍՈՒԿԻԱՑԻՔ, ՈՒ Ե-
Ի ԿՈՒ՝ ՏԸՐՈՂՂՈՒԱԾՔԸ,
Ի ԳԼ ԺԱ 2։
ՂԳԼ ԺԵ 2։
Ի ՁԱԿ Գ 10։
Ը ԵՒ Բ 27։
Ի Գ ԹԱԳ ԻԱ 28, 29։
Ի ՑԵՒ ՆԸ 18։
Ի ՕՐ 47, 48։
Լ Գ ԹԱԳ ԺԴ 25, 26։
Խ Գ ԹԱԳ ԺԴ 16, 17։ ԳԼ ԹԱ 15, 16։
Ի ՑԵՒ Բ Գ ԹԱԳ Ը 18։
ՆԴԳ 971
Ի ՑԵՒ ՅՆ ԺԴ 24։ Գ ԹԱԳ ԺԴ 13։ ԳԼ ԺԹ 3։
Հ Գ ԹԱԳ ԺԳ 21։
Ն ԳԼ Ը 6։
ՂԳԼ Թ 29, Գ ԹԱԳ ԺԲ 22։
Ճ Գ ԹԱԳ ԺԲ 30։
Ո Գ ԹԱԳ ԺԲ 31։
958
Ա Գ ԹԱԳ ԺԵ 1, ԱՃ։
Բ ՑԵՒ ԳԼ ԺԱ 20։
957
Ե ՑԵՒ ԺԳ 22։
Ր ԲԹԱԳ Ե 12, 13, 16։

6 ի աղի ուխտով ։ Եւ Դաւիթի որդւոյն Սողոմոնին ծառան Նաթանեան Ցերորովամը ոտք ելաւ , ու
7 ՚ի իր տիրոջմէն ապստամբեցաւ ։ Եւ անոր քովը ի դատարկակեաց ու անօրէն մարդիկներ ժողվուեցան , ու Սողոմոնին որդւոյն Ռոբովամին դէմ կեցան . քանզի Ռոբովամ մանկահասակ ու փափկասիրտ ըլ-
8 լով՝ անոնց դէմ չդրաւ ։ Եւ հիմա դուք չատուր ըլլալնուդ համար , ու Ցերոբովամին Հաճի չենած աստուածները՝ ան ոսկիէ որթերը ձեր քովը ըլլալուն համար , Դաւիթին որդւոցը ձեռքը եղող Տէրոջը թագաւորութեանը դէմ կենալ կը մի-
9 տածէք ։ Ի միթէ դուք Տէրոջը քահանաները՝ Ահարոնի որդիները՝ ու Ղեւտացիները դուրս չըրի՞ք , և ասիկա երկիրներուն ժողովրդոցը պէս ձեզի քուրմեր չըրի՞ք ան բոլոր մարդիներէն , ո որոնք մկ զուարա-
կով ու եօթը խոյերով կու գային իրենք նուիրելու , որ չաստուած-
10 ներու քուրմ ըլլան ։ Բայց մեր Աստուածը Եհովան է , ու մենք զանիկայ չթողուցինք . և Տէրոջը ծառայութիւն ընող քահանաները Ահարոնի որդիքն են . ու Ղեւտացիները իրենց պաշտօնին վրայ են .
11 Եւ ամէն առտու ու ամէն իրիկուն Տէրոջը ողջակէզներ կը մատուցանեն , ու անուշահոտ խունկ կը ծխեն , ու մաքուր սեղանին վրայ առա-
ջաւորութեան հացերը կը շարեն , և ամէն իրիկուն վառելու համար՝ ոսկիէ աշտանակը ու անոր ճրագները կը պատրաստեն . քանզի մենք մեր Տէր Աստուծոյն պահպանութիւնը կը պահենք . բայց դուք
12 զանիկայ մերժեցիք ։ Եւ ահա Աստուած ինքը մեր հետն է՝ գլխաւորը ըլլալու . Նաև անոր քահանաները ազդարարութեան փողերով , որ ձեզի դէմ ՚ի՛ջեղծնեն . ո՛վ Իսրայէլի որդիք , ՙձեր հայրերուն Տէր Աստուծոյն հետ մի՛ պատերազմիք . քանզի դուք յաջողութիւն պիտի չգտնէք ։
13 Բայց Ցերոբովամ դարանակալները դարձուց , որ անոնց ետեւէն գան . ու Իսրայէլացիք Յուդայականց առջեւն էին , ու դարանակալները
14 անոնց ետեւն էին ։ Եւ Յուդայեանք դարձան նայեցան որ պատերազմը իրենց առջեւէն ու ետեւէն էր , ու Տէրոջը աղաղակեցին , և քահանաները փողերը ՚ի՛ջեցուցին .
15 Ու Յուդայի մարդիկը աղաղակ վերցուցին . ու երբոր Յուդայի մարդիկը աղաղակեցին , Աստուած՝ ՚Ցերոբովամը ու բոլոր Իսրայէլը Աբիային ու Յուդային առջեւը
16 զարկաւ ։ Եւ Իսրայէլի որդիքը Յուդային առջեւէն փախան . ու Աստուած անոնց ձեռքը մատնեց
17 զանոնք ։ Եւ Աբիա ու իր զօրքը մեծ կոտորած ըրին անոնց մէջը . ու Իսրայէլէն հինգ հարիւր հազար ընտիր մարդիկ վիրաւորուած ին-
18 կան ։ Ան ատենը Իսրայէլի որդիքը նուաճեցան , ու Յուդայի որդիքը ւիրենց հայրերուն Տէր Աստուծոյն ապաւինելնուն համար յաջ գտան ։
19 Եւ Աբիա Ցերոբովամը հալածեց , ու անկէ քաղաքներ առաւ , այսինքն Բեթէլը ու անոր գեղերը , և Եսեանան ու անոր գեղերը , ու
20 Եփրոնը ու անոր գեղերը ։ Եւ Ցերոբովամ՝ Աբիային օրերուն մէջը ուժմէն ալ չկրցաւ յաջ գտնել . ու Տէրը ՚զանիկայ զարկաւ , ու ՚մեռաւ ։
21 Եւ Աբիա ուժովցաւ , ու իրէն տասնուչորս կնիկ առաւ . և քսանուերկու տղայ ու տասնուվեց աղ-
22 ջկ ծնաւ ։ Ու Աբիային մնացորդ պատմութիւնը , և անոր գործքերը ու խօսքերը՝ ՚Նդդով մարգարէին յիշատակարանին մէջը գրուած է ։

ԳԼ . ՃԴ

1 Ասա՝ Աբիայի տեղ յաջորդելով՝ կռապաշտութիւնը կը վերցնէ . 6 ու խաղաղութիւն ունենալով՝ իր թագաւորութիւնը կը զօրացնէ բերդերով ու զօրքերով ։ 9 Ասա՝ Աստուծոյ աղաղակելով՝ Զարայի կը յաղթէ ։ ու Եհովայեցիներէն խիստ շատ աւար կ՚առնէ ։

1 Նաև Աբիա իր հայրերուն հետ քնացաւ , ու զանիկայ Դաւիթի քաղաքին մէջը թաղեցին . և անոր տեղը՝ անոր որդին Ասա թագաւոր եղաւ . ասոր օրերը՝ երկիրը տասը
2 տարի հանգստութիւն գտաւ ։ Ու Ասա իր Տէր Աստուծոյն առջեւը
3 բարի և ուղիղ եղածը ըրաւ . Ու օտար աստուածներուն սեղանները , ու բարձր տեղերը վերցուց , և քարձանները կոտրտեց , ու Աստարովթի կուռքերը կտոր կտոր ըրաւ .
4 Եւ Յուդային հրամայեց որ իրենց հայրերուն Տէր Աստուածը փընտռէն , ու օրէնքը ու պատուիրանք-
5 ները կատարեն ։ Եւ Յուդային ամէն քաղաքներէն բարձր տեղուանքը , ու արեգական կուռքերը վերցուց . ու իր առջեւը թագաւորու-
6 թիւնը հանգիստ էր ։ Եւ անիկայ Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ շինեց . քանզի ան տարիներուն մէջը երկիրը հանգստութիւն կը վայելէր , ու անոր հետ պատերազմ ընող չկար . վասն զի Տէրը անոր
7 հանգստութիւն տուաւ ։ Եւ Յուդային ըսաւ . Ըս երկիրը քանի որ մեր *իշխանութեանը տակն է՝ , աս քաղաքները շինենք , ու զանոնք

Ն . ք . ՂՓ . 957
Ի Թաւ . ժը . 19 ։
Ղ գ Թագ . ժա . 26 ։ ժբ . 20 ։
Ի Դաս . թ . 4 ։
Ը գ Թագ . ժբ . 28 ։ ժդ . 9 ։ Ովս . ը . 6 ։
Բ Գլ . ժա . 14 ։ 15 ։
Ե Եւ . ԻԹ . 35 ։
Ի Ցես Եւ . ԻԹ . 1 ։ Ղեւ . ը . 2 ։
Ւ Գլ . բ ։ 4 ։
Ի Ղե . իդ . 6 ։ Թեւ . իե . 20 , 21 ։ Ղե . իդ . 2 , 3 ։
Ւ Թաւ . ժ . 8 ։
Հ Գոր . ե . 39 ։
Ն . ք . ՂՓ . 957
Ա Մն . ե . 20 ։ Սաղ . իբ . 5 ։
Ը գ Թագ . ժբ . 28 ։ ժդ . 9 ։ Ովս . ը . 6 ։
Բ Գլ . ժա . 14 ։ 15 ։
Ե Եւ . ԻԹ . 35 ։
Ի Ցես Եւ . ԻԹ . 1 ։ Ղեւ . ը . 2 ։
Ւ Գլ . բ ։ 4 ։
Ի Ղե . իդ . 6 ։ Թեւ . իե . 20 , 21 ։ Ղե . իդ . 2 , 3 ։
Ւ Թաւ . ժ . 8 ։
Հ Գոր . ե . 39 ։
Ա Ցես Գ Թագ . ժե . 14 ։ Գլ . ժե . 17 ։
Ի Եւ . ւդ . 18 ։
941
Ղ գ Թագ . ժա . 7 ։
Ն . ք . ՂՓ . 957
955
Ա գ Թագ . ժե . Տ , ՃԱ ։
Ռբ 951
Բ Ցես Գ Թագ . ժե . 14 ։ Գլ . ժե . 17 ։
* Եբր . առջեւն է ։

պարիսպներով՝ աշտարակներով՝ դռներով ու նիգերով չրջապատենք. քանզի մենք մեր Տէր Աստուածը փնտռեցինք, ա փնտռէը նուա համար՝ ամէն կողմանէ մեզի հանգստութիւն տուաւ։ Եւ շինեցին, ու յաջողութիւն
8 գտան։ Եւ Աա՝ Ցուդային վահան ու նիզակ կրող իրեք հարիւր հազար զօրք, ու Բենիամինէն՝ ասպար կրող ու աղեղ քաշող երկու հարիւր ութսուն հազար զօրք ունէր. ասոնք ամէնը զօրաւոր կըտրիճներ էին։
9 Եւ Եթէովպայի Զարան հազար անգամ՝ հազար զօրքով ու իրեք հարիւր կառքով անոնց վրայ ելաւ,
10 ու մինչև Մարեսա եկաւ։ Եւ Ասա անոր դիմացը ելաւ. ու Մարեսայի Սեփաթա ձորին մէջ պատերազմի
11 շարուեցան։ Եւ Ասա է՛ր Տէր Աստուծոյն աղաղակեց, ու ըսաւ. Ո՛վ Տէր՝ ԷԶրու առջեւդ տարբերութիւն մը չկայ թէ շատով և թէ քիչով օգնութիւն ընելու մէջ. մեզի օգնութիւն ըրէ՝ ով Տէր Աստուած մեր, որովհետև քեզի ապաւինեցանք, ու Քաս բազմութեանս վրայ քու անունովդ եկանք. ով Տէր, մեր Աստուածը դուն ես. մի՛ թողուր որ մարդը քեզի դէմ
12 զորանայ։ Եւ Տէրը Եթէովպացիները Ասային ու Ցուդային առջեւը զարկաւ. ու Եթէովպացիք
13 փախան։ Եւ Ասա ու անոր հետ եղող ժողովուրդը՝ զանոնք մինչև Էգերարա հալածեցին. ու Եթէովպացիք ինկան, և անոնց վրայ կենդանութիւն չմնաց. քանզի Տէրոջը առջեւը ու անոր բանակին առջեւը խորտակեցան. ու խիստ շատ ա-
14 ւար առին։ Եւ Գերարային բոլորտիքը եղող ամէն քաղաքները զարկին. քանզի Եանոնց վրայ Տէրոջը վախը ինկաւ. ու ամէն քաղաքները կողոպտեցին. վասն զի
15 անոնց մէջը շատ աւար կար։ Եւ հօտերուն վրաններն ալ զարկին, ու խիստ շատ ոչխար և ուղտ առին, ու Երուսաղէմ դարձան։

Գ Լ · Ա Ե

1 Ասա՝ Ցուդային հետ ու Իսրայէլէն պանդխտ եղողներուն հետ Ազարիա մարգարէին խօսքերէն քաջալերուելով՝ Աստուծոյ հետ հանդիսաւոր ուխտ մը կ'ընէ · 16 իր մայրը Մասքան տիկնութենէ կը հանէ՝ անոր կապաշտութեանը համար · 18 ու նուիրուած բաները Աստուծոյ տունը կը տանի, ու երկար ժամանակ խաղաղութիւն կը վայելէ ։

1 ‖ Ովդեդի որդւոյն Ազարիային վրայ՝ Աստուծոյ Հոգին եկաւ.
2 Եւ Ասային առջեւը ելլելով՝ ըսաւ անոր. Ո՛վ Ասա, ու բոլոր Ցու-
դա ու Բենիամին, լսեցէք ինծի մտիկ ըրէք. Տէրը ձեզի հետ կ'ըլլայ, քանի որ դուք անոր հետ էք. ու եթէ որ զանիկայ փնտռէք, զանիկայ կը գտնէք. բայց եթէ որ զանիկայ լքողուք, անիկայ ալ ձեզ պիտի
3 թողու։ Եւ Իսրայէլը երկար ժամանակ առանց ճշմարիտ Աստուծոյ, առանց ուսուցիչ քահանայի, ու առանց օրէնքի մնացեր
4 էր. Բայց երբոր նեղութեանը մէջ Իսրայէլի Տէր Աստուծոյն դարձաւ, ու զանիկայ փնտռելով՝ գըտաւ։ Եւ ան աատենները ելլողին
5 ու մտնողին ապահովութիւն չկար. քանզի երկիրներուն բոլոր բնակչացը մէջ շատ խռովութիւններ
6 կար. Եւ ազգ ազգի հետ, ու քաղաք քաղաքի հետ կը զարնուէր. ինչու որ Աստուած ամէն նեղութիւններով զարհուրեցուց
7 զանոնք։ Եւ հիմա դուք զօրացէք, ու ձեռքերնիդ չթուլնայ. վասն զի ձեր գործքին վարձքը կայ։
8 Եւ Ասա աա խօսքերը՝ ու ‡Ովդեդ մարգարէին մարգարէութիւնը լսելով՝ զօրացաւ, և Ցուդայի ու Բենիամինի բոլոր երկրէն, ու Եփրեմ լեռնէն իր առած քաղաքներէն պղծութիւնները վերցուց, ու Տէրոջը սեղանը որ Տէրոջը սրահին առջեւը եղող
9 Տէրոջը սեղանը նորոգեց. Եւ բոլոր Ցուդան ու Բենիամինը, ու Եփրեմէն և Մանասէէն ու Շմաւոնէն անոնց քովը գտնուած պանդուխտները ժողվեց. քանզի Իսրայէլէն շատ մարդիկ անոր կողմը անցան, տեսնելով որ անոր Տէր Աստուածը
10 անոր հետն է։ Եւ անոնք Ասային թագաւորութեանը տասնուհինգերորդ տարւոյն երրորդ ամիսը Ե-
11 րուսաղէմ մէջ ժողվուեցան. Նու ան օրը իրենց Եբերած աւարէն Տէրոջը զոհ ըրին. եօթը հարիւր արջառ ու եօթը հազար ոչխար.
12 Եւ Եուխտ ըրին որ իրենց հայրերուն Տէր Աստուածը՝ բոլոր սրտով
39 Ինչու որ չէր յիշեր Թէ անոնք մարմին են . Հովի մը պէս որ կ՚երթայ ու ետ չդառնար .

40 Քանի անգամ Անիկայ սրդողցուցին անապատին մէջ , ու բարկացուցին անիկայ անջուր տեղին մէջ .

41 Եւ դարձան Աստուած փորձեցին , ու Իսրայէլին Սուրբը նեղացուցին .

42 Չյիշեցին անոր ձեռքը , այն օրը որ ազրէնն Թշնամիէն փրկեց ,

43 Երբ Թէ ինչպէս Իր նշանները բերաւ Եգիպտոսին մէջ , ու իր հրաշքները Տայանիսի դաշտին մէջ .

44 Ու արիւն դարձուց անոնց գետերը , և անոնց առուները , որ չըկրցան խմել .

45 Շանաճանճներ խրկեց անոնց վրայ , որ կերան զանոնք , ու Գորտեր՝ որ ապականեցին զանոնք .

46 Ու հանոնց բերքը Թրթուրին տուաւ , և անոնց վաստակը մարխին .

47 Անոնց որթերը փճացուց կարկուտով , ու անոնց ժայռաթզենիները խաշոր կարկուտով .

48 Եւ Հանոնց անասունները կարկուտին մատնեց , ու անոնց հօտերը կայծակին :

49 Իր սաստիկ բարկութիւնը խըրկեց անոնց վրայ , սրտմտութիւն , ու բարկութիւն , ու նեղութիւն , Հղար հրեշտակները խրկելով :

50 Իր բարկութեանը ճամբայ բացաւ . անոնց անձը մահուանէ չըխնայեց . հապա անոնց կեանքը ժանտախտի մատնեց .

51 Եւ ամէն անդրանիկը սպաննեց Եգիպտոսի մէջ , և առջինները Քամի վրաններուն մէջ .

52 Ու Իր ժողովուրդը ոչխարներու պէս հանեց , ու դանոնք հօտի պէս վարեց անապատին մէջը .

53 Եւ Հանոնց ապահովութեամբ առաջնորդեց , ու չվախցան . իսկ Հանոնց թշնամիները ծովը ծածկեց .

54 Ու զանոնք տարաւ իր Սրբութեան սահմանը , այն լերը Հրն որ իր աջ ձեռքը ստացեր էր .

55 Ու Հանոնց առջեւէն ազգեր վռնտեց , և Նչափով ժառանգութիւն բաժնեց անոնց , ու Իսրայէլին ցեղերը անոնց վրաններուն մէջը բնակեցուց :

56 Բայց անոնք փորձեցին ու սրդդոզացին Բարձրեալ Աստուածը , ու չպահեցին անոր վկայութիւնները .

57 Եւ Իրենց հայրերուն պէս ետ դարձան ու նենդութիւն ըրին , Խաբերայ աղեղի պէս խոտորեցան :

58 Ինչու որ զանիկայ սրդողցուցին իրենց բարձր տեղերովը , ու նախանձի չարժեցին զանիկայ իրենց կուռքերովը :

59 Աստուած լսեց ու բարկացաւ , և շատ անարդեց Իսրայէլը .

60 Ու Սելովմի խորանը մերժեց , ան վրանը որ մարդոց մէջը կանգներ էր .

61 Եւ Իր զօրութիւնը դերեւթեան մատնեց , ու Իր փառքը թշնամիներուն ձեռքը .

ե

զ

* կ՚Ընդ ամէն մէկը աշխատանքներուն Հացը կերան .

է Թուա . ժա . 31 :

ը Թուա . ժա . 20 :

թ Թուա . ժա . 33 :

ժ Թուա . ժգ . ժէ : — Հմր 22 :

ի Թուա . ժգ . 29 , 35 : իգ . 64 , 65 :

լ Տես Ովս . է . 15 :

խ Օր . լբ . 4 , 15 , 31 :

ծ Եզ . ժե . 13 : Ր Օր է . 5 : Ես խա . 14 , խդ . 6 : կդ 9 : — Եզեկ . լէ 31 :

կ Հմր 5 :

հ Թուա . ժգ . 18 , 20 :

ձ Ես . խը . 9 : ե գ Թագ . իա . 29 :

ղ Ա Հաղ ճգ . 14 . 16 :

ճ Ծն գ . 3 : Ցած . գ . 6 :

մ Ցոր է 7 . 16 : Ցակ . գ . 14 :

յ Հմր 17 : Սաղ գե 9 . 10 : Ես է 13 : կդ 10 : Երե գ . 30 : Երր գ 16 . 17 :

ն Թուա . ժդ 22 : Ր Օր գ 16 :

շ Հմր 20 :

ո Հմր 12 : Սաղ ճե . 27 . ա :

Ե Եւ . է . 20 : Սաղ . ճե . 29 :

Զ Եւ . ր . 24 : Սաղ . ճե . 31 :

Է Եւ . ը . 6 : Սաղ . ճե . 30 :

Ը Եւ . ժ . 13 , 15 : Սաղ . ճե . 34 , 35 :

Թ Եւ . Թ . 23 , 25 : Սաղ . ճե . 38 :

Ժ Եւ . Թ . 23 , 24 , 25 : Սաղ . ճե . 32 :

Ի Կ՚ըլլայ չարքներու

Լ Կ՚անասունները . Եւ . Թ . 3 , 6 :

Խ Եւ . ժր . 29 : Սաղ . ճե . 36 : Ելէ . 10 :

Ծ Սաղ . ճշ . 22 :

Կ Սաղ . հէ . 20 :

Հ Եւ . ժգ . 19 , 20 :

Ձ Եւ . ժգ . 27 , 28 : ժե . 10 :

Ղ Եւ . ժե . 17 :

Ճ Սաղ . կգ . 3 :

Մ Սաղ . կգ . 2 :

Յ Ես . ժգ . 7 : ժԹ . 51 : Սաղ . ճԼԶ . 21 , 22 :

Ն Դատ . բ . 11 . 12 :

Շ Հմր 41 : Եզեկ . ի . 27 . 28 : Ա Ովս . է . 16 : Ր Օր . լբ . 16 , 21 : Դատ . բ . 12 , 20 : Եզեկ . ի . 28 :

Ո Ր Օր . ժբ . 2 . 4 : Թագ . ժա . 7 . ժբ . 31 : Ջաճագ . գ . 11 : Երեմ . է . 12 , 14 : իգ . 6 , 9 : — Դատ . ժբ . 30 :

Չ Կ՚անոր

63 Եւ էիր ժողովուրդը սուրի մատնեց, ու իր ժառանգութեանը վրայ բարկացաւ։
63 Անոր երիտասարդները կրակը կերաւ. ու անոր *աղջիկները սուգ չըրին"։
64 *Անոր քահանաները սրով ինկան. ու *անոր որբևարիները չլացին։
65 Բայց Տէրը Տարթընգաւ՝ որպէս թէ քունէն, «գինիէն սթափած զօրաւոր մարդու մը պէս,
66 Ու էիր թշնամիները ետևնուն զարկաւ. յաւիտենական նախատինք տուաւ անոնց։
67 Եւ Յովսեփին վրանը մերժեց, ու Եփրեմին ցեղը չընտրեց·
68 Հապա Յուդայի ցեղը ընտրեց, «« Սիօն լեռը՝ էորն որ սիրեց·
69 Եւ էիր սրբարանը չծնեց բարձր Բ«««րնէրե«« պէս, երկրին պէս՝ որ յաւիտեան հաստատեց։
70 Էու իր Դաւիթ ծառան ընտրեց, և զանիկայ ոչխարի փարախներէն առաւ.
71 Ընթէ տուող ոչխարներուն ետևէն էկն բերաւ զանիկայ, էոր իր ցակոբ ժողովուրդը ու իր Իսրայէլ ժառանգութիւնը հովուէ։
72 Անիկայ ալ հովուեց զանոնք էիր սրտին անմեղութեամբը, ու իր ձեռքերուն յաջողակութեամբը առաջնորդեց անոնց։

ՅԱՂՄ · Հ Թ

1 Սաղմոսերգուն Երուսաղէմին աւերմանը վրայով կը գանգատի. 8 ապաշխութեան համար աղօթք կ'ընէ. 13 ու կը խոստանայ գոհութիւն մատուցանել։

Սաղմոս Ասափայ։

1 Ո՛վ Աստուած՝ հեթանոսները «քու ժառանգութեանդ մէջը մտան. Էքու սուրբ տաճարդ պղծեցին. Երուսաղէմը աւերակներու դարձուցին։
2 Էքու ծառաներուդ դիերը երկինքի թռչուններուն կերակուր տուին, քու սուրբերուդ մարմինը երկրի գազաններուն։
3 Անոնց արիւնը ջուրի պես թափեցին Երուսաղէմին բոլորտիքը, և ու մէկը չկար որ զանոնք թաղէր։
4 Մեր դրացիներուն ընդհատինք եղանք, ծաղր ու կատակ՝ մեր բոլորտիքը եղողներուն։
5 Էմինչև ե՞րբ՝ ով Տէր. միշտ պիտի բարկանա՞ս. Էքու նախանձդ կրակի պէս պիտի բորբոքի՞։
6 Էթափէ քու բարկութիւնդ ան ազգերուն վրայ՝ որ չեն ճանչնար, ու ան թագաւորութիւններուն վրայ՝ որ էքու անունդ չեն կանչեր։
7 Ինչու որ Ցակորը կերան, ու անոր բնակութիւնը աւերակ դարձուցին։
8 Էմի՛ յիշեր մեզի դէմ առջի աւօրէնութիւնները. թող շուտով հասնի մեզի քու ողորմութիւնդ. ինչու որ Էխիստ թշուառացանք։
9 Քու անունդ փառքին համար ծօգնէ մեզի՝ ով մեր փրկութեան Աստուածը, և Էքու անունդ համար փրկէ մեզ, ու մեր մեղքերը քաւէ։
10 Հինչո՞ւ ըսեն հեթանոսները թէ, Ո՞ր է անոնց Աստուածը. թող յայտնուի հեթանոսաց մէջ մեր աչքերուն առջևը քու ծառանեցրուդ թափուած արիւնին վրէժը։
11 Ի կապուածին հառաչանքը քու առջի՛դ թող ելլէ. քու զօրութեանդ մեծութիւնովը մահուան մատնուածները ապրեցուր։
12 Ու ւեօթնպատիկ հատուցումՀ րուկ մեր դրացիներուն իրենց ծոցին մէջը՝ ան ֆիրենց նախատինքին ֆոխրինը, որով քեզ անարգեցին՝ ով Տէր։
13 Բայց ՛մենք քու ժողովուրդդ ու քու արօտիդ ոչխարները՝ յաւիտեան քեզ պիտի գովենք, «« ՛քու փառդ պիտի պատմենք ազգէ մինչև ազգ։

ՍԱՂՄ· Զ

1 Սպասուելոցն իր աղօթքին մէջը՝ ակնեղեցիին դժբաղդութիւնները վրայով. 8 և Աստուծոյ առջի ընորհքները դատաստաններու փոխուելուն վրայով կը գանգատի. 14 ազատութեան համար աղօթք կ'ընէ։

Գլխաւոր երգեցողին, «Ջօշանիմ Էտութեան վրայ. Առաքին Սաղմոսը,
1 Ականջ դիր՝ ով Իսրայէլին հովիւը, որ Ցովսեփին Էհօտի պէս կ'առաջնորդես. Էդուն որ քերովբէից վրայ կը նստիս, Էպայծառացիր։
2 Էեփրեմին ու Բենիամինին և Մանասէին առջևն արթընցուր քու զօրութիւնդ, ու եկուր մեզ փրկելու։
3 Ո՛վ Աստուած՝ Հմեզ դարձուր, և Էքու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք։
4 Ո՛վ Տէր՝ զօրաց Աստուածը, մինչև ե՞րբ կը բարկանաս քու ժողովրդիդ աղօթքին դէմ։
5 Ըպրատասուքի հաց կը կերցընես անոնց, ու մեծ չափով արտասուք կը խմցընես անոնց։
6 Էմեզ կռիւի պատճառ կ'ընես մեր դրացիներուն, ու մեր թշնամիները դէշ ծաղր կ'ընեն իրենց մէջը։
7 Ո՛վ զօրաց Աստուածը՝ ծմեզ

֊ Եւ ժե֊ 17։ Սաղ֊ Հդ֊ 2։
Բ Սաղ֊ Հդ֊ 7։
Ֆ դ Թագ֊ ի֊ 9։ 10։ Բ Մն֊ ւգ֊ 19։ Միք֊ գ֊ 12։
Ք Երեմ֊ է֊ 33։ ժ֊ 4։ ւգ֊ 20։
Ի Սաղ֊ ճկա֊ 7։ Երեմ֊ ժգ֊ 16։ ժզ֊ 4։ Ցայտ֊ ժա֊ 9։
Ղ Սաղ֊ խդ֊ 13։ ձ֊ 6։
Ի Սաղ֊ Հդ֊ 1֊ 9։ 10։ 46։ 5։ ձՀ֊ 46։
Ը Սոփ֊ ա֊ 18։ գ֊ 8։
Ի Երեմ֊ ժ֊ 25։ Ցայտ֊ ժգ֊ 1։
ծ Ես֊ խե֊ 4։ 5։ Բ Թես֊ ա֊ 8։
Ի Սաղ֊ ծգ֊ 4։

֊ Սաղ֊ խե֊ և կթ֊ ին վերնագիրները։
Բ Սաղ֊ Հե֊ 20։
Ֆ Եզ֊ իե֊ 20։ 22։ ա Թագ֊ գ֊ 4։ Բ Թագ֊ գ֊ 2։ Սաղ֊ ղթ֊ 1։
Ք Բ Օր֊ իբ֊ 43։ Սաղ֊ ճԲ֊ 6։
Ծ Բ Մն֊ ժգ֊ 11։
Կ Երեմ֊ ժգ֊ 7։ 21։
Հ Սաղ֊ խբ֊ 10։ ճժե֊ 2։
Ն Սաղ֊ Ռբ 20։
Ղ Ծն֊ դ֊ 15։ Ես֊ կե֊ 6։ 7։ Երեմ֊ լբ֊ 18։ Ղուս֊ շ֊ 38։
Ճ Սաղ֊ Հդ֊ 18։ 22։
Ց Սալ֊ Հդ֊ 1։ գե֊ 7։ ճ֊ 3։
Ձ Ես֊ խգ֊ 21։

֊ Սաղ֊ խե֊ և կթ֊ ին վերնագիրները։
Բ Սաղ֊ Հե֊ 20։
Ֆ Եզ֊ իե֊ 20։ 22։ ա Թագ֊ գ֊ 4։ Բ Թագ֊ գ֊ 2։ Սաղ֊ ղթ֊ 1։
Ք Բ Օր֊ ւգ֊ 2։ Սաղ֊ ծ֊ 2։ գզ֊ 1։
Ի Թես֊ բ֊ 18։ 23։
Ղ Հմր֊ 7։ 19։ Ողբ֊ ե֊ 21։
Ի Թես֊ գ֊ 25։ Սաղ֊ գ֊ 6։ կէ֊ 1։
Ը Սաղ֊ խբ֊ 8։ ծբ֊ 9։ Ես֊ լ֊ 20։
Ի Սաղ֊ խգ֊ 13։ ՀԲ֊ 4։
ծ Հմր 3։ 19։

դարձուր, և քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք։

8 Եգիպտոսէն էմկ որթ մը փոխադրեցիր, Հեթանոսները վռնտեցիր, ու զանիկայ տնկեցիր։

9 Ետնոր առջևէն պէղ պատրաստեցիր, ու անոր արմատները հաստատեցիր. և անիկայ երկիրը լեցուց։

10 Լեռները ծածկուեցան անոր հովանիովը, ու անոր ճիւղերը Աստուծոյ եղևիններուն պէս եղան։

11 Իր ճիւղերը երկընդուց մինչև ծովը, ու իր բողբոջները մինչև գետը։

12 Ինչու՞ փլցուցիր անոր ցանկերը, որ ճամբայէն բոլոր անցնողները անիկայ փրցընեն։

13 Անտառին խոզը ապականեց անիկայ, ու դաշտի գաղանները կերան անիկայ։

14 Ո՛վ զօրաց Աստուածը՝ կ՚աղաչեմ դարձիր. հնայէ երկինքէն ու տես, ու այցելու եղիր աս որթին,

15 Եւ աս տունկին՝ որ քու աջ ձեռքովդ տնկեցիր, ու որդիին՝ որ նքեզ համար հաստատեցիր։

16 Կրակով այրուած ու կտրուած է. Քու երեսիդ սաստկէն կը կորընչին։

17 Թող քու ձեռքդ քու աջ ձեռքիդ մարդուն վրայ ըլլայ, ու մարդու որդիին վրայ՝ որն որ քեզի համար հաստատեցիր։

18 Մենք ալ ետ պիտի չդառնանք քեզմէ. կենդանացուր մեզ, ու քու անունդ պիտի կանչենք։

19 Ո՛վ Տէր զօրաց Աստուածը, դարձուր մեզ, և քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք։

ՍԱՂՄ · ՁԱ

1 Հանդիսաւոր կերպով զԱստուած գովաբանելու յորդորանք մը։ 4 Աստուած կը պահանջէ աս պարտաւորութիւնը իր բոլոր բարիքներուն համար։ 8 Աստուած հնազանդութեան յորդորելով ժողովուրդը, կը գանգատի անոնց անհնազանդութենէն՝ որ իրենց վնասին պատճառ կ՚ըլլայ։

Գլխաւոր երգեցողին, «կիթթիթի վրայ։ Ասաբին Սաղմոս։

1 Ցնծացէք Աստուծոյ առջին, որ մեր զօրութիւնն է, ուրախութեամբ աղաղակեցէք Յակորին Աստուծոյն։

2 Սաղմոս առէք, ու թմբուկը բերէք, Նաև անուշ քնարը տաւիղին հետ։

3 Փող հնչեցուցէք ամսու գլխուն, «նաև լուսնի լման ատենը» մեր տօնին օրը.

4 Վասն զի Իսրայէլին կանոն մըն է, Յակոբին Աստուծոյն իրաւունքն է։

5 Ինքը վկայութիւն դրաւ Յովսեփին մէջը, Եգիպտոսի երկրին վրայ ելած ատենը. Հոս պէղ լեզու մը լսեցի որ չէի ղիտեր։

6 Ետնոր թիկունքը հեռացուցի բեռէն, ետնոր ձեռքերը հանդիստ եկողուէն։

7 Նեղութեան մէջ կանչեցիր, ու քեզ փրկեցի. Սպառնական տուի քեզի որոտման ծածկոցին մէջէն. Փորձեցի քեզ Մերիպայի ջուրին քովը։ (Սելայ։)

8 Լսէ՛ ով իմ ժողովուրդս, ու վկայեմ քեզի. ով Իսրայէլ թէ որ ինծի մտիկ ընես.

9 Օտար Աստուած չըլլայ քու մէջդ, ու օտար Աստուծոյ երկրպագութիւն չընես։

10 Ես եմ քու Տէր Աստուածդ, որ հանեցի քեզ Եգիպտոսի երկրէն. Լեցնէ բաց քու բերանդ, ու զանիկայ ես պիտի լեցընեմ։

11 Բայց իմ ժողովուրդս մտիկ չըրաւ իմ ձայնս. ու Իսրայէլը Ինձ չուզեց։

12 Ետ զանոնք իրենց սրտին կամակորութեանը թողուցի, որ իրենց խորհուրդներուն համեմատ քալեն։

13 Երանի թէ իմ ժողովուրդս ինծի մտիկ ընէր, ու Իսրայէլը իմ ճամբաներուս մէջը քալէր.

14 Շուտով պիտի խոնարհեցընէի անոնց թշնամիները, ու ձեռքս պիտի դարձընէի անոնց նեղիչներուն վրայ։

15 Տէրը ատոդիները Խոնարհուին պիտի ընէին՝ իրեն, ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար։

16 Ան ալ պիտի կերակրէր զանոնք պարարտ ցորենով. ու վկմէն վեղով մեղրով քեզ պիտի կշտացընէի։

ՍԱՂՄ · ՁԲ

1 Սաղմոսերգուն դատաւորները յորդորելէն, 5 ու անոնց անհոգութիւնը յանդիմանելէն ետև, 8 Աստուածմէ կը խնդրէ որ ինքը դատաստան ընէ։

Սաղմոս Ասաբհայ։

1 Աստուած կայնած է Աստուծոյ ժողովքին մէջը, Դատաստան կ՚ընէ Աստուածներուն մէջը դատաստան կը տեսնէ։

2 Մինչև երբ անիրաւութեամբ պիտի դատէք, ու ամբարիշտներուն Երեսառութիւն պիտի ընէք։ (Սելայ։)

3 Դատաստան ըրէք աղքատին ու որբին, Իրաւունք ըրէք

4 Փրկեցէք աղքատը ու տնանկը, ամբարիշտներուն ձեռքէն ազատեցէք զանոնք։

5 Չգիտեն ու միտք չեն առ-

ԷՍ · ե · 1 · 7 · ԵրԵմ. բ · 21 · Եզեկ · ԺԹ · 6 · 9 · ԺԹ · 10 ·

ԼՍաղ · խդ · 2 · Նե · 53 ·

ԻԵԼ · իգ · 28 · Ցես · իդ · 12 ·

ԺՍաղ · Նբ · 8 ·

ԼՍաղ · ԺԲ · 40 · 41 · Ես · ե · 5 · Նաե · բ · 2 ·

ՀԵս · կդ · 15 ·

ՅՆս · խԹ · 5 ·

ՂՍաղ · լԹ · 11 · Տզ · 7 ·

ՃՍաղ · ԺԲ · 21 ·

ՃՀԲ 3 · 7 ·

– Սաղ · ը · ին վերնագիրը ·

* Կամ՝ որոշուած ժամանակին

ԲՂԼ · իդ · 21 · Թուա · ժ · 10 ·

ՍԱՂՄՈՍ ՁԶ 573

5 Ինքը վկայութիւն դրաւ Յովսեփին մէջը, Եգիպտոսի երկրին վրայ ելած ատենը. Հոս պէղ լեզու մը լսեցի որ չէի ղիտեր։

6 Ետնոր թիկունքը հեռացուցի բեռէն, ետնոր ձեռքերը հանդիստ եկողուէն։

7 Նեղութեան մէջ կանչեցիր, ու քեզ փրկեցի. Սպառնական տուի քեզի որոտման ծածկոցին մէջէն. Փորձեցի քեզ Մերիպայի ջուրին քովը։ (Սելայ։)

8 Լսէ՛ ով իմ ժողովուրդս, ու վկայեմ քեզի. ով Իսրայէլ թէ որ ինծի մտիկ ընես.

9 Օտար Աստուած չըլլայ քու մէջդ, ու օտար Աստուծոյ երկրպագութիւն չընես։

10 Ես եմ քու Տէր Աստուածդ, որ հանեցի քեզ Եգիպտոսի երկրէն. Լեցնէ բաց քու բերանդ, ու զանիկայ ես պիտի լեցընեմ։

11 Բայց իմ ժողովուրդս մտիկ չըրաւ իմ ձայնս. ու Իսրայէլը Ինձ չուզեց։

12 Ետ զանոնք իրենց սրտին կամակորութեանը թողուցի, որ իրենց խորհուրդներուն համեմատ քալեն։

13 Երանի թէ իմ ժողովուրդս ինծի մտիկ ընէր, ու Իսրայէլը իմ ճամբաներուս մէջը քալէր.

14 Շուտով պիտի խոնարհեցընէի անոնց թշնամիները, ու ձեռքս պիտի դարձընէի անոնց նեղիչներուն վրայ։

15 Տէրը ատոդիները Խոնարհուին պիտի ընէին՝ իրեն, ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար։

16 Ան ալ պիտի կերակրէր զանոնք պարարտ ցորենով. ու վկմէն վեղով մեղրով քեզ պիտի կշտացընէի։

ՍԱՂՄ · ՁԲ

1 Սաղմոսերգուն դատաւորները յորդորելէն, 5 ու անոնց անհոգութիւնը յանդիմանելէն ետև, 8 Աստուածմէ կը խնդրէ որ ինքը դատաստան ընէ։

Սաղմոս Ասաբհայ։

1 Աստուած կայնած է Աստուծոյ ժողովքին մէջը, Դատաստան կ՚ընէ Աստուածներուն մէջը դատաստան կը տեսնէ։

2 Մինչև երբ անիրաւութեամբ պիտի դատէք, ու ամբարիշտներուն Երեսառութիւն պիտի ընէք։ (Սելայ։)

3 Դատաստան ըրէք աղքատին ու որբին, Իրաւունք ըրէք

4 Փրկեցէք աղքատը ու տնանկը, ամբարիշտներուն ձեռքէն ազատեցէք զանոնք։

5 Չգիտեն ու միտք չեն առ-

ՀՍաղ · ԺԸ · 43 · Հռոմ · ա · 30 ·

Ա ԵԲԲ · պիտի ատկին

ՅՌ Օր · լբ · 13·14 · Սաղ · ԾԽԵ · 14 ·

ՂՅՈՐ · ԽԹ · 6 ·

ՈՐՄՆ · ԺԹ · 6 · Յոզ · ե · 8 ·

ՀԿա՛մ · գաւառներուն · Եւ · իա · 6 · իբ · 28 ·

ԲՐ Օր · ա · 17 · ՐՄՆ · ԺԹ · 7 · Ռոմկ · ԺԸ · 5 ·

ԳԵրեմ. իբ · 3 ·

ԴՅՈՐ · ԽԹ · 12 · Ռոմկ · իգ · 11 ·

ԻՄԿԲ · գ · 1 ·

ներ . խաւարի մէջ կը պտրտին . Ե՛րկրին բոլոր հիմերը շարժեցան :

6 Ե՛ս ըսի [Թ]Է՝ Դուք աստուածներ էք , ու բոլորդ ամէնքդ Բարձրեալին որդիներն էք .

7 Բայց ե՛մարդոց պէս պիտի մեռնիք , ու իշխաններէն մէկուն պէս պիտի իյնաք :

8 Ելի՛ր ով Աստուած՝ դատէ՛ երկիրը . Ի՛նչու որ բոլոր ազգերը դուն պիտի ժառանգես :

ՍԱՂՄ · ՁԲ

1 Թլնամիներուն դաւանանութեանը համար գանգատ մը . 9 ու ակնկալութիւն ապագային դէմ յաղթութիւն մը :

Ասաֆին երգը ՝— Սաղմոս :

1 Ա՛ստուած՝ մե՛ր Աստուածդ մի՛ կենար . անձայն մի՛ ըլլար , ու հանդարտ մի՛ կենար ով Աստուած :

2 Ինչու որ ահա Բրուտ թշնամիներդ կը զոռան , ու ք[Ը]ն ատողները գլուխ կը վերցնեն .

3 խորամանկութեան չարք կը դանեն քու ժողովուրդիդ դէմ , ու խորհուրդ կ'ընեն Բրուտ պահպանածներուդ դէմ :

4 Կ'ըսեն [Թ]է՝ Եկէ՛ք , եկորսընջենք անոնք՝ որ ազգ չըլլան , ու ալ չյիշըւի Իսրայէլին անունը :

5 Ինչու որ միաբան սրտով խորհուրդ բռին , ՝— քեզի դէմ դաշնադրութիւն ընդունին

6 Էդոմի վրանները ու Իսմայէլացիք , Մոաբը ու Հագարացիք ,

7 Գեբաղը ու Ամմոնը և Ամաղկը , Փղշտացիք՝ Տիւրոսի բնակչաց հետ :

8 Նաև Ասուրը անոնց հետ միաբանեցաւ . Ղոտին որդւոցը ձեռնտու եղան : (Սէլայ :)

9 Ըրէ՛ անոնց ինչպէս Մադիամին՝ ինչպէս Սիսարային ու Յաբինին ըէ՛ կիսոն հեղեղատին քովը .

10 Անոնք Ենդովրի մէջ սատկեցան . Բացրի պէս եղան երկրի վրայ :

11 Անոնց իշխանները Օրեբին ու Զէերին պէս , ու անոնց բոլոր իշխանները Զեբէէին ու Սաղմանային պէս ըրէ .

12 Որոնք ըսին [Թ]է՝ Աստուծոյ բնակարանները մենք ժառանգենք մեզի համար :

13 Ո՛վ իմ Աստուածս՝ անոնք *մրեղի պէս , Հովի առջև եղող շուշի պէս ըրէ :

14 Ինչպէս որ կրակը անտառը կ'այրէ , ու բոցը Լեռները կը բռնկցընէ ,

15 Անանկ ալ հալածէ զանոնք Քու մրրիկովդ , ու խռովութեան մէջ ձգէ զանոնք քու փոթորիկովդ :

16 Լեցուր անոնց երեսները անարգանքով , որ քու անունդ ինդրեն՝ ով Տէր :

17 Թող ամչնան ու խռովին յաւիտեան , և ամօթալից ըլլան ու կորսուին .

18 Ո՛ր դիտնան [Թ]է միայն դուն՝ որ քու անունդ Եհովայ է , Բարձրեալ ես բոլոր երկրի վրայ :

ՍԱՂՄ · ՁԴ

1 Մարդարէն սրբարանին հաղորդակցութեանը փափաքելով՝ 4 կը ցուցնէ [Թ]է երջանիկ են անոր մէջ բնակողները . 8 իր Նոն դառնալուն համար աղօթք կ'ընէ :

Գլխաւոր երգեցողին , Գիթթիթի վրայ . Կորհի որդւոցը Սաղմոսը :

1 Ո՛՜նչափ Բնախանձելի են քու բնակարաններդ , ով զօրաց Տէրը :

2 Բ[Ը]իմ անձս կը փափաքի ու նաև կը մաշի Տէրոջը սրաշէնութեան համար . իմ սիրտս ու մարմինս ցնծութեամբ կ'աղաղակեն կենդանի Աստուծոյն :

3 Հնձանդուկն ալ տուն գտաւ , ու ծիծեռնիկը իրեն բոյն՝ իր ձագերը դնելու համար , քու սեղաններուդ քովը՝ ով զօրաց Տէրը , իմ թագաւորս ու Աստուածս :

4 Երանի՛ անոնց որ քու տանդ մէջ կը բնակին . անոնք անդադար քեզ պիտի օրհնեն : (Սէլայ :)

5 Երանի՛ անոր մարդոյը որոնց զօրութիւնը քեզմէ է . ու իրենց սրտին մէջը ճամբաներդ կան :

6 Արտասուաց հովիտէն անցնելով աղբիւրի պէս կ'ընեն անիկայ . առջի անձրևն ալ օրհնութիւնով պիտի ծածկէ զանիկա :

7 Անոնք զօրութենէ զօրութիւն կ'երթան , Աստուածը Սիոնի մէջ Աստուածդ աւլին երևնան :

8 Ո՛վ Տէր՝ զօրաց Աստուածը , լսէ՛ իմ աղօթքս . ականջ դիր ով Յակորի Աստուածը : (Սէլայ :)

9 Ո՛վ Ըմեր վահանը Աստուածա՛տես , ու քու օծեալիդ երեսը նայէ :

10 Ինչու որ քու սրահներուդ մէջը մէկ օրը հազարէն աղէկ է . աւելի ընտրեցի իմ Աստուծոյս տանը շեմին վրայ կենալ , քան թէ ամբարբշտաց վրանները մէջը բնակիլ :

11 Քանի՜ Տէր Աստուած Բարև ու Վահան է . Տէրը շնորհք ու փառք պիտի տայ . Բարութիւն մը պիտի չպակասըցնէ ուղղութեամբ քալողներուն :

12 Ո՛վ զօրաց Տէրը՝ Երանելի է քեզի յուսացող մարդը :

ՍԱՂՄ · ՁԵ

1 Աղաչանքը Աստուծոյ առջի շնորհքները յիշելով՝ կը խնդրէ որ ան շնորհքները չարաչ

Ը Սաղ · ժա · 3 ; Նե · 3 ; Ի Հմր 1 : Յով · ժ · 34 :

Ը Ցոր · իա · 32 ; Սաղ · խթ · 12 : Նեզ · ա · 14 :

Ի Սաղ · ր · 8 ; Ցայտ · ժա · 15 :

— Սաղ · իը · 1 ; լե · 22 ; ՀԹ · 1 :

Բ Սաղ · ր · 1 ; Դար · գ · 25 :

Գ Սաղ · ձա · 15 :

Դ Սաղ · իե · 5 ; լա · 20 :

Ե Տես Ելթ · գ · 6 , 9 : Բրէմ · ժա · 19 , լա · 36 :

Զ Տես բ Մն · ի · 1 · 10 · 11 :

Է Թես · լա · 7 ; Դատ · է · 22 :

Ը Դատ · գ · 15 · 24 ; է · 21 :

Թ Դատ · է · 25 :

Ի Դատ · ը · 12 ; 21 :

Լ Ես · ժէ · 13 · 14 : * Կ՛ուզէ ասել՝ ի

Խ Սաղ · լ · 5 :

Ծ Բ Օր · ը · 22 :

Կ Յոր · թ · 17 :

Հ Սաղ · լե · 4 · 25 :

Ձ Ելթ · ժ · 3 ; Ես · 3 :

Ղ Սաղ · ձգ · 1 : Ես · 34 :

Մ Սաղ · ձգ · 6 :

Յ Սաղ · ձթ · 13 :

Ն Նե · գ · 3 ; Սաղ · ը · 5 :

— Սաղ · իա · 1 , Դատ · ժ · 1 :

Շ Ելթ · գ · 3 : Սաղ · ղը · 8 :

Ո Սաղ · իգ · 4 :

Չ Սաղ · իե · 4 :

Պ Սաղ · իր · 1 : 2 , կգ · 1 : Դն · 26 : Ամթ · 20 :

Ջ Սաղ · կե · 4 :

Ռ Բ Թագ · ե · 22 · 23 :

Ս Մատ. ասաջնորդը կը լեզուներ :

Վ Նե · գ · 18 : Ես · ը · 1 : Բ Կար · գ · 18 :

Տ Բ Օր · ժգ · 16 : Ելք · ժգ · 16 :

Ր Ես · ժե · 1 : Հմր · 11 :

Ց Ես · կ · 19 : Ամ · ժե · 1 : Հմր · 9 : Սաղ · ժե · 9 , 10 , 11 : ՀԹ · 114 : Առակ · բ · 7 :

Փ Սաղ · ձգ · 9 , 10 :

Ք Սաղ · ը · 12 :

նակուին . Տ կը խոստանայ անոնց սպասելու՝ Աստուծոյ բարութեանը յուսալով ։

Գլխաւոր երդեցողին . — Կորխի որդւոցը Սաղմոսը ։

1 Ո՛վ Տէր՝ դուն հաճեցար քու երկրիդ . Բ Յակոբին դերութիւնը դարձուցիր .

2 Քու ժողովուրդիդ անօրէնութիւնը ներեցիր . անոնց բոլոր մեղքերը ծածկեցիր ։ (Սէլա ։)

3 Հեռացուցիր քու բոլոր սրտմտութիւնդ . Դէտ դարձար քու սաստիկ բարկութենէդ ։

4 *Մեզի՛ դարձիր՝ ով մեր փրկութեան Աստուածը , և քու բարկութիւնդ որ մեր վրայ է՝ դադրեցուր ։

5 Բ Միթէ յաւիտեան պիտի բարկանաս մեզի . քու բարկութիւնդ ազգէ մինչև ազգ պիտի երկընցնե՞ս ։

6 Միթէ ետ պիտի չդառնաս , ու մեզ կենդանացընես , որ քու ժողովուրդդ քեզմով ուրախ ըլլայ ։

7 Ցուցուր մեզի՝ ով Տէր , քու ողորմութիւնդ . և քու փրկութիւնդ մեզի տուր ։

8 Ես պիտի լսեմ ինչ որ կը խօսի Տէր Աստուած . ինչու որ Բ խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովուրդին ու իր սուրբերուն . ու Բ յիմարութեան չդառնան անոնք ։

9 Արդարև Բ իր փրկութիւնը մօտ է իրմէն վախցողներուն , ♪ որ մեր երկրին մէջը փառք բնակի ։

10 Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատահեցան . խաղաղութիւնը ու խաղաղութիւնը էրթ համբուրեցին ։

11 Ճշմարտութիւնը երկրէն պիտի բուսնի , ու արդարութիւնը երկինքէն վար պիտի նայի ։

12 Նաև Բ Տէրը բարութիւն պիտի տայ , ու ♪ մեր երկիրը իր պտուղը պիտի տայ ։

13 Արդարութիւնը անոր առջևէն պիտի երթայ . ու †իր դնացքները ճամբուս՝ պիտի դնէ ։

ՍԱՂՄ · ՁԶ

1 Դաւիթ իր հաւատքին վստահութիւնովը , 5 և Աստուծոյ բարութիւնը ու կարողութիւնը յիշելով՝ իր աղօթքը կը զօրացընէ ։ 11 առէջ շնորհքին չարունակութեանը կը ցանկայ · 14 Չպարտներուն համար գանգատ ընելով՝ Աստուծոյ բարութեանը մէկ նշանը կը խնդրէ ։

Աղօթք Դաւիթի ։

1 Ո՛վ Տէր՝ խոնարհեցուր քու ականջդ . պատասխան տուր ինծի , ինչու որ աղքատ ու տնանկ եմ ։

2 Պահէ իմ անձս , ինչու որ ես սուրբ եմ . ով իմ Աստուածս՝ քեզի յուսացող ծառադ դուն փրկէ ։

3 Բ Ողորմի ինծի՝ ով Տէր , ինչու որ քեզի կը կանչեմ ամէն օր ։

4 Ուրախացուր քու ծառայիդ անձը՝ ; Բինչու որ դէպ՚ի քեզի կը վերցընեմ իմ անձս՝ ով Տէր ։

5 Բ Վասն զի դուն՝ ով Տէր , բարի ու ներող ես , և խիստ ողորմած ան ամենուն՝ որ քեզի կը կանչեն ։

6 Ականջ դիր իմ աղօթքիս՝ ով Տէր , ու մտիկ ըրէ իմ աղաչանքներուս ձայնը ։

7 Բ Նեղութեանս օրը քեզի կ՚աղաղակեմ , ինչու որ դուն ինծի կը պատասխանես ։

8 Աստուածներուն մէջը քեզի նման մկը չկայ՝ ով Տէր , և Բ քու գործքերուդ պէս չկայ ։

9 Բոլոր ազգերը՝ որ դուն ստեղծեցիր , պիտի գան , ու երկրպագութիւն ընեն քու առջիդ՝ ով Տէր , և քու անուանդ փառք պիտի տան ։

10 Վասն զի դուն մեծ ու Բ հրաշքներ գործող ես , ♪ Աստուած միայն դուն ես ։

11 Բ Ո՛վ Տէր՝ սորվեցուր ինծի քու ճամբադ , որ քու ճշմարտութեանդ մէջ քալեմ . ‡միացուր իմ սիրտս՝ , որ քու անուանէդ վախնայ ։

12 Իմ բոլոր սրտովս քեզ պիտի գովեմ՝ ով Տէր՝ իմ Աստուածս , ու յաւիտեան պիտի փառաւորեմ քու անունդ ։

13 Ինչու որ քու ողորմութիւնդ մեծ եղաւ իմ վրաս . ու դուն Բ փրկեցիր իմ անձս խորունկ գժոխքէն ։

14 Ո՛վ Աստուած՝ Բ ամբարտաւանները ինծի դէմ կանն , ու բռնաւորներուն ժողովդը իմ անձս փնտռեցին , և քեզ իրենց առջևը չդրին ։

15 ♪ Բայց դուն ով Տէր՝ դթած ու ողորմած Աստուած ես , երկայնամիտ ու ողորմութիւնով և ճշմարտութիւնով առատ ես ։

16 Նայէ՛ ինծի , ու ողորմէ՛ ինծի . քու զօրութիւնդ տուր քու ծառայիդ , ու հքու աղախնիդ որդին փրկէ ։

17 Բարութեան նշան մը ըրէ ինծի , որ իսատղերը տեսնեն ու ամչնան . ինչու որ դուն՝ ով Տէր , ինծի օգնեցիր ու իս մխիթարեցիր ։

ՍԱՂՄ · ՁԷ

1 Եկեղեցիին բնութիւնը ու փառքը · 4 անոր անդամներուն աւելնալը . պատիւը ու մխիթարութիւնը ։

Կորխի որդւոցը Սաղմոսը — երգը ։

1 Նոր հիմերը — սուրբ լեռներուն վրայ են ։

2 Բ Տէրը Սիօնին դռները Յակորին

— Նե · իշ · 3 ։

Բ Սաղ · ծգ · 1 ։ ծկ · 1 ։

† Սաղ · իե · 1 ։ ճխդ · Տ ։

Ե Հմր 15 ։ Սդ · ճկ · 7 ։ Ծիւ · 9 ։ Ցովել · բ · 13 ։

Է Սաղ · ծ · 15 ։

Ը Եկ · ժե · 11 ։ Սաղ · ձիե · 6 ։

Թ Ր Օր · գ · 24 ։

Ժ Սաղ · իբ · 31 ։ Ներ · 18 ։ Նա · իդ · 7 ։ Յայտ · ժե · 4 ։

Ի Ել · ժե · 11 ։ Սաղ · ճկ · 6 ։

ԺԱ Ա Օր · գ · 3 ։ Լը · 39 ։ Եա · լէ · 16 ։ իգ · 6 ։ Մար · ժբ · 29 ։ ա Կոր · գ · 4 ։ Նփն · գ · 6 ։

ԺԲ Սաղ · իե · 4 ։ իէ · 11 ։ ճժ · 33 ։ ճխդ · Տ ։

ԺԳ Սաղ · ծչ · 13 ։ ճժչ · Տ ։

ԺԴ Սաղ · ծգ · 3 ։

ԺԵ Ել · լգ · 6 ։ Թուա · ժգ · 18 ։ Ղեմ. Թ · 17 · Հմր. 5 ։ Սաղ · ձգ · Տ ։ ճժա · 4 ։ ճլ · 4 · 7 ։ ճխե · 8 ։ Ցովել · բ · 13 ։

ԺԶ Սաղ · իե · 16 ։ կճ · 16 ։

ԺԷ Սաղ · ճժչ · 16 ։

— Սաղ · իբ · 1 ։

Բ Սաղ · Նը · 67 · 68 ։

քոլոր բնակարաններէն աւելի կը սիրէ ։
3 †Փառաւոր բաներ կը պատմուին քեզի համար , ով Աստուծոյ քա-
ղաքը ։ (Սէլայ ։)
4 Ե*Ռահաբը ու Բաբիլոնը պիտի յիշեմ իս †ձանչցողներուն . ահա Փղշտացւոց երկիրը ու Տիւրոսը Քուշէին հետ . ասոնք ալ հոն ծը-
նան ։
5 Ու Սիօնին համար պիտի ըսուի Թէ՝ Ան ու մարդը ու ան մարդը հոն ծնաւ . և Բարձրեալը ինքը պիտի հաստատէ զանիկայ ։
6 Տէրը աղգերը Է գրած ժամանակը պիտի ըսէ՝ Թէ ասիկայ հոն ծնաւ ։ (Սէլայ ։)
7 Ու Երգեցողներ , նոյնպէս ալ ‡ արնգահարներ ‖ Ակիւ գոնո՞ւմն հոն՝ իմ բոլոր աղբիւրներս քեզմէ են ։ .

ՍԱՂՄ · ՁԸ

1-8 Ծարը գանգատ մը պարունակող աղօթք մը ։

Կորխի որդւոցը երգը ՝ Սաղմոսը . Գլխաւոր երգեցողին , Մահալաթ Լէաննոթի վրայ . Եման Եզրահա-
ցիին երգը ։
1 ‖ վ Տէր՝ Է իմ փրկութեանս Աս-
տուածը , Է ցորկը կ՚աղաղա-
կեմ , ՝ գիշերը քու առջիդ եմ ։
2 Իմ աղօթքս քու առջիդ թող ելլէ . խոնարհեցուր քու ականջդ իմ աղաղակիս ։
3 Ինչու որ իմ անձս չարիքներով լեցուեցաւ , ու իմ կեանքս Դժո-
ւոկմանին մօտեցաւ ։
4 Է Գուբը իջնողներուն հետ սե-
պուեցայ . Ուժէ չունեցող մարդու մը պէս Եղայ ։
5 Մեռելներուն մէջը ինկած եմ . գերեզմանի մէջ պառկող մեռ-
ցուածներուն պէս , որոնք ալ չես յիշեր , ու քու ձեռքէդ Է մերժուած են ։
6 Դուն զիս ամենէն խորունկ գու-
բին մէջը դրիր , խաւարային անդունդներուն մէջ ։
7 Քու սրտմտութիւնդ ծանրացաւ իմ վրաս , և Է քու բոլոր ալիքնե-
րովդ զիս չարչարեցիր ։ (Սէլայ ։)
8 Է իմ ճանչցուրներս ինծմէ հեռա-
ցուցիր . իս գարշելի ըրիր անոնց առջեւն . Է դոցուեցայ , ու դուրս չեմ ելլեր ։
9 Է Ձարչարանքէն աչքերս վատե-
ցան . Ամէն օր քեզի աղաղակե-
ցի՝ ով Տէր , Է ձեռքերս քեզի եր-
կնցուցի ։
10 Է Մի՞թէ մեռելներուն հրաշք պի-
տի ընես . միթէ մեռածները պիտի ելլեն ու քեզ դովեն ։ (Սէլայ ։)
11 Միթէ կը պատմուի՞ քու ողոր-
մութիւնդ գերեզմանին մէջ , ՝ քու ճշմարտութիւնդ կորստեան մէջ ։
12 Ի Մի՞թէ կը ճանչցուին քու հր-
րաշքներդ խաւարին մէջ , ՝ քու արդարութիւնդ մոռացման երկ-
րին մէջ ։
13 Բայց ես՝ ով Տէր , քեզի աղա-
ղակեցի , ու Իմ աղօթքս առ-
տուանց քու առջիդ պիտի ելլէ ։
14 Ո՛վ Տէր՝ Ինչո՞ւ իմ անձս կը մերժես , ՝ Է քու երեսդ կը ծած-
կես ինծմէ ։
15 Ես խեղճ եմ ու մանկութենէս ի վեր մեռնելու վրայ եմ . Է քու ահերդ քաշեցի ՝ խռովեցայ ։
16 Քու սրտմտութիւնդ իմ վրաս իջաւ , և քու զարհուրանքներդ իս կորսընցուցին ։
17 Ամէն օր ջուրի պէս իս պատե-
ցին . Ամբողջ չորս կողմս առին ։
18 Ի Հեռացուցիր ինծմէ սիրելին ու բարեկամը . իմ ճանչցորներս խա-
ւարի մէջ են ։

ՍԱՂՄ · ՁԹ

1 Մաղմսերգուն զԱստուած կը գովէ իր ուխ-
տին համար , 5 իր հրաշալի կարողութեանը համար , 15 իր եկեղեցին հոգ տանելուն հա-
մար , 19 ու Դաւիթին թագաւորութեանը ըրած չնորհքին համար ։ 38 Երբր ձախող դիպուածներու վրայով կը դանդատի , 46 կը բողոքէ , կ՚աղօթէ , ու զԱստուած կ՚օրհնէ ։

Եթան Եզրահացիին երգը ։

1 Է Տէրոջը ողորմութիւնները յա-
ւիտեան պիտի երգեմ . քու հաւատարմութիւնդ իմ բերնովս գաղդ ազգ պիտի պատմեմ ։
2 Վասն զի ըսի Թէ՝ Ողորմութիւ-
նը յաւիտեան պիտի շինուի . Եր-
կինքի մէջ պիտի հաստատես քու հաւատարմութիւնդ ։
3 Ես իմ ընտրեալիս հետ ուխտ
ըրի , Երդում ըրի իմ ծառային Եր-
դումը ըրի , ըսելով ։
4 Է քու սերունդդ յաւիտեան պի-
տի հաստատեմ , և շազգ ազգ պիտի շինեմ քու աթոռդ ։ (Սէ-
լայ ։)
5 Երկինքն ալ կը փառաւորէ քու հրաշքներդ՝ ով Տէր , և քու հա-
ւատարմութիւնդ ժողովրդոց ժո-
ղովքին մէջ ։
6 Վասն զի ո՞վ կայ երկինքի մէջ Տէրոջը հաւասար . ՝ § հզօրաց որ-
դիներուն մէջ ո՞վ կը նմանի Տէ-
րոջը ։
7 Աստուած իիստ գարհուրելի է սուրբերուն ժողովքին մէջը , և ա-
հաւոր է ամէն իր բոլորտիքը եղող-
ներուն ։
8 Ո՛վ Տէր՝ զօրաց Աստուածը , ով է Էհեղի պէս հզօր Տէր . որ

‡ Տես Ես . կ ։
† Սաղ . ձթ . 10 ։ Ես . ծա . 9 ։
* Յ՝ Եղիպտոսը ։
† Կ՚ըսէ՝ ճանչցողներու պէս ։
Է Եզեկ . ժգ . 9 ։
‡ Կամ՝ պար բռնողներ ‖ Կամ՝ ակիւ ըսէն ։
= գ Թագ . դ . 31 ։ ա Մն . բ . 6 ։
Բ Սաղ . իէ . 9 ։ ծա . 14 ։
գ Ղեւ . ժը . 7 ։
դ Սաղ . ճէ . 18 ։
ե Սաղ . իբ . 1 ։
զ Սաղ . լա . 12 ։
է Ես . ծգ . 8 ։
ը Սաղ . խը . 7 ։
թ Ծոր . ժթ . 13 , 19 ։ Սաղ . լա . 11 ։ ՃԽր . 4 ։
ժ Ոզե . գ . 7 ։
ի Սաղ . լը . 10 ։
լ Սաղ . ձղ . 8 ։
խ Ծոր . ժա . 13 ։ Սաղ . ՃԽգ . 6 ։
ծ Սաղ . ղ . 5 ։ ը . 9 ։ ճժե . 17 ։ ճժը . 17 ։ Ես . լը . 18 ։

ա Ցոր . ժ . 21 ։ Սաղ . ՃԽգ . 3 ։
բ Սաղ . լա . 12 ։ Հմ . 5 ։ ժող . ը . 10 ։ թ . 5 ։
գ Սաղ . ե . 3 ։ ճժթ . 147 ։
դ Սաղ . խգ . 2 ։
ե Ցոր . ժգ . 24 ։ Սաղ ժգ . 1 ։
զ Ցոր . գ . 4 ։
է Սաղ . իբ . 16 ։
ը Ցոր . ժթ . 13 ։ Սաղ . լա . 11 ։ լը . 11 ։
թ Թագ . դ . 31 ։ ա Մն . բ . 6 ։
ժ Սաղ . ճա . 1 ։
ի Հմր 4 ։ Սաղ . ճժթ . 90 ։
լ Սաղ . ճժթ . 89 ։
խ Թագ . ը . 10 ։ Ես . խբ . 1 ։
ծ Թագ . է . 11 ։ ը ։ ա Մն . ժէ . 10 ։ ը ։ Տես Երեմ . լ . 9 ։ Եզեկ . լդ . 23 ։ Ովս . գ . 5 ։
կ Հմր 29 ։ 36 ։
հ Տես Հմր 1 ։ Ղև . ա . 32 ։ 33 ։
ձ Սաղ . ժթ . 1 ։ ղէ . 6 ։ Ծսյտ . է . 10 ։ 11 ։ 12 ։
ղ Հմր 7 ։
ճ Սաղ . խ . 5 ։ Նա . 19 ։
մ Տ՚ճժգ . 5 ։
յ Կամ՝ աստուածոց
ն Սաղ . հգ . 7 ։ 11 ։
շ Եր . ժե . 11 ։ Թագ . բ . 2 ։ Սաղ . լթ . 10 ։ Նա . 19 ։

դու հաւատարմութիւնդ դու բո-
ղորտիքդ է ։
ժ Սաղ. կե. 9 Ծ Դուն կը տիրես ծովուն հպար-
7 ։ գգ. 3 ։ տութեանը վրայ . երբոր անոր ա-
4 ։ ձէ. 29 ։ լիքները կը բարձրանան , դուն կը
հանդարտեցնես անոնք ։
ի Եզ. ժդ. 26 ։ 19 Ի Դուն ձնչեցիր Ռահաբը խո-
27 ։ 28 ։ տոնած պէս . քու զօրութեանդ
Սաղ. ձէ. բազուկովը ցրուեցիր քու թշնա-
4 ։ նա. 4 ։ միներդ ։
7 ։ ծա. 9 ։
ի Ես. ա. 1 ։ 11 Կ Քու կդ է երկինքը , ու քուկդ է
ա Մն. իթ. երկիրը . դուն հիմնեցիր աշխարհքը
11 ։ Սաղ. ու անոր լիութիւնը ։
իգ. 1 , 2 ։
ծ. 12 ։
ն Յոբ. իշ. 7 ։ 12 Ն Հիւսիսը ու Հարաւը դուն ըս-
ղ Ցես. ժբ. տեղծեցիր . Թաւիւր ու Հերմոն
22 ։ քու անունովդ կը ցնծան ։
ո Ցես. ժբ. 1 ։ 13 Դուն զօրաւոր բազուկ ունիս .
քու ձեռքդ ուժով է , քու աջ
ձեռքդ բարձրացած է ։
ո Սաղ. ՃԷ. 14 Ո Արդարութիւնը ու իրաւունքը
2 ։ քու աթոռիդ հիմն է , Ողորմու-
յ Սաղ. ձե. թիւնը ու ճշմարտութիւնը քու
13 ։ երեսիդ առջևէն կ'երթան ։
15 Երանի ան ժողովուրդին՝ որ գի-
ղ Թու. ժ. տեն Ն* ազդարարութեան ֆողբոն-
10 ։ Սաղ. ձայնը . ով Տէր՝ անոնք Ձքու երե-
զբ. 6 ։ սիդ լուսովը պիտի քալեն ։
* կամ՝ ցոն-
ծութեան .
Թու. իգ ։ 16 Քու անունովդ ամէն օր պիտի
21 ։ ցնծան , ու քու արդարութիւնո-
ի Սաղ. դ. 6 ։ վրդ պիտի բարձրանան ։
իգ. 3 ։ 17 Վասն զի դուն ես անոնց զօրու-
ա Հմր. 24 ։ թեանը փառքը , ու քու հաճու-
Սաղ. Ղե. թեամբդ պիտի բարձրանայ մեր
10 ։ ղ. 10 ։ եղջիւրը ։
ճԼը. 17 ։
18 Ինչու որ մեր վահանը Տէրոջն
է , ու մեր թագաւորը Իսրայէլին
Սուրբինն է ։
19 Ան ժամանակը տեսիլքով խօսե-
ցար քու սուրբիդ հետ , ու ըսիր .
Օգնութիւն դրի զօրաւորին վրայ ,
ժողովուրդէն Ընտրուածը բարձ-
րացուցի ։
ղՀմր 3 ։ գ 20 Ես Դաւիթը գտայ ,
թագ. Ժա. իմ սուրբ եղոյնս օծեցի անոիկայ ։
34 ։
ղա թագ. 21 Ես Որուն հետ իմ ձեռքս պիտի
ԺԸ. 1 , 12 ։ հաստատուի , ու իմ բազուկս պի-
Ը Սաղ. ձ. 17 ։ տի զօրացնէ զանիկայ ։
ոբ թագ. ե. 22 Թշնամին պիտի չկարաստահարէ
13 ։ զանիկայ , ու անօրէնութեան որ-
դին պիտի չկարչարէ զանիկայ ։
ոբ թագ. ե. 23 Ես անոր թշնամիները իր առ-
9 ։ ջևէն պիտի կոտրեմ , ու զանիկայ
ատողները պիտի զարնեմ ։
Է Սաղ. կա. 24 Եւ Ես իմ հաւատարմութիւնս ու
7 ։ ողորմութիւնս անոր հետ պիտի
ո Հմր. 17 ։ ըլլայ . ու ո անոր եղջիւրը իմ ա-
նունովս պիտի բարձրանայ ։
բ Սաղ. հր. 25 Ը Անոր ձեռքը ծովուն մէջը պիտի
8 ։ ե. 11 ։ դնեմ , ու անոր աջ ձեռքը գետե-
րուն մէջը ։
ոբ թագ. ե. 26 Անիկայ ինծի պիտի կանչէ թէ՝
14 ։ ո Մն. Դուն ես ի իմ Հայրս , իմ Աստուա-
իբ. 10 ։ ծոս , ու ո իմ փրկութեան վէմը .
ոբ թագ. իբ. 27 Ու ես զանիկայ ֆանդրանիկ պիտ
47 ։ տի ընեմ , ֆԵրկրի թագաւորներէն
աւելի բարձր ։
28 Ֆիմ ողորմութիւնս յաւիտեան
պիտի պահեմ անոր համար , ու
ֆիմ ուխտս անոր հետ հաւատա-
րիմ պիտի ըլլայ ։
29 Ո Եւ անոր սերունդը յաւիտեան ,
Ը ու անոր աթոռը Ֆերկինքի օրե-
րուն չափ պիտի ընեմ ։
30 Ո Թէ որ անոր որդիքը Ֆիմ օ-
րէնքս թողուն , ու իմ իրաւունք-
ներովս չքալեն ,
31 թէ որ իմ կանոններս անարդեն ,
ու իմ պատուիրանքներս չպահեն ,
32 Ես ալ գաւազանով պիտի
պատժեմ անոնց յանցանքը , ու
հարուածներով՝ անոնց անօրէնու-
թիւնը ։
33 Ֆ Բայց իմ ողորմութիւնս պիտի
չկտրեմ անկէ , ու իմ հաւատար-
մութիւնս սուտ պիտի չհանեմ ։
34 Իմ ուխտս պիտի չանարգեմ , ու
շրթունքներէս ելածը պիտի չփո-
խեմ ։
35 Անգամ մը երդում ըրի Ըիմ
սրբութիւնովս , որ սուտ պիտի չը-
ամ Դաւիթին ։ ԸՍամվ. գ. 2 ։
36 Ը Անոր սերունդը յաւիտեան պի- Ը ր Թագ. է.
տի մնայ , ու անոր աթոռը իմ առ- 16 ։ Ղուա.
ջևս ծ արեգակին չափ . 33 ։ Ցօհ.
37 Լուսնին պէս յաւիտեան պիտի ժբ. 34 ։ Հմր
հաստատուի , ու երկինքին մէջ հա- 4 , 29 ։
ւատարիմ վկայի պէս ։ (Սէլայ ։)
38 Բայց դուն ետեսիլ ձգեցիր ու ծ Սաղ. հբ.
անարգեցիր , քու օծեալիդ բար- 5 , 17 ։ Ես-
կացար . թեմ. ԺԳ. 20 ։
39 Քու ծառայիդ ուխտը մերժե- Ի ա Մն. իբ.
ցիր . Ոանոր թագը գետնին հա- 9 ։ Սաղ. խգ.
ւասար պղծեցիր . 9 ։ կ. 1 ։ 10 ։
40 ծ Անոր բոլոր պարիսպները փլցու- Լր Օր. ւբ.
ցիր . անոր բերդերը աւերակ ըրիր ։ 19 ։ Սաղ.
41 Բոլոր ճամբայէն անցնողները կո- Նբ. 59 ։
ղոպտեցին զանիկայ . Ընախատինք Ի Սաղ. հդ.
եղաւ իր դրացիներուն ։ 7 ։ Ողթ. ե.
42 Անոր նեղիչներուն աջ ձեռքը 16 ։
բարձրացուցիր . անոր բոլոր թըշ- ծ Սաղ. ձ. 12 ։
նամիները ուրախացուցիր ։
43 Անոր սուրին բերանն ալ դար- Ի Սաղ. խգ.
ձուցիր , ու զինքը պատերազմին 13 ։ Նի. 4 ։
մէջ չկայնեցուցիր ։
44 Անոր փառքը դադրեցուցիր , ու
Ո անոր աթոռը գետինը զարկիր ։ Ո Հմր 39 ։
45 Անոր երիտասարդութեան օրերը
կարճեցուցիր . զանիկայ ամօթով
ծածկեցիր ։ (Սէլայ ։)
46 Յ Մինչև Ե՞րբ ով Տէր . քու անդ- Յ Սաղ. Ղթ.
միշտ պիտի պահես . Ը քու սբրտ- 5 ։
մտութիւնդ կրակի պէս պիտի Ը Սաղ. Ղը.
բորբոքի ։ 63 ։
47 Ֆ Յիշէ իմ կեանքիս ինչ ըլլալը ։ Ֆ Ցոբ. է. 7 ։
ինչ ունայնութեան համար ստեղ- ժ. 9 ։ ժղ.
ծեցիր մարդոց բոլոր որդիները ։ 1 ։ Սաղ. ղթ.
5 ։ ձժթ.
Տ4 ։

48 Մ՛Ով է ան մարդը որ ապրի ու չտեսնէ, Ե՞ իր անձը դժոխքին ձեռքէն փրկէ։ (Սէլա)։
49 Ո՛վ Տէր՝ ո՞ւր են քու առջի ողորմութիւններդ, որ Երդումով ըրիր Դաւիթին քու հաւատարմութիւնովդ։
50 Ո՛վ Տէր՝ յիշէ՛ քու ծառաներուդ նախատինքը, որ իմ ծոցիս մէջը կը կրեմ բոլոր մեծ ազգերէն.
51 Որ անով քու թշնամիներդ ա՛նարգեցին՝ ով Տէր, որ անով քու օծեալիդ քայլերը անարգեցին։
52 Օրհնեալ ըլլայ Տէրը յաւիտեան։ Ամէն ու ամէն։

ՍԱՂՄ · Ղ

1 Մովսէս Աստուծոյ Նախախնամութիւնը խոստովանելով՝ 3 մարդոց տկարութեանը համար, 7 Աստուծոյ պատիժներուն, 10 և մարդկային կեանքը կարճութեանը համար կը դառնայ։ 12 Անիկայ Աստուծոյ բարի նախախնամութեանը դիտութեանը ու յոյսին եւ բնաւորուն համար կ՛աղօթէ։

Աստուծոյ մարդուն Մովսէսին աղօթքը։

1 Մ՛Ով Տէր՝ Դուն միզի ապաւէն եղար ազգէ մինչև ազգ։
2 Լեռներուն ծնանելէն առաջ, ու երկրի և աշխարհի ստեղծուելէն առաջ, յաւիտենից մինչև յաւիտեան դուն ես Աստուած։
3 Դուն մարդը փոշի կը դարձընես, ու կ՛ըսես. Դեռ դարձէք՝ մարդոց որդիներ։
4 Վասն զի հազար տարին քու առջիդ երկուան օրին պէս է՝ որ անցաւ, կամ դիշերուան պահու մը պէս։
5 Կ՛ընկղմես անոնք, ձերազի պէս կ՛ըլլան. առտուանց կանանչացած խոտի պէս կ՛ըլլան.
6 Ա՛ռտուանց կը ծաղկի ու կը կանանչանայ, իրիկունը կը կտրուի ու կը չորնայ։
7 Ինչու որ քու բարկութենդէ կը մաշինք, և քու սրտմտութենդէ կը խռովինք։
8 Մեր անօրէնութիւնները քու առջիդ, ու մեր ծածուկ ֆէյերը քու երեսիդ լուսին մէջը դրիր։
9 Ինչու որ մեր բոլոր օրերը քու բարկութիւնովդ կ՛անցնին. մեր տարիները ցնորքի մը պէս կ՛անցընենք։
10 Մեր տարիներուն օրերը եօթանասուն տարի են, ու թէ որ զօրութիւնով ութսուն տարի ըլլան, տակաւին անոնց փառքը աչխատանք ու դատ է. ինչու որ անոնք շուտով կ՛անցնին, ու մենք կը թռչինք։
11 Ո՞վ դիտէ քու բարկութեանդ զօրութիւնը, և քու սրտմտութիւնդ քու վախիդ համեմատ։
12 Ինանակ սորվեցուր մեզ մեր օրերը համրել, որ սրտի իմաստութիւն ստանանք։
13 Դարձիր ով Տէր, մինչև ե՞րբ. ու Ղթութիւն ըրէ քու ծառաներուդ։
14 Կշտացուր մեզ կանուխ քու ողորմութիւնովդ, Որ ցնծանք և ուրախ ըլլանք մեր բոլոր օրերուն մէջը։
15 Ուրախացուր մեզ ան օրերուն չափովը, որ տրտմեցուցիր. ան տարիներուն չափովը, որ չարիք տեսանք։
16 Թող երևնայ ծքու գործդ քու ծառաներուդ, և քու փառքդ անոնց որդիներուն։
17 Ու Մեր Տէր Աստուծոյն վայելչութիւնը մեր վրայ ըլլայ. և Ձեռքերուն գործը հաստատէ մեր վրայ. մեր ձեռքերուն գործը հաստատէ։

ՍԱՂՄ · ՂԱ

1 Բարեպաշտ մարդոց վճռակը. 3 անոնց ապաշխութիւնը. 9 անոնց ապաստանարանը։

1 Հարբերկրյոյն ծածկոցին տակը բնակողը Ամենակարողին հովանաւորութեանը տակը պիտի հանգչի։
2 Տէրոջը համար պիտի ըսեմ թէ՝ Իմ ապաւէնս ու իմ ամրոցս է. իմ Աստուածս՝ որուն կը յուսամ։
3 Արդարև Դան պիտի փրկէ քեզ որսորդին որոգայթէն, ապականիչ ժանտամահէն։
4 Քեզ Իր փետուրներովը պիտի ծածկէ, ու իր թևերուն տակը պիտի ապաստանիս. անոր ճշմարտութիւնը վահան մը ու ասպար մը պիտի ըլլայ քեզի։
5 Գիտի չվախնաս գիշերուան զարհուրանքէն, ոչ ցորեկը թռչող նետէն,
6 Ո՛չ մութ տեղը պտրտող ժանտամահէն, ոչ կէս օրուան աւերը սատակիցընող հարուածէն։
7 Հազար հոգի քու լովիդ, ու տասը հազար քու աջ կողմդ պիտի իյնան. Բայց քեզի հասած չ՛ըլլար։
8 Միայն Իքու աչքերովդ պիտի նայիս, ու ամբարիշտներուն հատուցումը պիտի տեսնես։
9 Որովհետև դուն Տէրը Իմ ապաւէնս՝ Բարձրեալը Իբնակդ ապաստանարան ըրիր,
10 Քեզի չարիք պիտի չհասնի, և քու բնակարանիդ հարուած մը պիտի չմօտենայ։
11 Ինչու որ իր հրեշտակներուն

ՍԱՂ · ԽԹ · 9։
ԵՐԲ · ԺԱ · 5։
ՆԵԹԱԳ · Է · 15։ ՆԱ. ՅԵ. 3։
ՂՍԱՂ · ԾԴ · 5։
ՍԱՂ · ԿԹ · 9 · 19։
ՂՍԱՂ · ՆԴ · 22։
ՂՍԱՂ · ԽԱ · 13։

ԲԲ ՕՐ · ԼԴ · 1։

ԲԲ ՕՐ · ԼԴ · 27։ ԵԶԵԿ · ԺԱ · 16։
ՖԱՌԱԿ · Ը · 25, 26։
ՔՆ · Գ · 19։ ՅՈՂ · ԺԲ · 7։
ԲՊԵՏ · Գ · 8։
ՂՍԱՂ · ՆԴ · 20։
ՒՍԱՂ · ՃԴ · 15։ ԵՒ · Խ · 6։
ԸՍԱՂ · ԴԲ · 7։ ՅՈՐ · ԺԳ · 2։
ԲՍԱՂ · Ծ · 21։ ԵՐԵՄ · ԺԷ · 17։
ՔՍԱՂ · ԺԹ · 12։

ԹՈՒ · Ե · 5։
ՂՍԱՂ · ԽԲ · 4։
ԼԲ ՕՐ · ԼՐ · 36։ ՍԱՂ · ՃՀ · 14։
ԲՍԱՂ · ԶԾ · 6։ ՃԹԲ · 2։
ՃՍԱՂ · ՓԲ · 2։
ՖՍԱՂ · ԻԵ · 4։
ՀԵՍ · ԻՀ · 12։

ՄՍԱՂ · ԻԲ · 5։ ԼՐ · 7։
ԲՍԱՂ · ԺԷ · 8։
ՖՍԱՂ · ՃԿՒ · 5։
ՊՍԱՂ · ՃԻԳ · 7։
ԲՍԱՂ · ԺԵ · 8։ ՄԱՂ · Ա · 4։
ՂԲՅՐ · Ե · 19։ ԱՄՍ · ՃՀՐ · 7։ ՃԿ. 6։ ԱՌԱԿ · Գ · 23, 24։ ԵՍ · ԽԲ · 2։
ԲՍԱՂ · ԼԵ · 34։ ՄՍԱ · Ա · 5։
ԸՀՐ 2։
ՐՍԱՂ · ՀՈ · 3։ Ղ · 1։
ՔԱՌԱԿ · ԺԲ · 21։
ԲՍԱՂ · ԼԲ · 7։ ՀՈ · 3։ ՄՈՒՏ · Գ · 6։ ՂԱ · Գ · 10·11։ ԵՐԲ · Ա · 14։

պիտի սպասպրե քեզի համար , որ քու բոլոր ճամբաներուդ մէջը քեզ պահեն ։

12 Անոնք ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ , Որ ջրլայ թէ ոտքդ քարի դարնես ։

13 Առիւծի ու իժի վրայ պիտի քալես . առիւծի կորիւնը ու վիշապը պիտի կոխկրտես ։

14 Որովհետեւ ինծի կը ցանկայ , ա՛նոր համար ես պիտի փրկեմ անիկայ . անոր ամրութիւն պիտի ըլլամ, ինչու որ անիկայ է իմ անունս դիտցաւ ։

15 Ինծի պիտի կանչէ , ու ես անոր պատասխան պիտի տամ . Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ. պիտի ազրեցնեմ ու փառաւորեմ անիկայ ։

16 Երկայն օրերով պիտի կշտացնեմ անիկայ , ու իմ փրկութիւնս անոր պիտի ցուցընեմ ։

ՍԱՂՄ · Ղ Բ

1 Մարգարէն կը խորհրդէ մարդիկը որ զԱստուած գովեն , 4 անոր մեծ գործերուն համար , 6 նաեւ անոր գաւազանին համար որ յարերուն կ'ընէ , 10 ու անոր բարութեանը համար որ բարեպաշտներուն կ'ընէ ։

Ջաւթի օրուան համար Սաղմոս — երգ ։

1 — Հարի է գոհանալ Տէրոջմէն , ու սաղմոս ըսել քու անուանդ՝ ով Բարձրեալ ,

2 Առտուանց ի՛քու ողորմութիւնդ, ու դիշէրները քու հաւատարմութիւնդ պատմել ,

3 Տասը լար ունեցող նուագարանով ու տաւիղով , Ե՛քնարի ձայնով ։

4 Վասն զի դուն՝ ով Տէր , քու գործքովդ ինս ուրախացուցիր . քու ձեռքերուդ գործքերովը պիտի ցընծամ ։

5 Որո՛վ Տէր՝ ի՛նչ մեծ են քու գործքերդ . Է՛շատ խորունկ են քու խորհուրդներդ ։

6 Ղ՚անմիտ մարդը ասիկայ չի՛մանար , ու յիմարը չհասկընար ։

7 Եթէ մարդիք՝ խոտի պէս բուսնիքը , ու բոլոր անօրէնութիւն գործողներուն ծաղիկը , իրենց յաւիտենական կորստեանը կը դառնէ ։

8 Բայց դուն՝ ով Տէր , յաւիտեան բարձր ես ։

9 Վա՛ւն զի ահա քու թշնամիներդ՝ ով Տէր , վասն զի ահա քու թշնամիներդ պիտի կորսուին . բոլոր անօրէնութիւն գործողները ի՛պիտի ցրուին ։

10 Բայց ի՛մ եղջիւրս միեղջերուին պէս պիտի բարձրացընես . ես էնոր իւղով օծուեցայ .

11 Եւ իմ աչքերս թշնամիներուս [illegible] պիտի տեսնեն . իմ ականջներս ինծի դէմ ելլող չարագործներուն [illegible] պիտի լսեն ։

12 Ի՛արդարը սիմաւնիի պէս պիտի ծաղկի , Լիբանանի եղևինի պէս պիտի մեծնայ ։

13 Տերոջը տանը մէջ տնկուածները ի՛մեր Աստուծոյն սրաշներուն մէջը պիտի ծաղկին .

14 Ծերութեան ատեննն ալ պտուղ պիտի տան . պարարտ ու կանանչ պիտի ըլլան .

15 Որ պատմեն թէ՝ Տէրը ուղիղ է . Անիկայ իմ Վէմս է , ու հանիրաւութիւն չկայ անոր քովը ։

ՍԱՂՄ · Ղ Գ

1-5 Քրիստոսի Թագաւորութեանը վճռափառութիւնը , զօրութիւնը ու սրբութիւնը ։

1 — Տէրը կը թագաւորէ , ի՛մեծափառութիւն հագած է . Տէրը զօրութիւն հագած — է զօտևորած է . Տաշխարհքն ալ հաստատուած է որ չսասանի ։

2 Է՛քու աթոռդ հին ժամանակէն հաստատ է . ի յաւիտենից ես դուն ։

3 Ո՛վ Տէր՝ գետերը բարձրացուցին , գետերը բարձրացուցին իրենց ձայնը . գետերը կը բարձրացընեն իրենց շառաչիւնը ։

4 Շատ ջուրերուն ձայնէն — ծովուն զօրաւոր ալիքներէն աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ ։

5 Քու վկայութիւններդ շատ հաւատարիմ են . ով Տէր՝ սրբութիւնը քու տանդ կը վայլէ * յաւիտեան ։

ՍԱՂՄ · Ղ Դ

1 Մարգարէն արդարութիւն խնդրելով՝ բռնաւորութեան ու ամբարտաւանութեան համար կը գանգատի . 8 Աստուծոյ նախախնամութիւնը կ'իմացընէ . 12 վերացած մարդուն երջանկութիւնը կը դուրսէ . 16 կը հաստատէ թէ Աստուած նեղեալը կը պաշտպանէ ։

1 Ո՛վ Տէր՝ — վրէժինդրութեանց Աստուածը , ով վրէժինդրութեանց Աստուածը , յայտնուէ ։

2 Բե՛ր ով Երկրին Դատաւորը , ամբարտաւաններուն հատուցում ըրէ ։

3 Ո՛վ Տէր՝ Մինչև ե՞րբ ամբարիշտները , մինչև ե՞րբ ամբարիշտները պարծենան .

4 Խոսուղութեամբ բարբառելով իսօսին , — բոլոր անօրէնութիւն գործողները պարծենան ։

5 Ո՛վ Տէր՝ անոնք քու ժողովուրդդ կը հարստահարեն , ու քու ժառանգութիւնդ կը չարչարեն .

ԼՅսղ · ն · 23 ։ Սպ · լէ · 24 ։

Է Սաղ · թ · 10 ։

Ժ Սաղ · ի · 15 ։ Ես · խդ · 2 ։

Հաթաթ · բ · 30 ։

Յ Առակ · գ · 2 ։

— Սաղ · ճխէ · 1 ։

Բ Սաղ · ձԹ · 1 ։

Գ Սամ · իգ · 5 ։ Սաղ · լԳ · 2 ։

Դ Սաղ · խ · 5 ։ ճլԹ · 17 ։ Է Ես · իբ · 29 ։ Հռով · ժ ա · 33 ։ 34 ։

Ը Սաղ · Նգ · 22 ։ Ղ Գ · Տ ։

Է Յոբ · ժր · 6 ։ իա · 7 ։ Սաղ · լէ · 1 ։ 2 ։ 35 ։ 38 ։ Երեմ · ժր · 1 ։ 2 ։ Մ ղ · գ · 15 ։

Ը Սաղ · Ձգ · 18 ։

Ը Սաղ · կբ · 1 ։ ձԹ · 10 ։ ժ Սաղ · ձԹ · 17 · 24 ։

Է Սաղ · իգ · 5 ։

Ը Սաղ · Ձգ · 7 · ձԹ · 10 · ճժբ · Տ ։

Է Սաղ · Ռբ · Տ · Ես · կե · 22 ։ Ո՛վ · ժգ · 5 · 6 ։

Ժ Սաղ · Ճ · 4 · ՌԼ · 2 ։

ԼՕր · լբ · 4 ։ Հ Հռով · Թ · 14 ։

— Սաղ · ՀՀ · 10 ։ գԹ · 9 · Ղա · 7 · Ցաց · ժԹ · ։

Բ Սաղ · ՌՂ · 1 ։

Է Սաղ · կե · 6 ։

Թ Սաղ · հ · 10 ։

Է Սաղ · Խ · 6 · Առակ · ը · 22 ։

Ը Սաղ · ՀՈ · 7 · ձԹ · ։

Ե Եբր · ԺՐ · կար · ա՛ր · ։

— Ր Օր · լը · 35 ։ Նաա · ա · 2 ։

Բ Սաղ · Տ · 6

Է ՅՈ · ժը · 25 ։

Թ Ցոր · ի · 5 ։

Է Սաղ · լա · 18 ։ Ցոե · 15 ։

6 · Որբևաբրին ու պանդուխտը կը սպաննեն , և որբերը կը մեռցընեն ·
7 · Ընդ կ'ըսեն · Տէրը չտեսներ , և Յակոբայ Աստուածը չխմանար ։
8 · Խմացէք՝ ով ժողովուրդին անմիտները , ու դուք ով յիմարներ՝ Երբ միտք պիտի առնէք ։
9 · Ըմբիթ ականջը տնկողը չը՞լսեր , կամ թէ աչքը ստեղծողը չը՞տեսներ ։
10 · Մինթէ ազգերը խրատողը չը՞յանդիմաներ · միթէ Եմարդու գիտութիւն սորվեցընողը չը՞էէ՞ր ։
11 · Տէրը մարդոց խորհուրդները գիտէ՝ որ ունայնութիւն են ։
12 · Երանի՛ ան մարդուն՝ որն որ դուն կը խրատես՝ ով Տէր , և քու օրէնքէդ անոր կը սորվեցընես ,
13 · Որ չարութեան օրերուն մէջը ան նիկայ հանգչեցընես , մինչև որ ամբարշտին համար հոր փորուի ։
14 · Եվ ան զի Տէրը իր ժողովուրդը երեսէ պիտի չձգէ , ու իր ժառանգութիւնը պիտի չմերժէ ·
15 · Հապա դատաստանը իրաւունքի պիտի դառնայ , ու ամէն սրտով ուղիղները անոր ետևէն պիտի երթան ։
16 · Ո՛վ ինձի համար յարերուն դէմ պիտի ելլէ , ո՛վ ինձի համար անօրէնութիւն գործողներուն դէմ պիտի կայնի ։
17 · Եթէ որ Տէրը ինձի օգնական չըլլար , քիչ պիտի մնար որ իմ անձս լռութեան դէպ բնակէր ։
18 · Երբոր կ'ըսէի թէ՝ Իմ ոտքս կը սասանի , ով Տէր՝ քու ողորմութիւնդ իս կը հաստատեր ։
19 · Իմ ներսի դիս հոգերս չատցած ատենը՝ քու մխիթարութիւններդ իմ անձս կ'ուրախացընէին ։
20 · Միթէ քեզի հետ հաղորդակցութիւն ունի՞ անօրէնութեան աթոռը , որ հ*օրէնքին դէմ" չարիք կը պատրաստէ ։
21 · Ընդարձակ անձին դէմ կը ժողովուին , ու ղանմեղ արիւնը կը դատապարտեն ։
22 · Բայց Տէրը Իմ ամրութիւնն է , ու իմ Աստուածս՝ իմ ապաւինութեանս վէմը ։
23 · Եւ Ի անոնց անօրէնութիւնը իրենց վրայ պիտի դարձնէ , ու զանոնք իրենց չարութիւնովը պիտի ջնջէ · մեր Տէր Աստուածը պիտի ջնջէ զանոնք ։

ՍԱՂՄ · Գ

1 Աստուած գովաբանելու յորդորանք մը ։ 3 իր մեծութեանը , 6 ու իր բարութեանը համար ։ 8 Աստուած յիշրձելու յորդորանք մը ։

1 Գնկէք ցնծութիւն ընենք Տէրոջ առջևը , ՚աղաղակենք Ի մեր փրկութեան վէմին ·

2 Գոհութիւնով անոր երեսին առջևը դանք , սաղմոսներով աղաղակենք անոր ։
3 Ինչու որ Տէրը մեծ Աստուած է , ու բոլոր աստուածներուն վրայ մեծ թագաւոր է ։
4 Անոր ձեռքին մէջն է երկրի խորութիւնք տէղերը , ու լեռներուն †բարձրութիւնները անորն են ։
5 Ա իրն է ծովը , ու ինքը շինեց զանիկայ · և իր ձեռքերը ստեղծեցին ցամաքը ։
6 Եկէք երկրպագութիւն ընենք , ու ծունկը · Եծունկ չոքենք մեղ ստեղծող Տէրոջը առջևն ·
7 · Ինչու որ ան է մեր Աստուածը · ու Ենք անոր արօտին ժողովուրդը՝ և անոր ձեռքին ոչխարներն ենք · Եայսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք ·
8 Ձեր սիրտերը մի՛ խստացընէք Ընչպէս Մերիպայի մէջ , անապատին մէջ փորձութեան օրուանը պես ,
9 Ուր որ Ի ձեր հայրերը զիս փորձեցին · քննեցին զիս , ու Ի իմ գործքերս տեսան ։
10 Է քառասուն տարի զղուեցայ ան ազգէն , ու ըսի · Անոնք սրտով մոլորած ժողովուրդ մըն են , իմ ճամբաներս չճանչցան ։
11 Ուստի իմ բարկութեանս մէջ Երդուայ րոի թէ , անոնք իմ հանգիստս պիտի չմտնեն ։

ՍԱՂՄ · Գ

1 Աստուած գովելու յորդորանք մը ։ 4 իր մեծութեանը , 8 իր թապաւորութեանը , 11 և իր տիեզերական դատաստանին համար ։

1 Ա՛ղը երգ ՚երգեցէք Տէրոջը · ով բոլոր երկիր՝ երգեցէք Տէրոջը ։
2 Երգեցէք Տէրոջը , օրհնեցէք անոր անունը · օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք ։
3 · Անոր փառքը ազգերուն մէջ պատմեցէք , ՚՚ անոր հրաշքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ ·
4 Քանզի Ի Տէրը մեծ է , ու †խիստ գովելի · Ա անիկայ բոլոր աստուածներուն վրայ ահաւոր է ։
5 Ինչու որ Է ազգերուն բոլոր աստուածները †կուռքեր են · Ըրայց Եհովան երկինքը ստեղծեց ։
6 Փառք ու վայելչութիւն կայ անոր առջևն , զօրութիւն ու գեղեցկութիւն անոր սրբարանին մէջ ։ ·
7 Է Տէրոջը տուէք ով ժողովրպոց տոհմերը , Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն ։
8 Տէրոջը տուէք իր անուանը փառքը · ընծայ առէք , ու անոր սրաշիներուն մէջ մտէք ·
9 Ը‖Սուրբ հանդիսով՚՚ Տէրոջը երկ-

ՂՍաղ · ժ · 11, 13 ; ՅԹ · 7 ։
Է Սաղ · Կդ · 22 ։ զբ · 6 ։
ԸԵԼ · Գ · 11 ։ Ամակ · ի · 12 ։
ԲՑար · լե · 11 ։ Եբ · իբ · 26 ։ Յա Կոր · գ · 20 ։
ԻՑօբ · ե · 17 ։ Ամակ · գ · 11 ։ ա Կոր · ժա · 32 ։ Երր · ժբ · 5 ։ ՁԱ ։
Լա Թագ · ժբ · 22 ։ Հառվ · ժա · 1, 2 ։
Է Սաղ · ՃԻԳ · 1, 2 ։
Ֆ Սաղ · լը · 16 ։
ԱՄով · գ · 3 ։
ՀՍաղ · ծբ · 2 ։ Եա · ժ · 1 ։
* Կ՚՚ իբ ՚՚ՀՀԱՆՅ՝ օրէնքովը
ՅՄառ · իե · 1 ։
ՂԵԼ · իգ · 7 ։ Ամակ · ժե · 15 ։
ՃՍաղ · ՃԹ · 9 ։ կբ · 2, 6 ։
ՄՍաղ · է · 16 ։ Ամակ · բ · 22 ։ ե · 22 ։
— Սաղ · ճ · 1 ։
ԲԲՕր · լբ · 15 ։ Բ՚՚ագ · իբ · 47 ։
2 Տիմ · գ · 16 ։ Եբր · ժա · 3 ։
Ա Պետ · գ · 1 ։ Յհ · ա · 2 ։
Յհ · ե · 21 ։
Ա Պետ · գ · 4 ։ կե · 9 ։ ՃԼ · 5 ։
† Կ՚՚ գօրութիւնները
Բ Ծն · ա · 9, 10 ։
Եա Կոր · գ · 20 ։
ՂՍաղ · ՀԲ · 13 ։ ժ · 1 ։ ՃՀ · 3 ։
Է Եբր · գ · 7, 15 ։ դ · 7 ։
ԸԵՀ · ժե · 2, 7 · Թոս · ի · 13 ։ բ Օր · գ · 16 ։
Ի Սաղ · Կբ · 18 · 40, 56 ։ ա Կոր · ժ · 9 ։
Ֆ Թագ · ժգ · 22 ։
Է Եբր · գ · 10, 11 ։
Լ Թագ · ժգ · 23, 28, 30 · Երր · գ · 11 · 18 ։ գ · 3, 5 ։
Ա Պետ · ՃԼԱ · 3 ։
— ՄՓՀ · ժշ · 23—33 ։ Սաղ · Լբ · 3 ։
Բ Սաղ · ՃԼՈՒ · 3 ։
ԻՍաղ · ՃԸ · 3 ։
ԹՍաղ · ղԸ · 3 ։
Է ՏԵՒ ԵՀՒՀ · ժ · 11 12 ։
Ը Կ՚՚ ու նոյնպես
ՂՍաղ · ՃԸ Ծ · 15 ։ Եա · Գբ · 5 ։
Է Սաղ · իԹ · 1, 2 ։
ԸՍաղ · իԹ · 2 ։ ՃԳ · 3 ։
Ի Կ՚՚ Սրբութեան զարդուբանքով

կըրպագութիւն ըրէք . վախցէք անոր երեսէն՝ ով բոլոր երկիր ։
10 Հեթանոսներուն մէջ ըսէք թէ՝ Տէրը կը թագաւորէ . աշխարհքն ալ հաստատուած է որ չյասնի . ժանիկայ պիտի դատէ ժողովուրդները ուղղութիւնով ։
11 Երկինքը թող ուրախանայ , ու երկիրը ցնծայ . ծովը իր լիութեամբը թող գոռայ .
12 Դաշտը՝ ու բոլոր անոր մէջը եղողները թող ուրախանան . ան ատենը անտառին բոլոր ծառերը թող ցնծան
13 Տէրոջը առջեւը , ինչու որ կու գայ , ինչու որ կու գայ երկիրը դատելու . Դպիտի դատէ աշխարհքը արդարութիւնով , ու ժողովուրդները իր ճշմարտութիւնովը ։

ՍԱՂՄՈՍ ՂԷ

1 Աստուծոյ թագաւորութեանը փիսփսուքիւնը ։ 7 Եկեղեցին՝ կապաշտներուն վերայ Աստուծոյ բերած դատաստաններովը կ՚ուրախանայ ։ 10 Բարեպաշտութեան ն ուրախութեան յորդորանք մը ։

1 – Տէրը կը թագաւորէ , երկիրը թող ցնծայ . շատ Բկղզիներ թող ուրախանան ։
2 Ամպ ու մառախուղ կայ , Դարդարութիւնը ու իրաւունքը անոր աթոռին հիմերն են ։
3 Ամպ առջեւէն կրակ կ՚երթայ , ու անոր բոլորտիքը եղած թշնամիները կ՚այրէ ։
4 Ամպ փայլակները աշխարհքը կը լուսաւորեն . երկիրը կը տեսնէ ու կը դողայ ։
5 Լեռները մոմի պէս կը հալին Եհովային երեսէն , բոլոր երկրին Տէրոջը երեսէն ։
6 Երկինքը կը պատմէ անոր արդարութիւնը , ու բոլոր ժողովուրդները կը տեսնեն անոր փառքը ։
7 Թող ամէնան ան ամէնը որ կուռքերուն կը ծառայեն , որ ուսնայնութիւններով կը պարծենան . ով բոլոր աստուածներ՝ Անոր երկրպագութիւն ըրէք ։
8 Սիօնը լսեց և ուրախացաւ , ու Յուդայի աղջիկները ցնծացին քու իրաւունքներուդ համար՝ ով Տէր ։
9 Վասն զի դուն՝ ով Տէր , Երարձրեալ ես բոլոր երկրի վրայ . Բշատ բարձրացար բոլոր աստուածներուն վրայ ։
10 Ով Տէրը սիրողներ՝ Բարութիւնը ատեցէք . Անիկայ իր սուրբերուն անձերը կը պահէ , Ամբարիշտներուն ձեռքէն կը փրկէ զանոնք ։
11 Արդարին համար լոյս ցանուեցաւ , ու սրտով ուղիղներուն համար ուրախութիւն ։
12 Տէրոջմով ուրախացէք՝ ով արդարներ , Նու անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք ։

ՍԱՂՄ · ՂԸ

1 Սաղմոսերգուն կը յորդորէ Հրեաները , 4 Հեթանոսները , 7 ու բոլոր ստեղծուածները՝ որ շԱստուած գովեն ։

Սաղմոս ։

1 – Նոր Երգ երգեցէք Տէրոջը , ինչու որ Բ հրաշքներ ըրաւ . Բիր աջ ձեռքը ու իր սուրբ բազուկը իրեն * փրկութիւն տուաւ ։
2 Տէրը ցուցուց իր փրկութիւնը , ազգերուն առջեւն Բյայտնեց իր արդարութիւնը ։
3 ՆՅիշեց իր ողորմութիւնը ու իր հաւատարմութիւնը Իսրայէլին տանը համար . Բ երկրին ամէն ծայրերը մեր Աստուծոյն փրկութիւնը տեսան ։
4 Ցնծացէք Տէրոջը առջեւը՝ ով բոլոր երկիր . ուրախութեան ձայնով աղաղակեցէք ու սաղմոս ըսէք ։
5 Սաղմոս երգեցէք Տէրոջը քնարով ; քնարով ու սաղմոսի ձայնով .
6 Բ փողերով ու շեփորի ձայնով աղաղակեցէք Տէր թագաւորին առջեւը ։
7 Թող գոռայ ծովը ու անոր լիութիւնը . աշխարհքը , ու անոր բնակիչները ։
8 Գետերը Բթող ծափ զարնեն , սա լեռները միասին թող ցնծան
9 Տէրոջը առջեւը , Բինչու որ կու գայ երկիրը դատելու . անիկայ պիտի դատէ աշխարհքը արդարութիւնով , ու ժողովուրդները ուղղութիւնով ։

ՍԱՂՄ · ՂԹ

1 Մարգարէն՝ Սիօնի մէջ եղող Աստուծոյ թագաւորութիւնը կը ստորոգէ . 5 ու նախաշխարհըն օրինակովը կը յորդորէ ամէնքն ալ որ Աստուծոյ երկրպագութիւն ընեն իր սուրբ լեռանը վրայ ։

1 – Տէրը կը թագաւորէ , ժողովուրդները թող սարսափին . Բինքը բերովբէից վրայ կը նստի , երկիրը թող շարժի ։
2 Տէրը մեծ է Սիօնի մէջ , ու Երարձրացած է բոլոր ժողովուրդներուն վրայ ։
3 Թող դովն Դքու մեծ ու ահաւոր անունդ . անիկայ սուրբ է ։
4 Եւ Թագաւորին զօրութիւնը իրաւունք կը սիրէ՝ . ուղղութիւն հաստատեցիր , իրաւունք ու արդարութիւն բրիր Յակորին մէջը ։

Ե Ցոր · իբ · 28 ։ Սաղ · ճժբ · 4 ։ Ագաի · դ · 18 ։
Ն Սաղ · լէ · 1 ։
Ղ Սաղ · Լ · 4 ։

– Սաղ · լգ · 3 ։ ղ · 1 ։ Եա · խբ · 10 ։
Բ Եզ · ժե · 11 ։ Սաղ · հէ · 14 ։ ժշ · 10 ։ ճե · 5 ։ ճկ · 4 ։ ճկ · 14 ։
Թ Եզ · ժե · 6 ։ Եա · ձճ · 16 ։ կդ · 5 ։
* Ս – մ՝ յաղթութիւն
Ժ Եա · ծբ · 10 ։ Ղու · բ · 30 · 31 ։
Ի Եա · կր · 2 ։ Հաով · գ · 25 · 26 ։
Ղ Ղու · ա · 54 · 55 · 72 ։
Ի Եա · խժ · 6 ։ ծբ · 10 ։ Ղու · բ · 30 · 31 ։ դ · 6 ։ Գոր · ժգ · 47 ։ իբ · 28 ։
Լ Սաղ · դե · 1 ։ ճ · 1 ։
Խ Թու · ժ · 10 ։ ա Մն · ժե · 28 ։ բ Մն · իժ · 27 ։
Ծ Սաղ · ղշ · 11 , ամ ։
Կ Եա · ծե · 12 ։
Լ Սաղ · ղշ · 10 · 13 ։

– Սաղ · ղգ · 1 ։
Բ Եզ · իե · 22 ։ Սաղ · ժբ · 10 · ա · 1 ։
Գ Սաղ · ղե · 9 ։
Դ Օր · իբ · 58 ։ Ցայս · ժե · 4 ։
Է Ցոր · լշ · 5 — 7 ։
Թ Ս – մ՝ դուն ով իրաւասուր զօրաւոր Թագաւոր ։

5 Հրաձրացուցէք Տէրը՝ մեր Աստուածը , ու երկրպագութիւն ըրէք անոր ոտքերուն պատուանդանին . Հանիկայ սուրբ է :
6 Իմովսէս ու Ահարոն անոր քահանաներուն մէջը , և Սամուէլ անոր անունը կանչողներուն մէջը , Տէրոջը կ՚աղաղակէին , ու անիկայ պատասխան կու տար անոնց .
7 Ամպի սիւնին մէջէն կը խօսէր անոնց հետ . անոնք կը պահէին անոր վկայութիւնները , ու այն հրամանը՝ որ իրենց տուաւ :
8 Ով Տէր՝ մեր Աստուածը , դուն կը լսէիր անոնց . Հնդուն անոնց նեղող Աստուած էիր , թէպէտ Իվրէժինդիր եղար անոնց գործերուն :
9 Բարձրացուցէք Տէրը՝ մեր Աստուածը , ու երկրպագութիւն ըրէք անոր սուրբ լեռանը վրայ . ինչու որ Տէրը՝ մեր Աստուածը սուրբ է :

ՍԱՂՄ · Ճ

1 Ուրախութեամբ գԱստուած գովելու յորդորանք մը՝ 3 անոր մեծութեանը , 4 ու կարողութեանը համար :

Գոհութեան սաղմոս :

1 Աղաղակեցէք Տէրոջը՝ ով բոլոր երկիր ,
2 Ծառայեցէք Տէրոջը ուրախութեամբ . անոր առջին եկէք ցընծութեամբ :
3 Ճանչցէք որ Եհովան է Աստուած . Ի անիկայ ստեղծեց մեզ , ու *չէ թէ մենք" . Հմենք անոր ժողովուրդը ու անոր արօտին ոչխարներն ենք :
4 Մտէք անոր դռները գոհութեամբ , ու անոր սրաձները օրհնութեամբ . դոհացէք անկէ , ու օրհնեցէք անոր անունը :
5 Վասն զի Տէրը բարի է . Հանոր ողորմութիւնը յաւիտեան է , ու անոր հաւատարմութիւնը ազգ մինչև ազգ :

ՍԱՂՄ · ՃԱ

1—8 Դաւիթ բարեպաշտութեան ուխտ ու խոստմունք կ՚ընէ :

Սաղմոս Դաւիթի :

1 Ողորմութիւն ու իրաւունք պիտի երգեմ . ով Տէր՝ քեզի սաղմոս պիտի ըսեմ ,
2 Հմխոհեմութիւնով պիտի քալեմ կատարելութեան ճամբուն մէջ . ե՞րբ ինծի պիտի գաս . Հիմ տանս մէջ սրտիս կատարելութիւնովը պիտի վարուիմ :
3 Աչքերուս առջին չեմ բան մը պիտի չդնեմ . Հմոլորածներուն գործը Հկ՚ատեմ . Թող անիկայ ինծի չփակչի :
4 Ծուռ սիրտը Թող դատուի ինծմէ . Հչարը պիտի չճանչնամ :
5 Ան որ ծածուկ կը խօսի իր ընկերին դէմ , պիտի ջնջեմ . Հան որ աչքերով բարձր է ու սրտով ամբարտաւան , անոր պիտի չհամբերեմ :
6 Իմ աչքերս երկրի հաւատարիմներուն վրայ պիտի ըլլան , որ ինծի հետ բնակին . Հկատարելութեան ճամբուն մէջ քալողը ինծի ծառայութիւն պիտի ընէ :
7 Նենգաւորը պիտի չբնակի իմ տանս մէջ . սուտ խօսողը աչքերուս առջին պիտի չհաստատուի :
8 Առտուանց Ի կանուխ պիտի ջնջեմ երկրին բոլոր ամբարիշտները , որ Տէրոջը քաղաքին բոլոր անօրէնութեան գործողները կորսընցնեմ :

ՍԱՂՄ · ՃԲ

1 Մարդարէն իր աղօթքին մէջ ծանր գանգատ մը կ՚ընէ . 12 բայց Աստուծոյ յաւիտենական նութիւնը ու ողորմութիւնը յիշելով՝ կը միխթարուի . 18 Հնամիր որ Աստուծոյ ողորմութիւնները անյիշատակ մնան . 23 իր տկարութիւնը կը զօրացնէ Աստուծոյ անփոփոխ ըլլալը միտը բերելով :

Վշտալիին աղօթքը՝ երբոր պէտք կը մարի ու իր զանգատը Տէրոջը առջին կը թափէ :

1 Ով Տէր՝ լսէ՛ իմ աղօթքս . Ե ու իմ աղաղակս Թող քեզի հասնի :
2 Ինծու երեսդ մի՛ ծածկեր ինծմէ իմ նեղութեանս օրը . Ե խոնարհեցուր ինծի քու ականջդ . շուտով պատասխան տուր ինծի ան օրը՝ որ հեղ կանչեմ :
3 Ինչու որ իմ օրերս մուխի պէս փճացան , և Հիմ ոսկորներս խըրիւի պէս այրեցան :
4 Սիրտս զարնուեցաւ ու Հխոտի պէս չորցաւ , անանկ որ իմ հացս ուտելու մոռցայ :
5 Հառաչանքիս ձայնէն Ե ոսկորներս մարմինիս փական :
6 Անապատին մէջի Ի հաւալուսին Հնմանեցայ , աւերակներուն բուվին պէս եղայ :
7 Հնկրուն մնացի , ու նմման եղայ տանիքին վրայ Հմինակ եղող ճընճղուկին :
8 Ամէն օր իմ թշնամիներս ինս կը նախատեն , Հիմ վրաս բարկացողները Հինծի դէմ երդում կ՚ընեն :
9 Ինչու որ մոխիրը հացի պէս կերայ , ու Հխմելիքս արցունքով խառնեցի
10 Քու բարկութենդ ու սրտմտութենէդ համար , ինչու որ իս վերցուցիր ու նետեցիր :
11 Հիմ օրերս երկրնյատ ստուերի պէս եղան . ու Հես խոտի պէս չորցայ :

ՂՀմա 9 ։
Ե ա մՏ · իը · 2 ։ Սաղ · ճլբ · 7 ։
ը Ղե · ժթ · 2 ։
Ի Երեմ. ժե · 1 ։
Ժ Եզ · ժգ · 15։ ժե · 25։ աթ.ագ · է · 9 ։ ժբ · 18։
Ի Եզ · լգ · 9 ։
Լ Հու · ժգ · 20 · Երեմ. խզ · 28 ։ Սոփ · գ · 7 ։
Ի Տես Եզ · լբ · 2 · ճե ։ Հու · ի · 12 , 24 ։ բ Օր , թ · 20 ։
Ժ ՀՀմ 5 ։ Եզ · ժե.2։ Սաղ · լդ · 3 · ճՃբ · 28 ։

Բ Սաղ.ճժթ. 73 ։ ճլթ · 13.ճե։ ճխԹ. 2 ։ Եփե · բ · 10 ։
Ե Սաղ · ՃԼԹ · 2 ։
Ղ Հմր · 14 ։
ՃՍաղ · իը · 4 ։ Տ՚ես Երեմ · ժա · 20 ։ բ Տիմ · դ · 14 ։
* կամ՝ ծածկոց ·
՛ Սաղ · ը · 3 ։
յ բ Օր · իե · 19 ։ Երեմ · ժ · 11 ։

ԳԼ · Դ

1 Սիօն իր ոգորմելի վիճակին վրայ կ՚ողբայ · 13 իր մեղքերը կը խոստովանի · 21 Եդովմին սպառնալիք կ՚ըլլայ · 22 Սիօն կը մխիթարուի ։

1 Ո՜ւկին ինչպէս իր գոյնը կորսընցուց , ո՜ մաքուր ոսկին փոխուեցաւ · սրբարանին քարերը ո՜ամէն փողոցներուն գլուխը թափուեցան ։
2 Սիօնի պատուական տղաքները՝ որոնք ընտիր ոսկիի հաւասար էին , ինչպէս բրուտի ձեռքով չինուած խեցեղէն ամաններու պէս սեպուեցան ։
3 †Վիշապները անդամ ծիծերնին կը հանեն , ո՜ իրենց լակոտներուն կաթ կու տան · իմ ժողովուրդիս աղջիկը անապատի †ջայլամնց պէս անգութ եղաւ ։
4 Ծաթնկերին լեզուն ծարաւութենէն ՚ի իր քմացը փակաւ · Է տըղաքները հաց ուզեցին · Բայց ա նոնց ջարդող չկար ։
5 Ազնիւ կերակուրներ ուտողները՝ փողոցներուն մէջը յուսահատութեան մնացին · կարմիր հագուստ ներով մեծցողները՝ ▲ աղբանոցներ ղդրկեցին ։
6 Եւ իմ ժողովուրդիս աղջկանը անօրէնութիւնը Սոդոմին մեղքէն մեծ եղաւ · Է որ ան մէկ վայրկեանի մէջ տակնուվրայ եղաւ , առանց ձեռ՚՚ ալ ձեռքերը անոր դպչելու ։
7 Անոր ազնուականները ձիւնէն սպրդուր՝ կաթէն ճերմակ էին · ո՜նոնց մարմինը ‡յակինթներէն կարմիր էր · անոնց կերպարանքը շափիւղայի կը նմանէր ։
8 ‖Անոնց դէմքը ածուխէն աւելի սև եղաւ · ու փողոցներուն մջը չեն ճանչցուիր · Անոնց մորթը ի-

Ն · ք · ղՖ · Իսր 588

րենց ոսկորներուն փակաւ · չորցաւ ՚՚ փայտի պէս եղաւ ։
9 Սուրէ մեռածները՝ անօթութենէ մեռածներէն երջանիկ էին · վասն զի ասոնք ագարակի արդեանցը պակսութենէն մաշեցան ու մեռան ։
10 ծՈղորմած կիներուն ձեռքերը իրենց տղաքը եփեցին · իմ ժողովուրդիս աղջիկանը կոտորածին ատենը՝ Անոնց կերակուր եղան ։
11 Տէրը իր սրտմտութիւնը կատարեց · Էիր սաստիկ բարկութիւնը թափեց · ԵՒ Սիօնի մէջ ֆ կրակ բըռընկցուց , որ անոր հիմերը կերաւ ։
12 Երկրի թագաւորները , ու աշխարհի բոլոր բնակիչները չհաւատացին թէ հակառակորդը ու թշնամին Երուսաղէմի դռներէն պիտի մտնէ ։
13 ‖Անոր մարգարէներուն մեղքերէն , անոր քահանաներուն անօրէնութիւններէն՝ որոնք անոր մէջտեղը արդարներուն արիւնը թափեցին ,
14 փողոցներուն մէջը կոյրերու պէս աստանդական պտըտեցան · Յարիւնով պղծուեցան · Չկրնացին որ մարդ մը կարող չէր անոնց զգեստներուն դպչելու ։
15 ‖Անոնց կը կանչէին · Ե՛տ քաշուեցէ՛ք՝ ով ՛պիղծե՛ր՚ , ետ քաշուեցէ՛ք , ետ քաշուեցէ՛ք , մի դպչիք · անոնք փախան ու ասդին անդին պտրտեցան · ազգերուն մէջ բսուեցաւ · Անոնք մշմէն ալ հոս չբնակին ։
16 Տէրոջը բարկութիւնը ցրուեց զանոնք · անոնց մշմէն ալ չնայեր · քահանայից երեսին պատիւ չբերին · ՛ծերերուն գթութիւն չբրին ։
17 ՛Մեզի ըլլա՜ օգնութեանը համար՝ պարապ տեղը մինչև հիմա աչքերնիս մաշեցան · դիտելով ըսպասեցինք անոնչ աղգի մը՝ որ չէր կրնար հդ ազատել ։
18 Ն Մեր քայլերը կ՚որսան , որ մեր փողոցներուն մէջը չպտըտինք · Ւ մեր վախճանը մօտեցաւ · մեր օրերը լեցուեցան · յիրաւի մեր վախճանը հասաւ ։
19 ՛Մեզ հալածողները ՚՚ երկինքի արծիւներէն արագընթաց եղան · մեզ լեռներու վրայ սաստիկ հալածեցին · անապատի մէջ մեզի համար դարանամուտ եղան ։
20 Մեր Ւնդացը շունչը՝ ՚՚ Տէրոջը օծեալը՝ Ւանոնց որոգայթներուն մէջը բռնուեցաւ , որուն համար մենք կ՚ըսէինք · Ազգերուն մէջ անոր հովանիին տակը պիտի ապրինք ։
21 ՛՚՚ Ցնծա և ուրախ եղիր՝ ով Եդովմի աղջիկը , որ Հուս երկրին մէջ

Ն · ք · ղՖ · Իսր 588

ծ Ես · խթ · 15 ։
Ի ԳԼ · բ · 20 ։
Լ Ր Օր · իը · 57 ։ դԹագ · ը · 29 ։
Ի Երեմ · է · 20 ։
ծ Ր Օր · լ · 22 ։ Երեմ · խա · 14 ։

Կ Երեմ · է · 31 ։ ը · 13 ։ ժ դ · 14 ։ իգ · 11 ։ 21 ։ Եզեկ · իր · 26 ։ 28 ։ Սոփ · գ · 4 ։
Հ Պատ · իգ · 31 ։ 37 ։
Յ Երեմ · բ · 34 ։
Ղ Թող · ժԹ · 16 ։
‖ Կա՛մ՝ Անոնց համար կը կանչէին · Ե՛տ քաշուեցէք · պիղծ են ։
ֆ Ղա · ժգ · 45 ։

՛ ԳԼ · է · 12 ։
յ դ Թագ · իդ · 7 ։ Ես · ի · 5 ։ լ · 6 ։ 7 ։ Երեմ · լ · 7 ։ Եզեկ · իԹ · 16 ։

Ղ Թագ · իե · 4 · 5 ։
Ն Եզեկ · է · 2 ։ 3 · 6 ։ Ամվ · ը · 2 ։

՚՚ բ Օր · իր · 49 ։ Երեմ · դ · 13 ։

Ն Ես · բ · 7 ։ ԳԼ · բ · 9 ։
Կ Երեմ · ծբ · 9 ։ Եզեկ · ժբ · 13 ։ ժԹ · 4 · 8 ։
՚՚ Տես Ֆող · ժա · 9 ։

Ն · Ք · Գ · ԻԲԲ 588

կը բնակիս . ՝քեզի ալ պիտի անցնի բաժակը . պիտի գինովնաս , ու ինքզինդ պիտի մերկացընես ։

22 Է՛ր ու անօրէնութիւնդ վերջացաւ՝ ով Սիօնի աղջիկը . քեզ ալ չի՛ պիտի գերի պիտի չտանի . ո՛վ անօրէնութեանդ այցելութիւն պիտի ընէ՝ ով Եդովմի աղջիկը . քու մեղքերդ պիտի յայտնէ ։

ԳԼ · Ե

1 Աղօթքի մէջ Սիօնին ցաւալի գանգատը առ Աստուած ։

1 ՈՎ եղաւ եղածը ՝յիշէ՛ ով Տէր . նայէ՛ , ու ի՛մ նախատինքը տես ։

2 Մեր ժառանգութիւնը օտարներուն անցաւ , մեր տուները՝ օտարազգիներուն ։

3 Հայր չունեցող որբեր եղանք . մեր մայրերը որբևարիներու պէս են ։

4 Մեր ջուրը ստակով խմեցինք . մեր փայտը գնով կու գայ ։

5 Տէ՛ր՝ ի՛ջ մեր պարանոցին վրայ ընկէ՛ հալածուեցանք . կ՝աշխատինք , ու հանգստութիւն չունինք ։

6 Հացով կշտանալու համար՝ ձեռ ՝ի՛ Եգիպտոս ու Ասորեստան ձեռք * երկրնդուցինք ։

7 Մեր հայրերը մեղք գործեցին , և ի՛նչան . ու անոնց անօրէնութիւնները մենք կը կրենք ։

8 Ծառաներ տիրեցին մեր վրայ . անոնց ձեռքէն ո՛չ ազատող չկայ ։

9 Անապատի սուրին երեսէն՝ մեր հացը՝ մեծ կեանքին վտանգովը ձեռք բերինք ։

10 Սովին սաստկութեանը պատճառաւ՝ ի՛ մեր մորթը փուռի պէս սեւցաւ ։

11 Կիներները Սիօնի մէջ խայտառակեցին , ու կոյսերը Ցուդայի քաղաքներուն մէջ ։

12 Իշխանները ձեռքովը՝ կախուեցան . ծերոց երեսին պատիւ չըրին ։

13 Երիտասարդները երկանաքարերը վերցուցին , ու տղաքը փայտի տակ ինկան ։

14 Ծերերը դադրեցան դուռը նստելէն , ու երիտասարդները իրենց երաժշտութենէն ։

15 Մեր սրտին ուրախութիւնը դադրեցաւ . մեր կաքաւելը սուգի փոխուեցաւ ։

16 Մեր գլխուն պսակը ինկաւ . հիմա վա՛յ մեզի , վասն զի մեղք գործեցինք ։

17 Ասոր համար՝ մեր սիրտը նուաղած է . ասոնց պատճառաւ խաւարեցան՝

18 Սիօն լեռանը պատճառաւ՝ որ ամայի եղաւ . անոր վրայ աղուէսներ կը պտրտին ։

19 Հաւուն ով Տէր՝ յաւիտեան կը մնաս . նստարդ աթոռդ դարէ ՝ի դար կը տե՛ւէ ։

20 Մեզ համար յաւիտեան մեզ կը մոռնաս , ու երկար ժամանակ մեզ կը թողուս ։

21 Դարձո՛ւր մեզ՝ ով Տէր , ու դառնանք . մեր օրերը առջինին պէս նորոգէ ։

22 Սակայն դուն բոլորովին մեզ մերժեցիր . մեր վրայ խիստ շատ բարկացար ։

Ն · Ք · Գ · ԻԲԲ 588

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՆ ՆՈՒՀԻԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Եզեկիելին մարգարէութեան ժամանակը՝ քա-
բար գետին քովը . 4 անոր տեսիլքը՝ որուն
մէջ չորս քերովբէները , 15 չորս անիւները , 26
ու Աստուծոյ փառքը տեսաւ ։

1 Եւ եղաւ որ երեսներորդ տարին՝ չորրորդ ամսուն հինգին՝ երբոր ես գերիներուն մէջը Քար գետին քովն էի , Բերկինքը բացուեցաւ , ու Աստուծոյ տե-
2 սիլքները տեսայ ։ Ամսուն հինգերորդ օրը՝ այսինքն Յովակիմ թագաւորին գերութեանը հինգ-
3 երորդ տարին , քաղդեացւոց երկրին մէջ՝ գետին քովը՝ Բուզիի որդւոյն Եզեկիել քահանային յայտնապէս Տէրոջը խօսքը եղաւ . և հոն անոր վրայ Տէրոջը ձեռքը եղաւ ։

4 Ու տեսայ որ ահա Հիւսիսային կողմէն Ամրկալից հով՝ մեծ ամպ ու բռնկած կրակ կու գար , որուն բոլորտիքը պայծառութիւն կար , ու մէջտեղէն՝ կրակին մէջէն ոսկեպղինձի նմանութիւն մը կ'երե-
5 ։ Նաև Եւ անոր մէջը Հոյակ կենդանիի կերպարանք կար . ու Բանոնց երեւոյթը ասիկա էր . Մանոնք
6 մարդու կերպարանք ունէին ։ Եւ Համեն մէկը չորս երես ունէր . ու անոնց Համեն մէկը չորս թեւ ունէր ։
7 Եւ անոնց ոտքերը՝ շիտակ ոտքեր էին , ու անոնց ոտքերուն Թաթը՝ զուարակի ոտքին Թաթին պէս էր . ու Հփայլուն պղինձի պէս կը
8 փայլէին ։ Եւ Համեն մէկը՝ Բանոնց մէջը՝ անոնց Թեւերուն տակը մարդու ձեռքեր կար . ու չորսն ալ
9 երեսներ ու Թեւեր ունէին ։ Բանոնց Թեւերը իրարու կցուած էին . Հանոնք երթալու ատեննին չէին դառնար . ամէն մէկը շիտակ Յառաջ
10 կ'երթար ։ Եւ անոնց Հերեսներուն ձևը առիւծի էր . չորսն ալ մարդու երես ունէին , ու աջ կողմն առիւծի երես . նաև չորսն ալ ձախ կողմն եզի երես , ու չորսն ալ
11 արծիւի երես ունէին ։ Ու անոնց երեսները այդպէս էին . և անոնց Թեւերը վերէն կը տարածուէին . երկուքը իրարու կցուած էին , Նու երկուքը անոնց մարմինը կը ծած-

12 կէին ։ Եւ ամէն մէկը Հչիտակ յառաջ կ'երթար . ո՞ղին ուր որ երթալու ըլլար , անոնք հոն կ'երթային . Հ գացած ատեննին
13 չէին դառնար ։ Եւ կենդանիներուն կերպարանքը՝ անոնց երեւոյթը՝ կրակի վառած կայծերու պէս՝ Հջահերու երեւոյթին պէս էր , որ կենդանիներուն մէջտեղը կը պտրտէր . ու ան կրակը լուսափայլ էր . ու կրակէն փայլակներ կ'ելլէր ։
14 Եւ կենդանիները Հփայլակի երեւոյթին պէս Հկը վազէին , ու կը դառնային ։
15 Ու կենդանիներուն նայեցայ , և ահա գետնի վրայ՝ կենդանիներուն Մէն Մի Մ քովը՝ չորս երեսով
16 ։ անիւ մը կար ։ Հանիւներուն երեւոյթը ու անոնց շինուածքը Դոսկեքարի կը նմանէր . և չորսին ձևը մէկ էր . ու անոնց երեւոյթը ու շինուածքը այնպէս էր , որպես Թէ անիւ անիւի մէջ է-
17 ղած ըլլար ։ Գացած ատեննին՝ իրենց չորս կողմերուն վրայ կ'երթային . Դգացած ատեննին Էրենց Մէ Մ՞Յ Յ՞Մ Հշիտ չէին դառնար ։
18 Եւ անոնց շրջանակները բարձր ու ահեղ էին . և չորսին ալ շրջանակները ամէն կողմն Մաչքերով
19 լեցուն էին ։ Ու Երբոր կենդանիները կ'երթային , անիւներն Հ անոնց քովէն կ'երթային . ու երբոր կենդանիները երկրի երեսէն կը վերանային , անիւներն Հ կը վերա-
20 նային ։ Ո՞ղին ուր որ երթալու ըլլար , անոնք հոն՝ ոդին գացած տեղը կ'երթային . անիւներն ալ անոնց հետ Մկտեղ կը վերանային . Քանզի անիւներուն ոդին կար ։
21 Նիներուն ոդին կար ։ Երբոր ա-նոնք կ'երթային , ասոնք Հ կ'երթային , ու երբոր անոնք կը կայնէին , ասոնք Հ կը կայնէին . ու երբոր անոնք երկրի երեսէն կը վերանային , անիւները անոնց հետ կը վերանային . քանզի անիւներուն մէջը կենդանիներուն ոդին կար ։
22 Եւ Հկենդանիներուն գլխուն վրայ՝ երկնէք հաստատութեանը նմանութիւնը՝ վերէն անոնց գլուխներուն վրայ տարածուած էր՝ յուսափայլ

Ղ Հմր 9 · Գլ · ժ · 22 ։
Ե Հմր 20 ։
Յ Հմր 9 · 17 ։
Ա Ցայտ · ·, · 5 ։
Ն Մատ · իդ · 23 ։
Ղ Ես · Զաք · դ · 10 ։
Ա Գլ · ժ · 9 ։
Ղ Գլ · ժ · 9 · 10 ։
Պ Դան · ժ · 6 ։
Է Հմր 12 ։
Ա Գլ · ժ · 12 ։
Զաք · դ · 10 ։
Ա Գլ · ժ · 16 · 17 ։
Է Հմր 12 ։
Գ Գլ · ժ · 17 ։
Բ Հմր 19 · 20 · Գլ · ժ · 17 ։
Ց Գլ · ժ · 1 ։

Ա Գլ · ժ · 15 · 23 · ժ · 15 · 20 · 22 · խգ · 3 ։
Բ Մատ · դ · 16 · Գոր · է · 55 · ժ · 11 · Ցայտ · ժԹ · 11 ։
Է Գլ · ը · 8 ։
Ը դ Թագ · իդ · 12 · 15 ։
Ի գ Թագ · ժը · 46 · դ Թագ · գ · 15 · Գլ · գ · 14 · 22 · ը · 1 · խ · 1 ։
Ղ Երեմ · ա · 14 · դ · 6 · է · 1 ։
Ի Երեմ · իդ · 19 · իե · 32 ։
Ը Ցայտ · դ · 6 · ը ։
Ր Գլ · ժ · 8 · ը ։
Ժ Հմր 10 ։
Ի Գլ · ժ · 14 · 21 ։
Լ Դան · ժ · 6 · Ցայտ · ա · 15 ։
Ի Գլ · ժ · 8 · 21 ։
Ծ Հմր 11 ։
Կ Հմր 12 · Գլ · ժ · 11 ։
Հ Ցայտ · դ · 7 ։
Ն Ես · ը · 2 ։

23 ակնվանիի նման ։ Եւ ան հաստա-
տութեանը տակը՝ անոնց թեւե-
րը իրարու կը չիտկուէին . ամէն
մէկը մէկ կողմէն էր մարդկէն
երկու ըն ուներ , և ամէն մէկը մէ-
կալ կողմէն իր մարմինը ծածկող
24 երկու ըն ուներ ։ Ու երբոր կ'եր-
թային , անոնց թեւերուն ձայնը
լսեցի , † չատ ջուրերու ձայնին պէս՝
* Ամենակարողին ձայնին պէս , աղ-
մուկի ձայնի , — բանակի ձայնի
պէս . երբոր կը կայնէին , իրենց
25 թեւերը կ'իջեցընէին ։ Ու երբոր
անոնք կը կայնէին , — թեւերնին
կ'ջեցընէին , անոնց գլխուն վրայ
եղող հաստատութենէն ձայն մը
կ'ելլէր ։
26 * Ու անոնց գլխուն վրայ եղող
հաստատութենէն վեր՝ † շափիւղայ
քարի երեւոյթով աթոռի նմանու-
թիւն մը կար , ու ան աթոռի
նմանութեանը վրայ՝ մարդու կեր-
պարանքով նմանութիւն մը կար
27 վերէն ։ Եւ անոր երիկամանը ե-
րեւութէն վեր՝ ոսկեպղինձի նման՝
բոլորտիքը — ներսը կրակի նմա-
նութեան պէս տեսայ . ու երիկա-
մանը երեւութէն վայ՝ կրակի նմա-
նութեան պէս տեսայ . ու պայծա-
28 ռութեամբ շրջապատած էր . Ինչ-
պէս է անձրեւի օրը ամպի մէջ ե-
ղող ծիածանին երեւոյթը , այնպէս
էր ան շրջապատած պայծառու-
թեանը երեւոյթը ։ † Ասիկայ Տէրո-
ջը փառաց նմանութեանը երե-
ւոյթն էր . ու երբոր տեսայ , ես
բերնիս վրայ ինկայ . ու մէկ խօսողի
մը ձայնը լսեցի ։

ԳԼ . Բ

1 Եզեկիէլին յանձնուած պատուէր . 6 իրեն
ըրուած պատուէրը . 9 իր ծանր մարգարէ-
ութեանը տումը ։

1 Ու ինծի ըսաւ . Որդի մարդոյ ·
ոտքերուդ վրայ կայնէ , ու
2 քեզի հետ խօսիմ ։ Ու ինծի հետ
խօսածին պէս՝ Հոգին իմ վրաս
եկաւ , և զիս ոտքերուս վրայ վեր-
ցուց . ու ինծի հետ խօսողին ձայնը
3 լսեցի . Եւ ինծի ըսաւ . Որդի մար-
դոյ՝ ես քեզ Իսրայէլի որդւոցը՝
ինծի դէմ ապստամբող ապըս-
տամբներուն ազգին կը խրկեմ , որ
† Թէ իրենք և Թէ իրենց հայրերը
մինչև այս օրս ինծի դէմ յանցաւոր
4 գտնուեցան . Ու անոնք պինտ-
երես և խստասիրտ որդիներ են . ես
քեզ անոնց կը խրկեմ . ու անոնց
ըսես . Տէր Եհովան այսպես կ'ըսէ ։
5 † Եւ անոնք՝ Թէ լսեն , և Թէ զանց
ընեն , (քանզի անոնք ապստամբ-
նէրու տուն են ,) սակայն Նպիտի
գիտնան Թէ մէջերնին մարգարէ
կայ ։
6 Ու դուն որդի մարդոյ՝ † անոնցմէ
մի՛ վախնար , և անոնց խօսքերէն
մի՛ վախնար . Թէև քու քովդ
է * կամակոր ու ծուռ մարդիկ" կան ,
և կարիճներու քով կը բնակիս .
† անոնց խօսքերէն մի՛ վախնար , և
անոնց երեսէն մի՛ զարհուրիր ,
† Թէև անոնք ապստամբներու տուն
7 են ։ Ու անոնց իմ խօսքերս խօ-
սիս , է Թէ լսեն և Թէ զանց ընեն .
քանզի անոնք ապստամբ են ։
8 Ու դուն որդի մարդոյ՝ քեզի ը-
սածս մտիկ ըրէ . ան ապստամբ
տանը պէս ապստամբ մի՛ ըլլար .
բերանդ բաց , ու Թքեզի տուածս
9 կեր ։ Ու նայեցայ , և ահա † ինծի
երկընցած ձեռք մը , և ահա Նանոր
10 մէջը դիրքի տումս մը կար . Ու
զանիկայ իմ առջևս բացաւ . և ա-
նիկայ ներսէն ու դուրսէն գրուած
էր . ու անոր վրայ ողբեր , հառա-
չանք ու վայ գրուած կար ։

ԳԼ . Գ

1 Եզեկիէլ ան տումը կ'ուտէ ։ 4 Ապստամբ կը
գրաչելերէ գոնիկայ ։ 15 կը տարվեցընէ անոր՝
մարգարէութեան կանոչը ։ 22 կը յայտնէ Թէ
ինչը կը դոցէ ու կը բանայ մարգարէին բերա-
նը ։

1 Ու ինծի ըսաւ . Որդի մարդոյ՝
ինչ գտածդ կեր . ես տումը
կեր , ու դնա Իսրայէլի տանը խօ-
2 սէ ։ Եւ իմ բերանս բացի , ու ան
3 տումը ինծի կերցուց . Եւ ինծի
ըսաւ . Որդի մարդոյ՝ աս իմ քեզի
տուած տումս փորիդ կերցուր , ու
աղիքներդ լեցուր . ու ես † ուտելիս
կերայ . ու բերնիս մէջը † մեղրի պէս
4 անուշ եղաւ ։ Ան ատենը ինծի
ըսաւ . Որդի մարդոյ՝ դնէ Իսրա-
յէլի տանը գնա , ու իմ խօսքերովս
5 անոնց խօսէ ։ Վասն զի դուն
դժուարիմաց խօսք և ծանր լեզու
ունեցող ազգի մը չխրկուեցար .
6 հապա Իսրայէլի տանը . Դժուա-
րիմաց խօսք ու ծանր լեզու ունե-
ցող շատ ազգերուն չէ , որոնց խօս-
քերը դուն չես հասկընար . յիրաւի
† Թէ որ քեզ անոնց խրկէի , անոնք
7 քեզի մտիկ պիտի ընէին ։ Բայց
Իսրայէլի տունը քեզի մտիկ ընել
պիտի չուզեն . Եվասն զի չեն ուզեր
ինծի մտիկ ընել . Նորովհետև բոլոր
Իսրայէլի տունը պինտերես ու խրա-
8 տասիրտ է ։ Ահա անոնց երեսին
դէմ քու երեսդ պինտ , ու անոնց
ճակատին դէմ քու ճակատդ պինտ
9 ըրի ։ † Քու ճակատդ վէմէն ամուր՝
անդամանդի պէս ըրի . Նանոնցմէ
չվախնաս , ու անոնց երեսէն չդար-
հուրիս , Թէև անոնք ապստամբնե-
րու տուն են ։

Ն . ք . ԶԲ . Իբր 595

Ե Երեմ . ա . Տ . 17 ; Ղա . ժբ . 4 ։
Բ Երեմ . ե . 28 ։ Տես Ե . Թ . 15 ։ Մէք . է . 4 ։
* Կ — Ծ' փու-
ռուածները
Ը Գլ . է . 9 ։ ա զատ . գ . 14 ։
Ժ Գլ . է . 9 ։ 26 , 27 ։
Ի Երեմ . ա . 7 . 17 ։
Լ Հմր 5 ։
Ի Ցայտ . ժ . 9 ։
Ի Գլ . ը . 3 ։ Երեմ . ա . 9 ։
Ի Գլ . է . 1 ։

— Գլ . բ . Տ ։ 9 ։
Բ Ցայտ . ժ . 9 ։ Տես Ե . Բեմ . ժե . 16 ։
Ի Սաղ . ժբ . 10 ։ Հժբ . 103 ։
Ժ Մատ . ժա . 21 , 23 ։
Ի Ցոհ . ժե . 20 ։ Ղ Գլ . ր . 4 ։
Ի Նա . ե . 7 ։ Երեմ . ա . 18 ։ ժե . 20 ։ Տես Մէք . գ . 8 ։
Բ Երեմ . ա . Տ . 17 ։ Գլ . ր . 6 ։

Ն . ք . ԶԲ . Իբր 595

— Գլ . ժ . 5 ։
Ի Գլ . Խգ . 2 ։ Դան . ժ . 6 ։ Ցայտ . ա . 15 ։
* Ցար . լէ . 4 . 5 ։ Սաղ . ԽԹ . 3 . 4 ։ կը . 33 ։
* Գլ . ժ . 1 ։
Ի Եզ . իդ . 10 ։
— Գլ . ը . 2 ։
Բ Ցայտ . գ . 3 ։ ժ . 1 ։
Ի Գլ . դ . 28 ։ ը . 4 ։
Ժ Գլ . դ . 28 ։ Դան . ը . 17 ։ Գր . Թ . 4 ։ Ցայտ . ա . 17 ։
— Դան . ժ . 11 ։
Բ Գլ . դ . 21 ։
Ի Երեմ . գ . 25 ։ Գլ . ի . 18 ։ 21 , 30 ։
Ժ Գլ . դ . 7 ։
Ի Գլ . գ . 11 ։ 25 , 27 ։
Ղ Գլ . ԼՁ . 33 ։

Ն · Ք · Գ · 595

10 Եւ Տէրը ինծի ըսաւ . Որդի՛ մարդոյ , իմ բոլոր խօսքերս՝ որ քեզի պիտի խօսիմ , սրտիդ մէջը ընդ-
11 դունէ , ու ականջներովդ լսէ . Եւ դնա գերիներուն մէջը ժողովուրդիդ որդւոցը մէջ , ու ա-նոնց խօսէ , և անոնց ըսէ . Ի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Թէ մարիկ ընէն , և թէ զանց ընէն ։
12 Ան ատենը Ի Հոգին զիս վերցուց , ու ետևէս մեծ շարժումի ձայն մը լսեցի , որ Կ'ըսէր . Տէրոջը փառքը
13 օրհնեալ ըլլայ իր տեղէն ։ Եւ կենդանիներուն թևոցը իրարու զարնելուն ձայնը , ու անոնց քովի ա-նիւներուն ձայնը , ու մեծ շարժումի
14 ձայն լսէի ։ Եւ Հոգին զիս վերցուց տարաւ , ու ես իմ հոգիիս տաքութենէն դառնութեամբ գացի . ու Տէրոջը ձեռքը իմ վրաս
15 եղաւ զօրութեամբ ։ Եւ գերքար գետին քովը բնակող Թէլապիսի գերիներուն եկայ , ու Ի անոնց նըստած տեղը նստայ , և հոն եօթը օր անոնց մէջը ապշած նստայ ։
16 Ու եօթը օրէն ետքը՝ Տէրոջը
17 խօսքը ինծի եղաւ՝ ըսելով , Ի Որդի՛ մարդոյ՝ քեզ Իսրայէլի տանը Կ դէտ դրի . ու իմ բերնէս խօսք լսես , ու իմ կողմանէս զանոնք զգուշա-
18 ցընես ։ Երբոր ամբարիշտին ըսեմ Թէ՝ Անշուշտ պիտի մեռնիս , ու դուն զանիկայ չզգուշացընես , ու չզրուցես որ ամբարիշտը ապրեցընելու համար՝ իր չար ճամբայէն զգուշացընես . ան ամբարիշտը Ի իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի . բայց անոր արիւնը քու ձեռ-
19 քէդ պիտի փնտռեմ ։ Իսկ թէ որ դուն ամբարիշտը զգուշացընես , ու անիկայ իր ամբարշտութենէն ու չար ճամբայէն չդառնայ , անիկայ իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի . Ի բայց դուն քու հոգիդ ա-
20 զատած կ'ըլլաս ։ Ու երբոր Ն արդարը իր արդարութենէն դառնայ , ու չարութիւն ընէ , ու ես անոր առջևը գայթակղութիւն դնեմ որ անիկայ մեռնի . զանիկայ չզգուշացընելուդ համար՝ անիկայ իր մեղքին մէջը պիտի մեռնի , և անոր ըրած արդարութիւնը պիտի չյիշուի . բայց անոր արիւնը քու
21 ձեռքէդ պիտի փնտռեմ ։ Իսկ թէ որ դուն ան արդարը զգուշացընես՝ որ արդարը մեղք չգործէ . ու թէ որ անիկայ մեղք չգործէ , անիկայ անշուշտ պիտի ապրի՝ խրատ մարիկ ընդունելուն համար . ու դուն քու հոգիդ ազատած պիտի ըլլաս ։
22 Եւ հոն Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ , ու ինծի ըսաւ . Ելի , Ի դաշտը դնա , ու հոն քեզի հետ պիտի

23 խօսիմ ։ Եւ ես ելայ՝ դաշտը գացի . և ահա հոն կայներ էր Ի Տէրոջը փառքը , Ի Քորար գետին քովը տեսած փառքիս պէս . Ես երեսիս
24 վրայ ինկայ ։ Եւ Ի Հոգին իմ վրաս եկաւ , ու զիս ոտքի վրայ կայնեցուց . և ինծի հետ խօսեցաւ , ու ինծի ըսաւ . Գնա՝ տանդ մէջ պա-
25 հուըտ՝ ։ Ու , դուն որդի՛ մարդոյ՝ ահա Ն քու վրադ կապանքներ պիտի դնեն , և անոնցմով քեզ պիտի կապեն . ու անոնց մէջը պիտի չելլես ։
26 Եւ Ղ քու լեզուդ քու ըմպիդ պիտի-փակցընեմ՝ , ու համր պիտի ըլլաս . և անոնց մէջը՝ յանդիմանող մարդու պէս պիտի չըլլաս . Վասն զի անոնք ապստամբներու տուն
27 են ։ Բայց երբոր ես քեզի հետ խօսիմ՝ , քու բերանդ պիտի բանամ . ու անոնց պիտի ըսես . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Լսողը թող լսէ՝ , ու զանց ընողը թող զանց ընէ . Վասն զի անոնք ապըստամբներու տուն են ։

Ն · Ք · Ջ · 695

Ց Գ · ա · 28 ։
Ն Գ · ա · 1 ։
Ը Գ · ա · 28 ։
Ի Գ · բ · 2 ։

Ը Գ · դ · 8 ։

Ղ Գ · իդ · 27 · Ը · ա · 20 , 22 ։

Ը Գ · բ · 5 , 6 , 7 ։

Ի Գ · իդ · 27 · Լ · 22 ։
Ի Հմր 11 ։

Լ Հմր 9 · 26 ։ Գ · Ժբ · 2 · 3 ։

Գ Լ · Դ

1 Պաշարման օրինակով մը կը ցուցուի Ցերուսաղէմին կատաստրոֆին հաստատելէն մինչև գերութեան ժամանակին միջոցը ։ 9 Պաշարման տանելի պաշարին միջոցովը՝ ցոյն ապատկերելը կը ցուցուի ։

1 Ու դուն որդի՛ մարդոյ՝ քեզի մէկ աղիւս մը առ , ու զանիկայ առջևդ դիր , և անոր վրան քաղաք մը՝ այսինքն Երուսաղէմը գծագրէ ։
2 Ու անոր բոլորտիքը պաշարում դիր , և անոր դէմ մարտկոց շինէ , ու անոր դէմ պատնէշ կանգնէ , և անոր դէմ բանակ կազմէ , ու անոր բոլորտիքը Ո պատերազմա-
3 կան մեքենաներ դիր ։ Եւ դուն քեզի երկաթէ տապակ մը առ , ու զանիկայ՝ քուկին ու քաղաքին մէջտեղը՝ երկաթէ պարիսպի նման դիր , ու քու երեսդ անոր դէմ շինէ՝ , որ անիկայ պաշարուի . ու զանիկայ պաշարէ՝ . Ի ասիկայ Իսրայէլի տանը նշան ըլլայ ։
4 Եւ դուն քու ձախ կողմիդ վրայ պառկէ՝ , ու անոր վրայ դիր Իսրայէլի տանը անօրէնութիւնը . ա-նոր վրայ պառկած օրերուդ թուովը՝ անոնց անօրէնութիւնը կրես ։
5 Քանզի ես անոնց անօրէնութեանը տարիները օրերու թուովը՝ քու վրադ դրի՝ իրեք հարիւր ինսնսուն օր , որ Ի Իսրայէլի տանը անօրէնու-
6 Թիւնը կրես ։ Ու երբոր ան օրերը լմընցընես , նորէն պառկիս քու աջ կողմիդ վրայ , ու քառասուն օր Ցուդայի տանը անօրէնութիւնը կրես . քեզի ամէն մէկ տարիին տեղը մէկմէկ օր տուի ։

Ա Գ · ժբ · 7 · Տ · 9 ։

Ի Ես · ծբ · Տ · ձղ · 10 · կբ · 6 · Երեմ · ձ · 17 ։

Հ Գլ · լէ · 6 · Ցօն · ը · 21 , 24 ։

Ն Եզ · խթ · 4 · 5 · Գոր · ի · 26 ։

Ղ Գլ · ժբ · 24 · լէ · 12 , 13 ։

Ե Հմր 14 · Գլ · ա · 3 ։

Ի Գլ · բ · 4 ։

Ա Գ · ժբ · 14 · Գլ · ը · 3 · Տես գ Թագ · ժբ · 12 · դ Թագ · բ · 16 · Գոր · ը · 39 ։

Ի Հմր 12 · Գլ · ը · 3 ։

Լ Դ Թագ · գ · 15 · Գլ · ա · 3 · ը · 1 · լէ · 1 ։

Ի Ցօր · բ · 13 · Սաղ · հլէ · 1 ։

Ե Գլ · լէ · 7 · Տ · 9 ։

Ի Ես · ծբ · Տ · ձղ · 10 · կբ · 6 · Երեմ · ձ · 17 ։

Ա Հմր 14 · Գլ · ա · 3 ։

Ի Գլ · բ · 4 ։

7 Եւ քրե Եբեսդ դէպ 'ի Երու-
սաղէմի պաշարումը չիտկես , ու
.քրե բազուկդ մերկացընես , ու ա-
նոր վրայ մարգարեութիւն ընես ,
8 Եւ ես ահա քրե վրադ կապանք-
ներ պիտի դնեմ, որ մէկ կողմիդ մի-
կալ կողմիդ չդառնաս , մինչև որ
քրե պաշարման օրերդ լմընցընես ։
9 Ու դուն քեզի ցորն , գարի ,
բակլայ , ոսպ , կորնակ , ու հաճար
առ , և զանոնք ամանի մը մէջ
դիր , ու անոնցմէ քեզի հաց շինէ .
զանիկայ՝ քրե յ–ի կողմիդ վրայ
պառկած օրերուդ համրանքովը իր-
րեզ հարիւր իննսուն օր ուտես ։
10 Եւ ուտելու կերակուրդ կշռով
ըլլայ , օրը քսան սիկղ . զանիկայ
11 ժամանակ ժամանակ ուտես ։ Եւ
ջուրը չափով՝ հինգնի մը վեցերորդ
մասը իմնս . զանիկայ ժամանակ
12 ժամանակ խմես ։ Եւ ան ի–ր
ր–ի–ր–ր գարիղէն շօթերու պէս
ընելով ուտես . ու զանիկայ՝ անոնց
աչքին առջևը՝ մարդու աղբի վրայ
13 եփես ։ Եւ Տէր ըսաւ . Ի հար-
կէն որդիքը այսպէս պղծութեամբ
պիտի ուտեն իրենց հացը ան ազ-
գերուն մէջ , ուր որ զանոնք պիտի
14 ըրլեմ ։ Ու ես ըսի . Ո՛հ , Տէր
Եհովայ՝ ահա իմ անձս չպղծուե-
ցաւ . և իմ տղայութենէս մինչև
հիմա ես մեռելոտի կամ գազանաբեկ
չկերայ . ու իմ բերանս չպիղծ միս
15 չմտաւ ։ Եւ ինծի ըսաւ . Նայէ ,
քեզի մարդու աղբին տեղը՝ կովի
քարոր տուի , ու քրե հացդ անոր
վրայ եփես ։
16 Նաև ինծի ըսաւ . Որդի մար-
դոյ՝ ահա ես Երուսաղէմի մէջ ի հա-
ցին ցուցը պիտի կոտրեմ , ու
ձ հացը կշռով և անձկութեամբ
պիտի ուտեն , ու ի ջուրը չափով և
17 ապշութեամբ պիտի խմեն ։ Ասոնց
ալ հացի պակսութիւն
պիտի ըլլայ , և իրենց անօրինու-
թիւնովը պիտի հալին ։

ԳԼ . Ե

1 Մաղ կորելու օրինակով 5 կը ցուցուի Երու-
սաղէմի դատաստանը իր ապստամբութեանը
համար , 12 սովով , սուրով , ու ցիրուցան
ըլլալով ։

1 Ու դուն որդի մարդոյ՝ քեզի սուր
դանակ մը առ , քեզի սափրիչի
ածելի մը առ , և զանիկայ գլխուդ
վրայէն , ու մօրուքիդ վրայէն ան-
ցուր . և քեզի կշիռ մը առ , ու
2 մազերը բաժնէն բաժնի ըրէ ։ Ե՛ր-
րորդ մասը՝ քաղաքին մէջ կրակով
պիտի այրես , երրորդ մասը առնես ,
և դաշնակով զարնելու տեղը բոլոր-
տիքը . ու երրորդ մասը հովին
ցրուես . ու ես անոնց ետևէն սուր
3 պիտի քաշեմ ։ Եւ անոնցմէ քիչ
թիւով առնես , ու զանոնք քր-
4 զանգիներուդ մէջը ծրարես ։ Եւ
դարձեալ անոնցմէ առնես , ու զա-
նոնք կրակը նետես , և զանոնք կրա-
կով պիրես . անկէ բոլոր Իսրայէլի
տանը կրակ պիտի ելլէ ։
5 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ա-
սիկայ Երուսաղէմն է . զանիկայ
ազգերուն մէջը , ու իր բոլորտիքը
6 եղող երկիրներուն մէջը դրի ։ Եւ
անիկայ իմ *դատաստաններս՝ ազ-
գերէն , ու իմ կանոններս՝ իր բո-
լորտիքը եղող երկիրներէն աւելի
ամբարշտութեան փոխեց՞ . վասն
զի իմ դատաստաններս մերժեցին ,
7 և իմ կանոններովս չգալեցին ։ Ա-
նոր համար Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ . Որովհետև ձեր բոլորտիքը
եղող ազգերէն աւելի †ապստամբ
եղաք , իմ կանոններովս չգալեցիք ,
և իմ դատաստաններս՝ ի դործ չը-
դրիք . Ոչ ալ ձեր բոլորտիքը եղող
հեթանոսներուն սովորութեանցը
8 համեմատ ըրիք . Ուստի Տէր
Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես
քեզի դէմ եմ . ու ազգաց աչքե-
րուն առջևը քրե մէջդ դատաստան-
9 ներ 'ի գործ պիտի դնեմ ։ Եւ քրե
բոլոր պղծութիւններուդ համար՝
ես անոնկ բան մը պիտի ընեմ քրե
մէջդ , որուն նմանը ոչ ըրած եմ ,
10 ոչ ալ պիտի ընեմ ։ Ուստի համար
քրե մէջդ հայրերը՝ իրենց տղայրը
պիտի ուտեն , ու տղայրը իրենց
հայրերը պիտի ուտեն . և քրե մէջդ
դատաստաններ 'ի գործ պիտի դը-
նեմ , ու քրե բոլոր մնացորդդ ցա-
11 ռին հովին ցրուեմ ։ Ուստի
համար ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր
Եհովան , որովհետև դուն քրե էրս-
ըր դարշութիւններովդ , ու բոլոր
պղծութիւններովդ ելիմ սրբարանս
պղծեցիր , ես ալ անշուշտ ետևդ պի-
տի կոտրեմ . Եւ իմ աչքս պիտի
12 չխնայէ , ու պիտի չողորմիմ ։ Ե՛րբ
երրորդ մասդ ժանտախտով պիտի
մեռնին , և քրե մէջդ սովով պիտի
սպառին . և քրե երրորդ մասդ չորս
կողմդ սրով պիտի իյնան . ու ի վեր-
րորդ մասդ ամէն հովի պիտի ըս-
ռուեմ , ու հանոնց ետևէն սուր
13 պիտի քաշեմ ։ Ա՛յսպէս իմ բար-
կութիւնս պիտի կատարուի , և
իմ սրտմտութիւնս անոնց վրայ
պիտի իջնցընեմ , ու վրէժ պիտի
առնեմ . ու երբոր իմ սրտմտու-
թիւնս անոնց վրայ կատարեմ ,
պիտի դիտնան թէ ես Տէրս՝ իմ
14 նախանձովս խօսեցայ ։ Եւ ամէն
անցնողին աչքերուն առջևը՝ քրե

Ն · ք · ՀՖ · 595

Ե ԳԼ · ԳԻ · 25 ։

Ե ՈՎԼ · Թ · 3 ։

Ը ԵԶ · ԻՐ · 31 ։ Ղև · ժա · 40 ։ ԺԿ · 15 ։

Ը ՐՕր · ԺԳ · 3 ։ Եռ · կն · 4 ։

Թ Ղև · ԻԶ · 26 ։ Սաղ · ճԸ · 16 ։ Եռ · փ · 1 ։ ԳԼ · ե · 16 ։ ԺԿ · 13 ։

Ժ ՀՇՄ 10 ։ ԳԼ · ԺՐ · 19 ։

ԺԱ Ղև · ԻԶ · 33 ։ ԳԼ · ԻԳ · 23 ։

Ն · ք · ՀՖ · 594

Ե Երեմ · խ · 6 ։ ԺՐ · 16 ։

Ը Երեմ · խա · 1 ։ 2 · ԸՐ ։ խդ · 14 ։

* կ–ի՛ դատաստաններս՝ ազգե-
րէն , ու իմ կանոններս՝ իր բո-
լորտիքը եղող երկիրներէն աւելի
ամբարշտութեան փոխեց՞ . վասն
զի իմ դատաստաններս մերժեցին ,

† կ–ի՛ խը-
ռովայզ

Ե Երեմ · բ · 10 ։ 11 ։ ԳԼ · ԺԶ · 47

Ը ՈՂԶ · դ · 6 ։ Դան . Թ . 12 ։ Ա՛մվ . գ · 2 ։

Ի Ղև · ԻԳ · 29 ։ ԸՕր · իբ · 53 ։ դՅոգ . գ · 29 ։ Երեմ . ԺՐ · 9 ։ ՈՂր · ր · 20 ։ գ · 10 ։

Ժ ՀՇՄ 12 ։ Ղև · ԻԶ · 33 ։ ՐՕր · իբ · 64 ։ ԳԼ · ԺԲ · 14 ։ Ջաբ · ր · 6 ։

Ի ԳԼ · ժա · 21 ։

ԼՐՄՆ · ԼԶ · 14 ։ ԳԼ · ը · 5 ։ Ը ։ ԼԳ · 38 ։

Ի ԳԼ · է · 4 ։ 9 ։ ը · 18 ։ ԾՐ · 10 ։

Ի Տէս ՀՇ 2 ։ Երեմ . ԺԸ · 2 ։ ԼԱ · 9 ։ ԳԼ · ը · 12 ։

Ի Երեմ . Ի · 16 ։ ՀՇ 2 ։ 10 ։ ԳԼ · ը · 8 ։

Հ Ղև . ԻԶ · 23 ։ ՀՇ 2 ։ ԳԼ · ԺԲ · 14 ։

Ն ՈՂր · գ · 11 ։ ԳԼ · ը · 12 ։ է · Տ ։

Ո ԳԼ · իա · 17 ։

Ո Ես . ա · 24 ։ Ա ԳԼ · ԻՀ · 6 ։ ԼԲ · 19 ։

Ն · Ք · ՂԲ · 594

բոլորտիքդ եղող ազգերուն մէջը՝ յաւերման ու անարգութեան պի-
15 տի մատնեմ քեզ : Ու երբոր բարկութեամբ , և սրտմտութեամբ , ու Նսրտմտութեան պատիժներով քու վրադ դատաստաններ ՚ի գործ դնեմ , ես Բառը քու բոլորտիքդ եղող ազգերուն մէջը՝ Նանարգանք, նախատինք , առակ ու զարմացում պիտի ըլլայ . Եև Տէրս խօսեցայ :
16 Երբոր ես Նսովուն չար ու ասպակնիչ նետերը խրկեմ , որոնք ձեզ ապականելու համար պիտի խրկեմ , սովը ձեր վրայ պիտի աւելցնեմ . ու ձեզի համար Հացին ցուպը պի-
17 տի կոտրեմ : Ա,յսպէս ձեր վրայ սով Ցու չար գազաններ պիտի խրկեմ . ու քեզ անզաւակ պիտի Թողուն . և քու մէջդ Ժանտախտ ու արիւն պիտի անցնի . ու քու վրադ սուր պիտի բերեմ . ես Տէրս խօսեցայ :

ԳԼ · Զ

1 Իսրայէլի դառաստաններ իրենց կռապաշտութեանը համար : 8 Մէկ մնացորդ մը պիտի պահուի : 11 Աղտարները յորդորուած են անոնց Թշուառութիւններուն վրայ ողբալու :

1 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
2 սելով . Որդի մարդոյ՝ Ցերեսդ Իսրայէլի լեռներուն դարձուր , ու
3 անոնց մարգարէութիւն ըրէ , Ու ըսէ . Ով Իսրայէլի լեռներ՝ Տէր Եհովային խօսքը մտիկ ըրէք . այսպէս կ'ըսէ Եհովայ Տէրը՝ լեռներուն , բլուրներուն , ձորերուն ու հովիտներուն . Ահա ես ձեր վրայ սուր պիտի բերեմ , ու ձեր բարձր
4 տեղւանքը պիտի կործանեմ . Եւ ձեր սեղանները աւերակ պիտի մընան , ու ձեր արեգական կուռքերը պիտի կոտրին . և Ցձեզմէ սպանուածները ձեր կուռքերուն առջեւը
5 ինկած պիտի ձգեմ : Ու Իսրայէլի որդւոցը դիակները իրենց կուռքերուն առջեւը պիտի դնեմ , և ձեր ոսկորները ձեր սեղաններուն բո-
6 լորտիքը պիտի ցրուեմ : Ձեր ամէն բնակած տեղերուն մէջ քաղաքները աւերակ պիտի բլլան , ու բարձր տեղւանքը ամայի պիտի բլլան . որպէս զի ձեր սեղանները աւերակ ու ամայի բլլան , և ձեր կուռքերը կոտրին ու խափանուին , և ձեր արեգական կուռքերը կործանին ,
7 ու ձեր գործերը չնչուին : Ու ձեր մէջը սպանուածներ պիտի իյնան . և Ցպիտի գիտնաք թէ ես եմ Տէրը :
8 Բայց երրոր դուք երկիրներու մէջ ցրուիք , Ձեզմէ սուրէն ազատուածները՝ ազգերուն մէջ մը-
9 նացորդ պիտի Թողում : Եւ ձեր ազատուածները զիս պիտի յիշեն

Ն · Ք · ՂԲ · 594

* Կամ՝ երբոր կոտրեմ իրենց շնացող ու ինծմէ խոտորած սիրտը , ու իրենց կուռքերուն ետեւէն պոռնկութիւն ընդունող աչքերը :

ան ազգերուն մէջը , ուր որ գերի պիտի քշուին . *վասն զի Ցիրենց շնացող ու ինծմէ խոտորած սրտովը , ու Ցիրենց կուռքերուն ետեւէն պոռնկութիւն ընդող աչքերովը տանջուեցայ" . և Ցանոնք իրենց բոլոր պղծութիւններուն համեմատ ըրած չարութիւններնուն պատճառովը իրենց անձերէն պիտի
10 զզուին : Ու պիտի դիտնան Թէ ես Տէրս պարապ տեղը չխօսեցայ՝ Թէ ասս չարիքը անոնց պիտի ընեմ :
11 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ժձեռքերդ իրարու զարկ , ու ոտքդ դետինը զարկ , ու ըսէ . Ընփսոս իսրայէլի տանը բոլոր չար պղծութիւններուն . Վասն զի սրով , սովով ու ժանտախտով պիտի իյ-
12 նան : Հեռուն եղողը՝ ժանտախտով պիտի մեռնի , ու մօտ եղողը՝ սրով պիտի իյնայ , և մնացածը ու †պաշարման մէջ եղողը" սովով պիտի մեռնի . Նայսպէս իմ սրտմրտութիւնս անոնց վրայ պիտի
13 կատարեմ : Ու երբոր անոնց ըսպանուածները՝ իրենց կուռքերուն մէջտեղը՝ իրենց սեղաններուն բոլորտիքը , Ցամէն բարձր բլուրի վրայ , Ցամէն լեռներու գլուխ , ու Ցամէն կանաչ Ցծառի տակ , և Ցամէն տերեւախիտ բեւկնիի տակ Ցեղած ըլլան , ուր որ անոնք իրենց բոլոր կուռքերուն անուշ հոտ կը մատուցանէին , Ցպիտի դիտնաք
14 Թէ ես եմ Տէրը : Ա,յսպէս Ցիմ ձեռքս անոնց վրայ պիտի երկնցընեմ . ու երկիրը՝ այսինքն անոնց բոլոր բնակած տեղւանքը Ցդիւրդայի կողմը եղող անապատէն Ցեւէի ամայի ու աւերակ պիտի բ-
նեմ . ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը :

ԳԼ · Է

1 Իսրայէլի վերջին ամայութիւնը : 16 Աղաւաւածներուն սուգը : 20 Թշնամիները պիտի պղծեն սրբարանը՝ Իսրայէլացւոց գարշելութիւններուն համար : 23 Շղթայի մը օրինակով կը ցուցուի անոնց ողբմելի գերութիւնը :

1 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
2 սելով . Ուս դուն որդի մարդոյ՝ Դդ'կ ըսէ . Տէր Եհովան Իսրայէլի երկրին այսպէս կ'ըսէ . Ցվախճան՝ երկրին չորս կողմին վախճանը հա-
3 ւսր է : Հիմա քու վրադ վախճան կու գայ . ու իմ բարկութիւնս քու վրադ պիտի խրկեմ . և Ցքու ճամբաներուդ համեմատ քեզի դատաստան պիտի ընեմ , և քու բոլոր պղծութիւններդ քու վրադ պիտի
4 բերեմ : Եւ Ցիմ աչքս քեզի պիտի չխնայէ , ու պիտի չողորմիմ . հաւա քու ճամբաներդ քու վրադ

— Գ Ե · ի · 46 · իա · 2 · իե · 2 ։
Բ Գ Լ · ԼԶ · 1 ։
ֆ ՂԱ · իզ · 30 ։
Ր ՂԱ · իզ · 30 ։
Ի Հմր 13 ։ Գ Լ · է · 4 · 9 ։ ժա · 10 · 12 · ժր · 15 ։
Ղ Երեմ · իգ · 28 ։ Գ Լ · ե · 2 · 12 ։ ժր · 16 · ժգ · 22 ։
— Հմր 3 · 6 ։ Ամվ · ը · 2 ։ Մաա · իդ · 6 · 13 · 14 ։
Բ Հմր Տ · 9 ։
ֆ Հմր 9 ։ Գ Լ · ե · 11 · բ · 18 · Թ · 10 ։

պիտի դնեմ . և քու պղծութիւն-
ներդ քու մէջդ պիտի ըլլան . Տ ու
պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը ։
5 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ .
Չարիք մը՝ ահա մէկ չարիք մը կու-
6 գայ ։ Վախճանը կու գայ , վախ-
ճանը կու գայ . քու վրադ արթըն-
7 ցաւ . ահա կու գայ ։ Ո՛վ երկ-
րին բնակիչը՝ Ի կարգը քեզի կու
գայ . ժամանակը կու գայ . խռո-
վութեան օրը մօտեցաւ , և ոչ թէ
8 լերանց ցնծութիւնը ։ Հիմա մօ-
տերս՝ Ի իմ սրտմտութիւնս քու
վրադ պիտի թափեմ , և իմ բար-
կութիւնս քու վրադ պիտի կատա-
րեմ , Ես ու ճամբաներուդ հա-
մեմատ՝ քեզի դատաստան պիտի ը-
նեմ , և քու բոլոր պղծութիւններդ
9 քու վրադ պիտի բերեմ ։ Ու Ի իմ
աչքս պիտի չխնայէ , ու պիտի չո-
ղորմիմ . քու ճամբաներուդ համե-
մատ քեզի հատուցում պիտի ընեմ .
և քու պղծութիւններդ քու մէջդ
պիտի ըլլան . ժե պիտի գիտնաք
թէ ես եմ Տէրը՝ որ կը զարնեմ ։
10 Ահա օրը՝ ահա կու գայ . Ի կարգը
ելաւ հասաւ . գաւազանը ծաղկե-
ցաւ . ամբարտաւանութիւնը ըն-
11 ձիղձիցաւ ։ Ի բռնաւորութիւնը ե-
լաւ , ամբարշտութեան գաւազան
եղաւ . անոնցմէ մարդ պիտի չմնայ .
ու անոնց բազմութենէն ու ստա-
ցուածքէն բան մը պիտի չմնայ , և
անոնց մէջը * վայելչութիւն պիտի
12 չըլլայ ։ Ի ժամանակը եկաւ . օրը
մօտեցաւ . գնողը չուրախանայ , ու
ծախողը չողայ . քանզի անոր բո-
լոր բազմութեանը վրայ բարկու-
13 թիւն կա՛ ըլլայ ։ Ինչու որ ծախողը՝
ծախուածին պիտի չդառնայ , թէև
ողջ ըլլան . վասն զի անոր բոլոր
բազմութեանը համար եղած տե-
սիլքը ետ պիտի չդառնայ . ու
մարդ մը իր կենացը անօրէնու-
թեամբը պիտի չուժոլնայ ։
14 Փողը փչեցուցին . ամէն բան
պատրաստեցին . բայց պատերազ-
մի գացող չկայ . վասն զի իմ բար-
կութիւնս անոր բոլոր բազմու-
15 թեանը վրայ է ։ Ի դուրսէն սուր ,
ու ներսէն ժանտախտ ու սով պիտի
ըլլայ . դաշտը եղողը՝ սրով պիտի
մեռնի , ու քաղաքին մէջ եղողը՝
սովը ու ժանտախտը պիտի ուտէ ։
16 Եւ անոնց ազատուածները՝ որ
պիտի ազատին , լեռներուն վրայ՝
ձորերու աղաւնիներուն պէս պիտի
ըլլան . ամէնքը պիտի հեծեծեն , ամէն
մէկը իր անօրէնութեանը համար ։
17 Ամէն ձեռքերը պիտի թուլնան ,
ու ամէն ծունկերը ջուրի պէս պիտի
18 հալին ։ Եւ անոնք տ գուրգեր պիտի
հագնին . ու զարհուրը սոսկումը

պիտի ծածկէ . ու ամէն երեսի վրայ՝
ամօթ , և անոնց ամէն գլխուն վրայ՝
19 կնատութիւն պիտի ըլլայ ։ Իրենց
արծաթը փողոցներուն մէջ պիտի
նետեն . ու անոնց ոսկին անարգ
բան մը պիտի սեպուի . անոնց ար-
ծաթը ու ոսկին Տէրոջը բարկու-
թեան օրը՝ կարող պիտի չըլլայ
զանոնք ազատելու . անով պիտի
չկրնան իրենց անձը կշտացընել ,
ոչ ալ իրենց փորը լեցընել . վասն
զի անիկայ ս իրենց անօրէնութեա-
20 նը գայթակղութիւնը եղաւ ։ Ի-
նոր զարդերուն փառքը՝ հպարտու-
թեան դարձուցին . ես անով իրենց
գարշութիւնները՝ իրենց պղծու-
թիւններուն պատկերները շինեցին .
ասոր պատճառաւ անոնց առջևը ա-
նարգ բան մը կ՚ընեմ զանիկայ .
21 Եւ զանիկայ օտարներուն ձեռքը
պիտի տամ՝ որ յափշտակեն , ու
երկրի ամբարիշտներուն՝ որ զանի-
կայ թալանեն . ու զանիկայ պիտի
22 պղծեն ։ Եւ իմ երեսս անոնցմէ
պիտի դարձընեմ . ու իմ գաղտնի
տեղս պիտի պղծեն . և հոն բռնա-
ւորներ պիտի մտնեն , ու զանիկայ
պիտի պղծեն ։
23 Մէկ շղթայ մը շինէ . վասն զի
երկիրը արեան դատաստանով լե-
ցուցեցաւ . ու քաղաքը բռնու-
24 թիւնով լեցուեցաւ ։ Եւ ազգե-
րուն խիստ չարերը պիտի բերեմ .
ու անոնց տուները պիտի ժառան-
գեն . և բռնաւորներուն ամբար-
տաւանութիւնը պիտի դադրեցը-
նեմ . ու անոնց սուրբ տեղերը պի-
25 տի պղծուին ։ Կործանումը կու
գայ . ու խաղաղութիւն պիտի
փնտռեն , բայց պիտի չգտնուի ։
26 Պատուհասի վրայ պատուհաս պի-
տի գայ , և գուժի վրայ գոյժ պիտի
ըլլայ . ու մարգարէին տեսիլք պի-
տի ուզեն . և քահանային օրէնքը՝
ու ծերերուն խորհուրդը պիտի կոր-
27 սուի ։ Թագաւորը սուգ պիտի
բռնէ , ու իշխանը սոսկում պիտի
հագնի . ու երկրին ժողովուրդին
ձեռքերը վախով պիտի թուլնան .
անոնց ճամբաներուն համեմատ՝ ա-
նոնց հատուցում պիտի ընեմ , և
անոնց դատաստաններուն համե-
մատ՝ զանոնք պիտի դատեմ , Ես ու
պիտի դիտնան թէ ես եմ Տէրը ։

ԳԼ·Ը

1 Երուսաղեմի մէջ ասատուածային տեսիլքով կը
ցուցուի Եզեկիէլին՝ 5 Նախանձու կուռքը , 7
պատկերներու տունը , 13 Թամուզին համար
սուգ ընողները , 15 արեգակին երկրպագու-
թիւն ընողները ։ 18 Աստուծոյ բարկութիւնը
անոնց կատապարտութեանը համար ։

1 Եւ եղաւ որ վեցերորդ տարին՝ վե-
ցերորդ ամսուն հինգերորդ օրը

Ն · Բ · ՂԲ · 594

ես իմ տանս մէջ կը նստէի , և
— Յուդայի ծերերը իմ առջեւս կը
նստէին . ու հոն Է Տէր Եհովային
2 ձեռքը իմ վրաս ինկաւ . Է նե նա-
յեցայ , ու ահա հարթ— կերպարանք
մը կար՝ կրակի երեւոյթով . անոր
երիկամանցը եւեւոյթէն վար՝ կրակ
էր , ու անոր երիկամանքներէն
վեր՝ Տոհկպղինձի նման փայլուն
3 երեւոյթ մը կար ։ Եւ անիկայ Է ձեռ-
քի նմանութիւն մը երկնցուց ,
ու իմ ղլխուս վարսերէն բռնեց . ու
Ո՛Հոգին զիս երկրի ու երկինքի մէջ-
տեղը վերցուց , և Է զիս Աստուծոյ
տեսիլքով Երուսաղէմ՝ դէպ՝ ի հիւ-
սիս նայող ներքին դրանը մուտքը
բերաւ , Եւուր որ Բնախանձ դրդռող
4 Նախանձու կուռքը կը կենար ։ Եւ
ահա հոն՝ դաշտի մէջ Թ տեսած տե-
սիլքիս պէս՝ Իսրայէլի Աստուծոյն
փառքը կար ։
5 Ու ինծի ըսաւ . Որդի՛ մարդոյ՝
հիմա քու աչքերդ դէպ՝ ի հիւսիս
վերցուր . ու երբոր աչքերս դէպ՝ ի
հիւսիս վերցուցի , ահա սեղանին
դրանը մուտքին հիւսիսային կողմը
6 աս նախանձու կուռքը կար ։ Ան
ատենը ինծի ըսաւ . Որդի՛ մարդոյ՝
կը տեսնե՞ս ասոնց ըրածը՝ ան մեծ
պղծութիւնները որ Իսրայէլի տուա-
նը հոս կ՚ընէ , որպէս զի ես իմ
սրբարանէս հեռանամ . բայց նո-
րէն դարձիր , ու — էլ մեծ պղծու-
թիւններ պիտի տեսնես ։
7 Եւ զիս գաւիթին դուռը տա-
րաւ . ու տեսայ , և ահա պատին
8 վրայ մէկ ծակ մը կար ։ Ու ինծի
ըսաւ . Որդի՛ մարդոյ՝ հիմա աս
պատը փորէ . ու երբոր պատը
փորեցի , ահա մէկ դուռ մը կար ։
9 Եւ ինծի ըսաւ . Մտիր , ու տես
ան չար պղծութիւնները՝ որ անոնք
10 հոս կ՚ընեն ։ Ու ես մտայ , ու
տեսայ , և ահա ամէն տեսակ սո-
ղուններու ու գաթէլի անասուննե-
րու պատկերներ՝ և Իսրայէլի տանը
բոլոր կուռքերը պատին վրայ չուր-
11 ջանակի փորուած էր ։ Ու անոնց
առջեւը կայնած էին Իսրայէլի տա-
նը ծերերէն եօթանասուն մարդ ,
և Սափանի որդին Եզոնիան — Ե
անոնց մէջը կայնած էր . ամէն մէկը
ձեռքը բուրվառ ունէր . ու խոսն-
կին ծուխը ամպի պէս վեր կ՚ելլէր ։
12 Եւ Տէրը ինծի ըսաւ . Որդի՛ մար-
դոյ՝ կը տեսնե՞ս թէ ինչեր կ՚ընեն
Իսրայէլի տանը ծերերը մութ տեղը՝
ամէն մարդ իր ծածուկ պատկերա-
տանը մէջ . վասն զի անոնք կ՚ըսեն
թէ՝ Է Տէրը մեզ չտեսներ . Տէրը եր-
13 կիրը թողուց ։ Ու ինծի ըսաւ . Նո-
րէն դարձիր , և անոնց ըրած — էլ
մեծ պղծութիւնները պիտի տեսնես ։
14 Ու զիս Տէրոջը տանը դիպ՝ ի
հիւսիս նղող դրանը մուտքը բե-
րաւ . և ահա հոն Թամուզին համար
15 լացող կիներնները կը նստէին ։ Ու
ինծի ըսաւ . Որդի՛ մարդոյ՝ կը
տեսնե՞ս . նորէն դարձիր , — ա-
ռանցմէ աւելի մեծ պղծութիւններ
պիտի տեսնես ։
16 Եւ զիս Տէրոջը տանը ներքին
գաւիթը բերաւ . և ահա Տէրոջը
տաճարին դուռը՝ Լսրահէլին ու սե-
ղանին մէջտեղ՝ Է քսան ուհինգ մար-
դու չափ կային . անոնք Թ կռնակ-
նին Տէրոջը տաճարին դարձուցեր
էին , ու երեսնին արեւելքին , ու
դէպ՝ ի արեւելք՝ Լարեւուն երկրպա-
17 դութիւն կ՚ընէին ։ Եւ ինծի ըսաւ .
Որդի՛ մարդոյ՝ տեսա՞ր . միթէ Յու-
դայի տանը պղտիկ բան կ՚երեւայ
իրենց հոս ըրած պղծութիւնները
ընդը , որ Երկիրն — է բռնութիւ-
նով լեցուցին , ու զիս բարկացընե-
լու դարձան . և ահա ճիւղը իրենց
18 քիթին կ՚երկընցընեն ։ Ու ես ալ
սրամտութեամբ պիտի վարուիմ
— ընդ հէտ . Լաչքս պիտի չխնայէ ,
ու պիտի չողորմիմ . և անոնք ինձ
ականջներուս մեծ ձայնով պիտի
կանչեն , սակայն անոնց մտիկ պի-
տի չընեմ ։

ԳԼ · Թ

1 Մէկ տեսիլքի մը միջոցով կը դուգուի Թէ ա-
մանր պիտի փրկուէին , 3 և մնացածները պի-
տի կորուէին · 8 և Թէ Ըստուած անոնց հա-
մար աղաչանք պիտի չընդունէր ։

1 Ես մեծ ձայնով կանչեց իմ ա-
կանջներուս , ու ըսաւ . Քա-
ղաքին վրայ որոչուածները մօտե-
ցուցէք , ու ամէն մէկը իր ապա-
կանչ զործիքը իր ձեռքը առնէ ։
2 Նաւ , Եւ ահա դէպ՝ ի հիւսիս նա-
յղող վերի դրանը ճամբայէն վեց
մարդ կու գար . ու ամէն մէկուն
կոտորիչ զործիքը իր ձեռքն էր .
— և անոնց մէջը կտաւէ զգեստ հա-
գած մարդ մը կար , ու մէջքը դրա-
գիրի կաղամար ունէր . և անոնր
գացին պղնձէ սեղանին քովը կայ-
3 նեցան ։ Ու Է Իսրայէլի Ըստուա-
ծոյն փառքը՝ որ քերովբէներուն
վրան էր , անոնց վրայէն տանը սե-
մը եղաւ ։
Եւ ան կտաւէ զգեստ հագած ,
ու մէջքը դրագիրի կաղամար ու-
4 նղող մարդը կանչեց ։ Եւ Տէրը
անոր ըսաւ . Քաղաքին մէջէն՝ Ե-
րուսաղէմին մէջէն անցիր , ու անոր
մէջը եղած Է բոլոր պղծութիւննե-
րուն համար հառաչող ու ողբա-
ցող մարդոցը ճակատներուն վրայ
5 Տ նչան դիր ։ Ու քանի որ ես կը
լսէի մնացեալներուն ըսաւ . Անոր Է-

Ն · Բ · ՂԲ · 594

Ե Ցովել · Բ · 17 ։
Է Գէ · ԺԱ · 1 ։
Ժ Երեմ · Բ · 27 ։ Լ · 33 ։
Ի Բ Օբ · Դ · 19 · Դ Թագ · Իդ · 5 · 11 ։ Ցար · Լ · 26 · Երեմ · Իդ · 17 ։
Հ Գէ · Թ · 9 ։
Ն Գէ · Ե · 13 ։ Ժ Հ · 42 · Իդ · 13 ։
Ղ Գէ · Ե · 11 ։ Է · 4 · 9 · Թ · 5 · 10 ։
Ճ Ղատկ · Ա · 28 · Ես · Ա · 15 · Երեմ · Ժ · 11 ։ Ժ Դ · 12 ։ Մաթ · Գ · 4 · Ձաք · Է · 13 ։

Իբր 594

— Ղէ · Ժ Դ · 4 ։ Գէ · Ժ · 2 · 6 · 7 · Ցայտ · Ժե · 6 ։

Բ Տես 9է · Դ · 23 · Բ · 4 · Ժ · 4 · 18 · Ժ · 22 · 23 ։
Տ Սպ · ՃԺԹ · 53 · 136 · Երեմ · Ժ Դ · 17 · Բ Կոր · Ժբ · 21 · Բ Պետ · Բ · 8 ։
Ր Եւ · Ժբ · 7 · Ցայտ · Է · 3 · Թ · 4 · Տես Ցայտ · Ժ Դ · 16 · 17 · Ի · 4 ։

տեսէն քաղաքէն անցէք , ու զարկէք . Է աչքերնիդ չխնայէ , ու մի՛
6 ողորմիք . Ջահերը , երիտասարդը ու կոյսը , պզտիկ տղաքը ու կիներ սպաննեցէք ու կոտորեցուցէք . բայց Է վրան նշան ունեցող մարդու մը ամենևին մի՛ մօտենաք . ու Էիմ սրբարանէս սկսեցէք ։ Ը Ուստի տանը առջևը եղող ծեր
7 մարդիկներէն սկսան ։ Եւ անոնց ըսաւ . Տունը պղծեցէք , ու զաւիթները մեռելներով լեցուցէք ա՛ս ելէ՛ք ։ Եւ անոնք ելան ու քաղաքին մէջը զարկին ։
8 Ու երբոր զանոնք զարկին , ու ես մնացի , ան ատենը Թ երեսիս վրայ ինկայ , և աղաղակելով ըսի . Է Ո՜Հ Տէր ԵՀովայ՝ դուն Երուսաղէմի վրայ քու բարկութիւնդ Թափելով՝ Իսրայէլի բոլոր մնացորդը բնա-
9 ջի՞նջ պիտի ընես ։ Ու ինձի ըսաւ . Իսրայէլի և Ցուդայի տանը անօրէնութիւնը խիստ շատ մեծ է . ու Երկիրը արիւնով լեցուեցաւ , և քաղաքը անիրաւութեամբ լեցուեցաւ . վասն զի ըսին . Է Տէրը երկիրը Թողուց , ու Թ Տէրը չտեսներ ։ Եւ հիմա իմ Կաչքս
10 ալ պիտի չխնայէ , ու պիտի չողորմիմ . Է իրենց ճամբաները՝ ի՛ րենց գլուխը պիտի բերեմ ։
11 Եւ ահա կտաւէ զգեստ հագած , ու մէջքը կաղամար ունեցող մարդը լուր բերաւ՝ ու ըսաւ . Ինծի հրամայածիդ պէս ըրի ։

Գ Լ . Ը

1 Մարգարէն տեսիլքի մէջ կը տեսնէ քաղաքին վրայ ցանուելու կրակի կայծերը ։ 8 Քերովբէներուն տեսիլքը ։

1 Ես տեսայ որ ահա քերովբէներուն գլխուն վրայի Հաստատուած Թեանը մէջ՝ շափիւղայ քարի պէս աթոռի ձեւով նմանութիւն մը
2 կ'երեւնար անոնց վրայ ։ Ը Ու կտաւէ զգեստ հագած մարդուն խօսեցաւ , ու ըսաւ . Քերովբէներուն տակը եղող անիւներուն մէջտեղը մտիր , և ձեռքերդ քերովբէներուն մէջտեղը եղող Է կրակի կայծերէն լեցուր , ու Ք քաղաքին վրայ ցանէ . և անիկայ իմ աչքերուս առ-
3 ջևը մտաւ ։ Ու երբոր ան մարդը մտաւ , քերովբէները տանը աջ կողմը կայներ էին . և ամպը ներքին
4 գաւիթը լեցուցեր էր ։ Ը Ու Տէրոջը փառքը քերովբէներուն վրայէն տանը սեմը վերացաւ , և Ը տունը ամպով լեցուեցաւ , ու սրահը Տէրոջը փառքին պայծա-
5 ռութեամբը լեցուեցաւ ։ Եւ Է քերովբէից Թևերուն ձայնը մինչև արտաքին գաւիթը կը լսուէր ԸՆ-

մենակարող Աստուծոյն ձայնին
6 պէս , երբոր կը խօսի ։ Ու երբոր կտաւէ զգեստ հագած մարդուն հրամայեց , ու ըսաւ Թէ՝ քերովբէներուն մէջէն կրակ առ , անիկայ գնաց անիւներուն քովը կայնե-
7 ցաւ ։ Ու քերովբէներուն մէջէն քերովբէին մէկը իր ձեռքը քերովբէներուն մէջտեղը եղող կրակին երկընցուց՝ ու առաւ , և կտաւէ զգեստ հագնողին ձեռքը տուաւ ։
8 անիկայ ալ առաւ ու ելաւ ։ Ը Ու քերովբէից Թևերուն տակը՝ մարդու ձեռքի նմանութիւն կ'երեւնար ։
9 Ը Ես տեսայ որ ահա քերովբէներուն քովը չորս անիւ կար , ամէն մէկ քերովբէին քովը մէկմէկ անիւ . ու անիւներուն երեւոյթը Քոսկեքաո-
10 րի կը նմանէր ։ Եւ անոնց երեւոյթը՝ չորսին ալ ձևը մէկ էր , որպէս Թէ անիւ անիւի մէջ եղած ըլլար ։
11 Ա Գացած ատեններնին՝ իրենց չորս կողմերուն վրայ կ'երթային . գացած ատեններնին Էրէնց ալ Քո՛չ Քոչ Ը չէին դառնար . վասն զի որ կողմը որ գլուխը կը նայէր , անոր ետևէն կ'երթային . գացած ատեններնին չէին
12 դառնար ։ Եւ անոնց բոլոր մարմինը , կռնակները , ու ձեռքերը , ու Թևերը , և Է անիւները՝ Ա-Ը-Ե-Ն չորսին անիւները՝ ամէն կողմէն աչ-
13 քերով լեցուն էին ։ Ընիւներուն համար լսեցի որ՝ անոնց անուն դը-
14 րուեցաւ՝ * Մրրիկ ։ Ը Ու ամէն մէկը չորս երես ունէր առջի երեսը քերովբէի երես էր երկրորդ երեսը մարդու երես էր , ու երրորդը առիւծի երես էր , և չորրորդը ար-
15 ծիւի երես էր ։ Ու քերովբէները վերացան ։ Ֆորար գետին քովը Ետեսած կենդանիներս ատոնք էին ։
16 Ը Ու երբոր քերովբէները կ'երթային , անիւներն ալ անոնց քովէն կ'երթային . ու երբոր քերովբէները երկրէն բարձրանալու համար թևերնին կը վերցնէին ասանիւ-
17 ներն ալ անոնց քովէն չէին զա-
տուեր . Ի երբոր անոնք կայնէին ասոնք ալ կը կայնէին երբոր ասոնք վերանային ասոնք ալ կը վերանային անոնց հետ . վասն զի ան-
18 նոնց մէջը կենդանիներուն ոգին կար ։
Եւ Ը Տէրոջը փառքը տանը սեմին վրայէն ելաւ ու քերովբէներուն
19 վրայ կայնեցաւ . Եւ իմ աչքերուս առջևը Ֆ քերովբէները ելլելով՝ թեւերնին վերցուցին ու երկրէն բարձրացան անիւներն ալ անոնց հետևէն էին ու Տէրոջը տանը արևելեան դրանը մուտքը կայնեցան

Ն . ը . գՖ . Իրր 594
Ի Հմր 10 ։ Գլ . ե . 11 ։ Ը ՐՄՆ . ԼԶ . 17 ։ Ի Ցայտ . Թ . 4 ։ Ը ԵրեմՏ . ԻՆ . 29 ։ ԱԳԱԲ . Դ . 17 ։ Ի Գլ . Ը . 11 ։ 12 ։ 16 ։
Ժ Թաս . Ժգ . 5 ։ Ժչ . 4 ։ 22 ։ 45 ։ Ցեսս . Է . 6 ։ Ի Գլ . Ժա . 13 ։
Լգ Թագ . Ին . 16 ։ Գլ . Ը . 17 ։ Ի Գլ . Ը . 12 ։ Ի Սաղ . Ժ . 11 ։ Ես . ԻԹ . 15 ։ Կ Գլ . ե . 11 ։ է . 4 ։ Ը . 18 ։
ՀԳլ . Ժա . 21 ։

— Գլ . ա . 22 ։ 26 ։
Ը Գլ . Թ . 2 ։ 3 ։
Ի Գլ . ա . 13 ։ Ը Տ՚ա Ցայտ . Ը . 5 ։
Ի Տ՚ս Հմր 18 ։ Գլ . ա 28 ։ Թ . 8 ։
Գ Թագ . Ը . 10 . 11 ։ Գլ . Խգ . 5 ։
Ի Գլ . ա . 24 ։
Ը Ա Թագ . ԻԹ . 3 . ԸԱ ։

Ն . ը . գՖ . Իրր 594
Ի Գլ . ա . 8 ։ Հմր 21 ։
Ժ Գլ . ա . 15 ։
Է Գլ . ա . 16 ։
Լ Գլ . ա . 17 ։
Ի Գլ . ա 18 ։
* Կամ՝ Դիւրաթաւալ ։ Եբր . Գաղգաղ ։
Ժ Գլ . ա 6 ։ 10 ։
Ի Գլ . ա . 5 ։
Հ Գլ . ա . 19 ։
Ի Գլ . ա 12 ։ 20 ։ 21 ։
Ը Հմր 4 ։
Ժ Գլ . Ժա 22 ։

ու Իսրայէլի Աստուծոյն փառքը
20 վերէն անոնց վրայ էր։ Քոբար գետին քովը՝ Իսրայէլի Աստուծոյն տակը տեսած կենդանիներս ասոնք էին. ու գիտցայ որ անոնք քերովբէներ են։ 21 Ամէն մէկը չորս երես՝ ու ամէն մէկը չորս թեւ ունէր. և անոնց թեւերուն տակը մարդու 22 ձեռքերու նմանութիւն կար։ Ու անոնց երեսներուն երևոյթը՝ նոյն երեսներուն էր՝ որ Քոբար գետին քովը տեսայ, թէ՛ անոնց կերպարանքը, և թէ՛ իրենք. և ամէն մէկը շիտակ յառաջ կերթար։

ԳԼ. ԺԱ

1 Իշխաններուն անապարհութիւնը. 4 անոնց մեղքը ու պատասխանը։ 13 Երբոր Եզեկիէլ կը գանգատի, Աստուած անոր կը յայտնէ իր դիտաւորութիւնը՝ թէ պիտի ազատէ մէկ մնացորդ մը, 21 և պիտի պատժէ չարերը։ 22 Աստուծոյ փառքը քաղաքէն կը վերանայ։ 24 Եզեկիէլ գերիներուն կը դառնայ։

1 Յե Հոգին զիս վերցուց, ու Տէրոջը տանը դէպ ի Բարեւելք նայող արեւելեան դուռը բերաւ. և ահա Քդրանը մուտքը քսանուհինդ մարդ կար. ու անոնց մէջը Ժողովուրդին իշխանները՝ Ազուրի որդին Ճեզոնիան, ու Բանեայի որդին Փաղատիան տեսայ։ Եւ անիկայ ինծի ըսաւ. Որդի մարդոյ՝ ասոնք են ան մարդիկները որ անօրէնութիւն կը մտածէն, ու չար խորհուրդներ կու տան այս քաղաքիս 3 մէջ, Ըսելն. Տակաւին չէ՞ մօտ Հաստատէք տուներ պիտի չշինուին. Եաս խոտը կաթսայ է, ու մենք միս ենք։ 4 Անոր համար մարգարէացիր անոնց վրայ, մարգարէացիր՝ որդի՛ մարդոյ։ 5 Ան ատենը Տէրոջը Հոգին իմ վրաս ինկաւ, ու ինծի ըսաւ. Ըսէ՝ որ՝ Տէրը այսպէս կ'ըսէ. Դուք այսպէս ըսիք՝ ով Իսրայէլի տունը. բայց ես ձեր միտքէն անցածը 6 չեմ գիտեր։ Ձեր դիակները՝ որ անոր մէջը դրիք, անոնք միսն են, ու անիկայ կաթսան է. Բայց ձեզ անոր մէջէն պիտի հանեմ։ 7 Ուստի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ձեր սպաննուածները՝ որ անոր մէջը դրիք, անոնք միսն են, ու անիկայ կաթսան է. Բայց ձեզ անոր մէջէն պիտի հանեմ։ Դուք սուրէն վախցաք. ու ես սուր ձեր վրայ պիտի բերեմ՝ 9 կ'ըսէ Տէր Եհովան։ Ու ձեզ անոր մէջէն պիտի հանեմ, և ձեզ օտարներուն ձեռքը պիտի մատնեմ, ու դատաստան 10 ներ ի գործ պիտի դնեմ։ Դուք սրով պիտի իյնաք. Իսրայէլի սահմանին վրայ ձեզ պիտի դատեմ. Ու պիտի գիտնաք թէ ես

11 եմ Տէրը, Այս քաղաքը ձեզի համար կաթսայ պիտի չըլլայ, որ դուք անոր մէջը միս ըլլաք. Իսրայէլի սահմանին վրայ ձեզ պիտի դատեմ։ 12 Եւ պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը. վասն զի իմ օրէնքներովս չգացիք, ու իմ իրաւունքներս ի գործ չդրիք. հապա ձեր բոլորտիքը եղող ազգերուն սովորութեանցը համեմատ վարուեցաք։ 13 Ու եղաւ որ իմ մարգարէութիւնս ըրած ատենս՝ Բանեայի որդին Փաղատիան մեռաւ. Ես ատենը երեսիս վրայ ինկայ, բարձր ձայնով աղաղակեցի, ու ըսի. Ո՜հ, Տէր Եհովա՛յ՝ միթէ Իսրայէլի մնացորդը 14 բոլորովին պիտի սպառի՞ս։ Ան ատենը Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ 15 ըսելով. Որդի՛ մարդոյ՝ քու եղբայրներդ, քու եղբայրներդ, քու աղգականներդ ու բոլոր Իսրայէլի տունը՝ ամէնը ան մարդիկներն են՝ որոնց Երուսաղէմի բնակիչները ըսին. Տէրոջը քովէն հեռացէ՛ք. մեզ երկիրը մեզի ժառանգութիւն տրուած է։ 16 Անոր համար ըսէ. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Թէպէտև զանոնք ազգերուն մէջը հեռացուցի, ու զանոնք երկիրներուն մէջը ցրուեցի, բայց անոնց մնած երկիրներուն մէջը՝ քիչ մը ատեն անոնց սրբարան 17 պիտի ըլլամ։ Անոր համար ըսէ. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ձեզ ժողովուրդներէն պիտի հաւաքեմ՝ և ձեզ պիտի ժողվեմ ան երկիրներէն՝ ուր որ դուք ցրուած էք, ու ձեզի պիտի տամ Իսրայէլի երկիրը։ 18 Եւ հոն պիտի մտնեն, ու անոր բոլոր գարշութիւնները, ու բոլոր պղծութիւնները անկէ պիտի վերցընեն։ Եւ անոնց մէկ սիրտ պիտի տամ, ու անոնց ներսի դին նոր հոգի պիտի դնեմ. և անոնց մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու անոնց մարմնեղէն սիրտ 20 պիտի տամ Որպէս զի իմ օրէնքներուս մէջը քալեն, ու իմ իրաւունքներս պահեն, ու զանոնք ի գործ դնեն, ԵՒ անոնք ինծի ժողովուրդ ըլլան, ես ալ անոնց Աստուած ըլլամ։ 21 Բայց անոնք որոնց սիրտը իրենց կամացը գարշութիւններուն ու պղծութիւններուն ետևէն կ'երթայ, Անոնց ճամբան իրենց գլխուն պիտի բերեմ, կ'ըսէ Տէր Եհովան։

22 Ու քերովբէները՝ իրենց թեւերը վերցուցին. ու անիւները անոնց քովն էր. և Իսրայէլի Աստուծոյն փառքը վերէն անոնց վրան էր։ 23 Ու Տէրոջը փառքը քաղաքին մէջտեղին վրայէն ելաւ, և քաղաքին

Ն · Ք · ՂԲ · 594

Ել · Խ · 2 ·
Տնս Ջաք · ԺԴ · 4 ·
Գ · Ը · 3 ·

Ելարևելեան կողմը եղող Ղևռանը վրայ կայնեցաւ ։
24 Ու Հոգին զիս վերցուց , ու քաղաքացւոց երկիրը եղող գերիներուն քովը բերաւ . և տեսիլ՝ եղաւ Աստուծոյ Հոգւովը տեսիլքի մէջ . ու ան տեսած տեսիլքս իմ
25 վրայէս ելաւ ։ Ու ես գերիներուն խօսեցայ Տէրոջը բոլոր խօսքերը՝ որ ինծի յայտներ էր ։

ԳԼ · ԺԲ

1 Եզեկիելին չուելուն օրինակովը՝ Տ Սեդեկիային գերութիւնը կը ցուցուի ։ 17 Եզեկիելին դողալը՝ Հրէից ամայութիւնը կը նշանակէր ։ 21 Հրէից անապարհ առակը կը յանդիմանուի ։ 26 Տեսիլքին չուռով կատարուիլը ։

1 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ ը-
2 սելով . Որդի՛ մարդոյ՝ դուն ապստամբներու տանը մէջ բնակած ես , որ անոնք Ի տեսնելու աչքեր ունին , ու չեն տեսներ , և լսելու ականջներ ունին , ու չեն լսեր . Վասն զի անոնք ապստամբ-
3 ներու տուն են ։ Ու դուն որդի՛ մարդոյ՝ քեզի չուելու կարասիներ պատրաստէ , ու անոնց աչքերուն առջևը ցորկով չուէ՝ , և անոնց աչքերուն առջևը քու Ելած տեղէդ ուրիշ տեղ մը չուէ . գուցէ ո՞ւ-
4 շադրութիւն ընեն , թէև անոնք՝ ապստամբներու տուն են ։ Ես անոնց աչքերուն առջևը քու կարասիներդ ցորկով հանես՝ չուելու կարասիներու պէս . բայց դուն անոնց աչքերուն առջևը իրիկունը ելլես՝ գերութեան գացողներուն
5 պէս ։ Անոնց աչքերուն առջևը պատը ծակես , ու անկէ հանես .
6 Անոնց աչքերուն առջևը ղեռ՝ ու սիդ վրայ վերցնես , ու մթընցածատենը հանես . երեսդ ծածկէ՝ որ երկիրը չտեսնես . Վասն զի քեզ Իսրայէլի տանը նշան տուի ։
7 Ես այնպէս ըրի , ինչպէս որ ինծի հրամայուեցաւ . իմ կարասիներս՝ չուելու կարասիներու պէս ցորկով հանեցի , ու իրիկունը ձեռքովս պատը ծակեցի , ու մթընցած ատենը հանեցի . անոնց աչքերուն առջևը ուսիս վրայ վեր-
8 ցուցի ։ Ես առտուընդ Տէրոջը
9 խօսքը ինծի եղաւ ըսելով . Որդի՛ մարդոյ՝ Իսրայէլի տունը՝ Ի ան ապստամբներու տունը քեզի չուսի՞ն
10 թէ՝ Ի՞նչ կ'ընես ։ Անոնց ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ա՛ս Ի պատգամը՝ Երուսաղէմի մէջ եղող իշխանին , ու հոն բնակող Իսրայէլի բոլոր տանը համար է ։
11 Ըսէ . Ես ձեզի համար նշան եմ . ես ինչպէս որ բրի , անոնց այնպէս պիտի ըլլայ . Ի անոնք պիտի չունին ,

12 — գերութեան երթան ։ Եւ ա-
նոնց մէջը եղող իշխանը՝ էր ուսին վրայ Ի՞ պիտի վերցնէ , ու մը-
թընցած ատենը պիտի ելլէ . պատը պիտի ծակեն՝ որ անկէ հանեն . անիկայ իր երեսը պիտի ծածկէ ,
13 որ երկիրը աչքով չտեսնէ ։ Եւ Ի անոր վրայ իմ ցանցս պիտի տա-
րածեմ . ու անիկայ իմ որոգայթիս մէջ պիտի բռնուի . և Ես զանի-
կայ Բաբիլոն՝ քաղդեացւոց երկիրը պիտի տանիմ . ու անիկայ ան Ի-
ղ պիտի չտեսնէ , թէև հոն պիտի
14 մեռնի ։ Եւ Ի անոր բոլորտիքը եղող բոլոր օգնականները , ու անոր բոլոր գունդերը՝ ամէն հովերու պիտի ցրուեմ , և Ի անոնցետևէն
15 սուր պիտի քաշեմ ։ Ու երբոր զանոնք ազգերու մէջ ցրուեմ , ու զանոնք երկիրներու մէջ ցանեմ , Ի պիտի գիտնան թէ Ես Եհ եմ Տէրը ։
16 Եւ անոնցմէ սուրէն , սովէն ու ժանտախտէն՝ քիչ մարդ մնացորդ պիտի թողում . որպէս զի իրենց բոլոր պղծութիւնները պատմեն ան ազգերուն մէջը՝ ուր որ պիտի մտնեն . ու պիտի գիտնան թէ Ես Եհ եմ Տէրը ։
17 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
18 սելով . Որդի՛ մարդոյ՝ Ի քու հացդ դողալով ուտես , ու ջուրդ տագ-
նապով և անհանգստութեամբ խմես ։
19 Ու երկրին ժողովուրդին ըսես . Իսրայէլի երկրին մէջ եղող Երու-
սաղէմի բնակիչներուն վրայով՝ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Անոնք իրենց հացը անհանգստութեամբ պիտի ուտեն , ու իրենց ջուրը ապշու-
թեամբ պիտի խմեն . որպէս զի իրենց երկիրը Ի բոլորովին Ի-
նայ՝ Ի իր բոլոր բնակչացը անիրա-
20 ւութեան պատճառաւ ։ Եւ մարդաբնակ քաղաքները պիտի աւերուին , ու երկիրը ամայի պիտի ըլլայ . ու պիտի գիտնաք թէ Ես եհ եմ Տէրը ։
21 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
22 ըսելով . Որդի՛ մարդոյ՝ ի՞նչ պիտի ըլլայ ձեզի ան առակը որ Ի-
րայէլի երկրին մէջ կ'ըսէք , ու կ'ըսէք . Օրերը կ'երկարենան՝ ու
23 ամէն տեսիլք պարապ կ'ելլէ ։ Ընոր համար անոնց ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ա՛ս առակը պիտի խափանեմ . և աս առակը Իսրայէլի մէջ այլ պիտի չգրուին ։ Բայց անոնց ըսէ . Օրերը մօտեցան , նաև ամէն տեսիլքին
24 կատարումը ։ Վասն զի Իսրայէլի տանը մէջ Ի ամբիծ այ ունայն տեսիլք , և չողոքորթութեան գու-
25 շակութիւն պիտի չըլայ ։ Քանզի Ես Տէրս կը խօսիմ՝ , ու Ի խօսած

Ն · Ք · ՂԲ · 594

Երեմ · ԼԹ · 4 ·

Ցոր · ԺԹ · 6 ։ Երեմ · ծր · 9 ։ Ողո · ա · 13 ։ ԳԼ · ԺԷ · 20 ։
Թագ · Ի ե · 7 ։ Ներեմ · ծր · 11 ։ ԳԼ · ԺԷ · 16 ։
Թագ · Ի ե · 4 · 5 ։ ԳԼ · ե · 10 ։
ԳԼ · ե · 2 · 12 ։
Սաղ · ԺԸ · 16 ։ ԳԼ · է · 7 · 14 ։ Ժա · 10 ։ Հմր 16 · 20 ։
ԳԼ · է · 8 · 9 · 10 ։
ԳԼ · դ · 16 ։
Ջաք · ե · 14 ։
Սաղ · ՃԷ · 34 ։
Եբր · Իր լեութենէն
Ջաք · ե · 14 ։
Սաղ · ՃԷ · 34 ։
Հմր 27 ։ ԳԼ · ժա · 3 ։ Ամվ · գ · 3 · բ գլես · գ · վ ։
Ցախ · բ · 1 ։ Սոփ · ա · 14 ։
ԳԼ · ժգ · 23 ։
Ողո · բ · 14 ։
Ա՛ս եմ Տէրը ։ ես կը խօսիմ ,
ես · 11 ։ Հմր 28 ։ Դան · Թ · 12 ։ Ղու · իա · 33 ։

խօսքս՝ ի գործ պիտի դրուի . ալ պիտի չուշանայ . վասն զի ձեր օրերուն մէջը՝ ով ապստամբներու տուն , խօսք պիտի խօսիմ , ու պիտի կատարեմ , կ՚ըսէ Տէր Եհովան ։

26 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝

27 ըսելով . Ադրի մարդդ՝ ահա իսրայէլի տունը կ՚ըսէն թէ՝ Ասոր տեսած տեսիլքը շատ օրերու համար է . ու ասիկայ հեռաւոր ժամանակներու համար մարգարէ՚ ։

28 Թիւն կ՚ընէ ։ Անոնր համար անոնց ըսէ . Ա՛յսպէս կ՚ըսէ Տէր Եհովան . Ա՛յսուհետև բնաւ մէկ խօսքս պիտի չուշանայ . հապա իմ խօսած խօսքս պիտի կատարուի՚ կ՚ըսէ Տէր Եհովան ։

ԳԼ . ԻԳ

1 Սուտ մարգարէներուն յանդիմանութիւն , 10 և անոնց պատ ծեփելը . 17 մարգարէհներուն ու անոնց բարձերուն վրայով ։

1 Նաև Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
2 սելով . Որդի մարդդ՝ մարգարէութիւն ընող Իսրայէլի մարգարէներուն դէմ մարգարէացիր , ու իրենց ըսուտէն մարգարէութիւն ընողներուն ըսէ՝ . Տէրոջը խօսքը
3 մինչ ըրէք . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Վա՛յ անզգամ մարգարէներուն՝ որոնք իրենց հոգիին ետևէն կ՚երթան , ու բան մը տեսած չեն ։
4 Իսու մարգարէներդ՝ ով Իսրայէլ , հաւերակներու մէջ եղող աղուէսա-
5 ներու պէս եղան ։ Դէ Իսրամատուածութեան տեղուանքը չելաք , ու Տէրոջը օրը՝ պատերազմի մէջ հաստատ կայնելու համար՝ Իսրայէլի տունը
6 պարսպով չպատեցիք ։ Ընկնողը ունայն տեսիլք , և սուտ գուշակութիւն կը տեսնեն , և կ՚ըսեն թէ՝ Տէրը ըսաւ , թէև Տէրը զանոնք խրկած չէ . և յոյս կու տան՝ թէ իրենց խօսքը պիտի կատարուի ։
7 Մի՞թէ դուք ունայն տեսիլքներ չտեսաք , և սուտ գուշակութիւն ներ չխօսեցաք , ու չըսի՞ք թէ՝ Տէրը խօսեցաւ , երբոր ես խօսած չէի ։
8 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ձեր խօսքը ունայն , ու ձեր տեսիլքը սուտ ըլլալուն համար , ահա ես ձեզի դէմ եմ՝ կ՚ըսէ Տէր
9 Եհովան . Եւ իմ ձեռքս՝ ունայն տեսիլք տեսնող , և սուտ գուշակութիւն ընող մարգարէներուն դէմ պիտի ըլլայ . անոնք իմ ժողովուրդիս խորհուրդին մէջ պիտի չըլլան , ու Իսրայէլի տունը դրբին մէջ պիտի չգրուին , և Իսրայէլի երկիրը պիտի չմտնեն . ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէր Եհովան ։
10 Որովհետև սնանկ իմ ժողովուրդս

կը մոլորցընեն . և երբ խաղաղութիւն է՝ կ՚ըսեն , երբոր խաղաղութիւն չկայ . ու անիկայ պատ կը շինէ , և անոնք ժկրով կը ծեփեն զանիկայ .
18 ըսելով . Որդի՛ մարդոյ՝ Էիսրայէլի տունը ինծի կղկղանքի պէս եղաւ . ամէնը Էալոցի մէջ՝ պղինձի , անա-զի , երկաթի ու կապարի՝ Էնո-
19 ցա եղան , Էրկաթի ու կապարի՝ ար-ծաթի կղկղանք Էդան ։ "Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ը-սէ . Որովհետև ամէնդ կղկղանքի պէս եղաք , անոր համար ահա ես Էձեզ Երուսաղէմի մէջ պիտի ժող-
20 վեմ ։ Ինչպէս որ արծաթը , ու պղինձը , ու երկաթը , և կապարը , ու անագը Էալոցի մէջ կը ժողվեն , ու անոր վրայ կրակը կը փչեն՝ զանիկայ Էալեցընելու համար , այն-պէս ալ Էձեզ իմ բարկութեամբս ու սրտմտութեամբս պիտի ժող-
21 վեմ , և պիտի թողում , ու պիտի Էհալեցընեմ ։ Եւ Էձեզ մէկտեղ բե-րելով՝ "Էձեր վրայ իմ բարկու-թեանս կրակովը պիտի փչեմ . և դուք անոր մէջը պիտի Էհալիք ։
22 Ինչպէս որ արծաթը Էալոցին մէջը "կը հալի , դուք ալ անոր մէջը այն-պէս պիտի Էհալիք . ու պիտի գիտ-նաք՝ որ ես Տէրս "Էիմ սրտմտու-թիւնս թափեցի Էձեր վրայ ։
23 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
24 ըսելով . Որդի՛ մարդոյ՝ անոր ըսէ . Դուն անանկ երկիր մըն ես ,

Ն · ք · ՂՓ · 593

Է ԳԼ · ԺԸ · 24 · ԻԲ · 28 ։ — ՀՄՐ 25 ։ ԾՈՓ · ԺԸ · 20 ։ ՍԱՂ · ԼԵ · 13 ։ — ԵՐԵՄ · ԽԵ · 6 ։ 7 ։ ՀԳԼ · ԺԶ · 3 ։ — ԾՆ · ԺԸ · 14 ։ ԳԼ · ԺԶ · 38 ։ Ը ԳԼ · Ե · Տ ։ ԺԴ · 19 ։ ԺԲ · 22 ։ Դ ԳԼ · ԻԲ · 29 ։ 21 ։

— ԳԼ · ԻԵ · 10 ։

— ԳԼ · ԻԴ · 6 ։ 9 ։ ՆԱՀ · Գ · 1 ։

Բ ԳԼ · Ի · 4 ։ ԻԳ · 36 ։

Է ԳԼ · ԺԶ · 2 ։

Ը Դ ԹՈՒՔ · ԻԱ · 16 ։

ԻԲ ՕՐ · ԻԲ · 37 ։ ԴԹՈՒՔ · Թ · 7 ։ ԳԼ · Ե · 14 ։ ԴԱՆ · Թ · 16 ։

ՂԵՍ · Ա · 23 ։ ՄԻԿ · Գ · 1 ։ 2 ։ 3 ։ ՍՓ · Գ · 3 ։

ԻԲ ՕՐ · ԻՀ · 16 ։

Ը ԵԶ · ԻԲ · 21 · 22 ։ Ի ՀՄՐ 26 ։ Ա ՂԵ · ԺԲ · 30 ։ ԳԼ · ԻԳ · 38 ։

Ի ԵԶ · ԻԴ · 1 ։ ՂԵ · ԺԲ · 16 ։

Լ ԳԼ · ԺԸ · 6 ։ 11 ։

Ն · ք · ՂՓ · 593

Է ՂԵ · ԺԸ · 7 ։ 8 ։ Ի · 11 ։ Ա ԿՕՐ · Ե · 1 ։

Ծ ՂԵ · ԺԸ · 19 ։ Ի · 18 ։ ԳԼ · ԺԸ · 6 ։

Է ՂԵ · ԺԸ · 20 ։ Ի · 10 ։ Բ ՕՐ · ԻԲ · 22 ։ ԵՐԵՄ · Ե · 8 ։ ԳԼ · ԺԸ · 11 ։

Հ ՂԵ · ԺԸ · 15 ։ Ի · 12 ։

Յ ՂԵ · ԺԸ · 9 ։ Ի · 17 ։

Ղ ԵԶԻ · ԻԿ · 8 ։ Բ ՕՐ · ԺՀ · 19 ։ ԻԷ · 25 ։

Ճ ԵԶ · ԻԲ · 25 ։ ՂԵ · ԻԵ · 36 ։ Բ ՕՐ · ԻԿ · 19 ։ ԳԼ · ԺԸ · 13 ։

Ժ Բ ՕՐ · ԼԲ · 18 ։ ԵՐԵՄ · Գ · 21 ։ ԳԼ · ԻԿ · 35 ։

Յ ԳԼ · ԻՀ · 17 ։

Ն ՏԵՍ ԳԼ · ԻՀ · 7 ։

Չ ԳԼ · ԺԵ · 24 ։

— Բ ՕՐ · Դ · 27 · ԻԲ · 25 · 64 ։ ԳԼ · ԺԲ · 14 · 15 ։

Չ ԳԼ · ԻԳ · 27 · 48 ։

Ղ ՍԱՂ · Թ · 16 ։ ԳԼ · Ջ · 7 ։

Ջ ԵՍ · Ա · 22 ։ ԵՐԵՄ · Ջ · 28 · ԱԱ ։ ՏԵՍ ՍԱՂ · ՃԺԹ · 119 ։

— ՀՂ · ԻԱ · 31 ։

— ԳԼ · Ի · Տ · 33 ։ ՀՄՐ 31 ։

Ն·Ք·ՊՔ· 593

որ ոչ մարթուած է , ոչ ալ բարկութեան օրը անձրեւով թրջուած ։

25 Յուսաց ։ Եւ անոր մէջը իր մարգարէներուն դաւաճանութիւնը կայ , որոնք աւար յայտնակող ու մունչող առիւծի պէս՝ զոհերնէր կ՚ուտեն . է անոնք գանձ , ու պատուական բաներ առին , ու անոր մէջը՝ անոր որբևարիները շատցուցին ։

26 Յոյակին ։ Անոր քահանաները իմ օրէնքս աւրեցին , ու զիմ սուրբ բաներս պղծեցին . է սուրբը պիղծէն չզորոշեցին , և անմաքուրին ու մաքուրին տարբերութիւնը չգիտցուցին , և իրենց աչքերը իմ շաբաթներէս ծածկեցին , ու ես անոնց մէջ

27 Ը պիղծ սեպուեցայ ։ Անոր իշխանները անոր մէջը յափշտակող գայլերու պէս՝ արիւն թափելու , հոգի կորսընցնելու եւ եղան , որպէս զի ագահութեամբ բան

28 վաստկին ։ Եւ անոր մարգարէները ը ունայն տեսիլքներ տեսնելով , ու անոնց սուտ դուշակութիւն ընելով՝ զանոնք կիրով ծեփելին , ըսելով . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ , թէեւ Տէրը խօսած չէր ։

29 Երկրին ժողովուրդը մեծ զրկանք ըրին , ու մեծ յափշտակութիւն ըրին , և աղքատը ու տնանկը բռնադատեցին , ու է օտարականին անիրաւեցուցին ,

30 Եւ անոնցմէ մարդ մը փնտռեցի , որ պարիսպ չհնէ , ու է խրամատին մէջ իմ առջեւս կայնի երկրին համար , որ զանիկայ չաւերեմ . բայց

31 չգտայ ։ Ուստի ։ ի վրայ թափեցի . զանոնք իմ սրտմտութեանս կրակովը սպառեցի . է անոնց ճամբաները իրենց գլուխը տուի՝ կ՚ըսէ Տէր Եհովան ։

ԳԼ · ԻԳ

1 Ողջոյի ու Ողբերայի պատկութիւնը ։ 22 Ոմիքեային նզովելու հեղութիւնը իր հոմանիներէն ։ 36 Մարգարէն կը յանդիմանէ անոնց երկուքին չմտածելնին ալ , և կը ցուցնէ անոնց դատաստանները ։

1 Վարձեալ Տէրոջ խօսքը ինծի եւ
2 ըսաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝ երկու կիներ կային մէկ մօր աղ-
3 ջիկներ . Ու Եգիպտոսի մէջ պոռնկութիւն ըրին . է իրենց մանկութեան տանը պոռնկութիւն ըրին . անոնց ծիծերը հոն ձնշուեցաւ , ու անոնց կուսութեանը տունքները հոն չջա-
4 փուեցաւ ։ Եւ անոնց անուններէն՝ մեծինը Ողոյ , ու անոր քրոջը՝ Ողբերայ էր . ու ը անոնք իմս եղան . և տղաքներ ու աղջիկներ ծնան . (ու անոնց անուններէն՝ Ողոյ՝ Սամարիան է , ու Ողբերայ Երուսաղէմն է ։)

5 Եւ Ողոյ՝ քանի որ իմս էր , պոռնկութիւն ըրաւ , ու իր հոմանիներուն սիրահարեցաւ , այսինքն
6 Ը Ասորեստանցի դրացիներուն , կապուտակ հագնող կուսակալներուն ու նախարարներուն , ձի հեծնող ձիաւորներուն՝ որոնք ամէնը շնորհալի երիտասարդներ էին ։ Եւ
7 հալէ երիտասարդներ էին ։ Եւ անոնց հետ պոռնկութիւն ըրաւ անոնց հետ՝ այսինքն՝ Ասորեստանի ամէն ընտիր որդւոցը հետ . նաև ան ամենուն հետ՝ որոնց սիրահարեցաւ , ան անոնց ամէն կուռքերովը պղծ-
8 ծուեցաւ ։ Ու Եգիպտոսէն բէբ պոռնկութիւնները չմոռցաւ . վասն զի անոր մանկութեան տանը անոր հետ պառկեր էին , և անոր կուսութեանը տունքները չջափեր էին , ու իրենց պոռնկութիւնը ա-
9 նոր վրայ թափեր էին ։ Անոր համար զանիկայ իր հոմանիներուն ձեռքը տուի , ը Ասորեստանի որդւոցը ձեռքը՝ որոնց սիրահարած
10 էր ։ Անոնք ը անոր մերկութիւնը յայտնեցին . անոր տղաքները ու աղջիկները առին , ու զանիկայ՝ սրով մեռցուցին . այսպէս անիկայ կնիկներուն մէջը անուանի եղաւ . և անոր վրայ դատաստաններ՝ ի գործ դրին ։

11 Ու Երբոր անոր քոյրը Ողբերան տեսաւ , ծ իր սիրահարելովը անկ աւելի ապականացաւ . և իր պոռնկութիւնները՝ իր քրոջը պոռնկու-
12 թիւններէն աւելի չարացուց . Ո՞ էր դրացիներուն սիրահարեցաւ , այսինքն է Ասորեստանի որդիներուն , շքեղութեամբ հագուած կուսակալներուն ու նախարարներուն , ձի հեծնող ձիաւորներուն՝ որոնք ամէնը շնորհալի երիտասարդներ էին ։
13 Եւ տեսայ որ պղծեցաւ . երկու-
14 քին ալ ճամբան մէկ եղաւ ։ Եւ իր պոռնկութիւնները աւելցուց . քանզի երբոր պատի վրայ նկարուած մարդիկներ՝ նօճով նկարուած քաղդեացւոց պատկերները
15 տեսաւ , որոնք մէջքերնին զօտի կապած էին , և իրենց գլուխներուն վրայ *ներկուած խոյրեր՝ ունէին , ու ամէնքը իշխանները կերպարանքով էին , իրենց ծննդեան երկրին՝ Բաբիլոնի որդւոցը՝ քաղդեացւոց
16 նմանութեանը պէս , է Ջ՚ուն իր աչքերովը տեսածին պէս՝ անոնց սիրահարեցաւ , և անոնց՝ քաղդեացւոց երկիրը դեսպաններ իրը-
17 կեց ։ Ու Բաբիլոնի որդիքը անոր հետ սիրոյ անկողինը մտան , և զանիկայ իրենց պոռնկութիւններովը պղծեցին . ու անիկայ անոնց հետ պղծուեցաւ , ու է՚ետը ի անոր հոգին
18 անոնցմէ զատուեցաւ ։ Ու իր

Ն·Ք·ՊՔ· 593

Ը դ Թագ· ԺԸ· 19 ։ Ժզ· 7 ։ ԺԷ · 3 ։ Ովս · Ը · 9 ։

Ղ Հմր 3 ։

Ը դ Թագ · ԺԷ · 3 , 4 , 5 · 6 · 23 ։ ԺՀ · 9 · 10 , 11 ։

Ը Գլ · ԺՀ· 37, 41 ։

Ի Երեմ · Գ · 8 ։
Ժ Երեմ · Գ · 11 · Գլ · ԺՀ· 47 · 51 ։

Ի դ Թագ · ԺԹ · 10 ։ Բ Մն · իբ · 16-23 · Գլ · Յ Ա · 28 ։
Լ Հմր 6 · 23 ։

* կ՚ · մ · ասպարիսներ

Ը դ Թագ · իգ · 1 ։ Գլ · ԺՀ · 29 ։

Ժ Հմր 22 , 28 ։

Ն·Ք·ՂԲ· 593

ԵՐԵՄ· Ղ· Տ·

ՀՀՄՐ 3·

ՅԳՂ· ԺՂ· 26·

ՂԳՂ· ԺՂ· 37· ՀՄՐ 28·

ՖԵՐԵՄ՝ Ծ· 21· * Կ՚ՄՐ՝ ԻՇԽԱՆՆԵՐՐ՝ ՀԱՐԱՏՍՏՆԵՐՐ ՈՒ ՍՊՆՈՒԱԿԱՆՆԵՐՐ·

ՅՀՄՐ 12·

ՅԳՂ· ԺՂ· 39·

ՆԳՂ· ԺՂ· 41՝ ԲՐ· 15·

Ղ ՀՄՐ 3՝ 19·

ՈԳՂ· ԺՂ· 37·

Ղ ՀՄՐ 17·

պոռնկութիւնները յայտնեց , ու իր մերկութիւնը բացաւ · ուստի իմ հոգիս անկէ զատուեցաւ , ինչպէս որ անոր քրոջմէն զատուեր
19 եր · Ա յսպէս անիկայ իր պոռնկութիւնները շատցուց · յիշելով իր մանկութեան օրերը , ՚Ե-
զիպտոսի երկրին մէջ ընութիւն ը-
20 րած ժամանակը · Ու սիրահարեցաւ անոնց տարբածուներուն , ո-
րոնց մարմինը էշերու մարմին է , ու անոնց զօրութիւնը ձիերու զօրու-
21 թիւն է · Եւ դուն նորէն կը յիշեցուցիր քու մանկութեանդ պղծադործութիւնը ձեռք առիր , որ քու մանկութեանդ ծիծերուն ՚Ե-
գիպտացիներէն չը-
շափուեցաւ ·
22 Անոր համար՝ ով Ողղիբայ , Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ · Ահա ես քու վրադ պիտի արթնցընեմ քու հոմանիներդ , որոնցմէ քու հոգիդ զատուեցաւ , ու զանոնք ամէն կող-
23 մէն քու վրադ պիտի բերեմ Բաբիլոնի որդիքը , ու բոլոր Քաղդէացիները , Փ* փակուդը Սուէն , ու Կուէն՝ , Ե անոնց հետ Ասորես-
տանի բոլոր որդիքը ՚ամէնը շնորհալի երիտասարդներ կուսականներ , ու նախարարներ ամէնը մի հեծնող զօրագլուխներ ու անուանի
24 մարդիկներ · Եւ անոնք զէնքերով , կառքերով , ու անիւներով , ու ժողովուրդներու բազմութիւնով քու վրադ պիտի գան , և ամէն կող-
մէն քեզի դէմ՝ վահան , ասպար ու սաղաւարտ պիտի դնեն · և դա-
տաստանը անոնց ձեռքը պիտի տամ՝ ու քեզ իրենց դատաստան-
25 ներովը պիտի դատեն ։ Եւ իմ նախանձս քեզի դէմ պիտի դնեմ · ու քեզի հետ բարկութեամբ պի-
տի վարուին · քու քիթդ ու ա-
կանջներդ պիտի կտրեն · և քու մնացորդդ սրով պիտի իյնայ · անոնք քու տղաքներդ ու աղջիկներդ պի-
տի առնեն · ու քու մնացորդդ
26 կրակով պիտի այրի ։ Եւ քու հանդերձներէդ քեզ պիտի մերկացընեն ու քու պարծանացդ զար-
27 դերը պիտի առնեն ։ Ու ՚քեզմէ պիտի դադրեցընեմ քու պղծադործութիւնդ · ու Եգիպտոսի քու պոռնկութիւնդ՝ որ Եգիպտոսի երկրէն Բէէր · ջ· աչքերդ անոնց պիտի չվերցընես , ու Եգիպտոսը այլ պիտի չյիշես ։
28 Քանզի Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ · Ահա ես քեզ պիտի մատնեմ անոնց ձեռքը որոնք ՚դուն ատելիր · և անոնց ձեռքը Ե որոնց-
29 մէ քու հոգիդ զատուեցաւ · Եւ անոնք քեզի հետ ատելութեամբ

պիտի վարուին , ու քու բոլոր վաստակդ պիտի առնեն , և Ղբեզ մերկ ու անծածկոյթ պիտի թո-
ղուն · ու քու պոռնկութիւնը-
րուդ մերկութիւնը , քու պղծա-
դործութիւնդ ու պոռնկութիւնդ
30 պիտի յայտնուի ։ Ես զերդուն հետևեալով՝ պոռնկութիւն ընելուդ համար , և անոնց կուռքերովը պղծուելուդ համար , աս բաները
31 քեզի պիտի ընեմ ։ Դուն քու քրոջդ ՃամՀան գաղիր , ես ալ ա-
նոր ՚բաժակը քու ձեռքդ պիտի
32 տամ ։ Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ · Դուն քու քրոջդ խորունկ ու լայն բաժակը պիտի խմես · ՚խաղ-
ու խայտառակ պիտի ըլլաս · ան-
33 բաւ չատ բան կ՚առնէ · Դուն արբեցութեամբ ու տրտմութեամբ պիտի լցուիս · ապշութեան ու զարմացման բաժակ մըն է քու
34 քրոջդ Սամարիայուն բաժակը · Ու դուն Հզաւիկայ պիտի խմես , ու պիտի քամես , և անոր կտորները պիտի ՚լլես , ու ստինքներդ պիտի պատռտես · քանզի ես խօսեցայ՝
35 կ՚ըսէ Տէր Եհովան ։ Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ · Ջիս մոռնալուդ ու ՚կռնակիդ ետևը նետելուդ համար · դուն ալ քու պղծադործութիւնդ ու պոռնկու-
թիւններդ կրէ ։
36 Եւ Տէրը ինծի ըսաւ · Որդի մարդ՝ Ողղայիին ու Ողհբայիին ՚դատաստանը պիտի տեսնե՞ս · ուրեմն ՚անոնց պղծութիւնները իրենց
37 պատմէ ։ Վասն զի շնութիւն ըրին , ու ՚ձեռքերնուն մէջը արիւն կայ · և իրենց կուռքերովը շնու-
թիւն ըրին · ու ՚իրենց ինծի ծնած տղաքն ալ ՚՚ետ անցուցին · որ ա-
38 նոնց կերակուր ըլլան ։ Ա՚ ալ ը-
րին ինծի · նոյն օրը իմ սրբարանս անմաքուր ըրին , ու ՚իմ շաբաթ-
39 ներս պղծեցին ։ Վասն զի երբոր իրենց տղաքը իրենց կուռքերուն զոհեցին , նոյն օրը իմ սրբարանս մտան՝ որ զանիկայ պղծեն · և ահա
40 ՚իմ տանս մէջ այսպէս ըրին ։ Ու նաև հեռուէն դալու մարդիկներուն ՚՚ղ խրկեցիք · ՚որ անոնց պատ-
գամաւորներ խրկուելուն պէս՝ ահա անոնք եկան · և դուն անոնց հա-
մար ԲՂուացուեցար , ու ՚ակերերուդ վրայ ծարդար դրիր , ու զարդերով
41 զարդարուեցար · Եւ պատուական Ցբազմոցի վրայ նստար , որուն առջևը պատրաստուած սեղան կար , և ՚իմ խունկս ու եղած ՚անոր
42 վրայ դրիր ։ Ու հոն ուրախութիւն ընդ բազմութեան ձայն Ղը-
՚՚՚եր · ու ան բազմաթիւ մարդիկներէն ՚ի զատ՝ անապատէն

Ն· Ք·ՂԲ· 593

ՊԳՂ· ԺՂ· 39՝ ՀՄՐ 26·

ՂԳՂ· Ղ· 9·

՚ԵՐԵՄ· ԻԵ· 15՝ Ճ·

ՈԳՂ· ԻԲ· 4՝ 5·

ՀՄՍՂ· ՀԵ· Տ· ԻՀ· Ծ·Ա· 17·

† Կ՚ՄՐ՝ ԿԸՐ-
ՅԵՀ·

՚ԵՐԵՄ· Բ· 32՝ Գ· 21՝ ԺՂ· 25՝ ԳՂ· ԻԲ· 12·

Բ Գ ԹԱԳ· ԺՂ· 9՝ ՆԵ-
ԵՄ· Թ· 26·

ՅԳՂ· Ի· 44՝ ԻԲ· 2·

՚ԵՀ· ԾԸ· 1·

ՃԳՂ· ԺՂ· 38՝ ՀՄՐ 45·

ՈԳՂ· ԻԲ· Տ·

ՖԴ ԹԱԳ· ԻՀ· 4·

՚ԵՀ· ՅԵ· 9·

Բ ՀՈՌԻ· Գ· 3·

Ֆ Գ ԹԱԳ· Ի· 30՝ ԵՐԵՄ· Դ· 30՝

Գ ԵՍԹ· Ա· 6՝ ԵՀ· ՅԵ· 7՝

Ե ԱՒԱԿ· Ե· 17՝ ԳՂ· ԺՂ· 1Տ՝ 19՝ ՈՎԽ· Բ Տ·

ղինեմ՝ մարդիկներ բերուեցան , որոնք անոնց ձեռքերը՝ ապարանջաններ , ու անոնց ղլուխները՝ պարծանայ թագեր կը դնէին ։

43 Եւ շնութեան մէջ պառաւածին վրայով ըսի . Հիմա ալ ասոր հետ պոռնկութիւն պիտի ընէ՞ն ։ Ու անոր քովը կը մնանէին . ինչպէս որ պոռնիկ կնկան քովը կը մնանեն , անանկ ալ Ողջային ու Ողջբայինՙ ան պղծագործ կնիկներուն քովը կը մնանէին ։ Բայց արդար մարդիկները՝ Ընշացող կնիկներուն դատաստանովը , ու արիւն թափող կնիկներուն դատաստանովը պիտի դատեն զանոնք . վասն զի անոնք շնացող կնիկներ են , ու Ըանոնց ձեռքերուն մէջը արիւն կայ ։

46 Քանզի Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . ԸԱնոնց դէմ ժողովք պիտի հանեմ՚, և զանոնք նեղութեան ու յափշտակութեան պիտի մատնեմ։

47 Ու ժողովքը զանոնք քարերով պիտի քարկոծէն , և զանոնք իրենց սուրերովը պիտի կտրեն . Ըանոնց տղաքները ու աղջիկները պիտի մեռցընեն , ու անոնց տուները կրակով պիտի ջրդեն ։

48 Ըսկով պիտի ջրդեն ըԶ ծերկրէն պղծագործութիւնը պիտի վերջը նեմ , Ըոր ամէն կնիկները խրատուին , ու ձեր պղծագործութեանը պէս չընեն ։ Եւ ձեր պղծագործութիւնը ձեր վրայ պիտի դնեն . ու դուք Ըձեր կուռքերուն մեղքը պիտի կրէք , Ըու պիտի գիտնաք թէ ես եմ Տէր Եհովան ։

ԳԼ · ԻԴ

1 Եռացող կաթսայի մը օրինակով , 6 կը ցուցնի Երուսաղէմի անհրաժեշտ կործանումը ։ 15 Եզեկիէլին՝ իր կնկանը մահուանը համար սուգ չընելուն օրինակովը՝ 19 կը ցուցնի թէ Հրէից թշուառութիւնը չափազանց արտմուելիամբ պիտի ըլլայ ։

590

1 Նաև իններորդ տարին տասներորդ ամիսը՝ ամսուն տասներորդ օրը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով .

2 Որդի՛ մարդո՛ դուն քեզի այս օրուան անունը՝ ըուն այս օրը դրէ . Բաբիլոնի թագաւորը Երուսաղէմին մօտեցաւ ։

3 օրս Երուսաղէմին մօտեցաւ ։ Ըեւ ան ապստամբներուն տանը առակ խօսիս , ու անոնց ըսես . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Կաթսան դիր , կ՚ըսե՛մ դիր , ու ջուր ալ

4 ջուր լեցուր ։ Անոր կտորները , ամէն ազէկ կտորները , ազդրը , և ուսը անոր մէ՛ջը ժողվէ . — կ՚ըսե՛մ։

5 ընտիր ոսկորներով լեցուր ։ Ոչխարներուն ընտիրները առ , ու ոսկորներն ալ տակը դիզէ . զանիկայ խիստ շատ եռացուր , այնպէս որ մէջի ոսկորներն ալ եփին ։

6 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Վա՛յ Ըարիւնհեղ քաղաքին , ան կաթսային՝ որուն ժանգը իր մէջն է , ու ժանգը մէջէն ելած չէ . զանիկայ իր մէկ կտորներովը հանէ . Ըանոր վրայ վիճակ չձգուի . վասն զի անոր արիւնը իր մէջն է . զանիկայ չոր ապառաժի վրայ դրաւ . Ըզանիկայ գետնի վրայ չթափեց որ զանիկայ ծածկեն ։

8 Հողով ծածկէ ։ Ըմ սրտմտութիւնս հանելու , — վրէժ առնելու համար , Ըանոր արիւնը չոր ապառաժ

9 մի վրայ դրի , որ չծածկուի ։ Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . ԸՎա՛յ արիւնահեղ քաղաքին , ես ալ կրակին դէզը պիտի մեծցընեմ ։

10 Փայտերը շատցուր , կրակը բռնկեցո՛ւր՝ որ միսը հալի , համեմներ ալ

11 դիր , ու ոսկորները այրին ։ Ետքը պարապ Ըկաթսան կայծերուն վրայ դիր , որպէս զի պղինձը տաքնայ ու այրի , ու Ըմէջի պղծութիւնը հալի , — ժանգը հատնի ։ Անիկայ աշխատութիւնով վա՛ յոգնեցուց . ու անոր շատ ժանգը իրմէն չելաւ .

13 անոր ժանգը կրակով չէ՛ — Քու անմաքրութեանդ մէջ պղծագործութիւն կայ . որովհետև քեզ *մաքրելու աշխատեցայ՚՝ , ու դուն չմաքրուեցար . այսուհետև քու անմաքրութենէդ պիտի չմաքրուիս , մինչև որ իմ բարկութիւնս քու

14 վրադ չհնչեցընեմ ։ Ես Տէրս խօսեցայ . Ըմ խոստա՛ պիտի գայ , ու ըն՛ի՛յ պիտի կատարեմ . Ըպիտի չներեմ՚՝ , Նու պիտի չխնայեմ , և պիտի չզղջամ . քու ճամբաներուդ , ու քու գործքերուդ համեմատ պիտի դատուիս՝ կ՚ըսէ Տէր Եհովան ։

15 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝

16 ըսելով . Որդի՛ մարդո՛ ահա ես հարուածով մը քու աչքերուդ ցանկութիւնը քեզմէ պիտի առնեմ . ու դուն չողբաս , ու լաս , և քու

17 արտերէդ արցունք չթայ ։ Լռութեամբ ըլլայ քու հեծութիւնդ , Ըմեռելի սուգ մի՛ ըներ . Ծրաս պարօշդ ղլուխդ փաթթէ . Ոկօշիկներդ ոտքերդ հագիր , ու չըղթունքդ մի՛ ծածկեր , և մարդոց հացը մի՛ ուտեր ։

18 Ընե առաւօտուն ժողովուրդին խօսեցայ . ու իրիկունը կնիկս մեռաւ . ու հետևեալ առաւօտուն՝ ես արի՛ ըրի ։

19 ինծի հրամայուածը ըրի ։ Եւ ժողովուրդը ինծի ըսաւ . Ըմեզի չե՞ս պատմեր թէ աս քու բրածներդ ի՞նչ պիտի Ըմանան մեզի ։

20 Ու ես անոնց ըսի . Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով .

21 Խօսէ՛ Իսրայէլի տանը ըսէ . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ընէ՛ս իմ սրբարանս՝ ձեր

Ն · ր · ՂԲ · 593
Ղ Գ Լ · ԺԶ · 38 ։
Ե Ձմր 37 ։
Ը Գ Լ · ԺԶ · 40 ։
Ըր Մ Ն · ւդ · 17 · 19 ։ Գ Լ · իդ · 21 ։
Ժ Գ Լ · իր · 15 ։ Ձմր 27 ։
Իր Օր · Ժդ · 11 ։ ր Պետ · ր · 6 ։
Լ Ձմր 35 ։
Ի Գ Լ · ի · 38 ։ 42 ։ 44 ։ իե ; 5 ։
590
— դ Թագ · իե · 1 ։ Եզր · լԹ · 1 ։ Ծր · 4 ։
Բ Գ Լ · Ժե · 12 ։
Է Տե՛ս Երեմ · ա · 13 ։ Գ Լ · Ժա · 3 ։
Ն · ք · ՂԲ · 590
Ր Գ Լ · իր · 3 ։ իդ · 37 ։ Ձմր 9 ։
Ի Տե՛ս բ Թագ · ը · 9 ։ Ցովել · գ · 3 ։ Ամբ · 11 ։ Նաե · գ · 10 ։
Ղ Ղէ · Ժե · 13 ։ բ Օր · Ժբ · 16 ։ 24 ։
Ե Մատ · է · 2 ։
Ը Ձմր 6 ։ Նաե · գ · 1 ։ Ամբ · բ · 12 ։
Բ Գլ · իր · 15 ։
Ջ Եբ · մաքրեցի ։
Ժ Գլ · ե · 13 ։ ը · 18 ։ Ժզ · 42 ։
Լ ա Թագ · Ժե · 29 ։
† Կո՛ պիտի չձգեմ իմ ՚՚՚

Ն · ք · ՁԲ · 590

զօրութեանը պարծանքը , ՚ձեր աչեացը ցանկութիւնը , ու ձեր հոգւոյն խնայածը պիտի պղծեմ . ՛և ձեր թողուցած տղաքներնիդ ու աղջիկներնիդ սրով պիտի իյնան ,

22 Եւ դուք իմ ըրածիս պէս պիտի ընէք . ՚այէր չըթունքները պիտի չծածկէք , ու մարդոց հացը պիտի

23 չուտէք . Ու ձեր ապարօշները գլխուխներնիդ , և ձեր կօշիկները ոտքերնիդ պիտի ըլլայ . ՝պիտի չողբաք , ու պիտի չլաք . հապա ՚ձեր անօրէնութիւններովը պիտի մաշիք , և իրարու հետ պիտի հեծէք ,

24 Ու ՝Եզեկիէլը ձեզի նշան մըն է . դուք անոր բոլոր ըրածին պէս պիտի ընէք . ՚Ու երբոր ասիկայ ըլլայ , ՝պիտի դիտնաք թէ ես եմ Տէր Եհովան ,

25 Նե դուն՝ որդի՛ մարդոյ՝ երբոր ես անոնցմէ առնեմ Հանոնց զօրութիւնը , անոնց պարծանաց ցնծութիւնը , անոնց աչացը ցանկութիւնը , ու անոնց հոգւոյն սիրած

26 տղաքները ու աղջիկները , Ահա ՝ան օրը ազատուածը քովդ պիտի գայ , և ՛՚՚ականջներուդ պիտի պատմէ ,

27 ՝Ան օրը քու բերանդ պիտի բացուի ազատուածին , ու պիտի խօսիս , և ալ համր չըլլաս . ու Հդուն անոնց նշան պիտի ըլլաս . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

ԳԼ · ԻԵ

1 Ընտուծոյ վրէժխնդրութիւնը Ամմոնացւոց դէմ . 5 Նաև Մովաբին ու Սէիրին դէմ , 12 Եդովմին 15 ու Փղշտացւոց դէմ . որովհետև Հրէից Նեռ արհամարհանօք վարուեցան ։

1 Ձարձալ Տէրոջը խօսքը ինծի ե-
2 ղաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝ ՝երեսդ Ամմոնի որդիներուն դարձուր . ու անոնց վրայ մարգարէուա-
3 թիւն ըրէ . Ես Ամմոնի որդւոցը ըսէ՝ Տէր Եհովային խօսքը մտիկ ըրէք . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . ՚Որովհետև դուն՝ Վա՛յ ըսիր իմ սրբարանիս վրայով , երբոր պղծուեցաւ , ու Իսրայէլի երկրին վրայով , երբոր աւերակ եղաւ , և Յուդայի տանը վրայով , երբոր
4 գերութեան գնաց . Անոր համար ահա ես քեզ արևելքի բնակիչներուն ժառանգութիւն կու տամ . ու քու մէջդ իրենց գեղերը պիտի հաստատեն , ու քու մէջդ իրենց վրանները պիտի դնեն . քու պտուղներդ պիտի ուտեն , և քու
5 կաթդ պիտի խմեն ։ Ու ՝Ռաբբան Հուղտերու փարախ՝ և Ամմոնի որդւոց Հօտերու մակաղատեղ պիտի ընեմ . Հու պիտի գիտնաք
6 Թէ ես եմ Տէրը ։ Վասն զի Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Որովհետև

դուն Հծափ զարկիր , ու ոտքդ գետինը զարկիր , ու Իսրայէլի երկրին վրայ՝ Հքու Հոգւոյդ բոլոր արհա-
7 մարհանօքդ ուրախացար , Անոր համար ահա ես Ի՛մ ձեռքս քու վրադ պիտի երկընցընեմ , ու քեզ ազգերուն յափշտակութիւն ըլլալու պիտի տամ , և քեզ ժողովուրդներէն պիտի կտրեմ , ու քեզ երկիրներուն մէջէն պիտի կորսընցնեմ . քեզ բնաջինջ պիտի ընեմ . ու պիտի գիտնաս Թէ ես եմ
8 Տէրը ։ Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ո-րովհետև ՚Մովաբը ու Հսէիրը ըսին , Թէ Ահա Յուդայի տունը ա-
9 մէն ազգերուն պէս է . Անոր համար ահա ես Մովաբի սահմանը էր քաղաքներէն՝ իր ծայրը եղող քաղաքներէն , երկրին պարծանքը եղող Բեթեսիմոթի , Բէէլմէոնի ու Կարիաթեմի կողմէն պիտի բանամ
10 Հ Արևելքի բնակիչներուն , ՚՚ Ամմոնի որդւոցը վրայ Հ՚՚՚

Ն · Ք · ՁՓ · 590

երբոր իմ վրէժս անոնցմէ առնեմ , պիտի դիտեան Թէ ես եմ Տէրը ։

ԳԼ · Ի Զ

1 Տիւրոսին սպառնալիք կ'ըլլայ · Երուսաղեմի դէմ խրոխտալուն համար ։ 17 Նաբուգոդոնոսորին յարձակումը անոր վրայ ։ 15 Ծովը սուգ կը բռնէ ու կը զարմանայ անոր կործանմանը վրայ ։

588

1 Եւ եղաւ որ Միտասաներորդ տարին՝ ամսուն առաջին՝ օրը՝ Տէրոջը

2 խօսքը ինծի եղաւ՝ ըսելով՝ Որդի մարդոյ՝ որովհետեւ Տիւրոսը Երուսաղէմի վրայով ըսաւ . Բ Վա՛չ՝ ժողովրդոց դռները կոտրեցաւ ։ Անոր մէն բանը ինծի փոխադրուեցաւ . անոր անապատ դառնալովը ես պի-

Ա Թես . իգ · Երեմ . իե · 22 · Լէ . 4 · Ամով . ա . 9 · Զաք . Թ . 2 ։ Բ Գլ . իե . 3 · Լզ . 2 ։

3 տի լեցուիմ . Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես քեզի դէմ եմ՝ ով Տիւրոս , ու քու վրադ շատ ազգեր պիտի յարուցանեմ , ինչպէս որ ծովը իր ա-

4 լիքները կը յարուցանէ . Եւ անոնք Տիւրոսին պարիսպները պիտի աւերեն , ու անոր աշտարակները պիտի փլցընեն . ու ես անոր հողը անկէ պիտի աւլեմ , և զանիկայ չոր ա-

Բ Ժամ . 14 ։

5 պառաժի պիտի դարձընեմ ։ Անիկայ Ծովուն մէջը ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլայ . վասն զի ես խօսեցայ՝ կ'ըսէ Տէր Եհովան . ու անիկայ ազգերուն աւար պիտի

Ե Գլ . իե . 32 ։

6 ըլլայ . Եւ անոր աղջիկները՝ որ դաշտի մէջ են , սրով պիտի սպանուին . և Հռդէի պիտի դիտեան Թէ ես եմ Տէրը ։

Ե Գլ . իե . 5 ։

7 Վասն զի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես հիւսիսէն Տիւրոսի վրայ պիտի բերեմ Նաբուգոդոնոսոր Թագաւորը՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը՝ ձիերով , կառքերով , ձիաւորներով , բազմութիւնով ու շատ ժողովուրդով ։

Ղեղ . ե . 12 · Դան . բ . 37 ։

8 Անիկայ քու աղջիկներդ դաշտի մէջ սրով պիտի մեռցընէ , և բերդի դէմ մարտկոց պիտի շինէ , ու քեզի դէմ հողաբլուր պիտի կանգնէ , ու քեզի դէմ վահան պի-

Ե Գլ . իա . 22 ։

9 տի վերցընէ . Եւ քու պարիսպներուդ դէմ՝ իր պատերազմական մեքենաները պիտի դնէ , ու իր տապարներովը քու աշտարակ-

10 ներդ պիտի փլցընէ ։ Անոր ձիերուն բազմութենէն՝ անոնց փոշին քեզ պիտի ծածկէ . ձիաւորներուն , ու անիւներուն , և կառքերուն ձայնէն քու պարիսպներդ պիտի սասանին , երբոր ինքը քու դռներդ մտնէ՝ պարիսպը փլած քաղաքի մէջ մտնողներուն պէս ։

11 Քու ամէն փողոցներդ իր ձիերուն սմբակներովը պիտի կոխէ . քու ժողովուրդդ սրով պիտի սպաննէ , և քու ամէնէն բերդերդ գետին հետ

12 հաւասար պիտի ըլլայ ։ Ու քու հարստութիւնդ պիտի թալքեն , ու ապրանքներդ աւար պիտի առնեն , և քու պարիսպներդ պիտի փլցընեն , ու դեղեցիկ տուներդ պիտի քակեն , և քու քարերդ , փայտերդ , ու հողը ջուրերուն մէջը

Ե Ես . իգ . 16 · Գլ . իբ . 13 · Ցպտ . ժը . 22 ։

13 պիտի ձգեն ։ Եւ ձայնը երգերուդ աղաղակը Ը պիտի դադրեցընեմ . ու քու քնարներուդ ձայնը մէլմէն

Ը Ես . ժդ . 11 · իդ . 8 · Երեմ . է . 34 · ժզ . 9 · իե . 10 ։

14 ալ պիտի չլսուի ։ Եւ Ժբեզ չոր ապառաժի պիտի դարձընեմ . ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլաս . մէլմէն ալ պիտի չշինուիս . վասն զի ես Տէրս խօսեցայ՝ կ'ըսէ Տէր Եհովան ։

Ժ Ամբ . 4 · 5 ։

15 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ Տիւրոսին . Միթէ ձայնէն կղզիները պիտի չսասանին՝ երբոր քու մէջդ կոտորած

Ի Երեմ . խթ . 21 · Հմր 18 · Գլ . իէ . 28 · ըա . 16 ։

16 ըլլալով՝ վիրաւորները հեծծեն , Ան ատենը Ե ծովուն բոլոր իշխանները Իրենց աթոռներուն վրայէն պիտի իջնեն , և իրենց պատմուճանները պիտի հանեն , ու իրենց նըկարագործ հանդերձները պիտի մերկանան , սոսկումի պիտի հագնին , ծգետնի վրայ պիտի նստին , և ամէն վայրկեան պիտի սարսափին . ու ձքու վրայովդ պիտի

Ե Ես . իգ . 8 · Ի Ցոբ . փ . 6 ։

Ե Ցոբ . բ . 13 ։

17 ապշին . Եւ Ն քու վրայովդ ողբ Ընելով քեզի պիտի ըսեն . Ի՜նչպէս կործանեցար՝ ով ծովերնակ անուանի քաղաք , որ Ե ծովուն մէջը զօրաւոր էիր դուն ու քու բնակիչներդ՝ որ ահարկու էիք Ժովվբէէն բոլոր բնակիչներուն ։

Ե Գլ . իե . 32 · Ցպտ . ժը . 9 ։

18 Հիմա քու կործանմանդ օրը՝ Ի կղզիները պիտի դողան , ու ծովուս մէջ եղող կղզիները՝ քու բնաջինջ ըլլալուդ վրայով պիտի ապշին ։

Ա Ես . իգ . 4 · Ե Ամբ . 15 ։

19 Քանզի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Երբոր քեզ աւերակ քաղաք մը ընտ ան քաղաքներուն պէս՝ որոնք բնակիչ չունին Ճև քու վրադ անդունդը հանեմ , ու շատ

20 ջուրերը քեզ ծածկեն , Եւ քեզ Ի դուբը իջնողներուն հետ հին ժողովուրդին իջեցնեմ , ու քեզ գուբը իջնողներուն հետ գետնին տակերը՝ յաւիտենական աւերակներուն մէջը նստեցընեմ , այնպէս որ՝ մէյմը ալ չբնակուիս . ան ատենը ես Ո կենդանեաց երկրին մէջ

Ի Գլ . իբ . 18 · 24 ։

Ո Գլ . լբ . 23 · 26 · 27 · 32 ։

21 փառք պիտի դնեմ , Ն քեզ ա՜ֆնոռն սոսկումի պիտի ընեմ , ու պիտի ոչնչանաս . Ղու երբոր փնտրուիս , ալ յաւիտեան պիտի չգտնուիս , կ'ըսէ Տէր Եհովան ։

Ն Գլ . իե . 36 · իբ . 19 · Ա Սադ . լբ . 36 ։

ԳԼ · Ի Ե

1 Տիւրոսին ստացած մոխրութիւնը · 26 անոր մեծ ու անվերականգնելի կործանումը ։

Ն · Ք · ՁՓ · 588

Ն · Ք · Ղ · 588

1 Պարձեալ Տէրոջը խօսքը ինծի ե-
2 ղաւ՝ ըսելով . Դուն՝ որպի
մարդոյ՝ Տիւրոսի վրայ ողբ ըրէ ;
3 եւ Տիւրոսին ըսէ՝ . Ով ծովուն
մուտքերը բնակող , շատ կղզինե-
րու մէջ ժողովուրդներուն հետ
վաճառականութիւն ընող , Տէր
Եհովան այսպէս կ'ըսէ . Ով Տիւ-
րոս՝ դուն ըսիր թէ՝ Ես գեղեց-
կութեան մէջ կատարեալ եմ ,
4 քու սահմաններդ *ծովուն մէջ-
տեղն՝ է . քու շինողները՝ քու
գեղեցկութիւնդ կատարեալ ըրին ;
5 Անոնք քու ամէն նաւատա-
խտներէ՝ Սանիրի մայրէն շինե-
ցին . Լիբանանէն եղևիններ առին ,
6 որ քեզի կայմեր շինեն ; քու թիերդ
Բասանի կաղնիներէն շինեցին , քու
նստարաններդ՝ Կիտացւոց կղզի-
ներէն Էլիշայ տօսախէ շինեցին
7 փղոսկրով պատեալ , քու բացած
առագաստդ՝ Եգիպտոսի նկարա-
գործ բէհեզեն էր . քու ծածկոյդ՝
Եղիսայի կղզիներուն կապուտակ ու
8 ծիրանեգոյն էր ։ Սիդոնի
ու Արուադի բնակիչները՝ քու թի-
ակիչներդ էին . քու մէջդ եղող
իմաստուններդ՝ ով Տիւրոս , անոնք
9 քու նաւավարներդ էին ; Գեբա-
լցին ծերերը , ու անոր իմաստուն-
ները քու մէջդ էին , քու ծա-
կուածդ նորոգելու համար . Ծովուն բոլոր նաւերը , ու անոնց
նաւաստիները՝ քու առուտուրդ
10 ընելու համար քու մէջդ էին ; քու
զօրքերուդ մէջ պատերազմական
մարդիկներդ՝ Պարսք , Ղուդացիք
ու Փուդացիք էին . քու մէջդ
վահան ու սաղաւարտ կախողը ա-
նոնք էին , ան անոնք քեզ փառա-
11 ւորեցին ։ Արուադացիք քու զօր-
քիդ հետ՝ շուրջանակի քու պա-
րիսպներուդ վրայ , ու Գամադա-
ցիք քու աշտարակներուդ մէջն
էին . անոնք իրենց վահանները
շուրջանակի քու պարիսպներուդ
վրայ կը կախէին . անոնք Քրու գե-
ղեցկութիւնդ կատարեալ ըրին ։
12 Ամէն տեսակ ապրանքը շատ ըլլա-
լուն համար՝ Թարսիսի բնակիչը
քու վաճառականդ էին . անոնք
քու վաճառանոցներուդ մէջ ար-
ծաթի , երկաթի , անագի ու կա-
պարի առուտուր կ'ընէին ։ Յա-
ւան , Թուբէլ ու Մոսոք քու վա-
ճառականներդ էին . անոնք քեզի
հետ Մարդոց հոդիներու ու պղնձէ
աման ներու առուտուր կ'ընէին ։
14 Թորգոմայի տունէն քու վաճա-
ռանոցներդ կը բերէին ձիեր ու ձի-
15 աւորներ , և ջորիներ ։ Դեդանի
որդիքը՝ քու վաճառականներդ է-
ին . շատ կղզիներու վաճառակա-
նութիւնը քու ձեռքդ էր . անոնք
քեզի հետ փղոսկրի ժանիքներով
ու ոսպնաձոյզ փոխանակութիւն
16 կ'ընէին ։ Ձեռագործներուդ շա-
տութեանը համար՝ Ասորիք քու
վաճառականներդ էին . Ե քու
վաճառանոցներուդ մէջ՝ կարկե-
հանի , ծիրանեղոյնի , նկարագործ
կերպասի , բէհեզի , բուստերու , ու
կարմիր յակինթի առուտուր կ'ը-
17 նէին ։ Ցուդան ու Իսրայէլի եր-
կիրը քու վաճառականներդ էին .
անոնք քեզի հետ Միննիթի հցո-
րենի , իմմրեղէնի , մեղրի , եղի ու
Բալասանի առուտուրը կ'ընէին ։
18 Ձեռագործներուդ շատութենէն՝
ամէն տեսակ ապրանք շատ ըլլալուն
համար՝ Դամասկոսը քու վաճա-
ռականդ էր՝ գեղբոնի գինիով ու
19 ճերմակ բուրդով ։ Վէդան , ու
Ցաւան՝ քու վաճառանոցներդ
մանած կը բերէին . քու վաճա-
ռերուդ մէջը՝ բանուած երկաթ ,
կասիա , ու խունկեղէդն կար ։
20 Կառքերու համար պատառակալ-
ներ բերող վաճառականդ՝ Դե-
21 դանն էր ։ Արաբացիք , ու Կե-
դարի բոլոր իշխանները՝ քու պատ-
րաստ վաճառականներդ էին . ա-
նոնք քեզի հետ գառնուկներու ,
խոյերու ու նոխազներու առուտուր
22 ընէին ։ Սաբայի ու Ռեգ-
մայի վաճառականները՝ քու վա-
ճառականներդ էին . անոնք քու
վաճառանոցներուդ մէջ ամէն տե-
սակ ընտիր խունկերու , և ամէն
տեսակ պատուական քարերու , ու
23 ոսկիի առուտուր կ'ընէին ։ Խա-
ռան , Քաննէ , ու Եդեմ , Սա-
բայի վաճառականները , Ասորես-
տան ու Քազմակ՝ քու վաճառա-
24 կաններդ էին ։ Անոնք քու վա-
ճառանոցներուդ մէջ քեզի հետ
շքեղ հանդերձներով , կապուտակ
ու նկարագործ վերարկուներով ,
ու երփնագեղ գզեստներով լեցուած
ու չուաններով կապուած եղևնա-
փայտէ սնտուկներու առուտուր
25 կ'ընէին ։ Թարսիսի նաւերը՝ քու
առուտուրիդ համար կը պտըտէին .
ու դուն լեցուեցար , ու խիստ փա-
ռաւոր եղար *ծովուն մէջտեղը ։
26 Քու թիավարներդ՝ քեզ շատ
ջուրերուն բերին . Արևելեան հովը
քեզ ծովուն մէջտեղը կոտրեց ։
27 Քու ապրանքներդ ու վաճառա-
նոցներդ՝ առուտուրդ , քու նա-
ւաստիներդ ու նաւավարներդ , քու
նաւերդ նորոգողները ու քեզի հետ
առուտուր ընողները , և քու մէջդ
եղող բոլոր պատերազմական մար-
դիկներդ , ու քու մէջդ եղող բոլոր
բազմութիւնդ՝ քու կործանմանդ

Ն · Ք · Ղ · 588

† Գրս. ժթ. 1 ; իզ. 17 ; ժէ. 12 ; լԲ. 2 ։
Է Գլ. իգ. 2 ։
ֆ Ես. ֆգ. 3 ։
Ը Գլ. իբ. 12 ։
* Եչ. Ծուփուն սըրտին մէջն ։
Ի Օր. գ. 9 ։
† Կ՚ուտեն տակամարը՝ ըստ Ղեր. բ. 10 ։
Կ գԹագ. ե. 18 ; Սաղ. ժգ. 7 ։
Ի Գրս. խզ. 9 ; Գլ. լ. 5 ; լա. 5 ։
‡ Կ՚ըսեն Քուշիրանեցը ։
Ը Հմր 3 ։
ժ Ծն. ժ. 4 ; ր Մն. ի. 36 ։
Ի Ծն. ժ. 2 ։
լԲ Յայտ. ժը. 13 ։
Ի Ծն. ժ. 3 ; Գլ. լո. 6 ։
Ֆ Ծն. ժ. 7 ։

† Դատ. ժա. 33 ։
Հ գԹագ. ե. 9. 11 ; Եզր. գ. 7 ; Գոր. ժբ. 20 ։
Ֆ Երեմ. ը. 22 ։
‖ Կ՚ուտեն Եւ Դան ։
Ը Ծն. իե. 3 ; Ճ Ծն. իո. 13 ; Ես. կ. 7 ։
Ժ Ծն. ժ. 7 ; գԹագ. ժ. 1. 2 ; Սաղ. հր. 10. 15 ; Ես. կ. 6 ։
Ի Ծն. ժա. 31 ; գԹագ. ժթ. 12 ։
§ Կ՚ուտեն Քնանէ ։
Ն Ծն. իե. 3 ։
Ը Սաղ. խը. 7 ; Ես. ը. 16 ; իդ. 14 ։
* Հմր 4 ։
Ը Սաղ. խը. 7 ։
Ղ Յոհան. ժա. 4 ; Հմր 34 ; Ճես Յայտ. ժը. 9 ; ճ ։

օրը ծովուն մէջտեղը պիտի իյնան ։
28 Քու նաւավարներուդ աղաղակին
ձայնէն՝ ընարաւթաններըը պիտի
29 սարսին ։ Եւ ՚ամէն թի քաշող
նաւաստիները, ամէն ծովու նաւա-
վարները՝ իրենց նաւերէն պիտի իջ-
նեն, ու ցամաքը պիտի կայնին.
30 Եւ իրենց ձայնը քու վրայովդ լսել
պիտի տան, ու դառնապէս պիտի
աղաղակեն, և ՚իրենց գլուխնե-
րուն վրայ հող պիտի դնեն, ու
31 Հմխերի մէջ պիտի թաւալին. Ու
՚քեզի համար՝ մազերնին պիտի
փետեն, և քուրձ պիտի հագնին.
ու քեզի համար՝ սրտի ցաւով ու
32 դառն ողբով պիտի լան ։ Եւ իրենց
սուգին մէջը ՚քեզի համար ողբալու-
Յաչ պիտի վերցընեն, ու քու
վրադ ողբան ըսելով. Ո՞ւնչ քաղաք
կար Տիւրոսի նման, որ ծովուն
33 մէջը բնակչնչ եղաւ ։ ՚Քանի որ
քու վաճառներդ ծովէն կ'ելլէր,
շատ ազգեր կը կշտացընէիր, շատ
ապրանքներովդ ու առուտուրնե-
րովդ երկրի թագաւորները կը
34 հարստացընէիր ։ ՚Քու բերքերուն խո-
րութեանը մէջ ծովերէն կոտրուած
առնդ՝ ՚քու վաճառականու-
թիւնդ, ու բոլոր բազմութիւնդ
35 քու մէջդ ինկան ։ Կղզիներուն
բոլոր բնակիչները քու վրայովդ
ապշեցան. ու անոնց թագաւոր-
ները խիստ զարհուրեցան. երեսնէ
36 երևսները դէղնեցան ։ Ազգերուն
մէջ վաճառականները ՚քու վրադ
սուլեցին. ՚դուն սոսկումի պատճառ
եղար, և յաւիտեան չընչացար ։

ԳԼ · ԻԸ

1 Աստուծոյ դատաստանը Տիւրոսի իշխանին վը-
րայ, անոր ամբարիշտ Սպարտութեանը համար։
11 Մարգարէն կ'ողբայ՝ անոր մեծ փառաւո-
րութեանը վրայ՝ որ մեղքով ապականեր էր ։
20 Սիդոնին դատաստանը ։ 24 Իսրայէլին
գերեզարձութիւնը ։

1 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
2 սելով. Որդի մարդոյ՝ Տիւրոսի
իշխանին ըսէ՝ Թէ՝ Տէր ԵՀովան
այսպէս կ'ըսէ. Որովհետև քու
սիրտդ հպարտացաւ. ու ՚ըսիր
Թէ՝ Ես աստուած մըն եմ. ես
՚Ծովուն մէջտեղը Աստուծոյ ա-
թոռը կը նստիմ. ՚սակայն դուն
մարդ ես, ու չէ՛ Թէ Աստուած.
Թէև քու սիրտդ Աստուծոյ սրտին
3 տեղը դրիր. Ահա ՚դուն Դանիէլէն
իմաստուն ես. բնաւ մէկ գաղտնիք
4 մը քեզմէ չպահուեցաւ. Քու ի-
մաստութեամբդ ու հանճարովդ
քեզի հարստութիւն ստացար, և
գանձերուդ մէջը ոսկի ու արծաթ
5 Ժողվեցիր ։ ՚Շատ իմաստու-
թեամբդ ՚՚ վաճառականու-
թեամբդ քու հարստութիւնդ
շատցուցիր. և քու հարստու-
թեանդ պատճառովը սիրտդ հպար-
տացաւ ։
6 Անոր համար Տէր ԵՀովան այսպէս
կ'ըսէ. Որովհետև դուն քու սիրտդ
7 Աստուծոյ սրտին տեղը դրիր, Ա-
նոր համար ահա ես քու վրադ օ-
տարներ՝ ՀաղցածՀաղցած բռնաւորները
պիտի բերեմ. և անոնք քու իմաս-
տութեանդ գեղեցկութեանը վրայ
սուրերնին պիտի քաշեն, ու քու
վայելչութիւնդ պիտի ապականեն.
8 Քեզ գուբը պիտի իջեցընեն. ու
ծովուն մէջտեղը վիրաւորներուն
9 մահուամբը պիտի մեռնիս ։ Միթէ
քեզ սպանողներուն առջեը ՚պիտի
կրնաս րսել Թէ, Ես Աստուած
եմ. դուն՝ քեզ մեռցընողներուն
ձեռացը մէջ մարդ պիտի ըլլաս, ու
10 չէ՛ Թէ Աստուած ։ Օտարաց ձեռ-
քովը շանթվածներուն մահուամ-
բը պիտի մեռնիս. քանզի ես խօ-
սեցայ՝ կ'ըսէ Տէր ԵՀովան ։
11 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
12 ըսելով. Որդի մարդոյ՝ ՚Տիւրոսի
թագաւորին վրայով ողբ ըրէ, ու
անոր ըսէ՝ Տէր ԵՀովան այսպէս
կ'ըսէ. ՚Դուն որ կատարելու-
թեան կնիքն ես, լմաստու-
թեամբ լեցուած, ու գեղեցկու-
13 թեան մէջ կատարեալ ես, Դուն
Աստուծոյ դրախտին ՚Եդէմին մէջն
էիր. քու ծածկոցդ ամէն պա-
տուականքարերն էին. սարդիոն,
տպազիոն ու անդամանդ, ոս-
կեքար, եղնդնաքար և յասպիս,
շափիւղայ, կարկեհան և զմրուխտ,
ու ոսկի. քու Թմբուկներդ
ու սրինգներդ՝ գործը քու
ստեղծուած օրդ քեզի պատրաս-
14 տուեցաւ ։ Դուն ՚տարածուած ՚՚
ԾածկողԾածկող քերովբէ մըն էիր. ու ես
քեզ դրի. և դուն ԾԱստուծոյ
սուրբ լեռանը վրայ էիր. դուն
հրեղէն քարերուն մէջ տեղուանքը
15 կը շրջէիր ։ Դուն քու ճամբա-
ներուդ մէջը կատարեալ էիր, քու
ստեղծուած օրդ մինչև ՚՚ երբ՝
որ քու վրադ անօրէնութիւն գըտ-
16 նուեցաւ ։ Քու առուտուրիդ շա-
տութեանը համար քու մէջդ զբա-
կանքով լեցուցին. ու մեղք գոր-
ծեցիր. ես ալ քեզ Աստուծոյ
լեռնէն իբրև պիղծ վար նետեցի, և
քեզ՝ ով ԾածկողԾածկող քերովբէ, հրե-
17 ղէն քարերուն մէջէն բնաջինջ
ըրի ։ Քու գեղեցկութեանդ հա-
մար հպարտացաւ. քու
վայելչութեանդ պատճառաւը քու
իմաստութիւնդ աւրեցիր. ես ՚՚
քեզ գետինը նետեցի. քեզ թա-
գաւորներուն առջեը դրի տես-

Ղ Գ Լ · Իշ · 15 , 18 ։
՚՚ Ցայս · ԺԸ · 17 , ՃՃ ։
՚՚ Ցօր · Բ · 12 ։ Ցայս · Ժը · 19 ։
Վ Եզ՛ · Գ · 1 , 3 · Երեմ. գ · 26 ։
՚՚ Երեմ. Ժգ · 6 , իե · 5 ։ Մրք · ա · 16 ։
Բ Գլ · իգ · 17 ։ Հմր 2 ։
Ֆ Ցայս · Ժը · 18 ։
՚՚ Ցայս · Ժը · 19 ։
Ե Գլ · իգ · 19 ։
Ի Հմր 27 ։
Ո Գլ · իգ · 15 · 16 ։
Ֆ Երեմ · Ժը · 16 ։
՚՚ Գլ · իշ · 21 ։
Ձ՚՚ Հմր 9 ։
Բ Գլ · իե · 3 · 4 ։
Ք Եզ՛ · լ · 3 ։
Ծ Ձաք · Թ · 2 ։
Ի Սաղ · կբ · 10 ։ Ձաք · Թ · 3 ։
Ն · Ք · ՁԲ · 588
Ղ Գլ · Լ · 11 ։ Ա · 12 ։ Լբ · 12 ։
Ե Գլ · Լ · Ա · 18 ։ Լբ · 19 · 21 , 25 , 27 ։
Ի Հմր 2 ։
Է Գլ · Լ · 18 ։ Լբ · 19 · 21 , 25 , 27 ։
Բ Գլ · իե · 2 ։
Ք Գլ · իե · 3 · Հմր 3 ։
Ի Գլ · Լ · Տ · 9 ։
Լ Գլ · իգ · 13 ։
՚՚ Կ՚՚ · օ · ծուած
Ի Տե՛ս Եզ · իե · 20 ։ Հմր 16 ։
Ծ Գլ · Ի · 40 ։
Ձ Հմր 14 ։
Հ Հմր 2 , 5 ։

ՆՀԳ 588

18 րան ըլլալու համար ։ Քու խարդախ վաճառականութեամբդ ըզ-
շատ անօրէնութիւններդ քու
սրբութիւններդ պղծեցիր . ես ալ
քու մէջդ կրակ հանեցի . անիկայ
քեզ կերաւ . ու ամէն քեզ տես-
նողներուն աչքին առջևը՝ քեզ
19 գետնի վրայ մոխիր ըրի ։ Ազգե-
րուն մէջ ամէն քեզ ճանչցողները
քու վրայովդ ապշեցան . Ի դուն
ոռնկումի դարձար եղար , ու յա-
ւիտեան ոչնչացար ։

Ի ԳԼ · իգ · 21 ։ իէ · 36 ։

20 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
21 ըսելով . Որդի մարդոյ՝ երեսդ
Սիդոնին դարձուր , ու անոր
վրայով մարգարէութիւն ըրէ ,
22 Ու ըսէ . Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ . Ահա ես քեզի դէմ եմ՝
ով Սիդոն , և քու մէջդ պիտի փա-
ռաւորուիմ . ու երբոր անոր մէջը
դատաստաններ ընեմ , ու անոր
մէջը ոուբը սեպուիմ , պիտի
23 գիտնան թէ ես եմ Տէրը ։ Վասն
զի անոր մէջը՝ ժանտախտ , ու
անոր փողոցներուն մէջը՝ արիւն
պիտի իրկեմ . և շուրջանակի ա-
նոր վրայ եղող սրովը՝ անոր մէջը
վիրաւորներ պիտի իյնան . ու
պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։
24 Եւ Իսրայէլի տանը մէկմէկ ալ
խայթող տատասկ ու ցաւեցնող
փուշ պիտի չըլլայ՝ իրենց բոլոր-
տիքը եղող զիրենք ամէն նախա-
տողներէն . ու պիտի գիտնան թէ
ես եմ Տէր Եհովան ։
25 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ .
Երբոր Իսրայէլի տունը ժողվեմ
ան ժողովուրդներէն՝ որոնց մէջը
որ ցրուած են . ան ատենը անոնց
մէջը՝ ազգաց աչքերուն առջևը
Ս ուրբ պիտի սեպուիմ . ու ա-
նոնք պիտի բնակին իրենց երկրին
մէջ , որն որ ես իմ ծառա-
26 յիս տուի ։ Եւ անոր մէջը ևա-
պահովութեամբ պիտի բնակին ,
ու տուներ պիտի շինեն , և ա-
գիներ պիտի տնկեն . ու երբոր
դատաստաններ ի գործ դնեմ ա-
մէն անոնց բոլորտիքը եղողներուն
վրայ՝ որ զանոնք նախատեցին ,
անոնք ապահովութեամբ պիտի
բնակին , ու պիտի գիտնան թէ ես
եմ իրենց Տէր Աստուածը ։

ԳԼ · ԻԹ

1 Փարաւոնին վրայ հանելու դատաստանը՝ Իսրայէլին դէմ ըրած անհաւատարմութեանը համար ։ 8 Եգիպտոսի ամայութիւնը . 13 քառասուն տարիէն ետքը անոր վերականգնումը ։ 17 Եգիպտոս իրրև վարձք կը տրուի Նաբուգոդոնոսորին ։ 21 Իսրայէլին խոստացուած երջանիկ վիճակը ։

589

1 Տասներորդ տարին՝ տասներորդ ամսուն երկուտասաներորդ օրը՝

ՆՀԳ 589

Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
2 լով . Որդի մարդոյ՝ երեսդ Ե-
գիպտոսի փարաւոն թագաւորին
դարձուր , ու բրո-
ւր Եգիպտոսին դէմ մարգարէու-
3 թիւն ըրէ , խօսէ , ու ըսէ . Տէր
Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա
ես քեզի դէմ եմ՝ ով Եգիպտոսի
փարաւոն թագաւոր՝ քու գետե-
րուդ մէջը պառկող մեծ վիշապ ,
որ կ'ըսես թէ՝ Իմ գետս իմն է ,
ու ես ինծի համար շինեցի ։
4 Բայց ես քու կզակներուդ կար-
թեր պիտի անցընեմ , և քու
գետերուդ ձուկերը՝ քու թեփե-
րուդ պիտի փակցընեմ , ու քեզ
գետերուդ մէջէն պիտի հանեմ .
ու գետերուդ բոլոր ձուկերը քու
5 թեփերուդ պիտի փակչին ։ Եւ
քեզ ու գետերուդ բոլոր ձուկերը
անապատը պիտի նետեմ . դուն
դաշտի երեսին վրայ պիտի իյնաս ,
չես ժողովուիս , և չամփո-
փուիս . քեզ երկրի գազաններուն ,
ու երկինքի թռչուններուն կերա-
6 կուր տուի ։ Ու Եգիպտոսի բոլոր
բնակիչները պիտի գիտնան թէ ես
եմ Տէրը . վասն զի Իսրայէլի տա-
7 նը եղեգէ ցուպ եղան ։ Երբոր
անոնք քեզ ձեռքով բռնեցին ,
դուն կոտրեցար , ու անոնց բոլոր
բազուկը ճեղքեցիր . ու երբոր
քեզի կռթնեցան , փշրուեցար , ու
անոնց բոլոր մէջքը դողացուցիր ։
8 Ասոր համար Տէր Եհովան այս-
պէս կ'ըսէ . Ահա ես քու վրադ
սուր պիտի բերեմ , և մարդը ու
անասունը քեզմէ պիտի կոտրեմ ։
9 Ու Եգիպտոսի երկիրը՝ աւերակ ու
անապատ պիտի ըլլայ . ու պիտի
գիտնան թէ ես եմ Տէրը . որով-
հետև անիկայ ըսաւ . Գետը իմն
10 է , ու ես շինեցի ։ Անոր
համար ահա ես քեզի և քու գետե-
րուդ դէմ եմ . ու Եգիպտոսի եր-
կիրը՝ Միգդոլէն մինչև Սուհէնը ,
ու մինչև Եթէովպացւոց սահմանը՝
աւերակ ու անշէն անապատ պիտի
11 ընեմ . Ոչնիկ մարդու ոտք պիտի
չանցնի , ոչ ալ անասունի ոտք
անկէ պիտի անցնի . և քառասուն
12 տարի անբնակ պիտի մնայ ։ Ու
Եգիպտոսի երկիրը՝ ամայացած եր-
կիրներու մէջ ամայի պիտի ընեմ ,
և անոր քաղաքները աւերուած քա-
ղաքներու մէջ՝ քառասուն տարի ա-
մայի պիտի մնան , ու Եգիպտացի-
ները ազգերուն մէջ պիտի ցրուեմ ,
ու զանոնք երկիրներուն մէջ ցիր-
ուցան պիտի ընեմ ։
13 Սակայն Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ . Հքառասուն տարիէն ետքը
Եգիպտացիները պիտի ժողվեմ ան

ՆՀԳ 588
– ԳԼ · իը · 21 ։
ԲԵս · ԺԲ · 1 ։ Երեմ · իե · 19 ։ Խզ · 2 · 25 ։
Երեմ · խգ · 30 ։ Գլ · իը · 22 ։ Հմր 10 ։
Սադ · հդ · 13 · 14 ։ Եսա · իե · 1 ։ ծա · 9 ։ Գլ · լբ · 2 ։
Տես գլ · իը · 2 ։
Ես · լե · 29 ։ Գլ · լը · 4 ։
Երեմ · ը · 2 ։ Ժգ · 4 ։ իե · 33 ։
Երեմ · է · 33 ։ Ղ · 20 ։
Ժր · 21 ։ Ես · ԼՂ · 6 ։
Երեմ · լե · 5 · 7 · 11 ։ Գլ · Ժե · 17 ։
Եբր · ուսը
Գլ · Ժգ · 17 ։ ԼԲ · 11 · 12 · 13 ։
Եզ · Ժգ · 2 ։ Երեմ · խգ · 1 ։ Գլ · լ · 6 ։
Գլ · լ · 12 ։
Գլ · լբ · 13 ։
Գլ · լ · 7 26 ։
ՀԵս · ԺԲ · 23 ։ Երեմ · խգ · 26 ։

ազգերէն՝ որոնց մէջը որ ցրուեցան .
14 Ու Եդիպտացւոց դէրումբիւնը ետ
պիտի դարձընեմ՝ , և զանոնք պա-
թումբեսի երկիրը իրենց հայրենի
երկիրը պիտի դարձընեմ . ու հոն
նշան թագաւորութիւն մը պիտի
15 ըլլան ։ Թագաւորութիւններուն
խիստ ցածը պիտի ըլլայ , ու ինքզին
ալ ազգերուն վրայ պիտի չդարձ-
րանայ . վասն զի զանոնք պիտի
պզտիկցընեմ , որ ազգերուն վրայ
16 չիշխեն ։ Եւ անոնք ինքզին ալ
Իսրայէլի տանը ապաւինութիւն
պիտի չըլլան , որ իրենց ետևէն եր-
թալնուն անօրէնութիւնը յիշուի .
ու պիտի գիտնան թէ ես եմ Տէր
Եհովան ։

572

17 Ու եղաւ որ՝ քանուէօթնևրորդ
տարին առաջին ամսուն առաջին
օրը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
18 լով . Որդի մարդոյ՝ Բաբիլոնին
Նաբուգոդոնոսոր թագաւորը՝ իր
զօրքը մեծ ծառայութեան դործա-
ծել Տիւրոսի դէմ . ամեն գլուխ
կնատացաւ , ու ամեն ուսին մորթը
ելաւ . սակայն իրեն ու իր զօրքին
մէկ հատուցում մը չեղաւ Տիւրո-
սէն՝ ան ծառայութեանը համար
19 որ անոր դէմ ըրաւ ։ Ասոր համար
Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . ահա
ես Եդիպտոսի երկիրը Բաբիլոնի
Նաբուգոդոնոսոր թագաւորին պի-
տի տամ . ու անոր բազմութիւնը
պիտի առնէ , և անոր կողոպուտը
պիտի կողոպտէ , ու անոր աւարը
պիտի յափշտակէ . և սա՝ անոր
զօրքին վարձք մը պիտի ըլլայ ։
20 Հոն ըրած գործերին համար՝ Ե-
դիպտոսի երկիրը անոր տուի . վասն
զի ինծի համար աշխատեցան կ'ը-
21 սէ Տէր Եհովան ։ Ան օրը Իսրա-
յէլի տանը եղջիւր պիտի բուսցը-
նեմ . ու անոնց մէջը բերանի բացութիւն պիտի տամ . ու պիտի
գիտնան թէ ես եմ Տէրը ։

ԳԼ . Լ

1 Եդիպտոսին ու անոր օդնականներուն կործանումը ։ 20 Բաբիլոնին բազուկը պիտի զօրանայ՝ որ Եդիպտոսին բազուկը կոտրէ ։

572

1 Գարնանալ Տէրոջը խօսքը ինծի ե-
2 ղաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝ մարգարէութիւն բրէ , ու ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ողբացէք , ո՜ ըէ՛ . Աւա՜ղ ցաւալի
3 օր . Վասն զի Տ օրը մօտ է . Տէրոջը օրը մօտ է . անիկայ ամպոտ օր է . ազգերուն ժամանակը պիտի ըլլայ ։
4 Ու Եդիպտոսի վրայ սուր պիտի գայ , ու Եթէովպիայի մէջ սաստիկ խռովութիւն պիտի ըլլայ , երբոր Եդիպտոսին մէջը վիրաւորներ իյնան . և անոր բազմութիւնը պիտի առնեն . ու անոր հիմերը պիտի
5 կործանին ։ Եթէովպացիք , Փութ-դացիք , և Ղուդացիք , ու Ղբոլըր խառնիճաղանճ ժողովուրդը , և Քուբացիք , և ուխտի երկրին որդիքը անոնց հետ մկտեղ սրով
6 պիտի իյնան ։ Տէրը այսպէս կ'ըսէ . Եդիպտոսի օդնականներն ալ պիտի իյնան . ու անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի խոնարհի . Իմաղդոլէն մինչև Սուհէնը սրով պիտի իյնան անոր մէջ՝ կ'ը-
7 սէ Տէր Եհովան . Ու ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի ըլլան . և անոր քաղաքները՝ կործանուած քաղաքներու մէջ պիտի ըլ-
8 լան ։ Ու երբոր Եդիպտոսի մէջ կրակ ձդեմ , ու անոր բոլոր օդնականները կոտրին , պիտի գիտնան
9 թէ ես եմ Տէրը ։ Ան օրը Իմ առջևէս նաւերով դեսպաններ պիտի ելլեն , որ ապահովութեան մէջ եղող Եթէովպացիները վախցընեն . և անոնց վրայ սաստիկ խռովութիւն պիտի ըլլայ Եդիպտոսի օրուանը պէս . վասն զի ահա կու
10 գայ ։ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ե-դիպտոսի բազմութիւնն ալ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքովը բնաջինջ պիտի ը-
11 նեմ ։ Անիկայ ու անոր հետ իր ժողովուրդը՝ ազգերուն բռնաւորները՝ երկիրը աւերելու պիտի բերուին . անոնք իրենց սուրերը Եդիպտոսի վրայ պիտի քաշեն , ու երկիրը սպաննուածներով պիտի
12 լեցընեն ։ Եւ ևես գետերը պիտի ցամքեցընեմ , Ես ու երկիրը չարեռուն ձեռքը պիտի մատնեմ . ու երկիրը , և բոլոր անոր մէջը եղածը օտարներուն ձեռքովը պիտի կոր-
13 սընցընեմ . ևս Տէրս խօսեցայ ։ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Թուռբերն ալ բնաջինջ պիտի ը-նեմ , ու Մեմֆիսին չաստուածները պիտի ոչնչացընեմ . Նու մէկմէն ալ Եդիպտոսի երկրէն իշխան պիտի չըլլայ . Նու Եդիպտոսի երկրին մէ-
14 ջը վախ պիտի դնեմ ։ Ինչ պաթումբեսը աւերակ պիտի ընեմ , ու Ցոյանիսը կրակի պիտի տամ , ու Նովի մէջ դատաստանները կը-
15 դործ պիտի դնեմ ։ Ու Եդիպտոսին ամրութիւնը Եղող Սինի վրայ իմ սրտմտութիւնս պիտի թափեմ , ու Նովին բազմութիւնը պիտի կոտ-
16 րեմ ։ Ու Եդիպտոսի մէջ կրակ պիտի ձդեմ . Սինը սաստիկ պիտի տադնապի , ու Նովի պատուիրութիւնները պիտի ըլլայ . և Մեմֆիսին ցորեկով պէտ պէտե-
17 թիները , Արևգ քաղաքին ,

· ք · ղԲ · 589

Ե · ք · ղԲ · 572

Ե Երեմ . ծ . 15 ։
Ե Գր . իէ . 10 ։
Ղ Երեմ . իէ . 20 , 24 ։
* Կ՚ըսէ . Նոյնիսկ իսածիք ։
Ե Գղ . իԹ . 10 ։

Ղ Գղ . իԹ . 12 ։

Ե Գղ . իԹ . 19 ։

Ե Եզ . ժԹ . 5 , 6 ։
Ե Եզ . ժԹ . 4 ։

Ե Եզ . ժԹ . 1 ։ Երեմ . խգ . 12 ։ Զաք . ժգ . 2 ։
Ի Զաք . ժ . 11 ։
Հ Եզ . ժի . 16 ։
Ե Գղ . իԹ . 14 ։
Ղ Ամո . Հը . 12 , 43 ։
Ճ Դան . գ . 8 , 9 , 10 ։
Ժ Երեմ . խղ . 25 ։
Ժ Հմր 8 ։

ու Բուբաստին կտրիճները սրով պիտի իյնան . ու անոնց քաղաքները
18 դներուեան պիտի երթան ։ Նաև Տափասի մէջ ցորկը խաւար պիտի ըլլայ , երբոր հոն Եգիպտոսի լուծերը կոտրեմ . ու հոն անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի աչնանայ . ամպիկայ ամպ պիտի ծածկէ . և անոր աղջիկները գերու-
19 թեան պիտի երթան ։ Այսպէս Եգիպտոսի մէջ դատաստաններ պիտի գործ պիտի դնեմ . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

588
20 Ու եղաւ որ մետասաներորդ տարին՝ առաջին ամսուն եօթնին՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
21 սելով . Որդի մարդոյ՝ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին բազուկը կոտրեցի . և ահա անիկայ պիտի չփաթթուի , ոչ ալ անոր վրայ դեղեր ու կապեր դնելով՝ զանիկայ պիտի պատեն , որ զօրանայ սուր
22 բռնելու ։ Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ահա ես Եգիպտոսի Փարաւոն թագաւորին դէմ եմ , ու անոր բազուկները պիտի կոտրեմ , թէ զօրաւորը , և թէ կոտրածը . և սուրը անոր ձեռքէն
23 քշել վար ձգել պիտի տամ ։ Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ , և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ ։
24 Ու Բաբիլոնի թագաւորին բազուկները պիտի զօրացընեմ , և իմ սուրս անոր ձեռքը պիտի տամ . իսկ Փարաւոնի բազուկները պիտի կոտրեմ . ու անիկայ անոր առջեւը՝ ի մահ վիրաւորուածին հե-
25 ծուելեամբը պիտի հեծէ ։ Այսպէս Բաբիլոնի թագաւորին բազուկները պիտի զօրացընեմ . ու Փարաւոնին բազուկները պիտի իյնան . և ու երբոր իմ սուրս Բաբիլոնի թագաւորին ձեռքը տամ . և ան ալ զանիկայ Եգիպտոսի երկրին վրայ երկընցընէ , պիտի
26 գիտնան Թէ ես եմ Տէրը , ՚Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ , և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ . ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը ։

ԳԼ · ԼԱ

1 Մարգարէն իր խօսքը Փարաւոնին ուղղելով՝ 8 կը յայտարարէ անոր Ասորեստանի փառքը . 10 և անոր կործանումը իր հպարտութեանը համար . 18 և դայն կործանումը կը սպառնայ Եգիպտոսին ալ ։

1 Ու եղաւ որ մետասաներորդ տարին երրորդ ամսուն առաջին օրը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
2 լով . Որդի մարդոյ՝ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին , ու անոր
3 բազմութեանը ըսէ . Դուն քու մեծութեամբդ որո՞ւ կը նմանիս ։ Ահա Ասորեստանցին Լիբանանի մէջ եղող եղևինի մը պէս էր . անոր ոստերը գեղեցիկ , ու տերևախիտ շառաւիղները հովանաւոր էին , ու հասակը բարձր էր . և անոր գլուխը խիտ ճիւղերու մէջ էր ։
4 Ջուրերը զանիկայ մեծցուցին , անդունդները զանիկայ բարձրացուցին . իրենց գետերը անոր տընկուած տեղին բոլորտիքը կը պտըտէին , ու իրենց վտակները դաշտին
5 բոլոր ծառերուն կը խրկէին ։ Ես պատճառով անոր հասակը դաշտին բոլոր ծառերէն բարձր եղաւ . ու տարածուելով՝ ջուրերուն շատութենէն անոր ոստերը շատցան .
6 և շառաւիղները երկընցան ։ Անոր ոստերուն վրայ՝ երկինքի բոլոր թռչունները բոյն կը շինէին , ու շառաւիղներուն տակը դաշտի բոլոր գազանները կը ծնանէին . և անոր հովանիին տակը բոլոր մեծ ազ-
7 գերը կը բնակէին ։ Ու իր մեծութեամբը , ու իր ոստերուն երկայնութեամբը գեղեցիկ էր . վասն զի անոր արմատը շատ ջուրերու քով
8 էր ։ Աստուածոյ դրախտին եղևիննները զանիկայ չէին ծածկեր . մայր ծառերը անոր ոստերուն չէին նմաներ , ու սօսիները անոր շառաւիղներուն պէս չէին . Աստուածոյ դրախտին մէջ բնաւ մէկ ծառ մը գեղեցկութեան կողմանէ անոր նը-
9 ման չէր ։ Զանիկայ՝ իր ոստերուն շատութիւնովը գեղեցիկ շիներ էի . ու Աստուածոյ դրախտին մէջ եղող Եդեմի բոլոր ծառերը անոր կը նախանձէին ։
10 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Որովհետև հասակով բարձրացաւ , ու գլուխը խիտ ճիւղերուն մէջը վերցուց , և իր սիրտը իր բարձրութեամբը հպարտացաւ ,
11 Ես ալ զանիկայ ազգերուն զօրաւորին ձեռքը տուի , որ անշուշտ անոր հատուցում պիտի ընէ . զանիկայ իր չարութեանը համար քշեցի ,
12 Ու օտարները՝ ազգերուն բռնաւորները զանիկայ կտրեցին , և զանիկայ թողուցին . Անոր ոստերը լեռներու վրայ՝ ու ամէն հովտներու մէջ ինկան , և անոր շառաւիղները՝ երկրին ամէն ձորերուն մէջ կոտրեցան . ու երկրիս ամէն ժողովուրդները՝ անոր հովանիէն ի-
13 ջան , ու զանիկայ թողուցին ։ Անոր ինկած ոտքերուն վրայ՝ երկինքի բոլոր թռչունները պիտի բնակին . և անոր շառաւիղներուն վրայ՝ դաշտի բոլոր գազանները պիտի ըլլան ,
14 Որպէս զի ջրասուն ծառերը բնաւ

Ն · Ք · ՂԲ · 572
՚ Երեմ . ք · 16 ։
՚ Ծնն . ք · 16 ։
՚ Ել . ԺԴ · 28 ։
՚ Ել . ԺԵ · 4 ։
՚ Ել . ԺԵ · 10 ։
՚ Ել . ԺԵ · 19 ։
՚ Ել . ԺԵ · 21 ։
՚ Ել . ԺԵ · 23 ։
՚ Ել . ԺԶ · 1 ։
՚ Ել . ԺԶ · 4 ։
՚ Ել . ԺԶ · 6 ։
՚ Ել . ԺԶ · 10 ։
՚ Ել . ԺԶ · 12 ։
՚ Ել . ԺԶ · 15 ։
՚ Ել . ԺԶ · 16 ։
՚ Ել . ԺԶ · 17 ։
՚ Ել . ԺԶ · 18 ։
՚ Ել . ԺԶ · 20 ։
՚ Ել . ԺԶ · 21 ։
՚ Ել . ԺԶ · 22 ։
՚ Ել . ԺԶ · 23 ։
՚ Ել . ԺԶ · 24 ։
՚ Ել . ԺԶ ·

Ն·Ք·ՁԲ· 588

* կամ՝ ոտ-
գուած ա-
նոնց կաղ-
նիները ի-
րենց հպար-
տութեանը
մէջ հաս-
տատ չկե-
նան·

Ի ԳԼ·Լ·18·
Ա Սադ·ՃՔ·
7·

իրենց հասակին վրայ չկպարտանան,
և իրենց գլուխը խիտ ճիւղերուն
մէջը չվերցընեն. ու բոլոր ջրով *ո-
ոգուածները անոնց չպարտուե-
թեանը համար անոնց չյարին". 5
վասն զի ամէնը Էգեանի տակերը
Լմահուան ձեռքը տրուած են գու-
ըը իջնող մարդոց որդիներուն մէջ·
15 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ· Գե-
րեզմանը իջած օրը՝ սուգ բռնել
տուի· անոր համար անդունդը
ծածկեցի, ու անոր գետերը արգի-
լեցի· և շատ ջուրեր արգիլուեցան·
ու անոր համար Լիբանանին սուգ
հագուցի· և անոր համար դաշտի
16 բոլոր ծառերը թառամեցան· երբ-
որ Էզանիկայ գուբը իջնողներուն
հետ գերեզմանը իջեցուցի, Ասնոր
կործանմանը ձայնէն աղգերը դո-
ղացուցի· ու Եդեմին բոլոր ծա-
ռերը՝ Լիբանանին ընտիր ու գեղե-
ցիկ Ասուբըը՝ ամէն ջրով ոռոգուած-
ները՝ հգետնին տակերը մխիթա-
17 րուեցան· Ընոնք ալ անոր հետ՝
սրով սպաննուածներուն քովը՝ գե-
րեզմանը իջան ու նաև անոր բա-
զուկը Էղաջէրը· որ Ասնոր հովա-
Նիին տակը՝ ազգերուն մէջ կը նըս-
տէին·
18 Ւդուն ասանկ փառքով ու մե-
ծութեամբ որո՞ւ կը նմանիս Եդեմի
ծառերուն մէջը· դուն Եդեմի ծա-
ռերուն հետ գետնին տակը պիտի
նետուիս, ու Ասրով սպաննուած-
ներուն հետ անթլփատներուն մէջը
պիտի պառկիս· Փարաւոնը, ու
անոր բոլոր բազմութիւնը այսպէս
պիտի ըլլայ, կ'ըսէ Տէր Եհովան·

Ն·Ք·ՁԲ·
Իրր 587

Ե ԳԼ·Լ·
13·

Ը ԳԼ·Լ·
12·

Ր Ես·ԺԴ·
10· Յովէլ·
բ·31· գ·
15· Ամվ·
ը·9· Յոյա-
գ·12· 13·
Մաա·Իդ·
29·

Ե ԳԼ·ԻԷ·
16·

Ա Երեմ·Խղ·
26· ԳԼ·Լ·
4·

Ի ԳԼ·ԻԲ·7·

Ծ ԳԼ·ԻԹ·
19·

Ձ ԳԼ·ԻԹ·
11·

Ի ԳԼ·ԻԹ·
13·

Ե ԵԲ·ԻԲ
ԼուԹ ԵԼԷ·

Հ Ել·Ե·5·
ԺԴ·4·18·
Սաղ·Թ·
16· ԳԼ·Ջ·
7·

Ն ՀՔ·2· Տես
բ Թագ·ա·
17· բ Մն·
ի·25· ԳԼ·
ԻԴ·17·

587

ԳԼ·ԼԲ

1 Մարգարէն կ'ողբայ Եգիպտոսի սոսկալի կոր-
ծանմանը վրայ· 11 կը նախատնայնէ Թէ Բարի-
լոնի սուրը պիտի կորսընցընէ զանիկայ· 17 որ
բոլոր անիլփատ ազգերուն մէջտեղը դժոխքը
պիտի իջնէ·

587

1 Եւ եղաւ որ երկոտասաներորդ
տարին՝ երկոտասաներորդ ամիսը՝
ամսուն առաջին օրը՝ Տէրոջը խօսքը
2 ինծի եղաւ՝ ըսելով· Որդի՛ մար-
դոյ՝ Եգիպտոսի Փարաւոն Թագա-
ւորին վրայ Ահոդը ըրէ, ու անոր
ըսէ· Ի՞նդուն աղգաց մէջ առոյգ
առիւծի կը նմանիս, էև ծովերուս
մէջ վիշապի պէս ես· դուն գետե-
րուդ վրայ կը յարձակիս, ու ոտ-
քերովդ ջուրերը կը խառնես, և
3 Տանոնց գետերը կը պղտորես· Տէր
Եհովան այսպէս կ'ըսէ· Ես շատ
աղգերու ժողովուրդով՝ Իմ ցանցս
քու վրադ պիտի տարածեմ· և քեզ
իմ ուռկանովս պիտի հանեն·
4 Ընէ քեզ գետինը պիտի նետեմ, և
քեզ դաշտի երեսին վրայ պիտի
ձգեմ, ու Էքու վրադ երկինքին
բոլոր թռչունները պիտի իջեցընեմ·
ու բոլոր երկրին գազանները քեզմէ
5 պիտի կշտացընեմ· Եւ քու մար-
մինդ ըլեռներուն վրայ պիտի դնեմ,
ու քու դէղերովդ ձորերը պիտի
6 լեցընեմ· Եւ քու լողացած եր-
կիրդ՝ մինչև լեռները՝ քու արիւնովդ
պիտի ոռոգեմ· ու հեղեղատները
7 քեզմէ պիտի լեցուին· Ու երբոր
քեզ մարեմ, Երկինքը պիտի
ծածկեմ, ու անոր աստղերը պիտի
խաւարեցընեմ· արևը ամպով պի-
տի ծածկեմ, ու լուսինը իր լոյսը
8 պիտի չտայ· Քու վրադ երկինքին
բոլոր լուսաւորները պիտի խաւա-
րեցընեմ, և քու երկրիդ վրայ
մթութիւն պիտի բերեմ, կ'ըսէ
9 Տէր Եհովան· Ու երբոր քու կոր-
ծանմանդ լուրը՝ ազգերուն ու քու
չգիտցած երկիրներուդ հասցընեմ,
շատ ժողովուրդներուն սիրտը պի-
10 տի խռովեցընեմ· Եւ Էքու պատ-
ճառուդ շատ ժողովուրդներ պիտի
ապշեցընեմ· ու քու պատճառուդ
անոնց թագաւորները խիստ պիտի
զարհուրին, երբոր իմ սուրս ա-
նոնց երեսին առջևը երերցընեմ·
ու քու կործանմանդ օրը՝ ամէն
մարդ իր հոգիին համար Ամէն
վայրկեան պիտի սարսափի·
11 Ւքանզի Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ· Բաբիլոնի թագաւորին
12 սուրը քու վրադ պիտի գայ· Քու
բազմութիւնդ զօրաւորներուն սուր-
երովը վար պիտի ձգեմ· անոնց
ամէնը Էազգաց բռնաւորներն են·
ու Ընոնք Եգիպտոսի փառքը պի-
տի կողոպտեն· ու անոր բոլոր
13 բազմութիւնը պիտի կորսուի· Եւ
անոր բոլոր անասուները՝ շատ
ջուրերուն քովէն պիտի կորսընցը-
նեմ· ու Ամէ՛մէն ալ մարդու ոտքը
զանոնք պիտի չպղտորէ· անասունի
կճղակներն ալ զանոնք պիտի չը-
14 պղտորեն· Ընտեղը անոնց ջու-
րերը ականակիտ պիտի ընեմ, և
անոնց գետերը եղի պէս պիտի քա-
15 լեցընեմ՝ կ'ըսէ Տէր Եհովան, Երբ-
որ Եգիպտոսի երկիրը աւերակ
դարձընեմ, ու երկիրը Բոլորովին
ամայի մնայ, ու երբոր անոր բոլոր
բնակիչները զարնեմ· Ես պիտի
գիտնան թէ ես եմ Տէրը·
16 Ան Ընոցն է, որ պիտի զրուցեն·
զանիկայ աղգաց աղիներուն պիտի
զրուցեն· Եգիպտոսի վրայ, ու ա-
նոր բոլոր բազմութեանը վրայ զա-
նիկայ պիտի զրուցեն, կ'ըսէ Տէր
Եհովան·
17 Ու եղաւ որ երկոտասաներորդ
տարին՝ ամսուն տասնուհինգին՝
Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով·

Ն·ՔՐ·ՀԲ· 587

18 Որդի՛ մարդոյ՝ Եդիպտոսի բազմու-
թեանը վրայ աղա-
ղակ ... և զանիկայ՝
ու երեսից ազգերուն աղջիկները՝
զոքանչքը իջնողներուն հետ՝ գետնի
19 տակերքը իջեցուր ։ Դուն որմէ՞ գե-
ղեցիկ ես . իջի՛ր , ու անթլփատ-
20 ներուն հետ պառկէ՛ ։ Անոնք սրով
սպանուածներուն մէջը պիտի իյ-
նան . անիկայ սուրի տրուեցաւ .
զանիկայ ու անոր բոլոր բազմու-
21 թիւնը քաշկրտուեցէք ։ Գիբերզ-
մանին մէջէն զօրաւոր կործիճները՝
անոր օգնութիւն ընողներուն հետ՝
անոր պիտի զրուցեն . Անոնց սը-
րով սպանուած անթլփատները
հոն իջած կը պառկին ։

22 Ասսուրը , ու իր բոլոր ժողովքը
հոն է . անոր գերեզմանները իր
բոլորտիքն է . ամէնը սպանուած՝
23 սրով ինկած են . Որուն գերեզ-
մանները գուբին խորունկ տե-
ղուանքը տեղաւորուած են , ու
անոր ժողովքը իր գերեզմանին բո-
լորտիքն է . ամէնը սպանուած՝
սրով ինկած են , անոնք որ կենդ-
դանեաց երկրին մէջ վախ կու տա-
յին ։

24 Եղեմը ... իր բոլոր բազմու-
թիւնը հոն անոր գերեզմանին բո-
լորտիքն է . ամէնը սպանուած՝
սրով ինկած են , ու անթլփատ
կերը անիջան , Անոնք որ
կենդանեաց երկրին մէջ իրենց վա-
խը կու տային . սակայն գուբը
իջնողներուն հետ իրենց ամօթը կը
25 կրեն ։ Սպանուածներուն մէջը
անկողին դրին անոր , ու իր բոլոր
բազմութեանը . անոր գերեզման-
ները իր բոլորտիքն է . ամէնը սրով
սպանուած անթլփատներ են .
Թէպէտև անոնք կենդանեաց երկ-
րին մէջ իրենց վախը կու տային ,
սակայն գուբը իջնողներուն հետ
իրենց ամօթը կը կրեն . անիկայ
սպանուածներուն մէջը դրուած
է ։

26 Մոսոքը ... Թոբէլը , և անոր
բոլոր բազմութիւնը հոն է . անոր
գերեզմանները իր բոլորտիքն է .
ամէնը Նրով սպանուած անթլը-
փատներ են , Թէպէտև անոնք
կենդանեաց երկրին մէջ իրենց վա-
27 խը կու տային ։ Եւ անոնք ան-
թլփատներէն իյնող զօրաւորնե-
րուն հետ պիտի չպառկին , որոնք
իրենց պատերազմական զէնքերովը
գերեզմանը իջան , ու իրենց սու-
րերը իրենց գլուխներուն տակը դը-
րին . սակայն անոնց անօրէնու-
թիւնները իրենց ոսկորներուն վրայ
պիտի ըլլայ , Թէև անոնք կենդա-
նեաց երկրին մէջ զօրաւորներուն
28 ահարկութիւն էին ։ Եւ դուն ան-
թլփատներուն մէջը պիտի կոտ-
րուիս , ու սրով սպանուածնե-
րուն հետ պիտի պառկիս ։

29 Եդովմը՝ անոր թագաւորները ,
ու բոլոր իշխանները հոն են , որոնք
իրենց զօրութեամբը սրով սպան-
ուածներուն հետ դրուած են .
անոնք անթլփատներուն հետ , ու
գուբը իջնողներուն հետ կը պառ-
կին ։

30 Հիւսիսի բոլոր իշխանները և
բոլոր Սիդոնացիք հոն են , որոնք
սպանուածներուն հետ իջան . ա-
նոնք իրենց ահարկութեամբը իրենց
զօրութենէն կ'ամչնան , և անոնք
սրով սպանուածներուն հետ ան-
թլփատ կը պառկին , ու գուբը
իջնողներուն հետ իրենց ամօթը կը
կրեն ։

31 Փարաւոնը զանոնք պիտի տես-
նէ , և իր բոլոր բազմութեանը հա-
մար Պիտի մխիթարուի . Փարա-
ւոնը ու իր բոլոր զօրքը որ սրով
սպանուեցան , կ'ըսէ Տէր Եհովան ։

32 Քանզի կենդանեաց երկրին մէջ
իմ վախս դրի . և անիկայ անթ-
լփատներուն մէջը սրով սպան-
ուածներուն հետ պիտի պառկի ,
այսինքն փարաւոնը ու անոր բոլոր
բազմութիւնը , կ'ըսէ Տէր Եհովան ։

Ն·ՔՐ·ՀԲ· Իբր 587

Ե Գ Լ · Խ Ե · 12 ։ ԼԱ ։

Ե Գ Լ · Լ Ե · 6 ։ 15 ։ ԼԹ · 2 ։ — Գ Լ · Ի Ը · 21 ։

Ե Գ Լ · Լ Ը · 16 ։

Կ — Ր ՝ ԹԷ և կենդանեաց երկրին մէջ անոր վախը դրի · բայց

ԳԼ · ԼԳ

1 Ի՛նչ՞ ես իմ դեսպանս կը խրկեմ, ու Է իմ առջևս ճամբայ պիտի պատրաստէ. և ձեր փնտռած Տէրը՝ այսինքն Ե ուխտին հրեշտակը՝ որուն կը հաւնիք, յանկարծ իր տաճարը պիտի գայ. ահա կու գայ՝
2 կ՚ըսէ զօրաց Տէրը. Ու անոր գալըստեանը օրը՝ Ո՞վ կրնայ դիմանալ, և Ե անոր երևնալուն՝ ատենը՝ ո՞վ կրնայ կայնիլ. քանզի Ղ անիկայ հալեցնողին կրակին պէս, ու Թափիչներուն օճառին պէս պիտի
3 ըլլայ. Ես Ե անիկայ արծաթ հալեցնողի ու մաքրողի պէս պիտի նստի, ու Ղևիի որդիները պիտի մաքրէ, և զանոնք ոսկիի պէս ու արծաթի պէս պիտի զտէ. ու անոնք արդարութեամբ Ը Տէրոջը ընծայ
4 մատուցանողներ պիտի ըլլան. Եւ Յուդային ու Երուսաղէմին Բ ընծան հին օրերուն պէս, ու առջի տարիներուն պէս՝ Տէրոջը ընդու-
5 նելի պիտի ըլլայ։ Ու դատաստանի համար ձեզի պիտի մօտենամ, և կախարդներուն, օ շնացողներուն, ծ ու սուտ երդում ընողներուն, և վարձկանին՝ իր վարձքին վրայով, որքւարիին, ու որբին զրկանք ընողներուն, և պանդուխտին էրոոհէը խոտորեցնողներուն, ու ինծմէ չվախցողներուն դէմ՝ արագ վկայ պիտի ըլլամ,
6 կ՚ըսէ զօրաց Տէրը։ Քանզի ես Ե Տ հովյ եմ, է չեմ փոխուիր. Եանոր համար դուք՝ ով Յակոբի որդիք՝ չսպառեցաք։
7 Է Ձեր հայրերուն օրերէն՝ ի վեր իմ հրամաններէս զատուեցաք, ու չ Եղ չպահեցիք. ծ ինծ ի դարձէք. ու ես ձեզի պիտի դառնամ, կ՚ըսէ զօրաց Տէրը. Եսակայն դուք կ՚ը-
8 ոնէք. ինչո՞վ դառնանք։ Մի թէ մարդ Ը Աստուած կը կողոպտի՞, որ դուք

Ե։ Ք։ ՁԲ Իբր 397

Ֆ Ես։ Խգ։ 24։ Գաղ։ Գ։ 13, 14, 15։

Ա Մատ։ Ժա։ 10։ Մարկ։ Ա։ 2։ Ղուկ։ Ա։ 76։ Ե։ 27։

Բ Ես Խ։ 3։

Գ Ես Կգ։ 9։

Դ Գաղ։ Գ։ 1։

Ե Յայտ։ Չ։ 17։

Զ Տէս Ես։ Գ։ 4։ Մատ։ Գ։ 10, 11, 12։

Է Ես։ Ա։ 25։ Զաք Ժգ։ 9։

Ը Պետ։ Բ։ 5։

Թ Գաղ։ Ա։ 11։

Ժ Զաք։ Ե։ 4։ Ցակ։ Ե։ 4, 12։

Ի Թագ։ Իգ։ 19։ Հռով։ Ժա։ 29։ Ցակ։ Ա։ 17։

Լ Ոգ։ Գ։ 22։

Խ Գոր։ Ե։ 51։

Ծ Զաք։ Ա։ 3։

Կ Գաղ։ Ա։ 6։

ղիս կը կողոպտեք . բայց դուք կ'ըսէք . ֆեղմ ի՞նչ կողոպտելինք . հատասնորդները , ու ընծա-
9 ներ : Դուք անէծքով անիծուած էք . քանզի դուք՝ բոլոր ազգ միս
10 կողոպտելիք : Ինոլոր տասա-
նորդները ղանձատունը տարէք , որ իմ տանս մէջ պաշար ըլլայ . և ասով զիս փորձեցէք , կ'ըսէ զօրաց Տէրը , թէ արդեօք ձեզի երկինքին պատուհանները չեմ բանար , ու մինչև օրհնութիւն թափեր ,
11 այնպէս որ՝ տեղը բաւական դէպ
չըլլայ : Եւ ձեզի համար ոուտողը պիտի յանդիմանեմ . ու անիկայ ձեր երկրին պտուղը պիտի չապա-
կանէ . և ձեր այգիին մէջ որթը անպտուղ պիտի չըլլայ , կ'ըսէ զո-
12 րաց Տէրը : Եւ ամէն ազգերը ձեզի երանի պիտի տան . քանզի դուք՝ ցանկալի երկիր պիտի ըլլաք ,
13 կ'ըսէ զօրաց Տէրը : Ձեր խօս-
քերը ինձի դէմ խիստ եղան , կ'ըսէ Տէրը . բայց դուք կ'ըսէք . ֆեղի դէմ ի՞նչ խօսեցանք :
14 Դուք ըսիք . Աստուծոյ ծառա-
յութիւն ընելը պարապ բան է . և անոր պահպանութիւնը պահելին , ու զօրաց Տէրոջը առջևը սուգով
15 քալելէն ի՞նչ շահեցանք . Եւ հի-
մա Ձմնք հպարտներուն՝ երանի կ'ըսենք . ամբարշտութիւն ընողները անգամ բարգելէն կ'ըլլան . Աստուած ալ կը փորձեն , ու կ'ազատին :
16 Ան ատենը Տէրոջմէ վախցողնե-
րը մարդու հետ խօսեցան . և Տէրը մտիկ ըրաւ , ու լսեց . և իր առջևը յիշատակի գիրք գրուեցաւ Տէրոջմէ վախցողներուն համար , ու անոր անունը մտածողներուն համար :
17 Եւ Ինոնք իմ պիտի ըլլան , կ'ըսէ զօրաց Տէրը , ան օրը որ իմ սեփական դանձս ժողվեմ . ու մանոնց պիտի խնայեմ , ինչպէս որ մարդ մը կը խնայէ իր որդւոյն՝ որ իրեն ծառայու-
18 թիւն կ'ընէ : Եւ պիտի դառնաք , ու արդարին ու ամբարշտին , Աստուծոյ ծառայութիւն ընողին , և անոր ծառայութիւնը չընողին տարբերութիւնը պիտի տեսնէք :

Գլ. Դ

1 Մարգարէն կը յայտնէ Աստուծոյ դատաս-
տանը՝ որ պիտի գայ չարերուն վրայ , 2 ու արդնութիւնը՝ բարիներուն վրայ . 4 կը յոր-
դորէ ժողովուրդը որ օրէնքին ուշադրութիւն ընէն , 5 ու Եղիային գալուն՝ և անոր պատաս-
խին վրայով կը խօսի :

1 Քանզի ահա՝ փուռի պէս վա-
ռած օրը կու գայ . ու բոլոր Ի հպարտները , և բոլոր ամբարշտութիւն ընողները Ի յարդի պիտի ըլլան . ու գալու օրը զանոնք պիտի այրէ՝ կ'ըսէ զօրաց Տէրը , այնպէս որ՝ Ոտնոց արմատ կամ ոստ պիտի չթողու :
2 Բայց ձեզի՝ Ի իմ անունէս վախ-
ցողներուդ՝ Արդարութեան արեգակը պիտի ծագի , և անոր թևերուն վրայ բժշկութիւն պիտի ըլլայ . ու դուք գոմի պարարտ որթերուն պէս դուրս պիտի ելլէք ,
3 ու պիտի ցաթկէք : Ի Եւ ամբար-
իշտները պիտի կոխէք . վասն զի իմ գործ տեսնելու օրս՝ անոնք ձեր ոտից թաթերուն տակը մոխիր պիտի ըլլան , կ'ըսէ զօրաց Տէրը :
4 Ցիշեցէք իմ ծառային Մով-
սէսին օրէնքը , այսինքն Իան կանոնները ու դատաստանները , որ անոր պատուիրեցի Ի Քորեբի մէջ
5 բոլոր Իսրայէլին համար : Ահա՝ Ի Եղիա մարգարէն ձեզի պիտի խրկեմ , Լսելու Տէրոջը մեծ ու ա-
6 հեղ օրը չեկած . Ու անիկայ՝ հայ-
րերուն սիրտը՝ որդւոցը , ու որդւոցը սիրտը՝ հայրերուն պիտի դարձնէ . որ չըլլայ թէ ես գամ , ու երկիրը Ի անէծքով Ի զարնեմ :

ՎԱԽՃԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՍՈՒՐՔ ԴՐՈՑ ՄԵՋ ՑԻՂՈՒՆՔ ՉԱՓԵՐՈՒՆ , ԿՇԻՌՆԵՐՈՒՆ ԵՒ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՑՈՒՆԿԸ ։

---

1 · ԵՐԿԱՑՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ ։

	Էնտազէ և 100-րդ
Ուղղակ , չորս մատնաչափ , . . .	· 14
Թիղ , 3 ուղղակ , ...	· 43
Կանգուն , 2 թիղ , ...	· 86
Գրկաչափ , 4 կանգուն , ...	3 · 46
Եղկելելի եղէգը , 6 կանգուն , . .	5 · 18
Ասպարէզ , 100 գրկաչափ , . . .	345 · 64
Շաբաթ օրուան ճամբայ , 5 ասպաւրէզ , ...	1,728 · 20
Մղոն , 10 ասպարէզ , ...	3,456 · 40

---

2 · ՀԵՂԱՆԻՒԹԻՒՆ ՉԱՓԵՐ ։

	Օնչ Տրմ
Հաշակ , ...	100
Հիմէն , 12 ճաշակ , ...	3
Մար , 6 հիմէն , ...	18
Քոռ , 10 մար , ...	180

---

3 · ԱՐՄՏԵԱՑ ՉԱՓԵՐ ։

	Օնչ Տրմ
Կապիճ , ...	1
Օմէր , (տասանորդ ,) արդուին 10-րդ մասը , ...	1 320
Գրիւ , 6 կապիճ , ...	6
Արդուս , 3 գրիւ , ...	18
Քոռ , կամ խօմէր , 10 արդուս ,	· 180

4 · ԿՇԻՌՆԵՐ ։

	Օնչ Տրմ և 100-րդ
Կերատ , ...	· 24
Սիկղ , 20 կերատ , ...	4 · 86
Մնաս , 100 սիկղ , ...	1 86 · 10
Տաղանդ , 30 մնաս , ...	36 183

---

5 · ԵՐԲԱՑԵՑԻՈՑ ԱՐԾԱԹ ՈՒ ՈՍԿԻ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՈՒ ԿՇԻՌՆԵՐՈՒՆ ԱՐԺԵՔԸ ։

Արծաթի	Ղրշ Փրմ
Կերատ , ...	26
Սիկղ , ...	13
Մնաս , ...	1,300
Տաղանդ , ...	39,000
Ոսկի	
Սիկղ , ...	208
Տաղանդ , ...	624,000

---

6 · ՀՈՒՎԱՄԱՑՆԵՑԻՈՑ ԴՐԱՄՆԵՐԸ ։

	Ղրշ Փրմ և 100-րդ
Լումայ , ...	1 · 67
Նարաբակիտ , 2 լումայ , . . .	3 · 75
Դանկ , 4 նարաբակիտ , . . .	15
Դահեկան , 10 դանկ , ...	3 30
Երկդրամեան , 2 դահեկան , . .	7 20
Սատեր , 4 դահեկան , ...	15
Մնաս , 100 դահեկան , . . .	375

ԸՆՋԱՆՆԿԱՆ ԸՐՋԱՆԸՓՐՈՒԹԻՆ

ԸՄՈՒՆՈՒԹԻՆՔ

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ՆՈՐ ԵՕՐՔ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1917

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Քրիստոսի ազգաբանութիւնը Աբրահամէն մինչև Յովսէփ · 18 Կոյս Մարիամը՝ որ Յովսեփին նշանուած էր, Սուրբ Հոգիէն կը յղանայ · 19 Հրեշտակը Յովսէփին խօսելէ կ՚ուղղէ, և կը տեսնէ Քրիստոսի անունները ։

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիս-
տոսի Դաւիթի որդւոյն , Աբ-
րահամի որդւոյն ։
2 Աբրահամ ծնաւ Իսահակը . Իսահակ ծնաւ Յակոբը . Յակոբ
ծնաւ Յուդան՝ ու անոր եղբայրնե-
3 րը . Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան՝ Թամարէն . Փարէս ծը-
նաւ Եսրոնը . Եսրոն ծնաւ Արա-
4 մը . Արամ ծնաւ Ամինադաբը . Ամինադաբ ծնաւ Նաասոնը . Նա-
5 ասոն ծնաւ Սաղմոնը . Սաղմոն ծը-
նաւ Բոոսը՝ Ռախաբէն . Բոոս ծնաւ Ովբէդը՝ Հռութէն . Ովբէդ
ծնաւ Յեսսէն . Յեսսէ ծնաւ Դա-
6 վիթ թագաւորը . Դաւիթ թա-
գաւորը ծնաւ Սողոմոնը՝ Ուրիայի
7 կնկէն . Սողոմոն ծնաւ Ռոբովա-
մը . Ռոբովամ ծնաւ Աբիան . Ա-
8 բիա ծնաւ Ասան . Ասա ծնաւ Յովսափատը . Յովսափատ ծնաւ
Յովրամը . Յովրամ ծնաւ Ոզիան .
9 Ոզիա ծնաւ Յովաթամը . Յովա-
թամ ծնաւ Աքազը . Աքազ ծնաւ
10 Եզեկիան . Եզեկիա ծնաւ Մանա-
սէն . Մանասէ ծնաւ Ամոնը . Ամոն
11 ծնաւ Յովսիան . Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբայրները՝
Բաբելոնեան գերութեանը ատեն-
12 ները . Բաբելոն գերութեան ե-
թալնէն ետև՝ Յեքոնիա ծնաւ Սա-
ղաթիէլը . Սաղաթիէլ ծնաւ Զօ-
13 բաբաբէլը . Զօրաբաբէլ ծնաւ Աբիուդը . Աբիուդ ծնաւ Եղիա-
կիմը . Եղիակիմ ծնաւ Ազովրը .
14 Ազովր ծնաւ Սադովկը . Սադովկ ծնաւ Ա.քինը . Ա.քին ծնաւ Եղիու-
15 դը . Եղիուդ ծնաւ Եղիազարը . Եղիազար ծնաւ Մատթանը .
16 Մատթան ծնաւ Յակոբը . Յա-
կոբ ծնաւ Յովսէփը՝ Մարիամին
Էրկիը , որմէ ծնաւ Յիսուս , որ
17 կոչեցաւ Քրիստոս ։ Արդ բոլոր ազգերը Աբրահամէն մինչև Դա-
ւիթ՝ տասնուչորս ազգ . և Դաւի-
թէն մինչև Բաբելոնեան գերու-
թիւնը՝ տասնուչորս ազգ . ու Բա-
բելոնեան գերութենէն մինչև Քր-
իստոս տասնուչորս ազգ ։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդը ասս կերպով էր . անոր մայրը Մարիամ՝ Յովսեփին նշանուած , դեռ իրարու քով չեկած՝ Սուրբ
19 Հոգիէն յղացած դտնուեցաւ ։ Եւ Յովսէփ անոր էրիկը արդար մարդ ըլլալով ու չուզելով որ զանիկայ
ցխայտառակ ընէ , մտածեց որ ծած-
20 կաբար արձակէ զանիկայ ։ Եւ քանի որ անիկայ ասս բաները կը մտածէր , ահա՝ Տէրոջը հրեշտակը երազի մէջ երևցաւ անոր՝ ու ըսաւ . Յովսէփ՝ Դաւիթի որդին , մի՛ վախնար քեզի առնել քու Մարիամ կնիկդ , Հինչու որ անոր ներսի
21 դին ծնածը Սուրբ Հոգիէն է ։ Եւ որդի մը պիտի ծնանի , ու անոր անունը *Յիսուս դնես . Ժքանիզի ա-
նիկայ իր ժողովուրդը իրենց մեղ-
22 քերէն պիտի փրկէ . Եւ ասս ամ-
նը եղաւ . որ կատարուի Տէրոջմէն ըսուածը՝ մարգարէին ձեռքովը , որ
23 կ՚ըսէ ։ Ահա կոյսը պիտի յղանայ , ու որդի պիտի ծնանի և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն , որ կը թարգմանուի՝ Աստուած մեզի
24 հետ ։ Եւ Յովսէփ քունէն զար-
թննալով՝ ինչպէս որ Տէրոջը հրեշտակը իրեն հրամայեց , ա.նիկա
25 ընդունեցաւ իր կնիկը քովն առաւ . Եւ չէր գիտեր զանիկայ , մինչև իր *անդրանիկ որդին ծնաւ , ու անոր անունը Յիսուս դրաւ ։

ԳԼ . Բ

1 Արևելքէն մոգերը Քրիստոսին կ՚երթան՝ աստղի մը առաջնորդութեամբը ։ 11 և երկրպագութիւն կ՚ընեն անոր , ու իրենց ընծաները կը մատուցանեն ։ 14 Յովսէփ առնելով Յիսուսը ու անոր մայրը՝ Եգիպտոս կը փախչի ։ 16 Հերովդէս մանր տղաքը սպաննել կու տայ . 20 անոր մահը . 23 Յիսուս Եգիպտոսէն կը տարուի Գալիլեայի Նազարէթ քաղաքը ։

1 Ու երբոր Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլէհեմին մէջ՝ Հե-
րովդէս թագաւորին օրերը , ահա

Սովորական եղած Քրիստի թուականէն հինգ տարի առաջ ։

յղու . ա . 27 ։ ղղու . ա . 35 ։

ճբ Օր . իդ . 1 ։

յղու . ա . 35 ։

յղու . ա . 31 ։
* ՚ի Քրկիչ ։

Գոր . գ . 12 ։ ե . 31 ։ ժգ . 23 , 38 ։

ես . ե . 14

* Եւ . ժգ . 2 ։ ղղ . բ . 7 . 21 ։

Հորս տարի առաջ՝ յիսնամեայ թուականէն ։

ղղու . բ 4 . 6 . 7 ։

ա ղու . գ . 23 ։ Բ Սաղ . ճէբ . 11 ։ Ես . ժա . 1 ։ Երեմ . իգ . 5 ։ Գն . իբ . 42 ։ Ցոն . ե . 42 ։ Գոր . բ . 30 ։ ժգ . 23 ։ Հռով . ա . 3 ։
գ Ծն . ժբ . 3 ։ իբ . 18 ։ Գաղ . գ . 16 ։
դ Ծն . իա . 2 , 3 ։
ե Ծն . իե . 26 ։
զ Ծն . իթ . 35 ։
է Ծն . լը . 27 ։ ա Հռութ . գ 18 , ամ . ա Մն . բ . 5 . 9 , ամ ։
ը ա Թագ . ժզ . 1 ։ ժէ . 12 ։
թ բ Թագ . ժբ . 24 ։
ժ ա Մն . գ . 10 . ամ ։
ի գ Թագ . ի . 21 ։ ա Մն . գ . 13 ։
ի Տե ա Մն . գ . 15 , 16 ։ ֆ դ Թագ . իդ . 14 . 15 . 16 ։ իե . 11 ։ բ Մն . իզ . 10 , 20 ։ Երեմ . իե . 20 ։ լթ . 9 ։ ծբ . 11 . 15 . 23 . 29 . 30 ։ Դան . ա . 2 ։
ի ա Մն . գ . 17 . 19 ։
ձ Եզր . գ . 2 ։ ե . 2 ։ Նէեմ . ժբ . 1 , Ընգ . ա . 1 ։

Հարս տարի առաջ յիշեալ Թուա- կանէն ։

Բ Ծն. ժ. 30։ իե. 6։ գ Թագ. գ. 30։

է Ղևտ. բ. 11։ Բ Թագ. իդ. 17։ Եսթ. ե. 3։

Ի բ Մն. ւզ. 14։

Ղբ Մն. լէ. 13։

Ի Մաղ. բ. 7։

ԸՄիք. ե. 2։ Ցօն. է. 42։

Ի Ցայտ. բ. 27։

Էարևելքէն մոգեր եկան Երուսաղէմ, 2 Ու ըսին. «Ո՞ր տեղ է ան որ ընդ- րեանեռուն Թագաւոր ծնաւ. ինչու որ մենք արևելքի մէջ Աստղը տեսանք, ու եկանք անոր երկրպա- 3 գութիւն ընելու։ Ու երբոր Հե- րովդէս Թագաւորը լսեց, խռովե- ցաւ, և բոլոր Երուսաղէմ իրեն 4 հետ. Եւ ժողվելով բոլոր Ք քա- հանայապետները ու ժողովուրդին Ղպիրները, Հարցուց անոնց Թէ Քրիստոսը ո՞ր պիտի ծնանի։ 5 Անոնք ալ իրեն ըսին. Հրէաստանի Բեթլէհեմին մէջ. ինչու որ առանկ գրուած է մարգարէին ձեռքովը. 6 Եւ դուն Բեթլէհեմ՝ Ցուդայի երկիրը, Ցուդայի իշխաններուն մէջ բնաւ պզտիկ մը չես. ինչու որ քեզմէ իշխան մը պիտի ելլէ Ինծի, Որ իմ Իսրայէլ ժողովուրդս պիտ- 7 տի հովուէ։ Ան ատենը Հերովդէս ծածկաբար մոգերը կանչեց, ու ա- ղէկ մը ստուգեց անոնցմէ աստղին 8 երևցած ատենը. Եւ զանոնք Բեթ- լէհեմ խրկելով ըսաւ. Գացէք ատոյգը իմացէք ան մանուկին վրա- յով, ու երբոր գտնէք, ինծի ի- մացուցէք, որ ես ալ գամ՝ անոր 9 երկրպագութիւն ընեմ։ Ու երբոր անոնք Թագաւորէն ՚ի բաներ լսե- ցին, գացին. և ահա ան աստղը՝ որ արևելքի մէջ տեսեր էին, անոնց առջևէն գնաց, մինչև որ եկաւ ու կե- ցաւ մանուկին եղած տեղին վրայ։ 10 Երբոր տեսան աստղը, շատ մեծ 11 ուրախութիւնով ուրախացան։ Եւ տունը մտնելով, տեսան մանուկը իր մօրը Մարիամին հետ, ու ինկան երկրպագութիւն ըրին անոր, և ի- րենց գանձերը բանալով՝ ընծաներ տուին անոր, ոսկի ու կնդրուկ և 12 զմուռս։ Ու Հրաման առնելով Երազի մէջ որ Հորէն չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը։

Հարս տարի առաջ յիշեալ Թուա- կանէն ։

Ի Երեմ. լա. 15։

Իրէք տարի առաջ յիշեալ Թուա- կանէն ։

13 Ու երբոր անկէ գացին անոնք, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երևցաւ Ցովսեփին ու ըսաւ. Ե- լէ՛ առ մանուկը ու անոր մայրը. ու Եգիպտոս փախիր, և հո՛ն կեցիր մինչև որ ես քեզի ըսեմ. քանզի Հերովդէս պիտի փնտռէատ մա- 14 նուկը՝ կորսընցընելու համար։ Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը գիշերով առաւ, և գնաց Եգիպ- տոս. ու մինչև Հերովդեսին մահը 15 հո՛ն էր Որ կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռքովը, որ կ՚ըսէ. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»։

Ս Ովս. ժա. 1։

16 Ան ատենը երբոր տեսաւ Հե- րովդէս Թէ խաբուեցաւ մոգերէն, սաստիկ սրդողեցաւ, ու խրկեց Ջարդեց Բեթլէհեմի և անոր ամէն սահմաններուն մէջ գտնուած բոլոր մանր տղաքը՝ երկու տարուընէն վար, ան ժամանակին Համեմատ՝ 17 որ մոգերէն ստուգեց։ Ան ատենը կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով ըսուածը, որ կ՚ըսէ. 18 Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ, ողբ լաց ու մեծ կոծ. Ռաքէլ կու լար իր տղոցը Համար ու չէր ու- զեր մխիթարուիլ. ինչու որ չըս- կային։

19 Ու երբոր Հերովդէս մեռաւ ա- Հա Տէրոջը հրեշտակը Եգիպտոս ե- 20 րազի մէջ Ցովսեփին երևցաւ, Ու ըսաւ. Ելէ՛ առ մանուկը ու անոր մայրը, և գնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան անոնք՝ որ մանուկին 21 կեանքը կը փնտռէին։ Ան ալ ե- լաւ մանուկը ու անոր մայրը ա- ռաւ, և եկաւ Իսրայէլի երկիրը։ 22 Իսկ երբոր լսեց Թէ Արքեղայոս Թագաւորեց Հերովդեսին տեղը վախցաւ հոն երթալու. ու երազի մէջ հրա- ման առնելով՝ Գալիլեայի կողմե- 23 րը գնաց. Եւ եկաւ Նազարէթ ըսուած քաղաքը բնակեցաւ որ մարգարէներուն խօսքը կատարուի՝ Թէ Նազովրեցի պիտի կոչուի։

Ի Գէն. գ. 13։ Ղ՚Ա. բ. 39։ Ի Ցօհ. ա. 45։

ԳԼ. Գ

1 Ցովհաննէսին քարոզութիւնը. պաչտօնը. վարքը և մկրտութիւնը։ 7 Ցովհաննէս կը յանդիմանէ փարիսեցիները. 13 և կը մկրտէ Ջհրիստոս Ցորդանանու մէջ։

Մաթ. ա. 4։ 15։ Ղուկ. գ. 2, 3։ Ցօհ. ա. 28։

Բ Ցես. ժգ. 10։

Է Դան. բ. 44։ Գաղ. գ. 17։ ժ. 7։ Սովորական թուական. Ցամի Տեառն 26

Գ Ես. խ. 3։ Մատ. ա. 3։ Ղուկ. գ. 4։ Ցօհ. ա. 23։

Ի Ղուկ. ա. 76։

Ձմեռ. ա. 6։ Ի դ Թագ. ա. 8։ Զաք. 13։ ժգ. 4։

Ջ Ղևտ. ժա. 22։

Ի ա Թագ. ժգ. 25, 26։

Ց Մատ. ա. 5։ Ղուկ. գ. 7։ Գործ. ժԹ. 4։

Ի Գործ. ժԹ. 18։

Ա Գաղ. ժբ. 84։ իգ. 33։ Ղուկ. գ. 7։ Ը. 9։

Ի Հովսէ. 9։ Ա Թես. ա. 10։

Ցամք Տեառն 26

Ե Ցովհ. ա. 33, 39 : Գործ. ժգ. 26 : Հռով. գ. 1, 11, 16 :
Ի Գաղ. ե. 19 : Ղուկ. ժգ. 7, 9 : Ցովհ. ժե. 6 :
Հ Մատթ. ա. 5 : Ղուկ. գ. 16 : Ցովհ. ա. 15, 26, 33 : Գործ. ա. 5 : Ժամ. 16 : Ժթ. 4 :
Ձ Եսայ. գ. 4 : Խոհ. 3 : Մաղ. գ. 2 : Գործ. բ. 3, 4 : ա Կորնթ. ժբ. 13 :
Ղ Տիմոթ. գ. 3 :
Յ Ցովհ. Տ. 27
Ճ Մաղ. գ. 1 : Գաղ. ժգ. 30 :
Մ Մատթ. ա. 9 : Ղուկ. գ. 21 :
Յ Գաղ. բ. 22 : Նմար. ա. 10 :
Շ Եսայ. ժա. 2 : Խոհ. 1 : Ղուկ. գ. 22 : Ցովհ. ա. 32, 33 : Ցովհ. ժբ. 28 :
Ո Մաղ. բ. 7 : Եսայ. Խոհ. 1 : Գաղ. ժբ. 15 : ժե. 5 : Մատթ. ա. 11 : Ղուկ. ե. 35 : Եփես. ա. 6 : Կող. ա. 13 : Բ Պետ. ա. 17 :

Ո Մատթ. ա. 12 : Ղուկ. գ. 1 :
Բ Տես գ Թագ. ժբ. 12 : Եզեկ. գ. 14 : Ը. 3 : ժա. 1, 24 : Խ. 2 : Խգ. 5 : Գործ. Ը. 39 :

Էբ Օր. ը. 3 :

Պ Ղեկտ. ժա. 1, 18 կես : Խոհ. 2 : Ծբ. 1 : Գաղ. իե. 53 : Ցայտ. ժա. 2

թէ՝ ԺՄենք հեղ հայր՝ Աբրահամը ունինք . քանզի կ՚ըսեմ ձեզի , որ Աստուած կարող է ասքարերէս Աբրահամին որդիներ հա-
10 նելու : Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քովը կը դրուի . ուստի՝ ամէն ծառ որ բարի պտուղ չբերեր , կը կտրուի ու կրակը կը
11 ձգուի : Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար , բայց իմ ետևէս եկողը ինծմէ զօրաւոր է , ու ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ . Ան ինչպէս ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու
12 կրակով . Ղորուն հեծանոցը իր ձեռքն է , և իր կալը պիտի մաքրէ՝ ու իր ցորենը համբարը պիտի ժողվէ , և չյարդը չմարելու կրակով պիտի այրէ :
13 Յ Ան ատենը Ցիսուս յԳալիլեայէն Ցորդանան եկաւ Ցովհաննէսին ,
14 որ անկէ մկրտուի : Եւ Ցովհաննես կ՚արգիլէր անիկայ՝ ու կ՚ըսէր . Ինծի պէտք է որ քեզմէ մկրտուիմ ,
15 ու դուն ինծի՞ կու գաս : Ցիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր . Թող տուր հիմա . ինչու որ այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք . ետքը
16 թող տուաւ անոր : Ու երբոր Ցիսուս մկրտուեցաւ , շուտ մը ջուրէն դուրս ելաւ , և ահա՝ երկինքը անոր բացուեցաւ , ու տեսաւ Աստուծոյ Հոգին որ սաղաւնիի պէս կ՚իջնէր , ու կու գար իր վրայ :
17 Ե ահա՝ երկինքէն ձայն մը եկաւ՝ որ կ՚ըսէր . Ասիկա՛յ է իմ սիրելի Որդիս , որուն հաւներ եմ :

ԳԼՈՒԽ Դ

1 Քրիստոս իմ կրպահէ ու կը փորձուի : 11 Հրեշտակները անոր սպասաւորութիւն կ՚ընեն : 13 Քրիստոս Կապառնայումի մէջ կը բնակի . 17 կը սկսի քարոզել . 18 կը կանչէ Պետրոսը ու Անդրեասը . 21 Յակոբոսը և Ցովհաննէսը , 23 ու կը բժշկէ բոլոր հիւանդները :

1 Այն ատենը Ցիսուս անապատը տարուեցաւ Սատանայէն՝ որ
2 Սատանային փորձուի . Եւ քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը անօթեցաւ :
3 Եւ փորձողը անոր մօտենալով ըսաւ . Թէ որ դուն Աստուծոյ Որդին ես , ըսէ՝ որ աս քարերը հացի
4 ըլլան : Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Գրուած է Թէ , Ոչ միայն հացով կ՚ապրի մարդ , հապա ան ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ՚ելլի :
5 Ան ատենը Սատանան առաւ տարաւ զանիկայ Ցսուրբ քաղաքը , և կայնեցուց զանիկայ տաճարին
6 աշտարակին վրայ , Ու ըսաւ անոր . Թէ որ դուն Աստուծոյ Որդին ես , քեզ ասիկա վա՛ր ձգէ . ինչու որ գրուած է Թէ՝ Ի իր հրեշտակներուն պիտի ապսպրէ քեզի համար . ու ձեռքերնուն վրայ պիտի վերցընեն քեզ , որ չըլլայ Թէ ոտդ քարի
7 զարնես : Ցիսուս ըսաւ անոր . Դարձեալ գրուած է Թէ՝ Ս Տէր Աստուածդ չփորձես :
8 Սատանան նորէն առաւ հանեց զանիկայ խիստ բարձր լեռան մը վրայ , և ցուցուց անոր աշխարհին բոլոր Թագաւորութիւնները ու ա-
9 նոնց փառքը . Ու ըսաւ անոր . Ասոնք ամէնը քեզի կու տամ , Թէ որ իյնաս՝ ինծի երկրպագութիւն
10 ընես : Ան ատենը Ցիսուս ըսաւ անոր . Ետին դնա՝ Սատանայ . ինչու որ գրուած է Թէ՝ Ս Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես , ու միայն զանիկայ պաշտես :
11 Ան ատենը Սատանան զանիկայ Թողուց . և ահա՝ Հրեշտակները եկան ու իրեն սպասաւորութիւն կ՚ընէին :
12 Եւ Երբոր լսեց Ցիսուս Թէ Ցովհաննէս մատնուեցաւ , ելաւ գնաց
13 Գալիլէա . Ու ձգելով Նազարէթը , եկաւ բնակեցաւ Կափառնայում՝ ծովեզերեայ Զաբուղոնի ու Նեփթաղիմի սահմանը
14 ներուն մէջ . Որ կատարուի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խոս-
15 քը . Ե Զաբուղոնի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը , ծովու ճամբով Ցորդանանու անդին կողմը , Հեթանոսաց Գալիլեան .
16 Խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ , և լոյս ծագեցաւ անոնց՝ որ մահուան երկրին ու շուքին մէջ կը
17 նստէին : Անկէ ետև Ցիսուս սկսաւ քարոզել ու ըսել . Ապաշխարեցէ՛ք , ինչու որ երկնից թագաւորութիւնը մօտ է :
18 Երբոր Ցիսուս Գալիլեացւոց ծովուն քովերը կը պտրտէր , տեսաւ երկու եղբայրներ՝ Պետրոս կոչուած Սիմոնը , և անոր եղբայրը Անդրէասը՝ ծովը ուռկան ձգած ,
19 ինչու որ ձկնորս էին . Եւ ըսաւ անոնց . Իմ ետևէս եկէք , ու ձեզ
20 մարդոց որսորդ ընեմ : Անոնք ալ շուտ մը ուռկանները թողուցին , ու անոր ետևէն գացին :
21 Ետ անկէ յառաջ երթալով տեսաւ ուրիշ երկու եղբայրներ , Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Ցովհաննէսը նաւին մէջ իրենց հօրը Զեբեդէոսին հետ , երբ իրենց ուռկանները կը կարկըտէին . ու
22 կանչեց զանոնք : Անոնք ալ շուտ մը նաւը ու հայրերնին թողուցին , ու անոր ետևէն գացին :
23 Եւ Ցիսուս բոլոր Գալիլեան

Ցամք Տեառն 27

Ի Սաղ. ղա : 11, 12 :

Ղբ Օր. Ը. 16 :

Ղբ Օր. Ը. 13 : Ժ. 20 : Ցես. խդ. 14 : Ա Թագ. ե. 3 :
Ը Երե. Ա. 14 :

Ցա. Տ. 30
Ի Մար. ա. 14 : Ղուկ. գ. 20 : գ. 14 : 31 : Ցովհ. գ. 43 :
Ցա. Տ. 31

Ժ Եսայ. Թ. 1, 2 :

Ի Եսայ. Խոհ. 7 : Ղուկ. բ. 32 :

Լ Մար. ա. 14, 15 :
Ի Գաղ. գ. 9 : Ժ. 7 :

Ե Մար. ա. 16, 17, 18 : Ղուկ. ե. 2 :
Ի Ցովհ. ա. 42 :

Հ Ղուկ. ե. 10, 11 :
Ն Մար. Ժ. 28 : Ղուկ. Ժբ. 28 :
Շ Մար. ա. 19 : Ղուկ. ե. 10 :

Ցամք Տեառն
31

ՀԳԼ · Թ · 35։
Մար · ա · 21 · 39 ։
Ղու · գ · 15 · 45 ։
ՀԳԼ · իդ · 14 ։ Մար · ա · 14 ։
ՀՄար · ա · 34 ։
ՀՄար · գ · 7 ։
ՀՄար · գ · 13 · 20 ։
Բ Ղու · ձ · 20 ։ Տե՛ս Սաղ · ծա · 17 ։ Առակ · ժգ · 19 ։ ԽԹ · 23 ։ Ես · ծէ · 15 ։ կզ · 2 ։ Է Ես · կա · 2 · 3 ։ Ղու · գ · 21 ։ Ցոհ · ժգ · 20 ։ բ Կոր · ա · 7 ։ Ցայտ · իա · 4 ։
ՀՍաղ · լէ · 11 ։ ՀՏե՛ս Հռով. գ · 18 ։
Ընս · ԽԵ · 1 · կե · 18 ։
Ի Սաղ · խա · 1 ։ ԳԼ · գ · 14 ։ Մար · ժա · 25 ։ բ Տիմ · ա · 16 ։ Եբր · զ · 10 ։ Ճակ · բ · 13։
ԸՍաղ · ժե · 2 ։ իդ · 4 ։ Եբր · ժբ · 14 ։
Ի՛ա Կոր · ժգ · 12 ։ ա Ցո՛ · գ · 2 · 3 ։ ԺԵ Կոր · գ · 17 ։ բ Տիմ. բ · 12 ։ ա Պետ · գ · 14 ։
ԻՂու · զ · 22։ ա Պետ · գ · 14 ։
ՆՂու · գ · 25 ։ Գոր · ե · 41 ։ Հռով. ե · 3։ Ճակ · ա · 2։ ապետ · գ · 13 ։
ԺՆեեմ. Թ · 26 ։ բ ՄՆ · ԼԶ · 16 ։ ԳԼ · իդ · 34 · 37 ։
Գոր · է · 52 ։ ա Թես. բ · 15 ։
ՀՄար · Թ · 49 ։ Ղու · ժգ · 34 · 35։

պտրտելով , ՚ի՛ր օրվեցքներ անոնց ժողովարաններուն մէջ , և ՚արքայութեան աւետարանը կը քարոզէր , ու ՚ժողովուրդին մէջի ամէն հիւանդութիւնները ու ամէն
24 հիւդ ցաւերը կը բժշկէր ։ Եւ ա նոր համբաւը բոլոր Սիւրիան տարածուեցաւ , և բերին անոր՝ բոլոր հիւանդները որ կերպ կերպ ցաւերով ու տանջանքներով կը նեղուէին , և դիւահարները ու լուսնոտները և անդամալոյծները . ու բը-
25 ժշկեց զանոնք ։ Եւ ՚նշան ժողովուրդներ անոր ետևէն կ՚երթային՝ Գալիլեայէն ու Դեկապօլիսէն , և Երուսաղէմէն՝ , ու Հրէաստանէն , և Յորդանանու անդիի կողմէն ։

ԳԼ · Ե

1 Քրիստոս կը սկսի իր քարոզութիւնը լեռանը վրայ , 3 և կ՚ինդրէ թէ որոնք են երանելի-ները . 13 իր աշակերտները կ՚անուանէ երկրի աղ , 14 աշխարհի լոյս , լեռան վրայ կեցած քաղաք . 17 կը յայտնէ թէ ինքը եկաւ օրէնքը կատարելու . 21 կը բացատրէ թէ ի՛նչ է սպանութիւն ընելը , 27 շնութիւն ընելը , 33 երդում ընելը . 38 կը յորդորէ չարին հակառակ չկենալ , 44 մինչև անգամ թշնամիները սիրել , 48 և կատարեալ ըլլալու չափը ընել ։

1 Ան տեսնելով ժողովուրդները՝ լեռը ելաւ . ու երբոր նստաւ հոն , իր աշակերտները քովը գա-
2 ցին . Եւ իր բերանը բանալով կը սորվեցընէր անոնց , ու կ՚ըսէր .
3 Երանի՛ հոգւով աղքատներուն , ինչու որ երկնից թագաւորութիւնը
4 անոնցն է ։ Երանի՛ սգաւորներուն , ինչու որ անոնք պիտի մխի-
5 թարուին ։ Երանի՛ հեզերուն , ինչու որ անոնք պիտի ժառանգեն
6 երկիրը ։ Երանի՛ անոնց՝ որ անօթի ու ծարաւ են արդարութեան , ինչու որ անոնք պիտի կշտանան ։
7 Երանի՛ ողորմածներուն , ինչու որ անոնք ողորմութիւն պիտի գտնեն ։
8 Երանի՛ անոնց՝ որ սրտով մաքուր են , ինչու որ անոնք պիտի տեսնեն
9 զԱստուած ։ Երանի՛ խաղաղութիւն ընողներուն , ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին ։
10 Երանի՛ անոնց՝ որ հալածուած են արդարութեան համար , ինչու որ երկնից թագաւորութիւնը անոնցն
11 է ։ Երանի՛ է ձեզի՝ երբոր կը նախատեն ձեզ ու կը հալածեն , և սուտ տեղը ամէն կերպ չարչ խօսքեր կը խօսին վրաներնիդ՝ ինծի համար .
12 Ցնծացէ՛ք և ուրա՛խ եղէք , ինչու որ ձեր վարձքը շատ է երկինքը . քանզի ասանկ կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները ։
13 Դուք էք երկրի աղը . Հապա թէ որ աղը իր համը կորսընցնէ , ինքը ինչո՞վ պիտի աղուի . անկէ ետև բանի մը չէ , միայն թէ

դուրս ձգուելու և մարդոց ոտքին
14 տակը կոխուելու ։ Դուք էք աշխարհի լոյսը . քաղաք մը՝ որ լեռան վրայ կեցած է , չկրնար պահուիլ ։
15 Ու Ճրադը չեն վառեր և դներ գրուանի տակ , հապա աշտանակի վրայ , և լոյս կու տայ բոլոր տանը
16 մէջ եղողներուն ։ Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջեւն , նոր տեսնեն ձեր բարի գործքերը , ու ՚փառաւորեն ձեր Հայրը՝ որ երկինքն է ։
17 ՚Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները ապրելու . չեկայ ապրելու , հապա կատարելու ։
18 Քանզի ճշմարտապէս կ՚ըսեմ ձեզի . ՚Մինչև որ երկինքը ու երկիրը անցնին , օրէնքէն յոտ մը՝ կամ նշանագիր մը պիտի չանցնի , մինչև
19 որ բոլորն ալ կատարուի ։ Ուստի ո՛վ որ ասանկ ամենափոքր պատուիրանքներուն մէկը ապրէ , ու մարդոց անանկ սորվեցընէ , անիկայ երկնից թագաւորութեանը մէջ . բայց ո՛վ որ ընէ և սորվեցընէ , անիկայ մեծ պիտի կոչուի երկնից թագաւորու-
20 թեանը մէջ ։ Քանզի կ՚ըսեմ ձեզի . Թէ որ ձեր արդարութիւնը Դպիրներուն ու փարիսեցիներուն գերազանցութենէն աւելի չըլլայ , բնաւ պիտի չմտնէք երկնից թագաւորութիւնը ։
21 Լսեր էք որ բսուեցաւ առաջինները ։ Սպանութիւն մի՛ ըներ . և ո՛վ որ սպանութիւն ընէ , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ ։
22 Բայց ես ձեզի կ՚ըսեմ . Ո՛վ որ իր եղբօրը պարապ տեղը ՚սրդողի , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իր եղբօրը Ցի՛մար ըսէ , ատեանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իր Եղբօրը Անմիտ ըսէ , դեհենի կրակին պարտաւոր
23 պիտի ըլլայ ։ Ուրեմն Դ՚եթէ որ քու ընծադ սեղանին վրայ բերես , ու հոն միտդ դայ թէ քու եղբայրդ
24 քեզի դէմ բան մը ունի , Հո՛ն ձգէ՛ քու ընծադ սեղանին առջևը , և դնա՛ առաջ եղբօրդ հետ հաշտուէ , ու ե՛տքը եկուր որ քու
25 ընծադ մատուցանես ։ Քու ոսոխդ հետ չուտով միաբանէ՛ , քանի որ անոր հետ ճամբուն մէջն ես . չըլլայ որ քու ոսոխդ քեզ դատաւորին մատնէ , և դատաւորը դա-
26 հիճին , և բանտը ձգուիս ։ Ճշմարիտ կ՚ըսեմ քեզի , պիտի չելլես անկէ , մինչև որ վերջի նաբարակիտը չվճարես ։
27 Լսեր էք որ ըսուեցաւ ։ Շնուս-
28 թիւն մի՛ ըներ ։ Բայց ես ձեզի կ՚ըսեմ . Ո՛վ որ կնկի մարդու կը

Ցամք Տեառն
31

ՀԱռակ · գ՛ · 18 ։ ՓԼ · բ · 15 ։
ՀՄար · գ · 21 ։ Ղու · բ · 16 ։ ժա · 33 ։
Ղա պետ · բ · 12 ։
ՃՑՕ · ժե · Տ ։ ա Կոր · ժգ · 23 ։
ՀՀռով · գ · 31 ։ ժ · 4 ։ Գաղ · գ · 24 ։
ՀՂու · ժգ · 17 ։
ՆՑակ · բ · 10 ։
ՀՀռով · Թ · 31 ։ ժ · 3 ։
ՈԵլ · ի · 13 ։ ՐՕր · ե · 17 ։
ՂՄ ՑՕ · գ · 15 ։՝
ՃԳԼ · ը · 4 ։ իդ · 19 ։
ԼԳԼ · ժը · 19 ։ ա Տիմ · բ · Տ ։ ա պետ · գ · 7 ։
ՈԱռակ · իե · Տ ։ Ղու · ժբ · 58 · 59 ։
ՈԵլ · ի · 14 ։ ՐՕր · ե · 18։
ՀՅոր · լա · 1 ։ Առակ · գ · 25 ։ Տե՛ս Ած · ւդ · 2 · ՐԹագ · ժա · 2 ։

Ցամք Տեառն 31

Գլ. ժբ. 8։ 9։ Մար. թ. 46։
Տե՛ս Գլ. ժթ. 12։ Հռով. ը. 13։ Ակր. թ. 27։ Կղ. գ. 5։
Օր. իդ. 1։ Երեմ. գ. 1։ Տե՛ս Դէ. ժթ. 3։ Մար. ժ. 2. ճ։
Գլ. ժթ. 9։ Ղու. ժզ. 18։ Հռով. է. 3։ ա Կոր. է. 10։ 11։
Ել. իդ. 16։
Եզ. ի. 7։ Ղե. ժթ. 12։ Թուս. Լ. 2։ Օր. ե. 11։
Օր. իգ. 23։
Գէ. իգ. 16։ 18. 22։ Ցակ. ե. 12։
Ես. կդ. 1։
Ասդ. Խր. 2. 46. 3։
Կղ. դ. 6։ Ցակ. ե. 12։
Ել. իա. 24։ Ղե. իդ. 20։ Օր. ժթ. 21։
Անգակ. ի. 22։ իդ. 29։ Ղու. գ. 29։ Հռով. ժբ. 17. 19։ ա Կոր. գ. 7։ ա Թես. ե. 15։ ա Պետ. գ. 9։
Ես. ծ. 6։ Ողս. գ. 30։
Գէ. իէ. 32։ Մար. ժե. 21։
Օր. ժե. ։ 10։ Ղու. գ. 30. 35։
Ղե. ժթ. 18։
Օր. իգ. ։ Սադ. իա. 10։
Ղու. գ. 27. 35։ Հռով. ժբ. 14. 20։
Ղու. իդ. 34։ Գար. է. 59։ ա Կոր. դ. 12. 13։ ա Պետ. բ. 23։ գ. 9։
Յոբ. իե. 3։

նայի անոր ցանկանալու համար, ալ անիկայ իր սրտին մէջ չնու-
29 թիւն ըրաւ անոր հետ։ Արդ՝ թէ որ քու աչ աչդ քեզ կը գայ-
թակղեցընէ, հանէ՛ զանիկայ՝ ու քեզմէ ձգէ, ինչու որ աղէկ է քեզի
որ անդամներուդ մէկը կորսուի, ու քու բոլոր մարմինդ դժոխքը
30 չձգուի։ Եւ թէ որ աչ ձեռդ քեզ կը գայթակղեցընէ, կտրէ՛
զանիկայ՝ ու քեզմէ ձգէ՛. ինչու որ աղէկ է քեզի որ անդամներուդ մէ-
կը կորսուի, ու քու բոլոր մար-
31 մինդ դժոխքը չձգուի։ Իրաւ
ըսուեցաւ թէ՝ Ով որ իր կնիկը կ'արձակէ, թող անոր արձակման
32 թո՛ւղթ տայ. Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ՝ Ով որ իր կնիկը կ'արձակէ
առանց պոռնկութեան պատճառի, ինքը պատճառ կ'ընէայ անոր շնու-
թիւն ընելուն, և ով որ ան ար-
ձակուածը առնէ, շնութիւն կը
գործէ։
33 Դարձեալ լսեր էք որ ըսուեցաւ
առաջիններուն. Սուտ երդում մի՛
ըներ, հապա ըրած երդումներդ
34 վճարէ՛ Տէրոջը։ Բայց ես ձեզի
կ'ըսեմ. Ամենևին երդում մի՛ ը-
նէք. ո՛չ երկինքի վրայ՝ որ Աստու-
35 ծոյ աթոռն է, Եւ ո՛չ երկրի վրայ՝
որ անոր ոտքերուն պատուանդանն
է, ո՛չ ալ Երուսաղէմի վրայ՝ որ
36 Մեծ թագաւորին քաղաքն է. Եւ
ո՛չ քու գլխուդ վրայ երդում ընես,
ինչու որ չես կրնար մէկ մազ մը
37 ձերմկցընել կամ սևցընել։ Հա-
պա ձեր խօսքը ըլլայ այո՛ այո՛, Ո-
չըն՝ ո՛չ. ու ասկէ աւելին՝ չարէն
յառաջէ կու գայ։
38 Լսեր էք որ ըսուեցաւ. Աչքի
տեղ՝ աչք. ու ակռայի տեղ՝ ակ-
39 ռայ։ Բայց ես ձեզի կ'ըսեմ.
Չարին հակառակ մի՛ կենաք. Հա-
պա թէ որ մէկը ապտակ մը զարնէ
աջ ծնօտիդ՝ դարձուր անոր միւսն
40 ալ։ Եւ մէկը որ կ'ուզէ քեզի
հետ դատ վարել՝ ու քու շապիկդ
առնել, թո՛ղ տուր անոր նաև վե-
41 րարկուդ ալ։ Եւ ո՛վ որ քեզ
պահակ ըռնէ՝ ու մղոն մը ճամբայ
գրէ, գնա՛ անոր հետ երկուք։
42 Քեզմէ ուզողին տո՛ւր, ու ետևս
մի՛ դարձներ անկէ՝ որ կ'ուզէ
քեզմէ փոխ առնել։
43 Լսեր էք որ ըսուեցաւ. Քու ըն-
կերդ սիրես, ու թշնամիդ ատես։
44 Բայց ես ձեզի կ'ըսեմ. Սիրեցէ՛ք
ձեր թշնամիները. օրհնեցէ՛ք ձեզ
անիծողները. բարի՛ ըրէ՛ք անոնց՝
որ ձեզ կ'ատեն, և աղօթք ըրէ՛ք
անոնց համար՝ որ ձեզ կը չարչրկեն
45 ու կը հալածեն։ Որ ձեր երկնաւոր
Հօրը որդիները ըլլաք. ինչու որ իր
արևը կը ծագեցընէ թէ՛ չարերուն
և թէ բարիներուն վրայ, և անձրև
կը խրկէ թէ՛ արդարներուն և թէ
46 մեղաւորներուն վրայ։ Թվան զի՛
թէ որ դուք ձեզ սիրողները սիրէք,
ի՞նչ վարձք կ'ունենաք. չէ՞ որ
մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն։
47 Եւ թէ որ միայն ձեր եղբայրներուն
բարև տաք, ի՞նչ աւելի կ'ընէք
Հեթանոսներն. չէ՞ որ մաքսաւորներն
48 ալ նոյնը կ'ընեն։ Ուրեմն դուք
կատարեա՛լ եղէք՝ ինչպէս որ ձեր
երկնաւոր Հայրն ալ կատարեալ է։

Գլ. Զ

1 Զգուշացոս կը շարունակէ իր քարոզութիւնը լեռանը վրայ, ու կը խօսի ողորմութեան, 5 աղօթք ընելու, 14 մեր եղբայրքը յանցանքը ներելու, 16 ծոմ պահելու, 19 մեր գանձը ուր պահելու, 24 Աստուծոյ և մամոնային ծառայութիւն ընելու վրայով 25 կը յորդորէ որ աշխարհային բաներու համար հոգ չընենք, 33 հապա Աստուծոյ թագաւորութիւնը խնդրենք։

1 Զգո՛յշ եղէք որ ձեր ողորմու-
թիւնը մարդոց առջև չընէք՝
անոնց երևնալու համար. եթէ ոչ՝
վարձք չէք առներ ձեր Հօրմէն՝ որ
2 երկինքն է։ Ուստի երբոր ողոր-
մութիւն կ'ընես, առջևդ փող մի՛
հնչեցըներ, ինչպես որ կեղծաւոր-
ները ժողովարաններուն ու փողոց-
ներուն մէջ կ'ընեն, որ մարդոցմէ
փառաւորուին. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, անոնք իրենց վարձքը առած
3 կ'ըլլան։ Իսկ դուն երբոր ողորմու-
թիւն կ'ընես, ձախ ձեռդ թող
չգիտնայ աջ ձեռդիդ ինչ գործելը.
4 Որ քու ողորմութիւնդ գաղտուկ
ըլլայ. և քու Հայրդ որ գաղտուկը
կը տեսնէ, Ինքը քեզի յայտնապես
հատուցում պիտի ընէ։
5 Ու երբոր աղօթք կ'ընես, կեղ-
ծաւորներուն նման չըլլաս, որ կը
սիրեն ժողովարաններուն մէջ ու
հրապարակներուն անկիւնները կայ-
նելով աղօթք ընել, որ մարդոց
երևնան. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան։
6 Իսկ դուն երբոր աղօթք կ'ընես,
Մտի՛ր քու ներքին սենեակդ, ու
դուռդ գոցէ՛, և աղօ՛թք ըրէ քու
Հօրդ՝ որ գաղտուկ տեղ է. Եւ քո
Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հա-
7 տուցում պիտի ընէ։ Եւ երբոր
աղօթք կ'ընէք, հեթանոսներուն
պէս շատախօս մի՛ ըլլաք. Վասն զի
կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն
8 համար պիտի լսուին։ Ուրեմն ա-
նոնց չնմանիք. ինչու որ ձեր Հայ-
րը ձեզի պէտք եղածը գիտէ՝ դեռ
9 դուք իրմէ չխնդրած։ Ուստի ա-
սա՛նկ աղօթք ըրէք դուք.
Ով Հայր մեր՝ որ երկինքն ես,
10 քու անունդ սուրբ ըլլայ. Քու

Ցամք Տեառն 31

Ղու. ջ. 32։
Ծն. ժէ. 1։ Ղև. ժա. 44։ ժթ. 2
Ղու. ջ. 36։ Կղ. ա. 28։ դ. 12։ Ցակ. ա. 4։ ա. Պետ. ա. 15, 16։
Եփես. ե. 1։

Ղու. ջ. 32։
Ծն. ժէ. 1։ Ղև. ժա. 44։ ժթ. 2
Ղու. ջ. 36։ Կղ. ա. 28։ դ. 12։ Ցակ. ա. 4։ ա. Պետ. ա. 15, 16։
Եփես. ե. 1։

Օր. իդ. 13։ Սաղ. ճժբ. 9։ Դան. դ. 27։ Կոր. թ. 9, 10։
Հռով. ժբ. 8։

Ղու. ժգ. 14։

Թգ. Թագ. ժ. 26, 29։

Ժող. ե. 2։
Դէթագ. ժբ. 26, 29։

Ղու. ժա. 2։

Յամի Տեառն 31

Է ԳԼ · Իշ · 39 · 42 · Գոր · Իա · 14 ·
Ը Սաղ · ճգ · 20 · 21 ·
Ժ Տե՛ս Ցոր · իգ · 12 · Առակ · Լ · 8 ·
Ի ԳԼ · Ժը · 21 ·
ԼԳԼ · Իշ · 41 · Ղու · իր · 40 · 46 · ա Կոր · Ժ · 13 · բ Պետ · բ · 9 · Յայտ · գ · 10 ·
Խ Ցօ՛ · ԺԷ · 15 ·
Ծ ա ՄՆ · իԹ · 11 ·
Կ Մար · Ժա · 25 · 26 · Եփե · դ · 32 · Կող · գ · 13 ·
ՀԳԼ · Ժը · 35 · Ցակ · բ · 13 ·
Յ Ես · Ծը · 5 · Ղ Հռոմ · գ · 3 · Դան · Ժ · 3 ·
Ն Ո՛Հ ՝ ի քեզի յայտնապէս
Շ Առակ · իգ · 4 · ա Տիմ · ե · 17 · Եբր · Ժգ · 5 · Ցակ · ե · 1 · ՃԼ ·
Ո ԳԼ · Ժը · 21 · Ղու · Ժը · 38 · 34 · Ժը · 22 · ա Տիմ · ե · 19 · ա Պետ · ա · 4 ·
Պ Ղու · Ժա · 34 · 86 ·
Ռ Ղու · Ժա · 18 ·
Ս Կա՛մ մեկուն պիտի յարի՝ Ղ Պաղ · ա · 10 · ա Տիմ, ե · 17 · Ցակ · դ · 4 · ա Ցօ՛ · բ · 15 ·
Տ Սաղ · ծե · 22 · Ղու · Ժբ · 22 · 23 · Փիլ · դ · 6 · ա Պետ · ե · 7 ·
Վ Ցոր · լթ · 41 · Սաղ · ճխե · 9 · Ղու · Ժբ · 24 · ՃԼ ·

թագաւորութիւնդ գայ , Բ ըրուս կամքդ ըլլայ , Գ ինչպես որ երկինքը՝ 11 անանկ ալ երկրիս վրայ . Դ մեր ամէն 12 աւուր հացը՝ այսօր մեզի տո՛ւր . Եւ Է մեզի ներէ՛ մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտա- 13 կաններուն . Ու Զ մեզ փորձութեան մի՛ տաներ . հապա Էքարէն մեզ ա- զատէ՛ . Ը ինչու որ քուկդ է թա- գաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս . ամէն ։

14 Ել ան զի թէ որ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները , ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը նե- 15 րէ . Հապա Թէ որ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները , ձեր Հայրն ալ ձեզի չներեր ձեր յան- ցանքները ։

16 Ու Ներբող Ծոմ կը պահէք , կեղ- ծաւորներուն պէս տրտուկերես մի՛ ըլլաք . քանզի իրենց երեսները կ'աւրեն որ մարդոց երևնան Թէ Ծոմ կը պահեն . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , անոնք իրենց վարձքը առած 17 կ'ըլլան : Բայց դուն երբոր Ծոմ կը պահես , Նգլուխդ օծէ՛ , ու երեսդ 18 լուա՛ , Որ մարդոց Ծոմ պահողի պէս չերևնաս , հապա քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղ կը ներ՛ , և քու Հայրդ որ գաղտուկը կը տես- նէ , Ը քեզի հատուցում՝ պիտի ընէ ։

19 Ժ Երկրի վրայ ձեզի գանձեր մի՛ դի- զէք , ուր որ ցեցը ու ժանկը կ'ա- պականէն , և ուր գողերը պաթ կը 20 ծակեն ու կը գողնան . Ի Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը , ուր որ ո՛չ ցեցը և ոչ ժանկը կ'ա- պականէ , ու ոչ գողերը պաթ կը 21 ծակեն և կը գողնան ։ Քանզի ձեր գանձը ո՛ւր որ է , սիրտերնիդ 22 ալ հոն պիտի ըլլայ ։ Լ Մարմինին ճրագը աչքն է . հապա Թէ որ քու աչքդ պայծառ է , բոլոր մարմինդ 23 լուսաւոր կ'ըլլայ . Բայց Թէ որ քու աչքդ վատ է , բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ . ուրեմն Թէ որ քու մէջդ եղած լոյսը խաւար է , ալ ան խա- 24 ւարը որչափ է ։ Մ Ոեւէր մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ընել . ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ , կամ Դ մէկը պիտի մե- ծարէ՝ և միւսը արհամարհէ . Չէք կրնար ծառայել Աստուծոյ ու Մամո- 25 նայի ։ Ուստի կ'ըսեմ ձեզի . Հոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար՝ Թէ ինչ պիտի ուտէք , կամ ի՛նչ պիտի խմէք . ո՛չ ալ ձեր մարմիններուն համար , Թէ ի՛նչ պիտի հագնիք . չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է , 26 ու մարմինը հագուստէն ։ Նայե- ցէ՛ք երկինքի թռչուններուն , որ ո՛չ կը սերմանեն և ո՛չ կը Ջձնեն և ո՛չ ամբարի մէջ կը ժողվեն , ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք . չէ՞ որ դուք անոնցմէ ա- 27 ւելի լաւ էք ։ Հիմա ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին 28 վրայ կանգուն մը աւելցընել ։ Ու հագուստի համար ինչո՞ւ հոգ կ'ը- նէք . Նայեցէք դաշտի շուշաննե- րուն ինչպէս կ'աճին . ո՛չ կ'աշ- 29 խատին և ո՛չ կը մանեն ։ Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ ա- նոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ ։ 30 Ուստի Թէ որ դաշտի խոտը որ այս- օր կայ՝ և վաղը փուռը կը ձգուի , Աստուած անանկ կը հագուեցընէ , հապա ո՛րչափ աւելի ձեզ՝ Թերա- 31 հաւատներ ։ Ուրեմն հոգ մի՛ ը- նէք՝ ըսելով . Ի՞նչ պիտի ուտենք , կամ Ի՞նչ պիտի խմենք , կամ 32 Ի՞նչ պիտի հագնինք . (Ինչու որ ատ բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն .) վասն զի ձեր երկ- նաւոր Հայրը գիտէ՝ Թէ ատ բոլոր 33 բաները ձեզի պէտք են ։ Բայց Ղառաջ խնդրեցէք Աստուծոյ Թա- գաւորութիւնը և անոր արդարու- Թիւնը , ու ատ բոլոր բաներն ալ 34 ձեզի պիտի տրուի ։ Ուստի վա- ղուան համար հոգ մի՛ ընէք . ինչու որ վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ . հերիք է օրուան իր նեղութիւնը ։

ԳԼ · Է

1 Քրիստոս իր քարոզութիւնը վերջացընելով կը յանդիմանէ անխոհեմաբար դատողութիւն ընելը . 6 կ'արգիլէ սուրբ բաները շուներուն տալը . 7 կը յորդորէ աղօթք ընել . 13 նեղ դռնէն ներս մտնել . 15 սուտ մարգարէներէն զգուշ կենալ . 21 իր խօսքը՝ միայն լսողներ չըլլալ՝ հապա կատարողներ . 24 նմանեցնելով անձնկ մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ կը շինէ , 26 և ո՛չ Թէ աւազի վրայ ։

1 Մ Ի՛ դատէք՝ որ չդատուիք ։
2 Քանզի ինչ դատաստանով որ դատէք , ան՛ով պիտի դատուիք . և Բ ինչ չափով որ չափէք , ան՛ով պի-
3 տի չափուի ձեզի ։ Գ Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տես- նես , ու քու աչքիդ մէջի գերանին
4 չես նայիր ։ Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ . Թող տուր աչքէդ Շիւղը հանեմ . և ահա քու
5 աչքիդ մէջը գերան կայ ։ Կե՛ղ- ծաւոր՝ առաջ քու աչքդ գերանը հանէ՛ , ու ետքը պիտի նայիս եղ- բօրդ աչքէն շիւղը հանելու ։
6 Տ Սուրբ բանը շուներուն մի՛ տաք , և ձեր մարգարիտները խո- զերուն առջևը մի՛ ձգէք , որ ոտքեր- նուն տակը չկոխկրտուին զանոնք , ու դառնան ձեզ փատաստեն ։
7 Խնդրեցէ՛ք և պիտի տրուի ձե- զի . փնտռեցէ՛ք և պիտի գտնէք . ԹՈՒ զարկէ՛ք և պիտի բացուի

Յամի Տեառն 31

Պ Տե՛ս գ Թագ · գ · 13 · Սաղ · լէ · 23 · Մար · ժ · 30 · Ղու · ժը · 31 · ա Տիմ · դ · ժ ։

Ա Ղու · ե · 37 · Հռով · բ · 1 · ժդ · 3 · 4 · 10 · 13 · ա Կոր · դ · 3 · 5 · Ցակ · դ · 11 · 12 ·
Բ Մար · դ · 24 · Ղու · ը · 38 ·
Գ Ղու · ե · 41 · 42 ·
Դ Առակ · Թ · 7 · 8 · իդ · 9 · Գոր · ժգ · 45 · 46 ·
Ե ԳԼ · իա · 22 · Մար · ժա · 24 · Ղու · ժա · 9 · 10 · ժը · 1 · Ցօ՛ · ժգ · 13 · ժե · 7 · ժը · 23 · 24 · Ցակ · ա · 5 · 6 · ա Ցօ՛ · գ · 22 · ե · 14 · 15 ·

Ըստ Տեառն 31

ՂՈՒԿ. Բ· 17· ԵՐԵՄ. ԻԹ· 12·13· Ի ԴՈՒ· ԺԱԼ· 11· 12· 13·

ՀԾՆ· Ը· 3· Ը· 21·

ԲՂԵ· Ը· 31· ՅՂԱ· ԺԹ· 15· ԳԼ· ԻԲ· 40· ՀՈՎ· ԺԳ· 5· 9· 10· ԳԱՂ· Ե· 14· ՍՏԻՄ· Ա· 3·

Ի ԴՈՒ· ԺԳ· 24·

ԼԲՕՐ· ԺԳ· 3· ԵՐԵՄ· ԻԳ· 16· ԳԼ· ԻԴ· 4· 5· 11· 24· ՄԱՐ· ԺԳ· 22· ՀՈՎ· ԺԶ· 17·18· ԵԶԵ· Ե· 6· ԿՂ· Բ· 8· ԲՊԵՏ· Բ· 1·2·3· Ա ՅՕՀ· Գ· 1·

Ի ՄԻՔ· Գ· 5· ԲՏԻՄ· Գ· 5·

Ն ԳՈՐ· Ի· 29·30·

ԱՀՄՐ 20· ԳԼ· ԺԲ· 33·

ՀԴՈՒ· Զ· 43·44·

ՅԵՐԵՄ. ԺԱ· 19· ԳԼ· ԺԲ· 33·

ՂԳԼ· Գ· 10· ՂՈՒ· Գ· 9· ՅՕՀ· ԺԱ· 2·6·

ՖՈՎ· Ը·2· ԳԼ·ԻԵ·11· 12· ՂՈՒ· Զ· 41· ԺԳ· 25· ԳՈՐ· ԺԹ· 13· ՀՈՎ· Բ· 13· ՅԱԿ· Ա· 22·

ՄԹՈՒ· ԻԲ· 4· ՅՕՀ· ԺԱ· 51· ԱԿՈՐ· ԺԳ· 2·

Ի ԳԼ·ԻԵ·12· ՂՈՒ· ԺԳ· 25· 27· Բ ՏԻՄ·Բ·19·

Ն ՍԱՂ·Ե·5· Զ·8· ԳԼ· ԻԲ·41·

ՆՂՈՒ·Զ·47· ՃՃ·

8 ձեզի. Ալան զի Համէն ով որ կը խնդրէ կ'առնէ, և ով որ կը փնտռէ կը գտնէ, և ով որ դռները կը զարնէ պիտի բացուի անոր։
9 Ե՞ Հեզմէ ո՞ր մարդը կայ՝ որմէն իր որդին հաց որ ուզէ, միթէ քա՞ր
10 պիտի տայ անոր. Եւ կամ թէ որ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ պիտի տայ ա-
11 նոր։ Ուստի եթէ դուք՝ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծա-ներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը՝ որ երկինքն է, բարի բա-ներ պիտի տայ անոնց՝ որ իրմէ կը խնդրեն։
12 Ուստի Համէն ինչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ ա-նոնց անա՛նկ ըրէք. քանզի ծաս է օրէնքը ու մարգարէները։
13 Ի՛նեղ դռնէն ներս մտէք. ինչու-որ լայն է ան դուռը՝ ու ընդարձակ ան ճամբան, որ դէպ ի՛ կորուստ կը տանի. և շատեր են անոնք՝ որ
14 անկէ կը մտնեն։ Ինչու որ նեղ է ան դուռը՝ ու նեղուածք է ան ճամ-բան, որ դէպ ի՛ կեանք կը տանի. և քիչ եր են անոնք՝ որ զանիկայ կը գտնեն։
15 Ե՛Զգո՛յշ կեցէք սուտ մարգարէ-ներէն՝ Է որոնք ձեզի կու գան ոչխարի Հանդերձներով, բայց ներսէն գ՛յա-
16 փըշտակող գայլեր են։ Իրենց պը-տուղէն պիտի ճանչնաք զանոնք. Հմիթէ փուչերէն խաղող կը քա-ղէ՞ն, կամ տատասկէն թուզ.
17 Ասանկ ալ Համէն բարի ծառ՝ բարի պտուղ կու տայ, և չար ծառ՝ չար
18 պտուղ կու տայ։ Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ո՛չ ալ
19 չար ծառը բարի պտուղ տալ։ Ամէն ծառ որ բարի պտուղ չտար՝ կը կտրուի, ու կրակը կը ձգուի։
20 Ուրեմն իրենց պտուղէն՝ պիտի ճանչնաք զանոնք։
21 Ոչ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէր Տէր կ'ըսէ, պիտի մտնէ երկ-նից թագաւորութիւնը. հապա ա-նիկայ որ իմ երկնաւոր Հօրս կամ-
22 քը կը կատարէ։ Շատերը ան օրը ինծի պիտի ըսեն. Տէր Տէր՝ մէ՞ որ քու անունովդ մարգարէու-թիւն ըրինք, և քու անունովդ դեւեր Հանեցինք, ու քու անունովդ
23 շատ հրաշքներ ըրինք։ Եւ յայն ա-տենը անոնց յայտնապէս պիտի ը-սեմ թէ, Ես բնաւ ձեզ չէի ճանչ-նար. Ո՛մեկդի գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք։
24 Ուրդ՝ Ո՛վ որ ասս իմ խօսքերս կը լսէ ու կը կատարէ անոնք, զանձ-կայ պիտի նմանցնեմ խելացի մար-դու մը՝ որ իր տունը վէմի վրայ
25 շինեց. Եւ անձրևները իջան, ու գետերը վազեցին, ու հովերը փչե-

ցին, և զարկին ան տանը, ու չիյաւ. ինչու որ վէմի վրայ հաս-
26 տատուած էր։ Եւ ով որ ասս իմ խօսքերս կը լսէ ու չկատարեր ա-նոնք, կը նմանի անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ շինեց։
27 Եւ անձրևները իջան, ու գետերը վազեցին, ու հովերը փչեցին, և զարկին ան տանը, ու փլաւ, և մեծ եր անոր կործանումը։
28 Ու երբոր Յիսուս լմընցուց աս խօսքերը, ժողովուրդները կը զար-մանային անոր վարդապետութեանը
29 վրայ. Ինչու որ իշխանութիւն ու-նեցողի մը պէս կը սորվեցներ ա-նոնց, ու չէ թէ դպիրներուն պէս։

ԳԼ· Ը

2 Քրիստոս կը մաքրէ բորոտը։ 5 կը բժշկէ Հարիւրապետին ծառան, 14 Պետրոսին զրքայը։ 16 և ուրիշ շատ հիւանդներ։ 18 կը ցուցնէ թէ ինչ կերպով իր Եուէն երթալ պէտք է։ 23 Ծովուն ալէկոծութիւնը կը հան-դարտեցնէ։ 28 երկու գիւահարներէ դեւերը կը հանէ։ 31 և զանոնք կը թողու որ երթան խոզերուն մէջ մտնեն։

1 Ու երբոր ան լեռնէն վար իջաւ, շատ ժողովուրդներ դացին ա-
2 նոր՝ ու Եուէն։ Եւ ահա բորոտ մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր ա-նոր՝ ու կ'ըսէր. Տէր՝ թէ որ ուզես,
3 կրնաս զիս մաքրել։ Եւ Յիսուս իր ձեռքը երկնցընելով դպաւ անոր՝ և ըսաւ. Կ'ուզեմ՝ մաքրուէ։ և
4 շուտ մը անոր բորոտութիւնը մաք-րուեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ անոր. Է Զգո՛յշ կեցիր՝ մէկու մը չըսես. հապա գնա՛ քեզ քահանային ցու-ցո՛ր, և Իմովսէսին պատուիրած ընծան տուր, անոնց վկայութիւն ըլլալու համար։
5 Ու երբոր Կափառնայում մտաւ, հարիւրապետ մը եկաւ քովը, կ'ա-
6 ղաչէր անոր, Ու կ'ըսէր. Տէր՝ իմ ծառաս տունը անդամալոյծ պառ-
7 կած չարաչար կը տանջուի։ Եւ Յիսուս ըսաւ անոր. Ես կու գամ
8 ու զանիկայ կը բժշկեմ։ Եւ հա-րիւրապետը պատասխան տալով ըսաւ. Տէր՝ Ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակը մտնես. Հապա՛յ թէ խօսքով զրուցէ, ու իմ
9 ծառաս պիտի բժշկուի. Ինչու որ ես ալ իշխանութեան տակ մարդ մըն եմ, ու իմ հրամանիս տակը զինուորներ ունիմ. և ասոր կ'ը-սեմ. Գնա՛, ու կ'երթայ. և մի-կալին՝ թէ Եկո՛ւր, ու կու գայ. և ծառայիս՝ թէ Ա՛ս բանը ըրէ, ու
10 կ'ընէ։ Յիսուս երբոր լսեց զար-մացաւ, և ըսաւ Եուէն գացողներուն ըսաւ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ Ես այսչափ
11 Հաւատր չգտայ։ Նաև ձեզի կ'ըսեմ՝ որ Հարաւէլքէն ու արևմուտքէն շա-

Ըստ Տեառն 31

ՍԿԻԶԲ· Ե· 27· ՄԱՐ· Ա· 22· Գ· 2· ՂՈՒ· Դ· 32·

ԼՕՀ· Ե· 40·

ՍԿԻԶԲ· ԺԴ· 54· ՄԱՐ· Ա· 22· Գ· 2· ՂՈՒ· Դ· 32·

ՀԾՆ· ԺԲ· 3· ԵՐԵՄ· Ե· 2· ՂՈՒ· Դ· 10· ՄԱՂ· Ա· 11· ՂՈՒ· ԺԴ· 29· ԳՈՐ· ԺԴ·45·ԺԱ· 18·ԺԴ·26· ՀՈՎ· ԺԵ· 9· ՃՃ· Ե· ՓԵ· Գ· 6·

ԲՂԵ· Ը· 11· ՂՈՒ· ԺԹ· 21·

ՂՍԱՂ· ՃԼ· 20·

Յամ Տեառն 31

Ը ԳԼ · իա · 43 ։
Ի ԳԼ · ժգ · 42 , 50 ։ իր · 13 ։ իդ · 51 ։ իե · 30 ։ Ղռ · ժգ · 28 ։ բ Պետ · բ · 17 ։ Յուդ · 13 ։

ժ Մար · ա · 29 , 30 , 31 ։ Ղռ · գ · 38 , ՃՃ ։

Ի Տե՛ս Կոր · Թ · 5 ։

Լ Մար · ա · 32 , ՃՃ ։ Ղռ · գ · 41 , 42 ։

Ի Ես · ծգ · 4 ։ ա Պետ · բ · 24 ։

ժ Ղռ · Թ · 57 , 58 ։

Խ Ղռ · Թ · 59 , 60 ։
Ճ Տե՛ս գ Թագ · ժթ · 20 ։

Ն Մար · գ · 37 , ՃՃ ։ Ղռ · ը · 23 , ՃՃ ։

Շ Ող · կե · 7 ։ ձԹ · 9 ։ ճէ · 29 ։

Ո Մար · ե · 1 , ՃՃ ։ Ղռ · ը · 26 , ՃՃ ։
* Ո՛չ-ոեւէ գիրք դարձացող

տեր պիտի գան , ու երկնից Թագաւորութեանը մէջ պիտի բազմին Աբրահամին ու Իսահակին և Յակոբին հետ . իսկ Իշխագաւորութեանը որդիքը Իւդուբսի խաւարը պիտի հանուին . հոն պիտի լլայ 13 լալ՝ ու ակռաները կրճտցընել ։ Եւ Յիսուս Հարիւրապետին ըսաւ . Գնա , ու ինչպէս որ դուն հաւատացիր , անանկ թող ըլլայ քեզի . և նոյն ժամուն անոր ծառան բժշկուեցաւ ։
14 Եւ Յիսուս Պետրոսին տունը գալով տեսաւ որ անոր Իզբաննը 1 ջերմէն բռնուած պառկած էր . Եւ անոր ձեռքէն բռնեց , ու ջերմը թող տուաւ զանիկայ . ան ալ ոտքի վրայ ելաւ , և անոր սպասաւորութիւն կ՚ընէր ։
16 Ի երբոր իրիկուն եղաւ , շատ դիւահարներ բերին անոր , ու խօսքով հանեց ոգիները , և բոլոր 17 հիւանդները բժշկեց . Որ Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը կատարուի . Ի Անիկայ մեր հիւանդութիւնները վերցուց , և չէր ցաւերը կրեց ։
18 Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տեսնելով , հրաման ըրաւ 19 որ մէկալ կողմը երթան ։ Յ Եւ դպիր մը մօտենալով ըսաւ անոր . Վարդապետ՝ ես քու ետևէդ պիտի 20 գամ՝ , ուր որ երթաս ։ Եւ Յիսուս ըսաւ անոր . Աղուէսները որջեր ունին , ու երկնից թռչունները բոյներ . բայց Որդին մարդոյ տեղ մը չունի , որ հոն իր գլուխը դնէ ։
21 Եւ մէկ ուրիշը՝ ու անոր աշակերտներէն էր , ըսաւ անոր . Տ Էր՛ ինծի հրաման տուր , որ երթամ առաջ 22 իմ հայրս թաղեմ ։ Յիսուս ըսաւ անոր . Եկուր իմ ետևէս , ու թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները ։
23 Ու երբոր նաւը մտաւ , իր աշա- 24 կերտները իր ետևէն գացին . Ն Եւ ահա մեծ ալէկոծութիւն մը եղաւ ծովուն մէջ , անանկ որ նաւը ալիքներէն կը ծածկուէր . իսկ ինքը 25 կը քնանար ։ Եւ աշակերտները մօտ գացին արթընցուցին զանիկայ՝ ու ըսին . Տէր՛ ազատ մեզ , Ինչո- 26 ւր ահա կը կորսուինք ։ Եւ ըսաւ անոնց . Թե՛րկածանտներ՝ ինչո՞ւ ասկէ վախկոտ էք . ան ատեն ելաւ հովերուն ու ծովուն սաստեց , 27 և մեծ խաղաղութիւն եղաւ ։ Ու մարդիկը զարմացան՝ և կ՚ըսէին . Ի՞նչպէս մարդ է ասոր հովերը ու ծովը ասոր կը ջաղանդին ։
28 Ճ Ու երբոր մէկալ կողմը * Գերգեսացւոց երկիրը անցաւ , երկու դիւահար պատահեցան իրեն՝ դե- 29 րեզմաններէն ելած՝ սաստիկ կատղած , անանկ որ չէր մէկու մը ան ճամբայէն անցնիլ ։ Եւ ահա աղաղակեցին ու ըսին . Ցիսուս Որդի Աստուծոյ՝ դուն մեր հետը ի՞նչ բան ունիս .ատենէն առաջ մեզ 30 տանջելո՞ւ համար հոս եկար ։ Եւ անոնցմէ հեռու շատ խոզերու երամակ մը կար , որ կ՚արածուէին ։ 31 Ու դևերը կ՚աղաչէին իրեն՝ ու կ՚ըսէին . Թէ որ մեզ կը հանես , հրամայ տուր մեզի որ երթանք խոզերուն երամակին մէջը մտնեն ։ 32 Եւ ըսաւ անոնց . Գացէք . ու անոնք ելան դարձին խոզերուն երամակին մէջը մտան . և ահա բոլոր երամակը գահավէժ տեղէն ծովը վազեցին , ու ջուրերուն մէջը մեռան ։ 33 Ռան ։ Խոզարածներն ալ փախան , և քաղաքը երթալով բոլորը պատմեցին , ու դիւահարներուն պատմեցին ։ 34 Ժողովուրդ բոլորը քաղաքը Յիսուսին դէմ ելաւ . ու երբոր տեսան զանիկայ , Ղ աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ ։

Ցամ Տեառն 31

ՃՏե՛ս ը Օր · ե · 25 ։ գ Թագ · ժէ · 18 ։ Ղռ · ե · 8 ։ Գոր · ժգ · 39 ։

ԳԼ · Թ

2 Քրիստոս անդամալոյծ մը կը բժշկէ · 9 Մատթէոսը մաքսաւորութիւն ընելէն իրեն կը կանչէ · 10 Մաքսաւորներու և մեղաւորներու հետ կ՚ուտէ · 14 Իր աշակերտներուն ծոմ չպահելը կ՚արդարացնէ · 20 տեսաւոս կինը կը բժշկէ · 23 Յայրոսի աղջիկը կը յարուցանէ · 27 երկու կոյրերու աչքերը կը բանայ · 32 Համր դիւահարը կը բժշկէ · 36 և կը խղճայ բազմութեանը վրայ ։

1 Նաւը մտնելով մէկալ կողմը անցաւ , ու եկաւ իր քաղաքը ։ ա ԳԼ · գ · 13 ։
2 Ի Եւ ահա բերին իրեն անդամալոյծ մը , որ մահճի մէջ պառկած էր . և Ի Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին . Քաջալերուի՛ որդեակ , քու մեղքերդ բ Մար · բ · 3 ։ Ղռ · ե · 18 ։
3 քեզի ներուած են ։ Եւ ահա դպիրներէն ոմանք իրենց մտքին մէջը ըսին . Այս մարդ հայհոյութիւն կ՚ը- ‡ ԳԼ · ը · 10 ։
4 նէ ։ Յիսուս ալ Ի անոնց խորհուրդները իմանալով՝ ըսաւ . Ինչո՞ւ դ Ես · ձԹ · 2 ։ ԳԼ · ժբ · 25 ։ Մար · ժբ · 15 ։ Ղռ · ե · 22 ։
5 չէք . քանզի ո՞րը աւելի դիւրին է . քու մեղքերդ ներուած են ըսե՞լը , Թէ ելիր ու քալէ ըսելը ։
6 Բայց որպէս զի գիտնաք՝ Թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու , (ան ատենը անդամալոյծին ըսաւ ,) Ելիր՝ մահճիդ առ՝ ու 7 տունդ գնա ։ Ու անիկայ ելաւ՝ 8 իր տունը գնաց ։ Ժողովուրդները երբոր տեսան՝ զարմացան , ու փառաւորեցին զԱստուած , որ մարդոյ անանկ իշխանութիւն տուեր էր ։
9 Ի Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով մարդ մը տեսաւ Մատթէոս անունով , որ մաքս ընդունելու Ի Մար · բ · 14 ։ Ղռ · ե · 27 ։

Ցամ Տեառն 31

ՂՄար · Բ · 15 ; ՃՃ · Ղու · Ե · 29 · ՃՃ ։

Է Գլ · Ճա · 19 ։ Ղու · Ե · 30 ։ Ժե · 2 ։ ՃԴաղ · Բ · 15 ։

Բ Ովս · Զ · 6 ։ Միք · Զ · 6 ։ Է · 8 ։ Գլ · Ժր · 7 ։ ՃՅԻՄ · ա · 15 ։

Ի Մար · Բ · 18 ։ ՃՃ ։ Ղու · Ե · 33 · Ժը · 12 ։

ԼՅՕՆ · Գ · 29 ։

Է Գոր · Ժգ · 2 · 3 ։ Ժդ · 22 ։ ՈՒկոր · Է · 5 ։

Ֆ Մար · Ե · 22 ։ ՃԼու · Ը · 41 ։ ՃՃ ։

Ձ Մար · Ե · 25 ։ Ղու · Ը · 43 ։

ՀՂու · Է · 50 ։ Ը · 48 ։ Ժե · 19 ։ Ժը · 42 ։

Ն Մար · Ե · 38 ։ Ղու · Ը · 51 ։

ԼՏԵ՛Ս ԲՄՆ · ԼԲ · 25 ։

տեղը նստեր էր , ու ըսաւ անոր . Ետևէս եկուր . ան ալ ելաւ անոր
10 ետևէն գնաց ։ Ու եղաւ որ տունը սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկած՝ ու սեղան նստած էին Յիսուսին ու անոր աշակերտներուն
11 հետ ։ Ու փարիսեցիները երբոր տեսան , ըսին անոր աշակերտներուն . Ինչո՞ւ ձեր վարդապետը Ի մաքսաւորներուն ու Ի մեղաւորներուն
12 հետ կ՛ուտէ ։ Բայց Յիսուս երբոր լսեց , ըսաւ անոնց . Առողջներուն բժիշկ պէտք չէ , հապա
13 հիւանդներուն ։ Գացէք սորվեցէք՝ թէ ինչ է ՝՝ Խօսք Ի Աղորմութիւն կ՛ուզեմ , և չէ թէ զոհ . ինչու որ ես արդարները կանչելու չեկայ , հապա մեղաւորները ։
14 Ան ատենը Յովհաննէսին աշակերտները անոր ևկան ու ըսին . Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք , և քու
15 աշակերտներդ չեն պահեր ։ Ու Յիսուս ըսաւ անոնց . Միթէ կրնա՞ն որ հարսնիքին տղաքը սուգ պահեն՝ քանի որ փեսան իրենց հետն է . բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի , Ան ա-
16 տենը ծոմ պիտի պահեն ։ Ու մկրը չՀգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ . քանզի՝ ՃՃ որ անոր լրումեանը համար է՝ կ՛առնէ հանդերձէն , ու պատռուածքը ալ աւելի գէշ կ՛ըլլայ .
17 Ո՛չ ալ նոր գինին հին տիկերու մէջ կը դնեն . եթէ ոչ՝ տիկերը կը պատռին՝ ու գինին կը թափի , և տիկերը կը կորչին . հապա նոր գինին նոր տիկերու մէջ կը դնեն , ու երկուքն ալ կը պահուին ։
18 Երբոր անիկայ անոնց հետ ասբանները կը խօսէր , ահա իշխան մը եկաւ , երկրպագութիւն կ՛ընէր ա-նոր՝ ու կ՛ըսէր . Աղջիկս՝ ալ մինչև հիմա մեռած է , բայց եկուր ձեռքդ անոր վրայ դիր , ու պիտի ապրի ։
19 Եւ Յիսուս ելաւ , ու իր աշակերտներուն հետ անոր ետևէն գնաց ։
20 Եւ ահա տասներկու տարուան տեռատես կին մը մօտեցաւ ետևէն անոր հանդերձին քղանցքին դպաւ .
21 քանզի իր մտքէն մէջ կ՛ըսէր , թէ որ միայն անոր հանդերձին դպչիմ ,
22 պիտի բժշկուիմ ։ Բայց Յիսուս երբոր ետին դարձաւ՝ ու տեսաւ զանիկայ , ըսաւ . Քաջալերուի՛ աղջիկ , Հքու հաւատքդ քեզ բժշկեց . և կինիկը նոյն ժամէն բժշկուեցաւ ։
23 Ու երբոր Յիսուս իշխանին տունը եկաւ , ու տեսաւ ՀփողահարներըԼ
24 և խռոված բազմութիւնը , ըսաւ անոնց . Մէկկդի գացէք . ինչու որ աղջիկը մեռած չէ , հապա կը քնանայ . և ծաղր կ՛ընէին անիկայ ։
25 Ու երբոր բազմութիւնը դուրս ելաւ , ինքը ներս մտաւ՝ անոր ձեռքէն բռնեց , ու աղջիկը ոտք ելաւ ։
26 Եւ աս լուրը ան բոլոր երկիրը տարածուեցաւ ։
27 Ու երբոր Յիսուս անկէ առաջ անցաւ , երկու կոյր ինկան անոր ետևէն , կ՛աղաղակէին ու կ՛ըսէին . Ո՛ղորմի՛ մեզի՝ Որդի՛ Դաւիթի ,
28 Ու երբոր տուն եկաւ , կոյրերը իրեն եկան . և Յիսուս անոնց ըսաւ . Կը հաւատաք՝ թէ կրնամ ա՛ս բանը Ձեզ ընել . ըսին անոր .
29 Այո՛ Տէր ։ Ան ատենը անոնց աչքերուն դպաւ՝ ու ըսաւ . Ձեր
30 հաւատքին պէս ըլլայ ձեզի ։ Ու անոնց աչքերը բացուեցան . և Յիսուս սաստիկ պատուէր տուաւ անոնց՝ ու ըսաւ . Զգուշ կեցէք ,
31 մկը չիմանայ ։ Բայց անոնք ելան ան բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարածեցին ։
32 Ու երբոր անոնք դուրս ելան , ահա մկ համր դիւահար մարդ մը
33 բերին իրեն ։ Ու երբոր դեւը ելաւ , համրը խօսեցաւ . և ժողովուրդները զարմացան ու կ՛ըսէին Թէ Իսրայէլի մէջ բնաւ ասանկ բան
34 մը տեսնուած չէ ։ Բայց փարիսեցիները կ՛ըսէին Թէ ՝՝ Ամիկայ դեւերուն իշխանովը դեւերը կը հանէ ։
35 Եւ Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները ու գեղերը , և ՝՝ անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցընէր , ու կը քարոզէր արքայութեան աւետարանը , և կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ ,
36 Եւ ժողովուրդները տեսնելով՝ անոնց վրայ խղճաց . ինչու որ յոգնած ու ցիրուցան եղած էին ՝՝ հովիւ չունեցող ոչխարներու
37 պէս ։ Ան ատենը ըսաւ իր աշակերտներուն . Հունձքը շատ է ,
38 բայց մշակները քիչ . Աղաստի հունձքին Տէրոջը աղաչեցէ՛ք , որ մշակներ հանէ իր հունձքին ։

Գլ · Ժ

1 Քրիստոս իր տասներկու առաքեալները կը խրկէ՝ հրաշքներ ընելու իշխանութիւն տալով անոնց . 5 պատուէրներ կու տայ անոնց և կը սորվեցընէ թէ ինչ պարսին ընել . 16 կը միխիթարէ զանոնք չալածմունքներու վրայով . 40 և օրհնութիւն կը խոստանայ զանոնք ընդունողներուն ։

1 Ու ՝՝ իր քովը կանչելով իր տասներկու աշակերտները , անոնց

Ցամ Տեառն 31

ՃԳոր · Ի · 10 ։

ՃԳլ · Ժե · 22 ։ Ի · 30 ։ 31 ։ Մար · Ժ · 47 ։ 48 ։ Ղու · Ժը · 38 ։ 39 ։

Ա Գլ · Ը · 4 · Ժր · 16 · Ժե · 9 ։ Ղու · Ե · 14 ։

Ն Մար · Է · 36 ։

Ն ՏԻՆ Գլ · Ժբ · 22 ։ Ղու · Ժա · 14 ։

ՃԳլ · Ժբ · 24 ։ Մար · Ժ · 22 ։ Ղու · Ժա · 15 ։

ԷՄար · Զ · 6 ։ Ղու · Ժգ · 22 ։

ՃԳլ · Դ · 23 ։

ԷՄար · Ջ · 34 ։

ՀԹես · Ե · 17 ։ ԳԹես · Իր · 17 ։ Եզկ · Լդ · 5 ։ Զաք · Ժ · 2 ։

ՃՂու · Ժ · 2 ։ ՃՅՈՎ · Դ · 35 ։

ՎԵթես · Գ · 1 ·

Ցաւի Տեառն
31

Բ Ցոհ. ա. 42։
Է Ղեւ. զ. 15։ Գոր. ա։ 13։
Ը Ցոհ. Ժգ. 26։
Ի Գւ. դ. 15։
Ձ Ցե՛ս Թագ. Ժե. 24։ Ցոհ. դ. 9։ 20։
Ի Գւ. Ժհ. 24։ Գոր. Ժգ. 46։
Ը Ե՛ս. Ծգ. 6։ Երեմ. ծ. 6։ 17։ Եզեկ. ե. 5։ 6։ 16։ ապիւս. բ. 25։
Ր Ղեւ. Թ. 2։ Ի Գւ. գ. 2։ դ. 17։ Ղեւ. Ժ. 9։
* Ոմանք մարդիկ՝ ուր ինչները յարուցէք, Ի Պար. Ը. 13. 20։
† Ա՛ն Թագ. Թ. 7։ Պար. գ. 8։ Ղեւ. Թ. 3։ Ժ. 4։ Իր. ԽՁ։
Ի Ցոհ. Պարա. գ. 8։
Ի Ղեւ. Ձ. 7։ ա Կոր. Թ. 7։ Ա ա Տիմ. Ե. 18։
§ Ղեւ. Ձ. 8։
† Ոմանք ա՛ն՝ որ՝ ոչ ըստ. Բարև ան տանն։
Հ Ղեւ. Ժ. 5։ 6։
‖ Ա՛ղ. լե. 13։
Ա Պար. զ. 11։ Ղեւ. Ժ. 5։ Ժ. 10։ 11։
ՠ Դ. Եսդ. ե. 13։ Գոր. Ժգ. 35։ Ժբ. 6։
Ոմանք՝ ձեր ոտքերուն փոշին թօթվեցէք։ Ա՛ղ. Ժա. 22։ 24։
Ղեւ. Ժ. 3։
Հ Յով. Ժգ. 19։ Եփես. ե. 15։
Ա՛ղ. Կոր. Ժգ. 20։ Փիլ. բ. 15։
- Գւ. Իդ. 9։ Պար. Ժգ. 9։ Ղեւ. ը Ժբ. 11։ ի Իս. 12։
Ա Կոր. ի. 40։
- Գոր. Ժբ. 1։ Իդ. 10։ Իե. 7։ 23։ Բ Տիմ. դ. 16։

իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ՝ որ զանոնք հանեն, և ամէն ցաւերը ու ամէն հիւանդութիւնները բժշկեն։
2 Ու տասուերկու առաքելոց անուններըասոնք են. առաջինը Սիմոն՝ որ Պետրոս ըսուածը, և անոր
3 եղբայրը Անդրէաս. Յակոբոս Զեբեդեան, և անոր եղբայրը Յովհաննէս. Փիլիպպոս և Բարթողիմէոս. Թովմաս և Մատթէոս մաքսաւոր. Յակոբոս Ալփեան, և Ղեբէոս՝ որ Թադէոս մականուաց
4 Նեցաւ. Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ նաև մատնեց զանիկայ։
5 Ասոնք տասուերկուքը Յիսուս իրրև կեց, և անոնց պատուիրեց՝ ըսելով. Հեթանոսներու ճամբայ մի՛ երթաք, ու Սամարացիներու քա-
6 ղաք մի՛ մտնէք. Հապա աւելի՛ Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն գացէք։
7 Ու երբոր կ՚երթաք, քարոզեցէք ու ըսէք թէ՝ Երկնից թագաւորութիւնը մտե-
8 ցած է։ Հիւանդները բժշկեցէք, բորոտները *մաքրեցէք, դևերը հանեցէք։ Հրի՛ առեր եք, հրի՛
9 տուէք։ Ա՛մի ոսկի՛ և ոչ արծա՛թ և ոչ Հպղինձ ձեր գո-
10 տիներուն մէջը, Ո՛չ ճամբու համար տոպրակ, և ոչ կրկին հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան. Հ՚ինչու որ մշակը իր կերակուրին
11 արժանի է։ Եւ որ քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէք՝ թէ ո՛վ է անոր մէջը արժանաւոր. ու հոն
12 կեցէք մինչև որ ա՛ւելէք։ Ու երբոր տունը կը մտնէք, բարև
13 տուէք †անոր։ Եւ Հթէ որ ան տունը արժանաւոր է, ձեր բարևը անոր վրայ գայ. Հապա թէ որ արժանաւոր չէ, Հձեր բարևը ձեզի
14 դառնայ։ Նե՛ որ ո՛վ որ, ձեզ չընդունի ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբոր ան տունէն կամ քաղաքէն կ՚ելլէք, ‡ձեր ոտքերուն փոշին
15 թօթվեցէք։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի. Սոդոմացւոց ու Գոմորացւոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ
16 ան քաղաքին։ Ահա ես ձեզ կը խրկեմ իբրև ոչխարներ գայլերու մէջ. Խոհուտ օձերու պէս խորագէտ եղէք, և հա-
17 զուներու պէս միամիտ։ Իսկ մարդոցմէ զգուշացէք. ինչու որ ձեզ առեաններու պիտի մատնեն, ու իրենց ժողովարաններուն մէջը
18 ձեզ պիտի ծեծեն. Ու Եւ իմ անունիս համար կուսակալներու ու թագաւորներու առջև պիտի տարուիք, անոնց և հեթանոսներուն վկայու-
19 թիւն տալու համար։ Երբոր ձեզ մատնեն, հոգ մի՛ ընէք թէ ինչո՞ր կամ ինչ պիտի խօսիք. ինչու որ ձեզի պիտի տրուի ան ժա-
20 մուն՝ ինչ որ պիտի խօսիք։ Վասն զի չէ թէ դուք էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հոգին որ ձեր
21 ներսի դին կը խօսի։ Ու Ելբայր՝ եղբայրը մահուան պիտի մատնէ, և հայրը՝ որդին. և որդիք երթան ծնողացը վրայ պիտի ելլեն ու մեռ-
22 ցընեն զանոնք։ Եւ իմ անուանս համար՝ ամէնուն ատելի պիտի ըլլաք. Երբայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկայ պիտի ապրի։
23 Ու երբոր ասա քաղաքին մէջ ձեզ կը հալածեն, ուրիշ *տա՛ք փախէք. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի. Իսրայէլի քաղաքները պիտի չՀատըճնէք, մինչև որ Որդին մարդոյ գայ։
24 ‡Աշակերտը իր վարդապետէն աւելի չէ, և ոչ ծառան իր տիրոջմէն։
25 Հերի՛ք է աշակերտին որ իր վարդապետին պէս ըլլայ, ու ծառային իր տիրոջը պէս. Հթէ որ տանուտէրը Բէելզեբուղ կոչեցին, որքա՛ի
26 աւելի անոր ընտանիքը։ Ուստի մի՛ վախնաք անոնցմէ. Հինչու որ բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չբայտնուի, և գաղտուկ՝ որ պիտի
27 չգիտցուի։ Ինչ որ ձեզի մութի մէջ կ՚ըսեմ, ա՛յդ լոյսի մէջ խօսեցէք, և ինչ որ ականջի՛ վար կը լսէք, տանի՛քներուն վրայ
28 քարոզեցէք։ Եւ մի՛ վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն, ու չեն կրնար հոգին սպաննել. Հապա աւելի անկէ վախցէք դուք, որ կրնայ հոգին ու մարմինը գեհենին
29 մէջ կորսընցընել։ Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին, և անոնցմէ մէկը գետինը չիյնար՝
30 առանց ձեր Հօրը։ Հբայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած
31 են։ Ուրեմն մի՛ վախնաք. Ընդ՚որ շատ ճնճղուկներէն լաւ էք դուք։
32 Ամէ՛ն ով որ մարդոց առջև զիս կը դաւանի, Ես ալ անիկայ պիտի դաւանիմ իմ Հօրս առջև՝ որ եր-
33 կինքն է. Եւ ով որ մարդոց առջև զիս կ՚ուրանայ, ես ալ անիկայ պիտի ուրանամ իմ Հօրս առջև՝ որ
34 երկինքն է։ Մի՛ կարծէք՝ թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ. խաղաղութիւ՛ն ձգելու չե-
35 կայ, հապա սո՛ւր. Ինչու որ եկայ Հմարդը իր Հօրմէն զատելու, ոՀ աղջկան՝ իր մօրմէն, ու Հարսը՝ իր կե-
36 սուրէն. Եւ Հմարդուն թշնամիները
37 իր ընտանիքը պիտի ըլլա՛ն։ Ընդ որ Հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ. և ան որ տղան կամ աղջիկը ինծմէ աւելի կը

Ցաւի Տեառն
31

Ը Մար. Ժգ. 11։ 12։ 13։ Ղեւ. Ժբ. 11։ Իա. 14։ 15։
- Եւ. գ. 12։ Երեմ. ա. 7։
- բ Թագ. Իգ. 2։ Գոր. դ. 8։ զ. 10։ բ Տիմ. դ. 17։
Է Մրկ. է. 6։ Հմր 35։ 36։ Ղեւ. Իա. 16։
- Ղեւ. Իա. 17։
Բ Դան. Ժբ. 12։ 13։ Գւ. Իգ. 13։ Մար. Ժգ. 13։
Ց Գւ. բ. 13։ դ. 12։ Ժբ. 15։ Գոր. ը. 1։ Ի. 25։ Ժգ. 6։
- Գւ. Ժզ. 28։
Ի Ղեւ. զ. 40։ Ցոհ. Ժգ. 16։ Ժե. 20։
+ Գւ. Ժբ. 24։ Մար. դ. 22։ Ղեւ. Ժա. 15։ Ցոհ. ը. 43։ 52։
ՠ Մար. դ. 22։ Ղեւ. ը. 17։ Ժբ. 2։ 3։
- Ես. ը. 12։ 13։ Ղեւ. Ժբ. 4։ ա Պետ. գ. 14։
Ք ա Թագ. Ժգ. 45։ Բ Թագ. Ժդ. 11։ Ղեւ. Իա. 18։ Գոր. ք. 34։
Ի Ղեւ. Ժբ. 8։ Հով. Ժ. 9։ 10։
Ա Ցաւ. գ. 5։
Ի Մար. ը. 38։ Ղեւ. Թ. 26։ Բ Տիմ. բ. 12։
Ղեւ. Ժբ. 49։ 51։ 52։ 53։
Ե Մրկ. է. 6։
Ը Սաղ. Իա. 9։ Ժե. 13։ Մրկ. է. 6։
Ցոհ. Ժգ. 18։
Ի Ղեւ. Ժգ. 26։

Ցամք Տեառն 31

ՅԳԼ. ԺԶ. 24 ։ ՄԱՐ. Ը. 34 ։ ՂՈՒ. Թ. 23 ։ ՅԳ. 27 ։

ԻԳԼ. ԺԶ. 25 ։ ՂՈՒ. ԺԷ. 33 ։ ՑՕՀ. ԺԲ. 25 ։

ԼԳԼ. ԺԸ. 5 ։ ՂՈՒ. Թ. 48 ։ Ժ. 16 ։ ՑՕՀ. ԺԲ. 44 ։ ԺԳ. 20 ։ ԳԱՂ. Գ. 14 ։

ԻԳ ԹԱԳ. ԺԷ. 10 ։ ԺԸ. 4 ։ Դ ԹԱԳ. Գ. Տ ։

ՅԳԼ. Ը. 5 ։ 6 ։ ԻԵ. 40 ։ ՄԱՐ. Թ. 40 ։ ԵՐԲ. Ջ. 10 ։

ՀԳԼ. ԺԴ. 3 ։ Ի ՂՈՒ. Է. 18, 19 ։ ՃԱ. ՀՕՇ. ԽԹ. 10 ։ ԹՈՒ. ԻԴ. 17 ։ ԴԱՆ. Թ. 24 ։ ՑՕՀ. Զ. 14 ։

Ի ԵՉՕ. ՐՔԹ. 15 ։ Լ. 4, 5 ։ 6 ։ ԽՐ. 7 ։ ՑՕՀ. Բ. 23 ։ Գ. 2 ։ Ե. 36 ։ Ժ. 25, 38 ։ ԺԴ. 11 ։

Ի ՍԱՂ. ԻՐ. 26 ։ ԵՍ. ԿՍ. 1 ։ ՂՈՒ. Դ. 18 ։ ՅԱԿ. Բ. 5 ։

ՂԵՍ. Ը. 14, 15 ։ ԳԼ. ԺԳ. 57 ։ ԻԴ. 10 ։ ԻԶ. 31 ։ ՀՈՎ. Թ. 32, 33 ։ Ա ԿՈՐ. Ա. 23 ։ Բ. 14 ։ ԳԱՂ. Ե. 11 ։ ՍՈՓՈՆ. Բ. Տ ։

ԵՂՍ. Է. 24 ։ ԸԵՒԲ. Դ. 14 ։

Ի ԳԼ. ԺԴ. 5 ։ ԻԱ. 26 ։ ՂՈՒ. Ա. 76 ։ Է. 26 ։

38 սիրէ , ինծի արժանի չէ . ԺԵ. ան որ իր խաչը չառնէր ու իմ ետեւէս

39 գար , ինծի արժանի չէ ։ ԻՆՁ որ իր անձը կը գտնէ , պիտի կորսընչընչէ զանիկայ . և ան որ իր անձը ինծի համար կը կորսընչընչէ , պիտի

40 գտնէ զանիկայ ։ ՆԱՆ որ ձեզ կ'ընդունի , զիս կ'ընդունի . և ան որ զիս կ'ընդունի , զիս խրկողը կ'ընդունի ։

41 Դ ՆԱՆ որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէի անունով , մարգարէի վարձք կ'առնէ . և ան որ արդար մը կ'ընդունի արդարի անունով , արդարի վարձք կ'առնէ ։

42 Ե ՈՒ ան որ աս սլջտիկներէն մէկուն միայն գաւաթ մը պաղ ջուր կը խմցընէ աշակերտի անունով , ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , բնաւ իր վարձքը պիտի չկորսընչընէ ։

ԳԼ. ԺԱ

2 Ցովհաննէս իր աշակերտները Քրիստոսին կը խրկէ ։ 7 Քրիստոսի վկայութիւնը Ցովհաննէսին համար ։ 18 Ժողովուրդց կարծիքը Ցովհաննէսին ու Քրիստոսի վրայով ։ 20 Քրիստոս կը նախատէ Քորազինը ։ Բեթսայիդան և Կափառնայումը՝ իրենց ապերախտութեանը և անդեղ մնալուն համար ։ 25 և կը փառաւորէ իր Հօրը խնամատարութիւնը՝ Աւետարանը պարզամիտներուն յայտնելուն համար ։ 28 Իրեն կը կանչէ ամէն անոնք՝ որ իրենց մեղքին ծանրութիւնը կը զգան ։

1 ՅԵ եղաւ որ երբ Ցիսուս լմընցուց իր տասուերկու աշակերտներուն պատուէր տալը , գնաց անկէ ասնոնց քաղաքներուն մէջ քարոզելու և աւրվեցընելու ։

2 Իսկ Ցովհաննէս բանտին մէջը Ե երբոր լսեց Քրիստոսի գործքերը , իր աշակերտներէն երկուքը խրկե

3 լով ըսաւ անոր . Դուն ա՞ն ես՝ որ գալու էիր , թէ ուրիշի մը սպա

4 սենք ։ Եւ Ցիսուս պատասխան տալով անոնց ըսաւ . Գացէք պատմեցէք Ցովհաննէսին՝ ինչ որ

5 կը լսէք ու կը տեսնէք . Ե կոյրերը կը տեսնեն , կաղերը կը քալեն , բորոտները կը մաքրուին , խուլերը կը լսեն , մեռելները յարութիւն կ'առնեն , Ե ու աղքատներուն աւետ

6 տարան կը քարոզուի ։ Եւ երանի՛ անոր , Ո՛ր իմ վրայովս չգայթակղիր ։

7 Ե ՈՒ երբոր անոնք գացին , Ցիսուս սկսաւ ժողովուրդներուն ըսել Ցովհաննէսին համար . Ի՞նչ տեսնելու ելաք անապատին մէ՞ջ . էեղէգ

8 մը հովէն շարժուած ։ Հապա ի՞նչ տեսնելու ելաք . փափուկ հանդերձներ հագած մարդ մը . ահա փափուկ հանդերձներէ հագնողները թա

9 գաւորաց տուներն են ։ Հապա ի՞նչ տեսնելու ելաք . մարգարէ՞ . այո՛ կ'ըսեմ ձեզի , Ե մարգարէէ մէն

10 ալ աւելի ։ Ինչու որ ասիկայ է՝ որուն համար գրուած է . ԺԱՀա ես իմ դեսպանս կը խրկեմ քու երեսիդ առջեւէն , որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջեւէդ ։

11 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , կնիկներէն ծնածներուն մէջը Ցովհաննէս մկրտիչէն մեծը ելած չէ . սակայն երկնից թագաւորութեանը մէջ

12 պիտի պզտիկը՝ անկէ մեծ է ։ Ի՛ՈՒ Ցովհաննէս մկրտիչէն օրերէն մինչև հիմա երկնից թագաւորութիւնը ուժով կ'առնուի , և ուժեղները

13 կը յափշտակեն անիկայ ։ Ի ինչու որ բոլոր մարգարէները ու օրէնքը մինչև Ցովհաննէս մարգարէութիւն ը

14 րին . Եւ եթէ կ'ուզէք ընդունիլ , անիկայ է Ե Եղիան՝ որ պիտի գար ։

15 Ե ՆԱՆ որ լսելու ականջ ունի , թող

16 լսէ ։ Բայց Ի որո՞ւ նմանցընեմ աս ազգը . կը նմանի տղոց , որ շուկաները նստելով՝ իրենց ընկերնե

17 րուն կը կանչեն , Ու կ'ըսեն . Փող նչեցուցինք ձեզի ու չպարեցիք , ողբ կարդացինք ձեզի ու չլացիք ։

18 Վասն զի Ցովհաննէսը եկաւ , ո՛չ կ'ուտէր և ո՛չ կը խմէր , ու կ'ըսեն . Դև կայ անոր ներսի դին ։

19 Որդին մարդոյ եկաւ՝ կ'ուտէ ու կը խմէ , և կ'ըսեն . Ա՛նա ուտող և արբեցող մարդ մը՝ հաւաքասէրներու ու մեղաւորներու բարեկամ . Ն և իմաստութիւնը արդարացաւ իր տղոցմէն ։

20 ՆԱՆ ատենը սկսաւ նախատել ան քաղաքները , որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներուն շատերը .

21 քանզի չապաշխարեցին . Վա՛յ քեզ Քորազին , վա՛յ քեզ Բեթսայիդա . ինչու որ եթէ Ցիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ ձեր մէջը եղան , շատոնցմէ ի՛ջուրով ու մխիրով ապաշխա

22 րած պիտի ըլլային ։ Բայց ձեզի կ'ըսեմ , Ց Ցիւրոսին և Սիդոնին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստա

23 տանին օրը՝ քան թէ ձեզի ։ Եւ դուն Կափառնայումէ՝ Ո՞ր մինչև երկինքը բարձրացած ես , մինչև դժոխքը պիտի իջնես , ինչու որ եթէ Սոդոմի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ քու մէջդ եղան , իբաւ որ մինչև աս օրս դեռ պիտի

24 մնար ։ Բայց ձեզի կ'ըսեմ՝ որ Ն Սոդոմացւոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը , քան թէ քեզի ։

25 ՅՆոյն ժամանակին պատասխան տուաւ Ցիսուս ու ըսաւ . Շնորհակալ եմ քեզմէ՝ ով Հայր՝ Տէր երկնի և երկրի , Ո՛ր աս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն և գիտուններէն , ու Ն տղոց յայտ

26 նեցիր ։ Ա՛յո՛ ով Հայր , ինչու որ

Ցամք Տեառն 31

ՅՄԱՂ. Գ. 1 ։ ՄԱՐ. Ա. 2 ։ ՂՈՒ. Ա. 76 ։ Է. 27 ։

ԻՂՈՒ. ԺԶ. 16 ։

ԼՄԱՂ. Դ. 3 ։

Ի ՄԱՂ. Գ. 5 ։ ԳԼ. ԺԵ. 12 ։ ՂՈՒ. Ա. 17 ։

ՅԳԼ. ԺԳ. 9 ։ ՂՈՒ. Ը. 8 ։ ՑԱՍ. Ր. Ի. 11, 17, 29 ։ Գ. 6, 13 ։ 22 ։

Ի ՂՈՒ. Է. 31 ։

ՀԳԼ. Թ. 10 ։

Ն ՂՈՒ. Է. 35 ։

ՂՈՒ. Ժ. 13 ։ ՃԱ. ։

ՀՑՈՒ. Գ. 7, 8 ։

ՃԳԼ. Ժ. 15 ։ ՀԵՐ 24 ։

Յ ՏԵ՛ՍՆ ԵՍ . ԺԴ 13 ։ ՈՂԲ. Բ. 1 ։

ՆԳԼ Ժ. 15 ։

ՂՈՒ. Ժ. 21 ։

Ի ՏԵ՛Ս ՍԱՂ. Բ. 2 ։ Ա ԿՈՐ. Ա. 19, 27 ։ Բ Ս ։ Բ ԿՈՐ. Գ. 14 ։

ՂԳԼ. ԺԷ. 17 ։

Ցամի Տեառն
31

ԳԼ. ԻԲ. 18։ Ղ.Ա Ժ 22։ Ց՟Ն. գ. 35։ Ժգ. 3. ԺԷ. 2։ ա Կոր ԺԷ. 27։

ԼՑ՟Ն. ա. 18։ ղ. 46։ Ժ. 15։

Ա Ցո՟Ն ԺԳ. 15։ Փիլ. բ 5։ ա Պետ. բ. 21։ ա Ց՟Ն. բ. 6։

Ա Ջամ. Թ. 9՝ Փիլ. բ 7. 8։

Ելեր՟մ. ղ. 16։

Ա Ց՟Ն. ծ. 3։

ՍՐՕՐ ԻԳ. 25։ Մար. բ. 23։ Ղուկ. ղ. 1։

Բ ա Թագ. իա. 6։

Է Ել ԻԹ. 30։ Ղև. իգ 5։

Ե Ել ԻԹ 32 33։ Ղև ը 31։ իգ 9։

Ե Թու. իբ. 9 Ց՟Ն. է. 22։

ԵՐՄՆ ղ. 18։ Մաղ. գ 1։

Ի Ոպս ղ. 6։ ՄԻԲ. ղ. 6. 7. 8։ ԳԼ. Թ. 18։

ԸՄԱՐ գ 1։ Ղուկ. ղ 6։

ՔՂուկ ԺԳ. 14։ Ժգ 3։ Ց՟Ն. Թ 16։

Ա Տե՟ս ԵԼ. իգ. 4. 5։ Բ Օր. իբ. 4։

քու առջիդ ասանկ հաճելի եղաւ։
27 Ես Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս ու Մկը չ'ճանչնար Որդին՝ բայց Հայրը և Մկը չ'ճանչնար Հայրը՝ բայց Որդին և ան՝ որուն
28 որ Որդին կ'ուզէ յայտնել։ Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ և ես ձեզ պիտի հանգչեցնեմ։
29 Իմ լուծս ձեր վրայ առէք. – և ինծմէ սորվեցէք՝ որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և Ձեր անձերուն հանգստութիւն պիտի
30 գտնէք։ Որովհետև իմ լուծս քաղցր է և իմ բեռս թեթեւ։

..

ԳԼ. ԺԲ

1 Ջրիստոս կը յանդիմանէ փարիսեցւոց կուրութիւնը շաբաթ օրուան վրայով։ 3 Մուրը Գիրքերով. 9 ժողովով. 13 և հրաշքով մը. 22 Կոյր ու համր դիւահար մը կը բժշկէ։ 31 Կ'իմացընէ թէ Մուրը Հոգիին դէմ եղած չարախօսութիւնը պիտի չներուի. 36 և թէ դատաստի իսօսքերու համար հաշիւ պիտի տրուի։ 38 Կը յանդիմանէ անհաւատները որ նշան կը խնդրեն. 49 և կը ցուցնէ թէ ով է իր եղբայրը՝ իր քոյրը և իր մայրը։

1 Ա՚ն ատենը Յիսուս շաբաթ օրը գնաց արտերուն միջէն և իր աշակերտները անօթեցան, ու սկսան ցորէնէ հասկեր փրցընել և ուտել։
2 Բայց փարիսեցիները երբոր տեսան, ըսին անոր. Ահա քու աշակերտներդ կը գործեն ինչ որ արժան չէ շաբաթ օրը գործել։
3 Ան ալ անոնց ըսաւ. Չէ՞ք կարդացեր դուք Դաւիթին ըրածը երբոր անօթեցաւ ինքը ու անոնք որ իր
4 հետն էին, ինչպես մտաւ Աստուծոյ տունը, և հառաջաբերութեան հացերը կերաւ, որ ոչ իրեն օրինաւոր էր ուտել, և ոչ անոնց որ իր հետն էին, Բայց միայն քահանաներուն։
5 Կամ թէ Օրէնքին մէջը չէք կարդացեր, որ քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ
6 են։ Բայց ձեզի կ'ըսեմ որ աս տեղը Տաճարէն մեծ Մկը կայ
7 Եւ թէ որ գիտնայիք թէ ինչ ըսել է, Ողորմութիւն կ'ուզեմ ու չէ թէ զոհ, ան ատենը անպարտները չէիք դատապարտեր
8 Քանզի Որդին մարդոյ շաբաթին տէրն է։
9 Ընդ անկէ երթալով՝ եկաւ ա-
10 նոնց ժողովարանը։ Եւ հոն Մկ մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած էր. և հարցուցին անոր՝ ու ըսին թէ Շաբաթ օրը բժշկել արժան է որ անոր վրայով ամբաստանուին։
11 Թիւն ընէն։ Ան ալ ըսաւ անոնց. Ձեզմէ ո՞ր մարդը կայ՝ որ Մկ ոչխար մը ունենայ, և անիկայ շաբաթ օրը փոսի Մէջ իյնայ պիտի չբռնէ՞ ու վեր հանէ զանիկայ։
12 Արդ որչափ աւելի է մարդը ոչխարէն աւելին շաբաթ օրը բարի
13 գործել արժան է։ Ան ատենը ըսաւ ան մարդուն. Երկընցուր ձեռքդ ան ալ երկընցուց, ու ան՝
14 ջացաւ Մկալէն պէս։ Իսկ փարիսեցիները դուրս ելլելով՝ անոր վրայ խորհուրդ կ'ընէին թէ ինտո՞ր անիկայ կորսընցընեն։
15 Եւ Յիսուս երբոր գիտցաւ, Ետաստեցաւ անկէ. Եւ շատ ժողովուրդներ անոր ետևէն գացին,
16 ու ամէնը բժշկեց։ Եւ Նսաստիկ պատուիրեց անոնց, որ զինքը չ-
17 յայտնեն։ Որ կատարուի Եսայի մարգարէին ձեռքով ըսած
18 ուած խօսքը. Ահա իմ ծառան՝ որ ընտրեցի, Ես իմ սիրելիս՝ որուն հաւնեցաւ իմ անձս. իմ Հոգիս անոր վրայ պիտի դնեմ, ու հեթանոսներուն իրաւունքը պիտի
19 պատմէ։ Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի աղաղակէ և ոչ Մկը պիտի լսէ անոր ձայնը հրապարակներուն
20 մէջ։ Ջաղջախած եղէգը պիտի չփշրէ, ու պլպլացած պատրոյգը պիտի չմարէ. մինչև որ դատաստանը յաղթութեան հանէ։
21 Եւ հեթանոսները անոր անուանը պիտի յուսան։
22 Ա՚ն ատենը կոյր ու համր դիւահար մը բերին իրեն, և զանիկայ բժշկեց անանկ որ համրը ու կոյրը
23 խօսեցաւ ու տեսաւ։ Եւ բոլոր ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին. Արդեօք ասիկա՞յ է Դաւիթի
24 որդին։ Ւբայց փարիսեցիները երբոր լսեցին, ըսին. Ասիկայ սատանէ Բաալզեբուղ չհաներ դեւերը բայց գեւերուն Իշխանովը։
25 Եւ Յիսուս անոնց խորհուրդները իմանալով ըսաւ անոնց. Ամէն Թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած կ'աւերի և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնուած
26 չկրնար կենալ։ Եւ թէ որ Սատանան Սատանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուեցաւ. ուստի ինտո՞ր պիտի կենայ անոր Թագաւորութիւնը
27 Թիւնը։ Ու թէ որ ես Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։
28 Ւբայց թէ որ ես Աստուծոյ Հոգիովը կը հանեմ դեւերը ուրեմն Աստուծոյ Թագաւորութիւնը
29 ձեր վրայ հասած է. Կամ ինտո՞ր կրնայ մկը զօրաւոր մարդուն տունը մտնել և անոր կարասիները յափշտակել թէ որ առաջ ան զօրաւոր մարդը չկապէ, ու
30 ետքը անոր տունը կողոպտէ։ Ան որ իմ հետս չէ ինծի հակառակ

Ցամի Տեառն
31

ԳԼ. ԻԵ. 1։ Մար. գ. 6։ Ղուկ. ղ. 11։ Ց՟Ն. ե. 18։ Ժ. 39։ Ժա. 53։

ԼՏե՟ս կԼ. Ժ. 23։ Մար. գ. 7։

Ի ԳԼ. Թ. 2։ Ծ ԳԼ. Թ 30։

Ես՟. խբ. 1։ ՀԳԼ. գ. 17։ ԺԷ. 5։

Ա Տե՟ս ԳԼ. Թ. 32։ Մար. գ. 11։ Ղուկ. Ժա. 14։

ԼԳԼ. Թ. 34։ Մար. գ. 22։ Ղուկ. Ժա. 15։

Ժ ԳԼ. Թ. 4։ Ց՟Ն. բ. 25։ Ցայտ. բ. 23։

Դան. բ. 44։ է 14։ Ղուկ. ա 33։ Ժա. 20. ԺԷ. 20. 21։

Ա Ես՟. խԹ. 24։ Ղուկ. Ժա. 21. 22. 23։

Ցամի Տեառն 31

Ե Մար. գ. 25։ Ղու. ժբ. 10։ Երե. ղ. 4։ Ժ. 26։ 29։ ա Ցօհ. ե. 16։ Ղեր. է. 51։ Գլ. ժա. 19։ Ժ. 55։ Ցօհ. է. 12. 52։ Ես. Տիմ. ա. 13։ Գլ. է. 17։ Ղու. գ. 43. 44։ Ը Գլ. գ. 7։ Իե. 33։

Ղու. ղ. 45։

Գլ. Ժ. 1։ Մար. բ. 11։ Ղու. ժա. 16. 29։ Ցօհ. բ. 18։ ա Կոր. ա. 22։

Ես. Ա՛. 3. Գլ. Ժ. 4։ Մար. բ. 38։ Ցօհ. գ. 45։

Ցակ. ա. 17։

Ղու. ժա. 32։

Տե՛ս Երե. գ. 11։ Եզկ. Ժ. 51. 52։ Հոով. բ. 27։ Ցակ. գ. 5։

Թագ. Ժ. 1։ Բմն. Թ. 1։ Ղու. ժա. 31։

Ղու. ժա. 24։

Ցաբ. ա. 7։ Պաւլ. ե. Տ։

է, և ան որ ինծի հետ չժողվէր, 31 ցիրուցան կ'ընէ։ Անոր համար ձեզի կ'ըսեմ. Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց. բայց Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի 32 մարդոց. Ու ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր. բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ կ'ըսէ, պիտի չներուի անոր, ո՛չ աս աշխարհիս մէջ և ո՛չ գալ 33 ըն աշխարհին մէջ։ Կամ ծառը բարի ըրէք, ու անոր պտուղը բարի. կամ ծառը չար ըրէք, ու անոր պտուղը չար. ինչու որ ծառը պտուղէն կը ճանչցուի։ Լիմէ ըռնե ծնունդներ՝ ի՞նչպես կրնաք բարի խօսիլ, որ չար էք. ինչու որ սրտին աւելցուքէն բերանը 35 կը խօսի։ Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ. և չար մարդը՝ չար գանձէն չար բաներ կը հանէ։ 36 բայց ձեզի կ'ըսեմ, թէ ամէն դատարկ խօսքերու համար՝ որ մարդիկ կը խօսին, դատաստանին օրը 37 հաշիւ պիտի տան։ Ինչու որ քու խօսքերէդ պիտի արդարանաս, և քու խօսքերէդ պիտի դատապարտուիս։

38 Ան ատենը դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք պատասխան տուին իրեն՝ ու ըսին. Վարդապետ՝ կ'ուզենք քեզմէ նշան մը 39 տեսնել։ Անիկա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ. Չար և շնացող ազգը նշան կ'ուզէ, և նշան պիտի չտրուի անոր, բացի միայն Յովնան մարգարէին 40 նշանը։ Քանզի ինչպէս որ Յովնան իրեք օր ու իրեք գիշեր կէտ ձուկին փորին մէջն էր, անանկ ալ Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս սրտին մէջը իրեք օր ու իրեք գիշեր։ 41 Նինուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին հետ պիտի ելլեն, ու զանիկա դատապարտեն անիկայ. Ինչու որ Յովնանին քարոզութեամբը զղջին եկան. և ահա Յովնանէն մեծ մէկը կայ 42 հոս։ Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին հետ պիտի ելլէ, ու պիտի դատապարտէ անիկայ. ինչու որ ինքը երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս։

43 Ու երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անջուր տեղուանք կը պըտրտի, հանգստութիւն կը փնտռէ 44 ու չգտներ. Ան ատենը կ'ըսէ. դառնամ նորէն իմ տունս՝ ուսկից որ ելայ. և կու գայ՝ տեսնէ պարապ՝ մաքրուած ու 45 պատրաստուած։ Ան ատենը կ'երթայ՝ և իր հետը կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով՝ հոն կը բնակին. և ան մարդուն վերջը՝ առջինէն գէշ կ'ըլլայ. ասանկ պիտի ըլլայ աս չար ազգին ալ։

Ցամի Տեառն 31

Ը Երե. ղ. 4։ Ժ. 26։ Ր պաս. բ. 20. 21. 22։

46 Ու քանի որ ինքը ժողովուրդին կը խօսէր, ահա իր մայրը ու եղբայրները դուրսը կայներ էին, 47 և կ'ուզէին իր հետը խօսիլ։ Ու մէկը իրեն ըսաւ. Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, 48 և կ'ուզեն հետդ խօսիլ։ Ան ալ իրեն ըսողին պատասխան տուաւ՝ ու ըսաւ. Ո՞վ է իմ մայրս, և ո՞վ են իմ եղբայրներս։ 49 Եւ իր ձեռքը դէպ ի՛ իր աշակերտներուն երկնցընելով՝ ըսաւ. Ահա իմ մայրս և 50 իմ եղբայրներս. Վասն զի ո՛վ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կատարէ, անիկայ է իմ եղբայրս և քոյրս ու մայրս։

Մար. գ. 31։ Ղու. ը. 19. 20. 21։ Ը Գլ. Ժգ. 55։ Մարկ. ղ. 3։ Ցօհ. բ. 12։ Ե. 3։ 5։ Գործ. ա. 14։ Կոր. Թ. 5։ Գաղ. ա. 19։

Տե՛ս Ցօհ. Ժբ. 14։ Գալ. ե. 6։ ղ. 15։ Կող. գ. 11։ Երբ. բ. 11։

ԳԼ. ԺԳ

3 Սերմնացանին առակը. 13 անոր մեկնութիւնը։ 24 Որոմին, 31 մանանեխին, 33 խմորին, 44 ծածկուած գանձին, 45 մարգարիտին 47 ու ծովը ձգուած ուռկանին առակները։ 53 Քրիստոս կ'անարգուի իր հայրենակիցներէն։

1 Յն օրը Յիսուս տունէն ելլելով՝ 2 Ծովուն եզերքը նստաւ։ Եւ շատ ժողովուրդներ քովը ժողվուեցան, անանկ որ ինքը նաւը մտաւ՝ ու նստաւ. և բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ էր։ 3 Ու շատ բաներ խօսեցաւ անոնց առակներով՝ և ըսաւ.

Մար. դ. 1։ Ը Ղու. ը. 4։ Ես. ե. 3։

4 Ահա սերմ ցանողը ելաւ՝ որ սերմ ցանէ. ու երբոր կը ցաներ՝ մէկ քանիները ճամբուն քովը ինկան, և թռչուններ եկան ու կերան զանոնք։ 5 Եւ ուրիշները ապառաժոտ տեղերու վրայ ինկան՝ ուր շատ հող չկար. և շուտ մը բուսան, հողը խորունկութիւն չունենալուն համար. 6 Նաղուն համար. Սակայն արեւուն ծագած ատենը այրեցան, ու արմատ չունենալնուն համար չորցան։ 7 Եւ ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը եկան ու խեղդեցին զանոնք։ 8 Եւ ուրիշները ինկան աղէկ հողի մէջ, ու պտուղ կու տային՝ ոմն հարիւր, ոմն վաթսուն և ոմն երեսուն։ 9 Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ։

Ե Ծն. իզ. 12։ Ղեւ. ժա. 15։ Մար. դ. 9։ Ը Գլ. ժա. 25։ Ժգ. 17։ Մար. դ. 11։ ա Կոր. բ. 10։ ա Ցօհ. բ. 27։

10 Ու աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն. Ինչու համար առակներով կը խօսիս անոնց։ 11 Ան ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց. Անոր համար՝ որ ձեզի տրուած է գիտնալ երկնից թագա-

Յամի Տեառն 31

ընդ. իե. 29։ Մար. դ. 25։ Դատ. ը. 18։ Յեր. 26։

Ի՛ես. ղ. 9։ Եզեկ. ժբ. 2։ Մար. դ. 12։ Դատ. ը. 10։ Ցօհ. Ժբ.. 40։ Գոր. իբ. 26. 27։ Հռով. ժա. 8։ բ Կոր. դ. 14։ 15։ Ա Եբր. ե. 11։

Ի Գղ. ժղ. 17։ Դատ. ժ. 23։ 24։ Ցօհ. ի. 29։ Ա Եբր. ժա. 13։ ապետ. ա. 10։ 11։

Ի Մար. դ. 14։ Դատ. ը. 11։ Յեր. դ. 23։

Ի՛ես. ժը. 2։ Եզեկ. լդ. 31. 32։ Ցօհ. ե. 35։

Հգղ. ժա. 6։ բ Տիմ. ա. 15։ Յ Եբեմ. գ. 3։

Ղգղ. ժթ. 23։ Մար. ժ. 23։ Դատ. ժը. 24։ ա Տիմ. ղ. 9։ բ Տիմ. դ. 10։

ւորութեանը խորհուրդները, և 12 անոնց տրուած չէ։ Եվասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի ու պիտի աւելնայ. և ով որ չունի, ու նեցածն ալ անկէ պիտի առնուի։ 13 Անոր համար առակներով կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն՝ ու չեն տեսներ, և կը լսեն՝ ու չեն լսեր, 14 ու միտք չեն առներ։ Եւ անոնց վրայ կը կատարուի Եսայիին մարգարէութիւնը՝ որ կ'ըսէ. Ի լսելով պիտի լսէք՝ ու պիտի չհմանաք, և տեսնելով պիտի տեսնէք՝ ու պիտի 15 չտեսնէք։ Ինչու որ աս ժողովուրդին սիրտը թանձրացաւ, և ծիրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ չըլլայ թէ քնաւ աչքերով տեսնեն, և ա՛ կանջներով լսեն, և սրտով իմանան, ու գարձի գան, և ես անոնք 16 բժշկեմ։ Բայց երանի է ձեր աչքերուն՝ որ կը տեսնեն, ու ձեր ա՛ 17 կանջներուն՝ որ կը լսեն։ Քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ նշատ մարգարէներ և արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնելու՝ ու չտեսան, և ձեր լսածները լսելու՝ ու չլսեցին։

18 Ե՛հիմա դուք սերմ ցանողին ա՛ 19 ռակը լսեցէք։ Ան ամէնը որ ծթագաւորութեան խօսքը կը լսէ ու միտք չառնները, չարը կու գայ՝ ու անոր սրտին մէջ ցանուածը կը յափշտակէ. ասիկայ ան է՝ որ ճամ- 20 բուն քովը ցանուեցաւ։ Եւ ապառաժոտ տեղերու վրայ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զա- 21 նիկայ. Բայց իր մէջը արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տեւէ. ու երբոր նեղութիւն կամ հալածանք ըլլայ խօսքին համար, շուտ մը 22 կը գայթակղի։ Եւ փուշերուն մէջ ցանուածը նա՛ է՝ որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զբաղմունքը՝ և հարստութեան խաբէութիւնը խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ ան- 23 պտուղ։ Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ խօսքը, միտք կ'առնէ, և պտուղ կու տայ՝ որը հարիւր, որը վաթսուն, ու որը երեսուն։

24 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց՝ ու ըսաւ. Երկնից թագաւորութիւնը նմանեցաւ մէկ մարդու մը, որ իր արտին մէջ բա- 25 րի սերմ ցանեց. Ու երբոր մարդիկ կը քնանային, իր թշնամին եկաւ, ու ցորենին մէջ որոմ ցանեց, և 26 գնաց. Ու երբոր խոտը բուսաւ՝ ու պտուղ բերաւ, անկէ ետև ու- 27 րոմն ալ երեւցաւ։ Ուստի տանուտիրոջը ծառաները մօտեցան՝ ու

իրեն ըսին. Տէր՝ չէ՞ որ դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր, 28 ուրեմն որոմը ո՞ւակից ունի։ Եւ անիկայ ըսաւ անոնց. Մէկ թշնամի մարդ մը ըրած է ատիկայ. Ծառաները իրեն ըսին. Հիմա կ'ուզե՞ս որ երթանք անիկայ մէկդի 29 քաղենք։ Ան ալ ըսաւ. Չէ. չըլլայ թէ որոմը քաղած ատեններիդ՝ ցորենն ալ անոր հետը փրցընէք։ 30 Թող տուէք որ երկուքն ալ մինչեւ հունձքի ատենը. և հունձքին ատենը ծհնդուներուն պիտի ըսեմ. Առաջ որոմը քաղեցէք, և անիկայ խուրձ խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք։

31 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց՝ ու ըսաւ. Երկնից թագաւորութիւնը մանանեխի հատի նման է, որն որ մարդ մը առաւ՝ 32 իր արտին մէջը ցանեց. Որ ամէն սերմերէն պզտիկ է, ու երբոր աճի ամէն խոտեղէններէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ, անանկ որ՝ երկնից թռչունները կու գան, և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին։

33 Ուրիշ առակ մըն ալ գրուցեց անոնց՝ — Երկնից թագաւորութիւնը խմորի նման է, որն որ կնիկ մը առաւ՝ իրեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև որ ամէնն ալ խմորեցաւ։

34 Ցիսուս նաս ամէն բաները առակներով խօսեցաւ ժողովուրդին, ու առանց առակի բան մը չէր խօսեր 35 անոնց. Որ կատարուի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը. Առակներով պիտի բանամ իմ բերանս. աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած բաները յառաջ պիտի բերեմ։

36 Ան ատենը Ցիսուս ժողովուրդները թողուց, տունը եկաւ. և իր աշակերտները մօտեցան իրեն՝ ու ըսին. Արտին որոմներուն առակը 37 մեկնէ մեզի։ Ան ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց. Բարի սերմը ցանողը Որդին մարդոյ է. 38 Եւ արտը աշխարհս է. իսկ բարի սերմը անոնք են, որ թագաւորութեանը որդիքն են. բայց որոմը 39 չարին որդիքն են. Եւ թշնամին՝ որ անիկայ ցանեց, Սատանան է. ու հունձքը՝ աշխարհիս վերջն է. և 40 ծհնդուները՝ հրեշտակներն են։ Արդ՝ ինչպես որ որոմը կը ժողվուի՝ ու կրակի մէջ կ'այրի, աշխարհիս վերջին ալ անանկ պիտի ըլլայ։ 41 Որդին մարդոյ իր հրեշտակները պիտի խրկէ, ու՝ պիտի ժողվեն անոր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւնները՝ և անոնք որ ա-

Յամի Տեառն 31

Ի՛ես. ղ. 12։

Ի Մար. դ. 33. 34։

Ի Ղուկ. ժգ. 20։

Ի Մարկ. դ. 33. 34։

Ի Սաղմ. հը. 2։

Ի Հռով. ժգ. 25. 26։ ա Կոր. բ. 7։ Եփես. գ. 9։ Կող. ա. 26։

Ղգղ. իդ. 14։ իբ. 19։ Մար. ժգ. 15. 20։ Ղուկ. իդ. 47։ Հռով. ժ. 18։ Կող. ա. 6։

Ի Ցհն. գ. 18։ Ցօհ. ը. 44։ Գոր. ժգ. 10։ ա Ցօհ. գ. 8։

Ի Ցովել. գ. 13։ Ցայտ. ժգ. 15։

Ի Գղ. ժը. 7։ բ Պետ. բ. 1. 2։

Ցամք Տեառն 31

- ԳԼ · Գ · 12 ։ Ցայս. ժԹ. 20 ։ Ի · 10 ։ ԼԳԻ · Ը · 12 ։ Հմր 50 ։
- Դան. ԺԸ. 3 ։ ակոր. ԺԱ. 42. 43 ։
Ը Հմր 9 ։
- ՓԼ · Գ · Ի · Ե ։
- Ես. ԽԱ. 1 ։ Ցայս · Գ · 18 ։
† Առաք · Ր · 4 ։ Գ · 14 · 15 ։ Ր · 10 · 19 ։
† ԳԼ · Իր · 10 ։
† ԳԼ · Իե. 32 ։
† Հմր 42 ։
- Երգ · Է · 13 ։
Բ Գլ · Ր · 23 ։ Մար · Գ · 1 ։ Ղս · Գ · 16՝ 23 ։
† Ես. Խթ. Շ ։ Մար · Գ · 3 ։ Ղս · Գ · 23 ։ Ցօհ · Ը · 42 ։
- ԳԼ · ԺԸ · 46 ։ [illegible]
Ի Մար · ԺԵ · 40 ։
ՂԳԼ · Ժ · 6 ։ Մար · Ը · 3 ։ 4 ։ [illegible]
Ի Ղս · Գ · 24 ։ Ցօհ · Ը · 44 ։
Ը Մար · ԺԵ · 6 ։

42 Նօրէնութիւն կը գործէն, • Ու կրա-
կի ՚ոցին մէջ պիտի ձգեն զանոնք .
Լ՚հոն պիտի ըլլայ լալ՝ ու ակռաներ
43 կճըռ-ցրնել։ • Ան ատեն արևի
պէս պիտի փայլին արդարները ի-
րենց Հօրը Թագաւորութեանը
մէջ։ • Ան որ ըլելու ականջ ունի,
թող լսէ՝ ։
44 Դարձեալ երկնից Թագաւորու-
թիւնը արտի մէջ պահուած գանձի
նման է, որ անիկայ մէկ մարդ մը
գտնելով՝ կը ծածկէ . և ուրախու-
թենէն կ՚երթայ ՚ըլոր ունե-
ցածը կը ծախէ, ու • ան արտը կը
գնէ ։
45 Դարձեալ երկնից Թագաւորու-
թիւնը վաճառական մարդու մը նը-
man է, որ գեղեցիկ մարգարիտներ
46 կը փնտռէ . Եւ † մէկ պատուական
մարգարիտ մը գտնելով՝ գնաց իր
ըլոր ունեցածը ծախեց, ու զանի-
կայ գնեց ։
47 Դարձեալ երկնից Թագաւորու-
թիւնը ծովը ձգուած ուռկանի մը
նման է, որ • ամէն տեսակէն կը ժող-
48 վէ ։ Որ երբոր լեցուեցաւ՝ ցամաքը
հանեցին, ու նստան աղէկները ա-
մաններու մէջ ժողվեցին, և անլա-
49 կը դուրս ձգեցին ։ Այսպէս պիտի
ըլլայ աշխարհիս վերջը . հրեշտակ-
ները պիտի ելլեն՝ ու • արդարներուն
50 մէջէն չարերը պիտի զատեն, Եւ
† պիտի ձգեն զանոնք կրակի ՚ոցին
մէջ . հոն պիտի ըլլայ լալ ու ակ-
ռաներ կճըռ-ցրնել ։
51 Ըսաւ անոնց Յիսուս . Հասկը-
ցա՞ք աս ամէն բաները . ըսին ա-
52 նոր . Այ՛ Տէր ։ Եւ անիկայ ը-
սաւ անոնց . Անոր համար ամէն դը-
պիր՝ • ը երկնից Թագաւորութեան
աշակերտեալ է, նման է տանուտէր
մարդու մը՝ որ իր գանձէն • նոր ու
հին բաներ կը հանէ ։
53 Ու երբոր կատարեց Յիսուս աս
54 առակները, անկէ մեկնեցաւ . Ե՛ն-
եկաւ իր գաւառը, ու անոնց կը
սորվեցնէր՝ իրենց ժողովարանին
մէջը . մինչև որ կը զարմանային
անոնք՝ ու կ՚ըսէին . Ասիկայ ո՞ւսկից
ունի աս իմաստութիւնը և հրաշը-
55 ները . • Ասիկայ հիւսին որդին չէ՞ .
ասոր մայրը Մարիամ չը՞կոչուիր,
ու • ասոր եղբայրները՝ Յակոբոս, և
Յովսէս, ու Սիմոն, և Յուդա ։
56 Ու ասոր քոյրերը՝ ամէնը մեր քովը
չէ՞ն . ալ ինչը ո՞ւսկից ունի աս
57 ամէն բաները ։ Եւ անոր վրայով
Ղկը գայթակղէին . բայց Յիսուս ը-
սաւ անոնց . Ը Մարգարէ մը անպա-
տիւ չէ՝ բայց միայն իր գաւառին ու
58 իր տանը մէջ։ Եւ ՚ոհն չնո հը-
բաշ-քներ չըրաւ՝ անոնց անհաւա-
ստութեանը համար ։

ԳԼ · ԺԴ

1 Հերովդեսին կարծիքը Քրիստոսի վրայով։ 3 Յովհաննէս մկրտչին գլխատուելուն պատճա-
ռը ։ 13 Յիսուս անապատ տեղ մը կ՚երթայ, 15 ուր տեղ հինգ հազար հոգի կը կերակրէ հինգ նկանակով ու երկու ձուկով . 22 ծովուն վրայ քալելով իր աշակերտներուն կ՚երթայ, 34 և գիւնեսարեթի ցամաքը կ՚ելլով հիւանդ-
ները կը բժշկէ՝ անոնց իր հանդերձին ծայրին դպչելովը ։

Ցամք Տեառն 32

1 Յն ժամանակը • Հերովդէս չորրոր-
դապետը Յիսուսին համբաւը
2 լսեց ։ Ու իր ծառաներուն ըսաւ .
Անիկայ Յովհաննէս մկրտիչն է .
անիկայ մեռելներէն յարութիւն ա-
ռած է, և անոր համար հրաշքներ
կ՚ըլլան անով ։
3 Քանզի † Հերովդէս՝ Յովհաննէսը
բռներ, զանիկայ կապեր ու բանտը
դրեր էր՝ իր եղբօրը Փիլիպպոսին
կնկանը Հերովդիային համար ։
4 Վասն զի Յովհաննէս անոր կ՚ըսէր .
• Քեզի օրինաւոր չէ անիկայ ունի ու-
5 նենալ ։ Ուստի կ՚ուզէր զանիկայ
սպաննել, բայց ժողովուրդէն կը
վախնար . • ինչու որ իբրև մար-
6 գարէ կ՚ընդունէին զանիկայ ։ Ու
երբոր Հերովդեսին ծննդեան օրը
եղաւ, Հերովդիային աղջիկը խաղաց
հ-ն-դ-ե-ս -ր-հ-ի-ն մէջ, ու Հերովդե-
7 սին հաճելի եղաւ ։ Ուստի երդու-
մով խոստացաւ՝ որ տայ անոր ինչ
8 որ ուզելու ըլլայ ։ Եւ անիկայ ա-
ռաջ իր մօրմէն խրատուելով ըսաւ .
Տուր ինծի հոս Յովհաննէս մկրտ-
չին գլուխը սկուտեղի մը վրայ ։
9 Եւ թագաւորը տրտմեցաւ . բայց
երդումներուն համար՝ և իր հետը
նստողներուն համար՝ հրաման ըրաւ
10 որ տրուի ։ Եւ ՚ղրկելով՝ Յովհաննէսը բանտին մէջ գլխա-
11 տեց ։ Եւ անոր գլուխը սկուտե-
ղով բերուեցաւ ու տրուեցաւ
աղջիկանը . ան ալ իր մօրը տա-
12 րաւ ։ Եւ անոր աշակերտները ե-
կան՝ ու մարմինը վերցրնելով թա-
ղեցին . և գացին Յիսուսին պատ-
մեցին ։
13 Ու † երբոր լսեց Յիսուս, անկէ
նաւով անապատ տեղ մը գնաց ա-
ռանձին . երբոր լսեցին ժողովուրդ-
ները՝ ոտքով անոր եւսէն գացին
էրէնց քաղաքներէն ։
14 Ու • երբոր դուրս ելաւ, շատ ժո-
ղովուրդ տեսնելով՝ ՚ղսղճայ անոնց
վրայ, ու անոնց հիւանդները բժշկ-
կեց ։
15 † Եւ. իրիկուան դէմ՝ իր աշա-
կերտները իրեն եկան, ու ըսին .
Հոս անապատ տեղ մըն է, և ժա-
մանակը ուշացած է . արձակէ ժո-
ղովուրդները, որ գեղերը երթան՝
16 ու իրենց կերակուր գնեն ։ Եւ
Յիսուս անոնց ըսաւ . Հարկ չէ

Ցամք Տեառն 32

Ցօ · Տ · 32 սկզբը
- Մար · Ը · 14 ։ Ղս · Թ · 7 ։
Ցօ · Տ · 30
Բ Մար · Ը · 17 ։ Ղս · Գ · 19, 20 ։
Ցօ · Տ · 31
† Ղս · Ժը · 16 ։ Ի · 21 ։
† ԳԼ · Իա · 26 ։ Ղս · Թ · 6 ։
Ցօ · Տ · 32
Ի ԳԼ · Ժ · 23։ Ժը · 15 ։ Մար · Ը · 32 ։ Ղս · Թ · 10 ։ Ցօ՛ · Ը · 1 · 2 ։
= Ո՛ռաք երբ-
որ Յիսուս
ՂԳԼ · Բ · 36 ։ Մար · Ը · 34 ·
Ի Մար · Ը · 35 ։ Ղս · Թ · 12 ։ Ցօ՛ · Ը · 5 ։

Ցամի Տեառն 32

որ ատոնք երթան . դուք տուէք
17 ատոնց որ ուտեն ։ Անոնք ալ ըսին անոր . Հոս սոսկ Բառ մը չունինք , բայց միայն հինդ նկանակ ու երկու
18 ձուկ ։ Ու ըսաւ անոնց . Հոս ինծի
19 բերէք զանոնք ։ Եւ հրամայեց բոլոր ժողովուրդները խոտին վրայ նստին . և հինդ նկանակը ու երկու ձուկը առաւ , ու դէպ ի երկինքը նայելով՝ օրհնեց . ու կտրեց նկանակները՝ աշակերտներուն տուաւ , և աշակերտները ժողո-
20 վուրդին ։ Եւ ամէնքը կերան ու կշտացան , և տասներկու կողով լեցուն՝ աւելցած կտորեանքները
21 վերցուցին ։ Եւ անոնք որ կերան , հինգ հազարի չափ երիկ մարդիկ էին՝ կիներէն և տղաքներէն զատ ։

Ո Ոմանց Եւ Ցիսուս

22 Եւ շուտ մը աշակերտները արտորցուց որ նաւը մտնեն , և իրմէ առաջ մակաղ կողմը անցնին , մինչև որ ինքը ժողովուրդները արձակէ ։
Բ Մար . է . 46 ։
23 Եւ ժողովուրդները արձակելէն ետքը՝ ինքը լեռը ելաւ առանձին աղօթք ընելու . ու երբոր իրիկուն
24 եղաւ , հոն մինակ էր . իսկ նաւը արդէն ծովուն մէջտեղը այլևայծու-թեան մէջ էր , ինչու որ հովը դէմ
25 էր ։ Ո-դիւերուան չորրորդ պահուն Ցիսուս դէպ ի անոնց դնաց՝
26 ծովուն վրայ քալելով ։ Եւ աշակերտները երբոր անիկայ տեսան՝ որ ծովուն վրայ կը քալէր , խռովեցան , և ըսին թէ աչքի երևոյթ
27 բան մըն է . ու վախերնուն կանչեցին ։ Բայց անոնց՝ ու ըսաւ . Քաջ
28 եղէք՝ ես եմ , մի վախնաք ։ Պետրոս պատասխան տուաւ անոր՝ ու ըսաւ . Տէր՝ թէ որ դուն ես , հրամայէ ըլլ ինծի որ քեզի գամ ջու-
29 րերուն վրայէն ։ Ան ալ ըսաւ . Եկուր . Պետրոս ալ նաւէն իջաւ , ջուրերուն վրայէն քալեց որ Ցիսուսին գովը երթայ . բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ , ու
30 երբոր սկսաւ ընկղմիլ , աղաղա-
31 կեց ու ըսաւ ։ Տէր՝ ազատէ զիս ։ Եւ Ցիսուս շուտ մը իր ձեռքը երկընցուց , բռնեց զանիկայ՝ ու անոր ըսաւ . Թե՛րահաւատ՝ ինչու երկ-
32 մեցար ։ Ու երբոր նաւը ե-
33 լան , հովը դադրեցաւ ։ Եւ անոնք որ նաւուն մէջն էին , եկան երկրպագութիւն ըրին անոր՝ ու ըսին . Իրաւցընէ Աստուծոյ Որդի ես դուն ։

Ա Ցաղ . բ . 7 ։ Մար . ա . 1 ։ Գա . ժգ . 18 ։ Իկ . 63 ։ Ղու . է . 42 ։ Ցօհ . ա . 49 ։ է . 70 ։ ժա . 27 ։ Գոր . ը . 37 ։ Հռով . ա . 4 ։ Ի Մար . է . 53 ։

Ե Գա . ժե . 36 ։

Բոլոր հիւանդները անոր բերին .
36 Եւ կ՚աղաչէին անոր , որ միայն իր հանդերձին քղանցքին դպչին . և ՚ի անոնք որ դպան՝ բժշկուեցան ։

ԳԼ . ԺԵ

3 Քրիստոս կը յանդիմանէ գպիրները և փարիսեցիները՝ որոնք իրենց աւանդութեանց պատճառաւ զանց կ՚ընէին Աստուծոյ պատուիրանքները . 11 ու կը սորվեցնէ թէ բերանէն մտած բանը մարդս չպղծեր . 21 կը բժշկէ քանանացի կնկանը աղջիկը . 30 և ուրիշ շատ ժողովուրդներ . 32 Հօրմէ նկատակով ու քանի մը Հակով չորս Հազար երիկ մարդիկ կը կշտացընէ . կնկիներէն ու տղաքներէն ՚ի զատ ։

1 Ան ատենը Ցիսուսին եկան գպիրները ու փարիսեցիները՝ որ Երուսաղէմէն էին , ու ըսին .
Ա Մար . է . 1 ։
2 Ինչու՞ քու աշակերտներդ չեն ներուն աւանդութիւնը զանց կ՚ընեն . ինչու որ ձեռքերնին չեն
Բ Մար . է . 5 ։ Ե Կող . բ . 8 ։
3 լուար , երբոր հաց կ՚ուտեն , ան ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Հապա դուք ինչու Աստուծոյ պատուիրանքը զանց կ՚ընէք՝ ձեր աւանդութեանը պատ-
4 ճառաւ ։ Քանզի Աստուած պատուիրեց՝ ըսելով . Պատուէ հայրդ ու
5 մայրդ պատուէ . Եւ Թէ՝ որ էր հայրը կամ մայրը անիծէ , մահով
6 թող մեռնի ։ Բայց դուք կ՚ըսէք . Ով որ էր հօրը կամ մօրը ըսէ թէ՝ Ո՛վ որ քեզ ինծմէ պիտի շահիս , Աստուածայ պատրաստ ընծայ է . ու թէ ոչ իր հայրը կամ իր մայրը չպատուէ , ոչ ալ է և այսպէս ձեր աստուածոյ պատուիրանքը խափանած
7 էք ։ Կեղծաւորներ՝ աղէկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Եսայի
8 ասիկա՝ ու ըսաւ . Այս ժողովուրդը շրթունքներովը զիս կը պատուէ . բայց իրենց սիրտը հեռա-
9 ցած զատուած է ինծմէ . Ու պարապ տեղը զիս կը պաշտեն , Իմաստուցած բաները էրէս վարդասեութիւն սորվեցընելով ։
10 Եւ ժողովուրդները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց . Լսեցէք ու
11 միտք առէք . Չէ՛ թէ ինչ որ բերանը կը մտնէ՝ կը պղծէ մարդը , հապա ինչ որ բերնէն կ՚ելլէ՝ անիկայ կը պղծէ մարդը ։
12 Ան ատենը իր աշակերտները եկան՝ ըսին իրեն . Գիտես որ փարիսեցիները գայթակղեցան՝ երբոր
13 լսեցին ան խօսքը ։ Ան ալ պատասխան տալով ըսաւ . Ամէն տունկ որ իմ երկնաւոր Հայրս չէ
14 տնկեր , պիտի խլուի ։ Թող մեռնի անոնք . Երէսէ կոյր են՝ կոյրերու առաջնորդ . իսկ Թէ որ կոյրը կոյրին առաջնորդէ , երկուքն
15 ալ փոսը պիտի իյնան ։ Եւ Պետրոս պատասխան տալով՝ անոր

Ցամի Տեառն 32

Ե Գա . ի . 20 ։ Մար . դ . 10 ։ Ղու . ը . 19 ։ Գոր . ժթ . 12 ։

Ա Թես . ի . 12 ։ Գա . ժթ . 3 ։ Բօր . ե . 16 ։ Առակ . իդ . 22 ։ Եփես . գ . 2 ։ Ի Ել . իա . 17 ։ Ղե . ի . 9 ։ Բօր . իէ . 16 ։ Առակ . ի . 20 ։ Լ . 17 ։ Ղ Մար . է . 11 ։ 12 ։ Ի Մար . է . 6 ։ Ըէս . ի . 13 ։ Եզկ . ի . 31 ։ Ի Ա Տիմ . դ . 1 ։ Ա Թես . ե . 21 ։ Ի Գոր . ժ . 15 ։ Հռով . ժգ . 14 ։ 17 ։ 20 ։ Տիմ . գ . 4 ։ Տիտ . ա . 15 ։

Ա Ցաղ . ժ . 2 ։ ա Կոր . գ . 12 ։ Ե ։ Ի Ես . ի . 16 ։ Մտ . բ . 8 ։ Գա . իգ . 16 ։ Ղու . գ . 39 ։ Ի Մար . է . 17 ։

Ցամք Ցետառն 32

ՂԿ. ԺՂ. 9. ՄԱՐ. Ի. 18. ՀԱԿՈԲ. Գ. 13. ՅԱԿ. Գ. 6.

ՂԵՒ. Գ. 5. Ը. 21. ՆԱՀԱ. Գ. 14. ԵՐԵՄ. ԺԷ. 9. ՄԱՐ. Է. 21.

ՅՄԱՐ. Է. 24.

ՅԳԼ. Ժ. 5. 6. ՓՍՂ. Գ. 25. 26. ԺԳ. 46. ՀԱՄԲ. Ժ. 8.

ՅԳԼ. Է. 6. ՓԻԼ. Գ. 2.

ՆՄԱՐ. Է. 31. ՂԿ. Գ. 18. ԵՍ. ԼԱ. 5. 6. ԴԱ. ԺԱ. 5. ՂՈՒԿ. Է. 22.

ՂՄԱՐ. Ը. 1.

րսաւ. Արկինէ մեզի աս առակը։ 16 Ըսաւ Յիսուս. Ի՞նդ՞ր ալ տա- 17 կաւին անմիտ էք. Ու չէք հաս- կընար. Թէ համն ինչ որ բերանը կը մտնէ, փորը կ'երթայ ու ար- 18 տաքնոցը կը ձգուի. Բայց ներբնէն ելլած բաները սրտէն յառաջ կու գան. և անոնք կը պղծեն մարդը։ 19 Ինչու որ սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայու- թիւններ, հայհոյութիւններ։ 20 Ասոնք են որ կը պղծեն մարդը. բայց անլուայ ձեռքով հա՛յ.ուտելը չպղծեր մարդը։

21 Եւ Յիսուս անկէ ելլելով Տիւ- րոսի ու Սիդոնի կողմերը գնաց։ 22 Եւ ահա քանանացի կնիկ մը ան սահմաններէն ելած կ'աղաղակէր անոր ու կ'ըսէր. Ողորմէ՛ ինծի Տէր որդի Դաւթի, աղջիկս դեւէն 23 սաստիկ կը չարչարուի։ Եւ ինքը բնաւ պատասխան մը չտուաւ ա- նոր. ու իր աշակերտները մօտե- նալով կ'աղաչէին իրեն ու կ'ը- սէին. Արձակէ ատիկայ, վասն զի 24 մեր ետեւէն կ'աղաղակէ։ Եւ ինքը պատասխան տուաւ՝ ու ըսաւ. Ես չեմ եղած բայց միայն Իսրայէլի տանը կորսուած ոչխար- 25 ներուն։ Եւ անիկայ եկաւ երկրը- պագաւ ըսելով՝ Տէր օգնէ ինծի։ 26 Ան ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ. Ա- ղէկ չէ տղոց հացը առնել ու 27 շներուն ձգել։ Եւ անիկայ ը- սաւ. Այո՛ Տէր. ինչու որ շու- ներն ալ իրենց տիրոջը սեղանէն թափած փշրանքներէն կը կերակ- 28 րուին։ Անատենը Յիսուս պա- տասխան տուաւ անոր՝ ու ըսաւ. Ո՛վ կին՝ քու հաւատքդ մեծ է. քու ուզածիդ պէս ըլլայ քեզի. և նոյն ժամէն անոր աղջիկը բժշկուե- ցաւ։

29 Ու Յիսուս անկէ գնաց՝ Գալի- լեայի ծովեզերքը եկաւ, և լեռը 30 ելլելով՝ հոն նստաւ։ Եւ շատ ժողովուրդներ իրեն եկան, որ ի- րենց հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ, և ուրիշ շատեր. ու ձգեցին անոնք Յիսուսի 31 ոտքը, և բժշկեց զանոնք. Անոնկ որ ժողովուրդները զարմացան, տեսնելով որ համրերը կը խօսէին, հաշմանդամները կը բժշկուէին, կաղերը կը քալէին, և կոյրերը կը տեսնէին, ու Իսրայէլի Աստուածը կը փառաւորէին։

32 Եւ Յիսուս իր աշակերտները քովը կանչելով ըսաւ. Կը խղճամ ատ ժողովուրդին վրայ. ինչու որ

հիմա իրեր օր է որ իմ քովս են, և բան մը չունին ուտելու. ու անոնք անօթի արձակել չեմ ուզեր, չըլ- 33 լայ որ ճամբան մարին։ Իսկ աշակերտները անոր ըսին. Մենք ա- նապատի մէջ հացկից պիտի ունե- նանք այնչափ հաց որ այսչափ 34 բազմութիւնը կշտացընենք։ Եւ Յիսուս ըսաւ անոնց. Քանի՞ նկա- նակ անոնք ալ ըսին. Եօթը, ու քանի մը մանր ձու- 35 կեր։ Եւ հրաման ըրաւ ժողո- վուրդին որ գետնին վրայ նստին։ 36 Ու եօթը նկանակը և ձուկերը առաւ, գոհացաւ՝ և կտրեց, ու տուաւ աշակերտներուն, աշակերտ- 37 ներն ալ ժողովուրդին։ Կերան ամենքը և կշտացան, ու եօթը զամբիւղ լեցուն աւելցած կտո- 38 րուանքները վերցուցին։ Եւ ա- նոնք որ կերան չորս հազար երիկ մարդիկ էին, կնիկներէն և տղաք- ներէն ի զատ։

39 Ու երբոր ժողովուրդը արձա- կեց, նաւը մտաւ, ու Մագդա- ղայի սահմանները եկաւ։

ԳԼ. Ժ.Ձ

1 Փարիսեցիք Նշան մը կ'ուզեն։ 6 Յիսուս կը պատուիրէ իր աշակերտներուն՝ որ զգոյշ ըլլան փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն։ 13 Ժողովուրդին կարծիքը Քրիստոսի վրայով։ 16 և Պետրոսի դաւանութիւնը։ 21 Յիսուս կ'իմացընէ աշակերտներուն իր մասը։ 23 կը յանդիմանէ Պետրոսը՝ որ կ'ուզէր զեմ կե- նալ։ 24 և իրեն հետեւիլ ուզողները կը խրա- տէ որ իրենց խաչը կրեն։

1 Ան՝ փարիսեցիները ու սադուկե- ցիները քովը եկան՝ փորձելով իրմէն կ'ուզէին որ երկինքէն նշան 2 մը ցուցընէ իրենց։ Անոնկ պա- տասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց. Երբոր իրիկուն կ'ըլլայ, կ'ըսէք թէ՝ Պարզ պիտի ըլայ, ինչու որ 3 երկինքը կարմրած է. Եւ առ- տուանց՝ Ձ.յսօր մրրիկ պիտի ըլայ, ինչու որ երկինքը միգապատ ու կարմրած է։ Կեղծաւորնե՛ր եր- կինքին երեսը քննելը գիտէք, բայց ժամանակներուն նշանները չէք 4 կրնար գիտնալ։ Բ Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ. և նշան պիտի չտրուի անոր, բայց Յովնան մարգարէին նշանը. և թողուց անոնք՝ ու գնաց։

5 Ու երբոր իր աշակերտները մէ- կալ կողմը անցան՝ հաց առնելու 6 մոռցեր էին։ Եւ Յիսուս անոնց ըսաւ. Տեսայեղէք ու զգուշացէք փարիսեցւոց և սադուկեցւոց խմո- 7 րէն։ Անոնք մէջերնին կը խորհէին ու կ'ըսէին, Թէ հաց չբերինք 8 հետերնիս։ Իսկ Յիսուս գիտնալով՝ ըսաւ անոնց. Մէջերնիդ ինչո՞ւ կը խորհիք Թէ.

Ցամք Ցետառն 32

ՂԴ ԹՈՒՔ Դ. 43.

ՂԳԼ. ԺԴ. 19. ՍԱՂԹ. 13. ՂԵՒ. ԻԲ. 19.

ՄԱՐ. Ը. 10.

ԳԼ. ԺԲ. 38. ՄԱՐ. Ը. 11. ՂՈՒԿ. ԺԱ. 16. ԺԲ. 54—56. Ա ԿՈՐ. Ա. 22.

ԲԳԼ. ԺԲ. 39.

ՅՄԱՐ. Ը. 14.

ՏՂՈՒ. ԺԲ. 1.

Ցամք Տեառն
32

Ա ԳԼ · ժգ · 17 · Ցօհ · գ · 9 · ՚ Ղ ԳԼ · ժե · 34 ·

Է Մար · ը · 27 · Ղու · Թ · 18 ·

Ը ԳԼ · ժգ · 2 · Ղու · Թ · 7, Տ · 9 ·

Բ Գւ · ժգ · 33 · Մար · ը · 29 · Ղու · Թ · 20 · Ցօհ · գ · 70 · ժա · 27 · Գոր · ը · 37 · Թ · 20 · ա Ցօհ · դ · 15 · ե · 5 · Երե · ա · 2 · 5 ·

Ժ Նփե · ը · Տ · Ի ա Կոր · ը · 10 · Գող · ա · 16 ·

Ւ Ցօհ · ա · 42 · * ՚ի՛ ՎՀՄ

Ի Նփե · ը · 20 · Ցայս · իա · 14 ·

Ձ Ցոր · ւը · 17 · Ասղ · Թ · 13 · ՁԷ · 18 · Նա · ւը · 10 ·

Լ Գւ · ժը · 18 · Ցօհ · ի · 23 ·

Ճ Գւ · ժե · 9 · Մար · ը · 30 · Ղու · Թ · 21 ·

Յ Գւ · Ի · 17 · Մար · ը · 31 · Թ · 31 · ժ · 33 · Ղու · Թ · 22 · Ձը · 31 · Իչ · 6 · 7 ·

Ն Տես ը Թագ · ժԹ · 22 ·

Շ Հռով · ը · 7 ·

բահաւատները , Թէ հաց չառիր ։ 9 Ի Տակաւին չէիք հասկըներ և չէիք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին , ու քանի կողով վերցուցիք ։ 10 Ւ Ոնչ ալ եօթը նկանակը՝ չորս հազարին , ու քանի զամբիւղ վերցուցիք ։ 11 Յուդիք ։ Ի՞նչպէս չէք հասկըներ՝ Թէ ես հացի համար չըսի ձեզի՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմոր ։ 12 Բէն զգոյշ կենալ , Ըն առնէը հասկըցան՝ որ հացի խմորէն զգուշանալ չըսաւ , հապա փարիսեցւոց ու սադուկեցւոց վարդապետութենէն ։

13 Եւ Ցիսուս Փիլիպպոսի կեսարիայի կողմերը երթալով , իր աշակերտներուն հարցուց՝ ու ըսաւ ։ Ի Մարդիկ ո՞վ կ՚ըսեն Թէ եմ ես 14 Որդի մարդոյ ։ Ու անոնք ըսին ։ Ը Ոմանք կ՚ըսեն Թէ Յովհաննէս մկրըտիչն է , ուրիշներ՝ Եղիան , ուրիշներն ալ Երեմիան , կամ մարգարէներէն մէկը ։ Ըսաւ անոնց ։ 15 Հապա դուք ինչի համար ո՞վ կ՚ըսէք Թէ եմ ։ 16 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ՝ ու ըսաւ ։ Բ Դուն ես Քրիստոս՝ կենդանի Աստուծոյ Որդին ։ 17 Եւ Ցիսուս պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր ։ Երանի՛ քեզ Սիմոն Յովհանէին որդին , Թ՚ինչու որ մարմինը և արիւնը քեզի չյայտնեց Ասիկ , հապա իմ Հայրս՝ որ երկինքն է ։ 18 Եւ ես քեզի կ՚ըսեմ որ Դուն * Պետրոս ես , ու Ես վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս , և Թ դժոխքին դռները անկկայ պիտի յաղթեն ։ 19 Ես երկնից թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ ։ և ինչ որ երկրի վրայ կապես , երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ ։ ու ինչ որ երկրի վրայ արձակես , երկինքի մէջ արձակ ըլլայ ։ 20 կուսած պիտի ըլլայ ։ Ըն առնէը աշակերտներուն պատուիրեց , որ մէկու մը չըսեն Թէ ինքը Քրիստոս է ։

21 Անկէ ետև սկսաւ Ցիսուս իր աշակերտներուն յայտնել Թէ պէտք է որ ինքը Երուսաղէմ երթայ , ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն և քահանայապետներէն ու դպիրներէն , և սպանուի , ու երրորդ օրը յարութիւն առնէ ։ 22 Եւ Պետրոս մէկդի առաւ զանիկայ , և սկսաւ յանդիմանել զանիկայ՝ ու ըսել ։ Քաւ լիցի քեզ Տէր՝ այս բանը քեզի չըլլայ ։ 23 Եւ ինքը դառնալով՝ Պետրոսին ըսաւ ։ Երթա դնա Ջնատանայ , Թ՚ինծի գայթակղութիւն ես դուն ։ ինչու որ Աստուծոյ բանները չես մտածեր հապա մարդոց բանները ։

24 Յետև ատենը Ցիսուս իր աշակերտներուն ըսաւ ։ Թէ որ մէկը իմ ետևէս գալ կ՚ուզէ , Թողլ իր անձը ուրանայ , և իր խաչը վերցուցնէ , ու իմ ետևէս գայ ։ 25 Ապան զի ով որ կ՚ուզէ իր անձը ապրեցնել , պիտի կորսընցնէ անիկայ ։ և ով որ ինծի համար իր անձը կը կորսընցնէ , պիտի գտնէ 26 անիկայ ։ Քանզի ինչ կը շահի մարդ մը՝ Թէ որ բոլոր աշխարհը վաստկի , և իր անձը կորսընցընէ ։ կամ Ինչ անձին համար ինչ ազատվ պիտի տայ մարդ ։ 27 Վասն զի Ըորդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ՝ իր հրեշտակներուն հետ ։ և ան ատենը ամէն մէկուն իր գործքերուն համեմատ հատուցում պիտի ընէ ։ 28 Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան որոնք մահուան համը պիտի չառնեն , մինչև որ տեսնեն Որդին մարդոյ իր Թագաւորութիւնովը եկած ։

ԳԼ · ժԵ

1 Քրիստոսի այլակերպութիւնը ։ 14 Քրիստոս կը բժշկէ լուսնոտը ։ 22 կը նախամաչնէ իր չարչարանքները ։ 24 ու երկդրամանոց տուրքը կը հատուցանէ ։

1 Եւ Վեց օրէն ետև Ցիսուս իր հետը առաւ պետրոսը ու Ցակոբոսը և անոր եղբայրը Յովհաննէսը , ու անոնք մէկ բարձր լեռ մը 2 Հանեց առանձին ։ Եւ անոնց առջևը պլլակերպեցաւ , ու իր երեսը փայլեցաւ արեգակի պէս , ու իր հանդերձները ձնի պէս լուսով 3 պէս ։ Եւ ահա երևցան անոնց Մովսէս ու Եղիա , ու իր հետը կը 4 խօսէին ։ Պատասխան տուաւ Պետրոս՝ ու ըսաւ Ցիսուսին ։ Տէր՝ աղէկ է որ հոս կենանք ։ Թէ որ կ՚ուզես , իրեք խրճիթ շինենք հոս ։ մէկը քեզի և մէկը Մովսէսին՝ 5 ու մէկը Եղիային ։ Եւ էքանի որ անիկայ կը խօսէր , ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ ։ և ահա ամպէն ձայն մը եկաւ՝ ըսելով ։ Ի Ատիկայ է իմ սիրելի Որդիս , Ո որուն հաւներ եմ ։ Եա՛ 6 տոր մտիկ ըրէք ։ Ղ Աշակերտները երբոր լսեցին , երևնտուն վրայ ինկան 7 կան , ու խիստ վախցան ։ Եւ Ցիսուս մտնելով Է պաս անոնց ու ըսաւ ։ Ելէք ու մի վախնաք ։ 8 Աչքերնին վերցուցին ու մէկը չտեսան , բայց միայն Ցիսուսը ։

9 Ու երբոր ան լեռնէն վար կ՚իջնէին , Ճ Ցիսուս պատուիրեց անոնց՝ ու ըսաւ ։ Ատ տեսիլքը մարդու մը մըտրցիք , մինչև Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ ։ 10 Ա՛ւ նշներէն յարութիւն առնէ ։ Եւ

Ցամք Տեառն
32

Յ Գւ · ժ · 38 · Մար · ը · 34 · Ղու · Թ · 23 · ժգ · 27 · Գոր · ժգ · 21 · ա Թես · գ · 3 · բ Տիմ · գ · 12 ·

Ր Ղու · ժե · 33 · Ցօհ · ժր · 25 ·

Ն Սաղ · խԹ · 7, 8 ·

Շ ԳԼ · իշ · 64 · Մար · ը · 38 · Ղու · Թ · 26 ·

Ո Դան · Է · 10 · Զար · ժգ · 5 · Գւ · ի Է · 31 · Ցաւգ · 14 ·

Չ Ցոր · ւԴ · 11 · Սաղ · կր · 12 · Առակ · իգ · 12 · Երեմ · ժե · 10 · ւը · 19 · Հռով · ը · 6 · ա Կոր · գ · Տ · ր Կոր · ե · 10 · ա Պետ · ա · 17 · Ցայս · ր · 23 · իր · 12 ·

Պ Մար · ը · 39 · Ղու · Թ · 27 ·

— Մար · Թ · 1 · Ղու · Թ · 28 ·

Բ Ըպետ · ա 17 ՚

Ք Գւ · պ · 17 · Մար · ա · 11 · Ղու · գ · 22 · Բա · խր · 1 · Ի Ր Օր · ժը · 15 · 19 · Գոր · գ · 22 · 23 ·

Ւ Ըպետ · ա · 18 ·

Ֆ Դան · ը · 18 · Թ · 21 · ժ · 10 · 18 ·

Ը Գւ · ժգ · 20 · Մար · ը · 30 · Թ · 9 ·

Ցամի Տեառն 32

իր աշակերտները իրեն հարցուցին՝ ու ըսին . Ուրեմն ի՞նչո՞ւ համար դպիրները կ՚ըսեն Թէ՝ Պէտք է որ
11 առաջ Եղիան գայ : Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց . Եղիան կու գայ , և
12 ամէն բան կարգի կը դնէ : Բայց ձեզի կ՚ըսեմ , որ Եղիան արդէն եկած է , և անիկայ չճանչցան , հապա ինչ որ ուզեցին՝ ըրին անոր . անանկ ալ Որդին մարդոյ
13 անոնցմէ պիտի չարչարուի : Յետոյ աշակերտները , որ Մովհաննէս Մկրտչին համար ըսաւ անոնց :
14 Ու երբոր ժողովուրդին քովը եկան , մարդ մը մօտեցաւ անոր , և ծունկ չոքելով կ՚ըսէր . Տէ՛ր իմ որդւոյս ողորմէ , որ կը լուսնոտի . և չարաչար կը տանջուի . քանզի շատ անգամ կրակի մէջ կ՚իյնայ , և շատ անգամ ջուրի մէջ :
15 Եւ անիկայ քու աշակերտներուդ բերի , ու չկրցան զանիկայ բժշկել :
16 Յիսուս պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Ո՛վ անհաւատ և խոտորեալ ազգ՝ մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ , մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ . զանիկայ հոս ինծի
17 բերէք : Եւ Յիսուս սաստեց անոր , ու դևը անկէ ելաւ . և բժշկուեցաւ
18 տղան նոյն ժամէն : Ան ատեն աշակերտները առանձին Յիսուսին քովը մերձեալով ըսին . Մենք ինչո՞ւ չկրցանք անիկայ հանել ,
19 Եւ Յիսուս ըսաւ անոնց . Ձեր թերահաւատութեանը համար . քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Եթէ որ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք , ասս լեռանս պիտի ըսէք՝ Անկէ անդին փոխադրուէ , և պիտի փոխադրուի . ու բան մը անդարձ պիտի չըլլայ
20 ձեզի : Սակայն ասս տեսակը առանց բոնով չելլեր , բայց միայն աղօթքով և ծոմապահութեամբ :
21 Յետ երբոր անոնք Գալիլեայի մէջ կը պտրտէին՝ Յիսուս ըսաւ անոնց . Որդին մարդոյ պիտի
22 մատնուի մարդոց ձեռքը . Եւ զանիկայ պիտի մեռցընեն , ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ . ու խիստ տրտմեցան :
23 Երբոր անոնք Կափառնայում եկան , Երկդրամեան գանձուց առնողները Պետրոսին եկան՝ ու ըսին . Ձեր վարդապետը երկդրամեանը չը՞տուեցաներ . Ե անիկայ ըսաւ .
24 Աստ , Ես հասայ ի ու երբոր մտաւ , Յիսուս անոր դէմը ելաւ՝ ու ըսաւ . Քեզի ի՞նչպէս կ՚երևնայ՝ Սիմոն . երկրիս թագաւորները որմէ՞ն կ՚առնեն հարկը կամ տուրքը , իրենց որդիներէ՞ն ,
25 Թէ օտարներէն : Պետրոս անոր ըսաւ՝ Թէ Օտարներէն . Յիսուս անոր ըսաւ . Ուրեմն որդիքը ա-
26 զատ են : Բայց չըլլայ որ անոնք գայթակղեցընենք , գնա ծո՛վը և կարթ ձգէ , ու առջի ձուկը որ կ՚ելլէ՝ առ , և անոր բերանը բանալով սատեր մը պիտի գտնես . զանիկայ առ՝ անոնց տուր ինծի և քեզի համար :

ԳԼ . ԺԸ

1 Քրիստոս կը պատուիրէ իր աշակերտներուն խոնարհ ու հեզ ըլլալ . 7 գայթակղութիւն լսել . և պզտիկները չանարգել . 15 կը սորվեցընէ Թէ ինչպէս վարուելու ենք մեր եղբայրներուն հետ , երբոր անոնք մեզի դէմ մեղանչեն , 21 և Թէ քանի անգամ ներելու ենք անոնց . 23 ասկիսկ կը բացատրէ Թագաւորի մը առակով , որ հաշիւ ուզեց իր ծառաներէն , 32 ու իր ընկերին ողորմութիւն չցուցընողը պատժեց :

Ցամի Տեառն 32

1 – Նոյն ժամանակը աշակերտները Յիսուսին քովը եկան՝ ու ըսին . Ո՞վ է մեծ երկնից Թագաւորու-
2 թեանը մէջ : Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն , զանիկայ անոնց
3 մէջտեղը կայնեցուց , Ու ըսաւ . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , Եթէ որ գարձի չգաք և տղոց պէս չըլլաք , երկնից Թագաւորութիւնը բնաւ
4 պիտի չմտնէք : Ուստի ո՛վ որ իր անձը ասս տղուն պէս խոնարհեցընէ , անիկայ է մեծ երկնից
5 Թագաւորութեանը մէջ : Եւ ո՛վ որ ասանկ տղայ մը ընդունի իմ
6 անունովս , զիս կ՚ընդունի : Եւ ո՛վ որ գայթակղեցընէ ասս պզտիկներուն մէկը՝ որ ինծի կը հաւատան , աղէկ է անոր՝ որ իր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի , ու ծովուն անդունդին
7 մէջ ընկղմի : Վա՛յ աշխարհին՝ գայթակղութիւններու պատճառաւ . Վասն զի հարկ է որ գայթակղութիւնները գան , բայց է վա՛յ ան մարդուն՝ որուն ձեռքովը գայթակղութիւնը
8 կու գայ : Ընդ՝ Թէ որ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցընէ , կտրէ՝ անիկայ՝ ու քովդ ձգէ . աղէկ է քեզի կաղ՝ կամ պակասաւոր մտնել կեանքը , քան Թէ երկու ձեռք՝ կամ երկու ոտք ունենալ , ու յաւիտենական կրակին մէջը ձգ-
9 ուիլ : Եւ Թէ որ աչքդ քեզ կը գայթակղեցընէ , հանէ՝ անիկայ և քեզմէ ձգէ . աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել , քան Թէ երկու աչք ունենալ , ու կրակին գեհենը ձգուիլ :
10 Զգո՛յշ կեցէք՝ որ չանարգէք ասս պզտիկներէն մէկը . քանզի կ՚ըսեմ ձեզի որ երկնից մէջ Ե անոնց հրեշ-

– Մտր . Թ . 32 . Ղբ . Թ . 46 ; Իր . 24 ;

Բ Սադ . ՃԼա . 2 ; Գլ . ԺԹ . 14 ; Մտր . ԺԸ . 14 ; Ղբ . ԺԸ . 16 ; Ասկր . ԺԳ . 20 ; ՈՂՆա . Բ . 2 ;

Է Գլ . Ի . 27 ; Խ . 11 ;

Ը Գլ . Ժ . 42 ; Ղբ . Թ . 48 ;

Ի Մտր . Թ . 41 ; Ղբ . ԺԷ . 1 , 2 ;

ՂԲ . ԺԷ . 1 ; Ասկր . ՃԱ . 19 ;

Ի Գլ . Ի . 24 ;

Ը Գլ . Ե . 29 , 30 ; Մտր . Թ . 42 , 44 ;

Ցամի Տեառն 32

Բ Մտ . Գ . 5 ; Գլ . ԺԱ . 14 ; Մտր . Թ . 10 ;

Ժ Մտ . Գ . 6 , Ղբ . Ա . 16 . 17 ; Փոր . Գ . 21 ;

Ի Գլ . ԺԱ . 14 ; Մտր . Թ . 11 , 12 ;

Ի Գլ . ԺԳ . 3 , 10 ;

Ի Գլ . ԺԿ . 21 ;

Ի Գլ . ԺԱ . 14 ;

Ի Մտր . Թ . 14 ; Ղբ . Թ . 67 ;

Հ Գլ . ԻԱ . 21 ; Մտր . ԺԱ . 23 ; Ղբ . ԺԷ . 6 ; Ասկր . ԺԲ . 9 ; ԺԳ . 2 ;

Յ Գլ . ԺԶ . 21 ; Ի . 17 ; Մտր . Ը . 31 ; Թ . 29 , 30 ; Ժ . 33 ; Ղբ . Թ . 22 , 44 ; ԺԸ . 31 ; Իդ . 6 , 7 ;

ՂՄտր . Թ . 32 ;

Ճ Տե՛ս Եղ . Լ . 18 ; ԼԸ . 26 ;

Ցաշխ Տեառն 32

ՅԵՍԱՅ. ա. 14։ ՂՐՈՒ. ա. 19։

ԵՂՈՒ. Թ. 56։ ԺԹ. 10։ ՅՕՀ. գ. 17։ ԺԸ. 47։

ԼՂՈՒ. ԺԸ. 4։

* Ո՛ՀԱՒ ՉԱՔ ՁԳԵՐ, ՈՒ ԼԱՆԵՐԸ

ԵՂԼ. ԺԹ. 17։ ՂՐՈՒ. ԺԷ. 3։

ԲՑՈՒԿ. Ե. 20։ Ա ՊԱՏ. գ. 1։

ԼԲՕՐ. ԺԷ. 6։ ԺԹ. 15։ ՅՕՀ. Բ. 17։ Բ ԿՈՐ. Ժգ. 1։ ԵՔՐ. Ժ. 28։

ՀՀԱՒՈՒ. Ժգ. 17։ Ա ԿՈՐ. Ե. 9։ Բ ԹԱՍ. գ. 6։ 14։ Բ ՅՕՀ. 10։

ՖԳԼ. ԺԳ. 19։ ՅՕՀ.Ի. 23։ Ա ԿՈՐ. Ե. 4։

ՂԳԼ. Ե. 24։ Ա ՅՕՀ. գ. 2։ Ե. 14։

ՃՂՈՒ. ԺԷ. 4։

ՅԳԼ. Գ. 14։ ՄԱՐ. Ժ. 25։ ԿՂՏ. Դ. 13։

ՆԴԹՈՒՊ. Դ. 1։ ՆԵՒՄ. Ե. 5։

տակները միշտ ծկը տեսնէն իմ Հօ-
11 ըրս երեսը՝ որ երկինքն է։ Ի՞ՆՉու-
որ Որդին մարդոյ եկաւ կորսուածը
12 փրկելու։ Ա՞Ի՞նչպէս կ'երեւնայ ձե-
զի. Թէ որ մարդ մը հարիւր ոչ-
խար ունենայ, և անոնց մէկը մո-
լորի, իննսունունիւնը ոչ՞ՐԸ ՂԵՌ-
ները չը՞ձգեր, ու՞ երթար մոլորա-
13 ծը փնտռեր։ Եւ Թէ որ գտնե-
լու ըլլայ զանիկայ, ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի, որ աւելի ուրախ կ'ըլ-
ԼԱՅ անոր վրայ, քան Թէ իննսու-
14 նուհինին՝ որ մոլորած չէն։ Ասանկ
ալ ձեր երկնաւոր Հայրը՝ չՀաճիր՝
որ աս պզտիկներէն մէկը կորսուի։
15 ԵԹԷ որ քոյ եղբայրդ քեզի դէմ
մեղանչէ, գնա՛ յանդիմանէ անի-
կայ՝ երբոր դուն և ան մինակ էք.
Թէ որ քեզի մտիկ ընէ, ձՀաՀեցար
16 քու եղբայրդ։ Հապա Թէ որ
մտիկ չընէ ւեւչ, քու հետդ մէկ
ՈՐՔԱ մը կամ երկո՛ւք ալ առ, որ
ԻԵրկու կամ իրեք վկաներու բերնէ
17 ամէն բան հաստատուի։ Եւ Թէ
որ անոնց ալ մտիկ չընէ, եկեղե-
ցիին ըսէ. իսկ Թէ որ եկեղեցիին
ալ մտիկ չընէ, Հեթանոսի ու
մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։
18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Ինչ-
րի վրայ ինչ որ կապէք, երկինքի
մէջ կապուած պիտի ըլլայ. ու
երկրի վրայ ինչ որ արձակէք, եր-
կինքի մէջ արձակուած պիտի ըլ-
19 լայ։ Դարձեալ կ'ըսեմ ձեզի.
Թէ որ ձեզմէ երկու հոգի երկրի
վրայ միաբանին ամէն ինչ բանի
համար որ խնդրեն, Հայիտի ըլլայ
անոնց իմ Հորմէս՝ որ երկինքն է։
20 Քանզի ուր որ երկու կամ իրեք
հոգի ժողովուած ըլլան իմ անուա-
նովս, Հոն եմ ես անոնց մէջը։
21 Այն ատեն Պետրոս մօտեցաւ ա-
նոր՝ ու ըսաւ. Տէր՛ քանի՞ անդամ
Թէ որ եղբայրս ինծի դէմ մեղան-
չէ՝ ներեմ անոր. Մինչև եօԹը
22 անգամ։ Յիսուս անոր ըսաւ.
Քեզի չեմ ըսեր Թէ մինչև եօԹը
անգամ, Հապա մինչև եօԹանա-
23 սուն անգամ եօԹը։ Ասոր համար
երկնից Թագաւորութիւնը կը նմա-
նի Թագաւորի մը, որ իր ծառա-
24 ներէն Հաշիւ առնել ուզեց։ Ու
երբոր սկսաւ առնել, մարդ Հազար
տալանդի պարտական մը բերուե-
25 ցաւ իրեն։ Իայց անիկայ վճարե-
լու Ի՞ՐՔՆ-ՈՒՆԵՆ չունենալով, իր
տէրը Հրաման ըրաւ Նոր անիկայ՝ և
անոր կինը՝ ու որդիքը և անոր բո-
լոր ունեցածը ծախուի, ու պարտքը
26 վճարուի։ Իսկ ծառան անոր առ-
ՋԻԸ իյնալով՝ երկրպագութիւն
կ'ընէր ու կ'ըսէր. Տէր՛ Հաւրկեր
ինծի, և ամէնը քեզի կը վճարեմ։
27 Եւ ան ծառային տէրը վրան խըղ-
ճալով՝ արձակեց զանիկայ, ու
28 պարտքը ընորհեց անոր։ Եւ նոյն
ծառան ելաւ, իր՝ ծառայակիցնե-
րէն մէկը գտաւ՝ որ իրեն հարիւր
դահեկան պարտք ունէր, ու զա-
նիկայ բռնելով՝ կը խեղդէր, ու
կ'ըսէր. Վճարէ՛ ինծի ունեցած
29 պարտքդ։ Ուստի անոր ծառա-
յակիցը անոր ոտքը ինկաւ, կա-
ղաչէր անոր՝ ու կ'ըսէր. Համբե-
րէ՛ ինծի, ու ՔԵԶԻ կը վճարեմ։
30 Եւ ինքը չէր ուզեր. Հապա գնաց՝
բանտը դրաւ զանիկայ, մինչև որ
31 պարտքը վճարէ։ Երբոր իր ծա-
ռայակիցները տեսան եղած բանե-
րը, խիստ տրտմեցան, ու եկան
իրենց տիրոջը Հակիրճութիւն բոլոր
32 եղածը։ Այն ատենը անոր տէրը
կանչեց զանիկայ՝ ու ըսաւ անոր.
Չար ծառա՛յ՝ ես բոլոր պարտքը ես
ՔԵԶԻ ընորհեցի՝ ինծի աղաչելուդ
33 համար. Ուրեմն պէտք չէ՞ր քե-
զի ալ քու ծառայակիցիդ ողոր-
միլ, ինչպես որ ես ՔԵԶԻ ողոր-
34 մցայ։ Եւ անոր տէրը բար-
կանալով՝ դահիճներուն մատ-
նեց զանիկայ, մինչև որ բոլոր
35 պարտքը վճարէ։ Ա՛Սանկ ալ իմ
երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի,
Թէ որ ձեր սրտերէն չէք ներեր,
ամէն մէկը իր եղբօրը, իրենց յան-
ցանքները։

ՂԱԿ. ԻԱ. 13։ ԳԼ. գ. 12։ ՄԱՐ. Ժա. 26։ ՅԱԿ. Բ. 13։

ԳԼ. ԺԲ

2 Քրիստոս կը բժշկէ Հիւանդները. 3 պատաս-
խան կու տայ կնիկ արձակելու վրայով Փա-
րիսեցւոց ըրած Հարցմունքին. 13 մանր տղաք-
ները կ'ընդունի. 16 կը սորվեցընէ պատաս-
խին Թէ ինչպես կրնայ ստանալ յաւիտենա-
կան կեանքը. 20 և Թէ ինչ բանելու է որ
կատարեալ ըլլայ. 23 իր աշակերտներուն
կ'ըսէ Թէ ինչպես դժուար է Հարուստին՝
Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել. 27 և
վարձք կը խոստանայ անոնց՝ որ իր Համեմ
երթալու Համար որ և իցէ բան կը Թողուն։

Ցաւ. Տեառն 33

1 ՅԵՒ եղաւ որ երբ Յիսուս ա՛ն խօս-
քերը լմընցուց, Գալիլեայէն ե-
ԼԱ, ու եկաւ Հրէաստանի սահման-
ները Յորդանանու անդիի կողմը։
2 Բ Եւ անոր ետևէն շատ ժողովուրդ-
ներ գացին, ու Հոն բժշկեց զանոնք։
3 Եւ փարիսեցիները անոր մօտե-
նալով, զանիկայ կը փորձէին՝ ու
կ'ըսէին Թէ՝ Արժա՞ն է որ մարդ մը
իր կնիկը արձակէ ամէն պատճառի
4 համար։ Անիկայ ալ պատասխան
տուաւ՝ ու անոնց ըսաւ. ՉԵ՞Ք
կարդացեր, Թէ ան որ սկիզբէն
ստեղծեց, արու և էգ ստեղծեց ա-
5 նոնք՝ ու ըսաւ. ՏԱՍՈՐ համար
մարդ էր Հայրը ու մայրը պիտի ձգէ,
և իր կնկանը պիտի յարի, ու էր-
կուքը մէկ մարմին պիտի ըլլան։
6 Ուստի ալ երկուք չէն, Հապա մէկ

ԲՑՈՒԿ. Ա. 27։ Բ. 2։ ՄԱՂ. Բ. 15։

ՏԻՆ. Ա. 24։ ՄԱՐ. Ժ. 5—9։ ԵՓԷ. Ե. 31։

Ա Ա ԿՈՐ. Ջ. 16։ Է. 2։

Ցամք Տեառն 33

ՂԲ Օր · իդ · 1 ; ԳԼ · ե · 31 ;

Է ԳԼ · ե · 32 ; Մար · ժ · 11 ; Ղա · ժգ · 18 ; ա Կոր · է · 10 , 11 ;

Ը Նահ . իա · 19 ;

Ի ա Կոր · է · 2 , 7 · 9 , 17 ;

ժ ա Կոր · է · 32 · 34 ; Թ · 5 · 15 ;

Ի Մար · ժ · 13 ; Ղա · ժը · 15 ;

ԺԳԼ · ժը · 3 ;

Ի Մար · ժ · 17 ; Ղա · ժը · 19 ; Ի Ղա · ժ · 25 ;

ԺԱ Եզ · ի · 13 ; ր Օր · ե · 17 ;

ՀԳԼ · ժե · 4 ·

ՅՂԼ · ժը , 18 ; ԳԼ · իբ · 39 · ՀՈՎ · ժգ · 9 ; Գաղ · ե · 14 ; Ցակ · բ · 8 ;

ՂԳԼ · գ · 20 ; Ղա · ժը · 33 ; ժգ · 9 ; Գոր · ը · 45 ; գ · 34 , 35 ; ա Տիմ . ե · 18 · 19 ;

մարմին . ուրևմն ան որ Աստուած
7 միաւորեց՝ մարդ թող չդատե ։ Ը-
սին իրեն . Հաւատա Մովսէս ինչո՞ւ
պատուիրեց արձակման թուղթ
8 տալ՝ և արձակել ։ Ըսաւ անոնց .
Մովսէս ձեր սրտերուն կարծրու-
թեանը համար ձեզի հրաման տուաւ
կնիկներնիդ արձակել . բայց սկիզ-
9 բէն անանկ չեղաւ ։ Եսակայն ձե-
զի կ՚ըսեմ . Ով որ առանց պոռ-
նկրութեան պատճառի իր կնիկը
արձակէ՝ և ուրիշ մը առնէ , շնու-
թիւն կ՚ընէ . և ով որ արձակուա-
10 ծը առնէ՝ շնութիւն կ՚ընէ ։ Իր
աշակերտները ըսին իրեն . Եթէ որ
առանկ բան կայ երկան ու կնկան
մէջտեղը՝ չամուսնանալը աղէկ է ։
11 Եւ ինքը անոնց ըսաւ . Ո՛Ամէն
բաւական չեն ատ բանին . հապա
12 անոնք՝ որոնց տրուած է ։ Ինչու
որ կան ներքինիներ , որ էրէնց մօրը
որովայնէն անանկ ծնան . և կան
ներքինիներ , որ մարդոցմէ ներքի-
նի եղան . և կան ներքինիներ՝ որ
ինքզինքնին ներքինի ըրին երկնից
թագաւորութեանը համար . ո՛վ
որ կրնայ տանիլ , թող տանի ։
13 Է Այն ատենը մանր տղաք բերուե-
ցան իրեն , որ անոնց վրայ ձեռք
դնէ՝ և աղօթք ընէ , ու աշակերտ-
ները կը յանդիմանէին զանոնք ։
14 Բայց Յիսուս ըսաւ . Թո՛ղ տուէք
ոտ մանր տղոցը , և մի՛ արգիլէք
ատոնք ինձի գալէն . ինչու. որ
Երկնից թագաւորութիւնը ա-
15 տանկներունն է ։ Եւ անոնց վրայ
ձեռք դնելէն ետև՝ գնաց անկէ ։
16 Է Եւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ
անոր . Բարի ժվարդապետ՝ ինչ
բարի գործ գործեմ , որ յաւիտե-
17 նական կեանքը ընդունիմ ։ Եւ
անիկայ ըսաւ անոր . Ինչո՞ւ դուս
բարի կ՚անուանես . մէկէն ի զատ
բարի չկայ , որ է Աստուած . հապա
թէ որ կ՚ուզես կեանքը մտնել ,
18 պատուիրանքները պահէ ։ Ըսաւ
անոր . Որո՞նք . և Յիսուս ըսաւ .
Սոռնք . Սպանութիւն մի՛ ըներ ,
Շնութիւն մի՛ ըներ , Գողութիւն
մի ըներ , Սուտ վկայութիւն մի՛
19 ըներ , Հարու հայրդ ու մայրդ պա-
տուէ՛ , և Ձարու ընկերդ քու անձիդ
20 պէս սիրեա ։ Պատանին ըսաւ ա-
նոր . Ատոնք ամէնը մանկութենէս
ի վեր պահեր եմ . ալ ի՞նչ բա-
21 նով պակաս եմ ։ Ըսաւ անոր
Յիսուս . Թէ որ կ՚ուզես կատա-
րեալ ըլլալ , դնա ունեցածդ ծա-
խէ՝ , և տուր աղքատներուն , ու
երկինքը դանձ պիտի ունենաս , և
22 եկուր իմ ետևէս ։ Երբոր պատա-
նին ա իսօքը լսեց՝ տրտմած գնաց .
ինչու որ շատ ստացուածք ունէր ։
23 Եւ Յիսուս ըսաւ աշակերտնե-
րուն . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի՝ որ
ՀՀարուստը դժուարաւ պիտի մտնէ
24 երկնից թագաւորութիւնը ։ Դար-
ձեալ կ՚ըսեմ ձեզի . Դիւրին է որ
*ուղտը ասղին ծակէն անցնի , քան
Թէ Հարուստը Աստուծոյ թագա-
25 ւորութիւնը մտնէ ։ Աշակերտները
երբոր լսեցին , շատ զարմացան՝ ու
ըսին . Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ ։
26 Յիսուս անոնց նայելով՝ ըսաւ .
Մարդոց կողմանէ անկա-
տելի է՝ բայց Աստուծոյ կողմանէ
ամէն բան կարելի է ։
27 Այն ատենը Պետրոս պատասխան
տուաւ՝ ու ըսաւ անոր . Ահա Մենք
ամէն բան թողուցինք՝ և քու ե-
տևէդ եկանք . ուստի մեզի ի՞նչ
28 պիտի ըլլայ ։ Ըսաւ անոնց Յիսուս .
Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , Թէ դուք
որ իմ ետևէս եկաք , Ժամանդամ
գալուստին " երբոր Որդին մարդոյ
իր փառաց աթոռը նստի , Ժդուք
ալ տասներկու աթոռներու վրայ
պիտի նստիք՝ Իսրայէլի տասներ-
29 կու ցեղերը դատելու ։ Եւ ով
որ թողուց տուներ , կամ եղբայրներ ,
կամ քոյրեր , կամ հայր , կամ
մայր , կամ կին , կամ որդիներ ,
կամ արտեր՝ իմ անուանս համար ,
հարիւրապատիկ պիտի առնէ , և
յաւիտենական կեանք պիտի ժա-
30 ռանգէ ։ Բայց շատ առաջիններ
պիտի ըլլան յետին , և յետիններ՝
առաջին ։

ԳԼ · Ի

1 Քրիստոս այդ ի բանտարկեալ Կը ցոյց-
ցընէ Թէ Աստուած ընաւ մէկ մարդու մը պար-
տական չէ · 17 իր չարչարանքը կը նախասացնէ ·
20 Զեբեդէոսի որդւոցը մօրը պատասխան
տալով կը սորվեցնէ իր աշակերտներուն
խոնարհ րլալ · 30 ու երկուս կոյրերուս ալ քիրը
կը բանայ ։

1 Արանդի երկնից թագաւորութիւ-
նը տանուտէր մարդու մը նման
է , որ առտուանց կանուխ ելաւ՝ իր
այգիին համար բանւորներ բռնե-
2 լու ։ Եւ բանւորներուն հետ օրը
մէկ դահեկանի մը իսկը կապեց , ու
3 զանոնք իրկեց իր այգին ։ Եւ
ժամը իրեքին ատենները ելաւ՝ ու-
րիշները տեսաւ , որ շուկային մէջ
4 պարապ կայներ էին . Ու ըսաւ ա-
նոնց . Դուռ ալ գացէք իմ այգիս ,
և ինչ որ արժան է կու տամ ձե-
5 զի ։ Անոնք ալ գացին . ու նորէն
ժամը վեցին և ժամը իննին ատենը
6 ները ելաւ՝ անանկ ըրաւ ։ Եւ
ժամը տասնումէկին ատենները ե-
լաւ , ուրիշները գտաւ՝ որ պարապ
կայներ էին . ու անոնց ըսաւ .
Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կայ-
7 ներ էք ։ Ըսին իրեն . Անոր հա-
մար որ մէկը մեզ վարձքով չբռնա-

Ցամք Տեառն 33

ՀԳԼ · ժգ · 22 ; Մար · ժ · 24 ; ա Կոր · ա · 26 ; ա Տիմ . գ · 9 , 10 ;

Ո՛Ուղտ պատրանքը

Ի Ծն . ժը · 14 ; Ցոբ · իբ · 2 ; Ե-ղիա . լբ · 17 ; Զաք · ը · 6 ; Ղա · ա · 37 ; ժը · 27 ;

Ա Մար · ժ · 28 ; Ղա · ժը · 28 ;

ՆԲ Օր · լդ · 9 ; ԳԼ · գ · 20 ; Ղա · ե · 11 ;

Է Ցաւ . վե-րադարձնելու-դեսքը մէջ

ԼԳԼ · ի · 21 ; Ղա · իր · 28 , 29 , 30 ; ա Կոր · գ · 2 , 3 ; Ցայտ . ը · 26 ;

Մար · ժ · 20 , 20 ; Ղա · ժը · 29 , 30 ;

ԼԳԼ · ի · 16 ; Իսա · 31 , 32 ; Մար · ժ · 31 ; Ղա · ժգ · 20 ;

Ցամք Տեառն 33

նէք . ըսաւ անոնց . Դուք ալ այդին գացէք , ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք : Եւ իրիկուն որ եղաւ , այդիին տէրը իր տնտեսին ըսաւ . Բանուորները կանչէ , և անոնց վարձքը տուր , ետքիններէն սկսելով՝ մինչև առաջիններն : Ու երբոր եկան անոնք որ ժամը տասնումէկին գացեր էին , մէյմէկ դահեկան առին : Եւ առջիններուն գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն , ու անոնք ալ առին մէյմէկ դահեկան : Երբոր առին , տանը տիրոջը դէմ տրտնջալ կ'ընէին՝ ու կ'ըսէին թէ՝ Ասոնք ետքինները մէկ ժամ մը գործեցին , և անոնք հաւասար ըրիր մեզի , որ օրուան ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք : Անիկա պատասխան տուաւ անոնցմէ մէկուն՝ ու ըսաւ . Ընկեր՝ ես քեզ չեմ զրկեր . չէ՞ որ դուն իմ հետս մէկ դահեկանի մը խօսք կապեցիր : Ա՛ռ քուկդ աւ գնա , կ'ուզեմ , որ ասոր ետքինին՝ քեզի տալ : Չէ՞ որ ես իշխանութիւն չունիմ իմ բանեռուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու . կամ թէ Էրուս աչքդ չարի՞ է որ ես բարեր եմ : Ա՛յսպէս յետիններն առաջին պիտի ըլլան , և առաջիններն՝ յետին . Վասն զի շատ են կոչեցեալները , բայց ընտրեալները քիչ :

Ու Երբոր Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր , ճամբան տասներկու աշակերտները հետը առաւ առանձին , և ըսաւ անոնց . Ահա Երուսաղէմ կ'ելլենք , և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն , և զանիկայ մահուան պիտի դատապարտեն , և Հեթանոսներուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու , և խաչը հանելու . ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ :

Եւ ան ատենը Զեբեդեոսին որդւոցը մայրը իր որդւոցը հետ եկաւ անոր , երկրպագութիւն կ'ընէր ու բան մը կը խնդրէր անկէ : Ան ալ ըսաւ անոր . Ի՞նչ կ'ուզես : Ըսաւ անոր . Ըսէ՝ որ աս իմ երկու որդիքս թագիդ մէկը աջ կողմդ , և մէկալը ձախ կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ : Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ . Չէք գիտեր ինչ կը խնդրէք . կրնաք խմել՝ ան գաւաթը՝ որ ես պիտի խմեմ , կամ ես մկրտութիւնովը մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ . Ըսին իրեն . Կրնանք . Եւ ըսաւ անոնց . Իմ գաւաթս պիտի խմէք , և ան մկրտութիւնովը՝ որ ես մկրտուելու եմ , պիտի մկրտուիք . բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս նստիլը՝ իմս չէ տալը , հապա որոնց որ պատրաստուած է իմ Հօրմէս :

Երբ տասը լսեցին , ան երկու եղբարց վրայ բարկացան : Յիսուս կանչեց զանոնք , ու ըսաւ . Գիտէք որ ազգաց իշխանները կը տիրեն անոնց , և մեծամեծները կ'իշխեն անոնց . բայց ձեր մէջը հանանկ պիտի չըլլայ . հապա ով որ ձեզմէ մեծ ըլլալ կ'ուզէ , թող անիկայ ձեր սպասաւորը ըլլայ : Ու ձեզմէ ով որ առաջինը ըլլալ կ'ուզէ , թող անիկայ ձեր ծառան ըլլայ : Ինչպէս Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու , հապա սպասաւորութիւն ընելու , և Իր կեանքը փրկանք տալու :

Ու երբոր անոնք Երիքովէն ելան , մեծ բազմութիւն անոր եկաւ : Եւ ահա երկու կոյր նստած էին . երբոր լսեցին թէ Յիսուս կ'անցնի , աղաղակեցին ու ըսին . Ողորմէ՛ մեզի Տէր՝ Որդի Դաւիթ : Եւ բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք , որ լռեն . բայց անոնք՝ ալ աւելի կ'աղաղակէին ու կ'ըսէին . Ողորմէ՛ մեզի Տէր՝ որդի Դաւիթ : Յիսուս կանգ առնելով կանչեց զանոնք՝ ու ըսաւ . Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ընեմ : Ըսին անոր . Տէր՝ որ աչքերնիս բացուին : Գութով Յիսուս դպաւ անոնց աչքերուն , և շուտ մը անոնց աչքերը բացուեցան , ու անոր ետևէն գացին :

Ցամք Տեառն 33

Ծ Ընթ. ԻՆ. 34 ։ Ա Մար. Ժ. 41 ։ Ղկ. Իր. 24 , 25 ։

Հա պետ. Բ. 3 ։ Յհ. Իգ. 11 ։ Մար. Թ. 34 ։ Ժ. 43 ։ Ա Ղկ. Ժը. 4 ։ Ե Ցօհ. Ժգ. 4 ։ Ա Փիլ. Բ. 7 ։ Ղկ. Իր. 27 ։ Ցօհ. Ժգ. 14 ։

Նե. Ծգ. 10 , 11 ։ Դան. Թ. 24 , 26 ։ Ցօհ. Ժա. 51 , 52 ։ Ա Տիմ. Բ. 6 ։ Տիտ. Բ. 14 ։ Ա Պետ. Ա. 19 ։

Ղկ. Իզ. 25 ։ Հռով. Ե. 15 , 19 ։ Երբ. Թ. 28 ։

Մար. Ժ. 46 ։ Ղկ. Ժը. 35 ։

Ղկ. Թ. 27 ։

Հռով. Թ. 21 ։

Բ Օր. Ժե. 9 ։ Ռոմ. Իգ. 6 ։ Գղ. Ջ. 23 ։

Գղ. Ժթ. 30 ։

Գղ. Իբ. 14 ։

Մար. Ժ. 32 ։ Ղկ. Ժը. 31 ։ Ցօհ. Ժբ. 12 ։

Ղկ. Ժզ. 21 ։

Գղ. Իե. 2 ։ Մար. Ժե. 1 , 16 ։ Ղկ. Իգ. 1 ։ Ցօհ. Ժբ. 28 , ՃԸ ։ Գոր. Գ. 13 ։

Մար. Ժ. 35 ։

Գղ. Գ. 21 ։

Ժգ. Ժթ. 28 ։

Գղ. Իզ. 39 , 42 ։ Մար. Ժգ. 36 ։ Ղկ. Իբ. 42 ։ Ցօհ. Ժբ. 11 ։

Ղկ. Ժբ. 50 ։

Գոր. Ժբ. 2 ։ Հռով. Ը. 17 ։ Բ Կոր. Ա. 7 ։ Ցայտ. Ա. 9 ։

Ա Գլ. ԻԱ

1 Երբ հասան Իւրմէ վրայ Զեթսեմէ կը մտնէ . 12 առաքեալն զրկուս առաջ տուր ընդոծերը . 17 Թզենին կ'անիծէ . 23 կը պատասխանեցնէ քահանաները ու ծերերը , 28 և կը յանդիմանէ զանոնք՝ օրինակ բերելով հօր մը երկու որդիները , 35 ու ան մշակները՝ որ իրենց խրկուածները սպաննեցին ։

1 Ու երբոր Երուսաղէմին մօտեցան , ու եկան Բեթփագէ դէպի Ձիթենեաց լեռը , ան ատենը Յիսուս իր աշակերտներէն երկուքը 2 խրկեց . Եւ ըսաւ անոնց . Գացէք ատ ձեր գիմացի գեղը , և շուտ մը պիտի գտնէք կապած էշ մը՝ ու անոր հետ աւանակ մը . արձկեցէք զանոնք ու բերէք ինծի : 3 Եւ թէ որ մէկը ձեզի բան մը ըսէ , ըսէք թէ Տէրոջը պէտք են . և շուտ մը 4 անոնք պիտի խրկէ : Ասիկա եղաւ ամէն բաները , որ կատարուի մարգարէին խօսքը՝ որ կ'ըսէ . 5 Դարէին խօսքը՝ որ կ'ըսէ . Ըսէք Սիոնի աղջկանը . Ահա քու թագաւորդ կու գայ քեզի , հեզ է , և էշու մը վրայ հեծած , և աւանակի մը՝ որ լուծի տակ եղած է :

Մար. Ժա. 1 ։ Ղկ. Ժբ. 29 ։

Բ Ջաք. Ժգ. 4 ։

Յամի Տեառն 33

գաւօրդ քեզի կու դայ , հեղ՝ ու իչու վրայ հեծած՝ և իչու ձագի
6 աւանակի վրայ : Ու՝նչահեբտները գացին , և ինտոր որ Յիսուս իրենց
7 պատուիրեր էր , ըրին : Ու բերին էշը և աւանակը , և Հանոնց վրայ իրենց հանդերձները դրին , ու
8 նստաւ անոնց վրայ : Եւ ժողովուրդին չատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին , և ուրիչները ծառերէն ճիւղեր կը կտրէին , ու ճամբուն վրայ կը տա-
9 րածէին : Եւ ժողովուրդները որ առջևէն ու ետևէն կ'երթային , կ'աղաղակէին ու կ'ըսէին . Հովսաննա որդւոյ Դաւթի . Հօրնեալ է ան՝ որ Տէրոջը անունովը կու գայ . Ովսաննա ի բարձունս :
10 Ու երբոր անիկայ Երուսաղէմ մտաւ , բոլոր քաղաքը շարժեցաւ ,
11 ու ըսաւ . Ո՞վ է աս : Եւ ժողովուրդները ըսին . Ասիկայ Յիսուս Մարգարէն է՝ Գալիլեայի Նազարեթէն :
12 Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ , ու դուրս հանեց ամէն ա-նոնք՝ որ տաճարին մէջ կը ծախէ-ին ու կը գնէին , և Հստակ փոխող-ներուն սեղանները՝ ու աղաւնի-ներուն ծախողներուն աթոռները կործա-
13 նեց . Եւ ըսաւ անոնց . Գրուած է թէ՝ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի , բայց դուք ատիկայ աւազակներու այր ըրիք :
14 Եւ տաճարին մէջ կոյրեր ու կա-ղեր եկան իրեն , և բժշկեց զանոնք :
15 Երբոր քահանայապետները ու գը-պիրները տեսան անոր ըրած հրաշք-ները , և տղաքը որ տաճարին մէջ կ'աղաղակէին ու կ'ըսէին , Ովսան-նա որդւոյ Դաւթի , բարկացան .
16 Ու ըսին անոր . Կը լսե՞ս՝ ինչ կ'ըսեն ատոնք . և Յիսուս ըսաւ անոնց . Այո՛ . բնաւ չէք կարդա-ցեր , թէ Մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատա-րեցիր :
17 Եւ թողուց անոնք՝ քաղաքէն դուրս հեռանիա Բեթանիա , ու գի-շերը հոն կեցաւ :
18 Եւ առտուանց երբոր քաղաքը
19 կը դառնար , անօթեցաւ . Ու ճամբուն վրայ թզենի մը տեսնելով՝ գնաց , և անոր վրայ տերև-ներէն ի զատ բան մը չգտաւ . ու ըսաւ անոր . Ասկէ ետև քեզմէ պտուղ չբլլայ յաւիտեան . և իս-
20 կոյն թզենին չորցաւ : Եւ աշա-կերտները երբոր տեսան , զարմա-ցան ու ըսին , Թէ ինտոր թզենին
21 շուտ մը չորցաւ : Յիսուս պա-տասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Թէ որ

Յամի Տեառն 33

յԱկ . ա . 6 ։
Նա Կոր . Ժդ . 2 ։
ՂԳԼ . է . 7 ։
Մար . ժա . 24 ։ Ղու . ժա . 9 ։
Ցակ . ե . 16 ։ աՅօհ . գ . 22 ։ ե . 14 ։
Մար . ժա . 27 ։ Ղու . ի . 1 ։
ՂԵ . բ . 14 ։
Գոր . գ . 7 ։ է . 27 ։

հաւատար ունենաք՝ ու չերկմտիք , չէ թէ միայն ատ թզենիին Խնձէ պիտի ընէք , Հապա նաև՝ թէ որ ատ լեռանը ըսէք՝Ելի՛ր ու Ծովը
22 ինկիր , պիտի ըլլայ : Եւ Հաւատքով կը խնդրէք , պիտի առնէք :
23 Ու երբոր անիկայ տաճարը Էկաւ , քահանայապետները Հին ժողովուրդին Ծերերը անոր մօտեցան՝ երբոր կը սորվեցրներ , ու ըսին , Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես ատ բաները , և ո՞վ տուաւ քեզի
24 ատ իշխանութիւնը : Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց . Ես ալ ձեզի բան մը Հարցընեմ , որ եթէ անիկայ ինծի ըսէք , ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխա-նութիւնով կ'ընեմ ատ բաները :
25 Յովհաննէսին մկրտութիւնը ո՞ւս-կից էր . երկինքէ՞ն թէ մարդոցմէ . և անոնք Մէջերնին կը խորհէին՝ ու
26 կ'ըսէին . Թէ որ ըսենք՝ Երկինքէն , մեզի պիտի ըսէ թէ՝ Հապա ինչո՞ւ չՀաւատացիք անոր . իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ , ժողո-վուրդէն կը վախնանք , ինչու որ Ղրոլորն ալ Յովհաննէսը իբրև
27 մարգարէ կ'ընդունին : Եւ պատաս-խան տալով Յիսուսին՝ ըսին . Չենք գիտեր . և ինքը ըսաւ ա-նոնց . Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ ատ բաները :
28 Բայց ի՞նչպես կ'երևնայ ձեզի . Մէկ մարդ մը երկու որդի ուներ , ու գնաց առջինին ըսաւ . Որդեակ՝ գնա այսօր այգիս մէջ գործէ :
29 Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Չեմ ուզեր Էրթալ , բայց
30 ետքը զղջացաւ՝ ու գնաց : Մէկա-լին ալ գնաց , և անանկ ըսաւ . անիկայ պատասխան տուաւ՝ ու ը-սաւ . Կ'երթամ՝ տէր . և չգնաց :
31 Էյմ ա երկուքէն որը Էր Հօրը կամքը կատարեց . ըսին անոր Ի-նչինը . Յիսուս ըսաւ անոնց . Ճշմա-րիտ կ'ըսեմ ձեզի , որ մաքսա-ւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ թա-
32 գաւորութիւնը : Ինչու որ Յով-հաննէս արդարութեան ճամբայով Եկաւ ձեզի , և դուք անոր չՀաւա-տացիք . բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր Հաւատացին . և դուք տեսաք՝ ու ետքը չզղջացիք անոր Հաւատալու :
33 Ուրիշ առակ մըն ալ լսեցէք . Մէկ տանուտէր մարդ մը կար՝ Որ այգի մը տնկեց , ու ցանգով պա-տեց զանիկայ , և անոր մէջը Ջձան փորեց , ու աշտարակ շինեց . և զանիկայ մշակներու յանձնեց , ու

Մար . ժա . 4 ։
Ես . ԽԲ . 13 ։
ՂՏե՛ս ՂԼ . ԽԲ . 49 ։ ՑօՀ . ԺԲ . 13 ։
Ես Սաղ . ՃԺԲ . 25 ։
Ես Սաղ . ՃԺԲ . 26 ։ ԳԼ . Իգ . 39 ։
Մար . ժա . 15 ։ Ղու . ԺԹ . 45 ։ ՑօՀ . Բ . 13 ։ 15 ։
ԺԳԼ . Բ . 23 ։ Ղու . է . 16 ։ ՑօՀ . Ը . 14 ։ է . 40 ։ Թ . 17 ։
Մար . ժա . 11 ։ Ղու . ԺԹ . 45 ։ ՑօՀ . Բ . 15 ։
ԼՐ Օր . ԺԳ . 25 ։
Ես . ԾԷ . 7 ։
Երեմ . է . 11 ։ Մար . ժա . 17 ։ Ղու . ԺԹ . 46 ։
Սաղ . Ը . 2 ։
Մար . ժա . 11 ։ ՑօՀ . ժա . 18 ։
Մար . ժա . 12 ։
Մար . ժա . 13 ։
Մար . ժա . 20 ։
ԺԳԼ . ԺԶ . 19 ։ Ղու . ԺԶ . 6 ։

Գոր . ԺԶ . 3 ։ Մար . Ը . 24 ։ Ղու . ի . 6 ։
ՂՂու . է . 29 . 50 ։
Գոր . Գ . 1 . ։
Ղու . Գ . 12 . 13 ։
ԵՍաղ . Ճ . 9 ։ Երգ . Ը . 11 ։ Ես . ե . 1 ։ Երեմ . Բ . 21 ։ Մար . ԺԲ . 1 ։ Ղու . ի . 9 ։

Ցամի Տեառն 33

Ա ԳԼ. ԻԵ. 14։ 15։
Բ ԵՐԴ. Ը. 11։ 12։
ՅԲ ՄՆ. ԻԳ. 21։ ԼԳ. 16։ ՆԷԵՄ. Թ. 26։ ԳԼ. Ե. 12։ ԻԳ. 34։ 37։ ԳԻՐ. Է. 52։ ա ԹԱԳ. Բ. 15։ ԵԲՐ. ժա. 36։ 37։
– Սաղ. ր. 8։ ԵԲՐ. ա. 2։
Ա Սաղ. ր. 2։ ԳԼ. Իգ. 3։ ԽԵ. 1։ ՁՕՀ. ժա. 53։ ԳԻՐ. Գ. 27։
Ա ԳԼ. Իգ. 50։ ԸՃ։ Մ ՄԱՐ. ժգ. 46։ ԸՃ։ ՂՒԱ. ԻՐ. 54. ԸՃ։ ՅՕՀ. ԺԲ. 12. ԸՃ։ ԳԻՐ. Բ. 23։
Ա ՏԵ՛Ս ՂՒԱ. Ի. 16։ Ի Ա Ղ ՂՒԱ. ԽԱ. 24։ ԵԲՐ. Բ. 2. 3։
– ԳԻՐ. ԺԳ. 46։ ԺԵ. 7։ ԺԲ. 6։ ԻՐ. 2՝. ՀՈՎԻ. ԼԹ. Ժ. ԺԱ։
Բ Սաղ. ՃԺԲ. 22։ Ես՝ ԻՐ. 16։ Մ ՄԱՐ. ԺԲ. 10։ ՂՒԱ. Ի. 17։ ԳԻՐ. Գ. 11։ ԵՒԽ. Բ. 20։ ՄԱԹԹ. Բ. 6. 7։
Ե ԳԼ. Բ. 12։ Ը ԵՍ. Ր. 14. 15։ Ջ ԱՐ. ԺԲ. 3։ ՂՒԱ. Ի. 18։ ՀՈՎԻ. Թ. 33։ ՄԱԹԹ. Ր. 8։
Է ԵՍ. Կ. 12։ ԴԱՆ. Բ. 44։
Ը ՀԺՄ. 11։ ՂՒԱ. Է. 16։ ՅՕՀ. Է. 40։

– ՂՒԱ. ԺԳ. 16։ Ցամ. ՀՌ. 7. 9։

34 Ո՞ինքը օտար Երկիր մը գնաց։ Երբոր պտուղի ժամանակը մօտեցաւ, իր ծառաները մշակներուն խրկեց,
35 որ անոր պտուղները առնեն։ Եւ մշակները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին՝ միւսը սպանեցին՝ մէկ ուրիշը քարկոծեցին։
36 Նորէն ուրիշ ծառաներ խրկեց՝ առջիններէն շատ, և անոնց ալ ա-
37 նանկ ըրին։ Վերջը իր որդին խրկեց անոնց՝ ըսելով. Գո՛ւշ
38 ամչնան իմ որդիէս։ Բայց մշակները երբոր տեսան որդին, իրարու ըսին. Ա՛սիկայ է ժառանգը, եկէ՛ք զանիկայ սպաննենք, ու անոր ժա-
39 ռանգութեանը տիրենք։ Եւ առին զանիկայ՝ այդիէն դուրս հանեցին,
40 ու սպաննեցին։ Ուստի երբոր այդիին տէրը գայ, ի՞նչ պիտի
41 ընէ ան մշակներուն։ Ըսին իրեն. Ո՛ն չարերը չարաչար պիտի կորսընցնէ, – և այդին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք պտուղները իրենց ժամանակին պիտի
42 տան իրեն։ Ըսաւ անոնց Յիսուս. Ո՞երբեք չէ՛ք կարդացեր գրքին մէջ, Ան քարը որ շինողները անարգեցին, անիկայ անկիւնին գլուխը եղաւ. ասիկայ Տէրոջմէ եղաւ, և
43 զարմանալի է մեր աչքերուն։ Ասոր համար կ՚ըսեմ ձեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու անանկ ազգի մը պիտի տրուի՝ որ անոր պտուղ-
44 ները բերէ։ Եւ ո՛վ որ Տաս քարիս վրայ ինկայ՝ պիտի կոտրտի, և որու վրայ որ ինկայ՝ պիտի փոշրէ զանիկայ։
45 Ու երբոր քահանայապետները՝ և փարիսեցիները անոր առակները լսեցին, իմացան որ իրենց համար
46 կ՚ըսէր։ Եւ կը փնտռէին Ռէ ՚ՆՂԼԵ՛ ըռնեն զանիկայ, բայց ժողովուրդէն վախցան. ինչու որ Ա՛մբդպարէի պէս կ՚ընդունէին զանիկայ։

ԳԼ. ԻԲ

1 Թագաւորի որդւոյն Տարնիքին առակը։ 9 Հնեմանութեան երկնից Թագաւորութեան Տրատիրութիւ։ 12 Հարսնիքի Հանդերձ չունեցողին պատիժը։ 15 Կայսրին տուրք տալու վրայով։ 25 Քրիստոս փաստով կը ջնջէ սադուկեցւոց մոլորութիւնը յարութեան վրայով. 34 պատասխան կու տայ օրինականին Թէ ո՞ր է մեծ ու առաջին պատուիրանքը։ 41 փարիսեցւոց Տարցմունք կ՚ընէ Մեսիային վրայով, ու կը պապանձեցնէ զանոնք։

1 Պատասխան տուաւ Յիսուս՝ – և առակներով ըսաւ
2 անոնց. Երկնից Թագաւորութիւնը Թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր որդւոյն համար հարսնիք ը-
3 րաւ։ Եւ իր ծառաները խրկեց՝ որ կանչեն հարսնիքի հրաւիրեցեալները. և անոնք չուզեցին գալ։
4 Նորէն ուրիշ ծառաներ խրկեց՝ ու ըսաւ. Ըսէ՛ք հրաւիրեցեալներուն. Ահա իմ ճաշս պատրաստեցի, իմ զուարակներս ու գեր կենդանիներս մորթուած են, և ամէն բան պատրաստ է. հարսնիքը
5 եկէ՛ք։ Եւ անոնք անհոգութիւն ընելով գացին, մէկը իր արտը, ու
6 մէկալը իր առուտուրին։ Եւ ուրիշները անոր ծառաները բռնեցին, նախատեցին ու սպաննեցին։
7 Թագաւորն ալ երբոր լսեց՝ բարկացաւ, և իր Տզօրքերը խրկեց ու ան սպաննողները սատկեցուց, ու
8 անոնց քաղաքը այրեց։ Ան ատենը իր ծառաներուն ըսաւ. Հարսնիքը պատրաստ է՝ բայց հրաւիրուածները
9 ըր Տարժանի չէին։ Ուստի գացէ՛ք ճամբու գլուխները, և ո՛վ որ գտնէք՝ հարսնիքին հրաւիրեցէ՛ք։
10 Ելէք։ Եւ ան ծառաները ելան ճամբաներուն վրայ, ու ո՛վ որ գտան՝ թէ՛ չար և թէ՛ բարի՛ հաւաքեցին, և հարսնիքը
11 ասկեցաւ։ Հարսնաւորներով լեցուեցաւ։ Եւ թագաւորը երբոր մտաւ հարսնեաւորները տեսնելու, հոն մէկ մարդ մը տեսաւ, Որ հարսնիքի հան-
12 դերձ հագած չէր։ Եւ ըսաւ անոր. Ընկե՛ր ինչո՞ համար հոս մտար, առանց հարսնիքի հանդերձ ունենալու։ և անիկայ պապանձեցաւ։
13 Ան ատենը թագաւորը սպասաւորներուն ըսաւ. Կապեցէ՛ք ասոր ոտքերը ու ձեռքերը, և առէ՛ք ու հանեցէ՛ք զանիկայ Ի դուրսի խաւարը. հոն պիտի ըլայ լալ ու ակ-
14 ռաներ կՃոցընել։ ԸՈՒնու որ կանչուածները շատ են, ու ընտրուածները քիչ։
15 Ո՛ն ատենը փարիսեցիները դացին խորհուրդ ըրին, թէ ինչպէս անոր որոգայթ մը դնեն խօսքով։
16 Եւ իրենց աշակերտները Հերովդեսեաններուն հետ ղկեցէ խրկեցին անոր՝ ու ըսին. Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցընես, ու մէկու մը համար հոգդ չէ. քանզի մարդոց երես-
17 պաշտութիւն չես ըներ. Ուստի մեզի ըսէ՛, քեզի ի՞նչպէս կ՚երևնայ. կայսրին տուրք տալ արժա՞ն
18 Ի՛ թէ չէ։ Յիսուս դիտնալով ա-
նոնց խորամանկութիւնը՝ ըսաւ. Ինչո՞ւ զիս կը փորձէ՛ք կեղծաւոր-
19 նե՛ր. Ցուցուցէ՛ք ինծի տուրքին դրամը. և անոնք դահեկան մը բե-
20 րին իրեն։ Ու ըսաւ անոնց. Ո-րո՞ւնն է ատ պատկերը ու դիրը։
21 Ըսին անոր՝ կայսրին. ան ատենը ըսաւ անոնց. Ուրեմն ձան որ կայսրինն է՝ կայսրին տուէ՛ք, և ան որ

Ցամի Տեառն 33

Բ Առակ. Թ. 2։
Ե Դան. Թ. 26։ ՂՒԱ. ԺԹ. 27։
Ա ԳԼ. Ճ. 11։ 13։ ԳԻՐ. ԺԳ. 46։
Ի ԳԼ. ԺԳ. 35։ 47։
ՂԲ ԿՈՐ. Ե. 3։ ԵՒԽ. Գ. 24։ ԿՈՂ. Գ. 10։ 12։ ՅՕՀ. Գ. 4։ ԺԳ. 15։ ԺԹ. Տ։
Ի ԳԼ. Ը. 12։
ԸԳԼ. Ի. 16։
Ք ՄԱՐ. ԺԲ. 13։ ՂՒԱ. Ի. 20։
Ի ԳԼ. ԺԳ. 25։ ՀՈՎԻ. ԺԳ. 7։

Յամի Տեառն 33

Աստուծոյն է՝ Աստուածդ ըսել ։
22 Երբոր լսեցին՝ զարմացան , և թո-
ղուցին զանիկայ՝ ու գացին ։
23 Ինչո՞ւ որը անոր քովը եկան սա-
դուկեցիները , Ւորոնք կ՚ըսեն թէ
յարութիւն չկայ , և անոր հար-
24 ցուցին՝ Ըսելով . Վարդապետ՝
Մովսէս ըսաւ . Թէ որ մէկը ա-
ռանց զաւակի մեռնելու ըլլայ , ա-
նոր եղբայրը առնէ անոր կնիկը , և
25 իր եղբօրը զաւակ հանէ ։ Արդ՝
եօթը եղբայրներ կային մեր մէջը .
և առջինը կնիկ առաւ՝ ու մեռաւ ,
և զաւակ չունենալուն համար՝ իր
26 կնիկը ձգեց իր եղբօրը ։ Նոյնպէս
ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մինչև
27 եօթներորդը ։ Ամենն ալ մեր կնիկն
28 ալ մեռաւ ։ Ուրեմն յարութեան
աւեր ան եօթնէն որո՞ւն կնիկը
պիտի ըլլայ . ինչու որ ամենքն ալ
29 զանիկայ ունեցան ։ Եւ Յի-
սուս պատասխան տալով՝ անոնց
ըսաւ . Դուք մոլորած էք , որ Ս՚չ
գիրքերը գիտէք և ո՚չ Աստուծոյ
30 զօրութիւնը . Քանզի յարութեան
աւեր ո՚չ կնիկ կ՚առնուն և ո՚չ եր-
կան կը տրուին . հապա հրեշտակներուն պէս
31 են ։ Բայց մեռելներուն յարու-
թիւն առնելուն համար՝ չէք կար-
դացեր Աստուծմէ ձեզի ըսուած
32 խօսքը . Ես եմ Աբրահամին Աս-
տուածը , և Իսահակին Աստուա-
ծը , ու Յակոբին Աստուածը .
Աստուած մեռելներուն Աստուածը
33 չէ . Հապա կենդանիներուն ։ Ու
ժողովուրդները լսելով՝ ՚ի կը զար-
մանային անոր վարդապետութեա-
34 նը վրայ ։
Բայց փարիսեցիները երբոր լսե-
ցին թէ անիկայ պապանձեցուց
սադուկեցիները . Միտնդ ժող-
35 վուեցան ։ Ու անոնցմէ մէկը՝ օրի-
նական մը հարցուց , զանիկայ փոր-
36 ձելով , ու ըսաւ . Վարդապետ՝
ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին
37 մէջ ։ Եւ Յիսուս ըսաւ անոր .
Փ Քու Տէր Աստուածդ սիրես քու
բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ
38 ու քու բոլոր մտքովդ . Ասիկա է առա-
39 ջին և մեծ պատուիրանքը ։ Ու
երկրորդըասոր նման՝ Փ Քու ընկերդ
40 սիրես քու անձիդ պէս ։ Ասոնց եր-
կու պատուիրանքէս կախուած են
բոլոր օրէնքը և մարգարէները ։
41 Ու երբոր փարիսեցիները ժող-
վուեցան , Յիսուս հարցուց անոնց
42 ու ըսաւ . Քրիստոսի վրայով ի՞նչ
կարծիք ունիք . Անիկա որո՞ւ որ-
43 դին է ։ Ըսին իրեն . Դաւիթին ։
Ըսաւ անոնց Յիսուս . Հապա
ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զանի-
44 կայ Տէր կը կոչէ՝ ու կ՚ըսէ . Տէրը

իմ Տէրոջս ըսաւ . Նստէ իմ աջ
կողմս , մինչև որ քու թշնամիներդ
ոտքերուդ պատառանդան ընեմ ։
45 Ուրեմն թէ որ Դաւիթ զանիկայ
Տէր կը կոչէ , ի՞նչպէս անիկայ ա-
46 նոր որդին կ՚ըլլայ ։ Ու եւ մէկը չէր
կրնար անոր խօսք մը պատասխա-
նել . Ու ան օրէն ետև մէկը չէր
համարձակեր անոր բան մը հարցը-
նելու ։

ԳԼ . ԻԳ

1 Քրիստոս խրատ կու տայ ժողովուրդներուն
որ դպրաց ու փարիսեցւոց բարի վարդապե-
տութեանը հնազանդ , և չէ թէ անոնց չար
օրինակներուն . 5 Նոյնպէս ալ իր աշակերտ-
ները կը խրատէ որ զգոյշ կենան անոնց փառա-
սիրութենէն . 13 ուրկէ անդամ վայ կու տայ
անոնց կեղծաւորութեանը և կուրութեանը .
34 ու Երուսաղէմի կործանումը կը նախա-
ձայնէ ։

1 Ետքն ատենը Յիսուս խօսեցաւ ժո-
ղովուրդներուն և իր աշակերտ-
2 ներուն՝ ու ըսաւ . Մովսէսին
աթոռը դպիրները և փարիսեցիները
3 նստած են . Ուրեմն ինչ որ ձեզի
կ՚ըսեն որ պահէք , պահեցէք ու
ըրէք , բայց անոնց գործերուն պէս
մի ընէք . ինչու որ Ի՞նչ կ՚ըսեն ու չեն
4 ըներ ։ Քանզի ՚ծանր և տանելու
դժուար բեռներ կը կապեն՝ ու կը
դնեն մարդոց ուսերուն վրայ , և
իրենց մատովը չեն ուզեր զանոնք
5 շարժել ։ Եւ Ե իրենց ամէն գործ-
քերը՝ մարդոց երևնալու համար կ՚ը-
նեն . Լայն կ՚ընեն իրենց զրահան-
ները , ու կ՚երկրնցնեն իրենց հան-
6 դերձներուն քղանցքները . Ընթե-
րիքներու մէջ առաջին բազ-
մոցները կը սիրեն , և ժողովարան-
ներուն մէջ առաջին աթոռները .
7 Եւ մարդոցմէ Ռաբբի Ռաբբի
8 կոչուիլ ։ Բայց դուք Ռաբբի
մի՛ կոչուիք . ինչու որ ձեր
Ուսուցիչը մէկ մըն է , այսինքն
Քրիստոս , և դուք ամէնդ եղ-
9 բայր էք ։ Ու երկրի վրայ հէք ձեզի
Հայր մի՛ կոչէք . Ընչու որ ձեր
Հայրը մէկ մըն է , որ երկինքն է ։
10 Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք .
ինչու որ ձեր Ուսուցիչը մէկ մըն է ,
11 այսինքն Քրիստոս ։ Եւ Ի ձեր միջէն
մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ ։
12 Ի՞վ որ իր անձը կը բարձրացընէ ,
պիտի խոնարհի . և ով որ իր ան-
ձը կը խոնարհեցընէ , պիտի բարձ-
րանայ ։
13 Բայց Ի՛վայ ձեզի կեղծաւոր դպիր-
ներ ու փարիսեցիներ՝ որ երկնից
թագաւորութիւնը մարդոց առջևը
կը դոցէք . քանզի դուք չէր մտա-
ներ , և մտնողներն ալ չէք թողուր
14 որ մտնեն ։ Վա՛յ ձեզի կեղծաւոր
դպիրներ ու փարիսեցիներ՝ Ւոր

Յամի Տեառն 33

ՂՂ . ժ . 6 ։
ՊՄ . ժբ . 34 ։ Ղ . ի . 49 ։

Ա Ջ . ի . 9 ։

Ա Ջ . գ . 2 ։

Բ Հով . բ . 19 . ԼԸ ։
Ե Ղ . ժ . 46 ։ Գոր . ժե . 10 ։ Գաղ . գ . 13 ։
Բ Գ . գ . 1 ։ 2 . 5 . 16 ։
Ի . թես . ժե . 38 ։ Բ Օր . գ . 8 ։ իբ . 12 ։ Առակ . գ . 3 ։
ՂՄ . ժբ . 38 . 39 ։ Ղ . ժ . 43 ։ ի . 46 ։ գ Ջ . 9 ։
Ե Ջակ . գ . 1 ։ Տ . Ե Կոր . ա . 24 ։ ա Պետ . ե . 3 ։
ԸՄ . ա . 6 ։

Բ Գ . ի . 26 ։ 27 ։
Ե Ջ . իբ . 29 ։ Առակ . ժե . 33 ։ իԲ . 23 ։ Ղ . ժ . 11 ։ ժբ . 14 ։ Ջակ . գ . 6 ։ ա Պետ . ե . 5 ։
Ի Ղ . ժ . 52 ։
ԼՄ . ժբ . 40 ։ Ղ . ի . 47 ։ Բ Տիմ . գ . 6 ։ Տիտ . ա . 11 ։

որբևարիներուն տուները կ'ուտէք, ու ՛ստրօշ երևնալու համար աղօթք կ'ընկընդնէք. անոր համար աւելի դատապարտութիւն պիտի
15 ընդունիք։ Վա՛յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ ծով ու ցամաք կը պտըտիք մէկը նորահաւատ ընելու. ու երբոր ըլլայ, զանիկայ ձեզմէ երկու անգամ աւելի
16 գեհենի որդի կ'ընէք։ Վայ ձեզի ե կոյր առաջնորդներ՝ որ կ'ըսէք թէ՝ ով որ տաճարին վրայ երդումը ընէ, բան մը չէ. բայց ով որ տաճարին մէջի ոսկին վրայ երդումը
17 ընէ, պարտաւոր կ'ըլլայ։ Ո՛վ յիմարներ ու կոյրե՛ր՝ ո՞րը մեծ է, ոսկի՞ն կ'ենթէ տաճարը, որ կը սրբացնէ
18 նաև՝ ըսած էք թէ՝ ով որ սեղանին վրայ երդումը ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդումը ընէ,
19 պարտաւոր կ'ըլլայ։ Ցիմարներ ու կոյրե՛ր՝ ո՞րը մեծ է, պատարա՞գը՝ կ'ենթէ սեղանը, որ կը սրբացընէ պա-
20 տարագը։ Ուստի ով որ սեղանին վրայ երդումը կ'ընէ, երդումը կ'ընէ անոր վրայ՝ և անոր վրայի ամէն բա-
21 ներուն վրայ. Եւ ով որ տաճարին վրայ երդումը կ'ընէ, երդումը կ'ընէ անոր վրայ՝ և անոր մէջ բնակողին
22 վրայ. Եւ ով որ երկինքին վրայ երդումը կ'ընէ, երդումը կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ՝ և անոր վրան
23 նստողին վրայ։ Վա՛յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ անանուխին ու սամիթին և չամանին տասանորդը կը վճարէք, ու օրէնքին ծանր բաները՝ դատաստանը և ողորմութիւնը ու հաւատքը. ասոնք պէտք էր ընել, և անոնք չձգել։
24 Կոյր առաջնորդներ՝ որ միղուկը կը քամէք, և ուղտը կը կլուէք։
25 Վա՛յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ պատրաստ ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ և անիրաւութեամբ
26 լեցուն են։ Կոյր փարիսեցի՛ առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաքրէ, որ անոնց դուրսի կողմն ալ
27 մաքուր ըլլայ։ Վա՛յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երևնան, և ներսէն մեռելներու ոսկորներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն
28 են։ Նոյնպես ալ դուք դուրսէն մարդոց արդար կ'երևնաք, ու ներսէն կեղծաւորութեամբ և անօրէ-
29 նութեամբ լեցուն էք։ Վա՛յ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ մարգարէներուն տապան-

ները կը շինէք, և արդարներուն
30 գերեզմանները կը զարդարէք. Ու կ'ըսէք. Թէ որ մեր հայրերուն օրերը ըլլային, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէ-
31 ինք ըլլար։ Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք՝ թէ՝ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները կը սպանէ-
32 նէին։ Ո՜հ՝ դուք ալ ձեր հայ-
33 րերուն չափը լեցուցէք։ Օ՛ձեր՝ ժիժերո՛ւս ծնունդներ, ի՞նչպէս պիտի փախչիք գեհենին դատապար-
34 տութենէն։ Ձեզմով համար՝ ահա ես կը խրկեմ ձեզի մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ, և ա՜նոնցմէ ոմանները պիտի սպանէք, ու խաչը հանէք, և ոմանք քանիները ձեր ժողովարաններուն մէջը պիտի ծեծէք, ու քաղաքէ
35 քաղաք հալածէք. Հնրպէս որ երկրի վրայ թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ գայ, ՝արդար Աբելէն արիւնէն՝ մինչև Բարաքիայի որդւոյն Զաքարիայէն արիւնը, որ տաճարին ու սեղանին մէջտեղը
36 սպաննեցիք։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Այս ամէն բաները պիտի գայ այս ազգիս վրայ։
37 ՝Ո՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ՝ որ մարգարէները կը սպաննէիր, ու քեզի խրկուածները՝ կը քարկոծէիր. քանի անգամ ՝ձու տրդաքներդ ժողվել ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը՝ թեւերուն տակը կը ժողվէ, և դուք չուզեցիք։
38 Ահա՛ ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ. ինչո՛ւ որ ձեզի կ'ըսեմ, որ ալ ասկէ ետև պիտի չտեսնէք զիս, մինչև որ ըսէք. ՝Օրհնեա՛լ է ան՝ որ Տէրոջը անունովը կու գայ։

ԳԼ. ԻԴ

1 Քրիստոս կը նախաձայնէ տաճարին կործանումը, 3 անկէ առաջ նշանները մեծ թշուառութիւնները, 29 և իր դատաստանի գալուն նշանները, 36 Եւ ան օրը ու ժամը մեզի անծանօթ ըլլալուն համար, 42 կը պատուիրէ որ արթուն մնանք. ան բարի ծառային պէս՝ որ ամէն վայրկեան իր տիրոջը գալուն կը սպասէ։

1 Ու ՝Յիսուս տաճարէն դուրս ելլելով՝ կ'երթար. ու աշակերտները՝ անոր քովը գացին՝ տաճարին շէնքերը իրեն ցուցընելու։
2 Եւ Յիսուս անոնց ըսաւ. Չէ՞ք տեսներ ատ ամէն բաները. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թպիտի չմնայ հոս քար քարի վրայ՝ որ չքակուի։
3 Ու երբոր անիկայ Ձիթենեաց լեռը նստեր էր, Թաշակերտները իրեն եկան առանձին՝ ու ըսին. Ըսէ՛ մեզի՝ ե՞րբ պիտի ըլլան ատ բաները. և քու գալստեանդ՝ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի
4 ըլլայ։ Եւ Յիսուս պատասխան

՝Գոր. ե. 51, 52։ ա Թես. բ. 15։
ՀԸն. ժե. 16։ ա Թես. բ. 16։
՝Գէն. գ. 7։ ԺԲ. 84։
ՂԳ. խ. 34, 35։ Ղե. ժա. 49։
՝Գոր. ե. 40։ Ե. 57, 58։ Իբ. 10։
՝Գէ. ժ. 17։ Բ Կոր. ժա. 24, 25։
ՀՁայտ. ժբ. 24։
՝Ծն. գ. 8։ ա Յօհ. գ. 12։
ԲԲ Մն. իդ. 20, 21։
Ղե. ժգ. 34։
Բ Մն. իդ. 21։
Ելբ Օր. լբ. 11, 12։
Սաղ. ժէ. 8։ ղա. 4։
Սաղ. ճժբ. 26։ Գէ. խ. 9։

ՀՄար. ժգ. 1։ Ղե. խ. 5։
ԲԺ Թագ. թ. 7։ Երեմ. իշ. 18։ Մհ. գ. 12։ Ղե. ժԲ. 44։
Ելմար. ժգ. 8։
Ղա Թես. ե. 1։

Ցամբ Ցնաուն 33

Է Եփե . ե " . 6 : Կող . Բ . Տ . 18 : Բ Թես . Բ . 3 : " Ցօ՝ . դ . 1 : Ղերեմ . ժգ . 14 : իդ . 21 . 25 : Հմր 24 : Ցօ՝ . ե . 43 :

Է Հմր 11 : Բ Բ Մ՝ . ժե . 6 : Ե " . ժթ . 2 : Ա Ոգ . Բ . 22 : Զաք . ժգ . 13 :

Բ Գլ . ժ . 17 : Մ՝ար . ժգ . 9 : Ղու . իա . 12 : Ցօ՝ . ժե . 20 : ժշ . 2 : Գոր . դ . 2 . 3 : է . 58 : ժբ . 1 : " Պհա . դ . 16 : Ց Յա՝ . Բ . 10 . 13 :

ժԹ . ժա . 6 : ժգ . 57 : Բ Տիմ . ա . 15 : դ . 10 . 16 :

Է Գլ . է . 15 : Գոր . ի . 29 : Բ Պետ . Բ . 1 :

Լ Ա Տիմ . դ . 1 : Հմր 5 . 24 :

Է Գլ . ժ . 22 : Մ՝ար . ժգ . 13 : Երբ . դ . 6 . 14 : Ցա՝ . Բ . 10 :

Ֆ Գլ . դ . 23 : Թ . 35 :

Լ Հով . ժ . 18 : Կող . ա . 6 . 23 :

Հ Մ՝ար . ժգ . 14 : Ղու . իա . 20 :

Ն Դան . Թ . 27 . ժբ . 11 : Ղ Դան . Թ . 23 . 25 :

Ճ Ղու . իգ . 29 :

Մ Դան . Թ . 26 . ժբ . 1 : Ցովել . Բ . 2 :

Ա Ես . կե . Տ . 9 : Զաք . ժգ . 2 . 3 : Ն Մ՝ար . ժգ . 21 : Ղու . ժե . 23 . իա . 8 :

Ա Բ Օբ . ժգ . 1 : Հմր 5 . 11 : Բ Թես . Բ . 9 . 10 . 11 : Ցա՝ . ժգ . 13 :

տուաւ՝ ու բաւ անոնց . Է Զդո՛յշ կեցէք՝ չըլլայ որ մէկը ձեզ խաբէ .

5 Ինչու որ Ընչատերը պիտի գան իմ անունովս՝ ու ըսեն թէ , Ես եմ Քրիստոսը . ու Է շատերը պիտի մո-

6 լորցընեն : Եւ պիտի լսէք պատերազմներ՝ ու պատերազմներու լուրեր . զդո՛յշ կեցէք որ չխռովիք . ինչու որ ան ամէն բաները պէտք է որ ըլլան , բայց դեռ վերջը չէ :

7 Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ , ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ , և տեղ տեղ սովեր ու մահտարաժամներ , և երկրաշարժութիւններ պիտի ըլլան :

8 Բայց ասոնք ամէնը՝ ցաւերուն բա-

9 կիզքն են : Բ Այն ատենը ձեզ նեղութեան պիտի մատնեն , և ձեզ պիտի սպաննեն , ու իմ անուանս համար ամէն ազգերուն ատելի պիտի

10 ըլլաք : Եւ ան ատենը շատերը ծ պիտի գայթակղին , ու մկզմկզ պիտի մատնեն , և մկզմկզ պիտի

11 ատեն : Եւ Է շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու Է շատերը պիտի

12 մոլորցընեն : Եւ անօրէնութիւնը շատնալուն համար՝ շատերուն սէրը

13 պիտի պաղի : Է Բայց ով որ մինչև վերջը համբերէ , անիկայ պիտի

14 ապրի : Եւ Ծ արքայութեան աս աւետարանը երկրի վրայ ամէն ազգերուն վկայութիւն ընելու համար պիտի քարոզուի՝ բոլոր աշխարհի մէջ , ու ասկէ ետև վերջը պիտի գայ :

15 Հրէստի երբոր տեսնէք աւերմանքին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսուած է , թէ սուրբ տեղը կը կենայ . (ով որ կարդայ՝ թող հասկրնայ .) Ան ատենը Հրէաստանի մէջ եղողները՝

17 լեռները թող փախչին . Եւ ան որ տանիքին վրայ է՝ թող չիջնէ

18 իր տունէն բան մը առնելու . Եւ ան որ արտին մէջն է՝ թող ետ չդառնայ իր հանկերձները առնելու :

19 Ու բայց վայ ան օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն ,

20 Եւ աղօթք ըրէք՝ որ ձեր փախչիը ձմեռը չըլլայ , ոչ ալ շաբաթ օրը .

21 Քանզի Ան ատենը անանկ մեծ նեղութիւն պիտի ըլլայ , որուն նմանը աշխարհի սկիզբէն մինչև հիմա եղած չէ , ոչ ալ պիտի

22 ըլլայ : Եւ թէ որ ան օրերը չկրճատնային , ոնց ալ պիտի չապրէր . բայց ընտրեալներուն համար՝ ան օրերը պիտի քիչնան :

23 Ն Այն ատենը թէ որ մէկը ձեզի ըսէ թէ , Ահա հոս է քրիստոսը

24 կամ հոն , մի՛ հաւատար . Ինչու որ Հսուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցընեն , որ Եթէ կարելի էր՝ ընտ-

25 րեալներն ալ մոլորցընեն : Ահա

26 ձեզի առաջուց ըսի , Ուստի թէ որ ձեզի ըսեն թէ՝ Ահա անապատին մէջն է , մի՛ ելլէք . Ե Ըէ՝ Ահա՝ ներքին սենեակներուն մէջն է , մի՛

27 հաւատաք : Էվասն զի ինչպէս որ փայլակը արևելքէն կ'ելլէ՝ ու մինչև արևմուտք կ'երևնայ , անանկ պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գա-

28 լուստը : Ղ Քանզի ուր որ մեռած մարմին կայ , հոն պիտի ժողվուին արծիւները :

29 Եւ Նշուտ մը ան նեղութեան օրերէն ետև՝ Ը արեգակը պիտի խաւարի , ու լուսինը իր լոյսը պիտի չտայ , և աստղերը երկինքէն պիտի իյնան , ու երկնից զօրութիւնները

30 պիտի շարժին : Ը Եւ ան ատենը Որդւոյ մարդոյ նշանը պիտի երևնայ երկինքի մէջ , Հու ան ատենը երկրիս բոլոր ազգերը կոծ պիտի ընեն , Ը ու պիտի տեսնեն Որդին մարդոյ երկինքի ամպերուն վրայ եկած՝ զօրութիւնով ու մեծ փառքով :

31 Բ Եւ անիկայ իր հրեշտակները պիտի խրկէ մեծաձայն փողով , ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն՝ երկինքին մէկ ծայրէն մինչև մէկալ ծայրը :

32 Թզենիէն առակ մը սորվեցէք . որ երբ անոր ոստերը կը կակուղնան , ու տերևները կը ցցուին ,

33 գիտէք թէ ամառը մօտ է : Նոյնպէս ալ դուք երբոր աս ամէն բաները տեսնէք , գիտցէք Ը որ մօտ է

34 դուռերուն քովը : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ Հաս ազգը պիտի չանցնի , մինչև որ աս ամէն բա-

35 ները ըլլան : Ե Երկինքը ու երկիրը պիտի անցնին , բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին :

36 Ե Իսկ այն օրուան և այն ժամուն համար՝ մէկը չգիտեր , ոչ ալ երկնից Ը հրեշտակները , Ֆ հապա միայն

37 իմ Հայրս : Բայց ինչպէս որ Նոյի օրերը էը՝ , Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ :

38 Ը Քանզի ինչպէս էին ան օրերը ջրհեղեղէն առաջ , կ'ուտէին՝ կը խմէին՝ կնիկ կ'առնէին ու երկրացու տային , մինչև այն օրը որ Նոյ

39 տապանը մտաւ Եւ չգիտցան՝ մինչև որ ջրհեղեղը եկաւ , ու զամ՝ նը վերցուց . Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ :

40 Բ Այն ատենը Իր Ը երկու . հոգի արտի մը մէջ ըլլան , մէկը պիտի առնուի՝ ու մէկալը ձգուի :

Ցամբ Ցնաուն 33

Ը Ցօ՝ . ջ . 37 : ժ . 28 . 29 : Հով՝ . Բ . 28 . 29 . 30 : Բ Տիմ . Բ . 19 : Ղու . ժե . 24 :

Գ Ցօ՝ . լթ . 30 : Ղու . ժ . 37 :

Ը Դան . է . 11 . 12 :

Ե Ես . ժգ . 10 : Եզկ . ւը . 7 : Յովէլ . Բ . 10 : 31 : գ . 15 : Ամվ . ե . 20 : Բ . 9 : Մ՝ար . ժգ . 24 : Ղու . իա . 25 : Գոր . Բ . 20 : Ցա՝յա . ջ . 12 :

Դան . է . 13 :

Հ Զաք . ժ Բ . 12 :

Գ Գլ . ժգ . 27 : Մ՝ար . ժգ . 26 : Ցա՝յա . ա . 7 :

Բ Գլ . ժ . 41 : ա Կոր . ժե . 52 : ա Թես . դ . 15 :

Ղ Ղու . իա . 29 :

Յակ . ե . 9 :

Ֆ Գլ . ժգ . 23 : ժգ . 36 : Մ՝ար . ժգ . 30 : Ղու . իա . 32 :

Սաղ . ճը . 26 : Ես . ծա . 6 : Երեմ . լա . 33 . 36 : Գլ . ե . 15 : Մ՝ար . ժգ . 31 : Ղու . իա . 33 : Երբ . ա . 11 :

Մ՝ար . ժգ . 32 : Գոր . ա . 1 : " Թես . ե . 2 : Ո՛վհետև չգիտէք ուր ըլլալուկնոջ . Բր և ոչ Որդին :

Զաք . ժգ . 7 :

Ծն ղ . 3 . 4 . 5 . 6 : Ղու . ժե . 26 . աղեա . դ 20 :

Բ Ղու . ժե . 34 . 35 :

Ցամի Տեառն 33

42 Ուրեմն Տարհուն կեցէք. ինչու որ չէք գիտեր թէ որ ժամուն ձեր
43 Տէրը կու գայ. Երջայր աս գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար՝ թէ ի՛նչ ժամու գողը կու գայ, արթուն կը կենար, և թողը չէր տար որ իր տունը ծա-
44 կէն. Ե՛նոր համար դուք ալ պատրաստ կեցէք. քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ որ դուք չէք կարծեր։
45 Ո՞րեստի ո՞վ է ան հաւատարիմ ու իմաստուն ծառան՝ որն որ իր տէրը իր ծառաներուն վրայ դրաւ, որ ատենին անոնց կերակուր տայ։
46 Երանի է ան ծառային, որն որ իր տէրը եկած ատենը՝ անանկ ըրած
47 պիտի գտնէ. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցընէ զանիկայ։
48 Հապա թէ որ ան չար ծառան իր սրտին մէջը ըսէ. Իմ տէրս իր գա-
49 լը կ'ուշացընէ. Եւ սկսի իր ծառայակիցները ծեծել, ու գինովց-
50 ներուն հետ ուտել ու խմել. Ան ծառային տէրը պիտի գայ ո՛չ-ի՛նչ մէկ օր մը որ չսպասեր, և ո՛չ-ի՛նչ
51 մէկ ժամ մը՝ որ չգիտեր. Ու զանիկայ մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ. Ի՛հն պիտի ըլլայ լալ ու ակռաները կճռընլել։

Բ Գլ. բ. 12, Ի՛Ե. 90։

Գ Լ. Ի Ե

1 Տասը կուսանաց առակը. 14 ու տալանդներուն առակը։ 31 Վերջին դատաստանին բնորոգրութիւնը։

1 Յետոյ անոնք երկնից թագաւորութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները առնելով՝ փեսան դիմաւորելու։
2 Եւ հինգ ի՛մաստուն
3 էին, և հինգը յիմար, Որ յիմարները առին իրենց լապտերները, ու
4 Հետերնին ձէղ չառին. Բայց իմաստունները իրենց լապտերներուն հետ ամաններով ձէղ ալ առին։
5 Եւ փեսան որ ուշացաւ, Համին
6 ալ թմրեցան ու քնացան։ Եւ կէս գիշերին Ձայն մը եղաւ. Ահա փեսան կու գայ՝ զանիկայ դիմաւորելու։
7 Ելէ՛ք՝ ըսին ամէն տասները բոլոր կոյսերը ելան, ու Իրենց լապտերները շիտ-
8 կեցին։ Եւ յիմարները ըսին իմաստուններուն. տուէ՛ք մեզի ձեր ձէղէն. ինչու որ մեր լապտերները
9 մարելու վրայ են։ Պատասխան տուին իմաստունները՝ ու ըսին. Ըլլայ որ մեզի ու ձեզի չբաւակա-նանայ. այլ յաւէտ ծախողներուն գացէ՛ք և գնեցէ՛ք ձեզի համար։
10 Երբոր անոնք գացին գնելու փեսան եկաւ ու պատրաստ եղողները ա-նոր հետ հարսնիքը մտան, և դուռ-

11 ը գոցուեցաւ։ Ետքը մէկալ կոյսերը եկան՝ ու ըսին. Տէր Տէր՝
12 բաց մեզի։ Բայց անկէց պա-տասխան տուաւ՝ ու ըսաւ. Ճըշ-մարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ես ձեզ
13 չեմ ճանչնար։ ԸՈւրեմն արթուն կեցէ՛ք. ինչու որ ո՛չ օրը գիտէք, և ո՛չ ժամը։
14 Քանզի ի՛նչպէս օտար երկիր գացող մարդ մը՝ կանչեց իր ծառա-ները, և իր ունեցածը անոնց
15 յանձնեց, Մէկուն տուաւ հինգ տալանդ, ու մէկուն երկուք, և մէկուն՝ մէկ, Համին մէկուն, իր կա-րողութեանը չափ ու անմիջապէս
16 ճամբայ ելաւ. Եւ ան որ հինգ տալանդը առած էր, գնաց անոնց-մով գործ տեսաւ, և ուրիշ հինգ
17 տալանդ շահեցաւ։ Նմանապէս ան որ երկուքը ո՛ւնէր էր, ուրիշ
18 երկուք ալ շահեցաւ։ Իսկ ան որ մէկը առած էր, գնաց գետինը փո-րեց, ու իր տիրոջը ստակը պա-
19 հեց։ Շատ ժամանակէ ետեւ ան ծառաներուն տէրը եկաւ, և ա-
20 նոնցմէ հաշիւ ուզեց։ Եւ հինգ տալանդը առնողը եկաւ՝ ուրիշ հինգ տալանդ ալ բերաւ, ու ը-սաւ. Տէ՛ր հինգ տալանդ յանձ-նեցիր ինծի, ահա ուրիշ հինգ տալանդ ալ անոնց վրայ շահեցայ։
21 Ըսաւ անոր իր Տէրը. Ապրի՛ս՝ բարի և հաւատարիմ ծառայ, դուն որ քիչ բանին մէջ հաւատա-րիմ եղար, Քեզ շատ բաներու վրայ պիտի կեցընեմ. մտիր Ի՛րե-
22 տիրոջդ ուրախութեանը մէջ։ Եր-կու տալանդը առնողն ալ եկաւ՝ ու ըսաւ. Տէ՛ր երկու տալանդ յանձ-նեցիր ինծի, ահա ուրիշ երկու տալանդ ալ անոնց վրայ շահեցայ։
23 Ըսաւ անոր իր տէրը. Ապրի՛ս՝ բարի և հաւատարիմ ծառայ, դուն որ քիչ բանին մէջ հաւատա-րիմ եղար, քեզ շատ բաներու վը-րայ պիտի կեցընեմ. մտիր քո-
24 տիրոջդ ուրախութեանը մէջ։ Մէկ տալանդը առնողն ալ եկաւ՝ ու ը-սաւ. Տէ՛ր գիտէի որ դուն խիստ մարդ մըն ես. չսերմանած տեղէդ կը ժնջես, ու չցանած տեղէդ կը
25 ժողվես. Ուստի վախնալով, գա-ցի քու տալանդդ գետինն տակը պահեցի. ահա քուկդ քեզի։
26 Պատասխան տուաւ անոր տէրը՝ ու ըսաւ անոր. Չար և ծոյլ ծառայ՝ գիտէիր որ չսերմանած տեղէս կը ժնջեմ, ու չցանած տեղէս կը ժողվեմ։
27 Վե՛ւ. Ուրեմն պէտք էր քեզի որ իմ ստակս սեղանաւորներուն տա-յիր, որ ես եկած ատենս չտոկոս
28 առնէի իմն։ Ուրդ առէ՛ք ատկէ տալանդը, ու տասը տալանդ ու-

Ցամի Տեառն 33

Ե Գլ. Է. 21, 22, 23։ Ը Սաղ. ե. 5։ Ամբ. ա. 13։ Ցոհ Ի. 31։ Ի Գլ. իդ. 42, 44։ Մարկ ժգ. 33, 35։ Ղուկ իա. 36։ ա Կոր. ժգ. 13։ ա Թես. ե. 6։ ա Պետ ե. 8։ Ցայտ. ժգ. 15։ ° Ոմանք՝ ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կու գայ։ Ժ Ղուկ. ժԲ. 12։ Գլ. իա. 33։ Ի Հռով. ժր. 6։ ա Կոր. ժր 7. 11. 29։ Եփես. գ. 11։

Լ Գլ. իդ. 47։ Հմր 34. 46։ Ղուկ. ժբ. 44։ Իր. 29 30։ Ի Եբր. ժր. 2։ բ Տիմ. ր. 12։ ա Պետ. ա. 8։ Ժ Հմր 21։

Յամի Տեառն 33

Ա ԳԼ ժդ · 12 · Մար · 2 · 25 · Ղու · Բ · 18 · ԺԹ · 26 · Յոհ · ժ ՚ · 2 ·

Բ Գլ · Բ · 12 · իդ · 31 ·

Յ Զաք · ժդ · 5 · Գլ · ժդ · 27 · ԺԹ · 28 · Մար · Բ · 38 · Դար · ա · 11 · ՚ Թես · 2 · 15 · Բ Թես · ա · 7 · Յուդ · 14 · Յայտ · ա · 7 ·

՚ Որ՚ան չըն-նին սուրբ Բ—ը ·

Դ Հով · ժդ · 10 · Բ Կոր · ե · 10 · Յայտ · ի · 12 ·

Ե Եզեկ · ի · 35 · Լի · 17 · 20 · Գլ · ժդ · 49 ·

Զ Գլ · ի · 23 · Մար · ժ · 40 · ա Կոր · Բ · 9 · Եբր · ժա · 16 ·

Է Հով · Բ · 17 · ՚ ազիաս · ա · 4, 9 · Բ · 9 · Յայտ · իա · 7 ·

Ը Ես · ծբ · 7 · Եզեկ · ժբ · 7 · Յակ · ա · 27 ·

Թ Եբր · ժգ · 2 · Բ Յոհ · 5 ·

Ժ Յակ · բ · 15 · 16 ·

ԺԱ Տիմ · ա · 16 ·

ԺԲ Նահ · ժգ · 31 · ԺԹ · 17 · Գլ · ժ · 42 · Մար · Ի · 40 · Եբր · Ղ · 10 ·

ԺԳ Ա՚ղ · Ղ · Տ · Գլ · ի · 23 · Ղու · ժգ · 27 ·

ԺԴ Գլ · ժգ · 40 · 42 ·

ԺԵ Պնտ · Բ · 4 · Յակ · 6 ·

29 Նեցողի՛ն տուէք , ՚ ինչու որ ամէն ունեցողին պիտի տրուի , ու պիտի աւելնայ , և չունեցողին ունեցածն

30 ալ անկէ պիտի առնուի : Եւ ատ անպիտան ծառան դո՛ւրսի խաւարը հանեցէք . հոն պիտի ըլլայ լալ՝ ու ակռանե՛ր կճռըցնել ՚

31 Ու ՚ երբոր Որդին Մարդոյ իր փառքովը գայ , և բոլոր ՚ սուրբ հրեշտակները իր հետը , ան ատենը իր

32 փառաց աթոռը պիտի նստի . Եւ ՚ անոր առջեւը պիտի ժողովուին բոլոր ազգերը , ու ՚ զանոնք իրարմէ պիտի զատէ , ինչպէս որ հովիւ մը ոչխարները այծերէն կը զատէ ,

33 Եւ ոչխարները իր աջ կողմը պիտի կայնեցընէ , ու այծերը՝ ձախ կողմը :

34 Ան ատենը թագաւորը իր աջ կողմն եղողներուն պիտի ըսէ . Եկէ՛ք իմ Հօրս օրհնածնե՛ր , ՚ ժառանգեցէ՛ք սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ՚ ժամ ·

35 ուռնգեցէ՛ք . ՚ Ինչու որ անօթեցայ , և ինձի ուտելի՛ք տուիք . ծարաւեցայ , ու ինձի խմցուցի՛ք . ՚ օտարական էի , և զիս ներս առի՛ք .

36 ՚ Մերկ էի , և զիս հագուեցուցի՛ք . հիւանդ էի , ու ինձի տես եկա՛ք . ՚ բանտի մէջ էի , և ինձի եկա՛ք :

37 Ան ատենը արդարները անոր պատասխան պիտի տան՝ ու ըսեն . Տէ՛ր ՚ երբ քեզ անօթեցած տեսանք՝ ու կերակրեցինք , կամ ծարաւած՝ ու

38 խմցուցինք . ՚ երբ քեզ օտարական տեսանք՝ և ներս առինք , կամ

39 մերկ՝ ու հագուեցուցինք . ՚ երբ քեզ հիւանդ կամ բանտի մէջ տես

40 ուանք , ու քեզի եկանք : Եւ թագաւորը պատասխան տալով՝ պիտի ըսէ անոնց . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . ՚ Որովհետեւ ատ իմ եղբայրներուս պիտի պզտիկներէն մէկուն ըրիք , ինձի ըրիք :

41 Ան ատենը ձախ կողմը եղողներուն ալ պիտի ըսէ . Ա՚մէկդի գացէ՛ք ինձմէ անիծեալնե՛ր՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է ՚ Սատանային՝ ու իր

42 հրեշտակներուն : Ինչու որ անօթեցայ , և ինձի ուտելի՛ք չտուիք . ծարաւեցայ , ու ինձի չխմցուցի՛ք .

43 Օտարական էի , և զիս ներս չառի՛ք . մերկ էի , և զիս չհագուեցուցի՛ք . հիւանդ ու բանտի մէջ

44 էի , և ինձի տես չեկա՛ք : Ան ատենը անոնք ալ պատասխան պիտի տան՝ ու ըսեն . Տէ՛ր ՚ երբ տեսանք քեզ անօթեցած կամ ծարաւած՝ կամ օտարական՝ կամ մերկ՝ կամ հիւանդ՝ կամ բանտի մէջ , ու քեզի սպա-

45 սաւորութիւն չըրինք : Ան ատենը պատասխան պիտի տայ անոնց՝ ու ըսէ . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Հնորովհետեւ ատոնց պիտի պզտիկներէն մէկուն չըրիք , ինծի ալ չըրիք :

46 ՚ Եւ ատոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը , իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը :

ԳԼ · ԻԶ

1 Իխանները խորհուրդ կ՚ընեն Քրիստոսի դէմ : 6 Կին մը եղով կ՚օծէ անոր գլուխը : 14 Յուդա կը մնանէ Քրիստոս : 17 Քրիստոս կ՚ուտէ զատիկը : 26 կը սահմանէ իր սուրբ ընթրիքը : 36 աղօթք կ՚ընէ պարտէզին մէջ : 47 և մէկ համբուրով մը մատնուած՝ 57 կաւ յիափայի առջեւն կը տարուի : 69 Պետրոս կ՚ուրանայ զՔրիստոս :

1 Ու երբոր Յիսուս ըլլընցուց ատ բոլոր խօսքերը , ըսաւ իր աշա-

2 կերտներուն . ՚ Գիտէ՛ք որ երկու օրէն ետև զատիկ կ՚ըլլայ , և Որդին Մարդոյ կը մատնուի խաչը ելլելու :

3 Յետոյ Ա՚ն ատենը քահանայապետները՝ ու գրիչները՝ և ժողովրդին ծերերը ժողվուեցան քահանայապետին սրահը , որուն անունը կայիա-

4 փաս էր . Ու խորհուրդ ըրին՝ որ նենգութեամբ բռնեն Յիսուսը՝ ու

5 մեռցընեն : Բայց կ՚ըսէին թէ , Ո՚չ ՚ տօնիս մէջ , որ ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ :

6 Եւ Երբոր Յիսուս ՚ Բեթանիա

7 էր բորոտ Սիմոնին տունը , Ննիկ մը եկաւ անոր՝ որ ունէր ծանրագին և-ղի շիշ մը . և թափեց անոր գլխուն վրայ՝ երբոր անիկայ սեղան

8 նստած էր : Եւ անոր աշակերտները տեսնելով , դժուարեցան՝ ու ըսին . Ինչո՞ւ աս կորուստը ըլլայ .

9 Քանզի ատ եղը կրնար սուղ դնով ծախուիլ , ու աղքատներուն տր-

10 ուիլ : Եւ Յիսուս իմանալով ըսաւ անոնց . Ինչո՞ւ անհանգիստ կ՚ընէք կնիկը . քանզի ատիկայ բա-

11 րի գործ մը գործեց ինծի : Հինչու որ աղքատները ամէն ատեն ձեր հետը ունիք , բայց ՚ զիս ամէն ատեն

12 չունիք : Վասն զի ատիկայ՝ որ ատ ևղը իմ մարմինիս վրայ թափեց , իմ

13 թաղմանս համար ըրաւ : Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ , բոլոր աշխարհի մէջ՝ ուր որ աս աւետարանս քարոզուի , ատոր ըրածն ալ պիտի խօսուի իրեն յիշատակ ըլլալու համար :

14 Ա՚ն ատենը տասներկուքէն մէկը՝ որ ՚ Յուդա Իսկարիովտացի կ՚ըսուէր , գնաց քահանայապետնե-

15 րուն՝ ու ըսաւ . Ի՞նչ կ՚ուզէք ինծի տալ , ու ես ձեզի մատնեմ զանոնք : և անոնք երեսուն ՚ արծաթ կշռելցին անոր : Եւ անկէ

16 ետև պատեհութիւն մը կը փնտռէր , որ զանիկայ մատնէ ՚ անոնց :

17 Եւ բաղարջակերաց առ ջի օրը ա-

Յամի Տեառն 33

Ա Նահ · ժգ · 31 · ժէ · 5 · Զաք · Բ · 8 · Գոր · Թ · 5 ·

՚ Դան · ժբ · 2 · Յոհ · ե · 29 · Հով · Բ · 7 · ՚ ՚ ՚

— Մար · ժգ · 1 · Ղու · իբ · 1 · Յոհ · ժգ · 1 ·

Բ Ա՚ղ · Բ · 2 · Յոհ · ժա · 47 · Գոր · Գ · 25 · ՚ ՚ ՚

Գ Մար · ժգ · 3 · Յոհ · ժա · 1, 2 · ժբ · 3 ·

Դ Գլ · իա · 17 ·

Ե Յոհ · ժբ · 4 ·

Զ Ղր Օր · ժե · 11 · Յոհ · ժբ · 8 ·

Է Տես գլ · ժբ · 20 · իբ · 20 · Յոհ · ժգ · 33 · ժգ · 19 · ժգ · 5, 28 · ժէ · 11 ·

Ը Մար · ժգ · 10 · Ղու · իբ · 3 · Յոհ · ժգ · 2, 30 ·

Թ Գլ · ժ · 4 ·

Ժ Զաք · ժա · 12 · Գլ · իէ 3 ·

ԺԱ Կա՚խառնացան

ԺԲ Ել · ժբ · 6, 18 · Մար · ժգ · 12 · Ղու · իբ · 7 ·

Ցամ Տեառն 33

չակերտները Ցիսուսին ևկան ու ա-
նոր ըսին . Ո՞ր կ'ուզես որ քեզի
պատրաստենք՝ զատիկը ուտելու
18 համար : Եւ անիկայ ըսաւ . Գացէք
քաղաքը այս ինչ մարդուն ու ըսէք
անոր . Վարդապետը կ'ըսէ . ժա-
մանակս մօտ է , աշակերտներուս
հետ զքեզի տեղ քու քովդ պիտի ը-
19 նեմ զատիկը : Աշակերտներն ալ
ըրին՝ ինչպէս որ Ցիսուս իրենց հր-
ամայեց ըրաւ , ու պատրաստեցին
զատիկը :

ԼՄար . ժգ . 17 — 21 : Ղու . իբ . 14 : Ցոհ . ժգ . 21 :

20 Ւ Ռ երբոր իրիկուն եղաւ , տաս-
ուներկուքին հետ սեղան նստաւ :

ԻՄար . ժգ . 9 : Ղու . իբ . 21 : Ցոհ . ժգ . 18 :

21 Եւ քանի որ կ'ուտէին՝ ըսաւ .
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ ձեզմէ

ԲՄար . իբ : Ես . ծգ : Դան . թ . 26 : Մար . թ . 11 : Ղու . իգ . 23 , 26 , 46 : Գոր . ժէ . 2 . 3 : իզ . 22 : 23 : ա Կոր . ժե . 3 :

մէկը զիս պիտի մատնէ : 22 Ու չատ
տրտմեցան , և անոնցմէ ամէն մէկը
սկսաւ ըսել անոր . Տէր՝ միթէ ե՞ս

ԳՅհ . իբ : Ես . ծգ : Դան . թ . 26 : Մար . թ . 11 : Ղու . իգ . 23 , 26 , 46 : Գոր . ժէ . 2 . 3 : իզ . 22 : 23 : ա Կոր . ժե . 3 :

23 եմ : Անիկայ պատասխան տուաւ՝
ու ըսաւ . Ի Ն , որ իմ հետս իր
ձեռքը պնակը իսոթեց , նոյնը պիտի

ՂՅհ . ժգ . 18 :

24 մատնէ զիս : Ցիրաւի Որդին մար-
դոյ կ'երթայ՝ ինչպէս որ գրուած է
իրեն համար . բայց ւվայ անոր մար-
դուն՝ որուն ձեռքովը Որդին մար-
դոյ կը մատնուի . աղէկ էր ան մար-

ՂՄար . ժգ . 21 :

25 դուն , որ ծնած չըլլար : Պատաս-
խան տուաւ Ցուդան՝ որ անիկայ
պիտի մատնէր՝ ու ըսաւ . Վարդա-
պետ՝ միթէ ե՞ս եմ . ըսաւ անոր .
Դուն ըսիր :

ՂՄար . ժգ . 22 : Ղու . իբ . 19 :

26 Ն ե քանի որ անոնք կ'ուտէին ,
Յ Ցիսուս հաց առաւ՝ օրհնեց ու կըտ-
րեց , և տուաւ աշակերտներուն ու
ըսաւ . Առէք՝ կերէք , ասս է իմ

ՃՅհ . ժգ . 23 :

27 մարմինս : Եւ գաւաթը առաւ՝
գոհացաւ , ու տուաւ անոնց՝ և ը-
սաւ . Ա Ամէնքդ ալ խմեցէք ասկէ .

ՃՏե՛ս Եղ . իգ . 8 : Ղու . ժե . 11 :

28 ՛ Ինչու որ ասիկայ է իմ արիւնս
Յնոր ուխտի , որ Ն շատերու համար
կը թափուի մեղաց թողութեան

ՃԵղ . իգ . 28 : Հաւ . ե . 15 : Երր . թ . 22 :

29 համար : Բայց կ'ըսեմ ձեզի .
Ա Ասկէ ետև որթին բերքէն բնաւ
պիտի չխմեմ մինչև ան օրը՝ երբոր
ձեր հետը անիկայ նոր խմիմ իմ

ԼՄար . ժգ . 25 : Ղու . իբ . 18 :

Ա Գոր . ժ . 41 :

ԼՄար . ժգ . 23 :

30 Հ Ոգիս թագաւորութեանը մէջ :
Ն Նե օրհնութիւն մը երգելէն ետև՝

ՂՄար . ժգ . 27 : Ցոհ . ժգ . 32 :

31 Ձեբեննեայ լեռը ելան : Ան ատե-
նը Ցիսուս ըսաւ անոնց . Ա Դուք
ամէնքդ ալ դիւրիր Իմ վրայովս
պիտի գայթակղիք . ինչու որ գը-
րուած է թէ՝ Ա Հովիւը պիտի զար-
նեմ , ու հօտին ոչխարները պիտի

ՂԶԳ . ժա . 6 :

Ա Ըստ . ժգ . 7 :

32 ցրուին : Բայց յարութիւնս առնելէս
ետև՝ ձեզմէ առաջ Ա գալիլեա պի-

Ա Գղ . իբ . 7 : 10 , 16 : ՄՄար . ժշ . 28 : ժշ . 7 :

տի երթամ՝ : Պատասխան տուաւ
Պետրոս՝ ու ըսաւ անոր . Թէպէտ
ամէնքն ալ քու վրայովդ պայթակ-
ղին , բայց ես բնաւ պիտի չպայ-

ԼՄար . ժգ . 30 : Ղու . իբ . 31 : Ցոհ . ժգ . 38 :

34 թակղիմ : Ըսաւ անոր Ցիսուս .
Ճշմարիտ կ'ըսեմ քեզի Ա՝ Այս
գիշեր պիտ հաւը չհոսած իրեք

35 անգամ զիս պիտի ուրանաս : Ըսաւ
անոր Պետրոս . Թէև քեզի հետ
մեռնելու ալ ըլլամ՝ բնաւ քեզ
պիտի չուրանամ . ասանկ կ'ըսէին
նաև ամէն աշակերտները :

ՄՄար . ժգ . 32 — 35 : Ղու . իբ . 39 : Ցոհ . ժբ . 1 :

36 Ա Ան ատեն Ցիսուս անոնց հետ
տեղ մը եկաւ , որուն անունը
Գեթսեմանի էր , ու ըսաւ աշա-
կերտներուն . Հոս նստեցէք՝ մինչև
որ ես երթամ հոն աղօթք ընեմ :

ՄՄար . ժգ . 36 : Ղու . իբ . 42 : Երր . ե . 7 :

37 Եւ իր հետը առնելով Պետրոսը
ու Ջեբեդէոսին երկու որդիքը ,

ՃԳղ . դ . 21 :

38 սկսաւ տրտմիլ և վշտանալ : Ան
ատենը ըսաւ անոնց . Ի Իմ անձս
մեռնելու չափ տրտում է . հո՛ս կե-
ցէք , և ինծի հետ արթո՛ւն մնա-

ՃՅհ . ժբ . 27 :

39 ցէք : Ու քիչ մը առաջ երթա-
լով՝ իր երեսին վրայ ինկաւ , և Ա ա-
ղօթք ըրաւ՝ ըսելով . Ֆ Ո՛վ Հայր
իմ՝ թէ որ կարելի է , Ֆ թող աս
գաւաթը ինծմէ անցնի . բայց Ֆ չէ
թէ ինչպէս որ ես կ'ուզեմ , հապա

ՄՄար . ժգ . 36 : Ղու . իբ . 42 : Երր . ե . 7 : Ցոհ . ժբ . 27 :

40 ինչպէս որ դուն Ֆ՝ — Է՛ — ս : Եւ
եկաւ աշակերտներուն՝ ու զանոնք
քնացած գտաւ , և ըսաւ Պետրո-
սին . Ա Դդպէս մէկ ժամ մըն ալ
չկրցաք ինծի հետ արթուն կենալ ,

ՖՂու . իբ . 22 : Ցոհ . ե . 30 : չ . 38 : Փիլ . բ . 8 :

41 Ֆ Ընթո՛ւն կեցէք և աղօթք ըրէք ,
որ փորձութեան մէջ չմտնէք . Հո-
գին յօժար է Ֆ , բայց մարմինը ը-

ՖՄար . ժգ . 38 : Ղու . իբ . 40 , 46 : Եփե . զ . 18 :

42 կար ։ Դարձեալ երկրորդ անգամ
գնաց աղօթք ըրաւ՝ ըսելով . Ո վ
Հայր իմ՝ եթէ անկարելի է որ աս
գաւաթը ինծմէ անցնի՝ առանց ան-
կէ խմելուս , թող քու կամքդ

43 ըլլայ : Եւ եկաւ զանոնք նորէն
քնացած գտաւ . ինչու որ աչքերը
44 նին ծանրացած էր : Եւ թողուց
անոնք , ու նորէն գնաց երրորդ ան-
գամ աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ը-

45 սելով : Ան ատենը եկաւ իր ա-
շակերտներուն՝ ու ըսաւ անոնց .
Ասկէ ետև քնացէ՛ք ու հանգչեցէ՛ք .
ահա ժամը հասաւ , և Որդին մար-
դոյ մեղաւորներուն ձեռքը կը մատ-
46 նուի : Ելէ՛ք ասկէ երթա՛նք , ա-
հա մօտեցաւ անիկայ՝ որ զիս պիտի
մատնէ :

47 Եւ Ա դեռ անիկայ աս որ կը խօ-
սէր , ահա Ցուդան՝ տասներկուե-
րէն մէկը՝ եկաւ . և իր հետը շատ
բազմութիւն սուրերով ու բիւրերով՝
քահանայապետներէն և ժողովուր-

ՄՄար . ժգ . 43 : Ղու . իբ . 47 : Ցոհ . ժբ . 3 : Գոր . ա . 16 :

48 դին Ծերերէն : Եւ զանիկայ մատ-
նողը անոնց նշան մը տուեր էր՝
ըսելով . Ո՛վ որ ես համբուրեմ՝

49 ան է , բռնեցէ՛ք անիկայ : Եւ
շուտ մը Ցիսուսին մօտենալով՝ ը-
սաւ . Ողջո՛յն քեզ վարդապետ .

50 ու Բ համբուրեց զանիկայ : Եւ Ցի-
սուս ըսաւ անոր . Ֆ Ընկեր՝ ինչո՞ւ
համար եկար դուն . ան ատենը մօ-
տեցան՝ ձեռք զարկին Ցիսուսին ու

ՔՄար . ժգ . 48 : Ղու . իբ . 52 : Ցոհ . ժը . 1 :

ՏՍաղ . խա . 9 : Ես . ծ . 6 :

Ցաւի Տեառն 33

51 բռնեցին զանիկայ ։ Եւ ահա ՚ի Ցիսուսի հետ եղողներուն մէկը ձեռքը երկընցուց՝ , և իր սուրը հանելով՝ զարկաւ քահանայապետին ծառայ.ին , և անոր ականջը մկղի հա.

52 Նէց ։ Ան ատենը Ցիսուս ըսաւ անոր . Սուրդ իր տեղը դարձուր . ինչու որ Ամէն սուր առնողները

53 սրով պիտի կորսուին ։ Կը կարծե՞ս թէ չեմ կրնար հիմա իմ Հօրս աղաչել , և ինծի հասցընէ Հատասուներկու *դունդէն աւելի հրե.

54 րեշտակներ ։ Բայց ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը , Թէ պետք է ասանկ ըլլալ ։

55 Ան ատենը Ցիսուս ըսաւ ան բազմութեանը . Իբր թէ աւազակի՞ վրայ ելլաք՝ սուրերով ու բիրեղրով զիս բռնելու . ամէն օր տաճարին մէջ ձեղի հետ կը նստէի՝ ու կը սորվեցընէի , և զիս չբռնեցիք ։

56 Բայց այս ամէն բաները եղաւ՝ որ Հկատարուին մարգարէից գիրքերը ։ Ան ատենը Հրոլոր աշակերտները թողուցին անիկայ՝ ու փախան ։

57 Ան՚ Եւ անոնք բռնեցին Ցիսուսը՝ կայիափա քահանայապետին տարին , ուր որ դպիրները ու ծերերը

58 ժողվուած էին ։ Եւ Պետրոս հեռուանց անոր ետևէն գնաց՝ մինչև քահանայապետին դաւիթը , ու ներս մտաւ ապառաւորներուն հետ

59 նստաւ . որ վերջը տեսնէ ։ Իսկ քահանայապետները ու ծերերը և բոլոր ժողովքը Ցիսուսի դէմ սուտ վկայութիւն մը կը փնտռէին , որ

60 անիկայ մեռցընեն . Ու չգտան . Թէև Հշատ սուտ վկաներ ալ եկան , բայց չգտան ետքը Հերկու սուտ

61 վկայ եկան , Ու ըսին Թէ , Ասիկայ ըսաւ , Ես կրնամ Աստուծոյ տաճարը քակել , և զանիկայ իրեք

62 օրուան մէջ չհնել ։ Ան՚ Եւ քահանայապետը ոտք ելլելով՝ ըսաւ անոր . Պատասխան մը չե՞ս տար . ինչ՝ կը վկայեն ասոնք քեզի դէմ ։

63 Եւ Ցիսուս լուռ կը կենար ։ Քահանայապետը՝ ու ըսաւ անոր . Հկենդանի Աստուծով քեզ կ՚երդմնցընեմ՝ որ մեզի ըսես , Թէ դո՞ւն ես Քրիստոս Որ.

64 դին Աստուծոյ ։ Ըսաւ անոր Ցիսուս . Դուն ըսիր . բայց կ՚ըսեմ ձեզի . Յետակէտ ետև պիտի տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան այ կողմը նստած , ու երկնից ամպերուն

65 վրայ եկած ։ Հ Ան ատենը քահանայապետը իր հանդերձները պատռեց՝ ու ըսաւ . Հայհոյութիւն ըրաւ . ալ ի՞նչ պէտք է մեզի վկաներ . ահա հիմա լսեցիք ատոր հայհոյու.

66 Թիւնը . Ձեզի ի՞նչպէս կ՚երևնայ . անոնք պատասխան տուին ու ըսին ,

67 ՚ Մահապարտ է ։ ՚ Ան ատենը անոր երեսը թուքին , ու բռունցով ծեծեցին անիկայ . Հ ոմանք ալ ապտակ

68 տակ զարնելով՝ ըսին . Հ Մարգարէացի՛ր մեզի դուն Քրիստոս , ո՞վ է ան՝ որ քեզի զարկաւ ։

69 Հ Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստեր էր . և մէկ աղախին մը եկաւ անոր՝ ու ըսաւ . Դուն ալ Գալի.

70 լեացի Ցիսուսին հետն էիր ։ Բայց անիկայ ամենուն առջևը ուրացաւ՝ ու ըսաւ . Չեմ գիտեր դուն ինչ

71 կը խօսիս ։ Ու երբոր դուրս ելաւ , ուրիշ աղէխէն մը զանիկայ տեսաւ , և հոն եղողներուն ըսաւ . Ասիկայ ալ Ցիսուս Նազովրեցիին

72 հետն էր ։ Եւ Պետրոս նորէն երդումով ընելով՝ ուրացաւ Թէ , Ես

73 ան մարդը չեմ ճանչնար ։ Ու քիչ մը ատենէն հոն եղողները եկան և ըսին Պետրոսին . Ցիրաւի դուն ալ անոնցմէ ես . ինչու որ քու Նազովրացուածքդ ալ քեզ յայտ.

74 նի կ՚ընէ ։ Ան ատենը Հսկսաւ անիծել՝ ու երդումով ընել՝ Ըհէրվ Թէ , Ես ան մարդը չեմ ճանչնար . և

75 իսկոյն հաւը խօսեցաւ ։ Եւ Պետրոս միտքը բերաւ Ցիսուսին խօսքը՝ որ իրեն ըսեր էր Թէ , Նզեռ հաւը չխօսած՝ իրեք անգամ պիտի ուրանաս զիս . ու դուրս ելլելով՝ դառնապէս լացաւ ։

ԳԼ · ԻԷ

1 Քրիստոս Պիղատոսի ձեռքը կը տրուի կապուած ։ 3 Ցուդան խեղդամահ կ՚ընէ ։ 19 Պիղատոս իր կինկէն խրատուած՝ 24 իր ձեռքերը կը լուայ ։ 26 ու Բարաբբան կ՚արձակէ ։ 29 Քրիստոս փուչերով կը պսակուի ։ 34 կը խայտուի ։ 39 կը նախատուի ։ 50 կը մեռնի ու կը թաղուի ։ 66 Քրիստոսի գերեզմանը Հերէայք կը կնքեն , ու պահապան զինուորներ կը դնեն ։

1 Հրերոր առտու եղաւ , Հբոլոր քահանայապետները ու ժողովուրդին ծերերը Ցիսուսի դէմ խորհուրդ ըրին՝ որ զանիկայ մեռցընեն ։

2 Եւ կապելով զանիկայ տարին , ու Հ Պոնտացի Պիղատոս կուսակալին ձեռքը տուին ։

3 Հ Ան ատենը Ցուդան՝ որ զանիկայ մատնեց , տեսնելով Թէ դատապարտուեցաւ , զղջի եկաւ , ու երեսուն արծաթը ետ դարձուց քահանայապետներուն՝ և ծերե.

4 րուն , Ու ըսաւ . Մեղայ , որ անմեղ արիւն մատնեցի . և անոնք ըսին . Մեզի ի՞նչ , դուն նայէ ։

5 Եւ արծաթը տաճարին մէջ ձգեց՝ Հու դուրս ելաւ , և գնաց ինքզինքը

6 քը խեղդեց ։ Քահանայապետները ալ արծաթը առնելով՝ ըսին , Արժան չէ ատիկայ †կորբանին մէջ՚՚ դնել . ինչու որ արեան գին է ։

7 Ռստի խորհուրդ ըրին , և անով

Ցաւի Տեառն 33

՚ Ղկ . իդ . 16 ։ Ցօհ . ժԹ . 7 ։

՚՚ Ես . ծ . 6 ։ ծգ . 3 ։ ԳԼ . իէ . 30 ։

Հ Ղկ . իը . 63 ։ Ցօհ ՚ ժԹ . 3 ։

՚՚՚ Մար . ժգ . 65 ։ Ղկ . իը . 64 ։

՚՚՚՚ Մար . ժգ . 66 ։ Ղկ . իբ . 55 ։ Ցօհ . ժը . 16 ։ 17 ։ 25 ։

Ղկ՚ . իբ . 59 ։

՚՚՚՚՚ Մար . ժգ . 71 ։

Ղմ՚ . 34 ։ Մար . ժգ . 30 ։ Ղկ . իը . 61 ։ 62 ։ Ցօհ . ժգ . 38 ։

՚՚՚՚՚՚ Այգ . ը . 2 ։ Մար . ժհ . 1 ։ Ղկ . իը . 66 ։ իգ . 1 ։ Ցօհ . ժը . 28 ։

Հ Գբ . ի . 19 ։ Գոր . գ . 13 ։

ֆ Գբ . ի . 13 ։ 14 ։ 15 ։

փը Թագ . ժէ . 23 ։ Գոր . ֆ՚՚ . 18 ։

† Յր՚ տուժա.րին գանձանակը

Յամի Տեառն 33

բրուտին արտը ծախու առին՝ օ-
տարներու դերեզմանատուն ըլլալու
8 համար ։ Ան պատճառով՝ ան ար-
տը Ակեռան արտ բսուեցաւ մինչև
9 այսօր ։ Ան ատեն կատարուեցաւ
*Երեմիա մարգարէին ձեռքով ը-
սուած խօսքը . Նոքա առին երեսուն
արծաթը՝ գին կտրուածին գինը ,
որ Իսրայէլէ որդւոցմէ գին
10 կտրեցին , Ու տուին անիկայ բրու-
տին արտին , ինչպէս որ ինծի հրա-
ման ըրաւ Տէրը ։
11 Եւ Յիսուս կուսակալին առջեւը
կայնեցաւ . և կուսակալը Հարցուց
անոր՝ ու ըսաւ . Հրէից Թագա-
ւորը դուն ես ։ Եւ Յիսուս ըսաւ
12 անոր . Դուն կ'ըսես ։ Ու քահա-
նայապետներէն և ծերերէն ամբաս-
տանուած ատենը Բնաւ պատաս-
13 խան մը չտուաւ ։ Ան ատենը Պի-
ղատոս ըսաւ անոր . Ծնեցո լսեր
Թէ որչափ քեզի դէմ կը վկայեն
14 ատոնք ։ Եւ անոր բան մը պա-
տասխան չտուաւ , մինչև շատ զար-
մացաւ կուսակալը ։
15 Հիմայ կուսակալը սովորութիւն
ունէր , որ տօնին ատենը կապուած
մը արձակէր ժողովուրդին , ով որ
16 ուզէին ։ Ան ատենը Բարաբբա
անունով մէկ երեւելի բանտարկեալ
17 մը ունէին ։ Երբոր ժողովուեցան՝
ըսաւ անոնց Պիղատոս . Որը կ'ու-
զէք որ ձեզի արձակեմ . Բարաբ-
բան , Թէ Յիսուսը՝ որ Քրիստոս
18 կ'ըսուի . Քանզի գիտէր Թէ նա-
խանձի համար մատնեցին զանի-
կայ ։
19 Ու երբոր անիկայ ատեանը նստեր
էր , անոր կնիկը դէպ խրկեց անոր՝
ու ըսաւ . Դուն ան արդարին հետ
բան մը չունենաս . ինչու որ այս-
օր երազին մէջ շատ դիպուածներ
անցան դլխես անոր համար ։
20 Իսկայց քահանայապետները և
ծերերը ժողովուրդը համոզեցին ,
որ Բարաբբան խնդրեն՝ ու Յիսուսը
21 կորսընդենեն ։ Պատասխան տուաւ
կուսակալը՝ ու ըսաւ անոնց . Ան
երկուքէս որը կ'ուզէք որ ձեզի
արձակեմ . և անոնք ըսին , Բա-
22 րաբբան . Ըսաւ անոնց Պիղատոս .
Հապա ի՞նչ ընեմ Յիսուսը՝ որ
23 Քրիստոս կ'ըսուի ։ Ամէնքն ալ
ըսին անոր . Թող խաչուի . և
կուսակալը ըսաւ . Բայց ի՞նչ չար
գործ ըրաւ . և անոնք ևս առաւել
կ'աղաղակէին ու կ'ըսէին . Թող
24 խաչուի ։ Եւ Պիղատոս տեսնե-
լով որ օգուտ մը չորար , հապա
ալ աւելի խռովութիւն կ'ըլլայ ,
Էջուր առաւ՝ ձեռքերը լուաց ժողո-
վուրդին առջեւը՝ ու ըսաւ . Ես ատ
արդարին արիւնէն անպարտ եմ .

Յամի Տեառն 33

25 դուք մտածեցէք ։ Եւ բոլոր ժո-
ղովուրդը պատասխան տալով՝ ը-
սաւ . Անոր արիւնը մեր վրայ՝ ու
26 մեր որդւոցը վրայ ըլլայ ։ Ան ա-
տենը Բարաբբան արձակեց անոնց ,
և Յիսուսը ծեծելով՝ անոնց ձեռքը
տուաւ որ խաչուի ։
27 Ան ատենը կուսակալին զի-
նուորները պալատին ներսը առին
Յիսուսը , ու բոլոր վհեռբնէրը
28 դունդը անոր վրայ ժողվեցին Եւ
զանիկայ մերկացընելով՝ կարմիր
վերարկու մը հագցուցին անոր ։
29 Ու փուշերէ պսակ մը հիւսելով՝
անոր գլուխը դրին , ու եղէգ մը
անոր աջ ձեռքը . և անոր առջեւը
ծնկան վրայ գալով՝ ծաղր կ'ընէին
զանիկայ , ու կ'ըսէին . Ողջոյն
30 քեզ՝ Հրէից Թագաւոր ։ Եւ
Թքնելով անոր վրայ՝ եղէգը
կ'առնէին , ու անոր գլուխը կը
31 ծեծէին ։ Ու երբոր ծաղր ըրին
անիկայ , վերարկուն վրայէն հանե-
ցին , ու իր հանդերձները հագցու-
ցին անոր , և տարին զանիկայ
խաչը հանելու ։
32 Եւ ելլելով՝ Կիւրենացի
մարդ մը գտան Սիմոն անունով՝
զանիկայ պահակ բռնեցին՝ որ ա-
33 նոր խաչը վերցընէ ։ Ու Golgotha
կոչուած տեղը , որ է
34 դանկի տեղ . Եւ ըղիով խառնած
քացախ տուին անոր՝ որ խմէ . ու
երբոր համը առաւ , խմել չեր
35 ուզեր ։ Եւ զանիկայ խաչը հա-
նելով , անոր հանդերձները վիճա-
կով բաժնեցին , [որ մարգարէին
ըսուածը կատարուի . Ինծի հան-
դերձներս իրենց մէջը բաժնեցին ,
և իմ պատմուճանիս վրայ վիճակ
36 ձգեցին ։]Ու նստեր անիկայ կը
37 պահէին ։ Եւ անոր գլխուն վրայ
իր յանցանքը գրուած դրին Թէ ,
Անիկայ է Յիսուս՝ Հրէից Թա-
38 գաւորը ։ Ան ատենը անոր հետ
երկու աւազակ խաչուեցան , Մէկը
անոր աջ կողմէն , ու մէկը ձախ
39 կողմէն ։ Եւ Անոնք որ կ'անցնէին՝ կը
հայհոյէին անոր , գլուխնին կը
40 շարժէին , Ու կ'ըսէին . Դուն որ
տաճարը կը քակիր , և իրիկ
օրուան մէջ կը շինէիր , ինքզինքդ
ազատէ . Եթէ որ Աստուծոյ Որ-
41 դին ես , իջի՛ր ատ խաչէդ ։ Նոյն-
պէս և քահանայապետները դպիր-
ներուն ու ծերերուն հետ ծաղր
42 ընելով կ'ըսէին . Ուրիշները ա-
զատեց , ինքզինքը չիրնար ազատել .
Թէ որ Իսրայէլի Թագաւորը է ,
Թող հիմա իջնէ խաչէն , և իրեն
43 հաւատանք ։ Աստուծոյ յուսա-
ցեր է , հիմա Թող փրկէ ատիկայ ,

Ծր Որ . ժթ . 10 ։ Ցես . ը . 19 ։ բ Թագ . ա . 16 ։ ֆ Թագ . ը . 23 ։ Գոր . ե . 28 ։ Ես . ծգ . 5 ։ Մար . ժե . 15 ։ Ղե . իգ . 16 ։ 24 , 25 ։ Յոհ . ժթ . 1 . 16 ։ Մար . ժե . 16 ։ Յոհ . ժթ . 2 ։ Ղե . իգ . 11 ։ Սաղ . կթ . 19 ։ Ես . ծգ . 3 ։ Ես . ե . 6 ։ Գլ . իգ . 6՝ ։ Ես . ծգ . 7 ։ Թու . ժե . 35 ։ ֆ Թագ . իա . 13 ։ Գոր . է . 57 ։ Երր . ժգ . 12 ։ Մար . ժե . 21 ։ Ղե . իգ . 26 ։ Մար . ժե . 22 ։ Ղե . իգ . 33 ։ Յոհ . ժթ . 17 ։ Սաղ . կթ . 21 ։ Տե՛ս Հր 48 ։ Մար . ժե . 24 ։ Ղե . իգ . 34 ։ Յոհ . ժթ . 24 ։ Սաղ . իը . 18 ։ Մար . ժե . 26 ։ Ղե . իգ . 38 ։ Յոհ . ժթ . 19 ։ Ես . ծգ . 12 ։ Մար . ժե . 27 ։ Ղե . իգ . 32 , 33 ։ Յոհ . ժթ . 18 ։ Սաղ . իը . 7 ։ Թ . 25 ։ Մար . ժե . 29՝ ։ Ղե . իգ . 35 ։ Գլ . իգ . 61 ։ Յոհ . բ . 19 ։ Գլ . իգ . 63 ։ Սաղ . իը . 8 ։

Ցամք Տեսան 33

ԵԹԷ կ'ուզէ ատիկայ . ինչու որ ըսաւ Թէ , Ես Որդի Աստուծոյ եմ։

44 Իր հետը խաչուած աւազակներն ալ նոյնպէս կը նախատէին զինքը։

45 Եւ վեցերորդ ժամին մինչև իներորդ ժամը՝ բոլոր երկրին վրայ

46 խաւար եղաւ ։ Եւ ժամը իններն ատենները՝ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց՝ ու ըսաւ . Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի . որ ըսել է Աստուած իմ՝ Աստուած իմ ,

47 ինչո՞ւ զիս թողուցիր ։ Անոնցմէ ոմանք՝ որ հոն կայներ էին , երբոր լսեցին՝ կ'ըսէին . Ատիկայ Եղիան կը կանչէ ։ Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց սպունգ մը առաւ՝ քացախով լեցուց , ու եղէգի մը անցընելով տուաւ անոր որ խմի ։

49 Ու մէկայները կ'ըսէին . Թող տուր՝ տեսնենք Թէ Եղիան կու գայ ատիկայ ազատելու ։

50 Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց՝ ու հոգին աւանդեց ։

51 Եւ ահա տաճարին վարագուրը վերէն 'ի վար երկուքի ճեղքուեցաւ , ու երկիրը շարժեցաւ , և

52 քարերը պատռեցան ։ Եւ գերեզմանները բացուեցան , ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ

53 յարութիւն առին . Եւ գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետև , մտան սուրբ քաղաքը , ու շատերուն երեցան ։

54 Բայց հարիւրապետը և անոր հետ Յիսուսը պահողները՝ երբոր տեսան երկրաշարժը ու եղած բաները , շատ վախցան՝ ու ըսին . Ճիշմարիտ ասիկայ Որդի Աստուծոյ էր ։

55 Եւ հոն շատ կիներ կային որ հեռուէն կը նայէին , որոնք գալիլեայէն Յիսուսի ետևէն եկան իրեն ծառայութիւն ընելու ։

56 Որոնց մէջն էր Մարիամ Մագդաղենացին , և Յակոբոսին ու Յովսեսին մայրը Մարիամ , և Զեբեդէոսի որդւոցը մայրը ։

57 Ուր երբոր իրիկուն եղաւ , Արիմաթիայէն հարուստ մարդ մը եկաւ՝ որուն անունը Յովսէփ էր , որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր ։

58 Անիկայ Պիղատոսին գնաց երթալով՝ Յիսուսին մարմինը խնդրեց . ան ատենը Պիղատոս հրաման ըրաւ՝ որ

59 մարմինը տրուի ։ Եւ Յովսէփ մարմինը առաւ՝ մաքուր կտաւով

60 պատնեշ , Ու է դրաւ իր նոր գերեզմանին մէջ՝ որն որ քարէ փորած էր . և գերեզմանին դուռը մեծ քար

61 մը գլորցընելով գնաց ։ Եւ հոն էր Մարիամ Մագդաղենացին՝ և միւս Մարիամը՝ գերեզմանին դիմացը նստած ։

62 Եւ հետևեալ օրը՝ որ ուրբաթէն ետև էր , քահանայապետները ու փարիսեցիները ժողովուեցան Պիղատոսին քովը ,

63 Ու ըսին . Տէր՝ կը յիշենք որ ան մոլորեցուցիչը իր կենդանութեան ատենը կ'ըսէր Թէ , Երեք օրէն ետև յարութիւն կ'առնեմ ։

64 Ուստի հրաման ըրէ որ մինչև երրորդ օրը գերեզմանին ըզգուշութիւն ընեն . չըլլայ Թէ իր աշակերտները գիշերով գան զանիկայ գողնան , և ժողովուրդին ըսեն Թէ , Մեռելներէն յարութիւն առաւ . ու եղբի մոլորութիւնը առաջինէն աւելի չար ըլլայ ։

65 Ղինէն դէշ ըլլայ ։ Պիղատոս ա նոնց ըսաւ . Դուք ունիք պահապան զինուորներ . գացէք՝ զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք ։

66 Անոնք ալ գացին գերեզմանին ըզգուշութիւն ըրին , Քարը կնքելով ու պահապան զինուորներ դնելով ։

Ցամք Տեսան 33

Ե Դան . ղ . 17 ։

ԳԼ . ԻՀ

1 Հրեշտակը կ'աւետե կանանց՝ Քրիստոսի յարութիւնը ։ 9 Քրիստոս ինքը կ'երևնայ անոնց ։ 11 Քահանայապետները սուակ կու տան զինուորներուն որ ըսեն Թէ անիկայ իր գերեզմանէն դողցուեցաւ ։ 16 Քրիստոս իր աշակերտներուն կ'երևնայ ։ 19 և կը խրկէ զանոնք բոլոր հեթանոսները աշակերտելու և մկրտելու ։

1 Ու շաբաթ գիշերը՝ ը մկկաբթին կը լուսնար , եկաւ Մարիամ Մագդաղենացին , Ե ու միւս Մարիամը՝ դերեզմանը տեսնելու ։

2 Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ . ինչու որ Տէրոջը հրեշտակը երկինքէն իջնելով , գնաց դռնէն մկկի գլորոցուց քարը , ու անոր վրայ նստաւ ։ 3 Եւ անոր տեսքը փայլակի պէս էր , ու անոր հանդերձները ձիւնի պէս ճերմակ ։ 4 Եւ անոր վախէն պահապանները խռովեցան , ու մեռածի պէս եղան ։ 5 Պատասխան տուաւ հրեշտակը՝ ու ըսաւ կիներուն . Դուք մի՛ վախնաք . քանզի գիտեմ որ կը փնտռէք Յիսուսը՝ որ խաչուեցաւ . 6 Անիկայ հոս չէ , ինչու որ յարութիւն առաւ , ինչպէս որ ըսաւ . եկէք տեսէք ան տեղը՝ ուր որ Տէրը պառկած էր ։ 7 Եւ շուտ մը գացէք անոր աշակերտներուն ըսէք , Թէ անիկայ մեռելներէն յարութիւն առաւ . և ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ , հոն պիտի տեսնէք անիկայ ։ 8 Ահա ձեզի զգուշցեցի ։ Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրախութիւնով՝ և կը վազէին աշակերտներուն պատմելու ։

9 Ու երբոր կ'երթային անոր աշակերտներուն պատմելու , ահա Յիսուս անոնց դէմը ելաւ՝ ու ըսաւ .

– Մար . ժզ . 1 ։ Ղու . իդ . 1 ։ Յով . ա . 1 ։

Բ ԳԼ . իդ . 56 ։

Տես Մար . ժզ . 5 ։ Ղու . իդ . 4 ։ Յով . ա . 12 ։

Դան . ժ . 6 ։

ԳԼ . ժը . 40 ։ ժգ . 21 ։ ժէ . 22 ։ ի . 19 ։

ՂԼ . իդ . 32 ։ Մար . ժզ . 7 ։

Տես Մար . ժզ . 9 ։ Յով . ի . 14 ։

Ցամի Տեառն 33

Ղազարոսի յարութիւնը

Ողջոյն ձեզ ։ Եւ անոնք մօտենալով՝ անոր ոտքերը բռնեցին ։ ու 10 երկրպագութիւն ըրին անոր ։ Ան ատենը Յիսուս ըսաւ անոնց . Մի վախնաք , գացէք , իմ եղբայրներուս ըսէք՝ որ Գալիլեա երթան , ու հոն զիս պիտի տեսնեն ։

11 Երբոր անոնք կ՚երթային՝ ահա պահապան զինուորներէն մէկ քանին քաղաքը եկան , ու քահանայապետներուն պատմեցին բոլոր եղածները : 12 Անոնք ալ ժողովուելով՝ ու խորհուրդ ընելով՝ շատ դրամ տակ տուին զինուորներուն , ու ըսին . Ըսէք թէ , Անոր աշակերտները գիշերով եկան անիկայ գողցան՝ երբոր մենք կը քնանայինք : 14 Եւ եթէ որ ատ բանը կուսալին ականջը հասնի , մենք անիկայ կը համձեղընենք , և ձեզ *ապահով կ՚ընենք ։ 15 Անոնք ալ ստակը առնելով՝ ինչպէս որ սորվածնուն պէս ըրին . և ան ձայնը Հրեից մէջ տարածուեցաւ մինչև այս օրս ։

16 Իսկ տասնումէկ աշակերտները գացին Գալիլեա ան լեռը՝ ուր որ Յիսուս իրենց որոշեր էր ։ 17 Ու երբոր զանիկայ տեսան , երկրպագութիւն ըրին անոր , բայց ոմանք տարակուսեցան : 18 Եւ Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց ու ըսաւ . Ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի ու երկրի մէջ ։ 19 Ուրեմն գացէք , բոլոր ազգերը աշակերտեցէք . մկրտեցէք զանոնք Յայրն Հօր և Որդւոյն և Հոգւոյն 20 Սրբոյ . Ի՚սորվեցուցէք անոնց որ ան ամէն բաները պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուիրեցի . և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը ։

Ցամի Տեառն 33

Ր Գլ . իզ . 32 ։ Հմր 7 ։ Յ Դան . է . 13 · 14 ։ Գլ . Ժա . 27 ։ Ժզ . 28 ։ Ղու . ա . 32 ։ Յ . 22 ։ Յօ՚ . գ . 35 ։ 6 . 22 ։ Յգ . 3 ։ Ժե . 2 ։ Գոր . Բ . 36 ։ Հով . Յգ . 9 ։ ա Կոր . Յե . 27 . Եփե . ա . 10 · 21 ։ Փիլ . բ . 9 · 10 . Եբր . ա . 2 . բ . 5 ։ ա Պետ . գ . 22 ։ Յայտ . Ժե . 14 ։

Ճառ . անխոց

Ի Մար . Ժգ . 15 ։ Լես . Ծբ . 10 ։ Ղու . իդ . 47 ։ Գոր . բ . 38 · 39 ։ Հով . Ժ . 18 ։ Կող . ա . 23 ։ Ի Գոր . բ . 42 ։

Ցամի Տեառն 26 վերջը

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Յովհաննէս մկրտին պատմութիւն ։ 9 Յիսուս կը մկրտուի . 12 կը փորձուի . 14 կը քարոզէ . 16 Իրեն հետևելու կը կանչէ Պետրոսը , Անդրեասը , Յակոբոսը և Յովհաննէսը . 23 կը բժշկէ դիւահար մը , 29 Պետրոսին զրպանը , 32 ու շատ հիւանդներ 41 և կը մաքրէ բորոտը ։

Ա Մատ . Ժգ . 33 ։ Ղու . ա . 35 ։ Յօ՚ . ա . 34 ։

1 Յ՚սուսեայ Որդւոյն Յիսուս Քրիստոսի աւետարանին սկիզբը ։

Բ Մաղ . գ . 1 ։ Մատ . Ժա . 10 ։ Ղու . է . 27 ։

2 Ըստ որ Մարգարէից մէջ գրուած է . Ի Ահա ես իմ դեսպանս կը խրկեմ՝ քու երեսիդ առջևէն , որ քու ճամբադ պիտի պատրաստէ ։

Գ Ես . խ . 3 ։ Մատ . գ . 3 ։ Ղու . գ . 4 ։ Յօ՚ . ա . 15 · 23 ։

3 Ահ՝ քու առջևէդ ։ Անապատի մէջ կանչողին ձայնը . Տէրոջը ճամբան պատրաստեցէք , անոր շաւիղները ուղղեցէք ։

Դ Մատ . գ . 1 ։ Ղու . գ . 3 ։ Յօ՚ . գ . 23 ։

4 Յիսկեցէք . Դ Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր , և ապաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր՝ մեղքերու թողութեան համար ։

Ե Մատ . գ . 5 ։

5 Եւ բոլոր Հրէաստանի երկիրը՝ ու Երուսաղէմացիք կ՚երթային անոր , ու ամէնը կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ մեղքերնին խոստովանելով ։

Ղ Մատ . գ . 4 ։ Ի Ղև . ժա . 22 ։

6 Եւ Յովհաննէս հագեր էր ուղտի մազ՝ և իր մէջքը կաշէ գօտի . ու իր կերակուրը Է մարախ եւ վայրենի մեղր ։

Ե Մատ . գ . 11 ։ Յօ՚ . ա . 27 ։ Գոր . Ժգ . 25 ։

Ր Գոր . ա . 5 ։ Ժա . 16 ։ Ժէ . 4 ։

7 Եւ քարոզէր՝ ու կ՚ըսէր . Է Իմ ետևէս ինծմէ զօրաւորը կու գայ , որ ես արժանի չեմ ծռելու՝ ու անոր կօշիկներուն

Ի Մատ . գ . 13 ։ Ղու . գ . 21 ։

8 կապերը արձկելու ։ Ի Ես ձեզ ջրով մկրտեցի , բայց անիկայ ձեզ Յ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ ։

Ա Մատ . գ . 16 ։ Յօ՚ . ա . 32 ։

9 Է Ու եղաւ որ ան օրերը Յիսուս Գալիլեայի Նազարէթէն եկաւ , ու Յովհաննէսէն մկրտուեցաւ Յորդանան մէջ ։

Բ Մատ . գ . 13 ։ Ղու . գ . 21 ։

10 Եւ շուտ մը ջուրէն ելլելուն պէս՝ երկինքը բացուած տեսաւ , և Հոգին աղաւնիի պէս որ իր վրայ կ՚իջնէր ։ Եւ

Ե Մատ . գ . 16 ։ Յօ՚ . ա . 32 ։

11 ձայն մը եկաւ երկինքէն՝ որ ՚ըսէր . Դ Դուն ես իմ սիրելի Որդիս , որուն հաւներ եմ ։

Ի Սազ . բ . 7 ։ Մատ . գ . 17 ։ Գլ . իծ . 6 ։

12 Եւ շուտ մը Հոգին անապատը

Բ Մատ . գ . 1 ։ Ղու . գ . 1 ։

13 հանեց զանիկայ ։ Ու քառասուն օր հոն էր անապատին մէջ Սատանայէն փորձուած . և գազաններու հետ էր , ու հրեշտակները իրեն սպասաւորութիւն կ՚ընէին ։

Յօ . Տ . 27

14 Եւ Յովհաննէսին մատնուելէն ետև՝ Յիսուս Գալիլեա եկաւ , Ա քարոզելով աւետարանը

Ա Մատ . գ . 12 ։

15 Ը կը քարոզէր՝ ու կ՚ըսէր . Թէ ժամանակը լրացած է , և Ը Աստուծոյ արքայութիւնը

Դ Մատ . գ . 23 ։

Յօ . Տ . 30

Ղ Դան . թ . 25 ։ Գաղ . գ . 4 · Եփե . ա . 10 ։

Ե Մատ . գ . 2 ։ գ . 17 ։

Ցամի Տեառն 30

Մատ. դ. 18, Ղուկ. ե. 4,

տուածոյ թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէ՛ք ու աւետարանին հաւատացէ՛ք։

16 Երբոր Գալիլեացւոց ծովուն քովերը կը պտրտէր, տեսաւ Սիմոնը ու Սիմոնին եղբայրը Անդրեասը՝ ծովը ուռկան ձգած; ինչու որ ձկնորս էին։ 17 Եւ Յիսուս ըսաւ անոնց. Իմ ետեւէս եկէք, ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ ըլլաք։ 18 Անոնք ալ շուտ մը իրենց ուռկանները թողուցին, ու անոր ետեւէն գացին։ 19 Եւ անկէ քիչ մը առաջ երթալով տեսաւ Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, որ անոնք ալ նաւին մէջ ուռկանները կը կարկտէին։ 20 Շուտ մը զանոնք կանչեց. անոնք ալ իրենց հայրը Զեբեդեոսը վարձկաններուն հետ նաւին մէջ ձգելով՝ անոր ետեւէն գացին։

21 Ու մտան Կափառնայում. և իսկոյն շաբաթ օրը ժողովարանը 22 մտնելով կը սորվեցնէր։ Եւ կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ, ինչու որ իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու չէ թէ դպիրներ։ 23 Ուր պէս ալ ունեցող մարդ մը կար, որ պիղծ ոգի ունէր իր ներսի դին, որ աղաղակեց 24 ըսելով. Թողու՛ տուր, Նազովրեցի՛ Յիսուս, մեզի հետ ի՞նչ բան ունիս։ Մեզ կորսնցնելո՞ւ եկար. գիտեմ քեզ՝ որ ես, Աստուծոյ Սուրբը։ 25 Յիսուս նախատեց անոր՝ ըսելով. Լռէ՛ ու ելի՛ անկէ։ 26 Պապանձէ ու ելի՛ անկէ։ Եւ պիղծ ոգին նախատիկ ցնցեց զանիկայ, ու մեծ ձայնով մը աղաղակելով անկէ ելաւ։ 27 Ամէնքը զարմացան, անանկ որ իրարու հարցափորձ կ՚ընէին՝ ու կ՚ըսէին. Ա՛ս ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է ասիկա, որ իշխանութիւնով պիղծ ոգիներուն ալ կը հրամայէ, ու իրեն կը հնազանդին։ 28 Եւ շուտ մը իր համբաւը Գալիլեացւոց ամէն կողմերը ելաւ։

29 Եւ շուտ մը ժողովարանէն ելլելով՝ Սիմոնին ու Անդրէասին տունը մտան՝ Յակոբոսին և Յովհաննէսին հետ։ 30 Ու Սիմոնին զոքանչը ջերմ բռնուած պառկած էր, և շուտ մը անոր համար իրեն խօսեցան։ 31 Ու մօտեցաւ անոր ձեռքէն բռնեց՝ վերցուց անկից. և խկոյն ջերմը թողուաւ զանիկայ, ու անոնց սպասաւորութիւն կ՚ընէր։ 32 Ուր երբոր իրիկուն եղաւ՝ արեգակին մտած ատենը, բոլոր հիւանդները և դիւահարները իրեն 33 կը բերէին։ Ու բոլոր քաղաքը դուռը ժողովուեր էր։ 34 Եւ շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէն բժշկեց, ու շատ դեւեր հանեց. ու դեւերուն խօսիլ չէր տար, ինչու որ զինքը կը ճանչնային։

35 Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով դուրս չուսցած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և հոն աղօթք կ՚ընէր։ 36 Ու Սիմոն և իր հետը եղողները գացին անոր ետեւէն։ 37 Ու երբոր գտան զանիկայ՝ ըսին անոր թէ, Ամէնը քեզ կը փընտռեն։ 38 Եւ ըսաւ անոնց. Եկէ՛ք երթանք մերձակայ գիւղաքաղաքները, որ հոն ալ քարոզեմ. քանզի ասոր բանիս համար ելեր եմ։ 39 Եւ անոնց ժողովարաններուն մէջը կը քարոզէր բոլոր Գալիլեայի մէջ, ու դեւեր կը հաներ։

40 Մէկ բորոտ մը եկաւ անոր՝ կ՚աղաչէր, ծունկ կը չոքէր՝ ու կ՚ըսէր անոր. Թէ որ ուզես, կրնաս զիս մաքրել։ 41 Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը երկընցուց, դպաւ անոր՝ ու ըսաւ անոր. Կ՚ուզեմ՝ մաքրուէ՛։ 42 Ու երբոր ան ըսաւ անոր, շուտ մը բորոտութիւնը անկէ գնաց, ու մաքրուեցաւ։ 43 Եւ սաստիկ պատուիրեց՝ տալով անոր՝ շուտ մը դուրս հանեց անիկայ, ու ըսաւ անոր. 44 Զգոյշ կեցիր՝ մէկուն բան մը չըսես. հապա գնա՛ քեզ քահանային ցուցուր, և տուր քու մաքրուելուդ ընծան, որ Մովսէս պատուիրեց՝ անոնց վկայութիւն ըլլա՛։ 45 Լալու համար։ Բայց ան ելլելով՝ սկսաւ շատ հրատարակել, ու բանը տարածել, անանկ որ՝ ալ ինքը չէր կրնար յայտնի կերպով քաղաք մը մտնել. հապա դուրսը անապատ տեղուանք էր, և ամէն կողմերէն իրեն կու գային։

Ցամի Տեառն 31

Մատ. դ. 12, Ղուկ. դ. 42, Տե՛ս Գոր. ժգ. 17, 18։

Ղուկ. դ. 43։

Մատ. ժթ. 27, Ղուկ. ե. 11,

Մատ. դ. 21։

Ցա. Տ. 31

Մատ. դ. 13, Ղուկ. դ. 31,

Մատ. ւ. 28։

Ղուկ. դ. 33։

Մատ. ը. 29

Ղ՚ԱՇ 34։

Գլ. Թ. 19։

Մատ. ը. 14, Ղուկ. դ. 38։

Մատ. թ. 16, Ղուկ. դ. 41։

Գլ. ա. 44։

Տե՛ս կա. 1, Ցա. ժգ. 28, ԺԷ. 4։

Մատ. դ. 23, Ղուկ. դ. 45։

Մատ. ը. 2, Ղուկ. ե. 12։

Ղուկ. ժդ. 3, 4. 10, Ղուկ. ե. 14։

Ղուկ. ե. 15։

Գլ. բ. 13։

ԳԼ. Բ

1 Քրիստոս կը բժշկէ անդամալոյծ մը. 14 Իրեն հետեւելու կը կանչէ Մատթէոս մաքսաւորը. 15 մաքսաւորներու ու մեղաւորներու հետ հաց կ՚ուտէ. 18 կ՚արդարացնէ իր աշակերտները՝ որ ծոմ չպահեն. 23 և շաբաթ օրը ցորենի հասկեր փրցնելէ ուտելը։

1 Ու նորէն Կափառնայում մտաւ, 2 և լսուեցաւ որ անիկայ տան մէջ է. և շուտով շատ մարդիկ ժողովուեցան, անանկ որ ալ տեղ չկար, ոչ ալ դրանը քովերը. ու կը խօսէր ա-
3 նոնց Աստուծոյ խօսքը։ Եւ կու գային իրեն չորս մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին։
4 Ու երբոր բազմութենէն չէին կրնար անոր մօտենալ, քակեցին տանիքը՝ ուր որ Յիսուս էր, ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին մահի-

Մատ. թ. 1, Ղուկ. ե. 18։

Յամի Տեառն 31

ծը՝ որուն վրայ պառկած էր անդամալոյծը ։ Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին . Որդեակ՝ քու մեղքերդ 6 քեզի ներուած են ։ Ու դպիրներէն մէկ քանիները կային՝ որ հոն նըստեր էին , և իրենց սրտերուն մէջ 7 կը խորհէին՝ ըսելով . Ի՞նչու համար ասիկայ ասանկ հայհոյութիւններ կը խօսի . Ո՞վ կրնայ մեղաց թողութիւն տալ , բայց միայն Աստուած ։ Եւ Յիսուս իսկոյն իմանալով իր հոգիին մէջ՝ որ անոնք այնպէս կը խորհին մէջերնին , ըսաւ անոնց . Ա՛ի՞նչ կը խորհիք 9 սրտերնուդ մէջ ։ Ո՞րը աւելի դիւրին է , անդամալոյծին ըսել՝ Քու մեղքերդ ներուած են , եթէ ըսել . 10 Ելի՛ր , մահիճդ առ՝ ու քալէ ։ Բայց որպէս զի գիտնաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու , 11 (ըսաւ անդամալոյծին ,) Քեզի կ՚ըսեմ , Ելի՛ր , մահիճդ առ՝ ու 12 տունդ գնա ։ Ան ալ չուտ մը ելաւ , և իր մահիճը առնելով՝ ամենուն առջևը դուրս ելաւ , անոնք որ ամէնքը սպառած մնացին , և փառք տուին Աստուծոյ՝ ու ըսին թէ , Ասանկ բան մը ամենևին տեսած չենք ։

13 Եւ ելաւ նորէն ծովեզերքը , ու բոլոր ժողովուրդը իրեն կու գային , և կը սորվեցնէր անոնց ։ 14 Ու երբոր կ՚անցնէր , տեսաւ Ղևի Ալփէոսեանը , որ մաքս ընդունելու տեղը նստեր էր . ու ըսաւ անոր . Եկուր իմ ետևէս . ան ալ ելաւ 15 անոր ետևէն գնաց ։ Ու եղաւ որ երբոր սեղան նստած էր անոր տանը մէջ , շատ մաքսաւորներ ու մեղաւորներ ալ սեղան նստած էին Յիսուսի հետ ու անոր աշակերտներուն հետ . քանզի շատուր էին , 16 ու անոր ետևէն գացին ։ Եւ դպիրները ու փարիսեցիները երբոր տեսան՝ թէ անիկայ մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ՚ուտէ , ըսին անոր աշակերտներուն . Ինչո՞ւ համար մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ՚ուտէ ու կը 17 խմէ ։ Եւ Յիսուս երբոր լսեց , ըսաւ անոնց . Ա՛ռողջներուն բժիշկ պէտք չէ , հապա հիւանդներուն . ես արդարները կանչելու չեկայ , հապա մեղաւորները ։

18 Եւ Յովհաննէսին աշակերտները ու փարիսեցիները ծոմ կը պահէին . և եկան ու ըսին անոր . Ինչո՞ւ Յովհաննէսին ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահեն , ու քու աշակերտներդ ծոմ 19 չեն պահեր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց . Միթէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքը՝ քանի որ փեսան իրենց հետն է , ծոմ պահեն . որչափ ժամանակ որ փեսան իրենց հետը ունին , կարելի չէ ծոմ պահել ։ 20 Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի , հապա ան օրը ծոմ պիտի պահեն ։ 21 Մէկը կարկըտան չձգեր նոր լաթի կտոր մը հին հանդերձի վրայ . Թէ չէ՝ ան նորը որ անոր լրումը կը հատնի , ու պատռուածքը ալ աւելի գէշ 22 կ՚ըլլայ . Ո՛չ ալ մէկը նոր գինին հին տիկերու մէջ կը դնէ . եթէ ոչ՝ նոր գինին տիկերը կը պատռէ , ու գինին կը թափի , և տիկերը կը կորչին , հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է ։

23 Ու եղաւ որ շաբաթ օրը ինքը արտերուն մէջէն կ՚անցնէր . և իր աշակերտները որ կ՚երթային , սկսան հասկեր փրցնել ։ 24 Ու փարիսեցիները ըսին իրեն . Նայէ՛ շաբաթ օրը ի՞նչ կ՚ընեն , որ արժան չէ ։ 25 Ինքն ալ անոնց ըսաւ . Բնաւ չէ՞ք կարդացեր դուք Դաւիթին ըրածը՝ երբոր պէտք ունեցաւ , և անօթեցաւ ինքը՝ ու անոնք որ իր 26 հետն էին . Ի՛նչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրովը , և առաջաւորութեան հացերը կերաւ , ու տուաւ անոնց ալ՝ որ իր հետն էին . Որ միայն քահանաներուն չէ ուտել , բայց 27 Դաւիթ մը օրինաւոր չէ ուտել , բայց ըսաւ անոնց . Շաբաթը մարդուն համար եղաւ , ու չէ թէ մարդը շաբաթին համար ։ 28 Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է ։

Յամի Տեառն 31

ԳԼ . Գ .

1 Քրիստոս կը բժշկէ ձեռքը չորցած մարդը ; 10 և ուրիշ շատ ցաւագարները ։ 11 պիղծ ոգիները կը յանդիմանէ ։ 13 իր տասներկու առաքեալները կ՚ընտրէ ։ 22 փաստով կը յայտնէ որ անոնց ըսածը՝ թէ ինքը Բեէլզեբուղով դևեր կը հանէ , հայհոյութիւն է ։ 31 և կ՚ի մսցընէ թէ որո՛նք են իր եղբայրը՝ քոյրը և մայրը ։

1 Դարձեալ՝ նորէն ժողովարանը մտաւ . ու հոն մարդ մը կար , որուն 2 ձեռքը չորցած էր ։ Եւ իրեն կը սպասէին՝ թէ արդեօք շաբաթ օրը զանիկայ պիտի բժշկէ՞ , որ իր վրա- 3 յով ամբաստանութիւն ընեն ։ Եւ ինքը ձեռքը չորցած մարդուն ը- 4 սաւ . Ելի՛ր մէջտեղը կայնէ ։ Ու ըսաւ անոնց . Շաբաթ օրը բարի՛ ընել արժան է , թէ չարիք ընել . հոգի մը ապրեցընե՞լ , թէ մեռցընել . բայց անոնք լուռ կե- 5 ցան ։ Եւ Յիսուս բարկութեամբ շուրջանակի անոնց վրայ նայելով՝

Յամի Տեառն 31

Ա Թես . Ժբ . 9 ։ Ղև . գ . 6 ։

Ա Մատ . Ժբ . 1 ։ Ղև . գ . 1 ։

Ել Օր . իդ . 25 ։

Ա Թագ . իա . 6 ։

Ա Մատ . Ժբ . 8 ։

Ա Մատ . Ժբ . 9 ։ Ղև . գ . 6 ։

Ա Մատ . Ժբ . 9 ։ Ղև . գ . 6 ։

Ա Մատ . Ժբ . 8 ։

Ա Մատ . Ժբ . 9 ։ Ղև . գ . 6

Յամի Տեառն 31

անոնց սրտերուն կուրութեանը համար տրտմած , ըսաւ ան մարդուն . Ձեռքդ երկընցուր . ան ալ երկընցուց , և անոր ձեռքը *ողջացաւ։

6 Բ Ու փարիսեցիները ։ Հերովդեսեաններուն հետ մկտեղ շուտ մը դուրս ելլելով , անոր դէմ խորհուրդ կ'ընէին՝ թէ ինչպէս կորսընցընեն անիկայ ։

7 Բայց Յիսուս իր աշակերտներովը ծովեղերքը գնաց . և շատ բազմութիւն անոր ետևէն գացին Գալիլեայէն , ու Հրէաստանէն , Եւ Երուսաղէմէն , ու Եդովմէն և Յորդանանու անդիի կողմէն , ու անոնք որ Տիւրոսի ու Սիդոնի շրջակայ տեղերէն էին , շատ բազմութիւն երբոր լսեցին ինչ որ կ'ընէր . 9 իրեն եկան ։ Եւ իր աշակերտներուն ըսաւ որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար՝ ժողովուրդին բազմութեանը պատճառաւ , որ 10 զինքը չնեղեն ։ Քանզի շատերը բժշկեց , անանկ որ ցաւ ունեցողները վրան կը դիզուէին որ իրեն 11 դպչին ։ Եւ պիղծ ոգիները երբոր զինքը կը տեսնէին , կ'իյնային իր առջևը , կը կանչուռտէին ու կ'ը-
12 սէին . Դուն ես Աստուծոյ Որդին . և ինքը սաստիկ կը յանդիմաներ զանոնք , որ զինքը չյայտնեն ։

13 Եւ լեռը ելլելով , իր ուզածները իրեն կանչեց . ու գացին անոր
14 քովը ։ Եւ տասներկուս հոգի ո-
15 րոշեց , որ իր հետը ըլլան , և որ անոնք խրկէ քարոզել , Ու իշխանութիւն ունենալ ցաւերը բժշկե-
16 լու , և դևերը հանելու ։ Ու Սի-
17 մոնին ի անունը Պետրոս դրաւ . Եւ Զեբեդեան Յակոբոսին՝ ու Յակոբոսին եղբօրը Յովհաննէսին՝ ա-
18 նոնց անունները Բաներեդես դրաւ , որ ըսել է՝ Որդիք որոտման . Եւ Անդրեասը , ու Փիլիպպոսը , և Բարթուղիմէոսը , ու Մատթէոսը , և Թովմասը , ու Ալփէոսեան Յակոբոսը , և Թադէոսը , ու Սիմոն
19 Կանանացին . Եւ Յուդա Իսկարիովտացին , որ նաև մատնեց զանիկայ ։

20 Տուն մը եկան , և նորէն ժողովուրդը ժողվուեցաւ , մանակ որ հաց ուտելու ալ ժամանակ չկրցան
21 ։ Եւ երբոր իրենները լսեցին , ելան որ զինքը բռնեն , Էքան-
22 զի կ'ըսէին Թէ խելագած է ։ Եւ ան դպիրները որ Երուսաղէմէն իջեր էին , կ'ըսէին Թէ , Ասոր ներսի դին Բէեզեբուղ կայ , և դևերուն իշխանովը դևերը կը հա-
23 նէ ։ Եւ իրեն կանչելով զանոնք , առակներով կ'ըսէր անոնց . Ինչպէս կրնայ Սատանան Սատանայ

24 հանել ։ Ու Թէ որ մէկ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժնուի , ան թագաւորութիւնը չկրնար կե-
25 նալ ։ Եւ Թէ որ տունն մը իրեն դէմ բաժնուի , ան տունը չկրնար
26 կենալ , Ու Թէ որ Սատանան իրեն դէմ ելաւ՝ ու բաժնուած է , անիկայ չկրնար կենալ , հապա անոր
27 վերջը հասած է ։ Մէկը չկրնար զօրաւոր մարդու մը տունը մտնել՝ անոր կարասիները յափշտակել , Թէ որ առաջ ան զօրաւոր մարդը չկապէ , ու ետքը անոր
28 տունը կողոպտէ ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ , Ամէն մեղքերը ալիտի ներուին մարդոց որդիներուն , և հայհոյութիւնները՝ որչափ որ հայ-
29 հոյեն . Բայց ով որ հոգւոյն Սրբոյ դէմ հայհոյէ , յաւիտեան թողութիւն պիտի չունենայ . հապա յաւիտենական դատաստանի պար-
30 տաւոր պիտի ըլլայ ։ Վասն զի կ'ըսէին Թէ . Պիղծ ոգի կայ անոր ներսի դին ։

31 Եղբայրները անոր մայրը ու եղբայրները եկան , և դուրսը կայնելով՝ մարդ խրկեցին ու կը կանչէին զա-
32 նիկայ ։ Եւ ժողովուրդը անոր բոլորտիքը նստեր էր . ու իրեն ըսին Թէ , Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կ'այնէ են՝ և քեզ
33 կ'ուզեն ։ Եւ անիկայ պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ . Ո՞վ է
34 իմ մայրս՝ կամ եղբայրներս ։ Ու իր բոլորտիքը նստողներուն նայելով՝ ըսաւ . Ահա իմ մայրս ու
35 իմ եղբայրներս . Վասն զի ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ , ա-նիկայ է իմ եղբայրս և քոյրս ու մայրս ։

ԳԼ . Դ

1 Սերմանացանին առակը . 14 և ան առակին մեկնութիւնը ։ 21 Մէնք պարտաւոր ենք մեր գիտութեան լոյսը ուրիշներուն ալ հաղորդելու ։ 26 Ծածուկ աճեցող սերմին , 30 և մանաւանդ նեխի հատին առակը ։ 35 Քրիստոս կը հանգարտեցնէ ծովուն ալեկոծութիւնը ։

1 Պարձեալ սկսաւ սորվեցընել ծովեզերքին վրայ . և շատ ժողովուրդ անոր քովը ժողվուեցաւ , անանկ որ՝ ինքը նաւը մտաւ , ու նստաւ ծովուն վրայ . և բոլոր ժողովուրդը ցամաքը ծովուն եզերքն
2 էր ։ Եւ անոնց շատ բաներ կը սորվեցընէր առակներով , Ու կ'ըսէր անոնց իր վարդապետութեանը
3 մէջ . Լսեցէ՛ք՝ ահա սերմ ցանողը
4 ելաւ որ սերմ ցանէ ։ Ու երբոր կը ցանէր . մէկ քանին ճամբուն քովը ինկաւ , և թռչունները եկան
5 ու կերան զանիկայ ։ Եւ ուրիշը ինկաւ ապառաժուտ տեղի վրայ , ուր որ շատ հող չկար . և շուտ մը բուսաւ , հողը խորունկութիւն

Յամի Տեառն 31

* Ղուկ. ոզ-ջացաւ մէկալին պէս

Բ Մատ. ժբ. 14 ։

Ե Մատ. իբ. 16 ։

Ե Ղուկ. զ. 17 ։

Ե ԳԼ. ա. 23 , 24 ։ Ղուկ. գ. 42 ։

Ը Մատ. ժգ. 33 ։ ԳԼ. ա. 1 ։

Ի ԳԼ. ա. 25 , 34 ։ Մատ. ժբ. 16 ։

Ը Մատ. ժ. 1 ։ Ղուկ. զ. 12 ։ Թ. 1 ։

Բ Ցօհ. ա. 42 ։

Ժ ԳԼ. զ. 31 ։

Է Ցօհ. է. 5 ։ ժ. 20 ։

Ը Մատ. Թ. 34 ։ ժ. 25 ։ Ղուկ. ժա. 15 ։ Ցօհ. է. 20 ։ ը. 48 ։ 52 ։ ժ. 20 ։

Ի Մատ. ժբ. 25 ։

Յամի Տեառն 31

Ե Մատ. իթ. 24 ։ Մատ. ժբ. 29 ։

Ե Մատ. ժբ. 31 ։ Ղուկ. ժբ. 10 ։ ա Ցօհ. ե. 16 ։

Հ Մատ. ժբ. 46 ։ Ղուկ. ը. 19 ։

Ա Մատ. ժբ. 1 ։ Ղուկ. ը. 4 ։

Բ ԳԼ. ժբ. 38 ։

Ցամ Տեառն 31

6 չունենալուն համար՝ Սակայն ա-
րևուն ծագած աւեՙնը՝ այրեցաւ,
ու արմատ չունենալուն համար
7 չորցաւ։ Եւ ուրիշը ինկաւ փուշ-
ներու մէջ, և փուշերը ելան՝ ու
խեղդեցին զանիկայ, ու պտուղ
8 չտուաւ։ Եւ ուրիշը ինկաւ աղեկ
հողի մէջ, ու պտուղ կու տար,
Ի որ ելաւ ու մեծցաւ, և կը բերէր
Ա Ցճ. ժե. 5։ Կող. ա. 6։ մէկուն տեղը երեսուն, ու մէկուն
տեղը վաթսուն, և մէկուն տեղը
9 հարիւր։ Ու կ՚ըսէր. Ան որ լը-
սելու ականջ ունի, թող լսէ։
Ե Մատ. ժգ. 10. Ղուկ. ը. 9, ՃԱ։ 10 Ու երբոր առանձին էր, իր քո-
ղը եղողները տասուերկուքին հետ
մկտեղ հարցուցին իրեն ան ա-
11 ռակը։ Եւ ըսաւ անոնց. Ձեզի
տրուած է գիտնալ Աստուծոյ
թագաւորութեանը խորհուրդը,
բայց Ե անոնց՝ որ դուրսէն են, ամէն
12 բան առակներով կ՚ըլլայ. Ո՛ր
տեսնելով տեսնեն՝ ու չտեսնեն,
և լսելով լսեն՝ ու չհմանան. որ
չըլլայ թէ դարձի գան, և իրենց
13 մեղացը թողութիւն ըլլայ։ Ու
ըսաւ անոնց. Ա՛ս առակը չէք գի-
տեր. ուրեմն ի՞նչպէս պիտի գիտ-
14 նաք ամէն առակները։ Ի Սէրմ
15 ցանողը խօսքը կը ցանէ։ Եւ ճամ-
բուն քովինները անոնք են՝ որոնց
մէջ խօսքը կը ցանուի. ու երբոր
կը լսեն, չուտ մը Սատանան կու
գայ և անոնց սրտերուն մէջ ցա-
16 նուած խօսքը կը հանէ։ Նոյնպես
ալ ապառաժուտ տեղերու վրայ
ցանուածները անոնք են, որ երբոր
կը լսեն խօսքը՝ չուտ մը ուրախու-
17 թեամբ կ՚ընդունին զանիկայ. Եւ
իրենց մէջը արմատ չունենալով՝
քիչ ժամանակ կը տեւեն... ետքը
երբոր նեղութիւն կամ հալածանք
ըլլայ խօսքին համար՝ չուտ ջ կը
18 գայթակղին։ Եւ փուշերուն մէջ
ցանուածները անոնք են՝ որ երբ
19 խօսքը կը լսեն, Աշխարհիս զբաղ-
մունքները Ե ու հարստութեան
իաբէութիւնները, և ուրիշ բա-
Ե Տիմ. գ. 9։ 17։ ներուն ցանկութիւնները մէջ մըտ-
նելով՝ խօսքը կը խեղդեն, ու կ՚ըլ-
20 լայ անպտուղ։ Եւ աղեկ հողի
մէջ ցանուածները անոնք են, որ
խօսքը կը լսեն՝ և կ՚ընդունին, ու
պտուղ կու տան՝ մէկուն տեղը ե-
րեսուն, և մէկուն տեղը վաթսուն,
ու մէկուն տեղը հարիւր։
Ի Մատ. ե. 15։ Ղուկ. ը. 16։ Ժա. 33։ 21 Ի Եւ ըսաւ անոնց. Միթէ ճրագը
գրուանին կամ մահիճին տակը
դրուելու համար կու գայ. չէ՞ որ
աշտանակին վրայ դրուելու հա-
Ա Մատ. ժ. 26։ Ղուկ. ժբ. 2։ 22 մար։ Ա Ինչու որ ծածուկ բան մը
չկայ, որ պիտի չյայտնուի. և
գաղտուկ բան մը չէ եղած՝ որ
Ի Մատ. ժա. 15։ Հմր. 9։ 23 երևան պիտի չելլէ։ Ի Թէ որ
մէկը լսելու ականջ ունի, թող
լսէ։
24 Եւ ըսաւ անոնց. Նայեցէ՛ք ինչ
կը լսէք. Ի՛նչ չափով որ դուք կը
չափէք, նոյն չա՛փովը պիտի չափուի
ձեզի. և ձեզի՝ որ կը լսէք, պիտի
25 աւելնայ։ Ա Ասան զի Ի՛ով որ ունի,
անոր պիտի տրուի. և ով որ չու-
նի, ունեցածն ալ անկէ պիտի
առնուի։
26 Եւ կ՚ըսէր. Ա Աստուծոյ թագա-
ւորութիւնը ասանկ է, որպէս թէ
մէկ մարդ մը հողին մէջը սերմ
27 ձգէ, ու քնանայ և արթննայ գի-
շեր ու ցորեկ, և սերմը բուսնի
ու մեծնայ, ՚՚՚ ինքը չգիտեր թէ
28 ինչպէս։ Քանզի հողը ինքիրմէն
պտուղ կու տայ. առաջ խոտը,
ետքը հասկը, անկէ ետև լիցուն
29 ցորենը հասկին մէջ։ Ու երբոր
պտուղը հասունցայ, չուտ մը
Ա Յայտ. ժգ. 15։ մանգաղը կը խրկէ, ի՛նչու որ
հունձքի ատենը հասած է։
30 Եւ կ՚ըսէր. Աստուծոյ թագա-
ւորութիւնը ի՞նչ բանի նմանցը-
նենք, կամ ի՞նչ առակով անիկայ
31 բաղդատենք։ Մանանեխի հատին
նման է, որ հողի մէջ ցանուած
Ա Մատ. ժգ. 31։ Ղ՚՚՚. ժգ. 18։ Գոր. բ. 41։ դ. 4։ ե. 14։ ժթ. 20։ ատենը՝ երկրի վրայ եղած սերմե-
32 րուն ամէնէն պզտիկն է. Ու երբ-
որ ցանուի, կը բուսնի, և ամէն
խոտեղէններէն ալ մեծ կ՚ըլլայ,
ու մեծ ճիւղեր կ՚արձակէ, անանկ
որ երկնից թռչուններուն հերիք
կ՚ըլլայ անոր շուքին տակը քնա-
նալու։
33 Ե Ասանկ շատ առակներով կը
Ա Մատ. ժգ. 34։ Ցօ. ժշ. 12։ խօսէր անոնց հետ խօսքը ո՛րչափ
34 որ կրնային մտիկ ընել. Ու առանց
առակի բան մը չէր խօսեր անոնց.
բայց առանձին իր աշակերտներուն
կը մեկներ ամէնը։
Ղ Մատ. ը. 18։ 23։ Ղ՚՚՚. ը. 22։ 35 Ե Նոյն օրը երբոր իրիկուն
կ՚ըլլար, ըսաւ անոնց. Ելէ՛ք Ա՛վե՜ռն
36 մեկալ կողմը անցնինք։ Անոնք
ալ ժողովուրդը թող տալով ա-
ռին զինքը ինչպէս որ էր նաւուն
մէջ. և ուրիշ նաւակներ ալ կա-
37 յին անոր հետ։ Ու հովի մեծ
փոթորիկ մը եղաւ, և ալիքները
նաւուն վրայ կու գային, անանկ
38 որ գրեթէ լեցուն էր։ Ու ինքը
նաւուն ետևի կողմը բարձի վրայ
կը քնանար. արթնցուցին զանի-
կայ և կ՚ըսէին անոր. Վարդապետ
39 հոգդ չէ՞, որ կը կորսուինք։ Ու
ելլելով՝ սաստեց հովին, և Ծովուն
ըսաւ. Դադարէ՛ լուռ կեցիր. ու
հովը դադարեցաւ, և մեծ խաղա-
40 ղութիւն եղաւ։ Ու ըսաւ անոնց.
Ինչո՞ւ ատանկ վախկոտ էք, ի՞նչ-
պէս կ՚ըլլայ որ հաւատք չունիք։
Եւ անոնք խիստ վախցան, ու կ՚ը-

Յամի Տեառն 31

սէին իրարու . Արդեօք ով է ասիկայ , որ հովը ու ծովը ասոր կը ՚ի ալանդին ։

ԳԼ . Ե

1 Քրիստոս լէգէոն ունեցող մարդը կը բժշկէ . 13 և անկէ ելլող դևերը խոզերուն մէջ կը մտնեն ։ 25 Քրիստոս կը բժշկէ տեսաւոս կնիկը ։ 35 և Յայրոսի աղջիկը կը յարուցանէ ։

1 Նաև ե՚կան ծովուն մէկալ կողմը
2 *Գադարացւոց երկիրը ։ Ու երբոր ինքը նաւէն ելաւ , դևրեզմաններէն ելած մարդ մը պատահեցաւ իրեն , որ պիղծ ոգի ունէր .
3 Որ անոր բնակած տեղն ալ գերեզմաններուն մէջն էր . ու չղթայով ալ մէկը չէր կրնար զանիկայ կա-
4 պել . Որովհետև շատ անգամ ոտնակապերով և չղթաներով կապուեր էր , բայց անիկայ չղթաները կտրեր , ու ոտնակապերը կոտրտեր էր , և մէկը չէր կրնար զանիկայ
5 նուաճել . Եւ միշտ գիշեր ու ցորեկ †գերեզմաններուն մէջ ու լեռներուն մէջ՚՝ կը կանչուըտէր , ու իր մարմինը քարերով կը ճեղքըռ-
6 տէր ։ Երբոր հեռուէնց Ցիսուսը տեսաւ , վազեց ու երկրպադուեց
7 Թիւն ըրաւ անոր , Եւ մեծ ձայնով մը աղաղակեց՝ ու ըսաւ . Դուն իմ հետս ի՞նչ բան ունիս Ցիսուս՝ Որդի Աստուծոյ բարձրելոյ . քեզ Աստուծով կ՚երդմնցընեմ՝ զիս մի՚
8 տանջեր ։ (Քանզի կ՚ըսէր անոր . Պիղծ ոգի՚ ելլէր ատ մարդէն ։)
9 Եւ անոր հարցուց Թէ՝ Անունդ ի՞նչ է . ու ըսաւ անոր . Իմ անունս Լէգէոն է , ինչու որ մենք
10 շատուր ենք ։ Եւ շատ ‡կ՚աղաչէին անոր՝ որ զերկունք ան երկրէն դուրս
11 չխրկէ ։ Եւ հոն լեռանը մօտ խոզերու մեծ երամակ մը կար՚ որ կ՚ա-
12 րածուէին ։ Ու բոլոր դևերը աղաչեցին անոր՝ ու ըսին . Մեզ խոզերուն խրկէ , որ անոնց մէջը
13 մտնենք ։ Եւ Ցիսուս շուտ մը հրաման տուաւ անոնց . ու երբոր պիղծ ոգիները ելան՝ խոզերուն մէջը մտան . և երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց , (երկու հազարի չափ կային ,) ու ծովուն մէջը խեղ-
14 դուեցան ։ Եւ խոզարածները փախան , ու պատմեցին քաղաքը ու ագարակները . և ՚ելլ էին տեսնելու՝ Թէ ինչ բան է որ եղաւ ։
15 Ու ե՚կան Ցիսուսին , և տեսան դիւահարը՝ որ լէգէոն ունէր , որ հագուած ու խելքը վրան եկած նըս-
16 տեր էր , ու վախցան ։ Եւ անոնք որ տեսեր էին , պատմեցին անոնց՝ Թէ ինչ եղաւ դիւահարին . նաև խո-
17 զերուն վրայով ։ Եւ սկսան աղաչել անոր , որ իրենց սահմաններէ-
18 րէն երթայ ։ Ու երբոր անիկայ նաւը մտաւ , դիւահարը կ՚աղաչէր
19 անոր՝ որ հետը ըլլայ ։ Եւ Ցիսուս Թող չտուաւ անոր . Գնայ քու տունդ քու ընտանիներուդ , ու պատմէ՚ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ , և ողոր-
20 մեցաւ քեզի ։ Ան ալ գնաց , և սկսաւ Դեկապօլիսի մէջ քարոզել ինչ որ Ցիսուս իրեն ըրաւ . և ամենը կը զարմանային ։
21 Ու երբոր Ցիսուս նաւով նորէն ծովուն մէկալ կողմը անցաւ , շատ բազմութիւն ժողովուեցաւ անոր
22 քովը , և ինքը ծովեզերքն էր ։ Եւ ահա ժողովրդապետներուն մէկը կու գար , որուն անունը Յայրոս էր . ու երբոր տեսաւ զանիկայ , անոր
23 ոտքը ինկաւ . Եւ շատ կ՚աղաչէր անոր՝ ու կ՚ըսէր Թէ , Իմ աղջիկս մեռնելու մօտ է , որ գաս անոր վրայ ձեռք դնես , որպէս զի ազատի ,
24 ու պիտի ապրի ։ Եւ գնաց անոր հետ . ու շատ բազմութիւն իր ետևէն կ՚երթային՝ ու կը նեղէին զինքը ։
25 Եւ կնիկ մը՝ որ տասուերկու տարի արիւնի տեռատեսութեան
26 մէջ էր , Ու խիստ վշտացած էր շատ բժիշկներէն , և իր բոլոր ունեցածը վատներ էր , ու օգուտ մը չէր դտեր , հապա ևս առաւել զայրա-
27 ցեր էր , Երբոր Ցիսուսին վրայով լսեց , ետևէն եկաւ բազմութեանը մէջ , ու անոր հանդերձին դպաւ .
28 Քանզի կ՚ըսէր , Թէ որ միայն անոր հանդերձներուն դպչիմ , պիտի
29 բժշկուիմ ։ Եւ շուտ մը իր արիւնին աղբիւրը ցամքեցաւ . ու իր մարմինին մէջ իմացաւ՝ Թէ տան-
30 ջանքէն բժշկուեցաւ ։ Եւ Ցիսուս շուտ մը գիտնալով իր անձին մէջ ան է զօրութիւնը՝ որ իրմէն ելաւ , դարձաւ բազմութեանը մէջ՝ ու ըսաւ . Ո՞վ դպաւ իմ հանդերձ՚-
31 ներուս ։ Եւ իր աշակերտները ըսին իրեն . Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ , ու կ՚ը-
32 սես Թէ՝ Ո՞վ ինծի դպաւ ։ Եւ իր բոլորտիքը կը նայէր որ աս բա-
33 նը ընողը տեսնէ ։ Ու կնիկը վախցաւ՝ ու դողդոջ , ինչու որ գիտէր Թէ իրեն ինչ եղաւ . և եկաւ՝ անոր առջևը ինկաւ , ու բոլորը ի՚նէրէը
34 չիտկէ չիտակ զրուցեց անոր ։ Եւ Ցիսուս ըսաւ անոր . Ա՚ղջիկ ը՚քուս հաւատդ քեզ բժշկեց . գնա խաղաղութեամբ , ու բժշկուած եղիր քու տանջանքէդ ։
35 Երբոր ինքը դեռ կը խօսէր , ժողովրդապետին տունէն ե՚կան՝ ու ըսին Թէ , Աղջիկդ մեռաւ , ալ ինչո՚ւ վարդապետը կը յոգնե-
36 ցընես ։ Իսկ Ցիսուս ըսուած խօս-

Յամի Տեառն 31

ֆ Ղուկ . ը . 38 ։

= Մատթ . ը . 28 ։ Ղուկ . ը . 26 ։ Ո՚ր՚ն՚ Գերգեսացւոց

† Ո՚ր՚ն՚ լեռներուն մէջ ու գերեզմաններուն մէջ

‡ Կ՚ար՚ղաչէր

Բ Մատթ . ը . 34։ Գործ . ժգ . 39 ։

ղ Ղուկ . ը . 38 ։

Դ Մատթ . թ . 1 ։ Ղուկ . ը . 40 ։

Ե Մատթ . թ . 18 ։ Ղուկ . ը . 41 ։

Ղ Ղուկ . ժ . 25։ Մատթ . իբ . 20 ։

Է Ղուկ . գ . 19 ։ ը . 46 ։

Ը Մատթ . թ . 22 ։ Գլ . ժ . 52 ։ Գործ . ժգ . 8 ։

Թ Ղուկ . ը . 49 ։

Ցամի Տեառն 31

քը լսածին պէս ժողովրդապետին ըսաւ . Մի վախնար , միայն թէ
37 Հաւատայ : Եւ մէկը թող չտուաւ իր հետը երթալու , բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակո-
38 բոսին եղբայրը Յովհաննէսը : Ու ժողովրդապետին տունը գալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ
39 ու աղաղակողներ : Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց . Ինչո՞ւ խռովեր էք ու կու լաք . մանուկը մեռած
40 չէ , հապա ✠ կը քնանայ : Եւ ծաղր կ՚ընէին անիկայ . բայց ինքը ամէնը դուրս հանելով՝ իր հետը առաւ մանուկին հայրը ու մայրը և անոնք որ իր հետն էին , ու մտաւ հոն՝ ուր
41 որ մանուկը պառկած էր : Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր . Տալիթա՝ կումի , որ կը թարգմանուի , Ա՛ղջիկ (քեզի կ՚ը-
42 սամ ,) ելլէ՛ : Եւ իսկոյն աղջիկը ոտք ելաւ , ու կը քալէր , ինչու որ տասներկու տարեկան էր . ու մեծ
43 ապշութեամբ ապշեցան : Եւ խստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մէկը չգիտնայ աս բանը . ու ըսաւ որ անոր ուտելիք տան :

Ա Մատ . ը . 4 ; Ի . 30 ; ժբ . 16 ; ժէ . 9 ; Գա . գ . 12 ; Ղու . ե . 14 ;

ԳԼ . Զ

1 Քրիստոս ծաղրութիւն կը կրէ իր քաղաքակիցներէն . 7 տասներկու աշակերտներուն իշխանութիւն կու տայ պիծ ոգիները հանելու : 14 Զանազան կարծիքներ Քրիստոսի վրայով : 27 Յովհաննէս մկրտիչ կը գլխատուի : 29 և կը թաղուի : 30 Առաքեալները իրենց քարոզութենէն Յիսուսի կը դառնան : 34 Հինգ հացին ու երկու ձուկին հրաշքը : 48 Քրիստոս ծովուն վրայ կը քալէ : 53 և ամէն իրեն դպչող ցաւագարները կը բժշկէ :

1 Եւ ՚անկէ ելլելով՝ եկաւ իր երկիրը , ու անոր աշակերտները իր
2 հետևէն գացին : Եւ շաբաթ օրը հասնելուն՝ սկսաւ ժողովարանին մէջ սորվեցընել . ու շատերը լսելով՝ կը զարմանային ու կ՚ըսէին . Աս իրկից ունի աս բաները , և ո՞ր իմաստութիւն է որ ասոր տրուած է , որ ասանկ հրաշք-
3 ներ կ՚ըլլան ասոր ձեռքովը : Ասիկայ հիւսը չէ՞ , Մարիամին որդին , և ✠Յակոբոսին ու Յովսէսին և Յուդային ու Սիմոնին եղբայրը . ու ասոր քոյրերը հոս մեր քովը չե՞ն . և ՚անոր վրայով կը գայթակղէ-
4 ին : Բայց Յիսուս ըսաւ անոնց . Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր երկրին մէջ , ու իր ազգականներուն , և իր տանը մէջ :
5 Ու չէր կրնար հոն մէկ հրաշք մըն ալ ընել , միայն թէ քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ , ու
6 բժշկեց զանոնք : Եւ ՚անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար . ետ ընկակայ դեղերը պտըտելով՝ կը սորվեցընէր :

Ա Մատ . ժգ . 54 ; Ղու . գ . 16 ;

Բ Յօհ . ը . 42 ;

Ա Մատ . ժբ . 46 ; Գաղ . ա . 19 ;

Դ Մատ . ժա . 6 ;

Ի Մատ . ժգ . 57 ; Յօհ . դ . 44 ;

Ղ Տե՛ս Ծն . ժթ . 22 ; Լբ . 25 ; Մատ . ժգ . 58 ; Գա . թ . 22 ;

Ի Ես . ժթ . 16 ;

Ը Մատ . թ . 35 ; Ղու . ժգ . 22 ;

7 Եւ իրեն կանչեց տասներկուքը . ու սկսաւ երկու երկու խրկել զանոնք , ու անոնց իշխանութիւն
8 տուաւ պիղծ ոգիներուն վրայ : Եւ պատուիրեց անոնց՝ որ ճամբու համար բան մը չառնեն , բայց միայն գաւազան մը . ո՛չ տոպրակ , ո՛չ
9 հաց , ո՛չ ստակ գօտիներնուն մէջ . Հապա ✠ հողաթափ հագնին . և
10 Կրկին հանդերձ մի՛ հագնիք՝ ըսաւ : Ու ըսաւ անոնց . Ո՛ր տունն որ մտնէք , հոն կեցէք մինչև որ անկէ
11 ելլէք : Եւ անոնք որ ձեզ չեն ընդունիր , ու ձեզի մտիկ չեն ըներ , երբոր անկէ կ՚ելլէք , Խոտերնուդ տակի փոշին թօթվեցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար : Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Սոդոմայեց ու Գոմորացւոց աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ան քաղաքին" :
12 Եւ անոնք ելլելով՝ կը քարոզէին ,
13 որ մարդիկ ապաշխարեն : Եւ շատ դեւեր կը հանէին , ծոռ շատ հիւանդներ եղով կ՚օծէին ու կը բժշկէին զանոնք :
14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց , (ինչու որ անոր անունը յայտնի եղաւ ,) ու կ՚ըսէր , Թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն յարուցած է , ու անոր համար
15 հրաշքներ կ՚ըլլան անով : Ուրիշները կ՚ըսէին Թէ Եղիան է . ուրիշներն ալ կ՚ըսէին Թէ մարգարէ մըն է , կամ մարգարէից մէկուն
16 պէս : Բայց Հերովդէս լսելէն , ըսաւ . Ասիկայ Յովհաննէսն է՝ որուն գլուխը ես կարեցի . մեռելներէն յարուցած է :
17 Քանզի Հերովդէս ինքը մարդ խրկեց՝ Յովհաննէսը բռնեց , ու կապեց բանտը դրաւ՝ իր եղբօրը Փիլիպպոսին կնկանը Հերովդիային համար , ինչու որ իրեն կնիկ առեր
18 էր զանիկայ : Վասն զի Յովհաննէս Հերովդեսին կ՚ըսէր . Չբեզի օրինաւոր չէ քու եղբօրդ կնիկը
19 ունենալ : Եւ Հերովդիա ոխ ունէր անոր դէմ , ու կ՚ուզէր անիկայ
20 մեռցընել , ու չէր կրնար . Ինչու որ Հերովդէս ճիր վախնար Յովհաննէսէն , դիտնալով թէ անիկայ արդար և սուրբ մարդ մըն է . և անոր բերանը կը նայէր , ու անկ ըսելով՝ շատ բան կ՚ընէր , և քաղց-
21 րութեամբ անոր մտիկ կ՚ընէր : Ու տերերը դիպուկ օր մը եղաւ , որ Հերովդէս ՚իր ծննդեան օրը ընթրիք կ՚ընէր իր մեծամեծներուն և հազարապետներուն ու Գալիլեայի ե-
22 րեւելներուն . Եւ Հերովդիային աղջիկը հոն գալով՝ պարեցաւ , ու Հաճելի եղաւ Հերով-

Ցամի Տեառն 31

Ի Մատ . ժ . 1 ; Գա . դ . 13 , 14 ; Ղու . Թ . 1 ;

ժ Գոր . ժբ . 8 ;

Ի Մատ . ժ . 11 ; Ղու . Թ . 4 ; ժ . 7 , 8 ;

Լ Մատ . ժ . 14 ; Ղու . ժ . 10 ;

Ի Գոր . ժգ . 51 ; ժբ . 6 ; * Ո՛ահ . նե . ;

ԺՁ ակ . ե . 14 ;

Ա Մատ . ժգ . 1 ; Ղու . Թ . 7 ;

Հ Մատ . ժգ . 14 ; Գա . ը . 28 ;

Յ Մատ . ժգ . 2 ; Ղու . գ . 19 ;

Ցա . Տ . 30

Ղ Ղա . ժբ . 16 ; ի . 21 ;

Ցա . Տ . 32

Մ Մատ . ժգ . 6 ;

Ն Ծն . խ . 20 ;

Ցամի Տեառն 32

պէսին՝ և իր հետը նստողներուն . Թաղաւորը բաւ աղջկանը . Խընդրէ՛ ինծմէ ինչ որ կ՚ուզես , ու
23 պիտի տամ քեզի : Եւ անոր երդում ըրաւ ըսելով . Ինչ որ դուն կ՚ուզես ինծմէ խնդրես , պիտի տամ քեզի , մինչև թաղաւորութեանս կէսը :
24 Եւ անիկայ դուրս ելլելով իր մօրը ըսաւ . Ի՞նչ ուզեմ . ան ալ ըսաւ . Ցովհաննէս մկրտչին գլուխը :
25 Իսկ ան եւ շուտ մը արտորալով թաղաւորին քովը մտաւ՝ ու խընդրեց՝ ըսելով . Կ՚ուզեմ որ չուտով սկուտեղի մը վրայ Ցովհաննէս մը-
26 կրտչին գլուխը տաս ինծի : Եւ թագաւորը խիստ տրտմեցաւ . բայց երդումներուն համար՝ ու իր հետը նստողներուն համար՝ չուզեց
27 որ անոր խնդիրքը մերժէ : Եւ թագաւորը իսկոյն դահիճ խրկեց , ու հրաման ըրաւ անոր գլուխը բերելու . ան ալ գնաց բանտին մէջ
28 գլխատեց զանիկայ . Եւ սկուտեղով մը բերաւ անոր գլուխը՝ ու տուաւ աղջկանը , և աղջիկը զանի-
29 կայ իր մօրը տուաւ : Եւ անոր աշակերտները լսելով , եկան անոր մարմինը վերցուցին , ու գերեզմանի մէջ դրին :
30 Եւ առաքեալները Յիսուսին քովը ժողվուեցան , ու պատմեցին անոր՝ ամէն ինչ որ ըրին և ինչ
31 որ սորվեցուցին : Եւ անիկայ ըսաւ անոնց . Եկէք դուք առանձին անապատ տեղ մը , և քիչ մը հանգչեցէք , քանզի շատերը կային որ կու գային ու կ՚երթային . և հաց ուտելու ալ ժամանակ
32 չէին ունենար : Եւ նաւով անա-
33 պատ տեղ մը գացին առանձին : Ու ժողովրդները տեսան զանոնք որ կ՚երթային , և շատերը զանիկայ ճանչցան , ու ոտքով բոլոր քաղաքներէն հոն կը վազէին , և առնոնցմէ առաջ հասնելով՝ անոր քո-
34 վը ժողվուեցան : Ու Յիսուս երբ որ դուրս ելաւ , շատ ժողովուրդ տեսնելով՝ խղճաց անոնց վրայ . ինչու որ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին . և սկսաւ շատ բաներ սորվեցընել անոնց :
35 Վերջ երբոր ժամանակը շատ ուշացաւ , իր աշակերտները իրեն եկան՝ ու ըսին . Տէ՛ր անապատ տեղ մըն է , ու ժամանակը ուշ
36 շացած է , արձակէ ժողովրդները որ երթան բոլորտիքի ագարակները ու գեղերը՝ ու իրենց հաց գնեն , ինչու որ ուտելու բան
37 մը չունին : Բայց անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Դուք տուէք ատոնց որ ուտեն : Եւ ըսին իրեն . Երթանք երկու

Ցամի Տեառն 32

հարիւր դահեկանի հաց գնե՞նք՝
38 և տանք ատոնց որ ուտեն : Ըսաւ անոնց . Քանի՞ նկանակ ունիք , գացէ՛ք նայեցէ՛ք . ու երբոր գիտացան՝ ըսին . Հինգ , ու երկու
39 ձուկ : Եւ հրաման ըրաւ անոնց՝ որ կանանչ խոտին վրայ դունդ
40 դունդ նստին : Եւ դաս դաս նստան՝ հարիւրական ու հիսունա-
41 կան : Եւ հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ՝ ու դէպ ի երկինքը նայելով , օրհնեց . և մանրեց նկանակները՝ ու տուաւ իր աշակերտներուն , որ անոնց առջևը դնեն . ու երկու ձուկը ամենուն
42 ալ բաժնեց : Եւ ամէնքը կերան ու
43 կշտացան . Եւ տասներկու կողով ջեցուն՝ կտորանքները վերցու-
44 ցին , և ձուկերէն ալ : Եւ ան հացերէն ուտողները հինգ հազարի չափ երիկ մարդիկ էին :
45 Եւ շուտ մը իր աշակերտները արտորցուց որ նաւը մտնեն , և էրթ առաջ մինչ կողմը Բեթսայիդա անցնին , մինչև որ ինքը ժողովուրդը
46 զը արձակէ : Եւ անոնցմէ զատուելով՝ լեռը ելաւ աղօթք ընե-
47 լու : Ու երբոր իրիկուն եղաւ , նաւը ծովուն մէջտեղն էր , ու ինքը
48 մինակ ցամաքն էր : Եւ տեսաւ անոնք որ կը տագնապէին հովէն՝ թի քաշելու ատենին , ինչու որ հովը իրենց դէմ էր . և գիշերուան չորրորդ պահուն ատենները՝ ծովուն վրայ քալելով կու գայ անոնց , ու
49 կ՚ուզէր անոնցմէ անցնիլ : Անոնք երբոր տեսան որ ծովուն վրայ կը քալէր , կարծեցին թէ աչքի երևոյթ բան մըն է , ու կանչեցրե-
50 տեցին . քանզի ամէնքն ալ զանիկայ տեսան , ու խռովեցան . և ինքը շուտ մը խօսեցաւ անոնց հետ՝ ու ըսաւ անոնց . Քաջ եղէք՝ ես
51 եմ , մի՛ վախնաք : Եւ նաւը ելաւ անոնց քովը , ու հովը դադրեցաւ . և անոնք մտքերնուն մէջ չափէ դուրս ապշած էին՝ ու կը
52 զարմանային : Վասն զի հացին վրայ խելք չմտցան . ինչու որ սիրտերնին թմրած էր :
53 Ու մկալ կողմը անցնելով , գեննեսարեթի երկիրը հասան , և
54 նաւը տեղաւորեցին : Ու երբոր նաւէն ելան ; ան թէպէտ ճանչ-
55 կուն ելան , հրապուրեցին ամբողջ տեղացիները՝ ու սկսան մահիճներով հիւանդները բերել՝ ուր որ կը լը-
56 սէին թէ հոն է : Եւ ուր որ կը մտնէր՝ գեղերը կամ քաղաքները կամ ագարակները , հրապարակները՝ ոտքերուն մէջ կը դնէին հիւանդները , ու կ՚աղաչէին իրեն՝ որ թող իր

Ներմ. ե. 3· 6 ։ է · 2 ։
Մատ. ժգ· 9 ։
Ղուկ. թ· 10 ։
Մատ. ժգ· 13 ։
Գործ. գ · 20 ։
Մատ. ժգ· 14 ։
Մատ. թ· 36 ։ ժդ · 14 ։
Ղուկ. թ · 11 ։
Մատ. ժգ· 15 ։ Ղուկ · թ · 12 ։
Թուոց. ժա· 13 ։ 22 ։ Դատ. գ· 43 ։
Մատ. ժգ· 26 ։
Մատ. ժդ· 22 ։ Յով · ղ · 17 ։
Մատ. ժդ· 23 ։ Յով · ղ · 16 · 17 ։
Տե՛ս Ղուկ· իդ · 29 ։
Գործ · ը · 17· 19 ։
Գործ · գ · 5 ։ ժղ · 14 ։
Մատ. ժգ· 34 ։
Մատ. ժդ· 19 ։ Ղուկ · թ · 13 ։ Յով · ղ · 9 ։ Տե՛ս Մատ· ժե · 34 ։ Գործ · ը · 5 ։
Մատ. իգ · 26 ։
Մատ. թ · 20 ։ Գործ · ե· 27 ։ 28 ։ Գործ · ժթ · 12 ։

Ցամք Տեառն 32

հանդերձին քղանցքին դպչէին . և որոնք որ դպան , բժշկուեցան ։

ԳԼ . Ե

1 Փարիսեցիք կը մեղադրէն Քրիստոսի աշակերտները՝ անլուայ ձեռքով հաց ուտելնուն համար ։ 8 Իսկ ինքը կ'ապացուցանէ թէ անոնք մարդոց աւանդութիւնները դնելով՝ Աստուծոյ պատուիրանքը կ'անարգեն ։ 14 և թէ կերակուրը մարդը չպղծեր ։ 24 Փիւնիկ Սորիա կնանը աղիկը պիղծ ոգիէ մը կ'ազատէ ։ 31 և խուլ ու դժուարախօս մարդ մը կը բժշկէ ։

1 Ու՝ իր քովը ժողվուեցան փարիսեցիները , ու դպիրներէն ոմանք՝ որ Երուսաղէմէն եկած էին ։
2 Ու երբոր տեսան որ անոր աշակերտներէն ոմանք պիղծ՝ այսինքն անլուայ ձեռքերով հաց կ'ուտէին ,
3 մեղադրեցին ։ Ինչու որ փարիսեցիները ու բոլոր Հրէանները մինչև որ աղիկ մը ձեռքերնին չլուան , հա չէն ուտեր . քանզի ծերերուն
4 աւանդութիւնը կը բռնեն ։ Եւ շուկայէն ի՞նչ որ կ'գնեն՝ թէ որ չլուացուին , չեն ուտեր . և ուրիշ շատ բաներ կայ՝ որ ընդունած են ու կը բռնեն , ինչպէս գաւաթներու և փարչերու ու պղնձէ առաներու և անկողիններու լուացմունք ։
5 Ներ ։ Ի՞ն ատենը փարիսեցիները ու դպիրները հարցուցին անոր թէ , Ինչու քու աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար , հապա անլուայ ձեռքերով
6 հաց կ'ուտեն ։ Ան ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Աղէկ մարգարէութիւն ըրաւ Եսայի՝ ձեզի կեղծաւորներուդ համար , ինչպէս որ գրուած է . Այս ժողովուրդը ճակտով շրթունքներովը զիս կը պատուէ , բայց իրենց սիրտը հեռաւ
7 ցած զատուած է ինծմէ . Ու պարապ տեղը զիս կը պաշտեն , մարդոց պատուիրած բաները իբրև վարդապետութիւն սորվեցընելով ։
8 Աստուծոյ պատուիրանքը թողուլով՝ մարդոց աւանդութիւնը կը բռնէք , ինչպէս՝ փարչերու և գաւաթներու լուացմունքներ . և ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք ։
9 Ու ըսաւ անոնց . Աղէկ կ'անարգէք Աստուծոյ պատուիրանքը , որ ձեր աւանդութիւնը
10 պահէք ։ Քանզի Մովսէս ըսաւ . Քո՛ւր հայրդ ու մայրդ պատուէ՛ . և Ո՛վ որ իր հայրը կամ մայրը ա-
11 նիծէ , մահով թող մեռնի ։ Բայց դուք կ'ըսէք . Թէ որ մէկը իր հօրը կամ մօրը ըսէ , Ան բանը որ ինծմէ պիտի շահիս , Ա՛ստուածոյ պատկառելիորբան է , (որ ըսել է՝ ընծայ ,)
12 ա՛լ ի՛նչ անիյ . Եւ ալ թող չէք տար անոր բան մը ընել իր
13 հօրը կամ իր մօրը ։ Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր աւանդութիւնովը , որ կ'աւանդէք . և ասոր նման շատ ուրիշ բաներ կ'ընէք ։
14 Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ ըսաւ անոնց . Լսեցէք
15 ինծի ամէնքդ՝ ու հասկըցէք ։ Բան մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ , ու կարող ըլլայ զանիկայ պղծելու . հապա ան բաները որ անկէ կ'ելլեն , անոնք են որ մարդը
16 կը պղծեն ։ Ունի՛վ որ լսելու ականջ ունի , թող լսէ՛ ։
17 Ու երբոր ան բազմութենէն ջոկուելով՝ տուն մտաւ , իր աշակերտները հարցուցին իրեն ան առակին համար ։ Ու ըսաւ անոնց . Դո՞ւք ալ ատանկ անմիտ էք . չէք հասկընար թէ ամէն ինչ որ դուրսէն մարդուն ներսի դին կը մտնէ ,
19 չկրնար անիկայ պղծել . Վասն զի չէ թէ անոր սրտին մէջը կը մտնէ , հապա փորը , և արտաքնոցը կ'ելլէ , ու բոլոր կերածները կը մաքրէ ։
20 Ան ։ Եւ կ'ըսէր թէ՝ Ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն , անիկայ կը պղծէ
21 մարդը ։ Ի՞նչու որ ներսէն մարդոց սրտէն կ'ելլեն չար խորհուրդները . շնութիւններ , պոռնկութիւններ ,
22 սպանութիւններ , գողութիւններ , ագահութիւններ , չարութիւններ , նենգութիւն , գիճութիւն , չար աչք , հայհոյութիւն , ամբարտաւանութիւն , անզգամութիւն ։
23 Այս բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն , ու կը պղծեն մարդը ։
24 Եւ անկէ ելլելով՝ Տիւրոսի ու Սիդոնի սահմանները գնաց . և տուն մը մտնելով՝ չէր ուզեր որ մէկուն յայտնուի , բայց չկրցաւ
25 ծածկուիլ . Քանզի կնիկ մը որուն աղջիկը պիղծ ոգի ուներ էր՝ նէրէ՛ տէն , լսեց անոր վրայով , ու եկաւ՝
26 անոր ոտքը ինկաւ ։ Եւ ան կնիկը * Հեթանոս էր՝ ազգով Փիւնիկ Ասորի , ու կ'աղաչէր անոր՝ որ դևը
27 իր աղջիկէն հանէ ։ Եւ Յիսուս ըսաւ անոր . Թող տուր որ առաջ տղաքը կշտանան . քանզի հունէ չէ տղոցը հացը առնել , ու շուներուն
28 ձգել ։ Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր . Այո՛ Տէր . ինչու որ շուներն ալ սեղանին տակը տղոցը փշրանքներէն կը կերակրուին ։
29 Եւ ըսաւ անոր . Ատ խօսքիդ համար գնա , քու աղջիկդ դևը ելաւ ։
30 Եւ դառնալ իր տունը երթալով՝ գտաւ որ դևը ելած , ու աղջիկը անկողնին վրայ պառկած էր ։
31 Եւ նորէն Տիւրոսի ու Սիդոնի սահմաններէն ելլելով՝ եկաւ Գալիլեայ ծովուն քովը Դեկապօլիսի

Ցամք Տեառն 32

Ելմ. ժե. 10 ։

Ելմ. ժա. 15 ։

Ելմ. ժե. 15 ։

Ժ Օր. Գ. 5 ։ Ը. 21 ։ Մատ. ժե. 19 ։

Ելմ. ժե. 21 ։

Ես. Խթ. 13 ։ Մատ. ժե. 8

Ել. Բ. 12 ։ Ը Օր. Ե. 16 ։ Մատ. ժե. 4 ։

Ել. Խա. 17 ։ Ղև. Ի. 9 ։ Նոմ. Ի. 20 ։

Ղմ. ժե. 5 ։ Իդ. 18 ։

Ելմ. Ը. 29 ։

Ցաւի Տեառն 32

32 սահմաններուն մէջէն ։ Եւ Իսկը բերին անոր առջին՝ խուլ ու դժուարախօս , ու կ՚աղաչէին որ ա-
33 նոր վրայ ձեռք դնէ ։ Եւ ժողովուրդէն մէկդի առնելով զանիկայ , իր մատերը անոր ականջներուն մէջը խօթեց՝ ու թքուբաւ ,
34 և անոր լեզուին դպաւ , ՚ի երկինքը նայելով՝ հառաչեց , ու ըսաւ անոր . Եփփաթա , (որ ըսել
35 է՝ բացուէ ,) Եւ իսկոյն անոր ականջները բացուեցան , ու անոր լեզուին կապը քակուեցաւ , և չի-
36 տակ ինքը կը պատուիրէր անոնց , անոնք՝ ալ աւելի կը քարոզէին .
37 Ու չափէ դուրս կը զարմանային՝ և կ՚ըսէին . Ամէն բաները աղէկ ըրաւ ասիկայ , որ խուլերուն լսել կու տայ՝ և համրերուն խօսիլ ։

ԳԼ. Ը

1 Քրիստոս հրաւիրով կը կերակրէ ժողովուրդը . 11 փարիսեցւոց խնդրած նշանը չուզեր տալ . 15 կը պատուիրէ իր աշակերտներուն որ զգուշ ըլլան փարիսեցիներուն խմորէն և Հերովդեսեաններուն խմորէն . 22 կոյր մը աչքերը կը բանայ . 27 կը ծանուցանէ Թէ ինքը Քրիստոսն է , որ պիտի չարչարուի ու յարութիւն առնէ . 34 և իր աշակերտները կը յորդորէ որ համբերեն , երբոր նաւծուխն աւետարանի գաւանութեանը համար ։

1 Յ՚ին օրերը՝ ժողովուրդը խիստ չատ բլլալով , և ուտելու բան մը չունենալով , Յիսուս իրեն կանչեց իր աշակերտները՝ ու ըսաւ
2 անոնց . Կը խղճամ ատ ժողովուրդին վրայ . ինչու որ հիմա իրեք օր է որ իմ քովս են , և բան մը չու-
3 նին ուտելու . Եւ Թէ որ ատոնք անօթի խրկեմ իրենց տուները , ճամբուն մէջ պիտի մարին , ինչու որ ատոնցմէ ոմանք հեռուս տեղէ
4 եկած են ։ Եւ իր աշակերտները պատասխան տուին իրեն . Ա՛ս անապատիս մէջ որո՞ւկից կրնայ մէկը
5 հացով կշտացընել ատոնք ։ Եւ հարցուց անոնց . Քանի՞ նկանակ ունիք . ու անոնք ըսին . Եօթը ։
6 Եւ հրաման ըրաւ ժողովուրդին որ գետնին վրայ նստին . ու առաւ եօթը նկանակը , գոհացաւ , և կտրեց , ու տուաւ աշակերտներուն , որ ժողովուրդին առջևը դը-
7 նեն . և դրին ։ Ու քանի մը մանր ձուկեր ունէին , և Ը օրհնեց , ու հրաման ըրաւ որ անոնք ալ դնեն
8 առջևը ։ Եւ կերան ու կըշտացան , ու աւելցած կտորուանքները վերցուցին եօթը զամբիւղ ։
9 Եւ ուտողները չորս հազարի չափ
10 էին . ու արձակեց զանոնք ։ Եւ Ը նաւը մտնելով՝ աշա-

11 կերտներուն հետ , եկաւ Դաղմանութայի կողմերը ։
Եւ փարիսեցիները ելլելով՝ սկսան անոր հետ վիճաբանութիւն ընել , և զանիկայ փորձելով՝ իրմէն
12 նշան մը կ՚ուզէին երկինքէն ։ Եւ անիկայ իր հոգիին մէջ հառաչելով ըսաւ . Ի՞նչ է որ ասոր ազգը նշան կ՚ուզէ . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ ասոր ազգին նշան պիտի
13 չտրուի ։ Ու զանոնք թողլով՝ նորէն նաւը մտաւ , ու գնաց յԱյլոյն մկալ կողմը ։
14 Եւ հաց առնելու մոռցեր էին , ու նաւուն մէջ իրենց հետը միայն
15 մէկ նկանակ մը ունէին ։ Եւ կը պատուիրեր անոնց՝ ու կ՚ըսէր . Նայեցէ՛ք և զգուշացէ՛ք փարիսեցւոց խմորէն , ու Հերովդեսին խը-
16 մորէն ։ Եւ իրարու հետ կը խորհէին ու կ՚ըսէին Թէ , Հաց չու-
17 նենալնուս համար է ։ Իսկ Յիսուս ունկ դնելով՝ ըսաւ անոնց . Ինչո՞ւ կը խորհիք Թէ հաց չունիք ։ Դեռ հասկըցար , ու չէք իմանար . դեռ
18 սիրտերնիդ Թմրա՞ծ է . Աչքեր ունիք , ու չէք տեսներ , և ականջներ ունիք , ու չէք լսեր , և չէք յիշեր ։
19 Երբոր հինգ նկանակը հինգ հազարին կտրեցի , քանի՞ կողով լցուն կտորուանք վերցուցիք . ըսին
20 անոր . Տասներկու ։ Ու երբոր եօթը նէ՛ն չորս հազարին կտրեցի , քանի՞ զամբիւղ լեցուն կտորուանք վերցուցիք . անոնք ալ
21 ըսին . Եօթը ։ Ու ըսաւ անոնց . Հա՞ ինտո՞ր չէք հասկընար ։
22 Եւ Բեթսայիդա եկաւ , ու անոր առջևը կոյր մը բերին , ու կ՚աղաչ-
23 էին իրեն որ դպչի անոր . Եւ անիկայ կոյրին ձեռքէն բռնելով՝ գեղէն դուրս հանեց , ու անոր աչքերուն թքնելով՝ ձեռքը անոր վրայ դրաւ , ու կը հարցընէր անոր՝
24 Թէ բան մը կը տեսնէ՞ . Ան ալ նայեցաւ՝ ու կ՚ըսէր . Մարդիկներ կը տեսնեմ ծառերու պէս՝ որ կը
25 պտրտին ։ Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ , ու անոր նայիլ տուաւ . և ողջացաւ ու ամէն
26 բան համարձակ կը տեսնէր ։ Ետրը զանիկայ իր տունը խրկելով՝ ըսաւ . Գեղը մի մտներ , ու Ը գեղին մէկուն մի ըսեր ։
27 Եւ Յիսուս իր աշակերտներուն հետ Փիլիպպոսի կեսարիային գեղերը ելաւ . ու ճամբուն մէջ կը հարցընէր իր աշակերտներուն՝ ու կ՚ըսէր անոնց . Ինծի համար ո՞վ կ՚ըսեն մարդիկ՝ Թէ եմ ։
28 Ան անոնք պատասխան տուին՝ ըսին . Յովհաննէս Մկրտիչը ,

Ցաւի Տեառն 32

Ի Մատ. ժբ. 38 ։ Ժ. 1 ։ Ցօհ. ղ. 30 ։

Ա Մատ. ժգ. 3 ։

Ի Մատ. ժգ. 6 ։ Ղկ. ժբ. 1 ։

Ը Մատ. ժգ. 7 ։

Բ Գլ. ղ. 52 ։

Ի Մատ. ժգ. 20 ։ Գլ. ղ. 43 ։ Ղկ. ժ. 17 ։ Ցօհ. ը. 13 ։

Ի Մատ. ժե. 37 ։ Հռ 8 ։

Ա Գլ. է. 52 ։ Հռ 17 ։

Ի Գլ. է. 38 ։

Ի Մատ. ը. 4 ։ Գլ. ե. 43 ։

Ի Մատ. ժգ. 13 ։ Ղկ. թ. 18 ։

Հ Մատ. ժգ. 2 ։

Ա Մատ. թ. 32 ։ Ղկ. ժա. 14 ։

Ե Գլ. ը. 23 ։ Ցօհ. թ. 6 ։

Ի Գլ. ղ. 41 ։ Ցօհ. ժա. 41 ։ ժէ. 1 ։

Հ Ցօհ. ժա. 33 ։ 38 ։

Ես. լ. 5 ։ 6 ։ Մատ. ժա. 5 ։

Ղկ. ե. 43 ։

Բ Մատ. ժե. 34 ։ Տես կէ. ղ. 38 ։

Ֆ Մատ. ժգ. 19 ։ Գլ. ղ. 41 ։

Ֆ Մատ. ժե. 39 ։

Ցամ Տեառն 32

և ուրիշները՝ եղիան , ուրիշներն
29 ալ՝ մարգարէներէն մէկը : Եւ
ինքը ըսաւ անոնց . Հապա դուք
ինծի համար ո՞վ կ՚ըսէք՝ թէ եմ.
պատասխան տուաւ Պետրոս՝ ու
ըսաւ անոր . Դուն ես Քրիստոս.
30 ը : Ւ նէ ասատիկ պատուիրեց ա-
նոնց՝ որ իրեն համար մէկու մը
չզրուցեն :
31 Ու սկսաւ սորվեցընել անոնց
թէ , պէտք է որ Որդին մարդոյ շատ
չարչարանքներ կրէ , ու երէցներէն
և քահանայապետներէն ու դպիր-
ներէն մերժուի , ու սպաննուի , և
իրեք օրէն ետև յարութիւն առնէ :
32 Ու ան. խօսքը յայտնի խօսեցաւ .
և Պետրոս մէկդի առաւ զանիկայ ,
ու սկսաւ յանդիմանել զանիկայ :
33 Եւ ինքը դարձաւ՝ ու իր աշակերտ-
ներուն նայելով , յանդիմանեց
Պետրոսը՝ ու ըսաւ . Ետին գնա՝
Սատանայ , ինչու որ դուն Աստու-
ծոյ բաները չես մտածեր , հապա
մարդոց բաները :
34 Եւ ժողովուրդը իր աշակերտնե-
րուն հետ մէկտեղ իրեն կանչելով՝
ըսաւ անոնց . Ո՛վ որ կ՚ուզէ իմ
ետևէս գալ , թող իր անձը ու-
րանայ , և իր խաչը վերցընէ , ու
35 իմ ետևէս գայ : Վասն զի ո՛վ
որ կ՚ուզէ իր անձը ապրեցընել ,
պիտի կորսընցընէ անիկայ . և ով
որ ինծի ու աւետարանին համար
իր անձը կորսընցընէ , պիտի ապ-
36 րեցընէ անիկայ : Քանզի ի՞նչ
օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշ-
խարհը վաստկի , և իր անձը կոր-
37 սընցընէ . Կամ իր անձին համար
ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ :
38 Վասն զի ո՛վ որ ւզթա ու իմ խօս-
քերս թաքնէ ամէն սեպ աս
շնացող ու մեղաւոր ազգիս մէջ ,
Որդին մարդոյ ալ զանիկայ թաքա-
նէը ամէն պիտի սեպ՝ երբոր գայ
իր Հօրը փառքովը սուրբ հրեշ-
39 տակներուն հետ : Եւ ըսաւ ա-
նոնց . " Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ
հոս ներկայ եղողներէն մէկ քանի-
ները կան՝ որոնք մահուան համը
պիտի չառնեն , մինչև որ տեսնեն
Աստուծոյ թագաւորութիւնը զո-
րութիւնով եկած :

Գլ . Թ

1 Քրիստոսի այլակերպութիւնը : 11 Քրիստոս իր աշակերտներուն կը սորվեցընէ Եղիայի գալուն վրայով . 24 խուլ և համր դև մը կը հանէ . 30 կը նախապատրաստէ իր մահը և յարութիւնը . 34 կը յորդորէ իր աշակերտները որ չեզ ըլլան . 38 և կ՚ը պատուիրէ անոնց որ իրեն հակառակ չեղողները չարգիլեն , ու հաւատացեալներուն գայթակղութիւն չտան :

1 Ե՛ւ ըսաւ անոնց . " Վստահ կ՚ըսեմ ձեզի , որ հոս կան ներկայ եղողներէն մէկ քանիներ՝ որ մինչև որ տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը զօրութեամբ եկած :

Ցամ Տեառն 32

մէկ բարձր լեռ մը հանեց առանձին , և անոնց առջևը այլակերպե-
2 ցաւ : Ու իր հանդերձները եղան փայլուն բ խիստ ճերմակ , անանկ որ երկրի վրայ թափիչ մը չկրնար
3 այնպես ճերմկցընել : Ու եղիան Մովսէսին հետ երևցաւ անոնց , և
4 Յիսուսին հետ կը խօսէին : Եւ Պետրոս պատասխան տուաւ՝ ու ըսաւ Յիսուսին . Ռաբբի՝ աղէկ է որ հոս կենանք . ու իրեք խրճիթ շինենք . մէկ քեզի , և մէկ Մով-
5 սէսին , ու մէկ Եղիային . Վասն զի չէր գիտեր թէ ինչ խօսի , ին-
6 չու որ զարհուրեր էին : Եւ մէկ ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ , ու ձայն մը ելաւ ամպէն՝ ըսելով . Ատիկայ է իմ սիրելի որդիս , ատոր
7 մտիկ ըրէք : Եւ յանկարծ ապրին անդին որ նայեցան , ալ ուրիշ մէկը չտեսան , հապա մինակ Յի-
8 սուսը իրենց հետ : Ու երբոր լեռնէն վար կ՚իջնէին , պատուիրեց անոնց որ տեսածնին մէկու մը չպատմեն , բայց միայն Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնելէն
9 ետև : Եւ անոնք ան խօսքը պահեցին , ու միջերնին հարցուփորձ կ՚ընէին՝ թէ մեռելներէն յարու-
10 թիւն առնելը ի՞նչ է : Եւ իրեն հարցուցին՝ ու ըսին . Ան ի՞նչ է որ դպիրները կ՚ըսեն թէ , Պէտք
11 է որ առաջ եղիան գայ : Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Ցիրաւի առաջ եղիան կու գայ , և ամէն բան կարգի կը դնէ . և թէ ինչպէս գրուած է Որդոյ մարդոյ համար , որ շատ չարչարանքներ պիտի կրէ՝ ու չանարհ-
12 գուի . Բայց ձեզի կ՚ըսեմ , որ եղիան նկաւ ալ , և ինչ որ ուզեցին՝ ըրին անոր . ինչպէս որ գրուած է անոր համար :
13 Ու աշակերտներուն քովը գալով՝ տեսաւ շատ ժողովուրդ անոնց բոլորտիքը և դպիրները , որ վիճաբանութիւն կ՚ընէին անոնց հետ ,
14 Եւ շուտ մը բոլոր ժողովուրդը երբոր տեսան անիկայ՝ խիստ զարմացան , ու առաջ վազելով՝ բարև
15 կու տային անոր : Եւ հարցուց դպիրներուն թէ , Ինչ վիճաբա-
16 նութիւն կ՚ընէք անոնց հետ : Ու ժողովուրդէն մէկը պատասխան տալով՝ ըսաւ . Վարդապետ՝ իմ որդիս քեզի բերի , որ համր ոգի
17 ունի . Եւ ուր որ անոր հասնի , զանիկայ գետինը կը գարնէ . ան ալ կը փրփրի , և իր ակռաները կը կձոցընէ , ու կը ցամքի . և քու աշակերտներուդ ըսի որ զանիկայ
18 հանեն , ու չկրցան : Պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ . Ո՛վ ան-

Բ Դան . է . 9 : Մատ . իը . 8 :

Ե Մատ . ժէ . 9 :

Ե Մաղ . գ . 5 : Մատ . ժէ . 10 :

Է Սաղ . իբ . 6 : Ես . ծգ . 2 , ըւ : Դան . թ . 26 :

Ղ Բ . իդ . 11 : Փիլ . բ . 7 :

Ի Մատ . ժա . 14 : ժէ . 12 : Ղուկ . ա . 17 :

Ը Մատ . ժէ . 14 : Ղուկ . թ . 37 :

Ի Մատ . ժէ . 14 : Ղուկ . թ . 38 :

Յ Մատ . ժգ . 16 : Յօհ . գ . 70 : ժա . 27 :

Ղ Մատ . ժգ . 20 :

Ե Մատ . ժգ . 21 : ժէ . 21 : Ղուկ . թ . 22 :

Ի Մատ . ժ . 38 : ժգ . 24 : Ղուկ . թ . 23 : ժդ . 27 :

Յ Յօհ . ժբ . 25 :

Ն Մատ . ժ . 33 : Ղուկ . թ . 26 : ժբ . 9 :

Ւ Տես Հռով . ա . 16 : Բ Տիմ . ա . 8 : բ . 12 :

Ո Մատ . ժգ . 28 : Ղուկ . թ . 27 :

Ղ Մատ . իդ . 30 : իա . 31 : Ղուկ . իբ . 18 :

Ր Մատ . ժէ . 1 : Ղուկ . թ . 28 :

Ցամք Տեառն 32

հաւատա ազգ մինչև ևրը ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ. ինծի բերէք
19 անիկայ։ Եւ զանիկայ բերին ի-րեն. ու երբոր զայն տեսաւ զանիկայ, շուտ մը ոդին ցնցեց ա-նիկայ, ու գետինը ինկած կը թա-
20 պալտկեր ու կը փրփրեր։ Եւ Յիսուս հարցուց անոր հօրը ու ըսաւ. Որչափ ատեն է՝ որ ատ բանը ատոր եղաւ. ու անիկայ ը-
21 սաւ. Տղայութենէն ի վեր. Եւ շատ անգամ կրակի ու ջուրի մէջ կը նետէ ատիկայ որ կորսընցընէ. բայց թէ որ կարողութիւն մը ու-նիս, օգնէ մեզի խղճալով մեր վը-
22 րայ։ Եւ Յիսուս ըսաւ անոր. Թէ որ կարող ես հաւատալու, համն բան կարելի է անոր որ կը
23 հաւատայ. Եւ տղուն հայրը շուտ մը աղաղակից ու արցունքով ը-սաւ. Կը հաւատամ Տէր, օգնէ
24 իմ անհաւատութեանս. Յիսուս երբոր տեսաւ որ ժողովուրդը վրան կը դիզուի, սաստեց պիղծ ոգիին ու ըսաւ անոր. Համր ու խուլ ոգի՛ ես կը հրամայեմ քեզի, ելիր ատկէ, ու ալ չմտնես ա-
25 տոր ներսը։ Եւ կանչուըռտելով սաստիկ ցնցեց զանիկայ, ու ելաւ. և դիակ մեռելի պէս եղաւ. անանկ որ շատերը ըսին թէ. Մեռաւ,
26 Եւ Յիսուս անոր ձեռքէն բռնելով վերցուց զանիկայ. ան ալ կա-
27 նգնաւ. Ու երբոր ինքը տուն մտաւ, իր աշակերտները առանձին հարցուցին իրեն ըսելով. Մենք ինչու չկրցանք հանել զանիկայ,
28 Եւ ըսաւ անոնց. Ասի տեսակը ա-րևլի չէ ուրիշ բանով մը ելլել, բայց միայն աղօթքով ու ծոմա-պահութեամբ։
29 Եւ անկէ ելլելով՝ Գալիլեայի մէջէն կ՚անցնէին, ու չէր ուզեր որ
30 մէկը գիտնայ. Ինչու որ կը սոր-վեցընէր իր աշակերտներուն ու կ՚ըսէր անոնց թէ, Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, և զանիկայ պիտի սպաննեն. ու երբ-որ սպաննուի, երրորդ օրը յարու-
31 թիւն պիտի առնէ. Եւ անոնք չէին հասկընար ան խօսքը, ու կը վախնային իրեն հարցընելու.
32 Ե՛ւ եկաւ Կափառնայում՝, ու երբոր տունն մտաւ, հարցուց ա-նոնց. Ի՞նչ վիճաբանութիւն կ՚ը-
33 նէիք ճամբան իրարու հետ. Եւ անոնք լուռ կեցան. ինչու որ ճամ-բուն մէջ իրարու հետ վիճաբանու-
34 թիւն կ՚ընէին թէ ով մեծ է. Ու երբոր նստաւ, կանչեց տասներ-կուքը, ու ըսաւ անոնց Եթէ որ մէկը կ՚ուզէ առաջին ըլլալ ամե-
35 նուն յետինը պիտի ըլլայ, և ա-մենուն սպասաւորը. Ու ՚տղայ մը առաւ կայնեցուց անոնց մէջը. և իր գիրկը առնելով զանիկայ ը-
36 սաւ անոնց. Ով որ ասանկ տղոց-մէն մէկը ընդունի իմ անունովս, զիս կ՚ընդունի. և ով որ զիս ըն-դունի, չէ թէ զիս կ՚ընդունի, հապա զիս խրկողը։
37 Յովհաննէս ու ըսաւ. Վարդապետ մէկը տեսանք որ քու անունովդ դևեր կը հանէր, ու մեր ետևէն չպտըտիր. և զանիկայ ար-գիլեցինք՝ մեր ետևէն չպտըտելուն
38 համար։ Եւ Յիսուս ըսաւ. Մի՛ արգիլէք զանիկայ. Ինչու որ մէկը չկայ որ իմ անունովս հրաշք գոր-ծէ, ու կարենայ չուտ մը վրս հայ-
39 հոյել. Քանզի ան որ մեզի հա-
40 կառակ չէ, մեր կողմն է։ Յիսուս ալ ան որ մեզի գաւաթ մը ջուր խմցընէ ըստ անունիս՝ թէ դուք քրիստոսինն էք, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Անիկայ իր վարձքը պիտի
41 չկորընցընէ։ Եւ ով որ գայ-թակղեցընէ ասոնց պզտիկներէն մէկը որ ինծի կը հաւատան, աւելի ա-ղէկ էր անոր որ իշուն աղացքի քար մը իր վիզէն կախուէր, ու ծովը
42 ձգուէր։ Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կը գայթակղեցընէ, կտրէ ա-նիկայ. աղէկ է քեզի պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք ունենալ՝ ու գեհենը երթալ
43 չմարելու կրակին մէջը. Ուր որ անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։
44 Եւ թէ որ քու ոտքդ քեզ կը գայթակղեցընէ, կտրէ անիկայ. աղէկ է քեզի կաղ մտնել կեանքը, քան թէ երկու ոտք ու-նենալ՝ ու գեհենը ձգուիլ չմա-
45 րելու կրակին մէջը. Ուր որ անոնց որդը չմեռնիր, ու կրակը չմարիր։
46 Եւ թէ որ քու աչքդ քեզ կը գայ-թակղեցընէ, հանէ անիկայ. ա-ղէկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ թագաւորութիւնը մտնել, քան թէ երկու աչք ունենալ՝ ու կրակին
47 գեհենը ձգուիլ. Ուր որ անոնց որդը չմեռնիր, ու կրակը չմարիր։
48 Ինչու որ ամէն մարդ կրակով պի-տի աղուի, և ամէն զոհ աղուի
49 պիտի աղուի։ Ընդ աղէկ է, բայց թէ որ աղը անհամեցայ, ինչո՞վ պի-տի համեմդընէք. Ձեր անձին մէջ աղ պահեցէք, և իրարու հետ խա-ղաղութիւն ըրէք.

Գլ. ժ

2 Ֆրիսեոս կր վիճաբանի փարիսեցիներուն հետ կնոյ արձակելու վրայով 13 իրեն բերուած տղաքը կ՚օրհնէ. 17 կ՚իմացընէ յարուցած մարդու մը թէ ինչ ընելու է որ յաւիտենա-կան կեանքը ժառանգէ. 23 Նարտուքեան

Ցամք Տեառն 33

Մատ. ժբ. 2, Գա. ժ. 16։
Մատ. ժ. 40, Ղուկ. թ. 48։
Ռոմ. ժա. 25, Ղուկ. թ. 49։
Կոր. ժբ. 8։
Տես Մատ. ժբ. 30։
Ընդունել ձեզի նահապետ է. Յոր ե Մատ. ժ. 42։
Ընդունել իմ անունովս Մատ. ժբ. 6, Ղուկ. ժբ. 1։
Օր. ժգ. 6, Մատ. ի. 29, ժբ. 8։
Եսա. կզ. 24։
Ղևտ. գ. 29, Կող. գ. 6։
Հռով. ժբ. 18, ժգ. 19, Ր Կոր. ժգ. 11, Երր. ժբ. 14։

Մատ. ժբ. 19, Գա. ժա. 23, Ղուկ. ժէ. 6, Ցօհ. ժա. 40։
Մատ. ժէ. 18։
Մատ. ժէ. 27։
Մատ. ժէ. 21, Ղուկ. թ. 44։
Մատ. ժբ. 1, Ղուկ. թ. 46, Եբ. 24։
Մատ. ի. 26, 27, Գա. ժ. 43։

Ցամի Տեառն 33

վասնզը կը ցուցընէ իր աշակերտներուն . 28 վարձք կը խոստանայ անոնց՝ որ աւետարանին համար իրենց տ՚ը և իւղ բաները կը թողուն . 32 կը նախատնչի իր մահը և յարութիւնը . 35 երկու փառասէր աշակերտները կը խրատի որ աւելի իրեն հետ չարչարուիլը մտածեն . 46 և կոյր Բարտիմէոսին աչքերը կ՚բանայ ։

— Մատ.ժԹ. 1 ։ Ցօհ.ժ. 40 ։ Ժա. 7 ։

1 Եւ ՚անկէ ելլելով՝ Հրէաստանի սահմանները եկաւ Յորդանանայ-
նու անդիի կողմէն , ու նորէն ժողովուրդները անոր քովը կը ժողովուէին . և ինչպէս որ սովորութիւն ունէր , դարձեալ կը սորվեցընէր անոնց ։

Բ Մատ.ժԹ. 3 ։

2 Բ Ու փարիսեցիները քովը եկան , և զանիկայ փորձելով կը հարցընէին անոր թէ Արժա՞ն է որ էրիկը էր
3 կնիկը արձակէ ։ Եւ անիկայ պատասխան տուաւ՝ ու անոնց ըսաւ . Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց ։

Գ Ր Օր . իդ . 1 ։ Մատ . ե . 31 ։ ժԹ . 7 ։

4 Եւ անոնք ըսին . Մովսէս հրաման տուաւ արձակման դիր գրել , ու ար-
5 ձակել ։ Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ . Ձեր սրտին կարծրութեանը համար գրեց ձեզի
6 ատ պատուէրը . Բայց ստեղծագործութեան սկիզբէն Ա Աստուած անոնք արու և էգ ըրաւ , ա՜ա՜ա՜ .
7 Ա Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ , և իր կնկանը
8 պիտի յարի . Ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան . ուստի ալ երկուք չէն , հապա մէկ մարմին .
9 Ուրեմն ան որ Աստուած միաւո-
10 րեց , մարդ Թող՝ չզատէ ։ Եւ տունը իր աշակերտները նորէն նոյն
11 բանը հարցուցին իրեն ։ Ու ըսաւ անոնց . «Ով որ իր կնիկը արձա-
կէ և ուրիշ մը առնէ , անոր դէմ
12 շնութիւն կ՚ընէ ։ Ու կնիկ մը թէ որ իր էրիկէն զատուի և ու-
րիշ էրկան մը ըլլայ , շնութիւն կ՚ընէ ։

Ա Մատ.ժԹ. 13 ։ Ղու . ժը . 15 ։

13 Ա Եւ մասր տղաք բերին իրեն , որ անոնց դպչի . բայց աշակերտները
14 կը յանդիմանէին բերողները ։ Յիսուս երբոր տեսաւ , սրդողելով ա-
նոնց ըսաւ . Թող տուէք ապ մանր տղոցը որ ինծի դան , և մի՛ ար-
գիլէք ատոնք . ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը ատանկնե-
15 րունն է ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Ո՚վ որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի , բնաւ պիտի չմտնէ անոր
16 մէջը ։ Եւ անոնք գիրկը առաւ , վրանին ձեռք դրաւ , ու օրհնեց զա-
նոնք ։

Ե Մատ.ժԹ. 16 ։ Ղու . ժը . 18 ։

17 Ե Ու երբոր անիկայ դուրս ելաւ ճամբուն մէջ , ահա մէկ մարդ մը վազեց ու անոր առջևը ծունկ չո-
քելով կը հարցընէր անոր՝ ա՜ Ո՚վ-
ո՛ր . Բարի վարդապետ՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը
18 ժառանգեմ ։ Եւ Յիսուս ըսաւ անոր . Ինչո՞ւ զիս բարի կ՚անուա-
նես . Մէկէն՝ի զատ բարի չկայ ,
19 որ է Աստուած ։ Պատուիրանքները գիտես . Է Շնութիւն մի՛ ըներ , Սպանութիւն մի՛ ըներ , Գողութիւն մի՛ ըներ , Սուտ վկայութիւն մի՛ ըներ , Զրկանք մի՛ ըներ , Քու հայրդ ու մայրդ պատուէ ։
20 Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր . Վարդապետ՝ ա-
տոնք ամէնը մանկութենէս ի
21 վեր պահեր եմ ։ Եւ Յիսուս անոր նայելով՝ սիրեց զանիկայ , ու ըսաւ անոր . Մէկ բան մը պակաս է քեզի . դնա ունեցածդ ծախէ , և տուր աղքատներուն , ու Երկինքը գանձ պիտի ունենաս , և խաչը վերցուր՝ ու եկուր իմ ետևէս ։
22 Եւ անիկայ ա՜ խօսքին համար խո-
ժոռելով՝ տրտմած գնաց . ինչու
23 որ շատ ստացուածք ունէր ։ Եւ Յիսուս իր բոլորտիքը նայելով՝ ըսաւ իր աշակերտներուն . Ո՜րչափ դժուար է անոնց՝ որ հարստութիւն ունին , Աստուծոյ թագաւո-
24 րութիւնը մտնել ։ Եւ աշակերտները զարմացեր էին անոր խօսքերուն վրայ . բայց Յիսուս նորէն պատասխան տալով՝ անոնց ըսաւ . Ո՜րդեակներ՝ որչափ դժուար է Երկինց հարստութեանը յուսացողներուն Աստուծոյ թագաւորու-
25 թիւնը մտնել ։ Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի , քան թէ հարուստը Աստուծոյ թագա-
26 ւորութիւնը մտնէ ։ Եւ անոնք խիստ շատ կը զարմանային՝ ու կ՚ըսէին իրարու . Ալ ո՞վ կրնայ
27 փրկուիլ ։ Եւ Յիսուս անոնց նայելով՝ ըսաւ . Ա Անկարելի մարդոց կողմանէ անկարելի է , բայց ոչ Աստուծոյ կողմանէ . քանզի Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի
28 է ։ Պետրոս սկսաւ ըսել անոր . Ահա մենք ամէն բան թողուցինք
29 և քու ետևէդ եկանք ։ Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , Մէկը չկայ որ թողուց տուն , կամ եղբայրներ , կամ քոյրեր , կամ հայր , կամ մայր , կամ կին , կամ որդիներ , կամ արտեր՝ ինծի համար ու ա-
30 ւետարանին համար , Որ պիտի չառնէ հարիւրապատիկ հիմա աս ատենս՝ տուներ , ու եղբայրներ , և քոյրեր , ու մայրեր , և որդիներ , ու արտեր՝ հալածանաց հետ . և դալու աշխարհին մէկ յաւիտենա-
31 կան կեանքը ։ Բայց շատ առաջնիներ պիտի ըլլան յետին , ու յետինները՝ առաջին ։

32 Զ Եւ անոնք դէպ՝ի Երուսաղէմ

Ցամի Տեառն 33

Է Եղ . է ։ Հռով . ժգ . 9 ։

Լ Մատ . զ . 19 ։ 20 ։ ժԹ . 21 ։ Ղու . ժը . 33 ։ ժզ . 9 ։

Ը Մատ.ժԹ. 23 ։ Ղու . ժը . 24 ։

Թ Ցոբ ։ լա . 24 ։ Սաղ . ծբ . 7 ։ կբ . 10 ։ ա Տիմ. զ . 17 ։

Զ Երեմ. լբ . 17 ։ Մատ . ժԹ . 26 ։ Ղու.ա.37 ։

Զ Մատ.ժԹ. 27 ։ Ղու ժը . 28 ։

Ի Եզ . ի ։ Հռով . ժգ . 9 ։

Ի Մտ . իե . 9 ։ Ղու . ժը . 30 ։

Ղ Մատ.ժԹ. 30 ։ ի . 16 ։ Ղու . ժգ . 30 ։

Ճ Մատ . ի . 17 ։ Ղու . ժը . 31 ։

Ցոմի Տեառն 33

կ'ելլէին , սա ճամբուն մէջն էին . և Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար , ու անոնք կը զարմանային , ու եւևէն երթալով՝ կը վախնային : Եւ նորէն զովը առնելով տասուներկուքը , սկսաւ ըսել անոնց ինչ բաներ որ իրեն պիտի

33 պատահէին . Ո՛ը ը՛ը՛ը՛ . Ահա Երուսաղէմ կ'ելլենք , և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն , և զանիկայ մահուան պիտի դատապարտեն , ու զանիկայ հեթանոսներուն պիտի մատնեն . Եւ զանիկայ ծաղր պիտի բնեն ու ծեծեն , և անոր վրայ պիտի թքնեն , ու զանիկայ մեռցընեն . ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ :

35 Եւ անոր զովը գային Յակոբոս ու Յովհաննէս՝ Զեբեդէոսի որդիքը , ու ըսին . Վարդապետ՝ կ'ուզենք որ ինչ որ խնդրենք

36 բնիք , մեզի ընես : Ան ալ ըսաւ անոնց . Ի՞նչ կ'ուզէք , որ ձեզի

37 ընեմ : Ու անոնք ըսին իրեն . Շնորհէ մեզի որ նստինք՝ մէկը ձախ կողմդ , և մէկալը՝ աջ կողմդ , և մէկալը՝ ձախ

38 կողմդ քու փառացդ մէջ : Եւ Յիսուս ըսաւ անոնց . Չէք գիտեր՝ ինչ կը խնդրէք . կրնաք խմել ան գաւաթը՝ որ ես կը խմեմ , և ան մկրտութիւնովը մկրտիլ՝ որով

39 ես կը մկրտուիմ : Եւ անոնք ըսին իրեն , Կրնանք . ու Յիսուս ըսաւ անոնց . Ան գաւաթը որ ես կը խմեմ՝ պիտի խմէք , և ան մկրտութիւնովը որ ես կը մկրտուիմ՝

40 պիտի մկրտուիք . Բայց իմ աջ կողմն ու ձախ կողմն նստիլը՝ իմ չէ տալը . հապա որոնց որ

41 պատրաստուած է : Ու երբոր մեայլ տասը , ը՛ը՛երէոներուն լսեցին , սկսան Յակոբոսին ու Յովհաննէսի

42 վրայ նեղանալ : Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք՝ ու ըսաւ անոնց . Գիտէք որ ազգաց իշխան սեպուածները կը տիրեն անոնց , և անոնց մեծամեծները կ'իշխեն ա-

43 նոնց . Բայց ձեր մէջը անանկ պիտի չըլլայ . հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ , անիկայ ձեր սպասա-

44 ւորը ըլլայ . Ու ձեզմէ ով որ առաջինը ըլլալ կ'ուզէ , անիկայ ամե-

45 նուն ծառայ ըլլայ . Քանզի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու , հապա սպասաւորութիւն ընելու , և Ո իր կեանքը շատերուն համար փրկանք մը տալու :

46 Ու եկան Երիքով . ու երբոր Երիքովէն կ'ելլէր աշակերտներովը և շատ բազմութիւնով , Տիմէոսի որդին կոյր Բարտիմէոսը ճամբուն

47 քովը նստեր էր մուրալու : Ու երբոր լսեց թէ Յիսուս Նազովրեցին է , սկսաւ աղաղակել ու ըսել . Յիսուս՝ որդի՛ Դաւիթի՛ ողորմէ՛ ինձի՛ :

48 Ողորմէ՛ ինծի՛ : Եւ շատերը կը յանդիմանէին զանիկայ , որ լռէ . բայց անիկայ՝ ալ աւելի կ'աղաղակէր , Որդի՛ Դաւիթի՛ ողորմէ՛ ինձի՛ :

49 Ծի՛ : Եւ Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ անիկայ կանչեն . կանչեցին կոյրը՝ ու ըսին անոր . Քաջ

50 եղիր , ելի՛ր՝ քեզ կը կանչէ : Եւ անիկայ իր հանդերձը ձգելով ,

51 ելաւ ու եկաւ Յիսուսին : Եւ Յիսուս պատասխան տուաւ՝ ու անոր ըսաւ . Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ . կոյրը ըսաւ անոր . Ռաբբունի՛ որ աչքերս բացուին :

52 Եւ Յիսուս ըսաւ անոր . Գնա՝ քու հաւատքդ քեզ բժշկեց . և շուտ մը անոր աչքերը բացուեցան , ու ճամբան Յիսուսին եւևէն կ'երթար :

Մատ . թ . 22 ; Գլ . ե . 84 :

ԳԼ . ԺԱ

1 Քրիստոս իյու վրայ հեծած՝ Երուսաղէմ կը մտնէ հանդէսով . 13 անպտուղ թզենին կ'անիծէ . 15 տաճարը կը մաքրէ . 20 կը յորդորէ իր աշակերտները որ հաստատ հաւատք ունենան , և իրենց թշնամիներուն ներեն . 27 և իր բոլոր բաներուն օրինաւոր ըլլալը կը հաստատէ Յովհաննէսին վկայութեամբը , որ Աստուծմէ իրկուած մարդ մըն էր :

1 Ու երբոր Երուսաղէմին մօտեցան՝ Բեթփագէ ու Բեթանիա՝ դէպի Ձիթենեաց լեռը , Յ՛ը՛ը՛ը՛ իր աշակերտներէն երկուքը խրկեց .

2 Եւ ըսաւ անոնց . Գացէք ատ ձեր դիմացի գեղը . և անոր մէջ մտնելնուդ պես՝ պիտի գտնէք կապած աւանակ մը , որուն վրայ մարդ մը նստած չէ . արձրկեցէք անիկայ՝ ու

3 բերէք . Եւ թէ որ մէկը ըսէ ձեզի թէ , Ատ ի՞նչ կ'ընէք , ըսէք թէ՝ Տէրոջը պէտք է . և շուտ մը հոս

4 պիտի խրկէ զանիկայ : Գացին՝ և գտան աւանակը դուրսը փողոցին մէջ դրանը քով կապած , ու ար-

5 ձրկեցին զանիկայ : Եւ հոն կայնողներէն ոմանք ըսին անոնց . Ի՞նչ կ'ընէք որ կ'արձրկէք ատ աւանա-

6 կը : Եւ անոնք ըսին անոնց ինչպես որ Յիսուս պատուիրեր էր .

7 ու իրենց թողուցին : Եւ աւաւանակը Յիսուսին բերին , ու անոր վրայ իրենց հանդերձները դրին , ու

8 նստաւ անոր վրայ : Բ Եւ շատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին , և ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին , ու ճամ-

9 բուն վրայ կը տարածէին : Եւ առջևէն ու եւևէն գացողները կ'աղաղակէին ու կ'ըսէին . Ովսաննա . Օրհնեալ է ան որ Տէրոջը անունով

10 վը կու գայ . Օրհնեալ է մեր Դա-

Ցոմի Տեառն 33

Մատ . խա . 1 ; Ղու . ժթ . 29 ; Ցո՛ . ժբ . 14 :

Մատ . խ . 1 ; Ղու . ժթ . 29 ; Ցո՛ . ժբ . 14 :

Մատ . խ . 21 ; Ղու . ժթ . 30 ; Ղու . թ . 22 ; ժբ . 31 :

Մատ . խ . 20 :

Մատ . խ . 24 :

Ղու . իբ . 25 :

Մատ . խ . 26 , 28 ; Գլ . թ . 34 , Ղու . թ . 48 :

Ցո՛ . ժբ . 14 ; Փիլ . բ . 7 :

Մատ . խ . 28 ; ա Տիմ . բ . 6 ; Տիտ . բ . 14 :

Մատ . խ . 29 ; Ղու . ժբ . 35 :

Մատ . թ . 22 ; Գլ . ե . 84 :

Մատ . խա . 8 :

Սաղ . ճժբ . 26 :

Ճամ. Տեառն 33

* Ո՛չնչ Տէր ըոլը անուշ նուէր կու գայ ։

ե Մատ. իս. 12 ։

ի Մատ. իս. 18 ։

ղ Մատ. իս. 19 ։

† Ո՛չնչ եւ Ճիսուս

ի Մատ. իս. 12 ։ Ղուկ. ԺԹ. 45 ։ Ճ՟Հ. բ. 14։

ը Ես. ծղ. 7 ։

Ի Եբեմ. է. 11 ։

ի Մատ. իս. 45. 46 ։ Ղուկ. ԺԹ. 47 ։

ի Մատ. է. 28 ։ Գլ. ա. 22 ։ Ղուկ. գ. 32 ։

լ Մատ. իս. 19 ։

ի Մատ. ԺԷ. 19 ։ իս. 21 ։ Ղուկ. ԺԷ. 6։

ն Մատ. է. 7 ։ Ղուկ. ժա. 9 ։ Ճ՟Հ. ժգ. 13 ։ Ժէ. 7 ։ Ժղ. 24 ։ Ճակ. ա. Ե. 6 ։

ն Մատ. ղ. 14 ։ Կաղ. գ. 13 ։

հ Մատ. ԺԸ. 35 ։

ևիթ հօրը թագաւորութիւնը որ *կու գայ . Ովսաննա ՚ի բարձունս ։

11 Եւ Ճիսուս մտաւ Երուսաղէմ՝ ու տաճարը , և չորս կողմը ամէն բաները աչքէ անցուց . և արդէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ելաւ տասուերկուքին հետ մէկտեղ ։

12 Ը՚ո՟ հետևեալ օրը՝ երբոր Բեթանիայէն կ՚ելլէին , անօթեցաւ .

13 Ընե հեռուանց տերևալից թզենի մը տեսնելով՝ եկաւ որ գուցէ անոր վրայ բան մը գտնէ . ու երբոր ա- նոր քովը գնաց , տերևներէն ՚ի զատ բան մը չգտաւ . ինչու որ դեռ

14 թուզի ատեն չէր . Եւ պատաս- խան տուաւ ու ըսաւ անոր . Ակէ ետև մէկը քեզմէ պտուղ չուտէ յաւիտեան . և իր աշակերտները լսեցին ։

15 Ը՚ո՟ եկան Երուսաղէմ . և Ճի- սուս տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին . և ատակ փոխողներուն սեղանները , ու աղաւնի ծախողներուն աթոռ-

16 ները կործանեց . Եւ թող չէր տար՝ որ մէկը տաճարին մէջէն ա-

17 ման մը անցընէ ։ Եւ կը սորվե- ցընէր ու կ՚ըսէր անոնց . Գրուած չէ՞ որ՝ ԷՒՄ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն , բայց Ը դուք ատիկայ աւազակնե-

18 րու այր ըրիք ։ Ժ Եւ գպիրները ու քահանայապետները ա՟ լսելով՝ կը փնտռէին թէ ինչպէս կորընչցընեն զանիկայ , քանզի անկէ կը վախ- նային . ինչու որ Ը բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր վարդապե-

19 տութեանը վրայ ։ Ու երբոր իրի- կուն եղաւ , քաղաքէն դուրս ելաւ ։

20 Ընե առտուանց երբոր անկէ կ՚անցնէին , թզենին տեսան ար-

21 մատէն չորցած ։ Ու Պետրոսին միտքը եկաւ՝ ու ըսաւ անոր . Ռաբ- բի՝ ահա Թզենին որ անիծեցիր ,

22 չորցեր է ։ Եւ Ճիսուս պատաս- խան տալով՝ ըսաւ անոնց . Ատա-

23 ծոյ հաւատքը ունեցէք ։ Քանզի Ը ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Ո՛վ որ աս լեռանը ըսէ՝ Ելիր ու ծովը ին- կիր , և իր սրտին մէջը չերկմտի , հապա հաւատայ թէ ինչ որ ըսէ՝ կ՚ըլլայ , պիտի ըլլայ անոր՝ ինչ որ

24 ըսէ ։ Ասոր համար կ՚ըսեմ ձեզի . Ը Ինչ բան որ աղօթքով կը խընդ- րէք , հաւատացէք թէ պիտի առ-

25 նէք , և պիտի ըլլայ ձեզի ։ Ու երբոր աղօթքի կը կայնիք , ներե- ցէք թէ որ մէկուն դէմ բան մը ունիք . որպէս զի ձեր Հայրն ալ՝ որ երկինքն է , ներէ ձեզի ձեր յան-

26 ցանքները ։ Իսկ թէ որ դուք չէք

ներեր , ձեր Հայրն ալ՝ որ երկինքն է , պիտի չներէ ձեր յանցանքները ։

27 Եւ նորէն Երուսաղէմ եկան , ու երբոր տաճարին մէջ կը պտը- տեր , քահանայապետները և դը- պիրները ու ծերերը անոր եկան ,

28 Ու ըսին անոր . Ի՞նչ իշխանու- թիւնով կ՚ընես ատ բաները , և ո՟վ տուաւ քեզի ատ իշխանու- թիւնը , որ ատ բաները ընես ։

29 Պատասխան տուաւ Ճիսուս՝ ու ը- սաւ անոնց . Ես ալ ձեզի բան մը հարցընեմ , ու Իէ՟ր ինծի պա- տասխան տաք , ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութիւնով

30 կ՚ընեմ աս բաները ։ Ծովհաննէ- սին մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝ թէ մարդոցմէ , պատասխան տուէք

31 ինծի ։ Եւ անոնք մէկզիրնին կը խորհէին՝ ու կ՚ըսէին . Թէ որ ը- սենք՝ Երկինքէն , պիտի ըսէ . Հա- պա ինչո՟ւ չհաւատացիք անոր .

32 Իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ . Ժո- ղովուրդէն կը վախնային . ինչու որ Յամենքը ‡գիտէին Ծովհաննէ- սը թէ ճշմարտապէս մարգարէ էր ։

33 Եւ պատասխան տալով՝ ըսին Ճի- սուսին . Չենք գիտեր . և Ճիսուս պատասխան տուաւ՝ ու ըսաւ ա- նոնց . Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ՚ընեմ աս բաները ։

ԳԼ . ԺԲ

1 Քրիստոս կը նախատնէ Հրէից մերժուիլը և հեթանոսաց կոչումը՝ ապերախտ մշակներուն ձեռքը յանձնուած այգիին առակովը . 13 պա- տասխան կու տայ՝ կայսրին հարկ տալու վրա- յով . 18 կը ցուցընէ սադուկեցւոց՝ իրենց մա- ըորութիւնը՝ յարութիւն չկայ ըսելնուն համար . 28 առաջին պատուիրանին վրայով հարցնող դպիրին լաւդիր կը լուծէ . 35 կը ջրէ ան կարծիքը որ դպիրները ունէին Քրիս- տոսի վրայով . 38 և կը պատուիրէ ժողովուր- դոց որ զգոյշ ըլլան անոնց փառասիրութենէն և կեղծաւորութենէն ։ 41 Քրիստոս կը դիտէ երկու լումայ տուող աղքատ որբևարին ։

1 Եւ *սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ՝ ա՟ ը՟ը . Մէկ մարդ մը այգի տնկեց , ու անոր բոլորտի- քը ցանգ քաշեց , և ստորաշէնան փորեց , ու աշտարակ շինեց . և զանիկայ մշակներու յանձնեց . ու-

2 ինքը օտար երկիր մը դնաց ։ Եւ ատենին ծառայ մը խրկեց մշակնե- րուն , որ մշակներէն այդիին պտու-

3 ղէն առնէ ։ Իսկ անոնք բռնելնին՝ ծեծեցին զանիկայ , ու պարապ

4 ճամբեցին ։ Նորէն ուրիշ ծառայ մըն ալ խրկեց անոնց . և զանիկայ քարկոծելով՝ գլուխը վիրաւորեցին ,

5 ու անարգուած ճամբեցին ։ Եւ դարձեալ ուրիշ մը խրկեց . ու զա- նիկայ սպաննեցին . և շատ ուրիշ- ներ ալ խրկեց , որոնց մէկ քանինե- րը ծեծեցին , ու մէկ քանիները

Ճամ. Տեառն 33

ե Մատ. իս. 23 ։ Ղուկ. ի. 1 ։

ղ Մատ. գ. 5 ։ ԺԳ. 5 ։ Գլ. ղ. 20 ։

† Ճառն . ուն. Նէին

Յամի Տեառն 33

6 սպաննեցին ։ Ուստի մէկ սիրելի որդի մըն ալ ունենալով , վերջապէս զանիկայ ալ խրկեց անոնց ըսելով . Գոնէ ամչնան իմ որդիէս ։
7 Բայց ան մշակները ըսին իրարու . Ահիկայ է ժառանգը , եկէք զանիկայ սպաննենք , ու ժառանգուածը մեր ըլլայ ։
8 Թիւնը մերը ըլլայ ։ Եւ բռնեցին զանիկայ՝ ու սպաննեցին , և այգիէն դուրս հանեցին ։
9 Ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ . պիտի գայ ու կորսընցընէ մշակները , և այգին ուրիշներու պիտի տայ ։ Եւ աս գիրը չէք կարդացեր թէ , Բէն քարը որ շինողները անարգեցին , անիկայ անկիւնին գլուխը եղաւ .
10 Ասիկայ Տէրոջմէ եղաւ , և զարմանալի է մեր աչքերուն ։

Բ Սաղ. ճԺը. 22։

12 Եւ կը փնտռէին՝ թէ ինչպես բռնեն զանիկայ , բայց ժողովուրդէն վախցան . քանզի իմացան որ ան առակը իրենց համար բաւ . և ձգեցին անիկայ ու գացին ։

Ե Մատ. իա. 45, 46։ Ղկ. ժա. 18։ Յօհ. է. 25, 30, 44։

13 Եւ փարիսեցիներէն ու Հերովդեսեաններէն քանի մը հոգի խրկեցին անոր , որ խօսքով բռնեն զայն ։
14 Նիկայ ։ Եւ անոնք ելան՝ ու ըսին անոր . Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ ես , և մէկու մը համար հոգդ չէ . քանզի մարդոց երեսպաշտութիւն չես ըներ , հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցընես . կայսրին տուրք տալ արժանի է՝ թէ չէ .
15 տանք՝ թէ չտանք ։ Եւ Ցեսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ըսաւ անոնց . Ինչու՞ զիս կը փորձէք , բերէք ինծի մէկ դահեկան մը որ տեսնեմ ։
16 Եւ անոնք բերին . ու ըսաւ անոնց . Որմունն է աս պատկերը՝ ու գիրը . և անոնք
17 ըսին անոր . Կայսրին ։ Եւ Ցեսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց . Ան որ կայսրինն է՝ կայսրին տուէք , և ան որ Աստուծոյն է՝ Աստուծոյ ։

Ե Մատ. իր. 23, Ղկ. ի. 27։

18 Եւ անոր քովը եկան Սադուկեցիները , որոնք կ'ըսեն թէ Յարութիւն չկայ , և անոր հարցուցին ը-
19 սելով . Վարդապետ՝ Մովսէս մեզի գրեց որ եթէ մէկուն եղբայրը մեռնի՝ ու կնիկը ձգէ , և զաւակ չձգէ , անոր եղբայրը առնէ անոր կնիկը , և իր եղբօրը զաւակ հանէ ։
20 Արդ՝ եօթը եղբայրներ կային . և առջինը կնիկ առաւ՝ ու մեռաւ , և
21 զաւակ չձգեց ։ Ու երկրորդը առաւ զանիկայ՝ ու մեռաւ , և ան ալ զաւակ չձգեց . նոյնպէս ալ երրորդը ։
22 Ու եօթն ալ զանիկայ առին , և զաւակ չձգեցին . ամենէն ետքը
23 կնիկն ալ մեռաւ ։ Ուրեմն յարութեան առնենն՝ երբոր յարութիւն առնեն , անոնցմէ որուն կնիկը պիտի ըլլայ . ինչու որ եօթն ալ զա-
24 նիկայ կնիկ ունեցան ։ Եւ Ցեսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ . Ատոր համար չէ՞ որ մոլորած էք , որ ո՛չ Գիրքը գիտէք , և ո՛չ Աստուծոյ
25 ծոյ զօրութիւնը ։ Քանզի երբոր մեռելներէն յարութիւն առնեն , ո՛չ կնիկ կ'առնեն , և ո՛չ էրկան կը տրուին . հապա էերկինքի հրեշտակ-
26 ներուն պէս են ։ Բայց մեռելներուն համար՝ թէ յարութիւն կ'առնեն , Մովսէսին գրքին մէջը չէք կարդացեր մորենիին վրայ , ինչպէս Աստուած անոր խօսեցաւ՝ ըսելով . Բ Ես եմ Աբրահամին Աստուածը , և Իսահակին Աստուածը , ու Յակոբին Աստուածը ։
27 Անիկայ մեռելներուն Աստուածը չէ , հապա կենդանիներուն . ուրեմն դուք խիստ մոլորած էք ։
28 Եւ դպիրներէն մէկը եկաւ , ու մտիկ կ'ընէր անոնց երբոր վիճաբանութիւն կ'ընէին , որ երբոր տեսաւ թէ յաղէկ պատասխան տուաւ անոնց , հարցուց անոր՝ ո՞ր է բոլոր պատուիրաններուն
29 առաջինը ։ Եւ Ցեսուս պատասխանեց անոր . Բոլոր պատուիրաններուն առաջինը ա է . Լսէ ով Իսրայէլ , մեր Տէր Աստուածը՝
30 մէկ Տէր մըն է . Եւ դուն Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ , և քու բոլոր անձովդ , ու քու բոլոր մտքովդ , և քու բոլոր զօրութենովդ . ասիկայ է առաջին պատուիրանը ։
31 Ու երկրորդը ասոր նման՝ Դուն կերդ սիրես քու անձիդ պէս . ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրանք
32 չկայ ։ Եւ դպիրը ըսաւ անոր . Աղէկ՝ վարդապետ , շիտակ խօսեցար թէ Աստուած մէկ է , և ան-
33 կէ՝ ի զատ ուրիշ մը չկայ . Եւ զանոր սրտէ , ու բոլոր մտքէ , և բոլոր անձէ , ու բոլոր զօրութենէ անիկայ սիրելը , ու ընկերը իր անձին պէս սիրելը՝ ամէն ողջակէզներէ
34 ու զոհերէ աւելի է ։ Եւ Ցեսուս տեսնելով որ անիկայ խելացութիւնով պատասխան տուաւ , ըսաւ անոր . Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես . և ալ ուրիշ մէկը չէր համարձակեր անոր բան մը հարցընելու ։
35 Եւ Ցեսուս երբոր տաճարին մէջ կը սորվեցընէր , պատասխան տուաւ ու ըսաւ . Դպիրները ինտր կ'ըսեն , թէ Քրիստոս Դաւիթի որ-
36 դին է . Եւ ինքը Դաւիթ Սուրբ Հոգիով կ'ըսէ . Ս Տէրը իմ Տէրոջս ըսաւ . Նստէ իմ աջ կողմս , մինչև որ քու թշնամիներդ ոտքե-
37 րուդ պատուանդան ընեմ , Ը-

Յամի Տեառն 33

Ըստրդ. ժե. 42, 49, 52։

Բ Եել. գ. 6։

Ժ Մատ. իբ. 35։

Իբ Օր. զ. 4։ Ղկ. ժ. 27։

Ղկ. ժթ. 18։ Մատ. իբ. 39։ Հռով. ժգ. 9։ Գաղ. ե. 14։ Յակ. բ. 8։

Իր Օր. գ. 39։ Ես. խե. 6, 14։ Խզ. 9։

Ա Թագ. ժե. 22։ Ովս. զ. 6։ Մէք. զ. 6, 7, 8։

Ա Մատ. իբ. 46։

Հ Մատ. իբ. 41։ Ղկ. ի. 41։

Ե Թագ. իգ. 2։ Ղ Սաղ. ճժ. 1։

Ցամի Տեառն 33

րևմն Դաւիթ ինքը որ զանիկայ Տէր կը կոչէ , ի՞նչպէս անիկայ անոր որդին կ՚ըլլայ . և ժողովուրդէն չատերը յօժարութեամբ մտիկ կ՚ընէին անոր ։

38 Եւ իր վարդապետութեանը մէջ կ՚ըսէր անոնց . Զգուշացէք գրագիրներէն , որոնք կ՚ուզեն փառաւոր հանդերձներով պտտիլ , և հրապարակներուն մէջ բարևներ կ՚ընդունիլ ,

39 և ժողովարաններուն մէջ առաջին աթոռները , և ընթրիքներու մէջ առաջին բազմոցները ։

40 Որոնք որբևարիներուն տուները կ՚ուտեն , ու ձրիաց երևնալու համար աղօթքը կ՚երկընցընեն .ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին ։

41 Եւ Յիսուս գանձանակին դիմացը նստած կը նայէր թէ ինչո՞ր ժողովուրդը գանձանակին մէջը ստակ կը ձգէ . և շատ հարուստներ՝

42 շատ բան ձգեցին ։ Մէկ աղքատ որբևարի մըն ալ եկաւ՝ ու երկու լումայ ձգեց , որ մէկ նաբարակիտ

43 մը կ՚ընէ ։ Եւ իր աշակերտները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ Յաս աղքատ որբևարին գանձանակը ամէն ձգողներուն աւելի ձգեց .

44 ինչու որ ամէնքը իրենց աւելցածէն ձգեցին , բայց սակայն իր չբաւականութենէն ունեցածին բոլորը ձգեց՝ իր բոլոր ապրուստը ։

ԳԼ . ԺԳ

1 Երիսաոս կը նախաձայնէ թէ տաճարը պիտի կործանի . 9 Թէ աւետարարին համար հալածանքներ պիտի ըլլան . 14 Թէ մեծամեծ թշուառութիւններ պիտի գան Երէից վրայ . 24 և Թէ իրքը ինչ կերպով գատաստանի պիտի գայ ; 32 Վերջին ժամը բնաւ մէկուն յայտնուած չըլլալուն համար՝ Երիսաոս կը պատուիրէ արթուն կենալ ու աղօթք ընել ։

1 Ու երբոր տաճարէն դուրս կ՚ելլէր , իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն . Վարդապետ՝ նայէ ինչոր քարեր են , և ինչ կերպ չէնքեր ։

2 քեր ։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոր . Կը տեսնե՞ս այս մեծ չէնքերը . Էքար մը քարի վրայ պիտի չմնայ՝ որ չքակուի ։

3 Ու երբոր անիկայ Ձիթենեաց լեռը տաճարին դիմացը նստեր էր , Պետրոս ու Յակոբոս և Յովհաննէս ու Անդրէաս հարցուցին իրեն

4 առանձին . Էրսէ մեզի ե՞րբ պիտի ըլլան ատ բաները , և ի՞նչ նշան պիտի ըլլայ՝ ատ ամէն բաներուն

5 կատարուելու ատենը ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց՝ ու սկսաւ ըսել . Զգոյշ կեցէք չըլլա-

6 լայ որ մէկը ձեզ խաբէ . Ինչու որ շատերը պիտի գան իմ անունովս՝ ու ըսեն , Թէ Ես եմ Քրիստոսը , ու շատերը պիտի մոլորցընեն ։

7 Բայց երբոր լսէք պատերազմներ և պատերազմներու լուրեր , մի՛ խռովիք , ինչու որ պէտք է ըլլալ . բայց դեռ վերջը չէ ։

8 Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ , ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ , և տեղ տեղ երկրաշարժութիւններ պիտի ըլլան . սկիզբ՝ ու խռովութիւններ ալ պիտի ըլլան . Եասոնք ցաւերուն սկիզբներն են ։

9 Զգուշացէք ձեր անձերուն , քանզի Ձեզ ատեանները պիտի մատնեն , ու ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն , և իմ անոանց համար կուսակալներու ու թագաւորներու առջև պիտի կենաք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար .

10 Եւ առաջ պէտք է որ աւետարանը

11 քարոզուի բոլոր ազգերուն ։ Էբայց երբոր ձեզ մատնելու տանին , առաջուց հոգ մի՛ ընէք և մի՛ մտածէք թէ ինչ պիտի խօսիք . հապա ան ժամուն ինչ որ ձեզի տրուի , անիկայ խօսեցէք . ինչու որ չէ թէ դուք էք որ կը խօսիք ,

12 Ըհապա Հոգին Սուրբ ։ Ու Ձեղբայր՝ եղբայրը մահուան պիտի մատնէ , և հայրը՝ որդին . և որդիք էերն ծնողացը վրայ պիտի ելլեն՝

13 ու մեռցընեն զանոնք ։ Եւ իմ անունուս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք . բայց Նոյ՝ որ մինչև վերջը համբերէ , անիկայ պիտի ապրի ։

14 Ու երբոր տեսնէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսուած է , թէ արժան չէղած տեղը կը կենայ . (Թող որ կարդայ՝ Թող հասկընայ .) ան ատենը Երէաստանի մէջ եղողները՝

15 լեռները Թող փախչին . Եւ ան որ տանիքին վրայ է՝ Թող տուն չիջնէ՝ , ու չմտնէ իր տունէն բան

16 մը առնելու . Եւ ան որ արտին մէջն է՝ Թող ետ չդառնայ իր հանդերձը

17 առնելու ։ Բայց վա՛յ ան օրերը յղի եղողներուն ու ծիծ տուղներուն ։

18 Եւ աղօթք ըրէք՝ որ ձեր փախչիլը

19 ձմեռը չըլլայ . Քանզի ան օրերը անանկ նեղութիւն պիտի ըլլայ , որուն նմանը Աստուծոյ ստեղծած արարածոց սկիզբէն մինչև հիմա ե-

20 դած չէ , ո՛չ ալ պիտի ըլլայ ։ Եւ Թէ որ Տէրը ան օրերը չկարճեցընէր , բնաւ մկ մարմին մը պիտի չապրէր . բայց ընտրեալներուն համար՝ որոնք ընտրեց , ան օրե-

21 րը կարճեցուց ։ Եւ Ան ատենը Թէ որ մկը ձեզի ըսէ , Ահա հոս է Քրիստոսը՝ կամ ահա հոն ,

22 մի՛ հաւատաք . Ինչու որ սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու նշաններ և հրաշք-

Ցամի Տեառն 33

Ցամք Տեառն 33

ՃՐ ՊԵՏ. Գ. 17։

ՃԴԱՆ. Է. 10։ ՍՈՓ. Ա. 15։ ՄԱԹ. ԻԳ. 29։ ՂՈՒԿ. ԻԱ. 25։

ՃԴԱՆ. Է. 13, 14։ ՄԱԹ. ԺՂ. 27։ ԻԳ. 30։ ԳԼ. ԺԳ. 62։ ԳՈՐ. Ա. 11։ Ա ԹԱԼ. 15։ ՐԹԵՎ. Ա. 7, 10։ ՑԱՅՍ. Ա. 7։

Ն ՄԱԹ. ԻԳ. 82։ ՂՈՒԿ. ԻԱ. 29։

ԼԵ. Խ. 8։

Ա ՄԱԹ. ԻԳ. 42։ ԻԵ. 13։ ՂՈՒԿ. ԺՔ. 40։ ԻԱ. 34։ ՀԱԲ. ԺԳ. 11։ ԱԹԹԵՍ. Ե, 6։

Լ ՄԱԹ. ԻԲ. 45։ ԻԵ. 14։

Ձ ՄԱԹ. ԻԳ. 42, 44։

ներ պիտի ցուցընեն, որ եթէ կա-
րելի էր՝ ընտրեալներն ալ մոլոր-
23 ցընեն։ Իսկ դուք զգոյշ կե-
ցէք, ահա առաջուց ըսի ձեզ
ամէնը։
24 Բայց ան օրերը ան նեղութենէն
ետև՝ արեգակը պիտի խաւարի, ու
25 լուսինը իր լոյսը պիտի չտայ. Եւ
աստղերը երկինքէն պիտի թափ-
թրփին, ու երկնից ՚ի զօրու-
26 թիւնները պիտի շարժին։ Եւ ան
ատենը պիտի տեսնեն Որդին մար-
դոյ ամպերու մէջ եկած, մեծ զո-
27 րութիւնով ու փառքով։ Եւ ան
ատեն իր հրեշտակները պիտի
խրկէ, ու իր ընտրեալները պիտի
ժողվէ չորս հովերէն՝ երկրի ծայրէն
28 մինչև երկինքի ծայրը։ Թզենիէն
առակ մը սորվեցէք. որ երբ անոր
ոստերը կը կակուղնան, ու տերև-
ները կը ցցուին, գիտէք թէ ա-
29 մառը մօտ է։ Նոյնպէս ալ դուք
երբոր ասոնք բոլորը եղած տեսնէք,
գիտցէք որ մօտ է Դռներուն քովը։
30 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս
ազգը պիտի չանցնի, մինչև որ աս
31 ամէն բաները ըլլան։ Երկինքը
ու երկիրը պիտի անցնին, բայց
Իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։
32 Իսկ այն օրուան ու ժամուն համար՝
մէկը չգիտեր, ոչ երկինքի մէջ
եղող հրեշտակները, և ոչ Որ-
33 դին, հապա միայն Հայրը։ Ըզ-
գոյշ կեցէք, արթուն մնացէք, և
աղօթք ըրէք. ինչու որ չէք գիտեր
34 ատենը երբ է. Ինչպէս օտար եր-
կիր գացող մարդ մը իր տունը կը
թողու, ու իր ծառաներուն իշ-
խանութիւն կու տայ, և ամէն մէ-
կուն իր գործը. ու դռնապանին
35 կ'պատուիրէ որ արթուն կենայ. Ու-
րեմն արթուն կեցէք. ինչու որ
չէք գիտեր թէ երբ կու գայ տա-
նուտէրը, իրիկունը՝ թէ կէս գի-
շերին՝ թէ հաւախօսին՝ և թէ առ-
36 տուանց. Ըրլլայ որ յանկարծակի
գայ՝ ու ձեզ քունի մէջ գտնէ։
37 Եւ ինչ որ կ'ըսեմ ձեզի, ամենուն
կ'ըսեմ. Արթուն կեցէք։

ԳԼ. ԺԴ

1 Հրէից դաւաճանութիւնը Քրիստոսի դէմ։ 3 Կին մը անոր գլուխն վայ կը թափէ շիշ մը պատուական եղ։ 10 Ցուդան իր Տէրը կը ծախէ առակով։ 18 Քրիստոս կը ծանու-ցանէ թէ իր աշակերտներէն մէկը զինքը պի-տի մատնէ։ 22 Ջաւրիկը պատրաստուելէն և ուտուելէն ետև, Քրիստոս Տաղտրութեան խորհուրդը կը սահմանէ։ 26 կը նախասացնէ իր բոլոր աշակերտներուն ցրուիլը, և Պետ-րոսի ուրացութիւնը։ 43 Ցուդա համբու-րելով կը մատնէ զՔրիստոս։ 46 Քրիստոս պարտէզին մէջ կը բռնուի, 55 տալա վկանե-րէն կ'ամբաստանուի, և ամբարիշտ վճռով կը դատապարտուի Հրէից ատենէն։ 65 Հե-

րեայք անարգանօք կը լարչարեն զՔրիստոս։ 66 Պետրոս իրէք անգամ կ'ուրանայ իր Տէ-ր։

Ցամք Տեառն 33

1 Լ Երկու օրէն ետև զատիկ ու
բաղարջակերք էր. և քահա-
նայապետները ու դպիրները կը
փնտռէին թէ ինչպես նենգու-
թեամբ բռնեն զանիկայ՝ ու մեռ-
2 ցընեն։ Բայց կ'ըսէին թէ, Ո՛չ
ատօնիս մէջ, որ ժողովուրդին
մէջ խռովութիւն չըլլայ։
3 Բ Ու երբոր ինքը Բեթանիա էր
բորոտ Սիմոնին տունը սեղան նըս-
տած, կնիկ մը եկաւ՝ որ շիշ մը
պատուական սուղ նարդոսի եղ
ունէր, և կոտրեց ան շիշը՝ ու անոր
4 գլխուն վրայ թափեց։ Եւ կային
ոմանք որ կը դժուարէին ու կ'ը-
սէին. Ինչո՞ւ համար եղաւ ատ
5 եղին կորուստը. Քանզի ատ եղը
իրէք հարիւր դահեկանէն աւելի
կրնար ծախուիլ ու աղքատներուն
տրուիլ. և սաստիկ կը յանդի-
6 մանէին զանիկայ։ Բայց Յիսուս
ըսաւ. Թող տուէք ատոր. ինչո՞ւ
անհանգիստ կ'ընէք ատիկայ. քա-
7 րի գործ մը գործեց ինծի։ Ի՝ն-
չու որ աղքատները ամէն ատեն
ձեր հետը ունիք, ու երբոր ուզէք՝
կրնաք անոնց բարիք ընել. բայց
8 զիս ամէն ատեն չունիք։ Ատիկայ
ինչ որ ունէր՝ ըրաւ. առաջուց իմ
մարմինս օծեց իմ թաղմանս հա-
9 մար. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ
բոլոր աշխարհի մէջ՝ ուր որ աս
աւետարանս քարոզուի, պտոր
ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յի-
շատակ ըլլալու համար։
10 Ը Եւ Ցուդա Իսկարիովտացին
տասներկուքէն մէկը՝ գնաց քա-
հանայապետներուն, որ զանիկայ
11 մատնէ անոնց։ Անոնք ալ լսելով
ուրախացան, ու իրէն ոտակ տալ
խոստացան. և կը փնտռէր թէ
ինչպես պատեհութիւնով մը մատ-
նէ զանիկայ։
12 Թ Եւ բաղարջակերաց առջի օրը՝
որ զատիկը կը մորթէին, անոր
աշակերտները ըսին իրեն. Ո՞ր
կ'ուզես երթանք պատրաստենք՝ որ
13 զատիկը ուտես։ Եւ իր աշա-
կերտներէն երկուքը խրկեց, ու
ըսաւ անոնց. Գացէք քաղաքը,
ու ձեզի մարդ մը պիտի պատահի,
որ սափոր ջուր մը կը
14 տանի. գացէք անոր ետևէն. Եւ
ուր որ մտնէ, տանը տիրոջը ը-
սէք. Վարդապետը կ'ըսէ. Ո՞ր է
օթևանը որ հոն աշակերտներուս
հետ Զատիկը ուտեմ։
15 Ան ալ ձեզի ցոյց կու տայ մեծ վերնատուն մը պի-
տի ցուցընէ. հոն պատրաստեցէք

ՄԱԹ. ԻԶ. 2։ ՂՈՒԿ. ԻԲ. 1։ ՅՕՀ. Ա. 55։ ԺՔ. 1։

Բ ՄԱԹ. ԻԶ. 6։ ՅՕՀ. ԺԲ. 1։ ՏԻՄ. Ա. 15։ ՂՈՒԿ. Է. 37։

ՃԲ ՕՐ. ԺԲ. 11։

Ը ՄԱԹ. ԻԶ. 14։ ՂՈՒԿ. ԻԲ. 3, 4։

Ցամք Տեառն 33

16 մեզի ։ Եւ իր աշակերտները գա-
ցին , ու քաղաքը մտան , և ինչպէս
որ իրենց ըսաւ՝ այնպէս գտան . և
զատիկը պատրաստեցին ։

ՂՄատ. իգ. 20։ Հե։

17 Ու երբոր իրիկուն եղաւ՝ տա-
սներկուքին հետ ինկաւ եկաւ ։

18 Ու երբոր սեղան նստան՝ և կ'ու-
տէին , ըսաւ Յիսուս . Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի , որ ձեզմէ մէկը որ
հիմա իմ հետս կ'ուտէ , զիս պիտի
մատնէ ։ 19 Եւ անոնք սկսան տըրտ-
միլ , ու մէկիկ մէկիկ ըսել անոր .
Միթէ՞ ես եմ , և ուրիշ մը՝ Միթէ
20 ես եմ ։ Անիկայ պատասխան
տուաւ՝ ու ըսաւ անոնց . Ատ տա-
սներկուքէդ մէկը՝ որ ինծի հետ էր
21 Յիսուի պնակը խօթեց ։ Ցիրաւի
Է Որդին մարդոյ կ'երթայ՝ ինչպէս
որ գրուած է իրեն համար . բայց
վայ այն մարդուն՝ որուն ձեռքովը
Որդին մարդոյ կը մատնուի . աղէկ
էր ան մարդուն որ ծնած չըլլար ։

Է Մատ. իգ. 24 ։ Ղու. իր. 22 ։

22 Եւ քանի որ անոնք կ'ուտէին ,
Յիսուս հաց առաւ՝ օրհնեց ու
կոտրեց , և տուաւ անոնց՝ ու ըսաւ .

Է Մատ. իգ. 26 ։ Ղու. իր. 19 ։ ա Կոր. ժա. 23 ։

23 * Առէ՛ք , աս է իմ մարմինս ։ Եւ
գաւաթը առաւ՝ գոհացաւ , ու
տուաւ անոնց . և ամէնքն ալ խը-

*Ղ՚Հռչ՝ Ա-
ռէ՛ք կե-
րէ՛ք ,

24 մեցին անկէ ։ Ու ըսաւ անոնց .
Ասիկայ է իմ արիւնս նոր ուխտի ,
որ շատերու համար կը թափուի ։

25 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . ասկէ
ետև որթին բերքէն բնաւ պիտի
չխմեմ մինչև ան օրը՝ երբոր անիկայ
նոր խմեմ Աստուծոյ թագաւորու-
թեանը մէջ ։

Ի Մատ. իգ. 30 ։

26 Ի Եւ օրհնութիւն մը երգելէն ե-

Ի Մատ. իգ. 31 ։

27 տե՛ Ձիթենեաց լեռը ելան ։ Ժ Եւ
Յիսուս ըսաւ անոնց . Ամէնքդ ալ
աս գիշեր իմ վրայովս պիտի գայ-
թակղիք . ինչու որ գրուած է Թէ
Է Հովիւը պիտի զարնեմ , ու

Է Զաք. ժգ. 7 ։

28 ոչխարները պիտի ցրուին ։ Բայց
Ես յարութիւն առնելէս ետև՝ ձեզմէ
առաջ Գալիլեա պիտի երթամ ։

ԼՓԼ. ժզ. 7 ։

29 Է Իսկ Պետրոս ըսաւ անոր . Թէպէտ
ամէնքն ալ գայթակղին , բայց չէ
30 Թէ ես ։ Եւ Յիսուս ըսաւ անոր .
Ճշմարիտ կ'ըսեմ քեզի , որ դուն
ալ աս գիշեր դեռ հաւը երկու
անգամ չհաուած , իրիկ անգամ

Է Մատ. իգ. 33 , 34 ։ Ղու. իր. 33 , 34 ։ Ցօ. ժգ. 37 , 38 ։

31 զիս պիտի ուրանաս ։ Բայց Պետրո-
աւելի կը պնդէր՝ ու կ'ըսէր . Թէև
քեզի հետ մեռնիլ պէտք ըլլայ ին-
ծի , բնաւ քեզ պիտի չուրանամ .
Նոյնպէս կ'ըսէին ամէնքն ալ ։

Ի Մատ. իգ. 32 ։ Ի Եկան ան տեղը՝ որուն անունը
Գեթսեմանի էր , ու ըսաւ իր ա-
շակերտներուն . Հոս նստեցէք
33 մինչև որ ես աղօթիք ընեմ ։ Եւ իր
հետը առնելով Պետրոսը ու Յա-
կոբոսը և Յովհաննէսը , սկսաւ
34 խռովիլ և վշտանալ ։ Ան ատենը
ըսաւ անոնց . Իմ անձս մեռնելու-
չափ տրտում է . հոս կեցէք՝ և

Ցամք Տեառն 33

35 արթուն մնացէք ։ Ու քիչ մը ա-
ռաջ երթալով , իր երեսին վրայ
գետինը ինկաւ , և աղօթք ըրաւ ,
որ եթէ կարելի է՝ ան ժամը իրմէ

Ղ Ցօ. ժբ. 27 ։

36 անցնի ։ Եւ ըսաւ . Հ Աբբա՛ Հայր ,
Նամէն բան քեզի Ի արաւոր է , աս
գաւաթը ինծմէ անցուր . Ըբայց
չէ Թէ ինչպէս որ ես կ'ուզեմ ,
հապա ինչպէս որ դուն կ'ուզես ։

Հ Հռով. ը. 15 ։ Գաղ. գ. 6 ։ Ի Երր. ե. 7 ։ Ղ Ցօ. ե. 30 ։ Ղ. 38 ։

37 Եւ եկաւ՝ ու զանոնք քնացած գը-
տաւ , և ըսաւ Պետրոսին . Սիմոն
կը քնանա՞ս . չկրցար ժամ մը

38 արթուն կենալ ։ Արթուն կե-
ցէք՝ և աղօթիք ըրէք , որ փորձու-
Թեան մէջ չմտնէք . Ց Հոգին յօժար

Ց Հռով. է. 22 , 23 ։ Գաղ. ե. 17 ։

39 է , բայց մարմինը տկար ։ Եւ
նորէն գնաց աղօթիք ըրաւ , նոյն

40 խօսքը ըսելով ։ Եւ դարձաւ՝ ու
զանոնք նորէն քնացած գտաւ .
Ինչու որ աչքերնին ծանրացած էր ,
և չէին գիտեր Թէ ինչ պատաս-

41 խան տան անոր ։ Երրորդ անգամ
ալ եկաւ , ու ըսաւ անոնց . Ասկէ
ետև քնացէ՛ք ու հանգչեցէ՛ք .
բաւական է , Ժ ամը հասաւ . ահա
Որդին մարդոյ մեղաւորներուն

Ղ Ցօ. ժգ. 1 ։

42 ձեռքը կը մատնուի . Ժ Ելէ՛ք
երթանք , ահա մատնեցաւ անիկայ՝
որ զիս պիտի մատնէ ։

Ի Մատ. իգ. 46 ։ Ցօ. ժբ. 1 , 2 ։

43 Եւ դեռ անիկայ — որ կը խօ-
սէր , իսկոյն Ցուդան՝ տասներե-
կուքէն մէկը եկաւ , և իր հետը
քահանայապետներուն և դպիրնե-
րուն ու ծերերուն կողմէն շատ
բազմութիւն՝ սուրերով ու բիրե-

Ն Մատ. իգ. 47 ։ Ղու. իր. 47 ։ Ցօ. ժբ. 3 ։

44 րով ։ Եւ զանիկայ մատնողը անոնց
նշան մը տուեր էր՝ ըսելով . Ո՛վ որ
ես համբուրեմ՝ ան է , բռնեցէ՛ք
անիկայ՝ և զգուշութեամբ տարէ՛ք ։

45 Ու անիկայ գալով՝ նոյն մը մտե-
ցաւ անոր՝ և ըսաւ , Ռաբբի՛
Ռաբբի , ու համբուրեց զանիկայ ։

46 Եւ անոնք իրենց ձեռքերը անոր
վրայ ձգեցին՝ ու բռնեցին զանի-

47 կայ ։ Եւ քովը կայնողներէն մէկը
սուրը քաշեց՝ ու զարկաւ քահա-
նայապետին ծառային , ու անոր

48 ականջը մէկիկ հանեց ։ Եւ Յիսուս
պատասխան տալով ըսաւ անոնց .
Ի Ինչ Թէ աւազակի՞ վրայ ելած՝
սուրերով ու բիրերով զիս բռնե-

Ն Մատ. իգ. 55 ։ Ղու. իր. 52 ։

49 լու . Ամէն օր ձեր քովը էի , ու
տաճարին մէջ կը սորվեցընէի , և
զիս չբռնեցիք . բայց որպէս զի

50 Դիրքերը կատարուին ։ Ն Ան ա-
տենը բոլորը Ա՛լէքսէնդրը Թողուցին

Ա Սադ. իր. 6 ։ Ես. ծգ. 7 , ըէ ։ Ղու. իր. 37 ։ իգ. 44 ։

Ն Ադ. ձր. 8 ։ Ձմր. 27 ։

51 զանիկայ ու փախան ։ Եւ մէկ երի-
տասարդ մը անոր ետևէն կ'երթար՝
մերկ մարմնին վրայ կտաւ մը ա-
ռած . ու երիտասարդները զա-

52 նիկայ բռնեցին . Ան ալ կտաւը

Համ Տեառն 33

Մատ. իզ. 57 ; Ղուկ. իբ. 54 ; Յով. ԺԸ. 13 ։

Մատ. իզ. 59 ։

Գլ. ԺԸ. 29 ; Յով. բ. 19 ։

Մատ. իզ. 62 ։

Մատ. իդ. 30 ; իզ. 64 ; Ղուկ. իբ. 69 ։

Մատ. իզ. 58.69 ; Ղուկ. իբ. 55 ; Յով. ԺԸ. 16 ։

Մատ. իզ. 71 ; Ղուկ. իբ. 58 ; Յով. ԺԸ. 25 ։

թողուց՝ ու մերկ փախաւ անոնց-
մէ ։
53 Եւ տարին Յիսուսը քահանա-
յապետին . ու անոր քովը ժողո-
վուեցան բոլոր քահանայապետնե-
54 րը , և ծերերը ու դպիրները ։ Եւ
Պետրոս հեռուանց անոր ետևէն
գնաց մինչև ներսը քահանայապե-
տին գաւիթը , և սպասաւորներուն
հետ նստաւ , ու վառած կրակին
55 քովը կը տաքնար ։ Նիսկ քահա-
նայապետները ու բոլոր ժողովքը
Յիսուսի դէմ վկայութիւն կը
փնտռէին որ զանիկայ մեռցընեն ,
56 և չէին գտներ . Ինչու որ շատերը
սուտ վկայութիւն կը վկայէին անոր
դէմ , ու վկայութիւնները էրթա-
57 համաձայն չէին ։ Եւ ոմանք ելան
սուտ վկայութիւն կ'ընէին անոր
58 դէմ՝ ու կ'ըսէին , թէ մենք լսե-
ցինք ատկէ՝ որ կ'ըսէր . Ես աս
ձեռագործ տաճարը պիտի քակեմ ,
և իրեք օրուան մէջ ուրիշ մը պիտի
59 չինեմ առանց ձեռագործի ։ Բայց
անոնկ ալ իրենց վկայութիւնը
60 համաձայն չէր ։ Եւ քահանայա-
պետը մէջտեղը ոտք ելլելով , հար-
ցուց Յիսուսին՝ ու ըսաւ . Պա-
տասխան մը չե՞ս տար . ի՞նչ կը
61 վկայեն ասոնք քեզի դէմ ։ Բայց
Նանիկայ լուռ կը կենար , և պա-
տասխան մը չէր տար . Քահանա-
յապետը նորէն կը հարցընէր անոր՝
ու կ'ըսէր . Դո՞ն ես Քրիստոսը՝
62 օրհնեալ Աստուծոյ Որդին ։ Եւ Յիսուս ըսաւ , Ես եմ . ու Պիտի
տեսնէք Որդին Մարդոյ Զօրու-
թեան աջ կողմը նստած , ու երկ-
63 նից ամպերովը եկած ։ Եւ քահա-
նայապետը իր հանդերձները պատ-
ռեց՝ ու ըսաւ . Ալ ի՞նչ պէտք է
64 մեզի վկաներ ։ Աստ հայհոյութիւ-
նը լսեցիք . ձեզի ի՞նչպէս կ'երև-
նայ . և ամենքը դատապարտեցին
զանիկայ՝ Թէ մահապարտ է ։
65 Եւ ոմանք սկսան Թքնել անոր ,
ու երեսը ծածկել , և բռունցքով
ծեծել ու ըսել . Մարգարէացիր .
ու սպասաւորները ապտակ կը զար-
նէին անոր ։
66 Եւ Պետրոս վարը գաւիթն էր ,
ու քահանայապետին աղախիններ-
67 րէն մէկը եկաւ , Ու տեսնելով Պետ-
րոսը որ կը տաքնար , նայեցաւ ա-
նոր՝ ու ըսաւ . Դուն ալ Յիսուս
68 Նազովրեցիին հետն էիր ։ Բայց
անիկայ ուրացաւ՝ ու ըսաւ . Չեմ
գիտեր և չեմ հասկընար Թէ դուն
ինչ կը խօսիս . ու երբոր դուրս
ելաւ՝ գաւիթին բերանը առջևը ,
69 հաւը խօսեցաւ ։ Եւ աղախինը
նորէն տեսաւ զանիկայ , ու սկսաւ
բոլորտիքը կայնողներուն ըսել Թէ ,
70 Ասիկա անոնցմէ է . Եւ անիկայ նո-
րէն ուրացաւ ։ Էրթ քիչ մը ա-
տենէն ետքը՝ նորէն բոլորտիքը կայ-
նողները ըսին Պետրոսին . Ցիրա-
ւի պէս ալ անոնցմէ ես , Քանզի
որ Գալիլեացի ես , և քու ըզրու-
71 ցուածդ ալ նման է ։ Բայց
անիկայ սկսաւ անիծել ու երդում
ընել՝ ըսելով Թէ , Ես ան մարդը
չեմ ճանչնար , որուն համար դուք
72 կ'ըսէք ։ Եւ իսկոյն երկրորդ ան-
գամ հաւը խօսեցաւ . ու Պետրոս
միտքը բերաւ ան խօսքը՝ որ Յիսուս
իրեն ըսեր էր Թէ , Դեռ հաւը
երկու անգամ չխօսած դուն իրեք
անգամ պիտի ուրանաս զիս . ու
սկսաւ լալ ։

Գլ. ԺԹ

1 Յիսուս կապուած կը տարուի Պիղատոսին առ-
ջևը՝ և կ'ամբաստանուի ։ 13 Պիղատոս ժողո-
վուրդին մէջ աղաղակին նայելով՝ մարդաս-
պան Բարաբբան կ'արձակէ , և Յիսուսը ձեռք
կու տայ որ խաչուի ։ 17 Փուշերէ պսակ մը կը
դնեն Յիսուսի գլուխը ։ 19 անոր երեսը կը
Թքնեն և զանիկայ ծաղր կ'ընեն ։ 27 խաչը կը
հանեն երկու չարագործներուն մէջտեղը ։ 29
Հրեայք սաստիկ նախատինքներ կու տան ա-
նոր ։ 39 բայց Յարիւրապետը կը խոստովանի
Թէ անիկայ Աստուծոյ որդին է ։ 43 Յովսէփ
պատուով կը Թաղէ զՅիսուս ։

1 Եւ Առաւօնուց շուտ մը քահա-
նայապետները ծերերուն ու դը-
պիրներուն հետ՝ և բոլոր ժողովքն
ալ խորհուրդ ըրին , Յիսուսը
կապելին՝ ու տարին մատնեցին Պի-
2 ղատոսին ։ Եւ Պիղատոս Հարցուց
անոր՝ Դո՞ն ես Հրեից Թագաւորը , անիկայ ալ պատաս-
խան տալով ըսաւ անոր . Դուն
3 կ'ըսես ։ Եւ քահանայապետները
շատ ամբաստանութիւն կ'ընէին
4 անոր վրայով ։ Իսկ Պիղատոս նո-
րէն Հարցուց անոր՝ ըսելով , Պա-
տասխան մը չե՞ս տար , նայէ որ-
5 չափ քեզի դէմ կը վկայեն ։ Եւ
Յիսուս տակաւին պատասխան մը
չտուաւ , մինչև որ Պիղատոս զար-
մացաւ ։
6 Բայց Տօնին առիթը կապուած
մը կ'արձակէր անոնց , որը որ ի-
7 րենք ուզէին ։ Եւ Ունէր կար որուն
անունը Բարաբբա էր , խռովա-
րարներուն հետը կապուած , որոնք
խռովութեան ատենը մարդասպա-
8 նութիւն ըրեր էին ։ Եւ ժողո-
վուրդը աղաղակելով՝ սկսաւ խրնդ-
րել որ ընի ինչպէս որ միշտ կ'ընէր
9 իրենց ։ Եւ Պիղատոս անոնց պա-
տասխան տուաւ՝ ու ըսաւ . Կ'ու-
զէք որ Հրեից Թագաւորը արձա-
10 կեմ ձեզի ։ Քանզի գիտեր որ
քահանայապետները նախանձի հա-
11 մար մատներ էին զանիկայ ։ Բայց
քահանայապետները ժողովուրդը
գրգռեցին որ Բարաբբան յաւէտ բա-

Համ Տեառն 33

Մատ. իզ. 73 ; Ղուկ. իբ. 59 ; Յով. ԺԸ. 26 ։

Կոր. բ. 7 ։

Մատ. իզ. 75 ։

Մատ. իգ. 1 ; Ղուկ. իբ. 66 ; իգ. 1 ; Յով. ԺԸ. 28 ; Գոր. գ. 13 ; գ. 26 ։

Մատ. իե. 11 ։

Մատ. իե. 13 ։

Ես. ծգ. 7 ; Յով. ԺԸ. 9 ։

Մատ. իե. 15 ; Ղուկ. իգ. 17 ; Յով. ԺԸ. 39 ։

Մատ. իե. 20 ; Գոր. գ. 14 ։

Ցամ. Տեառն 33

12 բաբբան իրենց արձակել ։ Նորէն պիղատոս պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Հապա Հրեից թա-
13 գաւոր ըսածնիդ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ . Եւ անոնք նորէն կ'աղա-
14 ղակէին , Խաչը հանէ ատիկայ ։ Պիղատոս ըսաւ անոնց . Բայց ի՞նչ չար գործ ըրած է ատիկայ . և ա-
նոնք՝ ալ աւելի կ'աղաղակէին ։։
15 Ի՛ր-էն ։ Խաչը հանէ ատիկայ ։ Եւ Պիղատոս ժողովուրդը գոհ ընել ուզելով՝ Բարաբբան արձակեց ա-
նոնց , ու Յիսուսը ծեծելով՝ ձեռք տուաւ որ խաչուի ։

Ե Մատ. Ի. 27։

16 Եւ զինուորները ներս տարին զանիկայ գաւթին՝ այսինքն պալա-
տը . և բոլոր գունդը ժկտեղ
17 կանչեցին . Ու հագցուցին անոր ծիրանիներ , և փշէղէն պսակ հիւ-
18 սելով՝ անոր գլխուն դրին . Ու սկսան բարև տալ անոր ։։ ըսելով . Ողջոյն քեզ՝ Հրէից Թագաւոր ։
19 Եւ անոր գլուխը եղէգով կը ծե-
ծէին , ու կը թքնէին անոր , և ծնկան վրայ գալով՝ երկրպագու-
20 թիւն կ'ընէին անոր ։ Ու երբոր ծաղր ըրին զանիկայ , ծիրանիները վրայէն հանեցին , և իր հանդերձ-
ները հագցուցին անոր , ու դուրս հանեցին զանիկայ՝ որ խաչը հանեն ։

Ի Մատ. Ի. 32 ։ Ղկ. Իգ. 26։

21 Ի Եւ Սիմոն Կիւրենացին՝ Ալէք-
սանդրոսին և Ռուփոսին Հայրը , որ անկէ կ'անցնէր արտէն եկած , պա-
հակ բռնեցին որ անոր խաչը վեր-

Ժ Մատ. Ի. 33 ։ Ղկ. Իգ. 33 ։ Ցօհ. ԺԹ. 17։

22 ցընէ ։ Ժ Ու տարին անիկայ Գող-
գոթա ըսուած տեղը , (որ կը
23 Թարգմանուի՝ Գանկի տեղ .) Եւ անոր զմռսուով խառնած գինի տուին՝ որ խմէ , բայց ինքը չառաւ .

Ի Մատ. Ի. 34։

24 Ու խաչը հանեցին զանիկայ . և և անոր հանդերձները բաժնեցին , ա-
նոնց վրայ վիճակ ձգելով՝ Թէ ով

Ի Տ՚ես Մատ. Ի. 45 ։ Ղկ. Իգ. 44 ։ Ցօհ. ԺԹ. 14։

25 ինչ պիտի առնէ ։ Է Ժամը իրեքն էր , ու խաչը հանեցին անիկայ ։
26 Եւ Ժ անոր յանցանքի գիրը գրուած
27 էր , Ի՛ր Հրէից Թագաւորն է ։ Ու Ժ անոր հետ երկու աւազակ՝ խաչը հանեցին . մէկը անոր աջ կողմէն ,
28 ու մէկը ձախ կողմէն ։ Եւ կատա-
րուեցաւ ան գիրը՝ որ կ'ըսէ , Թէ Ժ Հանօրէներուն հետ սեպուեցաւ ։

Ի Մատ. Ի. 38 ։ Հ Եսա. Ծգ. 12։ Ղկ. Ի. 37 ։ Յ Սաղ. Իբ. 7։

29 Ու Եւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայ-
հոյէին անոր , գլուխնին կը շարժե-
ին՝ ու կ'ըսէին . Աւաղ՝ Նոր տա-
ճարը կը քակէիր , և իրէք օրուան
30 մէջ կը շինէիր . Ինքզինքդ ազա-
31 տէ , ու իջի՛ր ատ խաչէդ ։ Նոյն-
պէս ալ քահանայապետները դէ-
պիրներուն հետ իրենց մէջը ծաղր ընելով կ'ըսէին . Ուրիշները ազա-
տեց , ինքզինքը չկրնար ազատել ։
32 Ա Քրիստոսը Իսրայէլի Թագաւո-
րը՝ Թող հիմա խաչէն վար իջնէ ,

Ցամ. Տեառն 33

Ֆ Մատ. Ի. 44 ։ Ղկ. Ի. 39 ։
Մ Մատ. Ի. 45 ։ Ղկ. Իգ. 44 ։

Յ Սաղ. Իբ. 1 ։ Մատ. Ի. 46 ։

Ն Մատ. Ի. 48 ։ Ցօհ. ԺԹ. 29 ։
Ղ Սաղ. Կ. 21 ։

Ո Մատ. Ի. 50 ։ Ղկ. Իգ. 46 ։ Ցօհ. ԺԹ. 30 ։
Շ Մատ. Ի. 51 ։ Ղկ. Իգ. 45 ։
Ո Մատ. Ի. 54 ։ Ղկ. Իգ. 47 ։
Շ Մատ. Ի. 55 ։ Ղկ. Իգ. 49 ։
Ա Սամ. Լ. 11 ։
Ա Ղկ. Բ. 2, 3 ։

Վ Մատ. Ի. 57 ։ Ղկ. Իգ. 50 ։ Ցօհ. ԺԹ. 38 ։
Ա Ղկ. Բ. 25, 38 ։

Ա Մատ. Ի. 59 ։ 60 ։ Ղկ. Իգ. 53 ։ Ցօհ. ԺԹ. 40 ։

որ տեսնենք ու հաւատանք . և Ժիր հետը խաչը ելլողները կը նախա-
տէին զանիկայ ։
33 Ու Վեցերորդ ժամը հասածին պէս , բոլոր երկրին վրայ խաւար
34 եղաւ մինչև իններորդ ժամը ։ Եւ իններորդ ժամուն՝ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց , ու ըսաւ .
Ա Էլոի Էլոի լամա սաբաքթանի . որ կը թարգմանուի , Աստուած իմ՝ Աստուած իմ , ինչո՞ւ զիս թո-
35 ղուցիր ։ Եւ քովը կայնողներէն ո-
մանք երբոր լսեցին՝ կ'ըսէին Թէ ,
36 Եղիան կը կանչէ ։ Ու Ն մէկը վա-
զեց սպունգ մը քացախով լեցուց , ու եղէգի մը անոր ընելով՝ Նտուաւ անոր որ խմէ , և ըսաւ . Թո՛ղ տուր տեսնենք՝ Թէ Եղիան կու գայ ա-
տիկայ վար իջեցնելու ։
37 ։ Եւ Յիսուս մեծ ձայն մը հանեց ,
38 ու հոգի տուաւ ։ Ու Նտաճարին վարագոյրը երկուքի պատռեցաւ
39 վերէն՝ ի վար ։ Եւ Հարիւրապետը որ անոր դիմացը կեցեր էր , տես-
նելով որ այսպէս աղաղակելով հո-
գի տուաւ , ըսաւ . Ճիրաւի Որդի Աստուծոյ էր աս մարդը ։ Ա
40 Կային-
ներ ալ կային՝ որ ։ Հեռուանց կը նայէին . որոնց մէջն էր Մարիամ Մագդալենացին , և պզտիկ Յա-
կոբոսին ու Յովսեսին մայրը՝ Մա-
41 րիամ , և Սողովմի . Որոնք՝ երբոր Գ։։։։ Գալիլեա էր , ։ իր ետևէն կ'երթային , և իրեն սպասաւորու-
թիւն կ'ընէին . և ուրիշ շատ կիներ ալ՝ որ իր հետը երուսա-
ղէմ եկեր էին ։
42 Ա Ու երբոր իրիկուն եղաւ , ։ օրը ուրբաթ՝ այսինքն շաբաթին առջի
43 օրը ըլլալով , Յովսէփ Արիմաթա-
ցի երեւելի խորհրդական մը որ ինքն ալ ։ Աստուծոյ Թագաւորութեա-
նը կը սպասէր , եկաւ՝ ու համարձա-
կութիւն ընելով՝ Պիղատոսին քո-
վը մտաւ , և Յիսուսին մարմինը
44 խնդրեց ։ Ու Պիղատոս զարմա-
ցաւ՝ որ արդէն մեռած ըլլայ . և հարիւրապետը իրէն կանչելով՝ հար-
ցուց անոր Թէ՝ Շա՛տ ատեն է որ
45 մեռաւ ։ Ու երբոր ոտքէը իմա-
ցաւ հարիւրապետէն , մարմինը
46 Յովսեփին ընորհեց ։ Եւ Յովսէփ կտաւ գնեց , ու զանիկայ վար իջե-
ցընելով՝ կտաւովը փաթթեց , ու դրաւ գերեզմանի մը մէջ՝ որ քարէ փորուած էր . և քար մը գլորոցուց
47 գերեզմանին դուռը ։ Իսկ Մարիամ Մագդալենացին , ու Յովսեսին մայրը Մարիամ՝ տեսան ան տեղը , ուր որ դրուեցաւ ։

Գլ. Ժ.

1 Հրեշտակ մը Քրիստոսի յարութիւն առնելը կ'աւետէ իրեք կիներու ։ 9 Քրիստոս կ'ե-

Ցամի Տեառն 33

= Մատ. իբ. 1 ։ Ղուկ. իդ. 1։ Ցովհ. ի. 1։

Բ Ղուկ. իդ. 36։

Գ Ղուկ. իդ. 1։ Ցովհ. ի. է։

Դ Ղուկ. իդ. 3։ Ցովհ. ի. 11, 12։

Ե Մատ. իբ. 5, 6, 7։

Զ Մատ. իզ. 32 ։ Գաղ. դ. 28։

Է Տես Մատ. իբ. 8։ Ղուկ. իդ. 9։

Ը Ցովհ. ի. 14։

Թ Ղուկ. ը. 2։

Ժ Ղուկ. իդ. 10։ Ցովհ. ի. 18։

բևնայ Մարիամ Մագդաղենացիին, 12 պրտը գացող երկու աշակերտներուն, 14 եւբը առաքեալներուն, 15 որոնք կը խրկէ աւետարանը քարոզելու, 19 Քրիստոս երկինքը կը համբառնայ։

1 Եւ երբոր շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացին՝ և Ցակոբոսին Մայրը Մարիամ՝ և Սողովմէ Խունկեր ծախու առին, որ գան
2 օծեն անիկայ։ Եւ Մկշաբթի առտուանց շատ կանուխ՝ արևը որ
3 կը ծագէր՝ եկան դերեզմանը, Ու իրարու կ'ըսէին. Քարը ո՞վ պիտի գլտորցնէ մեզի դերեզմանին դրա-
4 նէն. (Ու նայեցան տեսան որ քարը գլտորցուած էր.) ինչու որ
5 շատ մեծ էր։ Եւ ներս գերեզմանը մտնելով՝ երիտասարդ մը տեսան որ աջ կողմը նստեր էր Ճերմակ պատմուճան հագած, ու զար-
6 հուրեցան։ Եւ անիկայ ըսաւ անոնց. Մի զարհուրիք. Ցիսուս Նազովրեցին կը փնտռէք, որ խաչուեցաւ. անիկայ յարութիւն առաւ, հոս չէ. ահա ան տեղը՝ ուր
7 որ դրին զանիկայ։ Բայց գացէք՝ ըսէք անոր աշակերտներուն և Պետրոսին, Թէ ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք անիկայ՝ ինչպէս որ ձեզի ըսաւ։
8 Եւ անոնք դողով ու ապշութեամբ բռնուած՝ ելան ու փախան գերեզմանէն. և ոչ մէկու մը բան չըսին, քանզի կը վախնային։
9 Ցետոյ Մկշաբթի առտուանց յարութիւն առած՝ առաջ Մարիամ Մագդաղենացիին երևցաւ, որ իրմէ եօթը դև հաներ էր։
10 Անիկայ գնաց անոնց պատմեց՝ որոնք անոր հետն էին, երբոր սուգ
11 կ'ընէին ու կու լային։ Իսկ հանոնք երբոր լսեցին Թէ կենդանի է և Թէ իրեն երևցաւ, չհաւատացին։
12 Ետքը ուրիշ կերպարանքով ևերևցաւ անոնցմէ երկուքին՝ որ քա-
13 լելով արտը կ'երթային։ Եւ անոնք գացին ուրիշներուն պատմեցին. ու անոնց ալ չհաւատացին։
14 Ետքը՝ տասնումէկին երևցաւ, երբոր սեղան նստած էին, ու ևրեւնին զարկաւ իրենց անհաւատութիւնը և սրտերնուն կարծրութիւնը, վասն զի որոնց որ ինքը երևցաւ մեռելներէն յարութիւն առած, իրենք չհաւատացին։
15 Եւ ըսաւ անոնց. Գացէք բոլոր աշխարհ, ու հաւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն։
16 Ան որ հաւատայ՝ ու մկրտուի, պիտի փրկուի, և ան որ չհաւատայ,
17 պիտի դատապարտուի։ Եւ անոնք որ կը հաւատան, աս նշանները անոնց հետ պիտի երթան. Իմ անունովս դևեր պիտի հանեն, ճնոր
18 լեզուներ պիտի խօսին. Ձեռքերնին օձեր պիտի բռնեն. և Թէ որ մահառիթ դեղ մը խմեն, իրենց պիտի չվնասէ. Հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն. ու անոնք պիտի առողջանան։
19 Արդ՝ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը երկինքը համբարձաւ, ու
20 Աստուծոյ աջ կողմը նստաւ։ Եւ անոնք ելան՝ ու ամէն տեղ կը քարոզէին. և Տէրը անոնց գործակից էր, ու խօսքը կը հաստատէր ան նշաններով՝ որ անոնց հետը կ'երթային։

Ցամի Տեառն 33

Ա Ղուկ. իդ. 11։

Բ Ղուկ. իդ. 13։

Գ Ղուկ. իդ. 36։ Ցովհ. ի. 19։ Կող. ժե. 5։

Դ Մատ. իբ. 19։ Ցովհ. ժե. 16։

Ե Կող. ա. 23։

Զ Ցովհ. գ. 18, 36։ Գոր. բ. 38։ ժզ. 30, 31, 32։ Հռով. ժ. 9։ ա Պետ. գ. 21։

Է Ցովհ. ժբ. 48։

Ը Ղուկ. ժ. 17։ Գոր. ե. 16։ ը. 7։ ժզ. 18։ ժթ. 12։

Թ Գոր. բ. 4։ ժ. 46։ ժթ. 6։ ա Կոր. ժբ. 10, 28։ Ղուկ. ժ. 19։ Գոր. իբ. 5։

Ժ Գոր. ե. 15, 16։ Թ. 17։ իբ. 8։ Ցակ. ե. 14, 15։

Ի Գոր. ա. 2, 3։

Ի Ղուկ. իդ. 51։

Ի Մատ. ԿԺ. 1։ Գոր. ե. 55։

Լ Գոր. ե. 12։ ժ. 3։ ա Կոր. բ. 4։ Եբր. բ. 4։

ԾԻՆՏԸՐԸՆ ԸՍՏ ՂԱՒԿԱՅԻՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Ղուկասու աւետարանին յառաջաբանութիւնը ։ 5 Եղիսաբեթին ։ 26 ու կոյս Մարիամու յղութիւնը ։ 39 Եղիսաբեթին և Մարիամին մարգարէութիւնը Քրիստոսի վասին ։ 57 Յովհաննէս Մկրտչին ծնունդը և Թլփատութիւնը ։ 67 Զաքարիայի մարգարէութիւնը Քրիստոսին ։ 76 և Յովհաննէսին վասին ։

6 Եւ տունը գալով , կը կանչէ բա- րեկամները ու դրացիները , ու ա- նոնց կ'ըսէ . Ուրախ եղէք ինծի հետ , ինչու որ իմ կորսուած ոչ-

7 խարս գտայ ։ Ձեզի կ'ըսեմ՝ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ

Ցամք Տեառն 33

Ժբ Օր . Ժգ . 6 ։ Լ . 9 ։ Մատ . Ժ . 37 ։

Ի Հռով . Թ . 13 ։

Ես Ցայտ . Ժբ . 11 ։

Ի Մատ . Ժգ . 24 ։ Մարկ . Բ . 34 ։ ԳԼ . Թ . 23 ։ Բ Տիմ . Գ . 12 ։

Ժ Ղուկ . Իգ . 27 ։

—

Ա Մատ . Ե . 13 ։ Մարկ . Թ . 49 ։

ա Մատ . Թ . 10 ։

Բ Գոր . Ժա . 3 ։ Գաղ . Բ . 12 ։

Գ Մատ . Ժբ . 12 ։

Դ Պետ . Բ . 10 , 25 ։

Յամի Տեառն 33

երկինքը մէկ մեղաւորի մը համար
որ կ'ապաշխարէ , էքան թէ ինն-
սունուհինը արդարներուն համար՝
որ անոնց ապաշխարութիւն պէտք
8 չէ : Կամ թէ ո՞վ է ան կնիկը՝
որ տասը դրամ ունենայ . ու թէ
որ դրամ մը կորընչցնէ , ճրագ
չը՞վառեր , ու տանը մէջ աւել
զարներ , և զգուշութեամբ փընտ-
9 ռեր , մինչև որ գտնէ : Ու երբոր
կը գտնէ , կը կանչէ բարեկամները
ու դրացիները , և կ'ըսէ . Ուրախ
եղէք ինծի հետ , ինչու որ իմ կոր-
10 սընցուցած դրամս գտայ : Անանկ
ես՝ ձեզի կ'ըսեմ , ուրախութիւն
կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն
առջևը մէկ մեղաւորի մը համար որ
կ'ապաշխարէ :
11 Եւ ըսաւ . Մէկ մարդ մը երկու
12 որդի ունէր . Ու անոնցմէ պզտիկը
հօրը ըսաւ . Հայր՝ տուր ինծի բա-
ժինը որ ինծի հասնի : Անոնկ
13 ալ բաժնեց անոնց՝ իր
ունեցածը : Եւ շատ օրեր չան-
ցած՝ պզտիկ որդին բոլոր բաները
ժողվեց ու հեռու երկիր մը գնաց ,
և հոն անառակութեամբ ապրելով՝
14 իր ունեցածը փճացուց : Ու երբ-
որ ամէնը հատցուց , ան երկրին
մէջ սաստիկ սով մը եղաւ , ու
15 ինքը սկսաւ չքաւոր ըլլալ : Եւ
դնաց ան երկրին քաղաքացիներէն
մէկուն քովը մտաւ . ան՝ ալ իր
ագարակը խրկեց զանիկայ՝ խոզեր
16 արածելու համար : Եւ կը փա-
փաքէր խոզերուն կերած եղջիւրին
իր փորը լեցընելու . ու մէկը չէր
17 տար անոր : Եւ ինքզինքին գալով՝
ըսաւ . Քանի՛ բանւորներ կան իմ
հօրս ցորենը հացով լեցուած , ու
ես հոս սովամահ կը կորնչիմ .
18 Ելլեմ՝ երթամ իմ հօրս , և ըսեմ
անոր . Հայր՝ մեղանչեցի երկինքին
19 դէմ ու քու առջևդ , Եւ ալ ար-
ժանի չեմ քու որդիդ ըսուելու .
զիս քու վարձկաններուդ մէկուն
20 պէս ըրէ : Ու ելաւ իր հօրը եկաւ .
Եւ դեռ որ ինքը շատ հեռու էր ,
հայրը տեսաւ զանիկայ՝ ու գութը
շարժեցաւ , և վազելով՝ անոր պա-
րանոցին վրայ ինկաւ , ու համբու-
21 րեց զանիկայ : Որդին ալ ըսաւ
անոր . Հայր՝ մեղանչեցի երկինքին
դէմ ու քու առջևդ , և ալ ար-
ժանի չեմ քու որդիդ ըսուելու :
22 Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն .
Հանեցէ՛ք առաջին պատմուճանը՝
ու հագցուցէ՛ք անոր , և մատնի
դրէ՛ք անոր ձեռքը , ու կօշիկներ
23 անոր ոտքերը . Եւ պարարտ զուա-
րակը բերէ՛ք մորթեցէ՛ք , և ուտենք
24 ու ուրախ ըլլանք . Ի՛նչու որ ասս
իմ որդիս մեռած էր՝ ու ողջընա-
ցաւ . կորսուած էր՝ ու գտնուե-
25 ցաւ . ԵՒ սկսան ուրախ ըլլալ : Ու
անոր մեծ որդին ագարակն էր . ու
երբոր կու գար՝ ու տանը մօտե-
ցաւ . նուագարաններուն և պարե-
26 րուն ձայնը լսեց : Ու ծառաներէն
մէկը իրեն կանչելով՝ կը հարցնէր ,
27 Թէ աս ի՞նչ է : Անիկայ ալ ը-
սաւ անոր , Եղբայրդ եկաւ , ու
հայրդ պարարտ զուարակը մոր-
թեց . ինչու որ ողջ առողջ ձեռք
28 ձգեց զանիկայ : Իսկ ինքը բար-
կացաւ՝ ու չէր ուզեր ներս մտնել .
ուստի իր հայրը դուրս ելլելով
29 կ'աղաչէր անոր : Եւ անիկայ պա-
տասխան տալով՝ ըսաւ հօրը . Ահա
այսչափ տարի է որ քեզի կը ծա-
ռայեմ , ու քնաւ քու խօսքէդ
դուրս չելայ , ու ինծի երբեք մկ
ուլ մը չտուիր , որ իմ բարեկամ-
ներուս հետ ուրախութիւն ընէի :
30 Բայց երբոր եկաւ ատ քու որդիդ՝
որ քու ստացուածքդ բզներու հետ
կերաւ , անոր մորթեցիր պարարտ
31 զուարակը : Եւ անիկայ ըսաւ ա-
նոր . Որդեակ՝ դուն միշտ իմ հետս
ես , ու իմ բոլոր ունեցածս քուկդ
32 է . Սակայն պէտք էր ուրախ ը-
լլալ և խնդալ . Ի՛նչու որ ասս քու
եղբայրդ մեռած էր ու ողջընա-
ցաւ , կորսուած էր՝ ու գտնուեցաւ :

Յամի Տեառն 33

ՂՈՒԿ. Ժբ. 44 :

ՅՈՎՀ. Ը. 32 :

ԳԼ. Ժ.Զ

1 Անիրաւ տնտեսին առակը : 14 Քրիստոս կը յանդիմանէ արծաթասէր փարիսեցւոց կեղ-ծաւորութիւնը : 19 Հեշտասէր մեծատունը և աղքատ Ղազարոսը :

1 Ու իր աշակերտներուն ալ ըսաւ . Մէկ հարուստ մարդ մը կար , որ տնտես մը ունէր . և անոր վրա-յով գանգատ եղաւ իրեն որպէս Թէ իր ունեցածը կը փճացընէ :
2 Ուստի կանչեց զանիկայ՝ ու ըսաւ անոր . Ի՞նչ է աս՝ որ քեզի հա-մար կը լսեմ . քու տնտեսութեա-նըդ հաշիւը տուր , ինչու որ այ-
3 լեւս կրնար տնտես ըլլալ : Եւ տըն-տեսը իր մտքին մէջ ըսաւ . Ի՞նչ ընեմ , որովհետև իմ տէրս տնտե-սութիւնը ինծմէ կ'առնէ . *Հո-ղագործութիւն չեմ կրնար ընել ,
4 մուրալու կ'ամչնամ : Գիտեմ ինչ պիտի ընեմ , որպէս զի երբոր էմ տնտեսութենէս մերժուիմ , զիս
5 իրենց տունը ընդունին : Եւ իր տիրոջը պարտականները մէկիկ մէ-կիկ իրեն կանչելով՝ ըսաւ առջի-նին . Դուն իմ տիրոջս որչափ
6 պարտք ունիս : Ան ալ ըսաւ . Հարիւր մար ձէթ . ԵՒ ըսաւ ա-նոր . Գիրդ առ՝ ու շուտով նստ
7 յիսուն գրէ . Ետքը միւսին ը-սաւ . Դուն ալ որչափ պարտք

* Ցառն . չեմ կրնար բը-րել ,

ՂՈՒԿ. Ը. 39 ; Եփես . Ե . 13 . 17 ;

ԸՆԴԱՂ . Ծա . 4 ;

ԲՀՄՐ 32 ; Եփես . Ե . 1 ; Ե . 14 ; Յայտ . Գ . 1 ;

Ցարդ Ցեռան 33

— Ցոհ. ժր. 33 ։ Եբէր. ե. 5 ։ ա Թես. ե. 5։ Բ Դան. դ. 27 ։ Մատ. ղ. 19։ ժթ. 21 ։ ԳԼ. ժա. 41 ։ ա Տիմ. ղ. 17, 18, 19։

* Կամ կարօտութեան ժամանակ նէդ՝

ե Մատ. իե. 21 ։ ԳԼ. ժթ. 27։

զ Մատ. ղ. 24։

է Կամ՝ մէկուն պիտի յարի՝

Ը Մատ. իգ. 14։

ՂԳԼ. ժ. 29։ Ը Սաղ. է. 9։ ը ա Թագ. ժղ. 7։

Թ Մատ. գ. 17 ։ ժա. 12, 13 ։ ԳԼ. է. 29։

ժ Սաղ. ճր. 26, 27 ։ Եսա. խ. 8 ։ ծա. 6 ։ Մատ. ե. 18 ։ ա Պետ. ա. 25։

ի Մատ. ե. 32 ։ ժԹ. 9։ Մար. ժ. 11 ։ ա Կոր. է. 10, 11 ։

ունիս . և անիկայ ըսաւ . Հարիւր քոռ ցորեն . ու ըսաւ անոր . Գիրդ 8 առ՝ և ութսուն գրէ ։ Ու տէրը անիրաւ տնտեսը դովեց , որ խելացութիւնով րրաւ ։ վասն զի աս աշխարհիս որդիքը իրենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի խե- 9 լացի են ։ Եւ ես ձեզի կ՚ըսեմ . Ի Անիրաւ մամոնայէն ձեզի բարե- կամներ ըրէք , որ երբ անիկայ պակսի՚՚, ձեզ յաւիտենական բնա- 10 կարաններու մէջ ընդունին ։ Ան որ փիչ բանի մէջ հաւատարիմ է , չատի մէջ ալ հաւատարիմ է . և ան որ փիչի մէջ անիրաւ է , չա- տի մէջ ալ անիրաւ է ։ Ուստի թէ որ անիրաւ մամոնային մէջ հաւա- տարիմ չեղաք , ճշմարիտ հ-ըսո-ը- 11 ի-ը-ը ո՞վ պիտի հաւատայ ձեզի ։ Ու թէ որ օտարին բանին մէջ հա- 12 ւատարիմ չեղաք , ձերը ո՞վ պիտի տայ ձեզի ։

13 Տ Մէկ ծառայ մը չկրնար երկու տէրերու ծառայութիւն ընել . ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ , կամ † մէկը պիտի մեծարէ՚՚ և միւսը արհամարհէ . չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի ։

14 Եւ փարիսեցիներն ալ Էոր ար- ծաթասէր էին , աս ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկայ ։ 15 Եւ ըսաւ անոնց . Դուք էք որ մարդոց առջեւը Էինքզինքնիդ կ՚ար- դարացընէք . Էբայց Աստուած գի- տէ ձեր սիրտերը . ինչու որ Էմար- դոց մէջ բարձր Էզածը՝ Աստուծոյ 16 առջեւը պիղծ է ։ Ի Օրէնքը ու մարգարէները մինչև Ցովհաննէս Էին . անկէ ետև Աստուծոյ թագա- ւորութիւնը կը քարոզուի , և ա- մէն մէկը անոր մէջը մտնելու կ՚ար- 17 դարի ։ Էտոր՝ է Դիւրին է որ երկինքը ու երկիրը անցնի , քան թէ օրէն- քէն մէկ նշանագիր մը իյնայ ։ 18 Ը Ո՛վ որ իր կնիկը արձակէ՚ և ուրիշ մը առնէ , չնութիւն կ՚ընէ . և ո՛վ որ երիկ արձակուած կնիկ մը առ- նէ՝ չնութիւն կ՚ընէ ։

19 Մէկ հարուստ մարդ մը կար , որ ծիրանի ու բիհզ կը հագնէր , և ամէն օր փառաւորապէս ուրա- 20 խութիւն կ՚ընէր ։ Ու Ղազարոս անունով աղքատ մը կար վէրքե- րով լեցուն , որ անոր դրանը առ- 21 ջին գրուած էր . Եւ կը փափաքէր որ ան հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն իր փորը յագցնէ . նաև շուներն ալ կու գային և անոր 22 վէրքերը կը լզէին ։ Ու եղաւ որ ան աղքատը մեռաւ , ու հրեշտակ- ները Աբրահամին գոգը տարին զա- նիկայ . հարուստն ալ մեռաւ ու 23 թաղուեցաւ ։ Եւ դժոխքին մէջ իր երբոր տանջանքի մէջ էր , իր աչ- քերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամը , ու Ղազարոսը անոր 24 գոգը հ-անէ-ո նո-ծ ։ Եւ ինքը աղաղակեց ու ըսաւ . Հայր Աբրա- համ՝ ողորմ՝ ինծի , ու իրկէ Ղա- զարոսը , որ իր մատին ծայրը ջուրը թաթխէ , Նու զովացընէ իմ լե- զուս . ինչու որ Եաս բոցիս մէջ կը 25 տանջուիմ ։ Եւ Աբրահամ ը- սաւ . Ո՛րդեակ՝ Ծմի տգէ բեր , որ դուն քու կեանքիդ ատենը քու բարիքներդ առիր . նոյնպէս ալ Ղազարոս՝ չարիքներ . հիմա անի- կայ հոս կը մխիթարուի , ու դուն 26 կը տանջուիս ։ Եւ աս ամէն բա- ներէն ի զատ՝ մեր ու ձեր մէջտեղը մեծ անդունդ մը կայ հաստա- տուած . անանկ որ ասկէ ձեզի անց- նիլ ուզողները չկրնան , ոչ ալ ատկէ մեզի Ե-ը-ընէրը անցնին ։ 27 Ան ալ ըսաւ . Ուրեմն կ՚աղաչեմ քեզի՝ հայր , որ անիկայ իմ հօրս 28 տունը իրկես . Քանզի հինգ եղբայր ունիմ . որ Էրէ-ր անոնց վկայու- թիւն տայ , որ չերլայ թէ անոնք ալ աս չարչարանքին տեղը գան ։ 29 Եւ Աբրահամ ըսաւ անոր . Անոնք Մովսէսը ու մարգարէները ունին , 30 թող անոնց մտիկ ընեն ։ Ան ալ ըսաւ . Չէ՝ հայր Աբրահամ , հա- պա թէ որ մեռելներէն մէկը անոնց 31 երթայ , պիտի ապաշխարեն ։ Եւ անիկայ ըսաւ անոր . Թէ որ Մով- սէսին ու մարգարէներուն մտիկ չեն ըներ , հապ ալ թէ որ մեռե- ալներէն մէկը չարութիւն առնելու ըլլայ , պիտի համոզուին ։

Ցարդ Ցեռան 33

Ա Եսա. ը. 20 ։ ժ. 16 ։ Ցոհ. ե. 39, 45 ։ Գոր. ժե. 21 ։ ժե. 11 ։

Ե Ցոհ. ժր. 10, 11 ։

ԳԼ. ԺԷ

1 Երբ Յիսուս կը սորվեցընէ գայթակղութիւն չե- տալ , 3 և իրարու չյանդգնելնիերը ներել , 6 Հաւատքին զօրութիւնը ։ 7 Մենք պար- տաւոր ենք Աստուծոյ բան Աստուած պար- տաւոր չէ մեզի ։ 11 Երբ Յիսուս կը բժշկէ տա- սը բորոտներ ։ 22 Աստուծոյ թագաւորու- թիւնը և Որդւոյ մարդոյ գալուստը ։

1 Եւ ըսաւ իր աշակերտներուն . — Անկարելի է որ գայթակղու- թիւններ չգան ։ բայց վայ անոր , 2 որուն ձեռքովը կու գան ։ Անոր աւելի աղէկ է , որ անոր պարանո- ցին իչու աղացքի քար մը կախուի , ու անիկայ ծովը ձգուի , քան թէ աս պզտիկներէն մէկը գայթակղե- 3 ցընէ ։ Զգուշացէ՛ք ձեր անձերնուն ։ Է Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ , Էյանդիմանէ՝ զանիկայ , ու թէ որ ապաշխարէ , ներէ՛ ա- 4 նոր ։ Եւ թէ որ օրը եօթը ան- գամ քեզի դէմ մեղանչէ՝ ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու ըսէ , կ՚ապաշխարեմ՝ , ներես անոր ։

— Մատ. ժր. 6, 7 ։ Մար. թ. 41 ։ ա Կոր. ժա. 19 ։

Բ Մատ. ժր. 15. 21 ։

Գ Դան. ժԹ. 17 ։ Ատակ. ժէ. 10 ։ Յակ. ե. 19։

Ցասի ԶՀոան 33

Բ Մատ. Ժէ. 19։ Իսա. 21։ Մար. Թ. 22։ Ժա. 23։

5 Եւ առաքեալները ըսին Տէրոջը.
6 Մեր հաւատքը աւելցուր։ Տէրը ըսաւ. Թէ որ մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք, ա՛ս թըթէնիին կը՛սայիք ըսել. Արմատից իսլաէ ու ծովուն մէջը տնկուէ, ան ալ պիտի ձայնակ՛ընդէր ձեզի։
7 Բայց ձեզմէ ով է՝ ծառէտ որ ունենայ մէկ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկայ երբոր ագարակէն դա՛ռնայ մտնէ, չուտով ղրկէ՛ զայր թէ, Անցիր սեղան
8 նստէ. Հապա չ՛ոնէր անոր թէ՝ պատրաստէ իմ ընթրիքս, ու զօտիդ կապած էլնայի սպասաւորութիւն ըրէ՛, մինչև որ ես ուտեմ ու խմեմ. ու ետքը դուն ալ կեր ու
9 իմէ՛։ Միթէ չնորհակալ կ՛ըլլայ ան ծառային, իրեն հրամայուածը բաները կատարելուն համար.
10 չեմ կարծեր։ Նոյնպէս ալ դուք երբոր բոլոր ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ՝ Ըմենք անպիտան ծառաներ ենք. քանզի ան որ պարտական էինք ընելու, ըրինք։
11 Ու եղաւ որ երբ ինքը Երուսաղէմ կ՛երթար, Սամարիայի և Գալիլեայի միջտեղէն կ՛անցնէր։
12 Երբ մէկ գիւղ մը պիտի մտնէր, տասը բորոտ մարդիկ հանդիպեցան անոր, որոնք հեռուն կայնեցան,
13 եւ ձայներնին վերցուցին ու ըսին. Յիսու՛ վարդապետ, ողորմի՛ մեզի։
14 Եւ տեսնելով անոնց ըսաւ. Գացէք պատ ձեզ քահանայապետին ցուցուցէք. ու եղաւ որ երբ կ՛երթային, մաքրեցան։
15 Մէկն ի՛ր, մաքրուեցան։ Եւ անոնց մէկը երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դարձաւ՝ ու մեծ ձայնով փառը կու տար Աստուծոյ.
16 ու երեսի վրայ անոր ոտքը իյնալով՝ չնորհակալ կ՛ըլլար անոր. և
17 ինքը Սամարացի էր։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ. Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան. իսկ ան
18 ինը ո՞ր են. Ան օտարազգիէն՝ի զատ դարձողներ չգտնուեցան՝ որ դառնալով Աստուծոյ փառք տան։
19 Եւ ըսաւ անոր. Ելիր գնա. քու հաւատքդ քեզ բժշկեց։
20 Ու երբոր փարիսեցիները իրմէն հարցուցին թէ Աստուծոյ թագաւորութիւնը ե՛րբ պիտի գայ, պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ. Աստուծոյ թագաւորութիւնը տեսո՛ղութեամբ երևցած բաներով չգար.
21 ու պիտի չըսեն թէ՝ Ահա հոս է կամ ահա հոն. ինչու որ ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսի՛ դին է։
22 Աշակերտներուն ալ ըսաւ. Օրեր պիտի գան որ դուք Որդւոյ մարդոյ օրերուն մէկը տեսնելու պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք։
23 Եւ նէ՛ ձեզի, թէ ահա հոս է կամ ահա հոն, մի՛ երթաք, ու
24 անոնց մի՛ հետեւիք։ Վասն զի ինչպէս որ փայլակը երկինքին տակը մէկ դիէն փայլատակելով՝ մինչև երկինքին տակը մէկալ դին լոյս կու տայ, նոյնպէս ալ պիտի ըլլայ Որդին մարդոյ իր նէ՛րէ՛ն օրը։
25 Մինայն թէ պէտք է որ ինքը առաջ շատ չարչարանքներ կրէ, ու ժողովուրդս
26 ժուռ առ աղտէն։ Նէ՛ ինչպէս որ Նոյի օրերը եղաւ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին մարդոյ իր նէ՛րէ՛ն օրը։
27 Կ՛ուտէին, կ՛ըմպէին, կ՛առնէին կ՛առնէին, կ՛երկան կը տրուէին, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, և ջրհեղեղը եկաւ ու ամենքը կորսընցուց։
28 Նոյնմանապէս՝ ինչպէս որ Ղովտին օրերը եղաւ, կ՛ուտէին կը խմէին կ՛առնէին կը ծախուէ կ՛առնէին կը ծախէին կը
29 տնկէին կը շինէին. Բայց այն օրը որ Ղովտ Սոդոմէն ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն
30 ալ կորսընցուց։ Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը որուն Մարդին
31 Որդին պիտի յայտնուի։ Այն օրը՝ այն որ տանիքին վրայ է՝ և իր կահրասիները տանը մէջ, թող վար չիջնէ զանոնք առնելու. և այն որ արտին մէջն է՝ նոյնպէս թող ետ
32 չդառնայ։ Կնոջ Մինարեղինէ՛ն
33 Ղովտին կնիկը։ Ով որ իր կեանքը կ՛ուզէ ապրեցընել, պիտի կորսընցընէ զանիկայ. և ով որ կը կորսընցընէ, պիտի ապրեցընէ զանիկայ։
34 Կայ՝ Ձեզի կ՛ըսեմ. Այն գիշերը երկու հոգի մէկ անկողնի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի՝ և մէկը պիտի ձգուի։
35 Երկու կին միասին ալիւր պիտի աղան, մէկը պիտի առնուի՝ և մէկը ձգուի։ Եր կու հոգի արտի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի՝ և
36 մէկը ձգուի։ Եւ պատասխանելով ըսին անոր. Տէ՛ր, ո՞ւր տեղ
37 Պէտք ըսաւ անոնց. Որ մարմինը կայ, հոն պիտի ժողովուին արծիւները։

Ցասի Տեսան 33

Բ Մատ. Իդ. 23։ Մար. Ժդ. 21։ Գլ. Իսա. 53։ Մատ. Իդ. 27։

Հ Մար. Ը. 31։ Թ. 30։ Ժ. 33։ Գլ. Թ. 22։

Յ Յն. Է. Մատ. Իդ. 37։

Ղ Յն. Ժթ։

Հ Յն. Ժթ. 16. 24։

Ղ Թես. Ա. 5։

Յ Մատ. Իդ. 17։ Մար. Ժդ. 15։

Ն Յն. Ժթ. 26։

Ն Մատ. Ժ. 39։ Ժզ. 25։ Մար. Ը. 35։ Գլ. Թ. 24։ Յն. Ժբ. 25։ Մատ. Իդ. 40. 41։ Ա Թես. Դ. 16։

Ղ Ը. Ժթ. 30։ Մատ. Իդ. 28։

Գլ. Ժը.

1 Թախանձող որբևարիին։ 9 փարիսեցիին և մաքսատուրին առակը։ 15 Մարը տղայք Քրիստոսի կը ընդունին։ 18 Մէկ իշխան մը կ՛ուզէ Քրիստոսի հետեւիլ, բայց իր հարստութիւնը նեղը արգելը կ՛ըլլան։ 28 Քրիստոսի համար ամէն բան թող տալողներուն վարձքը։ 31 Քրիստոս կը նախագուշակէ իր մահը։ 35 և կոյրին ալ աչքերը կը բանայ։

1 Նոյնդ առակ մին ալ ըսաւ անոնց՝ թէ պէտք է
2 ամէն ատեն աղօթք ընել, ու չդանդաղ։ Ըսաւ. Մէկ դատաւոր

— Գլ. Ժա. 5։ Իսա. 36։ Հով. Ժբ. 12։ Եփես. Ը. 18։ Կող. Դ. 2։ Ա Թես. Ե. 17։

Ցամ Տեառն 33

մը կար քաղաքի մը մէջ , որ Աստուածմէ չէր վախնար ու մարդէ չէր
3 ամչնար : Եւ նոյն քաղաքին մէջ որբևարի մը կար , որ անոր կուգար ու կ'ըսէր . Իրաւունք ըրէ ինծի՝ ով ալլոն վրէ իմ ոսոխէս ։
4 Եւ անիկայ ժամանակ մը չէր ուզեր անոր դէմ ընել . բայց ետքը ըսաւ իր մտքին մէջ . Թէև Աստուածմէ չեմ վախնար , ու մարդէ չեմ ամչչ-
Բ Գւ. ժա. 5 նար , Բ Գոնէ աս որբևարիին զիս ձանձրացընելուն համար իրեն իրաւունք ընեմ , որ չգայ ամէն ատեն
6 զիս Թախանձէ : Եւ Տէրը ըսաւ . Լսեցէք՝ անիրաւ դատաւորը ինչ
Է Ցայտ. ղ. 10 , 7 կ'ըսէ : Է Աստած Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞ , որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն , Թէև երկայնամիտ ալ ըլ-
8 լայ անոնց վրայ : Ձեզի կ'ըսեմ , Ը որ շուտով անոնց իրաւունք պիտի ընէ . բայց Որդին մարդոյ երբ
Ը Երր. ժ. 37 , Բ Պետ. գ. 3, 9 , գայ , արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ :
Ե Գւ. ժ. 29 , ԺՂ. 15 , 9 Եւ մէկ քանիներուն՝ Ե որոնք իրենց անձերուն վրայ կը վստահային Թէ արդար էն , և ուրիշները կ'անարգէին , աս առակը ըսաւ .
10 Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու . մէկը փարիսեցի ու մէկալը
ՂՍաղ. ճլե. 2 , 11 մաքսաւոր : Փարիսեցին կայներ էր , ու առանձին այսպես աղօթք կ'ընէր . Ե Ով Աստուած՝ չնորհակալ եմ քեզմէ , որ ուրիշ մարդոց պէս
Ե Ես. ա. 15 , ԺՂ. 2 , Ցայտ. գ. 17 , չեմ , յափշտակող՝ անիրաւ՝ շնացող , և կամ աս մաքսաւորին
12 պէս . Հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ , ու բոլոր ստացուածքիս տասանորդը կու-
13 տամ : Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր , ու չէր ուզեր աչքն ալ երկինքը վերցընել . հապա իր կուրծքը ծեծելով՝ կ'ըսէր . Աստուած՝ ողորմէ ինծի մեղաւորիս ։
14 Ձեզի կ'ըսեմ՝ Թէ ասիկայ ան մէկալէն աւելի արդարացած իր տունը ինչա . Ը Վասն զի ով որ իր անձը կը բարձրացընէ , պիտի խոնարհի .
Ը Ծոբ . իբ. 29 , Մատ. իգ . 12 , Գւ. ժգ . 11 , Ցակ. դ. 6 , ա Պետ. ե . 5 , 6 , Ի Մատ. ժԹ. 13 , Մար . ժ. 13 , և ով որ իր անձը կը խոնարհեցընէ , պիտի բարձրանայ ։
15 Ի Մանր տղաքներ ալ բերին իրեն , որ անոնց դպչի . ու աշակերտները տեսնելով՝ կը յանդիմանէին
16 զանոնք ։ Բայց Ցիսուս անոնք իրեն կանչելով՝ ըսաւ . Թողուտուէք տղոցը որ ինծի գան , և մի՛ արգիլէք զանոնք . Ժ Ինչու որ Աստուծոյ Թագաւորութիւնը
Ժամ կար . ժգ. 20 , ա Պետ. բ . 2 , 17 Ամէն կ'ըսեմ ձեզի . Ո՛վ որ Աստուծոյ Թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի , բնաւ պիտի չմտնէ անոր մէջը ։
18 Եւ մէկ իշխան մը հարցուց ա-
նոր ու ըսաւ . Բարի՛ վարդապետ՝ ի՞նչ գործեմ որ յաւիտենա-
19 կան կեանքը ժառանգեմ : Եւ Ցիսուս ըսաւ անոր . Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես , մէկէն չի բարի
20 չկայ , որ է Աստուած : Պատուիրանքները գիտես . Ը Շնութիւն մի՛ ըներ , Սպանութիւն մի՛ ըներ , Գողութիւն մի՛ ըներ , Սուտ վկայութիւն մի՛ ըներ , Հայրդ ու
21 մայրդ պատուէ : Ան ալ ըսաւ . Ատոնք ամէնը մանկութենէս ի վեր
22 պահեր եմ : Ան լսելով Ցիսուս՝ ըսաւ անոր . Մէկ բան մըն ալ պակաս է քեզի . Կբռլոր ունեցածդ ծախէ՝ և աղքատներուն բաշխէ , ու երկինքը գանձ պիտի ունենաս , և եկուր իմ ետևէս ։
23 Անիկայ երբոր աս բանը լսեց՝ տրտմեցաւ . Ինչու որ շատ հարուստ
24 էր : Եւ Ցիսուս երբոր անիկայ տրտմած տեսաւ , ըսաւ . Ո՞րչափ դժուար է անոնց որ հարստութիւն ունին , Աստուծոյ Թագաւորու-
25 թիւնը մտնել , Քանի դիւրին է որ ուղտըասեղին ծակէն անցնի , քան Թէ հարուստը Աստուծոյ Թա-
26 գաւորութիւնը մտնէ : Եւ անոնք որ լսեցին , կ'ըսէին . Ալ ո՞վ կրը-
27 նայ փրկուիլ : Եւ ինքը ըսաւ . Ի Մարդոց կողմանէ անկարելի եղած բաները՝ Աստուծոյ կողմանէ կարելի
28 են : Ան Պետրոս ըսաւ . Ահա մենք ամէն բան Թողուցինք՝ և քու ե-
29 տևէդ եկանք : Ու անիկայ ըսաւ անոնց . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Է Թէ մարդ մը չկայ՝ որ Թողուց տուն , կամ ծնողք , կամ եղբայրներ , կամ կին , կամ որդիներ՝ Աստուծոյ Թագաւորութեանը հա-
30 մար , Ի որ պիտի չառնէ բազմապատիկ աս ատենիս մէջ , և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանքը ։
31 Ի Եւ տասներկուքը իր քովը առնելով՝ ըսաւ անոնց . Ահա մենք երուսաղէմ կ'երթանք , Նև մարգարէներուն ձեռքովը Որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի
32 կատարուին : Ընչու որ Հեթանոսներուն պիտի մատնուի , ու ծաղր պիտի ըլլայ , և պիտի նախատուի , ու պիտի թքնեն անոր ,
33 Եւ պիտի ծեծեն ու սպաննեն անիկայ , ու երրորդ օրը յարութիւն
34 պիտի առնէ : Բայց անոնք աս բաներէն մէկն ալ չհասկրցան . ու աս խօսքը անոնցմէ ծածկուած էր , և բան բաները չէին իմանար ։
35 Ն Ու եղաւ որ երբ ինքը Երիքովին կը մօտենար , կոյր մը ճամբուն
36 քովը նստեր էր մուրալու : Երբոր

Ցամ Տեառն 33

Ի Մատ. ժԹ. 16 , Մար . ժ . 17 ,
Ի Եւ. ի . 12 , 16 , Բ Օր . ե . 16—20 , Հռով . ժգ. 9 ,
Ծ Եփ . գ . 2 , Կող . գ . 20 ,
Ի Մատ . ղ . 19, 20 , ԺԹ. 21 , ա Տիմ. ղ . 19 ,
Հ Առակ. ժա. 28 , Մատ. ԺԹ . 23 , Մար . ժ . 23 ,
Ե Երեմ . լբ . 17 , Զաք . բ . 6 , Մատ. ԺԹ . 26 , Գւ . ա . 37 ,
Ղ Մատ. ԺԹ. 27 ,
Ծբ Օր . լԹ . 9 ,
Ժ Ցոբ . խբ . 10 ,
Ի Մատ . ժգ . 21 , ԺԸ . 21 , ի . 17 , Մար . ժ . 32 ,
Ն Սաղ . իբ , Ես . ծգ ,
Ղ Մատ . իէ . 2 , Գւ . իգ . 1 , Յօ՛ . ԺԸ . 28 , Գոր . . գ . 13 ,
ա Մար . Թ . 31 , Գւ . բ . 50 , Թ . 45 , Յօ՛ . ժ . 6 , ԺԲ . 16 ,
Ղ Մատ . ի . 29 , Մար . ժ . 46 ,

Ցամք Տեառն 33

լսեց բազմութեանը անցնիլը, հարց-
37 ցուց թէ՝ Ի՞նչ է ան։ Եւ իրեն
ըսին թէ՝ Յիսուս Նազովրեցին
38 կ՚անցնի։ Ուստի աղաղակեց՝ ու
ըսաւ. Յիսուս՝ որդի Դաւթի՛
39 ողորմէ՛ ինծի։ Եւ անոնք որ
առջևէն կ՚երթային, կը յանդի-
մանէին զանիկայ, որ լռէ. բայց
անիկայ՝ ալ աւելի կ՚աղաղակէր.
40 Որդի՛ Դաւթի՛ ողորմէ՛ ինծի։ Եւ
Յիսուս կանգ առնելով՝ հրաման
ըրաւ որ զանիկայ իրեն բերէն, ու
երբոր անիկայ մօտեցաւ, հարցուց-
41 անոր ու ըսաւ. Ի՞նչ կ՚ուզես որ
քեզի ընեմ. անիկայ ալ ըսաւ.
42 Տէր՝ որ աչքերս բացուին։ Եւ
Յիսուս ըսաւ անոր. Թող բա-
ցուին. քու հաւատդ քեզ բե-
43 ժըշկեց։ Եւ իսկոյն անոր աչքերը
բացուեցան, ու անոր ետևէն կ՚եր-
թար՝ Նէ փառք կու տար Աստու-
ծոյ. բոլոր ժողովուրդն ալ տես-
նելով՝ զԱստուած կը գովաբանէին։

ԳԼ. ԺԹ

1 Զաքէոս մաքսապետ։ 11 Տասը մնասին ա-
ռակը։ 28 Քրիստոս իյու վրայ հեծած՝ փա-
ռաւոր հանդէսով Երուսաղէմ կը մտնէ. 41
քաղաքին վրայ կ՚ողբայ. 45 տաճարէն դուրս
կը հանէ գնողները և վաճառողները. 47 ամէն
օր տաճարին մէջ կը սորվեցընէ. իսկ Հրէից
գլխաւորները կ՚ուզեն կորսընցընել զանիկայ,
բայց ժողովուրդէն կը վախնան։

1 Եւ մտնելով Երիքովէ մէջէն կ՚անց-
2 նէր։ Եւ ահա մարդ մը հո՛ր,
անունը Զաքէոս ըսուած, որ մաք-
սապետ էր ու հարուստ մէկ մըն
3 էր։ Եւ կ՚ուզէր տեսնել՝ թէ ով
է Յիսուսը, ու բազմութենէն չէր
կրնար, ինչու որ հասակով կարճ
4 էր։ Եւ առաջ վազեց ու ժան-
տափեղենի մը վրայ ելաւ, որ զա-
նիկայ տեսնէ. ինչու որ անկէ պի-
5 տի անցնէր։ Ու երբոր Յիսուս ան
տեղը եկաւ, վեր նայելով զանիկայ
տեսաւ, ու ըսաւ անոր. Զաքէոս՝
չուտ ըրէ, ատկէ վար իջիր, ինչու
որ պէտք է ինծի այսօր քու տունդ
6 կենալ։ Եւ արտորալով վար ի-
ջաւ, և ուրախութեամբ ընդունեց
7 զանիկայ։ Երբոր ամէնն ալ տես-
նան, կը տրտնջէին ու կ՚ըսէին
թէ՝ Մեղաւոր մարդու քով մտաւ
8 իջևան ընելու։ Եւ Զաքէոս կայ-
նեցաւ՝ ու ըսաւ Տէրոջը. Տէր՛ ա-
հա իմ ունեցածիս կէսը աղքատ-
ներուն կու տամ. Եւ թէ որ զըր-
պարտութեամբ մէկու մը գրկանք
ըրած եմ, չորեքպատիկ կը հա-
9 տուցանեմ անոր։ Եւ Յիսուս ը-
սաւ անոր. Այսօր ապրանք փրկու-
թիւն եղաւ. քանի որ ասիկայ
10 ալ Աբրահամի որդի է։ Վասն
զի Որդին մարդոյ եկաւ որ կոր-
սուածը փնտռէ ու փրկէ։

11 Ու երբոր անոնք ասը բաները կը
լսէին, առակ մըն ալ ըսաւ իր ե-
րուսաղէմ մօտենալուն համար,
և անոնց անանկ կարծելուն հա-
մար՝ թէ շուտ մը Աստուծոյ թա-
գաւորութիւնը պիտի յայտնուի։
12 Ուստի ըսաւ. Մէկ ազնուական
մարդ մը հեռու երկիր գնաց՝ իրեն
թագաւորութիւն առնելու և
13 դառնալու։ Եւ իր տասը ծառա-
ները կանչելով՝ տասը մնաս տուաւ
անոնց, ու ըսաւ անոնց. Բանե-
ցուցէ՛ք ա՛պա՝ մինչև որ ես գամ։
14 Բայց անոր քաղաքացիները զանիկայ
կ՚ատէին, ու դեսպաններ խրկեցին
անոր ետևէն, ըսելով՝ Ըննք
ուզեր որ ատիկայ մեր վրայ թա-
15 գաւորութիւն ընէ։ Ու եղաւ որ
երբ անիկայ թագաւորութիւնը
առնելով ետ դարձաւ, իրեն կան-
չել տուաւ ան ծառաները՝ որոնց որ
ստակը տուեր էր, որ գիտնայ թէ
16 ով ինչ շահ բրած է։ Եւ առ-
ջինը եկաւ՝ ու ըսաւ. Տէր՛ քու
17 մնադ տասը մնաս շահ ըրաւ։ Եւ
ըսաւ անոր. Ապրիս՝ բարի ծա-
ռայ. որովհետև քիչ բանին մէջ
հաւատարիմ եղար, տասը քա-
ղաքի վրայ իշխանութիւն ունե-
18 ցիր։ Ու երկրորդը եկաւ՝ ու ըսաւ.
Տէր՛ քու մնադ հինգ մնաս շահ
19 ըրաւ։ Եւ ըսաւ անոր. Դուն ալ
20 հինգ քաղաքի վրայ եղիր։ Եւ ու-
րիշ մը եկաւ՝ ու ըսաւ. Տէր՛ ահա
քու մնադդ որ թաշկինակի մէջ
21 ծրարած կը պահէի. Հ՚քանզի կը
վախնայի քեզմէ, ինչու որ դուն
խիստ մարդ մըն ես. չդրած բանդ
կը վերցընես, ու չսերմանածդ կը
22 հնձես։ Եւ անիկայ ըսաւ անոր.
Ե՛քու բերնէդ քեզ պիտի դատեմ՝
ով չար ծառայ. Հ՚գիտէիր որ ես
խիստ մարդ մըն եմ. չդրած բանս
կը վերցընեմ, ու չսերմանածս կը
23 հնձեմ. Եւ ինչո՞ւ համար իմ բա-
նակս սեղանաւորներուն չտուիր,
որ ես եկած ատենս շահովը առնէի
24 անիկայ։ Եւ հոն կայնողներուն
ըսաւ. Առէ՛ք ատկէ մնասը, ու
տուէ՛ք անոր որ տասը մնաս ունի.
25 (Եւ ըսին իրեն. Տէր՛ անիկայ
26 տասը մնաս ունի.) Քանզի կ՚ը-
սեմ ձեզի, թէ ամէն ունեցողին
պիտի տրուի, և չունեցողին ունե-
ցածն ալ անկէ պիտի առնուի։
27 Բայց ան իմ թշնամիներս՝ որոնք
չէին ուզեր որ իրենց վրայ թագա-
ւոր ըլլամ, հոս բերէ՛ք, ու իմ
28 առջևս սպանեցէ՛ք։ Եւ ասը բա-
ները խօսելէն ետև, առաջ գնաց
Երուսաղէմ երթալու։
29 Ու եղաւ որ երբ Բեթփագէին
ու Բեթանիային մօտեցաւ, դէպ

Ցամք Տեառն 33

Ե Գոր. ա. 6։

Ը Մատ. իե. 14։ Մար. ժգ. 34։

Ի Ցօհ. ա. 11։

Ժ Մատ. իե. 21։ ԳԼ. ժզ. 10։

ԺԱ Մատ. իե. 24։

ԼԲ Թագ. ա. 16։ Ցոր. ժե. 6։ Մատ. ժբ. 37։

ԻՍ Մատ. իե. 26։

ԺԲ Մատ. ժգ. 12։ իե. 29։ Մար. գ. 25։ ԳԼ. Ը. 18։

ԼԱ Մար. ժ. 32։

ՀՄատ. իա. 1։ Մար. ժա. 1։

— Մատ. Թ. 11։ ԳԼ. Ե. 30։

Բ ԳԼ. գ. 14։

Ե Եզ. իբ. 1։ ա Թագ. ժբ. 8։ Բ Թագ. ժբ. 6։

Զ Հռով. դ. 11, 12, 16։ Գաղ. գ. 7։

Է ԳԼ. ժգ. 16։

ՂՄատ. ժբ. 11։ Տե՛ս Մատ. ժ. 6։ ժե. 24։

Ցամք Տեառն 33

'ի ան լեռը՝ որ Զիթենեաց լե՛ կ'ըսուի , իր աշակերտներէն երկուքը
30 խրկեց , Եւ ըսաւ . Գացէ՛ք Ձեր դիմացը եղած գեղը . և անոր մէջ մտնելնուդ պէս՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը , որուն վրայ բնաւ մարդ մը նստած չէ . արձըձ-
31 կեցէ՛ք անիկայ՝ ու բերէ՛ք . Եւ թէ որ մէկը ձեզի հարցընէ թէ՝ Ինչո՞ւ կ'արձըկէք . ասանկ ըսէք անոր թէ ,
32 Տէրոջը պէտք է ։ Երբոր գացին ան-
նոնք որ խրկուեցան , ինչպէս որ
33 իրենց զրուցեր էր՝ գտան , Ու երբոր աւանակը կ'արձըկէին , անոր տէրերը ըսին անոնց . Ինչո՞ւ կ'ար-
34 ձրկէք աս աւանակը ։ Անոնք ալ
35 ըսին . Տէրոջը պէտք է . Եւ զա-
նիկայ Ցիսուսին բերին . Յոն իրենց հանդերձները աւանակին վրայ
36 ձգելով՝ Ցիսուսը հեծցուցին ։ Ու երբոր կ'երթար , իրենց հանդերձ-
37 ները ճամբուն վրայ կը փռէին ։ Ու երբոր ալ մօտեցաւ , և Զիթենեաց լեռանը զառ-'ի վայրէն կ'իջնէր , աշակերտներուն բոլոր բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ զԱստուած օրհնել բարձր ձայնով
ան բոլոր հրաշքներուն համար՝ որ
38 տեսեր էին . Ու կ'ըսէին . Օրհնեալ է թագաւորը որ Տէրոջը անունովը կու գայ . Երկինքի մէջ խաղաղութիւն , ու փառք բարձ-
39 րութեան մէջ ։ Եւ բազմութեան մէջէն փարիսեցիներուն մէկ քանիները ըսին անոր . Վարդապետ՝ քու աշակերտներդ յանդիմա-
40 նէ ։ Եւ անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց . Ձեզի կ'ըսեմ , թէ որատոնք լուռ կենան , Հարերը պիտի աղաղակեն ։
41 Ու երբոր մօտեցաւ , քաղաքը տեսնելով՝ Լացաւ անոր վրայ՝ և ը-
42 սաւ . Գոնէ աս քու օրուանդ մէջ դիտնայիր քու խաղաղութիւնդ . բայց հիմա ծածկուեցաւ քու աչ-
43 քերէդ ։ Ինչու որ օրեր պիտի գան քու վրադ , Նոր թշնամիներդ քու բոլորտիդդ պատնէշ պիտի շինեն , ու քեզ պիտի պաշարեն , և ամէն կողմէ քեզ նեղը պիտի
44 ձգեն . Եւ հիմնայատակ պիտի ընեն քեզ՝ ու քու մէջդ եղած զաւակներդ . ԵՒ քար մը քարի վրայ ամենևին պիտի չթողուն քու մէջդ . Ոանոր համար որ չճանչցար քու այցելութեան ժամանակդ ։
45 Եւ տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոր մէջ ծախող-
46 ները և գնողները . Եւ ըսաւ ա-
նոնց . Գրուած է թէ՝ Իմ տունս աղօթքի տուն է ; բայց դուք ատիկայ աւազակներու այր ըրիք ։
47 Եւ ամէն օր տաճարին մէջ կը

սորվեցընէր . Բայց քահանայապետները ու դպիրները և ժողովուրդին ղլխաւորները կը փնտռէին թէ ի՛նչպէս կորսընցընեն զանիկայ ,
48 Ու բան մը չէին կրնար գտնել՝ թէ ինչ ընեն . ինչու որ բոլոր ժողովուրդը անոր կապուեր էին մտիկ ընելու ։

Ցամք Տեառն 33

Վմար . ժաս . 18 ։ Ցոհ . է . 19 ։ ը . 37 ։

ԳԼ . Ի

1 Քրիստոս իր իշխանութեան իրաւունքը կը պաշտպանէ Ցովհաննէսի մկրտութեան նարցումովը ։ 9 Աչքին առակը ։ 25 Քրիստոսի պատասխանը կայսրին տուրք տալու վասյով ։ 27 Յարու թիւն չկայ ըսող սադուկեցիները կը պապանձեցընէ ։ 41 Քրիստոս ինչպէս Դաւիթի որդին կ'ըլլայ ։ 45 Իր աշակերտներուն կը պատուիրէ գրիչներէն զգուշ կենալ ։

1 Եւ եղաւ որ ան օրերուն մէկը՝ երբոր տաճարին մէջ ժողովուրդին կը սորվեցընէր , և աւետարանը կը քարոզէր , քահանայապետները ու դպիրները ծերերուն
2 հետ մէկտեղ վրայ հասան , Եւ անոր խօսեցան՝ ըսելով . Զրուցէ՛ մեզի՝ Ե՞րնչ իշխանութիւնով կ'ընես աս բաները , կամ ո՞վ է աս իշխանութիւնը քեզի տուողը ։
3 Պատասխան տուաւ ու ըսաւ անոնց . Ես ալ ձեզի բան մը հար-
4 ցընեմ , և ըսէք ինծի . Յովհաննէսին մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝
5 թէ մարդոցմէ ։ Եւ անոնք մի-
6 ջնեին խորհեցան՝ ու ըսին . Թէ որ ըսենք՝ Երկինքէն , պիտի ըսէ . Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր . իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ . բոլոր ժողովուրդը մեզ պիտի քարկոծէն . Վինչու որ համոզուած են թէ Յովհաննէս մարգա-
7 րէ էր ։ Եւ պատասխան տուին
8 թէ չենդիտեր ուսկից էր ։ Եւ Ցիսուս ըսաւ անոնց . Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ աս բաները ։
9 Սկսաւ աս առակը ըսել ժողովուրդին . Մէկ մարդ մը այգի տնկեց , և զանիկայ մշակներու յանձնեց , ու ինքը օտար երկիր երթալով՝ շատ ժամանակ մնաց ։
10 Եւ առէնին ծառայ մը խրկեց մշակներուն , որ այգիին պտուղէն անոր տան . իսկ մշակները ծեծելէն զանիկայ , ու պարապ ձամբեցին ։
11 Եւ ուրիշ ծառայ մըն ալ խրկեց . իսկ անոնք զանիկայ ալ ծեծեցին , անարգեցին ու պարապ
12 ձամբեցին ։ Ու երրորդ մըն ալ խրկեց . իսկ անոնք զանիկայ ալ վիրաւորեցին՝ ու դուրս հանեցին ։
13 Ան առէնը պյգիին տէրը ըսաւ . Ի՞նչ ընեմ . իմ սիրելի որդիս խրկեմ , գուցէ զանիկայ տեսնելով
14 ամչնան ։ Բայց մշակները երբոր տեսան զանիկայ , իրարու հետ

Մտթ . ի . 3 ։

Ցհ . ա . 29 ։

Վմար . ժաս . 33 ։ Մար . ժբ . 1 ։

Ծամ Տեառն 33

խորհուրդ ըրին՝ ըսելով . Ասիկայ է ժառանգը , եկէք զանիկայ ըսպաննենք՝ . որ ժառանգութիւնը
15 մերը ըլլայ : Եւ զանիկայ այդիէն դուրս հանեցին ու սպաննեցին . ուստի այդիին տէրը ի՞նչ պիտի
16 ընէ անոնց . Պիտի գայ՝ ու կորսընցընէ ան մշակները , և այդին ուրիշներու պիտի տայ : Երբոր ա՛ լսեցին , ըսին . Քա՛ւ լիցի :
17 Եւ ինքը անոնց նայելով՝ ըսաւ . Հապա ի՞նչ է աս գրուածը Թէ ,
Ի Սաղ. ճԺը. 22 ։ Մատ. խա. 42 ։
ԷՂԻՍ . Բ . 34 , 35 ։ Մատ. խա. 44 ։
18 Էն քարը՝ որ շինողները անարգեցին , անիկայ անկիւնին գլուխը ե-
19 ղաւ : Ամէն ոյ որ ան քարին վրայ իյնայ՝ պիտի կոտրտի , ևս որու վրայ որ իյնայ՝ պիտի փոշի ցա-
նիկայ : Եւ քահանայապետները ու դպիրները կը փնտռէին Թէ ի՛նչ-
պե՛ս նոյն ժամուն ձեռք զարնեն ա-
նոր , բայց ժողովուրդէն վախցան , քանզի իմացան որ ան առակը ի-
րենց համար ըսաւ :
Ի Մատ. իբ. 15 ։
20 Ու ետքէ չարմար ապէնէ սպասե-
լով՝ խրկեցին քանի մը խաբեբայ մարդիկ՝ որոնք կեղծաւորութեամբ
ինքզինքնին արդար կը ձևացընէին , որ անիկայ խօսքով բռնեն՝ տէրու-
Ը Մատ. իբ. 16 ։ Մար. ժբ. 14 ։
թեան և կուսակալին իշխանու-
21 Թեանը զանիկայ մատնելու : Ու անոր հարցուցին ըսելով . Վար-
դապե՛տ գիտենք որ շիտակ կը խօ-
սիս ու կը սորվեցընես , և աչառու-
թիւն չես ըներ . հապա ճշմար-
տութեամբ Աստուծոյ ճամբան կը
22 սորվեցընես : Մեզի արժա՞ն է
23 կայսրին տուրք տալ , Թէ չէ : Եւ անոնց խորամանկութիւնը հասկը-
նալով՝ ըսաւ անոնց . Ինչո՞ւ զիս կը
24 փորձէք . Ցուցուցէ՛ք ինծի դահե-
կան մը : Որո՞ւն պատկերը ու գիրը ունի վրա՞ն . Պատասխան տուին
25 ու ըսին . Կայսրինը : Եւ ինքը ըսաւ անոնց . Ուրեմն ան որ կայս-
րինն է՝ կայսրին տուէ՛ք , և ան որ Աստուծոյն է՝ Աստուծոյ փո՛ւէ՛ : Եւ
26 չկրցան անիկայ խօսքով մը բռնել ժողովուրդին առջև . ու զարմանալով՝ անոր պատասխանին
վրայ լռե՛ւ կեցան :
27 Եւ ներկայ եղան Սադուկեցիներէն ոմանք ե-
կան , (ո՛րոնք հակառակութիւն կ'ընեն Թէ յարութիւն չկայ) և
28 անոր հարցուցին՝ ըսելով . Վար-
դապե՛տ Մովսէս մեզի գրեց , Թէ որ մէկուն եղբայրը կնիկ ունենա-
լով՝ մեռնելու ըլլայ , ու մեռած
ատենը զաւակ չունենայ՝ անոր եղ-
բայրը առնէ ան կնիկը և իր եղբօ-
29 րը զաւակ հանէ : Արդ եօթը եղ-
բայրներ կային . ու առջինը կնիկ մը առնելով՝ զաւակ չունեցած մե-
30 ռաւ . Երկրորդն ալ առաւ ան
կնիկը , և ինքն ալ մեռաւ առանց
31 զաւակի : Երրորդն ալ առաւ զանիկայ . նմանապէս եօթն ալ ,
ու զաւակ չձգեցին ու մեռան :
32 Ամենէն ետքը կնիկն ալ մեռաւ :
33 Ուրեմն յարութեան ատենը ա-
նոնցմէ որո՞ւն կնիկը պիտի ըլլայ . ինչու որ եօթն ալ զանիկայ կնիկ
34 ունեցան : Եւ Յիսուս պատաս-
խան տալով՝ անոնց ըսաւ . Ա՛ս աշ-
խարհիս որդիքը կնիկ կ'առնեն ու
35 կ'առկան կը տրուին : Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան ան աշ-
խարհին հասնելու , ու մեռելներէն յարութիւն առնելուն , ո՛չ կնիկ
կառնեն և ո՛չ կ'առկան կը տրուին .
36 Որովհետև ալ չեն կրնար մեռնիլ . Ե՛ք հրեշտակներուն հաւասար
են , ու Աստուծոյ որդիք են , է՛ինչու
37 որ յարութեան որդիք են : Բայց մեռելներուն յարութիւն առնելը
Մովսէսն ալ իմացուց մորենիին պարսա՛ւիկին մէջ , երբոր կը կոչէ
Տէրը Աբրահամին Աստուածը , ու Իսահակին Աստուածը , և Յակո-
38 բին Աստուածը : Ու Աստուած մեռելներուն Աստո՛ւածը չէ , հապա կենդանիներուն . Վ՛ինչու որ ամէնը
Ի Հռով . Ը . 10 ։ Ա Կոր . ժե. 42 , 49 , 52 ։ Ա Յով . գ . 2 ։ Ի Հռով . Ը . 23 ։ Ծ Ել . գ . 6 ։ Լա Կոր . ժե. 42 , 49 , 52 ։ Ա Յով . գ . 2 ։
39 անոր կենդանի են : Եւ դպիրներէն մէկ քանին պատասխան տուին
40 ու ըսին . Վարդապե՛տ՝ աղէկ ը-
սիր : Ու ալ մէկը համարձակութիւն չէր ըներ անոր բան մը հար-
41 ցընելու :
Եւ բսաւ անոնց . Ի՞նչպէս կ'ը-
սեն Թէ՝ Քրիստոս Դաւիթի որ-
42 դի է . Եւ ինքը Դաւիթ Սաղմոսներուն գրքին մէջը կ'ըսէ .
Տէրը իմ Տէրոջս ըսաւ . Նստէ՛
43 իմ աջ կողմս , Մինչև որ քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան
44 դան ընեմ : Ուրեմն Դաւիթ որ զանիկայ Տէր կը կոչէ , ի՞նչպէս
45 անիկայ անոր որդին կ'ըլլայ :
Եւ Ես բոլոր ժողովուրդին առջևը
46 ըսաւ իր աշակերտներուն , Ե՛ղ-
գուշացէ՛ք դպիրներէն , որոնք կ'ու-
զեն փառաւոր հանդերձներով պը-
տրտիլ , և շուկաներուն մէջ բա-
րևներ կը սիրեն , ու ժողովարան-
ներուն մէջ առաջին աթոռները ,
և ընթրիքներուն մէջ առաջին բաղ-
47 մոցները . Որոնք որբևարիներուն տուները կ'ուտեն ու ՀԱՐՊՈՑ երե-
Ի Սաղ . ճԺ . 1 ։ Մար . ժբ . 38 ։ Ե Մատ . իգ . 5 ։ Ա Գծ . ժա. 43 ։
նալու համար աղօթքը կ'երկընցընեն . աւելի դատապարտութիւն պիտի ընդունին :

Ծամ Տեառն 33

ԳԼ . ԻԱ

1 Ֆրիսոս կը գովէ աղքատ որբևարին . 5 կը նախագուշակէ տաճարին ու Երուսաղէմին կործանումը 25 նաև վերջին սրսուռն նշանները . 34 կը յորդորէ որ արթուն ըլլանք .

Ցամի Տեառն 33

1 ԱՒ նայեալով՝ տեսաւ հարուստնե-
րը որ իրենց ընծաները գանձա-
2 նակը կը ձգէին ։ Մէկ տնանկ որ-
բևարի մըն ալ տեսաւ , որ հոն եր-
3 կու լումայ ձգեց ։ Ու ըսաւ . Ճըշ-
մարիտ կ՚ըսեմ ձեզի , Թէ որ աս աղ-
քատ որբևարին ամենէն աւելի ձը-
4 գեց ։ Ինչու որ ամէն անոնք իրենց
աւելցածէն Աստուծոյ ընծաներուն
մէջը ձգեցին . բայց ասիկայ իր չը-
քաւորութենէն բոլոր իր ունեցած
ապրուստը ձգեց ։
5 Ու երբոր մէկ քանիները տա-
ճարին համար կ՚ըսէին Թէ , Գեղե-
ցիկ քարերով ու նուէրներով զար-
6 դարուած է , ըսաւ . Ատ բաները
որ կը տեսնէք , օրեր պիտի գան
Թէ որ ան տունը քար մը քարի վրայ
7 պիտի չմնայ՝ որ չքակուի ։ Հար-
ցուցին իրեն ու ըսին . Վարդապետ՝
երբ պիտի ըլլան ատ բաները , և
ի՞նչ է նշանը՝ երբոր ատ բաները
8 պիտի ըլլան ։ Ան ալ ըսաւ . Ւրգ-
գոյշ կեցէք՝ չխաբուիք . ինչու որ
շատերը պիտի գան իմ անունովս՝
ու ըսեն Թէ , Ես եմ Քրիստոսը ։
ու ժամանակը մօտեցած է . ուրեմն
9 անոնց ետևէն չերթաք ։ Բայց
երբոր լսէք պատերազմներ և խռո-
վութիւններ՝ մի՛ վախնաք . ինչու
որ պէտք է առաջ ատ բաները ըլ-
լան , բայց վախճանը իսկոյն չէ ։
10 Ետև ըսաւ անոնց . Ազգ
ազգի վրայ պիտի ելլէ , ու թագա-
ւորութիւն թագաւորութեան վը-
11 րայ ։ Եւ տեղ տեղ մեծ երկրա-
շարժութիւններ պիտի ըլլան . ու
սովեր և մահտարաժամներ , նաև
երկինքէն սոսկալի բաներ և մեծ
12 նշաններ պիտի ըլլան ։ Բայց ատ
ամէն բաներէն առաջ՝ իրենց ձեռ-
քերը ձեզի պիտի դնեն ու հալա-
ծեն , և ժողովարաններու ու բան-
տերու պիտի մատնեն . և Իմ ա-
նունս համար թագաւորներու
ու կուսակալներու առջև պիտի
13 տարուիք ։ Եւ ատ բոլորը վերջը
ձեզի վկայութիւն մը պիտի ըլլայ ։
14 Ուստի ձեր սրտին մէջը դրէք՝ որ
առաջուց չմտածէք պատասխան
15 տալու վրայով ։ Վասն զի ես ձե-
զի բերան ու իմաստութիւն պիտի
տամ՝ որուն պիտի չկրնան դէմ
խօսիլ , կամ դէմ կենալ ձեր
16 ամէն հակառակորդները ։ Եւ
ձ պիտի մատնուիք ծնողներէ , ու
եղբայրներէ , և ազգականներէ , ու
բարեկամներէ , ու ձեզմէ պիտի
17 սպաննեն . Եւ իմ անուանս հա-
մար ամենուն ատելի պիտի ըլլաք .
18 Բայց մէկ մազ մը ձեր գլխէն պի-
19 տի չկորսուի ։ Ձեր համբերութիւ-
նովը հոգիներդ պիտի ստանաք ։

20 Ուր երբոր տեսնէք Երուսաղէմը
չորս կողմէն զօրքերով պատած ,
ան ատենը գիտցէք որ անոր աւե-
21 րումը մօտ է ։ Ան ատենը Հրէ-
աստանի մէջ եղողները՝ լեռները
Թող փախչին . ու անոր մէջ ե-
ղողները Թող հեռանան . և անոնք
որ ագարակներն են , Թող չմտնեն
22 անոր մէջը ։ Վասն զի ան օրերը
վրէժխնդրութեան օրեր են , ետր
բոլոր գրուածները կատարուին ։
23 Բայց վա՛յ ան օրերը յղի եղողնե-
րուն ու ծիծ տուողներուն . ինչու
որ մեծ նեղութիւն պիտի ըլլայ
երկրին վրայ , ու բարկութիւն
ալէտ ետև ասս ժողովուրդին վրայ .
24 Եւ սուրի բերնով պիտի իյնան ,
ու բոլոր ազգերուն մէջ գերի պիտի
տարուին . ու Երուսաղէմ ազգե-
րուն ոտից կոխան պիտի ըլլայ ,
մինչև որ ազգերուն ժամանակները
25 լմընան ։ Ու արեգակին և լուսնին
ու աստղերուն վրայ նշաններ պիտի
ըլլան . ու երկրի վրայ ազգերը
ապշութեամբ պիտի տագնապին ,
և ծովը ու ալիքները պիտի գոռան .
26 Մարդոց սիրտերը պիտի նուաղին
էրէնց վախէն և աշխարհի վրայ
գալու բաներուն սպասէլէն . Վին-
չու որ երկնից զօրութիւնները
27 պիտի շարժին ։ Եւ ան ատենը
պիտի տեսնեն Որդին մարդոյ եամ
պի մէջ եկած , զօրութիւնով ու
28 մեծ փառքով ։ Ու երբոր ատ բա-
ները սկսին ըլլալ , ելէք՝ ու գլուխ-
նիդ բարձրացուցէք , Վինչու որ
ձեր փրկութիւնը մօտ է ։
29 Եւ առակ մը ըսաւ անոնց . Ցե-
սէք Թզենին ու ամէն ծառերը .
30 Երբոր կը բողբոջին , տեսնելով՝
դուք ձեզմէ կ՚իմանաք Թէ ալ ա-
31 մառը մօտ է ։ Նոյնպես ալ դուք
երբոր ատ բաները եղած տեսնէք ,
գիտցէք որ Աստուծոյ Թագաւո-
32 րութիւնը մօտ է ։ Ճշմարիտ կ՚ը-
սեմ ձեզի , որ աս ազգը պիտի
չանցնի , մինչև որ ատ բաները
33 ըլլան ։ Երկինքը ու երկիրը պիտի
անցնին , բայց իմ խօսքերս բնաւ
34 պիտի չանցնին ։ Իսկ դուք զգու-
շացէք ձեր անձերուն , չըլլայ որ
սիրտերնիդ կերուխումով ու գինո-
վութիւնով և աշխարհային զբաղ-
մունքներով ծանրանայ , ու յան-
կարծակի ան օրը ձեր վրայ հասնի .
35 Վասն զի բոլոր երկրին երեսը բնա-
կողներուն ամենուն վրայ որոգ-
մայթի մը պէս պիտի հասնի ։
36 Ուստի արթուն կեցէք . ու
ամէն ատեն աղօթք ըրէք , որ ար-
ժանի ըլլաք ան բոլոր ըլլալու բա-
ներէն ազատուելու , և Որդւոյ
մարդոյ առջևը կայնելու ։

Ցամի Տեառն 33

ՂՄատ . իդ . 15 ։ Մար . ժգ . 14 ։

ՃԴան . թ . 26 ։ 27 ։ Զաք . ժա . 1 ։
ՃՄատ . իդ . 19 ։

ՃԴան . թ . 27 ։ ժբ . 7 ։ Հով . ժա . 25 ։
ՂՄատ . իդ . 29 ։ Մար . ժգ . 24 ։ Բ Պետ . գ . 10 ։ 12 ։

ՂՄատ . իգ . 29 ։

ՃՄատ . իդ . 30 ։ Ցայտ . ա . 7 ։ ժգ . 14 ։

ՂՀով . ը . 19 ։ 23 ։

ՃՄատ . իդ . 32 ։ Մար . ժգ . 28 ։

ՂՄատ . իգ . 35 ։

ՃՀով . ժգ . 13 ։ ա Թես . ե . 6 ։ ա Պետ . դ . 7 ։

ՃՄատ . ե . 2 ։ բ Պետ . գ . 10 ։ Ցայտ . գ . 3 ։ ժգ . 15 ։

ՂՄատ . իդ . 42 ։ իե . 13 ։ Մար . ժգ . 33 ։

ՃԳՂ . ժը . 1 ։ ՐՍաղ . ա . 5 ։ Եփես . ը . 13 ։

Ցամի Տեառն 33

ՂՄատ . իդ . 15 ։ Մար . ժգ . 14 ։

ԲՄար . ժը . 41 ։

ԲԲ Կոր . ը . 12 ։

ԳՄատ . իդ . 1 ։ Մար . ժգ . 1 ։

ԴԳՂ . ժԹ . 44 ։

ԵՄատ . իդ . 4 . 5 ։ Մար . ժգ . 5 ։ Եփես . ե . 6 ։ Բ Թես . ը . 3 ։

ՁՄատ . իգ . 7 ։

ԷՄար . ժգ . 9 ։ Ցայտ . բ . 10 ։

ըԳոր . դ . 3 ։ ե . 18 ։ ժբ . 4 ։ ժՂ . 24 ։ Բ ա Պետ . բ . 13 ։

ԺԳոր . իե . 23 ։

ԻՓիլ . ա . 28 ։ Բ Թես . ա . 5 ։

ԼՄատ . ժ . 19 ։ Մար . ժգ . 11 ։ ԳՂ . ժբ . 11 ։

ԽԳոր . Ձ . 10 ։

ԾՄիք . է . 6 ։ Մար . ժգ . 12 ։

ԿԳոր . է . 58 ։ ժբ . 2 ։

ՀՄատ . ժ . 22 ։

ՃՄատ . ը . 80 ։

Ցամք Տեառն
33

Ա Ցօհ. ը. 1. 2։
– ԳԼ. Իբ. 39։

37 Ա Ու ցորեկները տաճարին մէջ կը
սորվեցընէր, – և գիշերները կ'ելլէր
Ձիթենեաց լսուած լեռը կը կա-
38 նար։ Եւ բոլոր ժողովուրդը առ-
տուանց կանուխ իրեն կ'երթային
տաճարը՝ իր խօսքերը լսելու։

ԳԼ. ԻԲ

1 Հրեայք գաւակցութիւն կ'ընեն Քրիստոսի
դէմ։ 3 Սատանան կը դրդէ Ցուդան որ
մատնէ զՔրիստոս։ 7 Առաքեալները կը պատ-
րաստեն զտուիկը։ 19 Քրիստոս իր սուրբ
ընթրիքը կը սահմանէ. 21 իր մատնիչին ո՛վ
ըլլալը կ'իմացընէ՝ առանց անոր անունը տա-
լու. 24 իր աշակերտները փառասիրութենէ
կը զգուշացընէ. 31 Պետրոսին կ'իմացընէ
թէ իր հաւատքը պիտի չպակսի. 34 բայց
իրեք անգամ պիտի ուրանայ իր Տէրը։ 39
աղօթք կ'ընէ Գեթսեմանեան պարտէզին
մէջ, և արիւն քրտինք կը թափէ. 47 Ա-
կայ հմտուրով մը կը մատնուի. 50 Մաղքոսին
ականջը կը բժշկէ։ 54 Պետրոս իրեք անգամ
կ'ուրանայ իր Տէրը։ 63 Քրիստոս նախա-
տալից անարգութիւն և չարչարանք կը կրէ։
66 ու կը խոստովանի թէ ինքը Աստուծոյ
Որդին է։

– Մատ. իգ. 2 ։ Մար. ժգ. 1 ։
Բ Սաղ. բ. 2։ Ցօհ. ժա. 47 ։ Գոր. գ. 27 ։
Ա Մատ. իգ. 14 ։ Մար. ժգ. 10 ։ Ցօհ. ժգ. 2 ։ 27 ։
Բ Ջաք. ժա. 12 ։
Ե Մատ. իգ. 17 ։ Մար. ժգ. 12 ։

1 – Հաղարջակերաց տօնը մօտեցաւ՝
2 որ Զատիկ կ'ըսուէր. Ե Եւ
քահանայապետները ու դպիրները
կը փնտռէին թէ ինչպէս սպաննեն
զանիկայ, քանզի ժողովուրդէն կը
վախնային։
3 Ե Եւ Սատանան խակարիովտացի
մականուանեալ Ցուդային ներսը
մտաւ, որ անիկայ տասուերկուքին
4 համրանքէն էր։ Եւ գնաց քահա-
նայապետներուն ու իշխանութիւնն
հետ խօսք ըրաւ՝ թէ ինչպէս զանի-
5 կայ մատնէ անոնց։ Անոնք ալ ու-
րախացան, Ե և խոստացան անոր
6 ստակ տալ։ Ու ինքը վրան ա-
ռաւ, և պատեհութիւն մը կը
փնտռէր որ զանիկայ մատնէ անոնց՝
առանց բազմութեանը ժողվուե-
լուն։
7 Ե Եւ բաղարջակերաց օրը եկաւ,
որուն մէջ պէտք էր զատիկը մոր-
8 թել։ Ու խրկեց Պետրոսը և
Ցովհաննէսը՝ ու ըսաւ. Գացէք
պատրաստեցէք մեզի զատիկը՝ որ
9 ուտենք։ Անոնք ալ ըսին անոր.
Ո՞ր կ'ուզես որ պատրաստենք։
10 Եւ ըսաւ անոնց. Ահա երբոր քա-
ղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի
պատահի որ սափն վրայ ջուրի սա-
փոր մը կը տանի. անոր ետևէն
գացէք ան տունը՝ ուր որ ինքը կը
11 մտնէ. Եւ ան տանը տիրոջը ը-
սէք. Վարդապետը կ'ըսէ քեզի.
Ո՞ր է օթևանը՝ որ հոն աշակերտ-
ներուս հետ Ձկակուղ զատիկը ու-
12 տեմ։ Ան ալ ձեզի զարգարուած
մեծ վերնատուն մը պիտի ցուցընէ.
13 հոն պատրաստեցէք։ Եւ գացին
գտան ինչպէս որ իրենց ըսաւ. ու
զատիկը պատրաստեցին։
14 Ա Ու երբոր ժամը հասաւ՝ սեղան
նստաւ, և տասուերկու առաքեալ-
15 ները իր հետը։ Ու ըսաւ անոնց.
Փափաքելով փափաքեցայ որ աս
զատիկը ձեզի հետ ուտեմ՝ իմ չար-
16 չարուելէս առաջ։ Քանզի կ'ըսեմ
ձեզի, որ ալ ընաւ ասկէ պիտի
չուտեմ՝ Ե մինչև որ Աստուծոյ թա-
գաւորութեանը մէջ կատարուի։
17 Եւ գաւաթը առաւ՝ գոհացաւ ու
ըսաւ. Առէք ասիկայ՝ ու բաժնե-
18 ցէք ձեր մէջը։ Ա Ընչու որ ձեզի
կ'ըսեմ, որ ընաւ որթին բերքին
պիտի չխմեմ՝ մինչև որ Աստուծոյ
թագաւորութիւնը դայ։
19 Ե Եւ հաց առաւ՝ գոհացաւ, կտրեց
և տուաւ անոնց՝ ու ըսաւ. Ա Ս է
իմ մարմինս, որ ձեզի համար տը-
րուած է. Ժասիկայ ըրէք զիս յի-
20 շելու համար։ Նոյնպես ալ գա-
ւաթը ետքը՝ ընթրիքէն ետև՝ ու
ըսաւ. Ե Ա Ս գաւաթը նոր ուխտ է
իմ արիւնովս, որ ձեզի համար կը
թափուի։
21 Ե Բայց ահա զիս մատնողին ձեռքը
22 ինծի հետ սեղանս է։ Ե Եւ յի-
րաւի Որդին մարդոյ կ'երթայ՝ Ե ին-
տոր որ սահմանուած է, բայց վայ
ան մարդուն՝ որուն ձեռքովը անի-
23 կայ կը մատնուի։ Ա Եւ անոնք
սկսան միջերնին հարցուփորձ ընել,
թէ իրենցմէ ո՛վ է՝ որ ան բանը
պիտի ընէ։
24 Ե Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջը՝
թէ իրենցմէ ո՛վ մեծ պիտի սե-
25 պուի։ Ե Եւ անիկայ ըսաւ անոնց.
Ազգաց թագաւորները անոնց կը
տիրեն, և անոնք որ կ'իշխեն անոնց՝
26 բարերար կը կոչուին. Ե Բայց դուք
անանկ պիտի չըլլաք. Ե Հապա ան
որ ձեր մէջը մեծ է՝ պզտիկին պէս
թող ըլլայ, և առաջնորդը սպա-
27 սաւորին պէս։ Ե Քանզի ո՛վ է
մեծը, սեղան նստո՞ղը՝ թէ սպա-
սաւորը. չէ՞ որ սեղան նստողը.
Ա Սակայն ես ձեր մէջը սպասաւորի մը
28 պէս եմ։ Ե Եւ դուք անոնք էք՝ որ
միշտ ինծի հետ կը կենայիք Ե իմ
29 փորձութիւններուս մէջ. Ա Ես ալ
ձեզի Ֆաթասբուխն մը ուխտ կ'ը-
նեմ, ինչպէս որ իմ Հայրս ինծի
30 թագաւորութիւն մը ուխտ ըրաւ.
Որ դուք իմ սեղանէս ուտէք ու
խմէք իմ թագաւորութեանս մէջ,
և աթոռներու վրայ նստիք՝ Իս-
րայէլի տասուերկու ցեղերը դա-
տելու։
31 Եւ Տէրը ըսաւ. Սիմոն Սիմոն՝
ահա Սատանան ձեզ փնտռեց, որ
32 ցորենի պէս խարթէ. Բայց ես
քեզի համար աղօթք ըրի՝ որ քու
հաւատքդ չպակսի. և դուն երբոր
դարձի գաս, քու եղբայրներդ
33 հաստատէ։ Իսկ ինքը ըսաւ ա-

Ցամք Տեառն
33

Ե ԳԼ. ժդ. 15 ։ Գոր. ժ. 41 ։ Ցայտ. ժԹ. 9 ։
Ը Մատ. իգ. 29 ։ Մար. ժդ. 25 ։
Ը Մատ. իգ. 26 ։ Մար. ժդ. 22 ։
ժա Կոր. ժա. 24 ։
Ա Կոր. ժ. 16 ։
Ա Սաղ. խա. 9 ։ Մատ. իգ. 21. 23 ։ Մար. ժդ. 18 ։ Ցօհ. ժդ. 21. 26 ։
Ե Մատ. իգ. 24 ։
Գ Գոր. բ. 23 ։ դ. 28 ։
Ա Մատ. իգ. 22 ։ Ցօհ. ժգ. 22. 25 ։
Հ Մար. թ. 33 ։ ԳԼ. թ. 46 ։
Յ Մատ. ի. 25 ։ Մար. ժ. 42 ։
Ը Մատ. ի. 26 ։ ա Պետ. ե. 3 ։
Ֆ ԳԼ. թ. 48 ։
Ր ԳԼ. ժբ. 37 ։
Յ Մատ. ի. 28 ։ Ցօհ. ժգ. 13. 14 ։ Փիլ. բ. 7 ։
Ն Եբր. դ. 15 ։
Ը Մատ. իգ. 47 ։ ԳԼ. ժբ. 82 ։ բ Կոր. ա. 7 ։ բ Տիմ. բ. 12 ։
Բ Մատ. ը. 11 ։ ԳԼ. ժգ. 15 ։ Ցայտ. ժԹ. 9 ։
Ը Սաղ. խԹ. 14 ։ Մատ. ժԹ. 28 ։ ա Պոր. գ. 2 ։ Ցայտ. գ. 21 ։.
Պ Պետ. ե. 8 ։
Ե Ամվ. Թ. 9 ։
– Ցօհ. ժե. 9. 11. 15 ։
– Սաղ. ծա. 13 ։ Ցօհ. խա. 15. 16. 17 ։

Ցամք Տեառն 33

նոր . Ցէր՝ ես պատրաստ եմ քեզի հետ բանտը երթալու ալ , մեռնելու ալ :
34 Նէյնու ալ ։ Ես անիկայ ըսաւ . Պետրոս՝ քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի չկանչի մինչև որ դուն իրեք անգամ ուրանաս , ըսելով թէ՝ զիս չես ճանչնար ։
35 Եւ ըսաւ անոնց . Երբոր ձեզ խրկեցի առանց քսակի ու պարկի և կօշիկներու , բանի մը կարօտ եղաք ։
36 Անոնք ալ ըսին . Բանի՛ մըն ալ չէ . ետքը ըսաւ . Բայց հիմա ան որ քսակ ունի՝ թող հետը առնէ , նոյնպես ալ պարկը . և ան որ չունի , թող իր հանդերձը ծախէ , ու իրեն թուր մը ծախու առնէ .
37 Քանզի կ'ըսեմ ձեզի , որ ասոր գրուած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի , Եւ անօրէններու հետ սեպուեցաւ . քանզի ինչ որ իմծի համար սրբոյ է , կատարուելու վրայ է ։
38 Անոնք ալ ըսին . Ցէր՝ ահա հոս երկու թուր կայ . ան ալ ըսաւ . անոնց , Հերիք են ։
39 Ու ելաւ էր սովորութեանը պէս Ձիթենեաց լեռը գնաց . աշակերտներն ալ իր ետևէն գացին ։
40 Երբոր ան տեղը հասաւ , ըսաւ անոնց . Աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք ։
41 Թեան մէջ չմտնէք ։ Եւ ինքը անոնցմէ զատուեցաւ քարընկէցի մը չափ , ու ծնկան վրայ դալով աղօթք կ'ընէր , Ու կ'ըսէր . Հայր՝ թէ որ կ'ուզես , աս դաւաթը ինծմէ անցուր . Բայց չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ ։
43 Ու երկինքէն հրեշտակ մը երևցաւ անոր՝ և կը զօրացընէր զանիկայ .
44 աղօթք կ'ընէր ։ Եւ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր , որ գետինը կը թափուէր ։
45 Եւ աղօթքէն ելլելով՝ աշակերտներուն քովը եկաւ , ու գտաւ անոնք տրտմութենէն քնացած .
46 Նոնք տրտմութենէ քնացած . Եւ ըսաւ անոնց . Ինչո՞ւ կը քնանաք . Ելէք աղօթք ըրէք՝ որ փորձութեան մէջ չմտնէք ։
47 Ու երբոր դեռ կը խօսէր , ահա մէկ բազմութիւն մը , և Յուդա ըսուածն՝ ա՝ տասուերկուքէն մէկը՝ անոնց առջևէն կ'երթար , ու Յիսուսին մօտեցաւ որ զանիկայ համբուրէ .
48 Բուրէ ։ Բայց Յիսուս՝ ըսաւ անոր . Յո՛ւդա՝ համբուրելո՞վ կը մատնես
49 Որդին մարդոյ ։ Երբոր անոր բոլորտիքը եղողները տեսան ինչ որ պիտի ըլլար , ըսին անոր Ցէր՝
50 Թուրով զարնե՞նք ։ Եւ անոնցմէ մէկը՝ քահանայապետին ծառային զարկաւ , ու մէկդի հանեց աջ

51 նոր աջ ականջը ։ Պատասխանի տուաւ Յիսուս՝ ու ըսաւ . Թո՛ղ տուէք մինչև ատ տեղը . և դպաւ անոր ականջին՝ ու բժշկեց զանիկայ ։
52 կայ ։ Եւ Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ . Իբր թէ ասւազակի՞ վրայ եմ ։
53 լաք սուրերով ու բիրերով ։ Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ , և ինծի ձեռք չզարկիք . Բայց աս է ձեր ժամանակը՝ ու խաւարին իշխանութիւնը ։
54 Եւ զանիկայ բռնելով տարին ու քահանայապետին տունը մտցուցին . Պետրոս ալ հեռուանց ։
55 Նոր եռևէն կ'երթար ։ Երբոր կրակ վառեցին դահլիճին մէջ ու մէկտեղ նստան , Պետրոս ալ նստաւ
56 անոնց մէջը ։ Մէկ աղախին մը տեսնելով զանիկայ՝ որ վառած կրակին քովը նստեր էր , նայեցաւ անոր ու ըսաւ . Ասիկայ ալ անոր
57 հետն էր ։ Բայց Պետրոս ուրացաւ զանիկայ ու ըսաւ . Կնի՛կ՝ ես անի
58 կայ չեմ ճանչնար . Եւ քիչ մը ետքը մէկ ուրիշ մը տեսաւ զանիկայ՝ ու ըսաւ . Դուն ալ անոնցմէ ես . և Պետրոս ըսաւ . Մարդ՝ ես
59 անոնչ չեմ ։ Եւ ժամու մը չափ անցնելէն ետև , ուրիշ մըն ալ կը պնդէր ու կ'ըսէր . Ճիրաւի ասիկայ ալ անոր հետն էր , ինչու որ Գալիլեացի է ։
60 լլելացի է ։ Բայց Պետրոս ըսաւ . Մարդ՝ չեմ գիտեր ինչ կը զրուցես դուն . և քանի որ իր խօսքը բերանն էր , իսկոյն հաւը խօսեցաւ ։
61 ցաւ ։ Եւ Ցէրը դարձաւ՝ ու Պետրոսին նայեցաւ . և Պետրոս ալ միտքը բերաւ Ցէրոջը խօսքը՝ որ իրեն ըսեր էր Թէ , Է դեռ հաւը չըխօսած՝ իրեք անգամ պիտի ուրանաս ։
62 Նաս զնս ։ Ու Պետրոս դուրս ելլելով՝ դառնապես լացաւ ։
63 Եւ ան մարդիկը որ Յիսուսը կը պահէին , ծաղր կ'ընէին զանիկայ ,
64 ու կը ծեծէին . Եւ անոր աչքերը ծածկելով՝ անոր երեսին կը զարնէին , ու կը հարցընէին իրեն ըսելով . Մարգարէացի՛ր՝ ով է ան որ
65 քեզի զարկաւ ։ Եւ ուրիշ շատ բաներ կը զրուցէին իրեն՝ հայհոյելով ։
66 Ու երբոր առտուս եղաւ՝ հաւորդովուրդին ծերակոյտը , քահանայապետները և դպիրները ժողվուեցան , ու տարին զանիկայ իրենց առեանը՝ և ՝ըսին . Թէ որ Քրիստոս՝ ես՝ ըսէ մեզի ։ Ըսաւ անոնց . Թէ որ ձեզի ըսեմ ալ ,
68 պիտի չհաւատաք . Եւ թէ որ ձեզի բան մը հարցընեմ , ինծի պատասխան պիտի չտաք , ու ալ չ

Ցամք Տեառն 33

Ե Մատ . իգ . 55 ։ Մար . ժգ . 48 ։
Ղ Ցօհ . ժբ . 27 ։
Ը Մատ . իգ . 57 ։
Ը Մատ . իգ . 58 ։ Ցօհ . ժբ . 15 ։
Ը Մատ . իգ . 69 ։ Մար . ժգ . 66 ։ Ցօհ . ժբ . 17 , 18 ։
Ժ Մատ . իգ . 71 ։ Մար . ժգ . 69 ։ Ցօհ . ժբ . 25 ։
Ի Մատ . իգ . 73 ։ Մար . ժգ . 70 ։ Ցօհ . ժբ . 26 ։
Լ Մատ . իգ . 75 ։ Մար . ժգ . 72 ։
Ի Մատ . իգ . 34 , 75 ։ Ցօհ . ժգ . 38 ։
Ի Մատ . իգ . 67 , 68 ։ Մար . ժգ . 65 ։
Ի Մատ . իգ . 55 ։ Մար . ժգ . 48 ։
Ի Մատ . իգ . 57 ։
Ը Մատ . իգ . 58 ։ Ցօհ . ժբ . 15 ։
Ի Մատ . իգ . 69 ։ Մար . ժգ . 66 ։ Ցօհ . ժբ . 17 , 18 ։
Ի Մատ . իգ . 71 ։ Մար . ժգ . 69 ։ Ցօհ . ժբ . 25 ։
Ի Մատ . իգ . 73 ։ Մար . ժգ . 70 ։ Ցօհ . ժբ . 26 ։
Լ Մատ . իգ . 75 ։ Մար . ժգ . 72 ։
Ի Մատ . իգ . 34 , 75 ։ Ցօհ . ժգ . 38 ։
Ի Մատ . իգ . 67 , 68 ։ Մար . ժգ . 65 ։
Ի Մատ . իե . 1 ։
Հ Գոր . գ . 26 ։ Տե՛ս Գոր . իբ . 5 ։
Ի Մատ . իգ . 63 ։ Մար . ժգ . 61 ։

Ե Մատ . իգ . 36 ։ Մար . ժգ . 32 ։ Ցօհ . ժբ . 1 ։
Գ . Թես . 37 ։
Մատ . գ . 13 ։ իգ . 41 ։ Մար . ժգ . 38 ։ Հմր . 46 ։
Մատ . իգ . 39 ։ Մար . ժգ . 35 ։
Ցօհ . ե . 30 ։ գ . 38 ։
Մատ . գ . 11 ։
Ցօհ . ժբ . 27 ։ Երբ . ե . 7 ։
Հմր . 40 ։
Մատ . իգ . 47 ։ Մար . ժգ . 43 ։ Ցօհ . ժբ . 3 ։
Մատ . իգ . 51 ։ Մար . ժգ . 47 ։ Ցօհ . ժբ . 10 ։

Ցամք Տեառն 33

ՂՄատ. իզ. 64։ Մար. ժգ. 62։ Ղեր. ա. 3։ ը. 1։ ՃՄատ. իզ. 64։ Մար. ժգ. 62։ ՃՄատ. իզ. 65։ Մար. ժգ. 63։

69 պիտի արձակէք։ Ղազկէ Եւս Որ-
դին մարդոյ Աստուածոյ զօրութեա-
70 նը աչ կողմը պիտի նստի։ Եւ ա-
մէնքը ըսին. Ուրեմն դուն Աստու-
ծոյ որդի՞ն ես. ինքն ալ ըսաւ ա-
նոնց. Դուք կ'ըսէք թէ ես եմ։
71 Եւ անոնք ըսին. Ալ ի՞նչ պէտք
է մեզի վկայութիւն, ինչու որ մենք
մեզմէ ատոր բերնէն լսեցինք։

ԳԼ. ԻԳ

1 Քրիստոս կ'ամբաստանուի Պիղատոսին առ-
ջեւը, և Հերովդեսին կը խրկուի։ 8 Հերով-
դես ծաղր կ'ընէ զանիկայ։ 12 Հերովդես և
Պիղատոս բարեկամ կ'ըլլան իրարու հետ։ 18
Պիղատոս կ'արձակէ Բարաբաս, և Ցիսուսը
ձեռք կու տայ որ խաչուի։ 27 Քրիստոս իր
վրայ լացող կիներուն կ'իմացընէ Երուսա-
ղեմի կործանումը։ 34 զոթէք կ'ընէ իր Թշ-
նամիներուն համար։ 39 Երկու չարագործ
անձինք իր հետը կը խաչուին։ 46 Քրիստոսի
մահը։ 50 և թաղումը։

ա Մատ. իե. 2։ Մար. ժե. 1։ ՑՀ. ժը. 28։

1 Յե՝ անոնց բոլոր բազմութիւնը
ոտք ելլելով՝ տարին զանիկայ
2 Պիղատոսին. Ու սկսան անոր վը-
.րայով ամբաստանութիւն ընել և
ըսել. Ասիկայ գտանք՝ Բոր Ֆը
ազգը կը մոլորցընէր, ու կայսրին
հարկ տալէն կ'արգիլէր, Թև իրեն
համար կ'ըսէր, Թէ ինքը Քրիստոս
3 ա Թագաւոր է։ Իսկ Պիղատոս
հարցուց անոր՝ ու ըսաւ. Հրէից
Թագաւորը դո՞ն ես. անիկայ ալ
պատասխան տուաւ անոր՝ ու ը-
4 սաւ. Դուն կ'ըսես։ Ան ատենը
Պիղատոս քահանայապետներուն
ու ժողովուրդներուն ըսաւ. Չես
աս մարդուն վրայ մէկ յանցանք մը
5 չեմ գտներ։ Բայց անոնք ոտք կը
կոխէին ու կ'ըսէին Թէ, ծողո-
վուրդը իրար կ'անդրնէն, ու բոլոր
Հրէաստանի մէջ կը սորվեցընէ՝
Գալիլեայէն սկսած մինչև աս տեղս։
6 Եւ Պիղատոս երբոր լսեց Գալիլեա-
յի համար՝ հարցուց Թէ աս մար-
7 դը Գալիլեացի՞ է։ Ու երբոր իմա-
ցաւ՝ Թէ Հերովդեսի իշխանու-
Թեան տակէն էր, զանիկայ Հե-
րովդեսին խրկեց, քանզի ան ալ ան
օրերը Երուսաղէմ էր։
8 Եւ Հերովդես երբոր Ցիսուսը տե-
սաւ, շատ ուրախացաւ. Եվասն
զի ինքը շատոնցմէ կը փափաքեր
անիկայ տեսնելու. Ի՝ինչու որ անոր
վրայով շատ բաներ լսած էր, և
կը յուսար որ անկէ եղած նշան մը
9 տեսնէ։ Ու շատ խօսքերով հարց-
ուփորձ կ'ընէր անոր. բայց անի-
կայ բնաւ իրեն պատասխան մը չը-
10 տուաւ։ Քահանայապետները ու
դպիրներն ալ կեցեր էին, և սաս-
տիկ ամբաստանութիւն կ'ընէին
ԺԵ. Ժ. 3։ 11 անոր վրայ։ Թ Իսկ Հերովդես ա-
նարգեց զանիկայ իր զօրականնե-
րուն հետ, ու ծաղր ընելէն ետև՝
փառաւոր հանդերձներ հագցուց
անոր, և նորէն Պիղատոսին խրկեց։
12 Եւ ան օրը Պիղատոս և Հերովդես
իրարու հետ բարեկամ եղան. ո-
րովհետև առաջ իրենց մէջը Թշ-
նամութիւն կար։
13 Եւ Պիղատոս՝ քահանայապետ-
ները ու իշխանները և ժողովուրդը
14 մէկտեղ կանչեց, Ու ըսաւ անոնց.
Ես մարդը առջևս բերիք՝ ժողո-
վուրդը մոլորցընողի մը պէս. Թև
ահա ես ձեր առջևը քննութիւն ը-
նելով՝ ատոր համար ձեր ըրած ամ-
բաստանութիւններէն՝ յանցանք մը
15 չգտայ ատ մարդուն վրայ. Ո՛չ ալ
Հերովդես, ինչու որ ձեզ անոր
խրկեցի. և ահա ատիկայ մահու
16 արժանի գործ մը ըրած չէ. Ես-
րեմն պատիժ մը տամ ատոր՝ ու
17 արձակեմ. (Հիսկ ոտնին ատենը
պէտք էր որ մէկը արձակէ անոնց.)
18 Յեւ բոլոր բազմութիւնը մէկտեղ
աղաղակեցին ըսելով. Վերցուր
ատիկայ՝ ու Բարաբաս արձակէ
19 մեզի. (Որ անիկայ քաղաքին մէջ
եղած խռովութեան մը և մար-
դասպանութեան համար բանտը
20 դրուած էր։) Եւ Պիղատոս՝ Ցի-
սուսը արձակել ուզելով, նորէն
21 խօսեցաւ անոնց։ Բայց անոնք նո-
րէն կ'աղաղակէին ու կ'ըսէին.
Խաչը հանէ ատիկայ՝ խաչը հանէ։
22 Եւ ինքը երրորդ անգամ ըսաւ ա-
նոնց. Բայց ի՞նչ չար գործ ըրած
է ատիկայ. ես ատոր վրայ մահու
արժանի յանցանք մը չգտայ. ուս-
րեմն պատիժ մը տամ ատոր՝ ու
23 արձակեմ։ Իսկ անոնք մեծաձայն
աղաղակներով ոտք կը կոխէին, ու
կ'ուզէին որ անիկայ խաչուի. և
անոնց ու քահանայապետներուն
24 ձայները զօրաւոր եղան։ Ղու Պի-
ղատոս վճռեց որ անոնց խնդիրքը
25 Ի գործ դրուի։ Եւ անոնց ուզած
մէկը՝ որ խռովութեան և մար-
դասպանութեան համար բանտը
դրուած էր, արձակեց անոնց. և
Ցիսուսը իրենց կամացը յանձնեց։
26 Ճու երբոր կանիկայ կը տանէին,
Սիմոն Կիւրենացի ըսոսոճ մէկը
բռնեցին՝ որ արտէն կու գար, և
խաչը անոր վրայ դրին՝ որ Ցիսուսի
27 ետևէն բերէ։ Ու անոր ետևէն
կ'երթար մեծ բազմութիւն ժողո-
վրդոց, նաև կանանց, որոնք կ'ողբայի ու կու լային անոր համար։
28 Եւ Ցիսուս դարձաւ անոնց՝ ու ը-
սաւ. Ով Երուսաղեմի աղջիկներ՝
իմ վրաս մի լաք, հապա ձեր ան-
ձերուն վրայ ու ձեր զաւակներուն
29 վրայ լացէք։ Ճ Ինչու որ ահա օրեր
կու գան՝ որոնց մէջ պիտի ըսեն.
Երանի ամուլներուն, և ան որո-

Ցամք Տեառն 33

Ես Ղեր. գ. 27։

ԼՄատ. իե. 23։ Մար. ժե. 14։ Ցօ. ժը. 38։ ԺԹ. 4։ Ի Հմ. 1, 2։ Ե Հմ. 4։

ե Մատ. իե. 26։ Ցօ. ժԹ. 1։ ՀՄատ. իե. 15։ Մար. ժե. 6։ Ցօ. ժը. 39։ Ղեր. գ. 14։

ՃՄատ. իե. 32։ Մար. ժե. 21։ Տե՛ս Ցօ. ժԹ. 17։

ՃՄատ. իդ. 19 ։ ՓԼ. իա. 23։

Ցամք Տեառն 33

Յ Եփ. Բ. 19։ Ովս. Ժ. 8։ Ցայտ. Ը. 16։ Թ. 6։ Նաւակ. Ժա. 31։ Երեմ. իե. 29։ Եզեկ. Ի. 47։ իա. 3, 4։ ա Պետ. դ. 17։ Ես. Ծգ. 12։ Մատ. իհ. 33։ Մար. Ժե. 22։ Ցոհ. ԺԹ. 17, 18։ Մատ. ե. 44։ Գոր. է. 59։ ա Կոր. դ. 12։ Դոր. գ. 17։ Մատ. իե. 35։ Մար. Ժե. 24։ Ցոհ. ԺԹ. 23։ Սաղ. իբ. 17։ Ջաբ. Ժբ. 10։ Մատ. իե. 39։ Մար. Ժե. 29։ Մատ. իե. 37։ Մար. Ժե. 26։ Ցոհ. ԺԹ. 19։ Մատ. իե. 44։ Մար. Ժե. 32։

Բ Մատ. իե. 45։ Մար. Ժե. 33։ Յ Մատ. իե. 51։ Մար. Ժե. 38։ Սաղ. լա. 5։ ա Պետ. Բ. 23։ Մատ. իե. 50։ Մար. Ժե. 37։ Ցոհ. ԺԹ. 30։ Մատ. իե. 54։ Մար. Ժե. 39։

33

30 վայններուն՝ որ չծնան, և ծիծ-
ռուն՝ որ կաթ չտուին։ Այն ա-
տենը պիտի սկսին ըսել լեռներուն,
Մէր վրայ ինկէք, ու բլուրներուն,
31 Մեզ ծածկեցէք։ Վասն զի թէ
որ գալար փայտին ասանկ կ'ընեն,
Չապա չորին ի՞նչ պիտի ըլլայ։
32 Ուրիշ երկու չարագործներ ալ
բերուեցան անոր հետը սպանուե-
33 լու։ Երբոր Գագաթ ըսուած տե-
ղը գացին, հոն խաչը հանեցին զա-
նոնկայ, և ան չարագործներն ալ
մէկը աջ կողմէն ու մէկալը ձախ
34 կողմէն խ–վչին։ Եւ ըսաւ Յի-
սուս. Հայր՝ Ներողութիւն տուր
ատոնց, Վինչու որ չեն գիտեր ինչ
կ'ընեն։ Ուր անոր հանդերձները
բաժնելու ատենին վիճակ ձգե-
35 ցին։ Եւ ժողովուրդը կայներ կը
նայէր. Իշխաններն ալ անոնց հետ
կը նախատէին զանիկայ՝ ու կ'ը-
սէին. Ուրիշները ազատեց, թող
ինքզինքն ալ ազատէ՝ թէ որ ատի-
կայ է Քրիստոս՝ Աստուծոյ ընտ-
36 րեալը։ Զօրք կ'ընէին անիկայ
գինուորներն ալ, առլեր կու գա-
յին՝ քացախ կը մատուցանէին ա-
37 նոր, Ու կ'ըսէին. Թէ որ դուն ես
Հրէից Թագաւորը, քու անձդ ա-
38 զատէ։ Եւ գիր մը գրուած էր
անոր վրայ՝ Յունարէն ու Լատինե-
րէն և Եբրայեցերէն գիրերով Թէ,
Ասիկայ է Հրէից Թագաւորը։
39 Եւ ան կախուած չարագործնե-
րուն մէկը հայհոյութիւն կ'ընէր
անոր՝ ու կ'ըսէր. Թէ որ դուն
Քրիստոսն ես, ազատէ՛ քու անձդ
40 ու մեզ ալ։ Իսկ միւսը պատասխան
տուաւ, և զանիկայ յանդիմանե-
լով ըսաւ. Դուն Աստուածմէ չե՞ս
վախնար, որովհետև նոյն գատա-
41 պարտութեան մէջն ես։ Ու մենք
իրաւունքով, քանզի հասմեր ը-
րածներուն արժանաւոր հատու-
ցումը կ'առնենք. բայց ասիկայ
42 մէկ գէշ բան մը չըրաւ։ Եւ ըսաւ
Յիսուսին. Տէր յիշէ զիս, երբո-
որ քու Թագաւորութիւնովդ գաս։
43 Յիսուս ալ ըսաւ անոր. Ճշմա-
րիտ կ'ըսեմ քեզի. Դուն այսօր
իմ հետս դրախտին մէջը պիտի ըլ-
լաս։
44 Եւ ժամը վեցին ատեններն էր,
ու բոլոր երկրին վրայ խաւար եղաւ
մինչև իններորդ ժամը. և արևը
45 խաւարեցաւ, Ու տաճարին վա-
րագոյրը մէջտեղէն պատռեցաւ.
46 Եւ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց
ու ըսաւ. Հայր՝ քու ձեռքդ կ'ա-
ւանդեմ իմ հոգիս։ Եւ երբոր աս
ըսաւ, հոգի տուաւ։
47 Եւ հարիւրապետը եղած բանը
տեսնելով՝ Աստուծոյ փառք տուաւ
ու ըսաւ. Իրաւցընէ աս մարդը
48 արդար էր։ Եւ աս տեսարանը
դիտելու համար ժողված բոլոր
բազմութիւնները, եղած բաները
տեսնելով՝ կուրծքերնուն կը զար-
49 նէին ու ետ կը դառնային։ Ամէն
իր ճանչնորներն ալ հեռուն կայներ
էին, նոյնպէս ալ ան կիներները որ
իր ետևէն եկեր էին Գալիլեայէն,
ու կը տեսնէին աս բաները։
50 Եւ ահա մէկ մարդ մը Յովսէփ
անունով, որ խորհրդական էր՝ բա-
51 րի ու արդար մարդ մը, (Ասիկայ
անոնց խորհուրդին ու գործքին
հաւանութիւն տուած չէր,) Հրէ-
աներուն Արիմաթիա քաղաքէն,
որ ինքն ալ Աստուծոյ Թագա-
52 ւորութեանը կը սպասէր. Ասիկայ
Պիղատոսին գնաց, ու Յիսուսին
53 մարմինը խնդրեց։ Եւ զանիկայ
խ–չէն իջեցընելով՝ կտաւով փաթ-
թեց, ու քարէ փորուած գերեզ-
մանի մը մէջ դրաւ, որ հոն բնաւ
54 մէկը դրուած չէր։ Եւ ան օրը
Պուրբաթ էր, ու շաբաթը պիտի
սկսէր։
55 Եւ Գալ. ետևէն գացին ան կիներ
որ Որ իրէն հետ Գալիլեայէն
եկած էին, Ու տեսան գերեզմանը՝
և Թէ ինչպէս անոր մարմինը հո-
56 դրուեցաւ։ Եւ դառնալով՝ Պատուա-
կեր ու եղեր պատրաստեցին, և
շաբաթ օրը հանգստացան Ըստ պա-
տուիրանքին համեմատ։

ԳԼ. ԻԴ

1 Երկու հրեշտակներ Քրիստոսի յարութիւնը կ'աւետեն գերեզմանը եկող կանանց։ 9 Անոնք ալ աս լուրը ուրիշներուն կը պատմեն։ 13 Քրիստոս կ'երևնայ Էմմաուս գացող երկու աշակերտներուն։ 36 Երբը առաքեալներուն, և անոնց անհաւատութիւնը կը յանդիմանէ։ 47 պատուէր մը կու տայ անոնց։ 49 Հոգւոյն Սրբոյ գալստեան խոստումնքը կ'ընէ, 51 և կը համբառնայ երկինքը։

1 Ու մէկշաբթի օրը առտուանոյ
շատ կանուխ գերեզմանը ե-
կան, Ու բերին ան խունկերը որ
պատրաստեր էին. և ուրիշ Պիլիներ
2 ալ անոնց հետ։ Ու քարը գերեզ-
մանէն մէկդի գլտորցուած գտան։
3 Եւ ներս մտնելով՝ Տէր Յիսուսին
4 մարմինը հոն չգտան։ Ու եղաւ որ
երբ անոնք աս բանիս համար տա-
րակուսանաց մէջ էին, Ահա եր-
կու մարդիկ լուսափայլ հանդերձ-
5 ներով հասան անոնց։ Ու երբոր
վախով լեցուած երեսին դէպ ի
գետինը ծռեցին, Նոքա Ցերեկը ըսին
անոնց. Ինչո՞ւ համար ողջը մեռե-
6 ներուն հետ կը փնտռէք. Հոս չէ
ան, հապա յարութիւն առաւ.
Մտիքերնիդ բերէք ինտր խօսե-
ցաւ ձեզի երբոր դեռ Գալիլեայի

Ցամք Տեառն 33

Մատ. իբ. 1։ Մար. Ժզ. 1։ Ցոհ. ի. 1։ Բ Գլ. իգ. 56։ Մատ. իբ. 2։ Մար. Ժզ. 4։ Ղ Ձմր 28։ Մար. Ժզ. 5։ Ցոհ. ի. 12։ Գոր. ա. 10։ Մար. Ժզ. 21։ Ժէ. 23։ Մար. ը. 36։ Թ. 30։ Գլ. Թ. 22։

Ցամք Տեառն 33

7 մէջ էր . Ըսելով , Թէ Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի , ու խաչը ելլէ , ու երրորդ օրը յարութիւն առնէ .
8 Եւ միտքերնին բերին անոր խօսքե-
9 րը ; ու գերեզմանէն դառնալով ասոնք ամէն բաները պատմեցին տասնումէկին , ու բոլոր ուրիշներուն ։
10 Եւ էին Մարիամ Մագդաղենացին , Ու Ցովհաննան , և Ցակոբոսին Մայրը Մարիամը , ու անոնց հետ ուրիշներ ալ , որ ասոնք առաքելոց պատմեցին ։
11 քեալներուն պատմեցին ։ Եւ ասոնց առջևը ափէզափէզ խօսքեր երևցան անոնց զրուցածը , ու չէին
12 հաւատար անոնց ։ Բայց Պետրոս ելաւ վազեց դէպ ի գերեզմանը , ու ծռելով նայեցաւ , և տեսաւ որ միայն կտաւները կը կենային . ու գնաց իր մտքին մէջ զարմանալով ան եղածին վրայ ։
13 Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը մէկ գեղ մը կ'երթային , որ Երուսաղէմէն վաթսուն ասպարէզ հեռու էր , և անոր անունը Էմ-
14 մաուս էր ։ Եւ անոնք կը խօսէին իրարու հետ ասոնց բոլոր եղած անց-
15 քերուն վրայով ։ Ու եղաւ որ երբ անոնք կը խօսակցէին ու խորհրդածումի կ'ընէին , Յիսուս ինքն ալ մօտենալով հետերնին
16 կ'երթար ։ Բայց անոնց աչքերը բռնուած էին , որ զինքը չճանչնան ։
17 Եւ ըսաւ անոնց . Ինչ է ատ խօսքերը , որ քալելով իրարու հետ կը խօսակցիք , ու տրտմած ալ էք ։
18 Պատասխան տուաւ անոնցմէ մէկը՝ որուն անունը Կղէովպաս էր , ու ըսաւ անոր . Դուն միայնակ երուսաղէմի մէջ կը կենաս , որ չես գիտեր թէ ինչեր եղաւ հոն ասոնց օրե-
19 րը ։ Եւ ինքը ըսաւ անոնց , Ինչ . անոնք ալ ըսին իրեն , Նազովրեցի Յիսուսին համար . հան որ Աստուծոյ և բոլոր ժողովուրդին առջևը գործքով ու խօսքով զօրաւոր
20 մարգարէ մը եղաւ . Ինչպէս քահանայապետները ու մեր իշխանները մահուան դատաստանի մատնեցին անիկայ , և խաչը հանեցին ։
21 Մեք մենք կը յուսայինք՝ թէ անիկայ էր որ Իսրայէլը պիտի ազատէր . և ասոնցմէ զատ երրորդ օրն է որ ասոնք եղաւ ։
22 Նաև մեր մէջէն մէկ քանի կիներ ալ մեզ զարմացուցին , որոնք առտուընց կանուխ գերեզմանը
23 գացին , Ու անոր մարմինը չգտնելով եկան ու ըսին , Թէ հրեշտակներու տեսիլք ալ տեսան . որոնք
24 ըսեր են թէ անիկայ ողջ է ։ Եւ մերիններէն մէկքանիներն ալ գերեզմանը գացին . ու անանկ գտան , ինչպէս որ ան կիները զրուցեցին , միայն թէ զինքը չտեսան ։
25 Ան ալ ըսաւ անոնց . Ով անմիտներ ու մտածելասիրտներ հաւատալու ան բոլոր բաներուն որ մարգարէ-
26 ները խօսեցան ։ Չէ՞ որ ասոնք պէտք էր Քրիստոսի չարչա-
27 րուիլ , և իր փառքը մտնել ։ Ու սկսելով Մովսէսէն և Բոլոր մարգարէներէն՝ կը մեկներ անոնց , ինչ որ իրեն համար բոլոր գիրքե-
28 րուն մէջ էր ։ Երբոր մօտեցան ան գեղին՝ ուր որ կ'երթային , Ինքն ալ կը ցուցներ որպես թէ աւելի հեռու տեղ մը
29 պիտի երթար ։ Բայց ստիպեցին զինքը՝ ու ըսին . Մեր քովը կեցիր , ինչու որ իրիկունը մօտ է , և օրը իջած է . և մտաւ
30 անոնց հետ կենալու ։ Ու եղաւ որ երբ ինքը անոնց հետ սեղան նստաւ , Հացը առաւ՝ օրհնեց , ու
31 կոտրելով՝ տուաւ անոնց ։ Ան ատենը անոնց աչքերը բացուեցաւ , ու զինքը ճանչցան . և ինքը ա-
32 նոնցմէ աներևոյթ եղաւ ։ Ու իրարու կ'ըսէին . Չէ՞ որ սիրտերնիս մեր ներսի դին կը բորբոքէր , երբոր ինքը մեր հետը կը խօսէր ճամբուն մէջ , և գիրքերը կը մեկնէր մեզի ։
33 Ու ելան նոյն ժամուն Երուսաղէմ դարձան , ու մկտեղ ժողվուած գտան տասնումէկը ու ա-
34 նոնց հետ եղողները , Որոնք կ'ըսէին թէ , Իրաւցընէ Տէրը յարութիւն առաւ , ու Սիմոնին երևաւ ։
35 ցաւ ։ Եւ իրենք պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ , և թէ ինչպէս ինքզինքը իրենց ճանչցուց՝ հացը կտրած առնելը ։
36 Ձեւ քանի որ ասոնք բաները կը խօսէին , Յիսուս ինքը կայնեցաւ ա-
նոնց մէջտեղը՝ ու ըսաւ անոնց .
37 Խաղաղութիւն ձեզի ։ Բայց անոնք զարհուրելով կը վախնային , ու կը կարծէին թէ ոգի մը կը
38 տեսնեն ։ Եւ ըսաւ անոնց . Ինչու խռոված էք , և ինչու սիրտերնուդ մէջը խորհուրդներ կ'ելլեն ։
39 Տեսէք ձեռքերս ու ոտքերս , որ ես ինքնս եմ . Շօշափեցէք զիս՝ ու տեսէք . վասն զի ոգին մարմին և ոսկորներ չունենար , ինծի որ կը-
40 կը տեսնէք որ ունիմ ։ Եւ ասսըսելով՝ ձեռքերը ու ոտքերը ցու-
41 ցուց անոնց ։ Ու երբոր տակաւին ուրախութենէն չէին հաւատար և զարմանքի մէջ էին , ըսաւ անոնց . Ունելիք մը ունիք հոս ։
42 Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ՝ ու մեղրախորիսխ տուին իրեն ։
43 Եւ առաւ կերաւ անոնց առջևը ։
44 Եւ ըսաւ անոնց . Ասոնք են ան

Ցամք Տեառն 33

Ա Հմր 46 ։ Գոր . ժէ . 3 ։ ա Պետ . ա . 11 ։
Ա Հմր 45 ։ Ծն . գ . 15 ։ Իս . 18 ։ Ից . 4 ։ Ի Թ . 10 ։ Ռու . ի . 9 ։ Բ Օր . ժը . 15 ։
Ա Սադ . ժգ . 9 , 10 ։ Իր ։ Ճէ . 11 ։ Ես . է . 14 ։ Թ . 6 ։ Ի . 10 , 11 ։ Ծ . 6 ։ Ծգ ։ Եր Ա՛ . իդ . 5 ։ լգ . 14 , 15 ։ Եզեկ . լգ . 23 ։ լէ . 25 ։ Դան . Թ . 24 ։ Մէք . է . 20 ։ Մաղ . գ . 1 ։ գ . 2 ։ Տ՚ա Ցօհ . ա . 45 ։
Գ Տ՚ա Ծն . լը . 26 ։ Իս . 7 ։ Մար . ը . 45 ։ Ղծն . ժթ . 3 ։ Գոր . ժգ . 15 ։
Մատ . ժը . 19 ։
Ակոր . ժե . 5 ։

Ա Մար . ը . 14 ։ Ցօհ . ի . 19 ։ ա Կոր . ժե . 5 ։
Մար . ը . 49 ։

Բ Ցօհ . ի . 20 , 27 ։

Ց Ծն . խե . 26 ։
Ցօհ . իա . 5 ։
Գոր . ժ . 41 ։
Մատ . ժգ . 21 ։ ժէ . 21 ։ ի . 18 ։ Մար . ը . 31 ։ Գա . Թ . 22 ։ ժը . 31 ։ Հմր 6 ։

Ցամք Տեառն 33

ՈԳՈՐ · ԺԷ · 14 ։
ՖՀմր 26 ։ Սաղ · իբ ։ Ես · Ծ · 6 ։ Ծգ · 2 ։ Ա ։ Գործ · ժԸ · 3 ։
— Դան · Թ · 24 ։ Գործ · ԺԳ · 38 ։ 46 ։ ա Ցօհ · բ · 12 ։
Բ Ծն · ԺԹ · 3 ։ Սաղ · իբ · 27 ։ Ես · խթ · 6 · 22 ։ Երեմ · լա · 34 ։ Ովս · բ · 23 ։ Միք · գ · 2 ։ Մալ · ա · 11 ։
Ֆ Ցօհ · ԺԵ · 27 ։ Գործ · ա · Տ · 22 ։ բ · 32 ։ գ · 15 ։

*խօսքերը որ ձեզի խօսեցայ՝ երբոր դեռ ձեր հետն էի թէ, պէտք է որ կատարուի ան ամէնը՝ որ Մովսէսի օրէնքին մէջ՝ ու մարգարէներուն մէջ՝ և սաղմոսներուն մէջ՝ ինծի
45 համար գրուած են։ Ապա անոնը միտքը բացաւ՝ որ գիր-
46 քերը հասկընան · Եւ ըսաւ ա-նոնց թէ՝ Ասանկ գրուած է, և ձա-ռանկ պէտք էր Քրիստոսին չարչա-րուիլ, ու երրորդ օրը մեռելներէն
47 յարութիւն առնել · Եւ անոր ա-նունովը՝ ապաշխարութիւն ու մեղաց թողութիւն քարոզուիլ Բոլոր ազգերու մէջ՝ Երուսաղէմէն
48 սկսած։ Դուք եք ա՛ս բաներուս
49 վկաները։ Եւ ահա ես իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը խրկեմ. բայց դուք Երուսաղէմ քաղաքիս մէջը նստեցէք, մինչև որ վերէն զօ-րութիւն առնէք վրանիդ։
50 Եւ զանոնք մինչև Բեթանիա հանեց, ու իր ձեռքերը վեր վեր-
51 ցընելով՝ օրհնեց անոնք։ Եղե՛ւ, ո-րում ան երբ անոնք կ՚օրհնէր, զա-տուեցաւ անոնցմէ, ու վեր կ՚երթար
52 երկինքը · Եւ անոնք ալ երկրպա-գութիւն ընելով անոր, մեծ ու-րախութեամբ Երուսաղէմ դար-
53 ձան։ Եւ ամէն ատեն տաճարին մէջն էին, ու կը գովաբանէին և կ՚օրհնէին զԱստուած։

Ցամք Տեառն 33

Ես · խգ · 3 ։ Ցովել · բ · 28 ։ Ցօհ · ԺԶ · 26 ։ ԺԷ · 26 ։ ԺԶ · 7 ։ Գործ · ա · 4 ։ բ · 1 ։ Ա ։
Ե Գործ · ա · 12 ։ ՂԹագ · բ · 11 ։ Մատ · ԺԶ · 19 ։ Ցօհ · ի · 17 ։ Գործ · ա · 9 ։ Եփես · գ · 8 ։
Է Մատ · իբ · 9 · 17 ։
Ը Գործ · բ · 46 ։ ե · 42 ։

ԵՒԱՆԳԵԼԻՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Ցիսուս Քրիստոսի Աստուածութիւնը, Մարդ-կութիւնը և պաշտօնը։ 15 Ցովհաննէսին վկայութիւնը Քրիստոսի համար։ 39 Քրիս-տոս իրեն կը կանչէ Անդրեասը, Պետրոսը, Ա։

1 — Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քովն էր, և Բանը
2 Աստուած էր։ Անիկայ սկիզբէն
3 Աստուծոյ քովն էր։ Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան
4 մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։ Կեանքը անով էր, Ու կեանքը մարդոց
5 լոյսն էր։ Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր. ու խաւարը անի-կայ չհասկըցաւ։
6 Աստուածմէ խրկուած մարդ մը կար, որուն անունը Ցովհաննէս
7 էր։ Ան անիկայ վկայութեան եկաւ՝ որ Լոյսին համար վկայէ, որ ա-մէնքը անոր միջոցովը հաւատան։
8 Ինքը չէր ան Լոյսը, հապա Ե-— որ Լոյսին համար վկայութիւն տայ։
9 Ճշմարիտ Լոյսը ան էր, որ աշ-խարհ եկող բոլոր մարդիկը կը
10 լուսաւորէ։ Ինքը աշխարհին մէջն էր, և աշխարհս անով եղաւ, ու
11 աշխարհս անիկայ չճանչցաւ։ Ի-րեններուն եկաւ, և իրենները զին-
12 քը չընդունեցին։ Բայց որոնք որ զինքը ընդունեցին, անոնց իշխա-

*նութիւն տուաւ Աստուծոյ որդի-ներ ըլլալու, որոնք կը հաւատան իր
13 անունը։ Որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ ոչ ալ մար-դու կամքէ, հապա Աստուծմէ ծը-
14 նան։ Եւ Բանը մարմին եղաւ, ու մեր մէջը բնակեցաւ, (և անոր փառքը տեսանք, Հօրմէն միածնի փառքին պէս,) շնորհքով ու ճըշ-մարտութիւնով լեցուն։
15 Ցովհաննէս վկայեց անոր հա-մար, և աղաղակեց ըսելով. Ասի-կայ է՝ որուն համար կը զրուցէի. Ան որ իմ ետեւէս կու գայ, ինծմէ առաջ եղաւ. Ինչու որ ինծմէ ա-
16 ռաջ էր։ Եւ անոր լեցունութե-նէն մենք ամէնքս շնորհք առինք՝
17 շնորհքի տեղ։ Ինչու որ Հօրէնքը Մովսէսին ձեռքովը տրուեցաւ, Ե-շնորհքը ու ճշմարտութիւնը Ցի-սուս Քրիստոսի ձեռքովը եղան։
18 Մէկը երբեք զԱստուած տեսած չէ, Ե-ին միածին Բրդին՝ որ Հօրը ծոցն է, անիկայ պատմեց։
19 Ու Ցովհաննէսին վկայութիւնը ասէ, երբոր Հրէաները երուսա-ղէմէն քահանաներ ու Ղեւտացիներ խրկեցին որ հարցընեն անոր թէ,
20 Դուն ո՞վ ես։ Եւ անիկայ խոս-

— Ադամ · բ · 22 · 23 · Ա ։ Կող · ա · 17 ։ ա Ցօհ · ա · 1 ։ Ցայտ · ա · 2 · ԺԹ · 13 ։
Բ Ադամ · բ · 30 ։ Գաղ · ԺԷ · 5 ։ ա Ցօհ · ա · 2 ։
Ֆ Փիլ · բ · 6 ։ ա Ցօհ · Է · 7 ։
Ցա · Տ · 26
Ե Ծն · ա · 1 ։
Է Սաղ · լգ · 6 · Հմր 10 · Եփես · գ · 9 · Կող · ա · 16 · Եբր · ա · 2 · Ցայտ · գ · 11 ։
ՂԹես · Է · 26 · ա Ցօհ · Ե · 11 ։ ·
Է Գաղ · բ · 12 · Թ · 5 · ԺԹ · 35 · 46 ։
Ը Գաղ · գ · 19 · Բ Մատ · գ · 1 · Մատ · գ · 1 · Ղա · գ · 2 · Հմր 33 · ԺԳ · 4 · Է Հմր 4 · Ես · խթ · 6 · ա Ցօհ · բ · Տ ։ * Կ—գալով Է Հմր 3 · Երբ · ա · 2 · Ժա · 3 · Է Ղա · ԺԹ · 14 · Գործ · գ · 26 · ԺԳ · 46 · Ձ Ես · ԺԶ · 5 · Հռով · բ · 15 · Գաղ · գ · 26 · բ Պետ · ա · 4 · ա Ցօհ · գ · 1 ։

Ցամք Տեառն 26

Ել · գ · 5 · Ցակ · ա · 18 · ա Պետ · ա · 23 ։
Հ Մատ · ա · 16 · 20 · Ղա · ա · 31 · 35 · բ · 7 · ա Տիմ · գ · 16 ։
Ձ Հռով · ա · 3 · Գաղ · գ · 4 · Երբ · բ · 11 · 14 · 16 · 17 ։
Ղ Ես · խ · 5 · Մատ · ԺԵ · 2 · Գա · բ · 11 · Ժա · 40 · բ Պետ · ա · 17 ։
Ճ Կող · ա · 19 · բ · 3 · 9 · Հմր 32 · Գաղ · գ · 32 · Է · 33 ։
Յ Մատ · գ · 11 · Մար · ա · 7 · Ղա · գ · 16 · Հմր 27 · 30 · Գաղ · գ · 31 ։
Ն Գաղ · բ · 58 · Կող · ա · 17 ։
Ցա · Տ · 30
ՂԳաղ · գ · 34 · Եփես · ա · 6 · 7 · Տ ։
Կող · ա · 19 · բ · 9 · 10 · — Եբ · Ի · 1 · Ա · բ Օր · գ · 44 · Է · 1 · լգ · 4 · Հռով · գ · 24 · Է · 21 · ը · 14 · Գաղ · բ · 32 · ԺԶ · 6 · Ղեւ · լգ · 20 · բ Օր · գ · 12 · Մատ · ԺԱ · 27 · Ղա · Ժ · 22 · Գաղ · գ · 46 · ա Տիմ · ա · 17 · ը · 16 · ա Ցօհ · գ · 12 · 20 · — Հմր 14 · Գաղ · գ · 16 · 18 · ա Ցօհ · գ · 9 · — Գաղ · Է · 33 · Հ Ղա · գ · 15 · Գաղ · գ · 28 · Գործ · ԺԶ · 25 ։

Ցամք Տեառն 30

տովանեցաւ ու չուրացաւ . խոս-
տովանեցաւ թէ ես քրիստոսը
21 չեմ : Ու հարցուցին անոր . Հա-
պա ի՞նչ , Եղիա՞ն ես . և ըսաւ ,
Չեմ . Ան մարգարէ՞ն ես . պա-
22 տասխան տուաւ թէ՝ Չէ : Ան
ատենը ըսին անոր . Դուն ո՛վ ես .
ըսէ՛ մեզի , որ պատասխան տանինք
մեզ խրկողներուն . դուն ի՞նչ կ'ը-
23 սես քեզի համար : Ըսաւ . Ես
անոր ձայնն եմ՝ որ անապատին մէջ
կը կանչէ . Ուղիղ ընէք Տէրոջը
ճամբան . ինչպէս որ Եսայի մար-
24 գարէն ըսաւ : Եւ ան խրկուած-
25 ները փարիսեցիներէն էին . Ու
հարցուցին իրեն ըսելով . Հապա
ինչո՞ւ մկրտուիս կ'ընես , թէ
որ դուն քրիստոսը չես , ու ոչ
26 Եղիան , և ոչ մարգարէն : Պա-
տասխան տուաւ անոնց Յովհաննէս՝
ու ըսաւ . Ես ջրով կը մկրտեմ .
բայց ձեր մէջը մէկը կայ՝ որ դուք
27 ան չէք ճանչնար . Անիկայ է իմ
ետեւէս եկողը՝ որ ինծմէ առաջ ե-
ղաւ , որ ես արժանի չեմ անոր
28 կօշիկին կապը քակելու : Ա՛յս բա-
ները Բեթաբարայի մէջ եղաւ Յոր-
դանանու ան կողմը , ուր որ
Յովհաննէսը կը կենար՝ ու կը մը-
կըրտէր :
29 Հետեւեալ օրը Յովհաննէս տե-
սաւ Յիսուսը որ իրեն կու գար , և
ըսաւ . Ահա Աստուծոյ Գառը՝ Որ
30 աչխարհի մեղքը կը վերցընէ : Ա-
սիկայ է որուն համար ես կը զրու-
ցէի . Իմ ետեւէս մարդ մը կու գայ՝
որ ինծմէ առաջ եղաւ , ինչու որ
31 ինծմէ առաջ էր : Ու ես զանիկայ
չէի ճանչնար , բայց Տանոր համար
ես եկայ ջրով մկրտելու , որ անի-
32 կայ Իսրայէլին յայտնուի : Եւ
Յովհաննէս վկայութիւն տուաւ ը-
սելով թէ , Կը տեսնէի Հոգին
որ աղաւնիի պէս երկինքէն կ'իջ-
ներ , ու անոր վրայ կը հանգչէր :
33 Եւ ես զանիկայ չէի ճանչնար , բայց
ան որ զիս խրկեց ջրով մկրտելու ,
ինքը ըսաւ ինծի Որու վրայ տես-
նես Հոգին , որ կ'իջնէ ու կը
հանգչի անոր վրայ , Նանիկայ է որ
34 Սուրբը Հոգիով կը մկրտէ : Ես
ալ տեսայ , ու վկայեցի թէ ասիկայ
է Աստուծոյ Որդին :
35 Հետեւեալ օրը դարձեալ Յով-
հաննէս կայներ էր , և իր աշա-
36 կերտներէն երկուքը : Ու նայելով
Յիսուսին վրայ՝ որ կը պտըտէր ,
ըսաւ . Ահա Աստուծոյ Գառը :
37 Եւ լսեցին անկէ երկու աշակերտ-
ները երբոր կը խօսէր , ու գացին
38 Յիսուսին ետեւէն : Յիսուս երբոր
դարձաւ՝ ու տեսաւ անոնք որ էր
ետեւէն կու գային , ըսաւ անոնց .
Ի՞նչ կ'ուզէք . անոնք ալ ըսին
իրեն . Ռաբբի , (որ թարգմա-
նուելով՝ վարդապետ ըսել է .)
39 ո՞ւր է քու օթևանդ : Ըսաւ ա-
նոնց . Նկէք ու տեսէք . Նկան ու
տեսան ուր տեղ որ էր իր օ-
թևանը . և ան օրը անոր քովը
կեցան , ինչու որ ժամը տասնին
40 տանէններն էր : Սիմոն Պետրոսին
եղբայրը Անդրէաս ան երկուքէն
մէկն էր , որ լսեցին Յովհաննէսէն ,
41 և անոր ետեւէն գացին : Ասիկայ
նախ իր Սիմօն եղբայրը կը գտնէ ,
և կ'ըսէ անոր . Գտանք Մեսիան ,
(որ քրիստոս կը թարգմանուի .)
42 Ու տարաւ զանիկայ Յիսուսին քո-
վը . Յիսուս անոր նայելով ըսաւ .
Դուն ես Յովհաննին որդին Սիմո-
նը , Դուն կեփաս պիտի ըսուիս ,
որ * Պետրոս կը թարգմանուի :
43 Հետեւեալ օրը Յիսուս Գալի-
լեա ելլել ուզեց , և Փիլիպպոսը
գտնելով՝ ըսաւ անոր . Եկուր իմ
44 ետեւէս : Եւ Փիլիպպոսը Բեթ-
սայիդային էր Անդրէասին ու
45 Պետրոսին քաղաքէն : Փիլիպպոս
կը գտնէ Նաթանայէլը՝ և կ'ըսէ
անոր . Ան որուն համար Մովսէս
օրինաց մէջ գրեց , Եւ մարգարէ-
ներն ալ , Նազովրեցին Յիսուս
Յովսէփին
46 որդին : Եւ Նաթանայէլ ըսաւ
անոր . Ինչ բան կարելի՞ է
որ աղէկ բան մը ըլլայ . ըսաւ անոր
47 Փիլիպպոս . Եկուր ու տես : Յի-
սուս երբոր տեսաւ Նաթանայէլը
որ դէպ ի՛ իրեն կու գար , ըսաւ
անոր համար . Ահա իրաւցընէ
Իսրայէլացի մը , որուն նէրսը նէն-
48 գութիւն չկայ : Նաթանայէլ
ըսաւ անոր . Որտեղից կը ճանչնաս
զիս . պատասխան տուաւ Յիսուս ,
ու ըսաւ անոր . Երբ Փիլիպպոսը
քեզ չկանչած , դուն որ թզենիին
տակն էիր , ես քեզ տեսայ :
49 Պատասխան տուաւ Նաթանայէլ՝
ու ըսաւ անոր . Ռաբբի՛ Դուն ես
Աստուծոյ Որդին , Դուն ես Իս-
50 րայէլի Թագաւորը : Յիսուս պա-
տասխան տուաւ և ըսաւ անոր .
Ասոր համար՝ որ քեզի ըսի թէ
քեզ Թզենիին տակը տեսայ , կը
հաւատաս . ասկէ աւելի մեծ բա-
51 ներ պիտի տեսնես : Ու ըսաւ ա-
նոր . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի . Տասկէ ետև պիտի տեսնէք
երկինքը բացուած , և Աստուծոյ
հրեշտակները՝ որ կ'ելլեն ու կ'իջ-
նեն Որդւոյ մարդոյ վրայ :

ԳԼ . Բ

1 Քրիստոս ջուրը գինիի կը փոխէ , 12 կ'երթայ Կափառնայում , ու երբը Երուսաղէմ , 14 ուր տեղ տաճարէն դուրս կը հանէ գնողները

Ցամք Տեառն 30

Մաղ . դ . 5 : Մատ . ժէ . 10 :
Ղր Օր . ժը . 15 . 18 :
Մատ . գ . 3 : Մար . ա . 3 : Ղուկ . գ . 4 : Գլ . գ . 25 :
Նա . խ . 3 :
Մատ . գ . 11 :
Մաղ . գ . 1 :
Չէր 15 , 30 : Գոր . ժէ . 4 :
Դատ . է . 24 : Գլ . ժ . 40 :
Եզ . ժր . 3 : Ես . ծդ . 7 : Չէր 36 : Գոր . ը . 32 : Ապօս . ա . 19 : Ցայտ . ե . 6 , ըէ :
Եր . ծդ . 11 : Ա Կոր . ժե . 3 : Գաղ . ա . 4 : Երե . ա . 3 : բ . 17 : Թ . 25 : Ա Պետ . բ . 24 : գ . 18 : Ա Յովհ . բ . 2 : գ . 5 : դ . 10 : Ցայտ . ա . 5 :
Չէր 15 , 27 :
Մաղ . գ . 1 : Մատ . գ . 6 : Ղուկ . ա . 17 , 76 : 77 : գ . 3 : 4 :
Մատ . գ . 16 : Մար . ա . 10 : Ղուկ . գ . 22 : Գլ . ե . 32 :
Մատ . գ . 11 : Գոր . ա . 5 : ը . 4 : ժ . 44 : ժԹ . 6 :
Չէր 29 :
Մատ . ժգ . 33 :
Մատ . իա . 5 : իՀ . 11 , 42 : Գլ . ժը . 37 : ժԹ . 3 :
Յն . իը . 12 : Մատ . գ . 11 : Ղուկ . ը . 9 , 13 : իը . 43 : իդ . 4 : Գոր . ա . 10 :

Ցամք Տեառն 30

և ծախողները ։ 19 կը նախաձայնէ իր մահը և յարութիւնը ։ 23 Շատերը իր հրաշքները տեսնելով կը հաւատան իրեն , բայց ինքը իր անձը չհաւատար անոնց ։

1 Ա Ւ երրորդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի Կանայ քաղաքը , և
2 Յիսուսի մայրը հոն էր ։ Յիսուս ալ կանչուեցաւ ան հարսնիքը ու
3 իր աշակերտներն ալ ։ Ու երբոր գինին պակսեցաւ , Յիսուսին մայ-
4 րը ըսաւ անոր . Գինի չունին ։ Յի-
սուս ըսաւ անոր . Ի՞նչիկ՝ ինծի
իմ հետս ի՞նչ բան ունիս . Տիմ
5 ժամանակս դեռ հասած չէ ։ Իր
մայրը սպասաւորներուն ըսաւ .
6 Ի՛նչ որ ձեզի ըսէ , ըրէք ։ Հոն
վեց հատ քարէ կարասներ դրուած
էին Հրէից մաքրուելու սովո-
րութեանը համեմատ , որ անոնց ամէն
մէկը երկու կամ իրեք մաղ բո-
7 ւառնէր ։ Յիսուս ըսաւ անոնց .
Լեցուցէք ատ կարասները ջրով .
ու լեցուցին անոնք մինչև բերանը ։
8 Եւ ըսաւ անոնց . Հիմա հանեցէք
ու տեղանապետին տարէք . անոնք
9 ալ տարին ։ Ու տեղանապետը
երբոր գինի եղած ջուրին համը
առաւ , և չէր դիտեր ուսկից ըլլա-
լը . (բայց սպասաւորները որ ջուրը
քաշեր էին , դիտէին .) տեղանա-
10 պետը կը խօսի փեսային , Ու անոր
կ'ըսէ . Ամէն մարդ աղէկ գինին ա-
ռաջ կը մատուցանէ . ու երբոր
խմած կ'ըլլան , ան ատենը ստոր-
նագոյնը . բայց դուն աղէկ գինին
11 մինչև հիմա պահեցիր ։ Յիսուս
հրաշքներուն սկիզբը ասոր ըրաւ Գա-
լիլեայի Կանայ քաղաքին մէջ , և իր
փառքը յայտնեց . ու իր աշա-
կերտները հաւատացին իրեն ։
12 Ասկէ ետև Յիսուս կափառնա-
յում իջաւ , ինքը և իր մայրը՝ ե՛ւ
իր եղբայրները և իր աշակերտնե-
րը , ու շատ օրեր հոն չկեցաւ ։
13 Բ Եւ Հրէից զատիկը մօտ էր , ու
14 Յիսուս Երուսաղէմ ելաւ . և գե՛
տաճարին մէջ գտաւ արջառ ու
ոչխար և աղաւնի ծախողները , ու
ատակ փոխուղներն ալ՝ որ նստեր
15 էին . Եւ չուանէ խարազան մը շի-
նելով՝ ամէնը տաճարէն դուրս հա-
նեց , ոչխարներն ալ ու արջառ-
ներն ալ , և ատակ փոխողներուն
պղինձները ցիրուցան ըրաւ , ու սե-
16 ղանները կործանեց . Եւ աղաւնի
ծախողներուն ըսաւ . Ասկէ վեր-
ցուցէք ատոնք , Իմ Հօրս տունը
17 առուտուրի տուն մի՛ ընէք ։ Եւ
իր աշակերտները միտքերնին բերին
որ գրուած է . Է՛ջու տանդ նա-
խանձը զիս կերաւ ։
18 Ուն ատենը պատասխան տուին
Հրէանները ու ըսին անոր . Ի՞նչ
նշան կը ցուցընես մեզի՝ որ ատ բա-
19 ները կ'ընես ։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոնց . Ջ՛քակե-
ցէք աս տաճարը , ու իրեք օրուան
20 մէջ պիտի կանգնեմ ։ Եւ
Հրէանները ըսին . Քառասունհնգ
վեց տարուան մէջ շինուեցաւ աս
տաճարը , և դուն իրեք օրուան
մէջ պիտի կանգնե՞ս անիկայ ։
21 Բայց ինքը իր մարմնին տաճարին
22 համար կ'ըսէր ։ Ուստի երբոր ինքը
մեռելներէն յարութիւն առաւ ,
հիր աշակերտները միտքերնին բե-
րին թէ աս բանը ըսած էր . ու
հաւատացին գիրքին և Յիսուսի
ըսած խօսքին ։
23 Ու երբոր զատկի տօնին աւուրը
երուսաղէմ էր , շատ մարդիկ ա-
նոր ըրած հրաշքները տեսնելով՝
24 հաւատացին անոր անունը ։ Բայց
ինքը Յիսուս իր անձը անոնց չէր
հաւատար , ինչու որ ինքը գիտէր
25 ամէն մարդ . Ու պէտք չէր որ մէկը
մարդու համար վկայութիւն տայ
իրեն . Նըզանզի ինքը գիտէր թէ
ինչ կայ մարդուն նէրսի դին ։

Ցամք Տեառն 30

Ա Մաս . իզ . 61 ։ իէ ։ 40 ։ Մար . ժդ . 58 ։ ժէ . 29 ։

Կող . բ . 9 ։ Ներ . բ . 2 ։ Կար . գ . 16 ։ ը . 19 ։ Ա Կար . ը . 16 ։
Ղնտ . իդ . 8 ։

Յաթագ . ժը . 7 ։ Մն . իբ . 9 ։ Մաս . թ . 4 ։ Մար . բ . 8 ։ Գէ . ղ . 65 ։ ժգ . 30 ։ Գոր . ա . 24 ։ Յայտ . բ . 23 ։

Գլ . Գ

1 Քրիստոս կը սորվեցնէ Նիկոդէմոսին՝ թէ վերահաս ծնունդը հարկաւոր է . 14 թէ փրկուելու համար պէտք է հաւատալով իր մահուանը նայիլ . 16 թէ Աստուած մեծ սէր ունի մարդոց վրայ . 18 թէ անհաւատները պիտի դատապարտուին . 23 Յովհաննէսին վկայութիւնը . անոր վկայութիւնը և վարդապետութիւնը Քրիստոսի վրայով ։

1 Լ Ու փարիսեցիներէն մարդ մը կար՝
Նիկոդեմոս անունով , որ Հը-
2 րէից իշխան էր ։ Անիկայ գիշե-
րով անոր գրուը եկաւ , և ըսաւ
անոր՝ Ռաբբի՛ գիտենք որ դուն
Աստուծմէ վարդապետ եկած ես .
ինչու որ Իմիկը չկրնար ընել ատ
հրաշքները՝ որ դուն կ'ընես , թէ
որ Աստուած իր հետը չըլլայ ։
3 Պատասխան տուաւ Յիսուս և
ըսաւ անոր . Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ քեզի , Թէ մէկ մարդ
մը Վերէն չծնանի , չկրնար Աս-
տուծոյ թագաւորութիւնը տես-
4 նել ։ Նիկոդեմոս ըսաւ անոր .
Ինչո՞ր կրնայ մարդ մը ծնանիլ ,
որ ծերացած է . Չարաչո՞ր բան
է որ Նորէն իր մօրը որովայնը
5 մտնէ ու ծնանի ։ Յիսուս պա-
տասխան տուաւ . Ճշմարիտ ճշմա-
րիտ կ'ըսեմ քեզի , Թէ որ մէկ
մարդ մը Ջուրէն ու Հոգիէն չծնա-
նի , չկրնար Աստուծոյ թագաւո-
6 րութիւնը մտնել ։ Մարմինէն ծնա-
ծը մարմին է , ու Հոգիէն ծնածը՝
7 Հոգի է ։ Դուն մի՛ զարմանար
որ քեզի ըսի , Պէտք է ձեզի Նորէն
8 ծնանիլ ։ Հովը ուր որ ուզէ՝

Գ Մաս . իզ . 50 ։ ժԹ . 39 ։ Ո՛ՀՆ՝ Ցհաուհին

Բ Գէ . Թ . 16 . 33 ։ Գոր . բ . 22 ։
Գոր . ծ . 38 ։
Գէ . ա . 13 ։ Ֆաղ . ղ . 15 ։ Տհս . գ . 5 ։
Յակ . ա . 18 ։ ա Պետ . ա . 23 ։ ա Յհ . գ . 9 ։
Ա Կո՛վերէն

Ա Մար . ժդ . 16 ։ Գոր . բ . 38 ։

Ղ Հով . ժա . 5 ։ ա Կոր . բ . 11 ։

Ցամի Տեսան 30

կը փչէ , և անոր ձայնը կը լսես , բայց չես դիտեր ուրկից կու գայ կամ ուր կ'երթայ . ասանկ ալ է ան ամէնը որ Հոգիէն կը ծնանի ։
9 Պատասխան տուաւ Նիկոդեմոս ու ըսաւ անոր . Ե՞նչպէս կրնայ
10 ըլլալ ։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր . Դուն Իսրայէլի վարդապետ մըն ես , և
11 ասը բաները չե՞ս դիտեր ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի , թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք , և ինչ որ տեսանք՝ կը վկայենք , Բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր ։
12 Թէ որ երկրաւոր բաները ձեզի զրուցեցի՝ ու չէք հաւատար , ի՞նչպէս պիտի հաւատաք՝ թէ որ երկնաւոր բաները ձեզի զրուցեմ ։
13 Եւ մէկը երկինքը չելաւ , բայց անիկայ միայն՝ որ երկինքէն իջաւ՝ Որդին մարդոյ , որ երկինքն է ։
14 Եւ ինտոր որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց , Նանկ ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ .
15 Որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի , Հապա յաւիտենական կեանք ունենայ ։
16 Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ . որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի , հապա յաւիտենական կեանք ունենայ ։
17 Վասն զի Աստուած իր Որդին չխրկեց աշխարհի , որ աշխարհը դատէ , հապա՝ որ աշխարհս անով փրկուի ։
18 Ան որ կը հաւատայ անոր՝ չդատապարտուիր . և ան որ չհաւատար , անիկայ արդէն դատապարտուած է . ինչու որ Աստուծոյ միածին Որդւոյն անունը չհաւատաց ։
19 Եւ ասիկա է դատապարտութիւնը՝ Որ լոյսը աշխարհ եկաւ , ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին . ինչու որ իրենց գործքերը չար էին ։
20 Վասն զի ամէն ով որ չար կը գործէ , անիկայ լոյսը կ'ատէ , և լոյսին քովը չգար՝ որ իր գործքերը չյանդիմանուին ։
21 Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ , լոյսին քովը կու գայ , որ իր գործքերը յայտնի ըլլան թէ Աստուծով գործուեցան ։
22 Ասը բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր աշակերտները Հրէաստանի երկիրը , և հոն կը կենար անոնց հետ մկրտելով ։
23 Կ'ըներ ։ Յովհաննէս ալ Այնոնի մէջ՝ Սաղիմի մօտ մկրտութիւն կ'ընէր . որովհետև հոն շատ ջուր կար , ու կու գային և կը մկրտուէին ։
24 Ինչու որ Յովհաննէս դեռ բանտը դրուած չէր ։
25 Ան ատենը վիճաբանութիւն մը եղաւ Յովհաննէսին աշակերտներէն՝ Հրէացիներուն հետ՝ մաքրութ-
26 Թեան վրայով ։ Ու եկան Յովհաննէսին և անոր ըսին . Ռաբբի՝ անիկայ որ քեզի հետ Յորդանանին մէկալ կողմն էր , Լորուն համար դուն վկայութիւն տուիր , ահա ինքը կը մկրտէ . և ամէնը անոր կու-
27 գան ։ Պատասխան տուաւ Յովհաննէս՝ և ըսաւ . Մարդ մը չկրնար բան մը առնել , թէ որ երկինքէն
28 քէն տրուած չըլլայ անոր ։ Դուք ձեզմէ կը վկայէք ինծի համար , որ ըսի թէ՝ Ես Քրիստոսը չեմ , Հապա անոր առջևէն խրկուած եմ ։
29 Ան որ հարսը ունի , փեսան անիկայ է . Բայց փեսային բարեկամը՝ որ կը կենայ ու կը լսէ անոր , մեծապէս կ'ուրախանայ փեսային ձայնին համար . ուստի ասիկա իմ
30 ուրախութիւնս լցուած է ։ Անիկայ պէտք է որ մեծնայ , բայց ես
31 պզտիկնամ ։ Ան որ վերէն կու գայ՝ Համենէն վեր է . Ան որ երկրէն է՝ երկրաւոր է , ու երկրէն կը խօսի . Ան որ երկինքէն կու գայ՝
32 ամենէն վեր է . Եւ ինչ որ տեսաւ ու լսեց , նկա կը վկայէ , ու անոր
33 վկայութիւնը մէկը չընդունիր ։ Ան որ անոր վկայութիւնը կ'ընդունի , Կնքեց՝ թէ Աստուած ճշմարիտ է ։
34 Վասն զի ան որ Աստուած խրկեց , Աստուծոյ խօսքերը կը խօսի . ինչու որ Աստուած Հոգին չափով
35 չտար Հոգին ։ Հայրը կը սիրէ Որդին , և ամէն բան անոր ձեռքը
36 տուած է ։ Ան որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չհնազանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ . Հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ ։

Գ Լ · Դ

1 Քրիստոս Սամարացի կնկան մը հետ կը խօսի ։ 4 և իր ո՛վ ըլլալը անոր կը յայտնէ ։ 27 աշակերտները կը զարմանան ։ 31 Քրիստոս կ'իմացընէ անոնց իր նախանձը Աստուծոյ փառքին համար ։ 39 Շատ Սամարացիներ կը հաւատան անոր ։ 43 Քրիստոս Գալիլեա կ'երթայ , և կը բժշկէ պաշտօնական մը որդին ։

1 Երբ Տէրը իմացաւ որ փարիսեցիները լսեր են՝ Թէ Յիսուս Յովհաննէսէն աւելի աշակերտներ
2 կ'ընէ , և կը մկրտէ . (Թէպէտ չէ թէ Յիսուս ինքը կը մկրտէր ;
3 Հապա իր աշակերտները .) Թողուց Հրէաստանը , ու նորէն գաց
4 լինելա դնաց ։ Ու պէտք եղաւ որ
5 Սամարիայի մէջէն անցնի ։ Ուստի եկաւ Սամարացւոյ մէկ քաղաքը՝ որուն անունը Սուքար էր , ան տեղին մօտ՝ Բորն որ Յակոբ իր որ-
6 դւոյն Յովսեփին տուաւ . Եւ հոն

Ցամի Տեսան 30

* Կամ՝ Հրեաստանի մը
Լուկ. ա. 7, 15, 27, 34, ա Կոր. գ. 7, Երբ. ե. 4, Յակ. ա. 17,
Լուկ. ա. 20, 27,
Մատ. գ. 1, Մարկ. ա. 2, Ղուկ. ա. 17,
Մատ. իբ. 2, բ Կոր. ժ. 2, Եփես. ե. 25, 27, Յայտ. իա. 9,
Երդ. ե. 1,
Հմր 13, Գաղ. բ. 23,
Մատ. իբ. 18, Գաղ. ա. 15, 27, Հռոմ. թ. 5,
ա Կոր. ժբ. 47,
Գաղ. գ. 33, ա Կոր. ժե. 47, Եփես. ա. 21, Փիլ. բ. 9,
Հմր 11, Գաղ. բ. 26, ժե. 15,
Հռոմ. գ. 4, ա Յով. ե. 10,
Գաղ. ե. 16,
Գաղ. ա. 16,
Մատ. ժա. 27, Իր. 18, Ղուկ. ժ. 22, Գաղ. ե. 20, 22, ժգ. 3, ժե. 2, Երբ. բ. 8,
Ամր. բ. 4, Գաղ. ա. 12, գ. 47, Հմր 15, 16, Հռոմ. ա. 17, ա Յով. ե. 10,
Գաղ. ՁԼ22, 26,
Յովհ. ժգ. 19, Իր. 22, Յես. Խ. 32,

Ցամք Տեառն 30

Ցակոբին մէկ աղբիւրը կար . Ցիսուս ալ ճամբայէն յոգնած ըլլալով՝ ան աղբիւրին վրայ նստաւ . Ե ժամը վեցին աւելն էր ։
7 Սամարիայէն կնիկ մը եկաւ ջուր հանելու . Ցիսուս ըսաւ անոր . Ին-
8 Ծի ինծ՝ տուր խմելու . (Քանզի իր աշակերտները քաղաքը գացեր էին ; որ ուտելիք առնեն ։)
9 Ան աւելը Սամարացի կնիկը ըսաւ անոր . Դուն որ Հրեայ ես , ի՞նչպէս կ'ուզես ինծմէ՝ Սամարացի կնիկէ մը . վասն զի Հրէայք Սամարացւոց հետ հաղորդակցութիւն չեն ըներ ։
10 Ցիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր . Թէ որ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը , և թէ ով է ան որ քեզի կ'ըսէ , Ինծի ինծ տուր խմելու , դուն անկէ պիտի ուզէիր , և ինքը քեզի Կենդանի ջուր պիտի տար ։
11 Կնիկը ըսաւ անոր . Տէր՝ դուն ջրհան ալ չունիս ու հորը խորունկ է , ուրեմն ո՞րկից պիտի ունենաս ան կենդանի ջուրը ։
12 Միթէ դուն մեր Ցակոբ հօրմէն աւելի մե՞ծ մըն ես , որ հորը մեզի տուաւ , և ասկէ խմեց՝ ինքը ու իր որդիները , և իր անասունները ։
13 Ցիսուս պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր . Ամէն ով որ ատ ջուրէն խմէ , նորէն պիտի ծարաւի . Բայց ով որ խմէ ան ջուրէն՝ որ ես անոր պիտի տամ , յաւիտեան
14 տեան պիտի չծարաւի . Հապա ան ջուրը՝ որ ես անոր պիտի տամ , Ղպիտի ըլլայ անոր ներսի դին ջուրի աղբիւր մը՝ որ յաւիտենական կեանց համար կը բղխէ ։
15 Կնիկը ըսաւ անոր . Տէր՝ տուր ինծի ան ջուրը՝ որ չծարաւիմ , և հոս չգամ ջուր հանելու ։
16 Ցիսուս ըսաւ անոր . Գնա՝ քու երիկդ կանչէ , ու հոս
17 եկուր ։ Կնիկը պատասխան տալով ըսաւ . Ես երիկ չունիմ . Ցիսուս ըսաւ անոր . Աղէկ ըսիր
18 Թէ , Երիկ չունիմ . Ինչու որ դուն հինգ երիկ ունեցեր ես , և ան որ հիմա ունիս , քու երիկդ չէ . ա-
19 տիկայ շիտակ ըսուցիցիր ։ Կնիկը ըսաւ անոր . Տէր՝ Հը տեսնեմ որ
20 դուն մարգարէ մըն ես ։ Մեր Հայրերը Քաս լեռանս վրայ երկրպագութիւն ըրին . և դուք կ'ըսէք Թէ , Մէյն Երուսաղէմն է տեղը, ուր պէտք է երկրպագութիւն ը-
21 նել ։ Ցիսուս ըսաւ անոր . Կնիկ՝ հաւատայ ինծի որ ժամանակ կու գայ , Հոր ան աւելը ոչ այս լեռանը վրայ՝ և ոչ Երուսաղէմի մէջ Հրը կրպագութիւն պիտի ընէք Հօրը ։
22 Դուք անոր երկրպագութիւն կ'ընէք , Հոր չէք ճանչնար . մենք անոր երկրպագութիւն կ'ընենք՝ որ կը ճանչնանք . Հինէն որ փրկութիւ-
23 նը Հրեաներէն է ։ Բայց ժամանակ կու գայ , ու հիմա ալ է , որ ճշմարիտ երկրպագուները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ Հոգիով ու ճշմարտութիւնով . ինչու որ Հայրն ալ իրեն անանկ ե-
24 րկրպագողներ կ'ուզէ ։ Աստուած Հոգի է . և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ Հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ը-
25 նեն ։ Կնիկը ըսաւ անոր . Գիտեմ որ Մեսիան կու գայ , (որ Քրիստոս ըսուածը .) երբոր ինքը գայ , Ամէն բան մեզի պիտի
26 պատմէ ։ Ցիսուս ըսաւ անոր . Ես ան եմ՝ որ քեզի հետ կը խօսիմ ։
27 Եւ աս Հետէն վրայ իր աշակերտները եկան , ու զարմացան որ ան կնկանը հետ կը խօսէր . բայց ա-նոնցմէ մէկը չըսաւ Թէ՝ Ի՞նչ կ'ուզես , կամ ի՞նչ կը խօսիս անոր
28 Հետ ։ Ան աւելը կնիկը ձգեց իր սափորը , ու քաղաքը գնաց , և
29 ըսաւ մարդիկներուն . Եկէք տեսէք մէկ մարդ մը՝ որ ըսաւ ինծի ամէն ինչ որ գործեր եմ . արդեօք
30 անիկա՞ է Քրիստոսը ։ Եւ անոնք քաղաքէն ելան ու անոր կու գային ։
31 Եւ աս միջոցիս աշակերտները իրեն կ'աղաչէին ու կ'ըսէին . Ռաբ-
32 բի՝ Հոյ կեր ։ Անիկայ ըսաւ անոնց . Ես կերակուր ունիմ ուտե-
33 լու՝ որ դուք չէք գիտեր ։ Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու . Արդեօք մէկը ուտելու բան
34 մը բերա՞ւ ։ Ցիսուս ըսաւ անոնց . Իմ կերակուրս ան է՝ որ ես զիս Հրկողին կամքը ընեմ , և անոր
35 գործը կատարեմ ։ Չէ՞ որ դուք կ'ըսէք Թէ , Ցակաւին չորս ամիս կայ՝ որ Հունձքի ատենը գայ . Հապա ես ձեզի կ'ըսեմ , Աչքերնիդ վերցուցէք՝ ու արտերուն նայեցէք ,
36 Որ արդէն ճերմակած են ։ Ընդ ան որ կը հնձէ՝ վարձք կ'առնէ , ու յաւիտենական կենաց համար պտուղ կը ժողվէ , որ սերմնացանը ու հնձողը միասին
37 ուրախանան ։ Վասն զի աս բանիս մէջ ճշմարիտ է ան խօսքը Թէ , Ուրիշը կը սերմանէ , և ուրիշը կը
38 հնձէ ։ Ես ձեզ խրկեցի հնձելու ան որ դուք չաշխատեցաք . ուրիշները աշխատեցան , ու դուք անոնց աշխատանքին մէջ մտաք ։
39 Եւ ան քաղաքէն շատ Սամարացիք իրեն Հաւատացին ։ ան կնկանը խօսքին համար որ վկայեց ; Թէ՝ Ինչ որ ես գործեր էի , բոլո-
40 ը ինծի ըսաւ ։ Ու երբոր Սամա-

Ցամք Տեառն 30

Ե Ես . բ . 3 ։ Ղու . իդ . 47 ։ Հռով . ԺԹ . 4 , 5 ։
Ե Փիլ . գ . 3 ։ Ա Գր . ա . 17 ։
Հբկոր . գ . 17 ։
Ա Գծ . 29 , 39 ։
Ղ Գր . Թ . 37 ։ Մատ . իշ . 63 , 64 ։ Մար . ժգ . 61 , 62 ։
Ե Ես . ժբ . 3 ։ Ղ . 3 ։ Երեմ . բ . 13 ։ Զաք . ժգ . 1 ։ ժգ . 8 ։
Ղ Գր . է . 38 ։
Ե Տես գԼ . է . 34 ։ Հռով . է . 23 ։ ա Ցովհ . ե . 20 ։
Ա Ցծր . իդ . 12 ։ Գ . է . 38 ։ ժԷ . 4 ։ ժԹ . 30 ։
Ղ Ա Մատ . Թ . 37 ։ Ղու . ժ . 2 ։
Ն Դան . ժբ . 3 ։
Ղ Ա Ցծր 29 ։
Ղ Դ Թագ . ժԷ . 29 ։
Ղ Դ Թագ . ժԷ . 24 ։ Ղու . Թ . 52 , 53 ։ Գար . ժ . 28 ։
Ե Ղ Ա Ցծր . իդ . 16 ։ Իդ . 19 ։ Գ . է . 14 ։ է . 40 ։
Ը Դատ . Թ . 7 ։ ժբ Օր . ժբ . 5 , 11 , գ Թագ . Թ . 8 , բ Մն . է . 12 ։
Ե Մաղ . ա . 11 ։ ա Տիմ . բ . 8 ։

Ցամ Տեառն 30

րացիք անոր եկան կ'աղաչէին անոր որ իրենց գովը կենայ . ու երկու օր
41 Հոն կեցաւ : Եւ ալ շատերը իրեն հաւատացին իր խօսքին համար ;
42 Ու կ'ըսէին կնկանը . Ասկէ ետև չենք թէ քու խօսքիդ համար կը հաւատանք . ինչու որ մենք մեզմէ լսեցինք , և գիտենք որ ատիկայ է ճշմարտապես աշխարհի Փրկիչը՝ Քրիստոսը :
43 Ու երկու օրէն ետև ելաւ անկէ՝
44 և գալիլեա գնաց : Ինչու որ Յիսուս ինքը վկայեց թէ , Մարգարէ մը իր գաւառին մէջ պատիւ չունի՝
45 նար : Ու երբոր գալիլեա եկաւ , գալիլեացիները զինքը ընդունեցին . Ինչու որ տեսած էին ան բոլոր հրաշքերը՝ որ ինքը րրաւ Երուսաղէմի մէջ տօնինատենը . Վասն զի իրենք ալ ան տօնին գացեր էին :
46 Եւ Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց Կանայ քաղաքը , ուր որ ջուրը գինի րրած էր . ԵՒ հոն ազնուական մէկը կար , որուն որդին հիւանդ էր Կափառնայումի մէջ :
47 Ասիկայ լսելով որ Յիսուս Հրեաստանէն գալիլեա եկեր է , եկաւ անոր ու կ'աղաչէր որ իջնէ և իր որդին բժշկէ . Ինչու որ մեռնելու վրայ էր :
48 Յիսուս ըսաւ անոր . Թէ որ նշաններ ու հրաշքներ չտեսնէք , բնաւ պիտի չհաւատաց
49 տաք : Ազնուականը ըսաւ անոր . Տէր՝ իջիր քանի որ իմ տղաս մեռած չէ :
50 Յիսուս ըսաւ անոր . Գնա , քու որդիդ ողջ է . Մարդն ալ հաւատաց ան խօսքին որ Յիսուս իրեն ըսաւ , ու գնաց :
51 Ու երբոր կ'իջնէր , իր ծառաները դիմաւորեցին զինքը , և աւետիս տուին ըսելով թէ , Քու տղադ ողջ է :
52 Ուստի հարցուց անոնց թէ որ ժամին սկսաւ աղեկի դառնալ . և ըսին իրեն . Երէկ ժամը եօթնին տենդը թողուց զանիկայ :
53 Ան ատենը գիտցաւ անոր հայրը թէ ան ժամն էր , որ Յիսուս իրեն ըսաւ թէ , Քու որդիդ ողջ է . ու հաւատաց ինքը և իր բոլոր տունը :
54 Սա նորէն երկրորդ հրաշքն է որ Յիսուս րրաւ , երբոր Հրէաստանէն գալիլեա եկաւ :

ԳԼ . Ե

Ցամ Տեառն 30

ՈՒԱՍ . ԺԷ . 8 ։ ա Ցօհ . գ . 14 ։

ՂՄատ . ԺԳ . 57 ։ Մար . ը . 4 ։ Ղու . գ . 24 ։

ԳԼ . Բ . 23 ։ Գ . 2 ։

Ը Օր . Ժգ . 16 ։

ԲԳԼ . Բ . 1 ։ 11 ։

ՈՒԱ Կոր . ա . 22 ։

ԲԼև . Իգ . 2 ։ Բ Օր . Ժգ . 1 ։ ԳԼ . Բ . 13 ։ Ցա . Տ . 31

1 Յիսուս երուսաղէմի մէջ ի վեր հիւանդ եղող մարդը կը բժշկէ շաբաթ օրը ։ 10 Հրեայք ասոր վայով տրտունջ կ'ընեն , ու կը հալածեն զՔրիստոս ։ 17 Ան ալ իր անձին համար պատասխան կու տայ Հրեաներուն , ու զանոնք կը յանդիմանէ . և իր Հօրը ։ 32 ու Ցովհաննէսին , 36 և իր գործքերուն , 39 ու Սուրբ Գրոց վկայութիւններովը՝ իր ո՛վ ըլլալը կը յայտնէ ։

1 Ետև սկսեր եւև Հրէից տօն էր . և Յի-
2 սուս Երուսաղէմ ելաւ ։ Ու Երուսաղէմի մէջ Ոչխարաց դրանը քով աւազան մը կայ , որ Եբրայեցերէն Բեթհեզդա կ'ըսուի , որ
3 հինգ սրահ ունի ։ Ասոնց մէջ խիստ շատ հիւանդները պառկած էին , կոյրեր՝ կաղեր՝ չորցածներ , որոնք կը սպասէին ջուրին խառնուելուն ։ Վասն զի հրեշտակ մը ժամանակ ժամանակ աւազանը կ'իջնէր , ու ջուրերը կը խառնէր . և ով որ ջուրին խառնուելէն ետև պինտ առաջ անոր մէջը կը մտնէր , կը բժշկուէր՝ ինչ հիւանդութիւն
5 որ ունենար ։ Եւ հոն մէկ մարդ մը կար , որ երսունուութը տարիէ ի վեր հիւանդութիւն մը ունէր ։
6 Յիսուս երբոր տեսաւ զանիկայ որ ինկած պառկած էր , ու գիտցաւ որ շատ ժամանակէ ի վեր է , ըսաւ անոր . Կ'ուզե՞ս առողջանալ ։
7 Հիւանդը պատասխան տուաւ անոր . Տէր՝ մարդ մը չունիմ , որ երբ ջուրերը խառնուին զիս աւազանը ձգէ . Հապա քանի որ ես ինծի կը շարժիմ , ինծմէ առաջ
8 ուրիշ մը կ'իջնէ ։ Յիսուս ըսաւ անոր . Ելիր մահիճդ առ՝ ու քա-
9 լէ ։ Եւ իսկոյն մարդը առողջացաւ , ու իր մահիճը վերցնելով կը քալէր . Բայց այն օրը շաբաթ էր ։
10 Ան ատենը Հրէաները ըսին բժշկուած մարդուն . Շաբաթ է , Հ-ը արժան չէ որ մահիճդ վերցնես ։
11 Պատասխան տուաւ անոնց ՝ Ը-ն . Ան որ զիս բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ . Մահիճդ առ՝ ու քալէ ։
12 Ուստի հարցուցին անոր . Ո՞վ է ան մարդը որ քեզի ըսաւ , Մահիճդ
13 առ՝ ու քալէ ։ Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ով է ան . Ինչու որ Յիսուս մէկդի քաշուեցաւ՝ ան տեղը
14 բազմութիւն ըլլալուն համար ։ Անկէ ետքը Յիսուս զանիկայ տաճարին մէջ գտնելով ըսաւ անոր . Ահա բժշկուեցար , Ալ մեղք մի՛ գործեր , որ ալ աւելի չար բան մը
15 չպատահի քեզի ։ Գնաց մարդը , ու Հրէաներուն պատմեց , թէ Յիսուս էր որ զինքը բժշկեց ։
16 Եւ ասոր համար Հրէաները կը հալածէին Յիսուսը , և կը փընտռէին զանիկայ սպաննել , որ աս
17 բաները շաբաթ օրը կ'ընէր ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց . Իմ Հայրս մինչև հիմա կը գործէ ,
18 ես ալ կը գործեմ ։ Ընաոր համար՝ ալ աւելի կը փնտռէին Հրէաները զանիկայ սպաննել . վասն զի չէ թէ միայն շաբաթ օրը կը լուծէր , հապա նաև զԱստուած իր Հայրը կ'անուանէր , Ը ու այսպես ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր ։
19 Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու

Ցամ Տեառն 31

Ը ՆԵԵՄ . գ . 1 ։ Ժ . 39 ։

ՄԱՏ . Թ . 6 ։ Մար . ը . 11 ։ Ղու . ե . 24 ։ ԲԳԼ . Ժ . 14 ։

ՅԼ . ի . 10 ։ ՆԵԵՄ . Ժգ . 19 ։ ԵՐԵՄ . ԺԷ . 21 , ՃԷ ։ Մատ . Ժբ . 2 ։ Մար . ը . 24 ։ գ . 4 ։ Ղու . գ . 2 ։ Ժգ . 14 ։

ՂՄատ . Ժբ . 45 ։ ԳԼ . ը . 11 ։

ԼԳԼ . Թ . 4 ։ Ժգ . 10 ։ ՃԳԼ . Է . 20 ։

ՒԳԼ . Ժ . 30 ։ 33 ։ ՓԼ . ը . 6 ։

Յաղի Տեառն 31

ՃՀմր. 30· ԳԼ· ր 28· ի 4· ժր· 49· ժգ· 10·

Ի Մատ· գ· 17· ԳԼ· գ· 35· ր Պետ· ա· 17·

ԼՂու· է· 14· ը· 54· ԳԼ· ժա· 25, 43·

Ի Մատ. ժա· 27· իը· 18· ՀՃր 27· ԳԼ· գ· 35· ժէ· 2· Գոր. ժէ· 31· ա Պետ· գ· 5·

Ժա Ցօհ· բ· 23·

Ի ԳԼ· գ· 16· 18· ը· 40· 47· ր· 51· ի· 31·

Հա Ցօհ· գ· 14·

ՅՀՃր 28· Եփե· բ· 1· 5· 6· 14· Պղ· բ· 13·

ՊՀՃր 22· Գոր. ժ· 42· ժէ· 31·

Ճ Դան. է. 13, 14·

Ժէ. իգ· 19· ա Պոր· ժէ· 52· ա Թես· գ· 15·

Յ Դան· ժը· 2· Մատ· իե· 32· 33· 46·

Ն ՀՃր 19·

ԷՄատ· իզ· 39· ԳԼ· գ· 34· ը· 38·

*Ո՞Համն՝Հօրը

*ԳԼ· ը· 14· Ցայտ· գ· 14·

ԷՄատ· գ· 17· ժէ· 5· ԳԼ· ը· 18· ա Ցօհ· է· 6, 7, 9·

*ԳԼ· ա· 15, 19, 27, 32·

բաւ· անոնց ՃՀմարիտ ՃՀմարիտ կ'ըսեմ ձեզի, Ո՞րդին ինքիրմէն բան մըն ալ չկրնար ընել. միայն թէ ինչ որ տեսնէ որ Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկայ կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ։

20 Ինչու որ Հայրը կը սիրէ Որդին, և ամէն բանը կը ցուցընէ անոր՝ ինչ որ ինքը կ'ընէ. և աւտնցմէ ալ աւելի մեծ գործքեր պիտի ցուցընէ անոր, որպէս զի դուք զար-

21 մանաք։ Վասն զի ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ՝ ու կենդանի կ'ընէ, նմանակ ալ Որդին որոնք որ կ'ուզէ կը կենդանաց-

22 ընէ։ Քանզի Հայրը մէկը չդատեր, հապա ամէն դատաստանը

23 Որդիին տուաւ. Որ ամէնը պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն. Ծան որ Որդին չպատուեր, զանիկայ խրկող Հայրը

24 չպատուեր։ ՃՀմարիտ ՃՀմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Ան որ իմ խօսքըս մտիկ կ'ընէ, և կը հաւատայ անոր՝ որ զիս խրկեց, յաւիտենական կեանք ունի, ու դատապարտութեան տակ չկ'ելնար, հապա մահուանէ դէպ ի կեանք անցած

25 է։ ՃՀմարիտ ՃՀմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ պիտի գայ և ալ հիմա է, Ո՛ր ան ատենը մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդւոյն ձայնը. և անոնք որ կը լսեն, պի-

26 տի ապրին։ Վասն զի ինչպէս որ Հայրը իր անձին մէջը կեանք ունի, անանկ ալ Որդիին տուաւ որ իր

27 անձին մէջը կեանք ունենայ. Ընէ դատաստան ընելու ալ իշխանութիւն տուաւ անոր, քանզի անի-

28 կայ Որդի մարդոյ է։ Ասոր վրայ մի՛ զարմանաք. ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայ-

29 նը պիտի լսեն, Ո՛ւ դուրս պիտի գան. Ոմանք որ բարի գործեր ևն, կենաց յարութեան համար, և ա-

նոնք որ չար գործեր են, դատապարտութեան յարութեան հա-

30 մար։ Ընէ ինքիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ՝ ա-նանկ կը դատեմ, և իմ դատաստանս արդար է. ինչու որ ընէ իմ կամքս չեմ փնտռեր, հապա *անոր

31 կամքը որ զիս խրկեց։ *Թէ որ ես ինծի համար վկայեմ, իմ վկա-

32 յութիւնս ճշմարիտ չէ։ Ուրիշ մըն է որ ինծի համար կը վկայէ. և ես գիտեմ որ ճշմարիտ է ան վկայութիւնը՝ որ ինքը ինծի համար

33 վկայեց։ Դուք Յովհաննէսին իրը-կնկիք, ու ինքը ճշմարտութեա-

34 նը վկայեց։ Բայց ես չէ՛ թէ մարդոյմէ վկայութիւն կ'առնեմ. հապա ասոնք կ'ըսեմ որ դուք

35 փրկուիք. Անիկայ ճրագ մըն էր որ կը վառէր, Ընու լոյս կուտար. *և դուք փիլ մը ատեն ուզեցիք ա-

36 նոր լուսովը ուրախանալ։ *Բայց ես Յովհաննէսին վկայութենէն աւ մեծ վկայութիւն ունիմ, քանզի Հան գործքերը որ Հայրը ինծի տուաւ որ անոնք կատարեմ, ան նոյն գործքերը որ ես կը գործեմ՝ ինծի համար կը վկայեն թէ Հայրը զիս

37 խրկեց։ Ու Հայրը որ զիս խրկեց, *ինքը վկայեց ինծի համար. դուք բնաւ անոր ձայնը չլսեցիք, ե՛ոչ

38 ալ անոր կերպարանքը տեսաք. Եւ ոչ անոր խօսքը ձեր մէջը բնակած ունիք. քանզի ան որ ինքը խրկեց,

39 դուք անոր չէք հաւատար։ Ո՞գիրքերը քննեցէ՛ք. ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ. *և բուն անոնք են որ ինծի համար կը վկա-

40 յեն. Եւ դուք չէք ուզեր ինծի

41 գալ, որ կեանք ունենաք։ *Ես մարդոցմէ փառք չեմ առներ։

42 Բայց գիտեմ ձեզ որ Աստուծոյ

43 սէրը ՄՁԷրնիդ չունիք։ Ես իմ Հօրս անունովը ևկայ, ու զիս չէք ընդունիր. Թէ որ ուրիշ մէկը իր անունովը գայ, անիկայ պիտի

44 ընդունիք։ *Դուք ինտո՞ր կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք. Ձև ան փառքը որ մէկ Աս-

45 տուծմէն է, չէք փնտռեր։ Մի՛ կարծէք թէ ես ձեզի համար մեղադրութիւն պիտի ընեմ Հօրը. *կայ մեկը որ ձեզի համար ամբաստանութիւն կ'ընէ, Մովսէսը՝ ո-

46 րուն դուք յուսացած էք։ Վասն զի թէ որ դուք Մովսէսին հաւատայիք, ինծի *ալ պիտի հաւատայիք. Ընչու որ անիկայ ինծի հա-

47 մար գրեց։ Բայց թէ որ անոր գրածներուն չէք հաւատար, իմ խօսքերուս ինտո՞ր պիտի հաւատաք։

ԳԼ· Զ

1 Ք՚ետքը հինգ հազար հոգի կը կերթակրէ հինգ հացով ու երկու ձուկով· 15 ու բանիս վրայ մարգիկ կ'ուզեն թագաւոր ընել զանիկայ· 16 բայց Ցիսուս անոնց քովէն ետ կը քաշուի, ու ծովուն վրայ քալելով՝ իր աշակերտներուն կ'երևայ· 26 կը յանդիմանէ իր բոլորիքը դիզուողները, ու ամէն մարդկուս որ շահու համար իր խօսքը մտիկ ընողները· 32 կը ցուցընէ թէ ինքը հոգևոր կերակուր է հաւատացեալներուն· 66 Շատ աշակերտներ իրմէն կը զատուին· 68 Պետրոս կը դատնի գՑիսուս· 70 Ցուդան սատանայ կ'անուանի։

1 *Յ՚ետ բաներէն ետքը Ցիսուս Գալիլեայի այսինքն Տիբերիայի

2 ծովուն անդին կողմը գնաց· Եւ անոր ետևէն շատ ժողովուրդ կ'երթար. ինչու որ կը տեսնէին ան հրաշքները՝ որ հիւանդներուն վրայ

Յաղի Տեառն 31

Լ ր Պետ· ա· 19·

*Մատ· ժգ· 20· Յհ· 26· Մար· գ· 20·

*ա Ցօհ· ե· 9·

ՀԳԼ· գ· 2· ժ· 23· ժե· 24·

*Մատ· գ· 17· ժէ· 5· ԳԼ· գ· 27· ը· 13·

ր Բ Օր· գ· 12· ԳԼ· ա· 18· *Տիմ· ա· 17· ա Ցօհ· գ· 12·

ԺԵ· ը· 20· ԼԹ· 16· ՂԼ· ժգ· 29· ՀՃր 46· Գոր· ժէ· 11·

*ր Օր· ժը· 15· 18· ՂԼ· իգ· 27· ԳԼ· ա· 45·

Է ԳԼ· ա· 11· գ· 19·

+ՀՃր 34· ա Թես· բ· 6·

*ԳԼ· ժը· 43·

Ջ Հռով· բ· 29·

*Հռով· բ· 12·

Բ Ծն· գ· 15· ժը· 3· ժը· 18· իբ· 18· խթ· 10· Ր Օր· ժը· 15, 18· ԳԼ· ա· 45· Գոր· իզ· 22·

Ցա· Տ· 32

*Մատ· ժգ· 13· Մար· գ· 32· Ղու· թ· 10· 12·

Ցամք Տեառն 32

Բ Կրն. իդ. 3, 7 ։ Բ Օր. ժզ. 1 ։ Գլ. բ. 13 ։ ե. 1 ։ Մատ. ժգ. 14 ։ Մար. գ. 35 ։ Ղկս. թ. 12 ։

Բ Տես Թագ. ժա. 21, 22 ։

Ե Թագ. գ. 43 ։

Ես. խթ. 10 ։ Բ Օր. ժը. 15, 18 ։ Մատ. ժա. 3 ։ Գլ. ա. 21 ։ գ. 19 ։ 25 ։ ե. 40 ։ Ի Մատ. ժգ. 23 ։ Մար. գ. 47 ։

3 կ'ընէր ։ Եւ Յիսուս լեռը ելաւ, ու հոն նստաւ իր աշակերտներուն
4 հետ միասին ։ Եւ Հրէից զատկի տօնը մօտ էր ։
5 Յիսուս երբոր իր աչքերը վեր վերցուց, ու տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն, ըսաւ Փիլիպոսին. Ո՞ւրկից հաց ծախու
6 առնենք որ ատոնք ուտեն ։ (Եւ ասս կ'ըսէր զանիկայ փորձելու համար. քանզի ինքը գիտէր ինչ
7 պիտի ընէր ։) Փիլիպպոս պատասխան տուաւ անոր. Երկու հարիւր դահեկանի հաց ատոնց հերիք չէ, որ ամէն մէկը քիչ մը
8 առնէ ։ Իր աշակերտներէն մէկը՝ Սիմոն Պետրոսին եղբայրը Անդ-
9 րեասը՝ ըսաւ իրեն. Հոս մէկ պատանի մը կայ, որ հինգ գարեղէն հաց ու երկու ձուկ ունի. Բայց
10 անոնք ի՞նչ պիտի ըլլան այդչափ մարդոց ։ Իսկ Յիսուս ըսաւ. Նստեցուցէք ատ մարդիկը. և ան տեղը շատ խոտ կար, ու մարդիկը նստան թուով հինգ հազարի չափ ։
11 Եւ Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ, և աշակերտներուն բաժնեց. աշակերտներն ալ նստողներուն. նոյնպէս ալ ձուկերէն որչափ
12 որ ուզեցին ։ Ու երբոր կշտացան, ըսաւ իր աշակերտներուն. Ժողվեցէ՛ք աւելցած կտորուանքները՝
13 որ բան մը չկորսուի ։ Ուստի ժողվեցին, և տասուերկու կողով լեցուցին ան հինգ գարեղէն հացերէն ճաշած կտորուանքները, որ ու-
14 տողներէն աւելցաւ ։ Իսկ մարդիկը երբոր Յիսուսին ըրած հրաշքը տեսան, կ'ըսէին Թէ, Ա-սիկայ է ճշմարտապէս ան Ը մար-
15 գարէն՝ որ աշխարհ պիտի գար ։ Եւ Յիսուս գիտնալով որ պիտի գան զինքը յափշտակեն՝ որ զինքը թագաւոր ընեն, նորէն մինակ լեռը
16 գնաց ։ Ու երբոր իրիկուն եղաւ, իր աշակերտները ծովեզերքը իջան.
17 Եւ նաւը մտնելով՝ ծովուն մէկալ կողմը կափառնայում կ'երթային. Ա արդէն մութը կոխեր էր, ու Յիսուս դեռ իրենց եկած չէր.
18 Ծովն ալ հովին սաստիկ փչելէն
19 տակնուվրայ կ'ըլլար ։ Ու երբոր Թէ քաշելով քսան՝հինգ կամ երսուն ասպարէզի չափ գացին, տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն քալելով՝ նաւուն կը մօտենար, ու
20 վախցան ։ Բայց ինքը ըսաւ ա-
21 նոնց. Ես եմ՝ մի՛ վախնաք ։ Ան ատենը ուզեցին զանիկայ նաւը առնել. և շուտ մը նաւը ան երկիրը հասաւ՝ ուր որ կ'երթային ։
22 Հետևեալ օրը՝ ժողովուրդը որ ծովուն մէկալ կողմն էր, և տեսակ

Ցամք Տեառն 32

Ը Մր. 55 ։ Գլ. գ. 14 ։

Ի Մատ. գ. 17 ։ ժէ. 5 ։ Մար. ա. 11 ։ Թ. 6 ։ Ղկս. գ. 22 ։ Թ. 35 ։ Գլ. ա. 33 ։ ե. 37 ։ Ը. 18 ։ Գործ. Բ. 22 ։ Բ Պետ. ա. 17 ։

Ա ած Ճն. գ. 23 ։

Ի Մատ. ժբ. 38 ։ ժգ. 1 ։ Մար. Բ. 11 ։ Կոր. ա. 22 ։

Ա Եզ. ժգ. 15 ։ Թուս. ժա. 7 ։ Նէեմ. Թ. 15 ։ ա Կոր. ժ. 3 ։

Ի Սաղ. Ղբ. 24, 25 ։

Ծ Տես գԼ. գ. 15 ։

Ձ Ժմ. 48, 59 ։ Հ Գլ. գ. 14 ։ ե. 37 ։

Յ Ժմ. 26, 65 ։ Ղ Ժմ. 45 ։

Ճ Մատ. իդ. 24 ։ Գլ. ժ. 28, 29 ։ Բ Տիմ. Բ. 19 ։ ա Ճն. բ. 19 ։

Մ Մատ. իզ. 39 ։ Գլ. ե. 30 ։

Յ Գլ. գ. 34 ։

էր որ ուրիշ նաւակ չկար հոն ան մէկէն՝ի զատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտեր էին. և որ Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակը մտած չէր, հապա մինակ անոր աշակերտները գացեր էին.
23 (Բայց Տիբերիային ուրիշ նաւակներ եկան ան տեղին մօտ՝ ուր որ Տէրոջը գոհանալովը հացը կերեր
24 էին.) Ան ատենը ժողովուրդը տեսնելով Թէ ոչ Յիսուսը հոն է, ոչ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւերը մտան՝ ու եկան կափառնայում Յիսուսը փնտռելու։
25 Ու երբոր անիկայ ծովուն մէկալ դին գտան, ըսին անոր. Ռաբբի՝
26 երբ եկար դուն հոս։ Յիսուս պատասխան տուաւ անոնց՝ և ըսաւ. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Դուք զիս կը փնտռէք՝ չէ՛ Թէ անոր համար որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար որ հացերէն կերաք
27 ու՛ կշտացաք ։ Գործէ՛ք գործեցէք՝ չէ՛ Թէ կորստական կերակուրին համար, Էապա ան կերակուրին համար՝ որ յաւիտենական կենաց մէջ կը մնայ, որ անիկայ Որդին Մարդոյ ձեզի պիտի տայ. Ո՛ինչու որ Հայր Աստուած զանիկայ կնքեց ։
28 Ան ատենը ըսին անոր. Ի՞նչ ընենք՝ որ Աստուծոյ գործքերը գործենք ։
29 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց. Ա՛յս է Աստուծոյ գործը, որ անոր խրկածին հաւատաք ։
30 Ըսին անոր. Բայց դուն ի՞նչ նշան կ'ընես՝ որ տեսնենք ու քեզի հաւատանք. ի՞նչ կը գործես ։
31 Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան, ինտոր որ գրուած է. Երկինքէն հաց տուաւ անոնց՝
32 որ ուտեն ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի Ճշմարիտ երկնաւոր
33 հացը։ Ինչու որ Աստուծմէ պատրաստ հացը ան է՝ որ երկինքէն կ'իջնէ, ու աշխարհիս կեանք կու տայ ։
34 Ուստի ըսին անոր. Տէ՛ր՝ ամէն ա-
35 տեն ատ հացը մեզի տուր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց. Ես եմ կեանց հացը. հան որ ինծի կու գայ, երբէք պիտի չանօթենայ. և ան որ ինծի կը հաւատայ, պիտի չծարաւ-
36 ի։ Բայց ես ձեզի ըսի, որ դուք զիս տեսաք ալ՝ ու չէք հաւատար ։
37 Ամէն որ Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ. և ան որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի
38 չհանեմ ։ Ինչու որ ես երկինքէն իջայ, ո՛չ Թէ իմ կամքս ընելու, հապա անոր կամքը՝ որ զիս խրկեց,
39 Եւ զիս խրկող Հօրը կամքը աս է

Ցոմի Տեառն 32

ՆԳԼ · Ժ · 28։ ՓՁ · 12 · ՓԸ · 9։ Ա ՀՈՐ 27 · 47 · 55 · ԳԼ · Գ · 15 · 16 · Դ · 14։

որ , Նա ամէնը որ ինքը ինծի տուաւ չկորսընցնեմ անկէ , հապա անոր յարուԹիւն առնել տամ 40 վերջին օրը ։ Քանզի սա խորհուրդն կամքը աս է , որ Նա ամէնը որ կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր , յաւիտենական կեանք ունենայ . ես ալ անոր յարուԹիւն առնել տամ վերջին օրը ։

41 Ուստի Հրէաները տրտունջ կ'ընէին իրեն համար , ինչու որ ըսաւ ԹԷ , Ես եմ երկինքէն իջած հացը .

ՄԱՇ · Ժ · 55 · ՄԱՐ · Ղ · 3 · ՂՈՒ · Դ · 22։

42 Եւ կ'ըսէին . Ասիկայ Յովսէփին որդին Յիսուսը չէ՞ , որուն հայրը ու մայրը մենք կը ճանչնանք . ուրեմն ինչպէս կ'ըսէ ասիկայ ԹԷ ,

43 Ես երկինքէն իջայ ։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց .

ԵՐՔ · Ա · 4 · ՀԱՐ 66։

44 Տրտունջ մի՛ ընէք մէջերնիդ ։ Ոմէն կը չկրնար ինծի գալ , ԹԷ որ զիս խրկող Հայրը անիկայ չգաչէ . ու ես անոր յարուԹիւն առնել պիտի

ՂԵՒ · ԾԴ · 13 · ԵՐԵՄ · Լ · 34 · ՄԻՔ · Զ · 2 · ԵՒՐ · Ը · 10 · Ժ · 16 ·

45 տամ վերջին օրը ։ Պարգարէից մէջ գրուած է . Եւ ամէնքն ալ Աստուծմէ սորված պիտի ըլլան . Ան ամէնը որ Հօրմէն կը լսէ ու

ԵՂԻՍ · ԳԼ · Ա · 37 · ՄԱՇ · ԺԱ · 27 · ՂՈՒ · Ժ · 22 · ՅՈՎ · Ա · 18 · Է · 29 · Ը · 19 ·

46 կը սորվի , ինծի կու գայ ։ Ոչ ԹԷ Մկը Հայրը տեսած է , Եթէ ոչ ան որ Աստուծմէն է , անիկայ

ՂԳԼ · Ա · 16 · 18 · 36 · ՀԱՐ 40 ·

ՈՒ · Գ · 18 · ՀԱՐ 33 · 35 · ԲՀԱՐ 31 ·

47 Հայրը տեսած է ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , ԹԷ Ան որ ինծի կը հաւատայ , յաւիտենական

ՅՀԱՐ 51 · 59 · ՂԳԼ · Գ · 13 · ՅԵՐԵ · Ժ · 5 · 10 ·

48 կեանք ունի ։ Ես եմ կենաց հաց

49 ձը ։ Ձեր հայրերը անապատին մէջ մանանան կերան , ու մեռան ։

ՅԳԼ · Գ · 50 Ես է ան հացը որ երկինքէն կ'իջնէ , որ Եթէ մէկը ասկէ ուտէ ,

51 պիտի չմեռնի ։ Ես եմ կենդանի հացը՝ որ երկինքէն իջայ ։ Թէ որ մէկը աս հացէն ուտէ , յաւիտեան պիտի ապրի . Եւ ան հացը որ ես պիտի տամ՝ իմ մարմինս է , որ ես պիտի տամ աշխարհիս կենացը համար ։

ՓԳԼ · Է · 43 · ԹԱՒ · 16 · Ժ · 19 ·

53 Ասոր վրայ Հրէաները իրարու հետ կը վիճէին՝ ու կ'ըսէին . Ինչո՞ր կրնայ ասիկայ էր մարմինը մեզ

ՕԳԼ · Գ · 9 ·

54 ի տալ ուտելու ։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , ՖԹԷ որ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք , և անոր արիւնը չխմէք , ձեր անձերուն մէջը

ՖՄԱՇ · ԻԷ · 26 · 28 ·

55 կեանք չէք ունենար ։ Ով որ իմ մարմինս ուտէ , և իմ արիւնս խմէ , յաւիտենական կեանք կ'ունենայ , ու ես անոր յարուԹիւն առնել

ՀԱՐ 27 · 40 · 64 · ԳԼ · Գ · 13 · 14 ·

56 պիտի տամ վերջին օրը ։ Ինչու որ իմ մարմինս Ճշմարիտ կերակուր է , և իմ արիւնս Ճշմարիտ ըմպելիք

ԲՈՒՆ · Գ · 24 · Դ · 15 · 16 ·

57 է ։ Ան որ իմ մարմինս կ'ուտէ , և իմ արիւնս կը խմէ , Բանիկայ իմ Ներսի դիս կը բնակի՝ ու ես ա-

58 նոր Ներսի դին ։ Ինչպէս որ կեն-

դանի Հայրը զիս խրկեց , ու ես կենդանի եմ Հօրը ձեռքովը , այնպէս ալ ան որ զիս կ'ուտէ , ինքն ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ ։

59 Ա՛ս է ան հացը՝ որ երկինքէն իջած է . չէ ԹԷ ինտոր որ Հայրերնիդ մանանան կերան՝ ու մեռան . ով որ աս հացը ուտէ , յաւիտեան պիտի ապրի ։

60 Ա՛ս բաները զրուցեց ժողովարանին մէջը՝ երբոր Կափառնայումի մէջ կը սորվեցընէր ։

61 Ո՞ւ աշակերտներէն չատերը երբոր լսեցին , ըսին . Խիստ էատ խօսքը , ո՞վ կրնայ ատոր մտիկ ը-

62 նել ։ Յիսուս երբոր ինքնիրմէնը հասկըցաւ , որ իր աշակերտները ան բանին համար տրտունջ կ'ընեն , ըսաւ անոնց . Ատիկայ ձեզ կը դայ-

63 ԹԱԿՈՑԸՆԵ՞ ։ Հապա Ի՞նչ Ղէ-Ի Ը-ՐՀՏԻ , ԹԷ որ տեսնէք Որդին մարդոյ որ ելլէ ուր տեղ որ առաջ

64 էր ։ Հոգին է կենդանի ընողը , մարմինը շահ մը չըներ . ան խօսքերը որ ես ձեզի Խօսեցայ , Հոգի

65 ու կեանք են ։ Բայց ձեր մէջէն կան ոմանք որ չեն հաւատար . Ինչու որ Յիսուս սկիզբէն գիտէր ԹԷ ով են անոնք որ չեն հաւատար , և ով է ան որ զինքը պիտի մատնէ .

66 Ու կ'ըսէր . Ասոր համար ձեզի ըսի , որ Մկը չկրնար ինծի գալ , ԹԷ որ իմ Հօրմէս տրուած չըլլայ անոր ։

67 Ա՛ս պատճառով իր աշակերտները շատերը ետ գացին , և ալ իր

68 Հետը չէին պտըտեր ։ Անատենը Յիսուս տասներկուքին ըսաւ . ՄիԹէ դուք ալ կ'ուզէք երթալ ։

69 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր . Տէր՝ որո՞ւ պիտի երթանք , Դուն յաւիտենական կենաց խօս-

70 քեր ունիս ։ Եւ մենք հաւատացինք ու գիտցանք՝ ԹԷ դուն ես Քրիստոսը Աստուծոյ Որդին ։

71 Յիսուս պատասխան տուաւ անոնց . Ես ձեզ տասներկուքդ չընտրեցի՞ , Բայց ձեզմէ ալ Մկը սատանայ է ։

72 Ան կ'ըսէր Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային համար . Ինչու որ անիկայ էր , որ զինքը պիտի մատնէր , ու տասներկուքէն Մկն էր ։

ԳԼ · Է

1 Յիսուս կը յանդիմանէ իր ազգականներուն փառասիրութիւնը և յանդգնութիւնը · 10 Գաղիլեացին Երուսաղէմ կ'երթ տագաւարաշաբաց տօնին · 14 տաճարին մէջ կը սորվեցնէ · 40 Ժողովրդոց զանազան կարծիքները Քրիստոսի վրայով · 45 Փարիսեցիք կը բարկանան իրենց սպասաւորներուն՝ զանիկայ չբռնելնուն համար , և կը յանդիմանեն Նիկոդեմոսը՝ որ Յիսուսի կողմն կը բռներ ։

1 Ետ ասոնց բաներէն ետև Յիսուս Գալիլեայի մէջ կը պտըտէր . ին-

Ցոմի Տեառն 32

ՅԱՐ 49 , 50 , 51 ։

Ք ՀԱՐ 67 · ՄԱՇ · ԺԱ · 6 ։

ԲԳԼ · Գ · 13 · ՄԱՐ · ԺԲ · 19 · ԳՈՐ · Ա · 9 · ԵՓԵ · Դ · 8 · ՂՐ ԿՈՐ · Գ · 6 ։

ՈՒՂԻ կը խօսիր .

Ե ՀԱՐ 36 ։

ԸԳԼ · Բ · 24 · 25 · ԺԳ · 11 ·

ՐՀԱՐ 44 , 45 ։

ՅՀԱՐ 61 ։

Ցամք Տեառն
32

չ՚ու որ չէր ուզեր Հրէաստանի մէջ պտըտիլ, ՝վասն զի Հրէաները զինքը սպաննել կ՚ուզէին։

2 Բեւ Հրէաներուն տաղաւարաց կոչ գիրքերը մօտ էր։ 3 Հարաց տօնը մօտ էր։ Ետքը որ ասոնք կէ՝ ու Հրէաստան գնա, որ քու աշակերտներդ ալ տեսնեն քու 4 գործերդը որ կ՚ընես. Ինչու որ մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինքը յայտնի ըլլալ ուզէ. Թէ որ դուն այս բաները կ՚ընես, ինքզինքդ աշխարհին յայտնէ։ 5 Քանզի իր եղբայրներն ալ չէին

Ա Մար. գ. 21։

6 հաւատար իրեն։ Իսկ Ցիսուս ըսաւ անոնց. Իմ ժամանակս դեռ հասած չէ. բայց ձեր ժամանակը

Ա Գլ. բ. 4։ ը. 20։ Հմր. 8. 30։

7 միշտ պատրաստ է։ Աշխարհը ձեզ չկրնար ատել, բայց զիս կ՚ատէ. Ընչու որ ես անոր վրայով կը վկայեմ՝ Թէ իր գործերը չար

Ա Գլ. գ. 19։

8 են։ Դուք ելէք այս տօնիս. Ես չեմ ելլեր այս տօնիս, Ընչու որ իմ ժամանակս դեռ լցուած չէ։

Ը Գլ. բ. 20։ Հմր 6։

9 Ան ըսելով անոնց, ինքը Գալիլեա 10 ին։ Բայց երբոր իր եղբայրները ելան, յետոյ ինքն ալ ելաւ տօնին, չէ Թէ յայտնի՝ հապա գաղտուկ կերպով մը։

Ր Գլ. ժա. 56։

11 Բեւ Հրէաները տօնին ատենը կը փնտռէին զինքը՝ ու կ՚ըսէին. Ո՞ր

ժ Գլ. Թ. 16։ ժ. 19։

12 է անիկայ։ Եւ ժողովուրդին մէջ շատ չշնջիւն կար անոր վրայով. Ոմանք կ՚ըսէին Թէ, Աղէկ մարդ է. ուրիշները կ՚ըսէին, Չէ, հապա

Ա Մատ. իա. 46։ Ղուկ. է. 16։ Գլ. գ. 14։ Հմր. 40։

13 ժողովուրդը կը մոլորցնէ։ Սակայն մէկը անոր վրայով համարձակ չէր խօսեր՝ Հրէաներուն վախէն։

Ա Գլ. Թ. 22։ ժր. 42։ ժԹ. 38։

14 Իսկ երբոր տօնը կէս եղաւ, Ցիսուս տաճարը ելաւ՝ ու կը սորվեցնէր։

Ե Մատ. ժգ. 54։ Մարկ. գ. 2։ Ղուկ. դ. 22։ Գործ. բ. 7։

15 Ցրներ։ Եւ Հրէաները կը զարմանային ու կ՚ըսէին. Ինտո՞ր ասիկա գիրքերը գիտէ, որ սորված

ժ Գլ. գ. 11։ բ. 28։ ժր. 49։ ժղ. 10։ 24։

16 չէ։ Ցիսուս պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ. Իմ վարդապետութիւնս իմս չէ, հապա զիս

Ա Գլ. բ. 43։

17 խրկողինն է։ Թէ որ մէկը կ՚ուզէ անոր կամքը ընել, պիտի գիտնայ Ա. վարդապետութեանս համար՝ Թէ արդեօք Աստուծմէ՞ է, Թէ ես

Ղ Գլ. ե. 41։ ը. 50։ Ա Եր. իդ. 3։ Բ Օր. ւէ. 4։ Յօշ. ա. 17։ Գործ. է. 38։ Ա Մատ. ժբ. 14։ Մարկ. գ. 6։ Գլ. ե. 16։ 18։ ժ. 31։ 39։ ժա. 53։

18 ինքիրմէն կը խօսիմ։ Ան որ ինքիրմէն կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ. բայց ան որ զինքը խրկողին փառքը կը փնտռէ, անիկայ ճշմարիտ է, և անոր քովը ա-

Ղ Գլ. ե. 44։ ը. 18։

19 նիրաւութիւն չկայ։ Մովսէս տուաւ ձեզի օրէնքը, ու ձեզմէ

Ա Մատ. ժբ. 14։ Մարկ. գ. 6։ Գլ. է. 16։ 18։ ժ. 31։ 39։ ժա. 53։

20 մէկն ալ չպահէր օրէնքը։ Ինչ-

Ղ Գլ. բ. 48։ 52։ ժ. 20։

չ՚ես կրնար զիս սպաննել։ պատասխան տուաւ ժողովուրդը ու ըսաւ. Դուն կայ դու նեղսիրտ. ո՞վ քեզ կը փնտռէ սպաննել։

21 Պատասխան տուաւ Ցիսուս և ըսաւ անոնց. Մէկ գործ մը գործեցի, ու ամէնդդ ալ զարմացեր

22 էք։ Երդ՝ Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ. (որ չէ Թէ Մովսէսէ եր, հապա նախնիքնէրն.) ու շաբաթ օրը մարդ կը

Ծն. իէ. 10։

23 թլփատէք. Թէ որ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ՚առնէ՝ որ Մովսէսին օրէնքը չբակուի. ինծի կը բարկանաք որ Ես շաբաթ օրը

Ղ Գլ. ե. 8։ 9. 16։

24 ամբողջ մարդ մը բժշկեցի։ Ընչի երեւցածին պէս դատաստան մի՛ ընէք, հապա արդար դատաստան ըրէք։

Ղ Եր Օր. ա. 16. 17։ Առակ. իդ. 23. 24։ Գլ. ը. 15։ Յակ. բ. 1։

25 Ան ատեն Երուսաղէմացիներէն ոմանք կ՚ըսէին. Ասիկա՞ ան չէ

ա Հմր. 48։

26 որն որ կը փնտռեն սպաննել. Եւ ահա յայտնի կը խօսի, ու բան մը չեն ըսեր անոր. ՝Միթէ իշխանները գիտցած են Թէ ասիկա ճշմարտա-

Ա Մատ. ժգ. 55։ Մարկ. գ. 3։ Ղուկ. գ. 22։

27 պէս քրիստոսն է։ Սակայն մենք ասիկա գիտենք ուսկից է. բայց քրիստոսը երբոր գայ, մէկը չգի-

28 տեր ուսկից է։ Եւ Ցիսուս քանի որ կը սորվեցնէր, տաճարին մէջ աղաղակեց՝ ըսելով. Դուք ալ գիտէք, և ուսկից ըլլալս՝ կը գիտէք. Ու ես ինքիրմէս եկած չեմ. հապա ան որ զիս խրկեց, ՝ճշմարիտ է, ՝որ անիկա դուք չէք գիտեր։

Ա Գլ. ե. 32։ ը. 26։ Հռով. գ. 4։

29 Ես գիտեմ անիկա, ինչու որ ես անկէ եմ, և անիկա զիս խրկեց։

Ա Գլ. ա. 18։ ը. 55։

30 ՝Ուստի կը փնտռէին զինքը բռնել. բայց Ոմէկն ալ իրեն ձեռք չզարկաւ, ինչու որ իր ժամանակը

Ա Մատ. ժա. 27։ Գլ. ժ. 15։

31 դեռ հասած չէր։ Ու ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն, և կ՚ըսէին. Քրիստոսը երբոր գայ, աւելի նշաններ պիտի ընէ, ՝որչափ որ ասիկա կ՚ընէ։

Ա Մարկ. ժա. 18։ Ղուկ. ժԹ. 47։ ի. 19։ Հմր 19։ Գլ. ը. 37։

32 Փարիսեցիները լսեցին ժողովուրդին այս չշնջիւնը անոր վրայ. ու փարիսեցիները և քահանայապետները սպասաւորներ խըր-

Ր Հմր 44։ Գլ ը. 20։

33 կեցին, որ զանիկայ բռնեն։ Իսկ Ցիսուս ըսաւ. ՝Քիչ մը ժամանակ ալ ձեզի հետ եմ, ու կ՚երթամ՝

Ա Մատ. ժբ. 23։ Գլ. գ. 2։ ը. 30։

34 անոր՝ որ զիս խրկեց։ Իմ պիտի փնտռէք՝ ու պիտի չգտնէք. և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։

Ա Գլ. ժգ. 33։ ժղ. 16։

35 Ան ատենը Հրէաները ըսին իրարու. Ո՞ր պիտի երթայ ասիկա, որ մենք զինքը պիտի չգտնենք. միթէ *Հելլենոսաց մէջ *ցիրուցան եղածներո՞ւն պիտի երթայ, և Հելլենոսներուն պիտի սորվեցնէ։

Ա Յովե. ե. 6։ Գլ. ը. 21։ ժգ. 33։

* Ցոյն. Յուներայ

36 Ի՞նչ է ան խօսքը որ ըրաւ ցեց. Իմ պիտի փնտռէք՝ ու պիտի չգտնէք. և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։

† Եսա. ժա. 12։ Ցակ. ա. 1։ ա Պետ. ա. 1։

37 ՝Յօնին վերջի մեծ օրը Ցիսուս կայներ էր, կ՚աղաղակէր ու կ՚ը-

Ղուկ. իգ. 36։

Յամի Տեառն 32

Ֆնս. ԺԱ. 1 ։ ԳԼ. գ. 53 ։ Յայտ. ԻԲ. 17 ։

—ր Օր. ԺԸ. 15 ։

Բ Արաք. Ժբ. 4 ։ Ես. Ժբ. 3 ։ Խգ. 3 ։ ԳԼ. գ. 14 ։

Ֆնս. Խդ. 3 ։ Յովէլ. բ. 28 ։ ԳԼ. Ժգ. 7 ։ Գոր. բ. 17, 33, 38 ։

Ւ ԳԼ. Ժբ. 16 ։ Ժգ. 7 ։

Իբ Օր. Ժբ. 15, 18 ։ ԳԼ ա. 21 ։ Ղ. 14 ։

ՂԳԼ. գ. 42 ։ Ղ. 70 ։

Ի Ձմր. 52 ։ ԳԼ ա. 46 ։

ԸՍաղ. ՃԼբ. 11 ։ Երեմ. Խղ. 5 ։ Մրկ. Ե. 2 ։ Մտաս. բ. 5 ։ Ղսս. բ. 4 ։

Ի ա՛Ա՛ագ. Ժղ. 1. 4 ։

Ֆ Ձմր. 12 ։ ԳԼ Թ. 16 ։ Ժ. 19 ։

Ի Ձմր 30 ։

ԼՄտաս. Է. 29 ։

Ի ԳԼ. Ժբ. 42 ։ Գոր. Ղ. Է ։ ա Կոր. ա. 20, 26 ։ բ. 8 ։

Ֆ ԳԼ. գ. 2 ։

Ւ Օր. ա. 17 ։ Ժ. 8. ։ Ա. 15 ։

Ֆնս. Թ. 1, 2 ։ Մտաս. գ. 15 ։ ԳԼ. ա. 46 ։ Ձմր 41 ։

սէր. ՖԹէ որ մէկը ծարաւ է, Թող 38 ինծի գայ ու խմէ ։ Ըն որ ինծի կը հաւատայ՝ ինչպէս որ գիրքը կ'ըսէ, Բանոր փորէն կենդանի 39 ջուրի գետեր պիտի բղխեն. Ֆնս ըսաւ Հոգիին համար՝ որ իրեն հաւատացողները պիտի առնէին. վասն զի Սուրբ Հոգին դեռ չէր տակաւին, ինչու որ Յիսուս դեռ 40 փառաւորուած չէր։ Ժողովուրդէն շատ մարդիկ ան խօսքը որ լսեցին, կ'ըսէին. Իրաւցընէ ասիկա 41 կայ է մարգարէն ։ Ուրիշները կ'ըսէին. ՁԱսիկայ է Քրիստոսը. ուրիշներն ալ կ'ըսէին. Մինթէ Քրիստոսը Գալիլեայէ՞ն կու գայ ։ 42 ԸԶի՞ որ գիրքը կ'ըսէ Թէ, Քրիստոսը Դաւիթի սերունդէն ու Դաւիթին ազած գիւղն Բեթլ- 43 հեմէն կու գայ ։ Ժողովուրդին մէջ երկպառակութիւն 44 ազաւ անոր համար ։ Եւ անոնց մէ ոմանք ուզեցին բռնել անիկայ. բայց մէկը անոր ձեռք չզարկաւ ։

45 Ու սպասաւորները նորէն հասան քահանայապետներուն և փարիսեցիներուն. ու ասոնք բսին անոնց. 46 Ինչու չբերիր Ցն չբերիր ։ Պասպասաւորները. Երբէք մէկը այսպէս չէ խօսած 47 խօսած չէ ։ Ան ատենը փարիսեցիները պատասխան տուին անոնց և բսին. Մինթէ դուք ալ մոլորած 48 ցար ։ Իշխանաւորներէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատաց անոր. 49 Բայց այս ռամիկ ժողովուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նզոված են ։ 50 Նիկոդիմոս բսաւ անոնց. (Ձոր —ը—ոյ գիշեր ատեն իրեն եկեր էր, 51 և անոնցմէ մէկն էր ։) Մինթէ մեր օրէնքը մարդ կը դատէ՞, Թէ որ առաջ անկէ բան մը չլսէ, և չգիտ- 52 նայ Թէ ինչ կ'ընէ ։ Պատասխան տուին ու բսին անոր. Մինթէ դուն ալ Գալիլեայէն ես. քննէ ու նայէ, հոր Գալիլեայէն մարգարէ 53 ըն չկայ ։ Եւ ամէն մէկը իր տունը գնաց ։

ԳԼ. Ը

1 Քրիստոս կ'արձակէ չնութեան յանցանքով բռնուած կինը. 12 կը յայտնէ Թէ ինքն է աշխարհիս լոյսը, ու իր վարդապետութիւնը կ'արդարացնէ. 33 Աբրահամին վրայ պարծենցող Հրեից պատասխան կու տայ, 59 և մէկէն կը քարկոծի անոնց կատաղութենէն ։

1 Ձ Յիսուս Ձիթենեաց լեռը գը- 2 նաց ։ Ու առտուընց նորէն տաճարը եկաւ, և բոլոր ժողովուրդը իրեն կու գար, ու ինքը նստեր 3 կը սորվեցընէր անոնց ։ Եւ գպիրները ու փարիսեցիները չնութեան մէջ բռնուած կնիկ մը բերին ա-

Յամի Տեառն 32

— ՂԱ. ի. 10 ։ բ Օր. իբ. 22 ։

Իբ Օր. Ժէ. 7 ։ Հռով. բ. 1 ։

Ֆ Հռով. բ. 22 ։

Ե Ղս. ի. 56 ։ Ժբ. 14 ։ ԳԼ. գ. 17 ։

Ի ԳԼ. ե. 14 ։

ՂԳԼ. ա. 4, 5. 9 ։ գ. 19 ։ Թ. 5 ։ Ժբ. 35, 36, 46 ։

Ե ԳԼ. ե. 31 ։

Ը ԳԼ. ե. 28 ։ Թ. 29 ։

Ր ԳԼ. ե. 24 ։

Ժ ԳԼ. գ. 17 ։ Ժբ. 47 ։ Ժը. 36 ։

Ֆ Ձմր 29 ։ ԳԼ Ժզ. 32 ։

Ւ Օր. Ժէ. 6 ։ ԺԹ. 15 ։ Մտաս. Ժբ. 16 ։ բ Կոր. Ժգ. 1 ։ Երր. Ժ. 28 ։

Ի ԳԼ. ե. 37 ։ Ի Ձմր 55 ։ ԳԼ. Ժզ. 3 ։ Ի ԳԼ. Ժգ. 7 ։

Ցամք Տեառն 32

Հմար. ժբ. 41։
Ղեւ. ե. 30։
Գծ. ե. 8։

ժԳ. ե. 34։ ժգ. 33։
Հշմ 24։

Գ. գ. 31։
Գծ. ժե. 19։ ժե. 16։ ա Յովհ. գ. 5։
Հշմ 21։
Մար. ժզ. 16։

Գծ. ե. 28։
Գծ. գ. 32։ ժե. 15։

Գծ. գ. 14։ ժբ. 32
Հռով. ա. 4։
Գծ. ե. 19։ 30։
Գծ. գ. 11։
Գծ. ժգ. 10. 11։
Հշմ 16։
Գ. գ. 34։ ե. 30։ զ. 38։
Գծ. ե. 31։ ժ. 42։ ժա. 45։

Հռով. զ. 14. 18. 22։ ը. 2։ Յակ. ա. 25։ բ. 12։
Ղեւ. իե. 42։ Մատ. գ. 9։ Հմր 39։
Հռով. զ. 16. 20։ բ Պետ. բ. 19։
Գաղ. գ. 30։
Հռով. ը. 2։ Գաղ. ե. 1։

որ զես դիտայիք, իմ Հայրս ալ պիտի դիտայիք։
20 Ցիսուս աս խօսքերը խօսեցաւ՝ գանձատունը, Երբոր տաճարին մէջ կը սրբվեցնէր։ Նու մկը չբռնեց զանիկայ, ինչու որ դեռ անոր ժամանակը հասած չէր։
21 Եսրը Ցիսուս նորէն ըսաւ անոնց. Ես կ'երթամ՝ նու զիս պիտի փնտռէք. ու ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք. ուր որ ես կ'երթամ, դուք 22 դուք չէք կրնար գալ։ Անոր վրայ Հրէաները կ'ըսէին. Միթէ ինքզինքը պիտի մեռցընէ՞, որ կ'ըսէ Թէ՝ Ո՛ւր որ ես կ'երթամ, դուք 23 չէք կրնար գալ։ Եւ ըսաւ անոնց. Դուք վարէն էք, ես վերէն եմ. դուք աս աշխարհէս էք, ես աս 24 աշխարհէս չեմ. ես Անոր համար ձեզ զի ըսի Թէ՝ Ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք. Քանզի որ եթէ չհաւատայք Թէ ես եմ, ձեր մեղացը մէջ պիտի 25 մեռնիք։ Ան ատենը ըսին անոր. Դուն ո՞վ ես. և Ցիսուս ըսաւ անոնց. Ինչ որ սկիզբէն ձեզի կը 26 խօսիմ։ Շատ բաներ ունիմ ձեզի համար խօսելու և դատելու. բայց ճան որ զիս խրկեց, ճշմարիտ է. ու ես ինչ որ իրմէ լսեցի, ա-նիկայ կը խօսիմ աշխարհիս մէջ։
27 Անոնք չիմացան Թէ Հօրը համար կը զրուցէր իրենց։
28 Իսկ Ցիսուս ըսաւ անոնց. Երբոր Որդին մարդոյ բարձրացընէք, ճան ատենը պիտի դիտնաք Թէ ես եմ, ու ինքիրմէս բան մը չեմ ըներ, Հապա Հայրս ինչպես որ ինծի սորվեցուց, անանկ կը խօսիմ։
29 Եւ զիս խրկողը իմ հետս է. Հայրը զիս մինակ չթողուց. Քանի որ ես միշտ անոր հաճելի եղած բանները կ'ընեմ։
30 Երբոր ասոնք խօսեցաւ, շատ 31 մարդիկ իրեն հաւատացին։ Ան ատենը Ցիսուս իրեն հաւատացող Հրէաներուն ըսաւ. Թէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք.
32 Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու ան ճշմարտութիւնը ձեզ 33 պիտի ազատէ։ Պատասխան տուին իրեն. Մենք Աբրահամի սերունդն ենք, ու երբեք մէկու մը չծառայեցինք. դուն քոնո՞ր կ'ըսես Թէ 34 ազատ պիտի ըլլաք։ Ցիսուս պատասխան տուաւ անոնց. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ, Ամէն ով որ մեղք կը գործէ, անի-35 կայ մեղքի ծառայ է։ Եւ ծառան տանը մէջ յաւիտեան չմնար, բայց 36 որդին յաւիտեան կը մնայ։ Ուստի Թէ որ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլ-

37 լաք։ Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք, Բայց կը փնտռէք զիս սպանցնել, ինչու որ իմ խօսքս ձեր 38 մեջերնիդ տեղ չունի։ Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քովը՝ ան կը խօսիմ. և դուք ալ ինչ որ տեսաք ձեր Հօրը քովը՝ ան կ'ընէք։
39 Պատասխան տուին ու ըսին անոր. Մեր Հայրը Աբրահամն է. ըսաւ անոնց Ցիսուս. Եթէ որ Աբրահամին որդիքը ըլլայիք, Աբրահամին 40 գործքերը պիտի գործէիք։ Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս, ան-նի մարդ՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ, Որն որ Աստուծմէ լսեցի. Աբրահամ ատ բանը չը-41 րաւ։ Դուք ձեր Հօրը գործերը կ'ընէք. ան ատենը ըսին անոր. Մենք պոռնկութենէ չենք ծնած. Հմիկը մէկ Հայր մը ունինք՝ Աստուած։
42 Ցիսուս ըսաւ անոնց. Եթէ որ Աստուած ձեր Հայրը ըլ-լար, պիտի սիրէիք զիս. Քանզի որ ես Աստուծմէ ելայ ու եկայ. Ես չէ Թէ ես ինքիրմս եկայ, Հապա 43 անիկայ զիս խրկեց։ Ինչո՞ւ դուք իմ ըզրուցուածքս չէք հասկընար. անոր համար որ չէք կրնար իմ 44 խօսքս մտիկ ընել։ Դուք ձեր Հօրմէն Սատանայէն էք, ու ձեր Հօրը բաղձանքը կ'ուզէք ընել. Անիկայ սկիզբէն հետ մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկացաւ, ինչու որ անոր մէջ ճշմարտութիւն չկայ. Երբոր անիկայ սուտ կը խօսի, իրեն իրենէն կը խօսի. քանզի անիկայ սուտացող է և անոր Հայրը։
45 Բայց որովհետև ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար։
46 Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար. Իսկ Թէ որ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինչո՞ւ 47 ինծի չէք հաւատար։ Ան որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքերը մտիկ կ'ընէ. դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ Աստուծմէ չէք։
48 Պատասխան տուին Հրէաները՝ ու ըսին անոր. Աղէկ չե՞նք ըսեր մենք, Թէ դուն Սամարացի ես Հու դև 49 կայ քու ներսդ։ Ցիսուս պատասխան տուաւ՝ Ես ոչ. Իմ ներսս դև չկայ, Հապա ես իմ Հայրս կը պատուեմ, և դուք զիս կ'անար-50 կէք։ Իսկ ես իմ փառքս չեմ փնտռեր. կայ Ան՝ որ կը փնտռէ, 51 ու կը դատէ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Եթէ որ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ պի-52 տի չտեսնէ։ Ան ատենը Հրէաները ըսին անոր. Հիմա գիտցանք որ քու ներսդ դև կայ. Աբրահամ մեռաւ՝ ու մարգարէները. և դուն

Ցամք Տեառն 32

Գծ. ե. 20։ Հմր 40։
Գծ. գ. 32։ ը. 19։ 30։ ժդ. 10. 21։

Մատ. գ. 9։ Հմր 38։
Հռով. ը. 2։ Գաղ. գ. 29։
Հշմ 37։
Հմր 26։

ըՀա. կդ. 16։ կդ. 8։ Մատ. ա. 6։
Ցաւ. ե. 1։
Գծ. ժգ. 27։ ժե. 5։ 25։
Գծ. ե. 43։ է. 23. 29։
Գծ. է. 17։

Մատ. ժգ. 35։ ա Յովհ. գ. 8։
Յաւդ. 6։

Գծ. ժ. 26. 27։ ա Յովհ. գ. 6։

Գծ. ժ. 20։ Հմր 52։

Գծ. ե. 20։ ժ. 20։ Հմր 52։

Գծ. ե. 41։ է. 18։

Գծ. ե. 24։ ժա. 26։

Ջաւթ. ա. 5։ Երր. ժա. 13։

Ցամք Տեառն 32

կ'ըսեա , թէ որ մէկը իմ խօսքս պահէ , յաւիտեան մահուան չտեսնէ ։
53 պիտի չառնէ ։ Միթէ դուն աւելի՞ մեծ ես մեր հայր Աբրահամէն՝ որ մեռաւ . ու մարգարէներն ալ մեռան . դուն քեզ ո՞վ կ'ընես ։
54 Յիսուս պատասխան տուաւ . Թէ որ ես ինքզինքս փառաւորեմ , իմ փառքս բան մը չէ . իմ Հայրս է՝ որ զիս կը փառաւորէ , որուն համար դուք կ'ըսէք թէ Մեր Աստուածն
55 է . Եւ անիկայ չէք ճանչնար . բայց ես գիտեմ անիկայ . ու թէ որ ըսեմ՝ թէ անիկայ չեմ գիտեր , ձեզի պէս ստահօս պիտի ըլլամ . հապա ես գիտեմ անիկայ , և անոր
56 խօսքը կը պահեմ ։ Ձեր հայրը Աբրահամ ցնծկացաւ իմ օրս տեսնելու . ու տեսաւ և ուրախացաւ ։
57 Ուստի Հրէաները ըսին անոր . Դուն տակաւին հիսուն տարեկան չես , Աբրահա՞մն ալ տեսաւ ։ Յիսուս
58 ըսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Աբրահամին ըլլա-
59 լէն առաջ եմ ես ։ Ան ատենը Քարեր վերցուցին որ անոր վրայ նետեն . բայց Յիսուս ծածկուեցաւ անոնց աչքերէն , և Տաճարէն անցնելով՝ տաճարէն դուրս ելաւ , ու այսպէս գնաց ։

ԳԼ · Թ

1 Քրիստոս ի ծնէ կոյրին աչքերը կը բանայ ։ 8 Ան որ չուտած մարդը փարիսեցւոց կը ապերի , 13 որոնք բարկանալով դուրս կ'ընեն զանիկայ իրենց ժողովարանէն ։ 35 բայց Յիսուս կ'ընդունի զանիկայ . ու ան ալ կը հաւատայ աստուածութեան նոր ։ 39 Քրիստոս զորո՞ւնք կը լուսաւորէ ։

1 Եւ երբոր կ'անցնէր , մէկ մարդ մը
2 տեսաւ կոյր ծնած . Եւ իր աշակերտները հարցուցին իրեն , ու ըսին . Ռաբբի՝ ո՞րո՞ւն է մեղքը , աստո՞ր թէ իր ծնողացը , որ անիկայ
3 կոյր ծնաւ ։ Պատասխան տուաւ Յիսուս . Ո՛չ աստո՛ւն է մեղքը , ոչ ալ իր ծնողացը . Ի հապա՝ որ Աստուծոյ գործքերը ատոր վրայ յայտ-
4 նի ըլլան ։ Ինձի՞ որ զորեկ է , պէտք է որ զիս իրկողին գործքերը գործեմ . դիշերը կու գայ , որ ան ատենը մէկը չկրնար գործել ։
5 Քանի որ ես աշխարհի մէջ եմ ,
6 աշխարհի լոյսն եմ ։ Երբոր ասը ըսաւ , ի թուքաւ գետինը , և թու-քովը կաւ շինեց , ու ան կաւը կոր-
7 րին աչքերուն վրայ ծեփեց . Եւ ըսաւ անոր . Գնա Սղոտացուէ Սելոամի աւազանին մէջ , (որ Խրկուած կը թարգմանուի .) Ուստի գնաց ու լուացուեցաւ , եկաւ ու կը
8 տեսնէր ։ Իսկ դրացիները՝ և անոնք որ առաջուց տեսած էին զանիկայ որ մուրացկան էր , կ'ըսէին . Ասիկայ չէ՞ր որ կը նստէր և կը մուրար . ոմանք կ'ըսէին , Անիկայ
9 է . Ուրիշները կ'ըսէին , Անոր նը-
10 ման ձեւն է . Ան կ'ըսէր թէ , Ես եմ ։ Ուստի ըսին իրեն . Հապա ինչո՞ր բացուեցան քու աչքե-
11 րդ ։ Ինքը պատասխան տուաւ ու ըսաւ . Յիսուս կոչուած մարդ մը կաւ շինեց , ու աչքերս ծեփեց , և ըսաւ ինծի . Գնա Սելոամի աւազանը՝ ու լուացուէ . Ես ալ գացի լուացուեցայ ու կը տեսնեմ ։
12 Եւ ըսին իրեն . Ո՞ւր է անիկայ . ըսաւ ան՝ Չեմ գիտեր ։
13 Փարիսեցիներուն տարին զանի-
14 կայ՝ որ առեղով կոյր էր ։ Եւ շաբաթ օր էր երբոր Յիսուս կաւը շինեց , ու անոր աչքերը բացաւ ։
15 Նորէն փարիսեցիներն ալ կը հարցընէին իրեն , Թէ ինչո՞ր կը տեսնէ . անիկայ ալ ըսաւ անոնց . Կաւ դրաւ աչքերուս վրայ , ու լուա-
16 ցուեցայ և կը տեսնեմ ։ Ասոր վրայ փարիսեցիներէն ոմանք կ'ըսէին , Ան մարդը Աստուծմէ չէ , ինչու որ շաբաթ օրը չպահեր . ուրիշները կ'ըսէին . Ի՞նչո՞ր կրնայ մեղաւոր մարդ մը ասանկ հրաշքներ ընել . Ու մէջերնին երկպառակութիւն
17 կար ։ Նորէն ըսին կոյրին . Դուն ի՞նչ կ'ըսես անոր համար՝ որ քու աչքերդ բացաւ . ան ալ ըսաւ է թէ ,
18 Մարգարէ մըն է ։ Իսկ Հրէաները չէին հաւատար անոր համար՝ թէ կոյր էր ու բացուեցաւ , մինչև որ ան աչքը բացուածին ծնողքը կան-
19 չեցին . Եւ անոնց հարցուցին ու ըսին . Ա՞ս է ձեր որդին , որուն համար դուք կ'ըսէք թէ կոյր ծնաւ . հապա հիմա ինչո՞ր կը տեսնէ ։
20 Անոր ծնողքը պատասխան տուին անոնց ու ըսին . Գիտենք որ ասիկայ է մեր որդին , և որ կոյր էր
21 ծնաւ . Բայց հիմա ինչո՞ր կը տեսնէ , չենք գիտեր , կամ թէ ով բացաւ ատոր աչքերը , մենք չենք գիտեր . ինքը չափահաս է , իրեն հարցուցէք . Թող ինքը խօսի ի-
22 րեն համար ։ Ան ըսին անոր ծնողքը , Հրէաներէն վախնալնուն համար . քանզի Հրէաները միաբան հաւանութեամբ որոշեր էին որ եթէ մէկը անիկայ Քրիստոս դաւանի ,
23 Ժողովարանէն դուրս ձգուի ։ Ասոր համար անոր ծնողքը ըսին թէ , Ինքը չափահաս է , իրեն հարցու-
24 ցէք ։ Ետքը նորէն կանչեցին ան մարդը որ կոյր էր , ու ըսին անոր . Փառաւոր փառք տուր , մենք գիտենք որ ան մարդը մեղաւոր է ։
25 Անիկայ ալ պատասխան տուաւ ու ըսաւ . Թէ որ մեղաւոր է , ես չեմ գիտեր . միայն այս գիտեմ որ կոյր
26 էի , և հիմա կը տեսնեմ ։ Նորէն

Ցամք Տեառն 32

Ա Գէն · ժ · 31 ։
Ա Գէն · ե · 41 ։ Ժզ · 14 ։ Ժէ · 1 ։ Գոր · գ · 13 ։
† Ո՛նէ՛ · Ձէր
Ն Գէ · է · 28 ։ 29 ։
Ղ Ղա · Ժ · 24 ։
Երր · Ժա · 13 ։
Նէ · գ · 14 ։ Ես · խգ · 13 ։ Գէ · Ժէ · 5 · 24 ։ Կող · ա · 17 ։ Ցայտ · ա · 8 ։
Գէ · Ժ · 31 ։ 39 ։ Ժա · 8 ։
Ղ Ղա · գ · 30 ։
Ա Ժէր · 34 ։
Բ Գէ · Ժա · 4 ։
Ի Գէ · գ · 34 ։ է · 19 · 36 ։ Ժա · 9 ։ Ժր · 35 ։ Ժէ · 4 ։
Ծ Գէ · ա · 5 ։ 9 ։ գ · 19 ։ ր · 12 ։ Ժր · 35 · 46 ։
Է Մար · է · 33 ։ ր · 23 ։
Ղ Նէմ · գ · 15 ։
Է Ցես Գ Թագ · ե · 14 ։
† Ո՛նէ՛ կոյր

Ցամք Տեառն 32
Ը Ձէր 6 · 7 ։
Ա Ձէր 33 ։ Գէ · գ · 2 ։
Ժ Գէ · է · 12 · 43 ։ Ժ · 19 ։
Է Գէ · գ · 19 ։ ղ · 14 ։
Ա Ձէր 34 ։ Գէ · Ժզ · 2 ։
Ձ Ցես · է · 19 ։ աթագ · ղ · 5 ։
Ա Ձէր 16 ։

Ցամի Տեառն 32

ընին անոր . Ի՞նչ ըրաւ քեզի .
27 րու աչքերդ ինտո՞ր բացաւ ։ Պա-
տասխան տուաւ անոնց . Հիմա
ըսի ձեզի ու չլսեցիք . ինչո՞ւ հա-
մար նորէն լսել կ՚ուզէք . միթէ
դո՞ւք ալ կ՚ուզէք անոր աշակերտ
28 ըլլալ ։ Անոնք նախատելով զա-
նիկայ՝ ըսին . Դուն ես անոր աշա-
կերտը . իսկ մենք Մովսէսին աշա-
29 կերտներն ենք ։ Մենք գիտենք՝ որ
Աստուած Մովսէսին հետ խօսեցաւ .
հրայց ասիկայ չենք գիտեր թէ ուր-
30 կից է ։ Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց . Ա՛տիկայ է
զարմանալու բանը՝ որ դուք չէք
գիտեր թէ ուրկից է , և անիկայ
31 իմ աչքերս բացաւ ։ Գիտենք որ
Աստուած մեղաւորներուն մտիկ
չընէր . բայց թէ որ մէկը աստուա-
ծապաշտ ըլլայ , ու անոր կամքը
32 կատարէ , անոր մտիկ կ՚ընէ ։ Ան-
խարհիս սկիզբէն ի վեր լսուած չէ
որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը
33 բացած է ։ Եթէ որ Աստուծմէ
չրլլար ան մարդը՝ բան մըն ալ չէր
34 կրնար ընել ։ Պատասխան տուին
և ըսին անոր . Դուն բոլորովին
մեղաց մէջ ծնած ես , ու մեզի վար-
դապետութիւն կ՚ընես . և դուրս
ըրին անիկայ ։
35 Ցիսուս լսեց որ զանիկայ դուրս
ըրին , ու երբոր գտաւ զանիկայ՝
ըսաւ անոր . Դուն կը հաւատաս
36 Աստուծոյ Որդիին ։ Անիկայ պա-
տասխան տուաւ՝ ու ըսաւ . Տէր
37 ո՞վ է՝ որ հաւատամ անոր ։ Եւ
Ցիսուս ըսաւ անոր . Տեսար ալ
անիկայ , Ե և քեզի հետ խօսողը ան
38 է ։ Անիկայ ալ ըսաւ . Կը հա-
ւատամ՝ Տէր . ու անոր երկրպա-
39 գութիւն ըրաւ ։ Եւ Ցիսուս ը-
սաւ . Ես դատաստանի համար և-
կայ աս աշխարհս , որ չտեսնող-
ները տեսնեն , և տեսնողները կու-
րանան ։
40 Եւ փարիսեցիներէն ոմանք որ իր
հետն էին , աս բաները լսելով՝ Ը-
սին իրեն . Միթէ մե՞նք ալ կոյր
41 ենք ։ Ցիսուս ըսաւ անոնց . Եթէ
որ կոյր ըլլայիք , դուք մեղք չէիք
ունենար . բայց հիմա կ՚ըսէք թէ
կը տեսնենք . ասոր համար ձեր
մեղքը չէր վար կը մնայ ։

Գ Լ . Ժ

1 Քրիստոս է կենաց դուռը և բարի հովիւը ։
19 Հրէից տարբեր կարծիքները անոր վրայով ։
24 Ցիսուս իր գործքերովը կը ցուցնէ թէ
ինքն է Քրիստոս Աստուծոյ Որդին . 39
Հրէից ձեռքէն կը փախչի , 40 և դարձեալ
կ՚երթայ Յորդանանու միւս կողմը , ուր տեղ
շատերը կր հաւատան իրեն ։

1 Ա՛մէն ամէն կ՚ըսեմ ձեզի .
Ան որ դռնէն չմտներ ոչխար-

Ե Գլ . ը . 14 ։

Ղ Գլ . գ . 10 ։

Ղ Ցոր . իէ . 9 ։ Լե . 12 ։ Սաղ . ժը . 41 ։ Լղ . 15 ։ կղ . 18 ։ Առակ . ա . 28 ։ ժե . 29 ։ իը . 9 ։ Ես . ա . 15 ։ Երեմ . ժա . 11 ։ ժգ . 12 ։ Եզեկ . ը . 18 ։ Միք . գ . 1 ։ Զաք . է . 13 ։

ճ Հմր . 16 ։

ՃՀմր 2 ։

յ Մատ . ժգ . 33 ։ ժզ . 16 ։ Մար . ա . 1 ։ Գլ . ժ . 36 ։ ա Ցովհ . ե . 13 ։

Ն Գլ . գ . 26 ։

Ղ Գլ . ե . 22 ։ 27 ։ Տես գլ . գ . 17 ։ ժբ . 47 ։

ա Մատ . ժգ . 13 ։

Ղ Հովհ . բ . 19 ։

ՃԳլ . ժե . 22 . 24 ։

ներուն բակը , հապա ուրիշ տեղէն
կ՚ելլէ , անիկայ գող ու աւազակ
2 է ։ Բայց ան որ դռնէն կը մտնէ ,
անիկայ ոչխարներուն հովիւն է ։
3 Դռնապանը կը բանայ անոր , և
ոչխարները անոր ձայնին կը լսեն ,
ու իր ոչխարները անունովին կը
կանչէ , և դուրս կը հանէ զանոնք ։
4 Ու երբոր իր ոչխարները կը հանէ ,
անոնց առջևէն կ՚երթայ , ու ոչ-
խարները իր ետևէն կ՚երթան . ին-
չու որ անոր ձայնը կը ճանչնան ։
5 Սակայն օտարի ետևէ չեն երթար .
հապա անկէ կը փախչին , ինչու որ
օտարներուն ձայնը չեն ճանչնար ։
6 Ցիսուս աս առակը ըսաւ անոնց .
բայց անոնք չէին իմանար՝ թէ ինչ
7 էր որ իրենց կը խօսէր ։ Եւ Ցի-
սուս նորէն ըսաւ անոնց . Ճշմա-
րի՛տ ճշմարի՛տ կ՚ըսեմ ձեզի . Ես
8 եմ ոչխարներուն դուռը ։ Ամէն
անոնք որ ինծմէ առաջ եկան , գող
ու աւազակ էին . բայց անոնց չլսե-
9 ցին ոչխարները ։ Ես եմ դուռը .
թէ որ մէկը ինծմէ ներս մտնէ պի-
տի փրկուի , ու պիտի մտնէ ու
10 ելլէ , և արօտ գտնէ ։ Գողը չգար ,
միայն թէ գողնալու և սպաննելու
ու կորսնցընելու համար . Ես եկայ
որ կեանք ունենան , և աւելի
11 ունենան ։ Ե՛ս եմ բարի հովիւը .
բարի հովիւը իր կեանքը ոչխար-
12 ներուն համար կը դնէ ։ Բայց
վարձկանը որ հովիւ չէ , ու ոչխար-
ները իրը չեն , երբոր կը տեսնէ
գայլը որ կու գայ , Ե կը թողու ոչ-
խարները ու կը փախչի . և գայլը
կը յափշտակէ ոչխարները , ու զա-
13 նոնք կը ցրուէ ։ Եւ վարձկանը
կը փախչի , Ինչու որ վարձկան է ,
ու իր հոգը չէ ոչխարներուն հա-
14 մար ։ Ես եմ բարի հովիւը , Ե և
կը ճանչնամ իմիններս , ու կը ճանչ-
15 ցուիմ իմիններէս ։ Ինչպէս որ
Հայրը զիս կը ճանչնայ , ես ալ
Հայրը կը ճանչնամ , Ու իմ կեան-
քըս ոչխարներուն համար կը դնեմ ։
16 Ե՛ւ ուրիշ ոչխարներ ալ ունիմ , որոնք
աս բակէն չեն . անոնք ալ պէտք է
որ բերեմ . ու իմ ձայնիս պիտի
լսեն , և պիտի ըլլան մէկ հօտ ու
17 մէկ հովիւ ։ Անոր համար իմ
Հայրս զիս կը սիրէ , Ո որ ես իմ
կեանքս կը դնեմ , որ նորէն առնեմ
18 անիկայ ։ Մէկը չհաներ անիկայ
ինծմէ , հապա ես կը դնեմ անիկայ
ինքիրմէս . իշխանութիւն ունիմ
անիկայ դնելու , և իշխանութիւն
ունիմ անիկայ նորէն առնելու .
հաս պատուէրը իմ Հօրմէս առի ։
19 Ա՛նորէն երկպառակութիւն կ՚ըլ-
լար Հրէից մէջ աս խօսքերուն հա-
20 մար ։ Եւ անոնցմէ շատերը կ՚ը-

Շաբ . Տեառն 32

Ե Գլ . ը . 14 ։

Ղ Գլ . գ . 10 ։

Ղ Ցոր . իէ . 9 ։ Լե . 12 ։ Սաղ . ժը . 41 ։ Լղ . 15 ։ կղ . 18 ։ Առակ . ա . 28 ։ ժե . 29 ։ իը . 9 ։ Ես . ա . 15 ։ Երեմ . ժա . 11 ։ ժգ . 12 ։ Եզեկ . ը . 18 ։ Միք . գ . 1 ։ Զաք . է . 13 ։

ճ Հմր . 16 ։

ՃՀմր 2 ։

յ Մատ . ժգ . 33 ։ ժզ . 16 ։ Մար . ա . 1 ։ Գլ . ժ . 36 ։ ա Ցովհ . ե . 13 ։

Ն Գլ . գ . 26 ։

Ղ Գլ . ե . 22 ։ 27 ։ Տես գլ . գ . 17 ։ ժբ . 47 ։

ա Մատ . ժգ . 13 ։

Ղ Հովհ . բ . 19 ։

ՃԳլ . ժե . 22 . 24 ։

Շաբ . Տեառն 32

— Գլ . ժգ . 6 ։ Եփես . ը . 18 ։

Բ Ես . խ . 11 ։ Եզեկ . լդ . 12 . 23 ։ լե . 24 ։ Ներ . ժգ . 20 ։ ա Պետ . ը . 25 ։ ե . 4 ։

Ֆ Զաք . ժա . 16 . 17 ։

Դ Թես . ը . 19 ։

Ի Մատ . ժա . 27 ։

Ղ Գլ . ժե . 13 ։

Ի Ես . ծգ . 8 ։

Ը Եզեկ . լե . 22 ։ Եփես . ը . 14 ։ ա Պետ . ը . 25 ։

Բ Ես . ծդ . 7 . 8 . 12 ։ Ներ . ը . 9 ։

ժ Գլ . ը . 19

Ի Գլ . գ . 38 ։ ժե . 10 ։ գ . 24 ։ 32 ։

Լ Գլ . է . 43 ։ թ . 16 ։

Յամի Տեառն 32

սէին . Է Դեւ կայ ատոր ներսի դին ու խելագրած է , ինչո՞ւ ատոր մտիկ
21 կ՚ընէք ։ Ուրիշները կ՚ըսէին . Ան խօսքերը դիւահարի խօսքեր չեն . միթէ դեւը կրնա՞յ կոյրերուն աչքերը բանալ ։
22 Ան ատենը Երուսաղէմ նաւակատիքի տօնը եղաւ , ու ձմեռ էր ։
23 Եւ Յիսուս կը պտըտէր տաճարին
24 մէջ Սողոմոնին սրահը ։ Եւ Հրեաները անոր չորս կողմը առին ու ըսին անոր . Մինչեւ ե՞րբ մեզ տարակուսանաց մէջ կը թողուս . Թէ որ Քրիստոսը դուն ես , մեզի հա-
25 մարձակ ըսէ ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց . Ձեզի ըսի՝ ու չէք հաւատար . Ես գործերը՝ որ ես իմ Հօրս անունովը կը գործեմ ,
անոնք կը վկայեն ինծի համար ։
26 Ձեր ոչխարներէս չէք , *ինծոր որ
27 ձեզի ըսի՝՝ ։ Իմ ոչխարներս իմ ձայնիս կը լսեն , Ես ալ անոնք կը ճանչնամ , ու իմ ետեւէս կու գան ։
28 Եւ Ես անոնց յաւիտենական կեանք կու տամ , ու յաւիտեան պիտի չկորսուին . և Մէկը իմ ձեռքէս
29 պիտի չյափշտակէ զանոնք ։ Իմ Հայրս՝ որ անո՛ր ինծի տուաւ , ամենէն մեծ է . և Մէկը չկրնար իմ
30 Հօրս ձեռքէն յափշտակել ։ Ես ու Հայրը Մէկ ենք ։
31 Ան ատենը Հրեաները նորէն քարեր վերցուցին , որ անիկայ
32 քարկոծեն ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց . Շատ բարի գործքեր ցուցուցի ձեզի իմ Հօրմէս , անոնցմէ ո՞ր գործին համար զիս կը
33 քարկոծէք ։ Հրէաները պատասխան տուին անոր՝ ըսելով . Բարի գործի համար քեզ չենք քարկոծեր , հապա հայհոյութեան համար , և քանզի դուն որ մարդ ես ,
Ինքզինքդ Աստուած կ՚ընես ։
34 Յիսուս պատասխան տուաւ անոնց . Չէ՞ որ ձեր օրէնքին մէջը գրուած է . Ես ըսի Թէ դուք աստուածներ
35 է ։ Թէ որ աստուածներ կ՚անուանէ զանոնք , Աորոնց որ Աստուծոյ խօսքը եղաւ , (ու կարելի չէ որ ան
36 գրուածը աւրուի ,) Հապա ան որ Հայրը սրբեց՝ և աշխարհք խրկեց , դուք կ՚ըսէք Թէ հայհոյես , Թիւն կ՚ընես , Աստուծոյ Որդի
37 եմ ըսելուս համար ։ Թէ որ իմ Հօրս գործքերը չեմ գործեր , ինծի
38 մի՛ հաւատար . Հապա Թէ որ կը գործեմ , Թէև ինծի չէք հաւատար , գործքերուն հաւատացէք , որ գիտնաք ու ճանչնաք՝ Թէ Հայրը իմ մէջս է , և Ես անոր մէջ ։
39 Դարձեալ կը փնտռէին զանի-

կայ բռնել , և անոնց ձեռքէն ելաւ ։
40 Ու Նորէն գնաց Յորդանանու անպիի կողմը՝ ան տեղը , որ Յովհաննէս առաջուց կը մկրտէր , ու
41 հոն կեցաւ ։ Եւ շատերը եկան անոր՝ ու կ՚ըսէին . Իրաւ Յովհաննէս մէկ հրաշք մը չըրաւ .
42 Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ անոր համար , ամէնը ճշմարիտ էր . և շատ մարդիկ հոն անոր հաւատացին ։

ԳԼ . ԺԱ

1 Քրիստոս կը յաջուցանէ չորս օրուան մեռած Ղազարոսը ։ 45 Շատ Հրէաներ կը հաւատան ։ 47 Քահանայապետները և փարիսեցիք ժողով կ՚ընեն Քրիստոսի դէմ ։ 49 Կայիափային մարգարէութիւնը ։ 54 Յիսուս իր անձը կը թագուցանէ ։ 55 Զատիկի տօնին կը փնտռեն զանիկայ , և պատուէր կու տան բռնելու ։

1 Ան Մարիամին և անոր քրոջը Մարթային գեղէն՝ Բեթանիայէն՝ Ղազարոս անուանուած մկը հի-
2 ւանդ էր ։ Բեթանիա էր Մարիամն էր , որ Տէրը եղով օծեց , ու անոր ոտքերը իր մազերովը սրբեց , որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր ։
3 Ուստի էր քոյրերը Տէրէ խրկեցին անոր՝ ու ըսին . Տէր՝ ահա անիկայ՝ որ դուն կը սիրես , հիւանդ է ։
4 Յիսուս երբոր լսեց , ըսաւ . Ան հիւանդութիւնը մահուան համար չէ , հապա Աստուծոյ փառացը համար , որ Աստուծոյ Որդին անով
5 փառաւորուի ։ Արդ Յիսուս կը սիրէր Մարթան՝ և անոր քոյրը՝ ու
6 Ղազարոսը ։ Իսկ երբոր լսեց Թէ հիւանդ է , եղած տեղը երկու օր
7 ալ կեցաւ ։ Եւ անկէ ետքը ըսաւ աշակերտներուն . Երթանք Նորէն Հը-
8 րէաստան երթանք ։ Աշակերտները իրեն ըսին . Ռաբբի՝ Հրէաները հիմա քեզ կը փնտռէին քարկոծելու , ու նորէն հո՞ն կ՚երթաս ։
9 Պատասխան տուաւ Յիսուս . Չէ՞ որ օրը տասներկու ժամ է . Եթէ որ մէկը ցորկը քալէ , չսահիր . ինչու որ աս աշխարհիս լոյսը կը
10 տեսնէ . Բայց Թէ որ մէկը գիշերը քալէ , կը սահի . ինչու որ իր
11 Հետը լոյս չկայ ։ Ես բաները բսելէն ետեւ՝ ըսաւ անոնց . Ղազարոս մեր բարեկամը քնացած է . բայց կ՚երթամ որ անիկայ արթընցը-
12 նեմ ։ Ետեւ՝ իր աշակերտները ըսին . Տէր՝ Թէ որ քնացած է , պիտի ա-
13 ռողջնայ ։ Իսկ Յիսուս անոր մեռնելուն համար կ՚ըսէր . բայց անոնք կը կարծէին Թէ քունն քնա-
14 նալուն համար կ՚ըսէր ։ Ան ատենը Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց .
15 Ղազարոս մեռաւ . Եւ Ես ուրախ եմ ձեզի համար՝ որ հոն չէի , որ դուք հաւատաք . բայց երթանք անոր ։
16 Թովմաս՝ որ ը-

Յամի Տեառն 33

* ԳԼ . ա . 28 ։

* ԳԼ . դ . 30 ։

§ ԳԼ . բ . 30 ։ Ժա . 45 ։

— Ղու . ժ . 38 , 39 ։

Բ Մատ . իզ . 7 ։ Մար . ժդ . 3 ։ ԳԼ . ժբ . 8 ։

է ԳԼ . Բ . 3 ։ Հմր 40 ։

† ԳԼ . ժ . 40 ։

Ի ԳԼ . ժ . 31 ։

ՀԳԼ . Բ . 4 ։

Ի ԳԼ . ժբ . 35 ։

ԷԲ Օր . լ . 16 ։ Դան . ժբ . 2 ։ Մատ . Թ . 24 ։ Գոր . է . 59 ։ ա Կոր . ժե . 18 , 51 ։

Ա Հմր 38 ։ ԳԼ . գ . 2 ։ ե . 36 ։

ՂԳԼ . բ . 47 ։ ա Ցօ՛ն . գ . 6 ։

* Ո՛հռե՛լ ըսե՛ն ։

Ճ Հմր 4 , 14 ։

Ֆ ԳԼ . գ . 37 ։ ժէ . 11 , 12 ։ ժբ . 9 ։

Ա ԳԼ . ժդ . 28 ։

Ն ԳԼ . ժէ . 2 , 6 , եա ։

ՂԳԼ . ժէ . 11 , 22 ։

— Գ . Բ . 59 ։

ՂԳԼ . ե . 18 ։

Ղ Սաղ . ժբ . 6 ։

Ը Հռով . ժգ . 1 ։

— Գ . Ղ . 27 ։

— Գ . դ . 17 ։ ե . 36 , 37 ։ բ . 42 ։

Ձ Ղու . ա . 35 ։ Գ . Թ . 35 , 37 ։

Ո Գ . ե . 17 , 18 ։ Հմր 30 ։

Բ ԳԼ . ժե . 24 ։

Ց ԳԼ . ե . 36 ։ ժդ . 10—12 ։

— Գ . ժդ . 10 , 11 ։ ժե . 21 ։

Ֆ ԳԼ . է . 30 , 44 ։ Բ . 59 ։

Ցամք Տեառն 33

կուորեակ կ'ըսուէր , բաւ էր աշա-
կերտակիցներուն . Մենք ալ եր-
թանք՝ որ անոր հետը մեռնինք ։
17 Յիսուս երբոր եկաւ , գտաւ որ
անիկայ արդէն չորս օրուան գե-
18 րեզմանը դրուած էր ։ Ու Բե-
թանիա՝ Երուսաղէմին մօտ էր՝
տասնուհինգ ասպարէզի չափ ։
19 Եւ Հրէաներէն շատերը Մար-
թային ու Մարիամին եկած էին
որ մխիթարեն զանոնք՝ իրենց եղ-
20 բօրը համար ։ Ասիկ՝ երբոր լսեց
Մարթա թէ Յիսուս կու գայ ,
զանիկայ դիմաւորելու դնաց . բայց
Մարիամ տանը մէջ նստեր էր ։
21 Եւ Մարթա ըսաւ Յիսուսին . Տէր՝
թէ որ հոս ըլլայիր , իմ եղբայրս
22 չէր մեռներ . Բայց գիտեմ որ հի-
մա ալ Ա դուն ինչ որ խնդրես Աս-
տուածմէ , Աստուած պիտի տայ
23 քեզի ։ Յիսուս ըսաւ անոր . Քոյ-
եղբայրդ յարութիւն պիտի առնէ ։
24 Մարթա ըսաւ անոր . Գիտեմ որ
յարութեան ժամանակը՝ վերջին
օրը յարութիւն պիտի առնէ ։
25 Յիսուս ըսաւ անոր . Ես եմ յա-
րութիւնը և կեանքը . Ան որ
ինծի կը հաւատայ , թէև մեռնի՝
26 պիտի ապրի . Եւ ան ամէնը որ
կենդանի է՝ ու ինծի կը հաւատայ ,
յաւիտեան պիտի չմեռնի . դուն
27 կը հաւատաս ասոր ։ Ըսաւ անոր .
Այո Տէր՝ Ես հաւատացեր եմ՝
որ դուն ես Քրիստոսը Աստուծոյ
Որդին , որ աշխարհը գալու էիր ։
28 Ու երբոր ասըսաւ , դնաց իր քոյ-
րը Մարիամը գաղտուկ մը կանչեց՝
ըսելով . Վարդապետը եկեր է՝ ու
29 քեզ կը կանչէ ։ Անիկայ լսածին
պէս՝ շուտ մը ելաւ ու եկաւ անոր ։
30 Իսկ Յիսուս դեռ գեղը եկած չէր .
հապա ան տեղն էր , ուր որ Մար-
31 թա զանիկայ դիմաւորեց ։ Բայց
Հրէաները որ անոր հետը տանը
Ա՞ն էին՝ ու կը մխիթարէին զա-
նիկայ , երբոր տեսան որ Մարիամ
շուտ մը ելաւ ու գնաց , էրթան՝ ու
անոր ետևէն գացին , ըսելով թէ
Գերեզմանը կ'երթայ՝ որ հոն տեղը
32 լայ ։ Իսկ Մարիամ երբոր Յի-
սուսին եղած տեղը եկաւ , ու զա-
նիկայ տեսաւ , անոր ոտքը իյնաւ
լով ըսաւ անոր . Տէր՝ թէ որ հոս
ըլլայիր , իմ եղբայրս չէր մեռներ ։
33 Յիսուս երբոր տեսաւ անիկայ որ
կու լար , և անոր հետ եկող Հրէա-
ները որ կու լային , իր հոգւոյն
34 մէջ հառաչեց ու խռովեցաւ , Եւ
ըսաւ . Ո՞ւր դրած կը անիկայ .
ըսին իրեն . Տէր՝ եկուր ու տես ։
35 Յիսուս լացաւ ։ (36) Ուստի
Հրէաները կ'ըսէին . Նայեցէ՛ք
37 որչափ կը սիրէր զանիկայ ։ Ա-

Ցամք Տեառն 33

նոնցմէ ոմանք ալ կ'ըսէին . Ատի-
կայ Նոր կոյրին աչքերը բացաւ ,
չէր կրնար ընել որ ասա ալ չմեռ-
38 նէր ։ Յիսուս նորէն իր ոգիին մէջ
հառաչելով՝ գերեզմանը կու գայ .
և անիկայ քարայր մըն էր , ու անոր
39 վրայ քար մը դրուած էր ։ Յիսուս
ըսաւ . Մէկկի՛ ըրէք ատ քարը .
մեռելին քոյրը Մարթան ըսաւ ա-
նոր . Տէր՝ արդէն հոտած պիտի
ըլլայ , ինչու որ չորս օրուան է ։
40 Ըսաւ անոր Յիսուս . Քեզի չըսի՞
որ՝ եթէ հաւատաս , Աստուծոյ
41 փառքը պիտի տեսնես ։ Ան ա-
տենը մէկկի ըրին քարը . և Յի-
սուս էր աչքերը վեր վերցուց ու
ըսաւ . Հայր՝ շնորհակալ եմ քեզ-
42 մէ , որ ինծի լսեցիր ։ Ու ես գի-
տէի որ ամէն ատեն ինծի կը լսես .
հապա աս բոլորտիքս կայնող ժո-
ղովուրդին համար ըսի , որ հաւա-
43 տան թէ դուն իրկեցիր զիս ։ Եւ
աս ըսելէն ետքը , մեծ ձայնով մը
կանչեց . Ղազարոս դուրս եկուր ։
44 Մեռելն ալ ելաւ ոտքերը ու ձեռ-
քերը պատանքով կապած , ա և ե-
րեսը վարշամակով պատած . Յի-
սուս ըսաւ անոնց . Արձկեցէ՛ք
ատիկայ , ու թողէ՛ք որ երթայ ։
45 Եւ Հրէաներէն շատերը՝ որ Մա-
րիամին եկեր էին , երբոր Յիսուսին
ըրածը տեսան , հաւատացին
46 իրեն ։ Բայց անոնցմէ ոմանք գա-
ցին փարիսեցիներուն , ու Յիսուսի
ըրածը անոնց պատմեցին ։
47 Ուստի Քահանայապետները և
փարիսեցիները ժողով գումարեցին՝
ու ըսին . Ի՞նչ ընենք , քանզի աս
48 մարդը շատ հրաշքներ կ'ընէ ։ Թէ
որ անիկայ ասանկ թողու տանք , ա-
մէնքն ալ անոր պիտի հաւատան ,
և Հռովմայեցիք պիտի գան՝ ու մեր
տեղը ու ազգը պիտի վերցընեն ։
49 Եւ անոնցմէ մէկը Կայիափա՝ ա-
նուանվ՝ որ ան տարւոյն քահանա-
յապետն էր , ըսաւ անոնց . Դուք
50 բան մը չէք գիտեր . Ա Եւ չէք ալ
խորհիր , թէ աղէկ է մեզի՝ որ մէկ
մարդ մը ժողովուրդին համար մեռ-
51 նի , ու բոլոր ազգը չկորսուի ։ Բայց
աս բանը չէ թէ ինքիրմէն զրուե-
ցեց , հապա ան տարուան քահա-
նայապետը ըլլալով , մարգարէա-
ցաւ՝ թէ Յիսուս ազգին համար
52 պիտի մեռնէր . Կնէ չէ թէ մինակ
ազգին համար , Հապա որ Աստու-
ծոյ ցիրուցան եղած որդիներն ալ
մէկտեղ ժողվէ ։
53 Ալ ան օրէն ետև խորհեցան ըրին
54 որ սպաննեն զանիկայ ։ Ուստի
Յիսուս անկէ ետքը համարձակ չէր
պտրտեր Հրէից մէջ . հապա ան-
կէ անապատին մօտ տեղ մը դնաց .

Ցամք Տեառն 33

ՂԳԼ . Թ . 6 ։

ՖՀԺ . 4 , 23 ։

ՍԳԼ . ԺԲ . 30 ։

ՅԳԼ . Ե . 7 ։

ՆԳԼ . Բ . 23 ։ Ժ . 43 ։ ԺԲ . 11 . 18 ։

ԷՄաղ . Բ . 2 ։ Մ . աա . Իգ . 3 ։ Մ . Բ . Ժ . 1 ։ ՂԱ . Իբ . 2 ։

ՈԳԼ . ԺԲ . 19 ։ Գ . 12 . 42 ։

ՂՂԱ . Գ . 2 ։ ԳԼ ԺԲ . 14 ։ Գ . Ե . 6 ։

ՂԳԼ . ԺԲ . 14 ։

Ղ Եա . Լթ . 6 ։ ա Ցօ . Բ . 2 ։

ՈԳԲ Ժ . 16 ։ Եփես . Բ . 14 . 15 . 16 . 17 ։

ՈԳԼ . Գ . 1 . 3 . Է . 1 ։

Ցամք Տեսան 33

ՂՏ՚ես բ Մն. ժգ. 19։ Բ ԳԼ. բ. 13, ե. 1, ղ. 4։

բ Հմր տ։

մէկ. քաղաք մը՝ որուն անունը Ենփրայիմ էր. ու իր աշակերտնե- րուն հետ հոն կը կենար։

55 Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու ան տեղէն շատ մարդիկ զատկէն առաջ Երուսաղէմ ելան, որ ինք- զիրենք մաքրեն։ 56 Եւ կը փնտռէին Յիսուսը, ու տաճարին մէջ կեցած ատենին իրարու կ՚ըսէին. Ձեզի ի՞նչպէս կ՚երեւնայ, թէ ան տօնիս բնաւ պիտի չգայ։ Իսկ քահանա- յապետները ու փարիսեցիները պա- տուէր տուեր էին, որ եթէ մէկը գիտնայ անոր ո՛ւր տեղ ըլլալը՝ ի- մացնէ, որ անիկայ բռնեն։

ԳԼ. ԺԲ

1 Յիսուս կը գովէ Մարիամ՝ որ իր ոտքը օծեց։ 9 Ժողովուրդը կու գայ Ղազարոսը տեսնելու։ 10 Քահանայապետները խորհուրդ կ՚ընեն զա- նիկայ սպաննելու։ 12 Բրիտոս իշու վրայ հեծած՝ Երուսաղէմ կը մտնէ։ 20 Քանի մը Յոյներ կը ցանկան զինքը տեսնելու։ 23 Բ- րիտոս իր մահը կը նախաձոյնէ։ 37 Հրէից կուրութիւնը։ 42 Իշխաններէն շատերը կը հաւատան Յիսուսին, բայց փարիսեցիներէն վախնալով՝ զանիկայ յայտնի չեն դաւանիր։

1 Յետ Յիսուս զատկէն վեց օր առաջ Բեթանիա եկաւ, ուր էր Ղա- զարոս՝ մեռեալը, որն որ Յիսուս 2 մեռելներէն յարուցած էր։ Եւ հոն ա- նոր ընթրիք մը ըրին. ու Մարթա սպասաւորութիւն կ՚ընէր, և Ղա- զարոս անոր հետ սեղանն նստողնե- 3 րուն մէկն էր։ Յետ Մարիամ մէկ լիտր նարդոսի պատուական մեծա- գին եղ առնելով, Յիսուսի ոտ- քերը օծեց, ու իր մազերովը անոր ոտքերը սրբեց. և տունը եղին անուշահոտութեամբը լեցուեցաւ։ 4 Ան ատենը աշակերտներուն մէկը Իսկարիովտացի Սիմոնեան Յու- դան՝ որ զանիկայ պիտի մատնէր, 5 ըսաւ. Ինչո՞ւ համար այս ղը- ցախտեցաւ իրեք հարիւր դահեկա- նի, որ աղքատներուն տրուէր։ 6 Ան ըսաւ, չէ թէ աղքատներուն համար իր հոգն էր, հապա որ գող էր, ու գանձանակը ինքը կը պա- հէր, և ինչ որ ձգուէր՝ ինքը կը 7 կրէր։ Իսկ Յիսուս ըսաւ. Թող տուր ատոր. ատ բանը իմ պա- տանքութեանս օրուանը համար պա- 8 հեց։ Վասն զի աղքատները ամէն ատեն ձեր հետը ունիք, բայց ես ամէն ատեն չունիք։

9 Ուստի Հրէաներէն շատ ժողո- վուրդ անոր հոն ըլլալը իմացան. ու եկան, չէ թէ մինակ Յիսուսի համար, հապա որ Ղազարոսն ալ տեսնեն, զորն որ մեռելներէն յա- 10 րուց։ Իսկ քահանայապետները խորհուրդ ըրին՝ որ Ղազարոսն ալ 11 մեռցընեն. Քանզու որ Հրէաներէն շատերը անոր պատճառովը կ՚եր-

Ցամք Տեսան 33

Թային ու կը հաւատային Յիսու- սին։

12 Յետեւեալ օրը շատ ժողովուրդ՝ որ տօնին եկած էին, երբոր լսեցին Թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, 13 Արմաւենիի ոստեր առին, ու ե- լան զանիկայ դիմաւորելու, և կ՚ա- ղաղակէին. Ովսաննա՝ օրհնեալ է Իսրայէլի թագաւորը՝ որ Տէրոջը 14 անունովը կու գայ։ Եւ Յիսուս աւանակ մը գտնելով՝ անոր վրայ նստաւ, ինչպէս որ գրուած է. 15 Մի՛ վախնար օվ Սիօնի աղջիկ. ահա քու թագաւորդ կու գայ իշու 16 աւանակի վրայ նստած։ Եւ անոր աշակերտները առաջ չիմացան աս բաները. Բայց երբոր Յիսուս փա- ռաւորուեցաւ, յան ատենը միտքեր- նին բերին, Թէ աս բաները անոր համար գրուած էր, և Թէ իրեն աս 17 բաները ըրին անոր։ Եւ ի՛ր Հետը եղող ժողովուրդը վկայութիւն կու տար, Թէ Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց, ու մեռելներէն յա- 18 րուց զանիկայ։ Ասոր համար ալ ժողովուրդը զանիկայ դիմաւորեց. վասն զի լսեցին Թէ անիկայ աս 19 հրաշքը ըրած էր։ Իսկ փարիսե- ցիները իրարու կ՚ըսէին. Չկը տես- նէ՞ք որ օգուտ մը չէք կրնար ընել. ահա բոլոր աշխարհ անոր ետեւէն գնաց։

20 Եւ հոն Հաքանի մը Յոյներ կային տօնին երկրպագութիւն ընելու 21 եկողներուն մէջ։ Ասոնք Փիլիպպո- սին եկան Յոր ինքը Գալիլեայի Բեթսայիդայէն էր, և կ՚աղաչէին անոր՝ ու կ՚ըսէին. Տէր՝ կ՚ուզենք 22 Յիսուսը տեսնել։ Փիլիպպոս ե- կաւ՝ ու Անդրէասին ըսաւ. և նո- րէն Անդրէաս ու Փիլիպպոս Ա՛լէթէ 23 Յիսուսին ըսին։ Յիսուս ալ պա- տասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ. Յ Ժամանակը հասաւ, որ փառաւո- 24 րուի Որդին մարդոյ։ Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի. Թէ որ ցորենին հատը հողին մէջ չյնալով 25 չմեռնի, ինքը մինակ կը մնայ. հապա Թէ որ մեռնի, շատ պա- դիւնք կը բերէ։ Ան որ իր անձը կը սիրէ, պիտի կորսընչցընէ զանի- կայ. և ան որ իր անձը աս աշ- խարհիս մէջ կ՚ատէ, յաւիտենա- կան կենաց համար պիտի պահէ զա- 26 նիկայ։ Թէ որ մէկը ինծի կը ծառայէ, Թող իմ ետեւէս գայ. ու ես ուր որ եմ, իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ. Թէ որ մէկը ին- ծի կը ծառայէ, Հայրը պիտի պա- 27 տուէ զանիկայ։ Հիմա իմ հոգիս խռոված է. և ի՞նչ ըսեմ, Թէ Հայր՝ զիս ազատէ աս ժամէն. Բայց ես ասոր համար եկայ աս

Ցամք Տեսան 33

Ի Պատ. իս. տ։ Պար. Ամ. տ։ Ղու. ժԹ. 35, 36, ՃՃ։

ժ Սաղ. ՃԺը. 25, 26։

ի Պատ. իս. 7։

Լ Ջաբ. Թ. 9։

Ե Ղու. ժը. 34։

ծ ԳԼ. է. 39։ Ի ԳԼ. ժգ. 26։

հ Հմր 11։

Ց ԳԼ. ժա. 47, 48։

Ը Գոր. ժէ. 4։ Ճգ Թագ. ը. 41. 42։ Գոր ը. 27։ ՛ԳԼ. ա. 44։

Ա ԳԼ. ժգ. 32։ ժէ. 1։ Ն ա Կոր. ժե. 36։

Լ Պատ. ժ. 39։ ժգ. 25։ Պար. ը. 35։ Ղու. Թ. 24։ ժէ. 33։ ՚ԳԼ. ժգ. 3։ ժէ. 24։ ա Թես. դ. 16։

Ե Պատ. իզ. 38, 39։ Ղու. ժբ. 50։ ԳԼ. ժգ. 21։ Ղու. իբ. 53։ ԳԼ. ժբ. 37։

Ցամի Տեառն 33

Ղ Մատ. �, 17։

– ԳԼ. ԺԱ. 42։

– Մատ. Ժբ. 29 ։ Ղուկ. Ժ. 1Տ ։ ԳԼ. Ժգ. 30 ։ Ժզ. 11 ։ Գոր. իգ. 1Տ ։ Բ Կոր. Դ. 4 ։ Եփես. Բ. 2 ։ Չ. 12 ։

ՀԳԼ. Գ. 14 ։ Ը. 2Տ ։

Ժ Հով. Ե. 1Տ ։ Եբր. Բ. 9 ։

ԲԳԼ. Փբ. 32 ։ Յ Սադ. ՀԹ. 36, 37 ։ ՃԺ. 4 ։ Նա. Թ. 7 ։ Ծգ. Տ ։ Եզեկ. ԼԸ. 25 ։ Դան. Բ. 44 ։ Է. 14 ։ 27 ։ ՄԼք. Գ. 7 ։

– ԳԼ. Ա, 9 ։ Ը. 12 ։ Թ. 5 ։ ՀՄր 46 ։

† Երեմ. Ժգ. 16 ։ Եփես. Ե. Տ ։

* ԳԼ. Ժա. 10 ։ ա Ցօհ. Ը. 11 ։

Ղ Ղու. Ժչ. Տ ։ Եփես. Ե. Տ ։ ա Թես. Ե. 5 ։ ա Ցօհ. Բ. 9, 10 ։ 11 ։

Ֆ ԳԼ. Ը. 59 ։ Ժա. 54 ։

– Ես. Ծգ. 1 ։ Հով. Ժ. 16 ։

Բ Ես. Ջ. 9, 10 ։ Մատ. Ժգ. 14 ։

Ի Ես. Ջ. 1 ։

Ծ ԳԼ. Է. 13 ։ Թ. 22 ։

Է ԳԼ. Է. 44 ։

ՂՄար. Թ. 36 ։ ա Պետ. ա. 21 ։

Է ԳԼ. Ժգ. 9 ։

ԸՀՄր 35, 36 ։ ԳԼ. Գ. 19 ։ Ը. 12 ։ Թ. 5, 39 ։

28 Ժամին ։ Հայր՝ փառաւորե՛ քու անունդ. Ձան ատենը ձայն մը եկաւ երկինքէն. Փառաւորեցի ալ, ու
29 նորէն պիտի փառաւորեմ։ Եւ ժողովուրդը որ կայներ էր ու կը լսեր, կ՚ըսէին՝ Որոտում կ՚ըլլայ. ոմանք ալ կ՚ըսէին՝ Հրեշտակ խո-
30 սեցաւ իրեն հետ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ. Ո՛չ ձայնը ինծի համար չեկաւ, հապա
31 ձեզի համար։ Հիմա է աս աշխարհիս դատաստանը, հիմա աս աշխարհիս իշխանը դուրս պիտի
32 ձգուի։ Ես ալ երբոր երկրէն բարձրանամ, Ամէնն ալ ինծի
33 պիտի քաշեմ։ Ասիկա բանս կը զրուցէր՝ իմացընելով թէ ինչ կերպ մա-
34 հով պիտի մեռնէր։ Ժողովուրդը անոր պատասխանեց. Մենք օրէնքէն լսեցինք՝ որ Քրիստոսը յաւիտեան կը մնայ, և դուն ինտո՞ր կ՚ըսես թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ. ո՞վ է ատ Որդին մար-
35 դոյ։ Եւ Յիսուս անոնց ըսաւ. Քիչ մը ատեն ալ Լոյսը ձեր հետն է. Քանի որ լոյսը ունիք՝ քալեցէ՛ք, որ չըլլայ թէ մութը ձեր վրայ հաս-
36 նի. Ինչու որ խաւարի մէջ քալողը չգիտեր թէ ուր կ՚երթայ։ Քանի որ լոյսը ունիք, հաւատացէ՛ք ան լոյսին՝ որ լուսոյ որդիք ըլլաք. Յիսուս այս բաները զրուցեց, ու գնաց և պահուըեցաւ անոնցմէ։

37 Եւ թէպէտ այնքան հրաշքներ ըրած էր անոնց առջեւը, բայց ա-
38 նոնք չէին հաւատար իրեն. Որ կատարուի Եսայի մարգարէին խօսքը, որ ըսաւ. Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր պատգամ լուրին, ու Տէրոջը
39 բազուկը որո՞ւ յայտնուեցաւ։ Ասոր համար չէին կրնար հաւատալ,
40 որ դարձեալ կ՚ըսէ Եսայի. Ան նոնց աչքերը կուրցուց, և անոնց սիրտերը թմրեցուց, որ չըլլայ թէ աչքովնին տեսնեն, ու սրտովնին իմանան, և դարձի գան, ու ես
41 անոնք բժշկեմ։ Ասիս խօսեը ըսաւ Եսայի՝ երբոր տեսաւ անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով։
42 Այսու ամենայնիւ իշխաններէն ալ շատերը իրեն հաւատացին. Բայց փարիսեցիներուն համար զանիկայ չէին դաւաներ, որ ժողովարանէն
43 դուրս չձգուին. Ինչու որ մարդոց փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին։

44 Իսկ Յիսուս կ՚աղաղակեր ու կ՚ըսէր. Ան որ ինծի կը հաւատայ՝ ինծի չհաւատար, հապա զիս խրր-
45 կողն. Եւ ան որ զիս կը տեսնէ, կը տեսնէ զիս խրկողը։
46 Ես լոյս եկայ աշխարհ, որ ամէն ով որ ինծի հաւատայ, խաւարի մէջ չը-
47 մնայ։ Եւ թէ որ մէկը իմ խօսքերս լսէ՝ ու չհաւատայ, Ես անիկայ չեմ դատեր. Քանզի ես չեկայ որ աշխարհը դատեմ, հապա որ աշ-
48 խարհը դատեմ։ Ան որ զիս կ՚ամարգէ, և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը որ զանիկայ կը դատէ. Ան խօսքը որ ես խօսեցայ, ան պիտի դատէ զանիկայ վերջին օրը։
49 Ինչու որ Ես ինքիրմէս չխօսեցայ. հապա Հայրը որ զիս խրկեց, ինքը ինծի պատուիրեց թ ինչ որ պիտի ըսեմ՝ և ինչ որ պիտի խօսիմ։
50 Եւ գիտեմ՝ որ անոր պատուիրածը յաւիտենական կեանք է. ուստի ինչ որ ես կը խօսիմ, ինտոր որ Հայրը ինծի ըսաւ, անանկ կը խօսիմ։

ԳԼ. ԺԳ

1 Յիսուս իր աշակերտներուն ոտքերը կը լուայ, յորդորելով զանոնք որ խոնարհութեամբ և սիրով վարուին իրարու հետ. 18 կը նախադասէ Ցուդային զինքը մատնելը, և մէկ նշանով մը մատնիչին ով ըլլալը կը յայտնէ Ցովհաննէսին. 31 կը պատուիրէ իր աշակերտներուն սիրելով սիրել, 36 և կխմացընէ Պետրոսին՝ թէ պիտի ուրանայ զինքը։

1 Ասկէ տօնէն առաջ՝ Յիսուս գիտնալով թէ Իր ժամանակը հասեր է՝ որ աս աշխարհէս ելլէ Հօրը քովը, սիրելով իրենները որ աշխարհի մէջ էին, մինչև վերջն ալ սիրեց զանոնք։
2 Եւ ընթրիքը որ կ՚ըլլար, (Սատանան արդէն խակարիովտացի Սիմոնեան Ցուդային սրտին մէջը դը-
3 րեր էր, որ զանիկայ մատնէ.) Յիսուս գիտնալով թէ Հայրը ամէն բան իր ձեռքը տուաւ, և թէ ինքը Աստուծմէ ելաւ՝ ու Աստուծոյ
4 քովը կ՚երթայ, Ելլնթրիքէն ելաւ, և հանդերձները մէկդի դրաւ, ու ղենկակ մը առնելով մէջքը փաթ-
5 թեց։ Ետքը կոնքին մէջ ջուր լեցուց, ու սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ, և ան իր փաթ-
6 թուած ղենկակովը սրբել։ Ուստի եկաւ Սիմոն Պետրոսին. ան ալ ըսաւ անոր. Տէ՛ր՝ Դուն իմ
7 ոտքերս պիտի լուանաս։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր. Ես ինչ որ կ՚ընեմ՝ դուն հիմա չես իմանար, Ետպա ետքը պի-
8 տի իմանաս։ Պետրոս ըսաւ անոր. Բնաւ դուն իմ ոտքերս պիտի չլուանաս. պատասխան տուաւ անոր Յիսուս. Թէ որ քեզ չլուամ, դուն ինծի հետ բաժին չունիս։
9 Սիմոն Պետրոս ըսաւ անոր. Տէ՛ր՝ ոչ թէ մինակ ոտքերս, հապա նաև
10 ձեռքե՛րս ու գլուխս։ Յիսուս ըսաւ անոր. Լուացուածին՝ ոտքերը լուալէն ի զատ ուրիշ բան պէտք չէ, այլ բոլորովին մաքուր է. և

Ցամի Տեառն 33

Բ ԳԼ. Ե. 45 ։ Ը. 15, 26 ։

Ժ ԳԼ. Գ. 17 ։

Է Ղու. Ժ. 16 ։

ԼԲ Օր. Ժը. 19 ։ Մար. Ժչ. 16 ։

Է ԳԼ. Ը. 38 ։ Ժգ. 10 ։

Թբ Օր ։ Ժը. 1Տ ։

– Մատ. Իզ. 2 ։

Բ ԳԼ. Ժբ. 23 ։ Ժե. 1, 11 ։

Է Ղու. Իբ. 3 ։ ՀՄր 27 ։

Թ Մատ. Ժա. 27 ։ Իբ. 1Տ ։ ԳԼ. Գ. 35 ։ Ժէ. 2 ։ Գոր. Բ. 36 ։ ա Կոր. Ժբ. 27 ։ Եբր. Ը. Տ ։

Է ԳԼ. Ը. 42 ։ Ժչ. 2Տ ։

ՂՂու. Իբ. 27 ։ Փիլ. Բ. 7, Տ ։

ԷՏես Մատ. Գ. 14 ։

ԸՀՄր 12 ։

Բ ԳԼ. Գ. 5 ։ ա Կոր. Ջ. 11 ։ Եփես. Ե. 26 ։ Տիտ. Գ. 5 ։ Եբր. Ժ. 22 ։

Ցամի Տեառն 33

ժդուբ մաքուր էք , բայց չէ թէ
11 ամէնքդ ։ Իւ ասն զի դիտէր զա-
նիկայ որ զինքը պիտի մատնէր .
անոր համար ըսաւ՝ Չէ թէ ամէնքդ
12 ալ մաքուր էք ։ Ու երբոր անոնց
ոտքերը լուաց , և իր հանդերձները
առնելով՝ նորէն սեղան նստաւ , ը-
սաւ անոնց . Գիտէ՞ք ինչ ըրի ձէ-
13 զի ։ Դուք զիս վարդապետ ու
Տէր կը կոչէք , և աղէկ կ՚ըսէք .
14 ինչու որ այդպէս եմ ։ Հապա թէ
որ ես Տէրս ու վարդապետս ձեր
ոտքերը լուացի , պէտք է որ դուք
15 ալ իրարու ոտքերը լուաք ։ Վասն
զի ձեզի մէկ օրինակ մը տուի , որ
ինծոր ես ձեզի ըրի՝ դուք ալ ընէք ։
16 Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի .
ծառան իր տիրոջմէն մեծ չէ , ոչ
ալ խրկուածը զինքը խրկողէն մեծ
17 է ։ Եթէ դուք աս բաները գի-
տէք , երանելի էք՝ թէ որ ասոնք
18 կատարէք ։ Չէ թէ ձեր ամենուն
համար կ՚ըսեմ , ես զիս կը
ճանչնամ անոնք որ ես ընտրեցի ,
հապա որ ան գրուածը կատարուի
թէ՝ Ուն որ իմ հետս հաց կ՚ուտէր ,
19 ինծի դէմ կրունկ վերցուց ։ Ես հի-
մակուընէ կ՚ըսեմ ձեզի՝ քանի որ
չէ եղեր , որ երբոր ըլլայ հաւատաք
20 Թէ ես եմ ։ Ճշմարիտ ճշմա-
րիտ կ՚ըսեմ ձեզի . Ով որ կ՚ըն-
դունի անիկայ որ ես կը խրկեմ ,
զիս կ՚ընդունի . և ով որ զիս կ՚ըն-
դունի , զիս խրկողը կ՚ընդունի ։
21 Յիսուս երբոր աս ըսաւ , Էր հո-
գիին մէջ խռովեցաւ , և վկայեց ը-
սելով . Ճշմարիտ ճշմարիտ կ՚ը-
սեմ ձեզի , Որ ձեզմէ մէկը զիս պի-
22 տի մատնէ ։ Ուստի աշակերտները
տարակուսած իրարու կը նայէին ,
23 Թէ որոյ համար կը զրուցէ ։ Ու
աշակերտներէն մէկը կար Ցիսուսին
*գովը նստած , որն որ Ցիսուս կը
24 սիրէր ։ Եւ Սիմոն Պետրոս անոր
աչք կ՚ընէր հարցընելու՝ Թէ ով
պիտի ըլլայ անիկայ՝ որուն համար
25 կը զրուցէ ։ Ան ալ Ցիսուսին
կուրծքին վրայ իյնալով՝ ըսաւ ա-
26 նոր . Տէր՝ ով է ան ։ Ցիսուս
պատասխան տուաւ . Անիկայ է
որուն որ պատառը կը թրջեմ ու
կու տամ . և թրջելով պատառը
Իսկարիովտացի Սիմոնեան Ցուդա-
27 յին տուաւ ։ Ու պատառէն ետքը
Սատանան անոր ներսը մտաւ ։
Եւ Ցիսուս ըսաւ անոր . Ինչ որ
28 պիտի ընես , չուտով ըրէ ։ Բայց
ոս բանը սեղան նստողներէն մէկը
չհասկըցաւ , Թէ ինչու համար ը-
29 սաւ անոր ։ Վասն զի ոմանք կը
խորհէին Թէ՝ Որովհետև դանձա-
նակը Ցուդան կը պահէր , Ցի-
սուս անոր կ՚ըսէր . Տօնին որ
մեզի աս տօնին պէտք է ,
կամ Թէ՝ որ աղքատներուն բան մը
30 տայ ։ Անիկայ ալ պատառը ա-
ռածին պէս՝ շուտ մը դուրս ելաւ ,
ու գիշեր էր ։
31 Ու երբոր անիկայ դուրս ելաւ ,
Ցիսուս ըսաւ . Հիմա փառաւո-
րուեցաւ Որդին մարդոյ , ու Աս-
տուած փառաւորուեցաւ անով .
32 Թէ որ Աստուած անով փառա-
ւորուեցաւ , Աստուած ալ անիկայ
իր անձովը պիտի փառաւորէ , Եւ
շուտով պիտի փառաւորէ անիկայ ։
33 Որդեակք՝ քիչ մը ատեն ալ ձեզի
հետ եմ . զիս պիտի փնտռէք .
Եւ ինչպէս որ Հրեաներուն ըսի՝
Թէ Ուր որ ես կ՚երթամ , դուք
չէք կրնար գալ , հիմա ձեզի ալ
34 կ՚ըսեմ ։ Ընոր պատուիրան մը
կու տամ ձեզի՝ որ միզմիզ սիրէք ,
ինծոր որ ես ձեզ սիրեցի , որ դուք
35 ալ միզմիզ սիրէք ։ Այսով ա-
մէնը պիտի դիտնան Թէ իմ աշա-
կերտներս էք , Թէ որ իրարու վրայ
36 սէր ունենաք ։ Սիմոն Պետրոս
ըսաւ անոր . Տէր՝ ուր կ՚երթաս .
Ցիսուս պատասխան տուաւ անոր .
Ուր որ ես կ՚երթամ , դուն հիմա
չես կրնար իմ ետևէս գալ , Բայց
ետքը պիտի գաս իմ ետևէս ։
37 Պետրոս ըսաւ անոր . Տէր՝ ինչու
հիմա չեմ կրնար քու ետևէդ գալ .
Ես իմ կեանքս ալ քեզի համար
38 պիտի դնեմ ։ Ցիսուս պատասխան
տուաւ անոր . Քու կեանքդ պիտի
դնես ինծի համար . Ճշմարիտ ճշ-
մարիտ կ՚ըսեմ քեզի , Հաւը պիտի
չկանչի՝ մինչև որ դուն իրեք անգամ
զիս ուրանաս ։

ԳԼ . ԺԴ

1 Քրիստոս կը մխիթարէ իր աշակերտները՝ երկ-
նային երջանկութեան յոյսը անոնց ուշերը
դնելով . 6 կը ծանուցանէ Թէ ինքն է ճանա-
պարհը՝ ճշմարտութիւնը և կեանքը , և Թէ
ինքը Հօրը հետ մէկ է . 18 կը խոստանայ որ
իր անունովը եղած աղօթքը պիտի կատարուի .
15 կը պատուիրէ սէր և հնազանդութիւն
ունենալ իրեն . 16 կը խոստանայ խրկել
Մխիթարիչ Սուրբ Հոգին . 27 ու իր խաղա-
ղութիւնը կու տայ անոնց ։

1 Մի՛ խռովիր Աստուծոյ
հաւատացէք , ինծի՛ ալ հա-
2 ւատացէք ։ Իմ Հօրս տունը շատ
բնակարաններ կան . ապա Թէ ոչ՝
ես ձեզի պիտի ըսէի . Երթամ ու
3 տեղ կը պատրաս-
տեմ ։ Եւ Թէ որ երթամ ու
ձեզի տեղ պատրաստեմ , Ետքէն
կու գամ՝ և ձեզ ինծի կառնեմ .
Որպէս զի ուր որ ես եմ՝ դուք
4 ալ հոն ըլլաք ։ Եւ ուր որ ես կ՚եր-
թամ՝ գիտէք , ու ճամբան ալ
գիտէք ։
5 Թովմաս ըսաւ անոր . Տէր՝ չենք

Ցամի Տեառն 33

Ես Գլ . ժ . 23 ։

Մատթ . իգ . 8 , 10 ։ Ղուկ . գ . 46 ։ Ա Կոր . ը . 6 ։ ժդ . 3 ։ Փիլ . ը . 11 ։

Ես Ղուկ . իը . 27 ։

Հովհ . ժդ . 10 ։ Գաղ . գ . 1 , 2 ։ Ա Պետ . ե . 5 ։

Մատթ . ժա . 29 ։ Փիլ . ը . 5 ։ Ա Պետ . ե . 21 ։ Ա Յովհ . ը . 6 ։

Մատթ . ժ . 24 ։ Ղուկ . զ . 40 ։ Գլ . ժե . 20 ։

Ցակ . ա . 23 ։ Ա Յովհ . խա . 9 ։ Մատթ . իգ . 23 ։ Հռ . 21 ։

Գլ . ժդ . 29 ։ ժզ . 4 ։

Մատթ . ժ . 40 ։ իե . 40 ։ Ղուկ . ժ . 16 ։

Մատթ . իգ . 21 ։ Մարկ . ժգ . 18 ։ Ղուկ . իը . 21 ։

Գլ . ժբ . 27 ։ Գործ . ա . 17 ։ Ա Յովհ . բ . 19 ։

Գլ . ժթ . 26 ։ ի . 2 ։ իա . 7 , 20 , 24 ։

Յամ . գագ .

Ղուկ . ի . 3 ։ Գլ . զ . 71 ։

Գ Գլ . ժբ . 6 ։

Ցամի Տեառն 33

Գլ . ժբ . 23 ։

Գլ . ժդ . 13 ։ Պետ . դ . 11 ։

Գլ . ժե . 1 , 4 , 5 , 6 ։

Գլ . ժբ . 23 ։

Գլ . ե . 34 ։ ը . 21 ։

Ղուկ . ժթ . 18 ։ Գլ . ժե . 12 , 17 ։ Եփ . ե . 2 ։ Մատթ . դ . 9 ։ Ցակ . բ . 8 ։ Պետ . ա . 22 ։ Յովհ . բ . 7 , 8 ։ գ . 11 , 23 ։ դ . 21 ։

Յովհ . բ . 5 ։ դ . 20 ։

Գլ . իա . 18 ։ Պետ . ա . 14 ։

Մատթ . իգ . 33 , 34 , 35 ։ Մարկ . ժգ . 29 , 30 , 31 ։ Ղուկ . իբ . 33 , 34 ։

Հբ . 27 ։ Գլ . ժզ . 3 , 23 ։

Ես Գլ . ժգ . 33 , 36 ։

Գ Հմր . 18 , 28 ։ Գործ . ա . 11 ։

Գլ . ժբ . 26 , ժե . 24 ։ Մատթ . դ . 16 ։

Ցամք Տեառն 33

Ե Երր. Թ. 8։ Ղկ. ա. 17։ Ը. 32։
Ե Գլ. ա. 4։ ժա. 25։
Ը Գլ. ժ. 9։
Ի Գր. Ը. 19։

Ժ Գլ. ժբ. 45։ Կղ. ա. 15։ Երր. ա. 3։
Լ Հմր 20։ Գր ժ. 38։ ժէ. 21-23։
Ղ Գլ. ե. 19։ է. 16։ Ը. 23։ ժբ. 49։

Ի Գլ. ե. 36։ ժ. 33։
Ի Մատ. իա. 21։ Մր. ժզ. 17։ Ղս. ժ. 17։

Մ Մատ. է. 7։ իա. 22։ Մր. ժա. 24։ Ղս. ժա. 9։ Գլ. ժէ. 7, 16։ ժզ. 23, 24։ Յայ. ա. 5։ ա Յովհ. գ. 22։ ե. 14։
Ն Հմր 21, 23։ Գլ. ժե. 10, 14։ ա Յովհ. ե. 3։
Շ Գլ. ժե. 26։ ժզ. 7։ Հբ. ովս. Ը. 15։ 26։
Ղ Գլ. ժե. 26։ ժզ. 13։ ա Յովհ. գ. 6։ ե ա Կոր՝ Ը. 14։ յա Յովհ. Բ. 27։ ի Մատ. իբ. 20։
Ն Հմր 3։ 25։
Ղ Գլ. ժզ. 16։ ա ա Կոր. ժե. 20։
Ն Հմր 10։ Գլ. ժ. 38։ ժէ. 21։ 23, 26։ Ո Հմր 13, 23։ ա Յովհ. Բ. 3։ Ե. 3։

գիտեր ուր կ'երթաս , և ի՞նչպէս
6 կրնանք ճամբան գիտնալ ։ Յիսուս ըսաւ անոր . Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը ու կեանքը . ոմկը Հօրը քովէ չգար .
7 եթէ ինծմէ ։ Եթէ որ զիս ճանչնայիք՝ իմ Հայրս ալ կը ճանչնայիք , և ասկէետև կը ճանչնաք անիկայ՝ ու տեսաք անիկայ ։
8 Փիլիպպոս ըսաւ անոր . Տէր՝ Հայրը մեզի ցուցուր , ու հերիք է
9 մեզի ։ Ըսաւ անոր Յիսուս . Այսքան ժամանակ ձեզի հետ եմ , և զիս չճանչցար Փիլիպպոս . ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ , և դուն ինծի՞ր կ'ըսես՝ Եթէ Հայրը մեզի
10 ցուցուր ։ Չե՞ս հաւատար , եթէ ես Հօրը մէջն եմ , ու Հայրը իմ մէջս է . ան խօսքերը որ ես ձեզի կը խօսիմ , Ես Թէ ինքիրմէս կը խօսիմ . Հապա Հայրը որ իմ մէջս բնակած է , անիկայ կը գործէ ան
11 գործերը ։ Հաւատացէք ինծի , Թէ ես Հօրը մէջն եմ ու Հայրը
12 իմ մէջս է . Է՛ապա Թէ ոչ՝ գոնէ գործերուն համար ինծի հաւատացէք ։ Ճշմարիտ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ , Ան որ ինծի կը հաւատայ , ան գործքերը որ ես կը գործեմ , ինքն ալ պիտի գործէ , և անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ . ինչու ու ես Հօրս քով
13 զի կ'երթամ ։ Ինչ իմ անունովս ինչ որ խնդրէք , պիտի կատարեմ անիկայ , որ Հայրը Որդիովը փա-
14 ռաւորուի . Թէ որ իմ անունովս բան մը խնդրէք , ես՛՛՛ պիտի
15 կատարեմ ։ Հթէ որ զիս կը սիրէք , իմ պատուիրանքներս պա-
16 հեցէք ։ Ես ալ Հօրը պիտի աղաչեմ , ձեզ ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի , որ յաւիտեան
17 ձեզի հետ բնակի . Ճշմարտութեան Հոգին , որ աս աշխարհս անիկայ չկրնար ընդունիլ . ինչու որ չտեսներ անիկայ , ու չճանչնար անիկայ . բայց դուք կը ճանչնաք անիկայ , ինչու որ ձեր քովը կը բնակի , ու ձեր հետը պիտի ըլլայ ։
18 Ձեզ որը չեմ Թողուր , Ի՛ւս գամ
19 ձեզի ։ Փիչ մը ատենէն ետև՝ ալ աշխարհս զիս չտեսներ , Բայց դուք պիտի տեսնէք զիս , Ինչու որ ես կենդանի եմ , և դուք կեն-
20 դանի պիտի ըլլաք ։ Ան օրը պիտի գիտնաք Թէ ես իմ Հօրս մէջն եմ , և դուք իմ մէջս , Ես ալ ձեր
21 մէջը ։ Ունն որ իմ պատուիրներս կը բռնէ՝ ու կը պահէ անոնք , ա-նիկայ է զիս սիրողը . և ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սի-րուի . ու ես անիկայ պիտի սիրեմ , և ինքզինքս անոր պիտի յայտնեմ ։

22 Ըսաւ անոր Ղեբուկա , (ոչ Իս-կարիովտացին .) Տէր՝ ինչպէս կ'ըլլայ որ դուն ինքզինքդ մեզի պիտի յայտնես , և չէ Թէ աշխար-
23 հին ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր . Թէ որ մէկը զիս կը սիրէ՝ իմ խօսքս պիտի պահէ . ու իմ Հայրս անիկայ պիտի սիրէ . և անոր պիտի գանք , ու անոր
24 քովը օթևան պիտի ընենք , Ան որ զիս չսիրեր , իմ խօսքերս չպահեր . Ու ան խօսքը որ կը լսէք՝ իմս չէ , Հապա Հօրը՝ որ զիս խրկեց ։
25 Ա՛ս բաները մեզի խօսեցայ՝ բանի
26 մը մեզի քովս եմ ։ Բայց Մխի-թարիչը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անունովս պիտի խրկէ , Ան՛՛՛ կայ մեզի բոլորը պիտի սորվեցընէ , և ինչ որ մեզի բսի՝ միտքերնիդ
27 պիտի բերէ ։ Խաղաղութիւն կը Թողում մեզի , իմ խաղաղութիւնս կու տամ մեզի . չէ Թէ ինչպէս որ աշխարհս կու տայ՝ ես մեզի կու տամ . Սիրտերնիդ չը-
28 խռովի , ու չվախնայ ։ Լսեցիք որ ես ըսի ձեզի Թէ , Կ'երթամ ու մեզի կու գամ . Եթէ որ զիս սի-րէիք , պիտի ուրախանայիք , Թէ ես Հօրը քով կ'երթամ . Ինչու
29 որ իմ Հայրս ինծմէ մեծ է , Եւ հիմակուց դեռ չեղած ըսի մեզի ,
30 որ երբոր ըլլայ՝ հաւատաք ։ Ալ մեզ հետը շատ պիտի չխօսիմ . Ինչու որ աս աշխարհիս իշխանը կու գայ , և իմ վրաս բան մը չու-
31 նի . Միայն Թէ աշխարհս դիտնայ որ ես Հայրը կը սիրեմ , Ու ինչ-պէս որ Հայրը ինծի պատուիրեց , անանկ կ'ընեմ . Ելէք ասկէ երթանք ։

ԳԼ . ԺԵ

1 Քրիստոսի ու իր աղտմեներուն մէջ եղած մի-խիթարութիւնը և փոխադարձ սէրը՝ որմէն առակովը բացատրուած ։ 18 Քրիստոսի ա-շակերտներուն մխիթարութիւնը՝ երբոր ա-նոնք աշխարհս ատելի կ'ըլլան և կը հալա-ծուին ։ 26 Սուրբ Հոգիին և առաքեալնե-րուն պաշտօնը ։

1 Ես եմ ճշմարիտ որթը , և իմ
2 Հայրս մշակն է ։ Ամէն ճիւղ որ իմ վրաս է՝ ու պտուղ չբերեր , կը կտրէ զանիկայ . և ամէնը որ պտուղ կը բերէ , կը մաքրէ զանիկայ , որ ալ աւելի պտուղ բերէ ։
3 Դուք հիմակուընկ մաքուր էք ան-
4 խօսքով՝ որ ձեզի խօսեր եմ ։ Եմ՛՛՛ կեցէք ու ես ձեր մէջը ։ Ինչ-պէս որ ճիւղը չի կրնար ինքիրմէն պտուղ բերել , Թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ , նոյնպէս ալ դուք չէ՛ կրնար , Թէ որ իմ վրաս
5 հաստատուած չըլլաք ։ Ես որթն եմ՝ ա՛՛ դուք ճիւղերն էք ։ ան որ իմ վրաս հաստատուած է՝ և ես ա-

Ցամք Տեառն 33

Ղ Ղկ. ը. 16։

– Հմր 15։

– ա Յովհ. Բ. 24։ Յայտ. գ. 20։

Ձ Հմր 10։ Գլ. ե. 19-38։ է. 16։ Ը. 23։ ժբ. 49։ ո Հմր 16։ Դ.ա.իդ.49։ Գլ. ժե. 26։ ժզ. 7։
Ը Գլ. Բ. 22։ ժբ. 16։ ժզ. 13։ ա Յովհ. Բ. 20, 27։ ի Գործ. գ. 7։ Կղ. գ. 15։

– Հմր 1։

Ֆ Հմր 3, 18։
Ֆ Հմր 12։ Գլ. ժզ. 16։ ի. 17։
* Ուր՛՛՛ որ բսի Թէ՝
օ Գլ. ե. 13։ ժ. 30։ Փիլ. Բ. 6։
Ֆ Գլ. ժգ. 19։ ժզ. 4։
– Գլ. ժբ. 31։ ժզ. 11։
Ք Գլ. ժ. 18։ Փիլ. Բ. 8։ Երր. ե. 8։

Ղ Ղկ. ը. 16։

– Մատ. ժե. 13։ –

Ք Գլ. ժշ. 10։ ժէ. 17։ Ե. վի. ե. 26։ ա Պետ. ա. 22։
ֆ Կղ. ա. 23։ ա Յովհ. Բ. 6։

Յաղ. Ցեռան 33

Ա Ղ. · Ձ ղ Տ · Փչ. · ա · 11 · դ · 13 · Գար · դ· 12։ Է Մատ · գ · 10 · է · 19 ·

Ղ Ձ ր 16։ Գլ· Ժ դ · 13· 14· Ժ ղ · 23 · Է Մատ · ե 16 · Փէ. · ա 11 ·

Ը Գլ· ր · 31 · Ժ դ · 35 ·

Բ Գլ Ժ դ · 15 · 21 · 23 ·

Ծ Գլ· Ժ ղ · 24 · Ժ է · 13· ա Ցօ՚ն · ա · 4 ·

Է Գլ · Ժ դ · 34 · ա Թես· դ · 9 · ա Պետ · գ · Տ · ա Ցօ՚ն · դ · 11 · դ · 21 ·

Լ Գլ· Ժ 11· 15 · Հռով· ե · 7 · Տ · Եբէ · ե · 2 · ա Ցօ՚ն · գ · 16 ·

Է Գլ · Ժ դ 15 · 23 · Տէս Մատ · Ժր · 50 ·

Ծ Տէս Ցն · Ժր · 17 · Գլ· Ժէ. 26· Գար· Ի· 27·

Է Գլ · գ · 7Ի · Ժ դ · 18 · ա Ցօ՚ն · գ · 10 · 19 ·

Հ Մատ · Իր· 19 · Մ՚ար · Ժ ղ · 15 · Պղ· ա · 6 ·

Ե Հ՚ր 7 · Գլ· Ժ դ · 18 ·

Ղ Հ՚ր 12 ·

Ճ ա Ցօ՚ն · գ · 1 · 13 ·

Յ ա Ցօ՚ն · գ · 5 ·

Ա Ղ · Ժ է · 14 ·

Ն Մատ · Ժ · 24 · Ղու · գ · 40 · Գլ· Ժ դ · 16 ·

Լեղէկ · գ · 7 ·

Ա Մատ · Ժ · 22· Իդ · 9 · Գլ· Ժ ղ · 8 ·

Լ Գլ· Ի · 41· Պ Հռով · ա · 20 · Զակ · գ · 7 ·

Նոր վրաց, անիկայ շատ Տպատուղ կը բերէ. ինչու որ առանց ինծի բան 6 մը չէք կրնար ընել։ Թէ որ մէկը իմ վրաս հաստատուած չէ, Է անիկայ ձիւղի մը պէս դուրս ձգուած ու չորցած է. և՝ կը ժողվեն զանոնք, ու կրակը կը նետեն, ու կ՚այրին։ 7 Թէ որ դուք իմ մէջս կենաք՝ և իմ խօսքերս ալ ձեր մէջս կենան, Ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք, ու 8 պիտի ըլլայ ձեզի։ Է Աստ իմ Հայրս փառաւորուեցաւ, որ դուք շատ պտուղ բերէք, Ըու իմ աշակերտներս ըլլաք։

Ի Երր · Ժղ · 9 ։
Ֆ ԳԼ · Թ · 31 ։
Բ Գր · Իգ · 18 ։ Եփե · ա · 18 ։ Կող · ա · 12 ։ գ · 24 ։ Երր · Թ · 15 ։ ա Պետ · ա · 4 ։
Ի ա Թագ · Ժբ · 3 ։ ա Կոր · Թ · 12 ։ բ Կոր · է · 2 ։ Ժա · 9 ։ Ժբ · 17 ։
Ղ Գր · Ժբ · 3 ։ ա Կոր · գ · 1 ։ Ժբ · 13 ։ Եփե · գ · 29 ։ ա Թես. · գ · 11 ։

Ճառի Տեառն 60

Ճիսուսին խօսքը, որ ինքը ըսաւ, Աւելի երանելի է տալը՝ քան թէ
36 առնելը։ Եւ աս որ ըսաւ, անոնց ամենուն հետ Էծնկան վրայ գալով՝
37 աղօթք ըրաւ։ Ամէնքն ալ սաստիկ կու լային, ու Պօղոսին ի պաշարանոցին վրայ իյնալով՝ զանիկայ
38 կը համբուրէին։ Սիրտերնին աւելի կը ցաւէր ան խօսքին համար, ՚որ կ՚ըսէր՝ թէ ալ պիտի չտեսնեն իր երեսը. և զանիկայ ճամբայ դրին մինչև նաւը երթալով։

ԳԼ. ԻԸ

1 Պօղոս բնաւ չհամգուիր Երուսաղէմ երթալէն ետև կենալու։ 9 Փիլիպպոսին մարգարէ աղջիկները։ 17 Պօղոս Երուսաղէմ կ՚երթայ, 27 ուր տեղ կը բռնուի, ու մեծ վտանգի մէջ կ՚իյնայ։ 31 բայց հազարապետը ազատելով զանիկայ, հրաման կու տայ որ ժողովուրդին խօսի։

1 Եւ երբոր ելանք ու անոնցմէ զատուեցանք՝ շիտակ նաւելով՝ Կով եկանք, և միւս օրը Հռոդոն, ու
2 անկէ Պատարա։ Եւ նաւ մը գտանք որ Փիւնիկէ կ՚երթար, ու անոր մէջը մտնելով՝ ճամբայ ե-
3 լանք։ Եւ Կիպրոս որ երևցաւ, զանիկայ ձախ կողմերնիս թողտալով դէպ ՚ի Սիւրիա նաւեցինք, և Տիւրոս ելանք. ինչու որ նաւը
4 հոն պիտի թափէր իր բեռը։ Եւ աշակերտները գտնելով՝ եօթը օր հոն կեցանք, որոնք Սուրբ Հոգիով կ՚ըսէին Պօղոսին որ Երու-
5 սաղէմ չելլէ։ Ու երբոր ան օրերը անցուցինք, ելանք ու կ՚երթայինք. ամէնն ալ կնիկներով ու տղաքներով մինչև քաղաքէն դուրս մեզ ճամբայ դրին։ Եւ ծովուն եզերքը ծնկան վրայ գալով՝ աղօթք
6 ըրինք։ Ու իրարու հրաժարական ողջոյն տալով՝ մենք նաւը ելանք, և անոնք ալ տեղերնին դարձան։ Իսկ
7 մենք Տիւրոսէն ըլլալով՝ և ծովու ճամբորդութիւնը լմընցնելով՝ Պտողեմայիս հասանք, ու եղբայրները բարևելով՝ օր մը քո-
8 վէրնին կեցանք։ Եւ հետևեալ օրը ելլելով ու կեսարիա եկանք, և Փիլիպպոս Աւետարանչին տունը մտնելով, որ ինքը եօթնէն մէն
9 էր, անոր քովը կեցանք։ Անիկայ չորս հատ կոյս աղջիկ ունէր, որ
10 մարգարէութիւն կ՚ընէին։ Եւ հոն շատ օրեր որ կեցանք, Հրեաստանէն մարգարէ մը իջաւ Ագաբոս
11 անունով։ Ու երբոր մեզի եկաւ, Պօղոսին գօտին առնելով իր ձեռքերը ու ոտքերը կապեց, և ըսաւ։ Ասանկ կ՚ըսէ Հոգին Սուրբ, Ան մարդը՝ որուն է աս գօտին, ասանկ պիտի կապեն Հրէաները Երուսաղէմի մէջ ու հեթանոս-
12 ներուն ձեռքը պիտի մատնեն։ Ու երբոր աս լսեցինք, աղաչեցինք մենք ալ և տեղացիք ալ որ Երուսա-
13 ղէմ չելլէ։ Իսկ Պօղոս պատասխան տուաւ. Ի՞նչ կ՚ընէք, կու լա՞ կու լաք ու իմ սիրտս կը ճմլէք. քանզի ես չէ թէ միայն Երուսաղէմի մէջ կապուելու, հապա նաև մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Ճիսուսի անունը համար։
14 Եւ ինքը որ մտիկ չըրաւ, լուռ կեցանք, ու ըսինք՝ Ի Տէրոջը կամքը թող ըլլայ։
15 Եւ ան օրերէն ետև պատրաս-
16 տուելով՝ Երուսաղէմ ելանք։ Կեսարացի աշակերտներէն ալ Ի-նէերը մեր հետը եկան, և Ֆիլտարին առջի աշակերտի մը՝ Կիպրացի Մնասոնին, որուն քովը պիտի
17 կենայինք։ Ու երբոր Երուսաղէմ մտանք, եղբայրները ուրախու-
18 թեամբ մեզ ընդունեցին։ Եւ հետևեալ օրը Պօղոս մեզի հետ Յակոբոսին քովը գնաց, ու բոլոր
19 երէցներն ալ եկան։ Եւ զանոնք բարևելով՝ մի ըստ միոջէ կը պատմէր ՚ի նչ որ Աստուած հեթանոսներուն մէջը ըրաւ Իր ծառայութիւ-
20 նովը։ Անոնք ալ լսելով փառք կու տային Աստուծոյ, և ըսին իրեն. Կը տեսնէ՞ս եղբայր՝ քանի բիւրաւոր հաւատացեալ Հրէաներ կան, ու ամէնն ալ ՚ի օրէնքին նախանձա-
21 ւոր են։ Բայց քու վրայովդ իմացան թէ դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած Հրէաներուն Մովսէսէն ապստամբիլ կը սորվեցընես, բսելով որ տղաքնին չթլփատեն, և սովորութիւններուն չսմմատ չր-
22 վարուին։ Ուրդ՝ ինչ պիտի ըլլայ, անշուշտ բազմութիւն պիտի ժողվուի. ինչու որ պիտի լսեն թէ ե-
23 կեր ես։ Ուստի աս քանը ըրէ որ
24 քեզի կ՚ըսենք. Մեր քովը չորս մարդ կայ, որոնք իրենց վրայ ուխտ դրած են, անոնք առ՝ իրենց հետը մաքրուէ, և անոնց համար ծախք ըրէ, որ ի իրենց գլուխը ածիլեն. որպէս զի չամէնն ալ գիտնան թէ քու վրայովդ իմացած բաներնին ոչինչ է, հապա դուն ալ Օր հետը կը քալես օրէնքը պահելու մէջ։
25 Բայց հաւատքի եկող հեթանոսներուն համար ՚մենք թուղթ իրկեցինք՝ ինտր որ որոշեցինք, որ ա-
26 նոնք բնաւ ասանկ բաներ չպահեն. միայն թէ զգուշանան կուռքերու զոհուածէ, ու արիւնէ, և խեղդուածէ, ու պոռնկութենէ։ Ան ատենը Պօղոս ան մարդիկը առաւ, ու հետևեալ օրը անոնց հետ մաքրուած ՚ի տաճարը մտաւ, Հմայրութեան օրերը լմընալը յայտնե-

Ճառի Տեառն 60

ԸԳԼ. Ե. 59։ ԻԱ. 5։

ՌԾՆ. ԻԵ. 14։ ԻՀ. 29։

Ի ՀԱՐ. 25։

Ի ՄԱԱ. Հ. 10։ ԻՀ. 43։ ՂՈՒ. ԺԱ. 2. ԻԲ. 42։

ԻԳԼ. Ժ. 4։

ԻԳԼ. ԺԵ. 13։ ԳԱՂ. Ա. 19։ Բ. 9։

ԼԳԼ. ԺԵ. 4. 12։ ՀԻՌՈՎ. ԺԵ. 18. 19։

Ի ԳԼ. Ա. 17։ Ի. 24։

ԺԳԼ. ԻԲ. 3։ ՀՈՎ. Ժ. 2։ ԳԱՂ. Ա. 14։

– ՀԱՐ. 12։ ԳԼ. Ի. 23։

Բ ԳԼ. Ի. 36։

ՖԵՒՓ. Դ. 11։ Բ ՏԻՄ. Դ. 5։

Տ ԳԼ. Զ 5։ Ը 23. 40։

Ի ՑՈՎԻԼ. Բ. 28։ ԳԼ Բ 17։

Ղ ԳԼ ԺԱ. 28։

Ի ՀԱՐ. 33։ ԳԼ. Ի. 28։

ԸԳԼ. Ի. 24։

ՂԱ. Ա. 3։ ՂՈՒԿ. Ա. 2։ ԳԱՂ. Ա. 14։

ՂԹՒԼ. Զ. 2. 13. 18։ ԳԼ. ԺԸ. 18։

ՀԳԼ. ԺԵ. 20. 29։

ՅԳԼ. ԻՀ. 18։ ԼՔԱԼ. Զ. 13։

Ցամք Տեառն 60

լու համար . մինչև որ անոնց ամէն մէկուն համար պատարագ մատուցեալ ։

27 Ու երբոր եօթը օրերը լմննալու վրայ էին , Ասիացի Հրէաները զանիկայ տաճարին մէջը տեսնելով՝ բոլոր բազմութիւնը խռովեցուցին , ու անոր ձեռք զարկած՝ կը կանչէին ,

28 Իսրայէլացի մարդիկ՝ օգնութեան հասէք . ասիկա՛ն մարդն է՝ որ ամէն տեղ ժողովուրդին , և օրէնքին , ու ասի տեղին դէմ բան կը սորվեցընէ ամէնուն . մինչև որ տաճարին մէջը Ելլներ ալ մտցուց ,

29 և ասի սուրբ տեղը պղծեց . (Ինչու որ առաջուց Եփեսացի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջը տեսեր էին , և կը կարծէին թէ՝ Պօղոս անիկայ տաճարը մտցուց .) ։

30 Ու բոլոր քաղաքը շարժեցաւ , և ժողովուրդը դիզուեցաւ . ու բռնեցին Պօղոսը տաճարէն դուրս քաշեցին . և շուտ մը դռները գոցուեցաւ .

31 Ու երբոր անոնք կ՚ուզէին անիկայ սպաննել , լուր հասաւ գունդին հազարապետին՝ թէ բոլոր Երուսաղէմ

32 խառնմը իրար անցեր է ։ Ան ալ անմիջապէս զինուորներ , և հարիւրապետներ առած՝ անոնց վրայ վազեց . անոնք ալ հազարապետը ու զինուորները տեսնելով՝ Պօղոսը

33 ձեռքէն դադրեցան ։ Ան ատենը հազարապետը մօտենալով՝ բռնեց զանիկայ , և հրաման ըրաւ որ կրկին շղթայով կապեն . ու կը հարցընէր՝ թէ անիկայ ո՞վ է , ու ի՞նչ

34 բնիկ է ։ Եւ բազմութենէն մէկը մէկ կերպ՝ ու մէկալը ուրիշ կերպ բան կը կանչուըտէին . իսկ երբոր չկրցաւ ան չխռոմբութենէն ստոյգը գիտնալ , հրամայեց բերնին տանին ։

35 Ու երբոր աստիճանները հասաւ , անոնք պատահեցաւ որ զինուորները վեր վերցընէն անիկայ՝ ժողովուրդին

36 դին բռնութեանը համար . Ինչու որ ժողովուրդին բազմութիւնը ետևէն կ՚երթար , ու կ՚ըսէին . Վերցուր

37 աստիկայ ։ Ու երբոր Պօղոս բերդը մտնելու վրայ էր , հազարապետին ըսաւ . Արդեօք կարելի՞ է որ քեզի

38 բան մը խօսիմ ։ Ան ալ ըսաւ , Գուշակէն գիտե՞ս . Չէ՞ որ դուն ան եգիպտացին ես , որ առաջ չորս հազար *սրիկայ մարդիկ ապստամբեցուցիր , ու անաս

39 պատը հանեցիր ։ Պօղոս ալ ըսաւ . Ես Հրէայ մարդ մըն եմ՝ Կիլիկիոյ Տարսոնին , չէ թէ աննշան քաղաքի մը քաղաքացի , ու կ՚աղաչեմ քեզի՝ ինծի հրաման տուր որ ժողովուրդին խօսիմ ։

40 Ու երբոր անիկայ հրաման տուաւ ,

Պօղոս անդրէվին վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ժողովուրդին , ու երբոր աղէկ մը լռութիւն եղաւ , Եբրայական լեզուով խօսեցաւ ասոնց , ու ըսաւ .

Ցամք Տեառն 60

- Գլ . ԺԷ . 17 ։

Գլ . ԻԲ

1 Պօղոս մի՛ բսա միշէ կը պատմէ իր դարձի գալը . 17 և իր առաքելութեան կանչուիլը . 22 բայց Հեթանոսներուն խօսքը բնելուն պէս՝ ժողովուրդը բարձրաձայն կ՚աղաղակեն անոր դէմ ։ 24 Հազարապետը հրաման կ՚ընէ որ Պօղոս . 25 բայց անիկայ իր Հռովմայեցի ըլլալը իմացընելով՝ կ՚ազատի ։

1 Արդիկ՝ եղբայրներ և հայրեր՝ ինծի մտիկ ըրէք որ հիմա ձեզի

2 պատասխան կու տամ . (Երբոր լսեցին որ Եբրայական լեզուով կը խօսէր իրենց , ալ աւելի լռեցին կե-

3 ցան . Եւ անիկա՛յ բսաւ .) Ես Հրէայ մարդ մըն եմ Կիլիկիոյ Տարսոնին մէջ ծնած՝ և աս քաղաքիս մէջ Գամալիելին ոտքը մեծցած , Հայրենի օրէնքին ճշդութեանը պէս կրթուած , նախանձաւոր էի Աստուծոյ՝ ինչպէս

4 որ այսօր դուք ամէնդ էք ։ Ես այս երիվ մարդիկ ու կնիկ մարդիկ կապելով , ու բանտերու մատնելով աս ճամբան հալածեցի մինչև ի

5 մահ . Ինչպէս որ քահանայապետն ալ կը վկայէ ինծի համար՝ Ե և բոլոր ծերակոյտը . ժոր իրենցմէ թուղթեր ալ առնելով եղբայրներուն՝ Դամասկոս կ՚երթայի , որ հոն եղածներն ալ կապուած Երուսաղէմ

6 բերեմ , որ պատժուին ։ Ես եղաւ որ երբ կ՚երթայի՝ ու Դամասկոսին մօտեցայ , կէս օրուան դէմ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը

7 փայլատակեց իմ բոլորտիքս . Եւ գետինը ինկայ , ու ձայն մը լսեցի՝ որ ինծի կ՚ըսէր . Սաւուղ՝ Սաւուղ ,

8 ինչո՞ւ զիս կը հալածես ։ Ես ալ պատասխան տուի թէ՝ Դուն ո՞վ ես՝ Տէր . ան ալ ինծի ըսաւ . Ես Յիսուս Նազովրեցին եմ , որ դուն

9 կը հալածես ։ Բայց անոնք որ իմ հետս էին՝ լոյսը տեսան , ու վախով լեցուեցան , սակայն ինծի խօսողին

10 ձայնը չլսեցին ։ Ես ըսի , Ի՞նչ ընեմ՝ Տէր . և Տէրը ինծի ըսաւ . Ելլէ՛ գնա Դամասկոս , ու հոն քեզի պիտի զրուցուի ան ամէն բանեբուն համար , որ սահմանուած է

11 որ ընես ։ Ու երբոր չէի տեսներ ան լոյսին փառքէն , հետս եղողները ձեռքս բռնած՝ Դամասկոս

12 մտայ ։ Եւ Անանիա անուն մարդ՝ օրէնքին համեմատ աստուածավախ , ու Դամասկոս բնակող բոլոր

13 Հրէաներէն լաւ վկայուած , ինծի եկաւ , ու քովս կայնելով ինծի ըսաւ . Սաւուղ եղբայր , վեր նա-

- Գլ . Ժ . 2 ։

Բ Գլ . խա . 39 ։ բ Կէր . ժա . 22 ։ Փիլ . գ . 5 ։

ե Գլ . է . 34 ։

զ բ Օր . լԳ . 3 ։ դ Թագ . գ . 38 ։ Ղուկ . ժ . 39 ։

է Գլ . իզ . 5 ։ ՂԳլ . խա . 20 ։ Դատ . ա . 14 ։

ը Հռով . ժ . 2 ։

ը Գլ . բ . 3 ։ իգ . 9 . 10 . 11 ։ Փիլ . գ . 6 ։ ա Տիմ . ա . 13 ։

Ի Ղուկ . իբ . 66 ։ Գլ . գ . 5 ։

ժ Գլ . Թ . 2 ։ իզ . 10 . 12 ։

ի Գլ . Թ . 3 ։ իզ . 12 . 13 ։

ԺԱ Գլ . Թ . 7 ։ Դան . ժ . 7 ։

ԺԲ Գլ . Թ . 17 ։

ԺԳ Տիմ . գ . 12 ։

ԺԴ Գլ . ժ . 22 ։

Ա Եդիպտացին եղաւ Ցա . Տ . 55

Ղ Տե՛ս գլ . ե . 36 ։

* Ցուն . սխ . կարեան , ըս՝ դաշնակից մարդասպան ։

- Գլ . Թ . 11 ։ իբ . 3 ։

Յամի Տեառն 60

14 յէ ։ Ես ալ նոյն ժամուն վեր նա-
յեցայ իրեն . և անիկայ ըսաւ .
Հմեր հայրերուն Աստուածը առա-
ջուց չբեզ ընտրեց , որ իր կամքը
ճանչնաս՝ ու ան Ղարդարը տես-
նես , և անոր բերնէն ձայն լսես .
15 ա քանզի բոլոր մարդոց առջևը անոր
վկայ պիտի ըլլաս ան բաներուն հա-
16 մար , ինչ որ տեսար ու լսեցիր ։ Եւ
հիմա՝ ալ ի՞նչ կ'ուշանաս , ելի՛ր
մկրտուէ՛ և ու մեղքերդ լուա՝ ա-
17 նունը կանչելով ։ Ետ եղաւ
որ երբոր Երուսաղէմ դարձայ՝ ու
տաճարին մէջ աղօթեք կ'ընէի ,
մտքի յափշտակութիւն մը եկաւ
18 վրաս , ետ զինքը տեսայ , որ ինծի
կ'ըսէր . Ելի՛ր դիտեն թէ ես էի՝ որ
քեզի հաւատացողները բանտը կը
դնէի , և ժողովարաններուն մէջ
20 կը ծեծէի . Ետ երբոր քու Ստե-
փանոս վկայիդ արիւնը կը թա-
փուէր , ես ինքնս ալ ներկայ էի ,
և համակից էի ի անոր սպանդուե-
լուն՝՝ . ու զանիկայ սպանողնե-
րուն հանդերձները ես կը պահէի ։
21 Եւ ինծի ըսաւ . Գնա՝ , ի ինչու որ
ես քեզ հեռաւոր հեթանոսներուն
պիտի խրկեմ ։

22 Եւ անոնք մինչև աս խօսքս ա-
կանջ դրին իրեն . ետքը ձայներնին
վերցուցին՝ ու ըսին . Այ՛ վերցուր
աշխարհէն ատանկ մարդը . քանի
23 զի չէր պէտք ատոր ողջ մնալ ։ Ու
երբոր կը կանչուրտէին , ու հան-
դերձնին կը նետէին , և փոշին դէպ
24 ի օդը կը ցանէին , հազարապե-
տը հրաման ըրաւ որ զանիկայ բեր-
դը մտցընեն , ու ըսաւ որ ծեծով
հարցափորձ ընեն անոր , որ գիտ-
նայ թէ ի՛նչ յանցանքի համար ա-
նոր դէմ անանկ կը կանչուրտէին ։
25 Ու երբոր կաշի կապերով զինքը
կապեցին , Պօղոս վերակացու հա-
րիւրապետին ըսաւ . ի Արժա՞ն է
ձեզի Հռովմայեցի ու չդատապար-
26 տուած մարդ մը ծեծել ։ Հարիւ-
րապետը երբոր ա՛ լսեց , գնաց հա-
զարապետին պատմեց՝ ու ըսաւ .
ի Ի՞նչ պիտի ընես , ինչու որ աս
27 մարդը Հռովմայեցի է ։ Հազա-
րապետն ալ գովը գնաց՝ ու ըսաւ
անոր . Ըսէ՛ ինծի , դուն Հռովմա-
28 յե՞ց ես . ան ալ ըսաւ . Այո՛ ։ Հա-
զարապետը պատասխան տուաւ .
Ես շատ մեակով ձեռք բերի աս
քաղաքացիութեան իրաւունքը . և
Պօղոս ըսաւ . Ես բուն ազգ ալ
29 ծնած եմ ։ Ու անոնք որ իրեն
հարցափորձ պիտի ընէին , շուտ
մը ետ կեցան իրմէն . և հազարա-
պետն ալ վախցաւ , երբոր իմացաւ
թէ Հռովմայեցի է , և որովհետև
զանիկայ կապեր էր ։

30 Ու հետևեալ օրը ուզելով որ
շիտակը գիտնայ թէ ինչ է Հրէա-
ներուն ըրած ամբաստանութիւնը
անոր դէմ , արձակեց անիկայ , և
հրաման ըրաւ որ քահանայապետ-
ները ու բոլոր ժողովքը մէկտեղ
գան . և Պօղոսը իջեցընելով՝ ա-
նոնց առջևը կայնեցուց ։

ԳԼ · ԻԳ

1 Երբոր Պօղոս զինքը կը պաշտպաներ , 2 Անա-
նիա կը հրամայէ որ անոր բերնին զարնեն ։
7 Երկպառակութիւն կը ծագի Պօղոսի դա-
տախազներուն մէջտեղ ։ 11 Աստուած կը
քաջալերէ զանիկայ ։ 12 Հրեայք Պօղոսի
համար որոգայթ կը լարեն ։ 20 Հազարապե-
տը իմանալով աս բանը , 27 Փելիքս կուսակա-
լին կը խրկէ Պօղոսը ։

1 Ետ Պօղոս իր աչքերը ժողովքին
վրայ դարձընելով՝ ըսաւ . Մար-
դիկ եղբայրներ , ես բոլորովին բա-
րի խղճմտանքով կեանք վարեր եմ
Աստուծոյ առջևը՝ մինչև աս օրս ։
2 Անանիա քահանայապետն ալ հրա-
ման ըրաւ իր քովը կայնողներուն՝
3 որ անոր բերնին զարնեն ։ Ան ա-
տենը Պօղոս ըսաւ անոր . Աստուած
քեզի պիտի զարնէ՝ ծեփած պատ ,
որ դուն նստեր ես օրէնքին համե-
մատ զիս դատելու , և ի օրէնքէն
դուրս հրաման կ'ընես որ ինծի զար-
4 նեն ։ Եւ բոլորտիքը կայնողները
ըսին . Աստուծոյ քահանայապե՞տը
5 կը նախատես ։ Պօղոս ալ ըսաւ .
Ե՛ղբայրներ՝ ես չէի գիտեր որ քահա-
նայապետ է . ինչու որ գրուած է ,
Ի-ձու ժողովուրդիդ իշխանին դէմ
6 չարախօսութիւն մի՛ ըներ ։ Եւ
Պօղոս գիտնալով որ մէկ կողմը
սադուկեցիներ են , ու մէկալը փա-
րիսեցիներ , կ'աղաղակեր ժողովքին
մէջ . Մարդիկ եղբայրներ , ես
փարիսեցի եմ՝ փարիսեցիի որդի .
մեռելոց յարութեանը Յոյսին հա-
7 մար կը դատուիմ՝՝ . Ու երբոր աս
ըսաւ , փարիսեցւոց և սադուկե-
ցւոց մէջը երկպառակութիւն ին-
կաւ , և բազմութիւնը բաժնուե-
8 ցաւ ։ Քանզի սադուկեցիք կ'ըսեն
թէ յարութիւն չկայ , և ոչ հրեշ-
տակ , ոչ ալ հոգի . բայց փարի-
սեցիք երկուքն ալ կը դաւանին ։
9 Եւ մեծ աղաղակ մը եղաւ . ու փա-
րիսեցւոց կողմէն եղող դպիրները
ոտքի վրայ ելլելով՝ դէմ կը կենային
ու կ'ըսէին . Մենք աս մարդուն
վրայ չարութիւն մը չենք գտներ .
Հապա թէ որ հոգի մը կամ հրեշ-
տակ մը ատոր խօսած է , ‖ի՞նչ։
10 Ու երբոր աղմուկը շատցաւ , հա-
զարապետը վախնալով որ չըլլայ

Յամի Տեառն 60

ա ԳԼ · իդ · 16 ։ ա Կոր · գ · 4 ։ բ Կոր · ա · 12 ։ գ · 2 ։ բ Տիմ · ա · 3 ։ Երբ · ժգ · 18 ։՝

բ գ Թագ · իբ · 24 ։ Երեմ · ի · 2 ։ Յօ՛ · ժբ · 22 ։

գ Ղև · ժթ · 35 ։ բ Օր · իե · 1 · 2 ։ Յօ՛ · ե · 51 ։

դ ԳԼ · իդ · 17 ։

ե Եզ · իբ · 28 ։ Ծաղ · ժ · 20 ։ բ Պետ · բ · 10 ։ Յուդ · 8 ։

զ ԳԼ · իզ · 5 ։ Փիլ · գ · 5 ։

է ԳԼ · իդ · 15 ։ 21 · իշ · 6 ։ իբ · 20 ։

ը Մատ · իբ · 23 ։ Մար · ժբ · 18 ։ Ղուկ · ի · 27 ։

թ ԳԼ · իե · 25 ։ իշ · 31 ։

ժ ԳԼ · իբ · 17 ։ 18 ։

‖ Ոմանք՝ Աստուծոյ չեմ չմարմընչնիք ։

Ցամք Տեառն 60

թէ Պօղոս անոնցմէ փառատուէի , զինուորներուն հրաման բրաւ որ իջնեն զանիկայ անոնց մէջէն յափրշտակեն՝ ու բերդը բերեն ։ 11 Եւ հետեւեալ գիշերը Տէրը անոր քովը կայնեցաւ՝ ու ըսաւ . քաջասիրտ եղիր՝ Պօղոս . վասն զի ինչպէս որ Երուսաղէմի մէջ ինծի համար վկայեցիր , անանկ պէտք է քեզի՝ որ Հռովմայ մէջ ալ վկայես ։

12 Ու երբոր առտուս եղաւ , Հրեաներէն ոմանք միաբանեցան , ու ինքզինքնին անէծքի տակ դրին , ըսելով որ չուտեն ու չխմեն՝ մինչեւ որ 13 Պօղոսը սպաննեն ։ Եւ քառասունէն աւելի էին՝ որ այս երդումը իրաւ 14 բու հետ ըրին . Որ ասոնք քահանայապետներուն և Ծերերուն դացին՝ ու ըսին . Անէծքով անիծեցինք անձերնիս՝ որ բան մը չուտենք մինչեւ 15 որ Պօղոսը սպաննենք ։ Ուստի դուք ժողովքին հետ մէկտեղ հաղարապետին իմացուցէք որ վաղը անիկայ ձեզի իջեցընէ , որպէս թէ դուք աւելի ճիշդ քննութիւն ընել կ'ուզէք անոր վրայով . և մենք անոր մօտ գալէն առաջ պատրաստ 16 ենք զանիկայ սպաննելու ։ Եւ Պօղոսին քրոջը որդին երբոր այս դաւաճանութիւնը լսեց , եկաւ բերդը 17 մտաւ , ու Պօղոսին պատմեց ։ Պօղոս ալ հարիւրապետներուն մէկը իրեն կանչելով՝ ըսաւ . Այս պատանին հազարապետին տար , ինչու որ բան մը ունի անոր իմացընելու ։ 18 Ան ալ առաւ զանիկայ և տարաւ հազարապետին՝ ու ըսաւ . Բանտարկեալ Պօղոսը զիս կանչեց , և աղաչեց որ այս պատանին քեզի բերեմ՝ որ քեզի խօսելիք ունի ։ 19 Բմ՝ որ քեզի խօսելիք ունի ։ Եւ հազարապետը անոր ձեռքէն բռնելով մեկդի գնաց . ու հարցուց թէ՝ Ի՞նչ բան ունիս ինծի իմացընելու ։ 20 Եւ անիկայ ըսաւ . Է Հրէաները միաբանեցան քեզի աղաչելու՝ որ վաղը Պօղոսը առտեանը իջեցընես , որպէս թէ կ'ուզեն աւելի ճիշդ քննութիւն մը ընել անոր վրաւ 21 յով . Բայց դուն անոնց մտիկ չընես . ինչու որ անոնցմէ քառասունէն աւելի մարդիկ դարանամուտ եղած են անոր համար , որոնք ինքզինքնին անէծքի տակ դրին՝ որ չուտեն ու չխմեն , մինչեւ որ անիկայ սպաննեն . ու հիմա պատրաստ են , 22 և քու հրամանիդ կը սպասեն ։ Ան ատենը հազարապետը պատանին ճամբեց , պատուիրելով թէ Մէկու մը մի՛ ըսեր՝ որ ասս բանը ինծի իմացուցիր ։

23 Եւ հարիւրապետներէն երկուքը կանչեց՝ ու ըսաւ . Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք , ու երեք հարիւր հեծեալ և երկու հարիւր գեղարդաւոր , որ մինչև կեսարիա երթան դիշերուան ժամը 24 իրեքին . Եւ գրաստներ պատրաստեցէք , որ Պօղոսը հեծցընեն ու ապահովութեամբ Փելիքս կուսա-

Ցամք Տեառն 60

25 կալին տանին ։ Եւ թուղթ մը 26 դրեց այս օրինակին պէս ։ Կղովդիոս Լիսիաս՝ պատուական Փելիքս կուսա- 27 սակալիդ ողջոյն ։ Այս մարդը Հրեաներէն բռնուեր էր , և անոնցմէ պիտի սպաննուէր . իսկ ես զինուորներով վրայ հասած՝ ազատեցի զանիկայ , իմանալով որ 28 Հռովմայեցի է ։ Եւ ուզելով պատճառը գիտնալ՝ որուն համար ատոր վրայ ամբաստանութիւն կ'ընէին , իջեցուցի ատիկայ անոնց ա- 29 տեանը ։ Որ դատ ամբաստանուած հիրենց օրէնքին վերաբերեալ խնդիրներու համար . և մեռնելու կամ կապուելու արժանի յանցանք մը 30 չունէր ։ Ուր երբոր լուր առի որ Հրէայք ատ մարդուն համար որոգայթ պիտի լարեն , իսկոյն քեզի խրկեցի , հրաման ընելով ամբաստանողներուն ալ՝ որ քու առջեւդ խօսին ատոր վրայով ։ Ո ղջ եղիր ։

31 Զինուորներն ալ իրենց հրամայուածին համեմատ առին Պօղոսը՝ ու դիշերով Անտիպատրոս 32 տարին ։ Եւ հետեւեալ օրը թողուցին ձիաւորները անոր հետը երթալու , ու իրենք բերդը դարձան ։ 33 Անոնք ալ կեսարիա մտան , ու թուղթը կուսակալին տուին . և Պօղոսը անոր առջեւը կայնեցուցին ։ 34 Երբոր կարդաց , հարցուց թէ որ գաւառէն է . և իմանալով 35 որ Կիլիկիայէն է , ըսաւ . Պիտի լսեմ քեզի՝ երբոր քու ամբաստանողներդ ալ գան . և հրաման ըրաւ՝ որ զանիկայ Հերովդեսին պալատը պահեն ։

ԳԼ . ԻԴ

1 Պօղոս՝ Տերտիղոսին ամբաստանուած՝ 10 պատասխան կուտայ իր վարքին և վարդապետութեանը համար . 24 կ'բարեզէ դէրբիստոս՝ կուսակալին ու անոր տիկնոջը ։ 26 Կուսակալը կը յուսայ կաշառք առնել Պօղոսէն . 27 վերջապէս իր պաշտօնէն ելլելով՝ Պօղոսը կապուած կը թողու ։

1 Ետ ՝ հինգ օրէն եւրը Բ Անանիա քահանայապետը Ծերերուն հետ՝ ու Տերտիւլոս անուն Ճարտասանի մը հետ իջաւ . և ատոնք կուսակալին իմացուցին իրենց մեղադրանքը ։ 2 Բերուեր Պօղոսին դէմ ։ Ու երբոր կանչեցին , անիկայ , Տերտիւղոս ըսկսաւ ամբաստանել՝ ու ըսել . Ո րովհետեւ քու ձեռքովդ շատ խաղաղութիւն , ու քու խնամքովդ այս ազգին բաներուն ազեկ կարգադրուե- 3 թիւնը կը վայելենք , Ամէն կեր-

Ցամք Տեառն 60

ԳՐ . ԺԸ . 9 ։ ԻԿ . 23 , 24 ։

ԳՐ . ԻԸ . 21 , 30 ։ ԳԼ . ԻԵ . 3 ։

ԳՐ . Ի . 33 ։ ԻԲ . 7 ։

ԳՐ . ԻԲ . 30 ։

ՀԳ . ԺՐ . 15 ։ ԻՆ . 19 ։ ԾԳ . ԻՀ . 31 ։

ՂՀՐ 20 ։

ՃԳ . ԻԴ . 5 ։ ԻԵ . 6 ։

ՀԳ . ԻԲ . 39 ։

ՃԳ . Ի . 1 ։ 10 ։ ԻՆ . 16 ։ ՂՄ՝ՈՒ . ԻՀ . 27 ։

ՈՒ . ԻԳ . 27 ։

Բ ԳՐ . ԻԴ . 2 ։ 30 , 35 ։ ԻՀ . 2 ։

Յոմի Տեառն 60

պով ու ամէն տէղ բոլորովին պոհ ըլլալով՝ ընորհակալ ենք՝ ով պա-
4 տուական Փելիքս ։ Բայց չրլլայ որ ալ աւելի ձանձրութիւն ի-
մամքեզի , կ՚աղաչեմ որ քու քաղցրութեամբդ մեզի ականջ դը-
նես , որ համառօտաբար ղէպ խօ-
5 -սիմ ։ Քանզու որ մենք աս մարդը դտանք ապականիչ և խռովարար բոլոր Հրէաներուն՝ որ աշխարհիս մէջ են , և Նազովրեցւոց աղանդին
6 առաջնորդ . Որ տաճարն ալ ուզեց պղծել . որն որ բռնեցինք , ևու մեր օրէնքին համեմատ ուզեցինք
7 դատաստանը ընել . Բայց Ղիւ-սիաս հազարապետը եկաւ մեծ բռնութեամբ մեր ձեռքէն առաւ ,
8 Եւ Հրաման ըրաւ՝ որ անոր դատախազները քեզի գան , որն որ դուն քննելով՝ կարող պիտի ըլլաս տեղեկանալ ան ամէն բաներուն , ու րոնց համար մենք ամբաստանուս-
9 Թիւն կ՚ընենք ատոր վրայ ։ Հըրէաներն ալ ամէնը մէկ եղած՝ ըսին Թէ Ա.յդպէս է ։
10 Պատասխան տուաւ Պօղոս՝ (երբոր կուսակալը անոր աչք ըրաւ որ խօսի .) Գիտնալով որ շատ տարիներէ հետէ դուն աս ազգին դատաւորն ես , աւելի յօժարու-թեամբ ինծի վերաբերեալ բանե-րուն համար պատասխան կուտամ .
11 Որովհետև կրնաս գիտնալ որ ես տասներկու օրէն աւելի չէ՝ քանի որ Երուսաղէմ ելայ երկրպադու-
12 Թիւն ընելու ։ Եւ զիս տաճարին մէջ մէկու մը հետ վիճաբանութիւն ընելու վրայ՝ կամ բազմութիւնը մէկտեղ ժողված չտան , ոչ ալ
13 ժողովարաններուն մէջ , Եւ ոչ քաղաքին մէջ . ոչ ալ կրնան ա-պացուցանել ան բաները , որոնց համար հիմա ամբաստանութիւն
14 կ՚ընեն ինծի դէմ ։ Բայց աս կը խոստովանիմ քեզի՝ Թէ ըստ ճամ-բուն համեմատ՝ որ աստնք հեր-ձուած կ՚ըսեն , ես անանկ կը պաշ-տեմ իմ հայրենի Աստուածս , հաւատալով ան ամէն բաներուն՝ որ Օրինաց և մարգարէից մէջ
15 գրուած են ։ Եւ յոյս ունիմ առ Աստուած՝ ինծոր որ ատոնք ալ ակնկալութիւն ունին , որ մեռելոց յարութիւն պիտի ըլլայ , Թէ արդարներուն և Թէ մեղաւորնե-
16 րուն ։ Եւ ես աս բանիս համար կը ջանամ , որ ամէն ատեն մաքուր խղճմտանք ունենամ Աստուծոյ
17 առջեւը՝ ու մարդոց առջեւը ։ Արդ՝ ես շատ տարիներէ ետև հեկայ իմ ազգիս ողորմութիւններ բերելու ,
18 ու ընծաներ դալ . Յանսկով քանի մը Ասիայէ Հրէաներ զիս

տաճարին մէջը մաքրուած դտան՝ ոչ բազմութիւնով և ոչ ամբո-
19 խով , Ոմր անոնց պէտք էր առջեւդ դալ՝ ու ամբաստանութիւն ընել , Թէ որ իմ վրայովս ըներ բան մը
20 ունէին . կամ Թէ ասոնք իրենց Թող ըսեն՝ ինչ անիրաւութիւն դտան իմ վրաս , երբոր ատեանը
21 կայներ էի . Միայն Թէ աս մէկ խօսքիս համար՝ որ երբ մէջերնին կայներ էի , կանչեցի Թէ , Ես մեռե-լոց յարութեանը համար ես այսօր
22 Ձեղմէ կը դատուիմ ։ Եւ Փելիքս ուրիշ անգամի Թողուց անոնք . ինչու որ աղէկ տեղեկութիւն ու-նէր ան ճամբուն վրայով . ու ը-սաւ . Երբոր Ղիւսիաս հազարա-պետը հոս իջնէ , պիտի քննեմ ձեր
23 դործը ։ Եւ հարիւրապետին հրա-ման ըրաւ որ զանիկայ պահէ , և ընդարձակութիւն տայ , ևու իրե-ներէն մէկը չարգիլէ անոր սպասա-ւորութիւն ընելէն կամ անոր քո-վը երթալէն ։
24 Եւ քանի մը օրէն ետև Փելիքս եկաւ իր Դրուսիլլա կնկանը հետ՝ որ Հրէայ էր , ու Պօղոսը կանչել տուաւ , և լսեց անկէ ան հաւատ-քին համար՝ որ Քրիստոս Յիսուսի
25 վրայ է ։ Եւ երբոր անիկայ ար-դարութեան՝ ու ժուժկալութեան՝ և գալու դատաստանին վրայով կը խօսէր , Փելիքս զարհուրելով պա-տասխան տուաւ . Դուն հիմա գը-նա , ու երբոր ժամանակ ունե-նամ՝ ես քեզ նորէն կը կանչեմ ։
26 Նաև յոյս ունէր՝ որ Պօղոսին կողմէն իրեն ոտակ *տրուի , անոր համար շատ անգամ կանչել կու տար զանիկայ՝ ու հետը կը խօսակ-
27 ցէր ։ Բայց երկու տարի որ եղաւ , Փելիքսին տեղը Պորկիոս Փեստոսը եկաւ . Փելիքս ալ Հրէաներուն շնորհք ընել ուզելով , Պօղոսը կապուած թողուց ։

Ցոմի Տեառն 60

ՂԳԼ·ԻԳ·30· ԻԵ·16·

ՀԳԼ·ԻԳ·6· ԻԸ·20·

Ա ՀՃՌ 7·

ՃԳԼ·ԻՀ·3· ԻԸ·16·

ՆԵԼ·ԻԳ·5· * Ո՛ր«ն»ը·ա-բուի՝ որ զա-նիկայ ար-ձակէ ։

Ց·Տ· 62

ՂԵՒ·ԻԳ·2· Գ՚·ԺԸ·3· ԻՆ·9, 14·

ԳԼ · ԻԲ

2 Հրէայք Պօղոսին դէմ ամբաստանութիւն կ՚ընեն Փեստոսին առջեւը ։ 8 Պօղոս պատաս-խան կու տայ , 11 և կայսրին կը բողոքէ ։ 14 Ընդր Փեստոս անոր դործը կը պատմէ Ագրիպ-պաս թագաւորին , 23 և Պօղոսը նոր առ-ջեւը բերել տալով , 25 կը ծանուցանէ Թէ ա-նիկայ մահուան արժանի բան մը ըրած չէ ։

1 Ա.րդ՝ Երբոր Փեստոս իր իշխանու-թիւնը գաւառը հասաւ , իրեք օրէն ետև կեսարիայէն Երուսա-
2 ղէմ եկաւ ։ Եւ քահանայապե-տը ու Հրէից գլխաւորները անոր ի-մացուցին իրենց Ընդդէմ նորին
3 Պօղոսին դէմ , Եւ կ՚աղաչէին ի-րեն՝ ու շնորհք կը խնդրէին անոր դէմ , որ զանիկայ Երուսաղէմ բե-րել տայ . Ոու իրենք դարան կը

ՂԵՒ·ԻԳ·30· ԻՆ·16·

ՃԳԼ·ԻԳ·6· ԻԸ·20·

ՃՀՃ 7·

ՃԳԼ·ԻՀ·3· ԻԸ·16·

Ցամք Տեառն 62

պատրաստէին ձամբուն մէջ զանի-
4 կայ սպաննելու ։ Բայց Փեստոս
պատասխան տուաւ , որ Պօղոսը
կեսարիայի մէջ պահուի , և որ
ինքը շատ չանցած հոն պիտի եր-
5 թար ։ Ուստի ձեզմէ որոնք որ
կարող են՝ ըսաւ , իր հետս թող
իջնեն , և թէ որ ան մարդուն վր-
14 ՀԱՐ 18 , րայ յանցանք մը կայ , թող անոր
6 դէմ ամբաստանութիւն ընեն ։ Եւ
հոն ութը կամ տասը օրէն աւելի
չկենալով , կեսարիա իջաւ . ու
հետևեալ օրը առեւանը նստելով՝
հրաման ըրաւ որ Պօղոսը բերուի ։
7 Ու երբոր անիկայ եկաւ , Երուսա-
ղեմէն իջնող Հրեաները շուր բո-
լորտիքը կայնելով , շատ ու ծանր
Տ ՄԱՐ . 3 . 5 . 2 . 10 ; ԳԼ . Իդ . 5 . 13 ; ամբաստանութիւններ կը բերէին
Պօղոսին դէմ , որոնք չէին կրնար
8 ապացուցանել . Ինչու որ Պօղոս
պատասխան կու տար թէ , Ե Ես ոչ
Ե 9 . 13 ; ԻԴ . 12 ; ԻԵ . 17 , Հրէաներուն օրէնքին՝ և ոչ տա-
ճարին՝ ոչ ալ կայսրին դէմ յան-
9 ցանք մը ըրած եմ ։ Բայց Փես-
ՂԵՒ ԻԴ . 27 , տոս Ղեւզելով որ Հրէաներուն չը-
նորհք ընէ , պատասխան տուաւ
Ե 25 . 20 , Պօղոսին ու ըսաւ . Կ՚ուզէ՞ս Ե-
րուսաղէմ ելլել , և հոն ատ քա-
նելուն վրայով իմ առջևս դա-
10 տուիլ ։ Պօղոս ալ ըսաւ . Կայս-
րին առեւանը կայներ եմ , ուր որ
պէտք է ինծի դատուիլ . ես Հրէ-
աներուն անիրաւութիւն մը ըրած
չեմ , ինչպէս որ դուն ալ աղէկ
ՂՀԱՐ 25 , ԳԼ . 11 Ե դիտես ։ Ըստ որում թէ որ անիրա-
Ա 25 . 14 ; ԻԳ . 29 ; ԻԷ . 31 , ւութիւն մը և մահուան արժանի
բան մը ըրած եմ , ես մռնդելէն
չեմ քաշուիր . բայց թէ որ չկայ
իմ վրաս ան բաներէն մէկն ալ՝ ո-
րոնց համար ասոնք ինծի դէմ ամ-
բաստանութիւն կ՚ընեն , մէկը չը-
Բ ԳԼ . ԻԳ . 32 ; ԻԸ . 19 , կրնար զիս ատոնց ընծրհել . Կայս-
12 րին կը բողոքեմ ։ Ան ատենը Փես-
տոս խորհրդականաց հետը խօսելով՝
պատասխան տուաւ թէ , Կայսրին
բողոքեցիր , կայսրին պիտի երթաս ։
13 Եւ քանի մը օր անցնելէն ետև՝
Ագրիպպաս թագաւորը և Բերւի-
նիկէն կեսարիա եկան՝ Փեստոսը
14 ողջունելու ։ Եւ շատ օրեր որ հոն
անցուցին , Փեստոս՝ Պօղոսին հա-
մար թագաւորին խմացուց՝ ու ը-
Ե ՀԵ . 25 . սաւ . Ե Հե՞ մարդ մը կայ՝ որն որ
Փելիքս բանտարկուած թողուցեր
Ե ՀԱՐ 2 . 3 , է . 15 Ի՞նչուն վրայով՝ երբոր Երուսա-
ղէմ գայի , քահանայապետները ու
Հրէից ծերերը խմացուցին ինծի .
և կը խնդրէին ու անոր դէմ դա-
տապարտութեան վճիռ պրլլէ .
Ղ ՀԱՐ 4 , 5 , 16 Ըստ որոնց պատասխան տուի՝ թէ
Հռովմայեցւոց սովորութիւնը չէ՝
մարդ մը կորստեան չնորհել , մինչև
որ ամբաստանուածը ամբաստա-

Ցամք Տեառն 62

նողները դիմացը չունենայ , ու ան
ամբաստանութեանը պատասխան
տալու պատեհութիւն չտրուի ի-
17 րեն ։ Ուստի երբոր անոնք ի՛մ
Ե ՀԱՐ 6 , հետս հոս եկան , Ես ամենևին չուշա-
ցուցի , չապա հետևեալ օրը ա-
տեանը նստելով՝ հրաման ըրի որ
18 մարդը բերուին . Անոր դատախազ-
ներն ալ ներկայանալով , իմ կաս-
կած ըրած յանցանքներէս մէկն ալ
Թ ԳԼ . Ժբ . 15 , Իգ . 29 , 19 չտալով չէին բերեր . Թ Հապա մէկ
քանի խնդիրներ ունէին անոր հետ
իրենց կրօնքին վրայ , և Յիսուս
անունով մեռածի մը վրայ , որուն
համար Պօղոս կ՚ըսէր թէ կենդանի
20 է ։ Ու երբոր տարակուսանքի մէջ
էի աս բանիս քննութեանը վրայով ,
ըսի թէ՝ Կ՚ուզե՞ս Երուսաղէմ եր-
թալ , և հոն աս բաներուն համար
21 դատիլ ։ Բայց Պօղոս երբոր
բողոքեց՝ որ պահուի վճհափառ
Յ-ոյին դիմացը ելլելու , հրաման
ըրի որ զինքը պահեն՝ մինչև որ
22 կայսրին ղրկեմ ։ Եւ Ագրիպպաս Ե ԳԼ . Թ . 15 , ըսաւ Փեստոսին . Ես ալ կ՚ուզէի
ատ մարդը մտիկ ընել . ան ալ ը-
սաւ . Վաղը մտիկ կ՚ընես ։
23 Ու հետևեալ օրը երբոր Ագրիպ-
պաս ու Բերինիկէ մեծ հանդէսով
եկան՝ ու ատեանը մտան հազարա-
պետներով՝ և քաղաքին պատուա-
ւոր մարդիկներովը մէկտեղ , Փես-
տոս ալ հրաման ընելով՝ բերին
24 Պօղոսը ։ Եւ ըսաւ Փեստոս . Ագ-
րիպպաս արքայ՝ և դուք ալ բոլոր
մարդիկ որ մեր հետն եք , տեսէք
կը տեսնէք . ասոր վրայով Հ Հրէից Ը ՀԱՐ 2 , 3 , 7 , բոլորը բաղմեր թիւնը ինծի ներկա-
յացան Երուսաղէմի մէջ և հոս
ալ , ու կ՚աղաղակէին թէ՝ Ե Պէտք
Ե ԳԼ . Իբ . 22 , 25 չէ որ ալ ատիկայ ողջ մնայ ։ Բայց
ես որ հասկըցայ ՂԵՒ անիկայ մեռ-
ՂԵՒ . Իդ . 9 , 29 , ԻԷ . 31 , նելու արժանի բան մը ըրած չէ , և
ՁՀԱՐ 11 , 12 , ինքը որ Վճհափառ Յ-ոյին բողո-
քեց , որոշեցի որ իրկեմ զանիկայ .
26 Որուն համար մէկ հաստատ բան մը
չունիմ գրելու իմ տիրոջս . ուստի
ատիկայ ձեր առջևը բերի , և մա-
նաւանդ քու առջևդ՝ ով Ագրիպ-
պաս արքայ , որպէս զի քննութիւն
ըլլալէն ետև՝ գրելու բան մը ունե-
27 նամ ։ Ինչու որ ինծի անվայել
կ՚երևնայ՝ որ մէկ բանտարկեալ մը
իրկեմ , և անոր վրայ ԹՂԹ-ած
յանցանքները չիմացընեմ ։

ԳԼ . ԻԶ

2 Պօղոս՝ Ագրիպպասին առջևը կը պատմէ իր վարքը իր տղայութենէն ՚ի վեր ։ 12 և Տիրաշրով իր գարձի գալը ու առաքելական պաշտօնին կանչուիլը ։ 24 Փեստոս ,, Հար կը կոչէ զՊօղոս , բայց անիկայ պարկեշտութեամբ կը պատասխանէ ։ 28 Ագրիպպաս գրեթէ կը համոզուի քրիստոնեայ ըլլալու ։ 31 Բոլոր

Ցամի Տեառն 62

Ժողովականները կը խոստովանին անոր անմեղ ըլլալը։

1 Ու Ագրիպպաս ըսաւ Պողոսին. Հրաման է քեզի՝ որ դուն քեզի համար խօսիս. ան ատենը Պողոս ձեռքը երկընցընելով՝ իրեն համար
2 պատասխան տուաւ. Հրէաներուն իմ վրաս ըրած բոլոր ամբաստանութիւններուն համար ով Ագրիպպաս արքայ՝ ես ինձ երանելի կը սեպեմ, որ այսօր քու առջեդ
3 պատասխան պիտի տամ. Մանաւանդ որ դուն Հրէաներուն բոլոր սովորութիւնները և խնդիրները աղէկ դիտես. անոր համար կ'աղաչեմ որ երկայնմտութեամբ
4 ինծի մտիկ ընես. Արդ՝ իմ մանկութենէս ի վեր իմ ինչպէս ապրելուս՝ սկիզբէն Երուսաղէմ իմ ազգիս մէջը ըլլալովս, բոլոր Հը-
5 րէաները տեղեակ են, ֆանզի առաջուց ի վեր ինձ դիտեն, (թէ որ ուզեն վկայել,) որ մեր կրօնքին պինդ դպրութեան ճամբուն պէս
6 փարիսեցի ապրեր եմ. Եւ հիմա ոտքս կեցեր կը դատուիմ՝ Աստուծմէ մեր հայրերուն եղած
7 խոստմունքին յոյսին համար. Որ մեր տասներկու ցեղը անդադար ջիգիլեր ու ցորեկ պաշտելով՝ կը յուսան անոր հասնելու. Ես այս յոյսին համար Հրէաներէն կ'ամբաստանուիմ՝ ով Ագրիպպաս ար-
8 քայ. Ինչ. չհաւատալու բան կ'երեւնայ ձեզի՝ թէ Աստուած մե-
9 ռելները կը յարուցանէ. Ես ինքնս ալ ինծի պարտք կը սեպէի Յիսուս Նազովրեցիին անունը
10 դեմ շատ բաներ ընել. Որ ըրի ալ Երուսաղէմի մէջ. և Քրահանայապետներէն իշխանութիւն առած՝ սուրբերէն շատերը բանտարկեցի, ու անոնց սպաննուած ատենը
11 հաւանութիւն տուի. Եւ բոլոր ժողովարաններուն մէջը շատ անգամ զանոնք պատժելով՝ կը բռնադատէի որ հայհոյեն, և անոնց դէմ սաստիկ կատղած՝ մինչև օտար քա-
12 ղաքները կը հալածէի. Եւ այսպիսով երբոր Դամասկոս ալ կ'երթայի՝ քահանայապետներէն իշխանու-
13 թիւն ու հրաման առած, կէս օրուան ատենը ճամբուն վրայ՝ ով արքայ, երկինքէն լոյս մը տեսայ արեւին լուսաւորութենէն աւելի՝ որ իմ հետս կ'երթային,
14 ու երբոր մենք ամէնս գետինը իյնանք, ձայն մը լսեցի որ Եբրայական լեզուով ինծի կ'ըսէր. Սաւուղ՝ Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես. դժուար բան է քեզի
15 խթանի դէմ կլոր զարնել. Ես

Ցամի Տեառն 62

ըսի. Դուն ո՞վ ես Տէր. և անիկայ ըսաւ. Ես եմ Յիսուսը՝
16 որ դուն կը հալածես. Բայց ելիր՝ ու ոտքիդ վրայ կայնէ. ինչու որ ասոր համար քեզի երեւցայ, Որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և վկայ ընելու ան բաներուն՝ որ տեսար, ու ան բաներուն՝ որոնցմով
17 պիտի երեւնամ քեզի, քեզ ազատելով ատ ժողովուրդէն ու հեթանոսներէն, Որոնց հիմա քեզ
18 կը խրկեմ, Ընոնց աչքերը բանալու, Խաւարէն՝ լոյսի, ու Սատանայի իշխանութենէն Աստուծոյ դարձնելու, Որ անոնք մեղաց թողութիւն առնեն, Ու սուրբերուն հետ ղմանակից ըլլան՝ ինծի հաւատալով։
19 Ուստի Ագրիպպաս արքայ՝ ան երկնային տեսիլքին անչաղնդ-
20 չեցայ ես. Հապա առաջ Դամասկոս ու Երուսաղէմ եղողներուն, և բոլոր Հրէաստանի երկիրը ու հեթանոսներուն քարոզեցի որ ապաշխարեն, ու Աստուծոյ դառնան, և ապաշխարութեան արժա-
21 նաւոր գործքեր գործեն։ Ես պատճառով Հրէաները զիս տաճարին մէջը բռնեցին, և կը ջանային որ
22 սպաննեն։ Սակայն Աստուծմէ օգնութիւն ստանալով՝ մինչև այս օրս ոչ մեացի, պզտիկին ու մեծին վկայութիւն տալով, բան մը չըզրուցելով ան բաներէն դուրս՝ որ
23 մարգարէները և Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային. Թէ Քրիստոս պիտի չարչարուէր, և թէ անիկայ պիտի առաջ մեռելներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէր ժողովուրդին ու հեթանոսներուն։
24 Եւ քանի որ անիկայ ասանկ պատասխան կուտար իրեն համար, Փեստոս բարձր ձայնով մը ըսաւ. Կը խելագարիս Պօղոս. շատ կարդացողութիւնդ քեզ կը յիմարեցուցէ։
25 Պ՛ես ալ ըսաւ. Ես չեմ խելագարիր՝ ով պատուական Փեստոս, հապա ճշմարտութեան և բզդաստութեան խօսքեր կը պրպտեմ։
26 Ֆանզի աս բաները թագաւորը գիտէ, որուն առջեւը ես ալ համարձակ կը խօսիմ. ինչու որ չեմ կարծեր թէ ասոնցմէ մէկ բան մը անկէ ծածկուած ըլլայ. վասն զի աս բանը մէկ անկիւնի մը մէջ եղած չէ։
27 Մարգարէներուն կը հաւատաս Ագրիպպաս արքայ. գիտեմ որ կը հաւատաս։
28 Ու Ագրիպպաս ըսաւ Պողոսին. Քիչ մնաց որ դիս համոզես քրիստոնեայ ըլլալու։
29 Պողոս ալ ըսաւ. Աստուծմէ կը խնդրէի որ թէ՛ քիչով և թէ շատով՝ ոչ թէ միայն դուն, հապա ամէնքդ՝ որ

ա Գլ. իբ. 3։ իգ. 6։ իդ. 15։ 21։ Փիլ. գ. 5։ բ Գլ. իդ. 6։ ։ Յն. գ. 15։ իր. 19։ իգ. 4։ խթ. 10։ ր Օր. ժը. 15։ բ Թագ. է. 12։ Սալ. ճիւ. 11։ Ես. դ. 2։ է. 14։ թ. 6։ խ. 10։ Երեմ. իգ. 5։ լդ. 14։ 15։ 16։ Եզեկ. լդ. 23։ լէ. 24։ Դան. թ. 24։ Մէք. է. 20։ Գլ. ժդ. 32։ Հռով. ժե. Տ։ Տիտ. բ. 13։ ը Ցակ. ա. 1։ Ղուկ. բ. 37։ ա Տիմ. ե. 5։ ա Թես. գ. 10։ ղ Փիլ. գ. 11։ ե Ցօհ. ժդ. 2։ ա Տիմ. ա. 13։ զ Գլ. ը. 3։ Գաղ. ա. 13։ է Գլ. թ. 14։ 21։ իբ. 5։ ը Գլ. իր. 19։ թ Գլ. թ. 3։ իբ. 6։

Ցամի Տեառն 62

Ղկ. իբ. 15։

Է Գլ. իբ. 21։ Ե Ես. լե. 5։ խբ. 7։ Դուտ. ա. 19։ Ցօհ. ը. 12։ բ Կոր. դ. 4։ Եփես. ա. 18։ ա Թես. ե. 5։

ի բ Կոր. ը. 14։ Եփես. դ. 18։ ե Տ։ Կող. ա. 13։ ա Պետ. բ. 9, 25։ ձ Ղուտ. ա. 77։ ի Գլ. ի. 32։ ղ Եփես. ա. 11։ Կղ. ա. 12։ ճ Գլ. թ. 20. 22. 29։ ժա. 26։ ժդ. ժգ. ժզ. ժե. ժը. ժթ. ի. իա։ ի Մաա. գ. Տ։ ժ Գլ. իա. 30. 31։ ն Ղուտ. իդ. 27. 44։ Գլ. իդ. 14։ իր. 23։ Հռով. գ. 21։ ծ Ցօհ. ե. 46։ ո Ղուտ. իդ. 26. 46։ չ ա Կոր. ժե. 20։ Կող. ա. 18։ Ցայտ. ա. 5։ պ Ղուտ. բ. 32։ ջ Թագ. թ. 11։ Ցօհ. ժ. 20։ ս Կոր. ա. 23։ բ. 13. 14։ գ. 10։

ա Կոր. է. 7։

Ցամք Տեառն 62

այսօր ինձի կը լսեն , անանկ ըլլան ինտոր որ ես եմ , աս կապերէս ի զատ ։

30 Ոտքի վրայ ելաւ. Թադաւորը և կուսակալը ու Բերնիկիկէն , և ա- նոնք որ իրենց հետը նստեր էին ։

31 Ու դուրս ելլելէն ետև , իրարու հետ խօսեցան ու ըսին Թէ , "Ա- մարդը մռնելու կամ կապուելու

32 արժանի բան մը չըներ ։ Ագրիպ- պաս ալ Փեստոսին ըսաւ . Կարելի էր աս մարդը արձակել , Եթէ որ կայսրին բողոքած չըլլար ։

- Գլ. իդ. 9. 29 ։ իէ. 25։

Հ Գլ. իէ. 11։

Գ Լ . Ի Է

1 Պօղոս նաւով ճամբայ կ'ելլէ Հռովմ երթա- լու . 10 կը նախազգուշէ ճամբուն վտանգե- րը , 11 բայց իր խօսքին չեն հաւատար ։ 14 Սակայն ալեկոծութեան կը պատահին , 41 և նաւաբեկութիւն կը կրեն , 44 բայց ամէնքն ալ անվտանգ ցամաքը կ'ելլեն ։

1 Երբոր որոշուեցաւ որ նաւով Ի- տալիա երթանք , Պօղոս և ու- րիշ քանի մը կապուածներ յանձ- նեցին Հարիւրապետի մը՝ որուն ա- նունը Ցուլիոս էր , Սեբաստեան

2 գունդէն ։ Եւ մէկ Ադրամիտեացի նաւ մը մտնելով՝ ճամբայ ելանք , ու Ասիայի կողմերէն պիտի նաւէ- լինք . Թեսաղոնիկէէն եղող Արիս- տարքոս Մակեդոնացին ալ մեր

3 հետն էր ։ Եւ հետևեալ օրը Սի- դոն իջանք . ու Ցուլիոս մարդա- սիրութիւն ցուցընելով Պօղոսին՝ հրաման տուաւ որ բարեկամնե- րուն երթայ , ու գարման գտնէ ։

4 Եւ անկէ ելլելով՝ Կիպրոսին վարի կողմէն նաւեցինք՝ հովը դէմ ըլլա-

5 լուն համար ։ Եւ ծովը Կիլիկիայի ու Պամփիւլիայի ծովուն մէջտեղէն նաւելով՝ Լիկիայի Միւռա քաղաքը

6 իջանք ։ Եւ հարիւրապետը հոն Աղէքսանդրացի նաւ մը գտնելով՝ որ Իտալիա կ'երթար , մեզ անոր

7 մէջ մտցուց ։ Եւ շատ օրեր կա- մաց կամաց նաւելով՝ հազիւ Թէ կնիդոսին քովերը հասանք . և հովը մեզի դէմ ըլլալով՝ կրետէին վարի կողմէն Սաղմոնային քովէն նաւե-

8 ցինք ։ Եւ դժուարաւ անկէ անց- նելով՝ մէկ տեղ մը եկանք , որ Գե- ղեցիկ նաւահանգիստ կ'ըսուէր , ո- րուն մօտ էր Ղասեա քաղաքը ։

9 Ու երբոր շատ ժամանակ անցաւ , և նաւին ճամբայ ելլելն այլևս տա- գնաւոր էր , Դ ծոմինատենն ալ ար- դէն անցած ըլլալով , Պօղոս իր-

10 րատ կու տար , Եւ կ'ըսէր անոնց . Մարդիկ՝ ես կը տեսնեմ որ աս նա- ւիս ճամբայ ընելը տառապանքով ու շատ վնասով պիտի ըլլայ , չէ Թէ միայն բեռին ու նաւին՝ հապա

11 մեր անձերուն ալ ։ Բայց հարիւ- րապետը աւելի նաւապետին և նա-

ւավարին մտիկ կ'ընէր , քան Թէ

12 Պօղոսին խօսքերուն ։ Եւ որով- հետև ան նաւահանգիստը յարմար չէր ձմեռը հոն անցընելու , շատերը խորհեցան անկէ երթալ , որ դուցէ կարող ըլլան Փիւնիկէ հասնելու ու ձմեռը հոն կենալու , որ Կրետէի նաւահանգիստ մըն է , ու դէպ ի հարաւ և արևմտեան հիւսիս կը

13 նայի ։ Ու երբոր հարաւային մեղմ հով մը փչեց , կարծելով Թէ իրենց դիտաւորութեանը հասեր էն , ճամբայ ելան՝ ու Կրետէին քովերէն

14 կ'անցնէին ։ Եւ շատ առեն չան- ցած՝ մրրկալից հով մը ելաւ անոր դէմ , որ Եւրակիկլոն կ'ըսուի ։

15 Երբոր նաւը յափշտակուեցաւ , և հովին դէմ չկրցաւ դիմանալ , Թող տուած կ'երթայինք ու կու գայինք .

16 Եւ դէպ ի մէկ փոքր կղզեակ մը ե- տևի կողմը դիմելով՝ որ Կլօփա կ'ըսուէր , հազիւ կրցանք մակոյկը

17 բռնել . Որն որ առին՝ ու օգնու- թիւններ գործածելով նաւը տակէն կապեցին . և վախնալով որ չըլ- լայ Թէ *յորձանուտը խլեան , ա- ռագաստը իջեցուցած՝ անանկ կ'եր-

18 թայինք ու կու գայինք ։ Եւ սաստիկ ալէկոծութեան մէջ որ էինք , հե- տևեալ օրը բեռները դուրս նետե-

19 ցին ։ Ու երրորդ օրը Ի նաւին գոր- ծիքները ձեռքովնիս դուրս նետե-

20 ցինք ։ Ու երբոր շատ օրեր ոչ արև՝ ոչ ալ աստղեր կ'երևնային , և փոթորիկը քիչ չէր վրանիս , ալ բոլորովին մեր ազատուելու յոյսը

21 վերցաւ ։ Եւ որովհետև շատ օրե- րէ ի վեր անօթի էին , ան ատենը Պօղոս անոնց մէջը կայնելով՝ ըսաւ . Ո՛վ մարդիկ՝ պէտք էր ձեզի որ ինծի մտիկ ընէիք , ու Կրետէէն չելլէիք , և աս տառապանքը ու

22 վնասը չքաշէիք ։ Ու հիմա ձեզ կը յորդորեմ որ սիրտ առնէք , քանզի ձեզմէ մէկուն անձին վնաս մը պիտի չըլլայ՝ բայց միայն նաւին .

23 Վինչու որ աս դիշեր երևցաւ ինծի ան Աստուծոյն հրեշտակը , որ ես անորն եմ՝ ու զանիկայ կը պաշ-

24 տեմ . Եւ ըսաւ . Մի վախնար Պօղոս՝ կայսրին դիմացը պէտք է որ ելլես դուն . և ահա Աստուած քե- զի ընորհեց ան ամէնը որ քու հետդ

25 նաւին մէջն են ։ Ուստի մարդիկ՝ սիրտ առէք . Վինչու որ ես կը հա- ւատամ Աստուծոյ որ ասանկ պիտի ըլլայ , ինչպես որ ինծի զրուցուե-

26 ցաւ . Միայն Թէ պէտք է որ Ի մէկ կղզի մը իյնանք ։

27 Ու երբոր տասնուչորսերորդ գի- շերն էր որ Ադրիական ծովուն մէջ կը տարուբերէինք , կէս գիշերին նաւավարները կը կարծէին Թէ մէկ

Ցամք Տեառն 62

- Գլ. իդ. 9. 29 ։ իէ. 25։

Հ Գլ. իէ. 11։

Ա Գլ. իդ. 23։ իէ. 16 ։

Բ Գլ. ժթ. 29 ։

Գ Գլ. իդ. 23։ իէ. 16 ։

Դ Գլ. իդ. 27, 29 ։

* Լմ. Յանձաղուտը

Բ Ցոէլ. ա. 5 ։

Գ Գլ. իդ. 11 ։

Գ Դան. գ. 16 ։ Հռով. ա. 9 ։ Բ Տիմ. ա. 8 ։

Գ Գլ. ա. 45 ։ Հռով. դ. 20, 21 ։ Բ Տիմ. ա. 12 ։

Բ Գլ. իբ. 1 ։

Ծամ Տնաո 62

28 երկրի մը մօտերեր են . Եւ գնտա-
կը ձգելով՝ քսան գրկաչափ գտան ,
ու փիլիպոսն ալ յառաջ երթալով՝
նորէն ձգեցին , և տասնուհինգ գըր-
29 կաչափ գտան . Ու վախնալով՝ որ
չըլլայ թէ քարոտ տեղուանքը իյ-
նան , եւեւի կողմէն չորս խարիսխ
ձգեցին , և առտուն ըլլալուն կը փա-
30 փաքէին : Հակ նաւավարները նա-
ւէն փախչիլ ուզելով՝ մակոյկը ծովը
իջեցուցին , պատճառելով որպէս
թէ առջևի կողմէն ալ խարիսխներ
31 պիտի ձգեն : Բայց Պօղոս ըսաւ
հարիւրապետին ու զինուորներուն .
Թէ որ ատոնք նաւին մէջը չկե-
նան՝ դուք չէք կրնար ազատիլ :
32 Ան ատենը զինուորները մակոյկին
չուանները կտրեցին , և թողուցին
33 որ դուրս իյնայ : Ու երբոր առ-
տաւ ըլլալու վրայ էր , Պօղոս կ'ա-
ղաչէր ամենուն որ կերակուր ու-
տեն , ըսելով . Այսօր տասնուչորս
օր է՝ որ դուք սպասելով անօթի
մնացեր էք , ու բան մը կերած
34 չէք : Ուստի կ'աղաչեմ ձեզի որ
կերակուր ուտէք . ինչու որ ասիկա
ձեր ազատութեանը համար է՝ ,
քանզի ձեզմէ մէկուն գլխէն մազ
35 մը պիտի չկորսուի : Եւ այսպէս
ըսելով , հաց առաւ , ու Աստուծմէ գոհացաւ , և
36 կտրելով սկսաւ ուտել : Եւ ամէնն
ալ սիրտ առին , ու իրենք ալ կե-
37 րակուր կերան : Եւ նաւին մէջը
ամէնքը երկու հարիւր եօթանաս-
38 սունուվեց հոգի էինք : Երբոր
կշտացան կերակուրով՝ նաւը թե-
թևցուցին՝ ցորենը ծովը թափե-
լով :
39 Ու երբոր առտուն եղաւ , ցամաքը
չէին ճանչնար , միայն թէ մէկ ծոց
մը կը նշմարէին որ ծովեզերք ու-
նէր , ու կը խորհէին որ եթէ կա-
40 րելի է նաւը անոր մէջը մխեն : Եւ
խարիսխները կտրելով՝ ծովը ձգե-
ցին , ու ղեկերուն կապերը թուլ-
ցուցին , և առադաստը հովին բա-
նալով՝ դէպ ի ան ծովեզերքը կ'եր-
41 թային : Եւ անանկ տեղ մը իյ-
նալով որ երկու կողմը ծով էր , նաւ-
ը նստեցուցին . և նաւին առջևի
կողմը խրելով՝ անշարժ մնաց , ու
ետևի կողմը ալիքներուն սաստկու-
42 թենէն կը քակուէր : Զինուոր-
ներն ալ խորհուրդ ըրին որ կա-
պուածները սպաննեն , որ չըլլայ
43 թէ մէկը լողալ՝ ու փախչի : Բայց
հարիւրապետը որ Պօղոսը ազատել
կ'ուզէր , արգիլեց զանոնք ան խոր-
հուրդէն , և հրաման ըրաւ՝ թէ ո-
րոնք որ կրնան լողալ , թող անոնք
առաջ նետուին ու ցամաքը ելլեն .
44 Եւ մնացածներըմանք տախտակ-

ներով , և ոմանք նաւին սարիլ բա-
ներովը . և այսպէս Եամէնը ազա-
տեցան՝ ցամաքը ելան :

Ծամ Տնաո 62

Իհմր 22 :

ԳԼ . ԻԸ

1 Պօղոս և իր ընկերները՝ նաւաբեկութենէն
ետքը մարդասիրութիւն կը տեսնեն բարբա-
րոսներէն : 5 Իժ մը Պօղոսին ձեռքը կը բռնէ ,
բայց չվնասեր : 8 Պօղոս շատ հիւանդներ կը
բժշկէ կղզիին մէջ : 11 Ճամբայ կ'ելլէ Հռովմ
երթալու . 17 կ'իմացընէ Հրէից՝ իր գալուն
պատճառը . 24 իր քարոզութեամբը ոմանք կը
հաւատան Քրիստոսի , ոմանք ալ չեն հաւա-
տար . 30 այսու ամենայնիւ երկու տարի կը
քարոզէ Հռովմայ մէջ :

1 Եւ երբոր ազատեցան՝ գիտցան որ
Մելիտէ
կղզիին անունը էր . Եւ բարբարոսները քիչ մար-
դասիրութիւն չցուցուցին մեզի .
2 Ինչու որ կրակ վառեցին , և մեզ
ամենքս ալ ընդունեցին՝ վրանիս
հասած անձրևին համար , ու ցուր-
3 տին համար : Ու երբոր Պօղոս
շատ մը խռիւ ժողվեց , և կրակին
վրայ դրաւ , տաքութենէն իժ մը
4 ելաւ՝ անոր ձեռքը բռնեց : Բար-
բարոսներն ալ երբոր ան գազանը
տեսան անոր ձեռքէն կախուած
իրարու կ'ըսէին . Անշուշտ ասիկայ
մարդասպան մըն է , որ թէպէտ
ծովէն ազատեցաւ , բայց իրաւունք
5 չը թողուաւ որ ապրի : Իսկ
անիկայ գազանը կրակին մէջը
թօթափելով՝ երեքն ալ վնաս մը
6 չեղաւ : Ու անոնք կը սպասէին որ
անիկայ ուռենայ՝ կամ յանկար-
ծակի մեռած իյնայ . բայց երբոր
շատ մը սպասեցին , ու տեսան որ
իրեն վնաս մը չեղաւ , կարծիքնին
փոխելով , Աստուած է կ'ըսէին թէ
7 մըն է : Եւ ան տեղին բոլորտիքը
կղզիին գլխաւոր մարդուն ագա-
րակները կային , որուն անունը
Պուղղոս էր . որ ինքը մեզ ընդու-
նեց՝ և իրեք օր հիւրասիրութեամբ
8 իր քովը պահեց : Ու եղաւ որ
Պուղղոսին հայրը ջերմով և թանչ-
քով հիւանդցած պառկած էր . ու
Պօղոս անոր քովը մտաւ , և ա-
ղօթք ընելով՝ ձեռքերը վրան
9 դրաւ , ու բժշկեց զանիկայ : Ու
երբոր ասիկայ եղաւ , ուրիշ հի-
ւանդներ որ ան կղզիին մէջն էին ,
10 կու գային և կը բժշկուէին . Որոնք
շատ պատիւներով ալ մեզ պա-
տուեցին , ու երթալու ատենին
պէտք եղած բաները տուին :
11 Եւ իրեք ամիսէն ետև Աղեք-
սանդրացի նաւով մը ձմռեալ ե-
լանք , որ ձմեռը ան կղզին անցու-
ցեր էր , ու Դիոսկուրացւոց նշանը
12 ուներ : Եւ Սիրակուսա իջնելով՝
13 իրեք օր հոն կեցանք : Անկէ ալ
պտոյտ մը ընելով՝ Հռեգիոն հա-
սանք . և մէկ օրէն ետև որ հարաւ

Ծամ Տնաո 62

Ա Թես . ե . 14 . 15 .
Ղմար . ղ . 5 : ե . 82 :
ժղ . 18 :
Ղտ . գ . 41 :
Գլ . ժթ . 11 . 12 : ա Կոր : ժր . 9 . 28 :
Ի Մատ . ժե . 6 : ա Տիմ . ե . 17 :
Ծա . Տ . 63

Ցամք Տեառն 63

փչէց , երկրորդ օրը Պատիողոս ե-
14 կանք ։ Ու հոն եղբայրներ գտանք , որոնք աղաչեցին որ եօթը օր իրենց քովը մնանք . ու ետքը Հռովմ
15 ելանք ։ Եւ անկէ եղբայրները երբոր մեր վրայով լսեցին , մեզ դիմաւորելու ելան մինչև Ապիհոսի վաճառանոցը՝ ու Իրենք պանդոկնե-րը . և Պօղոս անոնք տեսնելով , գոհութիւն տուաւ Աստուծոյ , և սիրտ առաւ ։
16 Ու երբոր Հռովմ մտանք , հա-րիւրապետը կապուածները զօրա-պետին յանձնեց . Իսկ Պօղոսին հրաման եղաւ որ իր պահապան
17 զինուորին հետ զատ կենայ ։ Ու եղաւ որ իրեք՝ օրէն ետև անիկայ Հրէից դլխաւորները կանչեց . ու երբոր մէկտեղ եկան՝ ըսաւ անոնց . Մարդիկ եղբայրներ՝ Ես ժողո-վուրդին կամ հայրենական սով-րութեանց դէմ բան մը չըրած , Երուսաղէմէն կապուած՝ Հռովմա-
18 յեցւոց ձեռքը մատնուեցայ . Ո-րոնք Երբոր զիս քննեցին , ուզեցին որ արձակեն . ինչու որ իմ վրաս
19 մեռնելու յանցանք մը չկար ։ Բայց երբոր Հրէաները հակառակ կեցան , Նպտակ եղաւ որ կայսրին բողոքեմ, չէ թէ իմ ազգիս դէմ ամբաստա-
20 նութիւն մը ունեցողի պէս ։ Ուս-տի աս պատճառով աղաչեցի որ ձեզ տեսնեմ՝ ու ձեզի խօսիմ . ին-չու որ Իսրայէլի յոյսին համար ես
21 Ի աս շղթան վրաս ունիմ ։ Անոնք ալ ըսին իրեն . Մենք քու վրա-յովդ Հրէաստանէն ոչ թուղթեր առինք , և ոչ եղբայրներէն մէկը հոս գալով՝ քու վրայովդ չարու-թիւն մը պատմեց կամ խօսեցաւ ։
22 Բայց կ'աղաչենք որ քեզմէ լսենք՝ թէ դուն ինչ միտքի վրայ ես . ին-

Գործ Ժ·25· Ես·3·

Ա Գես·իդ·12· 13 ։ Ես·8 ։

Բ Գես·իա· 33 ։ ·

Ի Գ· Իբ· 24 ։ իդ·10 ։ Ես·8 ։ իզ· 31 ։

Լ Գես·իե·11 ։

Ի Գ·իզ·6 ։ 7 ։

Ա Գ· իզ· 29 ։ Եփես· գ·1 ։ գ·1 ։ շ·20 ։ Բ Տիմ· ա· 16 ։ բ·9 ։ Փիլիմ·10 ։ 13 ։

չու որ մենք ատ աղանդին վրայով տեղեկացած ենք՝ որ ամէն տեղ
23 ատոր դէմ կը խօսին ։ Ու մէկ օր մը ատեն դնելով անոր՝ շատերը անոր գալին իր բնակած տեղը , հորոնց Աստուծոյ թագաւորու-թիւնը կը ծանուցանէր վկայու-թիւնով , և կը համոզէր զանոնք Յիսուսի վրայով Մովսէսին օրէն-քէն ու մարգարէներէն՝ առտուը-
24 նէ մինչև իրիկուն ։ Ես ոմանք կը հաւատային բաներուն , ու ո-
25 մանք չէին հաւատար ։ Եւ իրարու հետ չհաւանած դացին՝ երբոր Պօ-ղոս մէկ խօսք մը ըսաւ , թէ Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հայրե-րուն՝ Եսայի մարգարէին ձեռքովը ,
26 Եւ ըսաւ . Գնա աս ժողովուրդին՝ ու ըսէ . Լսելով պիտի լսէք՝ ու չհմանաք ; և տեսնելով պիտի տես-
27 նէք՝ ու չտեսնէք . Ինչու որ աս ժողովուրդին սիրտը թանձրացաւ , և էրէնց ականջներովը ծանր լսեցին , ու աչքերնին գոցեցին , որ չըլլայ թէ էրէնց աչքերովը տեսնեն , ու ականջներովը լսեն , և սրտերովը իմանան , ու դարձի գան , և ես
28 բժշկեմ զանոնք ։ Ուստի յայտնի ըլլայ ձեզի՝ որ Աստուծոյ փրկու-թիւնը Հեթանոսներուն խրկուե-ցաւ , և անոնք մտիկ պիտի ընեն ։
29 * Ու երբոր աս զրուցեց , Հրէաները դուրս ելան , շատ վիճաբանութիւն ունենալով Ի ներնին ։
30 Եւ լման երկու տարի իր վարձ-
31 քով բռնած տունը կեցաւ . Եւ իրեն եկողներուն ամէնը կ'ընդու-
32 ներ , Կը քարոզէր Աստուծոյ թա-գաւորութիւնը , և Տէր Յիսուս Քրիստոսի վրայով առանց արգի-լուելու կը սորվեցընէր բոլոր հա-մարձակութիւնով ։

Ցամք Տեառն 63

Ղուկ·բ·34 ։ Գաղ·իդ·5· պՂ ։ ա Պետ· բ·12 ։ դ· 14 ։

Հղու·իդ· 27 ։ Գաղ· Ժէ·3 ։ Ժէ· 8 ։

Տ Տնգաղ·իգ· 6·22 ։

Ղուկ·ժդ· 4 ։ Ժէ·4 ։ Ժէ·9 ։

Ես·գ·9 ։ Երեմ·ե· 21 ։ Եզեկ· Ժբ · 2 ։ Մատ·ժգ· 14 ։ 15 ։ Մար · գ· 12 ։ Ղուկ· ը·10 ։ Յօհ· Ժբ · 40 ։ Հռով·ժա· 8 ։

* Մատ·իա· 41 ։ 43 ։ Գաղ· ժգ·46 ։ 47 ։ Ժբ·6 ։ իբ· 21 ։ իգ·17 ։ 18 ։ Հռով· ժա·11 ։

* Ոմանք կը-նէն 29 համարը ։

Ցամք Տեառն 65

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

ԸՍ. ՀՈՎՍԷՓԵԱՆ

Յաւի Տեառն 60

= Գոր · իր · 21 : ա Կոր · ա · 1 : Գաղ · ա · 1 : ա Տիմ · ա · 11 : ր · 7 : բ Տիմ · ա · 11 :

ր Գոր թ · 15 : Ժղ · 2 : Գաղ · ա · 15 :

ի Գլ · դ · 21 : Ժղ · 26 : Գաղ · գ · 8 :

ք Տես Գոր · իդ · 6 : Տիտ · ա · 2 :

ի Յօհ · ա · 14 : Գաղ · դ · 4 :

ղՄատ · ա · 6 · 16 : Ղուա · 32 : Գոր · բ · 30 : բ Տիմ · բ · 8 :

ն Գոր · Ժղ · 33 :

շ Երր · թ · 14 :

ո Գլ · Ժբ · 3 : Ժե · 15 : ա Կոր · Ժե · 10 : Գաղ · ա · 15 : բ · 9 : Եփե · գ · 8 :

ճ Գոր · ղ · 7 : Գլ · Ժղ · 26 :

է Գոր · թ · 15 :

ւ Գլ · թ · 24 : ա Կոր · ա · 2 : ա Թես · գ · 7 :

ք ա Կոր · ա · 3 : բ Կոր · ա · 2 : Գաղ · ա · 3 :

յ ա Կոր · ա · 4 : Փիլ · ա · 3 : Կող · ա · 3 · 4 : ա Թես · ա · 2 : Փիլմ · 4 : ո Գլ · Ժղ · 19 : ա Թես · ա · 8 : Հ Գլ · թ · 1 : բ Կոր · ա · 23 : Փիլ · ա · 8 : ա Թես · բ · 5 : Ես Գոր · Խէ · 23 : բ Տիմ · ա · 3 : ղ ա Թես · դ · 10 : ճ Գլ · Ժե · 23 · 32 : ա Թես · գ · 10 : Ցակ · դ · 15 : յ Գլ · Ժե · 29 :

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ կը ծանուցանէ Հռովմայեցւոց՝ իր առաքելական պաշտօնին կանչուիլը, 9 Նաեւ իր սրտին փափաքը՝ անոնց երթալու, 16 և թէ ինչ է իր քարոզած աւետարանը, ու աւետարանին ցուցուցած արդարութիւնը. 18 Թէ Աստուած բարկացած է ամէն տեսակ մեղքի դէմ, 21 և թէ հեթանոսներուն մեղքերը ինչ է։

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ ⁼առաքեալ ըլլալու⁼ կանչուած, Աստուծոյ աւետարանին
2 համար Բ որոշուած, (Ան որ Ϧ առաջուց իր մարգարէներուն ձեռքովը
3 սուրբ գիրքերով Ⲧ խոստացաւ՝) Իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայով՝ որ Ⲏ մարմնով կողմանէ Ⲇաւիթի սերունդէն եղաւ,
4 Ան որ Ⲏ սրբութեան հոգիին կողմանէ Որդի Աստուծոյ յայտնուեցաւ զօրութեամբ, մեռելներէն
5 յարութիւն առնելով. Որով Ⲑ շնորհք և առաքելութիւն առինք՝ Ⲑ հնազանդութեան համար բոլոր ազգերուն մէջ, Իսոր
6 անունը համար. Որ անոնց մէջը դուք ալ Յիսուս Քրիստոսի կան-
7 չուած էք. Ձեր ամէնուն որ Հռովմայ մէջ էք՝ Աստուծոյ սիրելիներուդ, Նսուրբ ըլլալու⁼ կանչուածներուդ՝ Ⲏ շնորհք և խաղաղութիւն Ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսէն։
8 Նախ Ⲑ կը գոհանամ իմ Աստուծմէս Յիսուս Քրիստոսի Ձեռքովը Ձեր ամէնուն համար, որ Ⲓ Ձեր հաւատքը բոլոր աշխարհ կը պատ-
9 մուի։ Քանզի Ⲋ վկայ է ինծի Աստուած, Ⲋ որուն որ ես կը պաշտեմ իմ Հոգիովս անոր Որդւոյն աւետարա-
10 նին մէջ, Ⲍթէ ինչպես անդադար Ձեզ կը յիշեմ, ամէն ատեն իմ աղօթքներուս մէջ Ⲏ խնդրելով՝ որ գուցէ անգամ մը Ⲑ Աստուծոյ կամքովը ինծի յաջողութիւն մը ըլլայ
11 Ձեզի գալու։ Քանզի կը փափաքիմ Ձեզ տեսնելու, Ⲋ որ Ձեզի հո-
12 գևոր շնորհք մը հաղորդեմ՝ որպէս զի հաստատուիք. Ա յսինքն՝ Ⲛ Ձեր հետը ես ալ միխթարակից ըլլամ իմ ու Ձեր փոխադարձ հաւատքին
13 միջոցովը։ Սակայն չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք եղբայրներ՝ Ⲛոր շատ անգամ ուզեցի գալ Ձեզի, (և ⁼մինչև հիմա արգիլուեցայ,) Ⲛոր Ձեր մէջէն ալ պտուղ մը ունենամ, ինչպես որ ուրիշ հեթանո-
14 սաց մէջ ալ։ Յոյներուն ու բարբարոսներուն, իմաստուններուն ու անմիտներուն ալ Ⲫ պարտական
15 եմ։ Ուստի որչափ որ Ձեռքէս կու գայ՝ յօժարութիւն Ⲛունիմ Ձեզի ալ որ Հռովմայ մէջ էք՝ աւետարանը քարոզելու։
16 Ինչու որ Ես ամօթ չեմ սեպեր Ⲥ աւետարանը. վասն զի ⁼Աստուծոյ զօրութիւնն է ան՝⁼ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար, առաջ Հրէային ու ետքը
17 Յոյնին։ Ինչու որ անով Վ Աստուծոյ արդարութիւնը՝ ⁼ը Ⲉ հաւատքէն, հաւատքի համար կը յայտնուի. ինտոր որ գրուած է թէ, ⁼Արդարը հաւատքէն պիտի ապրի։
18 Քանզի Ր Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ
19 բռներ են։ Վասն զի Ⲑ Աստուծոյ վրայով գիտնալու բանը իրենց մէջը յայտնի է, որովհետև ⁼Աս-
20 տուած անոնց յայտնեց։ Ինչու որ իր Ⲑ աներեւոյթ բաները աշխարհի սկիզբէն ստեղծուածներովը կ՝իմացուին կը տեսնուին, այսինքն է իր մշտնջենաւոր զօրութիւնը, ու աստուածութիւնը. որպէս զի
21 անպատասխանի մնան։ Ինչու որ իրենք Աստուած ճանչնալով՝ Աստուծոյ պէս չփառաւորեցին, կամ շնորհակալ չեղան. Ⲥ հապա իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան, և սիրտերնին անմտութիւ-
22 նով խաւարեցաւ։ Ⲟ Իրենք Ⲓմաստուն ենք ըսելով, յիմարեցան.
23 Եւ անեղ Ⲫ Աստուծոյ փառքը փո-

Յաւի Տեառն 60

Ⲛ Տիտ · ա · 4 : բ Պետ · ա · 1 :

Ⲗ Գլ · Ժե · 23 :

= Ես Գոր · Ժղ · 7 : ա Թես · բ · 18 :

Ⲗ Փիլ · գ · 17 :

ⲭ ա Կոր · թ · 16 :

Ⲁ Պաղ · խ · 9 · 10 : Մար · բ · 38 : բ Տիմ · ա · 3 :

ⲥ Ղուկ՝ ⁼քրիստոսի աւետարանը։

ⲙ ա Կոր · ա · 18 : Ժե · 2 :

= Գաղ · բ · 30 · 31 · 32 : իդ · 47 : Գոր · գ · 26 : Ժգ · 26 · 46 : Գա · բ · 9 :

Ⲗ Գլ · գ · 21 :

ⲙ Մր · բ · 4 : Յօհ · գ · 36 : Գաղ · գ · 11 : Փիլ · գ · 9 : Իսա · Ժ · 28 :

բ Գոր · Ժէ · 30 : Եփե · ե · 6 : Կող · գ · 6 :

ⲟ Գոր · Ժդ · 16 :

– Յօհ · ա · 9 : Ⲥ Սաղ · Ժբ · 1 : Գոր · Ժգ · 16 : Ժե · 27 :

ⲫ Թագ · Ժէ · 15 : Երեմ · բ · 5 : Եփե · գ · 17 · 18 :

ⲟ Երեմ · Ժ · 14 :

ⲫ Ը Որ · 16 : Ⲁ Սաղ · խ · 9 · 10 : Մար · բ · 38 : բ Տիմ · ա · 3 :

ⲥ Ղ Հռ · ⁼քրիստոսի աւետարանը։

ⲙ ա Կոր · ա · 18 : Ժե · 2 :

= Գաղ · բ · 30 · 31 · 32 : իդ · 47 : Գոր · գ · 26 : Ժգ · 26 · 46 : Գա · բ · 9 :

Ⲗ Գլ · գ · 21 :

ⲙ Մր · բ · 4 : Յօհ · գ · 36 : Գաղ · գ · 11 : Փիլ · գ · 9 : Իսա · Ժ · 28 :

բ Գոր · Ժէ · 30 : Եփե · ե · 6 : Կող · գ · 6 :

ⲟ Գոր · Ժդ · 16 :

– Յօհ · ա · 9 : Ⲥ Սաղ · Ժբ · 1 : Գոր · Ժգ · 16 : Ժե · 27 :

ⲫ Թագ · Ժէ · 15 : Երեմ · բ · 5 : Եփե · գ · 17 · 18 :

ⲟ Երեմ · Ժ · 14 :

ⲫ Ը Օր · գ · 16 : Ⲋ Սաղ · Ճղ · 20 : Ես · խ · 18 · 25 : Երեմ · բ · 11 : Եզեկ · ը · 10 : Գոր · Ժէ · 29 :

Ցամի Տեառն 60

խեցին՝ նմանցընելով եղծանելի մարդու, և թռչուններու, ու չորքոտանիներու, և սողուններու

24 պատկերին։ Անոր համար Աստուած ալ պղծութեան մատնեց զանոնք իրենց սիրտերուն ցանկութիւններովը՝ Է իրենց մարմինները էրենց անձերուն մէջ խայտառակ-

25 կելու. Որոնք Աստուծոյ Ճշմարտութիւնը Խաւտի հետ փոխեցին, ու երկրպագութիւն և պաշտօն մատուցին ստեղծուածներուն՝ քան Թէ Ստեղծողին, ան որ յաւիտեան

26 օրհնեալ է. ամէն։ Անոր համար Աստուած զանոնք ձանարգ կիրքերու մատնեց, որ իրենց էգերը անգամ բնական պէտքը բնութեան

27 դէմ եղող գործի փոխեցին։ Նոյնպես ալ արուները կնական բնական պէտքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան. արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին, և իրենց մոլորութեանը վայելած հատուցումը իրենց վրայ կ'ընդունէ.

28 ին։ Եւ որովհետև չուզեցին զԱստուած էրէնց գիտութեանը մէջ պահել, Աստուած ալ զանոնք անարգ խորհուրդներու մատնեց՝

29 Է անվայել բաներ ընելու. Որոնք լեցուած էին ամէն անիրաւութիւնով, պոռնկութիւնով, անզգամութիւնով, ագահութիւնով, չարութիւնով, նախանձով լեցուն, մարդասպանութիւնով, հակառակութիւնով, նենգութիւնով, չարասրտութիւնով,

30 Է խօս քսուներ, Աստուած ատողներ, նախատողներ, հպարտներ, ամբարտաւաններ, չար բաներ չարդողներ, ծնողաց անչնազանդներ, Անմիտներ, ուխտ չպահողներ, անգութներ,

32 անհաշտներ, անողորմներ. Եւ որոնք գիտնալով Աստուծոյ դատաստանը, թէ անոնք որ ասանկ բաներ կ'ընեն՝ Է մահուան արժանի են, չէ թէ միայն ան բաները կ'ընեն, ձեռնպահ ընդներուն հաւանի։

ԳԼ. Բ

1 Անոնք որ ուրիշները կը դատապարտեն իրենք մեղաւորներ, թէ որ իրենք այ ան մեղքերը կը գործեն, չեն կրնար ինքզինքին արդարացընել։ 6 ո՛չ ալ կրնան ազատ մնալ Աստուծոյ դատաստանէն. 9 Թէ Հրեայ ըլլան՝ թէ հեթանոս. 14 քանզի իմաց որ հեթանոսներ չեն կրնար ազատ մնալ, 17 անանկ ալ Հրեաները. 25 օրթոց թլփատութիւնը օգուտ մը պիտի չըլնէ, թէ որ օրինազանց գտնուին։

1 Աստ ով մարդ՝ ով որ ըլլաս դուն որ կը դատես, պատասխան չունիս տալու. Էքանդի ի՛նչ բանով որ ուրիշը կը դատես, անով

քու անձդ կը դատապարտես. վասն զի դուն ալ որ կը դատես, նոյն

2 բաները կ'ընես։ Բայց գիտենք որ Աստուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կ'ըլլայ անոնց վրայ,

3 որ անանկ բաներ կը գործեն։ Արդ՝ ով մարդ, դուն որ ասանկ բաներ ընողները կը դատես, և դուն նոյն բաները կ'ընես, ասիտքէդ կ'անցընե՞ս, թէ դուն Աստուծոյ դատաստանէն ազատ պիտի մնաս.

4 Կամ թէ անոր անչափ քաղցրութիւնը՝ և համբերութիւնը և երկայնմտութիւնը կ'արհամարհե՞ս, չգիտնալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ՚ի ապաշխարութիւն կ'առաջնորդէ։

5 Բայց դուն քու խստութիւնովդ և անզղջ սրտովդ քու անձիդ բարկութիւն կը դիզես Է բարկութեան և Աստուծոյ արդար դատաստանին

6 յայտնուելու օրուանը համար. Ըմէն որ ամէն մէկուն իր գործքերուն փոխարէնը պիտի տուցանէ.

7 Ցաւիտենական կեանքը անոնց՝ որ բարի գործքերու մէջ համբերութեամբ յարատևելով, փառք ու պատիւ և անմահութիւն կը խնդրեն.

8 Բէն։ Բայց անոնց որ հակառակ են՝ Ը և ճշմարտութեան անհաւատ՝ ու անիրաւութեան հնազանդած՝ բարկութիւն և սրտմտութիւն,

9 Թիւն։ Նեղութիւն և տառապանք պիտի ըլլայ ամէն մարդու վրայ՝ որ չար կը գործէ, նախ՝ Հրէային

10 ու ետքը Յոյնին. Իսկ փառք ու պատիւ և խաղաղութիւն ան ամենուն՝ որ բարի կը գործէ՝, նախ՝ Հրէային ու ետքը Յոյնին։ Ի-

11 չու որ Աստուծոյ քովը աչառութիւն չկայ։

12 Թիւն չկայ։ Քանզի անոնք որ առանց օրէնքի մեղք գործեցին, առանց օրէնքի պիտի կորսուին. և անոնք որ օրէնքի տակ մեղք գործեցին, օրէնքով պիտի դատուին.

13 (Ի Ինչու որ չէ թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջևը արդար են՝, հապա օրէնքը կատարողները՝ պիտի

14 արդարանան։ Ուստի հեթանոսները որ օրէնք չունին՝ երբոր բնականաբար օրէնքին գործքերը կը գործեն, օրէնք չունենալով՝ իրենց անձերուն օրէնքը քուն իրենք կ'ըլ-

15 լան. Որ օրէնքին գործքը իրենց սրտին մէջը գրուած կը ցուցընեն իրենց խղճմտանքին վկայութեամբը, և իրենց խորհուրդներուն իրար յանդիմանելովը՝ կամ իրաւունք

